ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

947.925

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՁԱՆ

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհաբար թարգմանությունը
և ծանոթագրությունները
Հրաչ Բարթիկյանի

Ա II 83078

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՈՒՏՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1991

ԳՄԴ 63.3(2Հ)13
Մ 382

Հրատարակության է պատրաստել բանաս. գիտ. դոկտ., պրոֆ.
Գ. Գ. ԱՆԱՆՅԱՆԸ

«Ուսանողի դրադարան» մատենաշարի խմբագրական հանձնաժողով. Համբարձումյան Ս. Ա. (նախագահ), Աղայան Է. Բ., Անանյան Գ. Գ., Թամրազյան Հ. Ս., Փանոսյան Ս. Ե., Մկրտչյան Լ. Մ.։

Մատթեոս Ուռհայեցի, *ժամանակագրություն (Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Հ. Բարթիկյան)— Եր.։ Երևանի համալս. հրատ., 1991.— 540 էջ.— Ուսանողի դրադարան /Երևանի պետ. համալս., խմբ. հանձնաժողով՝ Համբարձումյան Ս. Ա. (նախագահ) և ուրիշներ։*

Հայ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու գիրքը բովանդակում է հայ ժողովրդի պատմության 10—12-րդ դարերի իրադարձությունները և կարևոր նշանակություն ունի Հայաստանի և հարևան երկրների սոցիալ-քաղաքական կյանքի ուսումնասիրման համար։


ՈՒ 0502000000C / 704 (02)—91 61—91

ԳՄԴ 63.3(2Հ)13

ISBN 5-8084-0175-5

МАТТЕОС УРХАЕЦИ
ХРОНОГРАФИЯ
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1991

© Երևանի համալսարանի հրատարակչություն, կազմելու, թարգմանելու և ծանոթագրությունների համար



Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» առաջին էջը:
Մատենադարան, ձեռագիր № 5587

[ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ]

Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ և ի ՆԱ. թուականին Հայոց եղև սով սաստիկ ի բազում տեղիս. բայց յաշխարհն Տաճկաց եղև նեղութիւն մեծ և առաւել քան զամենայն ի Միջագետս. և ի խստութենէ սովոյն տագնապ և տատանումն լինէր ի բազում տեղիս և ևս ի հռչակաւոր մայրաքաղաքն յՈւռհա, զոր կանգնեաց Տիգրան արքայ Հայոց: Եւ կացեալ սովն յայնմ աշխարհին զամս եւթն, և անթիւ լինէր կոտորածն յերեսաց սովոյն այն. և յաշխարհին Տաճկաց լինէր անցումն մեծ և ի քրիստոնէից անթիւք մեռան յերեսաց բարկութեան սովոյն: Եւ զկնի երկու ամի եկեալ մարախ յայնմ դաւառի որպէս զաւազ ծովու և ապականեաց զերկիրն: Եւ սաստկանայր սովն առաւել. և վայրացեալ բազմայ և անողորմ գաղանաբար յարձակեալ՝ զմիմեանս ուտէին, և իշխանքն և մեծամեծքն ընդօք և մրգօք կերակրէին. և եղեւ անցումն անասնոց. բազում գեղք և գաւառք անմարդաբնակ լինէին և այլ ոչ շինեցան մինչև ցայսօր ժամանակիս:

Դարձեալ ի թուականութենէն Հայոց Նէ ամին զօրաժողով լինէին ազգն Արաբկաց յՈւռհա և յամենայն Ծդեսացւոց աշխարհն և ահագին բազմութեամբ անցեալ ընդ մեծ գետն Ծիրատ և եկեալ ի վերայ ամուր քաղաքին, որ կոչի Սամուսատ: Եւ ելանէր ի պատերազմ զօրապետն Հոռոմոց, որում անուն ասէին Պառակամանոս, այր զօրաւոր և քաջ. և ի դուռն քաղաքին բախէին զմիմեանս, և յաւուր յայնմիկ հարին Տաճկունք զզօրսն Հոռոմոց և արարին կոտորած մեծ առ դրան քաղաքին. և յետ աւուրց ինչ առաւ քաղաքն Սամուսատ, մերձ ի քաղաքն յՈւռհա:

Իսկ ի թուականութենէն ազգին Հայոց ի ՆԸ ամին զօրաժողով ա-

[ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ]

Ա. յն ժամանակները՝ հայոց 401 թվականին [2 ապրիլ 952—1 ապրիլ 953 թ.][1], շատ երկրներում սաստիկ սով եղավ, մանավանդ տաճկաց[2], այն է՝ հարավային երկրում, որտեղ մեծ նեղություն եղավ, բայց ամենից շատ՝ Միջագետքում: Սաստիկ սովը շատ տեղերում տագնապ և իրարանցում առաջացրեց, այդ թվում և հռչակավոր Ուռհա մայրաքաղաքում, որը կառուցել էր հայոց Տիգրան արքան[3]: Այդ գավառում այն մոլեգնեց յոթ տարի և անհամար զոհեր տարավ, մեծ ավերածություններ գործեց նաև տաճկաց երկրում: Քրիստոնյաներից շատերն էլ մեռան սաստիկ սովի երեսից: Երկու տարի հետո այդ գավառը ծովի ավազի շատությամբ խուժեց մորեխը և ամայացրեց երկիրը: Սովն էլ ավելի սաստկացավ: Շատերը, խելակորույս միմյանց վրա խուժելով, անգութ գազանների պես իրար էին հոշոտում: Իշխաններն ու մեծամեծները [ստիպված] ընդեղենով և մրգերով էին սնվում: Տեղի ունեցավ անասունների անկում, բազմաթիվ գյուղեր և գավառներ մարդաթափ եղան և մինչև օրս էլ չվերաշինվեցին:*

Հայոց 407 թվականին [1 ապրիլ 958—31 մարտ 959 թ.] Ուռհայում և Եդեսիայի բովանդակ գավառում արաբները զորահավաք կատարեցին և, ահագին բազմությամբ անցնելով Եփրատ մեծ գետը, հարձակվեցին Սամուսատ[4] կոչվող բերդաքաղաքի վրա: Պատերազմի դուրս եկավ հոռոմների զորահրամանատարը, որի անունը Պառակամանոս[5] էր, մի հզոր և քաջ մարդ: Քաղաքի դարպասների առջև նրանք բախվեցին իրար. տաճիկները հոռոմների զորքին պարտության մատնեցին և քաղաքի դարպասների մոտ ահավոր կոտորած սարքեցին: Մի քանի օր հետո գրավվեց Ուռհայի մոտ գտնվող Սամուսատ քաղաքը:

Մեր հայոց 408 թվականին [1 ապրիլ 959—30 մարտ 960 թ.] հո-

---

* ( ) Կոր փակագծերի մեջ առնված բառերը հեղինակինն են:

[ ] Անկյունավոր փակագծերի մեջ առնված բառերը թարգմանչինն են:

րարեալ թագաւորն Հոռոմոց Ռամանոս և գայ ի վերայ Տաճկաց. և անցեալ ընդ համառաւած ծովն Ովկիանոս, և նաւովք անցանէր ի մեծ կըղզին, որ ասի Կրիտ. և սաստիկ պատերազմաւ առեալ զնա ի զօրացն Սղիսպտոսի, վասն զի զամենայն կղզիքն և զամենայն ծովեզերեայց աշխարհն Արաբիոյ աղգն ունէին ընդս չորս հարիւր: Յայսմ ամի կոտորեցին զօրք Հայոց զՀամատուն զօրապետն Տաճկաց:

Յամի թուականութեանս Հայոց ի նժ զԱնաւարզա և զՀալապ էառ Արապիկն ի թագաւորէն Մսրայ և անթիւ արար զկոտորածն, առաւել քրիստոնէից քան իւրեանց աղգին:

Յայսմ ամի ժողով արար զօրապետն Հայոց զմարզպետական գունդըն քառասուն և հինգ հազար արանց քաջաց, զատ ի յարքունական գնդէն. և ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեան որդւոյն Աշոտի Գագկայ ըստ առաջին օծման հարցն իւրոց, վասն զի չեւ եւս էր նստեալ յաթոռ թագաւորութեան տանն Հայոց և ոչ էր եղեալ թագ ի վերայ գլխոյ իւրոյ:

Հարկաւորեալ կոչեցին զամենագովելին ղՏէր Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից աշխարհին, և քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա. և մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս զթագաւորն Աղուանից՝ զայր աստուածային և զսուրբ, զորդին Գողազգակայ որդւոյ Վաչագանայ, որք էին թագաւորք Աղուանից աշխարհաց: Եւ յայնմ աւուր եղեւ ժողով ահագին և մեծ ի քաղաքն Յանի, որ եղեւ այժմիկ թագաւորանիստ քաղաք Հայոց: Եւ յայսմ ամի օծաւ որդի Աշոտի Գագիկ արքայ յօծումն հարց իւրոց և նստաւ ի գահոյս առաջին թագաւորացն Հայոց աղգիս, և լինէր ուրախութիւն մեծ ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ թագաւորութեան աշխարհիս Հայոց՝ ըստ առաջին հարցն: Եւս առաւել լինէին ուրախ յաղագս քաջութեանն Գագկայ, վասն զի էր կորովի և այր պատերազմող: Եւ յայնմ աւուր լինէր հանդէս զօրաց նորա հարիւր հազարաց վառելոց ընտիր արանց ի մարտ պատերազմաց անուանեալ և քաջ կորովեալ. վասն զի որպէս զկորիւնս առիւծուց կամ որպէս զձագս արծուեաց յուղէին զօր պատերազմին: Եւ լուեալ զայս ամենայն շուրջակայք և ամենայն թագաւորք աղգաց՝ Ափխազաց և Յունաց, Բաբելացւոց և Պարսից, տուրս և սէրս հանդերձ պատուական ընծայիւք յուղարկէին ի փառաւորութիւն Հայոց թագաւորութեանն: Եւ յայն-

ռոմների կայսր Ռոմանոսը, զորահավաք անելով, արշավում է տաճիկների վրա։ Նավարկելով լայնատարած Օվկիանոս ծովը՝[6] նա անցնում է Կրետե[7] կոչվող մեծ կղզին և կատաղի պատերազմով գրավում է այն եգիպտական զորքերի ձեռքից. բոլոր կղզիները և ծովեղրյա շրջանները չորս հարյուր տարի գտնվում էին արաբների տիրապետության ներքո։ Այս թվականներին հայոց զորքը ջարդ տվեց տաճիկների զորահրամանատար Համտունին[8]։

Հայոց 410 թվականին [31 մարտ 961—30 մարտ 962 թ.] արաբները Մսրա թագավորից գրավեցին Անավարզան և Հալեպը[9] և մեծ կոտորած սարքեցին՝ ավելի շատ քրիստոնյաներից, քան իրենց ազգակիցներից։

Այս նույն թվականին հայոց սպարապետը[10] գումարեց քառասունհինգ հազար քաջերից բաղկացած մարզպետական զորագունդը, չհաշված արքունական գունդը։ Հայաստանի նահանգների բոլոր իշխանները հավաքվեցին սրբազան Անանիա կաթողիկոսի մոտ, որպեսզի Աշոտ-Գագիկին թագավոր օծեն իր հայրերի [թագավոր] օծելու նախկին կարգի համաձայն, որովհետև նա դեռ չէր նստել Հայաստանի արքայական գահին և իր գլխին դեռ թագ չէր դրել[11]։

Անհրաժեշտ եղավ հրավիրել Աղվանից աշխարհի ամենագովելի կաթողիկոս տեր Հովհաննեսին[12], նրա հետ նաև քառասուն եպիսկոպոսների։ Մեծ շուքով հրավիրեցին նաև Աղվանից թագավոր Փիլիպոսին[13], մի աստվածահաճո և սուրբ մարդ՝ Վաչագանի որդի Գոշակտակի որդուն, ովքեր թագավորել էին Աղվանքում։ Այդ օրը գումարվեց կարևոր և մեծ ժողով Անի քաղաքում[14], որն այն ժամանակվանից սկսած դարձավ հայոց թագավորանիստ քաղաք։ Այս թվականին ահա Աշոտ-Գագիկն[15] օծվեց թագավոր՝ իր հայրերի օծման կարգով և նստեց հայոց ազգիս առաջին թագավորների գահին։ Համայն Հայաստանում մեծ ուրախություն էր, որովհետև մարդիկ ականատես եղան մեր Հայոց աշխարհի թագավորության վերականգնմանը, ինչպես նախնիների ժամանակ։ Նրանց ուրախությունը կատարյալ էր այն պատճառով, որ [թագավոր օծվեց] քաջ Գագիկը, կորովի և պատերազմող մի մարդ։ Նույն օրը տեղի ունեցավ նրա հարյուր հազարանոց սպառազեն ընտիր, քաջամարտիկ և կորովի զինվորների զորահանդեսը, որոնք պատերազմի ժամանակ առյուծների կորյունների և արծիվների ձագերի նման էին խիզախում։ Այս ամենի համբավը հասնելով հարևան բոլոր երկրները, բոլոր ժողովուրդների թագավորները՝ ափխազների[16] և հույների, բաբելացիների և պարսիկների, ի պատիվ հայոց թագավորության ուղարկեցին նվերներ և բարեկամության հավաստիացումներ թանկագին ըն-

ժամ զթագաւորն Աղուանից զՓիլիպպէ և զկաթուղիկոսն զՏէր Յովհաննէսն, զեպիսկոպոսունսն և զզօրսն, որ եկին զհետ թագաւորին և հայրապետին, և յուղարկեցին մեծամեծ տրօք և սիրով յաշխարհն Աղուանից, որ էր աթոռ սուրբ առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, որք են նահապետք առաջինք Հայոց Մեծաց։

Իսկ զկնի անցանելոյ երկուց ամաց մեռաւ թագաւորն Հոռոմոց Ռոմանոս, և մնացեալ լինէր երկու որդիք, Վասիլն և Կոստանդին՝ որդիք Ռոմանոսի ծերոյն։ Եւ եղեւ յամի Նժ՚ թագաւորեաց Նիկիփոս ի վերայ տանն Յունաց. և էր այր բարի, սուրբ և աստուածասէր, լցեալ ամենայն առաքինութեամբ և արդարութեամբ, յաղթող և քաջ ի վերայ ամենայն պատերազմաց, ողորմած ի վերայ ամենայն հաւատացելոց Քրիստոսի, այցելու այրեաց և գերեաց, դարմանիչ որբոց և տնանկաց։ Սա ժողով արարեալ ահագին բազմութեամբ և անցեալ ընդ համատարած ծովն Ովկիանոս՝ գայ ի վերայ Տաճկաց, մոմռեալ որպէս զառիւծ սաստիկ պատերազմաւ, և խաղայր նախ յաշխարհն Կիլիկեցւոց և մեծաւ յաղթութեամբ առնոյր զՀռչակաւորն զՏարսոն քաղաք։ Եւ անցեալ էառ զԱտանա և զՄսիս և զականաւորն զԱնաւարզա և ահագին և սաստիկ կոտորած էած ի վերայ ազգին Տաճկաց մինչեւ ի դուռն Անտիոքայ քաղաքին։ Եւ դարձաւ թագաւորն Նիկիփոս մեծաւ յաղթութեամբ և անթիւ գերեօք և բազմաւ ստացուածովք դայ մտանել ի թագաւորաբնակ քաղաքն ի Կոստանդնուպոլիս. և զորդիսն Ռոմանոսի զՎասիլն և զԿոստանդինն առ իւր պահէր ի պաղատանն մեծաւ պատուով և փառաւորութեամբ։

Դարձեալ ի թուականութեանս Հայոց Նժ՚Ը ոմն մահապարտ, որ և յարդելական կղզւոջն կայր, որում անունն կոչէին Ջմշկիկ, գաղտ յուղարկեալ առ նա անօրէն և պիղծ թագուհին, որպէս թէ հրամանաւ թագաւորին, եհան զնա ի կղզւոյն և եբեր ի Կոստանդնուպոլիս առանց գիտելոյ թագաւորին, և ի ծածուկ արար ընդ նմա դաշինս սպանանել զՆիկիփոս թագաւորն, և խոստացաւ լինել նմա կին, և նստուցանել զնա յաթոռ թագաւորութեանն։ Եւ հաւանեցաւ առնել զհրամանս անօրէն թագուհւոյն։ Եւ սուրբ թագաւորն Նիկիփոս նստեալ կայր ի գահոյսն իւր ի ժամ երեկոյին և վառեալ մոմեղինօք ընծեռնոյր զաստուածային կտակագիրսն։ Եւ եկեալ թագուհին շաղապատէր զթագաւորաւն և զթուրն, որ կայր մօտ առ նա, փոկակապս արարեալ պնդագոյն և ելեալ գնաց առ չարախորհուրդն իւր. և ձեռօքն իւրովք տայր զթուրն մահաբեր ի նա՝ առ ի հեղուլ զարիւն արդարոյն։ Եւ եկեալ Ջմշկիկն և ծածկաբար ի ներքս վազեաց ի սենեակ թագաւորին։ Եւ տեսեալ զնա թագաւորն՝ ասէ ցնա. «Շո՛ւն

ծաններով։ [Հանդեսից] հետո Աղվանից թագավոր Փիլիպոսին և կաթողիկոս տեր Հովհաննեսին՝ թագավորին և հայրապետին ուղեկցող եպիսկոպոսների և զորքի հետ միասին մեծամեծ նվերներով ու պատվով ճանապարհեցին Աղվանից աշխարհը, որը Թադեոս և Բարդուղիմեոս սուրբ առաքյալների՝ Մեծ Հայքի առաջին հայրապետների, աթոռանիստն էր։

Երկու տարի անց վախճանվեց հոռոմների կայսր Ռոմանոսը[17]. մնացել էին ծերունի Ռոմանոսի երկու որդիները՝ Վասիլն ու Կոստանդինը[18]։ 412 թվականին [31 մարտ 963—29 մարտ 964 թ.] հունաց աշխարհի վրա թագավորեց Նիկեփորը[19]։ Սա բարի, սրբակրոն և աստվածասեր մարդ էր, ամեն մի առաքինությամբ և արդարամտությամբ օժտված, բոլոր պատերազմներում հաղթող և քաջ, համայն քրիստոնյաների հանդեպ ողորմած, այրիներին և գերիներին այցելող, որբերին ու տնանկներին ամոքող։ Նա զորահավաք արեց և, հսկայական զորքով անցնելով լայնատարած Օվկիանոս ծովը, հարձակվեց տաճիկների վրա, կատաղի մարտում առյուծի պես մռնչալով։ Նախ նա շարժվեց Կիլիկիայի վրա և, մեծ հաղթանակ տանելով, գրավեց հռչակավոր Տարսոն քաղաքը։ Ապա առաջ անցնելով գրավեց Ատանան, Մոփսը և նշանավոր Անավարզան, սոսկալի և մեծ ջարդ տվեց տաճիկներին՝ ընդհուպ մինչև Անտիոք քաղաքի դարպասները։ Եվ ահա Նիկեփոր կայսրը մեծ հաղթանակով, անթիվ-անհամար ռազմագերիներով և մեծ ավարով վերադառնում և մուտք է գործում Կոստանդնուպոլիս թագավորանիստ քաղաքը։ Նա Ռոմանոսի որդիներ Վասիլին և Կոստանդնին պահում էր իր մոտ՝ պալատում, մեծ պատվի ու փառքի մեջ։

Հայոց 418 թվականին [29 մարտ 969—28 մարտ 970 թ.] անօրեն և պիղծ կայսրուհին[20] Զմշկիկ անունով ոմն մահապարտի, որ արգելափակված էր մի կղզում, իբրև թե կայսեր կարգադրությամբ, թաքուն ազատում է և առանց կայսեր գիտության բերում Կոստանդնուպոլիս։ Նա [Զմշկիկի] հետ Նիկեփոր կայսեր սպանելու մասին գաղտնի համաձայնության է գալիս, խոստանում լինել նրա՝ Զմշկիկի կինը և կայսերական գահին նստեցնել նրան։ [Զմշկիկը] համաձայնվեց կատարել անօրեն կայսրուհու հրամանները։ Նիկեփոր սուրբ կայսրը երեկոյան, իր գահին բազմած, վառվող մոմերի տակ աստվածային կտակարանն էր ընթերցում։ Կայսրուհին մոտեցավ ու փաթաթվեց թագավորին, ապա, նրա թուրը պինդ կապելով [պատյանին], թողեց գնաց իր դավակցի մոտ, սեփական ձեռքով նրան տվեց մահաբեր թուրը՝ արդարի արյունը հեղելու համար։ Զմշկիկը եկավ և ծածուկ մտավ կայսեր սենյակը։ Կայսրը, տեսնելով նրան, ասաց. «Կատաղած շուն, ի՞նչ

կատաղեալ, ասա զի՞նչ ուզիս։ Եւ քաջապէս յարուցեալ թագաւորն յուղէր զթուրն և ահեալ զի սաստկապէս պնդեալ էր, յայնժամ Զմշկիկն յարձակեցաւ ի վերայ թագաւորին և անխնայ զալանաբար խողխողէր զամենաբարի արքայն և հերձեալ զնա յերիս մասունս. և սպանեալն սուրբ թագաւորն ծածկեալ լինէր ի մէջ արեանն իւրոյ և աւանդէր զհոգին ի Քրիստոս դառն մահուամբ։ Եւ տեսանէին զի այծեայս զգեցեալ էր թագաւորն մերկուց ի վերայ մարմնոյն ծածկեալ ծիրանեօք. և արիւնն սփռեալ յայտէր զերեսօք սպանողաց զայրն Աստուծոյ. և զմարմին նորա թաղեցին մօտ առ սուրբ թագաւորացն յարժանաւոր գերեզմանին։ Եւ նստաւ յաթոռ թագաւորութեանն Յունաց անօրէն Զմշկիկն և տիրեալ էառ զկոստանդնուպօլիս և զամենայն սահմանս աշխարհին Հոռոմոց արար ընդ իշխանութեամբ իւրով. և զորդիս Ռոմանոսի թագաւորին փախոյց ի յանօրէն թագուհւոյն ի Վասակաւան ի Յանձիթ գաւառին. տարան զվասիլն և զկոստանդինն առ Սպրամիկն՝ մեծ Մխիթարայ մայրն, զի մի՛ դեղ մահու տացէ նոցա թագուհին և սպանանիցէ զնոսա։ Եւ յաղագս անլիրաւ մահուանս այս կայր ի մեծի տրտմութեան թագաւորն Զմշկիկ անհանգիստ վիրաւորեալ ոգւով։

Իսկ ի վերանալ թուականութեանս Հայոց ի ԴՃԻ մեռանէր Գագիկ արքայն խաղաղական մահուամբ։ Եւ եղեւ հակառակութիւն և աղմուկ մեծ ի մէջ երկու որդւոց թագաւորին Գագկայ՝ ընդ Յովհաննէս և ընդ Աշոտ։ Յովհաննէս աւագ էր քան զԱշոտ և իմաստուն և հանճարեղ յոյժ, բայց մարմնովն տարտամ և հեղգ և թուլամորթ ի պատերազմունս և անկիրթ. իսկ Աշոտ կրտսեր էր, այլ էր արի և քաջ և զօրաւոր, անպարտելի և յաղթող ի պատերազմունս։ Բայց բռնակալեաց Յովհաննէս զաթոռ թագաւորութեանն Հայոց. և Աշոտ շրջէր զօրօքն և աւար հարկանէր զբազում տեղիս և նեղէր զքաղաքն Անի. և գնացեալ առ Սենեքարիմ թագաւորն Վասպուրականի, առ որդին Ապուսահլի՝ որդւոյ Աշոտոյ, որդւոյ Դերենկանն, որդւոյ Գագկայ՝ Արծրունի ազգաւ, որիք Աղրամելեքայ արքային Ասորեստանեայց։

Եւ առեալ Աշոտ զօրս ի նմանէ և անցանէր առ Գուրգէն թագաւորն Անձևացեայց և խաղայր զօրօքն և գայր հասանէր ի լեառն Վարագ և մտանէր ի վանք սրբոյ Նշանին Քրիստոսի. և երկրպագեալ առաջի աստուածընկալ հաչին Աստուծոյ և պատկերի սրբուհւոյ Աստուածածնին և տուեալ յոսկւոյն Արաբացւոց ընծայ սրբոյ Նշանին երեսուն հազար դահեկանս՝ զոր եհան ի Բաղդատ քաղաքէն, զոր էր պարգևեալ նմա խալիփային, և արար գայն Աշոտ պահարան սրբոյ Նշանին և զարդարեաց զնա ակամբք և մարգարտօք. և ինքն զօրօք բազմօք հասանէր ի թագաւորանիստ քաղաքն յԱնի։ Եւ իբրև լուաւ Յովհաննէս զգալն Աշոտոյ եղբօրն իւրոյ,

ես փնտրում այստեղ»։ Կայսրն անվախ վեր կենալով, քաշում է թուրը, բայց տեսնում է, որ այն շատ ուժեղ ամրացված է [պատյանին]։ Այդ միջոցին Ջմշկիկը հարձակվում է կայսեր վրա և անխնա կերպով, գազանաբար խողխողում է ամենաբարի արքային, երեք մասի բաժանելով նրա [մարմինը]։ Սպանված սուրբ կայսրը ողողվեց իր արյամբ և դառն մահվամբ հոգին ավանդեց Քրիստոսին։ Շիրանու տակ երևում էր այծի մազից պատրաստված հանդերձը, որ մերկ մարմնի վրա հագել էր կայսրը։ Արյունը ցայտելով սփռվել էր աստծո մարդուն սպանողների երեսին։ Նրա մարմինը թաղեցին սուրբ կայսրերի [գերեզմաններին] կից մի հարմար գերեզմանում։ Հույների թագավորության գահին նստեց անօրեն Ջմշկիկը և իր իշխանությունը տարածեց Կոստանդնուպոլսի և հռոմոց բովանդակ երկրի վրա։ Նա անօրեն կայսրուհու մոտից Անձիտ գավառի Վասակավան [վայրը] փախցրեց Ռոմանոս կայսեր որդիներին. Վասիլին և Կոստանդնին տարան մեծ Մխիթարի մոր՝ Սպրամիկի մոտ, որպեսզի թագուհին չթունավորի նրանց։ Ջմշկիկ կայսրը Նիկեփորի անարդար սպանության առթիվ մեծ տրրտմության մեջ էր, նրա հոգին հուզված էր և խոցված։

Հայոց 420 թվականի[21] [29 մարտ 971—27 մարտ 972 թ.] սկզբին բնական մահով վախճանվեց Դագիկ թագավորը. նրա երկու որդիների՝ Հովհաննեսի և Աշոտի միջև երկպառակություն և մեծ վեճ ծագեց։ Հովհաննեսը տարիքով Աշոտից մեծ էր, իմաստուն, շատ խոհեմ, բայց մարմնով թույլ ու տկար, պատերազմական գործերում թուլամորթ ու անփորձ։ Աշոտը, թեև կրտսերն էր, բայց խիզախ էր ու քաջ, հզոր և անպարտելի, պատերազմներում հաղթող։ Երբ հայոց թագավորության գահին բռնությամբ տիրացավ Հովհաննեսը, Աշոտը զորքով շրջում էր, բազում վայրեր ավարի առնում և նեղում Անի քաղաքին։ Ապա նա գնում է Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունու մոտ՝ Ապուսահլի որդու, Աշոտի որդու, Դերենիկի որդու, Դագիկի որդու[22], որոնք սերում էին Ասորեստանի արքա Ադրամելիքից։

Աշոտը, նրանից զորք ստանալով, գնում է Անձավացյաց Դուրգեն թագավորի մոտ, [ապա] շարժվում և զորքով հասնում է Վարագա լեռը ու մտնում Քրիստոսի Սուրբ Նշանի վանքը։ Նա երկրպագում է աստծո աստվածընկալ խաչի և սրբուհի աստվածածնի պատկերի առջև։ Աշոտը խալիֆայից պարգև ստացած և Բաղդադ քաղաքից իր հետ բերած արաբական ոսկուց երեսուն հազար դահեկան ընծայում է Սուրբ Նշանին, որով Աշոտը Սուրբ Նշանի համար պահարան է պատրաստում և այն զարդարում թանկագին քարերով և մարգարիտներով։ Այնուհետև նա մեծաթիվ զորքով հասնում է Անի թագավորանիստ քաղաքը։ Երբ

հրամայեաց փող պատերազմի հարկանել, և ինքն ի գահոյն անշարժ նստեալ կայր, վասն զի անհմուտ էր պատերազմի. և դղրդեալ քաղաքն Անի՝ ելանել ի պատերազմ ընդ Աշոտոյ քառասուն հազար հետևակաց և քսան հազար ձիաւորաց: Եւ յայնժամ մի ոմն իշխան ի զօրաց թագաւորին Վրաց՝ ի դեսպանութիւն եկեալ առ Յովհաննէս արքայ. վասն զի մայրն Յովհաննիսի և Աշոտոյ դուստր էր Վրաց թագաւորին Գէորգէ՝ Կատրամիդէս թագուհին. և ասէր իշխանն Վրաց ընդ թագաւորն Յովհաննէս. «Ո՛վ արքայ Յովհաննէս, հրամայեա զի յուսանիցին ինձ միայն զԱշոտ, և ես ձերբակալ արարից զնա և կապանօք բերից զնա առաջի քո»: Վասն զի այրն այն էր այր քաջ և անպարտելի ի պատերազմ. և ասէր Յովհաննէս թագաւորն ցայրն այն. «Ահա այր հզօր է Աշոտ, դու զիա՞րդ կարես ածել զնա առաջի իմ»: Եւ ասէր իշխանն Վրաց. «Ի ձիոյն առից զնա կենդանի»: Ասէ ցնա Յովհաննէս, եթէ «Զկորիւն առիւծու մի՛ արհամարհիցես՝ մինչև տեսանիցես»: Եւ յորժամ ճակատեցան ընդ միմեանս, իշխանն որ յԱփխազաց, որպէս զարծուի ընթացեալ ի ձայն բարձր յուզէր զԱշոտ և ասէր. «Ո՛վ է Աշոտ, յառաջ եկեսցէ»: Եւ լուեալ Աշոտ եղեւ զայրացեալ իբրեւ զինծ. և յուզեալ զմիմեանս ընթանային առ իրեարս. և իշխանն Վրաց զնիզակն եդեալ ի վերայ Աշոտոյ, իսկ Աշոտ իբրեւ զկայծակն ի ներքոյ անցանէր և հարկանէր զնա պողովատովն ի վերայ սադաւարտին և զերկաթապատ մարմինն պատառեաց մինչև ցերս տինան և հանդիպեալ միջօքն յերկիր ընկենոյր: Եւ եղեւ յաւուր յայնմիկ սաստիկ պատերազմ. և դարձուցին զքաղաքն ի փախուստ, մինչ զի փախուցեալքն ոչ ժամանէին մտանել ի քաղաքն, այլ յԱխուրան գետն անկանէին. և դարձաւ Աշոտ մեծաւ յաղթութեամբ: Եւ յետ աւուրց ինչ խորհեցան Բագրատունիքն և Պահլաւունիքն և այլ ամենայն ազատազունդ զօրքն Հայկազանց առնել խաղաղութիւն ի մէջ Յովհաննիսի և Աշոտոյ: Եւ յայնժամ սուրբ Հայրապետն Պետրոս և իշխանքն ամենայն ելին առ Աշոտ և մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն Հայոց, և Յովհաննէս նստոյն թագաւոր ի քաղաքն յԱնի. և եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն տանն Հայոց: Եւ յայնժամ եղեւ խաղաղութիւն ամենայն աշխարհին Հայոց:

Յայնմ ժամանակի նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ՝ հրամանաւ ազգապետին իւրոյ Գագկայ Հայոց արքային, և Գուրգէն՝ յԱղուանից աշխարհն, վասն զի յազգէ Հայոց թագաւորացն էին և կային ի հնազանդութիւն տանն Շիրակայ: Իսկ թագաւորն Աշոտ ոչ ժամանեաց բնաւ մտանել ի քաղաքն յԱնի մինչև ցօր մահուան իւրոյ:

Հովհաննեսը լսեց իր եղբոր՝ Աշոտի գալստյան մասին, հրամայեց պատերազմական շեփորը հնչեցնել, բայց ինքը անշարժ մնաց իր գահի վրա, որովհետև պատերազմ վարելու փորձ չուներ։ Եվ դղրդաց Անի քաղաքը, ոտքի ելավ պատերազմելու Աշոտի քառասուն հազարանոց հետևակի և քսան հազարանոց այրուձիի դեմ։ Այն ժամանակ վրաց թագավորի[23] զինվորականներից մի իշխան դեսպանությամբ եկել էր Հովհաննես արքայի մոտ. Հովհաննեսի և Աշոտի մայրը, Կատրամիդե թագուհին, վրաց թագավոր Դիորգիի դուստրն էր։ Վրաց իշխանը[24] Հովհաննես թագավորին ասաց. «Ո՞վ արքա Հովհաննես, հրամայի՛ր ինձ ցույց տան Աշոտին, և ես նրան կձերբակալեմ ու շղթայակապ քեզ կբերեմ»։ [Նա այդպես էր ասում], որովհետև քաջ մարդ էր և պատերազմում անպարտելի։ Հովհաննես թագավորը պատասխանեց նրան. «Աշոտը ուժեղ մարդ է, դու ինչպե՞ս կարող ես նրան ինձ բերել»։ Ասաց վրաց իշխանը. «Ես նրան ձիու վրայից ողջ-ողջ կառնեմ»։ Հովհաննեսը պատասխանեց նրան, թե «Առյուծի ձագին չտեսած մի՛ արհամարհիր»։ Երբ ճակատ առ ճակատ բախվեցին միմյանց, ափխազաց իշխանը, արծվի նման սլանալով, բարձրաձայն Աշոտին էր կանչում, ասելով. «Ո՞վ է Աշոտը, թող առաջ գա»։ Աշոտը, լսելով դա, հովազի նման կատաղեց։ Մեկը մյուսի վրա գազազած, նրանք շարժվեցին միմյանց վրա։ Վրաց իշխանը նիզակն ուղղեց Աշոտի վրա, բայց Աշոտը, կայծակի արագությամբ նրա տակից անցնելով, թրով հարվածեց սաղավարտին և նրա զրահապատ մարմինը մինչև ոտինքը երկուսի բաժանեց, թափեց փորոտիքը և գետին տապալեց։ Այդ օրը կատաղի մարտ տեղի ունեցավ, քաղաքի բնակչությունը դիմեց փախուստի։ Փախստականները, չկարողանալով քաղաք մտնել, ընկնում էին Ախուրյան գետը։ Աշոտը վերադարձավ մեծ հաղթանակով։ Մի քանի օր անց Բագրատունիներն ու Պահլավունիները և հայոց ամբողջ ազատագունդ զորքը որոշեցին Հովհաննեսին և Աշոտին հաշտեցնել։ Այն ժամանակ Պետրոս սուրբ Հայրապետն[25] ու բոլոր իշխանները գնացին Աշոտի մոտ և, մեծ երդում տալով, [նրան] դարձրին բովանդակ Հայաստանի թագավոր, իսկ Հովհաննեսին՝ Անի քաղաքի։ Հովհաննեսի մահվան դեպքում Աշոտը դառնալու էր համայն Հայաստանի թագավոր։ Այսպիսով, ահա ամբողջ հայոց աշխարհում խաղաղություն տիրեց։

Այն ժամանակ Աբասը իր ազգապետ[26] հայոց Գագիկ արքայի հրամանով դարձավ Կարսի թագավոր, իսկ Գուրգենը՝ Աղվանքի. նրանք հայոց թագավորներից էին սերում և ենթարկվում էին Շիրակի թագավորությանը։ Բայց Աշոտ թագավորին վիճակված չէր մինչև իր մահվան օրը մտնել Անի քաղաք։

Իսկ յայսմ աւուրս Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ, սա վասն Աշոտոյ միաբանութեանն, զոր ունէր յառաջագոյն, երկուցեալ ի թագաւորէն Յովհաննիսէ, ապստամբեալ փախեաւ ի նմանէ և գնաց ի Դուին քաղաք առ Ապուսուար զօրավարն Պարսից և երկոտասան հազար ձիաւորք ընդ նմա։ և Ապուսուար մեծարեալ զնա բազում աւուրս։ Յայնժամ մատեան առ Ապուսուար չարախօսք ոմանք և ասեն, եթէ «Այսպիսի այր յաղթող և զօրաւոր և զօրօք բազմօք եկեալ է առ քեզ, կորուստ գործէ քեզ և ամենայն տանս Տաճկաց»։ Յայնժամ ոխս առեալ ամիրային ի սիրտ իւր, և գաղտ յայլ զօրացն ի զրոյց սիրոյ կոչեաց զԱպիրատն և ի ծածուկ կորոյս զայնպիսի այր քաջ, հզօր և անուանի ի մէջ ամենայն աշխարհին Հայոց։

Իսկ իշխան ոմն Սարի անուն, որ էր զօրավար մեծ իշխանին Ապիրատին, առեալ զկին և զորդիս նոցա և զհեծելագունդ զօրսն և գնաց ի քաղաքն յԱնի. և թագաւորն Յովհաննէս կարի յոյժ ապաշաւէր զանիրաւ մահն Ապիրատին Հայոց իշխանին։ Եւ որդեաց նորա Ապլջահապայ և Վասակայ և Սարէ և ամենայն զօրացն տայր թագաւորն Հայոց գաւառս և զիշխանութիւնս։

Յայսմ ժամանակի զօրաժողով արարեալ թագաւորն Դելումաց և յանկարծիս գայր հասանէր ի Նիգ գաւառն Հայոց՝ մերձ ի յամուրն Բջնի։ Եւ Վասակ սպարապետն Հայոց սիրեցեալ որդւովն իւրով Գրիգորիւ և այլ փառաւոր ազատօքն նստեալ կայր մեծաւ ուրախութեամբ. և հայեցաւ Վասակ ի յառապարս ճանապարհին, և ահա գայր այր մի ի շտապս ընդ հետևակագնացս ճանապարհին. և տեսեալ Վասակայ՝ ասէր. «Գուժաբեր է այրն»։ Եւ հասանէր այրն ի դուռն բերդին Բջնոյ, ձայն աղաղակի բարձեալ՝ ասէր. «Գերեցաւ ամենայն գաւառն Նգաց»։ Յայնժամ գոչեաց որպէս զառիւծ քաջ զօրավարն Վասակ, և յարուցեալ զգենոյր զգեստ երկաթապատ, և զկնի նորա եւթն այր ազատ, և ըստ պատահելոյ ժամուն այլ հեծելազօրք զկնի նոցա։ Եւ կազմեցան ազատքն զկնի Վասակայ. և սլանայր քաջ և աղէկ անունն Փիլիպպէ, ընդ նմին և Գորգ և Զորտուանէլ և այլք ոմանք. և այսոքիկ արք քաջք և յաղթողք ի պատերազմունս։ և ոչ կարաց Վասակ համբերել սրտին, մինչև զօրքն ժողովէին, վասն զի կային ընդ ձեռամբ նորա արք իբրեւ հինգ հազար. և առ հպարտութիւն զօրութեան իւրոյ հինգ հարիւր արամբ յառաջեալ որպէս զառիւծ ի նգաց գաւառին, և յանձն արարեալ զտուն իւր և զամուրն Բջնի որդւոյ իւրում Գրիգորի։ Եւ հասանէր Վասակ ի վանք մի. հաղորդեցան ինքն և ամենայն զօրքն և խոստովանեցան զմեղս իւրեանց բարի խոստովանութեամբ, որ ի Քրիստոս Յիսուս։ Եւ ի ճանապարհին հանդիպեալ ի գեւղ մի և տեսին, զի այլազգիքն կոտորեալ էին զամենայն

Այդ օրերին հայոց մեծ իշխան Ապիրատը՝ Հասանի[27] որդին, անցյալում Աշոտի կողմն անցած լինելու համար երկյուղելով Հովհաննես թագավորից, ապստամբություն է բարձրացնում և տասներկու հազար ձիավորներով փախչելով նրանից, գնում է Դվին քաղաքը՝ պարսից Ապուսուար զորավարի մոտ, և Ապուսուարը բազում օրեր մեծարում է նրան։ [Բայց] այն ժամանակ Ապուսուարի մոտ են գալիս որոշ ղըզպարտիչներ և ասում, թե «Այսպիսի քաջ և հզոր մի մարդ, որ մեծ զորքով քեզ մոտ է եկել, քե՛զ էլ, տաճկաց ողջ երկի՛րն էլ կկործանի»։ Դրա վրա ամիրան, ոխ կապելով իր սրտում, մյուս զորականներից գաղտնի Ապիրատին բարեկամական զրույցի է հրավիրում և ծածուկ սպանում այս քաջ, հզոր և բովանդակ Հայաստանում հռչակված մարդուն։

Իսկ Սարի անունով մի իշխան, որը Ապիրատ մեծ իշխանի զորավարն էր, վերցնելով նրա կնոջն ու որդիներին և հեծյալ զորքը, գնում է Անի քաղաք։ Հովհաննես թագավորը անչափ շատ սգաց հայոց Ապիրատ իշխանի անարդար կորուստը, իսկ նրա Ապուլջահապ, Վասակ, Սարե որդիներին և բոլոր զինվորներին նա պարգևեց գավառներ և պաշտոններ։

Այս ժամանակ դելմիկների թագավորը[28], զորահավաք անելով, անսպասելիորեն գալիս հասնում է հայոց Նիգ գավառը[29], Բջնի ամրոցի մոտ, ուր մեծ ուրախությամբ հանգստանում էր հայոց սպարապետ Վասակը իր սիրելի որդի Դրիգորի[30] և անվանի այլ ազատների հետ։ Վասակը նայելով քարքարոտ ճանապարհին, տեսավ, որ հետիոտն գնացողներից մեկը շտապում է, ասաց. «Այս մարդը բոթաբեր է»։ Մարդը հասնելով Բջնի բերդի դարպասին, աղաղակեց և ասաց. «Ողջ Նիգ գավառը գրավվել է»։ Անմիջապես առյուծի պես մռնչաց Վասակ քաջ զորավարը և բարձրանալով՝ հագավ իր զրահապատ զգեստները։ Նրան հետևեցին նաև յոթ ազատներ և դիպվածով այնտեղ գտնվող մյուս հեծյալները։ Ազատները շարվեցին Վասակի ետևից։ Եվ սլացավ քաջ և անվանի Փիլիպեն, նրա հետ և Գորգն որ և Զորտվանել[31] և ուրիշներ. նրանք քաջ մարդիկ էին, պատերազմներում՝ հաղթող։ Վասակը չէր կարողանում սպասել մինչև զորքը գումարվի. նա իր հրամանատարության ներքո հինգ հազար հոգի ուներ։ Ապավինելով իր ուժին, նա հինգ հարյուր հոգով առյուծի պես նետվեց դեպի Նիգ գավառը, ընտանիքն ու Բջնի ամրոցը հանձնելով իր Գրիգոր որդուն։ Վասակը հասավ մի վանք, որտեղ ինքը և ամբողջ զորքը հաղորդություն ստացան և անկեղծորեն խոստովանեցին Հիսուս Քրիստոսի հանդեպ գործած իրենց մեղքերը։ Ճանապարհին նրանք հանդիպեցին մի գյուղի և ակամատես եղան, թե ինչպես ալազգիները գլխովին կոտորել էին գյուղի [բնակչությանը],

A 83078

գեւղն առ հասարակ, և զօրք այլազգեացն պատեալ էին շուրջ զեկեղեցեաւն և զհաւատացեալսն որք ի ներքս կային կոտորէին զնոսա յանխընայ սրով։ Եւ տեսեալ զայն քաջին Վասակայ, ձայնիւ գոչեաց որպէս զառիւծ, և յարձակեցաւ ի վերայ զօրացն այլազգեացն. և կոտորեցին զնոսա արս երեք հարիւր, և մնացեալքն փախստականք լեալք անկանէին ի զօրսն այլազգեաց։ Եւ ապա շարժեալ դային բազմութիւն բանակին Հայոց ի վերայ զօրացն այլազգեաց և իբրև անչափ անթիւ տեսանէին զբազմութիւն զօրացն այլազգեաց, յայնժամ միաբան զմահ առաջի եդեալ սկսան արիանալ ի պատերազմին և որպէս զգայլս ի մէջ այծեաց և կամ որպէս զարծուիս յերամս ձագուց, այնպէս արիաբար գնացին ի մէջ պատերազմին և զբազում խոցեալ դիաթաւալ յերկիր ձգէին։ Յայնժամ ախոյեան մի ելեալ ի զօրացն այլազգեաց սեաւ խափշիկ և այր քաջ, որ և Եւրն գայլ կոչէին զնա, վասն զինչ որ հօրն գայլքն ի յոչխարսն ելի ջոկս նոցա զործէին, սա ևս առաւել ի մէջ զօրաց պատերազմին։

Եւ ահա գայր խափշիկն իբրեւ զսեաւ ամպ որոտալով, որ բոց հատանէին ի վերայ զրահից նորա, և ձայն տուեալ և յանուանէ յուզէր զՎասակ։ Հայեցաւ քաջն Եմրան, և եհաս զնա, զի ահա գայր որպէս զլեառն մրրկեալ, դարձաւ առ Վասակ և ասէր. «Ահա այր անպարտելի և քաջ, որ այլ չէ ծնեալ ի վերայ երկրի»։ Եւ ասաց Վասակ. «Ո՛վ առիւծդ և քաջդ Եմրան, վասն է՞ր զարհուրեցար ընդ տեսիլ նորա. ահա ես ելից ընդդէմ նորա և տաց նմա զպարգեւքն, զոր ետ Դաւիթ Գողիաթու՝ հայհոյչին Աստուծոյ»։ Յայնժամ հասանէր զաղան այրն այն, ոումբ եդեալ քաջին Վասակայ, որպէս զի առցէ զնա ի ծայր գեղարդեանն իւրոյ. և ի շտապս լեալ Վասակ ի ներքս դիմեաց և պողովատ թրովն ի վերայ սաղաւարտին քահեաց և յերկուս հերձեաց զխափշիկ քաջն, որ և մասունք մարմնոյն յերկիր անկանէին. և հաստատեցան ի պատերազմն և յանհնարին գործոյն։ Եւ ի սաստկանալ մարտին և ի բազմանալ խոցուածոց սուսերացն՝ պակասեաց քաջն Եմրան, վասն զի յանհուն և յանհնար պատերազմէն ի միմեանց մոլորեալ եղեն դասք ազատացն, որ և զիրերաց մահ ոչ կարացին տեսանել։

Յայնժամ դարձաւ քաջն Վասակ միայնացեալ և դնայր իբրև զառիւծ զայրացեալ ընդ մէջ զօրաց այլազգեացն անցանէր և էր ձանձրացեալ ի մեծի պատերազմին և դիմեալ ելանէր ի լեառն, որ կոչէր Սերկեւելոյ, և ի բազում հալածանաց պատերազմին նստեալ ընդ հովանեաւ քարանցն, և տեսեալ զնա շինականացն որ փախուցեալ էին։ Յայնժամ մի ոմն նմանեալ Կայենի սպանողին, եկեալ գտանէր զնա, զի ննջէր ի վըշտացն. ուժգին բախեաց զնա և ընկէց ընդ բարձրութիւն քարին. և այս-

ինչպես նրանք շրջապատել էին եկեղեցին և անխնա սրախողխող էին անում ներսում ապաստանած հավատացյալներին: Քաջ Վասակը, տեսնելով դա, առյուծի պես մռնչաց և հարձակվեց այլազգիների զորքի վրա և կոտորեց երեք հարյուր հոգի. մնացածները, փախուստի դիմելով՝ միացան այլազգիների [հիմնական] զորաբանակին: Հայոց մեծաթիվ բանակը հարձակվեց այլազգիների զորքի վրա: Տեսնելով, որ այլազգիների զորքը անթիվ-անհամար է, բոլորը միասին, աչքի առաջ ունենալով մահը, սրտապնդվեցին պատերազմի և, ինչպես գայլերը այծերի մեջ, և արծիվները՝ թռչունների երամների, ահա այդպես խիզախորեն դիմեցին պատերազմի և շատերին խողխողելով դիաթավալ գետին տապալեցին: Այդ միջոցին այլազգիների զորքի միջից դուրս եկավ մի քաջ մենամարտիկ՝ սևամորթ խափշիկ, որին Յոթ Գայլ էին անվանում, որովհետև այն, ինչ յոթ գայլ կարող էին անել ոչխարի հոտի մեջ, սա ավելին էր անում պատերազմի դաշտում:

Ահա գալիս է խափշիկը սև ամպի նման որոտալով. նրա ղրահը բոցի պես փայլում էր. նա կանչում և հանվանեն փնտրում էր Վասակին: Նայեց քաջ Եմրանը և տեսավ նրան, որ գալիս էր ինչպես մրրկյալ լեռ. դիմելով Վասակին, ասաց. «Ահա անպարտելի և քաջ մի մարդ, որի նմանը երկրի վրա դեռ չի ծնվել»: Վասակը պատասխանեց. «Ո՛վ դու առյուծասիրտ և քաջդ Եմրան, ինչո՞ւ վախեցար նրա տեսքից. ահա, ես դուրս եմ գալիս նրա դեմ և նրան կտամ այն նույն պարգևը, ինչ Դավիթը տվեց աստծուն անարգող Գողիաթին»: Հենց այդ պահին վրա խուժեց այդ մարդ-գազանը և փորձեց քաջ Վասակին իր նիզակի ծայրին առնել[32]: Վասակը, փութով անցնելով նրա նիզակի տակից, սլողվատիկ թրով հարվածում է նրա սաղավարտին և քաջ խափշիկին երկուսի բաժանելով, մարմնի մասերը փռում գետնին: Դրա վրա [հայերը] սրտապնդվեցին կռվելու և կատարելու անհնարինը: Մարտի թեժ պահին, երբ սուսերներից խոցվածները շատացան, քաջ Եմրանը կորավ. երկարատև և դժվարին մարտում աղատների խմբավորումները ցիրուցան եղան, և մեկը մյուսի մահը չկարողացավ տեսնել:

Մնալով միայնակ, քաջ Վասակը գազազած առյուծի նման մխրճվեց այլազգիների զորքի մեջ և [ճեղքելով] դուրս եկավ: Կատաղի մարտից հոգնած, նա գնաց բարձրացավ Սերկևելի կոչվող լեռը և պատերազմի տանջանքներից հանգստանում էր ժայռերի հովին: Փախստական գյուղացիները տեսնում են նրան և ոճրագործ կայենի[33] նման մեկը, գտնելով նրան վշտահար քուն մտած, ուժգին հարված հասցնելով՝ ժայ-

պէս կատարեցաւ քաջն Վասակ Պալհաւունին։

Դարձեալ այս ինչ գործեցաւ ի Հայոց թուականութեանն՝ յամին ՆԻԱ, վասն զի զօրապետն Հոռոմոց Դեմեսլիկոսն, որում անուն Մլեհ ասէին, ելեալ բազում զօրօք գայր ի վերայ Տաճկաց և ի տեղիս տեղիս յաղթեաց նոցա օգնականութեամբն Քրիստոսի. և գայր հասանէր ի քաղաքն Մելտենու և բազում չարչարանօք նեղեալ զքաղաքն արգելեալ ի հացէ և ի ջրոյ և այնու հաւանեցուցանէր զքաղաքն Մելտենի և յարուցեալ դնայր մեծաւ ուրախութեամբ իջանէր ի վերայ Տիգրանակերտ քաղաքին, որ անուանեալ կոչի Ամիթ, ի վերայ Տգլատ գետոյ։ Եւ զօրքն Տաճկաց ելեալ ի պատերազմ ընդ զօրսն Հոռոմոց և արարին սաստիկ պատերազմ մերձ առ դուրս քաղաքին Ամթայ և զօրքն Տաճկաց դարձան ի փախուստ առաջի զօրացն Հոռոմոց և բազում կոտորածս եղեալ ի նոցանէ մտին ի քաղաքն. և զօրքն Հոռոմոց բնակեցան առ ափն գետոյն, ի տեղին, որ կոչի Աւսալ, մերձ ի քաղաքն երկու նետընկէցս։ Եւ յետ սակաւ աւուրց աստուածասաստ բարկութիւնն շարժեցաւ յերկնից, և ահա ելանէր հողմն ուժգնակի, մինչեւ ի սաստկութենէ զոչմանն շարժէր երկիրն և ի բռնութենէ հողմոյն հող երկրին ի վեր հոսեալ տարածէր ի վերայ զօրացն քրիստոնէից. և թանձրացեալ փոշին ծածկէր զմարդն և զանասուն և զամենայն կարասի նոցա ի գետ անդր լնոյր, և ի փոշւոյն խաւարեալ կուրանային մարդ և անասուն, և յաստուածասաստ բարկութենէ փոշւոյն փակեալ մթացան ամենայն աչք ի լուսոյ. և եղեն պաշարեալ ամենայն զօրքն Հոռոմոց և զելս իրացն ոչ կարէին գտանել։ Եւ յայնժամ զօրք այլազգեացն տեսին զբարկութեան կատարածն ի վերայ քրիստոնէիցն և գիտացեալ զի Աստուած պատերազմի ընդ նոսա և առ հասարակ բախեցան զօրքն այլազգեաց ի վերայ քրիստոնէից զօրացն և յանխնայ սրախողխող կոտորեցին զնոսա անողորմ, և էին արք իբրև յիսուն հազար, և սակաւք էին որ կարացան փախչել յերեսաց սրոյն. և մեծ մասն զօրացն կոտորեցան։ Եւ զզօրավարն զԴեմեսլիկոսն և զայլ մեծամեծ իշխանսն Հոռոմոց ձերբակալ արարին և ածին ի քաղաքն Ամիթ, քառասուն իշխանք մեծամեծք և անուանիք ընդ նմա։ Եւ յորժամ տեսին իշխանք այլազգեացն զկորուստ զօրացն Հոռոմոց, զարհուրեալ երկեան յոյժ և ասացին՝ եթէ «Զայս ամենայն արիւնս, զոր հեղաք ի տանէն Հոռոմոց, մեզ ոչ մնայ. գան Հոռոմայեցիքն և անցուցանեն ըզտունս Տաճկաց։ Սկայք արասցուք սէրս և միաբանութիւնս ընդ զօրապետս և ընդ իշխանս Հոռոմոց և առցուք երդումն ի նոցանէ և արձակեսցուք զնոսա խաղաղութեամբ յաշխարհն իւրեանց»։ Եւ ի խորհելն նոցա զայս՝ եհաս համբաւ սպանմանն Նիկիփորոյ թագաւորին Հոռոմոց։ Եւ յայնժամ իշխանք այլազգեացն յուղարկեցին զիշխանս քրիս-

ռից ցած է գլորում։ Ահա այսպես մեռավ քաջ Վասակ Պահլավունին[84]։

Ահա թե ինչ տեղի ունեցավ հայոց 421 թվականին [28 մարտ 927—27 մարտ 973 թ.]։ Հոռոմների սպարապետը, այն է Դեմեսլիկոսը[85], որին Մլեհ էին կոչում, բազմաթիվ զորքով հարձակվում է տաճիկների վրա և Քրիստոսի օգնությամբ տարբեր տեղերում նրանց պարտության մատնում։ Նա շարժվում հասնում է Մելիտենե[86], քաղաքը դնում դժվարին դրության մեջ՝ զրկելով հացից ու ջրից և այդ ճանապարհով ստիպում հանձնվել։ Այնտեղից վեր կենալով, մեծ ոգևորությամբ հարձակվում է Տգլաթ գետի[87] վրա կառուցված Տիգրանակերտ քաղաքի վրա, որը Ամիթ էլ է կոչվում։ Տաճիկների զորքը պատերազմի դուրս եկավ հոռոմների դեմ։ Ամիթ քաղաքի դարպասների մոտ տեղի ունեցավ կատաղի մարտ. հոռոմոց զորքը տաճիկներին փախուստի մատնեց. տաճիկները բազում զոհեր տալով մտան քաղաք։ Հոռոմների զորքը ճամբարեց գետի ափին, Ավսալ կոչվող վայրում, քաղաքից երկու նետընկեց հեռավորության վրա։ Մի քանի օր անց երկնքից թափվեց աստծո ցասումը. բարձրացավ սաստիկ քամի, որի սարսափելի ոռնոցից երկիրն էր սասանվում։ Ուժգին հողմը գետնի հողը երկինք բարձրացրեց ու թափեց քրիստոնյա զինվորների վրա։ Թանձր փոշին ծածկեց մարդ և անասուն. նրանց ողջ գումակը գետը թափվեց։ Աստծո պատիժը՝ սաստիկ փոշին, կուրացրեց մարդկանց և անասուններին, փակվեցին, խավարեցին բոլորի աչքերը, հոռոմների բովանդակ զորքն ընկավ պաշարման մեջ և չէր կարողանում այդ վիճակից դուրս գալու ելք գտնել։ Այլազգիների զինվորները, տեսնելով քրիստոնյաների գլխին եկած աղետը, ենթադրեցին, որ աստված պատերազմում իրենց հետ կլինի, դրա համար բոլորը միասին հարձակվեցին քրիստոնյա զինվորների վրա և առանց խնայելու՝ անգթաբար սրախողխող արեցին, կոտորեցին նրանց։ [Քրիստոնյաների] շուրջ հիսուն հազարանոց զորքից քչերը միայն կարողացան սրից խուսափել. զորքի մեծ մասը կոտորվեց։ [Այլազգիները] գերեցին հոռոմների Դեմեսլիկոս զորավարին, նրա հետ նաև քառասուն այլ մեծամեծ ու երևելի իշխանների և տարան Ամիթ քաղաքը։ Այլազգիների իշխանավորները, ականատես լինելով հոռոմների զորքի կործանմանը, ահ ու սարսափի մեջ ընկան և ասացին. «Այսքան արյունը, որ թափեցինք հոռոմների տնից, մեզ չի մնա։ Հոռոմները կգան և կկործանեն տաճկաց տունը։ Եկե՛ք հաշտվենք ու համաձայնության գանք հոռոմների զորահրամանատարների և իշխանավորների հետ, նրանցից երդում առնենք և թույլ տանք խաղաղությամբ գնան իրենց երկիրը»։ Երբ նրանք այդ բանի շուրջն էին մտածում, հասավ հոռոմոց Նիկեփոր կայսեր սպանության լուրը[88]։ Դրա վրա այլազգիների ավագ-

տունէից զքառասունսն առ խալիփայն ի Բաղդատ քաղաք և ամենեքեան անդ մեռան։ Եւ գրեաց Դեմեսլիկոսն ի Կոստանդնուպօլիս թուղթ, և գրեաց ի նմա անէծս ցաւագինս և ասէր այսպէս, զի թէ «Մեք ոչ էաք արժանի ըստ օրինի քրիստոնէից մտանել ի յօրհնեալ հող գերեզմանի, այլ եղաք ժառանգորդս անիծեալ հողոյ և չարագործաց գերեզմանի. և ահա մեք զձեզ ոչ գիտեմք, որ նստաւ յաթոռ սուրբ թագաւորութեանն Հոռոմոց. և զմահս մեր և զարիւն, զոր հեղաւ ի դուռն Ամիթ քաղաքին, և զօտար մահս մեր ի գլխոյ քո խնդրեսցէ Քրիստոս Աստուած մեր ի յաւուր դատաստանին, եթէ ոչ արասցես վրէժխնդրութիւն ի քաղաքէն Ամթայ»։ Եւ իբրև հասանէր թուղթս այս առ թագաւոր Ջմշկիկ ի Կոստանդնուպօլիս, և եղեւ յորժամ լուաւ զայս թագաւորն, շարժեալ լինէր մեծաւ բարկութեամբ և լի իսկ եղեալ ամենայն սրտմտութեամբ. և ի նոյն ամին զօրաժողով արար առ հասարակ զամենայն աշխարհն արեւմտից, զայր զօրացեալ, որպէս հուր բորբոքեալ լինէր, և յարձակեցաւ ի պատերազմ ի վերայ Տաճկաց և կամեցաւ բզմուան յաշխարհն Հայոց առնել։

Յայնժամ ամենայն թագաւորազունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհայ տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն և Սեւնեքերիմ Վասպուրականին տէրն և Գուրգէն Անձեւացեացն տէրն և բովանդակ ամենայն տունն Սասանու. և բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրեւ ութսուն հազար։ Եւ եկեալ հրեշտակ թագաւորին Հոռոմոց առ նոսա և տեսին պատրաստական զամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր և երթեալ պատմեցին թագաւորին Ջմշկիանն. գնացին և յիշխանացն Հայոց ոչնչի հրեշտակացն Հոռոմոց՝ իմաստասէրն Լեւոն և Ստատ իշխանն Բոռնեցին և այլ եպիսկոպոսք և վարդապետք և արարին սէր և խաղաղութիւն ընդ թագաւորին Հոռոմոց և ընդ Աշոտայ արքային Հայոց։ Եւ գայր խաղայր թագաւորն Ջմշկիկ ահագին բազմութեամբ և հասանէր ի Տարօն գաւառ Հայոց և իջեալ ի Մուշ առաջի Այծեաց բերդին. և յառաջին գիշերն բաղում նեղութիւն կրեաց զօրքն Հոռոմոց ի հետեւակ զօրացն Սասանու և եկին իշխանքն և վարդապետքն Հայոց առ թագաւորն Հոռոմոց և մատուցանէին առաջի նորա զթուղթն Վահանայ Հայոց կաթուղիկոսին։ Եւ թագաւորն առեալ ընկալաւ զնա և յոյժ մեծարեաց զթուղթն և զբերողն. և հաստատեաց ուխտ սիրոյ ընդ Հայք և խնդրեաց զօրս յԱշոտոյ գալ նմա յօգնականութիւն. և տուեալ Աշոտ զօրս ի տանէ Հայոց վառելոց և այր պատերազմողս իբրեւ տասն հազար, խնդրեաց կերակուրս, ոռճիկս. և զամենայնն տուեալ նմա Աշոտ։ Եւ զվարդապետն Հա-

ները քառասուն քրիստոնյա իշխանավորներին ուղարկեցին Բաղդադ՝ խալիֆային, ուր բոլորն էլ նահատակվեցին։ Դեմետրիկոսը նամակ ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ սարսափելի անեծքներով լի, ուր ասված էր. «Մենք արժանի չդարձանք քրիստոնեական կարգով գերեզմանի օրհնված հողին հանձնվելու, մեզ բաժին ընկավ անիծված հողն ու չարադործների գերեզմանը։ Մենք չգիտենք, թե ո՞վ է նստած հոռոմների սուրբ թագավորության գահին։ Եթե դու մեր մահվան և Ամիթ քաղաքի դռների առջև թափված արյան համար Ամիթ քաղաքից վրեժ չլուծես, վերջին դատաստանի օրը Քրիստոս-աստվածը մեր՝ մեր անտեղի մահը քո գլխից պիտի պահանջի»։ Երբ այս նամակը հասավ Կոստանդնուպոլիս՝ Ջմշկիկ կայսեր, և նա տեղեկացավ եղածի մասին, շատ զայրացավ և համակվեց մեծ ցասմամբ։ Նույն տարին նա համայն արևմըտական աշխարհում զորահավաք կատարեց և հզորացած, բորբոքյալ կրակի պես դիմեց պատերազմի՝ ընդդեմ տաճիկների։ Նա որոշեց անցնել հայոց աշխարհի վրայով։

Այն ժամանակ հայոց Աշոտ Բագրատունի թագավորի մոտ հավաքվեցին հայոց բոլոր թագավորազունները, ազատները, իշխաններն ու Արևելյան տան բոլոր երկրների ղեկավարները՝ Կապանի թագավոր Փիլիպեն, Աղվանից թագավոր Դուրգենը[39], Կարսի տեր Աբասը, Վասպուրականի տեր Սենեքերիմը[40], Անձևացյաց տեր Դուրգենը և ողջ Սասնա տունը[41]։ Նրանք, շուրջ ութսուն հազար հոգի, բանակեցին Հարք գավառում։ Հոռոմոց կայսեր սուրհանդակները, գալով նրանց մոտ և տեսնելով, որ հայոց աշխարհի ամբողջ [զորքը] պատրաստ կենտրոնացած է մի տեղ, վերադարձան և այդ մասին պատմեցին Ջմշկիկ կայսեր։ Հոռոմոց սուրհանդակների ետևից գնացին նաև հայոց իշխաններից Լևոն Իմաստասերը[42], իշխան Ստատ Թոռնեցին[43], մի քանի եպիսկոպոսներ ու վարդապետներ և հոռոմների կայսեր ու հայոց արքա Աշոտի միջև հաշտություն ու բարեկամություն հաստատեցին։ Ջմշկիկ կայսրը հրսկայական զորքով եկավ հասավ հայոց Տարոն[44] գավառը և բանակեց Մշո Այծյաց բերդի առջև։ Առաջին գիշերը հոռոմոց զորքը շատ նեղություն կրեց Սասունի հետևակից։ Հայոց իշխաններն ու վարդապետները եկան հոռոմոց կայսեր մոտ և նրան հանձնեցին հայոց Վահան կաթողիկոսի[45] նամակը։ Կայսրը ընդունեց նամակը, գովեց այն և պատվեց նամակաբերին։ Նա հաշտություն կնքեց հայոց հետ և խնդրեց, որ Աշոտը իրեն օգնական զորք ուղարկի։ Աշոտը Հայաստանի սպառազեն զորքից շուրջ տասը հազար ռազմիկներ տվեց։ [Ջմշկիկը] խնդրեց նաև կերակուր և ռոճիկ։ Աշոտը նրան ամեն ինչ տվեց։ [Ջմշկիկը] հայոց վարդապետ Ղևոնդին, եպիսկոպոսներին և իշխաններին մեծ նվերներով

յոց զՂեւոնդ, զեպիսկոպոսսն և զիշխանսն մեծաւ պարգեւօք յուղարկեաց առ Աշոտ թագաւորն Հայոց։

Յայնժամ Զմշկիկ՝ որ ասէին Կիւռժան, դարձաւ ի պատերազմ ի վերայ Տաճկաց և մեծաւ յաղթութեամբ և սրտմտութեամբ, կոտորածով և արեամբ ելից զամենայն երկիրն. և զբազում քաղաքս և զամուր բերդս ի հիմանց քարայատակս արար՝ երեք հարիւր՝ մինչեւ ի սահմանս Բաղդատ քաղաքին։ Բայց զՈւռհա ոչ արար աւեր յաղագս կրօնաւորացն, որ բնակեալ էին ի լերինն և յամենայն սահմանս նորա՝ իբրեւ երկոտասան հազար. և գայր հասանէր ի վերայ Ամթայ քաղաքին բազում սրտմտութեամբ։ Իսկ տէրն Ամթայ քաղաքին կին էր, որ էր քոյր Համտրնոյ ամիրային Տաճկաց։ Եւ յառաջ ժամանակաց թագաւորն խառնակեալ էր ընդ նմա մեղօք և վասն այնորիկ չարար հնարս առնելոյ զքաղաքն Ամիթ։ Եւ ելեալ կնոջն ի վերայ պարսպի քաղաքին, ասէ ցթագաւորն. «Ի վերայ կնոջ գաս ի պատերազմ և չհամարի՞ս զայս քեզ նախատինք»։ Եւ ասէր թագաւորն. «Երդում ունիմ առ իս քակել զպարիսպ քաղաքիդ, և աղատեսցին մարդիկդ»։ Ասէր տիկինն քաղաքին. «Էջ քակեա զկանդարայն՝ որ կայ ի վերայ Տգլաթ գետոյ, և այնու կատարեսցես զերդումն քո»։ Եւ արար թագաւորն այնպէս. և առեալ բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ, և թողեալ զԱմիթ վասն կնոջն իւրոյ և վասն զի Զմշկիկն էր ի գաւառէն Խողնայ, ի տեղւոյն, որ այժմ կոչի Զըմըշկածակք, և կինն ի նմին սահմանացն էր. զի յայնմ ժամանակին Տաճկունքն էին տիրեալ բազում տեղեաց։ Եւ ահա թագաւորն Յունաց խաղայր գնայր ընդ աշխարհն Տաճկաց արեանհեղութեամբ մինչեւ ի սահմանս Բաղդատ քաղաքին. և շրջան առեալ զներքին կողմն աշխարհին՝ գնայր յերուսաղէմ քաղաքն. և գրեաց թագաւորն Զմշկիկ թուղթ առ Աշոտ թագաւորն Հայոց այսպէս.

«Աշոտ շահնշահ Հայոց մեծաց, և իմ հոգեկան զաւակ, լուր և իմացիր թէ ո՛րչափ ինձ սքանչելիս արար Աստուած առ մեզ և զարմանալի յաղթութիւնս, որ և իմանալն անկարելի է զԱստուծոյ քաղցրութիւնն և զահաւոր մարդասիրութիւնն՝ զոր արար տէր ընդ ժառանգութիւնս իւր։ Ի յայսմ տարւոջս ի ձեռն թագաւորութեանս մերում կամեցաք և քո փառաւորութեանդ ծանուցանել, ո՛վ Աշոտ Բագրատունի և զաւակ իմ իմացուցանեմ քեզ, որ և դու, որպէս և քրիստոնեայդ ես և հաւատարիմ սիրելի թագաւորութեանս մերում, ուրախանաս և փառաւորես զահաւոր զմեծութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և գիտասցես թէ ո՛րչափ օգնեցէ Աստուած քրիստոնէից յամենայն ժամանակի քանզի յետ հարկատու առնելոյ թագաւորութեանս մերոյ զամենայն արեւելս Պարսից. և կամ թէ ո՛րպէս հանաք զնշխարս սրբոյ հայրապետին Յակոբայ՝ Մծբնայ ի

ետ ուղարկեց հայոց թագավոր Աշոտի մոտ։

Այն ժամանակ Ջմշկիկը, որին Կյուր Յան էին անվանում[46], զայրացած գնաց տաճիկների դեմ պատերազմի և մեծ հաղթանակ տարավ։ Նա, ջարդելով ողջ երկիրը, արյամբ ողողեց և մինչև Բաղդադ քաղաքի սահմանները հիմնահատակ կործանեց բազմաթիվ քաղաքներ ու անառիկ բերդեր՝ շուրջ երեք հարյուր։ Սակայն Ուռհայինն նա ձեռք չտվեց՝ շուրջ 12 հազար այն վանականների սիրույն, որոնք բնակվում էին յեռներում և [քաղաքի] ողջ շրջակայքում։ Անհուն զայրույթով լցված նա եկավ Ամիթ քաղաքի վրա։ Ամիթ քաղաքի տերը կին էր, տաճկաց Համտուն ամիրայի քույրը։ Կայսրն անցյալներում հանցավոր կենակցություն էր ունեցել նրա հետ, որի պատճառով էլ չփորձեց գրավել Ամիթ քաղաքը։ Կինը, բարձրանալով քաղաքի պարսպի վրա, ասաց կայսեր. «Կնոջ վրա՞ ես գալիս պատերազմի և այդ բանը քեզ համար ամոթաբեր չե՞ս համարում»։ Կայսրը պատասխանեց. «Ես երդվել եմ քանդել քաղաքիդ պարիսպը, որպեսզի ազատվեն քո մարդիկ»։ Քաղաքի տիրուհին պատասխանեց. «Իջի՛ր, քանդի՛ր Տգլաթ գետի վրա գցված կամուրջը[47] և այդպիսով դրժած չես լինի քո երդումը»։ Կայսրն այդպես էլ արեց. վերցրեց բազում ոսկի ու արծաթ և թողեց Ամիթը՝ այդ կնոջ սիրույն։ Ջմշկիկը Խոզան[48] գավառից էր, այն վայրից, որն այժմ Ջմըշկածագ է կոչվում, և կինն էլ այդ նույն կողմերից էր. այն ժամանակ բազում շրջանների վրա տաճիկներն էին տիրում։ Եվ, ահա, հունաց կայսրը, արյունահեղություններ կատարելով գնում է տաճկաց երկրով մինչև Բաղդադ քաղաքի սահմանները, երկրի խորքերում շրջվելով՝ շարժվում դեպի Երուսաղեմ քաղաքը։ Ջմշկիկ կայսրը հայոց Աշոտ թագավորին գրում է այսպիսի մի նամակ։

«Մեծ Հայքի շահնշահ[49] Աշոտ, իմ հոգևոր որդի, լսի՛ր և իմացի՛ր, թե ինչքա՜ն հրաշքներ գործեց աստված՝ մեզ անօրինակ հաղթանակներ պարգևեց։ Անհնարին է պատկերացնել աստծո բարությունն ու անչափ մարդասիրությունը, որ ցուցաբերեց նա իր ժողովրդի նկատմամբ։ Այս տարի մեր թագավորությունը կամեցավ քո մեծությանդ էլ հայտնի դարձնել, ո՛վ Աշոտ Բագրատունի, իմ որդի. հայտնում ենք, որ դու էլ, որպես քրիստոնյա և մեր թագավորությանը սիրելի ու հավատարիմ, ուրախանաս և փառավորես մեր Քրիստոս Աստծո անհուն մեծությունը, իմանաս, թե ինչպե՜ս աստված ամեն ժամանակ օգնում է քրիստոնյաներին. թե ինչպես մեր թագավորությանը հարկատու դարձրինք ողջ պարսից Արևելքը, ինչպես հանեցինք Հակոբ Մծբնացի[50] սուրբ հայրա-

քաղաքէն Տաճկաց և առաք ի Տաճկաց զհարկն մեր, և զգերութիւնն հանաք ի նոցանէն և ելեալ գնացաք։ Եւ վասն ամբարտաւանութեան և հպարտութեան Ամիր—ըլ—մումնոյ իշխանին Ափրիկեցւոց, զորս Մախըր Արապիկ կոչեն, որ և բազում զօրօք եկեալ ի վերայ մեր և առ ժամ մի ի վտանգի արկին զօրսն մեր, և ապա յաղթեցաք նոցա մեծաւ զօրութեամբ և օգնականութեամբն Աստուծոյ, և ամօթալից դարձան որպէս զայլ թշնամիսն։ Եւ յայնժամ առաք զներքին կողմն աշխարհին նոցա և ի սուր սուսերի մաշեցաք զգաւառս բազումս և փութապէս դարձաք ի դուրս և արարաք ձմերոց և զամենայն հեծելազօրսն մեր հոգեցաք. յապրիլի ամսեանն ի մուտն դիմեալ խաղացաք ի յաշխարհն Փիւնիկեցւոց և Պաղեստինացւոց և քննայոյզ առնէաք զպիղծ Ափրիկեցիսն, որք եկեալ էին ի գաւառն Շամայ։ Եւ ելեալ ամենայն զօրօք մերովք դիմեալ խաղալով գնացաք ի յԱնտիոքայ և անցաք ընդ ամենայն գաւառսն մերոյ թագաւորութեանս և ի հնազանդութիւն արարաք մեծաւ հարկատրութեամբ և անհամար գերութեամբ և հասաք մինչև ի Հէմս քաղաք. և ելեալ ընդունեցին զմեզ բարւոք՝ որք մեր հարկատուքն էին գաւառականքն. և հասանէաք մինչև ի Վատոլվէքն, որ անուանեալ կոչի Իլուպօլիս, որ է Արեգ քաղաք, երևելի և ահաւոր պարսպեալ մեծ յոյժ և հարուստ։ Եւ ելին պատերազմաւ ընդ առաջ մեր, և բազմութիւնք զօրաց մերոց հալածական արարին զնոսա և ի բերան սրոյ կոտորեցին։ Եւ յետ սակաւ աւուրց պաշարեցաք զԱրեգ քաղաք. և բազում գերութիւնս, մանկունս և աղջկունս առին զօրքն մեր և զգանձս ոսկւոյ և արծաթոյ անասունս բազումս առին. և ահա անտի ելեալ յառաջացաք ի մեծ քաղաքն Դամասկոս, կամեցաք և զայն պաշարել։ Իսկ քաղաքապետն ալևոր էր և այր իմաստուն, առաքեաց առ թագաւորութիւնս մեր և բազում ընծայիւք աղաչեաց զմեզ չանկանիլ ի գերութիւն և ոչ գնալ ի ծառայութիւն, որպէս զՎատոլվէքայ զբնակիչսն, և ոչ զգաւառսն աւերել որպէս զնոցայն։ Եւ բերին բազում տուրս պատուականս և յոլով ձիս և ջորիս երևելիս և գեղեցիկ սարք յոսկւոյ և արծաթոյ և հարկս յԱրաբացեաց ոսկւոյն քառասուն հազար դահեկանս. առին և ի մէնջ զօրավարս և տուին մեզ գիրս, զի յաւիտեան ծառայք կայցեն թագաւորութեանս մերում՝ ազգ զհետ ազգի և ցեղ զհետ ցեղի։ Եւ կարգեցաք անդ զօրավար զայր ոմն, որ կոչէր Թուրք, այր փառաւոր Բաղդատեցի, որ եկն առ մեզ ի ծառայութիւն հինդ հարիւր ձիաւորով և հաւատաց ի Քրիստոս. որ և յառաջն ծառայեալ էր թագաւորութեանս մերում։ Եւ Դամասկացիքն արարին դաշինս երդման, զի տացեն անխափան զհարկն, և ասացին գով թագաւորութեանս մերում, և ընդ մեր թշնամիսն մարտնչել. և յաղագս այսօրիկ անպաշարելի բողաք զնոսա։ Եւ անտի յարուցեալ գնացաք ի

պետի նշխարները տաճկաց քաղաքից, տաճիկներին մեզ հարկատու դարձրինք, ինչպես նրանց ձեռքից փրկեցինք գերիներին և ելանք գնացինք: Մենք աստծո օգնությամբ և մեր մեծ հզորությամբ պարտության մատնեցինք ամբարտավան ու փքված Ամիր-ըլ-մումնիին՝ իշխանին ափրիկեցվոց, որոնց Մախր արապիկ[51] են անվանում: Նա մեծ զորքով մեզ վրա էր եկել և որոշ ժամանակ նեղ վիճակի մեջ գցել մեր զորքերին: Նրանք, մյուս թշնամիների նման, խայտառակ փախուստի դիմեցին: Այն ժամանակ մենք գրավեցինք նրանց երկրի միջնաշխարհը, սրի քաշեցինք բազմաթիվ գավառների [բնակչությանը] և փութանակի դուրս եկանք ձմեռելու: Մենք ամբողջ մեր հեծելազորին ոոճիկ վճարեցինք: Ապրիլ ամսի սկզբին արշավեցինք Փյունիկե և Պաղեստին, ցրիվ տվեցինք պիղծ աւրիկացիներին, որոնք Շամ գավառն էին եկել: Մենք մեր ողջ զորքով շարժվեցինք Անտիոքից, անցանք մեր թագավորության բոլոր գավառներով, [բոլորին] հնազանդեցրինք, ծանր հարկեր նշանակելով ու անհամար գերիներ վերցնելով հասանք մինչև Հեմս քաղաքը: Հարկատու գավառների [բնակչությունը] մեզ սիրալիր ընդունեց: Մենք հասանք մինչև Վատոլվեք[52], որ կոչվում է նաև Իլիուպոլիս, այն է՝ Արեգ քաղաք, մի նշանավոր, հարուստ [քաղաք], շատ բարձր, ահռելի պարիսպներով [շրջափակված]: Նրանք մեր դեմ պատերազմի դուրս եկան: Մեր մեծաթիվ զորքը նրանց հալածեց և սրի քաշեց: Մի քանի օր անց մենք պաշարեցինք Արեգ քաղաքը: Մեր զորքերը ձեռք բերեցին մեծ թվով գերիներ, տղաներ և աղջիկներ, նաև ոսկի և արծաթ, բազմաթիվ անասուններ: Այնտեղից առաջ շարժվեցինք դեպի Դամասկոս մեծ քաղաքը՝ վճռելով այն էլ պաշարել: Քաղաքապետը, որ մի ալևոր և խելամիտ մարդ էր, դիմեց մեր թագավորությանը և, բազմաթիվ նվերներ տալով, խնդրեց չգերել և չտրկացնել, ինչպես Վատոլվեքի բնակիչներին, չավերել գավառը, ինչպես նրանցը: Նրանք բազմաթիվ թանկարժեք նվերներ բերեցին և մեծաքանակ երիվարներ ու ջորիներ, ոսկե և արծաթե դեղեցիկ առարկաներ և հարկ՝ արաբական ոսկով քառասուն հազար դահեկան: Նրանք ընդունեցին մեր զորավարներից և գրություն տվեցին, թե սերնդե սերունդ հավիտյան կլինեն մեր թագավորության ծառաները: Մենք այնտեղ զորավար նշանակեցինք Թուրք կոչվող մեկին, բաղդադցի անվանի մի մարդու, որ հինգ հարյուր ձիավորով մեր կողմն էր անցել՝ մեզ ծառայելու և քրիստոնեություն էր ընդունել: Սա անցյալում էլ ծառայել էր մեր թագավորությանը: Դամասկոսցիները երդումներով հաստատված հաշտություն կնքեցին այն մասին, թե հարկերը կվճարեն անխափան. փառաբանեցին մեր թագավորությունը և [համաձայնեցին] կռվել մեր թշնամիների դեմ: Ահա այդ պատճառով է, որ մենք չպաշա-

Տիբերական ծովն, ուր Տէր մեր Յիսուս Քրիստոս հարիւր յիսուն և երեք ձկամբն զսքանչելիս արար. կամեցաք և զայն քաղաքն պաշարել, իսկ նոքա եկին ի հնազանդութիւն մերոյ թագաւորութեանս և բերին մեզ ընծայս բազումս, որպէս Դամասկացիքն, և հարկս երեսուն հազար դահեկանս առանց այլ տրոց և խնդրեցին զօրավարս ի մէնջ և գիր ծառայութեան՝ տուեալ մեզ հաստատուն որպէս զԴամասկացիքն՝ հնազանդ լինել մեզ յաւիտեան և տալ անխափան զհարկն մեր։ Յայնժամ թողաք զնոսա ազատ ի գերութենէ և ոչ աւերեցաք զքաղաքն և ոչ զգաւառսն՝ և ոչ արարաք զնոսա յաւարս, վասն զի հայրենի տուն էր սրբոց առաքելոցն։ Նա աւանիկ և զնաղարէթ, ուր զաւետիսն իսկ ի հրեշտակէն լուաւ Աստուածածնին սուրբ կոյսն Մարիամ. նոյնպէս գնացաք և ի Թափօրական լեառն և եկաք յայն տեղւոջն, ուր այլակերպեցաւ Քրիստոս Աստուած մեր։ Եւ մինչդեռ յայն տեղւոջն կայաք, եկին առ մեզ ի Րամլէէ և յերուսաղեմէ ազաչել զթագաւորութիւնս մեր՝ ողորմութիւն գտանել ի մէնջ. խնդրեցին զօրավար և եղեն հարկատուք թագաւորութեանս մերում, որ է Պենիադա, որ կոչի Դեկապօլիս, և Դենեսարէթ և ի յԱրկեա, որ կոչի Պտողմիա և գրով յանձին կալանամ յամէ անխափան տալ զհարկն և լինել ընդ ծառայութեամբ մեր։ Գնացաք մինչև ի Կեսարիա, որ է եղր մեծի ծովուն Ովկիանոսի, հնազանդեցան և եկին ընդ մերով իշխանութեամբս։ Եւ եթէ ոչ էին փախուցեալ ծովերաց բերդերն, որք էին բնակեալ պիղծ Ափրիկեցիքն, զարհուրեալք ի մէնջ, օգնականութեամբն Աստուծոյ ի սուրբ քաղաքն յերուսաղէմ էաք գնացեալ և ի սուրբ տեղիսն Աստուծոյ էաք յաղօթս կացեալ։ Եւ իբրև լուաք եթէ փախեան ծովեզերայց բնակիչքն, յայնժամ ղվերին կողմն աշխարհին հնազանդեցուցաք և ընդ Հռոմոց իշխանութեամբ արարաք և կարգեցաք անդ զօրավար և ի մեր կոյս արարաք և զոչ հնազանդեալսըն պատերազմաւ պաշարեցաք և առեալ գնացաք ընդ ծովեզերին պողոտայն, որ դէմ յանդիման երթայր ի Վռիտոն քաղաքն յերևելին և յանուանին պարսպեալ յոյժ, որ այժմ ասի Պէրութ, պատերազմեալ և սաստիկ կռուով առեալ զնա և հազար Ափրիկեցի ձերբակալս արարաք, նոյնպէս և զնուսերի զԱմիր—ըլ—մումնոյ և զայլ լաւագոյն իշխանսն.

րեցինք [Դամասկոսը]։ Այնտեղից ելանք, գնացինք Տիբերական ծովը, որտեղ մեր տեր Հիսուս Քրիստոսը երկու ձկով[53] հրաշքներ գործեց։ Մենք ուզեցինք այդ քաղաքն էլ պաշարել, բայց նրա բնակիչները եկան հպատակություն հայտնեցին մեր թագավորության, բերելով, ինչպես և դամասկոսցիները, բազմաթիվ նվերներ, երեսուն հազար դահեկան հարկ, չհաշված այլ տուրքերը. նրանք մեզանից զորավարներ խնդրեցին և, դամասկոսցիների պես, ծառայական վստահելի գրություն տվեցին մեզ հավիտյան հպատակ լինելու և անխափան հարկ վճարելու մասին։ Դրա համար մենք չգերեվարեցինք նրանց, չավերեցինք ո՛չ քաղաքը, ո՛չ էլ գավառները. մենք այնտեղից ավար էլ չվերցրինք, որովհետև դա սուրբ առաքյալների հայրենիքն էր։ Ահավասիկ Նազարեթը, որտեղ սուրբ կույս Մարիամ Աստվածածինը հրեշտակից ավետիսն ստացավ։ Մենք գնացինք և Թափորական լեռը և բարձրացանք այն տեղը, որտեղ մեր Քրիստոս-աստվածը այլակերպվեց։ Մեր այնտեղ գտնվելու միջոցին Ռամլեից[54] և Երուսաղեմից մեզ մոտ մարդիկ եկան՝ հայցելու մեր թագավորության ողորմածությունը նրանց հանդեպ։ Նրանք զորավար խնդրեցին, եղան մեզ հարկատու և ուխտեցին ծառայել մեզ, մի բան, որին մենք ընդառաջ գնացինք։ Մենք ցանկացանք տաճիկների գերությունից աղատագրել և մեր Քրիստոս-աստծո սուրբ Գերեզմանը։ Մենք զորավարներ նշանակեցինք բոլոր այն շրջաններում, որոնք հպատակություն հայտնեցին մեզ և դարձան մեր թագավորության հարկատու. դրանք են՝ Պենիադան[55], որ կոչվում է նաև Դեկապոլիս, Գենեսարեթը[56], Արկեան[57], որ կոչվում է Պտղոմիա։ Նրանք գրավոր համաձայնություն տվեցին ամեն տարի անխափան հարկ վճարել և մեզ ծառայել։ Մենք գնացինք մինչև Կեսարիա[58], որը գտնվում է Օվկիանոս մեծ ծովի ափին, [որի բնակիչները] հնազանդություն հայտնեցին և անցան մեր գերիշխանության ներքո։ Եվ եթե պիղծ ափրիկեցիները մեզանից սարսափած ապաստանած լինեին ծովեզրյա բերդերում, մենք աստծո օգնությամբ սուրբ Երուսաղեմ քաղաքն էլ կգնայինք և կաղոթեինք աստծո սուրբ վայրերում։ Բայց երբ իմացանք, որ ծովեզրյա բնակիչները փախել են, այն ժամանակ գավառի վերին կողմը հպատակեցրինք և հոռոմոց գերիշխանության ենթարկեցինք. այնտեղ զորավար նշանակեցինք և դարձրինք մեզ կողմնակից։ Իսկ ովքեր մեզ չհնազանդվեցին, նրանց մարտ տվեցինք։ Ապա շարժվելով ծովեզրյա ճանապարհով, որն ուղիղ տանում է դեպի երևելի և անվանի, ամուր պարիսպներով պարսպապատված Վռիտոն քաղաքը, որն այժմ կոչվում է Պերութ[59], պատերազմեցինք և կատաղի ճակատամարտում գրավեցինք այն և հազար ափրիկեցու գերեցինք, նմանապես և Ամիր-ըլ-մումնիի նասեր [զորավարին] և երևելի

և յայն քաղաքն զօրավար եղաք և անտի կամեցաք ի Սիդովն անցանել: Իսկ յորժամ լուան Սիդովնացիքն, առաքեցին առ մեզ զծերսն քաղաքին իւրեանց. եկին և աղաչեցին զթագաւորութիւնս մեր և խնդրեցին, զի հարկատուք լինիցին մեզ մնծաւ ահիւ և կալ մնալ մեզ ի ծառայութիւն. զոր լուաք իսկ աղաչանաց նոցա և կատարեցաք զկամս նոցա և առաք ի նոցանէ զհարկն և առաք նոցա զօրավարս: Եւ անտի յարուցեալ գնացաք ի Բիբղոն հին և ամուր բերդն և զայն ևս պատերազմեալ առաք և զբնակիչս նորա ի գերութիւն մատնեցաք. և մնծաւ աւարաւ և գերութեամբ անցաք ընդ ամենայն ծովեզերեաց քաղաքանին ընդ դըժուար և ընդ նեղ ճանապարհին ընդ որ այլք զօրք հնծելոց ոչ երբէք էր անցեալ նեղ և նուրբ և չար ճանապարհ. և անդ գտանէաք շէն և վայելուչ քաղաքանի և ամուր բերդիր, յորում կային Տաճիկ պահապանք, զամենայն պաշարեցաք և քարայատակ կործանեցաք, և զբնակիչսն ի գերութիւն վարեցաք: Եւ յառաջ քան զհասանիլն մեր ի Տրապօլիս հնծելազօրս առաքեցաք զԲիմացիսն և զՏաշխամատացիսն ի կապանն, որ կոչի Քարերիս, վասն զի լուեալ էր մեր, եթէ պիղծ Ափրիկեցիքն անդ նստէին ի կապանին. և հրամայեցաք քմինս դնել և դարանս մահու դործեցաք նոցա. և որպէս պատուիրեցաքն՝ նոյնպէս և արարին. և երկու հազարք յայտնի ելեալ ի նոցանէ ի վերայ զօրացն մերոյ՝ զորս զբազումս ի նոցանէ սպանին և յոլովս ի նոցանէ արարին կալանականս, և ածին առաջի մերոյ թագաւորութեանս. նոյնպէս և ուր հանդիպէին՝ փախստականս առնէին զնոսա: Եւ իսպառ չնչեցաք զամենայն աշխարհն Տրապօլսոյ զայգիսն և զձիթենիսն և զբուրաստանս նոցա առհասարակ կոտորեցաք և յաւեր դարձուցաք և արմատախիլ արարաք զամենայն գաւառսն. և Ափրիկեցիքն, որ էին անդ՝ համարձակեցան և ելին ի պատերազմ ընդդէմ մեր: Յայնժամ յարձակեցաք ի վերայ նոցա և կոտորեցաք զամենեսեան առ հասարակ. և ապա առաք զմեծ քաղաքն զՃուէլն, որ Գաբաւոնն կոչէին, և զվաղանեացն և զՍիհունն, և զինքն իսկ զհռչակաւորն Զուրզաւ, և ոչ մնաց մինչև ցՌամլէ և ցԿեսարիա՝ ոչ ծով և ոչ ցամաք, որք ոչ հնազանդեցան թագաւորութեանս մերում, զօրութեամբն Աննդին Աստուծոյ, զի մինչև ցԲաբելոն հնազանդ արարաք թագաւորութեանս մերում և արարաք ծառայս զնոսա մեզ: Վասն զի ամիսս եւթն շրջեցաւ թագաւորութիւնս մեր յայնմ աշխարհին հանդերձ զօրօք բազմօք. և սպառեցաք զքաղաքս և զգաւառս և ոչ իշխեաց ելանել Ամիր—ալ—մումնի ի Բաբելոնէ ընդդէմ մեր և կամ հնծեալս արձակել յիւր զօրացն յօգնութիւն: Եթէ եթէ չէր լեալ խստագոյն խորշակ և անջրդի ճանապարհ ի յայն տեղիսն, որ մերձ է ի Բաբելոն, որպէս և ջր փառա-

այլ իշխանավորների։ Այդ քաղաքում ևս զորավար նշանակեցինք և այնտեղից ուղեցինք գնալ Սիդովն։ Երբ սիդովնացիք լսեցին այդ մասին, մեզ մոտ ուղարկեցին իրենց քաղաքի ավագներին, որոնք աղաչեցին մեր թագավորության և խնդրեցին մեզ՝ հլու հարկատու լինել և ծառայել մեզ։ Մենք նրանց աղաչանքներին ընդառաջ գնացինք և կատարեցինք նրանց ցանկությունը, նրանցից հարկ վերցրեցինք և տվեցինք զորավարներ։ Այնտեղից վեր կենալով գնացինք Բիբղոն[60] հին և ամուր բերդը, որին նմանապես զենքի ուժով տիրեցինք, իսկ բնակիչներին գերեվարեցինք։ Մեծ ավարով ու ռազմագերիներով մենք անցանք ծովեզրյա բոլոր քաղաքները՝ դժվարամատչելի, նեղ ու վտանգավոր ճանապարհներով, որոնցով մինչև այդ որևէ հեծելազոր երբևիցե չէր անցել։ Այնտեղ մենք հանդիպեցինք շեն և գեղեցիկ քաղաքների, ամուր բերդերի, որտեղ հաստատված էր տաճիկ կայազոր։ Մենք բոլորն էլ պաշարեցինք և հիմնահատակ կործանեցինք, իսկ բնակիչներին գերի տարանք։ Նախքան Տրապոլիս[61] հասնելը, մենք հեծելազոր ուղարկեցինք՝ թիմացիներին և տաշխամատացիներին[62] այն լեռնանցքը, որ Քարերես է կոչվում. մենք լսել էինք, որ պիղծ ափրիկեցիներն այդ լեռնանցքն են պահում։ Հրաման տվեցինք դարանակալել և կործանիչ ծուղակներ լարել նրանց դեմ։ Մեր կարգադրության համաձայն էլ գործեցին։ [Թշնամու] երկու հազար հոգի բացահայտ հարձակում գործեց մեր զինվորների վրա, բայց վերջիններս նրանցից շատերին սպանեցին և առավել շատերին գերեվարեցին և մեր թագավորության առջև բերեցին։ Բացի այդ, որտեղ որ նրանցից հանդիպեցին, փախուստի մատնեցին։ Այդպիսով, մենք բնաջնջեցինք Տրապոլսի ողջ գավառը, ամբողջությամբ կտրատեցինք, արմատախիլ արեցինք նրանց այգիները, ձիթենիները և պարտեզները, ավերեցինք բովանդակ գավառը։ Այստեղ գտնվող ափրիկեցիք հանդգնեցին մեր դեմ պատերազմի դուրս գալ։ Այն ժամանակ մենք հարձակվեցինք նրանց վրա և իսպառ կոտորեցինք։ Մենք գրավեցինք ճուռել մեծ քաղաքը, որ Գաբավոն էլ է կոչվում, ապա՝ Վաղանյացը, Սիհունը[63] և հռչակավոր Ջուրզավը։ Մինչև Իամլե և Կեսարիա չմնաց ո՛չ ծով, ո՛չ ցամաք, որ անեղն աստծո զորությամբ չհպատակվեր մեր թագավորությանը։ Մինչև Բաբելոն ընկած երկիրը մենք հպատակեցրինք և բնակչությանը մեզ ծառա դարձրինք։ Մեր թագավորությունը մեծաթիվ զորքով յոթ ամիս շրջեց այդ երկրում և ավերեց քաղաքներն ու գավառները. Ամիր-ըլ-մումնին նույնիսկ չհամարձակվեց Բաբելոնից դուրս գալ մեր դեմ կամ հեծելազոր ուղարկել՝ իր զորքերի օգնության։ Եվ եթե Բաբելոնին մերձակա այդ վայրերում սաստիկ շոգն ու անջրդի ճանապարհը չխանգարեր, ինչպես այդ մասին քո մեծապատ-

տրութիւնդ իսկ գիտենալ ունի, թագաւորութիւնս մեր մինչև ի Բաբելոն երթեալ էր. որ և զինքն իսկ յերկիրն եգիպտացւոց հալածեցաք և իսպառ յաղթահարեալ շնորհօքն Աստուծոյ, որ թագաւորեցոյցն վիս։

«Ազատեցան այժմ ամենայն Փիւնիկէ և Պաղեստին և Ասորիք ի ծառայութենէ Տաճկաց և հաւանեցան ընդ Հոռոմոց իշխանութեամբ։ Այլ և Լիբանանու մեծ լեառն հնազանդեցաւ ընդ մերով իշխանութեամբս. և զամենայն Տաճկունք, որ անդ կային, ահագին բազմութեամբ, գերութեամբ առաք և բաշխեցաք հեծելոց մերոց. և զԱսորեստան քաղցրապէս և մարդասիրապէս հովուեցաք. հոգիք իբրև քսան հազար հանաք, և ի Գաբաւօն բնակեցուցաք։ Ահա գիտասցես, զի այսպիսի յաղթութիւնս ետ Աստուած քրիստոնէից, որ ոչ եղև երբէք։ Եւ գտաք յայնմ քաղաքին ի Գաբաւօնն զսուրբ հողաթափին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որով և շրջեցաւ իսկ ի վերայ աշխարհի. նոյնպէս և զպատկերն Փրկչին մերոյ, զորս Հրէայքն յետ ժամանակի խոցեալ էին, ուստի վաղվաղակի ել արիւն և ջուր, և զխոց[1] տիգին. գտաք և յայնմ քաղաքին զպատուական հերս գլխոյ Կարապետին և Մկրտչին Յովհաննու և առեալ տանիմք ի պահպանութիւն աստուածապահ քաղաքին մերոյ։ Ես արդ ի սեպտեմբեր ամսոյն հաճութեամբն Աստուծոյ զմեր աստուածակեցոյց զօրքս ի յԱնտիոք հանաք և վասն այսորիկ քո փառաւորութեանդ գիտացուցաք, վասն զի ի ձեռն մեր հրամանաց զարմանաս և դու ինքն իսկ փառաւորես զԱստուծոյ մեծ մարդասիրութիւնն և գիտասցես թէ ո՛րչափ բարի գործեցան այժմիկ և կամ քանի՛ յաւելան և լայն և ընդարձակ եղեւ իշխանութիւն սրբոյ խաչին Քրիստոսի և մինչեւ ցայս[2] տեղիք անունն Աստուծոյ գովի և փառաւորի. և ճոխանայ թագաւորութիւնս մեր անուամբ մեծութեամբ և զօրութիւնն Աստուծոյ բարեբանեալ գովի ի բերանոյ մերմէ. զորս ընդ ձեռամբ մերով հնազանդեցոյց Աստուած, ընդ որում հանապազօր օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի։

«Եւ յանապատէն պատօսպաթրին Դերջնայ, Լեւոնի և Տարօնոյ զօրավարին ողջոյն և ի տէր խնդալ։

«Արդ գրեցաք որ զՄայծնաց բերդն որպէս յանձին կալար՝ չես տուեալ. և աղժմ գրեցաք առ զօրավարդ մեր, որ ոչ բերդն առնու և ոչ զցորեանն զոր պոմաննեցեր, զի այժմ չեղեւ առ մեզ պէտք. բայց զքառասուն հազար սովօլօնն, զոր յուղարկեցաք, տուր տանել առ զօրավարն մեր, որ առաքէ առ թագաւորութիւնս մեր. և զվաստակոդ քոց և զարմտեացդ գտանես զփոխարէնն ըստ սերմանեացն զամենայն բարի մի ըստ միոջէ»։

Դարձեալ գրեաց և առ վարդապետն Հայոց ի Ղեւոնդն այսպէս.

վությունն էլ գիտե, մեր թագավորությունը մինչև Բաբելոն կգնար։ Բայց մենք հենց իրեն [Ամիր-ըլ-մումնիին] հալածական արեցինք եգիպտացվոց երկիրը և մեզ թագավորեցնող աստծո շնորհիվ վերջնականապես պարտության մատնեցինք։

Այժմ բովանդակ Փյունիկեն, Պաղեստինն ու Ասորիքը ազատագրվել են տաճկաց հպատակությունից և ընդունել հռոմոց գերիշխանությունը։ Լիբանանի մեծ լեռն անգամ մեր տիրապետության տակ անցավ։ Եվ այնտեղ եղած անթիվ-անհամար տաճիկներին մենք գերեցինք և բաժանեցինք մեր հեծյալներին։ Մենք մեղմորեն ու մարդասիրաբար կառավարեցինք Ասորեստանը, շուրջ քսան հազար հոգի տեղահան արեցինք և Դաբավոնում բնակեցրինք։ Ահա, իմացի՛ր, որ աստված քրիստոնյաներին այսպիսի հաղթանակներ պարգևեց, որոնց նմանը դեռ չէր եղել երբեք։ Դաբավոն քաղաքում մենք գտանք մեր Քրիստոս-աստծո հոդաթափները, որոնցով նա շրջեց երկրի վրա, նմանապես և մեր Փրկչի պատկերը, որն անցյալում հրեաները խոցել էին և որից իսկույն արյուն և ջուր էր հոսել. մենք գտանք նաև գեղարդը։ Այդ քաղաքում մենք գտանք նաև Կարապետի՝ Հովհաննես Մկրտչի գլխի պատվական մաղերը։ Այդ [բոլորը] վերցնելով, տանում ենք պահելու մեր աստվածապահ քաղաքում։ Այնուհետև, սեպտեմբեր ամսին, աստծո կամքով մեր աստվածապահպան զորքը տարանք Անտիոք։ Մենք այդ [բոլորի] մասին տեղյակ պահեցինք քո փառավորությանը, որպեսզի դու հիանաս մեր հրամաններով [կատարվածի վրա], դու էլ փառավորես աստծո մեծ մարդասիրությունը և իմանաս, թե այս օրերին ինչքա՜ն բարի գործեր կատարվեցին, ինչքա՜ն մեծացավ և ընդարձակվեց Քրիստոսի սուրբ խաչի տիրապետությունը, որ այս վայրերում էլ գովաբանվում ու փառավորվում է աստծո անունը։ Մեր թագավորությունը հոխանում է անունով և մեծությամբ, իսկ աստծո զորությունը մեր շուրթերով փառաբանվում և գովաբանվում, քանզի նրա կամքով [թշնամիները] մեզ ենթարկվեցին։ Թող միշտ օրհնյալ լինի Իսրայելի տեր աստվածը։

Դերջանի պրոտոսպաթար և Տարոնի զորավար Լևոնի գեկուցագրից իմացանք, որ, հակառակ քո համաձայնության, [դեռ] չես տվել Այծյաց բերդը։ Մենք այժմ գրեցինք մեր զորավարին, որ ո՛չ բերդն առնի, ո՛չ էլ ցորենը, որ հանձն էին առել [տալ], որովհետև այժմ մեզ պետք չէ։ Համենայն դեպս, դու մեր զորավարին վերադարձրու քեզ ուղարկված խրիսովուլը[64], որպեսզի նա էլ ուղարկի այն մեր թագավորությանը։ Քո վաստակի և [թափած] ջանքերի դիմաց, ըստ քո ցանածի, դու կստանաս ամեն մի բարիք»։

[Կայսրը] գրեց նաև հայոց Ղևոնդ վարդապետին հետևյալ [նա-

«Մեր հաճելի և սուրբ թագաւորութեանս սիրեցեալ մեծ իմաստասէր Պանդալեւոն, ողջոյն: Ահա հրամայեցաք մեք որ ի դարձին մեր ի Տաճկաց՝ գտանեմք գձեզ ի սուրբ քաղաքս և կամ ի Սլեսիոն, յորժամ եկիր առ մեզ ի յԱշոտոյ շահնշահէ և հոգիական զաւակէ մերմէ և գարձուցեր զամենայն սրտմտութիւնս ի նմանէ և տարար զբաւգրատ ի Պապն Յանձաւացին. զու և ես Սատ Բոռնեցին պատուսպարարն: Եւ արդ ջանացիր, որ գտանիմ զքեզ յաստուածապահ քաղաքին մեր և անդ արասցուք ուրախութիւն մեծ հոգեթափանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և սուրբ հերացն Մկըրտչին Յովհաննու: Եւ արդ ահա հաճեալ ունիմ և զայս ինչ ի քէն, վասն զի խօսեսցիս ընդ մեր իմաստասէրսն և ընդ փիլիսոփայիցն մերոց, և ուրախասցուք մեք ի ձեզ. և Աստուած ի մեզ և ի ձեզ. և տէր Յիսուս եղիցի ընդ իւրում ծառայիցդ»: Իսկ յորժամ լուաւ զայս վարդապետն Հայոց Ղեւոնդ, յարուցեալ գնաց ի Կոստանդնուպօլիս, և արարին ուրախութիւն հոգեթափանցն Աստուծոյ և հերաց սրբոյ Կարապետին: Եւ եղև յայնմ աւուր մեծ ուրախութիւն ի Կոստանդնուպօլիս, և խօսեցաւ վարդապետն Հայոց առաջի թագաւորին ընդ ամենայն իմաստասիրացն Հռոմոց և անպարտելի երեւեցաւ ի մէջ վարդապետացն տանն Յունաց. վասն զի յամենայն հարցմունսն հաճելի երեւեցաւ: Եւ բազում գովութեամբ բարեբանեցին զնա և զուսուցիչն նորա, և մեծաւ պարգեւօք ի թագաւորէն երեւելիք և պատուականք շնորհեցաւ նմա. և գնաց մեծաւ ուրախութեամբ յաշխարհն Հայոց ի մեծ տունն Շիրակայ:

Արդ ի յետ բազում պատերազմացն և յաղթութեանցն, զոր վանեաց կայսրն Զմշկիկ, անկանէր ի վերայ նորա մահու երկիւղն և ահն սոսկալի զատաստանին Աստուծոյ և զմտաւ ածեալ յիշեալ զանիրաւ մահն արդարոյն Նիկիփորայ և զանպարտ արիւն նորա, կոծ առեալ լայր և յոգւոց հանէր: Եւ յայնժամ խորհեցաւ վարս առաքինութեան ստանալ, զի թերևս ապաշխարութեամբ մաքրել զարիւնն, զոր հեղաւ ի տարապարտուց. և հինգ ամ միայն կալեալ զաթոռ թագաւորութեանն Յունաց: Եւ մինչդեռ զայս ամենայն զմտաւ ածէր, խորհեցաւ բարի խորհուրդս, որ ըստ կամացն Աստուծոյ էր, և յուղարկեալ ի վաստակաւանն ի զաւառն Յանձթայ և բերել տայր զվասիլ և զԿոստանդին զորդիսն Ռոմանոսի թագաւորին, զորս փախոյց առ Սպրամիկն ի յահէ անօրէն թագուհւոյն, վասն զի չարաբարոյ էր յոյժ: Իսկ յորժամ եբեր զվասիլն ի Կոստանդնուպօլիս, ժողով արարեալ զամենայն իշխանս մեծամեծս տանն Յունաց. և եղեւ ահաւոր հանդէս ի պալատ թագաւորին: Եւ յայնժամ թագաւորն Զմշկիկ առեալ զթագն ձեռօք իւրովք ի գլխոյ իւրմէ և եդեալ ի գլուխն Վասլի և նստեցուցանէր զնա յաթոռ թագաւորութեանն իւրոյ

մակը]։ «Մեզ հաճելի և սուրբ թագավորությանս սիրելի մեծ իմաստասեր Պանտալևոն, ողջո՛ւյն։ Երբ դու Աշոտ շահնշահի՝ մեր հոգևոր որդու մոտից եկար և վերացրիր մեր միջև եղած դժգոհությունը, և Բագրատին, ինչպես և պրոտոսպաթար Եվտատ Թոռնեցուն տարար Պասլ Անձավացու մոտ, ահա այն ժամանակ պատվիրեցինք, որ տաճկաց [երկրից] մեր վերադարձին ձեզ գտնենք սուրբ քաղաքում և կամ էլ Սլեսինում[65]։ Արդ, դու ջանացիր, որ ես քեզ հանդիպեմ մեր աստվածապահ քաղաքում, որտեղ փառավորապես նշենք մեր Քրիստոս-աստծո հողաթափերի և Հովհաննես Մկրտչի սուրբ մազերի [գյուտի] տոնը։ Յանկալի է նաև, որ դու խոսակցություն ունենաս մեր իմաստունների և փիլիսոփաների հետ, և մենք ուրախ կլինենք ձեզնով։ Թող աստված մեզ և ձեզ հետ լինի, և տեր Հիսուսը՝ իր ծառաների»։

Երբ այդ մասին տեղեկացավ հայոց Ղևոնդ վարդապետը, նյութ գնաց Կոստանդնուպոլիս, որտեղ նշեցին աստծո հողաթափերի և սուրբ Կարապետի մազերի [գյուտի] հրաշափառ տոները։ Այդ օրը Կոստանդնուպոլսում մեծ ուրախություն էր։ Հայոց վարդապետը կայսեր ներկայությամբ բանավիճեց հոռոմոց բոլոր իմաստունների հետ և հունաց աշխարհի բոլոր վարդապետներից անպարտելի մնաց. բոլոր հարցերին տված նրա [պատասխանները] ընդունելի համարվեցին, և անչափ գովաբանեցին նրան և նրա ուսուցչին։ Իսկ կայսրն էլ նրան մեծ, հոյակապ և թանկագին նվերներ տվեց։ Եվ նա մեծ ուրախությամբ գնաց Հայաստան, Շիրակի մեծ գավառը։

Եվ, ահա, Ջմշկիկ կայսրը բազմաթիվ պատերազմներ մղելուց և հաղթանակներ տանելուց հետո, ի վերջո համակվում է մահվան երկյուղով և աստծո սոսկալի դատաստանի սարսափով. նա հիշում է անմեղ Նիկեփորի անիրավ սպանությունն ու նրա անպարտ արյունը և ողբաձայն լալիս ու հառաչում։ Ի վերջո, նա որոշեց առաքինագործ լինել, որ միգուցե ապաշխարությամբ կարողանա մաքրել անիրավաբար թափած արյունը։ Նա հունաց թագավորության գահին նստեց յոթ տարի միայն։ Այդ առթիվ նա մի բարի և աստվածահաճո միտք հղացավ. նա մարդ ուղարկեց և Անձիտ գավառի Վասակավան [վայրից] բերել տվեց Ռոմանոս կայսեր որդիներ Վասիլին և Կոստանդնին[66], որոնց փախցրել էր Սպրամիկի մոտ՝ անօրեն թագուհու ձեռքից փրկելու նպատակով, քանզի վերջինս անչափ չարաբարո էր։ Վասիլին Կոստանդնուպոլիս բերելով, նա հունաց[67] բովանդակ աշխարհի մեծամեծների ժողով հրավիրեց, և կայսերական պալատում տեղի ունեցավ մեծ հանդես։ Ջմշկիկ կայսրը սեփական ձեռքով իր գլխից հանեց թագը և այն դնելով Վասիլի գլխին, նրան բազմեցրեց իր թագավորական գահին, ապա եր-

և երկիրպագանէր ի վերայ երեսաց իւրոց Վասլին. և զամենայն թագաւորութիւն տանն Յունաց նմա յանձն արարեալ: Եւ տուեալ ի Վասլին զիւր Հայրենական աթոռն, և ինքն զիմեալ յանապատ, և յանձն իւր առեալ զկարդս կրօնաւորութեան՝ ի վանս ընթացեալ բնակէր: Ահա որ յիրկեան աւուրն թագաւոր և այսօր ընդ աղքատս նստեալ դադարէր կամաւոր աղքատութեամբ, վասն զի ժառանգեսցէ զերանութիւն սուրբ Աւետարանին և վճարեսցէ զպարտ անմեղ անձինն Նիկիփորայ:

Դարձեալ ի բարձրանալ թուականութեանս Հայոց ազգիս յամի ՆԻԴ թագաւորեաց Վասիլ Հայրն ամենեցուն՝ որդին Ռոմանոսի ծերոյ, որդւոյ Կոստանդեայ կայսերն Հռոմոց բարի ազգաւ ի մէջ Յունաց: Եւ կարի յոյժ երեւելի երեւեալ այրս այս Վասիլ եղբայրն Կոստանդէ: Սա տիրեաց թագաւորական աթոռոյն Յունաց և զբազում տպաստամբսն արար հնազանդս և անուն բարի տարածեալ ի վերայ արարածոցս՝ ողորմած ի վերայ այրեաց և դերեաց և իրաւարար զրկելոց:

Յայսմ աւուրսս եղեւ կոտորած զօրացն Հայոց յԱնձաւացեաց գաւառին, ի բանակն կոչեցեալ անուն նենգութեամբ առն քաջին Ապլղարիպայ: Վասն զի թագաւորն Անձաւացեաց, որում անուն Դերենիկն ասէին, եհան զԱպլղարիպն ի սպարապետութենէ զօրաց իւրոց, զայր հզօր և զքաջ, և եղեալ ի տեղի իւր զՄարգիս զոմն ազատ: Եւ կարի յոյժ վիրաւորեալ լինէր հզօրն Ապլղարիպ. և յայնժամ բանատու լինէր առ հզօրսն այլազգեացս, և զամենայն պատճառս ծանուցանէր նոցա և ասաց, թէ՝ «Ես ոչ եկից ի պատերազմ ընդ ձեզ. և արդ՝ ի դիշերի յարուցեալ եկայք ի վերայ բանակիս մեր. և ահա այս նշան ձեզ իմոյ վրանին, յորդան կարմիր է, և ի վերայ բլրին Հարեալ կայ, և զօրք իմ ընդ իս»: Իսկ զօրք այլազգեացն եկին ի վերայ նոցա յանկարծակած ժամու. և էր թագաւորն և զօրքն իւր ի մեծ ուրախութեան, և ի դիշերի անկան ի վերայ զօրացն Հայոց զօրք այլազգեացն և արարին կոտորած մեծ. և մեռան բազում պատերազմողք և երեւելի քաջք: Բայց ապաշաւելի այս իսկ էր, վասն զի չէր պատերազմ ի պատեհ ժամու. և սրարին ձերբակալ զԴերենիկ զթագաւորն. և ընդ Ապլղարիպայ վրանովն ոչ իշխեաց անցանել ոք, վասն զի կայր ընդ վրանին զօրօք իւրովք պատրաստական: Եւ յայնժամ տարան զԴերենիկ ի Հեր քաղաքի:

Յայնմ աւուր Վարազ և ամենայն վանորայք անէծս ցաւագինս և սաստիկս կարդացին Ապլղարիպայ, միայնակեացք և միաբանակեացք դղրդեալ ի վերայ նորա լուծին դնա ի հաւատոց և հանին ի արտաքս ի յեկեղեցւոյն Աստուծոյ: Իսկ Ապլղարիպայ եկեալ ի միտս իւր՝ լայր, վասն զի էր այր հաւատարիմ և երկիւղած յԱստուծոյ, և կարի յոյժ ապաշաւէր զհեղումն արեան քաջարանցն զօրացն Հայոց: Եւ յայնժամ

կրրպագելով Վասիլի առջև, հունաց աշխարհի ողջ իշխանությունը հանձնեց նրան։ Վասիլին տալով նրա հայրենական գահը, ինքը գնաց անապատ, առավ կրոնավորական կարգ և հաստատվեց վանքում։ Երեկվա կայսրը այսօր կամավոր կերպով աղքատացած, ապրում էր չքավորների հետ, վայելելու Սուրբ Ավետարանի երանությունը և քավելու իր մեղքը անմեղ Նիկեփորի անձի նկատմամբ[68]։

Մեր հայոց ազգի 424 թվականի [28 մարտ 975—26 մարտ 976 թ.] սկզբին թագավորեց բոլորի հայր Վասիլը[69], որդին երիցագույն Ռոմանոսի, որը հույների մեջ իր աղնվազարմությամբ [հռչակված] հռոմոց կայսր Կոստանդնի որդին էր։ Այս Վասիլը իր եղբայր Կոստանդնից շատ ավելի աչքի էր ընկնում։ Նա տիրեց հույների կայսերական գահին, հնազանդեցրեց բազում ապստամբների և մարդկանց մեջ բարի անուն վաստակեց։ Նա ողորմած էր այրիների և գերիների հանդեպ և պաշտպան՝ անարդարության զոհերին։

Այդ օրերին, քաջազն Ապլղարիպի դավաճանությամբ, Անձավացյաց գավառի Բանակ կոչվող վայրում[70] տեղի ունեցավ հայոց զորքի կոտորած։ Անձավացյաց թագավորը, որի անունը Դերենիկ էր[71], իր զորքերի սպարապետության պաշտոնն առնելով Ապլղարիպի՝ մի հզոր և քաջ մարդու ձեռքից, տվել էր Սարգիս անունով մի ազատի։ Այդ բանը սաստիկ վիրավորեց հզոր Ապլղարիպին, և նա դիմեց այլազգիների իշխանավորներին, իր քայլի բոլոր դրդապատճառները հայտնեց նրանց և ասաց. «Ես ձեր դեմ պատերազմի դուրս չեմ գա։ Դուք գիշերով վեր կացնք եկեք մեր ճամբարի վրա։ Ահա ձեզ իմ վրանի տարբերանշանը— որդան կարմիրը, և խփված է բլրի վրա, իմ զորքն էլ իմ հետ է»։ Այլազգիների զորքը անակնկալ հարձակվեց նրանց վրա, երբ թագավորն ու զորքը մեծ խրախճանքի մեջ էին։ Այլազգիների զորքը գիշերով ընկավ հայոց զորքի վրա և մեծ ջարդ տվեց։ Սպանվեցին բազմաթիվ մարտիկներ և անվանի քաջեր։ Ամենից ցավալին այն էր, որ կռիվը տեղի ունեցավ անհարմար ժամանակ։ [Այլազգիները] գերեցին Դերենիկ թագավորին, բայց Ապլղարիպի վրանի վրա չհամարձակվեցին գնալ, որովհետև նա իր զինվորներով պատրաստ կանգնած էր։ Դերենիկին տա-ան Հեր քաղաքը։

Այդ օրը Վարագը և բոլոր վանքերը դառն ու սոսկալի անեծքներ թափեցին Ապլղարիպի գլխին։ Զայրացած վանականներն ու միաբանները նրան հայտարարեցին ուրացող և աստծո եկեղեցուց դուրս շպրտեցին։ Ապլղարիպը, խելքը գլուխը գալուց հետո, սկսեց աղբալ, որովհետև հավատացյալ և աստվածավախ մարդ էր։ Նա անշափ շատ էր ցավում հայոց քաջազուն ռազմիկների թափված արյան համար։ Նա

հարցուկ լինէր վասն թագաւորին, եթէ յորում բերդի կայ արգելած ի Հեր քաղաքի. և ծանուցին նմա եթէ ամիրայն Ապլհաճա ի կապանացն արձակեաց զԴերենիկն, և յամենայն ժամ հանէ զնա ի խաղ գնդին ի մայրաքաղաքն՝ արտաքոյ քաղաքին Հերայ։ Եւ լուեալ զայս Ապլղարիպ ուրախ լինէր յոյժ և յուպարիեալ զպատարար առ թագաւորն Դերենիկն և ասէր ցնա այսպէս. «Ահա ես յայս ինչ ժամու յայնմ տեղւոջ լինիմ. ամենայն կարողութեամբ պատրաստ արա զքեզ, յընտիր և ի սուր ձիոջ հնծիր, և հանդ ջանա որ ի յիս անկանիս»։ Եւ յաւուր միում Ապլհաճա եկեալ խաղայր ի գունդն բազում ազատօք իւրովք, և արք հազարք և պինուք շուրջ զնորօք, և Ապլղարիպն կայր ի քմին յիւսոյն արամբք. և Դերենիկն ի բուն պարանոց ւաւագէն խնդրեալ իւր սուր ձի և տուեալ ինչս իւր. և յայնժամ Դերենիկն եհար զգունդն և վարեր ի դիհն, ուր Ապլղարիպ թագուցեալ կայր ի մէջ անտառախիտ դրախտացն Հերայ, և քահեալ զերիվարն ուժգին՝ ի բաց թողեալ զգունդն և նիս արարեալ։ Եւ տեսեալ ամիրային Ապլհաճէի և զօրացն, զհետ յարձակեցան մեծաւ ցասմամբ. և թագաւորն յԱստուած յուսացեալ զինայր քաջասիս և անկանէր առ Ապլղարիպն։ Իսկ ի զօրացն այլազգեացն ոմն խափշիկ, այր հզօր և քաջ, ընդհատեալ զհետ և հասանէր ի վերայ Ապլղարիպայ. և որպէս զառիւծ գոչեաց Ապլղարիպն, հասեալ ի վերայ նորա, և զգանաբար Տարկանէր զնա, և չերիւս բաժանեաց և պատառեաց զնա ի վերուստ մինչեւ ցերանունս Եւ տեսեալ զայն այլազգեացն՝ ի փախուստ դարձան. և Ապլղարիպ ձայն առեալ քաջ արանց իւրոց, զհետ յարձակեալ և հասանէր ամիրային Ապլհաճէի. և կամեցաւ զնա ի ձիոյ առնուլ և մինչեւ ի դուռն քաղաքին վարեաց զնա. և ամիրայն որպէս զփայլակն մտանէր ընդ դուռն քաղաքին Հերայ։ Յայնժամ Ապլղարիպն պողովատ ճկուէր Տարկանէր զերկաթի դուռն քաղաքին և պատառեալ զերկաթն և յայն գիշեր անցուցանէր, որ և անել մնայ ճկուն մինչեւ ցայսօր ժամանակի. և ի տեղն պնդեցին որպէս զբնաւն։ Եւ այսպիսի օրինակաւ ի ծառայութենէ եհան զթագաւորն զԴերենիկ քաջն Ապլղարիպն։ Այս ինչ եղեւ ի ճուտաշ գաւառին Հայոց աշխարհին, ի գեւղն՝ որ կոչի Բակ, սահմանակից Վասպուրականայ։

Իսկ ի շարժել յաւելմամբ թուականս Հայկազունեաց տոհմիս ի յամս ՆԻԲ եղեւ կոչումն յԱստուծոյ սրբոյ հայրապետին Հայոց Անանիայի. և ձեռնադրեցին հանդերձ բազմութեամբ եպիսկոպոսութեան Հայոց զլաւն ի բնաւից զերանելին զՎահան. որ էր զուարթ ժողովոյն կաթուղիկոսն Աղուանից տէր Յովհաննէս։ Արդ՝ ի յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեան տանն Հայոց տէր Վահան ի մեծն Արգինա հրամա-

հարցուփորձ արեց, ուզեց իմանալ, թե թագավորը Հեր քաղաքի ո՞ր բերդում է բանտարկված։ Նրան հայտնեցին, որ Ապլհաճ[72] ամիրան Դերենիկին կալանքից ազատել է և շարունակ նրան տանում է Հեր քաղաքից դուրս գտնվող գաշտը՝ գունդ խաղալու։ Ապլղարիպը, լսելով այդ, շատ ուրախացավ։ Ծածուկ մարդ ուղարկելով Դերենիկ թագավորի մոտ, հայտնեց նրան, թե «ես այսինչ ժամին այսինչ տեղում կլինեմ։ Դու կատարյալ պատրաստություն տես, հեծիր ընտիր և արագավազ ձի և աջխատիր, որ հասնես ինձ»։ Մի օր Ապլհաճը գնացել էր և իր բազմաթիվ ազատներով գունդ էր խաղում։ Նրանց շուրջն էին գտնվում հազար զինված մարդ։ Ապլղարիպը հիսուն հոգով դարան էր մտել։ Դերենիկը իշխանավորների ավագից արագավազ ձի խնդրեց, [դրա դիմաց] ունեցածը տալով։ Դերենիկը գունդը հրեց դեպի այն կողմը, որտեղ, Հերի անտառախիտ թավուտներում, թաքնված էր Ապլղարիպը, ապա, ուժգին ասպանդակելով ձին, գունդը թողած դուրս փախավ։ Ապլհաճ ամիրան և [նրա] զինվորները տեսնելով այդ, գաղազած նետվեցին [նրա ետևից]։ Թագավորը, ապավինելով աստծուն, աներկյուղ գրնաց և հասավ Ապլղարիպին։ Այլազգիների զինվորներից մի ուժեղ և քաջ խափշիկ հետապնդեց և հասավ Ապլղարիպին, իսկ Ապլղարիպն առյուծի պես գոչելով հարձակվեց խափշիկի վրա, կատաղի հարված իջեցրեց և նրա մարմինը վերևից ներքև երկուսի բաժանեց։ Այլազգիները, տեսնելով այդ, դիմեցին փախուստի։ Ապլղարիպը ձայն տվեց իր կտրիճներին, հակահարձակման անցավ և հասավ Ապլհաճ ամիրային։ Կամենալով ամիրային ձիուց ցած առնել, նա հալածեց նրան մինչև քաղաքի դարպասը։ Ամիրան կայծակի արագությամբ մտավ Հեր քաղաքի դարպասից ներս։ Այն ժամանակ Ապլղարիպը իր պողպատե տապարով սկսեց հարվածել քաղաքի երկաթե դարպասին, պատռեց երկաթը և իր տապարը մյուս կողմից դուրս հանեց։ Մինչև այսօր տապարը մնացել է անելանելի՝ տեղում գամված բևեռի նման։ Քաջ Ապլղարիպն ահա գերությունից այսպես ազատեց Դերենիկ թագավորին։ Դա տեղի ունեցավ Հայաստանի Ճուաշ[73] գավառում, Վասպուրականին սահմանակից Բակ կոչվող գյուղում։

Մեր հայկազանց ազգիս 425 թվականի [27 մարտ 976—26 մարտ 977 թ.] սկզբին աստված իր մոտ կանչեց հայոց Անանիա սուրբ հայրապետին։ [Եկեղեցական] ժողովը հայոց կաթողիկոս ձեռնադրեց լավագույնին՝ երանելի Վահանին։ Ժողովը գլխավորում էր Աղվանից կաթողիկոս տեր Հովհաննեսը։ Այսպիսով, այդ տարին, Անանիա [կաթողիկոսի] և հայոց Հովհաննես ու Աշոտ[74] թագավորների հրամանով մեծ Արդինայում[75] Հայաստանի կաթողիկոսական աթոռին նստեց տեր Վա-

նաև Անանիայի, Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց թագաւորացն։

Յայսմ ժամանակի ապստամբեցաւ ամն իշխան անօրէն ի վերայ Վասլի Հոռոմոց թագաւորին, որում ասէին Սկլեռաս, զօրաժողով առաքեալ բազմութեամբ անհրատաց և անօրինաց և որով անցուցանէր զաշխարհն Հոռոմոց. և բազում զօրօք գայր հասանէր և մտանէր յաշխարհն Հայոց, և արար անթիւ կոտորած օտարացեալն յԱստուծոյ։ Եւ յայնժամ զօրն Հայոց հատանէին ի վերայ նորա և յաղթահարեցին անօրէն իշխանին այն մեծաւ յաղթութեամբ, և կոտորածով փախստական արարին զնա։ Իսկ նա ոչ համարձակեցաւ դառնալ յերկիրն Հոռոմոց, արար դիւյս իւր ի յաղդն Տաճկաց, և գնաց անօրէնն եմուտ ի Բաղդատ քաղաք. և ակնի երեք ամի նիստ անտի և զայր մեռանէր յերկիրն Հոռոմոց յազդն իւր։

Պարձեալ ի թուականութեանս Հայոց նիզ մեռանէր սուրբ Հայրապետն Հայոց Վահան, կացեալ գամս հինգ ի յաթոռ սրբոյն Գրիգորի. և ձեռնադրեցին յաթոռ կաթուղիկոսութեան Հայոց զտէր Սահականոյ զայր սատուածազգեցեալ, զարդարեալ ամենայն բարի առաքինութեամբ որ ի Քրիստոս Յիսուս. նստուցանեն գնա հայրապետ Հայոց հրամանաւ և օրհնութեամբ տեառն Վահանայ. որ էր իսկ գլուխ ժողովոյն Ազուանից տէր Յովհաննէս, ընդ ժամանակս Վասլին Յունաց թագաւորին, և Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց արքայից, ի Սենեքերիմայ որդւոյ Ապուսահլի. որդւոյ Աշոտոյ որդւոյ Գևրենկանին, որդւոյ Դաւիթայ Աբծրունեաց յազդէն Սարատարայ։

Սրդ ի սոցա առաքս զօրաժողով արարեալ անօրէն և սիրդ բռնակալն Պարսից Մամլան, ամիրապետն անօրինաց և մանդաբազաւ զաւանութեամբն իւրով իբրեւ զարիւնարբու վիշապ յարձակեալ գայր ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի և խորհեցաւ կոտորած մեծ ածել ի վերայ աշխարհին Հայոց։ Եւ գայր խաղայր ահագին և անհամար բազմութեամբ և ելից ցլերինս և զդաշտս զօրօք իւրովք. և յահէ անօրինին սատանեալ զոզայր ամենայն երկիր, և որով և հրով գերեաց զբազում տեղիս. և գնկեղեցիս հրկէզ արարեալ խափանեաց յօրհնութիւնսն և բազում բանս Հայհոյութեանց ի վեր ի բարձունս խօսեցաւ առ Բարձրեալն։ Եւ անդ էր տեսանել զմեծ և զահեղ կատարածն քրիստոնէից ի յահէ չար գազանին այն, զի զբարկութիւն չար թիւնին իւր որպէս զմազձ դառնաշունչ եհեղ ի վերայ հաւատացելոցն. և զայր հասանէր այսքան բազմութեամբն յԱպահունեաց գաւառին, յերկիրն Դաւիթ կուրապաղատին՝ Վրաց իշխանին։ Եւ զրեաց Բուղդ առ աստուածասէր և սուրբ այրն Աստուծոյ Դաւիթ կուրապաղատն եթէ չարաչար բանիւք ըսպառնացեալ նմա և խօսէր զայս ինչ. «Մի՛ խաբեսցէ ոք զքեզ, ո՛վ այր

հանը։

Այն ժամանակ մի անօրեն իշխան, որին Սկլերոս[76] էին կոչում, ապստամբություն բարձրացրեց Հռոմոց Վասիլ կայսեր դեմ. զորահավաք կատարելով, նա անիրավ և անօրեն մարդկանց բազմությամբ սրի էր քաշում Հռոմոց երկիրը։ Այդ աստվածուրացը մեծաթիվ զորքով եկավ մուտք գործեց հայոց երկիրը և մեծ կոտորած սարքեց։ Հայոց զորքը հարձակվեց անօրեն իշխանի վրա, նրան պարտության մատնեց՝ մեծ հաղթանակ տարավ, և ջարդ տալով նրան փախուստի մատնեց։ [Սկլերոսը] չհամարձակվեց վերադառնալ Հռոմոց երկիրը և իր հույսը դրեց տաճիկների վրա։ Անօրենը գնաց և մուտք գործեց Բաղդադ քաղաքը։ Երեք տարի անց հեռանալով այնտեղից, եկավ և վախճանվեց Հռոմոց երկրում, իր ժողովրդի մեջ։

Հայոց 432 թվականին [26 մարտ 983—24 մարտ 984 թ.] վախճանվեց հայոց սուրբ հայրապետ Վահանը. նա սուրբ Գրիգորի աթոռին նստեց հինգ տարի։ Հայոց կաթողիկոս ձեռնադրեցին տեր Ստեփանոսին[77], մի աստվածասեր, Հիսուս Քրիստոսի բոլոր առաքինություններով օժտված մարդու։ Նրան հայոց հայրապետ հաստատեցին տեր Վահանի հրամանով և օրհնությամբ։ [Եկեղեցական] ժողովը գլխավորում էր Աղվանից կաթողիկոս տեր Հովհաննեսը։ [Դա տեղի ունեցավ] հունաց Վասիլ կայսեր և հայոց արքաներ Հովհաննեսի և Աշոտի օրոք, ինչպես և Սենեքերիմի՝ Ապուսահլի որդու, Աշոտի որդու, Դերենիկի որդու, Գագիկ Արծրունու որդու՝ Սարասարի տոհմից։

Սրանց օրոք պարսիկների անհավատ և սիրտ բռնակալ Մամլանը[78], անհավատների ամիրապետը, զորահավաք կատարելով, իրեն հատուկ գազանային դաժանությամբ, արյունարբու վիշապի նման հարձակվեց քրիստոնյաների վրա, մտադիր լինելով Հայաստանում մեծ կոտորած սարքել։ Ահագին և անհամար բազմությամբ նա շարժվեց ու եկավ և իր զորքով ողողեց լեռներն ու դաշտերը։ Անօրենի սարսափից ողջ երկիրը ահ ու դողի մեջ ընկավ։ Նա սրով ու հրով գրավեց բազմաթիվ վայրեր և, եկեղեցիները հրկիզելով, խափանեց ժամասացությունը. նա բազում անարգական խոսքեր ուղղեց աստծուն։ Եվ պետք էր տեսնել այդ չար գազանի ահից քրիստոնյաների գլխին եկած մեծ և ահեղ փորձանքը, որովհետև նա իր չարաթույն կատաղությունը, որպես դառնաշունչ մաղձ, հավատացյալների վրա թափեց։ Նա այդպիսի հսկայական զորքով եկավ հասավ Ապահունիք գավառը, վրաց իշխան Դավիթ կուրապաղատի երկիրը և աստծո սուրբ մարդուն՝ աստվածասեր Դավիթ կուրապաղատին սոսկալի սպառնալիքներով լի այսպիսի մի նամակ գրեց, թե «Ոչ մեկի վրա հույս չդնես, ով ամենազազիր, գարշելի և նեխած ու սպիտակ մո-

դու Դաւիթ, ամենաքարշ և ժանդ և նեխեալ ալեօքդ, դի ահա՝ թէ ոչ վաղվաղակի առաքեսցես ինձ զհարկս տասն տարւոյ և պատանդ զորդիս ազատաց քոյ և գիր ծառայութեան ինձ՝ այժմ հասեալ դամ ի վերայ քո մեծաւ զօրութեամբս իմով և ո՞վ իցէ այն, որ փրկեսցէ զքեզ ի ձեռաց իմոց, դի ահա չարաչար և դառն նեղութիւն ածից ի վերայ քո, պիղծ և դառն ալեւոր»։ Եւ այսպիսի բազում սպառնալեօք որոտայր ի վերայ նորա։ Իսկ յորժամ ընթերցաւ Դաւիթ զթուղթն անօրէն իշխանին Մամլանայ, ի դառնութենէ թղթոյն՝ զթուղթն արտաքս ձգեաց և ինքն լալով առ Աստուած աղաչանս արձակէր և ասէր. «Զարիո՛ զզօրութիւնս քո Տէր և յիշեա Տէր իմ, զոր արարեր ընդ Յեփսաք և ընդ Սեննեքարիմ անօրէն թագաւորն Ասորեստանեայց. և զայս բանքս անօրէնութեան և նա խօսեցաւ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, մի՛ անտես առնիր զհաւատացեալքս սուրբ անուն քո»։

Յայնժամ հրամայեաց ժողով լինել զօրաց իւրոց զազատս և զամենայն հեծելազօրս իւր, զվաչէ և զՏեւդատ և զՔերոն և զայլ զօրսն Հայոց աշխարհին. հետեւակս ոտիղնաւորս երեք հազար, և ձիաւորս երկու հազար և հինգ հարիւր։ Եւ անօրէնն Մամլանն կայր բանակեալ յԱպահունիս ի դեւղն, որ Խօսօնա կոչէին, երկու հարիւր հազարով։ Եւ Դաւիթ յարուցեալ զնայր ընդդէմ չար գազանին Մամլանայ և զամենայն աշխարհն յաղօթս և ի պաղատանս և յաղաչանս մեծաւ պաղատանօք ի խնդրուածս Աստուծոյ կացուցանէր։ Եւ զնաց իջաւ Դաւիթ ի սահմանս Ապահունեաց և զԿարմրակէլն զայր քաջ՝ եօթն հարիւր ձիաւորով պահապան գիշերոյն կացուցանէր. և ինքն Դաւիթ զամենայն գիշերն յաղօթս Աստուծոյ անցուցանէր։ Եւ յառաւօտու պահուն գայր ոմն ի զօրաց այլազգեացն հազար ձիաւորով, որ էր և նա պահապան զօրաց նորա։

Եւ ի գիշերին յայնմիկ ընդ միմեանս հարան. և էր լոյս լուսնին սաստիկ, և յայնժամ երեւեցաւ սակաւ ինչ անձրեւ ի վերայ լերանց, և ամենայն լերինքն փայլատակէին իբրեւ զբոց հրոյ. և տեսին զայն զօրքն այլազգեաց, կարծեցին թէ այն ամենայն բազմութիւն զօրաց քրիստոնէիցն իցեն և յայնժամ առ հասարակ ի փախուստ դարձան։ Եւ Կարմրակէլն տեսեալ զի դարձան ի փախուստ՝ սրով ի վերայ յարձակեցաւ և իբրեւ զանտառ մայրի կոտորէր զնոսա յանխնայ. կալաւ զգինն Մամլանայ և զիւր պատերազմի ձին և վաղվաղակի յուղարկեաց առ Դաւիթ, և ձայն աւետեաց մատուցանէին նմա՝ եթէ հարաք զՄամլան։ Եւ նա դեռ յաղօթս կայր առ Աստուած. և լուեալ զայս Դաւիթ՝ հիանայր։ Եւ յայնժամ զհետ մտեալ ամենայն զօրօքն՝ արարին զզօրսն անօրինացն փախստական սաստիկ կոտորածով, առին անթիւ և անհամար գերու-

րուքովդ Դավիթ. եթե փութանակի չուղարկես ինձ տասը տարվա հարկ, և քո ազատների որդիներին որպես պատանդ, եթե չտաս ինձ հպատակության մասին գրություն, ես իմ հսկայական զորքով կգամ քեզ վրա, և ո՞վ կկարողանա փրկել քեզ իմ ձեռքից. ես դառն ու մեծ փորձանք կբերեմ քո գլխին, ո՛վ պիղծ և գարշելի ալևոր»: Եվ նման բազմաթիվ սպառնալիքներով ահաբեկում էր նրան: Դավիթը կարդաց անհավատ Մամլան իշխանի նամակը. այնքան դառնաշունչ էր նամակը, որ [Դավիթը] այն դեն շպրտեց, իսկ լալով սկսեց աստծուն պաղատել, ասելով. «Յո՛ւյց տուր, տեր, քո զորությունը և հիշի՛ր, իմ տե՛ր, թե ինչպես վերաբերվեցիր Ռափսակի[79] և Ասորեստանի անօրեն թագավոր Սեննեքերիմի հետ, քանզի նա էլ նույնպիսի անարգական խոսքեր ասաց: Տե՛ր իմ, Հիսուս Քրիստոս, մի՛ անտեսիր մեզ՝ քո սուրբ անվանը հավատացողներիս»:

[Նա] անմիջապես զորահավաք հայտարարեց՝ ազատներին, իր ողջ հեծելազորին, Վաչեին, Տևդատին, Փերսին և հայոց երկրի մյուս զորքերին— երեք հազար հետևակ աղեղնավորներ և երկու հազար հինգ հարյուր հեծյալներ: Անհավատ Մամլանը երկու հարյուր հազար հոգով բանակել էր Ապահունիքի Խոսոնք կոչվող գյուղում: Դավիթը շարժվեց Մամլան չար գազանի վրա, իսկ ամբողջ երկրին կարգադրեց աղոթել և թախանձագին աղաչել ու պաղատել աստծուն: Դավիթը գնաց իջավ Ապահունիքի սահմանները, և անվեհեր Կարմրակելին յոթ հարյուր ձիավորով գիշերապահ նշանակելով, ինքը ողջ գիշերն անցկացրեց աստծուն աղոթելով: Առավոտյան պահին այլազգիների զինվորներից մեկը հազար ձիավորով եկավ. սա էլ [Մամլանի] զորքերի [գիշերա]պահն էր:

Այդ գիշեր նրանց միջև ընդհարում տեղի ունեցավ. լուսինը լավ լուսավորում էր. լեռների վրա մի փոքր անձրև տեղաց, և բոլոր լեռները [կայծակներից] փայլատակեցին հրեղեն բոցի նման: Այլազգիների զինվորները, տեսնելով այդ, կարծեցին, թե քրիստոնյաների հսկայական քանակությամբ զինվորներ [կան այնտեղ] և գլխովին դիմեցին փախուստի: Կարմրակելը, տեսնելով նրանց փախուստը, սրով հարձակվեց նրանց վրա և, ինչպես մայրի անտառ կտրես, սկսեց անխնա կոտորել: Նա բռնեց Մամլանի կնոջն ու նրա պատերազմական ձին և փութանակի ուղարկեց Դավթին: Վերջինիս ավետիս բերեցին, թե ջարդեցինք Մամլանին: [Դավիթը] դեռ աղոթում էր աստծուն, և լսելով այդ լուրը, ապշեց: Այնուհետև [Դավթի] ողջ զորքը հետապնդեց անհավատների զորքին և մեծ ջարդ տալով փախուստի մատնեց, վերցրեց անթիվ-ան-

թիւն և աւար ոսկւոյ և արծաթոյ։ Եւ անօրէնն Մամլան գնաց ամօթով յաշխարհն իւր և ամբարտաւանեալ յոյժ ընդ Աստուած՝ և յերկինս ոչ հայեցաւ բնաւ և զիւր անարժան աղօթսն ոչ մատուցանէր Աստուծոյ։

Իսկ յետ ամաց ինչ խորհեցան չար խորհուրդս վասն սուրբ և արդար իշխանին Դաւթայ սպանանել ընդ. և չար իշխանաց իւրոց նմանեալ լինէին Կայենի և այլոց սպանողացն։ Եւ յարուցին ի չար խորհուրդս իւրեանց զարհի եպիսկոպոսն Վրաց աշխարհին զԻլարիոն. և այս Իլարիոնս զԱստուած կրկնակի ի խաչ եհան, վասն զի ի կենդանարար մարմին և յարիւնն Քրիստոսի դնդ մահու խառնեաց և արար զապրեցուցիչն՝ մահացուցիչ. և զկնի սպանող պատարագին իւրոյ դնէր ի բերան սուրբ իշխանին զվասն խորհրդոյն խառնեցեալ մահաբեր դեղօք յանդիման Աստուծոյ ի մէջ եկեղեցւոյն։ Եւ դիտացեալ աստուածասէր իշխանին Դաւթի, ոչ ինչ խօսեցաւ բնաւ, այլ առեալ դեղ բժշկութեան շիջուցանել զցաւսն ի մարմնոյ իւրոյ։ Իսկ անօրէն եպիսկոպոսն Իլարիոն դարձեալ բորբոքեցաւ ի չար խորհուրդսն իւր և մտեալ ի սենեակն՝ մինչ ննջէր բարեպաշտն Դաւիթ և խաղաղիկ ի քուն կայր, և առեալ նորա զթարձն ի սնարից դնէր ի վերայ բերանոյն Դաւթին և անկեալ սաստկապէս ուժգին ի վերայ նորա և չարշարանօք խեղդէր զաստուածասէրն կուրապազատան զԴաւիթ. զորս յետ սակաւ ամաց Թագաւորն Վասիլ ըմբռնեալ զանօրէն եպիսկոպոսն Իլարիոն, քար մեծ կապեաց ի պարանոցն նորա, ընկէց զնա յովկիանոս և զայլ միաբանեալսն յազատացն, և անդ սատակեցան անիծից վաստակաւորքն, վասն զի Հայր անուն էր Դաւիթ կուրապազատան Թագաւորին Վասլին, և վասն այնորիկ կորոյս զնոսա։

Եւ ի լինել Թուականութեանս Հայոց ՆԼԴ մեռանէր Հայոց Հայրապետն տէր Ստեփանոս, և ձեռնադրեաց յաթոռն իւր զերանելին զտէր Խաչիկ, վասն զի էր այր փառաւոր և տեղեակ աստուածային կատակարանացն։ Առ սա եկեալ Թուղթ ի Հոռոմոց պատրիարգէն ի Թէոդորոսէն, որ նստէր ի մայրաքաղաքն Մելտենի, վասն զի էր այր կորովի և հրմուտ գրոց պատուիրանաց. և վարդապետն Հայոց Սամուէլ գրեաց ընդդէմ նորա զպատասխանիսն վայելուչ և ցանկալի բանիւք, որ եղեւ իսկ հաճելի Թուղթն այն ամենայն լսողացն, ևս առաւել մեծարեալ եղեւ առաջի Թէոդորոսի պատրիարգին Հոռոմոց և առաջի Խաչիկ կաթուղիկոսին Հայոց։

Իսկ յաւուրս ժամանակաց տօմարիս Հայոց ի չամի ՆԼԵ ապստամբեաց ոմն իշխան ի վերայ Թագաւորին Վասլի, իշխանն Հոռոմոց Մօրաւարդ, և արար աւերակս զմեծ մասն Հոռոմոց աշխարհին. և շրջեալ երթայր ընդ երկիր սրով և գերութեամբ։ Եւ ժողովեալ զօրքն Հոռոմոց

համար դերիներ ու ավար՝ ոսկի և արծաթ։ Խայտառակ եղած անհավատ Մամլանը գնաց իր երկիրը և, անշափ ամբարտավանացած աստծո դեմ, իր հայացքն անգամ չհառեց երկինք, իր սին աղոթքներով չդիմեց աստծուն։

Մի քանի տարի անց չարամիտ իշխանները, նմանվելով Կայենին և այլ մարդասպանների, չարանենգորեն ծրագրեցին Դավիթ սուրբ և արդար իշխանի սպանությունը։ Նրանք իրենց նենգ ծրագրին մասնակից դարձրին Վրաստանի արքեպիսկոպոս Իլարիոնին, և այս Իլարիոնը աստծուն երկրորդ անգամ խաչեց, քանզի Քրիստոսի կենարար մարմնի և արյան մեջ մահաբեր թույն խառնելով՝ կենսաբերը դարձրեց մահաբեր։ Իր ոճրագործ պատարագից հետո, մահաբեր թույնով շաղախված հաղորդության հացը եկեղեցու մեջ աստծուն դեմ հանդիման, նա դրեց սուրբ իշխանի բերանը։ Աստվածասեր Դավիթ իշխանը՝ այդ մասին տեղյակ, բան չասաց և բուժիչ դեղեր ընդունելով ամոքեց իր մարմնական ցավերը։ Անօրեն Իլարիոն եպիսկոպոսի սիրտը նորից բորբոքվեց նենգությամբ. մտնելով բարեպաշտ Դավթի ննջասենյակը, երբ վերջինս խաղաղ քուն էր մտել, նրա սնարից քաշեց բարձը, դրեց Դավթի բերանի վրա և, ամբողջ ուժով ընկնելով նրա վրա, չարաչար խեղդամահ արեց աստվածասեր Դավիթ կուրապաղատին։ Մի քանի տարի անց Վասիլ կայսրը[80] անօրեն Իլարիոն եպիսկոպոսին ձերբակալեց, նրա վրզից մի քար կապեց ու նրան գործակցած մյուս ազատների հետ ծովը գցեց, և այնտեղ սատակեցին [ժողովրդի] անեծքներին արժանացածները։ Վասիլ կայսրը Դավիթ կուրապաղատին հոր պես էր [հարգում], դրա համար էլ նրանց կորստյան մատնեց։

Հայոց 434 թվականին [25 մարտ 985—24 մարտ 986 թ.] վախճանվեց հայոց տեր Ստեփանոս հայրապետը, նախապես կաթողիկոս ձեռնադրելով երանելի տեր Խաչիկին[81], քանզի վերջինս պատվական մարդ էր, սուրբ կտակարաններին քաջագիտակ։ Հոռոմոց պատրիարք Թեոդորոսը, որ նստում էր Մելիտենե մայրաքաղաքում[82], խորամիտ և սուրբ գրոց գիտակ մի մարդ, սրան նամակ գրեց։ Հայոց Սամվել վարդապետը նրան վայելուչ և սիրալիր պատասխան ուղարկեց. նրա նամակը բոլոր ունկնդիրներին դուր եկավ. այդ պատճառով էլ [Սամվելը] Հոռոմոց Թեոդորոս պատրիարքի և հայոց Խաչիկ կաթողիկոսի առավել մեծ հարգանքին արժանացավ։

Մեր հայոց տոմարի 435 թվականին [25 մարտ 986—24 մարտ 987 թ.] Հոռոմոց մի իշխան, Մորավարդը[83], Վասիլ կայսեր դեմ ապստամբություն բարձրացրեց և ավերեց Հոռոմոց երկրի մեծ մասը. նա շրջում էր երկրում՝ սրի ու գերության մատնելով այն։ Հոռոմոց զորքը

ի վերայ նորա, հալածական արարին զնա յաշխարհն Տաճկայ, զոր յետ ամի միոյ եկեալ մեռանէր ի թագաւորէն Վասիլ։

Դարձեալ ի թուականութեանս Հայոց նէ ամի եղեւ սաստիկ շարժ ընդ ամենայն արարածս, և փլաւ սուրբն Սոփի ի Կոստանդնուպոլիս։ Եւ յայսմ ամի կամեցաւ թագաւորն Վասիլ զաշխարհն Բուլղարաց ածել ի հաւանութիւն իւրոյ թագաւորութեանն. և առաքեաց առ Ալի Սմանն թագաւորն Բուլղարաց և առ ամենայն իշխանսն աշխարհին գալ յերկրպագութիւն իւրոյ թագաւորութեանն. իսկ նոքա ոչ հնչին զնա հրամանաց թագաւորին Վասլի։

Յայնժամ թագաւորն Վասիլ ժողով արար զամենայն աշխարհն իւրոյ թագաւորութեանն և մեծաւ սրտմտութեամբ յարձակեցաւ ի վերայ աշխարհին Բուլղարաց և սրով և գերութեամբ ապականէր զերկիր։ Իսկ թագաւորն Բուլղարաց Ալի Օսմանն ժողով արարեալ և գայր բազում զօրօք ի վերայ Վասլին, և արարին սաստիկ պատերազմ ընդ միմեանս։ Եւ թագաւորն Բուլղարաց յաղթեաց Վասլին և դարձոյց զամենայն զօրսն ի փախուստ մինչև ցԿոստանդնուպոլիս. և առին բազում աւար և գերութիւն ի զօրաց Վասլին. և Վասիլն լի ամօթով մտանէր ի Կոստանդնուպոլիս։ Եւ յետ երկու ամի դարձեալ ժողով արարեալ թագաւորն Վասիլ և գնաց ի վերայ թագաւորին Բուլղարաց առ ի խնդրել զվրէժս իւր. և հանդիպեալ զօրացն Բուլղարաց, դարձոյց ի փախուստ զնոսա և վարէր առաջի իւր։ Եւ նեղեաց Վասիլն զաշխարհն Բուլղարաց սովով, սրով և գերութեամբ և դարձաւ եմուտ ի Կոստանդնուպոլիս մեծաւ ուրախութեամբ։

Սրդ յորժամ բարձրացաւ թուականութիւն Հայոց յամի նս մեռանէր Հայոց կաթողիկոսն Տէր Խաչիկ, որ կացեալ յաթոռ Հայրապետութեան Հայոց ամս վեց և ձեռնադրեաց յաթոռ իւր զտէր Սարգիս, որ էր այր կորովի գիտութեամբ պատուիրանացն Աստուծոյ. և էր սա հաճոյ Աստուծոյ և մարդկան, և էր կիրթ վարուց առաքինութեանց, և լուսաւոր վարդապետութեամբն իւրով զարդարեաց զեկեղեցին Աստուծոյ։

Յայսմ ամի զօրքն Եգիպատոսի, որ Մախր Արապիկք կոչին, մտին յաշխարհն Անտիոքայ քաղաքին և բազում աւերմամբ լցին զամենայն դաւառն. և ժողովեցան զօրք Հռոմոց ընդդէմ նոցա ի պատերազմ. և ի հանդիպիլ միմեանց արարին փախստական զզօրսն Հռոմոց և զմեծամեծ իշխանս գերի առին և տարան յԵգիպտոս։ Իսկ յետ երկու ամի ելանէր մեծ տունն Հռոմոց և գայր բազում զօրօք ի վերայ աշխարհին Հայոց. և սրով և գերութեամբ անողորմ յարձակեցան ի վերայ հաւատացելոց Քրիստոսի. և գազանաբար սպանմամբ ընթանայր իբրեւ զօձ թունաւոր, որ և ելից իսկ ղտեղի անհաւատ ազդացն։ Եւ եղեւ ի

հարձակվեց նրա վրա, և նրան քշեցին տաճկաց երկիրը։ Մեկ տարի անց վերադարձավ և Վասիլ կայսեր կողմից մահապատժի ենթարկվեց։

Հայոց 437 թվականին [24 մարտ 988—23 մարտ 989] ամբողջ տիեզերքում ուժեղ երկրաշարժ եղավ, և փլվեց Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարը[84]։ Նույն տարին Վասիլ կայսրը որոշեց Բուլղարիան իր թագավորության հպատակեցնել։ Նա դիմեց բուլղարների թագավոր Ալուսիանին[85] և նահանգների բոլոր իշխաններին՝ հպատակվելու իր թագավորությանը։ Նրանք հրաժարվեցին հնազանդվել Վասիլ կայսեր հրամաններին։

Դրա վրա Վասիլ կայսրն իր ամբողջ երկրում զորահավաք արեց և մեծ զայրույթով հարձակվեց Բուլղարիայի վրա՝ սրի ու գերության մատնելով երկիրը։ Բուլղարների թագավոր Ալուսիանը զորահավաք արեց և հսկայական զորքով եկավ Վասիլի վրա։ Երկուսի միջև տեղի ունեցավ կատաղի պատերազմ։ Բուլղարների թագավորը հաղթեց Վասիլին և նրա ողջ զորքը փախուստի մատնեց՝ մինչև Կոստանդնուպոլիս. [բուլղարները] մեծ ավար վերցրին և Վասիլի բազմաթիվ զինվորներին գերեվարեցին։ Վասիլը ամոթահար մտավ Կոստանդնուպոլիս։ Երկու տարի անց Վասիլ կայսրը նորից զորահավաք արեց և գնաց բուլղարների թագավորի դեմ՝ կամենալով վրեժխնդիր լինել։ Հանդիպելով բուլղարների զորքին, փախուստի մատնեց և, առաջը գցած, գերի քշեց։ Վասիլը բուլղարների երկիրը սովի մատնեց, բնակչությանը սրի քաշեց, գերի տարավ և մեծ ուրախությամբ վերադարձավ ու մտավ Կոստանդնուպոլիս[86]։

Հայոց 440 թվականի [24 մարտ 991—22 մարտ 992 թ.] սկզբին վախճանվեց հայոց կաթողիկոս տեր Խաչիկը, որ հայոց հայրապետական աթոռին նստեց վեց տարի։ Նա իր աթոռին ժառանգորդ ձեռնադրեց աստծո և մարդկանց սիրելի տեր Սարգսին[87]՝ աստվածային պատվիրաններին քաջագիտակ մի մարդու։ Նա առաքինի էր և իր լուսավոր վարդապետությամբ պայծառացրեց աստծո եկեղեցին։

Այդ տարին Եգիպտոսի զորքը, որ Մախր արապիկ է կոչվում, մտավ Անտիոքի գավառը և այն ամբողջությամբ ավերակ դարձրեց։ Հոռոմոց զորքը հավաքեց նրանց դեմ պատերազմելու։ Մարտում [եգիպտոսի] զորքը հոռոմոց զորքին փախուստի մատնեց և երևելի իշխաններին գերելով տարավ Եգիպտոս։ Երկու տարի անց հոռոմոց մեծ դուքսը մեծաթիվ զորքով շարժվեց հայոց երկրի վրա, անողոքմ կերպով հարձակվեց քրիստոնյաների վրա, նրանց սրի քաշեց ու գերի տարավ։ Գազանի պես հոշոտելով, նա առաջ էր շարժվում ինչպես թունավոր օձը և լրացրեց անհավատ ազգերի թողած պակասը։ Երբ [դուքսը] մը-

մտանելն նորա յաշխարհն Հայոց, ժողովեցան ընդ յառաջ նորա զօրքն Հայոց ազատացն, և ի դիպելն ընդ միմեանս բախեցին գաղանաբար, և քաջ ընդ քաջս ելանէին և անպարտելի Հանդիսանային յերկու կողմանց: Եւ անդ էր տեսանել զսաստիկ կոտորած յերկուց կողմանցն. և յայնժամ ի սաստկանալն մեծի պատերազմին, եղեն պարտեալ զօրքն Հոռոմոց առաջի զօրացն Հայոց և զարձան ի փախուստ դիմօք յաշխարհն իւրեանց ամօթ երեսօք մաղապուրծ փախմամբ:

Յայսմ ամի եկեալ գայր ամիրային Տաճկաց, որոյ անուն երկայնաձեռն կոչէին, և բազում զօրօք ի յաւեր և ի վերուիրիւն մատնեաց զԵդեսացւոց աշխարհն, և վիշտս մեծամեծս ի վերայ Ուռհայոյ և անցանէր ընդ մեծ գետն Եփրատ, և գերեաց զայն կոյս զսահմանսն Հայոց աշխարհին և զարձաւ մեծաւ յաղթութեամբ յաշխարհն Ասիրիկեացւոցն:

Եւ եղեւ ի փոխել թուականութեանս Հայոց ամի ՆԽԶ ելանէր յերկինս աստղ մի գիսաւոր և երեւեալ սոսկալի և սքանչելի տեսլեամբ լուսատեսիլ և զարմանալի:

Իսկ յամի ՆԽԲ թուականութեանս Հայոց եղեւ սէր և միաբանութիւն մեծ ընդ թագաւորն Վասիլ և ընդ Սենեքարիմ արքայն Հայոց: Եւ յայսմ ամի եղեւ վախճան Սահակայ մարզպանին Վարաժնունեաց Տեառն:

Յորժամ լինէր թուականն Հայոց ՆՕԵ. զօրաժողով արար թագաւորն Վասիլ զամենայն աշխարհս տէրութեան իւրոյ և խաղայր գնայր ի վերայ աշխարհին Բուլղարաց. և բազում ժամանակս արարեալ յաշխարհն այնմ մեծաւ պատերազմաւ: Եւ յայնմ աւուրսն մեծ խռովութիւն եղեւ ի քաղաքն ի Կոստանդնուպոլիս և յամենայն աշխարհն Յունաց, վասն զի յաւուր մեծի զատկին մոլորեալ եղեն ի կատարելոյ զսուրբ Յարութեան օրն Զատկին. և ամենայն վարդապետաք տանն Յունաց ընդ տուութեամբ փակեցին զուղղորդ պատուիրանս Աստուածաշունչ գրոց և զսուտ և ըստ խաբեբայ տումարն հակառակամարտին Իրինի ընկալան, և զճշմարտագիր տումարն մեծին Անդրիանոսէ ոչ ընկալան, այլ ածին նոքա զլրբումն Զատկին ի կիրակիէն ի շարաթն և զկնի աւուր միոյ Զատիկ ապարին, զոր պարտ էր զկնի ութ աւուրն կատարել, և ամենայն տանն Յունաց մոլորեալ ի սուրբ Զատիկն, և եղեւ սուգ մեծ ի վերայ սուրբ եկեղեցւոյն Կոստանդնուպոլսի, եւս առաւել ի սուրբ և յաստուածակերտ քաղաքն Երուսաղէմ, զի հպարտութեամբ բարձրավզեալ ածին զԶատիկն ի յաւուր Ծաղկազարդին, և եղեն հակառակողք ամենայն ազգաց տունն Յունաց, եւս առաւել Քրիստոսի, վասն զի պատերազմեցան ընդ Հոգւոյն Սրբոյ տունն փիլիսոփայից: Եւ յայնմ Զատկի ոչ վառեցաւ լոյս

տավ Հայոց երկիրը, նրա դեմ գուրս եկավ հայ ազատների զորքը. հանդիպելով միմյանց՝ նրանք կատաղի մարտ տվեցին. քաջերը կռվում էին քաջերի դեմ, և երկու կողմն էլ մնում էր անպարտելի։ Եվ պետք էր տեսնել, թե ինչպես էին նրանք կոտորում միմյանց։ Երբ մարտը թեժացավ, Հռոմանների զորքը հայոց զորքերից պարտություն կրեց և մաղասլուրծ, խայտառակ փախուստի դիմեց՝ դեմքերը ուղղած դեպի իրենց երկիրը։

Այդ տարին տաճիկների ամիրան, որին Երկայնաբազուկ էին կոչում, մեծաթիվ զորքով շարժվելով՝ եկավ ավերեց և գերեվարեց եդեսացիների գավառը, մեծամեծ դժբախտություն բերեց Ուռհայի գլխին։ Անցնելով Եփրատ մեծ գետը, նա գրավեց [գետի] մյուս կողմում գտնվող հսկայական շրջանները և մեծ հաղթանակով վերադարձավ ափրիկացվոց երկիրը։

Հայոց 446 թվականի [22 մարտ 997—21 մարտ 998 թ.] սկզբին երկնքում մի գիսավոր աստղ երևաց։ Նա պայծառ էր և զարմանալի, ուներ սոսկալի ու ահավոր տեսք։

Իսկ հայոց 449 թվականին [21 մարտ 1000—20 մարտ 1001 թ.] Վասիլ կայսեր և հայոց Սենեքերիմ արքայի միջև հաստատվեց սեր և միաբանություն։ Այդ տարին վախճանվեց մարզպան Սահակը, Վարաժնունիքի տերը։

Երբ հայոց 455 թվականը [20 մարտ 1006—19 մարտ 1007 թ.] եկավ, Վասիլ կայսրը իր բովանդակ պետության սահմաններում զորահավաք արեց և շարժվեց գնաց բուլղարաց երկրի վրա։ Նա այդ երկրում երկարատև և կատաղի պատերազմ մղեց։ Այդ օրերին Կոստանդնուպոլիս քաղաքում և հույների ամբողջ երկրում մեծ հուզում եղավ, որովհետև շփոթեցին մեծ զատկի օրը և չնշեցին Հարության տոնը։ Հունաց աշխարհի բոլոր վարդապետները նենգաբար մի կողմ դնելով աստվածաշունչ գրքերի ուղիղ պատվիրանները, ընդունեցին ընդդիմամարտ Իրիոնի[88] անստույգ և պատիր տոմարը. նրանք մերժեցին մեծն Անդրեասի[89] ճշմարիտ տոմարը և [իսկական] զատկի օրը կիրակիից տեղափոխելով ութ օր առաջ, մեկ օր հետո զատիկ արեցին, մի բան, որ պետք էր ութ օր հետո անել։ Հունաց բովանդակ երկիրը շփոթեց սուրբ զատկի օրը, որի պատճառով Կոստանդնուպոլսի սուրբ եկեղեցում մեծ սուգ էր, առավել ևս սուրբ և աստվածաշեն Երուսաղեմ քաղաքում, որովհետև մեծամտորեն ամբարտավանալով, զատիկը նշեցին ծաղկազարդի օրը, որով հունաց երկիրը հակադրվեց բոլոր ժողովուրդներին. բայց առավել ևս Քրիստոսին, քանզի փիլիսոփաների երկիրը հանդես եկավ սուրբ Հոգու դեմ։ Այդ զատկի օրը աստվածընկալ Երուսաղեմ քաղա-

կանքեղացն ի սուրբ գերեզմանն աստուածընկալ ի քաղաքն յերուսաղէմ, վասն ոլ սուտ էին, անօրէնութեամբ արարին Զատիկն իւրեանց։ Իսկ յայնմ աւուր աղդն անօրինաց, որ կային ի քաղաքն երուսաղէմ, իբրեւ տեսին զՋատիկն քրիստոնէիցն ի մէջ սուրբ Յարութեանն, կոտորեցին սրով զամենայն քրիստոնեայսն՝ ոդիք իբրեւ տասն հազար, և լցաւ սուրբ Գերեզմանն Քրիստոսի արեամբ աղօթաւորացն. և դեռ մինչեւ ցայսօր կան ոսկերք նոցա լցեալ ի յայրի անդ յարեւմտից կուսէ քաղաքին Երուսաղէմի, զոր այժմ Մանկանց Եղխարէ կոչեն զնոսա։ Արդ գայս այսպէս արարին հանճարեղ իմաստունքն Յունաց։

Իսկ թագաւորն Վասիլ իբրեւ յաղթեաց և էառ զթագաւորութիւնն Բուլղարաց, դարձաւ ի Կոստանդնուպոլիս մեծաւ ուրախութեամբ։ Եւ յորժամ լուաւ զայս ամենայն կոտորածս, որ եղեւ սուրբ Զատկին, կոչեաց զամենայն իմաստունսն Յունաց և հարցանէր զպատճառն. և նոքա ըստ կամաց իւրեանց սկսան բազմադիմի մոլորեցուցանել զթագաւորն օտարոտի պատասխանատրութեամբն։ Եւ ծանեաւ թագաւորն զայլակերպ պատասխանիս նոցա, իմացաւ՝ որ սուտ էին և մոլորեալք։ Իսկ յառաջագոյն լուեալ էր թագաւորն վասն Հայոց վարդապետացն՝ եթէ յաղթողք և կորովիք են գրոց պատուիրանաց, և յանուանէ գիտէր վասն Յովսեփայ Ընծայուց հօրն և յաղագս Յովհաննիսի, որ Հոմանուն ասէին Կոզևն. և յայնժամ գրեաց առ Յովհաննէս արքայն Հայոց՝ զի առաքեսցէ զնոսա առ ինքն ի Կոստանդնուպոլիս, զի ի նոցանէ գիտասցէ զճշմարիտ պատճառն և զուղղորդ Զատիկն։ Իսկ նոքա ոչ առին յանձն գնալ, այլ թղթօք դեղեցկաշար բանիւք հասկացուցին զթագաւորն ամենայն խորին քննութեամբ։ Եւ յայնժամ հակառակեալ կղերիկոսք և ոչ հաւանեցան ընդոյն, մինչեւ դարձեալ թագաւորն վասիլ յուղարկեալ ի Հայք առ Յովհաննէս շահնշահն և առ Տէր Սարգիս կաթուղիկոսն Հայոց և մեծաւ խնդրուածօք ետ բերել առ ինքն զՀայոց վարդապետն զՍամուէլ, այր կորովի և յաղթող և կացուցանէր զնա յատենի խօսել ընդ վարդապետացն Յունաց։ Իսկ իմաստունքն Յունաց շարժեցին ի վերայ Սամուէլի զամենայն գրեանս տանն Յունաց, և ոչ կարացին շարժել զնա ի ճշմարտութեանց անտի։ Եւ սկիզբն արար Սամուէլ ի յառաջին աւուրն արարչութենէն և դայր հասանէր մինչեւ ցվերջին պատկեր աւուրն և զամենայն պատճառ պատճէնից սուրբ արանց յառաջին իմաստնոցն հաստատուն կացուցանէր։ Եւ հաճոյ լինէր թագաւորին ամենայն բանք նորա. և ասէին իմաստունքն Յունաց ընդ թագաւորն. «Ով տէր արքայ, հրամայեա և ած այսր զմեծ վարդապետն Երրայեցւոց, որ բնակեալ է ի կղզւոջն Կիպրացւոց, այր կորովի և հմուտ տումարի և ամենայն ա-

քում՝ սուրբ Գերեզմանի վրա կանթեղներն անվառ մնացին, որովհետև մոլորյալ [հռոմները] իրենց զատիկը նշեցին անօրեն կերպով։ Այդ օրը Երուսաղեմ քաղաքում գտնվող անհավատները, երբ տեսան, որ քրիստոնյաները զատիկը նշում են Սուրբ Հարության [տաճարում], բոլոր քրիստոնյաներին, շուրջ տասը հազար հոգու, սրի քաշեցին։ Ազոթողների արյունով ողողվեց Քրիստոսի սուրբ Գերեզմանը։ Մինչև օրս էլ նրանց ոսկորները լցված են Երուսաղեմ քաղաքի արևմտյան կողմում գտնվող քարայրում։ Դրանք այժմ «Մանկանց նշխարք» են կոչվում։ Հույների հանճարեղ իմաստունների արածն էլ ահա այս էր։

Վասիլ կայսրը, հաղթելով և հպատակեցնելով բուլղարների թագավորությունը, մեծ ուրախությամբ վերադարձավ Կոստանդնուպոլիս։ Երբ իմացավ այն կոտորածի մասին, որ տեղի էր ունեցել սուրբ զատկի օրը, նա հրավիրեց հույների բոլոր իմաստուններին և հարցրեց պատճառը։ Նրանք կամայականորեն սկսեցին այլևայլ միջոցներով մոլորության մեջ գցել կայսեր, տալով սուտուփուտ պատասխաններ։ Կայսրը հասկացավ նրանց պատասխանների հակասությունը, իմացավ, որ նրանք ճիշտ չեն, այլ մոլորված։ Կայսրն անցյալում լսել էր հայ վարդապետների մասին, որ նրանք սուրբ գրոց հարցերում ուժեղ են և անպարտելի։ Նա հանվանե գիտեր հայր Հովսեփ Ընծայեցուն[90], [լսել էր] նաև Հովհաննեսի՝ Կոդեռն մականվանյալի[91] մասին։ [Վասիլն], ահա, նամակ գրեց հայոց արքա Հովհաննեսին[92], խնդրելով, որ նա իր մոտ՝ Կոստանդնուպոլիս ուղարկի նրանց, որպեսզի նրանցից իմանա ճշմարտությունը և զատկի իսկական օրը։ Նրանք, սակայն, հանձն չառան գնալ, բայց իրենց լուրաղնին քննության արդյունքը մանրամասն հայտնեցին կայսեր։ [Հունաց] ընդդիմամարտ կղերականները նամակին հավանություն չտվեցին, և Վասիլ կայսրը նորից դիմեց Հայաստան՝ շահնշահ Հովհաննեսին և հայոց կաթողիկոս տեր Սարգսին, թախանձագին խնդրեց և իր մոտ բերել տվեց հայոց վարդապետ Սամվելին[93], քաջագիտակ և երևելի մի մարդու, նրան հրավիրեց ատյան՝ բանավիճելու հունաց վարդապետների հետ։ Հունաց իմաստունները Սամվելի դեմ օգտագործեցին հունաց երկրի բոլոր գրվածքները, բայց չկարողացան նրան սասանեցնել ճշմարտությունից։ Սամվելն սկսեց արարչագործության առաջին օրից և շարունակելով եկավ հասավ մինչև վերջին օրը և առաջին սուրբ, իմաստուն մարդկանց վկայություններով հաստատեց ճշմարտությունը։ Կայսրը նրա բոլոր ասածներին հավանություն տվեց. հույների իմաստուններն ասացին կայսեր. «Ո՛վ տեր արքա, հրամայի՛ր և այստեղ բերել տուր Կիպրոս կղզում բնակվող եբրայեցվոց մեծ վարդապետին, որ երիտասարդ հասակից տոմարական և գիտական հարցերում բազմա-

բուեստից ի մանկութենէ իւրմէ»: Եւ յուզարկեալ թագաւորն ի Կիպրոս և ածէր զՄուսի վարդապետն Երրայեցւոց: Եւ նա կացեալ յատենի առաջի թագաւորին Վասլի, այր ճարտարաբան և հզօր, և սկսաներ խօսել զարուեստս առումարին և յամօթ և սուտ արար զամենայն իմաստունս տանն Յունաց և զովէր զբանան Սամուէլի Հայոց վարդապետին: Իսկ թագաւորն յոյժ տրամեալ ի վերայ վարդապետացն Յունաց և զբազումս նոցան ի պատուոյ հեղեցուցն և ընկէց ի փառաց և զվարդապետն Հայոց յուզարկեալ մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց:

Դարձեալ ի յաւուրս Վասլի Յունաց թագաւորին և ի Հայոց թուականութեանն ՆՕԲ ելանէր աստղ մի ի տեսիլ հրոյ երեւեալ ի յերկինս, նշան բարկութեան արարածոց և կատարածի աշխարհի: Եւ եղեւ շարժ սաստիկ ընդ ամենայն երկիր, մինչեւ կարծեալ բազմայ՝ թէ նոցա օրն վերջին և կատարածի աշխարհի, և որպէս առ ջրհեղեղան՝ երերեալ դողայ ամենայն արարածք. և յայնժ բարբառոյ բարկութեանն բազումք անկեալ մեռանէին և զկնի այնր բարկութեան անկանէր ցաւ յերկիր, որ անուանեալ կոչի խովիկ, և անցոյց զբազում գաւառս և երթեալ հասանէր մինչեւ ի Սերաստիա. և ցան այն երեւէր յայտնապէս ի մարմինն և ի գանութենէն ոչ ժամանէին խոստովանութեան և հաղորդութեան: Եւ մարդ և անասուն պակասեցան յերկրէ, և մնացեալ չորքոտանիք՝ անմարդ շրջէին յերկրի:

Իսկ ի թուականին Հայոց Նկ զօրաժողով արար թագաւորն Վասիլ և գնայր ի վերայ աշխարհին Բուլղարաց և յաղթեաց թագաւորութեան նոցա և մաշեաց ի սուր սուսերի զբազում գաւառս մեծաւ բարկութեամբ. և յաւեր և ի գերութիւն մատնեաց զամենայն արեւմուտք և բնաջինջ եթարձ զամենայն թագաւորութիւնս Բուլղարաց և զնոքա մահու արբուցանէր Ալիօսխանին առն քաջի՝ Բուլղարաց թագաւորին. և այսպիսի օրինակաւ հանէր զնա ի կենաց, առեալ զկին նորա և զորդիս սրկանէր ի Կոստանդնուպօլիս:

Յորժամ թուականութիւնն Հայոց հասանէր ի չամս Նկն, զարթեաւ աստուածասաստ բարկութիւնն ի վերայ ամենայն քրիստոսական ժողովրդեանն և երկրպագողաց սուրբ խաչին, որ զարթեաւ վիշապն մահաշունչ հանդերձ մահաբեր հրով, ևհար զհաւատացեալս Սրբոյ Երրորդութեանն: Յայսմ ի թուականիս սաստեցաւ հիմունք առաքելականացն և մարգարէականացն, վասն որ օձք թեւաւորք հասին և կամին ցոլանալ ընդ ամենայն աշխարհս հաւատացելոցս Քրիստոսի. այս է առաջին ելն արեւանարբու գաղանացն: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ զօրաժողով լինէին խուժադուժ ազգն անօրինացն, որք անուանեալ կոչին Թուրք,

հմուտ և քաջագիտակ է»։ Կայսրը Կիպրոսից բերել տվեց եբրայեցվոց վարդապետ Մուսիին։ Այդ ճարտարաբան և բազմահմուտ մարդը կանգնեց ատյանում Վասիլ կայսեր դիմաց և սկսեց բանախոսել տոմարական արվեստի մասին. նա խայտառակեց հունաց երկրի բոլոր իմաստուններին, հերքեց նրանց [ասածները] և գովեց հայոց վարդապետ Սամվելի ասածները։ Կայսրը, հունաց վարդապետների դեմ սաստիկ ղայրացած, շատերին կարգալույծ և պատվազուրկ արեց, իսկ հայոց վարդապետին պատվական նվերներով հայոց երկիրն ուղարկեց։

Նույնպես հունաց Վասիլ կայսեր օրոք և հայոց 452 թվականին [21 մարտ 1003—19 մարտ 1004 թ.] երկնքում երևաց հրատեսիլ մի աստղ՝ վկան մարդկության վրա [աստծո] ցասման և աշխարհի կործանման։ Բովանդակ երկրում ուժեղ երկրաշարժ եղավ, այն աստիճան, որ շատերը կարծեցին, թե աշխարհի վերջին օրն է եկել։ Ինչպես ջրհեղեղի ժամանակ, բոլոր արարածներն ընկան ահ ու դողի մեջ։ [Աստծո] ցասման ահարկու ձայնից շատերը տեղն ու տեղը մեռան։ Այնուհետև երկրի վրա խուժեց խովիկ կոչվող հիվանդությունը, որն ամայացրեց բազում գավառներ. նա առաջ ընթանալով հասավ մինչև Սեբաստիա։ Ախտանշանները մարմնի վրա հստակ երևում էին, և հիվանդությունն այնքան ծանր էր, որ մարդիկ չէին հասցնում խոստովանել իրենց մեղքերն ու հաղորդություն ստանալ։ Երկրի երեսից նվազեցին մարդիկ և անասուններ, իսկ ողջ մնացած չորքոտանիները անտերունչ թափառում էին դաշտերում։

Հայոց 460 թվականին [19 մարտ 1011—17 մարտ 1012 թ.] Վասիլ կայսրը, զորահավաք անելով, շարժվեց բուլղարաց երկրի վրա, պարտության մատնեց նրանց թագավորությունը և մեծ ցասմամբ սրի քաշեց բազմաթիվ գավառներ։ Նա ավերեց ու գերեվարեց ողջ Արևմուտքը և, բնաջնջելով, վերացրեց բուլղարաց բովանդակ թագավորությունը, բուլղարաց թագավոր քաջ Ալուսիանին[94] թույն խմեցրեց և սպանեց, իսկ նրա կնոջն ու որդիներին վերցնելով գնաց Կոստանդնուպոլիս։

Երբ հասավ հայոց 465 թվականը [17 մարտ 1016—16 մարտ 1017], աստվածային ցասումը թափվեց բոլոր քրիստոնյա և սուրբ խաչին երկրպագող ժողովուրդների գլխին, քանզի զարթնեց մահաշունչ վիշապը՝ իր մահաբեր հրով և հարվածեց սուրբ երրորդությունը պաշտողներին։ Այս թվականին սասանվեցին առաքելական և մարգարեական [վարդապետության] հիմքերը, քանզի թևավոր օձեր վրա հասան, ցանկանալով տարածվել ողջ քրիստոնյա աշխարհով մեկ։ Սա արյունարբու գաղանների առաջին հանդես գալն էր։ Այդ օրերին անհավատների խուժադուժ ժողովուրդը, որոնք թուրք են կոչվում[95], արշավելով մտան Հա-

և հասեալ մտանէին յաշխարհն Հայոց ի վասպուրական գաւառին և անդորմ ի բերան սրոյ կոտորէին զհաւատացեալքս Քրիստոսի։

Յայնժամ հասանէր համբաւ կատարածիս այս առ թագաւորն Սենեքարիմ. յայնժամ աւազդ որդւոյ նորա Դաւիթ ժողովեալ զզօրս տգամատացն հասանէր ի վերայ Թուրք բանակին. և հարան սաստկապէս ընդ միմեանս ահաւոր պատերազմաւ. Իսկ մինչեւ յայնմ ժամանակին չէին բնաւ տեսեալ Թուրք զօրք հեծելոց. և ի հանդիպիլն նոցա՝ տեսին այլակերպ զնոսա. աղեղնաւորս և հերարձակս իբրեւ զկանայս. և յայնժամ զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինիլ ընդդէմ նետից. և քաջաբար ի վերայ այլազգեացն յարձակեցան և առ հասարակ մերկացուցին զսուսերն իւրեանց ի պատենից և արիաբար ի պատերազմ ընթանային արիական դունդն Հայոց և զբազումս յայլազգեացն սատակէին։ Իսկ այլազգիքն նետաձգութեամբ զբազումս ի զօրացն Հայոց վիրաւորէին խոցելով։ Եւ տեսեալ զայն ամենայն Շապուհ՝ առեր ցՀարձիր, Բազատար, յերեսաց Բշնամեացս, վասն զի ի նետից վիրաւորեալ եղեն մեծ մասն զօրացս, գնասցուք և ընդդէմ այսմ զիւուցս, զոր տեսաք եմք առ այլազգիսդ, ա՛յլ զդեսա պատրաստեսցուք ընդդէմ նետից։ Իսկ Դաւիթ առ մեծարին իւր Հայելով, հպարտացեալ մեծաւ ամբարտաւանութեամբ, ոչ լսէր Շապհոյ, գառնալ ի պատերազմէն։ Յայնժամ Շապուհ բարկութեամբ դիմեաց ի վերայ Դաւթի և բռնցի հարեալ զթիկունն ուժգնակի մղէր զնա գառնալ. վասն զի Շապուհ էր այր քաջ և պատերազմող հզօր և էր մանկակալ և անուցիչ Դաւթի, վասն այնորիկ անաշ էր ի նմանէ. և այսպիսի օրինակաւ դարձուցանէր զԴաւիթ հանդերձ զօրօքն։ Եւ գնացին յՈստան քաղաքն և պատմեցին թագաւորին Սենեքարիմայ և ասացին զորպիսութիւն այլազգեացն լերպատանաց։ Եւ լուեալ Սենեքարիմայ յոյժ վիրաւորեալ լինէր. ոչ եկեր և ոչ կարդ, այլ ի կայր մտախորհ, լի տրտմութեամբ և զդիշերն ամենայն անքուն անցուցանէր և նստեալ գնէր զժամանակագրութիւնս և զասացուածս աստուածախօս տեսանողացն, զորոց վարդապետացն, և գտանէր գրեալ ի գիրսն զժամանակն գալոց Թուրքաց զօրաց և զօրակառաց. և ծանեալ զկորուստ և զկատարած ամենայն երկրի. և գտանէր ի գիրսն գրեալ այսպէս, եթէ «Ի ժամանակին յայնմիկ փախիցեն յարեւելից յարիմաստս, ի հիւսիսոյ ի հարաւ, և հանգիստ ոչ գտանեն ի վեղեայ երկրի, վասն զի արեամբք ծածկին դաշտք և լերինք. և այս էր զոր ասաց Եսայի եթէ «Սմբակք երիվարաց նոցա հաստատուն»։

Յայնժամ խորհեցաւ տալ զաշխարհ հայրենեաց իւրոց յարքայն Յունաց Վասիլ և առնուլ զՍեբաստիա և գրէր վաղվաղակի առ թագաւորն. զոր իբրեւ լուաւ թագաւորն Վասիլ՝ ուրախ եղեւ և եաւ նմա զՍե-

յաստանի Վասպուրական գավառը և սկսեցին անգթաբար սրի քաշել քրիստոնյաներին։

Փորձանքի լուրը հասավ Սենեքերիմ թագավորին։ Նրա ավագ որդի Դավիթը, հավաքելով ազատների զորքը, հարձակվեց թուրքերի ճամբարի վրա։ Նրանց միջև տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ։ Մինչև այն ժամանակ ոչ ոք չէր տեսել թուրքական հեծելազոր. հանդիպելով տեսան նրանց տարօրինակ արտաքինը. նրանք աղեղնավորներ էին, կանանց նման հերարձակ։ Այն ժամանակ հայոց զորքը նետերից պաշտպանվելու փորձ չուներ։ Հայ կտրիճների գունդը՝ թրերը պատյանից հանելով, քաջաբար հարձակվեց այլազգիների վրա, կռվի բռնվեց և շատերին կոտորեց, իսկ այլազգիները նետաձգությամբ հայ զինվորներից շատերին խոցելով վիրավորում էին։ Շապուհը, տեսնելով կատարվածը, ասաց Դավթին. «Ո՛վ թագավոր, նահանջիր թշնամիների առաջ, որովհետև մեր զորքի մեծ մասը նետահար է եղել։ Գնանք և այլազգիների օգտագործած այսպիսի զենքի դեմ նոր զրահ պատրաստենք՝ նետերից անխոցելի»։ Բայց Դավիթը, նայելով իր բարձր դիրքին, փքվեց ամբարտավանությամբ և ուշադրություն չդարձրեց Շապուհի խոսքերին՝ թողնել պատերազմը և վերադառնալ։ Դրա վրա Շապուհը գազազած, հարձակվեց Դավթի վրա և բռունցքով ուժեղ հարված իջեցրեց նրա թիկունքին, ստիպեց վերադառնալ։ Շապուհը քաջ մարդ էր, հզոր պատերազմող, նա Դավթի դաստիարակն էր, դրա համար էլ նրանից չէր վախենում։ Ահա այսպես նա Դավթին զորքով հանդերձ ետ դարձրեց։ Նրանք գնացին Ոստան քաղաքը[96] և Սենեքերիմ թագավորին պատմեցին այլազգիների արտաքինի մասին։ Սենեքերիմը, լսելով դա, շատ ազդվեց. նա ո՛չ կերավ, ո՛չ խմեց, այլ, տրտմությամբ լի մտքերի մեջ խորասուզված, ամբողջ գիշերը անքուն անցկացրեց։ Նա նստեց, քննության ենթարկեց ժամանակագրությունները, աստվածախոս մարգարեների, սուրբ վարդապետների ասույթները և գրքերում գրված գտավ զինվորների և զորականների հանդես գալու ժամանակի մասին, նրա համար պարզ դարձավ, որ ողջ երկիրը կորստյան ու ավերի է ենթակա։ Նա գրքերում գտավ գրված, թե «Այն ժամանակ փախչելու են արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ և երկրի վրա հանգիստ չեն գտնելու, որովհետև դաշտերն ու լեռները արյամբ են ողողվելու»։ Ապա և Եսայի [մարգարեի] ասույթը, թե «Նրանց ձիերի սմբակները ամուր են»[97]։

Այն ժամանակ [Սենեքերիմը] որոշեց իր հայրենի երկիրը տալ հույների Վասիլ արքային ու [փոխարենը] ստանալ Սեբաստիան, և անմիջապես նամակ գրեց կայսեր։ Վասիլ կայսրը տեղեկանալով այդ մասին, գոհ մնաց ու նրան տվեց Սեբաստիան։ Եվ Սենեքերիմը տվեց

բաստիա. և տայր Սեննեքերիմ զաշխարհն Վասպուրականի. թեմաբերդս ՀԲ և գեղս Տն և զվանորայսն ոչ ետ, այլ պահեաց իւր ազօթարարս. ՃԺՆ վանք և ետ զայս ամենայն գրով ի Վասիլն: Եւ առաքեաց թագաւորն Վասիլ առ Սեննեքերիմ առաքել առ նա զԴաւիթ թագաւորական ճոխութեամբ և առաքեաց զորդին իւր, ընդ նմին և որդիս ազատաց և զեպիսկոպոսն Տէր Սիմէհ և բնակիր ջորիս Յ, բարձեալ գանձիւք և պէսպէս կազմութեամբ, և առաքիկ ձիս Ի. և այսպիսի փառաւորութեամբ եհաս Դաւիթ ի Կոստանդնուպոլիս՝ և դղրդեցաւ քաղաքն և ելին ամենեքեան ընդ առաջ նորա և զարդարեցին զփողոցս և զապարանս և գանձս բազումս ցանէին ի վերայ նորա: Եւ յոյժ ուրախացաւ թագաւորն Վասիլ ընդ առնելն Դաւթի և տարաւ զնա ի սուրբն Սոփի և արար իւր որդեգիր և պատուէին զնա որպէս զորդի թագաւորի: Եւ ետ նմա թագաւորն բազում պարգեւս և գարձոյց զնա առ հայրն իւր և ետ նմա զԱնբատաիա բազում գաւառօք. և եւեալ Սեննեքերիմ ամենայն ընտանեօք իւրովք և ամիկօք ելին ի Սեբաստիա և անտերացաւ աշխարհն Հայոց ի թագաւորաց և չիշխանաց:

Ի թուականութեանս Հայոց ՆՀ ելանէր Վասիլն յարեւելս անթիւ զօրօք և խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի և զԿարս: Եւ Յովհաննէս որդին Գագկայ խորհեցաւ տալ վասն թուլութեան սրտին իւրոյ. իսկ Վասիլն գարձաւ յաշխարհն իւր և գրեաց առ Գորգի թագաւորն Վրաց գալ նմա ի Հնազանդութիւն. զոր ոչ ընկալաւ և ոչ յանձն էառ: Յայնժամ գայ Վասիլն պատերազմաւ ի վերայ նորա. և զօրքն Վրաց գնացին ընդդէմ նորա և Ռատն և Զոյատն՝ արք քաջք՝ եղբարք Լիպարտին, ուժգին բախեցին զզօրսն Վասլին՝ մինչեւ սպանաւ Ռատն, զի ձին նորա խրեցաւ ի տեղի մի տիղմ և անդ սպանաւ. և ապա գարձան ի փախուստ զօրքն Վրացեաց. և զօրք Վասլին զկնի կոտորէին. և կացեալ Վասիլն անդ ամիսս Գ. մինչեւ հաւանեցոյց զնոսա և ի Տրապիզոն ձմերեաց: Եւ գբնայր առ թագաւորն Վասիլ Տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց և սուրբ վարդապետն Յովհաննէս Կոզեռն բազում սպասուք. և թագաւորն ընկալաւ զնոսա մեծաւ պատուով. և ի հասանելն մեծի աւուր մկրտութեան Տեառն մերոյ մեծարեաց թագաւորն զՏէր Պետրոսն և զվարդապետն Հայոց և ի վեր եհ կացուցանել քան զառաջնորդսն Յունաց և յառաջ Տէր Պետրոսի հրամայեաց օրհնել զջուրն. զոր իբրեւ արկանէր զմիւռոն սուրբ ձիթոյն ի ջուրն և հարկանէր սուրբ նշանաւն զջուրն, հուր սաստկապէս ցոլացեալ երեւէր ի վերայ ջրոյն և կապեցաւ զետն առ վայր մի և ոչ չարժէր. և տեսեալ թագաւորին և զօրացն զարհուրեցան և խո-

Վասպուրական երկիրը՝ 72 թեմաբերդ և 4400 դյուղ, բայց վանքերը՝ 115 վանք, չավեց, այլ պահեց, որպեսզի իր համար աղոթեն։ Այդ բոլորը նա գրավոր հանձնեց Վասիլին։ Վասիլ կայսրը դիմեց Սենեքերիմին, որպեսզի նա Դավթին թագավորական հանդիսավորությամբ իր մոտ ուղարկի։ [Սենեքերիմը] ուղարկեց իր որդուն, նրա հետ նաև ազատների որդիներին և տեր Եղիշե եպիսկոպոսին, գանձերով և զանազան իրերով բարձված բեռնակիր 300 ջորի և 1000 արաբական ձի։ Ահա այսպիսի հանդիսավորությամբ Դավիթը մուտք գործեց Կոստանդնուպոլիս։ Քաղաքը դղրդաց, բոլորը դուրս եկան նրան ընդառաջ, զարդարեցին փողոցներն ու պալատները, և [Դավթի] վրա բազում դրամ ցրիվ տվեցին։ Վասիլ կայսրը, տեսնելով Դավթին, շատ ուրախացավ, տարավ Սուրբ Սոֆիա [տաճարը] և որդեգրեց նրան. [բոլորը] պատվում էին [Դավթին] որպես կայսերորդի։ Կայսրը, տալով նրան բազում նվերներ, ուղարկեց Հոր մոտ, որին տվեց Սեբաստիան, բազմաթիվ գավառներով հանդերձ։ Սենեքերիմը իր ամբողջ ընտանիքով և ժողովրդով ելավ եկավ Սեբաստիա։ Հայոց երկիրը թագավորներից և իշխաններից դատարկվեց։

Հայոց 470 թվականին [16 մարտ 1021—15 մարտ 1022 թ.] Վասիլն անթիվ-անհամար զորքով գնաց արևելք և հայոց թագավորից պահանջեց Անին ու Կարսը։ Գագիկի որդի Հովհաննեսը իր թուլամորթության պատճառով որոշեց տալ[98]։ Վասիլը, վերադառնալով իր երկիրը, նամակ գրեց վրաց թագավոր Գորգիին[99], առաջարկելով իրեն հպատակություն հայտնել, մի բան, որ [Գորգին] մերժեց։ Դրա վրա Վասիլը պատերազմ հայտարարեց և շարժվեց նրա դեմ. վրաց զորքը, Լիպարիտի[100] քաջ եղբայրներ Ռատն ու Զոյսարը գնացին նրա դեմ և Վասիլի զինվորներին ծանր հարված հասցրին։ Երբ Ռատն սպանվեց (վերջինիս ձին խրվեց տղմոտ մի վայրում և [Ռատն] այնտեղ սպանվեց), վրաց զինվորները դիմեցին փախուստի, իսկ Վասիլի զինվորները կոտորելով հալածում էին նրանց։ Վասիլը այնտեղ մնաց երեք ամիս, մինչև որ հնազանդեցրեց նրանց և ապա գնաց Ձմեռեց Տրապիզոնում։ Վասիլի մոտ գնացին հայոց կաթողիկոս տեր Պետրոսը[101], սուրբ վարդապետ Հովհաննես Կոզեռնը՝ բազում սպասավորներով։ Կայսրը մեծ պատվով ընդունեց նրանց։ Երբ եկավ մեր Տիրոջ մկրտության տոնը, կայսրը պատիվ արեց տեր Պետրոսին ու հայոց վարդապետին, հունաց կղերականներից բարձր դասեց նրանց, և հենց տեր Պետրոսին առաջարկեց առաջինը օրհնել ջուրը։ Երբ Պետրոսը սուրբ մեռոնի ձեթը կաթեցրեց ջրի մեջ և սուրբ խաչի նշանով խփեց ջրին, ջրի վրա սաստկապայլ կրակ երևաց, գետը մի տեղ կանգ առավ և չէր հոսում։ Կայսրը և զինվոր-

նարհեալ թագաւորն՝ արկանէր զօրինեալ ջուրն ի վերայ գլխոյն աջովն Տէր Պետրոսի: Եւ դարձաւ Տէր Պետրոսն մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլն յետ ժամանակաց դայ յԱնտիոք ի ծածուկ Դ ա-րամբք հաւատարմօք և եկեալ ի Սեաւ լեառն ի տեղին, որ կոչի Պա-պագիակ, և ի հօրէ և յառաջնորդէ տեղւոյն առնու զքրիստոսական կը-նիքն և յայնմ հետէ եղեւ որպէս զհայր աշխարհիս Հայոց . . . . :

Ի թուականութեանս Հայոց ՆՀԱ մեռաւ Տէր Սարգիս կաթողիկոսն Հայոց և հաստատեաց յաթոռ իւր հայրապետ զՏէր Պետրոս: Ի սոյն ամի իշխան ոմն յաղթանդամ ի տանէն Յունաց Նիկիփոռ անուն ծովիզ յարեաւ ի վերայ Վասլին և կոչեաց ի միաբանութիւն իւր զթագաւորն Վրաց Դորգի և զորդիսն Դագկայ. գնաց յահէ նորա Դաւիթ առ նա օ-րօքն Հայոց, և ա՛ն մեծ եղեւ ի վերայ Վասլին: Եւ յղեաց Վասիլն առ Դաւիթ աղաչանս, զի հնարեսցէ զկորուստ նորա: Եւ ծովիզն յոյժ սիրէր զԴաւիթ և խոստանայր նստուցանել զնա յաթոռ թագաւորութեան Հա-յոց. բայց Դաւիթ ոչ կամեցաւ լուծանել զդաշինս Վասլին: Եւ յաւուր միում գնայր Դաւիթ ի տուն իւր խռովութեան աղագաւ և յարուցեալ Նիկիփոռն միայն և զրկեաց զնա և աղաչէր դառնալ. իսկ Դաւիթ ակ-նարկեալ արանցն, և նոյնժամայն սպանին զծովիզն, և զօրքն նորա յրտնալ եղեն փախստական. և լուեալ գայն Վասլին՝ ուրախ եղեւ յոյժ և տայր պարգեւս Դաւթի զկեսարիա և զԴամնդաւ և խաւատանէքն հան-դերձ սահմանօքն: Եւ Վասիլն մեծաւ զայրացմամբ գայր ի վերայ Դոր-գէի Վրաց թագաւորին բազում զօրօք. և արարին Ջիօնից բերդին առա-ջի մեծ պատերազմ. և Դորգի փախստական լեալ անկանէր յամուր բեր-դըս և զբէր զանձն իւր ծառայ Վասլին և տայր պատանդ զորդին իւր: Եւ յետ այնորիկ գնայր Վասիլն յաշխարհն Պարսից և բնակէր ի դուռն քաղաքին Հերայ. և էր ժամանակն ամառնային. և յաւուր մբում եկն ձիւն սաստիկ ի վերայ բանակին և ոչ գիտէին զինչ արասցեն. և դարձան փախստական ի մեծ տագնապէն. և ծովացաւ երկիրն ի բազմութենէ ջրոյն. և եկեալ ի տեղի մի ոչ կարէին անցանել ի տղմոյն և գումարեալ ոչ գիտէին թէ զինչ արասցեն: Ապա հրամայեաց թագաւորն կոտորել ի հետեւակէն և կոտորեցին ԺՌՌ այր և լցին ի տեղին յայն և զօրքն անցին ի վերայ և եկեալ ձմերեաց ի Մելտենի:

Ի թուականութեան Հայոց ՆՀԱ յամս կայսերն Յունաց Վասլի եղեւ յերկինս ահաւոր նշան և սոսկալի և բարկութիւն ի վերայ ամենայն ա-

նելը, տեսնելով դա, սարսափեցին։ Կայսրը խոնարհվեց, և տեր Պետրոսն իր աջով նրա գլխին օրհնյալ ջուր թափեց։ Տեր Պետրոսը մեծ պարգևներով վերադարձավ հայոց երկիրը[102], իսկ Վասիլը, որոշ ժամանակ անց, երեք հավատարիմ մարդկանցով թաքուն գնաց Անտիոք, անցավ Սև լեռը, Պաղակձիակ կոչվող տեղը, տեղի գլխավորից և հոգեվոր առաջնորդից ստացավ քրիստոսական մկրտությունը և այնուհետև համարվեց հայոց երկրի հայրը[103]...

Հայոց 471 թվականին [16 մարտ 1022—15 մարտ 1023 թ.] վախճանվեց հայոց կաթողիկոս տեր Սարգիսը, իր աթոռին հայրապետ նշանակելով տեր Պետրոսին։ Այս թվականին հունաց երկրից մի մեծ իշխան, որի անունը Նիկեփոր Ծովիվ էր, ապստամբեց Վասիլի դեմ[104] ու իրեն դաշնակցելու կոչ արեց վրաց թագավոր Դորգիին և Դագիկի որդիներին։ [Նիկեփորի] վախից դրդված, Դավիթը[105] հայոց զորքով միացավ նրան։ Վասիլն ընկավ մեծ սարսափի մեջ. նա թախանձագին դիմեց Դավթին, որպեսզի նա կազմակերպի [Նիկեփորի] սպանությունը։ Ծովիվը շատ էր սիրում Դավթին և խոստանում էր նրան հայոց թագավորության գահին նստեցնել, բայց Դավիթը չուզեց խախտել Վասիլի հետ կնքած դաշինքը։ Մի օր Դավիթը, խռոված, թողեց գնաց իր տունը։ Նիկեփորը մենակ գնաց [Դավթի] մոտ և խնդրեց վերադառնալ։ Դավթի ազդանշանով, վերջինիս մարդիկ իսկույն սպանեցին Ծովիվին, իսկ նրա զորքը ցրվեց և փախուստի դիմեց։ Վասիլը, լսելով այդ մասին, շատ ուրախացավ և Դավթին, որպես պարգև, տվեց Կեսարիան, Նամնդավը[106] և խավատանեքը [իրենց] գավառներով հանդերձ։ Վասիլը սաստիկ զայրացած մեծաթիվ զորքով եկավ վրաց թագավոր Դորգիի վրա։ Ձիոնք բերդի առաջ մեծ ճակատամարտ տվեցին. Դորգին, փախուստի դիմելով, ապաստանեց ամուր բերդում։ Նա նամակ գրեց Վասիլին՝ հպատակություն խոստանալով և իր որդուն պատանդ տվեց։ Դրանից հետո Վասիլը գնաց պարսից երկիրը և բանակեց Հեր քաղաքի դարպասի առջև։ Թեև ամառ ժամանակ էր, բայց մի օր ճամբարի վրա սաստիկ ձյուն տեղաց։ [Զինվորները] մեծ տագնապի մեջ ընկան և, չիմանալով ինչ անել, դիմեցին փախուստի։ Երկիրը ջրի հորդումից հեղեղվեց։ Հասնելով մի տեղ, [զինվորները] տիրմի [առատությունից] չէին կարողանում առաջ շարժվել և անել դրության մեջ էին։ Կայսեր հրամանով 13 հազար հետևակային սպանեցին և [նրանց դիակները] լցրին այդ [տղմոտ] տեղը, որոնց վրայից անցնելով, զորքը եկավ Մելիտենե և ձմեռեց։

Հայոց 471 թվականին հունաց Վասիլ կայսեր [թագավորության] օրոք երկնքում ահավոր և սոսկալի նշան երևաց, և բոլոր արարածների

րարածոց. ի Հոկտեմբեր ամսոյ Գ յերրորդ ժամու աւուրն պատառեցաւ վերին հաստատութիւնն երկնից յարեւելից կուսէ մինչեւ յարեւմուտս՝ ընդ երկուս հերձաւ կապուտ երկինդ և լոյս պայծառ յերկիր թափեցաւ ի հիւսիսային կողմանէ. և մեծաւ շարժմամբ դողաց ամենայն երկիր. և նախ քան զնուագիլ լուսոյն եղեւ դոջիւն և թնդիւն ահաւոր ի վերայ ամենայն արարածոց. խաւարեցաւ արեգակն և աստեղք երեւեցան որպէս ի մէջ դիշերի, և սուղ զգեցան ամենայն երկիր. և դառն արտասուօք ապաղաչէին ամենայն ազինք առ Աստուած: Եւ ապա յետ երեք աւուր ժողովեցան ամենայն իշխանք և ազատքն հրամանաւ թագաւորին Հայոց Յովհաննիսի և եկեալ առաջի սուրբ վարդապետին Յովհաննու Կոզեռանն, որ էր այր աստուածազգեաց և հրեշտակակրօն և լի իսկ առաքելական և մարգարէական գրոց դիտութեամբ: Եւ յորժամ եկին իշխանքն Հայոց հարցանել զնա և իմանալ վասն հրաշալի տեսլեանն և նշանին՝ և տեսին զսուրբ վարդապետն Յովհաննէս անկեալ ի վերայ երեսաց իւրոց տրտմութեամբ և լայր դառնապէս: Եւ ի հարցանելն նոցա, նա դառն ոգով և ազիողորմ հառաչանօք եւ պատասխանի և ասաց. «Ո՛վ որդիք, լուարուք ինձ. վայ և եղուկ է ամենայն մարդկան, զի ահա այսօր հազար ամ է կապանացն սատանայի, զոր կապեաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս խաչին իւրով սրբով, մանաւանդ իւր սուրբ մկրտութեամբն ի Յորդանան գետն. և արդ արձակեցաւ սատանայ ի կապանաց իւրոց ըստ վկայութեան տեսլեանն Յովհաննու աւետարանչին, որպէս ասաց նմա հրեշտակն Աստուծոյ՝ թէ Ի ամ կապեացի սատանայ և դարձեալ արձակեսցի ի կապանաց իւրոց: Եւ ահա այսօր արձակեցաւ սատանայ ի հազար ամէ կապանաց իւրոց, որ Հայոց թուականն և ՆՀԸ ամ է և կալ դառաջինն ՇՇԲ, որ լինի ՌՎ ամ. զերեսուն ամն տուր յառաջ քան զմկրտութիւնն և կալ զհազարն մինչեւ ցայսօր: Եւ արդ վասն այսորիկ եղեւ պատառումն երկնից: Եւ ահա յայսմհետէ ոչ ոք կարասցէ կալ հաստատուն ի հաւատս Քրիստոսի և ի պատուիրանսն Աստուծոյ՝ ո՛չ հայրապետ և ո՛չ վարդապետ, ո՛չ եպիսկոպոս և ո՛չ քահանայ, ո՛չ արեղայ և ո՛չ կրօնաւոր, ո՛չ իշխան և ո՛չ ժողովուրդ. իշխանք յարեւնան ի գոգս և յաւազակս և յափշտակողս, դատաւորք ի կաշառս և յանիրաւ դատաստանս. կրօնաւորք թոզուն զանապատս և զմենաստանս և յաշխարհի սպազմունս. դեղերին և շրջին ընդ փողոցս և ի մէջ կանանց, սաեն զաղօթս և թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն զգեզարս աշխարհի և զհետ երթան գովեստից մարդկան, որոճալով որոճեն զդիւական երգս և փքացեալ ի վերայ ընկերացն ասելով թէ՝ Ես կը-

գլխին փորձանք եկավ։ Հոկտեմբեր ամսի 3-ին, օրվա երկրորդ ժամին պատռվեց երկնակամարը՝ արևելյան կողմից մինչև արևմուտք. կապույտ երկինքը երկուսի բաժանվեց, և հյուսիսային կողմից երկրի վրա պայծառ լույս թափվեց։ Ուժեղ երկրաշարժից ողջ երկիրը սասանվեց։ Նախքան լույսի նվազումը բոլոր արարածների վրա ահավոր գոչյուն և թնդյուն եղավ։ Արևը խավարեց, և երևացին աստղերը՝ ինչպես կեսգիշերին։ Ամբողջ երկիրը սուգ հագավ, և բոլոր մարդիկ դառն արտասուքով աստված էին կանչում։ Երեք օր հետո բոլոր իշխաններն ու ազատները, հայոց թագավոր Հովհաննեսի հրամանով, հավաքվեցին և եկան սուրբ վարդապետ Հովհաննես Կողեռնի մոտ, որ աստվածապաշտ և հրեշտակակրոն, առաքելական և մարգարեական գրքերի քաջագիտակ մարդ էր։ Երբ հայոց իշխանները եկան հարցուփորձ անելու նրան և իմանալու հրաշալի երևույթի նշանակության մասին, տեսան, որ սուրբ Հովհաննես վարդապետը վշտահար, երեսի վրա ընկած, դառնագին լալիս էր։ Նրանց հարցին նա դառն հոգոցով ու աղիողորմ հառաչանքով պատասխանեց և ասաց. «Ո՛վ որդիներ, լսե՛ք ինձ։ Վա՛յ և ափսո՛ս բովանդակ մարդկության, քանզի այսօր լրացավ հազար տարին, ինչ մեր տեր Հիսուս Քրիստոսը իր սուրբ խաչով, մանավանդ Հորդանան գետում իր սուրբ մկրտությամբ կապեց սատանային։ Այժմ սատանան արձակվեց իր կապանքներից՝ համաձայն Հովհաննես ավետարանչի տեսիլքի վկայության, ինչպես նրան աստծո հրեշտակն ասաց, թե հազար տարի սատանան կապված պիտի մնա և իր կապանքներից նորից պիտի արձակվի[107]։ Այսօր ահա սատանան արձակվեց իր հազարամյա կապանքներից. հայոց տոմարի 478 թվականն է, դրա վրա գումարիր 552, լինում է 1030 տարի, դրանից հանիր [Քրիստոսի] նախքան մկրտվելու երեսուն տարին, կստացվի, որ մինչև օրս անցել է հազար տարի։ Այդ պատճառով է ահա երկինքը պատռվել։ Այսուհետև ոչ ոք չպիտի կարողանա հաստատուն մնալ Քրիստոսի դավանության և աստծո պատվիրաններին, ո՛չ հայրապետ, ո՛չ վարդապետ, ո՛չ եպիսկոպոս, ո՛չ քահանա, ո՛չ աբեղա, ո՛չ վանական, ո՛չ իշխան և ո՛չ ժողովուրդ։ Իշխանները միանալու են գողերին, ավազակներին և թալանողներին, դատավորները դառնալու են կաշառակեր և տեսնելու են անիրավ դատաստան, վանականները թողնելու են անապատներն ու մենաստանները և զբաղվելու աշխարհիկ գործերով, շրջելով փողոցներով և լինելով կանանց շրջապատում, նրանք պիտի ատեն աղոթքը, պիտի լքեն իրենց վանական կոչումը, պիտի սիրեն աշխարհիկ կյանքը, պիտի ցանկան գովեստը մարդկանց, որոճալով պիտի որոճան դիվական երգերը և, իրենց ընկերների դեմ ամբարտավանանալով, պիտի ասեն, թե ես կցուրդ գի-

ցորդ և մեղեդի գիտեմ և դու ոչ. և այսու պատճառաւ պղտորեն զկարդ ժամատեղացն. լինին և բազումք ուսումնատեացք, ծոյլք և դատարկաբանք, արտնջողք և ամբաստանողք՝ և ուր ուրեք երեւի ճշմարտութիւն ի մարդիկ, զի լինին կամապաշտք, անձնասէրք և ընկերատեացք, շողմոզք, քսուք, ստախօսք, հպարտք, փառասէրք, անձնահաճք, ինքնահաւանք, որկորամոլք, գինեսէրք և ցանկասէրք: Որդեա՛կք իմ, ահա յայսմհետէ խափանեսցի փառաբանութիւնն Աստուծոյ ի մարդկանէ և ոչ երեւի ճշմարտութիւն առ մարդիկք: Այլ և իշխանք սիրէծ և մեծախտիւ յանդգնեալ և մոլորեալ. Թողուն զհոգս շինութեան տանց և զյաջողուածըս գործոց և միշտ և հանապազ ի գինարբուսն զեզերին վասն սիրոյ և ցանկութեան չար և սիրէծ ախտին. հայրապետք և եպիսկոպոսունք և քահանայք և կրօնաւորք արծաթասէրք առաւել քան աստուածասէրք: Որդեա՛կք իմ, ահա յամմհետէ սատանայի կամքն առաւել կատարեսցի յորդիս մարդկան քան զԱստուծոյն և ի ձեռն անարժան պատարագողացն, որ յայսմ հետէ լինելոց է, բարկանայ Աստուած ի վերայ արարածոցս, ևս առաւել ի վերայ մատուցողին զնա, զի յանարժանիցն պատարագիլոց է Քրիստոս և յանարժանսն բաշխի. և առաւել վիրաւորիլոց է Տէր մեր Յիսուս Քրիստոս ի յանարժան քահանայիցն քան զչարչարիլն և զխաչիլն ի Հրէից, զի արձակեցաւ սատանայ ի հազար ամէ կապանաց իւրոց, զոր կապեաց Քրիստոս: Եւ զայս, որդեա՛կք իմ, պատուիրեմ ձեզ հառաչանօք սրտիւ լալով և ողբալով, վասն զի քակտին բազումք ի հաւատոց և պարծանօք ուրանան զՔրիստոս, և վասն այսորիկ խաւար կալաւ զամենայն արարածս»: Զայս այսպէս ասաց սուրբ վարդապետն Հայոց վասն կատարածի բարկութեան նշանին և այլ բազում ինչ ճառեաց, որ կատարելոց էր ի վերայ հաւատացելոցս, զոր ահա ամենայն ինչ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելից կատաղի և շուն ազգին թուրքաց, անօրէն և սիրէծ որդւոցն Քամայ:

Յայսմ ամի ի թուականութեանս և ահաւոր նշանիս մեռանէր սուրբ թագաւորն Հռոմոց Վասիլ, կացեալ յաթոռ թագաւորութեան Հռոմոց ամս չիսուն և ութ.և կոչեցեալ զեղբայր իւր զԿոստանդին, և մինչդեռ կենդանի էր դնէր զթագն ի գլուխ եղբօրն իւրում և նստուցանէր զնա յաթոռ թագաւորութեանն իւրոյ և երկրպագանէր ի վերայ երեսաց իւրոց. և զամենայն թագաւորութիւնն իւր նմա յանձն արարեալ և անդարձ արարեալ նմա վասն աշխարհին Հայոց, զի հայրաբար սիրով խնամեսցէ զազգն մեր: Դարձեալ զորդիսն Սենեքարիմայ նմա յանձն արար՝ զԴաւիթ և զԱտոմ և զԱպուսահլ և զԿոստանդին՝ և զամենայն

տեմ և մեղեդի, իսկ դու՝ ոչ, և այդպիսով պիտի աղավաղեն ժամակարգությունը: Պիտի հանդես գան ուսման բազմաթիվ ատեցողներ, ծույլ և դատարկախոսներ, վատաբաններ և ամբաստանողներ, և որտե՞ղ պիտի գտնես մարդկանց մեջ ճշմարտություն, երբ նրանք պնդագլուխ և եսասեր, ընկերատյաց, բամբասող, բանսարկու, ստախոս, մեծամիտ, փառասեր, ինքնահավան, գոռող, շատակեր, հարբեցող և հեշտասեր են լինելու: Իմ որդիներ, այսուհետև մարդիկ չեն փառաբանելու աստծուն և մարդկանց մոտ չի լինելու ճշմարտություն: Իշխանները ևս պիղծ և մեծ ախտով [վարակված] պիտի ամբարտավանան և սխալ ճանապարհով պիտի ընթանան: Մի կողմ թողած տունը շեն պահելու, գործը հաջողությամբ [ավարտելու] հոգսերը, շարունակ ու անվերջ տարվելու են հարբեցողությամբ, որովհետև պիտի սիրեն և ցանկան [այդ] վատ ու պիղծ ախտը: Հայրապետներն ու եպիսկոպոսները, քահանաներն ու վանականները պիտի լինեն ավելի դրամասեր, քան՝ աստվածասեր: Իմ որդիներ, ահա, այսուհետև անարժան պատարագողների ձեռքով, որ սրանից հետո են գալու, մարդիկ ավելի սատանայի կամքն են կատարելու, քան աստծո: Պիտի զայրանա աստված արարածներիս վրա, առավել ևս [պատարագ] մատուցողների վրա, քանզի Քրիստոսին պատարագելու են անարժանները, և նրա [մարմինը] հաղորդվելու է անարժաններին: Մեր տեր Հիսուս Քրիստոսին ավելի խոր վերք են հասցնելու անարժան քահանաները, քան հասցրել են նրան չարչարող և խաչող հրեաները, որովհետև արձակվեց սատանան իր հազարամյա կապանքներից, որոնցով Քրիստոսը կապել էր նրան: Իմ որդիներ, ես լալագին ու ողբագին, հառաչող սրտով խրատում եմ ձեզ, որովհետև շատերը հեռանում են հավատքից և պարծենալով ուրանում Քրիստոսին: Այդ է պատճառը, որ խավարը պատեց բոլոր արարածներին»:

Բարկության նշանին ահա այսպիսի բացատրություն տվեց հայոց սուրբ վարդապետը: Նա այլ շատ բան էլ ասաց, որ գալու է հավատացյալների գլխին, ինչ ահա մեկ առ մեկ իրականացավ կատարի և շնաբարո թուրքաց ազգի՝ քամի[108] անօրեն և պիղծ որդիների ձեռքով:

Ահավոր նշանի [երևման] այդ նույն տարին վախճանվեց Հռոմոց սուրբ կայսր Վասիլը, Հռոմոց թագավորության գահին նստելով հիսունութ տարի[109]: Քանի դեռ կենդանի էր, նա կանչեց իր եղբայր Կոստանդնին, թագը դրեց գլխին, նստեցրեց իր թագավորական գահին, երկրպագեց և իր բովանդակ թագավորությունը հանձնեց նրան: Նա կտակ թողեց հայոց երկրի վերաբերյալ՝ հոր նման հոգալ այդ ժողովրդի մասին. նրան հանձնեց Սենեքերիմի որդիներին՝ Դավթին, Ատոմին, Ապուսահլին և Կոստանդնին, ինչպես և հայոց երկրի բոլոր իշ-

իշխանս տանն Հայոց և պատուիրեաց բարի մտօք կալ հանապազ ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի: Վասիլն զամս չիսուն և ութ թագաւորեաց ի վերայ Հռոմոյ, սրբութեամբ և կուսութեամբ վարեաց զայս կեանս, և բարի խոստովանութեամբ ննջեաց ի Քրիստոս Յիսուս, և թագնեցին զնա ընդ սուրբ թագաւորսն բարի յիշատակաւ:

Յայսմ ամի մեռաւ և Սինեքարիմ թագաւորն Հայոց, և տաքան զնա ի գերեզմանատունն Հարց իւրոց, ուր առաջին թագաւորքն Հայոց թաղեալ կան ի Վարագայ, վանքն սրբոյ Նշանին և անդ թաղեցին զՍենեքարիմ ընդ Հարսն իւր. և հաստատեալ լինէր թագաւորական իշխանութիւնն տանն Հայոց յաւագ որդին իւր ի Դաւիթ, վասն զի էր այր փառաւոր և պատուական և ահարկու ի վերայ երկրի:

Յայսմ ամի մեռաւ և Գուրգի թագաւորն Վրաց, և նստուցին յաթոռ նորա զորդի նորա զԲագրատ, թագաւորեալ ի վերայ ամենայն աշխարհին Վրաց:

Արդ ի յայսմ ամի թագաւորեաց Կոստանդին եղբայր Վասլին ի վերայ ամենայն աշխարհին Հռոմոյ: Եւ եղեւ Կոստանդ այր բարի և աստուածասէր, ողորմած այրեաց և գերեաց, անչիշաչար ի վերայ ամենայն չանցաւորաց, վասն զի սա արձակեաց զամենայն բանտարկեալսն ի կապանաց և զկորստական տունն, զոր արարեալ էր Վասլն, հրամայեաց այրել հրով, զոր Վասլ լի իսկ արարեալ էր իշխանօքն Յունաց, վասն ահի թագաւորութեանն զաղտ ի ծածուկ խեղդամահ արարեալ զփառաւորսն Յունաց. և կախեալ կային զդէմսօքն ընդ փողինն ի ճանկս երկաթիս. զոր տեսեալ Կոստանդին՝ լայր զնոսա և հրամայեաց զնոսա թաղել և զտունն հրով ասաց այրել. և մեղադիր լինէր եղբօրն իւրոյ ասել «Երբ մահն առաջի կայ, այս է՞ր է չարաչար մահս վասն մարմնաւոր և անցաւոր կենաց»: Եւ ինքն Կոստանդին խաղաղութեամբ կացեալ յաթոռ թագաւորութեան Հռոմոյ՝ քաղցրութեամբ հովուեաց զամենայն հաւատացեալս Աստուծոյ և կացեալ յաթոռ թագաւորութեանն զամս չորս, և մեռանէր բարի խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս և բարի յիշատակաւ զնաց առ Հարս իւր. և սուգ մեծ լինէր աշխարհին՝ զրկեալ յայնպիսի թագաւորէն: Եւ մինչդեռ կենդանի էր Կոստանդին, սա զդուստր իւր զկուրապոյնի կին եառ Ռոմանոսի մեծի իշխանին, վասն զի որդի ոչ գոյր նոցա: Եւ Ռոմանոս նստեալ յաթոռ թագաւորութեանն Հռոմոյ, և ամենայն երկիրն նկին նմա ի հնազանդութիւն:

Իսկ ի թուականութեանս Հայոց յամի ՆՀԹ զօրաժողով արար թագաւորն Հռոմոյ Ռոմանոս զամենայն զօրսն Յունաց աշխարհին և խաղայր հասանէր բազմութեամբ ի վերայ աշխարհին Տաճկաց և եկեալ

խաններին, պատվիրեց միշտ արդարամիտ լինել քրիստոնյաների հանդեպ։ Վասիլը Հռոմոց վրա թագավորեց հիսունութ տարի, սուրբ և անբիծ երկրային կյանք վարեց, բարի խոստովանությամբ ննջեց ի Հիսուս Քրիստոս և թաղվեց սուրբ թագավորների շարքում՝ բարի հիշատակ թողնելով։

Նույն տարին վախճանվեց և հայոց Սենեքերիմ թագավորը. նրան տարան իր հայրերի գերեզմանատունը՝ Վարագ, Սուրբ Նշանի վանքը, որտեղ թաղված են հայոց առաջին թագավորները և թաղեցին իր հայրերի մոտ։ Հայոց երկրի թագավորական իշխանությունը նա տվեց իր ավագ որդի Դավթին, քանզի նա փառավոր ու պատվական և պատռակելի մի մարդ էր։

Այդ տարին վախճանվեց նաև վրաց թագավոր Գորգին[110] և իր գահին նստեցրին որդուն՝ Բագրատին, թագավորելու վրաց համայն երկրի վրա։

Այդ տարին Հռոմոց բովանդակ երկրի վրա թագավորեց Վասիլի եղբայր Կոստանդինը[111], որ բարի և աստվածասեր մարդ էր, այրիների և գերիների հանդեպ ողորմած, բոլոր զանցադործների նկատմամբ անոխակալ։ Նա բոլոր բանտարկյալներին և կալանավորներին ազատ արձակեց, իսկ Կորստյան Տունը, որ Վասիլն էր կառուցել, հրամայեց կրակի տալ։ [Այս տունը] Վասիլը հույն իշխանավորներով էր լցրել։ Նա հունաց երևելի մարդկանց թաքուն [այնտեղ] խեղդամահ էր արել, վախենալով, որ նրանք իրենից [կխլեն] թագավորությունը։ Նրանք երկաթե ճանկերից իրենց ղգեստներով հանդերձ կախված էին պարանոցից։ Կոստանդինը, տեսնելով այդ, ողբում էր նրանց. նա հրամայեց թաղել նրանց, իսկ տունը՝ այրել։ Նա պարսավում էր եղբորը, ասելով. «Քանի մահը գոյություն ունի, էլ ի՞նչ կարիք կա տանջալից մահվան [ենթարկել] մարդկանց՝ մարմնավոր և անցողիկ կյանքի համար»։ Կոստանդինը խաղաղությամբ Հռոմոց թագավորության գահին մնալով չորս տարի և մեղմ կառավարելով աստծո հավատացյալներին, վախճանվեց բարի խոստովանությամբ ի Հիսուս Քրիստոս, և բարի հիշատակ թողնելով, գնաց իր հայրերի մոտ։ Երկրում մեծ սուգ եղավ՝ այսպիսի կայսրից զրկվելու առթիվ։ Կոստանդինը դեռ իր կենդանության ժամանակ իր դուստր կիրա Զոեին[112] կնության տվեց մեծ իշխան Ռոմանոսին (ինքը որդի չուներ)։ Ռոմանոսը Հռոմոց թագավորության գահին նստեց և ամբողջ երկիրը հպատակություն հայտնեց նրան։

Հայոց 479 թվականին [14 մարտ 1030—13 մարտ 1031 թ.] Հռոմոց կայսր Ռոմանոսը[113] հավաքեց հունաց երկրի բոլոր զորքերը և բազմությամբ շարժվեց տաճկաց երկրի վրա. նա եկավ և բանակեց

բանակեալ ի վերայ ամուր բերդին, որ կոչի Սպազ, մերձ ի Հալպ քաղաք. և ժողովեցան զօրքն Տաճկաց անթիւ բազմութեամբ և եկին ի վերայ թագաւորին Ռոմանոսի: Եւ թագաւորն զարհուրեալ լինէր և ոչ համարձակէր ելանել ի պատերազմ ընդ զօրսն Տաճկաց, վասն որոյ և զանպիտանալ երկեաւ, զի թուլամորթ էր և տկար և յոյժ չարաբարոյ և կարի հայհոյիչ ուղղափառ հաւատոյ. և յաղագս այսորիկ զօրքն ոչ էին ընդ նմա միաբան և խորհէին զի ի ժամ պատերազմին թողցեն զնա ի մէջ զօրացն Տաճկաց և ինքեանքն զերիս դարձուցանիցեն ի պատերազմէն, զի սատակեսցի անօրէն թագաւորն: Յայնժամ մի ոմն իշխան ի զօրաց իւրոց, որ կոչէր Սպուքապայն, որ յառաջն վրանապահ էր լեալ Դաւթի կիւրապաղատին Վրաց, սորա ազդ արարեալ թագաւորին զննդութիւն զօրացն. և զայս լուեալ թագաւորն և երկեաւ յոյժ և յաւուցեալ լինէր փախստական ի դիշերի հանդերձ մեծամեծօք իւրովք: Եւ լուեալ զայս զօրքն Տաճկաց յարձակեցան ղհետ զօրացն Հոռոմոց և արարին սաստիկ կոտորածս իբրեւ քան հազարաց. և ցրուեցան զօրքն Հոռոմոց մի առ մի ընդ հրեսս դաշտի: Եւ զկնի չորեքտասան աւուր շինական ոմն ի քաղաքէն Կուրիսոյ գտանէր զթագաւորն Ռոմանոս անկեալ ի մէջ ծառոցն և կայր ընդարմացեալ իբրեւ զմեռեալ ի ցրտոյն. և բողնալ զգործս իւր տարաւ զնա ի տուն իւր և դարմանեալ զնա էած ի կենդանութիւն և ոչ գիտէր թէ ով ոք իցէ. և յետ աւուրց եհան արձակեաց զնա ղհետ արանց: Եւ հասեալ ի Մարաշ քաղաք, ժողովեցան առ նա մնացեալ զօրքն և տարան զնա ի Կոստանդնուպոլիս: Իսկ զկնի աւուրց ինչ անցելոյ կոչեաց Ռոմանոս զայրն զայն և արար զնա տէր ամենայն գաւառացն Կուրիսոյ, մեծաւ պարգեւօք յուղարկեաց զնա ի տուն իւր մեծաւ գոհութեամբ:

Դարձեալ ի վերանալ Հայոց թուականութեանս ամին ՆԶ մեռանէր ամիրայն Ուրհայոյ քաղաքին, որում անուն ասէին Շէպլ: Յայնմ ժամանակին նստէր յՈւրհայ երկու ամիրայ, Շէպլն և Ուտայրն. և կայր ի քաղաքն Ուրհայոյ երեք կլայ, երկու կլայն և երկու բաժին քաղաքին՝ Շէպլայինն էր. և մէկ կլայն և մէկ բաժին քաղաքին՝ Ուտայրինն էր: Եւ երկոքեանն ունէին խորհուրդ զմիմեանս կորուսանել: Եւ յաւուր միում Ուտայրն զՇէպլն ի ճաշ հրաւիրեաց. և հանեալ զնա արտաքոյ քաղաքին, որ կոչի Արճիճի վանք, ուր քարէ սիւն կայ հանդէպ կլային, և դրեալ էին երկոքեանն իւրաքանչիւր զօրս ի քմին գաղտ ի միմեանց: Եւ յորժամ Շէպլն ազդ արար զօրաց իւրոց սպանանել զՈւտայրն, հասին վաղվաղակի զօրքն Ուտայրայ և սպանին զՇէպլն: Եւ արար Ուտայր ժողով ի վերայ աւազ կլային Շէպլայ և կամեցաւ պատերազմաւ առնուլ զնա: Եւ էր Սալման ոմն բերդապահ վերին կլայն. և նեղեաց զՍալմանն

Հալեպ քաղաքին մոտիկ գտնվող Ազազ կոչված ամուր բերդի մոտ։ Տաճիկների անհամար զորքը հավաքվեց և հարձակվեց Ռոմանոս կայսեր վրա։ Սարսափահար կայսրը չհամարձակվեց տաճիկների զորքի դեմ մարտի դուրս գալ. նա թուլամորթ էր և անզոր, բայց հույժ չարաբարո և ուղղափառ դավանանքն անչափ անարգող։ Այդ պատճառով զորքն իր հետ համախոհ չէր և ծրագրում էր մարտի պահին տաճիկների զորքի մեջ լքել նրան, չմասնակցել պատերազմին, որպեսզի անօրեն կայսրը սատակի։ Այն ժամանակ իր զինվորականներից մի իշխան, որ Ապուքապ էր կոչվում (նա անցյալում վրաց Դավիթ կուրապաղատի վրա նապահն էր եղել), կայսեր տեղյակ պահեց զորքերի դավադրության մասին։ Կայսրը, լսելով դա, սարսափահար եղավ և գիշերով իր մեծամեծներով փախուստի դիմեց։ Տաճկաց զորքն իմանալով այդ մասին, հալածեց հոռոմների զորքը և մեծ ջարդ տվեց, կոտորեց շուրջ քսան հազար հոգի։ Հոռոմոց զինվորները երկրով մեկ սիրուցան եղան (ինքը՝ կայսրը ևս անջատվեց իր զինվորներից, և վերջիններս չմացան նրա հետ ինչ կատարվեց)։ Տասնչորս օր անց Կուրիս քաղաքից մի գյուղացի դտավ ծառերի միջև ընկած և ցրտից մեռելի պես ընդարմացած Ռոմանոս կայսեր։ Դործը թողնելով, նրան իր տունը տարավ և դարմանելով կենդանացրեց, անգիտանալով մարդու իսկությունը։ Օրեր հետո [գյուղացին] նրան մարդկանց հետ ճամփու դրեց։ Երբ Ռոմանոսը հասավ Մարաշ քաղաքը, նրա շուրջը հավաքվեցին մնացած զինվորները և նրան Կոստանդնուպոլիս տարան։ Մի քանի օր անց Ռոմանոսը կանչեց այդ մարդուն, նշանակեց Կուրիսի[114] բոլոր գավառների տերը և մեծամեծ ընծաներով ճամփեց իր տունը, խորապես շնորհակալ լինելով[115]։

Հայոց 480 թվականի [14 մարտ 1031—12 մարտ 1032 թ.] սկզբին վախճանվեց Ուռհա քաղաքի ամիրան, որի անունը Շեպլ էր։ Այն ժամանակ Ուռհայում երկու ամիրա էր նստում՝ Շեպլն ու Ութայրը։ Ուռհա քաղաքն ուներ երեք բերդ, ընդ որում երկու բերդը և քաղաքի երկու երրորդ մասը պատկանում էին Շեպլին, իսկ մեկ բերդը և քաղաքի մեկ երրորդ մասը՝ Ութայրին։ Երկուսն էլ մտադրել էին մեկը մյուսին սպանել։ Մի օր Ութայրը ճաշի է հրավիրում Շեպլին, նրան քաղաքից դուրս հանում, Արճճի վանք կոչված տեղը, այնտեղ, որտեղ բերդի ջիմաղ քարե սյուն կա։ Երկուսն էլ մեկը մյուսից ծածուկ դարանակալելու էին դրել իրենց զինվորներին։ Երբ Շեպլը իր զինվորներին Ութայրին սպանելու ազդանշանը տվեց, փութանակի վրա հասան Ութայրի զինվորները և սպանեցին Շեպլին։ Ութայրը զորք հավաքեց Շեպլի գլխավոր բերդի դեմ, կամենալով գրոհով վերցնել այն։ Վերին բերդի բերդապահը Սալման անունով մեկն էր։ Ութայրը համառ պատերազմով ջրժ-

Ուտայր սաստիկ պատերազմաւ. և անճարեալ Սալմանն և առաքեաց առ Նսրտօլ, որ էր մեծ ամիրայն Տաճկաց, որ նստէր ի Մուփարղին, և տայր զկլայն Ուրհայոյ ի նա. և Նսրտօլ առաքեաց ի կլայն Ուրհայոյ զՊայէլ ռայիսն հազար ձիաւորով և տարաւ զՍալման առ ինքն կնաւն և որդւովքն, և արար իւր մեծ պարգեւք։ Իսկ Ուտայր այլ ինչ ոչ կարաց առնել, այլ նենգութեամբ միաբանեցաւ ընդ Պայէլ ռայիսն և գալտ խորհէր սպանանել զնա. զոր իմացեալ Պայէլն և, մինչ էին ի գինարբուսն արտաքոյ քաղաքին, սպանանէր զամիրայն Ուտայր և տիրեաց ամենայն քաղաքին Ուրհայոյ։ Յայնժամ կինն Ուտայրայ յորժամ տեսաւ՝ թէ սպանաւ Ուտայր, քաջապէս յարեաւ ի վերայ Պայէլին և կապեաց սեանշահակ և մտաւ ճիչկան յամենայն ազգն Արապկաց և ասէր՝ թէ «Բուրք ազգն եկին առին զհայրենի քաղաքն Արապկայ, և սպանին զայրն իմ՝ զամիրայն Ուտայր»։ Եւ այսու արար ժողովս բազում, և յարուցեալ գայր ի վերայ Պայէլին. զոր իմացեալ Նսրտօլ՝ գայ բաղում զօրօք ընդդէմ Արապկաց. և գնաց կինն Ուտայրայ ընդդէմ Նսրտօլայ և սաստիկ պատերազմաւ պարձուցանէր զնա ի փախուստ, և ինքն գայր իջանէր ի վերայ Պայէլ ռայիսին և արար ի վերայ կլային ահագին պատերազմ։ Եւ անճարեալ Պայէլն, եւս իրացն ոչ գտանէր, յուղարկեալ առ Նսրտօլ և ծանուցանէր զվտանգն իւր և ասէր, թէ «ի նեղութիւն կամ ես և ամենայն Քրիստոնեայ»։ Ապա անճարեալ Նսրտօլ առաքեաց զՍալման ի կլայն Ուրհայոյ և տարաւ զՊայէլն ի քաղաքն իւր ի Մուփարղին. և կինն Ուտայրի ոչ դադարէր զամենայն աւուրս պատերազմել ընդ Սալման։ Յայնժամ ձանձրացեալ ի նմանէ Սալմանն և առաքեաց ի Սամուսաթ առ Մանիակ իշխանն Հոռոմոց, որ անուանեալ կոչէին Դէորգ. գրեաց առ նա Սալման և ասէր. «Եթէ առցես ի Հոռոմոց թագաւորէն ինձ իշխանութիւն և զաւառս, ես տայ զՈւրհա ի ձեռս քո»։ Զոր լուեալ Մանիկայ յոյժ ուրախ լինէր և խոստացաւ նմա մեծաւ երդմամբ, զի ի թագաւորէն Հոռոմոց կատարեսցէ իւր զամենայն, զոր ինչ խնդրեաց և տալ նմա հայրենիս և իշխանութիւնս և որդւոց իւրոց։ Եւ յայնժամ կոչեաց Սալման զՄանիակ և երեք զկլայն Ուրհայոյ ի նա։ Եւ գայ Մանիակն չորս հարիւր արամբք և ի գիշերի գաղտ գայր ի դուռն կլային. և աղդ արարին Սալմանին զգալն Մանիկայ. և Սալման առեալ ի ձեռս իւր զբանալիս կլային և ելանէր առ Մանիակ՝ երկիրպագանէր նմա և տայր զկլայն ի նա, և ինքն ի նոյն գիշերի առեալ զկինն և զորդիսն իւր անցանէր ի Սամուսաթ։ Եւ իբրեւ լուան զգալն Մանիակայ ազգն Տաճկաց՝ բաղում և ահագին պատերազմ յարուցին ի վերայ Մանիակայ և ժողովեցան ի վերայ Ուրհայոյ անթիւ ժողովս, բախեցին ազգն Տաճկաց և ելան ի քաղաքէն։ Իսկ Ասորիքն ամրացան ի մեծ եկե-

վար կացուցչյան մեջ դրեց Սալմանին։ Սալմանը ճարահատյալ մարդ ուղարկեց Մուփարղինում նստող տաճկաց մեծ ամիրա Նսրտոլի մոտ և Ուռհայի բերդը հանձնեց նրան[116]։ Նսրտոլը հազար ձիավորով Ուռհայի բերդն ուղարկեց Պայել ռայիսին, իսկ Սալմանին՝ կնոջ և որդիների հետ բերել տվեց իր մոտ, նրան մեծ պարգևներ տալով։ Ուտայրն այլևս ոչինչ չկարողացավ անել և նենգաբար համաձայնության եկավ Պայել ռայիսի հետ, որին որոշել էր ծածուկ սպանել։ Պայելն իմացավ այդ մասին, և երբ դեռ քաղաքից դուրս գինարբուքով էին տարված, նա սպանեց Ուտայր ամիրային և տիրեց ամբողջ Ուռհա քաղաքին։ Ուտայրի կինը, տեսնելով ամուսնու սպանությունը, աբիաբար դուրս եկավ Պայելի դեմ. սգավորի նշան կապած, ճչալով մտավ համայն արաբ ժողովրդի մեջ և ասաց. «Թուրքերն[117] եկան ու գրավեցին արաբների հայրենի քաղաքը և սպանեցին իմ ամուսնուն՝ Ուտայր ամիրային»։ Նա հավաքեց բազում [զինվորներ] և շարժվեց Պայելի վրա։ Նսրտոլը, իմանալով այդ մասին, մեծաթիվ զորքով եկավ արաբների դեմ։ Ուտայրի կինը հարձակվեց Նսրտոլի վրա և, կատաղի մարտ տալով, նրան փախուստի մատնեց, ապա խուժեց ռայիս Պայելի վրա և սոսկալի պատերազմ մղեց բերդի դեմ։ Չգտնելով վճռակից դուրս գալու որևէ ելք, Պայելը ճարահատյալ դիմեց Նսրտոլին, տեղեկացրեց նրան իր վտանգված դրությունը և ասաց. «Ես և համայն Քրդիստանը դըժվարին կացուցչյան մեջ ենք»։ Նսրտոլը ճարահատյալ Սալմանին Ուռհայի բերդն ուղարկեց, իսկ Պայելին բերեց իր Մուփարղին քաղաքը։ Ուտայրի կինը անդադար կռիվ էր մղում Սալմանի դեմ։ Սալմանը նրանից ձանձրացած, նամակ գրեց Սամուսաթ՝ հոռոմոց իշխան Մանիակին, որի անունը Գևորգ էր, և ասաց. «Եթե դու հոռոմոց կայսրից ապահովես ինձ համար պաշտոն և գավառներ, ես Ուռհան քեզ կհանձնեմ»։ Մանիակը, լսելով դա, շատ ուրախացավ և մեծ երդումով նրան վստահացրեց, որ հոռոմոց կայսրը կկատարի նրա բոլոր ցանկությունները, կտա նրան և նրա որդիներին կալվածքներ և պաշտոններ։ Դրա վրա Սալմանը կանչեց Մանիակին և նրան տվեց Ուռհայի բերդը։ Մանիակը, գիշերով, գաղտագողի, չորս հարյուր հոգով եկավ բերդի դուռը. Սալմանին իմացրին Մանիակի գալուստը։ Սալմանը, առնելով բերդի բանալիները, գնաց Մանիակի մոտ, երկրպագեց և նրան հանձնեց բերդը, իսկ ինքը նույն գիշերն իսկ, վերցնելով իր կնոջն ու որդիներին, գնաց Սամուսաթ։ Տաճկաց ժողովուրդը, լսելով Մանիակի գալուստը, վերջինիս դեմ երկարատև ու ծարսափելի պատերազմ մղեց, Ուռհայի դեմ հավաքելով անթիվ զորք։ Ասորիներն ապաստանեցին մեծ եկեղեցում՝

ղեցին ի սուրբն Սոփիք. և զի վասն կանանցն իւրեանց և բազում ոսկւոյն և արծաթոյն ոչ համարձակեցան մտանել ի կլայն, զի մի՛ յափշտակեսցին ի նոցանէն, զի յետ սակաւ մի աւուրց դրով այրեցան բազումք ի նոցանէ և ամենայն առաջուածք իւրեանց. և անցեալքն փախստական անկան ի կլայն առ Մանիակն և ապրեցան: Վասն զի պատերազմ մեծ յարուցին Տաճկունքն ի վերայ նկեղեցւոյն սրբոյն Սոփիայ, վասն զի ի հիւսիսական կողմանէն մեքենայ եդին և ուժգին հարկանէին զնկեղեցին, մինչ ի հիմանց խախտեալ եղեւ. և ապա հուր ձգեալ ի ներս, այրեցին զբազումս. և անթիւ առաջուածք և ամենայն բազմութեան քաղաքին այրեալ լինէր: Եւ գնկնի այսորիկ գլուխ եցաւ ամենայն տունն Տաճկաց և գային ի վերայ Մանիկայ. և Մանիակ չորս հարիւր արամբք կայր ի հանդէս մեծ նահատակութեանն ի կլայն Ուրհայոյ. և մեծամեծք ամիրայքն յիւրաքանչիւր քաղաքացն հաւաքեցին ի քաղաքն Ուրհա, Եգիպտոս և ամենայն աշխարհն Բաբելացւոց: Եւ ահա գայր Շէպլն ի խառանայ, այն որ գխոցն էառ ի ծառայէն Մանիակայ ի յՈւռհա առնէն, որ թղթաւորի պատճառանօք յանկասչաձև դնաց, իբրև մօտեցաւ, հարաւ ի վերայ ամիրային և ճկռտմն հարկանէր գուսովն և ինքն որպէս զարծուի ի քաղաքէն խանդակն հասեալ անկանէր, իսկ ձին ի սաստիկ խոցուածոյն սաստկեալ լինէր: Գայր և Սալհ ամիրայն ի Հլպայ, և Մեմուտն ի Դեմշկայ, Մահմէտն ի Հէմսայ, Ադիղն ի Մսրայ, Ալին ի Մրնպհնայ, Ապոլայն ի Բաղդատայ, Խուրէշն ի Մօսլայ, Նսրտօլն ի Մուֆարղինայ, Ալին ի յԱմթայ, Պշարայն ի Ճըզիրայոյ, Ահմատն ի Խլաթայ, Զուրայն ի Բաղիշոյ, Հուսէնն՝ ի Հերայ, Կուտանն՝ ի Սաղամաստայ, Ահին ի յԱրզունէն, Ահվարն ի Տիգրոնէ, Ահլուն ի Պասարայոյ, Վրէայնն ի Կերկիսերոյն, Շահվարն ի Նսիպոյն և այլ ևս քառասուն ամիրայք. որ ժողովեցան ի վերայ կլային Ուրհայոյ և զամենայն ժամանակն ամառնային նեղէին զկլայն մեծաւ պատերազմաւ:

Եւ յետ բազում աւուրց կամեցան Տաճկունքն հրով այրել զամենայն քաղաքն և գնալ զոր բնակիչք քաղաքին մեծաւ ազաչանօք և կաշառօք թափեցին յայրելոյ զքաղաքն և առացին՝ եթէ Հոռոմք ի մէջ Տաճկաց ոչ կարեն պահել իւրեանց քաղաք, առ սակաւ մի ժամանակ Թուղուն և փախչին, և դառնայ ամենայն մարդ ի տուն իւր: Եւ հաճոյ Թուեցաւ բանս այս ի լսելիս ամենայն մեծամեծացն Տաճկաց: Եւ յետ բազում նեղութեանցն և պատերազմացն գնացին ամենայն զօրքն Տաճկաց ի գաւառս իւրեանց. և Մանիակն կայր անդադար ի պատերազմն ի կլայն Ուրհայոյ. և գաւառացիքն ոչ դադարէին զնա և զգիշեր պատերազմել ընդ Մանիակն: Իսկ Մանիակն և ամենայն արքն որ ընդ Մանիակովն՝ կային ի մեծ նեղութեան, վասն զի հաւաւ կերակուրն ի կլայէն, տնա-

Սուրբ Սոֆիայում։ Նրանք իրենց կանանց և ահագին ոսկու ու արծաթի պատճառով չհամարձակվեցին ապաստանել բերդում, վախենալով, որ կթալանեն իրենց, բայց մի քանի օր անց նրանցից շատերը իրենց ողջ ունեցվածքով հրս ճարակ դարձան։ Մնացածները փախան բերդը՝ Մանիակի մոտ և փրկվեցին։ Տաճիկները կատաղի կռիվ մղեցին Սուրբ Սոֆիա եկեղեցու դեմ. նրանք հյուսիսային կողմում բաբան գրեցին և ուժգին հարվածներ էին հասցնում եկեղեցուն, մինչև որ հիմքից խարխլվեց, ապա, ներսը կրակ դցելով, շատերին ողջակեզ արեցին. քաղաքի ողջ ալգաբնակչության հսկայական ունեցվածքն ու պարենամթերքը հրս ճարակ դարձավ։ Դրանից հետո տաճկաց ողջ երիվարը պղերդաց և շարժվեց Մանիակի վրա։ Մանիակը չորս հարյուր հոգով Ուռհայի բերդում մասնակցեց մեծ մարտին։ Եգիպտոսի և բաբելացոց ողջ երկրի բոլոր քաղաքների մեծ ամիրաները Ուռհա են գալիս։ Ամա ենառանից եկավ Շնպլը, նա, ով Մանիակի ռուս[118] սպասավորից վերք էր ստացել։ Վերջինս որպես սուրհանդակ գնացել էր [Շնպլի] մոտ. նրա վրա չէին կասկածում, և երբ նա մոտեցավ ամիրային, ձիով հարվածեց նրա ուսին, իսկ ինքը, արծվի նման [սլանալով], հասավ և ընկավ քաղաքի խրամի մեջ, իսկ ձին ստացած ծանր վերքից սատակեց։ Հալեպից եկավ Սալեհ ամիրան, Դամասկոսից՝ Մեմուդը, Հեմսից՝ Մահմեդը, Մսրից՝ Ազիզը, Մենբիջից՝ Ալին, Բաղդադից՝ Ապլան, Մոսլից՝ Խուրեշը, Մուփարղինից՝ Նսրտուլը, Ամիդից՝ Ալին, Ջեզիրայից՝ Պըշաբան, Խլաթից՝ Ահմատը, Բաղեշից՝ Ջուրայը, Հերից՝ Հուսեյնը, Սուրմաստից՝ Կուտանը, Արզունից՝ Ահին, Տիզբոնից՝ Ահվարը, Բասրայից՝ Ահլան, Կերկեսերից՝ Վրեայնը, Մծբինից՝ Շահվարը և ուրիշ քառասուն ամիրա ևս։ Նրանք կուտակվեցին Ուռհայի բերդի դեմ և ողջ ամռան ընթացքում ծանր մարտերով նեղում էին բերդը։

Բազում օրեր անց տաճիկները որոշեցին ամբողջ քաղաքը կրակի տալ և հեռանալ։ Քաղաքի բնակիչները թախանձագին աղաչանքով ու կաշառքով փրկեցին քաղաքը հրո ճարակ դառնալուց, ասելով [տաճիկների մեծամեծներին], թե հռոմները ի վիճակի չեն տաճիկների շրջապատում իրենց ձեռքում պահել քաղաքը, որ քիչ ժամանակ անց նրանք կթողնեն կփախչեն և ամեն մարդ կվերադառնա իր տունը։ Տաճիկների բոլոր մեծամեծներին այդ խոսքերը դուր եկան։ Բազմաթիվ նեղություններից ու պատերազմներից հետո տաճկաց բոլոր զորքերը վերադարձան իրենց գավառները։ Իսկ Մանիակը անդադար կռիվ էր մղում Ուռհայի բերդից։ Գավառի [տաճիկ բնակչությունը] չէր դադարում դիշերցերեկ պատերազմել Մանիակի դեմ. Մանիակը և նրա բոլոր զինվորները ծանր դրության մեջ էին, քանզի վերջացել էր բերդի պարենը, և

մուտ լեալ ի քաղաքն և գտանէին իւրեանց հերակուրս։ Յայնժամ առաքեաց թագաւորն և տարաւ զՄալամանն և զորդիսն իւր և արար զնոսա փառաւոր իշխանս և տայր նոցա գաւառս, և եղեն քրիստոնեայք. և ամ յամէ թագաւորն զօրս առաքէ յՈւրհա և շինեաց յիւր անուն բնդ և անուանեաց զնա Ռոմանապօլիս։ Իսկ գաւառաց Արասխիկքն յոյժ նեղութիւն արկանէին զղօրան Հառոմոց ի Սամուսաթայ Հանապարհին մինչեւ ի յՈւրհա. և ամ յամէ անթիւ կոտորած լինէր քրիստոնէիցն, որ ոչ բաւէ բերան պատմել, զի որպէս զբարակոյտս եդուէին ոսկերք անկելոցն. և Մանիակն կայր ի մեծ վտանգի։ Եւ զկնի այսորիկ թագաւորն Ռոմանոս խորհեցաւ շալկով հաց արկանել ի քաղաքն։ Եւ գայլն ի գիշերի վաթսուն հազար Հառոմ կոնդորածք, անցան ընդ Եփրատ գետն և գայլն ի յՈւրհա. իսկ այլ շէն ոչ գոյր ի գաւառն Ուրհայոյ, բայց միայն Լոտարն. յորժամ հասին ի Պարսուր, հարաւ Շիպիպն ի վերայ նոցա և մինչեւ ի Դեսնաձորն կոտորեաց զվաթսուն հազար կոնդորատան. և այսպիսի նեղութեամբ կայր Ուրհա, մինչն զօրացաւ քաղաքն և յաջքնարնաբնաց զթշնամիսն. և արար ընդ նոսա սէր, և եղեւ խաղաղութիւն ի վերայ Ուրհայոյ, և դադարեալ եղեւ հալածանք քրիստոնէից։ Այս ամենայն եղեւ ի թագաւորութեան Աշոտոյ Բագրատունւոյ և ի հայրապետութեանն Տէր Պետրոսի Հայոց կաթողիկոսի։ Եւ յաւուրս Տուղրիլ Սուլթանին Պարսից սէրութեանն առաւ ի Տաճկաց քաղաքն Ուրհա։ Իսկ յետ այս ամենայն անցից և նեղութեանցս և չարչարանացս, զոր կրեաց քաջն Մանիակ, փոխեաց զնա Ռոմանոս և տայ զՈւրհա Ապուքապայ վրանպահն Դաւթի Կուրապաղատին։

Իսկ ի փոխել թուականութեանս Հայոց տումարի յամս ՆՀԱ եղեւ սով սաստիկ ընդ ամենայն երկիր, և բազումք ի մարդկանէ մեռանէին յերեսաց սովոյն, և բազումք վաճառէին զկանայս և զորդիս իւրեանց յաղագս կարօտութեանց հացի. և ի բարկութենէ նեղութեանցս ընդ խօսելն ելանէր հոգին ի մարդոյն։ Եւ այսպիսի օրինակաւ մաշեցաւ երկիր ի սովոյն։

Դարձեալ ի թուականութեանս մերում յամս ՆՀԴ մեռաւ Ռոմանոս թագաւորն գաւով նենգութեամբ ի թագուհւոյն իւրմէ։ Քանզի զեղ մահու արբուցանէր անօրէնն թագաւորին և լուծանէր ի կենաց. և նստեալ լինէր յաթոռ թագաւորութեան Յունաց Միխայէլն հրամանաւ թագուհւոյն իւրոյ՝ դստերն Կոստանդեայ։

Յայսմ ժամանակի մեռանէր արքայն Դաւիթ՝ որդին Սենեքարիմայ արքային Հայոց, և տայ զիշխանութիւնն հայրենեաց իւրոց ի չեղբայրն իւր յԱտոմ, որ էր Ատոմս լցեալ առաքինութեամբ և արդարութեամբ

քաղաքի տները մտնելով, նրանք իրենց համար ուտելիք էին փնտրում։ Այն ժամանակ կայսրը [մարդ] ուղարկեց և Սալմանին իր որդիներով տարավ [հոռոմոց երկիրը], նրանց դարձրեց մեծապատիվ իշխաններ և գավառներ տվեց, իսկ նրանք քրիստոնեություն ընդունեցին։ [Այսուհետև] կայսրը ամեն տարի զորք էր ուղարկում Ուռհա. նա իր անունով բերդ էլ կառուցեց և կոչեց Ռոմանոպոլիս[119]։ Գավառներում [բնակվող] արաբները շատ դժվարին կացության մեջ գցեցին հոռոմոց գինվորներին՝ Սամուսաթից Ուռհա ընկած ճանապարհի վրա։ Ամեն տարի անթիվ քրիստոնյաների կոտորած էր լինում, որ մարդ ի վիճակի չէ պատմել։ Սպանված մարդկանց ոսկորները քարակույտերի էին նմանվում։ Մանիակը օրհասական վիճակում էր։ Դրա վրա ահա Ռոմանոս կայսրը մտածեց շալակով հաց մատակարարել քաղաքին. գիշերով վաթսուն հազար հոռոմ կոնդորատներ[120] անցան Եփրատ գետը և շարժվեցին Ուռհա։ Ուռհա գավառում շեն էր մնացել միայն Լտարը։ Երբ հասան Պարսուր, նրանց վրա հարձակվեց Շիպիպը և մինչև Դեսնաձոր կոտորեց այդ վաթսուն հազար կոնդորատներին։ Ահա այսպիսի նեղության մեջ էր Ուռհան, մինչև որ հղորացավ քաղաքը, հաղթահարեց թշնամիներին և բարեկամություն հաստատեց նրանց հետ։ Ուռհայում տիրեց խաղաղություն, և քրիստոնյաների հալածանքը դադարեց։ Այս բոլորը տեղի ունեցան Աշոտ Բագրատունու թագավորության և հայոց կաթողիկոս տեր Պետրոսի հայրապետության օրոք։ Ուռհա քաղաքը տաճիկների կողմից գրավվեց պարսից տերության սուլթան Տուղրիլի օրոք։ Հակառակ քաջ Մանիակի կրած այս բոլոր տառապանքներին, նեղություններին և չարչարանքներին, Ռոմանոսը հեռացրեց նրան և Ուռհան տվեց Դավիթ կուրապաղատի վրանապահ Ապուքապին[121]։

Հայոց 481 թվականի [14 մարտ 1031—13 մարտ 1032 թ.] սկզբին ողջ երկրում սաստիկ սով եղավ, և մարդկանցից շատերը սովամահ եղան։ Շատերը, հացի կարոտ, վաճառում էին իրենց կանանց և երեխաներին։ Սովն այնքան սաստիկ էր, որ մարդիկ խոսելու ժամանակ իրենց հոգին էին փչում։ Ահա նման ձևով երկիրը սովից ավերակ դարձավ։

Հայոց 484 թվականին [13 մարտ 1035—11 մարտ 1036 թ.] Ռոմանոս կայսրը իր թագուհու նենգ դավադրության զոհը դարձավ. անօրենը կայսրին թույն խմեցրեց և սպանեց։ Հունաց թագավորության գահին նստեց Միքայելը[122], իր թագուհի՝ Կոստանդնի դստեր հրամանով։

Այս ժամանակ վախճանվեց Դավիթ արքան, հայոց Սենեքերիմ արքայի որդին, իր հայրենի իշխանությունը թողնելով իր եղբայր Ատոմին։ Այս Ատոմը առաքինի էր և արդար, անբիծ կյանք էր վարում ի Հիսուս

և սուրբ վարուք ի Քրիստոս Յիսուս, լցեալ հնազանդութեամբ և քաղցրութեամբ, ողորմած ի վերայ տառապելոց, գարմանիչ աղքատաց և յոյժ սիրելի կրօնաւորական դասուն, և շինող եկեղեցւոյ և բազմացուցիչ վանորէից։

Արդ ի չամս և ի թուականութեանս Հայոց ՆՉԴ խաղացեալ բազում ղօրօք Տաճկաց և գային ի վերայ Ուռհայոյ. և անցան չայնկոյս մեծ գետոյն Եփրատայ, սրով և գերութեամբ աւար հարկանէին զամենայն երկիր. և բազում քրիստոնեայք վարեցան ի գերութիւն չաշխարհն Տաճկաց. կոտորեցին զԱլարն և զՍեւերակ և զամենայն աղբերակունսն և զչրագնացս նորա լցին արեամբ. և չայնքան սաստիկ կոտորածէն հոսեալ լիներ երկիրն չարենէ քրիստոնէիցն։ Յայսմ ամի ժողովեցան զօրքն Հոռոմոց և գային ի վերայ Տաճկաց. և էր զօրավար եղբայր Միխայլին՝ թագաւորին Յունաց. և հնձելոց բազմութեամբն հասանէր մինչև ի քաղաքն Մելտենի. և զարհուրեալ եղեւ և ոչ ելանէր ընդ զօրսն Տաճկաց ի պատերազմ։ Եւ լուեալ գայս զօրացն Տաճկաց գարձան չաշխարհն իւրեանց։ Այսպէս արարին և զօրքն Հոռոմոց և ոչ իշխեաց մտանել չաշխարհ Տաճկաց, այլ գարձան խաղաղութեամբ մտանել չաշխարհն իւրեանց, և ի գառնալն առաւել աւար արկանէին քրիստոնէից քան զզօրսն Տաճկաց։

Յայսմ տումարիս և ի թուականութեանս Հայոց ՆՉԵ խաւարեցաւ արեգակն ահաւոր և սոսկալի տեսլեամբ։ Վասն զի՝ զոր օրինակ եղեւ խաւարեալ ի խաչելութեանն Քրիստոսի, նոյն օրինակաւ ծածկեաց զըզլոյսն իւր և խաւար զգեցաւ. և լուսաւորքն աշխարհիս ի մութն և սեաւ գարձան, և ամենայն երկինք իբրեւ զկամար կամար կապեցաւ խաւարայն. և եղեւ սեացեալ արեգակն ի միջօրէի, և ամենայն աստեղքն առ հասարակ երեւէին որպէս ի մէջ գիշերի։ Եւ սաստկացաւ խաւարն և մութն, և գոչեաց առ հասարակ ամենայն արարածք, և հնչեցին ամենայն լերինք և բլուրք, և գողաց սասանելով լերինք և ամենայն ապառաժք, և երերալով ծփայր համատարած մեծ ծովն Ովկիանոս և սուգ առեալ լայր զամենայն որդիս մարդկան։ Եւ եղեւ ի տեսանել զայս ամենայն որդւոց մարդկան, ահաբեկեալ լինէին յերկիւղէն որպէս մեռեալ։ Յայնժամ լայր որդի առ հայր իւր և լայր հայր ի վերայ որդւոց. տղայք զարհուրեալք ի չահէն անկանէին ի գիրկս ծնողացն. մարքն աղետեալ սաստիկ վառմամբ իբրեւ հրով՝ լային զտղայս իւրեանց։ Եւ այսպէս ահաբեկեալ կային ամենայն արարածք և յերկիւղէն պաշարեալ կային և ելս իրացն ոչ գտանէին, ընդ սոսկալի նշանն զարհուրեալ հիանային և ահաբեկեալ կային առհասարակ։ Յայնժամ Տէր Պետրոս հայրապետն Հայոց և թագաւորն Յովհաննէս յուղարկեալ արք փառաւորք առ սուրբ հայրապետն Հա-

Քրիստոս, նա հեզ էր և քաղցրաբարո, տառապյալների հանդեպ ողորմած, աղքատների մխիթարիչ, վանականների դասին շատ սիրելի եկեղեցին շենացնող և վանքերը բազմացնող։

Հայոց 484 թվականին տաճիկները հսկայական զորքով շարժվեցին եկան Ուռհայի վրա։ Անցնելով Եփրատ մեծ գետի այն կողմը, նրանք սրի քաշեցին, գերեվարեցին և ավարի առան ողջ երկիրը։ Բազում քրիստոնյաներ գերի տարվեցին տաճկաց աշխարհը։ Տաճիկները կոտորեցին Ալարի և Սևերակի[123] [բնակչությանը] և նրանց բոլոր աղբյուրներն ու գետակները արյամբ լցրին։ Երկիրը ողողվեց քրիստոնյաների արյամբ։ Այդ տարին Հռոմոց զորքը հավաքվեց և եկավ տաճիկների վրա։ Զորավարն էր Հունաց կայսր Միքայելի եղբայրը։ Նա բազմաթիվ հեծյալներով հասավ Մելիտենն քաղաքը, բայց վախենալով, պատերազմի չբռնվեց տաճկաց զորքի հետ։ Տաճիկների զորքը, իմանալով այդ մասին, վերադարձավ իր երկիրը։ Նույնպես վարվեց և Հռոմոց զորքը. նա չհամարձակվեց մտնել տաճկաց երկիրը և խաղաղությամբ վերադարձավ իր երկիրը։ Իր վերադարձին նա քրիստոնյաներից ավելի մեծ ավար վերցրեց, քան տաճկաց զորքը։

Հայոց 485 թվականին [12 մարտ 1036—11 մարտ 1037 թ.] ահավոր և ուսկալի ձևով խավարեց արեգակը, ինչպես Քրիստոսի խաչելության ժամանակ էր խավարել, նույն ձևով թաքցրեց իր լույսը և պատեց խավարով։ Երկնային լուսատուները խավարեցին և սևացան, իսկ ամբողջ երկնակամարը ծածկվեց մթությամբ։ Արեգակը խավարեց կեսօրին, իսկ բոլոր աստղերը պսպղում էին ինչպես կեսգիշերին։ Խավարը և մութը գնալով սաստկացան. բոլոր արարածները աղաղակ բարձրացրին, բոլոր լեռներն ու բլուրները թնդացին, սասանվեցին լեռներն ու բոլոր ապառաժները։ Երերում, ալեկոծվում էր համատարած մեծ Օվկիանոս ծովը, և բոլոր մարդիկ սուգ հագած ողբում էին. կատարվածը տեսնելով, նրանք մահու սարսափ էին ապրում։ Որդին ողբում էր հորը, հայրը՝ որդիներին։ Երեխաներն ահաբեկված ընկնում էին ծնողների գիրկը։ Մայրերը, հրկիզվողի նման ահաբեկված, ողբում էին իրենց եղ՝ խաներին։ Եվ այսպես ահաբեկ էին եղել ու սարսափ էին ապրում բոլոր արարածները և վիճակից դուրս գալու ելք չէին գտնում. սոսկալի նշանից զարհուրած և լեղապատառ, նրանք շվարել էին։ Այն ժամանակ հայոց հայրապետ տեր Պետրոսը և Հովհաննես թագավորը պատվական մարդկանց ուղարկեցին հայոց սուրբ վարդապետ Հովհաննեսի մոտ,

յոց Յովհաննէս, որ կոչէին Կողեռն, զի ի նմանէ դիտասցին զմեկնութիւն մեծ նշանին. զի էր այր սուրբ և սքանչելի ճգնութեամբ զարդարեալ, և մեկնիչ հին և նոր Կտակարանացն Աստուծոյ, լեալ վարդապետական շնորհօք: Իսկ որք առաքեցան առ վարդապետն Հայոց, Գրիգոր Մագիստրոսն որդին Վասակայ և Հայկազնին մեծն Սարգիս և այլք ոմանք յազատաց տանն Հայոց և այլք ի քահանայիցն, զի զերկրորդելն ահաւոր նշանին դիտասցեն: Եւ եղև իբրև գնացին առ վարդապետն Հայոց, գտանէին զնա՝ զի դարձեալ կայր ի գետինն երեսք ի վայր ի խոր տրտմութեան, և բացեալ լինէր արտասուօք զդետինն. և ի սաստկութենէ լալոյն և ի դառն հառաչանաց, որ ելանէր ի բերանոյ նորին, ոչ ոք իշխէր ինչ հարցանել ցնա. վասն զի տեսանէին զնա ի խորին սուգս և յահագին տրտմութիւնս, և անդադար հեղոյր զարտասուսն և կոծէր զկուրծսն իւր: Եւ յայնժամ նստան իշխանքն Հայոց մերձ առ վարդապետն Յովհաննէս և զվեց ժամու աւուրն ոչինչ համարձակեցան խօսել և հարցանել վասն ահաւոր նշանին, և լային առհասարակ ամենայն եկեալքն առ նա: Յայնժամ իբրև եահս վարդապետն Հայոց զողբումն ամենայն եկելոցն, բացեալ զբերանն իւր՝ սկսաւ խօսել հառաչանօք և բազում արտասուօք և սկսաւ լալ զամենայն ազգս հաւատացելոց. լայր և զկարգ քահանայական և զեղծումն սրբութեան սրբոյ խորհրդոյն, լայր և զեկեղեցի Աստուծոյ և զբակտումն պատուիրանին որ ի նմա ծածկեալ կան առաւածեղէնքն: Եւ սկսաւ այսպէս ասել ցիշխանսն Հայոց. «Ով փառաւոր որդիք իմ, լուարուք զբանս զայս ի վիրաւոր և ի վշտագնեալ Յովհաննիսէ. զի ահա այսօր լցան հազար ամ չարչարանաց Քրիստոսի խաչելութեանն և արձակմանն Բելիարայ, զոր կապեալ էր զնա Փրկիչն ի Յորդանան վտ, զոր յառաջին նշանէն ցուցաւ մեզ յառաջ քան չորեքտասան ամն զոր ասացաք, և յայնժամ դարձեալ երկրորդեաց, զի նախ երկինք պատառեցաւ և երկիրս մթացաւ: Եւ ահա յայսմ ամի լուսաւորչդ խաւարեցան և ամենայն արարած, վասն զի յայսմ հետէ ամենայն ազգք հաւատացելոց Քրիստոսի ի խաւար շրջելոց են. զի այսուհետև խաւարին կարգք եկեղեցւոյ Քրիստոսի յամենայն ազգաց հաւատացելոց, Թուլանան ի պահոց և յաղօթից, պակասին յոյս հանդերձելոց, երկիւղ դատաստանին Աստուծոյ արհամարհի, բառնայ ճշմարիտ հաւատք յամենայն ազգաց, տկարանայ աստուածպաշտութիւն, ատեն զպատուիրանն Աստուծոյ, դիմադարձ լինին բանից սուրբ Աւետարանին Քրիստոսի. ամենայն ոք հակառակ դտանին սրբոց պատուիրանաց Աստուծոյ, արհամարհեն զբանս սուրբ վարդապետացն, անգոսնեն և բզհրամանս կանոնաց սրբոց հայրապետացն, և այնու բազումք անկանին ի բարձրութենէ հաւատոց և առեն զդրունս սուրբ եկեղեցւոյ, և ի ծու-

որին Կոզեռն էին մականվանում, իմանալու համար երևույթի նշանակության մասին։ Նա սուրբ մարդ էր, հիանալի ճգնավոր, աստծո Հին և Նոր Կտակարանների մեկնիչ և վարդապետական շնորհքով օժտված։ Հայոց վարդապետի մոտ ուղարկվողներն էին Գրիգոր Մագիստրոսը՝ Վասակի որդին, հայկազուն մեծ Սարգիսը[124], հայոց երկրի մի քանի այլ ազատներ և քահանաներ. նրանք գնացին իմանալու ահավոր նշանի երկրորդ անգամ երևալու [պատճառը]։ Գնալով հայոց վարդապետի մոտ, նրան գտան վշտահար, նորից երեսն ի վայր դեպին ընկած, արցունք թափելիս։ Այնքան սաստիկ էր լաց լինում և դառնագին աղաչում նա, որ ոչ ոք չհամարձակվեց բան հարցնել։ Նրան գտան խոր սգո մեջ ընկղմված, անշափ ցավաբեկ. նա անվերջ արտասուք էր թափում և կուրծքն էր ծեծում։ Հայոց իշխանները նստեցին Հովհաննես վարդապետի մոտ և մինչև օրվա վեցերորդ ժամը չհամարձակվեցին խոսել ու ահավոր երևույթի մասին հարց տալ։ Բոլորը, ովքեր նրա մոտ էին եկել, լաց էին լինում։ Հայոց վարդապետը, տեսնելով, որ բոլոր եկածները ողբում են, բացեց իր բերանը և սկսեց հառաչելով և լացակումած խոսել ու ողբալ հավատացյալ բոլոր ժողովուրդներին։ Նա ողբում էր և՛ քահանայական դասը, և՛ սրբությունն սրբոց խորհրդի եղծումը, ողբում էր և՛ աստծո եկեղեցին, և՛ վերջինում պահվող պատվիրանների քակտումը։ Նա այսպես սկսեց խոսել հայոց իշխաններին. «Ո՛վ իմ փառավոր որդիներ, լսեք այս խոսքերը խոցված և վշտահար Հովհաննեսից։ Ահա այսօր լրացավ Քրիստոսի խաչելության չարչարանքների[125] հաղար տարին, և Բելիարն[126] արձակվեց, որին կապել էր Փրկիչը Հորդանան դետում. այդ մասին մենք իմացանք տասնչորս տարի առաջ, առաջին հրաշքից, որի մասին ասել ենք։ Այժմ նա կրկին անգամ վիճեց։ Եթե այն ժամանակ երկինքը պատռվեց, և երկիրը սուզվեց մթության մեջ, ապա այս տարի խավարեցին լուսատուներն ու բոլոր արարածները։ Այսուհետև Քրիստոսին հավատացող բոլոր ժողովուրդները դեգերելու են խավարի մեջ, բոլոր հավատացյալ ժողովուրդների մոտ մթադնելու է եկեղեցու կարգը, մարդիկ պիտի անուշադրության մատնեն պահքն ու աղոթքը, հանդերձյալ կյանքի հույսը վերանալու է, մարդիկ չեն վախենալու աստծո դատաստանից, ճշմարիտ հավատքը վերանալու է բոլոր ժողովուրդներից. աստվածապաշտությունը տկարանալու է, մարդիկ ատելու են աստծո պատվիրանները և հակառակվելու Քրիստոսի Սուրբ Ավետարանի խոսքերին։ Բոլորը պիտի հանդես գան աստծո սուրբ պատվիրանների դեմ, պիտի արհամարհեն սուրբ վարդապետների խոսքերը, սուրբ հայրապետների կանոնական կարգադրությունները, և այդպիսով շատերը պիտի գլորվեն հավատքի բարձրությունից։

լութենէ պահոց և յաղօթից՝ կուրանան յաստուածպաշտութեանցն. բազումք մտանեն ընդ լծով անիծից, վասն զի ոչ հաւանին խրատու աստուածեղէն բանիցն սուրբ առաջնորդացն: Որդիք անիծանին ի ծնողաց իւրեանց առ ի չոչ հնազանդութենէ զաւակաց, ծնողքն չարչարին ի ծնընդոց իւրեանց. ցամաքեսցի գութ սիրոյ բարեկամաց ի հարց և ի զաւակաց: Եւ ահա յայսմհետէ բազում հերձուածք մտանեն յեկեղեցի Աստուծոյ ի ծուլութենէ հայրապետացն, վասն զի թուլամորթին և տկարանան և հաւատոյ քննութիւն ոչ առնեն և կան յիմարեալք: Յաղագս արծաթոյն թողուն ի բաց զհաւատն, և պակասին օրհներգութիւնք ի տանէն Աստուծոյ. երկիւղն և ահ սոսկալի դատաստանին Աստուծոյ չաւուրն ահաւորի որ լինելոցն է՝ փարատեալ խափանին յամենայն մտաց. մոռանան զհատուցումն արդարոցն և մեղաւորացն, վասն զի մեղսասէրք և ցանկացողք լինելոց են չար ճանապարհին. փափաքանօք երթան ի մեղաց ժողովարանն, զի ահա ի թագաւորաց և յիշխանաց և չաոաջնորդաց ապականելոց է երկիր: Առաջնորդքն և իշխանքն լինելոց են կաշառասէրք և սատիսօք և սուտերդմունք և ի ձեռս կաշառացն թիւրեն զդատաստանս իրաւանցն աղքատին, և չաղագս այսորիկ առաւել բարկանայ Աստուած ի վերայ նոցա, զի զառաջնորդութիւնն և զիշխանութիւնն ընդ երեսաց վարեն և ոչ ըստ Աստուծոյ. և տիրեալ իշխանաբար ի վերայ վիճակին և ոչ ահիւն Աստուծոյ հովուել և ուսուցանել, որպէս պատուիրեաց սուրբ առաքեալն Պօղոս: Իշխանք և դատաւորք սրտմտասէրք առաւել քան աստուածասէրք և ատելողք լինին սուրբ ամուսնութեան և վիակին ընդ պոռնկութեան ախտին և սիրեն զկորուստ նմանեաց իւրեանց. մեծարին զմատնիչսն և զդողսն, չափշտակեն անիրաւաբար զաշխատաւոյս ընչսն, անողորմ ի վերայ ուղղել դատաստանացն: Որդեակք իմ, ահա չայսմ հետէ ի հակառակութենէ առաջնորդաց փակելոց են դրունք սուրբ եկեղեցւոյ և վերանան սրբութեան կարգք չամենայն ազգէ. և չաղագս արծաթասիրութեան տան ձեռնադրութիւն բազում անարժանից և չամենայն պղծեալսն ածեն ի կարգ քահանայութեան. և չայնժամ պատարագի Քրիստոս ի ձեռն անարժան քահանայիցն և բազումք անարժանութեամբ հաղորդին ի նմանէ, ոչ եթէ ի փրկութիւն՝ այլ ի դատապարտութիւն և ի կորուստ հոգւոյն: Եւ ուր ուրեք կայ ճշմարիտ պատարագող Քրիստոսի սուրբ խորհրդոյն չաղագս ազգիս, որ ի ձեռն նո-

Նրանք պիտի ատեն սուրբ եկեղեցու դռները, պաս չպահելով և չաղոթելով աստվածապաշտությունից պիտի հեռանան: Շատերը պիտի տնիծյալ լինեն, որովհետև պիտի արհամարհեն հոգևոր սուրբ առաջնորդների աստվածային խրատական խոսքերը: Որդիները իրենց անհնազանդության պատճառով պիտի անիծվեն ծնողներից, վերջիններս էլ պիտի չարչարվեն աշխարհ բերած իրենց երեխաների կողմից: Ցամաքելու է հայրերի և զավակների գթասրտությունը: Այսուհետև, հայրապետների ծուլության պատճառով, բազմաթիվ հերձվածներ են մուտք գործելու աստծո եկեղեցին, քանզի՝ [հայրապետները] դառնալով թուլամորթ և տկար, չպիտի կարողանան հավատո քննություն անել և պիտի մնան հիմար վիճակում. արծաթասիրության պատճառով պիտի հրաժարվեն հավատքից, և եկեղեցում պիտի պակասեն օրհներգությունները: Աստծո անխուսափելի ահավոր դատաստանի վախն ու սարսափը վերանալու է բոլորի մտքից. մարդիկ պիտի մոռանան, որ արդարների և մեղավորների հատուցում կա, նրանք ընթանալով մոլոր ճանապարհով, պիտի մեղքը սիրեն և հեշտասեր դառնան: Նրանք սիրով պիտի գնան հանրատները: Թագավորները, իշխանները և հոգևոր առաջնորդները ապականելու են երկիրը, հոգևոր առաջնորդներն ու իշխանները պիտի դառնան կաշառասեր, ստախոս, սուտ երդվող և, կաշառք ստանալով, պիտի ոտնահարեն աղքատի իրավունքը: Այսպիսով, աստված է՛լ ավելի պիտի զայրանա նրանց դեմ՝ հոգևոր և աշխարհիկ իշխանությունը ոչ ըստ աստծո կամքի, այլ կողմնակալությամբ վարելու համար: Թևմին տիրելով իշխանաբար, նրանք հովվելու են այն և [ժողովրդին] դաստիարակելու ոչ աստծո երկյուղով, ինչպես այդ մասին պատվիրեց սուրբ առաքյալ Պողոսը: Իշխաններն ու դատավորները ավելի պոռնկասեր, քան թե աստվածասեր են լինելու, նրանք պիտի ատեն ամուսնության սուրբ խորհուրդը: Վարակվելով պոռնկության ախտով, պիտի սիրեն իրենց նմանների կործանումը: Նրանք մատնիչներին և գողերին պիտի պատվեն, անիրավաբար սիտի հափշտակեն աշխատողի ունեցվածքը և նրանց նկատմամբ անողորմ դատաստան պիտի տեսնեն: Իմ որդիներ, այսուհետև հոգևոր առաջնորդների հակառակության պատճառով պիտի փակվեն սուրբ եկեղեցիների դռները, և բոլոր ժողովուրդների միջից վերանան սուրբ հաստատությունները: Արծաթասիրության պատճառով ձհոնադրելու են բազում անարժանների և ամեն մի պիղծ մարդու քահանաների շարքին են դասելու: Այն ժամանակ է, ահա, որ Քրիստոսին պատարագելու են անարժան քահանաները, այդ անարժաններն են ժողովրդին հաղորդություն տալու՝ ոչ ի փրկություն, այլ որպես պատիժ և հոգու կորուստ: Բայց տեղ-տեղ կան Քրիստոսի սուրբ խորհրդի ճըշ-

ցա ողորմի Աստուած աշխարհի: Որդեակք, զսուրբսն և զառաքինիսն վիրաւորեն և զանարատն դարձուցանեն ի քահանայութենէ առ ի չունելոյ արժան, ոչ տան զձեռնադրութիւն: Եւ որպէս ասացաք՝ յառաջ քան զչորեքտասան ամն ի լինելոյ միւսումն նշանին, եթէ պակասին բազումք ի հաւատոց աստուածպաշտութեանց, վասն զի բազումք ի քահանայից և ի կրօնաւորաց թուլամորթին ի կրօնից իւրեանց. լինելոց են ցանկասէրք, ախտից փափագողք, որոճալով որոճանն զերգս դիւականն. կրօնաւորքն փախչին յանապատէն և ատեն զսուրբ երամս ճգնաւորացն և զվարս առաջին կրօնաւորացն ատեալ անարգեն. լինիցին խանգարիչք կարգաց և կրօնից, փախչին ի ձայնէ սաղմոսերգութեանցն Աստուծոյ: Այս ամենայն լինելոց է, որդեակք իմ. յազգս այս յղփանան առաջնորդք աշխարհի արծաթսիրութեամբ և զամենայն անկեալս և զորոշեալս ի շնորհայ Որդւոյն Աստուծոյ յառաջ կոչեն և ածեն զնոսա ի կարգս քահանայական և զամենայն մերժեալսն գլուխ և առաջնորդ կացուցանեն ի վերայ ժողովրդեանն Աստուծոյ. և ոչ գիտեն զինչ գործեն, վասն զի կուրանան ի սաստկութենէ արծաթսիրութեանն: Եւ առաւել ունիմ ասել զայս. զի ահա յայսմհետէ մեծաւ խոցմամբ վիրաւորելոց է Քրիստոս յանարժան քահանայիցն, քան զխաչիլն և զչարչարիլն ի Հրէից. զի պակասն ի նոցանէ վճարելոց է ի սոցանէ, և լսելոց է՝ եթէ «Ընկեր, վասն որո՞յ մտեր յայս հարսանիսս»: Յայնժամ կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք հանեն զնա ի խաւարն արտաքին և զոր ժողովեացն՝ կուտի կորստեամբ ի վերայ նորա: Որդեակք իմ, ահա այս ամենայն լինելոց է ի յետին ժամանակս. զի արձակեցաւ սատանայ ի հազար ամէ կապանացն, զոր կապեաց Քրիստոս խաչիւն իւրով. և երեւեսցին ճշմարիտ հաւատացեալքն Քրիստոսի՝ կալով ընդդէմ նորա ի պատերազմն, զի ունի պատերազմել ընդ սուրբսն, որք պատուիրանաւն Աստուծոյ պահպանեալ կան ի կարգս ճշմարիտ խոստովանութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որք կան յազգս ազգս: Այսուհետև լինին յարձակմունք այլազգեաց՝ պիղծ զօրքն Թուրքաց անիծեալ որդւոցն Քամայ ի վերայ ազգաց քրիստոնէից, և ի սուր սուսերի մաշի ամենայն երկիր. սովով և գերութեամբ անցանէ ամենայն ազգ հաւատացելոցն Քրիստոսի. յանմարդ դառնան բազում գաւառք, բառնալոց է զօրութիւնք սրբոց յերկրէ, քակտին բազում եկեղեցիք ի հիմանց, խափանեսցի խորհուրդ խաչին Քրիստոսի. ի բազմանալ անօրէնութեանցն խափանին տօ-

մարիտ պատարագողներ, որոնց սիրույն էլ ահա աստված կողորմի մարդկության։ Որդինե՛ր, վիրավորելու են անբիծ առաքինի մարդկանց, հրաժարվելու են քահանա ձեռնադրել անարատին՝ դրամ չունենալու պատճառով։ Տասնչորս տարի առաջ, նախորդ [երկնային] նշանի առթիվ մենք ասացինք, որ աստվածապաշտությունից շատերը պիտի հեռանան, որովհետև բազմաթիվ քահանաներ և վանականներ հավատքով տկար պիտի լինեն, որ նրանք հեշտասեր պիտի լինեն և որոճալով պիտի որոճան դիվական երգեր, որ վանականները պիտի փախչեն անապատից, պիտի ատեն ճգնավորների սուրբ խմբերը, պիտի ատեն և անարգեն առաջին վանականների կենցաղավարությունը, եկեղեցական կարգ ու կանոնը և հավատքը տակն ու վրա պիտի անեն, պիտի փախչեն աստծո սաղմոսերգության ձայնից։ Իմ որդինե՛ր, այս բոլորը լինելու են։ Աշխարհիկ առաջնորդները պիտի հղփանան արծաթասիրությամբ, և աստծո որդու շնորհքից զրկված ու մերժված մարդկանց պիտի առաջ քաշեն և քահանա ձեռնադրեն։ Նրանք բոլոր մերժվածներին աստծո ժողովրդի ղեկավար և առաջնորդ պիտի նշանակեն։ Նրանք իրենց արածը չպիտի իմանան, քանզի անչափ դրամասիրությունը կուրացնելու է նրանց։ Ավելացնում եմ և հետևյալը. սրանից հետո է, որ Քրիստոսն անարժան քահանաներից խոր վերք է ստանալու, ավելի խոր, քան ստացել էր հրեաներից՝ իր չարչարվելու և խաչվելու ժամանակ, նրանց պակասը սրանք են լրացնելու։ Եվ պիտի լսվի. «Բարեկամ, դու ինչո՞ւ մտար այս հարսանիքը»։ Եվ նրա ձեռքն ու ոտքը կապած պիտի շպրտեն խավարն արտաքին[127]։ Եվ հավաքածը իր գլխին է թափվելու և կործանելու նրան։ Իմ որդիներ, այս բոլորը կատարվելու է հետին ժամանակներում, քանզի արձակվեց սատանան իր հազարամյա կապանքներից, որին կապել էր Քրիստոսը իր խաչով։ Պիտի հանդես գան Քրիստոսին ճշմարիտ հավատացողներ և պատերազմի ելնեն նրա դեմ, քանզի նա պետք է պատերազմի տարբեր ժողովուրդների մեջ գոյություն ունեցող սրբակրոն մարդկանց դեմ, ովքեր պահպանում են աստծո պատվիրանները և ճշմարտապես խոստովանում են մեր Քրիստոս-աստծուն։ Այսուհետև տեղի են ունենալու այլազգիների՝ Քամի անիծյալ որդիների թուրքերի պիղծ զորքի հարձակումները քրիստոնյա ժողովուրդների վրա, և բոլոր երկրները սրի ճարակ պիտի դառնան. քրիստոնյա բոլոր ժողովուրդները կործանվելու են սովի մագիլներում և գերության մեջ։ Բազմաթիվ զավառներ անմարդաբնակ են դառնալու, երկրի երեսից պիտի վերանա սրբերի զորությունը, բազմաթիվ եկեղեցիներ պիտի հիմնահատակ կործանվեն. պիտի խափանվի Քրիստոսի խաչի խորհուրդը։ Ամբարշտության բազմանալու հետ մեկտեղ, դադարելու են սրբոց տոնա-

նախմբութիւնք սրբոցն: Դրգռին որդիք ընդ հարցն, ատելագործ լինին հարք առ որդիս, յարիցեն եղբարք ի վերայ միմեանց, սպանութեամբ և աւերման հեղութեամբ ջանան կորուսանել զիրեարս, ուրանան զգուէ և զսէր եղբայրութեանն, ցամաքեսցի արիւն եղբայրութեան նոցա, և այսպիսի գործովք հաւատարակից լինին անօրինացն. և յաղագս անօրինաց ծփի երկիր, և ցօղ արեան զգենուն բոյսք անպաստանաց, և զամս վաթսուն սրով և գերութեամբ աւերելոց է երկիր: Եւ յայնժամ ելցեն ազգն արիականք, որք են Փռանգ, և բազմութեամբ զօրօք առցեն զսուրբ քաղաքն Երուսաղէմ, և ազատի ի գերութենէն սուրբ գերեզմանն Աստուածընկալ: Եւ զկնի այսորիկ զամս չիսուն տապնապի երկիր ի զօրացն Պարսկաց սրով և գերութեամբ, և եւթնապատիկ առաւել քան զորս յառաջ կրեցին հաւատացեալք, և ահաբեկին ամենայն ազգք հաւատացելոց Քրիստոսի. և ի բազմութենէ նեղութեանցն յուսահատին զօրք Հռովմայեցւոց, բազում անցումն և կոտորած կրեն ի յազգէն Պարսից. և ընտիր ընտիրս ի քաջ զօրականացն խողխողեն սրով և գերութեամբ, մինչեւ ի փրկութենէ յուսահատին զօրքն Հռովմայեցւոց: Եւ զկնի ամացն սկիզբն առնուն ի զօրանալ առ սակաւ սակաւ և ուր ուրեք լինի մնացեալ յառաջին գնդէն. և ամ յամէ յառաջ գան և հաստատին իբրեւ տեղապահ գունով աշխարհաց և գաւառաց: Յայնժամ որպէս ի քնոյ զարթուցեալ լինի թագաւորն Հռովմէացւոց և հասանէ որպէս զարծիւ ի վերայ զօրացն Պարսից ահագին բազմութեամբ՝ որպէս զաւազ առ եզր ծովու. ելցէ որպէս զհուր բորբոքեալ, և յահէ նորա դողան ամենայն արարածք, և Պարսիկք և ամենայն զօրք այլազգեացն արասցեն զփախուստ իւրեանց յայնկոյս մեծ գետոյն Ջահունեաց: Եւ յայնժամ թագաւորն Հռովմայեցւոց տիրելով տիրէ ամենայն աշխարհի զամս բազումս. և նորոգումն առնու ամենայն երկիր և շինութեան հիմն արկանէ և այնպէս նորանայ որպէս զկնի ջրհեղեղին. բազմանան ծնունդք մարդկան և անասնոց, բղխեսցեն աղբեւրք զգնացս ջրոց: Պտղաբերին անդաստանք առատ քան զառաջինն. և այնուհետեւ անկանի սով ի յաշխարհն Պարսից զբազում ամս, մինչեւ յարձակեալ զմիմեանս ուտիցեն. և յահէ զօրութեան թագաւորին Հռովմայեցւոց բազում իշխանք Պարսից ելցեն ի քաղաքաց և ի գաւառաց իւրեանց և առանց պատերազմի զփախուստ արասցեն յայնկոյս Ջահուն գետոյ, և զամենայն ժողովս մթերից իւրեանց զամաց բազմաց՝ զոսկւոյ և զարծաթոյ և զամենայն բազմութիւն գանձուցն որպէս զհող կամ զքարակոյտս անչափ համարով առցեն յաշխարհէն Պարսից և բարձեալ տարցեն յաշխարհն Հռովմայեցւոց. և զամենայն մանկունս

կատարությունները, որդիները պիտի հակառակվեն իրենց հայրերին, հայրերը պիտի ատեն իրենց որդիներին, եղբայրները պիտի իրար դեմ դուրս գան և սպանությամբ ու արյունահեղությամբ պիտի ջանան մեկը մյուսին կործանել՝ ուրանալով եղբայրական գութն ու սերը. նրանց եղբայրության արյունը պիտի ցամաքի, և նման գործերով պիտի հավասարվեն անհավատներին։ Անհավատ ժողովուրդները պիտի ալեկոծեն աշխարհը, անդաստանների բույսերը արյան ցողով պիտի շաղախվեն, երկիրը վաթսուն տարի պիտի ավերվի սրով ու գերությամբ։ Այն ժամանակ, ահա, պիտի հանդես գա ֆրանկների արիական ժողովուրդը[128], մեծ զորքով գրավի Երուսաղեմ սուրբ քաղաքը և գերությունից ազատի աստվածընկալ սուրբ Գերեզմանը։ Դրանից հետո, հիսուն տարի երկիրը պիտի տառապի պարսից զորքերի սրից ու գերեվարությունից։ Հավատացյալները նախկինում կրած [տառապանքների] յոթնապատիկը պիտի կրեն, և քրիստոնյա բոլոր ժողովուրդները ահ ու սարսափ պիտի ապրեն։ Բազում դժվարություններից պիտի հուսաբեկվեն հռոմոց զորքերը և պարսիկներից չարդի ու խողխողման ենթարկվեն, նրանց անվանի և քաջ զինվորականները սրի պիտի քաշվեն և գերի տարվեն։ Հռոմոց զինվորները կորցնելու են փրկության հույսը։ Այդ [հիսուն] տարուց հետո [հռոմները] աստիճանաբար պիտի հզորանան, իսկ տարբեր տեղերում նախկին գնդի մնացորդները, տարեցտարի հրապարակ դալով, պիտի հաստատվեն որպես նահանգների և գավառների կայազորներ։ Այն ժամանակ հռոմոց կայսրը, կարծես քնից զարթնելով, հսկայական բազմությամբ, որպես ծովեզրյա ավազ, արծվի պես պիտի հարձակվի պարսից զորքերի վրա։ Նա պիտի ելնե որպես բորբոքված հուր, և նրա ահից բոլոր արարածները պիտի դողան, իսկ պարսիկները և այլազգիների բոլոր զինվորները պիտի փախուստի դիմեն Ջիհուն մեծ գետից այն կողմ։ Եվ այն ժամանակ, ահա, հռոմայեցիների կայսրը երկար տարիներ պիտի տիրի բովանդակ աշխարհի վրա։ Համայն երկիրը պիտի վերաշինվի և շենանա, պիտի նորանա, ինչպես ջրհեղեղից հետո։ Պիտի բազմանան մարդկանց և անասունների ծնունդները, [ցամաքած] աղբյուրները պիտի հորդեն, անդաստանները նախկինից շատ բերք տան։ Այնուհետև պարսից երկրում բազում տարիներ սով է լինելու, այնքան սաստիկ, որ իրար են հողոտելու։ Հռոմայեցիների կայսեր հզորությունից սարսափած, պարսից բազմաթիվ իշխաններ պիտի բողնեն իրենից քաղաքներն ու գավառները և առանց մարտի փախուստի դիմեն Ջիհուն գետից այն կողմ, իսկ բազում տարիների ընթացքում հողի կամ քարակույտերի նման դիզված ոսկին, արծաթը, ողջ գանձը պարսից երկրից պիտի առնվի և հռոմայեցիների երկիրը

և զաղջկունս և զկանայս տարցեն ի գերութիւն յաշխարհն Հռոմայեցւոց. աւերակս և անմարդ լինելոց է տունն Պարսից ի զօրացն Հռոմայեցւոց և հաստատի ամենայն իշխանութիւն երկրի ի ներքոյ ձեռին թագաւորին Հռոմայեցւոց»: Զայս այսպէս ասաց սուրբ վարդապետն Յովհաննէս և արձակեալ յուղարկեաց զիշխանսն Հայոց խաղաղութեամբ, և դնացին յաշխարհն իւրեանց:

Յայսմ ժամանակի զօրաժողով արար իշխանն Հայոց Գանձի և զընացեալ էառ զքաղաքն Բերկրի յարևելս՝ ի Պարսից և կոտորեաց առհասարակ զամենայն քաղաքն և ի սուր սուսերի մաշեաց զօրսն Տաճկաց. և զբազում աւուրս պատերազմեցաւ ի վերայ կլային և ի մեծ վտանգ էարկ զնոսա. և բաղումք սատակեալ լինէին ի ջրոյ: Եւ այսպիսի պատերազմաւ անհոգացեալ կային զօրքն Հայոց և էին ի մեծ դինարբութեան. և խարիկն, որ է ամիրայ քաղաքին Բերկրոյ, և սորա տեսեալ զանպատրաստութիւն զօրացն Հայոց, գրեաց ի քաղաքակիցսն իւր գալ ի յօգնութիւն իւր: Եւ արարին ժողով այլազգիքն և եկեալ գտին զնոսա անպատրաստս. և ընդ առաւօտն յարձակեցան ի վերայ քրիստոնէիցն զօրացն և արարին սաստիկ կոտորած զնոսա. և սպանաւ յաւուրն յայնմիկ մեծ իշխանն Հայոց Գանձի, և մնաց Տաճատ ի տան հայրենեաց իւրոց. որդի նորա և Գանձի և ամենայն զօրքն իւր անցին ի քաղաքին Բերկրի:

Իսկ ի փոխել թուականութեանս Հայոց յամս ՆԶԶ յարուցեալ Տէր Պետրոս կաթուղիկոսն Հայոց յաթոռոյ իւրմէ ծածկաբար և գնաց ի վասպուրական խռովութեան աղագաւ, զի թագաւորն և ամենայն նախարարք և ազատագունդք զօրքն Հայոց ոչ լինէին ունկնդիր աստուածային պատուիրանացն: Եւ եղև Տէր Պետրոս ի վասպուրական զամս չորս. և կացեալ էր ի Զորոյ վանքն, զոր շինեալ էր սուրբ հայրապետն Ներսէս. և անչափելի արտմութիւն եղև աշխարհին Հայոց ի թողուլն նորա զաթոռ հայրապետութեանն: Եւ յայնժամ թագաւորն Յովհաննէս և ամենայն նախարարք Հայոց գրեցին նենգութեամբ թուղթ առ Տէր Պետրոս՝ լինել ունկնդիր ամենայն հրամանաց նորա և ակնջալուր լինել ամենայն լուսաւոր վարդապետութեան նորա. գրեցին զայս հանդերձ մեծամեծ երդմամբ և զիշխանսն Հռոմոց, որք եկեալ էին կողմնապահք՝ կացուցանելոյ զնոսա միջնորդս: Եւ լուեալ Տէր Պետրոս ստութեան երդմանց նոցա և դառնայր յաթոռ իւր: Եւ եղև յորժամ մտանէր ի քաղաքն Անի, հրամանաւ թագաւորին Յովհաննէսի արգելական արարին զՏէր Պետրոս զտարի մի և զամիսս հինգ. և առաքեաց թագաւորն ի վանքն ի Սանահին և ետ բերել զմեծն Դէոսկորոս զհայր վանիցն:

պիտի տարվի։ [Պարսից] բոլոր տղաներին, աղջիկներին և կանանց պիտի դերեվարեն հռոմայեցվոց երկիրը։ Հռոմայեցիների զորքերը պարսից երկիրը պիտի ավերակ և անմարդաբնակ դարձնեն։ Հռոմայեցվոց կայսեր գերիշխանության տակ է անցնելու ողջ աշխարհը»։

Ահա, այսպես ասաց Հովհաննես սուրբ վարդապետը և խաղաղությամբ ճամփու դրեց հայոց իշխաններին, որոնք գնացին իրենց տեղերը։

Այս ժամանակ հայոց իշխան Գանձին զորահավաք կատարեց, զբնաց արևելք և պարսիկների ձեռքից դրավեց Բերկրի քաղաքը։ Նա զբլխովին կոտորեց քաղաքի ողջ բնակչությանը, իսկ տաճկաց զորքերին սրի քաշեց։ Նա բազում օրեր մարտնչեց միջնաբերդի դեմ և [պահակազորին] շատ դժվարին դրության մեջ գցեց։ Շատերը սատակեցին ջրի պակասից։ Պատերազմի նման ելքից անփութացած հայոց զորքը հանձնվեց դինարբուքի։ Բերկրի քաղաքի ամիրա խտրիկը, տեսնելով հայոց զորքի անպատրաստ լինելը, նամակ գրեց իր համաքաղաքացիներին՝ օգնության հասնել։ Այլազգիները զորահավաք աննելով եկան և [հայերին] գտան անպատրաստ վիճակում։ Առավոտյան նրանք հարձակվեցին քրիստոնյաների զորքերի վրա և մեծ ջարդ տվեցին։ Այդ օրը սպանվեց հայոց մեծ իշխան Գանձին։ Նրա հայրենի երկիրը [ժառանգություն] մնաց որդուն՝ Տաճատին։ Այսպես, Գանձին և նրա բովանդակ զորքը ընկան Բերկրի քաղաքում[129]։

Հայոց 486 թվականի [12 մարտ 1037—11 մարտ 1038 թ.] սկզբին հայոց կաթողիկոս տեր Պետրոսը խռովության պատճառով թողեց իր աթոռը և թաքուն կերպով գնաց Վասպուրական. թագավորը, բոլոր նախարարները և հայոց ազատագունդ զորքը ականջ չէին դնում աստծո պատվիրաններին։ Տեր Պետրոսը Վասպուրականում մնաց չորս տարի. նա ապրում էր սուրբ հայրապետ Ներսեսի կառուցած Ձորովանքում[130]։ Նրա կողմից հայրապետական աթոռը լքելու առթիվ հայոց երկրում մեծ սուգ եղավ։ Այն ժամանակ Հովհաննես թագավորը և հայոց բոլոր նախարարները նենգաբար մի նամակ գրեցին տեր Պետրոսին, թե իբր իրենք կենթարկվեն նրա բոլոր հրամաններին և ունկնդիր կլինեն նրա լուսավոր վարդապետությանը։ Նույն բանը նրանք գրեցին [Վասպուրականի] կառավարիչ նշանակված հոռոմոց իշխաններին՝ [գրությունը] հաստատելով սարսափելի երդումներով ու նրանց միջնորդությունը խընդրեցին։ Տեր Պետրոսը հավատաց նրանց կեղծավոր երդումներին և վերադարձավ իր աթոռը։ Բայց երբ տեր Պետրոսը մտավ Անի քաղաքը, Հովհաննես թագավորի հրամանով նրան մեկ տարի և հինգ ամիս արգելափակեցին[131]։ Թագավորը մարդ ուղարկեց Սանահնի վանք և բերել տվեց վանահորը, մեծ Դիոսկորոսին[132]։ Նա եկավ և ընդդիմացավ տեր

եւ եկեալ նա և կացեալ հակառակ Տէր Պետրոսի. և նստուցին զնա կաթողիկոս յաթոռ հայրապետութեանն Հայոց զտարի մի և զամիսս երկու, և ոչ ըստ Աստուծոյ հրամանացն. և ահա կարի յոյժ խաբեալ եղեւ մեծ հռետորն Դէոսկորոս և կորոյս զայնչափ պատիւն՝ զոր ունէր, և ոչ ոք էր որ ընդունէր զձեռնադրութիւն նորա որպէս օրէն է սուրբ Աթոռոյն. և ոչ քարոզեցաւ անուն նորա ի մէջ եկեղեցւոյ ընդ այլ հայրապետսն, վասն զի անարժան համարեցան զնա այնր պատուոյ. և եղև սուգ մեծ ի վերայ տանն Հայաստանեայց. և ի ձեռնադրութեանն նորա ոչ ժողովեցան եպիսկոպոսք և քահանայք և հայրապետք. այլ նա յանդգնեալ ըստ սրտին խորհրդոյն և զբազումս յանարժանիցն ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն. այլ և որք վասն յայտնի յանցանաց իւրեանց մերժեալ էին յաթոռոյն յառաջին հայրապետացն, զամենեսեան զնոսա յառաջ կոչեաց: Իսկ եպիսկոպոսքն և վարդապետքն Հայոց աշխարհին ընդ նրզովիւք փակեցին զբազաւորն և զամենայն նախարարան Հայոց վասն հակառակութեան, որ եղև ի մէջ եկեղեցւոյն: Եւ յայնժամ բազաւորն և իշխանքն Հայոց ոտրսեալք յահէ անիծիցն, կամեցան դարձուցանել զՏէր Պետրոս յաթոռ իւր, և նա զատուրս բազում ոչ առնոյր յանձն. և ամենեքեան խնդրէին զխոստութիւն ի նմանէ, և նա զնդեալ կայր. և յայնժամ դրեաց բազաւորն թուղթ և ամենայն իշխանքն Հայոց ի յՍղուանք և կոչեցին զկաթուղիկոս Սղուանից աշխարհին զՏէր Յովսէփ, զի դայցէ ի բարեխօսութիւն և ի հաստատութիւն Տէր Պետրոսին ի քաղաքն Անի:

Եւ եղև ի թուականութեանս Հայոց ՆՁԷ լինէր մեծ ժողով ի քաղաքն յԱնի եպիսկոպոսաց, հայրապետաց, կթողնաւորաց և վարդապետաց, ազատաց և իշխանաց իբրև չորք հազարաց. որ էր գլուխ ժողովոյն ծերունին Յովսէփ՝ կաթուղիկոսն Սղուանից. և սուգ մեծ հաստատեցան Դէոսկորոսի և յոյժ պարտաւորեցին զնա և մերժեցին ի պատուոյ և ընկեցին յաթոռոյ հայրապետութեան. և զամենայն ձեռնադրեալսն ի նմանէ ընդ բանադրութեամբ փակեցին, և զի մի՛ ոք զնոսա ի կարգ քահանայութեան կոչեսցէ. և հաստատեցին զՏէր Պետրոսն յաթոռ հայրապետութեան իւրոյ, և եղև խաղաղութիւն սուրբ եկեղեցւոյն Հայաստան աշխարհին. և Դէոսկորոս գնաց ի Սանահինն ի վանքն իւր և կարի յոյժ ամաչելով ընդ գործս իւր:

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ի յամի ՆՁՔ եւլանէր աստղ մի գիսաւոր՝ ջահաւոր կերպարանօք և երևեալ նորա յարեմտից կոյս յերեկօրէն և յետս յետս սողալով գնայր. և եհար զբազմաստեղն և ըղձուսինն և ինքն աներևոյթ եղև և յարեմտից դարձաւ:

Ի նմին ամի յարեան Բուլղարք ի վերայ Հոռոմոց. և զօրաժողով արար թագաւորն Հոռոմոց Միխայլն զամենայն աշխարհն Յունաց և ան-

Պետրոսին։ Եվ, ասածո կամքին հակառակ, [նրան] մեկ տարի և երկու ամիս նստեցրին հայոց հայրապետական աթոռին։ Մեծ հռետոր Դիոսկորոսը չարաչար խաբվեց և կորցրեց իր վայելած անչափ պատիվը. նրա ձեռնադրությունը ոչ ոք չճանաչեց, ինչպես օրենքն է սուրբ աթոռի, նրա անունը եկեղեցու մեջ մյուս հայրապետների շարքում չհիշվեց, քանզի արժանի չգտան նրան նման պատվի։ Հայոց երկրում մեծ սուգ եղավ։ Նրա ձեռնադրությանը չմասնակցեցին ո՛չ եպիսկոպոսները, ո՛չ քահանաները, ո՛չ էլ վանահայրերը, բայց նա հանդգնություն ունեցավ կամայականորեն բազմաթիվ անարժանների եպիսկոպոս ձեռնադրել։ Նա առաջ քաշեց բոլոր նրանց, ովքեր իրենց գործած բացահայտ հանցանքների պատճառով նախկին հայրապետների կողմից մերժված էին աթոռից։ Հայոց երկրի եպիսկոպոսներն ու վարդապետները եկեղեցին խռովելու պատճառով նղովեցին թագավորին և հայոց բոլոր նախարարներին։ Երբ թագավորն ու հայոց իշխանները, անեծքի ահից սարսափած, որոշեցին վերականգնել տեր Պետրոսին իր աթոռի վրա, վերջինս երկար ժամանակ չէր համաձայնվում։ Բոլորը ներողություն էին խնդրում, բայց նա համառում էր։ Դրա վրա թագավորը և հայոց բոլոր իշխանները նամակ գրեցին Աղվանք և խնդրեցին Աղվանից աշխարհի կաթողիկոս տեր Հովսեփի միջնորդությունը՝ տեր Պետրոսին [կաթողիկոսական աթոռին] հաստատելու համար։ Տեր Հովսեփը Աղվանքի եպիսկոպոսներով գալիս է Անի՝ տեր Պետրոսին հաստատելու։

Հայոց 487 թվականին [12 մարտ 1038—11 մարտ 1039 թ.] Անի քաղաքում եպիսկոպոսների, հայրապետների, վանականների, վարդապետների, ազատների և իշխանների, շուրջ չորս հազար հոգու մասնակցությամբ ժողով գումարվեց։ Ժողովը գլխավորում էր Աղվանից կաթողիկոս ծերունի Հովսեփը։ Ժողովը սուր քննադատության և պարսավանքի ենթարկեց Դիոսկորոսին, պատվազուրկ արեց և հայրապետական աթոռից ցած առավ։ Նրա բոլոր ձեռնադրածներին բանադրեցին, որպեսզի այսուհետև նրանցից ոչ ոք քահանաների շարքին չդասվի։ Տեր Պետրոսին հաստատեցին իր հայրապետական աթոռի վրա, և Հայաստան աշխարհի սուրբ եկեղեցին խաղաղվեց։ Դիոսկորոսը գնաց Սանահին՝ իր վանքը, իր արարքների համար անչափ ամոթ զգալով։

Հայոց 489 թվականին [11 մարտ 1040—10 մարտ 1041 թ.] մի ջահանման գիսավոր աստղ ելավ. նա երևաց երեկոյան, արևմտյան կողմում և դեպի ետ էր սողում։ Նա բախվեց բազմաստեղին ու լուսնին և, դեպի արևմուտք դառնալով, աներևութացավ։

Նույն տարին բուլղարները հարձակվեցին Հոռոմների վրա։ Հոռոմոց կայսր Միքայելը, հույների բովանդակ երկրում զորահավաք կատարե-

համար բազմութեամբ գնաց ի վերայ Բուլղարաց. և մեծաւսաւս բարկութեամբ արար ատար և դերութիւն զբաղում գաւառս և սրով հասանէր մինչև ի թագաւորութիւնն Բուլղարաց. և զօրքն Բուլղարաց ժողով արարին ընդդէմ թագաւորին Յունաց։ Եւ եղև սաստիկ կոտորած յաւուրն յայնմիկ. և յաղթեցին զօրքն Բուլղարաց զօրացն Հառոմոց և փախստական արարին զնոսա առաջի իւրեանց և սրով յարձակեցան զհետ նոցա. և յաւուր յայնմիկ արեամբ ծածկեցաւ ամենայն երեսք դաշտացն. և թագաւորն Միխայէլ փախստական անկանէր ի Կոստանդնուպոլիս։ Եւ զօրացան Բուլղարք ի վերայ Յունաց և առին զամենայն աշխարհն իւրեանց և ղերծան ի ծառայութենէ Հառոմոց. և եղև խաղաղութիւն մեծ ի վերայ ազգին Բուլղարաց։

Յայսմ ամի մեռաւ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի որդին Գագկայ և եղբայր Յովհաննիսի, և մնաց իւր տղայ որդի մի Գագիկ անուն ամաց հնգետասանից. և բերաւ Աշոտ ի քաղաքն Անի, և թագեցին զնա ի տապանատունն առաջին թագաւորացն Հայոց. և վասն զի ի կենդանութեան իւրում Աշոտ ոչ մտաւ ի քաղաքն Անի մինչև յօր մահուն իւրոյ, զի յայժ երկնչէր Յովհաննէս ի յԱշոտոյ, զի էր այր քաջ և հզօր։ Եւ եղև զկնի մահուանն Աշոտոյ Թուլամորթեցան զօրքն Հայոց և ատեցին զարուեստս պատերազմի, մտին ընդ լծով ծառայութեան ազգին Հառոմոց, նստան ի դինարբուսն, սիրեցին զբարբուտ և զերգս գուսանաց. հնոսյան ի միաբանութենէ միմեանց և յօգնութիւն իրերաց ոչ հասանէին. և երկիր՝ զոր սրով անցանէր, նոքա լալականութիւն առնէին և զմիմեանց զկատարածն լային և զմիմեանս մատնելով ի սուր տանն Յունաց. և եղևն աւերիչք ազգականաց իւրեանց և ի կողմն հակառակաց իւրեանց դարձան։

Յայսմ ժամանակիս զօրաժողով արար մեծ ամիրայն Պարսից Ապուսուար իբրև հարիւր չիսուն հազար՝ զազգսն անօրինաց և մեծաւ սրամտութեամբ յարձակեալ գայր ի վերայ քրիստոնէից և դառնաշունչ բարկութեամբ մտաւ յաշխարհն Աղուանից ի գաւառն Դաւթի Անհողին և բազում վիշտս էած հաւատացելոց. և Դաւիթ երկուցեալ ի բազմութենէ զօրաց այլազգեացն ոչ ելանէր ի պատերազմ։ Իսկ անօրէնն Ապուսուար էառ բազում գաւառս և թիմաբերդս չորս հարիւր. և տարի մի կացեալ անդ արար իւր հնազանդ զմեծ մասն աշխարհին և կամեցաւ գալ ի վերայ Դաւթի. յայնժամ անճարեալ Դաւթի և յուղարկէր առ թագաւորն Յովհաննէս, որ նստէր յԱնի, և ասէր՝ թէ «էառ Ապուսուար զամենայն գաւառս Հայոց աշխարհիս և գայ ի վերայ իմ, և եթէ ինձ ոչ օգնէք, երթամ իւր ի հնազանդութիւն, և լինիմ իւր առաջնորդ և խաւար ածեմ գաւառիդ Շիրակայ»։ Եւ լուեալ զայս Յովհաննէս, յուղարկէր Դաւ-

լով, գնաց բուլղարների վրա։ Սաստիկ զայրացած, նա բազմաթիվ գավառներ ավարի առավ, գերեվարեց և ջարդ տալով հասավ մինչև բուլղարների թագավորանիստ քաղաքը։ Բուլղարների զորքերը հավաքվեցին ընդդեմ հույների կայսեր։ Այդ օրը սարսափելի կոտորած եղավ. բուլղարների զորքը հաղթեց հռոմոց զորքին, փախուստի մատնեց նրան ու սրով հալածական արեց։ Այդ օրը դաշտերն ամբողջությամբ արյամբ ողողվեցին։ Միքայել կայսրը փախավ եկավ Կոստանդնուպոլիս։ Բուլղարները, հույների նկատմամբ գերակշռություն ձեռք բերելով, [նա] գրավեցին իրենց ամբողջ երկիրը և թոթափեցին հռոմների լուծը։ Բուլղար ժողովրդի մեջ սիրեց մեծ խաղաղություն[133]։

Այդ տարին վախճանվեց հայոց թագավոր Աշոտ Բագրատունին՝ Դավիթի որդին և Հովհաննեսի եղբայրը։ Նա թողեց տասնհինգամյա Դավիթ անունով մի տղա[134], Աշոտին բերեցին Անի քաղաք և թաղեցին հայոց առաջին թագավորների գերեզմանոցում։ Իր կենդանության օրոք Աշոտը չմտավ Անի քաղաք, այլ իր մահվան օրը միայն[135]. Հովհաննեսը շատ էր վախենում Աշոտից, քանզի նա քաջ և հզոր մարդ էր, Աշոտի մահից հետո հայոց զինվորները դարձան թուլամորթի, առեցին պատերազմական արվեստը, ընդունեցին հռոմների ծառայության լուծը, տարվեցին հարբեցողությամբ, և բարբուտն[136] ու գուսանների երգերը սիրեցին. նրանք դադարեցին միմյանց հետ միաբան լինելուց, և մեկը մյուսին օդնության չէր հասնում։ Սրի քաշվող երկիրն էին ողբում, մեկը մյուսի վերջն էր լալիս և միմյանց մատնում հունաց երկրի սրին։ Նրանք իրենց ազգակիցների կործանողները դարձան և իրենց թշնամիների կողմն անցան։

Այս ժամանակ պարսից մեծ ամիրա Ապուսուարը[137] շուրջ հարյուր հիսուն հազար անհավատների զորահավաք արեց և մեծ զայրույթով հարձակվեց քրիստոնյաների վրա։ Նա ավերիչ կատաղությամբ մտավ Աղվանից երկիրը, Դավիթ Անհողինի[138] գավառը և մեծ փորձանք բերեց հավատացյալների գլխին։ Դավիթը, այլազգիների հսկայական զորքից սարսափած, խուսափեց պատերազմից։ Անհավատ Ապուսուարը գրավեց բազմաթիվ գավառներ և չորս հարյուր թեմաբերդ[139]։ Մի տարի մնալով այնտեղ, երկրի մեծ մասն իրեն ենթարկեց, ապա որոշեց հարձակվել Դավթի վրա։ Դավիթը ճարահատյալ դիմեց Հովհաննես թագավորին, որ Անիում էր նստում, և ասաց. «Ապուսուարը, գրավելով հայոց երկրի բոլոր գավառները, ինձ վրա է գալիս։ Արդ, եթե ինձ օգնության չհասնեք, ես կգնամ հպատակություն կհայտնեմ նրան, կդառնամ նրա առաջնորդը և քո Շիրակ գավառը կխավարեցնեմ»։ Հովհաննեսը, լսելով

թի արս չորս հազար. նոյնպէս և յուղարկնալ ի Կապանին թագաւորն. և նա տայր նմա արս երկու հազար: Եւ այսպիսի օրինակաւ սպառնացեալ Ափխազաց թագաւորին, և նա յուղարկէր յօգնութիւն Դաւթի արս չորս հազար: Եւ ինքն Դաւիթ ժողովեալ զիւր զօրսն իբրև տասն հազար և յուղարկեաց առ կաթուղիկոսն Աղուանից և ասէր, թէ «Այս ապ անօրինացն վասն քրիստոսական հաւատոցն դան ի վերայ մեր և կամին զօրինս խաչապաշտացս խափանել և զհաւատս հաւատացելոցն Քրիստոսի չնչել. և ահա արժան է և իրաւունս ամենայն հաւատացելոց ընդդէմ սրոյ երթալ և մեռանիլ ի վերայ քրիստոսական հաւատոցն: Արդ ժողովեա զամենայն եպիսկոպոսունդ Հայոց աշխարհիդ որ յԱղուանս են և ի բանակ այսր հասիր, զի ընդ մեզ մեռանիջիք»: Զոր և արար իսկ և երկերիւր եպիսկոպոսօք գնայր Տէր Յովսէփն ի բանակն քրիստոնէից: Եւ գրեաց և ի վանորայն առ Տարսն գալ միաբան ամենայն կրօնաւորօքն ի զօրս հաւատացելոց. և ժողովեալ զամենայն քահանայս Աղուանից աշխարհին և զսարկաւագունսն և քարոզ կարդայ ընդ ամենայն գաւառսն և ասէր. «Եթէ այր իւր և կին, որ ցանկացող է մարմնոցական մահուն, ահա հասեալ եղև յայսմ ամի ի վերայ մեր. ում պիտոյ է Քրիստոս, վաղվաղակի առ մեզ հասցէ»: Եւ լուեալ զայս՝ հայր որդւովքն և մայր զտեւրօքն ի բանակն հաւատացելոցն հասին. և լցաւ գաշտն առ հասարակ անթիւ բազմութեամբ իբրև զծաս հանդերձ գառամբք: Եւ լուեալ զայս Ապուսուար՝ ծիծաղէր ի վերայ եղելոցս այս և խաղայր գայր ի վերայ զօրացն քրիստոնէից: Եւ յայնժամ հրամայեաց Դաւիթ քարոզ կարդալ եպիսկոպոսացն և կրօնաւորացն և քահանայիցն, զի ամենայն որ իւր զէն պատերազմի խաչ առցէ ի ձեռս իւր և միայն զաւետարանն Քրիստոսի և այնիւ ընդդէմ թշնամեաց սրոյն ընթացցուք: Եւ յայնժամ ամենայն բանակն խաչ և աւետարան զարձան. ահա մերձենան զօրք անօրինացն և բազմութիւն քահանայիցն կալին ընդդէմ նոցա: Իսկ Դաւիթ քան հազարաւ հասանէր ի վերայ այլազգեացն արանց բոջայ. իբրև ճակատ զճակատ հարան, ձայն բարձին քահանայական դասքն միաբան առ Աստուած լալով, որ և հնչեաց երկիրն ի ձայնէն, և ասէին. «Արի՛, Տէր, օգնեա մեզ և փրկեա զմեզ վասն անուանդ քում սրբոյ»: Իսկ զօրքն հաւատացելոցն իբրու ի ծով մխեցան ի մէջ բանակին անօրինացն, որ և ծածկեցան իսկ: Յայնժամ քահանայականն դասքն շարժեցան միաբան զքրիստոսական սուրբ նշանն և ի վերայ թշնամեացն դիմեալ յարձակեցան. և հուր սաստկապէս ցոլացեալ ի նոցանէ և նմար զզօրսն այլազգեացն. և առ հասարակ ի փա-

այդ, Դավիթն չորս հազար հոգի ուղարկեց, ապա միջնորդեց Կապանի թագավորին, որը նույնպես նրան [օգնություն] ուղարկեց՝ երկու հազար հոգի։ Դավիթը նույն ձևով սպառնաց և ափխազների թագավորին[140], որը ևս օգնություն ուղարկեց՝ չորս հազար հոգի։ Ինքը՝ Դավիթը, հավաքելով իր շուրջ տաս հազար հոգուց բաղկացած զորքը, [նամակ] ուղարկեց Աղվանից կաթողիկոսին՝ ասելով, թե «Անհավատների այս ժողովուրդը մեզ վրա է գալիս, որովհետև մենք քրիստոնյա ենք. նա ուզում է վերացնել մեր՝ խաչապաշտներիս հավատքը, բնաջնջել քրիստոնեությունը։ Արդ, անհրաժեշտ է, դա բոլոր հավատացյալների պարտքն է, [թշնամու] սրի դեմ դուրս գալ և նահատակվել հանուն քրիստոնեական հավատքի։ Դու հավաքիր Աղվանքում գտնվող հայոց բոլոր եպիսկոպոսներին և հասիր այստեղ, ճամբարը, որպեսզի մեզ հետ զոհվենք»։ Տեր Հովսեփը այդպես էլ արեց և երկու հարյուր եպիսկոպոսներով գնաց քրիստոնյաների ճամբարը։ Նա նամակ դրեց վանքերը՝ վանահայրերին, որպեսզի նրանք առանց վարանելու բոլոր վանականներով հանդերձ գան միանան հավատացյալների զորքին։ Նա հավաքեց Աղվանքի բոլոր քահանաներին և սարկավագներին, քարոզ կարդաց բոլոր դավառներում, ասելով. «Ով ուզում է կամավոր կերպով նահատակվել, տղամարդ, թե կին, այս տարի այդ բանն իրականացնելու առիթը տրված է։ Ով որ Քրիստոսի կարիքն է զգում, թող փութանակի մեզ մոտ գա»։ Լսելով դա, հայրն իր որդիներով և մայրն իր դուստրերով գնացին հավատացյալների ճամբարը։ Բովանդակ դաշտը լցվեց անհամար բազմությամբ, կարծես ոչխարների և գառների հոտով։ Ապուսուարը, իմանալով այդ մասին, ծիծաղեց և շարժվեց քրիստոնյաների զորքի վրա։ Այն ժամանակ Դավիթը հրամայեց եպիսկոպոսներին, վանականներին և քահանաներին քարոզ կարդան, յուրաքանչյուրը, որպես պատերազմի դենք, մի ձեռքում խաչը, մյուս ձեռքում Քրիստոսի ավետարանը առնեն և այդպես գնան թշնամիների սրին ընդառաջ։ Ողջ ճամբարը խաչ ու ավետարան պարձավ։ Ահա մոտեցան անհավատների դինվորները, իսկ քահանաների բազմությունը նրանց դիմացն էր։ Դավիթը քսան հազար հոգով հարձակվեց այլազգիների քաջ մարտիկների վրա։ Երբ նրանք ճակատեցին, քահանայական դասը միաբերան աղաղակեց առ աստված. «Ծ՛ո, տեր, օգնի՛ր և փրկի՛ր մեզ հանուն քո սուրբ անվան», և այդ ձայնից թնդաց երկիրը։ Հավատացյալների զորքը խրվեց անհավատների բազմությամբ ծովացած ճամբարը և ողողվեց։ Հենց այդ ժամանակ քահանայական դասը մեկ մարդու պես բարձրացրեց քրիստոնեական Սուրբ Նշանը և հարձակվեց թշնամիների վրա։ Նրանցից սաստիկ հուր ցոլաց և հարվածեց այլազգիների ռազմիկներին, որոնք գլխովին

խուստ դարձան. և զօրքն Հայոց՝ սրով զհետ նոցա, զաւուրս հինգ ահագին կոտորածով վարեցին զզօրսն այլազգեացն, որ և արեամբք ծածկեցան դաշտք և լերինք. առին և անթիւ գանձս ոսկւոյ և արծաթոյ և աւարս բազումս, և մնացեալ զօրքն Պարսից մազապուրծ մերկ և բոկ անկան յաշխարհն իւրեանց. և հռետեցաւ Աղուանից աշխարհն ի պիղծ դիակացն իւրեանց: Եւ յաւուրս երիս ամրանայր Դաւիթ ամենայն գաւառացն, զոր էառ այլազգին, և մեծաւ պարգեւօք յուզարկեաց զամենայն զօրսն, որք եկին իւր յօգնութիւն. և բաշխեր բազում ինչս յաւարէն՝ եպիսկոպոսացն և քահանայիցն և ամենայն եկելոցն առ նա և արձակեաց զնոսա. և եղև խաղաղութիւն:

Եւ յայսմ ամի ոմն անօրէն և չար իշխան յազատացն Սեւեքարիմայ գնաց առ թագաւորն Յունաց և չարաչար մատնեաց զԱտոմ և զԱպուսահլ զՍեւեքարիմայ զորդիսն և ասէր, եթէ՝ Կամին ապստամբել ի վերայ քո և յարուցանել քեզ վիշտս և հալածանս: Եւ լուեալ զայս թագաւորն Միխայէլ, հաւատաց ստախօս բանիցն և առաքեաց ի Սեբաստիա պահողութիւն իւր հնդետասան հազարօք՝ բերել զնոսա առ իւր, մի՛ փախիցեն. և հասանէր պահողութիւն զօրօքն ի Սեբաստիա քաղաքն: Եւ լուեալ զայս որդւոցն Սեւեքարիմայ, հիացեալ զարհուրեցան. և տեսեալ պահողութիւն զիմաստութիւնն ոչ էր նման նոցա, բայց նոքա երկնչէին գնալ:

Յայնժամ Շապուհ իշխանն ասէր ցԱտոմ և ցԱպուսահլ. «Կամի՞ք զի զզօրսդ Հոռոմոց ցիր և ցան ածեմ ընդ երեսս դաշտացդ»: Եւ արար զրահան եօթն կրկնակի և զարկանէր թրով ի վերայ և ի վայր հեղոյր մանր զերկաթն: Եւ ասեն որդիք թագաւորացն Հայոց. «Մի՛ եղիցի այդպէս, այլ երթամք զհետ կոչնականացդ»: Եւ առեալ զաւուրս բազումս զօրագլխին և գնացին զհետ նորա ի Կոստանդնուպօլիս. և ի մտանել ի քաղաքն զիմեցին լալով ի գերեզման թագաւորին Վասլին և զերեզման թուղթն իւրեանց ի վերայ գերեզմանին ընկենուին և ասէին՝ եթէ «Դու բերեր զմեզ յաշխարհս Հոռոմոց, և ահա մահու սպառնան մեզ: Դատ արա մեզ յոսոխէն մերմէ, ո՛վ հայր մեր»: Եւ լուեալ զայսպիսի իմաստութիւնս թագաւորն Միխայէլ՝ հիանայր յոյժ և հրամայեաց զմատնիչն կորուսանել:

Ի Հայոց առաքիս և ի թուականութեանս ամի ՆՂ մեռաւ թագաւորն Հայոց Յովհաննէս՝ եղբայրն Աշոտոյ, որդի Գագկայ, որդւոյ Աշոտոյ, որդւոյ Սմբատայ, որդւոյ Երկաթայ՝ Բագրատունի ազգաւ, և թաղեցին զնա ի քաղաքն Յանի ի գերեզմանսն առաջին թագաւորացն Հայոց: Եւ եղև իրրև լուան զայս աղգն Հոռոմոց, ժողով արարեալ թագաւորն Հո-

դիմեցին փախուստի։ Հայոց զինվորները սրամերկ հետապնդեցին նրանց և հինգ օր [շարունակ] մեծ ջարդ տալով հալածական արեցին այլազգիների զինվորներին. դաշտերն ու լեռները արյամբ ողողվեցին։ [Հայերը] տիրացան ոսկե և արծաթե անհամար գանձերի, բազում ավարի։ Պարսից [կենդանի] մնացած զինվորները մազապուրծ, մերկ ու բոբիկ հասան իրենց երկիրը։ Նրանց գարշելի դիակներից հոտեց Ազվանից երկիրը։ Երեք օրվա ընթացքում Դավիթը տիրացավ այլազգիների ձեռքն անցած բոլոր գավառներին։ Օգնության հասած բոլոր զինվորներին նա մեծամեծ պարգևներ տալով [տուն] ուղարկեց. նա բազում ինչք բաժանեց նաև եպիսկոպոսներին, քահանաներին, իր մոտ եկած բոլորին և [տուն] ուղարկեց։ Եվ տիրեց խաղաղությունը։

Այդ տարին Սենեքերիմի ազատներից մի անօրեն և չար իշխան գնաց Հունաց կայսեր մոտ և ստորաբար մատնեց Սենեքերիմի որդիներ Ատոմին և Ապուսահլին, ասելով, թե նրանք որոշել են քո դեմ ապըստամբություն բարձրացնել և քո գլխին ցավ ու փորձանք բերել։ Միքայել կայսրը հավատ ընծայեց այդ սուտ խոսքերին և տասնհինգ հազար հոգով ուղարկեց իր ակողութին[141], նրանց իր մոտ բերելու համար, որպեսզի հանկարծ չփախչեն։ Ակողութը զինվորներով հասավ Սեբաստիա քաղաքը։ Սենեքերիմի որդիները, լսելով այդ մասին, ապշեցին ու սարսափեցին։ Ակողութը տեսավ, որ մեղադրանքը իրականության չի համապատասխանում, բայց նրանք վախենում էին գնալ[142]։

Այն ժամանակ Շապուհ իշխանն[143] ասաց Ատոմին և Ապուսահլին. «Ուզո՞ւմ եք հռոմների զինվորներին ցիրուցան անեմ դաշտերի երեսին»։ Նա ղրահները յոթ տակ արեց, թրով հարվածեց և երկաթը փշրեց թափեց գետին։ Հայոց թագավորազուններն ասացին. «Այդպես չի կարելի։ Մենք կգնանք մեզ կանչողների նախից»։ Նրանք զորավարին բազում նվերներ տվեցին և նրա հետ Կոստանդնուպոլիս գնացին։ Մտնելով քաղաք, նրանք լալագին դիմեցին Վասիլ կայսեր[144] գերեզմանը, իրենց երդման թուղթը գերեզմանի վրա գցեցին ու ասացին. «Դու մեզ հռոմոց երկիրը բերեցիր, բայց ահա մահով են սպառնում մեզ։ Ազատի՛ր մեզ մեր ոսոխից, ո՛վ մեր հայր»։ Միքայել կայսրը[145] լսելով այսպիսի իմաստուն խոսքերը, շատ զարմացավ և հրամայեց մատնիչին սպանել։

Մեր հայոց 490 թվականին [11 մարտ 1041—10 մարտ 1042 թ.] վախճանվեց հայոց թագավոր Հովհաննեսը, Աշոտի եղբայրը, Գագիկի որդին՝ Աշոտի որդու, Սմբատի որդու, Երկաթի որդու, Բագրատունյաց տոհմից և նրան թաղեցին Անի քաղաքում, հայոց առաջին թագավորների գերեզմանոցում։ Այդ բանի լուրը հասավ հռոմներին, և Միքայել

ռոմոց Միխայլն և հասանէր յաշխարհն Հայոց և աւար հարկանէր զտունըն Հայոց սրով և գերութեամբ։ Վասն զի Յովհաննէս ի կենդանութեան իւրում պիր էր տուեալ Հոռոմոց՝ եթէ զկնի մահուան իմոյ Անի Հոռոմոց լինիւ, և այնու առնոյր տուրս և իշխանութիւնս ի Հոռոմոց զամս հնգետասան։ Եւ զկնի մահուանն Յովհաննիսի այր ոմն յիշխանաց տանն Հայոց, որ էր այր նենդաւոր, անուն Ագաս Սարգիս Հայկազն, ազդ առնէր Հոռոմոց և ի տուր տայր զաշխարհն Հայոց և զգանձատունն առաջին թագաւորացն Հայոց յափշտակեալ և տարաւ յԱփխազք, բերդամուտ եղեալ. և առանս բազումս էառ ընդ ձեռամբ իւրով և կամեցաւ թագաւորել ի վերայ Հայոց, զոր ոչ ընդունէին զնա ազգն Բագրատունեաց, վասն զի Հայկազն էր։

Յայսմ ամի բազում անցումն եղև տանս Հայոց ի հեռն Դաւթի Անհողինի՝ ազգապետին Յովհաննիսի Հայոց արքային։ Սա յարուցեալ ի վերայ թագաւորութեանն Հայոց և մատնեաց ի սուր և ի գերութիւն զգաւառս բազումս և զայր անցանէր զօրօք բազմօք յաշխարհն Հայոց. թողեալ զաշխարհն Ապուսահլ և գայր ի վերայ աշխարհին Հայոց. բազում նենդութեամբ և անթիւ կրակով այրեցան ի զօրացն նորա. և դարձաւ ի յԱպուսահլ յաշխարհն ի տուն իւր։

Յայսմ ամի յարեան Հոռոմք կրկնակի ի վերայ աշխարհին Հայոց՝ և առ ի չոլէ գլուխ զօրացն Հայոց, բազում տեղիք հաւանեցան Հոռոմոց, և վասն զի էր կատարած մեծ ի վերայ աշխարհին Հայոց։ Եւ յայնժամ ժողովեցան զօրք Հոռոմոց ի վերայ թագաւորաբնակ քաղաքին Անւոյ Տարիւր Հազարաց և բանակ հարկանէին ի դուռն քաղաքին Անւոյ։ Յայնժամ ժողովեցան մնացեալք զօրքն Հայոց առ մեծ սպարապետն Վահրամ Պալհաւունին և խնդրէին ելանել ի պատերազմ ի վերայ զօրացն Հոռոմոց, վասն զի զօրքն Հոռոմոց սաստիկ հայհոյութեամբ և բազում նախատանօք գային ի վերայ պատերազմել։ Յայնժամ մեծաւ սրտմտութեամբ լցեալ լինէին զօրքն Հայոց, և բարկութեամբ որպէս զգազանս զայրացեալք և առ հասարակ ելեալ ի պատերազմ արք հրեաւն Տաղար հեծեալք և ձիաւորք ընդ դուռն, որ Ծաղկոյն ասի, և որպէս զիայծակն հեզան ի վերայ զօրացն Հոռոմոց և զայնքան զՀպարտացեալ և զամբարտաւանեալ զօրսն ընդ կրունկն դարձուցանէին ի փախուստ և անողորմ ի բիրան սրոյ կոտորէին զնոսա. և Ախուրեան գետն որ գայր՝ ի յարիւն դարձաւ. և ի ձայնէ դազանացեալ զօրացն Հայոց փախստականքն ոչ կարէին փախչել, այլ կային յիմարեալք և մատնեալք ի ձեռս սրոյ։ Եւ անդ էր տեսանել զահեղ և զմեծ օրն ի վերայ զօրացն Հոռոմոց, որ ի քսան հազարէն հարիւր լինէր մնացեալ։ Յայնժամ ընդ մէջ անցեալ սրբատնեալն և մեծ սպարապետն Վահրամ Պալհաւու-

կայսրը, զորահավաք անելով, հայոց երկիրը եկավ և սրով ու գերությամբ ավերեց այն. պատճառն այն էր, որ Հովհաննեսն իր կենդանության օրոք հռոմեներին գրություն էր տվել, թե իր մահվանից հետո Անին թող հռոմեներին լինի[146]։ Դրա հիման վրա էր, ահա, որ նա հռոմեներից տասնհինգ տարի [շարունակ] ստանում էր ռոճիկ[147] և իշխանություն։ Հովհաննեսի մահվանից հետո հայոց երկրի իշխաններից մի նենգ մարդ, անունը ազատ Սարգիս Հայկազն[148], իմացրեց հռոմեներին, որպես նվեր նրանց տվեց հայոց երկիրը, հայոց առաջին թագավորների դանձարանն էլ հափշտակելով, տարավ Ափխազիա, իսկ ինքն էլ ապաստանեց բերդում։ Նա բազմաթիվ ավաններ գրավեց և ցանկացավ հայոց վրա թագավորել։ Այդ բանին չհամաձայնեց Բագրատունիների տոհմը, որովհետև Սարգիսը Հայկազն էր։

Այդ տարին հայոց արքա Հովհաննեսի աղգապետ Դավիթ Անհողինը հայոց երկրի գլխին բազում փորձանքներ բերեց։ Նա հարձակվեց հայոց թագավորության վրա և բազում գավառներ սրի քաշեց և դերեվարեց. թողնելով Աղվանից երկիրը, նա իր զորքով եկավ անցավ հայոց երկիրը։ Նրա զինվորները բազում տառապանքներ պատճառեցին, կրակ թափեցին, որից հետո [Դավիթը] վերադարձավ իր երկիրը՝ Աղվանք։

Այդ տարին հռոմեները կրկին անգամ հարձակվեցին հայոց երկրի վրա։ Հայոց զորքը հրամանատար չունենալու պատճառով բազմաթիվ շրջաններ հռոմեներին հպատակություն հայտնեցին։ Հայոց աշխարհի օրհասն էր։ Հռոմեների հարյուրհազարանոց զորքը համախմբվեց ընդդեմ թագավորաբնակ Անի քաղաքի և բանակեց նրա դարպասի առջև։ Հայոց մնացած զորքը հավաքվեց մեծ սպարապետ Վահրամ Պահլավունու[149] շուրջը, խնդրելով նրան պատերազմի դուրս գալ հռոմոց զորքերի դեմ, որովհետև նրանք մեծապես անարգելով ու նախատելով էին դիմում պատերազմի։ Հայոց զորքերը, մեծ զայրույթով ու բարկությամբ լցված, գազազած գազանների նման, բոլորը միասին՝ երեսուն հազար հետևակ և ձիավոր, դուրս գալով Ծաղկոց կոչվող դարպասով, դիմեցին մարտի և որպես կայծակ թափվեցին հռոմոց զորքերի գլխին, անխնա սրի քաշելով և կոտորելով՝ այնքան գազազած ու ամբարտավանացած զորքերին փախուստի մատնեցին։ Ախուրյան գետը արյուն դարձավ։ Հայոց գազազած զորքերի աղաղակից սարսափած փախուստականները չէին կարողանում փախուստի դիմել. խելակորույս գամվել էին տեղում ու սրահար էին լինում։ Տեսնելու բան էր հռոմոց զորքերի համար սարսափելի և օրհասական այդ օրը. քսան հազարից միայն հարյուր հոգի կենդանի մնացին։ Դրա վրա սրբակրոն, մեծ սպարապետ Վահ-

նին և բազում ողոքանօք աղաչէր պատգամաւորութեամբն առ զօրսն Հայոց և հազիւ կարաց հաւանեցուցանել՝ որ զօրքն Հոռոմոց սակաւիկ յետ ելանէին և այնու զերծեալք լինէին զօրքն Հոռոմոց որք մնացին. և այլ ոչ եւս խնդրեցին զօրքն Հոռոմոց զքաղաքն Անի, այլ զարձան ամօթով և գնացին ի Կոստանդնուպոլիս առ Միխայլն:

Յայնժամ զարթուցեալ մանուկ մի ութ և տասն ամաց՝ Գագիկ անուն, ի նոյն շառաւիղէն Բագրատունեաց, որդի Աշոտոյ արքային, որդւոյ Գագկայ՝ որդւոյ Աշոտոյ՝ որդւոյ Աբասայ՝ որդւոյ Սմբատայ՝ որդւոյ Երկաթայ: Եւ մանուկս այս Գագիկ էր յոյժ իմաստուն և երկիւղած և աստուածասէր. և ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս և օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց շնորհօք Հոգւոյն սրբոյ և հրամանաւ մեծի իշխանին, որով և օծեաց զնա սրբազնեացն մեծն Մարգէն, որ էր ազգաւ հայկազնեան և հայրենիօք Պալհաւունի, որոյ անուն ըստ նախնոյն իւրոյ Գրիգոր Ճանաչի, և էր յաղթէն սրբոյն Գրիգորի: Սա երկրորդ Սամուէլ հրեաեալ, որ էօծ զԴաւիթ արքայ ի վերայ տանն Իսրայէլի. սա թագաւորեցոյց զԳագիկ ի վերայ տանս Հայաստանեայց, յոյժ բարեպաշտ և աստուածասէր և անպարտելի յիմաստասիրական ջոկսն. սա ջանայր իմաստութեամբն իւրով հաստատել զաթոռ թագաւորութեանն Հայաստան ազգիս և հայցէր յԱստուծոյ օժանդակ լինել նմա և ազգին Պալհաւունեաց:

Յայնժամ Գագիկ ի ձեռն զօրաց իւրոց ըմբռնեալ զՍարգիս և ի խոշտանգանս ազգի ազգի արկանէր զնա, մինչեւ յոչ կամացն նորա տիրանայր բերդից և գաւառաց և քաղաքաց և ամենայն գանձատանն Հայրենի իւրոյ, զոր յափշտակեաց: Յայնժամ կամօք բարերարին Աստուծոյ խաղաղանայր զօրքն Հոռոմոց, և այլ ոչ յաւելան ի խնդրել զքաղաքն Անի և ոչ այլ պատերազմ յարուցանել ընդ Հայք: Յայնժամ եղեւ յաջողեալ երկու ամ թագաւորութիւնն Գագկայ շնորհօք Հոգւոյն սրբոյ: Իսկ յաւուրս յայսոսիկ ժողով արար թագաւորն Գագիկ և գնայր խաղայր ընդ աշխարհս հայրենեաց իւրոց և զամենայն անհնազանդսն ի հնազանդութիւն ածէր և զբշնամիսն մեծաւ բարկութեամբ դարձուցանէր և երթեալ բազմութեամբ զօրօք, բանակ հարկանէր յԱյրարատեան գաւառին՝ առնուլ զվրէժխնդրութիւն յազգէն հարաւայնոյ: Յայնժամ սպառազինեալ մեծի իշխանին Գրիգորի որպի Վասակայ Պալհաւունւոյ և երթեալ զօրօք բանակս հարկանէր ի վերայ գետոյն Հուրաստանի մերձ ի Բջնի մեծի ամրոցին: Յայնժամ զօրք այլազգեացն գան ի վերայ զօրացն Հայոց. և եղեւ պատերազմ սաստիկ, և զօրքն Հայոց յաղթեցին զօրացն Պարսից,

րամ Պահլավունին միջամտեց, մարդիկ ուղարկեց հայոց զինվորների մոտ, շատ աղաչեց ու պաղատեց նրանց և հազիվ կարողացավ համոզել, որ թույլ տան [կենդանի մնացած] սակավաթիվ հոռոմ զինվորներին գնալու։ Հոռոմոց կենդանի մնացած զինվորներն ահա այդպիսով փրկվեցին։ Այս բանից հետո հոռոմոց զորքերը այլևս չպահանջեցին Անի քաղաքը, այլ խայտառակ եղած դարձան գնացին Կոստանդնուպոլիս, Միքայելի մոտ։

Այն ժամանակ բարձրացավ Գագիկ անունով տասնութ տարեկան մի պատանի, Բագրատունիների տոհմից, Աշոտ արքայի որդին՝ Գագիկի որդին, Աշոտի որդին, Աբասի որդին, Սմբատի որդին, երկաթի որդին։ Պատանի Գագիկը շատ խոհեմ, երկչուղած և աստվածասեր էր։ Հայոց բոլոր նախարարները, հավաքվելով տեր Պետրոս հայրապետի մոտ, սուրբ Հոգու շնորհիվ և աղոթքյամբ հայկազնյան, Պահլավունիների տոհմին պատկանող, իր նախահոր անունով Գրիգոր կոչվող և սուրբ Գրիգորի ազգից սերող մեծ իշխանի հրամանով [որ և օծեց նրան սրբակենցաղ մեծն Մարգեն][150], Գագիկին օծեցին համայն Հայաստանի թագավոր։ [Գրիգորը] հանդես եկավ որպես երկրորդ Սամուել, որ Դավթին օծեց Իսրայելի արքա։ Նա Գագիկին Հայաստանի վրա թագավորեցրեց, շատ բարևպաշտ և աստվածասեր մի մարդու, իմաստասիրական շրջաններում ընպարտելի։ Նա մեծ խոհեմությամբ ջանք էր թափում ամրապնդել Հայաստանի թագավորական գահը և խնդրում աստծուն, որ իրեն ու Բագրատունյաց տոհմին նեցուկ կանգնի։

Այն ժամանակ Գագիկը իր զինվորների օգնությամբ ձերբակալեց Սարգսին և բազմապիսի խոշտանգումների ենթարկեց, մինչև որ, հակառակ նրա կամքին, տիրացավ իր հայրենի բերդերին, գավառներին, քաղաքներին և ողջ գանձատանը, որոնք հափշտակել էր նա։ Այն ժամանակ բարերար աստծո կամքով հոռոմոց զորքը խաղաղվեց. հոռոմներն այլևս չպահանջեցին Անի քաղաքը և հայոց դեմ նոր պատերազմի չդիմեցին։ Սուրբ Հոգու շնորհքով, հաջողությամբ անցան Գագիկի թագավորության երկու տարիները։ Այդ օրերին Գագիկ թագավորը, զորահավաք անելով, շարժվեց գնաց իր հայրենի շրջանները և բոլոր անհնազանդներին հնազանդեցրեց, թշնամիներին սաստիկ զայրույթով [երկրից] դուրս շպրտեց և բազում զորքերով բանակեց Այրարատյան գավառում՝ հարավային ազգից վրեժ լուծելու նպատակով։ Այն ժամանակ մեծ իշխան Գրիգորը, Վասակ Պահլավունու որդին, սպառազինվեց և զորքի գլուխն անցած գնաց ու բանակեց Հուրաստան[151] գետի ափին, Բջնի մեծ ամրոցի մոտ։ Այն ժամանակ այլազգիների զորքը եկավ հայոց զորքի վրա. տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ, և հայոց զոր-

և արարին կոտորած մեծ ի վերայ Հուրաստանի գնաց և զիշխանս թուրք զօրացն ձերբակալ արարին, և մնացեալքն փախստական գնացին ի Պարսիկս։

Յայնժամ յազդմանէ չարին կրկին շարժումն լինէր Յունաց դաւաճանութեամբ և կեղծաւորութեամբ սուտ քրիստոնէին Դաւիթ Անհողինին, զոր հարկ եղև մեզ զանուն նորա փոխել և ասել թէ Դաւիթ, վասն զի ի վիհն տառապանաց էած զաղգս քրիստոնէից. և ինքն հոգւովն տանջեալ եղեւ ի բանսարկուէն և ի վիհն կորստեան յափրենից տանջանացն մատնեալ լինէր։

Յայսմ ամի զօրաժողով արար թագաւորն Հոռոմոց Միխայէլն զամենայն աշխարհն Յունաց և այլ ի Հայոց զօրացն, որք ընդ Հոռոմոց իշխանութեամբն էին՝ Սեբաստիա և Տարօն և ամենայն Վասպուրական. և անթիւ բազմութեամբ հասանէր թագաւորն Միխայէլ յարեւմուտք և զերի առեալ զամենայն աշխարհն Դթաց և զապստամբան ածէր ի հնազանդութիւն և արար իւր հնազանդ զամենայն աշխարհն և դարձաւ ի Կոստանդնուպօլիս. և մերձ ընդ մերձ մեռանէր թագաւորն Միխայէլ։

Եւ թագաւորեաց ի վերայ Հոռոմոց փոխանակ նորա քաւեր որդին իւր, որ Կեսառոսն էր, և զամիսս չորս կալեալ զթագաւորութիւնն և այլ ոչ եւս, վասն զի խորհեցաւ խորհուրդս չարս և անձամբն անձին իւրոյ որոգայթս պատրաստեաց, ըստ այնմ եթէ՝ «Որ փորէ խորխորատ ընկերին իւրոյ, անձամբ իւրով լցցէ զնա»։ Իսկ սորա այնչափ հպարտացեալ՝ որ զդործն իւր ոչ իմացաւ. վասն զի զկիւրազոյն զդուստրն Կոստանդեայ կայսերն իբրև զբոզ խուզել համարձակեցաւ և կապանօք աքսորեաց զնա ի կղզւոջ. և զպատրիարգն Կոստանդնուպօլսի բռնեաց և եդ զնա կապանօք ի բանդ, վասն զի կամեցաւ ազգաւն իւրով ժառանգել զաթոռ թագաւորութեանն, վասն զի էին ազգք պիղծք և անօրէնք և ապականիչք աշխարհի։ Եւ յետ աւուրց ինչ օգնութիւն հասանէր Յաստուծոյ պատրիարգին, և այլափոխեալ զինքն զերծեալ ի կապանաց բանդին և փախստական լեալ անկանէր ի սուրբն Սոփի և շարժեալ զամենայն քաղաքն Կոստանդնուպօլսի ի վերայ Կեսառոսին, և եղև ահագին պատերազմ ի մէջ քաղաքին Կոստանդնուպօլսի։ Եւ լինէր յայնմ աւուր սաստիկ պատերազմ և կոտորած ի յերկուց կողմանցն և յարեան ճապաղին լինէր ամենայն քաղաքն, և յաւուրն յայնմիկ կայր սուրբն Սոփի ի մէջ բազում արեանց. և յաղթեաց պատրիարքն Կեսառոսին, կալան զնա և զաչսն նորա խաւարեցուցին և զազգին իւրոյ զամենեցուն տունն հիմն ի վեր արարին և զթագուհին զկիւրազոյն մեծաւ փառաւորութեամբ դարձուցին ի Կոստանդնուպօլիս։

Յայսմ ամի սպանաւ մեծ իշխանն Հայոց Խաչիկ և տղայ որդի նո-

քը հաղթեց պարսից զորքին, Հուրաստան գետի ափին մեծ ջարդ տվեց և թուրք զորքերի հրամանատարներին գերեց[152]: Մնացածները վախուստի դիմելով գնացին Պարսկաստան:

Այն ժամանակ հույները չարի ազդմամբ, սուտ քրիստոնյա Դավիթ Անհողինի նենգությամբ և դավաճանությամբ, նորից ոտքի ելան: Մենք ստիպված եղանք փոխել նրա անունը և դնել Դավիճ, որովհետև նա մեր քրիստոնյա ծողովրդին տառապանքների վիհը գլորեց: Սակայն բանսարկուն նրա հոգին էլ տանջեց և մատնեց կորստյան վիհում և հավիտենական խոշտանգումներին:

Այդ տարին հոռոմոց կայսր Միքայելը հունաց բովանդակ երկրում զորահավաք կատարեց, այդ թվում և հոռոմոց տիրապետության տակ գտնվող հայերի զորքերից՝ Սեբաստիայում, Տարոնում և ամբողջ Վասպուրականում ու անհամար բազմությամբ գնաց արևմուտք, գերեվարեց գոթերի հսկայն երկիրը, ասլստամբներին հնազանդեցրեց. ամբողջ երկիրն իրեն ենթարկելով, վերադարձավ Կոստանդնուպոլիս: Շատ չանցած Միքայել կայսրը վախճանվեց:

Նրա փոխարեն հոռոմոց վրա թագավորեց նրա քրոջ որդին, որ կեսար էր[153]. նա ընդամենը չորս ամիս թագավորեց, ոչ ավելի, որովհետև նենգավոր մտադրություններ ուներ և անձամբ իր համար որոգայթ պատրաստեց համաձայն ասացվածքին, որ «Ով ընկերոջ համար փոս փորի, ինքը կընկնի մեջը»: Նա այնքան մեծամտացավ, որ չափն ու սահմանն անցկացրեց. հանդգնություն ունեցավ Կոստանդին կայսեր աղջկան՝ կիրա Զոեին, պոռնկի նման խուզել և շղթայակապ մի կղզի աքսորել: Նա ձերբակալեց նաև Կոստանդնուպոլսի պատրիարքին[154] և շղթայակապ բանտ նետեց, քանզի [կեսարը] ցանկանում էր կայսերական գահը իր տոհմին ժառանգել, իսկ նրա տոհմը պիղծ էր, անօրեն և երկրի խառնակիչ: Մի քանի օր անց պատրիարքին օգնության հասավ աստված, որ, կերպարանափոխելով նրան, ազատեց բանտի կապանքներից: Նա, փախչելով, իրեն գցեց Սուրբ Սոֆիայի տաճարը և բովանդակ Կոստանդնուպոլիս քաղաքը կեսարի դեմ ոտքի հանեց: Այդ օրը Կոստանդնուպոլիս քաղաքում կատաղի պատերազմ եղավ. երկու կողմից շատերն սպանվեցին, ամբողջ քաղաքը և Սուրբ Սոֆիան արյամբ ողողվեցին: Պատրիարքը հաղթեց կեսարին: Նրան ձերբակալեցին, աչքի լույսը խավարեցրին, բոլոր ազգականների տները հիմնահատակ քանդեցին, իսկ կայսրուհի կիրա Զոեին առոք-փառոք Կոստանդնուպոլիս վերադարձրին:

Նույն տարին Վասպուրական գավառում սպանվեցին հայոց մեծ

բա Իշխան անուն՝ ի Վասպուրական գաւառին։ Ժողովեցան Հեր և Սամուատ և ասպատակ արարին զԲուռնական գաւառն. և համբաւն հասանէր առ Խաչիկ, որպէս թէ զօրքն այլազգեաց մտին ի գաւառն քո։ Եւ նա էր այր քաջ և յաղթող ի պատերազմօղ, յաղգէ ի վերոյն յառիւծ ջոկէ. բայց ծերացեալ էր և թողեալ զգործ պատերազմին և հառաչելով ապաշաւէր, քանզի աւագ որդին նորա քաջն Հասան և ՃՆճղուկն հանդերձ զօրօքն ի յարեւմուտքն էին զհետ Թագաւորին Միխայլի։ Եւ յայնժամ իշխանն Հայոց Խաչիկ ոչ կարաց համբերել սրտին, յարուցեալ եօթանասուն արամբք հասանէր այլազգեացն, և զորդին իւր ի տանն արգելական տարաւ զԻշխան անունն, զի տղայ էր հնգետասնամեայ։ Եւ իբրեւ հասաւ Խաչիկ այլազգեացն, տեսաւ բազում զօրս։ Զայն ետ առանց իւրոց և ի պատերազմ մտանէր և բախէր սաստկապէս զայլազգիսն և յերկիր բաւալեցուցանէր։ Եւ ահա տեսանէր զի տղայ որդի նորա զերծեալ լինէր յարգելանոցէն և գայր ի պատերազմ. իբրև ետես Խաչիկ՝ բեկաւ սիրտ նորա, քանզի տղայ էր և դեղեցիկ. և գայր Իշխան անունն իբրեւ զկորիւն առիւծոյ և ուժգին բախէր զպատերազմն. և հասեալ Խաչիկ կալաւ զնա և յուզարկէր ի տուն. իսկ նորա զերծեալ մտանէր ի պատերազմ և առ տխմարութենանն քաջապէս մտանէր։ Եւ իմացան զնա՝ թէ որդի առն քաջին է, փակեցին զնա ի մէջ և կալան և սպանին։ Եւ տեսեալ Խաչիկն՝ բեկաւ ողն նորա, և անկաւ առտեղն ի ձեռաց նորա. և տեսեալ զայն զօրաց այլազգեացն՝ դիմեցին ի վերայ նորա, կալան զնա և սպանին. և մնացեալքն փախստական գնացին ի տունս իւրեանց։ Եւ զկնի առտուց ինչ գային որդիք Խաչիկայ յարեւմտից. և լուեալ նոքին զմահն Հօրն իւրեանց և զտղայ եղբօրն, գային սեւ զգեստիւք և լացին բազում լալիւնս։ Եւ յայնժամ Հասան կոչեաց առիս մի Քուրթ, որ էր իւր սահմանակից, և տայ նմա հազար դահեկան և ասէր. «Մոտ ի Հեր և ի Սաղամաստ, և առ՝ թէ Բուռնեան և ամենայն աշխարհն անմարդ է, զի՞ կայք պարապ. բազում հօտս ոչխարաց և ծառայս ընդ վայր շրջին»։ Եւ արար առիսն այնպէս։ Եւ ժողովեցան այլազգիքն արս հնգետասան հազար, եկին մտին ի նոյն տեղին. և գայր առիսն և պատմեաց Հասանայ և ՃՆճղուկին. և ժողովեալ Հասանայ զօրս իւր արս հինգ հազար և մեծաւ զայրացմամբ իբրեւ զխոցած գազան հասանէր ի վերայ բանակի անօրինացն։ Եւ ձայն տուեալ Հասան արտաւարից գոչմամբ ի ճակատ այլազգեացն և ասէր. «Ո՞ւր է այրն այն, որ եսպան զհայրն իմ զխաչիկ. յառա՛ջ եկեսցէ»։ Եւ ահա գայր մի ոմն յայլազգեացն սեաւ մի և հզօր, և ձայնեալ ասէր՝ «Ես եմ, որ սպանի զառիւծն զխաչիկ, և ահա իւր պատերազմու ձին և զգեստն և իւր նշանակն և Քուրն, զոր ունիմ ես»։ Եւ տեսեալ Հասանն որդի նորա ելաց և հանեալ

իշխան Խաչիկը և նրա մանկահասակ որդին՝ Իշխանը։ Հերի և Սալմաստի [այլազգիները], հավաքվելով, ավարի էին առել Թոռնևան գավառը։ Այդ բանի լուրը հասել էր Խաչիկին, թե այլազգիների զորքը մտավ քո գավառը։ Նա քաջ մարդ էր, պատերազմներում՝ հաղթող, առյուծի ծնունդ, սակայն ծերացել էր և թուղել պատերազմական գործը։ Նա հառաչում էր, ափսոսում, որ իր որդիներ քաջ Հասանն ու Ճնճղուկը[155] զորքերով հանդերձ Միքայել կայսեր հետ Արևմուտք էին գնացել։ Դրա վրա հայոց իշխան Խաչիկը չկարողացավ համբերել և յոթանասում հոգով հարձակվեց այլազգիների վրա, իսկ Իշխան անունով որդուն այն պատճառով, որ տասնհինգամյա մի տղա էր, նա փակեց տանը։ Երբ Խաչիկը հասավ այլազգիներին, տեսավ, որ [նրանք] մեծաթիվ են, բայց կոչ անելով իր մարտիկներին, կռվի բռնվեց, ուժգին հարվածեց նրանց և գետին տապալեց։ Այդ պահին նա տեսավ, որ իր տղան, փակված տեղից փախչելով, պատերազմի է գալիս։ Խաչիկը սրտանկոտոր եղավ, որովհետև տղան դեռ փոքր էր և գնդնցիկ։ Ահա Իշխանը իբրև առյուծի կորյուն էկավ և մեծ ավյունով մտավ մարտի մեջ։ Խաչիկը նրան բռնեց և տուն ուղարկեց, բայց նա նորից փախավ և դիմեց պատերազմի, բայց լինելով անփորձ, անզգույշ վարվեց։ Երբ այլազգիներն իմացան, որ նա քաջ [Խաչիկի] որդին է, նրան շրջապատեցին, բռնեցին և սպանեցին։ Խաչիկի մեջքը կոտրվեց՝ տեսնելով այդ բանը, սուրը ձեռքից ընկավ։ Այլազգիների զինվորները տեսնելով դա, հարձակվեցին, ձերբակալեցին նրան և սպանեցին. մնացածները, փախուստի դիմելով, գնացին իրենց տները։ Մի քանի օր հետո Արևմուտքից ժամանեցին Խաչիկի որդիները։ Լսելով իրենց հոր և մանկահասակ եղբոր մահվան մասին, սև հագան և աղիողորմ ողբացին։ Այն ժամանակ Հասանը կանչեց մի քուրդ ոսկիս, որ իր դրացին էր, նրան տվեց հազար դահեկան և ասաց. «Մտիր Հեր և Սալմաստ և ասա, թե Թոռնևանում և բովանդակ շրջանում մարդ չի մնացել, ի՞նչ եք պարապ նստել։ [Այնտեղ] ոչխարների բազմաթիվ հոտեր և ծառաներ [անտերունչ] թափառում են»։ Ոսկիսն այդպես էլ արեց։ Հավաքվեց շուրջ տասնհինգ հազար այլազգի, որոնք եկան մտան նշված վայրը։ Ոսկիսը այդ բանն իմացրեց Հասանին և Ճնճղուկին։ Հասանը հավաքեց իր հինգ հազար զինվորներին և սաստիկ կատաղությամբ, խոցված գազանի պես հարձակվեց անհավատների ճամբարի վրա։ Հասանն արտասվալից ձայն տվեց այլազգիներին և ասաց. «Որտե՞ղ է իմ հոր՝ Խաչիկին սպանողը, թող առաջ գա»։ Դուրս եկավ մի սևամորթ, հզոր այլազգի և ձայն տալով ասաց. «Ես եմ առյուծ Խաչիկին սպանողը, ահա, ինձ մոտ են նրա պատերազմական ձին, նրա զգեստը, նրա դրոշակը և թուրը»։ [Խաչիկի] որդի Հասանը,

զթուրն ի պատենիցն՝ որպէս զառիծ հասանէր ի մէջ այլազգեացն և հարեալ գնա՝ ընդ երիվուս պատառեաց, յերկիր բնկենայր և առեալ զձին և զնշանակն անվնաս կանէր: Այսպիսի օրինակաւ ձայն բարձեալ Հասանայ Ճնճղուկն և ասէ. «Մի՞վ է, որ նոքան զերդբայրն իմ զԻշխան անուն. եկէք յատենէ մի տեսիլ գնա»: Եւ գայր Գաւրսիլ մի քաջ, ձայն տուեալ և ասէր. «Ես եմ, որ սպանի զԻշխան անունն, և ահա իւր սպիտակ ձին և իւր վառ նշանակն և թուրն»: Եւ որպէս կայծակն Հասաւ Ճնճղուկն ի վերայ նորա և սատակեաց գնա և առեալ զձին և զնշանակն գայր առ Հասան. և ձայն տուեալ Հասան զօրացն և քաջապէս բախեալ ի պատերազմ՝ զարձուցին ի փախուստ և կոտորեցին ի նոցանէ արս չորս հազար. և զարձան խաղաղութեամբ և մեծաւ ուրախութեամբ և փոխեցին զսև զգեստն իրեանց:

Իսկ ի բարձրանալ Թուականութեանն Հայոց ՆՀԲ թագաւորեաց ի վերայ Հոռոմոց Մանոմախն, որ ասէին անուն Կոստանդին: Յայսմ ամի եղեւ պատերազմ սաստիկ ի վերայ Հոռոմոց, զի իշխանն Մանիակ, այն որ յառաջ էառ զԼուձա քաղաք, զօրաժողով արարեալ ի վերայ Մանոմախին և կատեալ թագ ի գլուխն և արար ժողով զամենայն արեւմուտս և օթևական գալեալ իւր գաշխարհն Հռոմայեցոց. և յաղէ և յերկիւղէ նորա ժողովեցան առ նա ամենայն արեւմուտք, վասն զի էր յաղթանդամ և քաջ ի պատերազմ: Յայնժամ թագաւորն Մանոմախն արար ժողով զամենայն ազգն Յունաց և գայլս ի զօրաց Հայոց աշխարհին և յարուցեալ գնաց յաշխարհն արեւմտից ընդդէմ Մանիակայ՝ որ ի ձեռն քաջութեան իւրոյ խնդրէր զաթոռ թագաւորութեանն. և էր երկիւղ մեծ ի վերայ զօրացն Հռոմոց: Իսկ յառաջ քան զխառնել պատերազմին՝ բարկութիւնն Աստուծոյ Հասանէր ի վերայ արեւմտից զօրաց, և յաղթողն Մանիակ յանկարծամահ լինէր, և բարձաւ չարն ի միջոյ և եղեւ խաղաղութիւն մեծ. և ամենայն ազգաստամբքն փախեան, և զոմանս հնազանդեցոյց, և թագաւորն դարձաւ ի Կոստանդնուպոլիս:

Յայսմ ժամանակիս սկսաւ անօրէնն Սարջիս յառաջ բերել զչար նենգութիւնն իւր և ազդ արարեալ Մանոմախին և ասէր, եթէ «Կուշես առ քեզ զԴագիկ ի Կոստանդնուպոլիս սիրոյ պատճառանօք և յայնժամ խաբէութեամբ առցես ի նմանէ զքաղաքն Անի»: Եւ լուեալ զայս թագաւորն Մանոմախ, ուրախ լինէր յոյժ, բուսաւ ի սիրտ նորա բոյս չարութեան առ ի բառնալ զթագաւորութիւնն Հայոց: Եւ զրկաց Թուղթ առ Դադիկ արքայ Հայոց հանդերձ մեծամեծ երդմամբ և այնչափ մոլեգնեալ՝ մինչեւ զքրիստոսական աւետարանն և զնշանն սուրբ խաչին Քրիստոսի մեջնորդս և երաշխաւորս յուղարկեալ ի Հայք և այսպիսի օրինակաւ

տեսնելով դրանք, լաց եղավ. պատյանից քաշելով թուրը, նա առյուծի պես խուժեց այլազգիների մեջ և, հարվածելով նրան, երկու կտոր արեց, դետին տապալեց։ Առնելով [Խաչիկի] ձին և դրոշակը, նա անվնաս դուրս եկավ։ Հասանի նման գոչեց և ճնճղուկը ու ասաց. «Ո՞վ է իմ Իշխան անուն եղբորս սպանողը, թող ասպարեզ գա տեսնեմ նրան»։ Դուրս եկավ մի քաջ պարսիկ, որ ձայն տալով ասաց. «Ես եմ Իշխանին սպանողը, ահա նրա սպիտակ ձին, նրա դրոշակը և թուրը»։ Ճնճղուկը կայծակի պես նրա վրա ելացավ, սատկացրեց նրան և, առնելով ձին և դրոշակը, եկավ Հասանի մոտ։ Հասանը ձայն տվեց զինվորներին և, արիաբար մարտ տալով, այլազգիներին փախուստի մատնեց։ Նրանցից չորս հազար հոգու կոտորեցին, որից հետո խաղաղությամբ ու մեծ ուրախությամբ վերադարձան և փոխեցին Իրենց սգավորի զգեստները։

Հայոց 492 թվականի [11 մարտ 1043—9 մարտ 1044 թ.] սկզբին Հռոմոց վրա թագավորեց Մոնոմախը, որի անունը Կոստանդին էր[156]։ Այն ժամանակ Հռոմոց մեջ սաստիկ պատերազմ եղավ։ Մանիակ Իշխանը, նա, ով անցյալում գրավել էր Ուռհա քաղաքը, զորահավաք անելով [դիմեց] Մոնոմախի դեմ։ Մանիակը իր գլխին թագ կապեց, զորահավաք կատարեց բովանդակ արևմուտքում, և Հռոմայեցվոց երկիրը[157] իրեն սատար դարձրեց։ Նրա վախից և սարսափից (նա հսկա էր և քաջ պատերազմող) ամբողջ արևմուտքը նրա կողմն անցավ։ Իսկ Մոնոմախը զորակոչեց ողջ հույն ժողովրդին ու հայոց աշխարհի զինվորներին և վեր կենալով գնաց արևմուտք՝ Մանիակի դեմ, որը, իր քաջության վրա ապավինելով, պահանջում էր թագավորական գահը։ Հռոմոց զինվորները ահ ու դողի մեջ էին։ Բայց նախքան մարտն սկսվելը, արևմտյան զորքերի վրա խոյացավ աստծո ցասումը. հաղթող Մանիակը հանկարծամահ եղավ. չարը վերացավ մեջտեղից, և տիրեց կայուն խաղաղություն։ Բոլոր ապստամբները փախուստի դիմեցին, որոնցից մի մասին կայսրը հնազանդեցրեց ու վերադարձավ Կոստանդնուպոլիս։

Այս ժամանակները անօրեն Սարգիսը[158] սկսեց երևան բերել իր նենգությունը. նա խորհուրդ տվեց Մոնոմախին և ասաց. «Եթե բարեկամության պատրվակով քեզ մոտ՝ Կոստանդնուպոլիս հրավիրես Գագիկին[159], ապա խաբեությամբ դու կկարողանաս նրա ձեռքից խլել Անի քաղաքը»։ Մոնոմախ կայսրը, լսելով այդ, շատ ուրախացավ. նրա սրտում ծլեց չարության հունդը՝ վերացնել հայոց թագավորությունը։ Նա հայոց Գագիկ արքային մեծամեծ երդումներով հաստատված մի նամակ գրեց։ Կայսրն այն աստիճան էր ցնորվել, որ որպես միջնորդ և երաշխիք Հայաստան ուղարկեց նույնիսկ Քրիստոսի ավետարանը և

կոչէր զթագաւորն Հայոց վասն սիրոյ և տհաւութեան՝ եւ լուեալ զայս՝ Գագիկ ոչ էած յանձն դնալ զհետ ատութեանն, վասն զի գիտէր զՀոռոմոց նենգութիւնն: Յայնժամ նենգաւորն Սարգիս և այլ որ յազատացն յառաջ մատեան, որք բանատուր էին առ Մոնոմախան, և քաջալերէին զնա գնալ և ասէին. «Ո՛վ թագաւոր, վասն է՞ր երկնչիս և ոչ գնաս վասն այսպիսի երդմանցս և միջնորդութեամբ Աւետարանիս և սրբոյ Նշանիս Քրիստոսի. և յաղագս մեր մի՛ երկնչիր, զի ահա անձինք մեր մեռանին ի վերայ քո»: Եւ կացուցին միջնորդս զՏէր Պետրոս և զարարին երդմունս ահաւիկս յաւուր յայնմիկ. և բերին զսուրբ խորհուրդն մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ և Թանային զդրիչս յարիւն Կենարարին, և զարարին երդման զիր Հայրապետին և ամենայն իշխանքն Հայոց. և յայնժամ գնաց Գագիկ արքայն Հայոց ի Կոստանդնուպոլիս առ թագաւորն Մոնոմախան: Եւ ամենայն քաղաքն բախեալ ելանէին ընդ առաջ Գագկայ Հայոց արքային մեծաւ փառաւորութեամբ և տարան զնա առ թագաւորն՝ որպէս վայել է թագաւորի, և առաւել քան մեծարեաց զնա Մոնոմախան: Յայնժամ առաւաւոտուց նենգաւորքն որք զարհամարն Աստուծոյ կատեցին զկրօնսն սոսկալի, առաքեն քառասուն բանալիս զքաղաքին Անւոյ առ թագաւորն Մոնոմախան և ի հետ թուղթ՝ թէ Անի քաղաքն և ամենայն արուարձն քեզ եղիցի: Եւ կոչեաց թագաւորն զԳագիկ և զբանալիս տանն և զթուղթն առաջի նորա եդեալ՝ և ասէր ցԳագիկ, եթէ զԱնի և զամենայն արուարձ եատուն ի ձեռս իմ: Եւ ծանեալ Գագիկ զնենգութեան գործն, յոգւոյ եհան արտասուօք և ասէր. «Դա՛տ արասցէ Քրիստոս ընդ իս և ընդ նենգաւորսն իմ»: Եւ ասէր Գագիկ ցՄոնոմախան, եթէ «Տէր և թագաւորն ես եմ տանն Հայոց. ահա ես ոչ տայ զՀայք ի ձեռս քո, զի դու զիս իսաբէութեամբ ածեր ի Կոստանդնուպոլիս»: Եւ զաւուրս երեսուն պնդեալ ոչ հաւանէր Գագիկ, և յորժամ զելս իրացն ոչ գտանէր, յայնժամ տայր զԱնի ի ձեռս Հոռոմոց. և տայր Գագկայ Մոնոմախան զԿալօն-Պետատն և զՊիլու և ոչ յուզարկեաց զԳագիկ ի քաղաքն Անի, և զտունն Հայրենի իւրոյ տայր բերել ի Հոռոմս. և կայր պանդխտեալ ի մէջ անողորմ և չար ազգին Յունաց: Բայց ուր և հասանէր Գագիկ, նենգութիւն մեծ արկանէր ի վերայ ազգին Յունաց պէսպէս խայտառակութեամբ, վասն զի որպէս թագաւոր ահարկութեամբ կայր ի մէջ Հոռոմոց. բայց սուգ սաստիկ ունէր ի սրտի իւրում վասն Հայրենի աթոռոյն իւրոյ, զոր նենգութեամբ յափշտակեցին աստուածուրաց և նենգաւոր ազգն հերետիկոսացն:

Արդ յորժամ փոխեցաւ թուականութիւնն Հայոց ի չամս ՆԳ զօրա-

Քրիստոսի սուրբ խաչի նշանը. և այդ ճանապարհով էր հայոց թագավորին հրավիրում՝ ի բարեկամություն և ի տեսություն։ Գագիկը, լսելով այդ մասին, չհամաձայնվեց գնալ խաբեությանն ընդառաջ, քանզի իրեն հայտնի էր հոռոմոց նենգամտությունը։ Դրա վրա խարդախ Սարգիսը և ալատաներից մեկ ուրիշը, որոնք Մոնոմախին խոսք էին տվել, մեջ ընկան և համոզում էին Գագիկին գնալ, ասելով. «Ո՛վ թագավոր, ինչո՞ւ ես վախենում և չես գնում, երբ առկա են այսպիսի երդումներ և միջնորդ՝ ավետարանը և Քրիստոսի Սուրբ Նշանը։ Դու մեզ վրա մի կասկածիր, մենք պատրաստ ենք քեզ համար զոհվելու»։ Նրանք միջնորդ դարձրին սեր Պետրոսին[160] և սարսափելի երդումներ տվեցին, աստծո արդու մարմնի և արյան սուրբ խորհուրդը բերեցին և կենարար արյան մեջ գրիչը թաթախելով՝ հայրապետը և հայոց բոլոր իշխանները, երդման գիր շարադրեցին։ Դրա վրա հայոց Գագիկ թագավորը գնաց Կոստանդնուպոլիս՝ Մոնոմախ կայսեր մոտ։ Բովանդակ քաղաքը դղրդաց, դուրս եկավ հայոց արքա Գագիկին ընդառաջ և թագավորին արժանավայել ձևով, առաք-փառք տարան կայսեր մոտ։ Մոնոմախը մի քանի օր մեծարեց նրան։ Այն ժամանակ նենգ աստվածուրացները, ովքեր սոսկալի երդումը հաստատել էին աստծո արյամբ, Անի քաղաքի քառասուն բանալիները ուղարկեցին Մոնոմախ կայսեր, հետն էլ մի նամակ, թե Անի քաղաքը և ողջ Արևելքը քո [սեփականությունը] դարձան։ Կայսրը կանչեց Գագիկին, նրա առջև դրեց քաղաքի բանալիներն ու նամակը և ասաց. «Անին և բովանդակ Արևելքը ինձ տվեցին»։ Գագիկը հասկացավ չարանենգ գործի մասին, արտասվալից հառաչեց և ասաց. «Թող Քրիստոսը դատաստան տեսնի իմ և ինձ նենգողների նկատմամբ»։ Գագիկն ասաց Մոնոմախին. «Հայոց երկրի տերն ու թագավորը ե՛ս եմ, ես քեզ չե՛մ տալիս Հայաստանը, որովհետև դու ինձ խաբեությամբ Կոստանդնուպոլիս բերեցիր»։ Գագիկը այդպես անսասան մնաց երեսուն օր, բայց երբ տեսավ, որ ելք չի գտնում, Անին հոռոմոց հանձնեց. Մոնոմախը դրա դիմաց Գագիկին տվեց Կալոն Պեղատը և Պիզուն[161], բայց նրան չթողեց գնալ Անի, այլ կարգադրեց, որ նրա ընտանիքը հոռոմոց երկիրը բերեն։ Գագիկը մնաց պանդուխտ հունաց անողորմ և չար ժողովրդի մեջ։ Սակայն ուր էլ հասներ Գագիկը, նա շատ մեծ փորձանք էր բերում հույների գլխին, ամեն տեսակի խայտառակության մատնում նրանց, քանզի որպես թագավոր ահ էր ներշնչում հոռոմներին։ Այնուամենայնիվ, նրա սրտում մեծ սուգ էր իր հայրենի գահի [կորստյան] պատճառով, գահի, որ նենգությամբ հափշտակեց հերձվածողների աստվածուրաց և նենգ ժողովուրդը։

Երբ եկավ հայոց 493 թվականը [10 մարտ 1044—9 մարտ 1045 թ.],

ժողով արար թագաւորն Մոնոմախ զամենայն աշխարհն Յունաց և առաքին բազմութեամբ յուղարկեաց զնոսա յարևելս խնդրել զքաղաքն Անի և կացուցանէր զօրապետս զՊառակամանոսն՝ զայր նենգքինի կուրտ զոլով, և զայր զօրօք բազմօք հասանէր ի դուռն Անւոյ։ Եւ զայր կին կամէր դնել պահապան աշխարհին Հայոց փոխանակ հղօր քաջին Գագկայ. և Գագիկ այլ ոչ թողաւ ելանել յարևելք։ Իսկ ազգք Հայոցն, որք էին ի քաղաքն յԱնի, ոչ հաւանեցան տալ զքաղաքն, այլ յուզելով յուղէին զթագաւորն իւրեանց և հայհոյեալ նախատէին զամենայն ազգն Հոռոմոց։ Եւ յայնժամ ելանէին ամենայն քաղաքն միաբան ի պատերազմ ի դուռն քաղաքին Անւոյ և դարձուցին ի փախուստ զզօրսն Հոռոմոց և կոտորելով արարին զնոսա հալածականս, և լափեցին առ հասարակ զամենայն բանակն նոցա. և դարձան զօրքն Հայոց ի քաղաքն Անի մեծաւ յաղթութեամբ. և գնացին զօրքն Հոռոմոց ամօթով յաշխարհն իւրեանց, և Պառակամանոսն ձմերեաց յԱդթիքն։ Եւ իբրև իմացան զօրքն Հայոց՝ թէ թագաւորն Հայոց այլ ոչ է ելանելոց յարևելս և ծանեան զննդութիւն նախարարացն Հայոց առ հասարակ ամենայն տունն Հայոց. և արարին ամենայն քաղաքն ժողով ուր էին գերեզմանն ամենայն Հայոց առաջին թագաւորացն և անդ լացին զանտիրանալն ազգին Հայոց. լային և զաթոռ թագաւորութեանն իւրեանց և կոծ եդեալ առ հասարակ լային զվախճանումն իւրեանց զԳագիկ. լային և զամենայն ազգն Բագրատունեաց և անէծս յաւագին կարդային ննջեցուորացն Գագկայ։ Եւ յորժամ անճառեալ հաւանեցան քաղաքն և ամենայն զօրքն, և գրեցին առ զօրապետն Հոռոմոց ի Պառակամանոսն և երդմամբ կոչեցին զնա ի քաղաքն Անի և եատն զքաղաքն Անի ի ձեռս Հոռոմոց, և խախտեալ փլաւ տէրութիւն ազգին Բագրատունեաց։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց յամի ՆՂԴ եղև մեծասաստ բարկութիւն Աստուծոյ ի վերայ արարածոցս. քանզի հայեցաւ տէր Աստուած բարկութեամբ յարարածս իւր, և եղև շարժ ահաւոր և սոսկալի, և դողացաւ ամենայն տիեզերք առ հասարակ ըստ բանի մարգարէին՝ որ ասէ. «Ո՞ հայի յերկիր և տայ դողալ սմա»։ Արդ այսպիսի նմանութեամբ շարժեցաւ ամենայն արարածքն, և բազում եկեղեցիք խախտեալ փլաւ ի հիմանց և չնկեղեաց գաւառին. և քաղաքն՝ որ չՍրզնկան կոչի՝ փլաւ առ հասարակ. և պատառեցաւ երկիրն և արք և կանայք ընկղմեցան ի խորս անդնդոց, և զաւուրս բազումս գայր ձայն աղաղակի նոցա ի խորս անդնդոց. և էր յամառնային ժամանակին և յաւուր աւուր շարժէր երկին յամին յայնմիկ, որ ոչ բաւեմք պատմել վասն բարկութեանն և խռովութեանն, զոր էած Աստուած ի վերայ արարածոցս վասն մեղաց մերոց. և զամառնային ժամանակն խաւար և մութն լինէր ի վերայ երկրի, մին-

Մոնոմախ կայսրը հունաց բովանդակ երկրում զորահավաք կատարեց և հսկայական զորք ուղարկեց Արևելք՝ Անի քաղաքը պահանջելու։ Նա հրամանատար նշանակեց Պատակամանոսին[162], մի ներքինու, որը բազում զորքերով հասավ Անիի դռան առջև։ [Մոնոմախին] ուզում էր հզոր և քաջ Դագիկի փոխարեն հայոց երկրի պահապան նշանակած լինել մի կնամարդու և Դագիկին այլևս չթողեց գնալ Արևելք։ Անի քաղաքում գտնվող հայ ժողովուրդը մերժեց քաղաքը տալ, նա իր թագավորին էր պահանջում, հայհոյում ու նախատում հոռոմոց ամբողջ ժողովուրդը։ Ողջ քաղաքը մի մարդու պես Անիի դարպասից դուրս եկավ պատերազմի և հոռոմոց զորքերին փախուստի մատնեց, ջարդ տվեց ու հալածական արեց, թալանեց նրանց ամբողջ ճամբարը։ Հայոց զորքը մեծ հաղթանակով վերադարձավ Անի քաղաք։ Խայտառակ եղած հոռոմոց զորքը գնաց իր երկիրը, իսկ Պատակամանոսը ձմեռեց Աղթիքում[163]։ Երբ հայոց զորքն իմացավ, որ հայոց թագավորն այլևս Արևելք չպիտի գա, և հայ նախարարների նենգությունը պարզ դարձավ հայոց ողջ երկրին, [Անի] քաղաքի ամբողջ բնակչությունը հավաքվեց հայոց առաջին թագավորների գերեզմանոցում և այնտեղ ողբաց հայ ժողովրդի անտերունչ դառնալը։ Բոլորն աղիողորմ ողբում էին և իրենց թագավորության գահը, իրենց թագավոր Դագիկին, ողբում էին Բագրատունյաց ամբողջ տոհմը և սոսկալի անեծքներ թափում Դագիկին դավողների գլխին։ Բայց երբ քաղաքի [բնակչությունը] ու ողջ զորքը ճարահատյալ համաձայնեցին, այն ժամանակ նամակ գրեցին հոռոմոց զորահրամանատար Պատակամանոսին և, երդումով նրան Անի քաղաքը հրավիրելով, Անի քաղաքը հանձնեցին հոռոմների ձեռքը։ Խարխլվեց ու փուլ եկավ Բագրատունյաց տոհմի տերությունը[164]։

Հայոց 494 թվականին [10 մարտ 1045—9 մարտ 1046 թ.] արարածների գլխին թափվեց աստծո սաստիկ բարկությունը, տեր աստվածը զայրացավ իր արարածների վրա, և ահավոր ու սոսկալի երկրաշարժ եղավ, բովանդակ տիեզերքը սասանվեց, մարգարեի ասածի համաձայն, թե «Ո՞վ է նայում երկրին և նրան ցնցում»[165]։ Ահա այդպես ամեն կառույց սասանվեց, եկեղյաց գավառում բազում եկեղեցիներ խարխլվելով հիմնահատակ կործանվեցին։ Երզնկա կոչված քաղաքը ամբողջությամբ ավերվեց, գետինը պատռվեց, և տղամարդիկ ու կանայք սուզվեցին անդունդի խորխորատները։ Բազում օրեր անդունդի խորքերից լսվում էր նրանց աղաղակը։ Դա տեղի ունեցավ ամառ ժամանակ. այդ տարին ամեն օր գետինը ցնցվում էր։ Մենք ի վիճակի չենք պատմելու այն պատժի և փորձանքի մասին, որ մեր մեղքերի պատճառով աստված թափեց արարածների վրա։ Ամառ ժամանակ երկրի վրա [այն-

չև արեգակն և լուսին ի կերպս արեան երևէին, և յոյժ կամարն եւնէր՝ չիատակ էր։

Յայսմ ամի և յաւուրս աշնանային խաղայ զօրքն Հռոմոց և գնացին ի վերայ քաղաքին Դվնայ. և ի խմբել պատերազմին՝ բարկութիւն հասանէր յԱստուծոյ ի վերայ զօրացն Հռոմոց և լինէին պարտեալք յերեսաց այլազգեացն և դարձան ի փախուստ. և եղև կոտորած մեծ ի վերայ քրիստոնէիցն, և բազումք ի զօրացն Հռոմոց անկան ի սուր և ի գերութիւն, ընդ որ և մեծ սպարապետն Հայոց Վահրամ Հանդերձ որդւովն իւրով Գրիգորիւ սպանաւ ի մեծ պատերազմին ի Դուին քաղաքին։

Յայսմ ամի շարժեալ եղև բարկութիւն մեծ ի տանէն Պարսից, և հլեալ պայն արք հրով ի դիւանն՝ ի Տուղրէլ սուլտանէն՝ Պօղի, Պուկի, Անապուղլի՝ և հասանէին բազում զօրօք յաշխարհն Տաճկաց. և անհամար գերութեամբ գայր բանակ հարկանէր ի վերայ Երեան գեաղ ի սահմանս Մօսլայ։ Եւ յայնժամ զօրապետն Մօսլայ, որ ասէին Խուրշ, տէրն Մօսլայ, զօրաժողով արարեալ գայր ի վերայ նոցա արագիկ զօրօքն. և արարին պատերազմ սաստիկ յերկոցունց կողմանցն. և յայնժամ Թուրքն յաղթեալ արագիկ զօրացն և արար փախստական զնոսա և ոչնանայս և զորդիս նոցա էառ ի գերութիւն։ Եւ յայնժամ ամիրայն Տաճկաց Խուրշն կապեաց սև նշանակ և մատաւ ճիշկան յարագիկք և արար ժողով մեծ և գայր ի վերայ Թուրքին. և սաստիկ պատերազմաւ յաղթեաց նոցա և առեալ զգերութիւնն իւր և զնոցայն. և գնաց Թուրքն փախստական մինչև ի Պաղին և արարեալ բազում կոտորած ի բազում տեղիս և ի գաւառն Ծլմխոյ եղև բազում արիւնհեղութիւնս քրիստոնէից։ Եւ այսպիսի անհամար գերութեամբ զօրքն Թուրքաց դիմեալ երթային յաշխարհն Պարսից և հասանէր մինչև յԱրձէշ քաղաքն Հայոց։ Եւ էր անդ զօրավար մի Հռոմոց՝ որում անուն ասէին Ստեփան կատապան. և ամիրայքն Պարսից յուղարկեցին բազում աւարս Հռոմոց զօրավարին՝ զի տացէ նոցա անց, զի գնասցեն յաշխարհն իւրեանց։ Իսկ նորա հպարտացեալ հլանէր ի պատերազմ ի վերայ զօրացն Թուրքաց. և յայնժամ յաղթեցին զօրացն Հռոմոց Թուրքն և արարին սաստիկ կոտորած և կալան զՍտեփան կատապանն և տարան ի Հեր քաղաք. և զկնի բազում չարչարանացն մեռանէր ի ձեռաց անօրինացն. և քերթեցին զմորթ մարմնոյ նորա և լցեալ զնա խոտով և կախեցին զպարսպէն, զոր լուեալ ազգի նորա, եկեալ գնեցին զմարմինն և զմորթն ի տասն հազար դահեկան։

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆՂԵ ամին զօրաժողով արարեալ Մոնոմախ թագաւորն Հռոմոց և կացուցեալ զօրագլուխ զմեծ իշխանն Հռոմոց՝ որում անուն ասէին Տելիարիս կուրտ և ներքինի գոլով,

պիսի] մութ ու խավար էր լինում, որ արևն ու լուսինը աբնագույն էին երևում, իսկ երբ հասնում էին երկնակամարին՝ հստակ։

Այդ տարվա աշնանը հոռոմոց զորքը շարժվեց և գնաց Դվին քաղաքի վրա։ Մարտի պահին աստծո բարկությունը թափվեց հոռոմոց զորքերի գլխին, և նրանք այլազգիներից պարտություն կրեցին և փախուստի դիմեցին։ Քրիստոնյաների մեծ կոտորած եղավ. հոռոմոց բազմաթիվ զինվորներ սրի քաշվեցին և գերեվարվեցին։ Դվինի մեծ ճակատամարտում սպանվեց նաև հայոց մեծ սպարապետ Վահրամը՝ իր Դրիգոր որդու հետ միասին։

Այդ տարին պարսից երկրից մեծ փորձանք եկավ. Տուղրիլ սուլթանի արքունիքից երեք հոգի՝ Պողին, Պուկին և Անազուղլին բազում զորքերով եկան հասան տաճկաց երկիրը։ Անթիվ գերիներ վերցնելով, նրանք եկան բանակեցին Արեան գետի վրա, Մոսուլի սահմաններում։ Այն ժամանակ Մոսուլի տերն ու հրամանատարը, որին խուրեշ էին ասում, զորահավաք անելով, արաբական զորքով եկավ նրանց դեմ։ Տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ. թուրքական զորքը հաղթեց արաբական զորքին և փախուստի մատնեց, իսկ նրանց կանանց և երեխաներին գերի վերցրեց։ Դրա վրա տաճկաց ամիրա խուրեշը, [սգավորի] սև նշան կապելով, որպես գուժկան մտավ արաբների մեջ և, մեծ զորք հավաքելով, եկավ թուրքերի դեմ։ Կատաղի մարտում նա հաղթեց նրանց, աղատեց գերիներին, ապա և նրանցից էլ գերիներ վերցրեց։ Թուրքերը փախչելով հասան Պաղին[166], բազում վայրերում մեծ կոտորած սարքեցին. Թլմուխ գավառում էլ քրիստոնյաների շատ արյուն թափվեց։ Թուրքական զորքն ահա անհամար զինվորներով շարժվեց գնաց պարսից երկիրը և հասավ մինչև հայոց Արճեշ քաղաքը։ Այնտեղ էր գտնվում հոռոմոց մի զորավարը, որի անունն էր կատապան Ստեփան[167]։ Պարսից ամիրաները հոռոմոց զորավարին բազում ավար ուղարկեցին, որպեսզի նա իրենց երկիրը գնալու ճանապարհ տա։ Սակայն [Ստեփանը], ամբարտավանացած, պատերազմի դուրս եկավ թուրք զորքի դեմ. թուրքերը հաղթեցին հոռոմոց զորքին, մեծ ջարդ տրվեցին և կատապան Ստեփանին գերի վերցնելով տարան Հեր քաղաքը, որտեղ նա, անհավատների ձեռքից բազում խոշտանգումների ենթարկվելով, մեռավ։ Նրա մորթուց տիկ հանեցին, խոտով լցրին և պարսպից կախեցին։ Նրա ազգականները լսելով այդ մասին, եկան և տասը հազար դահեկանով գնեցին նրա մորթին ու մարմինը։

Հայոց 495 թվականին [10 մարտ 1046—9 մարտ 1947 թ.] հոռոմոց կայսր Մոնոմախը զորահավաք արեց և զորքի հրամանատար նշանակեց հոռոմոց մեծ իշխանին, որին Տելիարխ էին անվանում (սա կուրտ

և գայր ահագին բազմութեամբ և անթիւ զօրօք ի վերայ քաղաքին Դրվնայ, և բանակ հարկանէր ի դուռն քաղաքին. և էր ի ձմերային ժամանակն. և ի սաստկութենէ սառնամանեացն և ի բախմանէ առատաբուղխ անձրևացն ոչինչ կարաց առնել, այլ դառնայր անյաղթելի և խաղայր դնայր ի Հոռոմոց աշխարհն։

Իսկ յորժամ փոխեցաւ թուականն Հայոց յամս ՆՂԶ, դարձեալ գայ Տելիարն զօրօք բազմօք և իջանէր ի վերայ քաղաքին Դվինայ. և բազում չարչարանս և տագնապս գործեաց այնմ գաւառին և սրով և գերութեամբ ապականեաց զամենայն ազգն Տաճկաց և դարձաւ յաշխարհն Յունաց խաղաղութեամբ։

Յայսմ թուականութեանս Հայոց պատրիկ ումն՝ անուն Թոռնիկ, ապրատամբեաց ի վերայ Մոնոմախին, որ է ի քաղաքէն Անդռնապօլսէ, այր քաջ և հզօր և պատերազմող. և սորա ժողովէ արարեալ ամենայն աշխարհն արևմտից և զինդից, և ահագին բազմութեամբ գայր ի վերայ Կոստանդնուպօլսի և ի մեծ տագնապ և ի նեղութիւնս արկանէր զքաղաքն. և թագաւորն ոչ իշխաց ելանել ի պատերազմ, և այնչափ ձանձրացաւ քաղաքն Կոստանդնուպօլիս ի պատերազմէն, մինչև քարուկրով կալան զդուռն քաղաքին. և այնչափ ահագին արարեալ Թոռնիկ զպատերազմն, մինչև զսուրբ Անարծաթքն, որ կայ արտաքոյ քաղաքին՝ քարայատակ արարեալ և զամենայն քարն առ հասարակ յովկիանոս ընկէց՝ զմեծ եկեղեցւոյն զսուրբ վկայիցն։ Իսկ թագաւորն Մոնոմախ և ամենայն իշխանք քաղաքին Կոստանդնուպօլսի յահ և յերկիւղ լեալ և նմա իրացն ոչ կարէին գտանել և ընդդէմ քաջութեան Թոռնկայ ոչ կարէին կալ։ Իսկ պատրիարգն և ամենայն իշխանքն և թագաւորն խորհեցան չար խորհուրդս վասն Թոռնկայ և գրեցին երդմունս ահաւոր և սուտ և խաբանօք երդուան Թոռնկայ դնել զնա Կեսար և թէ զկնի մահու Մոնոմախին Թոռնիկ լիցի թագաւոր. և այսպիսի գրեցին և երդմամբ հաստատմացուցին զիւրեանց նենգութիւնն. և ասէին թէ՝ Գտաք ի գիրս ալ զկնի մահուան Մոնոմախին դու նստցիս յաթոռ թագաւորութեանս։ Եւ ելեալ պատրիարգն առ Թոռնիկ և քահանայքն և իշխանքն և երկրորդեալ զերդումն առաջի Թոռնկայ, և եղև սէր և խաղաղութիւն. և միաբան ածին զնա ի Կոստանդնուպօլիս. և յետ սակաւ աւուրց ուրացան զերդումն իւրեանց և ուրացան զմիջնորդն Աստուած՝ որպէս և սովոր են ազգս Հոռոմոց երդմամբ կորուսանել զամենայն մեծամեծան աշխարհի. և յայնժամ խաւարեցուցին զաչսն Թոռնկայ յառն ջաջի։

Յայսմ թուականութեանս Հայոց ՆՂՐ, յաւուր Մոնոմախի կայսերն, որ նենգութեամբ և երդմամբ հերձ զթագաւորութիւնն Հայոց ի յազգէ

էր և ներքինի)[168]։ Վերջինս հսկայական բազմությամբ և անհամար զորքով եկավ Դվին քաղաքի վրա և քաղաքի դարպասի մոտ բանակեց։ Ձմեռ ժամանակ էր։ Սաստիկ սառնամանիքի և հորդառատ անձրևների պատճառով նա ոչինչ չկարողացավ անել և առանց որևէ վնաս կրելու վերադարձավ հռոմոց երկիրը։

Երբ եկավ հայոց 469 թվականը [10 մարտ 1047—8 մարտ 1048 թ.], Տելիարխը բազմաթիվ զորքերով նորից եկավ և հարձակվեց Դվին քաղաքի վրա։ Նա մեծ վնաս և աղետ պատճառեց այդ գավառին, սրի քաշեց ու գերեվարեց տասնյակ հազար ժողովուրդը. ապա խաղաղությամբ վերադարձավ հունաց երկիրը։

Այս թվականին Թոռնիկ անունով մի հայ պատրիկ, քաջ և հզոր պատերազմող, որ Ադրիանուպոլիս քաղաքից էր, Մոնոմախի դեմ ապստամբություն բարձրացրեց։ Բավական արևմուտքում և դրների երկրում զորահավաք անելով, նա հսկայական զորքով եկավ Կոստանդնուպոլսի վրա և քաղաքը դրեց մեծ տագնապի և դժվարին կացության մեջ. կայսրը չհամարձակվեց պատերազմի դուրս գալ։ Կոստանդնուպոլիս քաղաքի բնակչությունը այնքան զզվեց պատերազմից, որ նույնիսկ քար ու կրով շարեց քաղաքի դարպասը։ Թոռնիկը կատաղի պատերազմ տրվեց և հիմնահատակ ավերեց քաղաքից դուրս գտնվող Սուրբ Անարծաթից [եկեղեցին] անգամ, սուրբ վկաների եկեղեցու բոլոր քարերը նա Օվկիանոսը թափեց։ Մոնոմախ կայսրը և Կոստանդնուպոլիս քաղաքի բոլոր իշխանները, ահ ու սարսափի մեջ ընկած, վիճակից դուրս գալու ելք չէին գտնում. նրանք ի վիճակի չէին ընդդիմակայել Թոռնիկի քաջությանը։ Պատրիարքը, բոլոր իշխաններն ու կայսրը մտածեցին Թոռնիկի դեմ նենգություն հանելու. նրանք ահավոր, բայց կեղծ ու խաբեպատիր երդումներով հաստատված մի գիր շարադրեցին, թե Թոռնիկին կեսար են հռչակում, որ Մոնոմախի մահից հետո Թոռնիկը կլինի կայսր։ Ահա այսպիսի գիր շարադրեցին և իրենց նենգությունը երդումներով հաստատ[illegible] [illegible]նք ասում էին, թե «Գրքերում գտել ենք [գըրված], որ Մոնոմա[illegible] մահից հետո դու կնստես կայսրության գահին»։ Պատրիարքը, քահան[illegible] և իշխանները գնացին Թոռնիկի մոտ և նրա առաջ կրկնեցին երդումը, որով սեր ու խաղաղություն եղավ։ Նրանք հաշտված Թոռնիկին Կոստանդնուպոլիս բերեցին, բայց մի քանի օր անց, ուրանալով իրենց տված երդումը, ուրանալով միջնորդ կոչած աստծուն (հռոմոց ազգը սովոր է երդումով մեջտեղից վերացնել երկրի բոլոր մեծամեծներին), քաջ Թոռնիկի աչքի լույսը խավարեցրին։

Հայոց 498 թվականին [9 մարտ 1049—8 մարտ 1050 թ.], Մոնոմախ կայսեր [գահակալության], որը նենգությամբ և սուտ երդմամբ

Բագրատունեաց, յայսմ թագաւորութեանս և ի հայրապետութեանն Տէր Պետրոսի Հայոց կաթուղիկոսի զարթեաւ աստուածատաստ բարկութիւնն ի առնէն Պարսից Հրամանաւ Տուզրէլ սուլտանին. և ելեալ երկու զօրապետքն բազում զօրօք ի դիւանէ անտի, որք անուանեալ ասէին Աբրէիմ և Գիլմուշ, և անթիւ բազմութեամբ գան ի յաշխարհն Հայոց, վասն զի ի ձեռացն Հոռոմոց գիտացին անտէր և անպահապան զամենայն աշխարհն Հայոց. զի զարս քաջս և զհզօրս քակեալ հանին յարևելից Հոռոմք և կուրտ զօրապետօք ջանային պահել զաշխարհն Հայոց և զամենայն տունն արևելից: Եւ ահա յայսմ ամի զօրք անօրինաց հասանէին ի հռչակաւորն և ի բազմամբոխ քաղաքն Հայոց՝ որ կոչի Արծն. և գտեալ անպարիսպ զքաղաքն և անթիւ բազմութեամբ լցեալ զարանց և զկանանց և անհամար չափս ոսկւոյ և արծաթոյ: Եւ քաղաքացիքն տեսեալ զզօրս այլազգեացն միաբան ի պատերազմ ելեալ, և խմբեցաւ շուրջ զնովքօք քաղաքին սաստիկ և ահաւոր պատերազմ. և եղև զվեց ժամ աւուրն զմիմեանս կոփէին և արեամբ լցաւ անդաստանքն, վասն զի ոչ գոյր տեղի փախստեան և ոչ օգնական, միայն զմահն ունէին յոյս. և ի բազմութենէ անօրինացն ձանձրացան զօրքն քաղաքին և ի փախուստ դարձան. և այլազգիքն սրով յարձակեցան ի վերայ քաղաքին և սաստիկ կոտորածով առ հասարակ ի ներքոյ սրոյ անցուցին զամենայն քաղաքն իրրև զբիւրս հնգետասան: Այլ զոսկւոյ և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ գրով. բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ որ ասէին Դաւթուկ, եթէ զգանձատունն նորա Աբրհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա, ութ հարիւր վեցկի եղանց ելանէին ի տանէ նորա: Եւ կայր յայնժամ ութ հարիւր եկեղեցի ընդ պատարագով: Եւ այսպիսի դառն կատարածիւս և չարաչար մահուամբս որով անցաւ վայելուչ և փառաւոր քաղաքն Արծն, և կամ որպէս լալով ասացից՝ զանցումն իշխանացն և զքահանայիցն, որք անթաղք և կերակուր գաղանաց լեալ, և փառաւոր կանայք հանդերձ տղայօքն վարեցան ի գերութիւն յաշխարհն Պարսից յանդին ծառայութիւն: Եւ ահա այս սկիզբն եղև Հայոց կորստեանս. լուր՝ միտ դիք կատարածիս և անցմանս աթևելից մի առ մի ամ յամէ, վասն զի այս է առաջին քաղաք, որ առաւ սրով և զերութեամբ ի Հայոց: Իսկ յորժամ լուաւ զչար համբաւս զայս թագաւորն Մոնոմախ, առաքեալ զօրս յարևելս և կարգեաց զօրագլուխ զօրացն զԿամենն, զԳրիգոր Վասակայ որդին և զվիպարիտն զեղբայրն Ռատին առն քաջին, և բազում զօրօք հասանէին յաշխարհն Հայոց առ ի պատերազմել ընդ զօրսն Պարսից:

վերացրեց Բագրատունիների հայոց թագավորությունը, և հայոց կաթողիկոս տեր Պետրոսի հայրապետության ժամանակ զարթնեց աստծո բարկությունը պարսից երկրից՝ սուլթան Տուղրիլի հրամանով։ Այնտեղի արքունիքից երկու զորապետ, որոնք Աբրեհիմ և Գիլմուշ[169] էին կոչվում, հսկայական զորքով եկան հայոց երկիրը՝ համոզված, որ հոռոմոց տիրապետության տակ գտնվող հայոց ամբողջ երկիրը անտերունչ և անպաշտպան կլինի, քանի որ հոռոմները քաջ ու հզոր տղամարդկանց հեռացրել էին Արևելքից և աշխատում էին հայոց երկիրն ու ամբողջ Արեվելքը պահել ձվատ զորահրամանատարներով։ Ահա, այդ տարին անհավատների զորքը հասավ հայոց հռչակավոր և մարդաշատ Արծն քաղաքը։ Նրանք քաղաքը գտան անպարիսպ, տղամարդկանց և կանանց անհամար բազմությամբ, հսկայական ոսկով և արծաթով լի։ Քաղաքացիները, տեսնելով այլազգիների զորքը, մի մարդու պես դուրս եկան մարտի։ Քաղաքի սահմանների վրա կատաղի 4 ահարկու ճակատամարտ եղավ։ Մինչև օրվա վեցերորդ ժամը նրանք հարվածում էին միմյանց։ Դաշտերն արյամբ ողողվեցին, քանզի ո՛չ օգնող կար, ո՛չ էլ փախչելու տեղ։ Նրանց հույսը մահն էր միայն։ Քաղաքի կայազորը, հուսահատված անհավատների շատությունից, դիմեց փախուստի։ Այլազգիները սրով հարձակվեցին քաղաքի վրա և ողջ քաղաքը սրի քաշեցին, կոտորեցին շուրջ հարյուր հիսուն հազար հոգի։ Իսկ [նրանց կողոպտած] ոսկու, արծաթի և դիպակների մասին պատմելն ավելորդ է, որովհետև հնարավոր չէ գրով արտահայտել։ Մենք շատերից բազում անգամ լսել ենք Դավթուկ քորեպիսկոպոսի մասին, թե նրա գանձատունը, որն Աբրեհիմի ձեռքն անցավ, քառասուն ուղտի վրա բարձեցին։ Դավթուկի տնից ութ հարյուր վեցկե եզ էր դուրս գալիս։ Այն ժամանակ [Արծնում] պատարագ մատուցող ութ հարյուր եկեղեցի կար։ Ահա այսպիսի դառն վախճան ունեցավ և չարաչար մահով սրախողխող դարձավ գեղեցիկ և փառավոր Արծն քաղաքը։ Լաց ինձ չի թողնում պատմել իշխանների և քահանաների ջարդի մասին, որոնք անթաղ մնացին և գազանների ճարակ դարձան, փառավոր կանանց մասին, ովքեր իրենց երեխաներով պարսից երկիրը գերևարվեցին՝ սարկության։ Սա հայոց կորստյան սկիզբը դարձավ։ Լսեք, ուշադրություն դարձրեք, թե ինչպես աստիճանաբար, տաբեցտարի արևելքը կործանվեց և ավերակ դարձավ։ Սա առաջին քաղաքն էր, որ հայերի ձեռքից գրավվեց՝ սրով ու գերությամբ։ Երբ այս տխուր լուրը հասավ Մոնոմախ կայսեր, նա բազմաթիվ զորքեր ուղարկեց արևելք, զորահրամանատարներ նշանակելով Կամենին, Վասակի որդի Գրիգորին և Լիպարիտին՝ քաջ Ռատի եղբորը[170], նրանք բազում զորքերով հասան հայոց երկիրը՝ պարսից զորքերի դեմ պատերազմելու։

Յայսմ ամի դրեաց Մոնոմախ թագաւորն Յունաց թուղթ առ Տէր Պետրոս Հայոց հայրապետն, զի եկեսցէ առ նա ի Կոստանդնուպոլիս: եւ Տէր Պետրոսն կամաւ իւրով չօժարեաց գնալ. խորհեցաւ ի միտս իւր և ասէ. «Գուցէ այլ ոչ թողուն զիս Հռոմք ելանել յարևելս», անուանեաց զաթոռ հայրապետութեան իւրոյ զամենագովելին զՏէր Խաչիկ: Նոյն օրինակաւս խորհեցաւ և յաղագս միւռոնին օրհնեալ ձիթոյն՝ օծմանն հաւատոյ Հայաստանեայց, պահեաց յԱհուր գետն երկաթի ամանօք իբրև լիտր չորս հարիւր, վասն զի մի գուցէ անկանիցի ի ձեռս Հռոմայեցն. և կայ պահեալ մինչև ցայսօր ժամանակի. ի գիշերի արարեալ զայս՝ մերձ ի գուռն քաղաքին Անւոյ: Եւ ինքն իւր տանեցի ապատօքն փառաւոր արամբք երեք հարիւր՝ վառեալ զինուք, և վարդապետս և եպիսկոպոսունս և երաժիշտս և կրօնաւորս, քահանայս հարիւր և հնծեալս ի փառաւոր ջորւոջ, հետևակ պաշտօնեայս երկերիւրս: Եւ էր զհետ Տեառն Պետրոսի նախնականն և լաւն ի բնաւից Բուլղար վարդապետն, և ամենագովելին Խաչատուր դպրապետն և Թադէոս՝ որ էր այր անպարտելի դրչութեամբ, Գէորգ Քարնեղեցին և Յովհաննէս Քարնեղեցին և Մատթէոս Հաղբատացին և Մխիթար Ինայրեցին և Տիրանուն և իմաստասէր Կապանեցին, Մխիթարիկն, Վարդան Սանահեցին, Բարսեղն Բաղեշատացին և համավայելուչն և շքեղն Տէր Եղիսէն և Բարսեղն նորին եղբայրն, Գէորգ՝ ջուլահակ ձաղն և Տէր Եփրեմն և Տէր Անանէ և Տէր Խաչիկն: Սրդ այս ամենայն վարդապետք և իմաստասէրք և հմուտք հին և նոր կտակարանացն Աստուծոյ: Եւ ինքն ամենագովելին Տէր Հեսրոս սոքօք հետևեալ ճանապարհորդութեամբ հասանէր ի Կոստանդնուպոլիս: Եւ յորժամ լուան ղգալն նորա, դղրդեցաւ ամենայն քաղաքն Կոստանդնուպոլսի ընդ առաջ Տեառն Պետրոսի, հանդերձ մեծամեծօք և ահաւոր փառօք ուրան ընա ի սուրբն Սոփի, և անդ հանդիպեալ թագաւորին և պատրիարգին և իջուցին ընա ի փառաւորս տան: Եւ հրամայեաց տալ ծախս Տեառն Պետրոսի. յառաջին աւուրն եռուն կենդինար մի. իսկ յերկրորդ աւուրն գնաց Տէր Պետրոս ի պաղատն առ թագաւորն. և լուեալ թագաւորն զգալն՝ ել ընդ առաջ նորա և հրամայեաց նստուցանել զՏէր Պետրոս յոսկի սէլին, զոր ի ժամ գնալոյն Տէր Եղիսէ չինքն առեալ. և սպասաւորք թագաւորին ջանային առնուլ, և նա ուժգին ոչ տայր. և տեսեալ թագաւորն հարցանէր զպատճառս չտալոյն: Եւ յայնժամ պատասխանի եւ Տէր Եղիսէ և ասէր. «Ո՛վ թագաւոր, հայրապետական աթոռ է, և ոչ ոք է արժանի ի սմա նստիլ, բայց միայն Տէր Պետրոսն»: Եւ լուեալ զայս թագաւորն՝ իրաւունս համարեցաւ զբանն, զոր ասաց Տէր Եղիսէ.

Այդ տարին հունաց Մոնոմախ կայսրը հայոց հայրապետ տեր Պետրոսին նամակ գրեց, հրավիրելով իր մոտ՝ Կոստանդնուպոլիս։ Տեր Պետրոսը հոժար կամքով համաձայնեց գնալ, բայց մտածեց, որ «Գուցե հույները ինձ այլևս չթողնեն վերադառնալ Արևելք»։ Դրա համար նա իր հայրապետական աթոռին տեղապահ նշանակեց ամենագովելի տեր Խաչիկին[171]։ Նա մտածեց նաև մեռոնի՝ Հայաստանյաց եկեղեցու օրհնյալ ձեթի մասին։ Ախուրյան գետում երկաթե ամանների մեջ շուրջ չորս հարյուր լիտր մեռոն պահեց, վախենալով, որ այն հռոմների ձեռքը կանցնի։ Նա այդ բանն արեց գիշերվա պահին, Անի քաղաքի դռան մոտիկ տեղում։ Այդ մեռոնը մինչև օրս էլ պահած կա։ Իսկ ինքը իր մերձավոր ազատներով՝ երեք հարյուր սպառազեն փառավոր տղամարդկանցով, հոյակապ ջորիների վրա հեծած, հարյուր վարդապետներով, եպիսկոպոսներով, երգասացներով, վանականներով, քահանաներով և երկու հարյուր հետևակ սպասավորներով ճամփա ելավ։ Տեր Պետրոսի հետ էին նաև վաղեմի ծանոթ ամենալավ Բուլղար վարդապետը, ամենագովելի խաչատուր դպրապետը, անմրցելի դրիչ Թադևոսը, Գևորգ Քարնեղեցին, Հովհաննես Քարնեղեցին, Մատթեոս Հաղպատացին, Մխիթար Բազնայրեցին, իմաստասեր Տիրանուն Կապանեցին, Մխիթարիկը, Վարդան Սանահնեցին, Բարսեղ Բաշխատացին, ամենասիրելի և պատկառելի տեր Եղիսեն, նրա եղբայր Բարսեղը, ջուլհակորդի Գեորգը, տեր Եփրեմը, տեր Անանեն և տեր Խաչիկը, բոլորն էլ աստծո Հին և Նոր Կտակարանների քաջագիտակ վարդապետներ ու իմաստասերներ։ Ահա ամենագովելի տեր Պետրոսը սրանց ուղեկցությամբ ճանապարհ ընկավ և հասավ Կոստանդնուպոլիս[172]։ Երբ նրա ժամանման լուրը հասավ, ողջ Կոստանդնուպոլիս քաղաքը դղրդաց և տեր Պետրոսին դիմավորելու դուրս եկավ։ Նրան մեծամեծների ուղեկցությամբ առաք-փառք տարան Սուրբ Սոֆիայի տաճարը, որտեղ նա հանդիպեց կայսեր և պատրիարքին, որից հետո իջևանեց փառավոր տան մեջ։ Կայսրը հրամայեց, որ տեր Պետրոսին ծախսելու դրամ տան, առաջին օրը մեկ կենտինար[173]։ Երկրորդ օրը տեր Պետրոսը գնաց պալատ՝ կայսեր մոտ։ Կայսրը, լսելով նրա գալստյան մասին, ելավ նրան ընդառաջ և հրամայեց տեր Պետրոսին նստեցնել ոսկե աթոռին։ Վերադարձին տեր Եղիսեն [այդ աթոռը] վերցրեց տանելու։ Կայսեր սպասավորները ջանք էին բափում ետ ստանալ, բայց Եղիսեն կտրականապես մերժեց տալ։ Կայսրն, իմանալով վեճի մասին, հարցրեց, թե ինչո՞ւ չի ուզում տալ։ Տեր Եղիսեն պատասխանեց և ասաց. «Ո՛վ կայսր, սա հայրապետական աթոռ է. ոչ ոք արժանի չէ նրա վրա նստելու, բացի տեր Պետրոսից»։ Կայսրը, լսելով դա, իրավացի գտավ տեր Եղիսեին և ասաց. «Նրան տվեք առա-

և ասաց թագաւորն. «Թոյլ տուք զառաքելական աթոռդ ի դմա»: Յայնժամ ասէ թագաւորն Տէր Եղիսէի. «Հազար դահեկան է աթոռդ, պահանջես զդա տեառն քում, զի մի՛ այլ ոք ի դմա նստցի»: Եւ այսպիսի փառաւորութեամբ կացեալ Տէր Պետրոսին ի Կոստանդնուպոլիս ի մէջ Հռոմոյ զամս չորս, և աւուր յաւուր յաւելէր փառօք և պատուօք ի մէջ Յունաց. և յորժամ երթայր ի պաղատ թագաւորին, նախ զհայրապետական դաւազանն յառաջ տանէին. և յորժամ տեսանէր թագաւորն՝ երկրպագանէր և հրաման տայր թագաւորն մեծամեծաց իւրոց ելանել ընդդէմ Տեառն Պետրոսի: Եւ զկնի չորից ամաց բաշխէր թագաւորն և պատրիարգն Տէր Պետրոսի բազում ընծայս՝ զանձս և դիւցազս ոսկւոյ և արծաթոյ և աղգի աղգի զարդարանս և իշխանութիւնս տայր ազատաց նորա և զքաւորդին իւր զՏէր Անանէ արար Սենգելոս. և զամենայն պատուական զգեստս տուեալ հայրապետին Հայոց, և յուղարկեցին զնա խաղաղութեամբ հանդերձ մեծամեծ տրօք. և ի քաղաքն Անի ոչ ժամանեաց, այլ երթեալ բնակէր ի Սեբաստիա քաղաքն առ աղգն Սենեքարիմայ մեծաւ փառաւորութեամբ:

Արդ յորժամ հասանէր զօրքն Յունաց ի յարեւելք, Կամենն և Առօնն և Գրիգոր Վասակայ որդին կոչեցին զհետ իւրեանց զվիպարիտն զՎրաց իշխանն, և հասեալ նոցա ի բերդն՝ որ կոչի Կասլուտուու, ի տեղին՝ որ Արջռվիտ ասի. և լուեալ Թուրք զօրացն՝ զտեղի առին. և բնակեցան Հռոմ զօրքն ի յԱրջռվիտ: Եւ յայնժամ եկին զօրք այլազգեացն ի վերայ Վիպարիտին՝ առն քաջին. և նորա հանեալ զպահասպանս ի դիշերի զքուրորդին իւր զՋորտուանէլն՝ զայրն հզօր և պատերազմող, և յայնժամ սկսան զօրք այլազգեացն ի դիշերին պատերազմիլ. և հասանէր ձայն պատերազմին առ Վիպարիտն՝ եթէ «Հասիր, զի զօրք այլազգեացն պատեաց զմեզ»: Եւ ասէր Վիպարիտն՝ եթէ «Շաբաթ է, և ոչ է օրէն Վրացեացս ելանել յաւուր շաբաթու ի պատերազմ»: Յայնժամ Ջորտուանէլն որպէս զառիւծ ի դիշերին բախէր զճակատ այլազգեացն. և մինչդեռ վարէր զնոսա, դիպեալ եղև նետ մի ի բերան նորա և ընդ ծոծրակն ելանէր, և այնպէս մեռանէր Ջորտուանէլն՝ այր քաջ և հզօր: Եւ յորժամ լուաւ Վիպարիտն զմահ Ջորտուանէլին, որպէս զդազան դայրացեալ ելանէր ի պատերազմ և վարեաց զամենայն այլազգիսն ընդ երեսս դաշտացն և արեան ճապաղիս արարեալ զնոսա: Եւ յորժամ տեսանէր զօրքն Հռոմոյ զքաջութիւն Վիպարիտին, ի տուր եատուն զնա և թողին զՎիպարիտն ի մէջ այլազգեաց և փախան, զի մի առցէ զանուն քաջութեան: Եւ տեսեալ զայն զօրաց անօրինացն, դարձան միաբան ի պատերազմ ընդ Վրաց զօրացն. և յորժամ սաստկացաւ պատերազմն, և գոչէր որպէս զառիւծ Վիպարիտն ի մէջ անօրինացն, և յայնժամ մի ոմն ի զո-

քելական աթոռը» և, դիմելով եղիսեին, ասաց. «Հազար դահեկան արժե այդ աթոռը, պահիր այն քո տիրոջ համար, որպեսզի ոչ այլ ոք չնստի նրա վրա»: Տեր Պետրոսը հռոմների մեջ Կոստանդնուպոլսում այսպիսի փառք ու պատվով ապրեց չորս տարի, և հույների շրջանում նրա վարկը օրավուր ավելանում էր: Կայսեր պալատը գնալիս, ամենից առաջ [Պետրոսի] հայրապետական գավազանն էին տանում, իսկ կայսրը, տեսնելով նրան, երկրպագում էր. նա հրաման էր տալիս իր մեծամեծներին՝ գնալ տեր Պետրոսին դիմավորելու: Չորս տարի անց կայսրը և պատրիարքը տեր Պետրոսին բազում նվերներ տվեցին՝ ոսկի և արծաթ, դիպակներ, պես-պես զարդեր: Կայսրը նրա ազատներին պաշտոններ տվեց, իսկ նրա քրոջորդուն՝ տեր Անանեին սինկելլոս[174] նշանակեց: Հայոց հայրապետին ամեն տեսակի պատվական զգեստներ, մեծամեծ նվերներ տալով, խաղաղությամբ ճամփու դրին: Բայց նա Անի քաղաք չեկավ, այլ գնաց և առոք-փառոք բնակվեց Սեբաստիա քաղաքում, Սենեքերիմի ընտանիքում:

Հունաց զորքը Կամենի, Առոնի[175] և Վասակի որդի Գրիգորի գլխավորությամբ հասավ Արևելք. վերջիններս իրենց մոտ կանչեցին և վրաց իշխան Լիպարիտին, ապա գնացին Կապուտուու[176] բերդը, Արջովետ կոչվող տեղը: Թուրք զորքերը, լսելով այդ մասին, դիմեցին այնտեղ: Հռոմոց զորքը բանակեց Արջովետում: Այն ժամանակ այլազգիների զորքը եկավ քաջ Լիպարիտի վրա: Նա գիշերով հեռացրել էր պահակներին՝ իր քեռորդի Չորտվանելին, հզոր և պատերազմող մարդուն: Ահա այն ժամանակ, գիշերով, այլազգիների զորքը մարտ տվեց: Մարտի տեղից Լիպարիտին ձայն հասավ, թե «Հասի՛ր, այլազգիների զորքը շրջապատել է մեզ»: Լիպարիտն ասաց. «Շաբաթ է, վրացիների համար ընդունված չէ շաբաթ օր պատերազմել»: Դրա վրա Չորտվանելը գիշեր ժամանակ առյուծի պես ճակատեց այլազգիների դեմ: Նրանց փախուստի մատնելու պահին նրա բերանը մի նետ մխրճվեց և ծոծրակից դուրս եկավ: Ահա այսպես մեռավ Չորտվանելը, մի քաջ ու հզոր մարդ: Լսելով Չորտվանելի սպանության մասին, Լիպարիտը կատաղած գազանի նման դուրս եկավ պատերազմի և բոլոր այլազգիներին դաշտի երեսով մեկ ցրիվ տվեց և սրի քաշեց: Երբ հռոմոց զորքը տեսավ Լիպարիտի քաջությունը, դավաճանեց նրան և, լքելով այլազգիների մեջ, փախուստի դիմեց, որպեսզի Լիպարիտը քաջ մարդու համբավին չարժանանա: Անհավատների զորքը, տեսնելով այդ բանը, մի մարդու պես մարտի բռնվեց վրաց զորքի հետ: Մարտը թեժացավ. անհավատների շրջապատման մեջ գտնվող Լիպարիտը առյուծի նման էր մռնչում: Այդ պա-

բայց Վրացին չհաւայ կացնալ և թրով հարնալ հաւտանէր զերկուս ջիլս ձիոյն Լիպարիտին. զոր իմացեալ Լիպարիտն՝ ի շտապս լեալ չետ կոյս դարձեալ եհար զնա և սատակեաց. և ինքն Լիպարիտն իջեալ նստէր ի վերայ գետնոյն յասպարիսին վերայ և ձայն տուեալ ասէր՝ թէ «Ես եմ Լիպարիտն» եւ յայնժամ զբաղումս ի զօրաց Վրացեացն կոտորեցին և զայլն արարին փախստական. և զԼիպարիտն առեալ գերի և տարան զնա ի Խորասան առ Տուղրէլ սուլտանն, վասն զի չառաջագոյն լուեալ էր զանուն նորա և զամենայն քաջութիւն նորա գիտէր: Եւ կացեալ առ սուլտանն զամս երկուս և արար ի տեղիս տեղիս քաջութիւնս. և զնաւփշիկն՝ դայր հզօր և քաջ, հանին զերկուքն առաջի սուլտանին ի պատերազմ. և Լիպարիտն յաղթեալ սատակեաց զայլազգի զնաւփշիկն. և յայնժամ սուլտանն ազատեաց զնա և մեծ պարգեւօք յուղարկեաց զնա ի Հոռոմք: Եւ յայնժամ եկեալ Լիպարիտն ի Կոստանդնուպօլիս. և տեսեալ զնա թագաւորն Մոնոմախ՝ ուրախ լինէր յոյժ. և մեծամեծ պարգեւօք յուղարկեաց զնա ի տուն առ կինն իւր և առ որդիքն: Լիպարիտնս այս եղբայր էր Ռատին և Զոյատին՝ վրացի ազգաւ՝ ի հզօր ջոկէ:

Դարձեալ ի թուականութեանն Հայոց յամի ՆՂԲ եղև սաստիկ խռովութիւն ի տունն Հոռոմոց, և բազում գաւառք մաշեցան ի սուր սուսերի: Եւ եղև կատարած մեծամեծք և աւուրք դառնաշունչք ի ձեռն գինակեր և անօրէն պիղծ ազգին Պաժենակաց՝ չար և արեանարբու գազանացն. վասն զի ազգք օձիցն ելին և հարին զխարտէշքն, և խարտէշքն ելին և հարին զՈւզն և զՊաժինակն, և միաբան բորբոքեցան ի վերայ տանն Հոռոմոց, և բազում նեղութիւնս անցուցին ընդ Կոստանդնուպօլսի. և փառաւոր իշխանք մատնեցան ի գերութիւն, զորս ոչ կարեմ պատմել զաղէտս թախանձանացն, զոր կրեաց տունն Հոռոմոց յամին յայնմիկ. վասն զի գազանապէս և անողորմ գերեցին զազգն Յունաց. և թագաւորն զարհուրեալ ոչ իշխեաց ելանել ի պատերազմ, զի անթիւ և անհամարք էին զօրք թշնամեացն. և զբաղում աւուրս կացեալ՝ դնացին յաշխարհն իւրեանց. և ապա այնուհետև եղև խաղաղութիւն յաշխարհին Հոռոմոց:

Իսկ յորժամ բարձրացեալ աւարտեցաւ թուականս Հայոց ազգիս ի յամս Շ, մատեան առ թագաւորն Մոնոմախ չարաթոյնք և լեզուք նենգաւորք և մատուցանէին չարախօսութիւն վասն փառաւոր իշխանաց Հայոց, որք ի գաւառն Պաղնայ բնակեալ կային, և ասացին՝ թէ Անհնազանդ կան հրամանաց քոց և կամին ապստամբ լինել ի քէն: Եւ առաքեաց զօրապետս հանդերձ զօրօք ի Պաղին և անիրաւարար հեղոյր զչարութեան թոյնս իւր ի վերայ անմեղաց. և բարկութեամբ սկսաւ ապա-

հին վրաց զինվորներից մեկը, որ ետ էր մնացել, թրով կտրեց Լիպարիտի ձիու երկու ջլերը։ Լիպարիտը իմանալով այդ, փութանակի շուռ եկավ և սատակացրեց նրան։ Ինքը՝ Լիպարիտը ցած իջնելով, նստեց գետնին՝ վահանի վրա և ձայն տալով ասաց. «Ես եմ Լիպարիտը»։ Այլազգիներն այն ժամանակ վրաց զինվորներից շատերին կատորեցին, մնացածներին էլ փախուստի մատնեցին, իսկ Լիպարիտին էլ գերի վերցնելով տարան Խորասան, Տուղրիլ սուլթանին. վերջինիս վաղուց էր հասել Լիպարիտի համբավը՝ տեղյակ էր նրա բոլոր ձիրքավորություններին։ Նա սուլթանի մոտ մնաց երկու տարի և այլևայլ վայրերում սքանչանքներ գործեց։ Այլազգիները սուլթանի առջև հանեցին մի հզոր և քաջ խափշիկի՝ Լիպարիտի հետ մենամարտելու։ Լիպարիտը հաղթեց և սատակացրեց այլազգի խափշիկին։ Դրա վրա սուլթանն ազատ արձակեց Լիպարիտին և մեծ նվերներով հոռոմոց երկիրն ուղարկեց։ Լիպարիտը եկավ Կոստանդնուպոլիս։ Մոնոմախ կայսրը, տեսնելով նրան, շատ ուրախացավ և, մեծամեծ ընծաներ տալով, ճամփեց տուն՝ կնոջ և որդիների մոտ։ Այս Լիպարիտը Ռատի և Ջոյատի եղբայրն էր, ազգությամբ վրացի[177], անվանի ընտանիքից։

Հայոց 499 թվականին [9 մարտ 1050—8 մարտ 1051 թ.] հոռոմոց երկրում մեծ տակնուվրայություն եղավ, և բազում գավառներ սրի քաշվեցին։ Սոսկալի դժբախտություններ, դառն օրեր եկան չար և արյունարբու գազանների՝ պածինակների[178] անհավատ և պիղծ ժողովրդի ձեռքով։ Օձերի ազգը[179] ոտքի ելավ և հարվածեց խարտյաշներին[180], խարտյաշներն ելան ու հարվածեցին ուզերին և պածինակներին, և այդ բոլորը միասին խուժեցին հոռոմոց երկիր և Կոստանդնուպոլիսը դցեցին ծանր դրության մեջ։ Փառավոր իշխաններ գերի տարվեցին։ Ես ի վիճակի չեմ պատմել այդ տարին հոռոմոց երկրի գլխին եկած ծանր ադետների մասին, քանզի գազանի անգթությամբ նրանք գերեցին հույն ժողովրդին։ Կայսրը սարսափած չհամարձակվեց կռվի դուրս գալ, որովհետև թշնամու զորքն անթիվ-անհամար էր։ Երանք բազում օրեր մնալուց հետո դնացին իրենց երկիրը, և հոռոմոց երկրում խաղաղություն տիրեց։

Երբ սկիզբ առավ մեր հայոց ազգի 500 թվականը [9 մարտ 1051—7 մարտ 1052 թ.], քսու և նենգավոր մարդիկ գնացին Մոնոմախ կայսեր մոտ և վատաբար ամբաստանեցին Պաղին[181] գավառում բնակվող հայոց փառավոր իշխաններին, թե «նրանք չեն հնազանդվում քո հրամաններին և ուզում են քո դեմ ապստամբություն բարձրացնել»։ [Կայսրը] զորահրամանատարի գլխավորությամբ զորքեր ուղարկեց Պաղին, որն անարդար կերպով իր չարության թույնը թափեց անմեղ մարդկանց վրա.

կանել զամենայն գաւառն. և զամենայն իշխանսն սկսաւ ի վառաց ընկենուլ, վասն զի էր այր պիղծ և չար, որ էր զօրագլուխ սատանայի, որոյ անուն նորա Պետրոս ճանաչի. և կամեցաւ որ զմեծ իշխանսն զորդիսն Հարկի ձերբակալս առնել, զՀարսպիկն այր քաջ և զհզօր և զԴաւիթ և զԼևսն և զԿոստանդին՝ զչորս եղբարսն, այսմ օրինակաւ և զայլ իշխանսն: Յայնժամ իշխանքն ծածկաբար խորհուրդ արարին զի ամենայն ոք զիւր ամրոցն բռնեսցէ՝ մինչև ծանուցանեն թագաւորին զաւերումն գաւառին յանօրէն Պետրոսէ. և միաբան արարին երդումն միաբանութեան՝ զի յայդ շաբաթու առցէ ամենայն ոք զիւր ամրոցն: Եւ յայնժամ մի ումն ի միաբանելոցն՝ Թորոսակ անուն՝ տէրն Թլպաղայ, ուրացաւ զերդումն և ազդ արարեալ անօրէն Պետրոսին, թէ ամենայն իշխանքն միաբանեցան չկալ ի կոչումդ քո. և զայս ամենայն ոչ դիտացեալ Հաբելի որդւոցն, և որպէս յառաջն ասացեալ էին՝ յաւուր շաբաթուն առին զմեծ ամրոցն՝ որ կոչի Արկնի, որ էր մերձ ի գաւառն Թլմխոյ. և այլ ամենայն միաբանքն գնացին ի կոչն Պետրոսին: Եւ լուաւ զայն, զոր արարին որդիքն Հաբելի, ուստր ժողով ի վերայ բերդին Արկնոյ զօրս բազումս. և տեսանէր զամրութիւն բերդին՝ հիանայր յոյժ և ոչ կարէր պատերազմել, վասն զի բարձր էր յոյժ և անառ էր ի թշնամեացն. և ոչ կարաց մերձենալ ի նա: Եւ յայնժամ խորհեցաւ զայս ինչ չար և ասաց. «Եթէ ոք բերցէ զգլուխ Հարպականն առ իս, առցէ գանձ ոսկւոյ և արծաթոյ բազում և իշխանութիւնս և մեծութիւնս ի թագաւորէն»: Եւ լուեալ զայս սննդակիցք և նախաձանօթքն իւր, որք առ ինքն էին ի բերդն, և խորհեցան խորհուրդ անօրէնութեան զՅուդայի և զկայենի եղբայրասպանին: Եւ էր մօտ ի բերդն տեղի հակառակ, և Հարսպիկն առեալ արս և ելեալ պահէր զտեղին. և զաւուրս երեք ոչ իշխեաց ննջել ամենևին. և ասեն նենգաւորքն. «Վասն է՞ր ոչ ննջես, տէր մեր, զի ահա այսօր անձինք մեր մեռանին ի վերայ քո անձինդ»: Եւ հաւատացեալ նոցա՝ ննջեաց, զի ձանձրացեալ էր յոյժ. և իբրև քաղցրացաւ ի քունն, յարուցեալ ազգականն իւր հատանէր զգլուխն Հարպականն՝ զառն հզօրի և քաջի, և ի նոյն գիշերին հասուցանէին զգլուխն առ Պետրոս կատապանն. և սպանողքն ոչինչ օգուեցան՝ բայց միայն անէծս: Եւ հրամայեաց Պետրոս ի ձող ցցել զգլուխ Հարպականն և տանել ընդդէմ դրան բերդին. և ի լուսանալն տեսեալ եղբարցն նորա՝ ծանեան և վաղվաղակի բացեալ զդուռսն և արկեալ հող ի վերայ գլխոց իւրեանց և լալով գային երեք եղբարքն և անկանէին առաջի հատեալ գլխոյ Հարպականն. և այնչափ կոծ առեալ նոցա, մինչև ողբս առեալ լային ամենայն զօրք բանակին: Եւ այսպիսի

Նա վայրացած սկսեց ավերել բովանդակ գավառը, բոլոր իշխաններին պատվաղուրկ արեց, քանզի պիղծ ու չար մարդ էր, սատանայի զորահրամանատարը, որ հայտնի էր Պեռոս անունով։ Նա ուզեց ձերբակալել Հաբելի որդիներին՝ մեծ իշխաններ՝ քաջ և հզոր Հարպիկ, Դավիթ, Լևոն և Կոստանդին չորս եղբայրներին, նույն ձևով նաև մյուս իշխաններին։ Դրա վրա բոլոր իշխանները գաղտնի համաձայնության եկան, որ յուրաքանչյուրը տիրանա իր ամրոցին, մինչև որ կայսեր տեղեկացնեն անօրեն Պեռոսի՝ գավառն ավերելու մասին։ Նրանք մի մարդու պես համերաշխության երդում տվեցին, որ շաբաթ օրվա առավոտյան ամեն մեկը կգրավի իր ամրոցը։ Բայց պայմանավորվածներից մեկը՝ Թլպադի[182] տեր Թորոսակ անունով մեկը, ուրացավ երդումը և անօրեն Պեռոսին հայտնեց, թե բոլոր իշխանները համաձայնության են եկել չգալ քո հրավերին։ Հաբելի որդիները, այդ մասին անտեղյակ, պայմանավորվածության համաձայն շաբաթ օրը տիրացան Թլմուխ[183] գավառին մոտիկ գտնվող Արկնի կոչված մեծ ամրոցին։ Իսկ մնացած բոլոր իշխանները, ովքեր [չէին] պայմանավորվել, գնացին Պեռոսի հրավերին։ Պեռոսը, լսելով Հաբելի որդիների արածի մասին, Արկնի բերդի դեմ բազում զորքեր ուղարկեց։ Նա հիացավ բերդի անառիկությամբ. չէր կարողանում նրան մոտենալ և պատերազմել, որովհետև այն շատ էր բարձր և թշնամիների համար՝ անառիկ։ Դրա վրա նա չար միտք հղացավ և ասաց. «Ով որ ինձ բերի Հարպիկի գլուխը, նա կայսրից կրստանա բազում ոսկի և արծաթ, պաշտոն ու պատիվ»։ [Հարպիկի] մանկության ընկերները և հին ծանոթները, ովքեր նրա մոտ՝ բերդում էին գտնվում, լսելով այդ մասին, Հուդայի և եղբայրասպան Կայենի անօրեն միտքը հղացան. Բերդի մոտ էր գտնվում մի խոցելի վայր. Հարպիկը զինվորներով այնտեղ էր դնացել և պահպանում էր այն։ Նա երեք օր ամեննին աչք չէր փակել։ Նենգավորներն ասում են նրան. «Ինչո՞ւ չես քնում, մեր տեր. հենց այսօր իսկ մենք պատրաստ ենք քեզ համար մեր կյանքը զոհելու»։ Հավատալով նրանց խոսքին, Հարպիկը քնեց. Նա շատ էր հոգնած։ Երբ քունը խորացավ, նրա ազգականը հզոր և քաջ Հարպիկի գլուխը կտրեց և նույն գիշերն իսկ այն հասցրեց կատապան Պեռոսին։ Ոճրագործները, սակայն, բացի աննշանքից, այլ բան չվաստակեցին։ Պեռոսը հրամայեց Հարպիկի գլուխը ձողի վրա դցել և տանել բերդի դռան դիմաց։ Երբ լուսացավ, Հարպիկի երեք եղբայրները տեսան այդ բանը, ճանաչեցին իրենց եղբոր գլուխը և, փութանակի բացելով դարպասը, իրենց գլխին հող թափեցին և լալագին եկան ընկան Հարպիկի կտրված գլխի առջև։ Նրանք այնպես աղիողորմ էին ողբում, որ ճամբարի բոլոր զինվորները լաց եղան։ Ահա Պեռոսը այսպիսի ճանա-

օրինակաւս տիրանայր Պետրոսն ամուր բնդդին Արկնոյ և զեղբարան Հարպկանն՝ զորդիսն Հաբելի տարաւ ի Կոստանդնուպօլիս առ թագաւորն Մոնոմախն։ Եւ տեսեալ զնոսա թագաւորն և ամենայն տունն Յունաց, հիանային ընդ սոսկալի տեսիլ կերպարանացն նոցա, վասն զի ահաւոր էին տեսլեամբ և թիկամբքն հանդերձ բարձր էին քան զամենայն տունն Յունաց. և յաղագս գեղեցիկ տեսլեանն ոչինչ արար խրատ նոցա, այլ հրամայեաց անյուսանել զնոսա ի կղզի՝ զԴաւիթ և զՀևոն և զԿոստանդին, զայր քաջք և հզօրք և երեվելի իշխանք Հայոց։

պարհով տիրացավ Արկնի անառիկ բերդին և Հարսիկի եղբայրներին տարավ Մոնոմախ կայսեր մոտ՝ Կոստանդնուպոլիս։ Կայսրը և հունաց ողջ ժողովուրդը, տեսնելով նրանց ահեղ արտաքինը (նրանք ականածալից տեսք ունեին և իրենց հաղթանդամությամբ գերազանցում էին բոլոր հույներին), ապշել էին։ Նրանց գեղեցիկ արտաքինը նկատի ունենալով, կայսրը մարմնական ոչ մի պատժի չենթարկեց նրանց, այլ հրամայեց հայոց քաջ, հզոր և երևելի իշխաններ Դավթին, Լևոնին և Կոստանդնին կղզի աքսորել։

[ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ]

Արդ մինչև ցայս վայրս բազմաջան և աշխատասեր քննութեամբ գտեալ դրեցաք զշարադրական գրեալս զհարիւրից ամաց, զորս ի բազում ժամանակաց հետաքննեալ հատու եղաք։ Ընդ այնքանեաց տեսողացն և լսողացն, որք էին ի հին ամայ ծննդեանն, և ընդ ընթերցողսն յառաջին պատմագրացս, որք ականատեսք էին լեալք ամենայն եղելոցս և ննդութեանցս այսոցիկ, զոր վասն մեզաց կրեաց տունն Հայոց և ահատուր. զայս բազում անգամ զմտաւ ածեալ եմ, վասն այս յետին ժամանակիս գրել զդառնաշունչ կատարածսն, զայս սոսկալի բարկութիւնս, զոր կրեաց ազգս Հայոց ի դիւսաւոր և ի սիրտ եղիմնացուոց ազգին Թուրքաց, յեղբարց իւրեանց Հոռոմոց։ Եւ վասն այսորիկ հարկ եղև և ի մըտաց խորհրդոյս իմոյ անդադար յուզմամբ իբրև զմեծ իմն համարելով՝ գտանել զայս զորս կատարածի. և վասն այսորիկ զօրաժողով արարի և զրնդի մինչև ցայս վայր զերիք ազգացս և զհայրապետացս և զայլ պէտսն քննութեանց զազգացդ և զթագաւորացդ՝ զորս յառաջ ասացաք և որ զկնի ներս ասացուք՝ զսկիզբն կատարածիս, զոր ինչ եղև յաւուրս Տարսն մերոց, որք էին տեսեալ բազում անգամ աչօք իւրեանց։ Զոր և իմ իսկ խորհեալ խորհուրդս զայս և զութ ամ անհանգիստ կացի և զայս ամենայն յաժարեցի ի տեսութիւն և ի մատենագրութիւն ածել գրով, վասն զի մի՛ ի չարաշունչ դառնութեան ժամանակս կորիցի այս ամենայն և մոռացի։ Եւ վասն այսորիկ ես Մատթէոս Ուռհայեցի և վանականն՝ զաշխատասիրեան զգործս իմ ոչինչ համարեցայ, այլ Թողի զայս ի յիշատակ սիրողաց ժամանակագրութեանց, զի յորժամ ի հանդէս քննութեան ելցեն յաղագս ժամանակաց անցելոցն, դիւրաւ կարասցեն գտանել զժամս և զժամանակս և զկատարած բարկութեանն ի վերայ ժամանակացն գըտանիցեն և այնու ևս զմտաւ ածեալ յիշեսցեն զաստուածաստաց բարկութիւնն՝ զոր վասն մեղացն ընկալաք զհատուցումն յԱրդար Դատաւորէն Աստուծոյ. և վասն այսորիկ կողմանց զկերպուստ հաւատացելոցն և զխրատս, զոր անօրէն ազգաւ խրատեաց զմեզ Տէր Աստուած մեր.

[ՍԱՄՍ ԵՐԿՐՈՐԴ]

Ահա մինչև այստեղ բազմաջան, հոգնաջան և երկարատև պրպտումներ կատարելով, մեզ հաջողվեց շարադրել հարյուր տարվա [պատմությունը]։ Դա [հնարավոր եղավ կատարել] շատ առաջ ծնված ականատես և ականջալուր մարդկանց [ասածի] հիման վրա և հին պատմագիրների [գործերն] ընթերցելով, պատմագիրներ, ովքեր ականատես էին եղել բոլոր անցքերին ու այսպիսի ահավոր նեղություններին, որ հայոց երկիրը կրեց մեր մեղքերի պատճառով։ Ես բազմիցս մտածել եմ գրել նաև այս հետին ժամանակների, դառն փորձանքների, այս սոսկալի պատիժների մասին, որ տեղացին հայ ժողովրդի գլխին մազոտ և պիղծ եղիմնացվոց[184], այն է՝ թուրք ժողովրդից և իրենց եղբայր հոռոմներից։ Ես անդադար մտազբաղ էի և, նման գործը կարևոր համարելով, ցանկացա ավարտին հասցնել այն։ Այդ իսկ պատճառով [նյութը] հավաքեցի և մինչև այստեղ շարադրեցի երեք աղգերի և հայրապետների[185] [պատմությունը], ինչպես նաև քննության առա աղգերն ու թագավորները, որոնց մասին խոսք եղավ վերևում։ Այսուհետև ևս, հավանաբար, խոսենք կորստյան սկզբի մասին, այն մասին, թե ինչ տեղի ունեցավ մեր հայրերի օրոք, մի բան, որին նրանք բազմիցս ականատես եղան։ Այդ մասին ես մտածեցի, ութ տարի զբաղվեցի և նպատակահարմար գտա այդ բոլորը հաղորդել՝ գրի առնելով մատյանում, որպեսզի այս դառն ու վշտալի ժամանակներում անհետ չկորչի և մոռացության չտրվի։ Դրա համար ես՝ վանական Մատթեոս Ուռհայեցիս, անտես առնելով իմ հոգնաջան աշխատանքը, հիշատակ թողեցի նրանց, ովքեր սիրում են ժամանակագրությունները, որպեսզի երբ նրանք որոշեն հետազոտել անցած ժամանակների [պատմությունը], կարողանան հեշտությամբ գտնել [դեպքերի կատարման] ժամն ու ժամանակը, իմանան մարդկանց գլխին եկած փորձանքները, հիշեն և մտածեն աստծո սոսկալի պատժի մասին, որ մեր մեղքերի համար ստացանք արդար դատավոր աստծո կողմից, իմանան տարբեր վայրերում հավատացյալների կորստյան և այն պատիժների մասին, որ անհավատ ժողովրդի

և ահա որ ոչ կամեցաք զսպառնալիսն և զիրատն Աստուծոյ մոռացուցանել ի վերայ մեր: Արդ արժան է միշտ և հանապազ լսել զիրատն Աստուծոյ մերոյ. և դարձեալ ի նոյն պատուհասն մեզացն դեգերեալ շրջիմք, զորս ընկալաք ըստ արժանիս մերոց գհատուցումն: Նա և այլ ևս ունիմք ասել ձեզ ամաց ութսնից զաշխատութենէ Մատթէոսի Ուռհայեցւոյ և վանաց երիցու:

Իւր ի լինել Թուականութեանս Հայոց ՇԻ՝ եղև ահաւոր նշան և սոսկալի, և կատարած մեծի բարկութեան երևեալ ի մեծ քաղաքն Անտիոք, զոր ի ներքոյ արեգականն գործեցաւ այս սքանչելիս, որ է տեսողացն ահաւոր և հրաշալի: Եւ եղև այս նշանս և դղրդումն ամենայն հաւատացելոց Քրիստոսի, զոր այժմ մեծասաստ սպառնալեօք յայտնեաց Աստուած զդատաստան իւր գահաւոր: Եւ եղև պատճառ բարկութեանն այսպէս. և արդ վասն ղի ազգն Ասորւոց բազում էին ի քաղաքն Անտիոք ոսկւով և արծաթով, լցեալ հարստութեամբ և ամենայն փառաւորութեամբ, և մանկունք նոցա յորժամ երթային յեկեղեցին իւրեանց, տեղայք ձիով հարիւր ի ջորւոջս նստեալ գային, և ազգն Հոռոմոց ոխացեալ էին յոյժ մեծաւ չարութեամբ: Եւ մի ումն իշխան յԱսորւոց ազգէն ունէր կապելոս բազում. և յաղագս այսր պատճառանացս լինէր մեծ դատաստան առաջի պատրիարգին Հոռոմոց. և սիրաբար վասն դատաստանին դարձուցին զնա ի հաւատոյ իւրոյ և կնքեցին զնա Հոռոմ իւր կամաւորութեամբն և իշխանն, որ գհատուտսն ևթող և եղև հակառակ մեծ ազգին Ասորւոց: Եւ յայնժամ մատնեցան Ասորիքն ի մեծ նեղութիւն, վասն ղի սկսան հաւատոյ քննութիւն առնել հանապազօր. և այնչափ լրտեալ եղեն ազգն Հոռոմոց, որ և զգործեալն ոչ կարացին գիտել, վասն ղի զքրիստոսական աւետարանն հրով այրել հրամայեաց պատրիարգն: Եւ եղև յորժամ ի հուրն դրին զաւետարանն Աստուծոյ, ձայն ելանէր յաւետարանէ անտի, և ի կրակէն ի դուրս ելանէր. և նոքա երկրորդ անգամ ի կրակն դնէին զաւետարանն, և նա դարձեալ ելանէր ի կրակէն: Իսկ նոքա կատաղեալ լրբութեամբ ձգեալ երրորդ անգամ զսուրբ աւետարանն ի կրակն, և նա ելեալ դեռ անվնաս: Եւ իբրև կրկնեցին չորրորդ անգամ, յայնժամ ընկալաւ սուրբ աւետարանն զայրեցուղութիւն կրակին ի մէջ հրոյ, և այրեցաւ սուրբ աւետարանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի քաղաքն Անտիոք ի յաղգէն Հոռոմոց: Եւ եղև յորժամ դարձաւ պատրիարգն յեկեղեցին և ամենայն ժողովն ի յայրմանէ տեղւոյն, լցեալ էին ուրախութեամբ՝ որպէս թէ յաղթեցին չար թշնամեացն: Եւ իբրև մտան յեկեղեցին ի սուրբն Պետրոս, գոչեաց առ հասարակ ամենայն եկեղեցին ահաւոր գոչմամբ և եղև շարժ սաստիկ և դողացոյց զամենայն քաղաքն Անտիոքայոց: Եւ եղև ի միւս այլ աւուրն անկաւ

ձեռքով ուղարկեց մեզ մեր տեր աստվածը. մենք չուզեցինք մոռացության տրվի աստծո՝ մեզ ուղարկած ահն ու պատիժը։ Արդ, պետք է միշտ և անդադար լսել մեր աստծո խրատը, քանզի շարունակում ենք դեգերել փորձանք բերող մեղքերի մեջ, որոնց համար է, որ մենք ստացանք արժանի հատուցումը։ Մենք տալիս ենք վաներեց Մատթեոս Ուռհայեցու աշխատասիրած ևս ութսուն տարվա [պատմությունը][186]։

Հայոց 502 թվականին [8 մարտ 1053—7 մարտ 1054 թ.] ահավոր և սոսկալի հրաշք եղավ, մեծ պատիժ եկավ Անտիոք երևելի քաղաքի դլխին։ Երկրում կատարված այս հրաշքը ականատեսների համար ահավոր էր և զարմանալի և բոլոր քրիստոնյաներին գցեց ահ ու դողի մեջ։ Աստված իր ահավոր դատաստանն էր ցույց տվել ահասարսուռ սպառնալիքներով։ [Աստծո] ցասման պատճառը հետևյալն էր։ Անտիոք քաղաքում կային ոսկու և արծաթի տեր շատ հարուստ ու փառավոր բազմաթիվ ասորիներ։ Նրանց երեխաները՝ հինգ հարյուր հոգի, ջորիների վրա նստած էին գնում իրենց եկեղեցին։ Հոռոմները սաստիկ նախանձում էին և չարացել էին։ Ասորի մի իշխան ուներ բազմաթիվ սպրուկներ, որի համար հոռոմոց պատրիարքը մեծ դատ բացեց նրա դեմ։ Դատաստանի [սպառնալիքի] տակ նա դավանափոխ եղավ և կամավոր կերպով հունադավան դարձավ. դավանափոխ լինելով, նա հանդես եկավ ասորոց մեծ ժողովրդի դեմ։ Այն ժամանակներում ասորիները մատնվեցին մեծ նեղության, որովհետև [հոռոմները] սկսեցին ամեն օր հալածանքներ բերել նրանց։ Հոռոմոց ժողովուրդը այն աստիճան լկտիացավ, որ չափն ու սահմանն անցկացրեց։ Նրանց պատրիարքը հրամայեց կրակի տալ Քրիստոսի ավետարանը։ Երբ աստծո ավետարանը կրակը նետեցին, ավետարանից ձայն լսվեց. ավետարանը մնաց անվնաս։ Նրանք այն երկրորդ անգամ կրակը նետեցին, բայց նորից անվնաս մնաց։ Կատաղած հոռոմները ավետարանը լրբաբար երրորդ անգամ կրակը գցեցին, բայց նա նորից մնաց անվնաս։ Սակայն երբ այն չորրորդ անգամ կրակը նետեցին, այն ժամանակ ավետարանն իր մեջ ընդունեց կրակի այրող հատկությունը։ Մեր Քրիստոս-աստծո ավետարանը Անտիոք քաղաքում հոռոմոց ժողովրդի կողմից հրո ճարակ դարձավ։ Պատրիարքն ու [հոռոմ] ողջ ժողովուրդը, կարծես ոսոխների դեմ հաղթանակ տարած, ուրախացած վերադարձան եկեղեցի։ Երբ մտան Սուրբ Պետրոսի եկեղեցին, ամբողջ եկեղեցին ահավոր գոչյուն բարձրացրեց, ուժեղ երկրաշարժ եղավ և անտիոքացոց բովանդակ քաղաքը սասանվեց։ Հաջորդ օրը Սուրբ Պետրոսի եկեղեցու վրա երկնքից

հուր յերկնից ի վերայ եկեղեցւոյն սուրբ Պետրոսի, և որպէս ղղամբար ի հիմանցն ի վերայ ամենայն եկեղեցին առ հասարակ բորբոքեալ լինէր հրով, և որպէս զփայտակոյտս այրեցաւ քարն, և բոցն բարձրացեալ ելանէր յերկինս. և պատառեցաւ խորանն և զսեղանն խորհրդոյն տարաւ յանդունդս և ղլուսաւոր ակն՝ զոր մեծն Կոստանդիանոս եդեալ էր ի սուրբն Պետրոս ընդ քսան բիւր ոսկւոյ, որ կայր հանապազ ի վերայ սրբոյ սեղանոյն ի լուսաւորութիւն դիշերոյն, կլաւ երկիր և այլ ոչ կարացին գտանել: Եւ այլ քառասուն եկեղեցի այրեցան հրովն երկնային ընդ սուրբ Պետրոսին և Հայոց կամ Ասորւոց ոչ ինչ եղև վնաս: Եւ յորժամ այս այսպէս գործեցաւ, ահաբեկեալ եղև ամենայն քաղաքն Անտիոքացւոց և կային ահիւ և դողութեամբ. յայնժամ սկսան ամենեքեան աղօթս առնել ամենայն քաղաքն առ Աստուած լալով և բազում հառաչանօք աղաչել զԱստուած. և ելանէր պատրիարգն հանդերձ քահանայիւք և սարկաւագօքն և կղերիկոսօք և այլ բազում ժողովրդովք արանց և կանանց, ծերց և տղայոց և ժամօք շրջէին ի քաղաքին զարդարանօք և ամենայն փառաւոր սպասիւք եկեղեցականօք. և եղև յորժամ հասանէին ի Հոռոմ մատանն՝ ի տեղին, ուր փոքր կամուրջն կայ ընդ հեղեղաղնացս լերինս, յանկարծակի զուլաց ամենայն գետինն, և եղև շարժ ի միջօրէին ի վեցերորդ ժամուն. և նոյն ժամայն պատառեցաւ երկիրն և բացեալ զբերան իւր և զպատրիարգն և զամենայն բազմութիւնն քահանայից և զժողովրդոցն տարաւ յանդունդս աւելի քան զքիւր մի. և զաւուրս հնգետասան զայր ձայն աղաղակի նոցա ի խորս անդնդոյ. և ապա անշնչացան, զի կնքեցաւ երկիրն ի վերայ նոցա, որ կան մինչև ցայսօր. զորս ի ձեռն բազմագիմի չանցանացն կրեցին բնակիչք քաղաքին Անտիոքացւոց ի չարդար Դատաւորէն Աստուծոյ: Վասն զի չէին իսկ արժանի չիշել զգործս անօրէնութեանն նոցա, զոր գործէին եկեղեցականքն և ամենայն դասք հաւատացելոցն Յունաց ի քաղաքն Անտիոք. զի առաւել բարձրացաւ ծուխ անօրէն գործոցն նոցա քան զՍոդոմայ և զԳոմորայ, վասն որոյ և պատուհասն ցուցանէր զփոխարէն հատուցումն նոցա ըստ գործոցն. զի ահա անդ հուրն հասանէր ի սատակումն չարաչար գործողացն և աստ զնոյն չարագործսն հրով և պատառմամբ անդնդոյ բնաջինջ սատակեաց ի մեղսասէր քաղաքն Անտիոք, որ դեռ իսկ ի նոյն բորբոքեալ կան անպատկառելի հաւատօք. զի ահա աստուածպաշտութեամբ զանհաւատիցն և զանօրինացն գործէին զգործսն, վասն զի բորբոքեցան ի գործս աղտեղիս, զոր և լսողացն ծանր է առ ի լսել և ասողացս կարի զաղարալի: Եւ գործողացն զի՞նչ ասացից, զի մինչ զկին հայելն մեզ ծանր դրեաց Փրկիչն, զարուամոլութեանն զի՞նչ

կրակ թափվեց, և այն ... ջահ, հիմքից հրդեհվեց։ Քարերն այրվեցին փայտի պես, և բոցը բարձրացավ մինչև երկինք։ [Սուրբ] խորանը պատռվեց, [սուրբ] խորհրդի սեղանն ընկղմվեց անդունդը՝ իր հետ տանելով լուսաշող ադամանդը, որ Կոստանդին Մեծը երկու հարյուր հազար ոսկով առել և Սուրբ Պետրոսի [եկեղեցուն] էր նվիրել։ Ահա այդ ադամանդը, որ մշտապես սուրբ սեղանի վրա էր գտնվում դիշերը լուսավորելու համար, երկիրը կուլ տվեց և այլևս հնարավոր չեղավ գտնել։ Սուրբ Պետրոս եկեղեցու հետ միասին հրո ճարակ դարձան քառասուն եկեղեցի ևս, բայց հայոց կամ ասորոց եկեղեցիները ոչ մի վրնաս չկրեցին։ Այդ բանի վրա Անտիոքի ամբողջ բնակչությունը սարսափահար եղավ, բոլորն ընկան ահ ու դողի մեջ։ Ամբողջ քաղաքի բնակչությունն սկսեց աստծուն աղոթել, լալով ու հառաչելով նրան պաղատել։ Պատրիարքը՝ քահանաների, սարկավագների, դպիրների, տղամարդկանց և կանանց, մեծերի ու փոքրերի հոծ բազմությամբ, զարդարանքներով և եկեղեցական ամեն տեսակի սպասներով դուրս էր եկել և պատարագ մատուցելով շրջում էր քաղաքով մեկ։ Երբ հասան Հռոմեական հրապարակը, այնտեղ, որտեղ լեռներից հոսող հեղեղատի վրա փոքր կամուրջ է գցած, հանկարծակի ամբողջ գետինը դղրդաց և կեսօրին՝ վեցերորդ ժամին, երկրաշարժ եղավ։ Նույն ժամին պատռվեց երկիրը և, բացելով իր երախը, պատրիարքին և քահանաների ու ժողովրդի ողջ բազմությանը՝ ավելի քան տաս հազար հոգի, անդունդը տարավ։ Անդունդի խորքից տասնհինգ օր շարունակ նրանց աղաղակի ձայնն էր բարձրանում։ Այնուհետև նրանք անշնչացան, որովհետև երկիրը փակվեց նրանց վրա. մինչև օրս էլ այնտեղ են նրանք՝ Անտիոք քաղաքի բնակիչները, որոնց արդար դատավոր աստվածը պատժեց իրենց ամեն տեսակի մեղքերի համար։ Չարժե հիշել նրանց եկեղեցականների և ընդհանրապես բոլոր հունադավանների գործած անօրենությունները Անտիոք քաղաքում. նրանց անօրեն արարքների ծուխը ավելի վեր բարձրացավ, քան Սոդոմ Գոմորի, այդ իսկ պատճառով՝ իրենց գործած արարքների համար նրանք ըստ արժանվույն պատժվեցին։ [Սոդոմ Գոմորում] կրակ թափվեց չարագործների սատակման համար, այստեղ ևս՝ մեղսասեր Անտիոք քաղաքում նման չարագործներին [աստված] հրով և անդունդը գլորելով բնաջնջեց, հակառակ դրան նրանք դեռ հաստատուն մնացին իրենց խայտառակ դավանանքի մեջ։ Նրանք աստվածապաշտության [քողի տակ] անհավատներին և անօրեններին վայել արարքներ են գործում, քանզի անչափ տարվեցին աղտեղի գործերով, որի մասին լսելը ծանր է, իսկ պատմելը՝ անչափ խորշելի։ Էլ ինչ ասեմ [անօրենություններ] գործողների մասին։ Եթե Փրկիչը կնոջ վրա նայելն

ասացից. զոր և ինքն Տէր հատուցանէր զհատուցումն Անտիոք քաղաքին։

Յամի և ի թուականութեանն Հայոց ազգիս ՇԹ զարթեալ եղև օդն դառնաշունչ և մահաբեր ի վերայ աշխարհին Հայոց, վասն զի շարժեալ եղև յաթոռոյն իւրմէ սուլտանն Պարսից Տուղրիլ և գայր ահագին բազմութեամբ իբրև զաւազ ծովու և խաղացեալ անթիւ զօրօք հասանէր ի Հայաստան աշխարհն, իջեալ ի քաղաքն, որ կոչի Բերկրի, և պատերազմաւ առեալ զքաղաքն, մաշեաց դառնաշունչ մահուամբ։ Եւ յարուցեալ որպէս զսեաւ ամպս հրացայտս և գայր հասանէր հանդերձ մահաբեր կարկտիւն և պատեալ զքաղաքն, որ կոչի Արճէշ, և սաստիկ պատերազմ յարուցանէր ի վերայ քաղաքին զաւուրս ութ. և ի բազմութենէ զօրացն ձանձրացեալ քաղաքացիքն ի դառն պատերազմէն և այնուհետև մեծաւ աղաչանօք գային ի հնազանդութիւն ի ձեռն բազում ընծայիւք ոսկւոյ և արծաթոյ, ձիոց և ջորւոց. և սիրոյ սկիզբն արարին մեծաւ պաղատանօք և ասացին. «Ո՛վ աշխարհակալ սուլտան, երթ և ա՛ռ զքաղաքն Մանծկերտ, և յայնժամ մեք և ամենայն աշխարհն Հայոց քեզ լիցուք ի ծառայութիւն»։ Եւ լուեալ զայս Տուղրիլ սուլտանն, և հաճոյ թուեցաւ նմա ամենայն բանքս այս. և յարուցեալ բազմութեամբ զօրօք իւրովք հասանէր ի քաղաքն Մանծկերտ, և էր որպէս զօձ լցեալ ամենայն չարութեամբ։ Յայնժամ բանակ հարկանէր և պատէր շուրջ զքաղաքաւն, և իջանէր ի տեղին, որ Քարպլուխ կոչի, և անդ օթևանս արարեալ։ Իսկ յորժամ բաժանէր առաւօտն, հրամայէր հարկանել զպատերազմողական փողն և ահա անդ էր տեսանել զահաւոր օրն և զդառնութիւն ի վերայ քրիստոնէիցն, յորժամ պատեայ զքաղաքն Մանծկերտ. զի յորժամ ձայնքն և հնչիւնքն պատերազմողականացն փողոցն հարկանէր և առ հասարակ ձայնք զոչմանց զօրաց պատերազմականացն զպարիսպն առ հասարակ դողացուցանէր։ Իսկ այժմ վասն քրիստոնէից քաղաքին զի՞նչ ասացից, որք արիաբար նահատակեալք միաբան ամենայն բազմութիւնք քաղաքին, որք կային ընդդէմ անվճարելի պատերազմացն։ Եւ էր զօրապետ քաղաքին իշխանն Հոռոմոց Վասիլն՝ որդի Ապուքապայ, այր բարի և աստուածապաշտ։ Սա զօրացուցանէր զամենայն քաղաքն՝ զարս և զկանայս քաջասիրտս, և խոստանայր ի թագաւորէն ամենեցուն փառս և իշխանութիւնս և զտիւ և զդիշեր ոչ դադարէր ի քաջալերել և ի յորդորել զամենայն քաղաքն։ Իսկ զօրք այլազգեացն ոչ դադարէին ի պատերազմելոյ զքաղաքն զաւուրս և արարին գետնափոր ի ներքոյ գետնոյ, վասն զի այնիւ առցեն զքաղաքն. և իմացեալ զօրքն քաղաքին փորելոյն հանդէպ նոցա և կալան զամենայն փորողսն, կալան և զանձերն սուլտանին, որոյ անուն Ոսկեծամ ասէին, և հանեալ

անգամ վատ բան համարեց, հապա ի՞նչ ասեմ ես արվամոլության մասին, որի համար Տերը վրիժառու եղավ Անտիոք քաղաքից։

Հայոց ազգիս 503 թվականին [8 մարտ 1054—7 մարտ 1055 թ.] հայոց աշխարհի վրա փչեց դառնաշունչ և մահաբեր քամի։ Պարսից Տուղրիլ սուլթանը, հսկայական բազմությամբ, ինչպես ծովի ավազ, իր մայրաքաղաքից դուրս գալով, անթիվ զորքով շարժվեց եկավ Հայաստան և իջավ Բերկրի կոչվող քաղաքի վրա, գրոհով առավ այն, իսկ բնակչությանն էլ չարաչար կոտորեց։ Ապա ելնելով այնտեղից, որպես հրացայտ սև ամպ, իր մահաբեր կարկտի հետ եկավ հասավ ու պաշարեց Արճեշ կոչվող քաղաքը, որի դեմ ութ օր կատաղի պատերազմ մղեց։ Քաղաքացիները [թշնամու] վիթխարի զորքից [սարսափած], դժվարին պատերազմից ուժասպառ, բաղում նվերներով՝ ոսկի, արծաթ, ձիեր ու ջորիներ, մեծ աղաչանքով ու պաղատանքով նրա մոտ եկան, հնազանդություն հայտնեցին և հաշտություն խնդրելով՝ ասացին. «Ո՛վ աշխարհակալ սուլթան, գնա՛ Մանազկերտ քաղաքը գրավիր, որից հետո մենք և հայոց բովանդակ երկիրը կմտնենք քո ծառայության մեջ»։ Տուղրիլ սուլթանին դուր եկան այս խոսքերը։ Եվ նա իր հսկայական զորքով եկավ հասավ Մանազկերտ քաղաքը և նման էր շարուիյամբ լցված օձի։ Նա բանակեց և պաշարեց քաղաքը։ Իջնելով Ջարագլուխ կոչվող վայրը, այնտեղ իջևանեց։ Երբ լույսը բացվեց, նա հրամայեց հնչեցնել պատերազմական փողերը։ Պետք էր տեսնել ահավոր օրը և քրիստոնյաների գլխին եկած զժբախտությունը, երբ պաշարեց Մանազկերտ քաղաքը։ Պատերազմական փողերի ձայնն ու աղմուկը, ապա կռվող զինվորների աղաղակը սասանեցնում էին բովանդակ պարիսպը։ Այժմ ի՞նչ պատմեմ քրիստոնյաների քաղաքի մասին, քաղաքի ողջ բնակչության մասին, որ անվերջ պատերազմ էր մղում և համերաշխաբար նահատակվեց։ Քաղաքի զորագլուխն էր Հոռոմոց իշխան Վասիլը[187] Ապուքապի որդին, մի բարի և աստվածապաշտ մարդ։ Նա զոր ու գիշեր հորդորում էր, սրտապնդում ու քաջալերում քաղաքի ողջ բնակչությանը՝ տղամարդկանց ու կանանց, բոլորին կայսրի անունից խոստանում պաշտոն և պատիվ։ Իսկ այլազգիների զորքը բաղում օրեր անդադար կռվում էր։ Քաղաքը գրավելու մտադրությամբ այլազգիները ստորերկրյա անցք փորեցին, բայց քաղաքի կայազորի մարտիկները, իմանալով այդ, սկսեցին հակառակ կողմից փորել և այլազգի բոլոր թշնամիներին բռնեցին, (այդ թվում և սուլթանի աներոջը, որի անունը Ոսկեծամ[188] էր), որոնց,

ի վերայ պարսպին և սպանին զնոսա. և տեսեալ սուլտանն՝ յոյժ վիրաւորեալ լինէր և յայնժամ առաքեաց ի Բաղէշ և ետ բերել զբաբանն, զոր Վասիլ թագաւորն արարեալ էր յաղագս Հերայ հնգետասան ատիլի, ահաւոր և զարմանալի։ Եւ յորժամ կանգնեցաւ անօրէն բաբանն, սոսկաց ամենայն քաղաքն. և զառաջին որ եհար՝ երեք այր պահ և զկըրծասպահն ի քաղաքն ձգեաց. և յայնժամ երէց մի յայտնեալ ի քաղաքն և ի շտապոյ դրեալ մեքենայ մի ընդդէմ նորա և յառաջին քարէն հարկանէր զբաբանն և բեկանէր զխոզակն. և զօրացաւ քաղաքն, վասն զի ահիւ պաշարեցան։ Եւ յետ աւուրց ամրացուցին այլազգիքն զբաբանն և կալմեցին յամենայն կողմանց անմերձենալի, սկսան հարկանել զպարիսպ քաղաքին մեծամեծ քարամբք. և յայնժամ ահաբեկեալ երերալով դողայր ամենայն քաղաքն։ Յայնժամ Վասիլն ձայն տուեալ առ ամենայն քաղաքն և ասէր. «Ով ոք կարասցէ ելանել և հրով այրել զբաբանն զայն, առցէ չինէն տուրս բաղում ոսկւոյ և արծաթոյ և ձիս և ջորիս և ի թագաւորէն փառս և իշխանութիւնս. և եթէ մեռցի յանօրինաց և իցեն նորա որդիք, նորա եղիցի այն ամենայն»։ Եւ յայնժամ յառաջ եկեալ Փռանդ մի և ասէ. «Ես ելից և այրեցից զբաբանն զայն, և ահա այսօր հեղցի արիւն իմ ի վերայ ամենայն քրիստոնէից, վասն զի ես միայն եմ, ոչ ունիմ կին կամ որդիք, որ լան զիս»։ Եւ խնդրեաց զօրաւոր և քաջ ձի և զգեցեալ զրահս և եդեալ սաղաւարտ ի գլուխն և առեալ թուղթ կապեաց ի ծայր ոմբին և երեք շիշ նաւթ դրեալ ի ծոց իւր՝ և թղթաւորի պատճառանօք յառաջ ելեալ, և առեալ աղօթս յամենայն քրիստոնէից և զԱստուած օգնական կալեալ գնայր դիմօք ի զօրսն այլազգեաց. և զօրք անօրինացն տեսանէին զթուղթն և համարեցան ընդ թղթաւոր և ոչ ինչ խօսեցան։ Եւ էր ժամ օր հասարակ և տօթ կարի յոյժ. և այր իւրաքանչիւր ննջէր ի վրանս իւր. և եկեալ Փռանդն առաջի բաբանին՝ զտեղի առեալ և ոչ զնայր. և կարծէին ընդ մեծութիւն բաբանին կայ և հիանայ՝ և ի նոյն ժամայն հանեալ զմէկ շիշն և հարկանէր զբաբանն. և որպէս զարծիւ շուտ առեալ զբաբանովն նա հարկանէր զմիւս այլ շիշն. և դարձեալ շուրջ եկեալ և զերրորդ շիշն զարկանէր զբաբանն. և ահաւոր բորբոքեցաւ հրով, և Փռանգըն դարձաւ ի փախուստ։ Եւ զոր ինչ արար՝ տեսին ամենայն բազմութիւն բանակին այլազգեացն և յարձակեցան զհետ, և Փռանդն անվնաս հասանէր ի քաղաքն. և բաբանն սաստկապէս այրեցեալ եղև. և էր ուրախութիւն մեծ ամենայն հաւատացելոցն, և Փռանդն փառաւորեցաւ տրօք ամենայն քաղաքացեացն։ Եւ լուաւ թագաւորն Մոնոմախ,

պարսպի վրա բարձրացնելով, սպանեցին։ Սուլթանը, տեսնելով դա, շատ տխրեց։ Նա մարդ ուղարկեց Բաղեշ և բերել տվեց տասնհինգ ատիլանոց[189] ահավոր և զարմանալի բաբանը, որը Վասիլ կայսրն էր սարքել տվել Հեր քաղաքի համար։ Երբ այդ վիթխարի բաբանը կանգնեցրին, ողջ քաղաքը սոսկաց։ Առաջին հարվածով կայազորի երեք մարտիկներ և կրծապահը[190] գետին տապալվեցին։ Այն ժամանակ քաղաքում հայտնվեց մի երեց և փութանակի [բաբանի] դեմ կանգնեցրեց մի մեքենա, որը քարի առաջին իսկ հարվածով ջարդեց բաբանի կոզակը։ Քաղաքացիները սրտապնդվեցին, որովհետև [թշնամին] սարսափեց։ Մի քանի օր անց այլազգիները վերանորոգեցին բաբանը, ամեն կողմից անմատչելի դարձրին այն և սկսեցին հսկայական քարերով հարվածել քաղաքի պարիսպը. բոլոր քաղաքացիները ահ ու դողի մեջ ընկան։ Վասիլը, դիմելով բոլոր քաղաքացիներին, ասաց. «Ով կկարողանա դուրս գալ և կրակի տալ այդ բաբանը, նա ինձնից որպես ընծա կստանա բազում ոսկի և արծաթ, ձիեր և ջորիներ, իսկ կայսրից՝ պաշտոն և պատիվ։ Եթե նա անհավատների ղոհը դառնա, ապա նշածս ամեն ինչ նրա ազգականը կամ որդին կստանա, եթե այդպիսիք կան»։ Այդ պահին դուրս եկավ մի ֆրանկ և ասաց. «Ես կգնամ և կհրդեհեմ այդ բաբանը։ Թող հնդվի իմ արյունն այսօր բոլոր քրիստոնյաների [փրկության] համար, քանզի միմիայն ես եմ, որ չունեմ ո՛չ կին, ո՛չ երեխաներ, որ ինձ վրա լաց լինեն»։ Նա մի ուժեղ և անվախ ձի խնդրեց, հագավ զրահը, գլխին դրեց սաղավարտը, ապա մի թուղթ առնելով, այն կապեց նիզակի ծայրին, գրպանը դրեց երեք շիշ նավթ և որպես սուրհանդակ գնաց առաջ։ Բոլոր քրիստոնյաների աղոթքին արժանանալով և աստծուն իրեն զորավիգ ունենալով, նա դիմեց դեպի այլազգիների զորքը։ Անհավատների զինվորները թուղթը տեսնելով, նրան սուրհանդակ համարեցին և բան չասացին։ Կեսօր էր, սարսափելի շոգ։ [Անհավատների] զինվորները քնել էին իրենց վրանների մեջ։ Ֆրանկը, մոտենալով բաբանին, կանգնեց և չէր հեռանում այնտեղից. [թշնամիները] կարծեցին, որ կանգնած հիանում է բաբանի մեծությամբ, երբ նա, հանելով շիշը, ջարդեց այն բաբանի վրա։ Արծվի պես պտտվելով բաբանի շուրջը, նա ջարդեց և մյուս շիշը, ապա նորից շուտ եկավ և բաբանի վրա ջարդեց նաև երրորդ շիշը։ [Բաբանը] սարսափելի բռնկվեց, իսկ ֆրանկն էլ դիմեց փախուստի։ Նրա արածին ականատես այլազգիների ողջ ճամբարը հարձակվեց նրա ետևից, բայց ֆրանկին հաջողվեց քաղաք հասնել անվնաս։ Բաբանը հիմնովին հրո ճարակ դարձավ։ Բոլոր հավատացյալները անչափ ուրախացան, իսկ ֆրանկն էլ արժանացավ բոլոր քաղաքացիների նվերներին։ Մոնոմախ կայսրը, լը-

տարաւ զնա առ իւր և տայր նմա իշխանութիւնս: Իսկ սուլտանն հիացաւ յոյժ ընդ գործ Փռանգին և խնդրեաց ի Վասլէն, զի տեսանիցէ զնա, որ արար զայնպիսի քաջութիւնն, զի տայցէ նմա պարգեւս. զոր ոչ կաւ յանձն դնալ Փռանգն: Եւ սուլտանն զայրացաւ յոյժ և դարձեալ փորելոյն սկիզբն արար, վասն զի ի վայր կործանեսցէ զպարիսպն. և քաղաքացիքն քաջացան ընդդէմ և առ յոչինչ համարէին զամենայն մինքեանս նորա. և արարեալ երկաթի ճանկ և զամենայն փորոզն արտաքս հանեալ առտակէին: Եւ տեսեալ սուլտանն՝ լռեալ դադարեաց և կայր մեծաւ ամօթով: Յայնժամ առեալ քաղաքացիքն խոյ մի և եդին ի բաբանն և ձգեցին զնա ի բանակն սուլտանին. և ձայնեալ ամենայն քաղաքն զհետ ասէին՝ թէ «Ա՛ռ սուլտան, պաշտ քեզ կին արա, և մենք տամք զՄանծիկերտ քեզ պոռոյ»: Եւ լուեալ սուլտանն՝ ի բարկութիւն շարժեալ և զբերդն դլխաւեաց, որ զինքն ի Մանծկերտ բերին, և ինքն մեծաւ ամօթով գնայր յաշխարհն Պարսից. և ողորմութեամբն Աստուծոյ փրկեցաւ քաղաքն Մանծկերտ յերեսաց ազգին Թուրքաց պղծոց:

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ամի ՇԴ մեռանէր թագաւորն Հռոմոց Մոնոմախն. սա կացեալ յաթոռ թագաւորութեանն Հռոմոց ամս չորեքտասան. և թագաւորեաց փոխանակ նորա քենի նորա Կիւրա—Թոտոռն, այն որ անուանեցաւ Ելեխտօս. և էր քոյր Կիւրա—Զոյէ, սրբասէր և կոյս և յոյժ առաքինի. և հրամայեաց ամենայն արարածոց խաղաղութիւն առնել և այրեաց և գերեաց. և արար զարձ ամենայն զրկելոց և իրաւունս և զամենայն բանդարգեալս հրամայեաց աղատել. և սա եհան ի բանտէն զիշխանն Հայոց զորդիսն Հաբելի՝ զՀարպականն եղբարսն, եհան ի կղզւոյն և մեծաւ փառաւորութեամբ արձակեաց զնա ի Հայրենի աշխարհն իւրեանց ի բերդն Ալչկի. և պատուիրեաց այլ մի ևս մեղանչել: Եւ յայնմ ամի փախեան պիտոս կատապանն. և փոխանո՛ր նորա գայր Միխայանոն՝ այր բարի և անուանի, և էր ողորմած այրեաց և գերեաց, շինող աշխարհի և ամենայն փառաւորութեամբ զարդարեալ: Եւ կացեալ յաթոռ թագաւորութեանն Կիւրա—Թոտոռն զամս երկու և ամիսս երեք և փոխեցաւ առ Քրիստոս բարի խոստովանութեամբ. և նստաւ յաթոռ թագաւորութեանն Միխայէլ ալևորն զամիսս եւթն:

Եւ յաւուրս յայսոսիկ ելանէր իշխան ումն ի տանէն Հռոմոց և անուն նորա Կոմանոս. սա յարուցեալ ահագին բազմութեամբ և գայր ի վերայ Կոստանդնուպօլսի և բանակ հարկանէր յեզր ծովուն Ովկիանոսի յայսկոյս և մեծաւ բռնութեամբ խնդրէր զաթոռ թագաւորութեանն Հռոմոց, այս եղև ի թուականութեանս Հայոց ՇԸ: Յայնժամ թագաւորն

սելով նրա մասին, իր մոտ հրավիրեց և պաշտոններ տվեց[191]։ Սուլթանը ապշեց ֆրանկի արածի վրա և վասիլից խնդրեց տեսնել սխրանք կատարողին, խոստանալով պարգևներ տալ նրան։ Բայց ֆրանկը հանձն չառավ գնալ։ Սուլթանը, սաստիկ զայրացած, նորից ձեռնարկեց գետնափոր անելուն, մտադիր լինելով պարիսպը տապալել, բայց սրտապնդված քաղաքացիները նրա բոլոր մեքենայությունները բանի տեղ չէին դնում։ Երկաթե կեռ սարքելով, նրանք թշնամու բոլոր փորողներին դուրս էին քաշում և սպանում։ Սուլթանը, տեսնելով դա, խայտառակ եղած վերջ տվեց գործին։ Դրա վրա քաղաքացիները բաբանի օգնությամբ սուլթանի ճամբարը մի խոզ արձակեցին և բոլորը միասին ձայն տալով ասացին. «Ա՛ռ, սուլթան, այդ խոզը քեզ կին արա, իսկ մենք էլ Մանազկերտը քեզ օժիտ կտանք»։ Սուլթանը, լսելով դա, գազազեց, գլխատեց իրեն Մանազկերտ բերողին, իսկ ինքը մեծ ամոթով գնաց պարսից երկիրը։ Ահա աստծո ողորմածությամբ Մանազկերտ քաղաքը փրկվեց թուրքերի պիղծ ազգի ձեռքից։

Հայոց 504 թվականին [8 մարտ 1055—6 մարտ 1056 թ.] վախճանվեց հոռոմոց կայսր Մոնոմախը[192]. հոռոմոց թագավորության գահին նստեց տասնչորս տարի։ Նրա փոխարեն թագավորեց քենին՝ կիրա Թոդորան[193], նա, ով ստացավ Ելեխտոռ[194] մականունը, կիրա Զոեի քույրը, սրբասեր, կույս և շատ առաքինի։ Նա բոլորին կարգադրեց չնեղել այրիներին և ծառաներին, [փախուստի դիմած] բոլոր զրկյալներին վերադարձրեց և նրանց իրավունքները հաստատեց, հրամայեց ազատել բոլոր բանտարկյալներին։ Նա բանտից հանել տվեց հայոց իշխաններին՝ Հաբելի որդիներին, այն է՝ Հարպիկի եղբայրներին. նա հանեց նրանց կղզուց և մեծ պատիվներով արձակեց, [թույլ տվեց] գնալ իրենց հայրենիքը, Արկնի բերդը, պատվիրելով այսուհետև չմեղանչել։ Նույն տարին իսկ հեռացրին կատապան Պետրոսին և նրա տեղը նշանակեցին Մելիսանոսին՝ բարի և անվանի, այրիների և ծառաների նկատմամբ ողորմած, աշխարհաշեն, ամեն տեսակի առաքինություններով օժտված մի մարդու։ Կիրա Թոդորան թագավորական գահին նստեց երկու տարի և երեք ամիս և վախճանվեց բարի խոստովանությամբ։ Թագավորական գահին նստեց Միքայել ալևորը[195]՝ յոթ ամիս։

Այդ օրերում հոռոմոց երկրից մի իշխան, որի անունը Կոմանոս էր[196], ահագին բազմության գլուխն անցած եկավ Կոստանդնուպոլսի վրա և, բանակելով Օվկիանոս ծովի այս ափին, մեծ բռնությամբ պահանջում էր հոռոմոց թագավորության գահը։ Դա տեղի ունեցավ հայոց 505 թվականին (7 մարտ 1056—6 մարտ 1057)։ Այն ժամանակ Միքայել կայսրը բովանդակ արևմտյան աշխարհում զորահավաք արեց

Միխայլ արար ժողով զամենայն աշխարհն արևմտից և զամենայն բազմութիւնն զօրաց իւրոց անցուցանէր ընդ Ովկիանոս ի Խոստպօլիս և զային ի վերայ Կոմանոսին. և յայնմ աւուր խմբեցաւ պատերազմ մեծ և ահաւոր ի վերայ քրիստոնէիցն, վասն զի բախէին զմիմեանս ուժգին կոտորածով, և հեղոյր արիւն բազում հաւատացելոցն ի վերայ երկրի: Եւ յայնժամ Կոմանոս որպէս զառիւծ գոչեաց մեծաւ զայրացմամբ և հասեալ բեկանէր զարս թագաւորին Հոռոմոց և առ հասարակ սրով ի փախուստ դարձուցանէր զնոսա. և անողորմ ի սուր սուսերի կոտորեաց զամենայն զօրսն Հոռոմոց, և փակեցին զնոսա առ հասարակ յեզր Ովկիանոսի մեծի ծովուն. և որպէս զմառախ ի հողմոյ թմբրեալ, այնպէս թմբրեալ լինէին զօրքն Հոռոմոց ի սաստիկ պատերազմէն և ի յՈվկիանոս լցեալ մեռանէին. և բազումք այն էին, որ դառն սրով ընկալան զմահ: Եւ յաւուր յայնմիկ մեռան ի զօրացն Հոռոմոց արք պատերազմողք հարիւր և հնգետասան հազար. և զամենայն իշխանսն առ հասարակ և կալաւ զթագաւորութիւնն: Յայնժամ իշխանքն, որ ի պաղատն էին, իբրև տեսին զամենայն կատարած բարկութեանս և զայնչափ արեանցն հեղմունսն, խորհեցան տալ զաթոռ թագաւորութեանն ի Կոմանոս, և վասն զի մեծ սուգ էած առ հասարակ ազգին Յունաց. և յայնժամ ելեալ պատրիարգն և ամենայն իշխանքն Կոստանդնուպօլսի առ Կոմանոս և արարին ընդ նմա բազում երդմունս և տարան նստուցին զնա յաթոռ թագաւորութեանն Հոռոմոց. և ապա եղև խաղաղութիւն աշխարհին Յունաց: Բայց աւերումն և յափշտակութիւն բազում եղև յերկիր յայնմ ամին, զի Կոմանոսին դեհն և Միխայլին զմիմեանս աւերէին. և այսպէս բազում աւեր գործեցաւ՝ մինչև հաստատեցաւ աթոռ թագաւորութեանն ի Կոմանոս. և յայնժամ հանեալ հրովարտակ ընդ ամենայն երկիր և արար խաղաղութիւն աշխարհի: Իսկ Կոմանոս առաւել մեծարեաց զայնոսիկ, որք միամիտ կային ի վերայ Միխայլին, քան զայն, որ յիւր վերայ նահատակեցան: Եւ եղև յառաջ քան զայս գային իշխանքն Հոռոմոց յօգնութիւն Միխայլին՝ Պիղոնիան և Լիպարիտն. և յորժամ հասան ի Ճերճերի, լուան եթէ Կոմանոս թագաւորեաց, ի գիշերին փախեան առ հասարակ և ասէին ցմիմեանս, եթէ՝ «Խալատ ի Ճերճերոյ դառնայ»: Եւ չետ աւուրց ինչ գնային առ թագաւորն. և առաւել մեծարեաց զնոսա: Եւ հրամայեաց թագաւորն Կոմանոս դեկան զարկանել յիւր անուն և զթուրն հանել ի վերայ ուսոց իւրոց, եթէ՝ «Թրով առի զաթոռ թագաւորութեանս». ընդ որում ոչ հաճեցաւ ընդ բանս այս, նաև այլ ևս պէսպէս գործ նենգութեան գործեաց Կոմանոսն ընդ քրիստոնեայսն: Եւ չետ աւուրց ինչ զօրաժողով արարեալ ահագին բազմութեամբ և կամեցաւ յարուցանել պատերազմ ընդ ազգն Պաժինկացն.

և իր զորքերի ամբողջ բազմությունն Օվկիանոսով անցկացրեց Խրիսուպոլիս[197]՝ ընդդեմ Կոմանոսի։ Այդ օրը քրիստոնյաների միջև տեղի ունեցավ մեծ և ահավոր պատերազմ. նրանք կատաղորեն կոտորում էին միմյանց, երկիրը ողողվում էր բազում հավատացյալների արյունով։ Կոմանոսը ցասումնալից առյուծի պես մռնչաց և, հարձակվելով, սկսեց հարվածել հոռոմոց կայսեր զինվորներին և սրի քաշելով՝ գլխովին փախուստի մատնեց նրանց։ Նա անողոքաբար կոտորեց հոռոմոց բոլոր զինվորներին՝ նրանց բոլորին շրջապատելով Օվկիանոս մեծ ծովի ափին։ Կատաղի պատերազմից հոռոմոց զինվորները նման էին քամուց ընդարմացած մորեխի և, լցվելով Օվկիանոս ծովը, ջրահեղձ էին լինում։ Բայց շատերը դառն սրով մահ ընդունեցին։ Այդ օրը հոռոմոց զորքից հարյուր տասնհինգ հազար մարտիկ զոհվեց։ [Կոմանոսը գերի վերցրեց] բոլոր իշխանավորներին և տիրացավ թագավորությանը. բոլոր փորձանքներին և անչափ արյուն թափվելուն ականատես պալատի իշխանավորները որոշեցին թագավորական գահը Կոմանոսին տալ, քանզի նա հույների ամբողջ ժողովրդի գլխին մեծ սուգ կապեց։ Պատրիարքն ու Կոստանդնուպոլսի բոլոր իշխանավորները գնացին Կոմանոսի մոտ և նրան բազում երդումներ տալով տարան և նստեցրին հոռոմոց թագավորության գահին[198]։ Հույների երկրում խաղաղություն տիրեց։ Սակայն այդ տարի երկրում մեծ ավերածություն և հափշտակություններ եղան, որովհետև Կոմանոսի և Միքայելի կողմնակիցները կոտորում էին միմյանց, մինչև որ թագավորական գահին հաստատվեց Կոմանոսը. նա համայն երկրում հրովարտակ արձակեց և խաղաղություն հաստատեց։ Կոմանոսը, սակայն, ավելի մեծացրեց նրանց, ովքեր Միքայելի կողմում էին, քան թե իր համար մարտնչողներին։ Նախքան այդ հոռոմոց իշխաններ Պիզոնիտն[199] ու Լիպարիտը Միքայելին օգնության էին գիմել։ Հասնելով Ճերճերի[200], նրանք իմացան, որ Կոմանոսն [արդեն] գահ է բարձրացել և գիշերով բոլորն էլ փախան, ասելով միմյանց, թե «Խալատը Ճերճերից է գալիս[201]։ Մի քանի օր անց նրանք գնացին կայսեր մոտ և մեծ պատիվների արժանացան։ Կոմանոս կայսրը հրամայել իր անունով դահեկան կտրել, որի վրա ինքը նկարված լինի՝ թուրը ուսից վեր բարձրացրած, թե՝ «Թագավորական գահին թրով տիրացա»։ Կոմանոսը, դրանով էլ չբավարարվելով, բազում վատություններ գործեց քրիստոնյաներին։ Մի քանի օր անց նա զորահավաք արեց և, հրեակայական զորքի գլուխն անցած, ուզեց պատերազմել պածինակների

և երթեալ անցանէր ընդ մեծ գետն Տօնաւիս և գնայր խաղայր առ յապականել զամենայն արևմուտք. և ուր հասանէր՝ որպէս ղչար գազան մոռայր ի չարութենէ սրտին իւրոյ, և ընդ որ անցանէր՝ բազում արիւն տայր հեղուլ. և եղև կոծ մեծ յամենայն արևմուտս, ևս առաւել ի յաշխարհն Բուլղարաց: Եւ էր յաւուրսն ամառնային, և հասանէր աստուածասաստ բարկութիւնն ի վերայ զօրացն Կոմանոսին, զոր ոչ բաւէ բերան զմեծ կատարածս արկանել ընդ գրով, զոր ըստ արժանեացն ընկալան: Եւ զի ահա ելանէր ամպ յարևմտից և գայր ի վերայ բանակին Կոմանոսին, և էր ամպն սեաւ և ահաւոր տեսլեամբ, որ ոչ ոք համարձակէր հայել ի նա. և եղեն ճայթմունք և որոտմունք, և հրացայտ փայլատակմունս յարուցանէր. և յայնժամ սկսաւ ի կարկուտս մեծամեծս և բախեալ հարկանէր զբանակն և սաստկապէս դիպէր ամենայն զօրացն. յայնժամ նոքա մի առ մի փախեան և զելս իրացն ոչ գտանէին: Եւ տեսեալ թագաւորն՝ լցաւ բարկութեամբ և յոչ կամաց դարձաւ որպէս զփախստական, և ամենայն զօրքն առ հասարակ ցրուեալք լինէին ընդ լերինս և ընդ դաշտս. և անդ էր տեսանել զմեծ կատարածն, զոր կրնցին ի բազում հարուածոցն. և անթիւք կորեան, հայր յորդւոյ և որդի ի հօրէ, եղբայր յեղբօրէ, և թագաւորն երեք արամբք կորուսեալ եղև մինչև ի Տօնաւիս գետն, ապա եղև գտեալ: Եւ յորժամ հանդէս արար զօրաց իւրոց, մեծ մասն զօրացն կոտորեալ էին յերկնից բարկութենէն: Իսկ յաղագս ձիոց և ջորւոց, ոսկւոյ և արծաթոյ և այլ կարասեացն աւելորդ է ասել, և կամ զամենայն սարք պատերազմի: Եւ այնուհետև գիտացեալ Կոմանոսն, եթէ այս ամենայն աստուածուստ բարկութիւնս վասն իմոյ յանցանացն եհաս ի վերայ քրիստոնէից, զի մեղօք իմովք բարկացուցի զԱստուած, և եկեալ ի Կոստանդնուպօլիս և անկեալ առաջի Աստուծոյ՝ խնդրէր զթողութիւն մեղաց իւրոց, զոր արար. և այնուհետև խնդրէր ելանել յաթոռոյ թագաւորութենէն և մտանիլ ի կարգս ապաշխարութեան պահօք և արտասուօք:

Եւ եղև ի թուականութեանն Հայոց ՇԸ թագաւորեցոյց Կոմանոսն զՏուկիծն, զի յաղագս այնր գործոյն, զոր յառաջն ճառեցաք, գիտացեալ թէ ոչ հաճեցաւ Աստուած ընդ թագաւորութիւնս նորա՝ վասն անմեղ արեանցն, զոր եհեղ յազգէ հաւատացելոցն. և եղև, զի մէկ կողմն անձինն թուլացաւ. և յորժամ ետես զաստուածասաստ բարկութիւնն ի վերայ անձին իւրոյ, կամեցաւ զգենուլ զգեստ կրօնաւորութեան և միաւորիլ ի վանք կրօնաւորութեան: Եւ յայնժամ առաքեաց ի կողմն Տաճկաց ի քաղաքն Յուռհա և բերեալ զտուկ քաղաքին Ուռհայոյ, որում անուն էր Տուկիծ, վասն զի ի մեծամեծաց ազգէ էր, և առեալ զթագն դնէր ի գլուխ Տուկծին և երկրպագէր նմա, և նստոյց զնա յաթոռ թագաւորու-

դեմ։ Նա գնաց անցավ Տոնավիս[202] գետը և առաջ գնաց՝ ավերելու ողջ Արևմուտքը։ Ուր հասնում էր, սրտի չարությունից մռնչում էր գազանի պես, իսկ որտեղով անցնում՝ բազում արյուն էր թափել տալիս։ Համայն Արևմուտքում մեծ կոծ բարձրացավ և ամենից շատ՝ բուլղարների երկրում։ Ամառ ժամանակ էր, երբ աստվածասաստ բարկությունը թափվեց Կոմանոսի զորքերի գլխին, այնքան սարսափելի, որ անկարելի է ըստ արժանվույն նկարագրել նրանց կրածը։ Ահա արևմուտքից ամպ բարձրացավ և շարժվեց Կոմանոսի ճամբարի վրա։ Ամպը սև էր և տեսնողին սարսափ էր պատում։ Ոչ ոք չէր համարձակվում նայել դրան։ Ճայթյուն ու որոտում եղավ և հրացայտ փայլատակումներ։ Ապա սկսեց խոշոր կարկուտ տեղալ, որ ջարդուփշուր արեց ճամբարը, ուժգնորեն հարվածեց բոլոր զինվորներին։ Նրանք, չիմանալով ինչ անել, մեկ առ մեկ փախուստի դիմեցին։ Կայսրը, տեսնելով դա, լցվեց զայրույթով և ստիպված փախստականի նման վերադարձավ։ Ամբողջ զորքը իսպառ ցրիվ եկավ լեռներն ու դաշտերը։ Տեսնելու բան էր սոսկալի փորձանքը, որ եկավ նրանց գլխին։ Անհամար մարդիկ կորան. հայրը կորցրեց որդուն, որդին՝ հորը, եղբայրը՝ եղբորը։ Տոնավիս գետի ափին կորավ և կայսրը իր երեք թիկնապահներով, բայց հետո գտնվեց։ Երբ նա գումարեց իր զինվորներին, տեսավ, որ նրանց մեծ մասը երկնքի բարկության զոհն էր դարձել։ Իսկ ձիերի և ջորիների, ոսկու և արծաթի, այլ սպասների, պատերազմական ամեն տեսակի սարքերի [կորստյան] մասին ավելորդ է խոսել։ Այս ամենից հետո Կոմանոսն [ինքն իրեն] ասաց. «Այս ողջ աստվածասաստ պատիժները քրիստոնյաների գլխին եկան իմ հանցանքների պատճառով, որովհետև ես իմ մեղքերով բարկացրի աստծուն»։ Գալով Կոստանդնուպոլիս և երկրպագելով աստծուն, նա իր գործած մեղքերի համար թողություն էր աղերսում։ Նա ուզեց հրաժարվել թագավորական գահից և պահեցողությամբ ու ղջմամբ մտնել ապաշխարողների շարքը։

Հայոց 507 թվականին [7 մարտ 1058—6 մարտ 1059 թ.] Կոմանոսը թագավորեցրեց Տուկծին[203]. տեղի ունեցած դեպքերը, որոնց մասին վերևում խոսեցինք, իրեն՝ Կոմանոսին համոզեցին, որ աստված հաճությամբ չի նայել իր թագավորության վրա՝ անմեղ հավատացյալների թափած արյան պատճառով. նրա մարմնի մի կողմը անդամալույծ էր դարձել։ Երբ նա իր անձի վրա զգաց աստվածասաստ բարկությունը, ցանկացավ վանականի սքեմ հագնել և վանքում մենակյաց դառնալ։ Տաճկաց կողմերը՝ Ուռհա քաղաքը նա մարդ ուղարկեց և բերել տվեց Ուռհա քաղաքի դուկին, որի անունը Տուկիծ էր (նա երևելի ընտանիքից էր), և վերցնելով թագը, դրեց նրա գլխին, երկրպագեց նր-

թեանն և ինքն գնացեալ յանապատ և եղև վանական։ Եւ Տուկիծն բըռնակալեալ ի վերայ թագաւորութեանն Յունաց և զամենայն անհաւատս ածէր ի հաւանութիւնս. և եղև ուրախութիւն ի վերայ ամենայն տանն Յունաց վասն Տուկծին։

Յայսմ ամի մեռանէր ամենագովելին Տէր Պետրոս կաթուղիկոսն Հայոց, որ գլուխ էր մարմնոյ Հայաստանեայց և պարիսպ սրբոյ եկեղեցւոյ։ Սա կացեալ յաթոռ հայրապետութեան զամս քառասուն և երկու և յաւելաւ առ հարս իւր. և ձեռնադրեաց յաթոռ հայրապետութեանն իւրոյ զերանելին զՏէր Խաչիկ, որ էր քուրորդի իւր, լցեալ ամենայն սրբասնունդ առաքինութեամբ և բարեհամբաւ անուամբ, զարդարեալ շնորհօք առաքելականօք և մարգարէականօք։ Եւ թաղեցին զՏէր Պետրոսն ի քաղաքն, որ կոչի Սեբաստիա, ի վանք սրբոյ Նշանին, հանդերձ բազմութեամբ։

Ի նոյն թուականութեանս Հայոց երկրորդեալ յարձակեցան ազգն անօրինաց ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի. և ահա ելեալ գայր ի Պարսից նահանգէն ամիրայ ոմն մեծ և հզօր՝ Դինար անուն, և զօրօք բազմօք գայր անկասկած դառնաշունչ բռնութեամբ և նենգաւոր սրտիւ ծածկեալ ղչարութիւն իւր։ Եւ անցանէր անվնաս ի բազում տեղեաց և խաղայր գնայր և հասանէր մինչև ի հռչակաւոր քաղաքն և յանուանին, որ կոչի Մելտենի, վասն զի ի բազում ժամանակաց մատնած էր քաղաքն Պարսից՝ թէ անչափ է հարստութիւն ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտաց և դիպակաց։ Եւ էր քաղաքն անպարիսպ. և յորժամ գայր յառաջ ղՀասան էառ և առ հասարակ կոտորեաց սրով։ Եւ գայր անցանէր ի Մելտենի. և եղև առաջնորդ զօրացն անօրինաց որդին Լիպարտին միաբանեալ ընդ նոսա. և էր յաւուրսն ձմերայնոյ՝ ի մուտսն յիսնակին, յորժամ պատեաց զքաղաքն Մելտենի. և վասն հռչակաւոր անուանն, որ ընդ ամենայն աշխարհն Պարսից տարածեցաւ անուն գեղեցկութեան նորա. յայնժամ որպէս սեաւ ամպ շրջանակաւ պատեաց զամենայն քաղաքն առ հասարակ. և տեսեալ քաղաքացեացն զահաւոր բարկութիւնն՝ միաբան ի փախուստ դարձան արք և կանայք, ծերք և տղայք. և տեղի փախստեան ոչ գոյր։ Յայնժամ հատաւ սէր բարեկամաց և յոյս կենաց յամենայն մտաց. ի դառնաշունչ բարկութեանցն մոռանայր հայր զորդի և որդին՝ զհայր. մայր զդուստր և դուստր զմայր իւր լայր, եղբայր առ եղբայր՝ և սիրելիք առ սիրելիս։ Եւ յայնժամ լայնատարած դաշտք քաղաքին առ հասարակ ի փախուստ ելեալ, բազմութիւնքն գային ի մէջ թշնամեացն. և տեսեալ անօրինացն, սակաւ մի զտեղի առին և հիանային ընդ բազմամբոխութիւն քաղաքին, զի էին որպէս զաւազ ծովու անթիւ բազմութեամբ. և ոչ համարձակէին

րան և նստեցրեց թագավորական գահին, իսկ ինքը գնաց անապատ և վանական դարձավ։ Տուկիծը, իր ձեռքն առնելով հունաց թագավորության սանձերը, բոլոր անհավատներին հնազանդեցրեց։ Տուկծի [թագավորելու] առթիվ համայն հունաց երկրում ուրախություն եղավ։

Այդ տարին վախճանվեց ամենագովելի տեր Պետրոս հայոց կաթողիկոսը, որ հայոց մարմնի գլուխն էր և սուրբ եկեղեցու պարիսպը։ Նա հայրապետական աթոռին նստեց քառասուներկու տարի և գնաց իր հայրերի մոտ։ Նա իր հայրապետական աթոռին [կաթողիկոս] ձեռնադրեց տեր Խաչիկին[204], իր քեռորդուն, որը լի էր ամեն տեսակի սրբասնունդ առաքինություններով, առաքելական և մարգարեական շնորհներով և հայտնի իր բարեհամբավ անվամբ։ Տեր Պետրոսին մեծ բազմությամբ թաղեցին Սեբաստիա կոչվող քաղաքում, Սուրբ Նշանի վանքում։

Հայոց նույն թվականին անհավատների ժողովուրդը երկրորդ անգամ հարձակվեց քրիստոնյաների վրա։ Ահա պարսից երկրից առանց երկյուղի, բազմաթիվ զորքերով, ժանտությամբ ու դաժանությամբ, բայց և նենգորեն սքողելով իր սրտի չարությունը, շարժվեց եկավ մի մեծ և հզոր ամիրա, որի անունը Դինար էր։ Նա անվնաս անցավ բազում վայրերով և գնաց հասավ հռչակավոր և անվանի Մելիտենե քաղաքը։ Դեռ վաղուց պարսիկներին հայտնի էին դարձրել, որ [քաղաքում] կա ոսկու և արծաթի, թանկագին քարերի և մարգարիտների, դիպակների անհամար հարստություն։ Քաղաքն անպարիսպ էր։ [Դինարը] առաջանալով գրավեց Հասավնը[205] և [բնակիչներին] գլխովին սրի քաշեց, որից հետո շարժվեց հասավ Մելիտենե։ Անհավատների զորքի առաջնորդն էր դարձել Լիպարիտի որդին, որ նրանց կողմն էր անցել։ Ձմեռ ժամանակ էր, հիսնակի սկիզբը[206], երբ [Դինարը] պաշարեց Մելիտենե քաղաքը և պաշարեց հռչակավոր անվան համար, որի գեղեցկության համբավը տարածվել էր պարսից երկրով մեկ։ Երբ սև ամպի նման շուրջանակի պատեց ողջ քաղաքը, քաղաքացիները, տեսնելով սարսափելի վտանգը, բոլորը միասին, տղամարդ թե կին, ծեր թե երեխա, [ուզեցին] փախուստի դիմել, բայց փախչելու տեղ չկար։ Բոլորի մոտից վերացել էր սերը դեպի բարեկամները և կենդանի մնալու հույսը։ Դառն օրհասի առջև հայրը մոռացավ որդուն և որդին՝ հորը։ Մայրն իր դստերն էր ողբում, դուստրը՝ իր մորը, եղբայրը՝ եղբորը և սիրելիները՝ սիրելիներին։ [Քաղաքացիները] փախան դեպի քաղաքի լայնատարած դաշտերը, բայց ընկան թշնամիների մեջ։ Անհավատները, տեսնելով այդ, մի քիչ կանգ առան քաղաքի՝ ծովի ավազի պես անքանակ բնակչության վրա ապշած։ Այլազգիները չէին համարձակվում [մտնել քաղաք], քանի

այլազգիքն՝ մինչև փախեան քաղաքացիքն։ Յայնժամ յարձակեցան սրով ի վերայ, և ամենայն սուրք նոցա առ հասարակ ի գործ արեան սկսեալ մխեցան. և առ սակաւ ժամ մի լցաւ արեամբ ամենայն քաղաքն. և ծբփայր ծայրէ ի ծայր արեամբ քաղաքն Մելտենի, և ոչ ոք էր որ ողորմէր ծերոց և կամ տղայոց։ Եւ անդ էր տեսանել մարմինքն փառաւորք և պատուականք, որք անկեալք և թաւալեալք կային ի մէջ արեանցն, և տղայքն ի գիրկս մարցն մասն առ մասն հարեալ լինէին, և արիւնն և կաթն ընդ միմեանս միաւորեալ խառնեցան։ Եւ ո՞վ կարէ ի գիր արկանել զաստուածատաստ բարկութիւնն, զոր յաւուր յայնմիկ կրեաց քաղաքն Մելտենի, վասն զի փոխանակ քաղցր ցօղոյն՝ արիւն ծածկեալ ունէր զամենայն բոյսս դալարոյ անդաստանացն։ Եւ յետ այսչափ կատարածի արեանցն և գերութեանց, զորս վարէր առաջի իւր ի գերութիւն, կանայս պատուականս և գեղեցիկս և մանկունս և աղջկունս վայելուչս և անհամար գանձս ոսկւոյ և արծաթոյ անթիւ. և յարուցեալ խաղայր ուրախութեամբ և գայր յաշխարհն Պարսից և անցեալ զՓրատ գետն՝ արար ձմերոց ի Յանձիթ։ Եւ յայնժամ զօրքն Հոռոմոց յարձակեցան գՏետ Թուրքին, և ի հասանելն նոցա՝ ոչ համարձակեցան պատերազմել ընդ նոսա, այլ դարձան խաղաղութեամբ ի Հոռոմոս։

Իսկ ի ժամանակս գարնանային հասեալ՝ գնաց զօրքն այլազգեաց ի գաւառն Տարօնոյ և բռնակալեալ առ ստորոտ լերամբն Տօրոսի մերձ ի Սասուն։ Եւ լուեալ զայս իշխանին Հայոց՝ զօրաւորն և քաջ որդին Մուշեղայ Թոռնիկ և ժողով արարեալ զամենայն Սասուն և հասանէր ի վերայ զօրացն այլազգեացն։ Յայնժամ զօրք այլազգեացն հնչեցուցանէին զփող պատերազմին և միաբան ելին ի պատերազմ։ Եւ եղև օրն այն մեծ և ահաւոր, վասն զի որպէս զջրոյս առիւծոց զմիմեանս բախէին երկոցունց կողմանցն. և յայնժամ գոչեաց քաջն Թոռնիկ և ձայն տուեալ աջոյ թևին իւրոյ՝ և հասանէր ի վերայ ձախոյ թևին այլազգեացն և պատառէր զնոսա մեծաւ յաղթութեամբ. և դարձաւ հայեցաւ ի վանքն սրբոյ Կարապետին և ուժգին զձայն արձակեալ և ասէր. «Գլա՛ւակ վանք, սո՛ւրբ Կարապետ, հասի՛ր մեզ յօգնութիւն և արա՛ զօրս զաջս երեւելի ի վերայ հաւատացելոցս». և միաբան ձայն տուեալ միմեանց յարձակեցան ի վերայ այլազգեացն և առին զառն և զամենայն աւարն և դարձուցին զամենայն գերութիւնն. և մնացեալքն յայլազգեացն մազապուրծ զերծեալք՝ ամօթով գնացին յաշխարհն Պարսից։ Եւ քաջն Թոռնիկ մեծաւ ուրախութեամբ դարձաւ ի Սասունք՝ գոհանալով զԱստուծոյ, որ ազատեաց զանթիւ բազմութիւնն զՄելտենւոյ քաղաքին ի ծառայութենէ անօրէն ազգին Պարսից։

Դարձեալ ի յայսմ ամի և ի նոյն ձմերոցին եղև նշան ահաւոր և

չէր սկսվել քաղաքացիների փախուստը։ Երբ այն սկսվեց, սուսերամերկ հարձակվեցին [քաղաքի] վրա, և նրանց բոլորի սրերը սկսեցին իրենց արյունալի գործը կատարել։ Կարճ ժամանակամիջոցում Մելիտենե քաղաքը ողողվեց արյամբ և ծայրեծայր ծփաց արյան մեջ։ Ոչ ոք չէր խնայում ո՛չ ծերերին, ո՛չ մանկանց։ Եվ պետք էր տեսնել երևելի և պատվական մարդկանց արյունաթավալ դիակները։ Երեխաներն իրենց մայրերի գրկում անդամահատվում էին ու խողխողվում, արյունը և կաթը խառնվում էին իրար։ Ո՞վ կարող է գրի առնել աստծո ցասումը, որ այդ օրն եկավ Մելիտենե քաղաքի գլխին։ Անդաստանների բոլոր դալար բույսերը քաղցր ցողի փոխարեն արյամբ էին պատվել։ Ահա այդքան արյուն թափելուց հետո, պատվավոր և գեղադեմ կանանց, գեղատեսիլ պատանիների և աղջիկների գերի վերցնելուց, ոսկու և արծաթի անթիվ-անհամար գանձեր ավարառելուց հետո [այլազգիներն] ուրախությամբ հեռացան գնացին պարսից երկիրը։ Անցնելով Եփրատ գետը, նրանք ձմեռեցին Անձիտում[207]։ Այդ ժամանակ Հոռոմոց զորքերը շտապեցին հետապնդել թուրքին, բայց, հասնելով նրան, չհամարձակվեցին մարտ տալ, այլ խաղաղությամբ վերադարձան Հոռոմոց երկիրը։

Երբ գարունը եկավ, այլազգիների զորքը գնաց Տարոն գավառը և բանակեց Տավրոս լեռան ստորոտում, Սասունի մոտ։ Հայոց հզոր և քաջ իշխան Թոռնիկը՝ Մուշեղի որդին, լսելով այդ մասին, բովանդակ Սասունում զորահավաք արեց և արշավեց այլազգիների զորքի վրա։ Այլազգիների զինվորները հնչեցրին պատերազմական շեփորները, և բոլորը միասին ելան մարտի։ Այդ օրը սոսկալի և ահավոր եղավ, քանզի երկու կողմն էլ միմյանց դեմ էին կռվում առյուծների ջոկերի նման։ Քաջ Թոռնիկը ձայն տվեց իր զորքի աջ թևին, հարձակվեց այլազգիների ձախ թևի վրա և մեծ ուժգնությամբ ճեղքեց այն։ Նա դարձավ նայեց Սուրբ Կարապետի վանքին և գոչեց. «Գլակա վանք, Սուրբ Կարապետ, հասի՛ր մեզ օգնության և այս օրը հավատացյալների համար երևելի դարձրու»։ Բոլորը միասին, իրար ձայն տալով, հարձակվեցին այլազգիների վրա, նրանցից խլեցին ամբողջ ավարը և ազատեցին բոլոր գերվածներին։ Մի կերպ կենդանի մնացած այլազգիները խայտառակ կերպով գնացին պարսից երկիրը։ Քաջ Թոռնիկը մեծ ուրախությամբ վերադարձավ Սասուն և շնորհակալություն հայտնեց աստծուն, որ Մելիտենե քաղաքի անթիվ բազմությունը ազատեց պարսից անհավատ ժողովրդի ստրկությունից։

Նույն տարվա ձմռանը քրիստոնյաների գլխին գալիք մեծ և սոս-

հրաշալի, սոսկալի և մեծ բարկութիւն ի վերայ քրիստոնէից, վասն զի յառաջագոյն երևեալ գուշակ անցման հաւատացելոցն Քրիստոսի. զի որպէս ի պիղծ գիշէն հոտ զազրութեան յառաջագոյն դայ, այսպիսի օրինակաւս յառաջ քան զկատարածն նշանքն չարաչաւ երևէին ի վերայ աշխարհի՝ դառնաշունչ հողմն հարաւայնոյ։ Եւ արդ ահա յաւուր միում յորժամ՝ լուսանայր օր առաւօտուն և ելանէր ամենայն մարդ ի տանէ իւրմէ, տեսանէին ի պարզոյ ի վերայ ցամաք ,,տնոյն կարմիր ձիւն եկեալ. և էր լցեալ ղշորս կողմն աշխարհիս՝ ի յարևելս և յարևմուտ, ի հիւսիս և ի հարաւ. և սկիզբն արար գալոյ ի յաւուր երկուշաբաթւոջ և զաւուրս վաթսուն անդադար եկեալ. ի գիշերն դայր և ի ցերեկն հոսէր ընդ երեսս երկրի, բայց կարմիր ձիւն մէկ օր էր եկեալ։ Եւ յայնմ ամին եղև անցումն ամենայն չորքոտանեաց՝ անասնոց և գազանաց՝ և թռչնոց. և ի սաստիկ բարկութենէն ոչ գտանէին կերակուր իւրեանց, ի շէն ևս հասարակ դէմ արարեալ նոցա և յիւրեանց թշնամիսն ապստիւնէին։ Եւ յայնժամ ամենայն ոք անխնայ կոտորէր զնոսա անողորմաբար. վասն զի անասունքն ջոլիր ջոլիր լինէին, և թռչունքն երամ երամ ի փողոցս և ի տունս մտանէին. և անդ էր տեսանել զահաւոր կատարածն ի վերայ անասնոց և թռչնոց վասն մեղաց որդւոց մարդկան։ Իսկ որ ողորմածքն էին՝ ի տունս իւրեանց կերակրէին զնոսա զամենայն աւուրս ձմերանն և արձակէին զնոսա խաղաղութեամբ. և առ հասարակ ամենայն ոք ի գութս ողորմութեան դառնային ի վերայ անասնոցն։ Եւ մեծ ամիրայն Նսրտօլ, որ նստէր ի քաղաքն Մուֆարղին, քառասուն քոռ ցորենոյ և գարւոյ, կորեկոյ և զայլ ամենայն ընդաց ցանել հրամայեաց ընդ դաշտս և ընդ լերինս վասն թռչնոցն, և խոտ և յարդ անչափ յաղագս անասնոցն, և այսպիսի օրինակաւս բազում անասունք և թռչունք ապրեցան ի բազմութենէ անտի։

Յայսմ ամի եղև սով սաստիկ ընդ երկիր, և բազումք մեռան չարաչար և դառն մահուամբ յերեսաց սովոյն, վասն զի ի սաստկութենէ ձեռանն անձրև ոչ եկն յերկիր, և վաստակ ոչ եղև, և բազում պտղաբերք չորացան. և եղև ի փոխել միւս այլ տարւոյն՝ եղև լիութիւն և առատութիւն ամենայն կերակրոց, վասն զի մէկ մոդն հարիւր վաստակեաց։

Իսկ ի վերանալ թուականութեանս Հայոց յամի ՇՀ ժամանեալ հասանէր արհաւիրք և կատարածք մահաբերք ի վերայ հաւատացելոց Քրիստոսի, զորս ոչ կարեմք պատմել զոր ինչ գործեցաւ յամիս այսմիկ աղէտ ահաւոր դառնութեան. վասն զի շարժեցաւ ամենայն տունն Պարսից առ հասարակ և յարուցեալ գային ահագին բազմութեամբ առանց համարոյ՝ որպէս զաւազ ծովու, և խաղայր հասանէր ի վերայ հաւատացելոց տանն Հայոց. և բազում գաւառք մաշեալք լինէին սրով և գե-

կալի փորձանքի և կործանման մասին կանխագուշակող մի ահավոր և զարմանալի նշան երևաց։ Այնպես, ինչպես պիղծ սատակի գարշահոտությունը ավելի շուտ ենք զգում, [քան տեսնում սատակը], ահա նույն ձևով էլ նախքան դժբախտության՝ հարավային դառնաշունչ քամու վրա հասնելը, երկրի վրա երևացին նրա մասին վկայող նշաններ։ Մի օր առավոտյան, մարդիկ տնից դուրս գալով տեսան, որ երկինքը պարզ է, իսկ գետնին տեղացել է կարմիր ձյուն, որը ծածկել է երկրի չորս կողմը՝ արևելք և արևմուտք, հյուսիս և հարավ։ [Ձյունն] սկսեց տեղալ երկուշաբթի օրը և վաթսուն օր շարունակ եկավ։ Դիշերը գալիս էր, իսկ ցերեկը՝ հալվում։ Կարմիր ձյունը սակայն միայն մեկ օր տեղաց։ Այդ տարին տեղի ունեցավ բոլոր չորքոտանիների՝ անասունների, գազանների, ինչպես և թռչունների անկում։ Սաստիկ ձմռան պատճառով իրենց համար կեր չգտնելով, նրանք գնում էին բնակատեղիները և ապաստան փնտրում իրենց թշնամիների մոտ. ամեն ոք անգթորեն կոտորում էր նրանց, որովհետև անասունները հոտերով, իսկ թռչունները՝ երամներով թափառում էին փողոցներում և մտնում տները։ Պետք էր տեսնել մարդկանց մեղքերի պատճառով անասունների և թռչունների գլխին եկած չարհասը։ Բայց ովքեր գթասիրտ էին, ամբողջ ձմեռը իրենց տանը կերակրեցին նրանց և առանց վնաս հասցնելու արձակեցին։ Առհասարակ բոլորն էլ գթացին անասուններին։ Մեծ ամիրա Նսրտոլը, որ Մուշարղին քաղաքում էր նստում, հրամայեց դաշտերում և լեռներում թռչունների համար քառասուն քոռ ցորեն, գարի, կորեկ և ամեն տեսակի այլ ընդեղեն ցրիվ տալ, իսկ անասունների համար՝ մեծ քանակությամբ խոտ ու հարդ։ Ահա այդ ձևով բազմաթիվ անասուններ և թռչուններ այդ փորձանքից կենդանի մնացին։

Այդ տարին երկրում սաստիկ սով եղավ, և շատերը չարաչար սովամահ եղան, որովհետև առատ ձյան պատճառով երկրի վրա անձրև չտեղաց, բերք չեղավ, բազում պտղատու ծառեր չորացան։ Հաջորդ տարին, սակայն, եղավ ամեն տեսակի մթերքների լիություն և առատություն, որովհետև [ցանված] մեկ մոդ [սերմացուն] հարյուրապատիկ բերք տվեց։

Հայոց 508 թվականի [6 մարտ 1059—4 մարտ 1060 թ.] սկզբին քրիստոնյաների գլխին տեղաց արհավիրք և մահ։ Մենք ի վիճակի չենք պատմել այդ տարին վրա հասած ահավոր ու դառն աղետի մասին։ Պարսից ամբողջ երկիրը ահագին և անհամար բազմությամբ, որպես ծովի ավազ, ելավ եկավ Հայաստանի հավատացյալների վրա։ Բազում գավառներ սրով ու գերեվարությամբ ավերակ դարձան այս ամբարիշտ

րութեամբ յերից ամբարիշտ գազանացս այսոցիկ, որք ելեալք ի տիւանէն Տուղրիլ սուլտանէն ամիրայք երեք՝ Սամուխն և Ամրքափրն և Գիճաճիճի, արք չարք և արիւնարբուք առաւել քան զգազանս, և սևագունդ զօրօք և մահաբեր նշանօք հասանէին ի վերայ բազմամբոխ և նշանաւոր քաղաքին Սեբաստիոյ. և մոնչալով որոտային և կամեցան զմեծաստաստ բարկութիւն իւրեանց ածել ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի և մանաւանդ խորհեցան ի միտս իւրեանց ձերբակալս առնել զորդիսն Սննեքարիմայ զորդիք թագաւորին Հայոց՝ զԱտոմ և զԱպուսահլ, զորս յառաջագոյն նոցա լուեալ զօրացն այլազգեացն՝ փախեան ի Խաւանէքն, և այլ բազում իշխանքն գնացին զհետ: Եւ յօր բարեկենդանի Վարդավառին պատեալ զքաղաքն բազմութիւն զօրացն անօրինացն և պաշարեաց առ հասարակ շուրջանակի զամենայն քաղաքն. և սուր ի գործ մտեալ ամենայն զօրացն և անհամար մարմինք չարաչար խոցմամբ ի յերկիր թաւալէին, և հոսեալ արեանցն լնոյր զերկիր, որ և տեսողացն սոսկալի երևէին. վասն զի որպէս փայտ անտառի կուտեալ լինէին մարմինք պատուականք ի վերայ երկրի, և արեամբ ծածկեալ եղև հող երկրի ի բազմութենէ դիականցն: Եւ զի անպարիսպ էր քաղաքն Սեբաստիոյ, իսկ այլազգիքն զառաջինն ոչ համարձակեցան մտանել ի քաղաքն, զի տեսանէին զբազմութիւն եկեղեցեացն սպիտակս և պումբեթաձևս, դիտացին եթէ վրանք զօրացն իցեն. և իբրև գիտացին՝ յայնժամ զաստուածաստաստ բարկութիւնն ածին ի վերայ քրիստոնէիցն, անողորմ և անխնայ կոտորեցին զայնքան բազմութիւն քաղաքին և անթիւ անհամար աւարաւ և գերութեամբ արանց և կանանց, մանկունս և աղջկունս վարէին ի գերութիւն և այնչափ գանձս ոսկւոյ և արծաթոյ, ականց և մարգարտաց և դիպակաց յափշտակեալ հանին ի Սեբաստիոյ, և վասն զի տուն եղև նա Հայոց թագաւորացն: Եւ էր օրն այն դառնաշունչ և չար ի վերայ բնակչաց քաղաքին, վասն զի առ սակաւ ժամ մի եղև քաղաքն և դաշտն արեամբ լցեալ. և գետն՝ որ անցանէր ընդ մէջ քաղաքին՝ փոխանակ յստակ ջրոյն ի յարիւն դարձուցանէր զգոյնն, և բազումք այն էին, որ հրով այրեցան. և ահա անկեալ կային բազում իշխանք և մեծ և փառաւորք՝ մահաբեր խոցմամբ ի մէջ մաքուր և պատուական դիականցն արեամբ ծածկեալք լինէին, և ի սպիտակութենէ մարմնոցն որպէս զաստեղս փայլէին: Զի՞նչ և վասն քահանայիցն և սարկաւագացն ասացից և յաղագս վեց հարիւր եկեղեցեացն, որ ի նմա կային. ամենայն սրով վճարեցան: Բազում կոյսք և հարսունք և փառաւոր տիկնայք վարեցան ի գերութիւն յաշխարհն Պարսից, և սակաւ ժամ մի եղև Սեբաստիա իբրև զխուղ մի այրեցեալ հրով: Եւ կացեալ

գազանների ձեռքով. Տուղրիլ սուլթանի արքունիքից դուրս եկան երեք ամիրաներ՝ Սամուխը, Ամրքափրը և Գիճաճիճին, գազաններից ավելի չար և արյունարբու մարդիկ, որոնք սևագունդ զինվորներով և մահափյուռ դրոշներով եկան բազմամարդ և նշանավոր Սեբաստիա քաղաքի վրա։ Մռնչալով ու որոտալով նրանք ուզեցին իրենց կատաղությունը թափել քրիստոնյաների վրա։ Դեռ ավելին, նրանք մտածեցին ձերբակալել հայոց թագավոր Սենեքերիմի որդիներ Ատոմին և Ապուսահլին, որոնք, սակայն, նախօրոք տեղյակ լինելով այլազգիների զորքի [գալըստյան] մասին, փախել էին Խավատանեք[208]։ Նրանց էին հետևել և բազմաթիվ այլ իշխաններ։ Բարեկենդանի վարդավառի օրը անհավատների զորքերի բազմությունը շրջապատելով պաշարեց ողջ քաղաքը։ Բոլոր զինվորները գործի դրեցին իրենց սրերը, և անհամար մարմիններ չարաչար մահով թավալվեցին գետին. երկիրն արյամբ այնպես ողողվեց, որ դիտողին սարսափ էր ազդում։ Պատվական մարդկանց մարմինները անտառափայտի նման դիզված էին գետնի վրա, իսկ գետինը դիակների շատությունից արյամբ էր ծածկված։ Թեև Սեբաստիա քաղաքը պարիսպներ չուներ, այնուամենայնիվ, այլազգիներն սկզբում չէին համարձակվում մուտք գործել. տեսնելով սպիտակ և գմբեթավոր բազմաթիվ եկեղեցիները, նրանց թվում էր, թե զինվորական վրաններ են դրանք։ Բայց երբ իմացան իրականությունը, ահա այն ժամանակ իրենց կատաղությունը թափեցին քրիստոնյաների գլխին. անողորմաբար և անխնա կոտորելով քաղաքի ողջ բնակչությանը և հափշտակելով ոսկու, արծաթի, թանկագին քարերի, մարգարիտների և դիպակների անքանակ գանձեր, գերեվարելով տղամարդկանց ու կանանց, մանկանց ու աղջիկների, անհամար ավարով ու գերիներով հեռացան Սեբաստիայից։ [Նրման հարստության այնտեղ կուտակվելու] պատճառն այն էր, որ [Սեբաստիան] հայ թագավորների մայրաքաղաք էր դարձել։ Այդ օրը քաղաքի բնակիչների համար դառն էր և ծանր, որովհետև կարճ ժամանակամիջոցում քաղաքը և դաշտը արյամբ ողողվեց։ Քաղաքի միջով հոսող գետի ղուլալ ջրի գույնը փոխվեց արյան, իսկ շատերն էլ ողջակիզվեցին։ Բազում մեծ ու փառավոր իշխաններ, մահացու վերք ստացած, արյունլվա փռվել էին սուրբ և պատվական դիակների մեջ և մարմինների սպիտակությունից շողշողում էին որպես աստղ։ Իսկ [ինչ պատմեմ քահանաների ու սարկավագների մասին, վեց հարյուր եկեղեցիների մասին, որ կային այնտեղ։ Բոլորն էլ սրի քաշվեցին և ավերակ դարձան։ Բազում կույսեր և հարսներ, երևելի տիկիններ պարսից երկիրը գերության քշվեցին։ Կարճ ժամանակամիջոցում Սեբաստիան վերածվեց մոխիր դարձած հյուղակի։ Այլազգիների զորքերը Սեբաստիայում

զօրք այլազգեացն ի Սեբաստիա աւուրս ութ և խաղաց գնաց յաշխարհն Պարսից անթիւ և անհամար զերութեամբ։

Ո՞վ կարասցէ մի ըստ միոջէ պատմել զկորուստ բարկութեանն և զլաց ապաշաւանաց տանս Հայոց, զոր յանօրէն և յարեւանարբու գազանացն զօրացն Թուրքաց կրեաց յանտիրութենէ, ի սուտ պահապանացն, ի տակար և ի թուլամորթ վատ ազգին Յունաց. վասն զի մի առ մի քակեալ հանին զքաջ զկօրականսն ի տանէն Հայոց, զորս հանին յարկաց և ի դաւառաց և բարձեալ խափանեցին զաթոռ թագաւորութեանն Հայոց. քակեցին զցանկ պահպանութեանն զօրաց և զօրավարաց. և ազգն Հոռոմոց իւրեանց անուն քաջութեան զանդարձ փախչելն արարին պարծանք. նմանեցան վատ հովուացն, որ յորժամ զգայլն տեսանէ՝ փախչի։ Սակայն Հոռոմք յայն ջանս ջանացան, որ լուր զպարիսպ ամրութեան տանս Հայոց քակեալ կործանեցին և զՊարսիկք ի վերայ արձակեցին սրով և զամենայն յաղթութիւնն՝ իւրեանց համարեցան և ինքեանք անպատկառելի երեսօք կուրտ զօրավարօք և ներքինի զօրօք զՀայք պահել ջանային, մինչ և Պարսիկք անտէր տեսին զամենայն արևելք. և յայնժամ մեծաւ զօրութեամբ զօրացան այլազգիքն, որ ի մէկ տարւոյ հասան մինչև ի դուռն Կոստանդնուպօլսի և առին զամենայն աշխարհն Հոռոմոց, զքաղաքս ծովեզերաց և զկղզիս նոցա և արարին զազգն Յունաց որպէս զբանտարկեալս ի ներս ի Կոստանդնուպօլիս։ Եւ յորժամ առաւ Հայք ի Յունաց, արգելաւ ամենայն չարութիւնն Հոռոմոց յազգէն Հայոց. և զկնի այսորիկ հնարեցան այլ կերպիւ պատերազմ յարուցանել ընդ ազգն Հայոց. նստան ի քննութիւն Հայոց և այսու առեալ զհանդէս պատերազմին, զմարտի և զկռիւս և զաղմուկ յեկեղեցի Աստուծոյ կարգեալ հաստատեցին։ Ի Պարսից պատերազմէն յօժարութեամբ փախչին և զամենայն ճշմարիտ հաւատացեալքս Քրիստոսի ի հաւատոյն ջանային խափանել և խախտել, վասն զի յորժամ այր քաջ և զօրաւոր գտանէին, զաչսն խաւարեցուցանէին և կամ ի ծովն ձգեալ խեղդամահ սատակէին. և այն էր փոյթ յօժարութեան նոցա, որպէս զամենայն իշխանսն Հայոց և զքաջ զօրականսն հանին յարևելից և բերին բնակեցուցին ի Յոյնսն. և յայնժամ ինքեանք զմանկութեան արիութիւնն ի կուրտս փոխարկեցին և փոխանակ լեկուր զրեհացն, զոր քաջքն զգեներին, նոքա զծոցն հանդերձիցն լայն և երկայն արարին և փոխանակ պողովատ սաղաւարտին պէչևտառ եդին և փոխանակ երկաթապատ թիկանցն՝ զփողպատն ի վերայ յուսոցն լայն արարին. և որպէս կանայք հեզ և ցած խօսին, քաջ և մա-

մնացին ութ օր և անթիվ ու անհամար զերիներով շարժվեցին գնացին պարսից երկիրը։

Ո՞վ է ի վիճակի մեկ առ մեկ պատմել հայոց երկրի ավերածության և զրկման լացի մասին, երկիր, որ անտիրության պատճառով, կարծեցյալ պահապանների՝ հունաց թուլամորթ և վատաբարո ազգի մեղքով տառապեց անհավատ և արյունարբու թուրքերի գաղանաբարո զորքերից. [հույները] աստիճանաբար հայոց երկրից հեռացրին քաջ զինվորականներին, նրանց կտրեցին իրենց տնից ու գավառից և կործանեցին հայոց թագավորությունը. նրանք քանդեցին [երկրի] պարիսպը, որ զինվորներն ու զորավարներն էին կազմում։ Անվերադարձ փախուստը դարձավ հոռոմների քաջության և պարծենալու արտահայտությունը։ Նրանք նմանվեցին այն վատ հովիվներին, որոնք գայլ տեսնելիս փախչում են։ Հոռոմներին մի բան հաջողվեց, այն, որ նրանք հայոց երկրի ամուր պարիսպը քանդելով կործանեցին ու պարսիկներին ղենքով [երկրի] վրա բաց թողեցին, և դա իրենց համար հաղթանակ համարեցին՝ իրենք էլ անամոթաբար ճգնում էին ձվատ զորավարներով և ներքինի զինվորներով Հայաստանը պահել, մինչև որ պարսիկները ամբողջ Արևվելքը անտերունչ գտան։ Այն ժամանակ այլազգիները սաստիկ հզորացան և մեկ տարվա ընթացքում գրավեցին հռոմոց ամբողջ երկիրը, ծովեզրյա քաղաքները, նրանց կղզիները և հասան մինչև Կոստանդնուպոլսի դարպասները՝ հույն ժողովրդին Կոստանդնուպոլսում արգելափակելով։

Գրավելով Հայաստանը, հոռոմները դադարեցրին ամեն տեսակի պայքարը հայոց դեմ, բայց այս անգամ էլ ձեռնարկեցին նրանց դեմ այլ պատերազմ մղել. նրանք սկսեցին հայերին հավատաքննության ենթարկել։ Նրանք ատեցին պատերազմական ու մարտական գործը, բայց աստծո եկեղեցու մեջ կռիվ ու տակնուվրայություն հաստատեցին։ Նրանք խուսափում են պարսիկների դեմ կռվելուց, բայց աշխատում են բոլոր իսկական քրիստոնյաներին դավանափոխ անել. հանդիպած քաջ ու հզոր մարդու աչքի լույսն են խավարեցնում կամ ծովը գցում և ջրահեղձ անում։ Նրանց նպատակն էր հայոց բոլոր իշխաններին ու քաջ զինվորականներին Արևելքից հանել բերել հույների մեջ բնակեցնել։ Նրանք տղամարդուց վերածվեցին ձվատների, սեղմ զրահների փոխարեն, որ քաջերն են կրում, լայն ու երկար հանդերձներ հագան, պողպատե թաղավարտի փոխարեն իրենց գլխին պելևտար[209] դրին, երկաթապատ թիկնոցների փոխարեն իրենց ուսերի վրա լայն փողպատ[210] գցեցին և, ինչպես կանայք, սկսեցին մեղմ ու ցածրաձայն խոսել, բայց և անընդհատ մտածել քաջ ու զորական մարդկանց կորստյան մասնելու մասին։

նուկ արանց հանապազ կորուստ խորհին. և ի ձեռաց սոցա ամենայն հաւատացեալք մատնեցան ի գերութիւն յաշխարհն Պարսից։

Յայսմ ժամանակիս թագաւորն Տուկիծ խորհեցաւ խորհուրդ չար և կամեցաւ բառնալ և խափանել զաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի ի տանէն Հայոց, և որպէս ասացաքս, յարուցանէր հալածանս և առնէր քննութիւնս պէսպէս յաղագս հաւատոյ Հայաստանեայց ազգիս։ Մանաւանդ յորժամ մեռաւ Տէր Պետրոսն, յայնժամ յարեան Հոռոմք ի վերայ սուրբ Աթոռոյն և կամեցան եղծանել զնա և կամեցան առ հասարակ դարձուցանել զՀայք ի հաւատն անօրէն Քաղկեդոնի։ Եւ յայսմ ժամու արարին Հոռոմք խնդիր բազմութեան գանձուցն ոսկւոյ և արծաթոյ Տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի և զբազումս ի խոշտանգս մատնեցին ի Սեբաստիա և ղօծեալն ի յաթոռ հայրապետութեանն զՏէր Խաչիկ հանդերձ եպիսկոպոսօք տարան ի Կոստանդնուպոլիս և զամենագովելին զՏէր Եղիսէ և պահեցին զնոսա յաքսորս զամս երիս. և յաւուրսն յայնոսիկ բազում վտանգ գործեցաւ ի հաւատս Հայոց։ Եւ յայնժամ թագաւորքն և իշխանքն Հայոց, Գագիկ Անեցի և Ատոմ և Ապուսահլ՝ որդիք Սենեքարիմայ ջան յանձինս կրեցին և հալիւ կարացին հանել զնոսա։ Եւ զկնի այս ամենայն եղելոցս նստուցին յաթոռ հայրապետութեան ի Բաբլուր. և կացեալ անդ զամս երիս և ընդ ամենայն վեց ամ կալեալ զաթոռ հայրապետութեանն Տէր Խաչիկ։

Իսկ ի գալ հասանել մերոյ թուականութեանս ի յամս ՇԺԱ հարուածք չար և զժնդակ դառն օդով սփռեալ տարածեցաւ ի վերայ հաւատացելոց Քրիստոսի։ Զի եղև յաւուրս աշնանային և յամսեանն յարեգիր բարկութիւն շարժեցաւ ի Դրանէն Պարսից և գային արք երեք մեծք և երեւելիք ի տիւանէ անտի Տուղրէլ սուլտանէն, որք են այսօրիկ՝ Սլար-Խորասան և Ճմճմ և Իսուլվ. և սոքա բազում արեան հեղմամբ գային ի վերայ ազգին քրիստոնէից. և հասեալ նոցա բազում զօրօք ի գաւառն, որ կոչի Պաղին, և սրով սրտմտութեամբ հեղաւ բազում արիւն ի հաւատացեալոցն, և գերեցաւ ամենայն գաւառն Պաղնայ։ Եւ անտի յարուցեալ գային որպէս զօձ թունաւորք և հասանէր ի վերայ գաւառին Թլմխոյ յԱրկնոյ և առանց պատրաստութեան գտանէր զամենայն գաւառն։ Եւ եղև յորժամ տեսին զամենայն երկիրն յանամրութիւն և գաւառն ամենայն կային ի մեծ ուրախութեան։ Իսկ նոքա որպէս զարեւանարբու գայլ և կամ իբրև զկատաղի շունս սրով անողորմ յարձակեցան ի կոտորել զամենայն գաւառն առ հասարակ։ Եւ էր երկիրն ամենայն բոլոր շէն, լցած մարդով և անասնով, և էր բազմամբոխ յամենայն գաւառն. և յարեգիր չորս յաւուր շաբաթու յութերորդ ժամուն լցաւ լայնատարած դաշտն արեամբ և գերութեամբ և անողորմ կոտորածով, զորս ոչ կարեմք պատ-

Սրանք են պատճառը, որ բոլոր հավատացյալները պարսից երկիրը գերության քշվեցին։

Այդ ժամանակները Տուկիծ կայսրը մի նենգ որոշում կայացրեց. նա կամեցավ հայոց երկրից վերացնել ու խափանել սուրբ Գրիգորի հայրապետական աթոռը։ [Այս պատճառով], ինչպես ասացինք, սկսեց հալածանքներ հարուցել և հայոց դավանանքի վերաբերյալ ամեն տեսակի հավատաքննություն կատարել։ Հատկապես, երբ վախճանվեց տեր Պետրոսը, ահա այն ժամանակ հոռոմները դուրս եկան Սուրբ Աթոռի դեմ՝ ցանկանալով վերացնել այն և ջանալով հայերին գլխովին քաղկեդոնի անօրեն դավանանքին դարձնել։ Այդ ժամանակները հոռոմները հայոց կաթողիկոս տեր Պետրոսի բազմաթիվ ոսկե և արծաթե պանձեր շուրջ խնդիր բացեցին, Սեբաստիայում շատերին խոշտանգեցին, իսկ հայոց հայրապետ օծված տեր Խաչիկին, եպիսկոպոսներով հանդերձ, և ամենագովելի տեր Եղիսեին տարան Կոստանդնուպոլիս և երեք տարի աքսորական պահեցին. այդ օրերին հայադավանությունը բազում փորձությունների ենթարկվեց։ Հայոց թագավորներն ու իշխանները՝ Դավիթ Անեցին, Սենեքերիմի որդիներ Ատոմն ու Ապուսահլը շատ ջանք թափեցին և հազիվ կարողացան նրանց ազատել [աքսորից]։ Այդ բոլորից հետո [Խաչիկին] նստեցրին կաթողիկոսական աթոռին Թավբլուրում[211], որտեղ նա մնաց երեք տարի, իսկ հայրապետության աթոռին, ամբողջությամբ վերցրած, նա նստեց վեց տարի։

Երբ հասավ մեր 511 թվականը [6 մարտ 1062—5 մարտ 1063 թ.], դառնաշունչ քամին քրիստոնյաների գլխին դժնդակ փորձություններ բերեց. աշնան ժամանակ, արեգ ամսին, փորձանքը եկավ պարսից արքունիքից. երեք մեծ և երևելի մարդիկ՝ Սլար-Խորասանը[212], Ճմճմը և Իսուլվը, Տուղրիլ սուլթանի արքունիքից դուրս գալով, բազում արյունահեղությամբ շարժվեցին քրիստոնյաների վրա։ Հսկայական զորքով նրանք հասան Պաղին կոչվող գավառը և գազազած սրի քաշեցին բազում հավատացյալների, գերեվարեցին ողջ Պաղին գավառի բնակչությանը։ Այնտեղից հեռանալով, թունավոր օձերի նման արշավեցին Թլմուխ գավառի Արկնի բերդի վրա։ Բովանդակ գավառը ոչ մի պատրաստություն չէր տեսել։ Համոզվելով, որ ամբողջ գավառը զուրկ է ամրություններից, նրանք շատ ուրախացան և, ինչպես արյունարբու գայլեր կամ կատաղած շներ, սրերով սկսեցին անխնա իսպառ կոտորել գավառի [բնակչությանը]։ Ամբողջ գավառը շեն էր, մարդաշատ ու բազմամբոխ, անասուններով հարուստ։ Արեգ ամսվա չորսին, շաբաթ օրվա ութերորդ ժամին, լայնատարած դաշտը արյամբ ողողվեց, գերությամբ ու անխնա կոտորածով, որ անհնար է նկարագրել։ Անթիվ-անհամար մարդիկ հրո

մել. բազում և անթիւ այն էին, որ կրակով այրեցան. և յամենայն գաւառն ոչ ոք էր, որ կարաց ղերծանել յերեսաց սրոյն. և յաւուր յայնմիկ բազումք հասին մարտիրոսութեան: Եւ զկնի անհամար գերութեանն և անհամար կոտորածոյն ասացից և զՃշմարիտ քահանայիցն Աստուծոյ՝ զՔրիստափոր և զորդիս նորա զԲորոս և զՍտեփանոս, որ հանդերձ ամենայն ժողովրդեամբն մարտիրոսացան. վասն զի յորժամ տեսաւ ըզբազմութիւն զօրացն այլազգեացն, ժողովեաց զամենայն գիւղն յեկեղեցին՝ զարս և զկանայս հանդերձ տղայօքն և ինքն սկիզբն արար պատարագին Քրիստոսի և հաղորդեցոյց առ հասարակ զամենայն ժողովուրդն: Եւ զօրքն անօրինաց պատեալ շուրջ զեկեղեցւովն, և դասք հաւատացելոցն, որք հաղորդէին, մի առ մի ելանէին առ արիւնարբու գազանքն, և նոքա սրախողխող առնէին զհաւատացեալսն Քրիստոսի. և յորժամ մնացեալ լինէր ինքն և որդիքն իւր, ծունր կրկնեցին Աստուծոյ և գոհանալով համբուրեցին զմիմեանս, և ելեալ նոցա ընկալան զմարտիրոսական մահն բարի խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս: Եւ յորժամ լուաւ զչար բարկութիւն կատարածիս ամիրային, որ նստէր յԱմիթ քաղաքի, որդին Նսըրտօլայ, գրեաց առ Սլար-Խորասանն և հաստատեաց ընդ նմա սէր և զամենայն գերութիւնն հրամայեաց ծախել ի գաւառն իւր, վասն զի էր բարի և ողորմած ի վերայ քրիստոնէից ազգին. և նհան հրովարտակ ընդ ամենայն երկիրն, զի գնեսցեն զամենայն զգերութիւնն. և արարին այնպէս: Եւ յորժամ յԱմիթ ի ծախ բերէին, բազումք ի դուռն քաղաքին մարտիրոսացան. և տեսանէին լոյս խչեալ յերկնից ի վերայ նոցա՝ հրակերպ տեսլեամբ:

Արդ ո՞վ կարասցէ պատմել զկատարածս և զանցումն կատարածիս տանն Հայոց. զի արեամբ ծածկեցաւ առ հասարակ ամենայն արարածք և սմբակք երիվարաց նոցա մաշեցին զլերինս և զբլուրս, որ և ի բազմութենէ դիակացն հոտեցաւ երկիր և անհամար գերութեանցն լցաւ ամենայն տուն Պարսից, և արեամբ արբեալ եղեն ամենայն ազգ գազանաց. և ի լայ և ի սուգ տրտմութեան մտեալ նստան ամենայն որդիք մարդկան հաւատացելոցն Քրիստոսի, վասն զի արարիչն Աստուած գարձոյց ի մէնջ զերեսս բարերարութեան իւրոյ. այս եղև վասն մեղաց և չար գնացից մերոց, և մատնեաց զմեզ անօրէն և չար գազան ազգին Թուրքաց, ըստ բանի մարգարէին՝ որ ասաց. «Աստուած, թէ մերժեցեր զմեզ և աւերեցեր և բարկացար և գթասցիս և ոչ ելեր ընդ զօրս մեր դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր, և առելիք մեր յափշտակեցին զմեզ. ետուր զմեզ որպէս զոչխար ի զենումն և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ»: Իսկ յետ այսչափ բարկութեանս և կատարածիս՝ որ եղև, խաղացուցին զբազմութիւն գերութեան յաշխարհն Պարսից և տա-

ճարակ դարձան։ Ողջ գավառի բնակիչներից և ոչ մեկին չհաջողվեց սրբից պրծնել. այդ օրը շատերը նահատակվեցին։ Անհամար գերյալների և սարսափելի կոտորածի մասին [պատմելուց հետո] կասեմ և աստծո ճշմարիտ քահանաներ Քրիստափորի և նրա որդիներ Թորոսի ու Ստեփանոսի մասին, որոնք համայն ժողովրդի հետ նահատակվեցին։ [Քրիստափորը], տեսնելով այլազգիների զորքերի բազմությունը, գյուղի ողջ բնակչությանը՝ տղամարդկանց ու կանանց, երեխաներով հանդերձ, հավաքեց եկեղեցում և սկսեց Քրիստոսին պատարագ մատուցել, ապա ամբողջ ժողովրդին հաղորդություն տվեց։ Անհավատների զինվորները շրջապատեցին եկեղեցին։ Քրիստոնյա հավատացյալները հաղորդություն ստանալով մեկ առ մեկ դուրս էին գալիս դեպի արյունռուշտ գազանները, որոնք նրանց սրի էին քաշում։ Երբ մնացին ինքն ու իր որդիները, ծնրադրեցին աստծո առջև, ապա փառաբանելով համբուրվեցին միմյանց հետ և դուրս գալով՝ բարի խոստովանությամբ ի Հիսուս Քրիստոս, մարտիրոսական մահն ընկալան։ Երբ Ամիթ քաղաքում նստող ամիրան՝ Նսրտուլի որդին[213], լսեց սոսկալի դժբախտության մասին, նամակ գրեց Սլար-Խորասանին, նրա հետ բարեկամություն հաստատեց և հրամայեց իր գավառում վաճառել բոլոր գերիներին. նա բարի մարդ էր և քրիստոնյաներին գթացող. ամբողջ երկրով մեկ հրովարտակ հրապարակեց, կոչ անելով գնել բոլոր գերիներին։ Այդպես էլ եղավ։ Երբ գերիներին բերեցին Ամիթ՝ վաճառքի, շատերը քաղաքի դռների առջև նահատակվեցին։ Կարելի էր տեսնել հրեղեն լույսը, որ երկնքից իջել էր նրանց վրա։

Արդ, ո՞վ կարող է պատմել հայոց աշխարհի ավերման և կործանման մասին. ամեն ինչ թաթախվեց արյան մեջ, [թուրքերի] ձիերի սմբակները մաշեցրին լեռներն ու բլուրները, դիակների շատությունից գարշահոտությունը պատեց երկիրը։ Պարսից երկիրը լցվեց անհամար գերիներով. արյամբ հարբեցին բոլոր գազանները, իսկ Քրիստոսին հավատացող բոլոր մարդիկ նստեցին ողբալու և սգալու, քանզի արարիչ աստվածը իր բարի երեսը մեզանից թեքեց։ Այդ կատարվեց մեր մեղքերի և չար արարքների պատճառով, և [աստված] մեզ մատնեց անհավատ և գազանաբարո թուրք ազգի ձեռքը, համաձայն մարգարեի խոսքի, թե՝ «Աստված, թեև մերժեցիր մեզ և կործանեցիր, բարկացար մեր դեմ, [բայց] գթա՛։ Դու չեղար մեր զորքերի հետ, ընդհակառակը մեզ հետ դարձրիր. մեր ատելիները կողոպտեցին մեզ։ Դու մեզ զենման տրվեցիր, ինչպես ոչխարին, և հեթանոսների մեջ ցրիվ տվեցիր»[214]։ Այսքան փորձություններից և դժբախտություններից հետո նրանք անթիվ գերիներին քշեցին պարսից երկիրը և տանում էին երամներով, ինչպես

նէին զնոսա երամ երամ որպէս զբազմութիւն թռչնոց. և տեսեալ զնոսա ազգն այլազգեացն հիանային և հարցուկ լինէին առ դերեալսն և ասէին, եթէ՝ «Զիա՞րդ գերեցայք այդչափ անպատրաստութեամբ և վասն է՞ր յառաջագէտ ոչ կարացիք լինել, և ելեալ էիք փախստական կա՛մ լսելով կամ նշանօք»։ Եւ նոքա ասացին, եթէ՝ «Բնաւ ամենևին ոչ կարացաք իմանալ»։ Եւ ասացին կանայք այլազգեացն, եթէ՝ «Ահա այս էր նշանն կատարածին ձերոյ. յորժամ յերեկորէն ձեր հաւն խօսէր և ձեր պախրէն և կամ ոչխարն ի նստուկ աղբէր, այն էր նշան բարկութեանն»։ Եւ ասացին ոմք դերեացն, թէ՝ «Այդ բազում անգամ լինէր յաշխարհն մեր, և ոչ կարացաք դիտել, եթէ նշան բարկութեան է մեզ»։

Յետ այսր ամենայնի, զոր ասացաք զկատարածն բարկութեանս, հասաւ չար համբաւս այս առ թագաւորն Տուկիծ. և յայնժամ զօրաժողով արարեալ և կացուցանէր զօրավար դմիծ իշխանն, որ կոչէր Փռանգապօլ, և առաքեաց զնա բանալ զօրօք ի գաւառն Թլմխոյ. և գային հասանէին ի Թլմուխ մեծաւ զօրութեամբ։ Եւ արար զօրաժողով Ուռհայոյ տուկն, որոյ անուն ասէին Դաւաւանոս, այր քաջ և հզօր ի պատերազմի և անուանի ի վերայ երկրի. և նորա զօրաժողով արարեալ զՈւռհա և զԿարկառ և զՀարանմսուր և խաղայր զօրօք ի վերայ Տաճկաց և վրէժխնդիր լինէր արեան քրիստոնէիցն, զոր հեղին, և երթեալ բանալ զօրօք բանակ հարկանէր ի դաշտ Թլմխոյ. և տեսանէր ի տեղիս զայնքան բազմութիւն կոտորածին՝ լային առ հասարակ ամենայն զօրքն։ Իսկ զօրք Թուրքացն լուեալ զգալ զօրացն Հոռոմոց, փախեան յաշխարհն Պարսից. և յայնժամ Դաւաւանոսն զոչեաց որպէս զառիւծ ի վերայ Տաճկաց և յարձակեցաւ ի պատերազմ ի վերայ քաղաքին Ամթայ, մանաւանդ զի յայնմ աւուրսն զմեծ ամիրայն զամիր Սայիտ զորդի Նսըրաօլայ դեղեալ էին քաղաքացիքն և սպանեալ։ Իսկ յորժամ լուան քաղաքացիքն զգալ զօրացն Հոռոմոց, յուզարկեցին գաղտ առ Փռանգապօլն ասան հազար դահեկան. և արար Փռանգապօլն գաղտուկ սէր ընդ Տաճկունքն. և դիտացեալ զայն Դաւաւանոսին՝ նախատեաց յոյժ զՓռանգապօլն. և յորժամ հասան ի դուռն քաղաքին Ամթայ, ի տեղին՝ ուր Հոռոմ Դուռն կոչի, ելին ամենայն զօրօք այլազգեացն ի պատերազմ։ Իսկ Փռանգապօլն զպատերազմն ննջգաւորութեամբ Դաւաւանոսին տայ և ինքն ամենայն զօրօքն ի յետ կայր պարապ ի պատերազմէն, և հեծեալք վաթսուն հազար ընդ նմա։ Եւ յորժամ խմբեցաւ պատերազմն, մի ոմն ի զօրաց այլազգեացն այր քաջ, որում անուն ասէին Հէճն Պշարա, մեծ ոճիրս գործէր զօրացն Հոռոմոց, որպէս զարծիւ պատառէր զճակատ Դաւաւանոսին զօրացն և ի ներս դառնայր կրկնէր։ Եւ տեսեալ զայն Դաւաւանոսն, ձայն տուեալ ձիոյ և ասէր՝ թէ «զկամանն

թռչունների բազմություն։ Այլազգիների ժողովուրդը, տեսնելով նրանց, ապշած հարցնում էր գերիներին. «Ինչո՞ւ եք այդպես անպատրաստի վիճակում գերի ընկել, ինչո՞ւ նախօրոք լսելով կամ որևէ նշանից զուշակելով, չիմացաք և փախստական չեղաք»։ Նրանք պատասխանեցին, թե՝ «Ամենևին չկարողացանք իմանալ»։ Այլազգիների կանայք ասացին, թե՝ «Ձեր գլխին գալիք փորձանքի մասին նշանը հետևյալն էր. երեկոյան ձեր հավը կչկչում էր, իսկ ձեր պախրան կամ ոչխարը նստած տեղն էր աղբում, փորձանքի նշանն ահա այդ էր»։ Գերիներն ասացին, թե՝ «Այդ բանը մեր երկրում բազմիցս եղավ, բայց մենք չգիտեինք, որ դա է մեր գլխին գալիք փորձանքի նշանը»։

Այդ բոլոր աղետալի փորձանքներից հետո, որոնց մասին պատմեցինք, բոլը հասավ կայսր Տուկծին. [նա] իսկույն զորահավաք արեց և զորավար նշանակելով մեծ իշխանին, որին Փռանգապոլ[215] էին կոչում, բազում զորքերով ուղարկեց Թլմուխ գավառը։ [Փռանգապոլը] մեծ զորությամբ եկավ հասավ Թլմուխ։ Զորահավաք արեց և Ուռհայի դուկը, որի անունը Դավատանոս[216] էր, երկրում հռչակված հզոր ու քաջ պատերազմող մի մարդ։ Նա զորակոչեց Ուռհան, Կառկառը[217] և Հարսնմսուրը[218] և զորքով շարժվեց տաճիկների վրա՝ քրիստոնյաների թափած արյան համար նրանցից վրեժ լուծելու։ Բազմաթիվ զորքերով նա գնաց բանակեց Թլմուխի դաշտում. տեսնելով դիակների անհամար բազմությունը, բոլոր ղինվորները լաց էին լինում։ Թուրքերի զորքը, լսելով հոռոմների գալստյան մասին, փախավ պարսից երկիրը։ Դրա վրա Դավատանոսը առյուծի նման մռնչաց տաճիկների վրա և կովի դուրս եկավ Ամիթի քաղաքի դեմ, նամանավանդ, որ այդ օրերին Նստրոլի որդի մեծ ամիրա Ամիր Սայիդին քաղաքացիները թունավորել ու սպանել էին։ Քաղաքացիները, լսելով հոռոմների զորքի գալստյան մասին, Փռանգապոլին ծածուկ տաս հաղար դահեկան ուղարկեցին, որի սիրույն նա թաքուն բարեկամացավ տաճիկների հետ։ Դավատանոսն իմացավ այդ մասին և Փռանգապոլին շատ պախարակեց։ Երբ հասան Ամիթ քաղաքի դռան մոտ, այն տեղը, որ Հռոմի Դուռ է կոչվում, այլազգիների բոլոր զորքերը դուրս եկան կովի։ Փռանգապոլը նենգությամբ պատերազմի ամբողջ բեռը թողնելով Դավատանոսի վրա, ինքը ողջ զորքով՝ վաթսուն հաղար հեծյալ, մարտին չմասնակցեց։ Պատերազմի թեժ պահին այլազգիների ղինվորներից մի քաջ մարդ, որի անունը Հեճն-Պշարա էր, արծվի պես ճեղքելով Դավատանոսի զորքերի ճակատը, սկսեց անխնա կոտորել հոռոմ ղինվորներին։ Դավատանոսը, տեսնելով դա, ձայն տվեց և ասաց. «Կամամին ինձ բերեք»[219]։ Երբ Պշարան առաջ եկավ,

մատուցէք ինձ»։ Եւ իբրև ելեալ գայր Պշարայ, Դաւատանոսն որպէս զառիւծ ի վերայ յարձակեցաւ և նիզակաւն հարեալ զսիրտն՝ պատառեաց զերկաթն և յայնկոյս հանեալ զգեղարդն. և երկոքեանն ի ձիոյ անկեալ լինէին։ Եւ բախեալ երկոցունց կողմանց ի վերայ՝ սպանեալ ի նոյն տեղին Դաւատանոսն, և Պշարայ սատակեալ կայր ի մէջ նիզակին։ Եւ լուեալ քաղաքացիքն, եթէ մեռաւ Դաւատանոսն, միաբան առ հասարակ ի դուրս բախեալ ելանէին։ Եւ յայնժամ մի ոմն ի զօրաց Դաւատանոսին գնացեալ առ Փռանդապօլն և դատախազ վարէր ընդ նմա վասն մահուանն Դաւատանոսի, որում անուն Տավառ ասէին. և իմացեալ պայս Փռանդապօլն՝ յարձակեցաւ ի վերայ այլազգեացն և արար սաստիկ կոտորած ի դուռն քաղաքին՝ հնգետասան հազար, և դարձաւ ի Հոռոմք։

Յայսմ ամի ժողով արարեալ ոմն Յեհնուկ անուն, հինգ հազար արամբք գնացեալ ի վերայ Քրդաստանաց ի գաւառն Ամթայ ի տեղին՝ ուր Ճեպու-Շահար կոչի. և առեալ բազում և անթիւ աւար՝ ոչխարս և պախրէս, ձիս և ծառայս և այլ բազում աւարս՝ և գայր ի բերդն, որ կոչի Սեւերակս. և հասանէր ի հետ՝ որ աւագ էր Քրդացն՝ որում անուն Խալէ ասէին, ինքն և իւր երեք որդիքն. և տեսեալ Յեհնուկն և իւր զօրքն ի փախուստ դարձան։ Եւ յայնժամ աստուածասաստ բարկութիւնն հեղաւ ի վերայ նոցա, վասն զի հասան յԱմթայ զօրք և արարին բազում կոտորածս և թափեցին զամենայն առն և զգերութիւնն։

Յայսմ ամի գնաց Փռանդապօլն ի Կարնոյ քաղաք և անդ հանդիպեալ Թուրք զօրացն՝ որ կոտորէր զգաւառն Բլմխոյ, և հարան ընդ միմեանս ի պատերազմ. և յաղթեաց նոցա Փռանդապօլն և կոտորեաց զամենայն զօրսն Թուրքաց և սատակեաց զամիրայն այլազգեացն՝ որում անուն Խուսփ ասէին, և արար անթիւ աւար և թափեաց անթիւ գերութիւն ի նոցանէ։ Իսկ յորժամ լուաւ թագաւորն Տուկիծ զմահ Դաւատանոսին, որ նենգութեամբ Փռանդապօլին եղև, կոչեաց զնա ի Կոստանդնուպօլիս, և ծովահղձ արար զնա, վէմ կապեաց ի պարանոցն և ընկէց յովկիանոս։

Դարձեալ ի թուականութեանս Հայոց և յամի ՇժԳ զօրաժողով արար թագաւորն Պարսից Ապօլան սուլտանն, եղբայր Տուղրիլ սուլտանայ, որ վկնի մահուան եղբօրն նստաւ յաթոռ թագաւորութեանն, զօրաժողով արարեալ զՊարսիկս և զազգս Թուրքաց և զամենայն խուժաստան աշխարհն մինչև ի Սագաստան. և շարժեալ մեծաւ ցասմամբ և ահագին բազմութեամբ՝ ծփայր չարեօք ալեօք և խաղայր որպէս զգետս յարուցեալ մրրկաբեր բարկութեամբ և որպէս զգազան արիւնարբու բընութեամբ զայրացեալ և գայր հասանէր ի Հայաստան աշխարհս և ան-

Դավատանոսը առյուծի պես հարձակվեց նրա վրա և, նիզակով ճեղքելով զրահը, նրա սրտի մեջ մխրճեց այն և մյուս կողմից դուրս հանեց։ Երկուսն էլ ձիերից ցած գլորվեցին։ Ոտխներն սկսեցին միմյանց հարվածել. Դավատանոսը տեղն ու տեղը սպանվեց, իսկ Պշարան էլ նիզակի հարվածից սատակեց։ Քաղաքացիները, լսելով Դավատանոսի սպանության մասին, բոլորը միասին դուրս եկան։ Այդ պահին Դավատանոսի զինվորներից Տավառ անունով մեկը գնաց Փռանգապոլի մոտ և Դավատանոսի մահվան մեղքը նրա վրա գցեց։ Փռանգապոլն իմանալով [Դավատանոսի մահվան] մասին, հարձակվեց այլազգիների վրա և քաղաքի դարպասի առջև մեծ ջարդ տալով ու տասնհինգ հազար հոգի կոտորելով, վերադարձավ հռոմոց երկիրը։

Նույն տարին ոմն Յեհնուկ զորահավաք կատարեց և հինգ հազար հոգով գնաց Ֆրդսատնի վրա՝ Ամիթ գավառը, Ճեպու-Շահար կոչվող վայրը։ Վերցնելով անհամար ավար՝ ոչխարներ, խոշոր եղջերավոր անասուններ, ձիեր, գերիներ և այլ շատ բան, նա գալիս է Սևերակ կոչվող բերդը։ Նրա ետևից հասնում է քրդերի ավագը, Խալիթ[220] անունով մեկը՝ իր երեք որդիներով։ Յեհնուկն ու նրա զինվորները, տեսնելով [նրանց], դիմում են փախուստի։ Այն ժամանակ ահա նրանց գլխին թափվեց աստծո պատիժը, որովհետև Ամիթից զորք եկավ և, մեծ ջարդ տալով, ետ վերադարձրեց ողջ ավարն ու բոլոր գերիներին։

Նույն տարին Փռանգապոլը գնաց Կարնո քաղաքը, որտեղ նա հանդիպեց այն թուրք զինվորներին, որոնք սրի էին քաշել Թլմուխ գավառը։ Նրանք միմյանց մարտ տվեցին։ Հաղթող դուրս եկավ Փռանգապոլը։ Նա կոտորեց բոլոր թուրք զինվորներին, սպանեց այլազգիների ամիրային, որի անունը Խուփ էր, անթիվ ավար վերցրեց և թուրքերի ձեռքից ազատեց անհամար գերիների։ Երբ Տուկիծ կայսրը տեղեկացավ Դավատանոսի սպանության մասին, որի պատճառը Փռանգապոլի նենգությունն էր, վերջինիս Կոստանդնուպոլիս կանչեց, նրա վզից քար կապեց և Օվկիանոսը գցելով՝ ծովահեղձ արեց։

Հայոց 513 թվականին [5 մարտ 1064—4 մարտ 1065 թ.] պարսից թագավոր սուլթան Աբասլանը՝ Տուղրիլ սուլթանի եղբայրը[221], որն իր եղբոր մահից հետո նստեց թագավորական գահին, զորակոչեց պարսիկներին և համայն Խուժաստան աշխարհը՝ մինչև Սագաստան, և հրսկայական զորքի գլուխն անցած, ալեկոծված ծովի կամ հորդած գետի նման, փոթորկալի ցասմամբ ու կատաղությամբ, արյունռուշտ գազանի նման եկավ հասավ Հայաստան։ Զինվորների ահագին բազմությամբ

համար բազմութեամբ զօրօք մտանէր յաշխարհն Աղուանից և մատնեաց զնոսա ի սուրս և ի գերութիւնս. և անթիւ և անհամար արար զանցումն քրիստոնէից, որ ոչ ոք կարէ պատմել զկատարածն դառնաշունչ աղէտիցն հաւատացելոցն Քրիստոսի, վասն զի դառն ճաշակմամբ ընկալան զմահն ի կատաղեալ չարաթոյն ազգէն Թուրքաց. և ի բազմութենէ զօրացն ծածկեալ եղև ամենայն երեսք դաշտացն, և փակեաց զամենայն տեղի փախստեան։ Եւ ահա աստ կատարեցան բանք Փրկչին որ ասաց, թէ «Վա՛յ իդէ յղեացս և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ», վասն զի բազում քահանայք և կրօնաւորք և հայրապետք և փառաւոր իշխանք ընկալան զմահս դառնաշունչս և եղեն կերակուր գազանաց և թռչնոց։ Եւ զկնի այսչափ բարկութեանն առաքեաց սուլտանն առ թագաւորն Աղուանից ի Կիւրիւկէ և խնդրեաց զդուստրն իւր ի կնութիւն, որ յաղագս ահին տուեալ եղև. և արար սուլտանն ընդ նմա սէր և խաղաղութիւն յաւիտեան և զբազաւորն Աղուանից զՍիւրիւկէ զորդի Դաւթի Անհողինի յուղարկեաց մեծաւ պատուով ի քաղաքն իւր Լօռէ բազում ընծայիւք։ Եւ անտի յարուցեալ սուլտանն ահագին բազմութեամբն իւրով մտաւ յաշխարհն Վրաց և մեծաւ սրամտութեամբ մատնեաց զնոսա ի սուր և ի գերութիւն. և իջեալ բանակեցաւ ի դաւառն, որ կոչի Ջաւալիս, և պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն որ կոչի Ալախ. և ուժգին զօրութեամբն առաւ Ալախ քաղաքն. և առ հասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց՝ զայր և զկին՝ անողորմ և զամենայն քահանայսն և զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ. և լցաւ ամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանկունս և աղջկունս տարան ի Պարսիկս ի գերութիւն, և զանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտացն որ ոչ էր թիւ։

Յայսմ ամի յարուցեալ սուլտանն մեծաւ յաղթութեամբ և խաղաց չար վիշապն Պարսից և գայր մտանէր յաշխարհն Հայոց և զաստուածաստաստ բարկութիւնն հեղույր ի վերայ տանն արևելից և արբուցանէր զմաղձն դառնութեան իւրոյ ամենայն ազգին Հայոց. և սփռեցաւ բոց բորբոքեալ մահու առ հասարակ հաւատացելոց Քրիստոսի, և լցաւ ամենայն տունն Հայոց արեամբ, սրով և գերութեամբ։ Եւ յարուցեալ գայր որպէս զամպս սևացեալս և իջեալ ի վերայ թագաւորաբնակ քաղաքին Անւոյ և պատեաց առհասարակ շուրջանակաւ՝ նման չար վիշապի։

Եւ տեսեալ բազմութիւն քաղաքին՝ դողաց առհասարակ, և պատրաստեցան ի պատերազմ ընդդէմ Պարսից՝ ուժգին զօրութեամբ։ Իսկ զօրք անօրինացն յարձակեցան գազանաբար ի պատերազմ մեծաւ սրտմտութեամբ և ի քաղաքն Անի հարկանէին զղօրսն Հոռոմոց և գումարեցին զնոսա առհասարակ ի քաղաքն. և ահաւոր պատերազմաւ ար-

նա մտավ Աղվանք, բնակիչներին սրի քաշեց ու գերեվարեց և անհամար քրիստոնյաների կոտորեց։ Ոչ ոք ի վիճակի չէ պատմել քրիստոնյաների գլխին եկած դառն աղետի մասին, քանզի նրանք չարաչար սպանվեցին կատաղած ու չարաթույն թուրք ազգի ձեռքով։ Թուրքերի զորքերի բազմությունը ողողել էր համայն դաշտերը, փակելով փախուստի բոլոր ճանապարհները։ Ահա այստեղ է, որ իրականացան Փրկչի խոսքերը, թե «Այդ օրերին վա՛յ հղի և ստնտու կանանց»[222]։ Բազմաթիվ քահանաներ և վանականներ, հայրապետներ և փառավոր իշխաններ դառն մահվան արժանացան և գազանների ու թռչունների ճարակ դարձան։ Այսքան փորձանքից հետո սուլթանը դիմեց Աղվանից թագավոր Կյուրիկեին[223] և նրա դստեր կնության խնդրեց, որին և [Կյուրիկեն], երկյուղից դրդված, տվեց։ Սուլթանը Աղվանից թագավոր Կյուրիկեի՝ Դավիթ Անհողինի որդու հետ կայուն բարեկամություն և խաղաղություն հաստատեց և մեծ պատիվներով ու բազում նվերներով ուղարկեց իր քաղաքը՝ Լոռե։ Սուլթանը, իր հսկայական զորքով այնտեղից հեռանալով, մտավ վրաց երկիրը և գազազած սրի քաշեց ու գերեվարեց նրանց։ Առաջանալով՝ նա բանակեց Ջավալիս[224] կոչվող դավառում և, կատաղի մարտ տալով, պաշարեց Ախալ քաղաքը, որը և գրոհով գրավեց։ Նա անգթորեն սրի քաշեց ողջ քաղաքը՝ տղամարդկանց ու կանանց, բոլոր քահանաներին, վանականներին ու իշխաններին։ Ամբողջ քաղաքը արյամբ ողողվեց։ Անհամար տղաների ու աղջիկների գերի քշեցին Պարսկաստան, ավար վերցրին ոսկու և արծաթի, թանկագին քարերի և մարգարիտների անթիվ գանձեր։

Այդ տարին սուլթանը, պարսից չար վիշապը, մեծ ուժով շարժվեց և եկավ մտավ հայոց աշխարհը և իր կատաղությունը թափեց արևելից երկրի վրա, իր դառն մաղձը ճաշակել տվեց ողջ հայ ժողովրդին։ Մահվան բորբոքած բոցը տարածվեց բոլոր քրիստոնյաների մեջ, հայոց ողջ երկիրն արյամբ ողողվեց, սրի ու գերության մատնվեց։ Եվ վեր կենալով, սև ամպի նման նա իջավ թագավորանիստ Անի քաղաքի վրա, չար վիշապի նման չորս կողմից շրջապատելով այն։

Քաղաքացիների բազմությունը, տեսնելով նրանց, սարսուռի մեջ ընկավ, պատրաստվեց պարսիկներին ահեղ մարտ տալու։ Անհավատների զինվորները սաստիկ կատաղած գազանների պես հարձակման անցան, Անի քաղաքում բախեցին հոռոմ զինվորներին և բոլորին [ստիպեցին] քաղաքում կուտակվել։ Սարսափելի մարտ տալով, նրանք քա-

կանէին զքաղաքն ի մեծ վտանգս։ Եւ յայնժամ յահէ չար գաղանին դողայց սասանելով ամենայն ազգն հաւատացելոց, սկսան լալ հայր ի վերայ որդւոյն իւրոյ և որդի ի վերայ հօր իւրոյ. լայր մայր ի վերայ դստերն և դուստր ի վերայ մօր իւրոյ, լայր եղբայր՝ զեղբայր, լայր սիրելի՝ զսիրելիս իւր։ Եւ ահա ամենայն բազմութիւն քաղաքին Անւոյ կային ի մեծ վտանգի, և պատերազմն ևս առաւել սաստկանայր յոյժ, որ և սասանէր ամենայն քաղաքն։ Եւ յերկարել պատերազմացն՝ աղօթից և պահոց սկիզբն արար ամենայն քաղաքն և լալով և հառաչանօք միաբան ձայն առ Աստուած արձակէին, զի փրկեսցէ զնոսա ի չար գաղանէն։ Վասն զի էր Անի բազմամբոխ, քաղաքն լցեալ բիւր բիւրուց արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ հիացումն արկանէր տեսողացն, զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց իցէ. և յայնմ աւուր հազար և մէկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի։ Եւ էր քաղաքն շուրջանակի քարակտուր, և էր գետն Ախուրեան շրջապատ, բայց միայն ի մի կողմն տեղի ինչ կայր դոյր՝ որպէս թէ նետընկէց մի, զոր բարձով փլուցին այլազգիքն. և բազում աւուրս պատերազմեալ ոչ կարացին մտանել ի քաղաքն, յայնժամ թուլացան ի պատերազմէն։ Իսկ անօրէն իշխանքն Հոռոմոց՝ զորս կացուցեալ էր Թագաւորն պահապանս տանն Հայոց, Բագրատ Հայրն Սմբատայ և Գրիգոր Բակուրանին որդին՝ Վրացի ազգաւ, սկսան սոքօք ամրանալ ի վերին բերդն և ի ներքին։ Եւ յայնմ աւուր սուլտանն և ամենայն զօրքն Պարսից բանակաւն խլեցան և կամեցան գնալ ի Պարսիկս. և յորժամ տեսին քաղաքացիքն զաստուածուրաց պահապանացն ամրանալն, բեկան և այր իւրաքանչիւր ի փախուստ լինէր առանց պատճառի, և ամենայն քաղաքն առհասարակ ի փողի դարձաւ. և մեծամեծքն քաղաքին երթեալ լալով և անկանէին ի վերայ գերեզմանացն առաջին թագաւորացն Հայոց և անդ կոծ առեալ սաստկապէս լալով և ասէին՝ թէ «Արիք տեսէք զտուն հայրենեաց ձերոց»։ Եւ իբրև զայս տեսին զօրք այլազգեացն՝ հասեալ պատմեցին սուլտանին, և նա ոչ հաւատայր։ Իսկ զօրք այլազգեացն յորժամ տեսին զպարիսպն անպահապանս, առհասարակ ի քաղաքն մտին, առին տղայ մի ի մօրէն իւրմէ, հասուցին սուլտանին և ասեն. «Այս քեզ նշան ի քաղաքէն՝ զի ահա առաք զքաղաքն Անի»։ Եւ լուեալ զայս սուլտանն և հիացաւ, յոյժ և այսպէս ասաց, եթէ «Աստուածն նոցա մատնեաց զնոսա այսօր զանառ քաղաքն Անի ի ձեռս իմ». և դարձաւ բազմութեամբ զօրօք և մտաւ ի քաղաքն Անի և առհասարակ ամենայն զօրքն անօրինաց ունէին դանակ քաջասուր, զերկուսն ունելով յերկոսեան ձեռն և զմէկն ունելով յատամունն. և այս-

զաքը մեծ վտանգի ենթարկեցին։ Ջար գազանի վախից ողջ հավատացյալ ժողովուրդը ահ ու դողի մեջ ընկավ. հայրը որդուն էր ողբում, որդին՝ հորը, մայրը՝ դստեր, իսկ դուստրը՝ իր մորը։ Ողբում էր եղբայրը եղբորը, սիրելին՝ իր սիրելիներին։ Անի քաղաքի մեծաթիվ բնակչությունը ահավոր վտանգի մեջ էր։ Մարտը գնալով թեժացավ, և բովանդակ քաղաքը սասանվում էր։ Երբ պատերազմը երկարեց, քաղաքի ողջ բնակչությունն սկսեց աղոթել ու պաս պահել, լալ ու հառաչել. բոլորը միասին, դիմելով աստծուն, աղաչում էին փրկել իրենց չար գազանի ձեռքից։ Անին մարդաշատ քաղաք էր, լի բյուրավոր աղամարդկանցով ու կանանցով, ծերերով ու երեխաներով, մի բան, որ տեսնողներին զարմանք էր պատճառում և [թշնամու] զինվորների մեծ մասին կարծել տալիս, թե հայոց աշխարհի մեծ մասն է դա։ Այդ օրերին Անիում հազար ու մեկ եկեղեցի պատարագ էին մատուցում։ Քաղաքը ամբողջովին գտնվում էր քարաժայռի վրա՝ շրջապատված Ախուրյան գետով և միայն մեկ կողմից մեկ նետընկեցի չափ հարթավայր էր, որտեղի [պարիսպը] այլազգիները բաբանի օգնությամբ տապալեցին։ Բաղում օրեր մարտ մղելով, նրանք չկարողացան քաղաք մտնել և կռվի թափը թուլացրին։ Բայց Հոռոմների անօրեն իշխանները՝ Սմբատի հայր Բագարատը[225] և Բակուրանի որդի Գրիգորը, ազգությամբ վրացի[226], որոնց կայսրը նշանակել էր հայոց երկրի պահապաններ, ամրացան վերին և ներքին բերդերում։ Այդ օրը սուլթանը և պարսից բոլոր զինվորները, վերացնելով ճամբարը, որոշեցին գնալ Պարսկաստան։ Երբ քաղաքացիները տեսան, որ աստվածուրաց պահապանները ապաստանել են [միջնաբերդում], հուսաբեկ եղան և ամեն մեկը, առանց որևէ պատճառի, փախուստի դիմեց։ Ամբողջ բնակչությունը փոշու նման ցրվեց։ Քաղաքի մեծամեծները ողբալով գնացին ծունկ չոքեցին հայոց հին թագավորների գերեզմանների վրա և, աղիողորմ լաց ու կոծ բարձրացնելով, ասացին. «Եկե՛ք, տեսե՛ք ձեր հայրենիքի [վիճակը]»։ Այլազգիների զինվորները, տեսնելով դա, եկան և այդ մասին պատմեցին սուլթանին, բայց նա չհավատաց։ Այլազգիների զինվորները, տեսնելով անպաշտպան մնացած պարիսպը, բոլորը միասին մտան քաղաք, մի երեխայի հափշտակեցին իր մոր ձեռքից և, հասցնելով սուլթանին, ասացին. «Սա քեզ վկա քաղաքից, [ապացույց], որ մենք գրավեցինք Անի քաղաքը»։ Սուլթանը, լսելով դա, ապշեց և ասաց. «Նրանց աստվածն այսօր իմ ձեռքը մատնեց իրենց անառիկ Անի քաղաքը»։ Նա բազմաթիվ զինվորներով ետ դարձավ, մտավ Անի քաղաք։ Անհավատների բոլոր զինվորները ձեռքերի մեջ բռնած ունեին մեկական շատ հատու դաշույն, իսկ մեկն էլ՝ ատամների մեջ։ Այսպիսով, ահա, նրանք

պիսի օրինակաւ սկսան զամենայն քաղաքն առհասարակ կոտորել անողորմաբար և զայնքան բազմութիւն քաղաքին նման դալար խոտոյ ի հունձս ածին և կամ՝ որպէս զբարակոյտս ի միմեանց վերայ կոյտ արարին. և առ վայր մի ծովացաւ ամենայն քաղաքն արեամբ. և ամենայն մեծամեծ իշխանք տանն Հայոց և դասք ազատացն երկաթի կապանօք կային առաջի սուլտանին. և կանայք գեղեցիկք և ահարկուք՝ ի փառաւոր տանէն, վարեցան ի Պարսիկք ի գերութիւն. և անհամարք և անթիւք մանկունս լուսատեսիլս և աղջկունս վայելուչս տարան զհետ մարցն. և բազում սրբասնունդ քահանայք այրեցան հրով, նա և զոմանս յոտից մինչև ցգլուխսն քերթեալ չարաչար խոցուածով, որ և տեսողացն սոսկալի էր: Եւ այլ ոմն ի չարագործ ազգէն՝ ելեալ ի վերայ բարձրութեան եկեղեցւոյն սուրբ կաթուղիկէին և գծանրագին խաչն՝ որ կայր ի գումբէթին՝ ընկէց յերկիր և մտեալ ի դրանն որ կայր ի գումպէթն եկեղեցւոյն, և զալօր կանթեղն ընկէց ի մէջ եկեղեցւոյն և մանրեաց, զոր Սմբատ տիեզերակալն էր բերել տուեալ ի Հնդկաց ընդ բիւր մի գանձուց. երկոտասան լիտր էր կշիռ նորա և նոյն չափովն՝ երկոտասան լիտր տանէր. և յորժամ ընկէց զխաչն ի գմբեթէն, նոյնժամայն եղև սաստիկ որոտմունք և անձրև բազում, և զամենայն զգետն կոտորածոյն ելից ի յԱխուրան գետն և լուաց յարենէ զամենայն քաղաքն: Իսկ յորժամ մանրեցաւ պլօրի կանթեղն, որ այլ չէր լեալ ի վերայ արարածոց, լուեալ սուլտանն յոյժ վիրաւորեցաւ. և զխաչն զարծաթին՝ զոր ընկեցին, որ էր մարդաչափ մի, տարան եդին զնա ի կոխ դրան՝ ի գուռն մսկթին Նախչուանայ քաղաքին, որ կայ մինչև ցայսօր:

Յայնմ ժամանակին էր Գագիկ ի Կարս որդին Աբասայ շահնշահին և յղեաց առ նա դեսպան սուլտանն, զի գայցէ նմա յերկրպագութիւն: Եւ էր Գագիկ այր հանճարեղ և իմաստասէր և խորհեցաւ հնարս զերծանիլ խաղաղութեամբ ի սուլտանէն. յայնժամ զգեցաւ սեւ զգեստ սգաւորի և նստաւ ի վերայ սեաւ բարձի. և յորժամ տեսաւ զնա դեսպանն սուլտանին, հարցուկ լինէր և կամեցաւ զպատճառն ուսանիլ, եթէ Վասն է՞ր ես սևօք, զի ահա այր դու թագաւոր ես: Եւ նա ասէր՝ թէ «Յորժամ մեռաւ իմ բարեկամն Տուղրիլ սուլտանն՝ եղբայր Ապասլանայ ես յայնմ աւուր զգեցայ զայս սեւ զգեստս»: Եւ հիացեալ այրն այն և երթեալ պատմեաց սուլտանին, և նա զարմանայր յոյժ և յարուցեալ ամենայն բանակովն եկն առ Գագիկ ի Կարս և արար ընդ նմա սէր և ուրախութիւն մեծ և զգեցոյց նմա զգեստ թագաւորական. և արար Գագիկ ճաշ սուլտանին: Եւ զայս այսպէս լսեցաք, եթէ ի մէկ գառինն վերայ զոր խորովեաց՝ ծախք եհան հազար դահեկան և հարիւր հազար դահեկան սեղան տուեալ սուլտանին և ամենայն զօրացն նորա. և այսու զերծաւ

ւկսեցին անգթորեն կոտորել քաղաքի ողջ բնակչությունը: Նրանք դալար խոտի նման հնձեցին քաղաքացիների այդչափ բազմությունը և նրանց դիակները քարակույտերի նման դիզեցին: Ամբողջ քաղաքն արյան մեջ էր ծփում: Հայոց երկրի բոլոր մեծամեծ իշխանները, ազատաց դասը շղթայակապ կանգնեցին սուլթանի առջև: Փառավոր ընտանիքների գեղադեմ և հարդալի կանայք Պարսկաստան քշվեցին գերության: Իրենց մայրերի ետևից քշեցին նաև անթիվ-անհամար լուսադեմ տղաներ ու չքնաղ աղջիկներ: Բազում սրբակրոն քահանաներ հրո ճարակ դարձան, ոմանք ոտքից գլուխ չարաչար քերթվեցին, որոնց տեսքը սարսափ էր ազդում: Ջարագործ ազգից մի մարդ Սուրբ Կաթողիկե եկեղեցու գմբեթը բարձրանալով, նրա վրայի թանկագին խաչը դեռևս տապալեց, ապա մտնելով եկեղեցու գմբեթի վրա գտնվող դռնից ներս, Հնդկաստանից մեկ բյուր գանձով Սմբատ Տիեզերակալի[227] բերել տված կլոր կանթեղը գցեց եկեղեցու մեջ և ջարդուփշուր արեց: Այն տասներկու լիտր[228] էր կշռում և տարողությունն էլ նմանապես տասներկու լիտր էր: Խաչը գմբեթից ցած գցելուն պես սաստիկ որոտում եղավ, ուժեղ անձրև տեղաց, որը բոլոր գիակները Ախուրյան գետը լցրեց և ամբողջ քաղաքը արյունից մաքրեց: Աշխարհում նմանը չգտնվող բյուրեղապակյա կանթեղի ջարդուփշուր լինելու լուրը սուլթանին շատ տխրեցրեց, իսկ մեկ մարդաշափ արծաթե խաչը, որ ցած գցեցին, տարան դրին Նախճավան քաղաքի մզկիթի շեմին, որ [անընդհատ] տրորեն այն: Մինչև օրս էլ այդ խաչն այնտեղ է[229]:

Այն ժամանակ շահնշահ Աբասի որդի Գագիկը Կարսում էր [թագավորում]: Սուլթանը նրա մոտ դեսպան ուղարկեց և առաջարկեց գալ և հնազանդություն հայտնել իրեն: Գագիկը, որ խոհեմ և իմաստուն մարդ էր, սուլթանից խաղաղ ճանապարհով պրծնելու միջոցներ որոնեց: Նա հագավ սգավորի հանդերձներ և նստեց սև բարձի վրա: Երբ սուլթանի դեսպանը նրան այդպես սգավոր տեսավ, ցանկացավ իմանալ պատճառը և հարցրեց. «Ինչո՞ւ ես սև հագել, չէ՞ որ դու թագավոր մարդ ես»: [Գագիկը] պատասխանեց, թե՝ «Երբ մեռավ իմ բարեկամ Տուղրիլ սուլթանը՝ Աբասլանի եղբայրը, ահա այն օրվանից եմ ես այս սև հանդերձները հագել»: Մարդն ապշեց և գնաց ու սուլթանին պատմեց, որը նույնպես շատ զարմացավ: Ամբողջ բանակով վեր կենալով, նա եկավ Կարս, Գագիկի մոտ, նրա հետ մեծ բարեկամություն հաստատեց և ուրախություն արեց. նա Գագիկին թագավորական հանդերձներ հագցրեց: Գագիկը սուլթանին ճաշկերույթ տվեց: Մենք լսեցինք, թե յուրաքանչյուր խորոված գառը նրա վրա հազար դահեկան նստեց: Նա սուլթանին և նրա ողջ զորքին հարյուր հազար գահեկանի սեղան տվեց, որով

խաղաղութեամբ։ Եւ եղև զկնի աւուրցս այսոցիկ թողեալ Գագիկ զկարս և զնաց ի Հոռոմս. և թագաւորն Տուկիծ տայր նմա զՇամնդաւ. և անդ եկեալ Գագիկ ազատօք իւրովք և թողեալ զտունն հայրենեաց իւրոց։ Արդ՝ այսպիսի նմանութեամբս գերեցաւ տունն Հայոց, և արեամբ լըցաւ առհասարակ ամենայն աշխարհն, որ իբրև զծով ծփայր ծայրէ ի ծայր, և քակտեալ ապականեցաւ հայրենատունն մեր խլեալ, խախտեցաւ հիմն բնակութեան Հայաստան աղգացս, ոչ մնաց տեղի յուսոյ ապաւինի, եղաք մատնեալք ի ծառայութիւն աղգաց անօրինաց և օտար գազանաց. ահա եկեալ կատարեցաւ ի վերայ մեր բան Դաւթի մարգարէին՝ որ ասէ. «Վաճառեցեր զժողովուրդս քո առանց դնոյ, և ոչ գոյ թիւ ազազակի մերոյ. արարեր զմեզ յառակս հեթանոսաց, ծաղր և այպն կատականաց այնոցիկ՝ որ շուրջ էին զմեօք, և վասն այսորիկ աղաղակեմք և ասեմք. դարձ առ մեզ Աստուած Փրկիչ մեր և դարձո զսրտմտութիւնս քո ի մէնջ»։ Այս էր կատարած տանս Հայոց։

Իսկ ի հասանել թուականութեանս Հայոց յամս ՇԺԴ ի յաւուրս Տուկծին՝ Հոռոմոց արքային՝ շարժեցաւ պատերազմ մեծ ի յաշխարհն յարևմտից ի յազգէն Ուզաց։ Եւ զօրաժողով արար թագաւորն Տուկիծ զամենայն ազգն Յունաց և զօրս Հայոց աշխարհին և կացոյց զօրագլուխ զմեծ իշխանն Հոռոմոց զՎասիլն զորդին Ասլուբապայ, և խաղացեալ բազում զօրօք և զնաց իջաւ ի վերայ մեծ գետոյ որ Տօնաւիս կոչին։ Եւ եղև սաստիկ պատերազմ երկոցունց կողմանցն խառնելով ընդ միմեանս առ ափն գետոյն. և եղև կոտորած բազում յերկուց կողմանցն. և անդ էր տեսանել զմեծ բարկութիւն կատարածին, որ զմեծ ժամ աւուրն զմիմեանս կոփէին, և որպէս զհօտս ոչխարաց զմիմեանս բախէին յերկոցունց կողմանցն. և ի սաստկանալ պատերազմին եղեն պարտեալ զօրք Հոռոմոց և եղեն փախստական, և զօրք Ուզացն սրով յարձակեցան զհետ մեծաւ կոտորածով և կալան զՎասիլ զօրապետն Հոռոմոց և տարան զնա ի գերութիւն յաշխարհն իւրեանց. և առին առհասարակ զամենայն բանակն Հոռոմոց, զբազմութիւն ոսկւոյ և արծաթոյ և այլ հանդերձ բազում աւարաւ, և զամենայն մեծամեծ իշխանսն Յունաց տարան ի գերութիւն։ Եւ զբազում աւուրս կացեալ Վասիլն գերի յաշխարհն Ուզաց, և գանձիւ ոչ կարացին գնել զնա, վասն զի անհամար ուղէին զգանձն։ Յետոյ մի ոմն ի զօրաց այլազգեացն խորհուրդ արար ընդ Վասիլն զի գողասցէ զնա, և նա խոստացաւ նմա բազում ինչս և ի թագաւորէն տալ նմա իշխանութիւնս. և յետ սակաւ աւուրց այլօք ընկերօք գողացաւ զՎասիլն և վաղվաղակի հասուցանէր զնա առ թագաւորն Տուկիծ. և եղև ուրախութիւն մեծ ամենայն տանն Յունաց, և բերողացն բազում պարգևս տուեալ թագաւորն։

և խաղաղությամբ պրծավ։ Դրանից օրեր հետո Գագիկը, թողնելով Կարսը, գնաց Հոռոմոց երկիրը. Տուկիծ կայսրը նրան տվեց Ծամնդավը։ Գագիկն իր ազատներով, լքելով իր հայրենի երկիրը, այստեղ եկավ[230]։ Ահա այս ձևով ստրկացվեց հայոց ամբողջ աշխարհը և ծովի նման ծփում էր արյան մեջ։ Քանդվեց, ավերվեց մեզանից խլված մեր հայրենիքը, խախտվեց հայ ժողովրդի տան հիմքը, ոչ մի տեղից հույս, ապավեն չմնաց, և մենք ընկանք անհավատ ժողովուրդների և օտար դազանների ծառայության լծի տակ։ Ահա մեզ վրա իրականացավ Դավիթ մարգարեի խոսքը, թե՝ «Դու քո ժողովրդին վաճառեցիր ձրի, և թիվ չկա մեր աղաղակներին։ Դու մեզ հեթանոսների համար առակ դարձրիր, մեզ շրջապատողների համար՝ ծաղր ու ծանակի առարկա։ Այդ պատճառով էլ մենք աղաղակում ենք ու ասում. դարձի՛ր առ մեզ, մեր Փրկիչ-աստված, և մի՛ զայրացիր այլևս մեր դեմ»[231]։ Հայոց երկրի վերջն էր դա։

Հայոց 514 թվականի [5 մարտ 1065—4 մարտ 1066 թ.] սկզբին, Հոռոմոց արքա Տուկծի թագավորության օրոք, արևմտյան երկրում ուղերի ժողովուրդը մեծ պատերազմ սկսեց։ Կայսր Տուկիծը ամբողջ հույն ժողովրդի և հայոց երկրի զորքերի զորահավաք արեց, նրանց զորահրամանատար նշանակեց Հոռոմոց մեծ իշխան Վասիլին՝ Ապուքապի որդուն, [որը], բազմաթիվ զորքերի գլուխն անցած, գնաց իջավ Տոնավիս կոչվող մեծ գետի ափը։ Տեղի ունեցավ կատաղի պատերազմ, և գետի ափին ընդհարվելով միմյանց, երկու կողմից էլ շատերն ընկան։ Պետք էր տեսնել սարսափելի օրհասը. օրվա մեծ մասը իրար էին հարվածում և երկու կողմից էլ մեկը մյուսին կոտորում էին ինչպես ոչխարների հոտ։ Մարտը թեժացավ, և Հոռոմոց զորքերը պարտություն կրելով դիմեցին փախուստի։ Ուզերի զորքերը սրերով հալածեցին նրանց և մեծ ջարդ տվեցին, գերի վերցրեցին Հոռոմոց զորահրամանատար Վասիլին և տարան իրենց երկիրը։ [Ուզերը] գրավեցին Հոռոմոց ողջ Ճամբարը, հափշտակեցին բազում ոսկի և արծաթ և մեծաքանակ այլ ավար, իսկ հունաց մեծամեծ իշխաններին գերի տարան։ Վասիլն ուզերի երկրում երկար ժամանակ մնաց գերության մեջ. նրան չկարողացան ազատել փրկագնով, քանզի շատ մեծ գումար էին պահանջում։ Բայց մի այլազգի զինվոր Վասիլի հետ պայմանավորվեց կազմակերպել նրա փախուստը, վերջինս էլ նրան խոստացավ մեծ հարստություն, իսկ կայսրից՝ պաշտոններ։ Մի քանի օր անց ուրիշ ընկերների հետ նա փախցրեց Վասիլին և շուտափույթ հասցրեց Տուկիծ կայսեր։ Ամբողջ հունաց երկրում մեծ ուրախություն եղավ։ Կայսրը Վասիլին ազատողներին բազում նվերներ տվեց։ Վասիլը եկավ Ուռհա, իր հայր Ապու-

եւ եկեալ Վասիլն առ Ապուքապ հայրն իւր ի յՈւռհա, և հայրն և ամենայն ազգ իւր լցան ցնծութեամբ։

Յայսմ ամի մեռաւ ամենագովելին Տէր Խաչիկ կաթուղիկոսն Հայոց. սա կեցեալ յաթոռ հայրապետութեան զամս վեց յօտար աշխարհի, պանդխտեալ յիշխանութիւնն Յունաց և բարւոք քաղաքավարութեամբ լցեալ զժամանակս կենաց իւրոց. և բազում վիշտս կրեաց ի յանիրաւ և ի մոլի ազգէն Հոռոմոց ի մէջ Կոստանդնուպօլսի, որ և ի պէսպէս փորձութիւնս ածէին զնա վասն հաւատոյ. զի այսպէս լսելով մեր՝ եթէ հրով փորձեցին զնա, և նա անվնաս անցանէր ընդ մէջ հրոյն, զոր նոցա զայրացեալ՝ և առաջոք ասէին զայն։ Եւ այսպիսի օրինակաւ սուգ ունէր Տէր Խաչիկ ի սրտի իւրում. և յիշեալ զաւերումն հայրապետական աթոռոյն տանն Հայոց, նաև զխափանել աթոռոյ թագաւորութեանն յազգէն Բագրատունեաց և զալ ծառայել չարամիտ ազգաց Յունաց, և աղքատութեամբ անիրապէս եւ յաթոռոյ սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչին. վասն զի յորժամ էր Տէր Պետրոս յաթոռ հայրապետութեանն և ի Հայաստան աշխարհին, ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և եպիսկոպոսս հինգ հարիւր փառաւոր և գաւառապետս ի վերայ եօթն հարիւր թիմի հանապազ. երկոտասան եպիսկոպոս և չորս վարդապետ ի տանն հայրապետին և վաթսուն երէց ի կրօնաւորաց՝ և յաշխարհականաց՝ հինգ հարիւր. և չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց։ Նաև զարդարանք եկեղեցեացն և տանն հայրապետութեանն բազում և անհամար և հրաշալի մեծութեամբ լցեալ, որ յառաջին թագաւորացն տուեալ հաստատութեամբ առաջին հայրապետացն. որ գայր հասանէր մինչ ի Տէր Պետրոս և առ նովաւ խափանեալ լուծաւ։ Արդ՝ զայն ամենայն զմտաւ ածէր Տէր Խաչիկ և տեսանէր ի տառապանս զհայրապետական աթոռն Հայոց և կայր յոյժ վիրաւորեալ։ Իսկ յորժամ հրաժարեաց ի յաշխարհէն սուրբ հայրապետն Տէր Խաչիկ, որք մնացեալ էին ի թագաւորացն և յիշխանացն Հայոց, յայնժամ խնդիր արարին գտանել զմի ոք արժանաւոր՝ զի նոցա յաթոռ հայրապետութեան սուրբ Լուսաւորչին Գրիգորի. և գտին մանուկ մի յազգէ Պալհաւունեաց Վահրամ անուն, զորդի Գրիգորին Մագիստրոսի մեծի իշխանին Հայոց. սա լցեալ ամենայն առաքինութեամբ, որ և ըստ օրինի աշխարհիս կին արարեալ էր և սրբութեամբ և անարատութեամբ պահեալ էր զինքն և յայսմ ժամանակիս հրաժարեալ էր ի կնոջէն իւրմէ և մտեալ ի կարգ կրօնաւորութեան, ուսման և աստուածային շնորհացն պարապեալ և հասեալ եղև ի վերայ հին և նոր Կտակարանացն Աստուծոյ յօժարամիտ և ընծաւ

քապի մոտ։ Հայրը և Վասիլի ողջ գերդաստանը ուրախությամբ լցվեցին։

Այս թվականին վախճանվեց ամենագովելի տեր Խաչիկը, հայոց կաթողիկոսը, հայրապետական աթոռին նստելով վեց տարի՝ օտար, հունաց երկրում։ Նրա կյանքի տարիները տխրությամբ էին հագեցված։ Կոստանդնուպոլսում նա բաղում տառապանքներ կրեց հոռոմոց անիրավ և մոլեգին ազգից, պես-պես փորձությունների ենթարկվեց դավանության հարցի կապակցությամբ։ Մենք լսել ենք, որ նրան հրով փորձեցին, բայց նա անվնաս դուրս եկավ կրակի միջից։ Դա վայրացրել էր նրանց, և այդ մասին նրանք հառաչանքով էին պատմում։ Տեր Խաչիկի օրտում սուգ կար, նա հիշում էր հայոց հայրապետական աթոռի վերացումը, Բագրատունյաց թագավորական գահի կործանումը, հույների չարամիտ ազգի ծառայության լծի ընդունումն ու հայոց լուսավորիչ սուրբ Գրիգորի աթոռի աղքատանալը։ Երբ հայրապետական աթոռին նստած էր տեր Պետրոսը, իսկ աթոռն էլ գտնվում էր Հայաստանում, նա ուներ հայոց թագավորներից որպես հայրենիք նվեր ստացած կալվածներ՝ հինգ հարյուր անվանի, ընդարձակ, շահութաբեր և շատ ընտիր գյուղ, իր [եպիսկոպոսության] տակ կային հինգ հարյուր փառավոր եպիսկոպոս և յոթ հարյուր թեմերի վրա մշտապես հովվող թեմակալներ։ Հայրապետի վեհարանում մշտապես լինում էին տասներկու եպիսկոպոս, չորս վարդապետ և վաթսուն վաներից, ինչպես և հինգ հարյուր աշխարհական։ Հայրապետական աթոռը ոչնչով չէր զիջում հայոց թագավորական գահին։ Եկեղեցիներն ու հայրապետանոցը լի էին բազում և անհամար, զարմանալի մեծության զարդերով, որոնք նախկին թագավորներն էին հաստատապես նվիրել անցյալի հայրապետներին։ Այդպես էր մինչև տեր Պետրոսի ժամանակները և նրա օրոք էր, որ խափանվեց ու վերացավ։ Ահա այդ բոլորի մասին էր մտածում տեր Խաչիկը, թշվառացած տեսնելով հայոց հայրապետական աթոռը, մեծ ցավ ապրում։ Երբ աշխարհից հեռացավ սուրբ հայրապետ տեր Խաչիկը, ովքեր որ մնացել էին հայոց թագավորներից և իշխաններից, որոշեցին մի արժանավոր մարդ գտնել, որ նստի սուրբ Գրիգոր Լուսավորչի հայրապետական աթոռին։ Նրանք Պահլավունիների տոհմից մի պատանի գտան՝ անունը Վահրամ, հայոց մեծ իշխան Գրիգոր Մագիստրոսի որդին, ամեն տեսակի առաքինություններով օժտված մեկը։ Նա կյանքի օրենքի համաձայն ամուսնացած էր, բայց իրեն սուրբ և անարատ էր պահել. տվյալ պահին նա հրաժարվել էր իր կնոջից և մտել վանականների կարգը, իրեն հանձնելով ուման և աստվածային պատվիրանները սերտելուն։ Նա հոժար կամքով և մեծ փափագով համաձայնեց աստծո Հիշ

փափագանօք։

Յայսմ թուականութեանս նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան Հայաստան ազգին ամենագովելին Տէր Գրիգորիս, որ Համանուն Վահրամ, որդի Գրիգորի Մագիստրոսի, որդի Վասակայ Բջնեցիք և ազգաւ Պալհաւունիք։ Տէր Գրիգորիս նստաւ յաթոռ հայրապետութեանն հրամանաւ Գագկայ շահնշահի՝ որդւոյ Աբասայ Կարնեցոյ վասն զի զկնի մահուանն Տեառն Խաչիկայ զսա տեսին արժանաւոր սուրբ աթոռոյն, զի էր յոյժ առաւելեալ հռչակաւոր անուամբ, լցեալ սրբութեամբ և արդարութեամբ, և սիրեալ ամենապայծառ առաքինութեամբն և հասանէր ի վերայ հռետորական իմաստութեանցն։ տեղեկացեալ ամենայն հին և նոր կտակարանացն Աստուծոյ, և յամենայն դիմաց կարող էր օգնել հօտին Քրիստոսի։ Զսա յայտնեաց Հոգին Սուրբ նստել յաթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի նախնւոյն իւրոյ, վասն որոյ զսա տեսանկին զարդարեալ հնութեամբ և ամենայն արդարութեամբ՝ երկրորդս Գրիգոր անուանի երեւեալ։ Սորա թողեալ զսէր աշխարհիս և բուռն հարեալ զյաւիտենական կենացն. սա լուսաւորեաց զՀայաստան աշխարհս բազում և ազգի ազգի մեկնութեամբ, որ և յամենայն ազգաց թարգմանութիւնս արարեալ և լցեալ առհասարակ զեկեղեցի Աստուծոյ ամեն աստուածային կտակարանօք. և սա պայծառացոյց զկարդ կրօնաւորութեանն յազգս Հայոց, և սուաւ նորոգեցաւ աթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի ի Հայաստան աշխարհս, վասն զի փայլեաց սրբութեամբ և ամենայն պարկեշտութեամբ և պարապեալ կայր պահօք և աղօթիւք։

Յայսմ ամի դարձեալ երկրորդ ժողով արար անօրէն իշխանն Պարսից անօրէն Սլար-Խորասան և գայր ի վերայ բերդին Թլմխոյ և մեծաւ պատերազմաւ ի նեղ արկեալ զբազում աւուրս՝ և ոչ կարաց առնուլ։ Եւ յարուցեալ բազում զօրօք գայր յերկիրն Ուտհայոյ և հասանէր ի բերդն՝ որ կոչէր Սևերակս և կայր անդ Փանդ զօրք կողմնապահ երկնրիւր ձիաւոր, գնաց ի պատերազմ ընդդէմ Թուրքին և զառաջին երեսն դարձուցին կոտորելով՝ ի փախուստ։ և յորժամ բազմազան զօրք այլազգացն՝ արարին փախստական զՓանդն և ապանին ի նոցանէ արս հնգետասան։ Եւ յայնժամ անօրէն զօրքն յարձակեցան ի գաւառն Սևերակացն և ի Նահնայ. և էր ամենայն գաւառն բազմամբոխ լցեալ արանց և կանանց, և հօտք ոչխարացն ի բազմութենէն՝ որպէս զծով ծփայր առհասարակ ամենայն գաւառն. և սրով ի վերայ յարձակեցան գաղանաբար և անողոմ ի բերան սրոյ կոտորեցին և արեամբ լցին զերկիրն և զկանայս նոցա և զորդիսն վարեցին ի գերութիւն անհամար աւարաւ։ Եւ յետ սակաւ աւուրց հասանէր ի գաւառն Ուտհայոյ և բանակ հարկանէր ի վերայ հռչակաւոր բերդին Թոռիճայ և արար աւար զա-

և Նոր Կտակարաններին։

Այս թվականին հայոց ազգիս կաթողիկոսական աթոռին նստեց ամենագովելի տեր Գրիգորիսը[282], մյուս անունը՝ Վահրամ, Վասակ Բջնեցու որդի Գրիգոր Մագիստրոսի որդին, Պահլավունիների տոհմից։ Տեր Գրիգորիսը հայրապետական աթոռին նստեց Աբաս Կարսեցու որդի Գագիկ շահնշահի հրամանով, որովհետև տեր Խաչիկի մահից հետո գտան, որ Սուրբ Աթոռին նա է արժանի։ Նա շատ մեծ անուն էր հանել, անբարոյ և արդար մարդ էր, շատ առաքինի, հռետորական գիտության քաջագիտակ, աստծո Հին և Նոր Կտակարանների քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին։ Սուրբ Հոգին սրան մատնացույց արեց՝ նստելու իր նախահայր սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռին, դրա համար էլ նա, հեզությամբ և ամենայն արդարությամբ օժտված մարդը, երկրորդ Գրիգոր անունն ստացավ։ Հրաժարվելով աշխարհիկ կյանքից, նա [մտածեց] հավիտենական կյանքի մասին. լուսավորեց Հայաստանը բազում և տարբեր մեկնություններով, բոլոր լեզուներից թարգմանություններ կատարեց և աստծո եկեղեցին լցրեց աստվածային սուրբ գրքերով։ Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ։ Նա պահեցող էր և աղոթող։

Այդ տարին պարսից անհավատ իշխան Սլար-Խորասանը նորից ղորահավաք արեց և արշավեց Թլմուխ բերդի վրա։ Նա բազում օրեր կատաղի մարտերով նեղ դրության մեջ գցեց այն, բայց չկարողացավ գրավել։ [Այնտեղից] հեռանալով, նա բազմաթիվ ղորքերով մտավ Ուռհայի գավառը և հասավ Սևերակ կոչված բերդը։ Այնտեղ էր գտնվում երկու հարյուր հեծյալներից բաղկացած մի ֆրանկ կայազոր, որը պատերազմի ելավ թուրքերի դեմ և, նրանց առաջամարտիկներին կոտորելով, փախուստի մատնեց։ Բայց երբ այլազգիների ղորքերը ստվարացան, ֆրանկներին փախուստի մատնեցին և տասնհինգ հոգու սպանեցին, որից հետո անհավատների զինվորները հարձակվեցին Սևերակ գավառի և Նսեպինի[283] վրա։ Ողջ գավառը բազմամարդ էր՝ լի տղամարդկանցով եւ կանանցով և ոչխարների մեծաքանակ հոտի պես՝ ծովի նման ծփում էր։ [Թուրքերը], գազանաբար հարձակվելով բնակչության վրա, անգթությամբ սրի քաշեցին [տղամարդկանց], երկիրը արյամբ ողողեցին, իսկ նրանց կանանց ու երեխաներին, անհամար ավարով հանդերձ, գերի տարան։ Մի քանի օր անց [թուրքերը] հասան Ուռհա գավառը և բանակեցին հռչակավոր Թոռիճա բերդի առջև և ողջ գավառը ավարի առան։ Ջորքի կեսը հարձակվեց միջնաբերդի վրա, որ

մենայն գաւառն. և կէս զօրացն իջաւ ի վերայ չափաւոր բերդին՝ որ կոչէր Նշեննկ. և սաստիկ պատերազմաւ ի յառ ածին զբերդն: Եւ մի ոմն ի Հայոց քաջ զօրականացն յայնժամ ի յՈւռհայ հանդիպեցաւ՝ Պեխտ անուն, և էր տուկ Անտիոքայ քաղաքին. և սորա ձայն տուեալ զօրաց իւրոց՝ յարձակեալ գնայր ի վերայ Թուրքին. և քաղաքին տուկն՝ որ կոչէր Փիղոնիտ տայր զզօրս քաղաքին ի Պոօքսիմոսն իւր և պատուէր տայր ղկնի՝ վասն կորստեան Պեղտին, վասն զի մի արասցէ քաջութիւն և ելցէ անուն զօրութեան նորա: Իսկ Պեխտն հասանէր ի Նշեննկն ի մբթան ժամուն, և Թուրքն անհոգացեալ և առհասարակ կրակ էին վառեալ, սկսան ապուր զուգել. և չարախորհուրդ այրն Պոօքսիմոսն զերդ որ ունէր ի սրտին զննդութիւն վասն կորստեանն Պեխտին, ի հետաստանէ վիրաւորեալ պատերազմին հարկանէր և ազդ արարեալ Թուրքին՝ և ինքն յայլ կողմն գնաց զօրօքն: Եւ յայնժամ իշխանն Հայոց գիտացեալ զննդութիւն ազգին Հոռոմոց, ձայն տուեալ ազատաց իւրոց և յարձակեցաւ ի վերայ Թուրքին. և ի հասանելն արար բազում կոտորածս և զայլն արար փախստական և զբերդն եհան յայլ ամրութիւն. և ի բազմանալ անօրինացն ի վերայ՝ մտանէր անվնաս ի բերդն՝ որ մերձ կայր ի Ծուլման՝ և հարցաւ թէ՝ Ո՞ւր է Փռանգ զօրքն քաղաքին. և ասեն՝ եթէ ի տէր Կօղման գնաց Պոօքսիմոսն ամենայն զօրօքն: Եւ ասէ Պեխտն. «Ո՛վ աստուածուրաց Հոռոմք, և ա՞ստ արարիք զձեր նննդութիւնդ»: Դարձաւ ի յՈւռհայ, և յետ աւուրց գնաց ի քաղաքն Անտիոք. և զայս ամենայն գրեալ ծանուցանէր թագաւորին՝ Տուկծին: Եւ տարեալ թագաւորն զՊոօքսիմոսն և քերթեալ զմարմին նորա և զմորթին ելից խոտով և առաքեաց յՈւռհա և զՊեղոնետն ընկէց ի փառաց:

Յայսմ ամի դարձեալ գայր անօրէնն և արեանարբու գազանն Սլար-Խորոսան ի գաւառն Ուռհայոյ և իջանէր ի Ջալապն. և արար անդ սաստիկ կոտորածս ի բերան սրոյ զբազում տեղիս և անցոյց զամենայն բնակիչսն և բազում գերութեամբ իջաւ ի վերա բերդին՝ որ կոչի Տէպ՝ և սաստիկ պատերազմաւ առեալ զՏէպ և առհասարակ կոտորեաց զամենեսեան. և յարուցեալ գայր բնակէր ի տեղի՝ որ կոչի Քսօս: Իսկ զօրքն Հոռոմոց՝ որ էր ի քաղաքն Ուռհայ, հետևակ և ձիաւոր գնացին ի վերայ Թուրքին արք չորս հազար և հասանէին ի Թլակն՝ մերձ ի Քսօս. և տեսեալ Սլար-Խորոսան՝ ձայն տուեալ զօրաց իւրոց յարձակեցաւ ի պատերազմ. և յառաջ քան զպատերազմն փախեան Հոռոմոց զօրքն, և ի Հայոց հետևակացն երկու եղբայր կալան զկարմունջն և զամենայն Թուրքըն արգելական արարին առ վայր մի՝ մինչև ընկալան զմահ սաստիկ պատերազմաւ: Եւ գնայր Հոռոմոց զօրքն ի փախուստ, և Թուրքն սրով ի հետ. և յայնժամ Փռանգ մի դարձաւ ի վերայ Թուրքին. գոչեաց որպէս

Նշենեկ էր կոչվում, և, կատաղի մարտ տալով, գրավեց այն։ Հայոց քաջարի զինվորներից մեկը՝ Անտիոք քաղաքի դուկը, որի անունը Պեխտ[234] էր, դիպվածով Ուռհայում էր գտնվում։ Սա, իր զորքերին ձայն տալով, հարձակվեց թուրքերի վրա։ [Ուռհա] քաղաքի դուկը, որ Պիղոնիտ էր կոչվում, քաղաքի զորքերը տվեց իր պռոքսիմոսին[235], պատվիրելով ոչնչացնել Պեխտին, որպեսզի վերջինս սխրանքներ չգործի և քաջության համբավը չտարածվի։ Պեխտը գիշերվա պահին հասավ Նշենեկ։ Թուրքերը, ոչինչ չկասկածելով, կրակ էին վառել և ճաշ էին պատրաստում։ Նենգ պռոքսիմոսը, որի սրտում Պեխտին ոչնչացնելու չարադավությունը կար, հեռվից պատերազմական շեփորը հնչեցնելով՝ թուրքերին տեղյակ դարձրեց, իսկ ինքը զինվորներով այլ կողմ գնաց։ Հայոց իշխանը հասու եղավ հոռոմոց նենգությանը, ձայն տվեց իր ազատներին և հարձակվեց թուրքերի վրա։ Հասնելով նրանց, նա մի մասին գլխովին ջարդեց, իսկ մյուսին էլ փախուստի մատնեց, բերդն էլ ամբացրեց։ Երբ նրա վրա հարձակվեցին բազում անհավատներ, նա անվնաս մտավ Ծուլմանի մոտ գտնվող բերդը և հարցրեց՝ որտեղ է քաղաքի ֆրանկ[236] զորքը։ Նրան պատասխանեցին, թե պռոքսիմոսը ամբողջ զորքով գնաց տեր Կողմայի մոտ։ Պեխտն ասաց. «Ո՜վ աստվածուրաց հոռոմներ, այստե՞ղ էլ ցույց տվեցիք ձեր նենգությունը»։ Նա վերադարձավ Ուռհա, իսկ մի քանի օր անց գնաց Անտիոք քաղաքը։ Նա Տուկիծ կայսեր նամակ գրեց և ամեն ինչ հայտնեց։ Կայսրը պռոքսիմոսին [Կոստանդնուպոլիս] բերել տվեց, նրա մորթին տիկ հանեց, խոտով լցրեց այն և ուղարկեց Ուռհա, իսկ Պիղոնիտին էլ պատվազուրկ արեց։

Նույն տարին անհավատ և արյունարբու գազան Սլար-Խորասանը Նորից եկավ Ուռհայի գավառը և իջավ Ջալապ։ Նա այնտեղ բազմաթիվ բնակավայրերի բնակիչներին ամբողջությամբ սրի քաշեց, մեծ ջարդ տվեց և, բազմաթիվ գերիներ վերցնելով, հարձակվեց Տեպ կոչված բերդի վրա։ Նա կատաղի մարտ տալով գրավեց Տեպը և բոլորին իսպառ կոտորեց։ Հեռանալով այնտեղից, նա եկավ բանակեց Քսոս կոչվ վայրում։ Ուռհա քաղաքում գտնվող հոռոմոց չորսհազարանոց հետևակ և ձիավոր զորքը գնաց թուրքերի վրա և հասավ Քսոսի մոտ գտնվող Թլակը։ Սլար-Խորասանը, տեսնելով նրանց, ձայն տվեց իր զինվորներին և դիմեց մարտի։ Մարտը չսկսված, հոռոմոց զինվորները փախուստի դիմեցին։ Հայ հետևակներից երկու եղբայր բռնեցին կամուրջը և թուրքերի ողջ [զորքի] ճանապարհը փակեցին, մինչև որ ընկան կատաղի մարտում։ Հոռոմոց զորքը փախուստի դիմեց, իսկ թուրքերն էլ սկսեցին սրերով հալածել։ Այն ժամանակ մի ֆրանկ շուռ եկավ և հար-

զառիւծ և զբազումս խոցեալ սատակեաց և արգել զնոսա՝ մինչև փախըստականքն հեռացան. յայնժամ բազում խոց առեալ ձին, որ և վինքն ի տեղին կատարեցին քաջապէս մահուամբ. և մինչև ի իանդակ քաղաքին վարեցին ոսոտիկ կոտորածով. և լցաւ դաշտն արեամբ, և բազում իշխան պակասեաց։

Յայսմ ամի դարձեալ գայր Սլար-Խորոսանն ի գաւառն Ուտհայոյ, ի տեղին՝ որ կոչի Կուպին, և արար անդ ահաւոր կոտորածս և բնակեցաւ ի նմա զաւուրս բազումս և արար աւար և դերութիւն զամենայն գաւառն և զնաց յաշխարհն Պարսից անհամար աւարաւ և բազում գերութեամբ և անդ սատակեցաւ։

Յայսմ ամի Տուկիծ թագաւորն Հոռոմոց և պատրիարգն և ամենայն կղերիկոսքն և ամենայն գասք ներքինեացն լծակիցք լեալ չարաշունչ և պիղծ խորհրդոյ անօրէն թագաւորին և ամենայն մեծամեծ իշխանքն Հոռոմոց ձեռն տուեալ խաւարային խորհրդոցն. վասն զի կամէր թագաւորն չար միաբանելովք իւրովք բառնալ զՀայոց հաւատոյ գաւանութիւնն և խորհէին եղծանել զՀաւատս սուրբ Լուսաւորչին Գրիգորի. և կամեցեալ պիւր դիւաբուն և վխառնափնդոր և զթերակատար զհաւատսն հաստատել ի Հայք. և զհաւատսն, զոր ի վաղ ժամանակաց հետէ ամբացեալ էր ի Հայաստան աշխարհս, վասն զի հիմնարկեալ էր անդամանդ վիմօք՝ աշխատանօք և մահուամբ սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և բազմադիմի և ազգի ազգի չարչարանօք Լուսաւորչին սրբոյն Գրիգորի, որ կայ և մնայ անսասանելի մինչև յաւիտեան։ Եւ արդ՝ սա հրապուրեալ եղև ի դիւաց, կամեցաւ նմանել առն Բզնամոյ՝ որ ցանեաց զորոմն ի վերայ մաքուր ցորենոյ. որպէս և ասէ իսկ ի սուրբ Աւետարանին, այսպէս և սա կամեցաւ զլուսաւոր Հաւատս խաւարեցուցանել և զճշմարտութիւնն ընդ ստութեանն փակել, որպէս և սովոր են Յոյնք. և զայսքան բարձրացեալ աշտարակ հաւատոյս յօժարութեամբ կամեցաւ ի փուլ ածել, զորս ոչ կարաց կատարել զչար խորհուրդն իւր։ Եւ արդ ահա առաքեաց թագաւորն Տուկիծ ի Սեբաստիա քաղաքն և կոչեաց զորդիսն թագաւորաց Հայոց զԱտոմ և զԱպուսահլ գալ ի Կոստանդնուպոլիս։ Եւ նոքա ծանեան առ սակաւ մի զչար խորհուրդն և առեալ ընդ ինքեանս զՅակոբոս վարդապետն ըստ աւելի անուանն Քարափնեցի, այր գիտնական գրոց բանից, և գնացին ի Կոստանդնուպոլիս։ Եւ թագաւորն զառաջինն բարով ընկալաւ զորդիք թագաւորացն Հայոց և զկնի սակաւ աւուրց սկսաւ յայտնել զչար խորհուրդ մտաց իւրոց և ասէր, եթէ «Հրամանք է թագաւորութեանս մերում՝ զի դուք և ամենայն իշխանք Հայոց աշխարհին առնուք յանձինս ձեր զկնունք հաւատոյ ազգիս Հոռոմոց»։ Եւ յայնժամ նոքա ի մէջ Հոռոմոց

ձակվեց թուրքերի վրա. առյուծի նման մռնչալով, նա շատերին սրախողխող արեց, թշնամու ճամփան կտրեց, մինչև որ փախստականները հեռացան. նրա ձին բազում վերքեր ստացավ, ինքն էլ տեղում քաջի մահով ընկավ։ [Թուրքերը], մեծ ջարդ տալով, հալածեցին [հոռոմներին] մինչև քաղաքի խրամը։ Դաշտն արյամբ ողողվեց, բազմաթիվ իշխաններ սպանվեցին։

Այդ տարին Սևար-Խորասանը նորից եկավ Ուռհա գավառը, Կուպին կոչված վայրը, որտեղ սոսկալի կոտորած արեց։ Նա այնտեղ բանակեց բազում օրեր, ամբողջ գավառն ավարի առավ և գերեվարեց։ Անհամար ավարով և բազում գերիներով նա գնաց պարսից երկիրը և այնտեղ էլ սատկեց։

Այդ տարին հոռոմոց կայսր Տուկիծը, պատրիարքն[237] ու բոլոր կղերականները, ներքինիների ողջ դասը համաձայնության եկան, իսկ հոռոմոց մեծամեծ իշխանները միացան անօրեն կայսեր չարաշունչ, պիղծ և խավարչտին ծրագրին. կայսրն ուզում էր իր դավակիցներով վերացնել հայադավանությունը, ոչնչացնել սուրբ Գրիգոր Լուսավորչի դավանանքը։ Կայսրը ցանկացավ իր դիվային, խառնափնթոր և կիսկատար դավանանքը հայոց մեջ հաստատել, վերացնել Հայաստան երկրում արմատներ ձգած դարավոր հավատքը, հավատք, որ ադամանդյա վեմերի վրա էր հիմնադրված, սուրբ առաքյալներ Թադեոսի և Բարդուղիմեոսի հոգնատանջ ջանքերով ու նահատակությամբ, սուրբ Գրիգոր Լուսավորչի բազմատեսակ ու բազմապիսի չարչարանքներով, հավատք, որ կա և կմնա հավիտյանս անսասան։ Դևերը գայթակղեցրին կայսեր, և նա ցանկացավ նմանվել այն թշնամի մարդուն, որ, Սուրբ Ավետարանի ասույթի համաձայն, մաքուր ցորենի [արտում] որոմ ցանեց։ Նա ցանկացավ խավարեցնել լուսավոր հավատքը, ճշմարտությունը կեղծիքով փոխարինել, ինչպես որ սովոր են անել հույները։ Նա սիրահոժար կամեցավ քանգել այսպիսի բարձրության հասած հավատո աշտարակը, բայց նրան չհաջողվեց իրականացնել իր չար ծրագիրը։ Տուկիծ կայսրը Սեբաստիայից Կոստանդնուպոլիս կանչեց հայոց թագավորազուններ Ատոմին և Ապուսահլին[238]։ Նրանք որոշ չափով հասկացան դրա չար նպատակը և, իրենց հետ վերցնելով Հակոբոս վարդապետին (մականունը՝ Քարափնեցի), սուրբ գրոց քաջագիտակ մեկին, գնացին Կոստանդնուպոլիս։ Սկզբում կայսրը հայ արքայազուններին լավ ընդունեց, բայց մի քանի օր անց սկսեց մեջտեղ հանել իր չար նպատակները։ Նա ասում էր. «Մեր թագավորական հրամանն է, որ դուք և հայոց երկրի բոլոր իշխանները ընդունեք մեր հոռոմոց ազգի հավատո կնիքը»։ Ատոմն ու Ապուսահլը հոռոմոց շրջապատում ընկան դժվարին կացու-

անկան ի մեծ տարակուսանք և ասացին ցթագաւորն Ատոմն և Ապուսահլն. «Մեք առանց Գագկայ Աշոտոյ որդւոյն ոչ ինչ կարեմք առնել, զի նա այր քաջ է և թագաւոր և մեր փեսայ. առաքեա և կոչեա զնա այսր, զի եթէ մեք առանց նորա իրք առնեմք, հրով այրէ զմեզ ի գաւառն մեր»: Եւ լուեալ թագաւորն՝ ոչ կամեցաւ զգալն Գագկայ, վասն զի այր հզօր էր յիմաստասիրական ջոկան և անյաղթ ի պատասխանիսն. զի սա ի սուրբ Սոփի ի յամբիոնն նստէր ընդ ամենայն վարդապետսն Հոռոմոց: Եւ յայնժամ Ատոմ և Ապուսահլ գաղտ խնդիր հանին Գագկայ ի Կոլօնպեղատն: Իսկ թագաւորն Տուկիծ արար քննութիւն հաւատոյ իւր առաջի, և Յակոբոս վարդապետն՝ որ ասի Սանահնեցի, արար դիմադրութիւն բազում յամենայն հարցմունսն ընդդէմ Հոռոմոց. բայց սակաւ մի վասն երկբնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց դարձաւ: Եւ յամենայն պատճառսն հաւատոցն հաճեալ թագաւորն և հրամայեաց յայնըր վերայ գիր միաբանութեան գրել ընդ Հայք և ընդ Հոռոմք. և վարդապետն Հայոց Յակոբոս գրեաց գիր միաբանութեան Հայոց և Հոռոմոց: Եւ հաճեալ թագաւորին ի գիր հաւատոյն, հրամայեաց դնել զգիրսն ի սուրբն Սոփի, զի ահա յայսմ հետէ եղիցին ի միասին միաբանեալ Հայք և Հոռոմք: Եւ ի նոյն ժամայն իբրև զարծիւ թռուցեալ հասանէր Գագիկ ի Կոստանդնուպօլիս, և լուեալ թագաւորն՝ ուրախ եղև յոյժ. և իբրև մտաւ առ թագաւորն, հրամայեաց բերել զգիրս միաբանութեանն. և առեալ ընթերցաւ Գագիկ և իբրև ծանեաւ զգրեալսն Յակոբոսի, պատառեաց զնա առաջի թագաւորին յերկուս ծուէնս և ընկէց զնա յերկիր. և թագաւորն տեսեալ՝ ամաչեաց յոյժ: Եւ ասէր Գագիկ ցթագաւորն վասն վարդապետին. եթէ «Ահա սա այր կրօնաւոր է, և այսպիսի բազումք կան յաշխարհն Հայոց, որք ոչ ընդունին. և ոչ ոք հնազանդի գրոյ սորա, և մեք ընդ կատարեալ վարդապետսն Հայոց ոչ ունիմք զսա»: Եւ յայնժամ առաջի թագաւորին յանդիմանեաց զՅակոբոս և ասէր՝ թէ «Զի՞րդ համարձակեցար զայդ գործել, մտանել քեզ յաւերաբանութիւն, զի այր կրօնաւոր ես»: Եւ ասաց Գագիկ ցթագաւորն Տուկիծ. «Ահա ես այր թագաւոր եմ և որդի թագաւորացն Հայոց, և ամենայն Հայք հնազանդին հրամանաց իմոց, և ամենայն կտակարանացն Աստուծոյ հնոյ և նորոյս հմուտ եմ, և ամենայն Հայք վկայեն բանից իմոց, զի հաւասար վարդապետացն ընդունին պիս. և ահա ես խօսեցայց այսօր ընդ Հոռոմոց վասն հաւատոյ ազգիս Հայոց»: Եւ գրեաց Գագիկ գիր հաւատոյ ձեռամբ իւրով այսպէս և տայր զնա ի թագաւորն և ի պատրիարգն. և ունէր գիրն պատճէն այսպէս.

«Հարկ եղև մեզ և ի խնդիր՝ որ յաղագս հաւատոյ Հայաստանեայ-

թյան մեջ և ասացին կայսեր. «Մենք առանց Գագիկի[239]՝ Աշոտի որդու, ոչինչ անել չենք կարող. նա, մեր փեսան, քաջ է և թագավոր։ Մարդ ուղարկիր և նրան այստեղ հրավիրիր, որովհետև եթե մենք առանց նրա։ որևէ բան աննենք, նա հենց մեր գավառում մեզ ողջակեզ կանի»։ Կայսրը չցանկացավ Գագիկի գալը, որովհետև Գագիկը իմաստասիրական հարցերում հզոր էր և բանավեճերի մեջ՝ անպարտելի։ Նա հոռոմոց բոլոր վարդապետների հետ [բանավիճելու] էր նստում Սուրբ Սոֆիայի ատյանում։ Դրա վրա Ատոմն ու Ապուսահլը թաքուն մարդ ուղարկեցին Կալոն Պեղատ[240] և Գագիկին իմաց տվեցին։ Իսկ Տուկիծ կայսրը իր ներկայությամբ հավատաքննություն արեց։ Հակոբոս վարդապետը, որ Սանահնեցի էր կոչվում, հոռոմների բոլոր հարցերին բազմիցս ընդդիմացավ, բայց Քրիստոսի երկու բնությունների հարցում մի փոքր անցավ հոռոմների կողմը։ Կայսրը հավանություն տվեց դավանանքի բոլոր սկզբունքներին և հրամայեց այդ առթիվ հայերի և հույների [հավատո] միության գիր շարադրել. հայոց Հակոբոս վարդապետը գրեց հայոց և հոռոմոց միության գիրը։ Կայսրը հավատո գրին հավանություն տվեց և հրամայեց այն դնել Սուրբ Սոֆիայի տաճարը՝ ապացույց այն բանի, որ այսուհետև հայերն ու հոռոմները համերաշխ են։ Բայց հենց այդ պահին, արծվի նման սլանալով, Կոստանդնուպոլիս հասավ Գագիկը, որի [գալստյան] լուրը կայսեր շատ ուրախացրեց։ Երբ [Գագիկը] մտավ կայսեր մոտ, վերջինս հրամայեց բերել միության գիրը։ Երբ Գագիկը կարդաց Հակոբոսի գրածը, հենց կայսեր ներկայությամբ պատռեց այն երկու մասի և գետին շպրտեց։ Կայսրը, տեսնելով դա, շատ ամաչեց։ Գագիկն ասաց կայսեր այդ վարդապետի մասին. «Նա կրոնավոր մարդ է, հայոց երկրում շատ-շատ են կրոնավորները, նրանք չեն ընդունի, և ոչ ոք էլ չի ենթարկվի սրա գրածին, մենք նրան հայոց իսկական վարդապետների թվին չենք դասում»։ Նա կայսեր ներկայությամբ հանդիմանեց Հակոբոսին և ասաց. «Դու ինչպե՞ս հանդգնեցիր այդ բանն անել, դատարկաբանությամբ զբաղվել, չէ՞ որ կրոնավոր մարդ ես»։ Գագիկն ասաց Տուկիծ կայսեր. «Ես թագավոր եմ, հայոց թագավորների զարմ, բոլոր հայերն իմ հրամաններին են ենթարկվում։ Ես քաջագիտակ եմ աստծո կտակարաններին, թե Հին և թե Նոր, բոլոր հայերը կհաստատեն իմ ասածը, քանզի ինձ դասում են վարդապետների շարքին։ Ահա ես այսօր հոռոմների հետ խոսելու եմ հայոց ազգի հավատքի մասին»։ Եվ Գագիկը իր ձեռքով շարադրեց հետևյալ հավատո գիրը ու տվեց կայսեր և պատրիարքին։ Գրության պատճենն այս է.

«Տե՛ր արքա, քո խնդիրքի առթիվ մեզ հարկ եղավ անդրադառնալ

ցըս՝ որ եղև ի քէն խնդրելով, Տէր Արքայ. և այժմ զոր ասեմ՝ միտ դիր ուղիղ հաւատով և ի միտս առ և ծանիր զՀայոց ազգիս զճշմարիտ խոստովանութիւնն՝ որ է ի մի Աստուածութիւնն ի Հայր և ի յորդի և ի Հոգին Սուրբ։ Եւ ահա նախ այս իմանալի է՝ զէութիւնն մարդոյն և զպատճառ լինելութեանն. և այս է չափ գիտելոյն զԱստուած, որ ստեղծ զմարդ էութեամբ, և այսպէս խոստովանելի է. առաւելն կամ նուազն քան զայս՝ ի չարէն է։ Նախ և առաջին գիտեմք զԱստուած անսկզբմամբ և անկատարածիւ, առեալ ի վեց թևիցն, և թևոցն բացանեն զոչ սկզբմամբն և զոչ կատարած ցուցանեն չորիւքն ծածկութեանն, և յայս եմք հաստատեալ և բաւականացեալ։

«Դարձեալ ասացուք և վասն արարչութեան մարդոյն։ Իսկ եթէ ընդէ՞ր արարածս առնէ և տուն կազմէ և կամ մարդ արարչագործէ վերջին իմն. զի անըմբռն վարկաւ իւրոյ հարստութեան միայն վայելումն, վասն որոյ յառաջ պատուոյ հեղու զբարին և ճանապարհ հորդէ ի հրեշտակաց և այլոց արարածոց լինելութեան ըստ մարգարէին ձայնի՝ որ ասէ. «Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա»։ Ո՛վ Բարեյաղթ Թագաւոր, ահա ծանուցանեմք քեզ զխոստովանութիւնս մերոյ Հաւատոյ, Քոյոյ Թագաւորութեանդ և դարձեալ զայն՝ զոր վերըստին ճառեցաք։ Իսկ առ մեզ պաշտելի և երկրպագելի և այսպէս այսքան ըստ օրինի ի Հոգւոյն Հոգեկիրս Աստուած ասեմք զՀայր, Աստուած ասեմք զՈրդի, Աստուած ասեմք զՀոգին Սուրբ. երիս անձնաւորութիւն և կամք մի, կամ հաճութեան, կամ տէրութեան. մի՛ ուստեք ի նոսա երիցութիւնք կամ կրսերութիւնք, մի՛ իմասցի և մի՛ ոմն քան զոմն պատուելի կամ խոնարհեցուցանելի, որպէս զի մինն հաճեսցի և միւսն գործակից իցէ, իսկ միւս փչեսցէ. և մանաւանդ եթէ մինն ի միոջէ Աստուածութեանցն լինի պայծառութիւն միաւորութեամբ բաժանեալսն և միաւորեալ բաժանմամբ, որ և հրաշափառագոյն։

«Յայսմ վայրի կամեցայ կարգել և զՀոգւոյն Սրբոյ, վասն զի և այսքան յաղագս Հոգւոյն Սրբոյ իմանալեաւ աւանդեսցուք, որպէս երկնային շնորհացն տեսողն ասէր՝ սուրբ Աւետարանիչն Յովհաննէս, եթէ «Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէր զամենայն մարդ՝ որ գալոց էր»։ Բայց մխիթարիչն էր և է և եղիցի. այլ մի է լոյսն, է լոյս և լոյս,

հայոց դավանանքին։ Արդ, դու ուշադիր լսիր ճշմարիտ հավատի մասին իմ խոսքը, իմացիր հայոց դավանանքի ճշմարիտ խոստովանությունը, որ է մեկ աստվածություն՝ Հայր, Որդի և սուրբ Հոգի։ Ամենից առաջ պետք է իմանալ մարդու էության և լինելության պատճառը, աստվածիմացության չափանիշը հենց այս է, աստծո, որ մարդ էակն ստեղծեց։ Այդպես է պետք խոստովանել։ Ավելի կամ պակաս խոստովանելը սատանայական է։ Նախ և առաջ ընդունում ենք աստծուն անսկիզբ և անվախճան, վեցթևյան [սերովբեներով] շրջապատված, որոնք [երկու] թևերով թռչում են անսկիզբ և անվախճան [աստծո] շուրջը, իսկ չորս [թևերով] ծածկում [իրենց երեսն ու ոտքերը][241]։ Ահա դրան ենք հավատում և այդ ենք ընդունում։

Այնուհետև խոսենք մարդու արարչագործության մասին, թե ինչո՞ւ [աստված] արարածներ է ստեղծում, տուն կազմում, իսկ մարդուն ամենից վերջն է արարչագործում։ Դրա պատճառն այն է, որ նա անպատշաճ համարեց մենակ վայելել իր հարստությունը և մեծապես պատվելով՝ [մարդուն] բարիքներ է պարգևում և ճանապարհը հորդում հրեշտակներով և լինելության այլ արարածներով, մարգարեի ասածի համաձայն, թե «Տիրոջ գթությամբ երկիրը լիացավ և Տիրոջ խոսքով երկինքը հաստատվեց, իսկ նրա հոգու բերանով՝ [երկնային] բոլոր ուժերը»[242]։ Ո՛վ բարեհաղթ կայսր, ահա մենք ծանոթացնում ենք քո՛ բագավորությանը մեր դավանանքի խոստովանությունը և նորից ենք կանգ առնում վերևում մեր ասածի վրա։ Մենք պաշտում ենք և երկրպագում այնպես, ինչպես սուրբ Հոգին կրողները և աստված ենք խոստովանում Հորը, Որդուն և սուրբ Հոգուն՝ երեք անձնավորություն և մեկ կամք, կամք հաճության, կամք տերության։ Նրանց մեջ գոյություն չունի ո՛չ ավագություն, ո՛չ կրտսերություն, նրանցից որևէ մեկը չի համարվում մյուսից առավել բարձր կամ ցածր, [չենք ընդունում], որ նրանցից մեկը [Հայր աստվածը] կամքն է արտահայտում, մյուսը [Քրիստոսը] գործակցում [Հոր], իսկ երրորդն էլ [սբ. Հոգին] փչում, մանավանդ որ [երրորդության] մեջ միացած անձերից [աստվածություններից] մեկը, միավորության մեջ լինելով հանդերձ, առանձին վերցրած պայծառություն է, բայց առանձին լինելով հանդերձ, միավորված է [երրորդության] մեջ, ինչ որ ամենասքանչելին է։

Այստեղ ես կամենում եմ խոսել նաև սուրբ Հոգու մասին, նրա վերաբերյալ մեր իմացածը հաղորդել, ինչպես երկնային շնորհին արժանացած ավետարանիչ սուրբ Հովհաննեսը, թե «Կար ճշմարիտ լույսը, որ լուսավորում էր յուրաքանչյուր գալիք մարդուն»։ Նա Միխիթարիչն էր[243] և է՛ և կլինի՛։ Բայց լույսը մեկ է, լույս և լույս, մեկ աստված,

մի Աստուած, այն՝ զոր Դաւիթ ետես յառաջագոյն։ Իսկ ըստ Աստուածաբանին Յովհաննու՝ որ ասէր. «Հոգին է Աստուած, զոր կրսեր համարելոցդ ի մարդկանէ կարծեն և ոչ Աստուած ասելով՝ որպէս զՀայր և զՈրդի»։ Եւ զայս խոստովանեալ զերրորդութիւնն և զՀոգին Սուրբ, Աստուած եկեալ ի ծնունդն, ո՛վ բարի շառաւիղ, կամիմք յայտնել Քո Մեծութեանդ յաղագս զառ ի Հօրէ ծննդեանն, թէ ո՛րպէս հաւատացեալ հաւատացաք։ Արդ՝ այսպէս իմանամք զէականին զոյգ ընդ հաստատութիւն և ծնելութիւն։ Իսկ զերկրորդն վասն փրկութեան մերոյ ստուգապէս և ոչ խաբաճօք և կամ արուեստաբար, որպէս և ոչ առ հիւրութեան ճաշակելով զորթն ի խորանին առ կոչեցեալ Հօրն արդարութեան։ Խոստովանիմք և սկզբմամբ արարչութեան զոր ի Մովսեսէ գրեցան մինչև ի մարգարէն, իսկ ի մարգարէիցն մինչև կատարումն խոստմանցն որ գալոցն էր, և եկն անդուստ կատարել զտանօրինականսն, զոր վկայեաց Յիսուս սրբոց առաքելոցն. և գրովք առաք զԱւետարանն։ Իսկ ի յԱւետարանէս մինչև ցերրորդ Աստուածտեսութիւնն և դատողութեան հաւուցմանն՝ բարւոյն ասեմ և չարին, իսկ զկանոնեալսն յառաքելոցն՝ ընդ նմին և սուրբ Հարցն։

«Արդ՝ լուր և զայս, ո՛վ Արքայ, թէ ո՛րպէս զՀերձուածողսն նզովեմք իսկ, որ զՀերձուածութեան ախտս ախտացան ի միասին. և գտեալ ի գիրս՝ այսպէս նզովեմք զՎաղենտիանոս, որ երկուս որդիս ասէ, զմիննն բնութեամբ և զմիւսն շնորհօք, և զհին կտակարանսն ոչ ասաց բարի, իսկ զնորս բարի, վասն որոյ նզովեմք, և եղիցի նզովեալ։ Մարկիոնն զտարերքս բնութեամբ ասէ գոլ և ի թուոց գոյացեալ զաշխարհս և զՏեառնէն մարմինն առաչօք՝ և ոչ ճշմարիտ, զորս նզովեմք։ Մոնտանոս՝ որ ի չար մոլորելոցն, ասաց զանձն իւր՝ թէ ես եմ Հոգին Սուրբ, և ինքն կանամբք վարեր պղծութեամբ, զորս Հոգին Սուրբ նզովէ, և եղիցի նզովեալ։ Մանի երկու բնութիւն ասաց՝ զոյգ նիւթ, լոյս և խաւար, որպէս թէ բարի կամ չար, նզովեմք։ Նաւատիոս զապաշխարութիւնն ոչ ընդունի, իբրև թէ մի անգամ սխալեալն ոչ բժշկի, զոր ընդ նոսին նզովեմք, և եղիցի նզովեալ։

Արիոս՝ երիս ասաց և մի ըստ միոջէ խոնարհագոյն, զորս և ընդ

նա, որին հնում Դավիթն ականատես եղավ։ Հովհան Աստվածաբանն[244] ասել է. «Հոգին աստված է, թեև կան մարդիկ, ովքեր նրան կրտսեր են համարում և Հոր ու Որդու նման աստված չեն համարում»։ Ահա, այսպես ենք մենք խոստովանում երրորդությունը և սուրբ Հոգին աստված համարում՝ [Որդու ծննդյանն իջած]։ Ո՛վ ազնվազարմդ, մենք ուզում ենք հայտնել քո մեծությանը նաև այն մասին, թե ինչպես ենք մենք խոստովանում Որդու ծնունդը Հորից։ Մենք այսպես ենք ընդունում զույգ աստվածությունը՝ Հայր և Որդի։ Մենք բացարձակապես, առանց երկմտության և կեղծավորության ընդունում ենք, որ Որդին մեր փրկության համար [ծնվեց], նա չեկավ որպես հյուր՝ արդարության հոր վրանում որթը ճաշակելու[245]։ Մենք խոստովանում ենք նրա անսկիզբ արարչությունը, որի մասին գրեցին Մովսեսից սկսած մինչև մարգարեները և մարգարեներից սկսած մինչև իր գալստյան մասին խոստման իրականանալը։ Եվ եկավ նա այնտեղից իրականացնելու տնօրինությունը, որի մասին վկայեց Հիսուսը սուրբ առաքյալներին, իսկ մենք էլ գրավոր ստացանք Ավետարանը։ Իսկ Ավետարանի գրությունից մինչև երկրորդ աստվածտեսությունը և բարու ու չարի հատուցման դատաստանի օրը, այդ մասին գրված է առաքյալների և սուրբ հայրերի կանոններում։

Արդ, լսի՛ր, ով արքա, և այն, թե ինչպես ենք մենք նզովում հերձվածողներին, նրանց, ովքեր բոլորը միասին վարակվեցին հերետիկոսական ախտով։ Այդ մասին հատուկ գրվածքներ կան, և նրանց հիման վրա մենք այսպես ենք նզովում Վաղենտիանոսին, ով երկու որդի է ընդունում, մեկին՝ բնությամբ, մյուսին՝ շնորհքով, ով Հին Կտակարանը վատ է համարում, իսկ Նորը՝ բարի։ Ահա դրա համար ենք մենք նրան նզովում, և թող նզովյալ լինի նա։ Մենք նզովում ենք նաև Մարկիոնին, ով գտնում է, թե տարրերը ի բնե գոյություն ունեն, որ աշխարհը թվերի գոյացություն է, որ Տիրոջ մարմինը իսկական մարմին չէ, այլ երեվութական։ Նզովյալ լինի և չար մոլորեցնողներից Մոնտանոսը, որ ասաց, թե՝ «Ես եմ սուրբ Հոգին», նա, ով կանանց հետ պիղծ խառնակությամբ էր ղբաղված։ Նման մոլորեցնողներին սուրբ Հոգին էլ է նզովում։ Մենք նզովում ենք և Մանիին, ով երկու բնությունն ընդունեց՝ զույգ նյութ, լույս և խավար, բարի և չար։ Նրանց հետ միասին նզովում ենք և Նավատիոսին, ով չի ընդունում ապաշխարությունը և պնդում, որ ով մի անգամ մեզք է գործել, նա անբուժելի է։ Թող նա՛ էլ նզովյալ լինի։ Նրանց հետ նզովում ենք և չար Սաբելիոսին, որ ընդունում էր, որ [սուրբ] երրորդությունը մեկ դեմք է և որ տարբերությունը լոկ անունների մեջ է։ Նզովյալ լինի նա։ Արիոսը թեև ընդունում էր

մեզ նզովէ կաթողիկէ եկեղեցի։ Վոտինոս ի Մարիամայ ասէ առեալ սկիզբն Յիսուս և ոչ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ, վասն որոյ նզովեմք. և նզովեմք զնեստոր և զթեոդորոս և զհայր անուն Սարգիս հանդերձ շանն և իշովն իւրով, և բաժանակից նոցա եղիցի յաւուրն յետնումն՝ շանց և իշոց դրեմք. զորս նզովեսցէ կաթուղիկէ առաքելական սուրբ եկեղեցի, և եղիցին նզովեալ։ Նզովեմք և զՊաւղոս Սամոսատացին, դարձեալ և զՊետրոս կնափեսայն, սոյնպէս և զԻէոսկորոսն՝ եթէ խորհեցաւ յայսպիսի ինչ հերձուածս, և եղիցի նզովեալ ըստ ձեր աւելաբանութեան խօսիցդ։

«Դարձեալ դրեմք և վասն խաչեալ խաչեցելոյն, կոչեմք և երկրպագեմք. և որք կարծեն և կամ կոչեն զերրորդութիւնն ի խաչն խաչեալ կամ կիրս ինչ Աստուածութեանն կրեալ, նզովեսցի յերրորդութենէն, սոյնպէս և ի մերմէ, նոյնպէս և յեկեղեցւոյ Աստուծոյ։ Ընկալ, ամենամեծար Տէր արքայ, և յաղագս միաւորութեանն Աստուծոյն և մարդոյն կալ առ միմեանս, որք անդրանելի են ի դիրս սուրբս՝ այդքան համարեալ հաւանեցաք և հաւատացաք։ Քանզի ասէ իսկ Սքանչելագործն Գրիգորիոս. «Զի թէպէտ ի վանդանիցն եկեալ առ միմեանս բնութիւնքն, այսուհանդ մի Տէր, մի Յիսուս Քրիստոս, մի բնութիւն խոստովանելի է յետ միաւորութեան՝ կարողակից արարեալ զմարմինն հողեղէն Աստուածութեանն, և ի մի զօրութիւն միացոյց, ի մի աստուածութիւն բաւանդակեաց»։ Այլ թէ զիա՞րդ և կամ ո՞րպէս ունին առ միմեանս բնութիւնքն, այլ ոչ աւելի քննեցին՝ քան զոր Հոգին Սուրբ ետ բարբառել. զիա՛րդ սքանչելագործքն թոյլ ետուն գիտել աստուածային իրագործութեանն, ծնունդ իբրև միրապէս Աստուծոյ Թողին։ Դարձեալ և երանելին Գրիգոր Նիւսացին ասէ, եղբայր սրբոյ Հայրապետին Բարսղի, ի գիրս իւր՝ որ յաղագս բնութեան մարդոյն, յերրորդ ճառին՝ որ վասն միաւորութեան Հոգւոյ և մարմնոյ, «Եւ քանզի պատշաճիւր արդեօք այսպէս մաքուր բան և մանաւանդ առ մարդկութիւնս միաւորութիւն Աստուածն Բանին, ըստ որում միաւորեալ մնաց անշփոթ և անպարագրելի, ոչ ըստ անձին յեղանակի. քանզի նա ի բազմացելոցն գոլով թուի և ախտակից գոլով վասն իւրութեանն մարմնոյն է երբէք զի և ըմբռնել։ Իսկ

[սուրբ երրորդության] երեք դեմքերը, բայց գտնում էր, որ մեկը մյուսի նկատմամբ ստորադաս է. մեզ հետ նրան նզովում է նաև ընդհանրական եկեղեցին։ Ֆոտինոսը գտնում է, որ Հիսուսը սկիզբ առավ Մարիամից և ոչ նախքան հավիտենականությունը՝ Հորից, դրա համար էլ նզովում ենք նրան։ Մենք նզովում ենք նաև Նեստորին, Եվտիքեսին և հայանուն Սարգսին՝ իր շան և էշի հետ հանդերձ. թող շների և էշերի մասնակից դառնա նա վերջին դատաստանի օրը։ Սրանց նզովում է ընդհանրական առաքելական սուրբ եկեղեցին, և թող նզովյալ լինեն։ Նզովում ենք և Պողոս Սամոսատցուն և Պետրոս Թափիլին. նզովյալ լինի և Դիոսկորոսը, եթե նա նման հերձվածների կողմնակից է, ինչպես դուք եք ասում ձեր ավելորդաբանությամբ։

Գրում ենք նաև խաչյալ Քրիստոսի մասին, մենք «խաչեցար» ենք ասում և երկրպագում նրան։ Իսկ ովքեր գտնում են, որ դրա տակ ենթադրվում է, թե երրորդությունն է խաչվել խաչի վրա, կամ թե աստվածությունն է չարչարանքներ կրել, թող նզովյալ լինի նա [սուրբ] երրորդությունից, ինչպես և մեր կողմից, ապա նաև աստծո եկեղեցու կողմից։ Ընդունի՛ր, ամենամեծ տեր արքա, և [մեր դավանությունը] Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների միավորության մասին, բնություններ, որոնք պատվվում են մեր կողմից։ [Քրիստոսի] աստվածային և մարդկային բնությունների միացումից հետո, նրանց անջատ գոյության մասին սուրբ գրքերում խոսք չկա։ Մենք դա ենք ընդունում և հաստատում։ Չէ՞ որ Գրիգոր Աքանչելագործը ասում է. «Թեև տարբեր բնություններ միացան իրար, բայց նրանց միացումից հետո մեկ Տեր, մեկ Հիսուս Քրիստոս և մեկ բնություն պետք է խոստովանել, որովհետև հողեղեն մարմինը աստվածությանը կարողակից դարձավ, մեկ զորության միացրեց և մեկ աստվածություն բովանդակեց»։ Այն հարցին, թե այդ երկու բնությունները ինչ հարաբերության մեջ են միմյանց հետ, [սուրբ հայրերը] սուրբ Հոգու ասածից ավել բան չեն ասել։ Ինչո՞ւ հրաշագործ [հայրերը], որ իրենց թույլ տվեցին իմանալ աստվածային արարչագործության մասին, [Քրիստոսի] ծննդյան հարցը աստծուն հատուկ համարելով՝ չանդրադարձան։ Օրանելի Գրիգոր Նյուսացին՝ սուրբ հայրապետ Բարսեղի եղբայրը, մարդու բնության վերաբերյալ իր գրքի երրորդ[246] ճառում՝ հոգու և մարմնի միավորության մասին՝ ասում է[247]. «Հիրավի, պատշաճ են այսպիսի ճըշմարիտ խոսքերը։ Առավել ևս Աստված-Բանի՝ մարդկային [բնության] հետ միանալու վերաբերյալ, որի հետ միանալուց հետո մնաց անշփոթ և անպարփակելի, ոչ ինչպես հոգին։ Քանզի [հոգին] ունենալով աճելու հատկություն, նա մարմնի հետ ունեցած ընդհանրության պատճառով

Աստուածն բան ոչինչ ինքն ի կցորդութենէն՝ որ առ մարմինն և անձն, այլայլեալ և ոչ ընդունակ եղեալ նոցա տկարութեանն, այլ հաղորդեցուցեալ զնոսա Իւրոյն Աստուածութեանն, լինի նոքօք մի մնացեալ, մի՝ որ ինչ էրն և նախ քան զմիաւորիլն։ Նոր իմն է յեղանակս այս խառնմանս և միաւորութեանս և խառնէ և մնայ յամենայնի ամենայնիւ անխառն և անշփոթ և անապական և անփոխադրելի. ոչ ախտակից եղեալ՝ այլ գործակից միայն, ոչ ապականակից և այլայլակից՝ այլ ի միասին աճեցեալ նոցա, նա ոչ նուազեալ ի նոցանէ առ ի մնալոյ անփոփոխելի և անշփոթելի, վասն զի և անմաքրապէս ամենայն այլայլութեան անընդունակ է։ Վկայ այսոցիկ է Պորփիւռոս՝ հակառակ Քրիստոսի շարժեալ զիւրն լեզու. զի հզօր են թշնամեացն վասն մեր վկայութիւնք և ոչ մի ընդ միաբանութիւն ընդունելով. այս Պորփիւրիոս յերկրորդ բանին շարախառնիցն խնդրելեաց դրէ այսպէս. «Ոչ է ասել, եթէ անհնարին է և թէ անիրիք առեալ լինել ի լրումն այլ էութեան և լինել մասն էութեան, մնալով ըստ իւրոյն բնութեան մի յետ լինելոյն, զմիսանի էութիւն ընդ այլում լինելով և զմեծագունութիւնն Իւր ոչ փոփոխեալ, այլ փոփոխեալ զնոսա յորս լինիցին յԻւր ներգործութիւնն մերձաւորութեամբն»։ Եւ ասէ զայս յաղագս միաւորութեան անձին և մարմնոյն։ Իսկ եթէ ի վերայ անձին ճշմարիտ է բանս վասն անմարմնութեանն, ո՞րչափ ևս առաւել ի վերայ Բանին Աստուծոյ յաւէտ անբաղդատաբար և ըստ ճշտութեան անմարմնոյն, որ հակառակ խնու զբերանս ձեռնարկողացն բամբասել զԱստուծոյ Բանին միաւորութիւնն առ մարդկութիւնն, քանզի այս հեթանոսաց է՝ որք զբազմածիծաղելիսն առնեն»։

«Եւ դարձեալ քրիստոնեայք և հաւատացեալք այլ միտս ինչ իմանալ և խոստովանիլ և կալմամբ առ միմեանս կամ միաւորութեամբ՝ եղիցին նզովեալ։ Եւ եթէ ոք զմարիամ Աստուածածինն՝ զսուրբ Կոյսն հեռի կարծեսցէ յԱստուածութենէն, նզովեալ եղիցի։ Եւ եթէ ոք ասասցէ՝ թէ իբրև ընդ խողովակ ընդ Կոյսն անցեալ, այլ ի նմա ստեղծեալ և ասելով աստուածաբար՝ միանգամայն և մարդկաբար, աստուածաբար՝ զի առանց առն, և մարդկօրէն՝ զի օրինօք ծննդեանն, նմանապէս անաստուած է։ Եթէ ոք ասասցէ յառաջ ստեղծեալ զմարդն և ապա ասէ մրտեալ բնակիլ՝ զԱստուած, դատապարտի՝ որ ոչ ծնունդ Աստուծոյ ասէ,

ցավակից է։ Իսկ Աստված-Բանը, միանալով մարմնին և հոգուն, ոչ մի փոփոխություն չկրեց, նա մասնակից չդարձավ մարմնի և հոգու տկարություններին, այլ, վերջիններս հաղորդակից դարձնելով իր աստվածությանը, նրանց հետ մի ամբողջություն կազմեց՝ մնալով այնպես, ինչպես էր նախքան միավորվելը։ Խառնման և միավորության այս եղանակը արտասովոր է. [աստվածությունը], խառնվելով [մարդկային բնության հետ], մնում է բացարձակապես անխառն և անշփոթ, անապական և անփոփոխ։ Նա մարմնի հետ ախտակից չդարձավ, այլ միայն գործակից։ Նա ապականակից և այլայլակից չդարձավ, նրանք միասին աճեցին։ Մնալով անփոփոխ և անշփոթ, նրանցից նվազ չէ նա, քանզի նա բացարձակապես անընդունակ է փոփոխության։ Խոսքիս վկան է Պորփյուրոսը, որ Քրիստոսին վատաբանեց։ Թշնամիների՝ մեր օգտին խոսող վկայությունները զորեղ են, թեև նրանց ասածները չենք ընդունում։ Այս Պորփյուրոսը իր [գրքի] երկրորդ գլխում անշփոթ միության կողմնակիցների հարցին պատասխանում է այսպես. «Չի կարելի ասել, թե անհնարին է մի էության վերցնել, նրանով լրացնել մի ուրիշը, դառնալ էության մաս և ամբողջությամբ պահպանել սեփական հատկությունները։ Մյուս էությունը լրացնելուց հետո, մյուսի հետ լինելով, նա իր [էությունը] ամբողջական է պահպանում, նա չի փոփոխում իր մեծությունը, այլ փոփոխության է ենթարկում նրանց, ովքեր, մերձակա լինելով իրեն, ընկնում են իր ազդեցության ներքո»։ Նա ասում է դա հոգու և մարմնի միավորության վերաբերյալ։ Եթե այս խոսքը, որ վերաբերում է հոգուն, ճշմարիտ է նրա անմարմին լինելու պատճառով, ապա ինչքան ավելի ճիշտ է, երբ խոսքը վերաբերում է ոչնչի հետ անհամեմատելի, ճշմարիտ անմարմին Աստված-Բանին։ Սա խցանում է Աստված-Բանի՝ մարդկային բնության հետ միացումը բամբասել ձեռնարկողների բերանը։ Հերետիկոսներն են, ովքեր բաղում ծաղրի են ենթարկում դա։

Այն քրիստոնյաները և հավատացյալները, ովքեր այդպես չեն մտածում և խոստովանում՝ առանձին կամ խմբերով, թող նզովյալ լինեն։ Ով սուրբ կույս Մարիամ Աստվածածնին աստվածությունից զուրկ համարի, թող նզովյալ լինի։ Ով ասի, թե [Քրիստոսը] անցավ կույսի միջով, ինչպես խողովակի, կամ թե Նա [Մարիամի] մեջ ստեղծվեց՝ միաժամանակ աստվածաբար և մարդկորեն, աստվածաբար, այսինքն՝ առանց տղամարդու միջամտության, և մարդկորեն, այսինքն՝ սովորական մարդածնությամբ, նա էլ անաստված է։ Ով ընդունում է, որ [Քրիստոսի] մարդկային բնությունը նախապես գոյություն ուներ և հետո է, որ աստվածային բնությունը բնակվեց նրա մեջ, նա դատապարտելի է,

այլ փախչել ի ծնանելոյն։ Եթէ ոք ի ներքս ածիցէ երկուս որդիս՝ զմինն յԱստուծոյ ի Հօրէ և զերկրորդն ի մօրէ, այլ ոչ զմինն և զնոյն, յորդեորութենէն արատաւոյ անկանի, զոր խոստացաւ ուղիղ հաւատացելոցն։ Բնութիւնք երկուք, քանզի Աստուած և մարդ՝ զի Հոգի և մարմին. բայց որդիք ոչ երկուք և Աստուած ոչ երկուք, այլ մի. զի և աստ ոչ երկու մարդիկք, թէպէտ և Պօղոս այսպէս ասաց՝ զներկու՝ զներքին մարդոյն և զարտաքին անուանեաց։ Եթէ պարտ է համառօտագոյն ասել, այլ և այլ որոց Փրկիչն, եթէ ոչ նոյն աներևոյթն և երևելին, անժամանակն և ժամանակաւորն, ոչ այլ ոք, և այլ մի լիցի, վասն զի երկուք ի տանն ի մի խառնելով՝ Աստուածոյ մարդանալ և մարդն աստուածացեալ. կամ ո՞րպէս արդեօք անուանիցէ։ Ասեմք՝ այլ և այլ ընդդէմ նմին չերրորդութեանն ունի, քանզի և առ այլ ոմն, այլ զմի ղդէմսն խառնիցեմք, ոչ այլ և այլ, վասն զի մի են երկոքեանն և նոյն աստուածութեամբն։ Եթէ ոք որպէս զմարգարէ՝ ասէ ղշնորհի ծնեալ, այլ ոչ ըստ բնութեամբ միաւորեալ և ստեղծեալ, ընդ նմին եղիցի ի լաւագոյն զօրութենէն նզովեալ. մանաւանդ եթէ լինի հակառակ՝ եթէ ոք ոչ երկրպագանիցէ խաչեցելոյն, նզովեալ լիցի և պատեսցի ընդ աստուածասպանսն։ Եթէ ոք չետ մկրտութեանն կամ չետ մեռելոց յարութեանն որդեգրութեան արժանաւոր լեալ ասիցէ, որպէս և հերձանոսքն Թերի գրօքն ի ներքս ասիցեն, նզովեալ եղիցին. քանզի սկսեալ կամ յառաջադէմ լեալ կամ կատարեալ՝ ոչ է Աստուած, թէպէտ և յաղագս առ փոքր փոքր փոփոխմանն այսպէս ասիցէ։ Եթէ ոք ի բաց եղեալ այժմ զմարմինն ասիցէ և մերկ զԱստուածութիւնն ի մարմնոյն, այլ ոչ հանդերձ՝ զոր էառ, և այժմ և յորժամ եկեսցէ՝ մի՛ տեսցէ նա զփառս գալստեան Նորա. քանզի ո՞ւր է մարմին Նորա այժմ, եթէ ոչ ընդ առողին. և զի ոչ ընդ Մանիքեցւոցն աղճատանացն՝ որ ասեն ի չարեգակն եղեալ, զի պատուհասի անպատմութիւնն, կամ չօդ ցնդեցաւ և լուծաւ որպէս ի բնութեան, և հոգւոց հեղումն և փայլատականց ընթացք, ոչ կացեալ ուր և զշօշափեալն կամ զչարութեանն և տեսանելին երբեմն խոցոդացն, զի Աստուածութիւնն ըստ ինքեան աներևոյթ. այլ եկեսցէ հանդերձ մարմնով որպէս ի միաբան, որպէս երևեցաւ աշակերտացն ի լերինն Թաբոր, ըստ որում երևեցաւ գերայաղթելով զմարմինն Աստուածութեան, որպէս զայս ասեմ՝ Քեզ ծանուցանելով զմիտս։ Եթէ ոք ասացէ զմարմինն չերկնից իջեալ, նզովեալ եղիցի, վասն զի երկնաւոր մարդն չերկրէ, նոյնպէս և երկրաւորքս.

քանզի նա չի խոստովանում աստծո ծնունդը, նա մերժում է այն: Նա, ով հնթադրում է երկու որդու գոյությունը՝ մեկը Հայր-աստծուց, իսկ մյուսը՝ մորից և ոչ թե մեկի և նույնի, նա մերժվում է որդեգրությունից, որ խոստացավ [Տերը] ճշմարիտ հավատացյալներին: Նա երկու բնություն ունի, քանզի [Քրիստոսը] և՛ աստված է, և՛ մարդ՝ հոգի և մարմին, բայց ո՛չ երկու որդի, ո՛չ երկու աստված, այլ միայն մեկ, ո՛չ երկու մարդ, ինչպես պնդում է Պողոս [Սամոսատցին]՝ ներքին մարդ և արտաքին մարդ: Կարճ ասած, Փրկիչը տարբեր տարրերից է ստեղծված, այլ կերպ չէր կարող նա լինել աներևույթ և երևելի, հավերժական ու ժամանակավոր. երկու [տարրերը] նույն ամանի մեջ խառնվելով միմյանց՝ աստված մարդացավ, իսկ մարդն էլ աստվածացավ: Էլ ինչպե՞ս ասենք: Ասում ենք, որ նույն երրորդությունը տարբեր դեմքեր ունի և այդպես ենք ասում, որպեսզի չխառնենք դեմքերը: Բայց նրանք տարբեր չեն, քանզի երկուսը մեկ է իր աստվածությամբ: Եթե մեկը մարգարեի նման ասի, թե նա ծնվեց շնորհոքն [աստծո], և թե նրա ծննդյանը երկու բնությունները չմիացան, թող նույն լավագույն զորության կողմից նզովյալ լինի: Մանավանդ նա, ով հակառակվելով չի երկրպագում խաչեցյալ [Քրիստոսին], թող նզովյալ լինի և աստվածասպանների շարքը դասվի: Ով որ ասի, թե [Քրիստոսը] որդիաստված կոչվելու արժանացավ միայն իր մկրտությունից կամ հարություն առնելուց հետո, ինչպես որ հերետիկոսներն են ասում իրենց անկատար գրվածքներում, թող նզովյալ լինի, որովհետև չի կարելի աստված համարել նրան, ով սկիզբ է առնում, աճում և ղարգանում, թեպետև իր աստիճանական փոփոխման պատճառով այդպես է ասվում: Ով այժմ և ապագայում, մերժելով մարմնի գոյությունը՝ ասի, որ աստվածությունը մարմին չունի, իր առած մարմնի հետ չէ, թող չտեսնի նա Նրա դալստյան փառքը: Քանզի որտե՞ղ է այժմ Նրա մարմինը, եթե ոչ այն առնողի հետ: Դա մանիքեցիների դատարկաբանությունն է, որի համաձայն [Քրիստոսն] իր մարմինն արևի վրա դրեց, որպեսզի հարգանքի արժանանա անարգությունը[248], և կամ էլ, թե հօդս ցնդեց և լուծվեց բնության մեջ, ինչպես շունչը և փայլակը, որ ոչ մի տեղ չմնաց Նրա [մարմինը], որը տեսան, շոշափեցին, զորությանը ականատես եղան նրան խոսողները, քանզի աստվածությունն իր էությամբ անտեսանելի է: Բայց նա գալու է մարմնով միասին, ինչպես երևաց նա աշակերտներին Թաբոր լեռան վրա, երբ աստվածությունը հաղթեց մարմնին: Այս ասում եմ, որպեսզի միտքս քեզ պարզ դառնա: Ով ասի, թե մարմինը երկնքից իջավ, թող նզովյալ լինի, քանզի երկնային մարմինները երկնքում էլ մնում են, նմանապես և երկրայինները՝ երկրում: Ոչ

և ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջնյ յերկնից՝ Որդին մարդոյ: Եւ եթէ այլ ինչ նոյնպիսի՝ իմանալի է ասել յաղագս երկնաւոր միաւորութեան, որպէս և Քրիստոսիւ լեալ ամենայն, և բնակեալ Քրիստոս ի սիրտս մեր առ ի լուսաւորել զմեզ:

«Կամեցաք այսու ծանուցանել Ք՝ո Բարեյաղթութեանդ յաղագս խաչելոյն և խաչելութեանն, զոր և ասեմք՝ «Որ խաչեցար վասն մեր». դարձեալ ի ժամ աղօթիցն յորժամ երիցս ձայնեմք զերախտիսն Աստուծոյ յաղագս խաչելոյն և սուրբ ընա կոչելով Աստուած, հզօր, անմահ, որ վասն մեր խաչեցար: Եւ եթէ ոք Հօր և Հոգւոյն Սրբոյ համարեսցի և կամ ասասցէ զոյդ երիցն կրել զտնօրինականն և երիցն խաչեալ, դատախազ գոցի երից Աստուածութեանն. ապա եթէ զՈրդւոյ միայն հրատարակեմք զբարերարութիւնն՝ փախչելով ի բանէն՝ որ ասի յԱւետարանն. «Եթէ ոք յամօթ համարեսցի զիս և զբանս իմ, զնա և Որդի Մարդոյ ամօթ արասցէ»: Եւ այս ի դէմս խոստովանողաց, սակայն ծածկելոցն զերախտիսն Աստուծոյ զխաչելութիւնն՝ իբր թէ ոք յամօթ համարեսցի, ամաչեսցի յաւուրն յեանումն: Քանզի որպիսի արդեօք Գրիգորիոս Հայրն Աստուածաբանութեանցն ասէ՝ «Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ». և համարձակի՞ ոք թագուցանել զխաչելութիւնն. բայց եթէ ոք զՀայր և զՀոգին Սուրբ մերձ դնիցէ՝ եղիցի նզովեալ:

«Իսկ ի վերայ այսր բանիցս և վասն կատարման սուրբ Խորհրդոյն Հացին և գինւոյն գրեմք. իսկ զի՞րդ անապական առեալ զբաժակն Հանդերձ անխմոր Հացիւն յաղագս աւանդելոյն մեզ՝ յայնպիսի գիշերին յորում մատնիւր մարմին և արիւն իւր, կոչեաց ի յիշատակ իւր, կատարել ասաց. իսկ վկայեալ Յովհաննու Ոսկեբերանին յաւետարանին մեկնութեան ի Փարիսեցւոց զիրն ասելով, եթէ «Զմիւս չար հերձուածոն յարտաքս խլեսցէ, վասն այսորիկ և յետ յարութեանն բաժակ միայն էառ և անխմոր Հաց, քանզի և են ոմանք, ասէ, որ ի սուրբ Խորհուրդն ջուր ի կիր արկանեն, զի և որթն գինի միայն ծնանի՝ և ոչ ջուր», վասն որոյ և մեք պահեմք զաւանդս զայս: Բայց վասն ի կողէն հեղլոյն երկուց վտակացն՝ խառնեցին ջուր, զի ընդ արեանն ջուր ելանէր, և ըստ ժամուն՝ զի Աստուածութիւնն ընդ մարմնոյն խառնիւր, ոչ ուղղապէս

որ երկինք չբարձրացավ, այլ միայն Մարդու Որդին, որ իջավ երկնքից։ Ըստ անհրաժեշտ է որևէ նման բան ավելացնել, պետք է խոսել երկնային միավորության մասին, ինչպես և այն, որ ամեն ինչ Քրիստոսով է կատարվում, որ Քրիստոսը բնակվում է մեր սրտերում՝ մեզ լուսավորելու համար։

Մենք կամենում ենք այստեղ ծանոթացնել քո բարեհաղթությունը նաև խաչյալի և խաչելության մասին [մեր դավանության], ինչո՞ւ ենք երեքսրբյան աղոթքի ժամանակ, երբ երախտագիտություն ենք հայտնում աստծուն՝ խաչյալի համար, ասում՝ «որ խաչեցար վասն մեր»։ Մենք ասում ենք. «սուրբ աստված, [սուրբ] և հզոր, [սուրբ] և անմահ, որ խաչեցար վասն մեր»։ Եթե որևէ մեկը ենթադրի, որ խոսքը վերաբերում է Հորը կամ սուրբ Հոգուն, և կամ ասի, որ այդ երկուսն էլ Տիրոջ չարչարանքներն են կրել, և երեքն էլ խաչվել, թող երեք աստվածություններից էլ դատաստան տեսնի։ Երբ մենք հայտարարում ենք միայն Որդու բարերարությունը, ապա դա անում ենք խուսափելու համար Սուրբ Ավետարանի սպառնալիքից, թե «Ով ինձ հավատալը և իմ խոսքերը դավանելն ամոթաբեր համարի, Մարդու Որդին երբ գա, նրան կամաչեցնի[249]։ Եվ դա ասված է [Քրիստոսին] խոստովանողների հասցեին, ովքեր սակայն թաքցնում են աստծո՝ իր խաչելությամբ մարդկանց պարգևած բարիքները՝ ամոթաբեր համարելով այն։ Նրանք վերջին [դատաստանի] օրը կամաչեն։ Ինչքան ճիշտ է ասում Գրիգոր Աստվածաբանը. «Աստված խաչվեց, և արեգակը խավարեց։ Ո՞վ կհամարձակվի թաքցնել խաչելությունը. նզովյալ լինի նա, ով [երեքսրբյան աղոթքի մեջ] նաև Հորը և սուրբ Հոգուն նկատի ունի [խաչված]։

Ասվածի վրա մենք ավելացնում ենք նաև հաղորդության խորհրդի կատարման մասին, թե ինչի համար [Քրիստոսը խորհրդավոր ընթրիքի] դիշերը, երբ [մեզ] էր հաղորդում իր մարմինն ու արյունը, անապակ բաժակ վերցրեց և անխմոր հաց ու կարգադրեց նույն բանը կատարել իր հիշատակին։ Երանելի Հովհան Ոսկեբերանը Ավետարանի իր մեկնության մեջ կանգ առնելով փարիսեցիների գրքի վրա, գրում է. «Նա մյուս չար հերետիկոսությունները արմատախիլ է անելու[250], դրա համար էլ հարություն առնելուց հետո [անապակ գինով] բաժակ վերցրեց և անխմոր հաց»։ Նա [այնուհետև] ասում է, թե «կան ոմանք, ովքեր [հաղորդության] սուրբ խորհրդի [գինու] մեջ ջուր են խառնում. բայց որթը միայն գինի է տալիս և ոչ ջուր»։ Ահա դրա համար էլ մենք պահպանում ենք այս ավանդությունը։ Նրանք [գինու] մեջ ջուր խառնեցին և հացի մեջ՝ բխմոր, ելնելով այն բանից, որ [Քրիստոսի] կողից արյան հետ միասին ջուր հոսեց, և որովհետև [Քրիստոսի] աստ-

մեկնեցին զայս. զի յաղագս ջրոյն և արեանն երանելին Յովհան ասէ, իբրև թէ ջուրն զկատարեալ մեռելութիւնն ցուցանէ, իսկ արիւնն զկենդանութիւնն, որպէս էր իսկ կենդանի, կատարեալ և մեռեալ. զի ոչ մարդն բաժանեալ յԱստուածութենէն, այլ զմի և նոյն աւանդեմք՝ յառաջագոյնն. ոչ մարդ, այլ Աստուած և մարդ միայն, և յառաջ քան զյաւիտեանս անխառն մարմնոյն է, իսկ ի վախճանի զմարդն էառ յաղագս մերոյ փրկութեան. չարչարեալ մարմնովն անչարչարելի Աստուածութեամբն, բաւանդակելի մարմնովն, անբաւանդակելի Աստուածութեամբըն, զնոյն ինքն երկնաւոր և երկրաւոր, տեսանելի և անտեսանելի, տարեալ և անտանելի. զի բաւանդակի անբովանդակելին՝ մարդ իցէ և ով ծանիցէ զնա Աստուած: Իսկ մեք Աստուածոյ միայն հրկիրպագանեմք և խոստովանիմք. և անբաժանելի խառնումն զաստուածութեանն և զմարմնոյն հաւանիմք, զի մի՛ և մարմնոյն երկրպագելով՝ և չորրորդութիւն ի ներքս ածցուք փոխանակ երրորդութեանն, և կամ մահուամբ մարդոյն միայն փրկեալ արեամբ՝ և ոչ աստուածայնովն:

«Եւ արդ՝ լուարուք վասն ծննդեան Տեառն և պահոցն. իսկ յաղագս ծննդեան՝ զորս բաժինս առնէք ի մէնջ՝ զայս առնելով պատճառ. նախ և առաջին դծնունդն Քրիստոսի. վասն զի ասէ Ղուկաս աւետարանիչն և առաքեալն այսպէս. «Եւ էր Յիսուս իբրև ամաց երեսնից». և սկսեալ յայնմանէ ցուցանէ զի ի նոյն օր ծննդեանն մկրտեալ, և առնուլ սկիզբն երեսնամեայ կատարեալ հասակի վարդապետութեանն. զի թէպէտ և պապանձմանն Զաքարիայի թուեն աւուրս հարիւր և ութսուն, որ դիպեցուցանէ զաւետաւորութիւնն ի քսան և հինգ մարտի, անտի թուեն երկերիւր եօթանասուն և վեց զաւուրս յղութեան սրբոյ Կուսին ըստ տասնամեան աւուրցն անդրանկածնութեանն, որ դիպեցուցանէ զծնունդն ի դեկտեմբերի քսան և հինգ: Արդ՝ քննեսցուք նախ զի Ղևտականն այսպէս ասէ. «Տօնն իմ, նուիրեալք, սուրբ կոչեսցի ձեզ. երիս ժամանակս տարւոջն տօնեսջիք, և ամենայն արու ձեր յանդիման լիցի ինձ. և մատուսջիք պատարագս Տեառն»: Եւ մատուցեալ ասէ. «Յամսեանն վեցերորդի, որ օր մի է, սուրբ կոչեսցի ձեզ. և որ օր տասն և հինգ նորին ամսոյ՝ է տօն տաղաւարահարացն կոչեցեալ՝ սուրբ լիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործէք ի նմա: Եւ օրն եօթներորդ սուրբ կոչեսցի ձեզ՝ շաբաթ հանգիստ, զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործէք ի նմա». զայս բանս գիրն ասէ: Արդ՝ պա-

վածային բնությունը մարդկային [բնության] հետ էր խառնվում։ Բայց նրանք այդ [երևույթներին] սխալ մեկնություն տվեցին։ Ջրի և արյան մասին երանելի Հովհաննն ասում է, որ ջուրը կատարյալ մեռելության մասին է վկայում, իսկ արյունը՝ կենդանության, ինչպես [Քրիստոսը], որ էր իսկապես կենդանի, կատարյալ և մեռյալ։ Քանզի մարդն աստվածությունից չբաժանվեց, նա մի ամբողջություն է կազմում, ինչպես այդ մասին վերևում ասվեց։ Ոչ մարդ, այլ աստված և մարդ միայն. նա հավիտենականությունից առաջ ուներ անխառն մարմին, բայց վերջում, մեր փրկության համար, ստացավ մարդկային [բնություն]։ Անչարչարելի աստվածությունը մարմնապես չարչարվեց՝ իր պարփակելի մարմնով և անպարփակ աստվածությամբ. նա նույն ինքը և՛ երկնային է, և՛ երկրային, տեսանելի և անտեսանելի, սահմանափակ և անսահմանափակ. պարփակելի անպարփակելին մարդ-աստվածն է, իսկ մենք միայն աստծուն ենք երկրպագում, նրան խոստովանում, ընդունում աստվածային և մարդկային բնությունների անբաժանելի խառնումը։ Եթե մենք մարմինն էլ երկրպագենք, այն ժամանակ, երրորդության փոխարեն, չորրորդության ճամփա ենք բացում, [ընդունում], որ մենք փրկություն ենք ստանում ոչ թե աստվածային բնությունից, այլ՝ մարդու արյամբ։

Այժմ լսենք Քրիստոսի ծննդյան և պահքի մասին։ Դուք մեզնից տարբեր եք նշում տոները հետևյալ պատճառով։ Նախ և առաջ [խոսենք] Քրիստոսի ծննդյան մասին։ Ավետարանիչ Ղուկաս առաքյալն ասում է. «Հիսուսը երեսուն տարեկան էր»[251]։ Սա պարզ ցույց է տալիս, որ նա հենց իր ծննդյան օրն էլ մկրտվեց, որ սկսվեց նրա երեսուներորդ տարին՝ վարդապետելու համար կատարյալ հասակ։ [Ոմանք] Զաքարիայի պապանձման օրից հաշվում են հարյուր ութսուն օր, որով ավետման օրն ընկնում է մարտի քսանհինգին, դրա վրա էլ գումարում են սուրբ կույսի հղության երկու հարյուր յոթանասունվեց օրը (անդրանկածնության տասնամսյա ժամանակաշրջանը), որով ծնունդը ընկնում է դեկտեմբերի քսանհինգին։ Արդ, քննության առնենք նախ Ղևտականը և ապա Ավետարանը. Ղևտականն ասում է. «Ինձ նվիրված տոնը դուք սուրբ անվանեցեք։ Դուք տոնեցեք այն տարին երեք անգամ, և ձեր բոլոր արուները թող իմ հանդիման լինեն։ Եվ դուք Տիրոջ պատարագ մատուցեք»։ Շարունակելով՝ նա ասում է. «Յոթերորդ ամսի առաջին օրը ձեզ համար սուրբ լինի։ Նույն ամսի տասնհինգերորդ օրը, որ կոչվում է տաղավարահանաց տոն, սուրբ լինի ձեզ համար և այդ օրը ոչ մի գործ մի կատարեք։ Յոթերորդ՝ շաբաթ օրը սուրբ լինի ձեզ համար և հանգիստ ու այդ օրը ոչ մի գործ մի կատարեք»։ Ահա այդ է

պանձումն Զաքարիայի ի թշրին ամսոյ է, վասն զի այն է ամիս եօթներորդ, այն է օր քաւութեանն՝ յորում մտանէր քահանայապետն ի սրբութիւն սրբոցն, և այն՝ մի անգամ ի տարւոջն ըստ բանին Պաւղոսի. բայց ի նմին ամսեանն մերձենալ Զաքարիայի առ կինն անպատշաճ էր, վասն զի նա էր քահանայապետ տարւոյն, և մեծ տօնն տաղաւարահարաց առաջի կայր, և ամենայն Իսրայէլ անդ էր ժողովեալ. և զի եւթն օր տօնելոց էին զտաղաւարահարացն, և զի անմարթ էր քահանայապետին թողուլ զժողովուրդն և երթալ ի տուն իւր, նա աւանիկ զի ի բացեայ էր բնակութիւնն նորա և ոչ չերուսաղէմ. վկայէ այսմիկ սուրբ ւսւետարանիչն Ղուկաս և ասէ. եթէ «ժողովուրդն ակն ունէր Զաքարիայի և զարմանային ընդ յամելն նորա ի տաճարին։ Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտամանն նորա, գնաց ի տուն իւր»։ Եւ դարձեալ ասէ՝ թէ «Յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբէթ կին նորա։ Եւ չայտնապէս ցուցանէ զայս, եթէ ստուգիւ չետ կատարման աւուրցն տօնակատացն եղև մերձաւորութիւնն և վասն առաւել հաստատութեան բանիցն երկիցս կրկնէ՝ թէ «կատարեալ զաւուրս պաշտամանն»։ Եւ դարձեալ թէ «Յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբէթ կինն նորա»։ Եւ ով ոչ գիտէ զայս՝ որ միտս ունին, թէ մինչ ժողովրդեանն հրամայէ սրբել և պաշտել ոչ միայն զտօնին՝ և չաղագս տօնին զամսամուտն և զառաջիկայ աւուրն Նրնկոյնն, ապա զիա՞րդ ի մէջ զլխաւոր տօնիցն քահանայապետն թողոյր զժողովուրդն և երթայր ի տուն և մերձենայր ի կին, նա աւանիկ չայտնապէս իսկ ասէ աւետարանիչն՝ թէ «Յարուցեալ Մարիամ գնաց ի լեռնակողմն ի քաղաքն Յուդայ և եմուտ ի տուն Զաքարիայ». և արդ ի նոյն աւուրս տօնին մերձենայր։ Այլ իմասցուք, զի չայտ իսկ եղև ի տօն թշրին ամսոյ պապանձումն Զաքարիայի, որ է քսան և հինգ սեպտեմբերի ամսոյ և քսան և երկուս ի թշրին ամսոյ մերձաւորութիւնն և չղութիւնն եղիսաբեթի։ Եւ արդ՝ թուեալ զաւուրս վեց ամսոյն՝ հարիւր և ութսուն, և ցուցանէ զվեշտասան ամսոյ, որ լինի վեց ապրիլ ըստ Հռոմայեցւոցն, յոր եղեն աւետիք սրբոյ կուսին Մարիամու։ Եւ թուեալ տասնամսեայ աւուրց՝ որ անդրանկածնացն կատարի, երկերիւր ութսուն և վեց օր, քսան և մէկ ի սեպտեմբերի, որ է վեց ի յունվարի ըստ Հռոմայեցւոցն։ Արդ՝ մեք ի չայս եմք հաստատեալք և անխախտելի կամք մինչև չաւիտեան աներկմիտ հաւատով։

«Դարձեալ ասասցուք ձեզ և չաղագս պահոցն առաջաւորացն, վասն զի բազում հակառակութիւնք և հերձուածք և մաքառումն ունին Հռոմք ընդ աղգս մեր։ Արդ՝ չաղագս՝ պահոցն առաջաւորաց ոչ ինչ միջոց իցէ.

*ասված գրքում։ Արդ, Զաքարիայի պապանձումը թշրին ամսում էր. քանզի հենց այդ ամիսն է յոթերորդը, դա է քավության օրը, երբ քահանայապետը **մուտք** է գործում սրբությունն սրբոցը, այն էլ, ինչպես ասում է Պողոս [առաքյալը], տարին մեկ անգամ։ Բայց այդ օրը չէր պատշաճում, որ Զաքարիան հարաբերություն ունենա իր կնոջ հետ, քանզի այդ տարվա քահանայապետը հենց ինքն էր։ Առջևում էր տաղավարահանաց տոնը, ողջ Իսրայելը այնտեղ էր հավաքված։ Տաղավարահանաց տոնը պետք էր նշվեր յոթ օր, և քահանայապետին անհարմար էր թողնել ժողովուրդը ու գնալ իր տունը. նրա բնակության տեղը բացօթյա էր և ոչ թե Երուսաղեմում։ Այդ մասին է վկայում ավետարանիչ սուրբ Ղուկասը, որ ասում է. «Ժողովուրդը Զաքարիային էր սպասում և զարմանում էր նրա՝ տաճարում երկար մնալու վրա. երբ լրացան նրա պաշտոնի օրերը, նա իր տունը գնաց»[252]։ Ապա նա ասում է. «Այդ օրերից հետո հղիացավ Եղիսաբեթը՝ նրա կինը»։ Սա պարզ ցույց է տալիս, որ արդարև [Զաքարիան] մերձեցավ իր [կնոջ] տոնական օրերի լրանալուց հետո, և ասածն ավելի հաստատ դարձնելու համար կրկին անգամ ասում է. «Պաշտոնի օրերը լրացնելուց հետո»։ Դարձյալ, թե «Այդ օրերից հետո հղիացավ Եղիսաբեթը՝ նրա կինը»։ Ո՞ր բանական էակի համար պարզ չէ, որ այն ժամանակ, երբ [աստված] հրաման է տալիս ժողովրդին սրբվել և նշել միայն տոնի օրը, ապա և տոնի ամսամուտը և առաջիկա երրորդ տոնը, ինչպե՞ս կարող էր երկու գլխավոր տոների միջև քահանայապետը թողնել ժողովրդին, գնալ տուն և մերձենալ կնոջը։ Ավետարանիչը պարզ և հստակ ասում է. «Մարիամը ելավ գնաց լեռնակողմը, Հուդայի քաղաքը և մտավ Զաքարիայի տունը»։ Դա այդ տոնի օրերին էր։ Միանգամայն պարզ է, որ Զաքարիայի պապանձումը տեղի ունեցավ թշրին ամսի տասին, որ համապատասխանում է սեպտեմբեր ամսի քսանհինգին, իսկ [Զաքարիան] մերձեցավ Եղիսաբեթին, և վերջինս հղիացավ թշրին ամսի քսաներկուսին։ Արդ, դումարելով վեց ամսվա հարյուր ութսուն օրը, ստանում ենք ամսի տասնվեցը, այն է՝ հռոմայեցիների ապրիլ ամսի վեցը, երբ, ահա, տեղի ունեցավ սուրբ կույս Մարիամի ավետումը։ Սրան գումարելով անդրանկածնության համար [պահանջվող] տասը ամիսը՝ երկու հարյուր ութսունվեց օր, ստացվում է թիբեթ[253] ամսի քսանմեկը, որ համապատասխանում է հռոմայեցիների հունվար ամսի վեցին։ Ահա, մենք հաստատ դա ենք ընդունում և անսասան հավատով կմնանք հավիտյան։*

Այժմ կխոսենք նաև առաջավորաց պահքի մասին, քանզի այդ հարցում հռոմները բազում հակառակություն, երկպառակություն և վեճ ունեն մեր ժողովրդի հետ։ Առաջավորաց պահքը [էությամբ] չի տար-

քանզի ըստ տկարութեան ազգի բնութեան առաջնորդքն զատեցին ի քառասնորդացն, վասն զի սրբութեամբ հրամայեցին պահել և ի բերոյ որթոյ մինչև ցկնջիւռն որոշեցին, թող թէ ի գինի կամ ի ձէթ. վասն զի ոչ զօրէին պահել՝ հրամայեցին հանդիստ տալ միջոցն: Եւ պատճառ պահոցն այսքան բաւական է, թէպէտ և ունի այլ միտս բազում՝ զոր և ի հնումն. զի յաղագս հինդ զգայութեանցն յանցանելն առաջին մարդոյն որ ի դրախտին՝ հինգօրեայ սահմանեցաւ սկսեալ պահք, իբրև թէ դայեակ է սկիզբն պահոց քրիստոնէութեանս մերում և աստիճան ի բարձրագոյնսն՝ որ ի քառասնորդսն. այսպէս և Մովսէս յանապատին բարեկենդանացուցանէր զժողովուրդն առեալ հրաման ի Տեառնէ. նոյնպէս և քաղաքն Նինուէացւոցն հինգօրեայ պահօքն եղեն բժշկեալք և լինէր դադարումն կործանմանն: Սոյնպէս և Կիւրեղ, որ եկաց հայրապետ յԵրուսաղէմ, հրամայեաց հինգօրեայ պահօքն զգաստանալ նախ քան զմկրտիլն: Այլև բազում պատճառ կայ, զորս աւելորդ համարեցայ աստ գրով բանագծել և տաղտկալիս առնել մտաց. պահքն ոչինչ թիւրութիւն ունի առ հաւատսն, այլ մանաւանդ առ ի լնումն է հաւատոցն և ոչ է նա մեղադրելի վասն հինգօրեայ պահոցն պանրուտուին. լաւ էր թէ զայն բնաւ ոչ ուտէիք. բայց ի ծանի աւուրն զատրատելատն զսուրբ Սարգիս յիշատակեմք զճշմարիտ մարտիրոսն, որ վկայեցաւ յորդւոցն Հագարու՝ յաշխարհն Բագևանդի, յորդւոցն Մահմետի ի յաւուրս Թէոդոսի թագաւորին. և ոչ ասի սա իշապանն Սարգիս աստուածուրացն՝ այն որ շանն տայր երկրպագանել. իսկ մեք Քրիստոնեայքս զսուրբն Սարգիս զճշմարիտ մարտիրոսն յիշատակեմք. այլ յայդ մասին մի՛ լիցի ինչ հերձուած և կամ գայթակղութիւն: Եւ արդ՝ ճշմարիտ խոստովանութեամբ և համաուօտաբար այսքան իմացիք և զորս վասն առաջաւորաց պահոցն՝ զորս ի վերոյ գրով աւանդեցաք, որ ունիմք և եմք և կամք հաստատուն մինչև ցայժմ և մինչև ցյաւիտեան, որ է ի ներկայումս և յապառնիսն. և Տէր՝ Տէր Յիսուս եղիցի ընդ իւրում ծառայիցդ, և նմա փառք և երկրպագութիւն յԵկեղեցւոյ սրբոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն»:

Եւ այսպէս խօսեցաւ Գագիկ արքայ Հայոց դէմ յանդիման թագաւորին Տուկծին և ի մէջ ամենայն հռետոր վարդապետաց տանն Յունաց ի քաղաքն Կոստանդնուպօլիս: Եւ յոյժ հաճեալ թագաւորն Տուկիծ և ամենայն իմաստասէրքն, որ նստէին ի ճեմարանին, և հիանային ընդ

բերվում [մյուս պահքից]։ Քահանայապետները, ելնելով մարդկային բնության տկարությունից, [առաջավորաց պահքը] բաժանեցին քառասնորդաց պահքից, քանզի հրամայել էին սրբությամբ ծոմ պահել։ Արդ, նրանք սահմանել էին որթատունկի պտղաբերելու սկզբից մինչև քննջոլթի հասունանալը չօգտագործել ո՛չ դինի, ո՛չ ձեթ։ Բայց որովհետև մարդիկ ի վիճակի չէին [այդքան երկար] ծոմ պահել, կարգադրեցին հանգստի միջոց տալ։ Այսքանը բավական է [առաջավորաց] պահքի առաջացման պատճառն իմանալու համար, թեև ա՛յս հնում ունեցել է բազում այլ բացատրություններ ևս, ինչպես, օրինակ, թե առաջին մարդուն դրախտում իր հինգ զգայարանների թվով սահմանվեց հնգօրյա պահքով սկսել, որ իբրև թե դա է մեր՝ քրիստոնյաներիս, պահքի սկիզբը, որից աստիճանաբար պիտի հասնել բարձրագույնին՝ քառասնորդաց պահքին։ Մովսեսն էլ Տիրոջից հրաման ստացավ հենց այդպես բարեկենդան տալ ժողովրդին։ Նինվե քաղաքի բնակիչներն էլ հնգօրյա պահեցողությամբ փրկվեցին, և կործանումը վերջ գտավ։ Նմանապես և Կյուրեղը, որ Երուսաղեմի հայրապետ դարձավ, հրաման տվեց, նախքան մկրտվելը, հնգօրյա պահեցողությամբ ղգաստանալ։ Բազմաթիվ բացատրություններ կան, որ ավելորդ համարեցի այստեղ գրի առնել և մարդկանց ձանձրացնել։ Պահեցողությունը հավատքին ոչ մի վնաս չի հասցնում, ընդհակառակը, լրացնում է այն։ Դատապարտելի չէ նա, ով պանրուտվի հնգօրյա պահքն է պահում, թեև լավ կլիներ, եթե այդ [ժամանակ] ամենևին չուտեինք [պանիր]։ Ինչ վերաբերում է սուրբ Սարգիս Զորավարին, որի տոնը մենք նշում ենք, ապա մենք նկատի ունենք ճշմարիտ մարտիրոսին, որ Թեոդոս կայսեր օրոք Բագրևանդ գավառում նահատակվեց Հագարի որդիների՝ Մահմեդի որդիների ձեռքով, և ոչ թե աստվածուրաց Սարգիս իշապանին, որ շանն էր երկրպագում։ Մենք՝ քրիստոնյաներս, ճշմարիտ մարտիրոս սուրբ Սարգսի հիշատակն ենք նշում և այդ հարցում թող չլինի որևէ վեճ կամ թյուրիմացություն։ Ահա, ճշմարիտ խոստովանությամբ, համա՜ոտ գծերով թող այսքանն իմացվի և առաջավորաց պահքի մասին, որ վերևում գրի առանք. մենք այդպես ենք դավանում և այդ հարցում կանգնած ենք անսասան այժմ և միշտ և հավիտյանս։ Թող տեր Հիսուս Քրիստոսը իր ծառաների հետ լինի։ Նրան փառք և երկրպագություն սուրբ եկեղեցու կողմից։ Օրհնյալ է նա հավիտյանս, ամեն»։

Կոստանդնուպոլիս քաղաքում ահա այսպես խոսեց հայոց Գագիկ արքան Տուկիծ կայսեր դեմ-հանդիման, հունաց երկրի բոլոր հռետոր վարդապետների ներկայությամբ։ Տուկիծ կայսեր և ճեմարանում ներկա գտնվող բոլոր իմաստասերներին դա շատ դուր եկավ, նրանք հիա-

կորուստիւն բանիցն և ընդ հաստատութիւն շնորհացն. և յայնժամ արարին սէր և խաղաղութիւն ընդ որդւոց թագաւորացն Հայոց և թողեալ զաւելախօսութիւն բանիցն և եղեն յամօթ ամենայն չարայոյզքն Հայոց, վասն զի ամենայն դասք վարդապետացն Հոռոմոց ոչ կարացին արատ և կամ բիծ երկբայութեան գտանել հերձուածոյ ի հաւատոյ խոստովանութիւնսն, զորս գրով Հոռոմոց խօսեցաւ Գագիկ արքայ Հայոց։ Նաև այլ բազում բանք են նորա անպարտելի բանիւք, զորս արար դիմադրութիւն առ ի յանդիմանութիւն տանն Յունաց. զորս տեսեալ թագաւորին և յոյժ հաճոյացեալ, վասն զի լի իսկ էր բանիւք ամենայն ուղղափառութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ՝ որ ի Քրիստոս Յիսուս։ Եւ արար թագաւորն Տուկիծ սէր և ընդունելութիւն նոցա և շնորհեաց բազում պարգևս Գագկայ և Ատոմայ և Ապուսահլի և այլոց իշխանացն։ Եւ փառաւորեցաւ անունն Գագկայ ընդ ամենայն վարդապետաց տանն Հայոց, որք երևեցան յայնմ ժամանակին լուսաւորք. և այս են անունք վարդապետացն. Տիրանն Կապանեցին, և Սայլահանն և կամ Լասդիվերցին, և Ատոմ Անձաւացին, Անանէ և Գրիգոր Նարեկացիքն, Սարգիս Սևանեցին, Յովսէփ Ընծայեցին, Դէորգ Ուծեցին, Դէոսկորոս Սանահնեցին, Անանէ Հաղբատացին, Յակորոս Քարահատայ որդին, Անտօն և Տիմոթէոս, Յովհաննէս՝ որ անուանեցաւ Կոզեռն, Պօղոս և Յովսէփ Դէորգ վարդապետ, և Թամռեցին, և Պարկճակ և այլք այսպիսիք անյաղթք՝ որք կային լցեալք աստուածային շնորհօքն, որք երևեցան յաշխարհս Հայոց յայսմ ժամանակիս։ Իսկ թագաւորն Գագիկ նմանեալ էր շնորհաց նոցա։

Եւ յայնժամ ելեալ Գագիկ յերեսաց թագաւորին, և մեծաւ փառաւորութեամբ գնացին յաշխարհն իւրեանց։ Եւ գայր խաղայր Գագիկ շահըն և գայր հասանէր մինչև ի Կեսարիա քաղաք Դամրաց. և որպէս էր յառաջագոյն զայրացեալ ընդ Յունաց՝ և յարձակեցաւ ի վերայ մետրապօլտին Կեսարու մեծաւ սրտմտութեամբ, որում անուն ասէին Մարկոս, վասն զի էր յոյժ հերձուածող չար և պիղծ հերետիկոսն Մարկոս. և այնչափ լրբեալ եղև անօրէնն Մարկոս, մինչև իւր շանն անուն Արմէն կոչէր։ Եւ յառաջ ժամանակաց զայս ամենայն լուեալ էր Գագիկ արքայ Հայոց և էր յոյժ զայրացեալ ցասմամբ, բայց ի մէջ Հոռոմոց էր, ոչ ինչ կարէր առնել. և էր մետրապօլիտն անուանի և մեծ և ահարկու ամենայն տանն Յունաց, բայց հայհոյիչ էր յոյժ ազգիս Հայոց և ամենայն շան Արմէն կոչէր. նաև այլ անպատմելի սուգ էած ազգիս Հայոց՝ յորժամ լուաւ եթէ կամի թագաւորն զորդիս թագաւորացն Հոռոմ կնքել։ Եւ ընդ որ գայր Գագիկ յամենայն իջևանսն, հրամայեաց ամենայն զօրացն Հայոց խայտառակել զփառաւոր կանայս Հոռոմոց և այնու նա-

ցան Գագիկի համոզիչ խոսքերով և հաստատուն դիտելիքներով։ Դրա վրա նրանք սեր և խաղաղություն հաստատեցին հայոց թագավորազունների հետ և հրաժարվեցին շաղակրատությունից։ Հայոց բոլոր խառնակիչները խայտառակվեցին, քանզի հոռոմոց վարդապետների ամբողջ դասը չկարողացավ [հայոց] հավատո խոստովանության մեջ հերետիկոսական արատ կամ բիծ, որևէ հակասություն գտնել, խոստովանություն, որ հոռոմներին գրավոր ներկայացրեց հայոց արքա Գագիկը։ Նրա բազում այլ ասածները ևս, որ նա հակադրեց ի քննադատություն հունաց, անառարկելի մնացին։ Կայսրը շատ գոհ մնաց, քանզի [Գագիկի] ասածները հագեցված էին կատարյալ ուղղափառությամբ և ճշմարիտ խոստովանությամբ ի Հիսուս Քրիստոս։ Տուկիծ կայսրը բարեկամություն հաստատեց նրանց հետ, հյուրընկալեց նրանց և Գագիկին, Ատոմին և Ապուսահլին ու մյուս իշխաններին բազում նվերներ շնորհեց։ Գագիկի անունը փառավորվեց հայոց երկրում այն ժամանակ հանդես եկած այլ լուսավոր վարդապետների [անվան] հետ, որոնք էին. Տիրան Կապանեցի, Սայլահան կամ Լաստիվերցի, Ատոմ Անձավացի, Անանե և Գրիգոր Նարեկացիներ, Սարգիս Սևանեցի, Հովսեփ Ընծայեցի, Գևորգ Ուծեցի, Դիոսկորոս Սանահնեցի, Անանե Հաղբատացի, Քարահատի որդի Հակոբոս, Անտոն և Տիմոթեոս, Հովհաննես՝ Կոգեռն մականվանյալը, Պողոս և Հովսեփ, Գևորգ վարդապետ Եվթամռեցի, Պարկճակ և սրանց նման այլ անպարտելիներ, ովքեր լի էին աստծո շնորհքով և հանդես եկան հայոց երկրում այդ ժամանակ։ Գագիկ թագավորը հենց նրանց պես շնորհալի էր։

Դրանից հետո Գագիկն [ու հայոց իշխանները] հեռացան կայսեր մոտից և առոք-փառոք գնացին իրենց երկիրը։ Շահնշահ Գագիկը ելավ գնաց և հասավ Գամիրքի[254] Կեսարիա քաղաքը։ Նա դեռ վաղուց շատ էր զայրացած հույների դեմ, այդ պատճառով ցասումնալից հարձակվեց Կեսարիայի մետրոպոլիտի վրա, որի անունը Մարկոս էր, քանզի այս չար ու պիղծ հերետիկոսը [հայերին] շատ էր անարգում։ Անօրենն այն աստիճան էր լրբացել, որ նույնիսկ իր շան անունը Արմեն էր դրել։ Հայոց արքա Գագիկը վաղօրոք լսել էր այդ բոլորի մասին և շատ զայրացել, բայց լինելով հոռոմոց շրջապատում, ոչինչ չէր կարողանում անել։ Մետրոպոլիտը համայն հունաց երկրում անուն էր հանել, նա մեծ էր և ահարկու, բայց նա շատ էր անարգում մեր հայ ազգը և բոլոր շներին Արմեն էր անվանում։ Սա երբ իմացավ, որ կայսրը ուզում է հոռոմ մկրտել [հայոց] թագավորազուններին, աննկարագրելի փորձանք բերեց հայոց գլխին։ Գագիկը որտեղ որ իշխաներ, հայոց բոլոր զինվորներին հրաման էր տալիս խայտառակել հոռոմոց երե-

խաւեաց զնոսա, վասն զի խորհեցաւ այլ ոչ մտանել բնաւ ի կոստանդնուպօլիս, այլ խորհեցաւ զնալ առ Աբասլան սուլտանն Պարսից և տիրանալ աթոռոյ թագաւորութեան տանն Հայոց, զի բազում անգամ կուշէր զԴագիկ սուլտանն, և նա յաղագս քրիստոնէական հաւատոյ արգելեալ լինէր: Իսկ Դագիկ յորժամ մերձ եղև առ մետրապօլիտան, կամեցաւ զիջանիս առ նա առնել. և զնացին նուիրակապետքն և ասեն ընդ հերետիկոսն Մարկոս. «Դագիկ արքայ Հայոց առ քեզ կամի իջանել այսօր»: Եւ լուեալ կիւռ Մարկոս՝ ուրախ եղև և հրամայեաց զարդարել զամենայն տունն իւր և ակամայ և ոչ կամայ ելանէր ընդդէմ Դագկայ հանդերձ քահանայիւք և մեծաւ փառաւորութեամբ բերեալ իջուցանէր զնա ի տունն իւր. և արար Մարկոս ուրախութիւն մեծ: Բայց Դագիկ կայր յոյժ զայրացեալ զօրն ամենայն և իբրև սկսաւ ուրախանալ զդինեաւն, յայնժամ սկսաւ ասել Դագիկ ցկիւռ Մարկոս, եթէ «Լուեալ եմ, եթէ զօրաւոր շուն կայ քո և կամիմք տեսանել զնա»: Եւ դիտացեալ Մարկոսն եթէ իւր կամի ուզել զնա՝ և զանց արար զբանիւն. և յորժամ կրկնեաց զբանն Դագիկ, կոչեցին զշունն. և նա ոչ դայր, քանզի զանունն ոչ համարձակեցան ձայնել զԱրմէնն. և ասէ Դագիկ. «Զիւր անունն ձայնեցէք՝ որ գայ»: Եւ յայնժամ Մարկոս յաղթահարեալ ի դինւոյն՝ ձայն տուեալ շանն և ասէր. «Արմէ՛ն, Արմէ՛ն». և եկեալ շունն նմանեալ առիւծու. և տեսեալ Դագիկ ասէ. «Արմէ՞ն կոչի շունս այս». և ամաչեալ յոյժ Մարկոս՝ ասէ. «Մանուկ է, վասն այնր կոչեմք իւր Արմէն»: Եւ ասէ Դագիկ. «Այժմ տեսանեմք թէ ո՛վ է մանուկն, Արմէն՝ եթէ Հոռոմն»: Եւ մեծ քուրձ մի պատրաստական ունէին. և ակնարկեաց Դագիկ, և յայնժամ հետևակքն պատեցին զշունն և մեծաւ աշխատութեամբ արկանէին զնա ի քուրձն: Եւ տեսեալ կիւռ Մարկոս և դիտացեալ՝ եթէ զշունն կամին ընդ իւրեանց տանել, սկսաւ բարկանալ և մեծամտել ի վերայ պաշտօնէիցն. և ժամ տուեալ Դագիկ և ձեռամբ արարեալ սպասաւորացն, և յայնժամ ընդ չորից կողմանց պատեցին զանօրէնն Մարկոս և պաշարեալ զնա մեծաւ բռնութեամբ և չարչարանօք արկանէին զնա ի քուրձն առ Արմէն կոչեցեալն. և ասէր Դագիկ եթէ. «Տեսանեմք եթէ ով է զօրաւոր և մանուկ՝ Հոռոմ մետրապօլի՞տն՝ եթէ շունն կոչեցեալ ի նմանէ Արմէն»: Եւ հրամայեաց Դագիկ ուժգին սաստկապէս հարկանել զշունն. և նորա զայրացեալ յարձակէր ի վերայ Մարկոսին և լափէր զնա առատապի. և զմեծ մասն աւուրն այնպէս հարկանէին զշունն, և նա բարկութեամբ հեղոյր զարիւնն պիղծ հերետիկոսին Մարկոսի. և ձայն ուժգին և աղաղակ բազում ելանէր ի Մարկոսէն. և այսպիսի օրինակաւ պատերազմ ահաւոր կայր յատակս քրձին և կրճտումն ատամանց. և հառաչումն սրտին ելանէր ի խորոց քրձէն. և այսպէս

վելի կանանց։ Նա նրանց անարդում էր, քանզի որոշել էր այլևս ոտք չդնել Կոստանդնուպոլիս, այլ գնալ պարսից սուլթան Աբասլանի մոտ և տիրանալ հայոց երկրի թագավորական գահին։ Սուլթանը բազմիցս էր հրավիրել Գագիկին, բայց քրիստոնեական հավատքը թույլ չէր տալիս գնալ։ Գագիկը երբ մոտեցավ մետրոպոլիտին, ցանկություն հայտնեց նրա մոտ իջևանել։ Գագիկի ներկայացուցիչները գնացին և, դիմելով հերետիկոս Մարկոսին, ասացին. «Հայոց Գագիկ արքան ուզում է այսօր քեզ մոտ իջևանել»։ Կիր Մարկոսը, լսելով այդ, ուրախացավ և հրաման տվեց իր ամբողջ տունը զարդարել, կամ-ակամա, քահանաներով հանդերձ, գնաց Գագիկին ընդառաջ և մեծ պատիվներով նրան բերեց տեղավորեց իր տանը։ Մարկոսը մեծ ճաշկերույթ տվեց, բայց Գագիկը ամբողջ օրը շատ էր զայրացած։ Երբ գինու ազդեցության տակ սկսեց ուրախանալ, Գագիկն ասաց Կիր Մարկոսին. «Լսել եմ, որ դու մի զորեղ շուն ունես, մենք ուզում ենք նրան տեսնել»։ Մարկոսը գլխի ընկավ, թե ինչի համար է նա այդ բանը կամենում և չլսելու տվեց։ Երբ Գագիկն իր ասածը կրկնեց, կանչեցին շանը, բայց նա չէր գալիս, որովհետև չէին համարձակվում Արմեն անունով կանչել։ Գագիկն ասաց. «Անունը տվեք, որ գա»։ Այն ժամանակ Մարկոսը գինու ազդեցության տակ շանը կանչեց և ասաց. «Արմե՛ն, Արմե՛ն»։ Շունը եկավ. նա առյուծի էր նման։ Գագիկը, տեսնելով նրան, ասաց. «Այս շան անունն Արմե՞ն է»։ Մարկոսը շատ ամաչեց և ասաց. «Քաջ է, դրա համար է, որ Արմեն ենք ասում նրան»։ Գագիկը պատասխանեց. «Հիմի կտեսնենք ով է քաջ, Արմե՞նը, թե՞ հոռոմը»։ Նրանք պատրաստել էին մի պարկ, և Գագիկի ազդանշանով թիկնապահները շրջապատեցին շանը և մեծ դժվարությամբ գցեցին պարկի մեջ։ Կիր[255] Մարկոսը, կարծելով, որ ուզում են շանը իրենց հետ տանել, զայրացավ և սկսեց գոռալ սպասավորների վրա։ Գագիկը ժպտաց, ձեռքով նշան արեց սպասավորներին, որոնք շրջապատեցին անօրեն Մարկոսին և բռնությամբ ու քաշքշելով պարկի մեջ գցեցին, Արմեն կոչեցյալի մոտ։ Գագիկն ասաց. «Տեսնենք ով է ուժեղ և քաջ, հոռոմ մետրոպոլի՞տը, թե՞ նրա կողմից Արմեն կոչված շունը»։ Գագիկը հրաման տվեց սաստիկ ծեծել շանը, որը կատաղած հարձակվեց Մարկոսի վրա և ատամներով բզկտեց նրան։ Օրվա մեծ մասը այդպես ծեծում էին շանը, իսկ նա գազազած թափում էր պիղծ հերետիկոս Մարկոսի արյունը։ Մարկոսն ուժեղ ու աղիողորմ աղաղակում էր։ Ահա, այսպիսի ահավոր պատերազմ էր գնում պարկի մեջ և ատամների կրճտոց ու սրտի հառաչ էր դուրս գալիս պարկից, այսպիսի տանջանքներով սատակեց չար և պիղծ անար-

շարեաւ սաստակեցաւ չար և սիրտ հայհոյիչն և նոյն կերակուր շանց։ Եւ յայնժամ հրամայեաց Գագիկ առար հարկանել զամենայն տունն Նորա, վասն զի էր մեծատուն և անուանի յոյժ. և անհամար դանձս ոսկւոյ և արծաթոյ առեալ, և հօտս ոչխարաց էին Նորա վեց հազար և լուծք դոմշի քառասուն և եղանց՝ քսան, և զայս ամենայն հարուածս արասլեալ՝ գնաց ի տուն իւր բազմութեամբ ձիոյ և ջորւոյ։ Արդ՝ զայս այսպէս գործեաց Գագիկ ի մէջ Հոռոմոց, զոր ոչ այլ ոք համարձակեցաւ գործել ոչ յառաջն և ոչ ցմին. և այլ ոչ ևս եաւ ի Կոստանդնուպօլիս և ոչ գնաց ի կոչն Հոռոմոց։

Եւ էր յայսմ աւուրս Գագիկ արքայ որդի Աբասայ Կարցւոյ այր իմաստասէր և լցեալ ամենայն շնորհօք փիլիսոփայականայն և հոռոմոական արուեստիւքն. ընդ վարդապետսն Հոռոմոց ճեմէր և յորժամ մտանէր ի Կոստանդնուպօլիս՝ ի յամբիոնն նստէր ի մէջ սրբոյն Սոփեայ. և բովանդակ դիտէր զհին և զնոր կտակարանսն Աստուծոյ և էր յոյժ ճարտարաբան։ Նաև Գրիգոր Պալհաւունին՝ որդին Վասակայ էր անպարտելի շնորհօք լցեալ և զարմանալի էր սա յամենայն պատասխանիսն ընդդէմ Հոռոմոց, այր քաջակիրթ և ամենայն հմտութեանց հետևեալ և բովանդակ հասեալ սորա ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ. և սա ի յամբիոնն նստէր ընդ իմաստասէրսն ի մէջ սրբոյն Սոփեայ և խօսէր ընդ վարդապետացն Հոռոմոց, և ի կարգի վարդապետացն էր սա ազգիս Հայոց։

Ատրներսէհ ի Բագրեւանդ գաւառէ իշխան Հայոց, և սա էր այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն և իմաստասէր, ուսեալ ի մեծ Արգինայ հասեալ ամենայն շնորհաց աստուածեղէն կտակարանաց և կարող էր կալ ի դիմի ամենայն իմաստնոցն Հոռոմոց հզօր գիտութեամբ և զարմանալի ատենախօսութեամբ, նմանեալ Գագկայ և այլոց իմաստասիրացն Հայոց, զոր գրեցաք։

Արդ՝ յաւուրս Գագկայ շահնշահի՝ որդւոյ Աշոտոյ թագաւորին Հայոց եղև ահաւոր և զարմանալի նշան Աստուծոյ վասն սուրբ խորհրդոյն ի վանքն, որ կոչի Պիղու, զոր շինեաց Գագիկ արքայ։ Արդ յաւուր Պենտէկոստէին մինչ զսուրբ պատարագն մատուցանէին յեկեղեցին Աստուծոյ, մասն ինչ ի սուրբ խորհրդոյն ընկէց ժամարարն առաջի սրբոյ սեղանոյն. և յերրորդում աւուրն տեսանէին տեսիլ երկու արժանաւորք ի ճգնաւորացն՝ և եկեալ ի տեղի աղօթիցն յառաջ քան զհարցն, և ասէր առաջինն՝ թէ «Տեսանէի ի տեսլեան գիշերոյս կանթեղն՝ որ կայր ի գումբէթ տաճարին՝ անկանէր առաջի սրբոյ սեղանոյ Աստուծոյ, և լոյսն անշիջանելի մնաց ի նմա»։ Դարձեալ միւսն այսպէս ասէր. «Եւ ես իսկ տեսանէի. և ահա աստղ մի մեծ և զարմանալի ի բարձրութենէ երկնից

գիշը, դառնալով շան ճարակ։ Այնուհետև Գագիկը հրամայեց ավարի մատնել [Մարկոսի] տունը. նա մեծահարուստ էր և շատ անվանի։ Հափշտակելով ոսկու և արծաթի անհամար գանձեր, նրա վեց հազար ոչխարը, քառասուն լուծ գոմեշը, քսան լուծ եզը, Գագիկը ձիերի և ջորիների մեծ երամակով վերադարձավ իր տունը։ Ահա, Գագիկի հոռոմոց մեջ կատարածը, մի բան, որ ոչ նախկինում, ոչ էլ հետագայում որևէ մեկը համարձակվեց անել։ Նա այլևս ոտք չդրեց Կոստանդնուպոլիս, ոչ էլ ուշադրություն դարձրեց հոռոմոց կոչին։

Այդ ժամանակներում էր ապրում Աբաս Կարսեցու որդի Գագիկ արքան, իմաստասեր, փիլիսոփայական և հռետորական արվեստին քաջագիտակ մի մարդ։ Նա բանավիճում էր հոռոմ վարդապետների հետ, իսկ երբ լինում էր Կոստանդնուպոլսում, Սուրբ Սոֆիայի ատյանն էր բարձրանում։ Նա կատարելապես գիտակ էր աստծո Հին և Նոր Կտակարաններին։ Նա շատ ճարտարախոս մարդ էր։ Նմանապես և Գրիգոր Պահլավունին[256] Վասակի որդին, որը նույնպես մեծ գիտելիքների տեր մարդ էր. նրա՝ հոռոմոց տված բոլոր պատասխանները հիացմունք էին պատճառում։ Նա անչափ կրթված, բոլոր գիտություններն ուսումնասիրած, աստծո Հին և Նոր Կտակարանները կատարելապես յուրացրած մարդ էր։ Նա իմաստասերների հետ Սուրբ Սոֆիայի ատյանում էր նստում և բանավիճում հոռոմ վարդապետների հետ։ Սա ևս դասվում է հայ ժողովրդի վարդապետների շարքին։ [Այդ ժամանակներում էր և] Աւրներսեհ հայ իշխանը՝ Բագրեւանդ գավառից։ Նա ևս քաջագիտակ, շատ տաղանդավոր, իսկական իմաստասեր մարդ էր, ուսանել էր մեծ Արգինայում և սովորել աստվածային Կտակարանները։ Նա իր կատարյալ գիտելիքներով, հիանալի ճարտասանությամբ կարող էր հանդես գալ հոռոմոց բոլոր իմաստունների դեմ։ Նա նման էր Գագիկին և հայոց մյուս իմաստասերներին, որոնց մասին գրեցինք։

Հայոց Աշոտ թագավորի որդու՝ շահնշահ Գագիկի օրոք, նրա կառուցած Պիզու կոչվող վանքում, աստվածային ահավոր և զարմանալի հրաշք կատարվեց սուրբ խորհրդի վրա։ Ահա, Պենտեկոստեի օրը, երբ աստծո եկեղեցում սուրբ պատարագ էր մատուցվում, սուրբ խորհրդից մի փոքրիկ մասունք ժամարարը գցեց սուրբ սեղանի առջև։ Երրորդ օրը երկու արժանավոր ճգնավորներ երազ տեսան և քահանաներից առաջ աղոթարան եկան։ Մեկն ասաց մյուսին. «Գիշերը երազ տեսա, թե տաճարի գմբեթից կախված կանթեղն ընկավ աստծո սուրբ սեղանի առջև, բայց նրա լույսը չհանգավ»։ Իսկ մյուսն ասաց այսպես. «Ես էլ երազ տեսա, թե մի մեծ և զարմանալի աստղ երկնքից ընկավ աստծո սուրբ

անկեալ եղև առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ, և լոյսն առաւել ևս բորբոքէր ի նմա»: Եւ հիացեալ ամենեցուն ընդ տեսիլն. և յայնժամ հայր վանացն պիտացեալ հոգւովն՝ և ասէր. «Տեսէք՝ և ահա անկեալ կայ մասն ի սուրբ խորհրդոյն». և նոյն ժամայն լուսեալ մոմեղէնս և հանդերձ խնկօք հասանէին ի տեղին. և ոչ էին աւել ածեալ եկեղեցւոյն զայնքան աւուրսն. իսկ յորժամ ելանէին ի բեմն՝ գտանէին զմասն սուրբ խորհրդոյն անարատ առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ, և առեալ գոհացան զԱստուծոյ մերոյ զՏեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. և բազումք հաստատեցան ի հաւատս ուղղափառութեան և յայնմ օրէ ծանեան եթէ խորհուրդս այս երկնային է և աստուածային՝ և ճշմարիտ սա է մարմին Որդւոյն Աստուծոյ:

Իսկ ի փոխել թուականութենանս Հայոց յամս ՇԺԵ երևեցաւ աստղ մի դիսաւոր յարևելից կողմանէ և յարևմուտս ընթացեալ. և կացեալ նորա ամիս մի՝ և եղև աներևոյթ. և յետ բազում աւուրց երևեցաւ յարևմուտս կոյս ի յերկոյէն, զոր բազմաց տեսեալ ասէին՝ եթէ այս այն դիսաւոր աստղն էր, որ երևեցաւ յարևելս: Յայսմ ժամանակիս ելանէին այլազգիքն և ապականեալ աւերէին զամենայն աշխարհն Հայոց և մաշեցին զամենայն հաւատացեալս ի սուր և ի գերութիւն:

Յայսմ ժամանակիս զօրաժողով արար ամիրայն Պարսից՝ որ ասի Օշէն, և յապականութիւն դարձոյց զրազում գաւառս, և արեան ջաղխիս արարեալ զդաստս հաւատացելոցն Քրիստոսի. և բազում սուգ և խաւար տարածեցաւ ի վերայ երկրի ի ձեռաց անօրինիս այսմիկ: Եւ գայր խաղայր բազմութեամբ զօրօք և արար ձմերոց ի Սև լեառն. և ահագին արեան հեղութիւն և կոտորած լինէր յամենայն գաւառն, և բազում անձինք ի սրբոց կրօնաւորացն մատնեցան ի բերան սրոյ և յայրումն հրոյ և եղեն կերակուր գազանաց և թռչնոց և ոչ ժամանեցին ծածկիլ հողով, վասն զի մնացին անթաղք մինչև յաւիտեանս. և անթիւ վանորայք և գեղք այրեցան հրով, որք երեւին մինչև ցայսօր. և Սև լեառն և ամենայն գաւառն ի ծայրէ ի ծայր լցաւ արեամբ կրօնաւորաց և քահանայից և արանց և կանանց ծերոց և տղայոց՝ ըստ բանի մարգարէին՝ որ ասէ, եթէ «Ջերիտասարդս նոցա եկեր հուր, և վասն կուսանաց նոցա ոչ ոք սգացաւ և քահանայք նոցա անկան ի սուր, և զայրիս նոցա ոչ ոք էր որ լայր» և թէ՝ «Հեղին զարիւնս նոցա որպէս ջուր շուրջ զերուսաղեմաւ, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա»: Արդ՝ այսպիսի կատարած բարկութեան էած ի վերայ հաւատացելոց անօրէնն և չար գազան Օշէն, որ և անպատմելի է ասացողացս գործ նորա:

Յայսմ ամի ելանէր ամիրայ մի մեծ և հզօր ի դրանէ Աբասլանայ սուլտանայ, որ էր հնճպ նորա՝ Գոմէշ-Տիկին անուն նորա, և յարուցեալ

սեղանի առջև և նրա լույսը առավել ևս բոցավառվեց»։ Բոլորն ապշեցին այդ տեսիլքի վրա։ Վանահայրը սուրբ Հոգու ներշնչմամբ հասկացավ, թե բանն ինչ է, և ասաց. «Տեսե՛ք, սուրբ խորհրդի մաս կա ընկած»։ Հենց այդ պահին նրանք մոմեր վառեցին և խնկարկությամբ եկան նըշված վայրը։ Այդ օրերի ընթացքում եկեղեցին չէին ավլել։ Բարձրանալով բեմ, նրանք գտան սուրբ խորհրդի մասը անարատ, աստծո սուրբ սեղանի առջև ընկած և, վերցնելով այն, գոհություն հայտնեցին մեր տեր աստված Հիսուս Քրիստոսին։ Դա շատերին ամրապնդեց ուղղափառ հավատքի մեջ, և այդ օրից սկսյալ համոզվեցին, որ այդ խորհուրդը երկնային է և աստվածային, որ իսկապես սա է աստծո որդու մարմինը։

Հայոց 515 թվականի [5 մարտ 1066—4 մարտ 1067 թ.] սկզբին արևելքում մի գիսավոր աստղ երևաց, որն ընթանում էր դեպի արևմուտք։ Մի ամիս հետո նա աներևութացավ, բայց բազում օրեր անց, երեկոյան պահին [կրկին] երևաց արևմուտքում։ Շատերը, տեսնելով այն, ասում էին, թե սա հենց այն գիսավոր աստղն է, որ երևաց արեվելքում։ Այս ժամանակ հարձակվեցին այլազգիները և ապականելով ավերեցին հայոց ամբողջ երկիրը, բոլոր հավատացյալներին սրի քաշեցին և գերի տարան։

Այս ժամանակ պարսից ամիրան, որին Օշին էին ասում, զորահավաք արեց, ավերեց բազմաթիվ գավառներ և քրիստոնյաներին խեղդեց արյան մեջ։ Այդ անհավատի ձեռքով երկրում մեծ սուգ և խավար տարածվեց։ Նա մեծաթիվ զորքով եկավ ձմեռեց Սև լեռան[257] ստորոտը։ Ողջ գավառում սոսկալի արյունահեղություն և կոտորած եղավ, սուրբ վանականներից շատերը սրի քաշվեցին, հրո ճարակ դարձան և գաղանների ու թռչունների կերակուր։ Նրանք հողով անգամ չծածկվեցին, որովհետև առհավետ անթաղ մնացին։ Բազում վանքեր և գյուղեր հրո ճարակ դարձան, որոնց [ավերակները] մինչև օրս էլ երևում են։ Սև լեռը և ողջ գավառը ծայրեծայր վանականների և քահանաների, տղամարդկանց ու կանանց, ծերերի ու երեխաների արյամբ ողողվեց, մարգարե՝ ասածի նման, թե՝ «Նրանց երիտասարդներին կրակը լափեց, ոչ ոք չսըգաց նրանց կույսերին, նրանց քահանաները սրի քաշվեցին, և նրանց այրիներին ողբացող չկար», և կամ էլ՝ «Նրանց արյունը ինչպես ջուր հեղեցին Երուսաղեմի շուրջը, և ոչ ոք չկար, որ թաղեր նրանց»[258]։ Ահա այսպիսի օրհաս բերեց հավատացյալների գլխին անհավատ և չար դազան Օշինը։ Անհնարին է պատմել նրա կատարածը։

Նույն տարին սուլթան Աբասլանի արքունիքից մի մեծ և հզոր ամիրա դուրս եկավ, [սուլթանի] սենեկապետը՝ Գոմեշտիկին[259] անունով։

գայր մեծաւ ահարկութեամբ և ախոյեան զօրօք հասանէր ի վերայ քրիստոնէիցն և վտակս արեան յարուցանէր ի յաղգէ հաւատացելոց. և որպէս զգազան բազում խոցուածով զայրացեալ ի վերայ գաւառին Թլխմոյ և արար սաստիկ կոտորածս զմնացեալսն յառաջին բարկութենէն. և մեծաւ պատերազմաւ էառ զբերդն՝ որ կոչի Թլէթուբ, և անողորմ զամենեսեան սրով կոտորեաց. և անհամար գերութեամբ հասանէր ի գաւառն Ուռհայոյ և իջեալ ի վերայ բերդին՝ որ կոչի Նսեպին, և աւուրս ինչ պատերազմեալ ի վերայ նորա՝ և ոչ կարաց առնել ինչ. յայնժամ անցանէր ընդ հունն Սիրատ գետոյն և սրով յարձակեցաւ ի վերայ Հարսանմսրոյ գաւառին և աստուածաստաստ բարկութեամբ ի բերան սրոյ հաշեաց զայնքան քաջ վայելուչ գաւառն և զմաղձ դառնութեան իւրոյ չարութեանն եհիղ ի վերայ ամենայն գաւառին, վասն զի որպէս զկարկուտ հրացայտ փայլատակմամբ հասանէր ի վերայ ամենայն բնակչաց երկրին սոսկալի կոտորածով. և հրով այրէին և զամենայն իշխանսն գաւառին Հարսան-մսրոյ սրով և մահու խոցմամբ սատակէին և զփառաւոր կանայսն և զվայելուչ որդիսն նոցա հանդերձ դստերօքն ի գերութիւն վարէին։ Եւ ահա անդ էր տեսանել զաստուածաստաստ բարկութիւնն ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի, վասն զի առհասարակ մեծամեծք և աղքատք զմի ճաշակ դառնութեան ճաշակէին յանողորմ գազանէն ի չարաշունչ ազգէն Թուրքաց. և առհասարակ ի սուր սուսերի մաշեալ լինէր վայելուչ գաւառն այն, և զաւուրս երիս անդադար լինէր կոտորումն քրիստոնէից։ Եւ ի վերայ այսքան բարկութեանս և դառն կատարածիս՝ իշխան ոմն՝ որ էր ի բերդն Նսեպնայ՝ որ ասի Սիբար քաղաք, փութապէս առաքեաց ի քաղաքն Ուռհա և ազդ արարեալ տուկին՝ որ կոչէր Արուանդանոս, և ասաց թէ՝ «Ամիրայն զօրացն Պարսից հոս կայ յեզր գետոյս Եփրատայ հարիւր արամբ. ե՛կ, հասի՛ր ի վերայ սորա և արա զինքն ձեռբակալ»։ Իսկ նորա յապաղմամբ և անշտապողական արութեամբ գայր ի վերայ ամիրային Գոմէշ-Տիկնայ զօրօք բազմօք, զորս լուեալ ամիրային և առաքեաց ի Հարսն-մսուր բերել զզօրս իւր։ Իսկ Արուանդանոսն հասանէր զօրօքն իւրովք յանուանի բերդն՝ որ ասի Օշէն, հազար և հինգ հարիւր ձիաւորով և քսան հազար հետևակօք. հանդիպեալ միմեանց ի պատերազմ, և որպէս զառիւծ յարձակեցաւ Արուանդանոսն՝ հասանէր ի վերայ Թուրքաց, վասն զի էր այր քաջ և պատերազմող, և էր տեղին դժար և կտուր։ Եւ սկսաւ Թուրքն բազմանալ. և յայնժամ ասէր Արուանդանոսն ընդ զօրս իւր թէ՝ «Սակաւ մի յետս դարձիք, որ Թուրքն ղհետ մեր յարձակին. զի յորժամ ի վերայ յարձակիմք՝ չկարեն փախչել»։ Եւ եղև յորժամ սակաւ մի դարձան, հետս զի ամենայն զօրքն Հոռոմոց ի փախուստ դարձան և թողին զա-

Նա, կռվող զորքի գլուխն անցած, մեծ սարսափ սփռելով եկավ քրիստոնյաների վրա և հավատացյալ ժողովրդից արյան վտակներ հոսեցրեց: Բազում վերքեր ստացած գաղանի կատաղությամբ նա [եկավ] Բլմուխ գավառի վրա և առաջին կոտորածից վերապրողներին սաստիկ ջարդեց: Կատաղի մարտով գրավեց Բլեթուբ կոչվող բերդը և բոլորին անխնա սրի քաշեց: Անհամար դերիներով նա հասավ Ուռհա գավառը, հարձակվեց Նսեպին կոչվող բերդի վրա, մի քանի օր մարտ մղեց նրա դեմ, բայց չկարողացավ այն գրավել: Դրա վրա նա անցավ Եփրատ գետի հունը և սրով հարձակվեց Հարսանմսիր[260] գավառի վրա և սոսկալի ջայրույթով սրի քաշեց այնքան դեղեցիկ գավառը՝ իր չարության պատն մաղձը թափելով ողջ գավառի վրա: Նա կարկտախառն հրացայտ կայծակի նման հարձակվեց երկրի բոլոր բնակիչների վրա, սոսկալի կոտորած տալով: Նրանք կրակի ավեցին Հարսանմսիր գավառը, նրա բոլոր իշխաններին սրախողխող արեցին և կոտորեցին, իսկ նրանց փառավոր կանանց, գեղեցիկ որդիներին ու դուստրերին գերի քշեցին: Պետք էր և նրանք քրիստոնյաների դլխին եկած օրհասը. բոլորը, մինչհարատած թե աղքատ, մինչևայն դառնությունը ճաշակեցին անգութ գաղանի, թուրքերի չարաշունչ ժողովրդի ձեռքով: Այդ գեղեցիկ գավառը ամբողջությամբ սրի քաշվեց: Քրիստոնյաների կոտորածը տևեց երեք օր: Այսքան փորձությունների և սարսափելի ավերածության վրա հետևյալն էլ ավելացավ. Նսեպինի Սիբար[261] քաղաք կոչվող բերդում նստող մի իշխան փութանակի լուր ուղարկեց Ուռհա քաղաք և Արվանդանոս անունով դումին հայտնեց, թե՝ «Պարսից զորքերի ամիրան հարյուր հոգով այստեղ է գտնվում, Եփրատ գետի ափին: Ե՛կ, վրա հասիր և ձերբակալիր նրան»: [Արվանդանոսը] մեծաթիվ զորքով, առանց շտապելու, դանդաղորեն գնաց Գոմեշտիկին ամիրայի վրա: Ամիրան, լսելով այդ մասին, մարդ ուղարկեց Հարսանմսիր՝ իր զորքը բերել տալու համար: Երբ Արվանդանոսն իր զորքով՝ հազար հինդ հարյուր ձիավոր և քսան հազար հետևակ, հասավ Օշեն կոչվող հռչակավոր բերդը, նրանք մարտ ավեցին միմյանց: Արվանդանոսը առյուծի պես հարձակվեց թուրքե՛ր վրա, նա քաջ և պատերազմող մարդ էր. տեղանքը, սակայն, դժվարանցանելի էր և խորդուբորդ: Թուրքերն սկսեցին չատանալ: Արվանդանոսը դիմեց իր զինվորներին և ասաց. «Մի փոքր նահանջեցեք, որպեսզի թուրքերը հետապնդեն մեզ, և երբ հակահարձակման անցնենք, նրանք չկարողանան փախչել»: Բայց երբ մի փոքր նահանջեցին, հոռմեց ողջ զորքը վախեցավ դիմից, Արվանդանոսին թողնելով այլազ-

րուանդանոսն ի մէջ զօրացն այլազգիաց։ Եւ եղև օրն այն մեծ և սոսկալի, և ահաւոր կորուստ քրիստոնէիցն, որ և լցուաւ ամենայն դաշտն արեամբ և գերութեամբ, և Արուանդանոսն և ամենայն իշխանքն քրիստոնէից մատնեցան ի գերութիւն. և մնացեալքն փախստական լեալք մտանէին ի բերդն՝ որ ասի Օշէն՝ և փրկեցան։ Եւ յաւուր յայնմիկ կոտորեցան արք իբրև մեռասան հազարք։ Եւ եղեալ ամիրային ի պարանոցն Արուանդանոսին լուծ եղանց և այնու վարէր զնա ի գերութիւն. և երեր ի դուռն քաղաքին Ուռհայոյ և ծախեաց զնա քառասուն հազար դահեկանի, քսան հազար դահեկանի եղեալ զորդին իւր գրաւական, որ մնաց ի Պարսիկս մինչև ցայսօր. և զայլ իշխանսն մի ըստ միոջէ դնեցին ի ձեռս ոսկւոյ և արծաթոյ։ Եւ Դոմէշ-Տիկին մեծաւ յաղթութեամբ և բազում գերութեամբ և անհամար աւարաւ խաղաց և գնաց յաշխարհն Պարսից՝ և մատուցեալ առաջի սուլտանին ծառայս գեղեցիկս մանկունս և աղջկունս իբրև երկու հազար։

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՇԺԹ մեռաւ թագաւորն Տուկիծ և մնաց իւր տղայ որդի մի Միխայլ անուն. և կացեալ աթոռ թագաւորութեանն անթագաւոր ղամ մի, թագուհին ունելով զաթոռ թագաւորութեանն, որում անունն ասէին Եւտոկի։

Եւ եղև յորժամ փոխեցաւ թուականութիւնս Հայոց ՇԺՀ բերեալ Եւտոկի գաղտաբար զիշխան ոմն՝ որում անունն էր Ռամանոս, որ ասի Տիօժէն, և ածեալ զնա ի սենեակն իւր և ամուսնացաւ ընդ նմա. և պահեաց զնա ի սենեկին և մինչև կոչեաց զեղբայր Տուկծին զԿեսառն և փորձելով ասէր ցնա՝ եթէ «Զի՞նչ արասցուք, զի ահա աթոռ թագաւորութեան չանտէր կայ, և Միխայլն տղայ է» և պատրողական բանիւք կամէր կորուսանել զնա։ Եւ ասէր Կեսառն ցթագուհին. թէ՝ «Եւ ինձ զի՞նչ փոյթ է այդ, զի ահա ես և որդիք իմ ծառայ եմք քո. ո՛ւմ դու կամիս՝ տուր զթագաւորութեան զաթոռդ»։ Եւ հիացեալ թագուհին հաճեալ ի բանսն նորա. և ապրեցաւ ի չարեաց։ Յայնժամ ասէ ցնա թագուհին. «Արի՛ մուտ ի սենեակդ և երկիր պագ թագաւորին»։ Եւ զարմացեալ Կեսառն և կայր հիացեալ և գոհանայր զԱստուծոյ, որ ոչ խօսեցաւ ինչ չար. և յայնժամ մտեալ երկիր եալագ թագաւորին ի վերայ երեսաց իւրոց. և ի վաղիւն տարան զՏիօժէնն ի սուրբն Սոփի, և միաբան ամենայն քաղաքն Կոստանդնուպօլսի ձայնեցին նմա զո՛վ, և եդին ի վերայ գլխոյ նորա զթագն։

Յայսմ ժամանակիս սուրբ հայրապետն Հայոց Տէր Վահրամ, որ կոչեցաւ Տէր Գրիգորիս, որդի Գրիգորի՝ որդւոյ Վասակայ Պալհաւունւոյ, եկեալ ի սիրտս նորա սէր միայնակեցութեան և լինել առանձնական յաղօթսն Աստուծոյ. և սա նմանեալ լինէր եղիայի և Յովհաննու

գինների զորքի մեջ։ Այդ օրը ահավոր և սոսկալի եղավ, տեղի ունեցավ քրիստոնյաների սարսափելի կոտորած, այն աստիճան սաստիկ, որ ամբողջ դաշտը արյամբ և գերիներով լցվեց։ Արվանդանոսը և քրիստոնյաների բոլոր իշխանները գերի ընկան, մնացածներն էլ փախուստի դիմեցին և, ապաստանելով Օշեն կոչվող բերդը, փրկվեցին։ Այդ օրը կոտորվեց շուրջ տասնմեկ հազար հոգի։ Ամիրան Արվանդանոսի վզին եղան լուծ դրեց և այդ ձևով գերի տարավ։ Բերելով Ուռհայի դուռը, ծախեց նրան քառասուն հազար դահեկանով, ընդ որում, այդ գումարի քսան հազարի դիմաց [Արվանդանոսը] պատանդ տվեց իր որդուն, որ մինչև օրս էլ մնացել է պարսից [երկրում]։ Մնացած իշխանավորներն էլ մեկ առ մեկ ոսկով և արծաթով փրկագնվեցին։ Գոմեշտիկինը մեծ հաղթանակով, բազմաթիվ գերիներով և անհամար ավարով շարժվեց դնաց պարսից երկիրը և սուլթանի ոտքին դրեց շուրջ երկու հազար գեղեցիկ ծառաներ՝ տղաներ ու աղջիկներ։

Հայոց 516 թվականին [5 մարտ 1067—5 մարտ 1068 թ.] վախճանվեց Տուկիծ կայսրը, թողնելով Միքայել անունով մի անչափահաս որդի։ Թագավորական գահը մեկ տարի թափուր մնաց, և այն գտնվում էր Եվդոկիա կոչվող կայսրուհու ձեռքում[262]։

Երբ եկավ հայոց 518 թվականը [4 մարտ 1069—3 մարտ 1070 թ.], Եվդոկիան ծածուկ կերպով մի իշխան բերեց, որի անունը Ռոմանոս էր, մականունը՝ Տիոյեն[263], և իր սենյակը մտցնելով՝ ամուսնացավ հետը։ Նրան իր սենյակում նա պահեց, մինչև որ կանչեց Տուկծի եղբորը՝ կեսարին, և, ուզենալով փորձել նրան, հարցրեց. «Ի՞նչ պիտի անենք, ահա թագավորական գահը թափուր է, իսկ Միքայելն էլ դեռ փոքր է»։ Եվ այդպիսի խարեական խոսքերով առիթ էր որոնում նրան ոչնչացնելու։ Կեսարը պատասխանեց կայսրուհուն. «Դա ինձ չի վերաբերում։ Ես և իմ որդիները քո ծառաներն ենք, դու ում որ կամենում ես, տուր թագավորական գահը»։ Կայսրուհին ապշեց, նրան դուր եկան այդ խոսքերը։ Ահա այսպիսով [կեսարը] փրկվեց փորձանքից։ Կայսրուհին ասաց նրան. «Ե՛կ, մտիր այդ սենյակը և երկրպագիր կայսեր»։ Կեսարը շփոթվեց, մնաց զարմացած և շնորհակալություն հայտնեց աստծուն, որ որևէ վտանգավոր բան չէր ասել։ Մտնելով ներս, նա երկրպագեց կայսեր։ Առավոտյան Տիոյենին տարան Սուրբ Սոֆիա և թագադրեցին։ Կոստանդնուպոլսի ամբողջ բնակչությունը միաբերան փառաբանեց նրան։

Այս ժամանակ հայոց սուրբ հայրապետ տեր Վահրամը, Վասակ Պահլավունու որդի Գրիգորի որդին, որ տեր Գրիգորիս վերանվանվեց, փափագ ունեցավ մենակյաց դառնալու և առանձնանալու աստծուն աղոթելու համար։ Նա նմանվեց Եղիա [մարգարեին] և Հովհաննես Մկըրտ-

Մկրտչին և առ ինքն բերեալ զգործ վարուցն սրբոյն Անտոնի և ցանկայր փափագանօք ի պլուխս լերանց բնակիլ. խորհեցաւ թողուլ զգահընկալ և զմեծ պատիւ աթոռոյ հայրապետութեանն, ընդ որում միաբանեալ եղև ընդ նմա Գէորգ վարդապետն՝ որ էր դպրապետ նորա, և երդմամբ կապեալ զբանն գնալ զհետ իրերաց ի միայնակեցութիւնն ճանապարհն։ Եւ ելեալ եղև բանս այս յաւետնի. և իմացեալ զխորհուրդս նոցա թագաւորն և իշխանքն Հայոց՝ և արգելուին գնա մեծաւ իշխանութեամբ. և նա ևս առաւել պնդէր ի գործս իւր, և այսպէս ասէր ցնոսա՝ եթէ «Զայս անհիմ ի միտս իմ գնալ ի Հռոմ և շրջել ընդ ամենայն անապատս Եգիպտացւոց». և նոքա ոչ կամէին թողուլ զնա։ Իսկ նա ի յօժարութենէ կամացն ասէր ցթագաւորն Հայոց. «Դիք ձեզ կաթողիկոս՝ զոր կամիք, և զիս մի՛ արգելուք յարդարութեան ճանապարհին»։ Եւ յորժամ տեսին զյօժարութիւն կամաց նորա՝ ընտրեցին զԳէորգ վարդապետն՝ որ էր դպրապետ նորա, և ի ծածուկ ի նմանէ հաւանեցուցին զԳէորգ վի առցէ զաթոռ հայրապետութեան տանն Հայոց։ Եւ Տէր Գրիգորիս զայս ամենայն ոչ գիտացեալ. և յայնժամ ածին զԳէորգ վի ձեռնադրեսցեն զնա կաթուղիկոս. և տեսեալ Տէր Գրիգորիս հիանայր յօժ և ի կամաց և յոչ կամաց ձեռնադրեալ զնա կաթուղիկոս յաթոռ հայրապետութեանն Հայաստանեայց, բայց ի սիրան ոխայր և ընդ հակառակս համարեցաւ գնա, վասն զի մուտացաւ զսխտան միաբանութեան հոգևոր ճանապարհն. և յորժ յայնմանէ եմուտ հակառակութիւն ի մէջ երկուց հայրապետացն Գրիգորիսի և Գէորգայ։ Եւ գնաց Տէր Գրիգորիս ի խորհուրդս հոգևոր ճանապարհացդ իւրոց առ ի բնակիլ ի լերինս ընդ միանձունսն Ազատոյն Գրիգորեայ և սատարեաւ զվարս խաչակրօնս և յամենայնի չորանաշուկս։

Յայնմ ամի ժողով մեծ արար թագաւորն Տիրէն զամենայն աշխարհն Յունաց մինչև ի սահմանս Հռոմոց և զամենայն կողմն արևելից աշխարհին և ամագին բազմութեամբ խաղացեալ գայր հասանէր ի վերայ աշխարհին Տաճկաց. և իջեալ բանակ հարկանէր ի վերայ անուանի քաղաքին՝ որ կոչի Մնպէճ, մերձ ի Հալպ քաղաք, որ էր հռչակաւոր քաղաք Տաճկաց. և սաստիկ պատերազմ եղև և ի վաւելդ էարկ զքաղաքն Մնպէճ ի ձեռն խուժադուժ ազգացն և անթիւ զօրացն։ Եւ զկնի այսքան նեղութեանցս հրամայեաց թագաւորն կանգնել բարանս և փիլիկեանս ընդդէմ քաղաքին, վասն զի էր քաղաքն պարսպեալ ամենայն ամրութեամբ։ Եւ եղև ի հարկանել զպարիսպն մեծամեծ քարամբք՝ և խախտեալ մասն ինչ ելից ի քաղաքն. և յայնժամ սաստանեցան բազմութիւն ամենայն քաղաքին և առհասարակ արարին խաչաձև ի ձեռս իւրեանց և դիմեցին ի դուրս առ թագաւորն. և ամենայն մեծամեծքն

չին, սկսեց սուրբ Անտոնի կյանքը[264] վարել՝ մեծ ցանկություն ունենալով բնակվել լեռնագագաթներին։ Նա որոշեց հրաժարվել հայրապետական աթոռի մեծ պատվից։ Նրան միացավ իր դպրապետ Գևորգ վարդապետը և երդվեցին միասին ընթանալ մենակյացի ճանապարհով։ Այդ որոշումը, սակայն, հրապարակ եկավ։ Հայոց թագավորը և իշխանները, իմանալով նրանց որոշման մասին, ամեն գնով [ջանացին] կանխել այդ բանի [իրականացումը], բայց [Գրիգորիսն] իր որոշման մեջ անսասան մնաց, ասելով այսպես. «Ես նպատակ ունեմ գնալ Հռոմ[265] և շրջագայել եգիպտացիների բոլոր վանքերը»։ Նրանք չէին ուզում թողնել, բայց նա հոժար կամքով ասաց հայոց թագավորին. «Դուք ում ցանկանաք, ձեզ կաթողիկոս ձեռնադրեցեք և ինձ թույլ տվեք ընթանալ արդարության ճանապարհով»։ Երբ տեսան [Գրիգորիսի] հոժարակամությունը, հարմար գտան [կաթողիկոս առաջադրել] նրա դպրապետ Գևորգ վարդապետին և, [Գրիգորիսից] գաղտնի, Գևորգին համոզեցին ընդունելու հայոց երկրի հայրապետական աթոռը։ Տեր Գրիգորիսը այդ բոլորին անտեղյակ էր։ Գևորգին բերեցին կաթողիկոս ձեռնադրելու։ Տեր Գրիգորիսը շատ զարմացավ, բայց, կամ-ակամա, նրան հայոց կաթողիկոս ձեռնադրեց, թեև սրտում նրա դեմ ոխ պահեց, նրան անարժան համարեց, քանզի նա մոռացավ հոգևոր ճանապարհով [միասին] ընթանալու վերաբերյալ իր հետ [կնքած] միաբանության ուխտը։ Այդ օրից սկսած թշնամություն ծագեց երկու հայրապետների՝ Գրիգորիսի և Գևորգի միջև։ Տեր Գրիգորիսը գնաց իր հոգևոր ճանապարհով՝ բնակվելու լեռներում՝ Քրիստոսի միայնակյաց ճգնավորների հետ. նա սկսեց վարել խստակրոն կյանք և ապրել միայն չոր ու ցամաք սննդով։

Այդ տարին Տիոյեն կայսրը ողջ հունաց երկրում, մինչև հռոմոց սահմանները, և ամբողջ արևելքում մեծ զորահավաք արեց և հսկայական զորքով շարժվեց եկավ հասավ տաճկաց երկրի վրա։ Նա իջավ բանակեց Մնպեճ[266] կոչվող անվանի քաղաքի [պարիսպների տակ], տաճիկների հռչակավոր Հալեպ քաղաքին մոտիկ։ Տեղի ունեցավ կատաղի պատերազմ։ [Կայսրը] խուժադուժ[267] և անհամար զինվորների օգնությամբ վտանգի մեջ գցեց քաղաքը։ [Բնակչության] պատճառած այդքան նեղություններից հետո կայսրը հրամայեց քաղաքի դեմ բաբաններ և փիլիկպաններ կանգնեցնել, քանզի քաղաքը ամուր պարիսպներով էր շրջապատված։ Մեծամեծ քարերի հարվածները քանդեցին պարսպի մի մասը և այն տապալեցին քաղաքի մեջ։ Դրա վրա բովանդակ քաղաքի բնակչությունը ահ ու դողի մեջ ընկավ. բոլորը խաչեր սարքեցին և դրանք բռնած դուրս թափվեցին ու դիմեցին կայսեր։ [Քաղաքի] բոլոր երևելիները մեծամեծ նվերներով եկան ընկան կայսեր

անկանէին յոտ թագաւորին մեծամեծ ընծայիւք և եղեն հարկատուք և ղերծան ի մահուանէ։ Եւ արար թագաւորն ողորմութիւն ի վերայ քաղաքին և ընդ հարկաւ արարեալ ղնոսա։ Եւ յայնժամ հասանէր թուղթ ի թագուհւոյն առ թագաւորն Տիօժէն՝ դառնալ փութապէս ի Կոստանդնուպօլիս. և լուեալ զայս թագաւորն՝ դնաց փութանակի։

Յայսմ ամի ելեալ տղայ ամիրայ մի Կտրիճ անուն և կամէր գաղտ ապստամբիլ ի Պարսից և գնալ ի Կոստանդնուպօլիս առ Յունաց թագաւորն. և էր սա յազգէ Աբասլան սուլտանին։ Եւ բազում զօրօք հասանէր ի Սեբաստիա, և ելեալ Կուրապաղատն ի Կոստանդնուպօլսէ գայր ընդդէմ նորա ի պատերազմ. և դիպեալք միմեանց պատերազմաւ մերձ ի Սեբաստիա. և պարտեալ՝ Յոյնքն եղեն փախստականք. և ի միւսում աւուրն դարձաւ Թուրքն ի պատերազմ ի վերայ Յունաց. և վանեալ զնոսա՝ արարին փախստական, այլ և կալան զԿուրապաղատն. իսկ զօրքն Յունաց կուրացեալք ի փոշոյն և փախստեալ եղեալ՝ գնացին ի տեղի մի քարակատուր, որ կոչէր Մակրիտի՝ և անդ հոսեալ ի վայր՝ մեռան։ Եւ զկնի աւուրց ինչ թագաւորն Հայոց և իշխանքն և ամենայն նախարարքն արարին սէր և միաբանութիւն ընդ մանուկ ամիրային. և նա առեալ զկուրապաղատն և զայլ կալանաւորան՝ արս իբրև երեք հազար՝ և զանխլաբար հասանէր ի Կոստանդնուպօլիս առ թագաւորն Յունաց։ Եւ թագաւորն ընկալաւ զնա մեծաւ պատուով և փառաւորութեամբ. և եղև ամիրայն այն այր բարեսէր։

Ի թուականութեանս Հայոց ՇԺԹ երևեցաւ աստղ մի գիսաւոր յերկինս, զոր տեսեալ բազմաց ասէին թէ՝ Այս այն նշանն է, որ եղև յառաջագոյն, ապա արիւնհեղութիւն զկնի. և դարձեալ ի գիշերի միում երևէր, որպէս թէ ամենայն աստեղք յերկիր հեղուին. և երկեան ամենայն ազգ և աղինք և յահեղն և ի սոսկալի նշանէն սարսեալ դողային, վասն զի այսպիսի նշան ոչ տեսեալ էաք երբէք և ոչ լուեալ յառաջնոցն. և այնպէս կարծեցին, թէ այս է, զոր ասաց Փրկիչն թէ՝ Եղիցի նշան ի վերջին ժամանակին յարեգակն և ի լուսին և յաստեղս շարժմունք և արհաւիրք, որպէս ի սուրբ Աւետարանին։ Եւ արդ այս եղև սկիզբն կատարածի և կրկին աւերման աշխարհիս յանօրէն զօրացն Թուրքաց վասն բազմացեալ և ծովանման մեղաց մերոց, քանզի՝ Ամենեքեան մեղան և նուազեցան ի փառացն Աստուծոյ և թէ՝ Ոչ ոք է արդար և ոչ մի. սովորեցան ամենեքեան ի ճանապարհս անօրէնութեան և սիրեցին առաւել զմեղս քան զարդարութիւն և ոչ երբէք խոտորին ի չարեացն ի բարին, վասն որոյ և բարկացուցանեմք զԱնբարկանալին Աստուած ի վե-

ոտքերը, դարձան նրան հարկատու և մահից փրկվեցին։ Կայսրը ողորմածությամբ վերաբերվեց քաղաքի բնակչությանը և նրանց հարկատու դարձրեց։ Այդ պահին Տիոյեն կայսրը կայսրուհուց նամակ ստացավ՝ վաղվաղակի Կոստանդնուպոլիս վերադառնալ։ Կայսրը, լսելով դա, փութանակի գնաց։

Այդ տարին մի երիտասարդ ամիրա, անունը Կտրիճ[268], որոշեց ծածուկ ապստամբել պարսիկների դեմ և Կոստանդնուպոլիս գնալ, հռոմոց կայսեր մոտ։ Նա Աբասլան սուլթանի տոհմից էր։ Բազմաթիվ զորքերով նա հասավ Սեբաստիա։ Կուրապաղատը, դուրս գալով Կոստանդնուպոլսից, շարժվեց նրա վրա պատերազմի։ Սեբաստիայի մոտ նրանք ճակատամարտեցին, որտեղ հույները պարտություն կրելով՝ փախան։ Հաջորդ օրը թուրքերը հարձակվեցին հույների վրա, նրանց ետ մղեցին և փախուստի մատնեցին, իսկ կուրապաղատին գերի վերցրին։ Հունաց զինվորները փողուց կուրացած փախան գնացին Մակռիտի կոչվող մի ժայռաբլուր, որտեղից ցած գլորվելով մեռան։ Մի քանի օր անց հայոց թագավորը, իշխանները և բոլոր նախարարները բարեկամություն և հաշտություն կնքեցին երիտասարդ ամիրայի հետ, որը, վերցնելով կուրապաղատին և մյուս գերիներին՝ շուրջ երեք հազար հոգու, ծածուկ հասավ Կոստանդնուպոլիս՝ հունաց կայսեր մոտ։ Կայսրը նրան ընդունեց մեծ պատիվներով ու մեծարանքով։ Այդ ամիրան բարեսիրտ մարդ դարձավ։

Հայոց 519 թվականին [4 մարտ 1070—3 մարտ 1071 թ.] երկրնքում մի գիսավոր աստղ երևաց. շատերը, տեսնելով այն, ասացին, թե սա այն նշանն է, որ նախկինում երևաց, և որից հետո արյունահեղություն եղավ։ Մի գիշեր էլ թվաց, թե բոլոր աստղերը երկիր են թափվում։ Բոլոր մարդ արարածները ահարկու և սոսկալի նշանից սարսափեցին, ահ ու դողի մեջ ընկան, քանզի այդպիսի նշան երբեք չէին տեսել, ոչ էլ [նման բանի մասին] լսել իրենց նախնիներից։ Մարդիկ ենթադրեցին, որ սրան էին վերաբերում Սուրբ Ավետարանում գրված Փրկչի խոսքերը, թե՝ «Վերջին ժամանակներում նշաններ են լինելու արևի, լուսնի և աստղերի վրա, երկրաշարժեր և սարսափներ»[269]։ Ահա, սա եղավ կործանման սկիզբը, թուրքերի անհավատ զորքերի ձեռքով այս աշխարհի երկրորդ ավերումը՝ մեր բազում, ծովացած մեղքերի պատճառով, որովհետև «Բոլորը մեղք գործեցին և աստծո փառքից պակասեցին»[270]. «Եվ ոչ մեկը արդար չէ։ Բոլորը ծովորեցին ընթանալ անօրենության ճանապարհով, սիրեցին ավելի մեղքը, քան արդարությունը, ամենևին չեն ուզում շեղված լինել չար ճանապարհից դեպի բարին, դրա համար է, որ մենք զայրացնում ենք անթարկանալի աստծուն և

րայ մեր և զԱյն, Որոյ բնութիւնն Իւր քաղցր է միշտ, խոտոր գնացիւք մերովք ցասուցանեմք ի վերայ մեր. և երբեմն երբեմն խրատէ զմեզ և զկծեցուցանէ զմեզ աղգաւ անմտաւ և ոչ այնու ևս դառնամք ի խենէշ գնացից մերոց, քանզի՝ Միտք որդւոց մարդկան հաստատեալ է ի խըննամս չարին. վասն որոյ իբրև զմրրիկ հասանէ ի վերայ մեր բարկութիւն և պատուհասն և յաճախեն հողմք փոթորկեալ չար հինից Իսմայէլեան որդւոցն ի վերայ մեր և ոչ տան մեզ դուլ և հանգիստ. բայց ինքն Տէր քաղցրութեամբ հայեսցի ի գործս ձեռաց Իւրոց. ամէն։

Ի սոյն ամի՛ շարժեալ և որպէս զգետ յարուցեալ Աբասլան սուլտանն եղբայր Տուղրիլ սուլտանին և անթիւ բազմութեամբ խաղայր գայր և հասանէր իբրև զամպ ուռուցեալ միգով անօրէնութեան յաշխարհն Հայոց բազում կոտորածիւ և արեան հեղմամբ և իջեալ ի վերայ Մանծկերտոյ. և առ ի չգոյէ պահապանաց քաղաքին՝ յաւուր միում առաւ քաղաքն Մանծկերտ, վասն զի փախեան Հոռոմոց պահապանքն. և առար զքաղաքն կոտորած վասն առաջին հայհոյութեան եղբօր նորա Տուղրիլ սուլտանին, վասն զի զայս անդարձ արարեալ էր նորա ի ժամ մահուանն։ Եւ յարուցեալ Աբասլան սուլտանն և խուժադուժ և անթիւ աղգաւ հասանէր ի քաղաքն՝ որ կոչի Յամիթ, և սիրով բանակ հարկանէր ի դուռն քաղաքին. և ի նմին բանակին ծնանէր կինն նորա որդի, և կոչեաց զանուն նորա Դուշ։ Եւ անտի յարուցեալ գայր ի գաւառն Թլմխոյ և պատեալ զնա մեծաւ նեղութեամբ և ամենայն հնարիւք պատերազմեալ ի վերայ նորա, և զաւուրս բազումս ոչ ինչ կարաց առնել բերդաքաղաքին Թլմխոյ. սկիզբն սիրոյ արարին և հարկս ուզեալ. և բնակչացն թուլացեալ և յանհոգս լինէին և թողին զպարիսպն անպահապանս։ Եւ տեսեալ զօրք այլազգեացն զանպատրաստութիւն նոցա, և յոչ կամաց սուլտանին դիմեաց ամենայն բանակն ի վերայ՝ և պատեալ սաստիկ պատերազմաւ՝ և առին զքաղաքն և կոտորածս բազումս արարին և անթիւ գերութիւնս։ Եւ լուեալ սուլտանն՝ և զարմանայր և ապաշաւէր զկոտորած նոցա, վասն զի ունէր երդումն ընդ նոսա. և անտի յարուցեալ սուլտանն գայր խաղայր ահագին բազմութեամբն իւրով և հասանէր ի գաւառն Ուռհայոյ. և արար սաստիկ զամենայն աշխարհն մինչև ի դուռն քաղաքին և բանակ հարկանէր ի վերայ անուանի բերդին՝ որ կոչի Թլթովրաւ, մերձ ի Սեւերակն՝ և սաստիկ պատերազմաւ առեալ զբերդն զԹլթովրաւ և զԱհրիւծաթիլն և արար սաստիկ կոտորածս և ելից արեամբ զամենայն սահմանս նոցա. և բազում աւարաւ և գերութեամբ գնայր խաղայր ի վերայ քաղաքին Ուռհայոյ և պատեալ շուրջանակաւ զամենայն քաղաքն՝ և ելից բանակաւ ծայրէ ի ծայր։ Եւ էր յաւուրս ձմերայնի, ի մարերի ամսոյ ի տասն, և էր տուկն ի քաղաքն

Նրան, որի բնությունը միշտ քաղցր է»: Մեր մոլոր ընթացքով մենք նրան մեր դեմ ենք լարում: Նա ստեպ-ստեպ խրատում է մեզ, դառնացնում մեզ տգետ ժողովրդի ձեռքով, բայց դրանից հետո էլ մենք չենք շեղվում մեր աղտեղի ճանապարհից, քանզի մարդու միտքը սովորել է չարին ծառայելու: Դրա համար մրրիկի պես է մեզ վրա խուժում [աստծո] բարկությունն ու պատուհասը, անվերջ մեզ վրա են թափվում Իսմայելի ավազակաբարո որդիների փոթորկահույզ հողմերը, չոլալով մեզ հանգիստ և դադար: Բայց ինքը՝ Տերը, թող քաղցրությամբ վերաբերվի իր արարածներին, ամեն:

Նույն տարին Աբասյան սուլթանը՝ Տուղրիլ սուլթանի եղբայրը[271], հորդած դետի նման, մեծ կոտորածով ու արյունահեղությամբ շարժվեց եկավ հայոց երկիրը. նա եկավ հարձակվեց Մանազկերտի վրա: Կայազորի չգոյության պատճառով (հոռոմ կայազորը թողել փախել էր) նա մեկ օրում գրավեց Մանազկերտ քաղաքը և նրա բնակիչներին սրի քաշեց՝ իր եղբայր Տուղրիլ սուլթանին անցյալում անարգած լինելու պատճառով: [Տուղրիլ սուլթանը] մահվան ժամին կտակել էր նրան վրեժխնդիր լինել: Վեր կենալով այնտեղից, Աբասյան սուլթանը խուժադուժ և անթիվ զորքով հասավ Ամիթ կոչվող քաղաքը և բանակեց քաղաքի դարպասի դիմաց: Այդ ճամբարում նրա կինը որդի ունեցավ, որին [Աբասյանը] կոչեց Դդուշ[272]: Այնտեղից հեռանալով, նա եկավ Բլուխ դավառը և բնրդաքաղաքը սաստիկ պաշարման ենթարկեց. բազում օրեր պատերազմական բոլոր միջոցները գործի դրեց, բայց չկարողացավ ոչինչ անել: Նա հաշտության առաջարկ արեց և հարկեր պահանջեց: Բնակիչները, այդ բանի վրա հանգստացած, իրենց ապահով զգացին և պարիսպը անպաշտպան թողեցին: Այլազգիների զինվորները, տեսնելով նրանց անպատրաստ լինելը, սուլթանի կամքին հակառակ, ամբողջ բանակով գրոհեցին և, կատաղի մարտ տալով, գրավեցին քաղաքը, մեծ չարդ տվեցին և անհամար գերիներ վերցրին: Սուլթանը, լսելով այդ մասին, ապշեց, նա ափսոսաց կոտորված մարդկանց, որովհետև երդվել էր [ժողովրդին ձեռք չտալ]: Սուլթանը, այնտեղից վեր կենալով, իր ահագին զորքով շարժվեց գնաց և հասավ Ուռհա դավառը, գլխովին ասպատակեց այն՝ մինչև քաղաքի դուռը և Սևերակի մոտ գտնվող Բլթովրավ կոչվող անվանի բերդի մոտ բանակեց. նա ուժով գրոհով վերցրեց Բլթովրավ բերդը և Այոյծաթիլը, մեծ չարդ տվեց և ամբողջ շրջանը արյամբ ողողեց: Բազում ավար և գերիներ վերցնելով, շարժվեց գնաց Ուռհա քաղաքի վրա, պաշարեց այն՝ ծայրից ծայր ողողեց զինվորներով: Ջմեռ ժամանակ էր, մարերի ամսի տասը. Ուռհա

Ուռհա Վասիլն՝ Ալօսիանին որդին Բուլղարաց թագաւորին. և տեսեալ քաղաքացեացն զանթիւ բազմութիւն զօրաց այլազգեացն՝ ահաբեկեալ սաստանեցան ամենայն բազմութիւն հաւատացելոցն՝ որք էին ի քաղաքն Ուռհա, վասն զի բազմութիւն զօրացն սուլտանին ելից զդաշտս և զգաւթունս լերանցն. և դողաց երերալով քաղաքն ի չարաշունչ վիշապէն և ի դառն գազանէն այն, վասն զի էր այր արիւնարբու. և կացեալ զաւուրս ութ և ոչ ետ պատերազմ, և քաղաքն կայր յիմարեալ անպատրաստականն: Եւ ապա մի ոմն ի զօրաց սուլտանին տեսեալ զանմտութիւն քաղաքացեացն և ձայն տուեալ դաղտաբար եթէ՝ «Զի՞ կայք յիմարեալք, ամրացուցէք զպարիսպդ և թամբեցէք զձի ձեր»: Եւ ապա իմացեալ սկսան շուրջանակի զպարիսպն ասպարափակ առնել և կազմեցին ամենայն ամրութեամբ, և քաջացան այր իւրաքանչիւր ի պատերազմ: Եւ Վասիլն՝ որ էր տուկ քաղաքին՝ այր քաջ և պատերազմող, սկսաւ զօրացուցանել զամենայն քաղաքն. և տեսեալ զայս սուլտանին՝ զայրացաւ յոյժ և հրամայեաց հարկանել զփող պատերազմին և դաշանաբար դիմեաց ի պատերազմ. և դղրդեալ ամենայն զօրք այլազգեացն և շուրջանակաւ պատեալ զամենայն քաղաքն Ուռհա. և եղև օրն այն օր մեծ և ահաւոր պատերազմ սաստիկ, և լցաւ ամենայն քաղաքն նեռաձգութեամբ, և առհասարակ դասք հաւատացելոցն կային լալով և ողբալով յաղօթս առ Աստուած՝ զերծանել ի չար գազանէն. և զմեծ մասն աւուրն պատերազմեալ ամենայն զօրք տանն Պարսից ի վերայ Ուռհայոյ՝ և ոչինչ կարացին առնել, վասն զի Տէր յաղթահարեաց զնոսա և յամօթ արար: Եւ զկնի այսորիկ կանգնեաց բաբանս և փիլիկպանս ընդդէմ պարսպին և կոտորեաց զամենայն դրախտս և զայգիս և այնու ելից զխանդակս քաղաքին. և կանգնեաց փայտէ բերդս ի վերայ տասն սայլից՝ զի առցէ զքաղաքն Ուռհա. և եղև յորժամ շարժեցին զսայլսն, զի բերցեն մօտ ի պարիսպն, յանկարծակի փլեալ կործանեցաւ փայտէ բերդն, և ի քաղաքէն պատառեցին ի ներքոյ զեռնոյն և ելան ի խանդակն յարևելից կողմանէն և զամենայն փայտն արկին ի քաղաքն և զմնացեալսն հրով այրեցին: Յայնժամ սկսան այլազգիքն և փորեցին եօթն ծակ ի խորու խանդակն, վասն զի զպարիսպն կործանեսցեն. և յայնժամ քաղաքացիքն արարին ընդդէմ նոցա փորուածս և կալան յայլազգեացն և սատակեցին զնոսա: Եւ զօրացոյց Տէր զքաղաքն ի վերայ այլազգեաց. և զաւուրս չիսուն կացեալ սուլտանն ի վերայ Ուռհայոյ սաստիկ պատերազմաւ և ոչ ինչ կարաց առնել. և խոստանայր սուլտանն տալ դանձս և իշխանութիւնս՝ եթէ ոք հանցէ քար ի պարսպէն, զի տարցէ ի Պարսիկս ի չիշատակ իւր. և ասէ ցնա Ապուսուար ամիրայն Դվնայ, եթէ Ահա յօտ ի միջի մերում խորանդ եկեղեցւոյ, և ի վերայ

քաղաքի դուկն էր Վասիլը՝ բուլղարների թագավոր Ալուսիանի որդին։ Ուռհայի քաղաքացիները, բոլոր հավատացյալները, տեսնելով այլազգիների հսկայական զորքը, ահ ու դողի մեջ ընկան. սուլթանի զորքերի բազմությունը ողողել էր դաշտերն ու լեռնագագաթները։ Ջարաշունչ վիշապից, այդ դառնաշունչ գազանից սասանվեց քաղաքը. [սուլթանը] արյունարբու մարդ էր։ Նա ութ օր մնաց առանց պատերազմելու, իսկ քաղաքը, ապուշ կտրած, անպատրաստ վիճակում էր։ Սուլթանի զինվորներից մեկը, տեսնելով քաղաքացիների խելակորույս վիճակը, ծածուկ ձայն տվեց և ասաց. «Ի՞նչ եք հիմարացել, ամրացրեք ձեր պարիսպը և թամբեցեք ձեր ձիերը»։ [Քաղաքացիները] ուշքի եկան և բովանդակ պարիսպը կատարելապես ամրացրին։ Բոլորը սրտապնդվեցին պատերազմելու։ Վասիլը, քաղաքի դուկը, մի քաջ և պատերազմող մարդ, սկսեց քաջալերել ողջ քաղաքը։ Սուլթանը, տեսնելով դա, շատ բարկացավ. նա հրամայեց հնչեցնել պատերազմական շեփորը և գազանի պես նետվեց պատերազմի։ Այլազգիների բոլոր զինվորներն իրար անցան և շրջապատեցին ողջ Ուռհա քաղաքը։ Այդ օրը դարձավ նշանավոր օր, պատերազմը՝ ահավոր և սաստիկ, ողջ քաղաքը լցվեց արձակված նետերով։ Հավատացյալները լաց ու կոծով աստծուն էին աղոթում՝ փրկել իրենց չար գազանի ձեռքից։ Պարսից երկրի բոլոր զորքերը օրվա մեծ մասը մարտնչեցին Ուռհայի դեմ, բայց ոչինչ չկարողացան անել, որովհետև Տերը նրանց պարտության մատնեց և խայտառակ արեց։ Դրա վրա [սուլթանը] պարսպի դեմ բաբաններ և փիլիկպաններ կանգնեցրեց, կտրատեց պարտեզների ու այգիների բոլոր ծառերը և քաղաքի խրամի մեջ լցրեց։ Նա տաս սայլերի վրա փայտե աշտարակ կանգնեցրեց՝ Ուռհան գրավելու համար, բայց հենց որ շարժեցին սայլերը՝ պարսպի մոտ բերելու համար, փայտե աշտարակը հանկարծակի փուլ եկավ և կործանվեց։ [Պաշարյալները] քաղաքի ներսից գետնափոր արեցին և, [բերդի] արևելյան կողմում դուրս գալով խրամից, [աշտարակի] բոլոր փայտերը բերեցին գցեցին քաղաքի մեջ, մնացածն էլ կրակի տվեցին։ Դրա վրա այլազգիները պարիսպը կործանելու նպատակով խոր խրամի միջից յոթ անցք փորեցին։ Քաղաքացիները նրանց [փորածի] դիմացից փորել սկսեցին և այլազգիներին բռնելով, սատկացրին։ Տերը զորացրեց քաղաքը՝ ընդդեմ այլազգիների։ Սուլթանն Ուռհայի դեմ հինսուն օր կատաղի պատերազմ մղեց, բայց ոչինչ չկարողացավ անել։ Սուլթանը գանձ և իշխանություն խոստացավ նրան, ով կկարողանա պարսպից մի քար հանել։ Նա ուզում էր այն որպես հիշատակ Պարսկաստան տանել։ Դվինի ամիրա Ապուսվարն ասաց նրան. «Ահա, մեր հողմում է գտնվում եկեղեցին, նրան ոչ ոք չի պաշտ-

ոչ ոք է որ պատերազմի։ Եւ չանացին և ոչ կարացին հանել քար ի խորանէն սրբոյն Սարգսի ի յարևելից դիհէն. և տեսեալ սուլտանն՝ ամաչեաց յոյժ։ Յայնժամ Խուրէշն աւագ ամիրայն Արապկաց առեալ զԱբասլան սուլտանն և զամենայն բազմութիւն զօրացն Պարսից՝ գնաց ի վերայ քաղաքին Հալպայ. և յայնմ աւուր եղև ուրախութիւն մեծ ի վերայ քաղաքին Ուռհայու, զի վերծան ի չար գազանէն։

Եւ լուեալ Թագաւորն Յունաց Տիոժէն զհամբաւ բարկութեանս այսորիկ և մոմռնալ որպէս զառիւծ և հրամայեաց ժողով լինել ամենայն բազմութեան զօրաց իւրոց. և ելեալ հրովարտակք և քարոզիչք ընդ ամենայն աշխարհն արևմտից. և սրար ժողով մեծ և ահագին բազմութեան զամենայն աշխարհն Դպաց և զհամօրէն ազգն Բուլղարաց և զամենայն կղզիս հեռաւորս, զՌամիրս և զամենայն Բիւթանիա, զԿիլիկիա և զԱնտիոք, զՏրապիզոն և զամենայն տունն Հայոց՝ որք էին մնացեալ ի քաջ զօրականացն, և բերեալ այլ զօր յայլազգիացն Նուժաստանացն և սրար Տիոժէնն ժողով ահագին բազմութեան որպէս զաւազ ծովու։ Եւ էր ի թուականութեանն Հայոց ՇԻ և զայր խաղայր որոտալով իբրև զամպս կարկտաբերս և հասանէր ի Սեբաստիա քաղաք. և ելեալ ընդ առաջ նորա որդիք Թագաւորացն Հայոց Աւոմ և Ապուսահլ մեծաւ հանդիսիւ։ Եւ յայնժամ մատեան ազգն Հռոմոց և չարախօսեցին զբնակչացն Սեբաստիոյ և զամենայն ազգէն Հայոց և ասեն՝ «Եթէ յօրժամ եհար զմեզ կարիճ ամիրային, ազգն Հայոց առաւել կատորեցին զմեզ քան զԹուրքն»։ Եւ Հաւատաց Թագաւորն Տիոժէն սուտ խօսից Հռոմոց և սպառնացեալ ահաւոր երդմամբ եթէ՝ «Ի զառնալն իմ ի պատերազմէն Պարսից՝ բառնամ զհատուած Հայոց», և նոյն ժամայն հրամայեաց ալափ առ զԱնեբաստիա քաղաքն ամենայն զօրացն Հռոմոց. և յալափելն սրարին սպանումն բազմաց վասն անիրաւ և սուտ դատաստանացն, զոր սրար անօրէն Թագաւորն Տիոժէն. և ընկէց յերեսաց զորդիք Թագաւորացն Հայոց՝ զԱտոմ և զԱպուսահլ՝ և էարկ սուղ մեծ ի վերայ Սեբաստիոյ։ Եւ յայնժամ մեծամեծ իշխանքն Հռոմոց և Դագիկ շահընշահն որդին Աշոտոյ և Կարիճ ամիրային՝ որ կալաւ զկուրապաղատն, ասեն ցՏիոժէն Թագաւորն թէ՝ «Մի՛ լսեր սուտ խօսից ազգիդ քո, վասն զի սուտ են յամենայն ի բանս իւրեանց, զի որք ի պատերազմին Թուրքին մնացին, սոքա եղեն օգնական»։ Եւ լուեալ պայս Թագաւորն՝ սրար խաղաղութիւն. բայց ի զառնալն սպառնայր բառնալ զհատուած Հայոց. զոր լուեալ վանորայքն՝ և անէծս ցաւագինս կարդացին ճանապարհի նորա՝ չդառնալ ի ճանապարհէն, յոր երթայոց էր, այլ զի կործանեսցէ զնա Տէր որպէս զանօրէնն Յուլիանոս, որ անիծեցաւ ի սրբոյն Բարսղէ։ Եւ յարուցեալ Տիոժէնն ամենայն բազմութեամբն գնաց յարևելք՝ յաղ-

պահում»։ Նրանք շատ չանք թափեցին, բայց չկարողացան Սուրբ Սարգիս եկեղեցու արևելյան խորանից հանել և ոչ մի քար։ Սուլթանն ամաչեց։ Արաբների ավագ ամիրա Խուրեշը, վերցնելով Աբասյան սուլթանին և պարսից ողջ զորքը, գնաց Հալեպ քաղաքի վրա։ Այդ օրը Ուռհա քաղաքում չար գազանից փրկվելու առթիվ մեծ ուրախություն եղավ։

Հունաց կայսր Տիոյենը, լսելով նման փորձության մասին, առյուծի պես մռնչաց և իր ողջ զորքի զորահավաք հայտարարեց։ Հրովարտակներ և մունետիկներ ուղարկվեցին արևմտյան բոլոր երկրները։ Նա գոթերի ամբողջ երկրում, համայն բուլղար ժողովրդի մեջ, բոլոր հեռավոր կղզիներում, Գամիրքում, ողջ Բյութանիայում, Կիլիկիայում, Անտիոքում, Տրապիզոնում և հայոց երկրում դեռ մնացած քաջ զորականներից հսկայական զորահավաք արեց։ Նա նույնիսկ այլազգիներից բաղկացած զորք բերեց Խուժաստանից։ Տիոյենի զորակոչած հսկայական բազմությունը նման էր ծովի ավազի։ Հայոց 520 թվականին [4 մարտ 1071—2 մարտ 1072 թ.] նա, որոտալով ինչպես կարկտաբեր ամպ, շարժվեց հասավ Սեբաստիա քաղաքը։ Մեծ հանդիսավորությամբ նրան ընդառաջ գնացին հայոց թագավորազուններ Ատոմն ու Ապուսահլը։ Հռոմները, դիմելով [կայսեր], չարախոսեցին Սեբաստիայի բնակիչներին և բոլոր հայերին, ասելով, թե՝ «Երբ մեզ վրա Կտրիճ ամիրան էր հարձակվել, հայերը մեզ ավելի շատ կոտորեցին, քան թուրքերը»։ Տիոյեն կայսրը հավատաց հռոմոց սուտ խոսքերին և սարսափելի երդումով սպառնաց. «Պարսից պատերազմից վերադարձիս ես կվերացնեմ հայադավանությունը»։ Նա իսկույն հրաման տվեց հռոմոց զինվորներին՝ ավարի առնել ողջ Սեբաստիա քաղաքը։ Ավարառելու հետ միասին նրանք շատերին սպանեցին՝ անարդար ու սուտ դատաստանի համաձայն, որ արեց անօրեն կայսր Տիոյենը։ Նա պատվազուրկ արեց հայոց թագավորազուններ Ատոմին և Ապուսահլին ու Սեբաստիան մեծ սգո մեջ գցեց։ Այնուհետև հռոմոց մեծամեծ իշխանները, Աշոտի որդի Գագիկ շահնշահը, կուրապաղատին գերի վերցնող Կտրիճ ամիրան ասացին Տիոյեն կայսեր. «Դու քո ազգակիցների սուտ խոսքին ականջ մի՛ դիր, քանզի նրանց ամեն ասածը սուտ է։ Իրականում թուրքի դեմ մրցված պատերազմից վերապրողներին հենց սրանք օգնեցին»։ Կայսրը, լսելով դա, հաշտվեց, թեև սպառնաց իր վերադարձին վերացնել հայադավանությունը։ Վանականները, լսելով այդ, նրա գլխին սոսկալի անեծքներ թափեցին՝ չվերադառնա արշավանքից, Տերը կործանի նրան, ինչպես անօրեն Հուլիանոսին[278], որին սուրբ Բարսեղն անիծեց։ Տիոյենն ամբողջ զորքով գնաց Արևելք, հայոց երկիրը, և իջավ ու գրավեց Մա-

խարհն Հայոց և իջեալ ի քաղաքին Մանծկերտոյ՝ և էառ զնա. և զօրք սուլտանին՝ որ կայր ի քաղաքն՝ փախեան. և զորս ըմբռնեաց՝ կոտորեաց. և յայնժամ հասեալ համբաւս այս առ սուլտանն ի Հալպ քաղաքի. և դարձաւ յարևելս, վասն զի ասացին՝ թէ թագաւորն Հոռոմոց ահագին բազմութեամբ դիմեալ երթայ յաշխարհն Պարսից: Իսկ ի յայս ամերաւնիս արար պատերազմ սուլտանն ի վերայ Հալպայ, և ոչ կարաց առնուլ ի բազմութենէ զօրաց քաղաքին. և պատառեաց ծակոտելով զամենայն պարիսպն, և ոչ ինչ կարաց առնել քաղաքին: Եւ յաւուրսն գարնանային լուաւ սուլտանն զնալանել թագաւորին Տիօժէնին, թողեալ զՀալպ և փութապէս հասանէր յՈւռհա: Իսկ տուկն՝ որ էր ի քաղաքն՝ հանեալ նմա ձիս և ջորիս և ապուր. և առեալ սուլտանն և անցանէր անվնաս ի սահմանացն և գայր յարևելս ի լեառն՝ որ կոչի Լևսուն. և անթիւ ձի և ուղտ սատակեցան ի փութանակի գնալոյն, զի որպէս զփախստական վարէր զզօրսն իւր. և կամէր գնալ ի Պարսիկս, և նոյն ժամայն հասանէին թուղթք նենգաւորացն Հոռոմոց առ սուլտանն ի բանակէն Տիօժէնին և ասացին ցսուլտանն. «Մի՛ փախչիր, զի մեծ մասն զօրաց ընդ քեզ եմք». և լուեալ զայս սուլտանն՝ զտեղի առնոյր: Եւ յայնժամ գրեաց սուլտանն թուղթ հաւանութեան առ թագաւորն Տիօժէն վասն սիրոյ և միաբանութեան և խաղաղութեամբ մնալ առ միմեանս, յաւիտեան ոչ մեղանչել միմեանց, այլ սիրով կալ ընդ ազգին քրիստոնէից և յաւիտեան սէր և միաբանութիւն ընդ Պարսիկք և ընդ Հոռոմք: Եւ յայնժամ Տիօժէնն հպարտացեալ և ոչ էառ յանձն զբանս սուլտանին, այլ ևս առաւել բորբոքեալ ի պատերազմ. և մատուցեալ չար նենգաւորքն առ Տիօժէնն և ասեն. «Ո՛վ թագաւոր, ոչ ոք է՝ որ կարասցէ ընդդէմ կալ բազմութեան զօրաց քոց. և ահա հ՛ն ի յապրոյ, արդ արձակեա զնոսա բանակս բանակս, զի մի՛ սպասվեսցի՛ մինչև ցօր պատերազմին»: Եւ յայնժամ դարձոյց զկտրիճ ամիրսայն ի Կոստանդնուպօլիս և զՏարխանիատն երեսուն հազարով դարձոյց ի վերայ Խլաթայ և երկոտասան հազար առաքեաց յԱպխազք՝ և այսպիսի օրինակաւ զամենայն զզօրսն ցրուեալ հանին յերեսաց թագաւորին. և այս ամենայն դործք նենգութեան աղդ լինէր սուլտանին: Յորժամ եհես սուլտանն անխոնարհելի զմիտս Տիօժէնին՝ յարձակեցաւ ի պատերազմ ի վերայ զօրացն Հոռոմոց և որպէս կորիւն առիւծոյ այնպէս վարեաց զամենայն զօրսն Խորասանայ: Եւ լուեալ Տիօժէն զդալ զօրացն Պարսից ի վերայ նորա՝ հրամայեաց հնչեցուցանել զփող պատերազմին և կարգեաց դասս առ դասս զամենայն զօրսն Հոռոմոց. և կացոյց զօրագլուխս զօրաց իւրոց զԽատապ և զՎասիլակ իշխանք Հայեցիք՝ զայր քաջք և պատերազմողք, և զմեծ մասն աւուրն

նաղկերտ քաղաքը։ Քաղաքում գտնվող սուլթանի զորքը փախուստի դիմեց։ [Տիոյենը] ձեռքն ընկածին սպանեց։ Այս բանի լուրը հասավ Հալեպ քաղաքը՝ սուլթանին։ Նա վերադարձավ Արևելք, որովհետև իրեն ասացին, թե Հոռոմոց կայսրը ահագին բազմությամբ շարժվել է դեպի պարսից երկիրը։ Այդ [տարվա] ձմռանը սուլթանը պատերազմեց Հալեպի դեմ, բայց, քաղաքի մեծաթիվ կայազորի պատճառով, իրեն չհաջողվեց քաղաքը գրավել։ Հակառակ որ նա փորփրեց ողջ պարիսպը՝ խարխլելով այն, այնուամենայնիվ, չկարողացավ որևէ վնաս հասցնել քաղաքին։ Դարնանը սուլթանը լսեց Տիոյեն կայսեր արշավանքի դուրս գալու մասին և, թողնելով Հալեպը, փութանակի հասավ Ուռհա։ Քաղաքի դուռը նրան ձիեր, ջորիներ և պարեն մատակարարեց։ Սուլթանը, վերցնելով դրանք, անվնաս անցավ սահմանը և եկավ արևելք, լեռուն կռչվող լեռը։ Շտապ գնալու պատճառով, անհամար քանակությամբ ձի և ուղտ սատակեց. փախստականի արագությամբ էր նա իր զորքերն առաջ տանում։ Նա ցանկանում էր Պարսկաստան գնալ, բայց հենց այդ պահին Տիոյենի ճամբարից սուլթանին բերեցին նենգ Հոռոմների նամակը և ասացին. «Մի՛ փախչիր, զորքի մեծ մասով քեզ հետ ենք»։ Սուլթանը, լսելով, կանգ առավ։ Նա Տիոյեն կայսեր մի նամակ գրեց՝ սիրո, միաբանության, միմյանց նկատմամբ խաղաղ մնալու, առհավետ անհրավություն չգործելու մասին, [վստահացրեց], որ ինքը սիրալիր վերաբերմունք կցուցաբերի քրիստոնյաների նկատմամբ, որ պարսիկների և Հոռոմների միջև առհավետ սեր և միաբանություն կտիրի։ Բայց Տիոյենն, ամբարտավանացած, ուշադրություն չդարձրեց սուլթանի խոսքերի վրա և առավել նախանձախնդրությամբ դիմեց պատերազմի։ Ջարանենգ մարդիկ, դիմելով Տիոյենին, ասացին. «Ո՛վ կայսր, ոչ ոք ի վիճակի չէ ընդդիմակայել քո մեծաթիվ զորքին։ Նրա պարենն արդեն վերջանալու վրա է, դու մաս-մաս արձակիր նրանց, որպեսզի մինչև պատերազմի օրը պարենի պակաս չզգան»։ Դրա վրա [Տիոյենը] Կտրիճ ամիրային Կոստանդնուպոլիս վերադարձրեց, Տարխանիատին[274] երեսուն հազար հոգով խլաթ ուղարկեց, տասներկու հազար հոգի էլ՝ Ափխազիա։ Եվ այսպիսով, կայսեր ամբողջ զորքը ցիրուցան արեցին[275]։ Այս չարանենգության մասին սուլթանին տեղյակ պահեցին։ Սուլթանը, տեսնելով, որ Տիոյենը համառում է, պատերազմի դիմից Հոռոմոց զորքի դեմ. որպես առյուծի կորյուն՝ նա Խորասանի բոլոր զորքերը առաջ տարավ։ Տիոյենը, լսելով, որ պարսից զորքն իր վրա է հարձակվել, հրամայեց հնչեցնել պատերազմական շեփորը և Հոռոմոց ամբողջ զորքը գունդ առ գունդ շարքի դրեց։ Նա իր զորքի հրամանատար նշանակեց հայ իշխաններ Խատապին և Վասիլակին[276], քաջ և պատերազմող

լինէր պատերազմ սաստիկ. և եղեն պարտեալ զօրք Հոռոմոցն և սպանեալ խատաղ և վասիլակ. և արարին փախստական զամենայն զօրսն Հոռոմոց մինչև ի բանակ թագաւորին: Եւ տեսեալ Տիօժէննն՝ հրամայեաց ժողովել լինել ամենայն զօրաց իւրոց՝ և ոչ ոք էր որ գայր ի կոչ նորա, վասն զի Տարխանատն և այլ իշխանքն Հոռոմոց գնացին զօրօքն ի Կոստանդնուպօլիս: Եւ լուեալ զայս թագաւորն՝ ծանեաւ զննգութիւն աղգին իւրոյ Հոռոմոց, և ահա առ վաղիւն եղև պատերազմ. և ընդ առաւօտն հնչեցուցեալ զփող պատերազմին, և ելեալ քարոզիչքն քարոզէին զհրաման թագաւորին Տիօժէնին. և խոստանայր փառս և իշխանութիւնս՝ քաղաքս և գաւառս, վասն զի քաջապէս պատերազմեսցեն ընդդէմ զօրացն Պարսից: Եւ ահա դայր սուլտանն ահագին պատրաստութեամբ ի պատերազմ ի վերայ Հոռոմոց զօրացն. յայնժամ թագաւորն Տիօժէն եկեալ հասանէր ի տեղի պատերազմին՝ մերձ ի Մանծկերտ, ի տեղին՝ որ կոչի Տողոտափ, և զՈւզն և Պաճունակն կացուցանէր ընդ աջմէ իւրմէ և ընդ ձախմէ և զայլ զօրսն զառաջոյ և զթիկանց. և ի սաստկանալ պատերազմին՝ Ուզն և Պաճինակն ի սուլտանի կողմն անցանէին. և յայնժամ եղեն պարտեալ ամենայն զօրքն Հոռոմոց և առհասարակ ի փախուստ դարձան: Եւ եղև կոտորումն զօրացն Հոռոմոց անթիւ և անհամար բազմութիւնք. և արարին ձերբակալ զթագաւորն Տիօժէն և տարան զնա առաջի սուլտանին և զայլ բազում իշխանս Հոռոմոց կապանօք կացուցանէին առաջի սուլտանին և անթիւ և անհամար գերութիւն: Իսկ յետ աւուրց ինչ արար սուլտանն սէր և միաբանութիւն ընդ թագաւորին Հոռոմոց. և արար զՏիօժէնն սուլտանն իւր եղբայր արեամբ, վասն զի զայն ուխտեալ էր ընդ Աստուծոյ, և հաստատեաց ահագին ուխտ սիրոյ և միաբանութեան ընդ Պարսիկք և ընդ Հոռոմք յաւիտեան: Եւ յայնժամ մեծաւ փառաւորութեամբ յուղարկեաց զթագաւորն յաթոռ իւր ի Կոստանդնուպօլիս. և հասանէր մինչև ի Սեբաստիա: Յայնժամ համբաւ հասանէր առ Տիօժէնն՝ թէ թագաւորեաց Միխայլն որդի Տուկծին, և թողեալ զնա ամենայն զօրքն իւր՝ փախեան. և Տիօժէնն գնաց փախստական ի քաղաքն՝ որ կոչի Ատանա. և ժողովեցան ի վերայ նորա զօրք թագաւորին Միխայլի. իսկ Տիօժէնն առ վտանգի իւր զգեցաւ զգեստ աբեղայի և ելեալ առ զօրագլուխն Հոռոմոց՝ որ էր եղբայր Տուկծին, և ասացեալ. «Եթէ ահա չունիք յինէն այսուհետև հոգս, վասն զի ես յայսմ հետէ ի վանք կրօնաւորաց կամիմ բնակել. ձեզ թագաւոր եղիցի Միխայլն, և Աստուած եղիցի ընդ նմա»: Իսկ յայնմ աւուր ազգն Հոռոմոց կրկին զԱստուած ի խաչ հանին որպէս զՀրէական ազգն, վասն զի հաննալ խաւարեցուցին զաչսն Տիօժէնին՝ զառն թագաւորի, որ ի սաստկութենէ ցաւոյն մեռաւ իսկ. և լուեալ զայս սուլտանին՝ լայր և

մաբդկանց։ Օրվա մեծ մասի ընթացքում կատաղի պատերազմ տեղի ունեցավ։ Հռոմոց զորքը պարտություն կրեց, Խատասն ու Վասիլական սպանվեցին։ [Թուրքերը] Հռոմոց ամբողջ զորքը փախուստի մատնեցին մինչև կայսեր ճամբարը։ Տիոյենը, տեսնելով վիճակը, հրամայեց իր բոլոր զինվորներին հավաքվել, բայց նրա կոչին ոչ ոք ուշադրություն չդարձրեց. Տարխանիատն ու Հռոմոց այլ իշխաններ Կոստանդնուպոլիս էին գնացել։ Կայսրը, տեղեկանալով այդ մասին, համոզվեց իր ազգակից Հռոմների նենգության մեջ։ Հաջորդ օրը ճակատամարտ տեղի ունեցավ։ Առավոտյան հնչեցրին պատերազմական շեփորը, և մունետիկները հրապարակեցին Տիոյեն կայսեր հրամանը. նա փառք և իշխանություն էր խոստանում, քաղաքներ և գավառներ, եթե արիաբար մարտնչեն պարսից զորքերի դեմ։ Սուլթանը Հռոմոց զորքերի դեմ պատերազմի դիմեց մեծ պատրաստությամբ։ Տիոյեն կայսրը եկավ հասավ ճակատամարտի տեղը՝ Մանազկերտի մոտ, Տողոտաի կոչվող վայրը։ Նա ուզերին և պածինակներին կանգնեցրեց իր աջ ու ձախ կողմերում, իսկ ընացած զինվորներին՝ առջևում և թիկունքում։ Մարտի թեժ պահին ուզերն ու պածինակներն անցան սուլթանի կողմը։ Հռոմոց ուղղ զորքը պարտություն կրեց և գլխովին դիմեց փախուստի։ Տեղի ունեցավ Հռոմոց զինվորների անթիվ-անհամար կոտորած, Տիոյեն կայսեր գերի վերցրին և տարան սուլթանին[277]։ Սուլթանի մոտ շղթայափակ տարան և բազմաթիվ այլ Հռոմ իշխանների, ինչպես և անթիվ-անհամար գերիներ։ Մի քանի օր անց սուլթանը Հռոմոց կայսեր հետ բարեկամություն և հաշտություն հաստատեց, արյամբ եղբայրացավ Տիոյենի հետ (նա այդ բանը աստծուն ուխտ էր արել) և պարսիկների ու Հռոմների միջև առհավետ մեծ բարեկամություն և հաշտություն հաստատեց։ Նա կայսրին մեծ պատիվներով ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ իր գահը։ Սակայն, հասնելով Սեբաստիա, Տիոյենը լսեց, որ գահ է բարձրացել Տուկծի որդի Միքայելը[278]։ Տիոյենի բոլոր զինվորները լքեցին նրան և փախան, իսկ Տիոյենն էլ փախավ գնաց Ադանա քաղաքը։ Նրա դեմ կուտակվեցին Միքայել կայսեր զորքերը։ Տիոյենը վտանգավոր իրավիճակում աբեղայի սքեմ հագավ և գնալով Հռոմոց զորահրամանատարի մոտ, որ Տուկծի եղբայրն էր, ասաց. «Այսուհետև ես ձեզ գլխացավանք չեմ պատճառի, քանզի ես սրանից հետո ուզում եմ վանք մտնել։ Թող ձեր կայսրը լինի Միքայելը, աստված նրա հետ»։ Այդ օրը Հռոմների հրեաների նման նորից խաչեցին աստծուն, որովհետև խավարեցրին Տիոյենի՝ կայսր մարդու աչքի լույսը, և նա սարսափելի ցավից մեռավ։ Սուլթանը, լսելով այդ մասին, ողբաց, սգաց Տիոյենի կորուստը և ասաց.

ապաշաւէր զկորուստն Տիոժէնին. և ասացեալ սուլտանն եթէ՝ «Ջունին Աստուած ազգն Հռոմոց, և ահա այսօր պատառեցաւ սէր և երդումն միաբանութեան, որ ընդ Պարսիկք և ընդ Հռոմք եդան. և յայսմ հետէ ի սուր սուսերի մաշեսցի ամենայն ազգն խաչապաշտից, և գերեսցին ամենայն աշխարհն քրիստոնէից»: Եւ չիշեալ զՏիոժէնն՝ և սաստկապէս յոգւոց հանեալ ապաշաւէր սուլտանն, նոյնպէս և ամենայն ազգն Պարսից. և ասէր սուլտանն ընդ ամենայն ազգն խորասանայ, եթէ «Ահա յայսմհետէ եղերուք ամենեքեան կորիւնք առիւծոց և եղերուք որպէս զձագս արծուոց արագագնացս յընթացս ընդ ամենայն երկիր և զտիւ և զգիշեր սրախողխող արարէք զազգն քրիստոնէից և անողորմ լերուք ի վերայ ազգին Հռոմոց»: Եւ ինքն սուլտանն դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի յաշխարհն Պարսից:

Յայսմ ժամանակի ժողով արարեալ Աբասլան սուլտանն զամենայն զօրսն Պարսից և անցանէր ընդ մեծ գետն Ջահունից՝ որ կոչի Գեհոն, և բազմութեամբ զօրօք մտաւ յաշխարհն Սմբինդոյ, կամեցաւ տիրանալ այն աշխարհին և մեծաւ զօրութեամբ իջեալ բանակեցաւ ի վերայ ամուր և անուանի բերդին Համայ. և էր բերդատէրն այր քաջ և գազան և յոյժ չարասիրտ. և զբազում աւուրս նեղեալ սուլտան զբերդն մեծաւ պատերազմաւ՝ և կոչէր զբերդատէրն դալ իւր ի հնազանդութիւն և տիրանալ հայրենեաց իւրոց յաւիտեան: Եւ զկնի բազում նեղութեանցն խորհեցաւ բերդատէրն ելանել առ սուլտանն յերկրպագութիւն. և խորհեցաւ խորհուրդ սոսկալի և ահաւոր չարութիւնս. և արար զօրն ամենայն սէր և ուրախութիւն կնոջ իւրում և որդեացն և զուսանօք և թմբկօք և երգօք արուեստիւք կերաւ ընդ նոսա և էարբ մեծաւ ուրախութեամբ. և ի մէջ գիշերին զկին իւր և զերեք որդին ձեռօք իւրովք զենեաց գազանաբար, վասն զի մի՛ անկանիցին ի ձեռս սուլտանին և լինիցին նոցա ծառայք: Եւ ինքն ի վազիւն ելեալ գնայր առ սուլտանն՝ և ի ծածուկ ունելով ընդ իւր երկուս դանակս քաջաստուրս, որով զորդիսն իւր զենեաց. և յորժամ գայր, տեսեալ սուլտանին՝ հրամայեաց բերել առաջի իւր: Եւ նա գնաց և երկիր պագանէր. իսկ յորժամ մօտեցաւ՝ յարձակեցաւ ի վերայ սուլտանին և հանել զերկու դանակն ի կօշկացն, և որք տանէին զնա՝ փախեան. և նա գազանաբար հասեալ ի վերայ սուլտանին հարկանէր զնա երկու դանակով. և նոյնժամայն սատակեցին զնա պաշտօնեայք նորա. և տեսին խոցեալ զսուլտանն՝ հարեալ յերեք տեղիս: Եւ կայր սուլտանն ի մեծ վտանգի, և կսկիծ խոցերոյն նեղէին զնա. և հրամայեաց զօրացն գնալ ի սահմանացն, զի մի՛ գիտասցին աշխարհն. և զկնի հինգ աւուրցն նեղեցաւ ի ցաւոցն և հրամայեաց կոչել զմեծամեծ իշխանսն Պարսից և զխոճասլ զօրն իւր. և կացուցեալ զտղայ որ-

«Հոռոմներն աստված չունեն։ Այսօր ահա վերացավ պարսիկների և հոռոմների միջև հաստատված բարեկամության և հաշտության մասին երդումը։ Այսուհետև ողջ խաչապաշտ ժողովուրդը սրի է քաշվելու, ստրկացվելու է քրիստոնյաների ողջ երկիրը»։ Հիշելով Տիոյենին, սուլթանը խոր հառաչեց և սգաց, նրա հետ՝ և պարսից ողջ բազմությունը։ Սուլթանն ասաց բոլոր խորասանցիներին. «Սրանից հետո բոլորս կլինենք առյուծի կորյուններ, արծիվների ձագերի պես կսլանանք երկրով մեկ։ Գիշեր-ցերեկ քրիստոնյաներին սրի քաշեցեք, մի՛ խնայեք հոռոմոց ազգը»։ Սուլթանը մեծ հաղթանակով վերադարձավ պարսից երկիրը։

Այս ժամանակ սուլթան Աբասլանը, պարսից ամբողջ զորքերի զորահավաք անելով, անցավ Ջահուն, այն է՝ Գեհոն մեծ գետը, և հսկայական զորքով մտավ Սամարղանդ երկիրը, ցանկանալով տիրել այն։ Նա հսկայական ուժով իջավ և բանակեց անառիկ ու հռչակավոր Համա բերդի տակ, որի բերդատերը մի քաջ, գազանաբարո և անչափ չարասիրտ մարդ էր։ Սուլթանը, բազում օրեր կատաղի պատերազմ մղելով, նեղ վիճակի մեջ դրեց բերդը. նա կոչ արեց բերդատիրոջը՝ որ հպատակություն հայտնի իրեն և շարունակի ընդմիշտ տիրել իր հայրենի տիրույթներին։ Բազում նեղություններ կրած բերդատերը որոշեց գնալ երկրպագել սուլթանին, բայց [միաժամանակ] նա սոսկալի և ահավոր բան մտահղացավ։ Ամբողջ օրը կեղծ սեր ու ուրախություն արեց իր կնոջ, որդիների և դուստրերի հետ, գուսաններով, թմբուկներով ու երգերով մեծ կերուխում, բայց կեսգիշերին կնոջը և երեք որդիներին իր ձեռքով գազանաբար մորթեց, որպեսզի չընկնեն սուլթանի ձեռքը և չդառնան նրա ծառաները։ Ինքը մյուս օրն իսկ ելավ գնաց սուլթանի մոտ, թաքցրած ունենալով շատ լավ սրած երկու դաշույն, որոնցով նա մորթել էր իր որդիներին։ Սուլթանը, տեսնելով նրան, հրամայեց իր առջև բերեն։ [Բերդատերը] գնաց, երկրպագեց և մոտիկ գալով հանեց իր կոշիկների մեջ թաքցրած երկու դաշույնները և հարձակվեց սուլթանի վրա։ Տեսնողները փախուստի դիմեցին։ [Բերդատերը] երկու դաշույնով սկսեց գազանաբար հարվածել [սուլթանին]. վերջինիս սպասավորները տեղնուտեղը սպանեցին ահաբեկչին։ Սուլթանը երեք տեղից վերք էր ստացել, և նրա կյանքը մեծ վտանգի մեջ էր. վերքերի ցավը տանջում էր նրան։ Սուլթանը հրաման տվեց զորքերին [Սամարղանդի] սահմաններից դուրս գալ, որպեսզի այնտեղ չիմացվի [կատարվածի] մասին։ Հինգ օր անց, երբ ցավերը սաստկացան, սուլթանը հրամայեց կանչել պարսից մեծամեծ իշխաններին և իր զորքի խոճապին[279]։ Նրանց ներ-

դին զՄելիք շահն առաջի նոցա՝ ասէ. «Ահա ես այսօր մեռանիմ ի խոցոյ աստի, և եղիցի ձեզ թագաւոր որդիս իմ. և սա նստցի յաթոռ թագաւորութեանս իմոյ». և հանեալ զթագաւորական հանդերձն իւր ազուցանէր որդւոյ իւրոյ Մելիք շահին, և խոնարհեալ երկիր եպագ նմա, և լալով յանձն արար զնա Աստուծոյ և ամենայն ամիրայացն Պարսից։ Եւ յայնմ աւուր մեռաւ Աբասլան սուլտանն ի ձեռաց առն անփառաւորի և քրդոյ։ Եւ թագաւորեաց Մելիք շահն ի վերայ տանն Պարսից և եղև այր բարի և ողորմած և յոյժ քաղցր ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի. և հասեալ զնաց յաթոռ հայրենեաց իւրոց և տարաւ զհայր իւր զԱբասլանն և թաղեալ զնա ի դերեզմանս հարց իւրոց ի Մարանդ քաղաքի. և յաջողեցաւ թագաւորութիւն նորա յԱստուծոյ. սա տիրելով տիրանաց ամենայն երկրի և արար խաղաղութիւն ամենայն աշխարհին Հայոց։

Իսկ ի թուականութեանն Հայոց ՇԻԱ. եղև հակառակութիւն ի մէջ Տէր Գրիգորիսի և Տէր Գէորգեայ. և առաքեաց Տէր Գրիգորիսն և բնկէց զՏէր Գէորգն յաթոռոյ հայրապետութեանն՝ և առեալ զքօղն ի ղլխոյ նորա. և Գէորգն վիրաւորեալ գնաց ի Տարսոն քաղաքն և անդ մեռաւ. և Տէր Գրիգորիսն եկեալ բնակեցաւ ի Մուտառասուն առ Գագիկ որդի Գուրգենայ։

Յայսմ ժամանակիս բռնակալեցաւ անօրէն և ամենաչար իշխանն Փիլառտոս, որ էր իսկ անդրանիկ որդի սատանայի, զի ի յանկանել Տիժէնին բռնակալեցաւ ի վերայ երկրի՝ այր չարաշունչ, որ էր իսկ սա կարապետ պղծոյ նեռինն՝ դիւաբնակ և այլանդակ չարաչար վարուք։ Սա սկսաւ տալ պատերազմ ընդ հաւատացելոցն Քրիստոսի, վասն զի էր սա անհաւատ քրիստոնեայ, ոչ Հայ գիտելով զնա և ոչ Հոռոմ՝ վարքն և կրօնքն զՀոռոմոցն ունէր, և հայրենեօքն և մայրենեօքն Հայ էր, և ի տղայութեանն կացեալ առ հօրեղբայր իւր ի վանքն՝ որ կոչի Զօրվրի-Կողեան՝ ի Հարսն-Մսրու գաւառին։ Սա ելեալ յանապատէ՝ և եղև պիղծ անապատի. սա տիրեալ բազում աշխարհաց և քաղաքաց և բազում մեծամեծ իշխանս կորոյս անողորմաբար և եկեալ բնակեցաւ ի Մշարն. և յղարկեաց և կոչեաց զքաջն Թոռնիկ զտէրն Սասնոյ գալ նմա ի հնազանդութիւն։ Եւ լուեալ զայս Թոռնիկ որդին Մուշեղայ և ծիծաղեալ զանմիտ հրամանաւ նորա և ասացեալ թէ՝ «Ահա որ բնաւ ես ոչ տեսանեմ զերեսս նորա»։ Եւ ասեն ցԹոռնիկ կոչնականքն Փիլառտոսին թէ՝ «Ահա գայ բազում զօրօք ի վերայ քո և տապալեալ աւերեսցէ զգաւառսն քո»։ Ասէ Թոռնիկ. «Եւ քանի՞ են զօրքն Փիլառտոսին». ասեն արքն՝ «Իբրև քսան հազար»։ Ասէ Թոռնիկն. «Են իմ հազար ձիաւորք, որ հանապազ

կայացնելով իր մանկահասակ որդուն՝ Մելիք Շահին, ասաց. «Ահա ես այսօր վախճանվում եմ այս վերքից։ Թող իմ որդին լինի ձեզ թագավոր, թող նա նստի իմ թագավորական գահին»։ Հանելով իր թագավորական հանդերձները, հագցրեց իր որդի Մելիք Շահին, խոնարհվեց ու երկրպագեց և լալագին նրան վստահեց աստծուն ու պարսից բոլոր ամիրաներին։ Նույն օրը մեռավ սուլթան Աբասլանը՝ անարգ և քրդաբարո մարդու ձեռքով։ Պարսից երկրի վրա թագավորեց Մելիք Շահը։ Նա բարի և գթասիրտ մարդ էր, քրիստոնյաների նկատմամբ շատ հեզահամբույր։ Նա գնաց նստավ իր հայրերի գահին, իսկ իր հոր՝ Աբասլանի [դին] տարավ թաղեց Մարանդ քաղաքում[280], իրենց հայրենական գերեզմանոցում։ Աստված բախտավոր արեց նրա թագավորությունը. նա տիրելով տիրեց բոլոր երկրների վրա և հայոց համայն աշխարհում խաղաղություն հաստատեց։

Հայոց 521 թվականին [3 մարտ 1072—2 մարտ 1073 թ.] տեր Գրիգորիսի և տեր Գևորգի միջև վեճ առաջացավ։ Տեր Գրիգորիսը տեր Գևորգին հայրապետական աթոռից տապալեց և նրա գլխից առավ քողը։ Գևորգը վշտահար գնաց Տարսոն քաղաքը, ուր և վախճանվեց։ Իսկ տեր Գրիգորիսն եկավ բնակվեց Մուտառասունում[281], Գուրգենի որդի Գագիկի մոտ։

Այս ժամանակները բռնատիրեց անօրեն և ամենաչար Փիլարտոս իշխանը[282], սատանայի անդրանիկ որդին. չարաշունչ, պիղծ Նեռի կարապետը՝ դիվային և այլանդակ, վատաբարո այդ մարդը [օգտվելով] Տիոյենի գահընկեցությունից, բռնատիրեց գավառի վրա։ Նա, անհավատ քրիստոնյան (նրան ոչ հայադավան, ոչ հունադավան չի կարելի համարել), սկսեց մարտնչել քրիստոնյաների դեմ։ Թեև հռոմների նիստուկացը և դավանանքն ուներ, նա հորից ու մորից հայ էր։ Մանկությունը նա անց էր կացրել իր հորեղբոր մոտ, Զորվրի-Կոզեռն կոչվող վանքում, Հարսնմսիր գավառում։ Անապատից դուրս գալով, նա դարձավ անապատի պիղծ։ Տիրելով բազում գավառների և քաղաքների վրա, նա անգթաբար ոչնչացրեց բազում մեծամեծ իշխանների և եկավ հաստատվեց Մշարում[283]։ Նա դիմեց Սասունի տեր քաջ Թոռնիկին՝ [պահանջելով] հպատակություն հայտնել իրեն։ Թոռնիկը՝ Մուշեղի որդին, նրա այդ ապուշ հրամանի վրա ծիծաղելով, ասաց. «Ես նրա երեսն անգամ չեմ ուզում տեսնել»։ Փիլարտոսի ներկայացուցիչները Թոռնիկին ասացին, թե՝ «Նա բազմաթիվ զինվորներով կգա քո դեմ և կավերի, կկործանի քո գավառները»։ Թոռնիկը պատասխանեց. «Ինչքա՞ն զորք ունի Փիլարտոսը»։ Նրանք պատասխանեցին, թե՝ «Շուրջ քսան հազար»։ Թոռնիկն ասաց. «Ես հազար ձիավոր ունեմ, որոնք միշտ հազորդվում են

հաղորդին ի մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ, և զայս այսպէս գիտեմ՝ զի Փիլատոսն և ամենայն զօրք իւր թափուր ևս ունայն են ի հաւատոցն Քրիստոսի և կան լցեալ ամենայն չարաչար յանցանօք»: Եւ գնացին և զայս ամենայն պատմեցին Փիլատոսին. և յայնժամ կոչեաց Փիլատոսն զՏէր Գրիգորիս և ասէ ցնա՝ եթէ «Քո փեսայ է Թոռնիկն, գնա և կոչեա զնա ինձ ի հնազանդութիւն»: Իսկ Տէր Վահրամն վասն չար բարուցն Փիլատոսին յոչ կամաց գնաց առ Թոռնիկն և այլ ոչ տեսաւ զերեսն Փիլատոսին: Եւ պատմեաց զպատճառն գալոյն Թոռնկայ, և հիացեալ Թոռնիկն և ասէր՝ եթէ «Զի՛ՙրդ ոչ պատկառեցաւ երեսք անօրինին ի սաստիկ լրբութեանցն իւրոց յուղարկել զքեզ առ իս իբրև զդեսպան հանդերձ սուտ երդմամբ»: Եւ դիտացեալ Փիլատոսին, եթէ ոչ կամի գալ Թոռնիկն ի կոչ նորա, զօրաժողով արարեալ գնաց ի վերայ Թոռնկայ. և Թոռնիկ ոչ դիտացեալ զգալն նորա ի վերայ իւր՝ և իբրև լուաւ զգալն Փիլատոսին, ձայն տուեալ զօրաց իւրոց և արար ժողով զամենայն Սասուն՝ չիսուն հազար հետևակաց և վեց հազար ձիաւորաց, և գայր ի Ճապղ-ջուրն. և ոչ հաւատայր գալոյ Փիլատոսին, դարձոյց զամենայն հետևակազօրն, և ինքն հազար ձիաւորով գնայր ի յԱշմուշատ քաղաքն Հայոց: Եւ յԱվելուայ դաշտին հանդիպեցան զօրքն Փիլատոսին. և էր Փռանգաց կոմսն Ռմբազատան զհետ Փիլատոսին ուխ հարիւր արամբք. և տրտմեցաւ Թոռնիկ, որ դարձոյց զհետևակ զօրսըն իւր. և յայնժամ կարգեաց Թոռնիկ զօր պատերազմին իւրոյ դաս առ դաս յայսկոյս և յայնկոյս և առաջոյ, և թիկնապահ իւր եդեալ զկապոսն՝ զայր քաջ՝ երեք հարիւր արամբք, բայց ակնածէր ի Փռանգէն քան յայլ զօրացն և ասէր թէ՝ «Տեսէք զի մի գունդս երթիցէ ընդդէմ Փռանգին»: Եւ ահա գայր Ռմբազատ և զօրք իւր և ի դիմի հարաւ Թոռնըկայ գնդին և պատառեաց զզօրսն և չանց ընդ մէջն. և յայնժամ ձայն տուեալ Թոռնիկ զօրաց իւրոց, և միաբան ի մէջ իւրեանց փակեցին զնոսա և զամենայն իշխանսն ձերբակալս արարին, կալան և զկոմսն նոցա՝ և զՓիլատոսն և զամենայն զօրս իւր արարին փախստական և զիշխանս նոցա ձերբակալս՝ արս հազար և հինգ հարիւր. և յաւուր յայնմիկ եղև բազում կոտորած Փռանգաց և այլոց քրիստոնէից: Եւ դարձաւ Թոռնիկն և ամենայն զօրքն Հայոց՝ գնացին ի Սասուն բազում աւարաւ. և Փիլատոսն գնաց փախստական և լի ամօթով մտանէր ի Խարգբերդ: Այս եղև ի Յանձիթ գաւառին ի յԱվելուայ դաշտին:

Յայսմ աւուրս գայր Թոռնիկն սակաւ արամբք և մտանէր ի բերդն իւր յԱշմուշատ քաղաքի ի յԱրծնոյ վերայ. և յանկարծակի գայր ամիրայ ոմն բազում զօրօք, որում անուն էր Ամր-Փաքր. և լուաւ եթէ Թոռնիկ առանց զօրաց է, յայնժամ հրամանաւ Փիլատոսին գայր ի վերայ Թոռ-

աստծո որդու մարմնով և արյամբ։ Ես համոզված եմ, որ Փիլարտոսն ու նրա բոլոր զինվորները հեռու են և անմասն Քրիստոսի հավատքից, ամեն տեսակի մեծ մեղքերով ծանրաբեռնված»։ Այդ բոլորը զնացին պատմեցին Փիլարտոսին, որը, կանչելով տեր Գրիգորիսին, ասաց. «Թոռնիկը քո փեսան է. գնա և կոչ արա՝ գա ինձ հպատակություն հայտնի»։ Տեր Վահրամը[284] Փիլարտոսի չարաբարության առջև տեղի տվեց, ակամա գնաց Թոռնիկի մոտ և այլևս Փիլարտոսի երեսը չտեսավ։ Նա Թոռնիկին պատմեց իր գալստյան պատճառը։ Թոռնիկն ապշեց ու ասաց. «Այդ ամենալիրբ անօրենը չամաչե՞ց և քեզ որպես դեսպան ինձ մոտ ուղարկեց՝ իր սուտ երդումով հանդերձ»։ Փիլարտոսը, համոզվելով, որ Թոռնիկը չի ուզում իր կոչին ընդառաջ գնալ, զորահավաք արեց և Թոռնիկի վրա շաթժվեց։ Թոռնիկն անտեղյակ էր Փիլարտոսի գալստյան մասին, բայց երբ տեղեկացավ, ձայն տվեց իր զինվորներին. ամբողջ Սասունում զորահավաք անելով, հիսուն հազար հետևակ և վեց հազար ձիավոր, նա եկավ Ճապաղջուր[285]։ Նա [դեռ] չէր հավատում, որ Փիլարտոսը կարող է [իր վրա] գալ, դրա համար նա իր ողջ հետևակազորը ետ ուղարկեց։ Ինքը հազար ձիավորով գնաց հայոց Աշմուշատ քաղաքը։ Ալելուա դաշտում[286] նրանք հանդիպեցին Փիլարտոսի զորքերին։ Փիլարտոսի հետ էր ֆրանկների կոմս Ռմբաղատը[287] ութ հարյուր հոգով։ Թոռնիկն ափսոսաց, որ իր հետևակազորը ետ ուղարկեց։ Նա իր մարտիկներին խումբ-խումբ դասավորեց ձախ ու աջ կողմերում, ապա ճակատում, իսկ թիկունքի պաշտպանությունը հանձնեց քաջ Կապոսին՝ երեք հարյուր հոգով։ Թոռնիկն ամենից շատ ֆրանկներից էր վախենում, դրա համար կարգադրեց. «Այնպես արեք, որ մի գունդ գնա ֆրանկների դեմ»։ Եվ ահա Ռմբաղատն իր զորքով եկավ և բախվեց Թոռնիկի գնդի ճակատին, ճեղքեց այն և ներս խրվեց։ Թոռնիկն իր զինվորներին ձայն տվեց, և բոլորը միասին շրջապատելով նրանց, բոլոր իշխաններին՝ հազար հինգ հարյուր հոգու գերեցին, բռնեցին նրանց կոմսին, իսկ Փիլարտոսին և նրա բոլոր զինվորներին փախուստի մատնեցին։ Այդ օրը ֆրանկների և այլ քրիստոնյաների մեծ կոտորած եղավ։ Թոռնիկը և հայոց բոլոր զինվորները մեծ ավարով գնացին Սասուն, իսկ Փիլարտոսը փախստական ու խայտառակված մտավ Խարբերդ։ Այս [դեպքը] տեղի ունեցավ Անձիտ գավառի Ալելուա դաշտում։

Այդ օրերին Թոռնիկը փոքրաթիվ զորքով եկավ մտավ Աշմուշատ քաղաքի իր բերդը, որ կառուցված էր Արածանի գետի վրա։ Անսպասելիորեն բազում զորքերով երևաց մի ոմն ամիրա, որի անունը Ամրքափր էր։ Իմանալով, որ Թոռնիկն առանց զինվորների է, Փիլարտոսի

նրկայ և խաբանօք և սուտ երդմամբ սկսաւ սէր միաբանութեան կարգել ընդ նմա, մինչև ի ձեռն բազում տրոց և ընծայից հաւանեցուցանէր զծառայն Թոռնկայ և այսու պատրեալ զնա՝ հանէր ի սուտ սէր միաբանութեան իւրեանց՝ երեք արամբ։ Եւ մինչդեռ կային ի գինարբուսն, վազեաց ամիրայն գազանաբար և կամէր սպանանել զնա. և ոչինչ ունէր ընդ իւր Թոռնիկն, բայց փոքր դանակով հարեալ զամիրայն՝ ի վայր թափեաց զփոր նորա և զայլոց ամիրայիցն բռնեալ զգլուխն՝ յիրար ծեծեալ սատակեաց. և ինքն ելեալ անվնաս գնայր ի բերդն, վասն զի մօտ էր բերդն. և ամենայն Թուրքն փախստական լինէին առաջի նորա։ Եւ յորժամ գնաց մօտ ի բերդն, մի ոմն ի թագաւորեան կայր յայլազգեացն, հարեալ զԹոռնիկ ոմբով ի սիրտն գաղտաբար, և անդէն մեռանէր քաջն Թոռնիկ. և տարան զգլուխն նորա առ Փիլատոսն։ Եւ անօրէն Փիլատոսին հանեալ զսկաւառակ գլխոյն՝ արար գաւաթ և նովաւ ըմպէր գինի, և զմնացեալն ի գլխոյն առաքէր առ ամիրայն Մուփարկնայ, և զամենայն մարմին նորա այրէր հրով, զորս յետոյ ժողովեցին զայրեցած զոսկերս նորա զառն քաջի և աստուածապաշտի և տարան թաղեցին ի դուռն սրբոյ Կարապետին։ Եւ մնաց իւր երկու որդի՝ Զորտուանէլն և Վասակ՝ ի տղայական հասակի։

Յայսմ ժամանակի անօրէնն Փիլատոս յղարկեաց և կոչեաց զՏէր Գրիգորիս յաթոռ հայրապետութեանն իւրոյ. և նա ոչ եկն ի կոչն նորա, վասն զի զարհուրեալ էր ի չարաշունչ գազանէն։ Գարձեալ գրեաց Փիլատոսն առ սուրբ հայրապետն և ասէր. «Զէ օրէն աթոռոյս հայրապետութեան առանց հայրապետի կալ». և նա ոչ համարձակեցաւ գնալ, այլ գրեաց Տէր Գրիգորիս առ Փիլատոսն և ասէր, եթէ «Դի՛ր իմ հրամանաւն յաթոռ հայրապետութեանդ զՏէր Սարգիս զբուրորդին Տէր Պետրոսի»։ Եւ յայնժամ Տէր Գրիգորիս յղարկեաց զքօղն և զգաւազանն և զսուրբ նշանն Տէր Պետրոսի առ Տէր Սարգիս։ Եւ տեսեալ Փիլատոսն զայս ամենայն՝ ծանեաւ եթէ Տէր Գրիգորիս այլ ոչ դառնալոց յաթոռ հայրապետութեան իւրոյ. և յայնժամ հրամայեաց Փիլատոսն լինել ժողով եպիսկոպոսաց և հարանց վանականաց և կրօնաւորաց. և ձեռնադրեցին զՏէր Սարգիս յաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց ի քաղաքն՝ որ կոչի Հոնի, ի Ջահան գաւառի, վասն զի էր այր սուրբ և հրաշափառ տեսլեամբ և հռչակաւոր առաքինի և յամենայն կողմանց զարդարեալ ամենայն աստուածպաշտութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ, որ ի Քրիստոս Յիսուս, և էր կատարեալ օգնական հօտին Քրիստոսի։ Եւ յայնժամ Տէր Գրիգորիս գնացեալ ի մայրաքաղաքն Հայոց՝ որ կոչի Անի, և անդ ձեռնադրեաց եպիսկոպոս զԲարսեղն՝ զբեռորդին իւր՝ զորդի Վասակայ որդւոյ Ապիրատին՝ որդւոյ Հասանայ, որ ի յետ ժամանակաց

հրամանով դիմեց նրան խաբեպատիր խոսքերով ու ծուռ երդումներով, նրա հետ փորձեց բարեկամություն հաստատել. նրան հաջողվեց բազմաթիվ նվերներով ու ընծաներով համոզել Թոռնիկի սպասավորներին, նրանց օգնությամբ խաբել նրան և երեք հոգով իր մոտ հրավիրել: Երբ նրանք գինարբուքով էին տարված, ամիրան գաղանաբար հարձակվեց Թոռնիկի վրա, ուզենալով սպանել նրան: Թոռնիկի մոտ, բացի մի փոքր դանակից, ոչինչ չկար: Ահա [դրանով] նա խփեց ամիրային և թափեց նրա փորոտիքը, մյուս ամիրաների գլուխներն էլ մեկը մյուսին զարնելով, սատկացրեց: Ինքն էլ, անվնաս մնալով, ելավ գնաց դեպի իր բերդը, որ մոտիկ էր գտնվում: Բոլոր թուրքերը փախուստի դիմեցին: Երբ նա մոտեցավ բերդին, դարան մտած մի այլազգի նիզակով թաքուն հարվածեց Թոռնիկի սրտին, որից քաջ Թոռնիկը մահացավ: Նրա գլուխը տարան Փիլարտոսին: Անօրեն Փիլարտոսը [Թոռնիկի] գանգից թաս սարքեց և նրանով էր գինի խմում, իսկ գանգի մնացած մասը Մուփարկինի ամիրային ուղարկեց, մարմինն էլ կրակի տվեց: Հետագայում այդ քաջ ու աստվածապաշտ մարդու այրված ոսկորները հավաքեցին և տարան թաղեցին Սուրբ Կարապետի [վանքի] շեմքին: Թոռնիկը երկու անչափահաս որդի թողեց՝ Զորտվանելին և Վասակին[288]:

Այս ժամանակ անօրեն Փիլարտոսը դիմեց տեր Գրիգորիսին և հրավիրեց նստելու իր հայրապետական աթոռին, սակայն նա, չարաշունչ գազանից վախեցած, չընդառաջեց նրա կոչին: Փիլարտոսը կրկին անգամ գրեց սուրբ հայրապետին, ասելով. «Հայրապետական աթոռը չի կարող թափուր մնալ»: Բայց Գրիգորիսը չհամարձակվեց գնալ և Փիլարտոսին գրեց հետևյալը. «Իմ հրամանով հայրապետական աթոռը տուր տեր Պետրոսի քրոջորդի տեր Սարգսին»: Տեր Գրիգորիսը տեր Պետրոսի քողը, գավազանը և սուրբ խաչը տեր Սարգսին ուղարկեց: Փիլարտոսը, համոզվելով, որ տեր Գրիգորիսը այլևս չի վերադառնա իր հայրապետական աթոռը, հրամայեց եպիսկոպոսների, վանահայրերի և վանականների ժողով գումարել: Ջահան գավառի Հոնի կոչվող քաղաքում հայոց կաթողիկոս ձեռնադրեցին տեր Սարգսին[289], քանզի նա սուրբ մարդ էր, ուներ փառավոր արտաքին, առաքինությամբ հռչակված էր և ամեն տեսակետից աստվածապաշտ՝ Հիսուս Քրիստոսին ճշմարիտ խոստովանող, Քրիստոսի հոտի կատարյալ հովիվ: Տեր Գրիգորիսը գրեց հայոց մայրաքաղաքը, որ Անի է կոչվում, որտեղ եպիսկոպոս ձեռնադրեց իր քեռորդի Բարսեղին՝ Վասակի որդուն, Ապիրատի որդու, Հասանի որդու, [այն Բարսեղին], որ հետագայում հայոց երկրի հայրա-

էառ զաթոռ հայրապետութեան տանն Հայոց։

Եւ էր ի թուականութեանս Հայոց ՇԻԹ, և ապա զկնի այսորիկ գընաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպոլիս և անգուստ ի Հռոմ. և եկեալ յԵգիպտոս՝ շրջեցաւ ընդ անապատսն ամենայն առաջին սրբոց հարցն և կատարեաց զամենայն փափագումն սրտին իւրոյ. և հաստատեաց անդէն իւր զաթոռ հայրապետութեանն և կանգնեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցւոյ. և բաղում փառք և մեծութիւն ընկալաւ Տէր Գրիգորիս ի թագաւորէն Եգիպտոսի առաւել քան ի թագաւորէն Հռոմոց։ Եւ բաղում զօրք ժողովեցան յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց. և Տէր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթուղիկոս զՏէր Գրիգոր՝ զբուրորդին իւր՝ և ինքն հլեալ գայր յաշխարհն Հայոց, վասն զի դեռ ևս կենդանի կայր մայրն նորա։

Եւ եղև յորժամ թագաւորեաց Հռոմոց որդի Տուկծին Միխայլն, և կացեալ նորա յաթոռ թագաւորութեանն զամս չորս. և էր այր բարի և աստուածասէր, զարդարեալ ամենայն առաքինութեամբ և լուսաւոր սրբութեամբ և յամենայն կողմանց նմանեալ էր առաջին սրբոց թագաւորացն և փայլեալ ուղղափառ հաւատովք, որ ի Քրիստոս Յիսուս. և եղև հայր որբոց և դատաւոր այրեաց։ Եւ հրամանաւ սորա զարկաւ դահնկան անչափ և անհամար իբրև զհող և կամ զաւազ ծովու, որ և եղև մնացական և օգուտ աշխարհի, վասն զի Աստուածով զարկաւ. և յԱստուծոյ էջ շնորհք ի վերայ նորա մինչև յաւիտեան՝ և լցաւ ամենայն աշխարհն գանձով նորա։ Իսկ սորա սկիզբն արարեալ պահոց և աղօթից՝ և ամենայն պայծառ սրբութեամբ վարեաց զկեանս իւր. և ոխացեալ ընդ իւր թագուհին իւր վասն վարուց սրբութեան, զի ոչ խառնակէր ընդ նմա ամուսնութեամբ, և տուփացեալ թագուհին ումն իշխանի Հռոմոց և ի ձեռն պիղծ գործոյ իւրոյ յարուցանէր զնա ի վերայ Միխայլին՝ և բռնութեամբ խնդրէր զաթոռ թագաւորութեանն ի նմանէ։ Եւ տեսեալ զայս ամենայն թագաւորն Միխայլ, զի շարժեաց զամենայն Կոստանդնուպոլիս ի վերայ իւր, որոյ անուն Վոտոնիատ ասէին, և թագաւորն Միխայլ սկսին հակառակեցաւ ընդդէմ նոցա. այլ յայտնապէս անիծեաց զամենասպիղծ թագուհին և հողեալ զաթոռ թագաւորութեանն՝ գնաց ի վանք կրօնաւորաց և զգեցաւ այծէնս և արար սկիզբն վարուց կրօնաւորութեան, վասն զի զայն ունէր ցանկութիւն ի վաղուց ժամանակաց հետէ՝ և հողեալ զաթոռ թագաւորութեան իւրոյ և զթագ։

Ի թուականութեանս Հայոց ՇԻԸ թագաւորեաց ի վերայ Հռոմոց Վոտոնիատն և առեալ իւր կին զկին Միխայլին և զդուստր Գուրգէի Վրաց թագաւորին. որ յաղագս աղտեղի պոռնկութեան առին զմիմեանս։

Յայսմ ժամանակի սպանաւ Վասակ իշխանն Հայոց որդի Գրիգորի

պետական աթոռին նստեց։

Այդ բոլորից հետո, հայոց 523 թվականին [3 մարտ 1074—2 մարտ 1075 թ.] տեր Գրիգորիսը գնաց Կոստանդնուպոլիս, այնտեղից էլ՝ Հռոմ։ Գալով Եգիպտոս, նա շրջագայեց առաջին սուրբ հայրերի բոլոր անապատներում և կատարեց իր սրտի բոլոր փափագները։ Այնտեղ նա հաստատեց հայրապետական աթոռը[290] և նորոգեց սուրբ եկեղեցու բոլոր կարգերը։ Տեր Գրիգորիսը Եգիպտոսի թագավորից[291] մեծ փառքի ու պատվի արժանացավ, ավելի քան հոռոմոց կայսրից։ [Այդ ժամանակները] Եգիպտոսում բազմաթիվ հայեր հաստատվեցին, շուրջ երեսուն հազար հոգի[292]։ Տեր Գրիգորիսը որոշ ժամանակ անց իր քեռորդի տեր Գրիգորին կաթողիկոս ձեռնադրեց, իսկ ինքը ելավ եկավ հայոց երկիրը, որովհետև իր մայրը դեռ կենդանի էր։

Հոռոմների վրա թագավորած Տուկծի որդի Միքայելը գահակալեց չորս տարի։ Նա բարի, աստվածասեր մարդ էր՝ բոլոր առաքինություններով օժտված, անշափ անարատ։ Նա ամեն ինչով նման էր առաջին սուրբ թագավորներին և փայլեց դեպի Հիսուս Քրիստոսն ունեցած [իր] ուղղափառ հավատով։ Նա դարձավ որբերի հայր և այրիների պաշտպան։ Նրա հրամանով հողի կամ ծովի ավազի չափ շատ ու անհամար դահեկան հատվեց, կայուն և երկրի համար օգտաբեր, որովհետև Քրիստոսի նկարը կար վրան։ Եվ աստծո շնորհը նրա վրա իջավ առհավետ, և ամբողջ երկիրը ողողվեց նրա դրամով։ Նա պահեցող և աղոթող դարձավ և ամբողջ կյանքը մաքուր և անարատ պահեց։ Կայսրուհին նրա սուրբ վարքագծի համար, որ իր հետ ամուսնական հարաբերության մեջ չէր մտնում, հետը թշնամացավ, սիրային կապեր հաստատեց հոռոմոց մի իշխանի հետ, որին Վոտանիատ էին ասում, և նրան դրդեց Միքայելի դեմ։ Վոտանիատը Միքայելի դեմ ոտքի հանեց ողջ Կոստանդնուպոլիսը և բռնությամբ պահանջեց կայսերական գահը։ Միքայել կայսրը, տեսնելով, որ Վոտանիատը ողջ Կոստանդնուպոլիս քաղաքը իր դեմ է հանել, չդիմադրեց, այլ, բացեիբաց անիծելով ամենապիղծ թագուհուն, հրաժարվեց թագավորական գահից և գնաց վանք, ճգնավորի սքեմ հագավ և սկսեց վանականի կյանք վարել. նա վաղուց էր ձգտում դրան՝ հրաժարվելով թագավորական գահից և թագից։

Հայոց 525 թվականին [2 մարտ 1076—1 մարտ 1077 թ.] հոռոմոց վրա թագավորեց Վոտանիատը[293]։ Նա ամուսնացավ Միքայելի կնոջ հետ, որ վրաց թագավոր Գուրգենի դուստրն էր։ Պիղծ խառնակության համար նրանք ամուսնացան միմյանց հետ։

Այս ժամանակ սպանվեց հայոց Վասակ իշխանը՝ Գրիգոր Մագիստ-

մագիստրոսին և եղբայր Տէր Գրիգորիսի. սա էր տուկ ի յԱնտիոք քաղաքին, սա սպանաւ ի շուկայ փողոցին Անտիոքայ ի ձեռն նենգաւոր ազգին Հոռոմոց, զի յորժամ անցանէր ընդ փողոցն, գային երկու հատուած յերկրպագութիւն Վասակայ և խուզէ ինչ ստութեանց ի վեր կալեալ առաջի Վասակայ, և նա խոնարհեալ զի առցէ զխուզէն ի նոցանէ, և ի նոյն ժամայն հարեալ զնա ուրագովն ի յաջամէջսն, և մեռաւ մեծն Վասակ յանարժան և ի պիղծ արանց. և ժողովեցան զօրք նորա ի կլայն Անտիոքու. և յայնժամ ազատագունդքն Վասակայ կոչեցին զՓիլատոս և տան զԱնտիոք ի ձեռս նորա։ Իսկ Փիլատոսն զհետ աւուրց ինչ ժողով արարեալ զամենայն ազգն Հոռոմոց զննենգաւորսն և զհատատքն՝ արս եւթն հարիւր, և պատճառէր ուրեք երթալ ի պատերազմ. և տարեալ զնոսա ի գետ մի՝ որ կոչէր Ափշուն, և յայնմ տեղւոջ սուր եդեալ ի վերայ՝ կոտորեաց զամենայն հատատսն առհասարակ. և յայնժամ բռնակալեցաւ Փիլատոսն ի վերայ Անտիոքայ և առեալ վրէժ արեան մեծին Վասակայ Պալհաւունւոյ։

Յայսմ ժամանակի սպանաւ Եպիխտն իշխանն Հայոց, այր քաջ և պատերազմող, ի տանէն Շիրակայ, զոր վասն քաջութեանն իւրոյ թագաւորն Յունաց բռնադատեաց՝ և արկեալ կնքեաց զնա ի Հոռոմ հաւատն, բայց նա ի ծածուկ զհայրենի հաւատն իւր պաշտէր զսրբոյն Գրիգորի։ Սորա հիւանդացեալ ի բերդն՝ որ կոչի Անդրիուն. և էր նորա տուեալ ի թագաւորէն Հոռոմ աբեղայ մի առաջնորդ սնոտի հաւատոյն նորա, և էր կարգեալ զնա հայր խոստովանութեան։ Իսկ անօրէն և սիղծ առաջնորդն յաւուր միում մտեալ առ Պիխտն և տեսեալ զնա, զի ննջեալ կայր քաղցրիկ ի մահիճս իւր, յարձակեցաւ դազանաբար ի վերայ նորա և առեալ զբարձն դնէր ի վերայ բերանոյ նորա՝ և ուժգին անկեալ ի վերայ նորա և չարաչար սպանանէր զայր հզօր և քաջ՝ չարագործ և պիղծ կրօնաւորն Հոռոմոց։ Եւ յայնժամ գիտացեալ զօրաց նորա զննենգաւոր մահն քաջին՝ մեծաւ բարկութեամբ չարշարեալ զանօրէն հերետիկոսն և զկնի չարշարանացն ձգեցին զպիղծ աբեղայն ընդ քարծայր բերդին, և անդէն սատակեցաւ չարն չար մահուամբ և կորեաւ։

Իսկ թագաւորն Վոտոնիատն զմի ամ կալեալ զաթոռ թագաւորութեանն և այլ ոչ կամեցաւ ունել զաթոռ թագաւորութեանն, վասն զի հակառակութեամբ և պոռնկութեամբ համարեցաւ զնա և ոչ հրամանաւն Աստուծոյ, զի շնութեամբ էառ զկին Միխայլին և ոչ հրամանաւն Աստուծոյ և թագաւորեաց անիրաւաբար. և կարի յոյժ նեղէր զնա խիղճ մտաց իւրոց, և ընդ միտս իւր ասացեալ եթէ՝ «Այն որ թագաւոր էր և տէր աթոռոյս, եթող և եղև աբեղայ, ես զի՞րդ ընդդիմանամ չարամտութեամբս իմով, և ահա զկնի գայ և հասանէ մահն»։ Եւ յայնժամ

րոսի որդին և տեր Գրիգորիսի եղբայրը։ Նա Անտիոք քաղաքի դուկն էր և նենգ հռոմների ձեռքով սպանվեց Անտիոքի շուկայի փողոցում։ Երբ նա անցնում էր փողոցով, երկու հաստատներ[294] եկան Վասակին երկրպագեցին և ինչ-որ կեղծ նամակ մեկնեցին նրան. երբ նա խոնարհվեց այն վերցնելու, տապարով հարված իջեցրին նրա աջ կողին։ Սպանվեց մեծ Վասակը ստոր ու պիղծ մարդկանց ձեռքով։ Վասակի զինվորները հավաքվեցին Անտիոքի բերդը. նրա ազատագունդ զորքը Փիլարտոսին հրավիրեց և նրան հանձնեց Անտիոքը։ Մի քանի օր անց Փիլարտոսը հավաքեց բոլոր հռոմներին, յոթ հարյուր նենգավոր հաստատներին և ձևացրեց, թե ցանկանում է պատերազմի գնալ։ Տանելով Ափշուն կոչվող մի գյուղ, հենց այնտեղ բոլոր հաստատներին սրի քաշեց և խսպառ կոտորեց, որից հետո Փիլարտոսը բռնությամբ տիրեց Անտիոքին և մեծ Վասակ պահլավունու արյան վրեժն առավ։

Նույն այս ժամանակ սպանվեց հայոց իշխան Եպիխտը[295], մի քաջ և պատերազմող մարդ, [ծագումով] Շիրակ գավառից։ Նա այնքան քաջ էր, որ հունաց կայսրը նրան հունադավան դարձրեց, թեև Եպիխտը ծածուկ դավանում էր իր հայրենի՝ սուրբ Գրիգորի հավատքը։ Նա հիվանդացավ իր Անդրիուն[296] կոչվող բերդում։ Կայսրը Եպիխտին խոստովանահայր էր նշանակել մի հռոմ աբեղայի՝ իր ստահոդ հավատքի հոգևոր առաջնորդի։ Անօրեն և պիղծ առաջնորդը գնաց Եպիխտի մոտ և, տեսնելով, որ նա մահճակալի վրա քաղցր ննջել է, գաղանի պես վրան հարձակվեց, առավ բարձը ու, դնելով Եպիխտի բերանին, ուժեղ ընկավ նրա վրա, և հռոմից այդ ոճրագործ ու պիղծ վանականը չարաչար սպանեց հզոր և քաջ մարդուն։ [Եպիխտի] զինվորները, իմանալով քաջի չարաննենգ սպանության մասին, սաստիկ գազազած, խոշտանգեցին այդ անօրեն հերետիկոս պիղծ աբեղային, տանջեցին և բերդի ժայռից ցած գլորեցին։ Չարաննենգ մարդը տեղնուտեղը չարաչար սատակեց և մատնվեց կորստյան։

Վոտանիատ կայսրը թագավորական գահին նստեց ընդամենը մեկ տարի[297] և որոշեց հրաժարվել, որովհետև թշնամությամբ ու ստորությամբ էր տիրացել նրան և ոչ աստծո հաճությամբ, որովհետև շնությամբ էր առել Միքայելի կնոջը և ոչ աստծո կամքով, և իրավունք չուներ թագավորելու։ Նրան իր խիղճը շատ էր տանջում և ինքն իրեն ասում էր, թե՝ «Նա, ով կայսր էր և այս գահի տերը՝ հրաժարվից և աբեղա դարձավ։ Արդ, ես ինչո՞ւ եմ չարամտորեն հակառակվում, չէ՞ որ ետևից մահն է գալիս հասնում»։ Նա անմիջապես հրաժարվեց կայ-

ի բաց թողեալ զաթոռ թագաւորութեանն, վասն զի մեծաւ յանցանօք նենգաւորեաց սուրբ թագաւորին Մխիթարին, և զկնի այսորիկ եղև վոտնիատան արեղայ։

Յայսմ ժամանակիս նստուցանեն յաթոռ թագաւորութեանն Հոռոմոց զՄելեսիանոսն, և էր ի թուականութեան Հայոց ՇԻԶ։

Փարձեալ ի թուականութենես Հայոց մնուանէր ամենագովելին Տէր Սարգիս հայրապետն Հայոց, որ էր քուրորդի Տեառն Պետրոսի կաթուղիկոսին Հայոց. և հրամանաւ նորին նստուցին յաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց զՏէր Թորոսն զդրան եպիսկոպոսն Տեառն Սարգսի Հայոց կաթուղիկոսին, զմեծ երաժիշտն ձայնաւորաց՝ որ մականուն ասի Ալախոսիկ, ի քաղաքն՝ որ կոչի Հռնի, ի Ջահան գաւառի։

Յայսմ ժամանակիս Վասիլն Ապուքապայ որդին, այն որ յառաջն վրանապահ էր լեալ Դաւթի կուրապաղատին, սորա հրամանաւ Փիլառատոսին արարեալ ժողովս հնծելոց և գայր ի վերայ քաղաքին Ուռհայոյ՝ և բազում պատերազմաւ նեղէր զքաղաքն զամիսս վեց։ Եւ յայսմ ամի շինեաց Վասիլն զպարիսպն բերդաքաղաքին՝ որ կոչի Ռնասլոփս, զոր շինեաց Ռամանոս թագաւորն Հոռոմոց. և յետ այսորիկ նեղեաց զքաղաքն Ուռհա. և յայնժամ քաղաքացիքն արարին խուխայ ի վերայ տուկին իւրեանց՝ որ ասէին Լևոն՝ որ էր եղբայր Դաւատանոսին. և եղև ի խախստական Լևոն և անկանէր ի վերին կլայն. և Պռօքսիմոսն նորա անկանէր ի մէջ եկեղեցւոյն, որ ասի սուրբ Աստուածածին. և մտեալ բուռն եհար զեղջերաց սրբոյ սեղանոյն՝ և մտեալ քաղաքացիքն յեկեղեցին և դազանաբար սպանանէին զնա առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ։ Եւ յայնմ աւուր եառն զՈւռհա ի ձեռս Վասլին՝ Ապուքապայ որդուոյն, որ էր այր բարի և աստուածասէր, ողորմած ի վերայ սրբոց և այրեաց, խաղաղարար և շինող աշխարհի, որ և յառաջն հայրն նորա Ապուքապն կացեալ էր ի քաղաքն Ուռհա, և նորա շինեալ էր և սինօռեալ զամենայն գաւառն. այս եղև ի թուականութենես Հայոց ՇԻԶ։

Յայսմ ժամանակիս կացեալ թագաւոր Մելեսիանոսն ի Կոստանդնուպօլիս զամիսս չորս, և յայնժամ ամենայն բազմութիւն քաղաքին միահամուռ յարեան ի վերայ Մելեսիանոսին և շարժեցին պատերազմ ի վերայ նորա և յափշտակեցին ի նմանէ զթագն և զաթոռ թագաւորութեանն՝ և դնեն զթագն ի գլուխն իշխանի միում՝ որում անուն ասէին Ալէքս, որ էր եղբօրորդի Կոմանոս թագաւորին, այր բարի և աստուածասէր և քաջ ընդդէմ պատերազմաց. և յայսմ ժամու լինէր խաղաղութիւն ամենայն։

Իսկ յորժամ բարձրացաւ թուականութիւնս Հայոց ի չամս ՇԻԸ՝ եղև սով սաստիկ ընդ ամենայն աշխարհս խաչապաշտից յայնկոյս ծովուն

սերական գահից, որովհետև նենդ կերպով մեծ մեղք էր գործել սուրբ կայսր Միքայելի նկատմամբ, և որից հետո դարձավ աբեղա։

Այն ժամանակ հռոմոց թագավորական գահին նստեցրին Մելեսիանոսին[298]. դա հայոց 526 թվականին էր [2 մարտ 1077—1 մարտ 1078 թ.]։

[Նույն] թվականին վախճանվեց հայոց ամենագովելի հայրապետ տեր Սարգիսը՝ հայոց կաթողիկոս տեր Պետրոսի քեռորդին։ Նրա հրամանով Ջահան գավառի Հոնի քաղաքում հայոց կաթողիկոսական աթոռին նստեցրին տեր Թեոդորոսին, հայոց կաթողիկոս տեր Սարգսի հայրապետանոցի եպիսկոպոսին, ձայնավորաց մեծ երաժշտին, որի մականունը Ալախոսիկ էր[299]։

Այս ժամանակ Դավիթ կուրապաղատի նախկին վրանապահ Ապուքապի որդին՝ Վասիլը, Փիլարտոսի հրամանով հեծալազորի զորահավաք արեց և եկավ Ուռհա քաղաքի վրա։ Նա, բաղում մարտեր մղելով, վեց ամիս նեղ վիճակի մեջ գցեց քաղաքը։ Այդ տարին Վասիլը կառուցեց հռոմոց կայսր Ռոմանոսի շինած Ռոմանոսոլիս բերդաքաղաքի պարիսպը, որից հետո պաշարեց Ուռհա քաղաքը։ Քաղաքացիները Լևոն անունով իրենց դուքի՝ Դավատանոսի եղբոր դեմ խռովություն բարձրացրին։ Լևոնը դիմեց փախուստի և ապաստանեց վերին բերդում, իսկ նրա պրոքսիմոսը՝ Սուրբ Աստվածածին կոչվող եկեղեցում։ Մտնելով ներս, նա բռնեց աստծո սուրբ սեղանի եղջյուրից[300], բայց քաղաքացիները, եկեղեցի մտնելով, աստծո սուրբ սեղանի առջև դաղանաբար սպանեցին նրան։ Նույն օրն իսկ նրանք Ուռհան տվեցին Վասիլին՝ Ապուքապի որդուն, որ բարի և աստվածասեր մարդ էր, որբերի և այրիների պահպանող, խաղաղարար և երկիրը շենացնող։ Իրենից առաջ Ուռհա քաղաքի դուքն էր եղել իր հայր Ապուքապը, նա էր շենացրել և պարսպապատել ողջ դավառը։ Դա տեղի ունեցավ հայոց 526 թվականին։

Մելեսիանոսը Կոստանդնուպոլսում թագավորեց չորս ամիս, երբ քաղաքի ողջ բնակչությունը միահամուռ կերպով ապստամբեց, հարձակվեց Մելեսիանոսի վրա և նրանից խլեց թագն ու թագավորական գահը։ Թագը դրին Ալեքս[301] անունով մի իշխանի գլխին, բարի, աստվածասեր, քաջ պատերազմող մի մարդու, որ Կոմանոս կայսեր եղբորորդին էր։ Այդ պահից ահա հունաց երկիրը խաղաղվեց։

Հայոց 528 թվականի [2 մարտ 1079—29 փետրվար 1080 թ.]

Ովկիանոսի, վասն զի արեանարբու և գազանացեալ ազգն Թուրքաց տա-
րածեցաւ ընդ ամենայն երեսս երկրի, որ ոչ մնաց գաւառ ի խաղաղու-
թենան, այլ կայր մատնեալ ամենայն տունն քրիստոնէից ի սուր և ի գե-
րութիւն. և արգելաւ վաստակ հողագործութեան յերկրէ, և հատաւ կե-
րակուր հացի, և սրով և գերութեամբ հատան մշակք և վաստակաւորք,
և առհասարակ տարածեցաւ ընդ ամենայն աշխարհս: Եւ անմարդ եղեն
բազում գաւառք, և քակեցաւ տունն արևելից, և եղև աւերակ աշխարհն
Հոռոմոց, և ոչ ուրեք գտանէին հաց, և կամ դադար հանգստեան մար-
դոյ, բայց ի յՈւռհա և յամենայն սահմանսն նորա: Եւ յԱնտիոք և յա-
մենայն աշխարհն Կիւլիկեայ և մինչև ի Տարսոն և յամենայն աշխարհն
Մարաշայ, ի Տլուք և յամենայն սահմանս աշխարհացս այսոցիկ ոչ
գտանէին հանգիստ դադարման մարդոյ, և բախեալ ելանէին միահա-
մուռ ամենայն արարածք և գային յաշխարհս յայսոսիկ անթիւ բազ-
մութեամբ, հազարք առ հազարս և բիւրք առ բիւրս, ծփայր մարդ ի վե-
րայ երկրի. և ծածկեցաւ աշխարհքս այս, և որպէս զմարախ ի բազմու-
թենէ նոցա ծածկէր երկիր, առաւել ունիմ ասել և եւթնապատիկ քան
զժողովուրդն զոր Մովսէս ընդ ծովն անցուցանէր, նա ևս քան զլորա-
մարդն յանապատին Սինա: Եւ այսպիսի ահագին բազմութեամբ լցաւ
երկիր, և արք մեծամեծք և փառաւորք, ազատք և իշխանք և կանայք
մեծաչուք շրջեալ մուրանային. և զայս ամենայն աչք մեր տեսանէին.
և յերեսաց սովոյն և ի պանդխտութենէ կենացն մահ անկանէր ի նոսա
ընդ ամենայն երկիր. և յագեցան առ ի թաղել զնոսա և լցաւ երկիր ի
դիականաց նոցա, գաղանք և թռչունք ի յուտելուն ձանձրացան. անթիւք
անթաղք մնացին յանհամար բազմութեանցն, հոտեցաւ երկիր ի մեռ-
լոտի մարմնոյ նոցա. փառաւոր քահանայք և կրօնաւորք եղեն օտա-
րամահք և պանդուխտք և կերակուրք լինէին գազանաց և թռչնոց: Այս
եղև սկիզբն աւերման և քակելոյ տանն արևելից և Յունաց, զորս յա-
զագս մեղաց մերոց ընկալաք զհատուցումն յԱրդար Դատաւորէն Աս-
տուծոյ, ըստ այնմ՝ զոր ասաց Փրկիչն, եթէ «Ամենայն ծառ՝ որ ոչ բերէ
պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի»:

Յայսմիկ թուականութեան սպանաւ Դագիկ շահնշահն որդի Աշոտոյ՝
որդւոյ Դագկայ՝ որդւոյ Սմբատայ՝ որդւոյ Երկաթայ, Բագրատունի ազ-
գաւ: Յայսմ ժամանակիս Դագիկ արքայ Հայոց վառեալ զգունդ զօրաց
իւրոց և գնաց էջ ի Տարսոն քաղաքն առ Ապլղարիպն իշխանն Հայոց՝
որդւոյ Հասանայ՝ որդւոյ Խաչկայ Խլին՝ առն քաջի ի Վասպուրական
գաւառէ: Սա գնացեալ առ Ապլղարիպն սիրոյ աղագաւ, որ վասն խնա-
մութեան կոչեալ էր զԴագիկ՝ Ապլղարիպայ, և յաղագս պատճառի ինչ
ոչ եղև գործ խնամութեան, և դարձաւ Դագիկ որպէս զառիւծ մռնչելով,

սկզբին խաչապաշտների համայն աշխարհում՝ Օվկիանոս ծովի այն կողմում, սարսափելի սով եղավ։ Դրա պատճառը թուրքերի արյունարբու և գազազած ժողովուրդն էր, որ սփռվեց աշխարհի երեսով մեկ, ոչ մի գավառ հանգիստ չթողնելով։ Քրիստոնյաների բոլոր երկրները մատնվեցին սրի և գերության, երկրից չքացան երկրագործական մթերքները, սպառվեց հացը, մշակն ու աշխատավորը սրի քաշվեցին և գերի քշվեցին, ու ամենուրեք տարածվեց սովը։ Բազում գավառներ մարդաթափ եղան, քանդվեց աշխարհն արևելքից, ավերակ դարձավ հռոմոց երկիրը, մարդիկ ոչ մի տեղ հաց չէին ճարում և չէին գտնում դադար, բացի Ուռհայից և նրա ամբողջ գավառից։ Մարդ հանգիստ չուներ ո՛չ Անտիոքում և համայն Կիլիկիայում, ո՛չ Տարսոնում և Մարաշի ողջ գավառում, Տլուքում և այս բոլոր գավառների սահմաններում։ Բոլոր արարածները, անթիվ բազմությամբ՝ հազարներով և բյուրերով, մեկից ելան եկան այս [Ուռհա] գավառը. մարդկանց բազմությունը ծովի նման էր ալեկոծվում երկրի երեսին, գավառը ողողվեց [մարդկանցով] և կարծես մարախի բազմությամբ ծածկվեց։ Ես գտնում եմ, որ նրանք յոթնապատիկ շատ էին, քան Մովսեսի՝ ծովով անցկացրած ժողովուրդը, քան լորամարգերը Սինայի անապատում[302]։ Ահա այսպիսի ահռելի բազմությամբ լցվեց գավառը։ Երևելի ու փառավոր մարդիկ, ազատներ ու իշխաններ, մեծաշուք կանայք մուրացկանությամբ էին զբաղված։ Մենք այդ բոլորին ականատես եղանք։ Սովն ու պանդխտությունը կոտորում էր նրանց ամբողջ գավառով մեկ։ Մարդիկ հոգնեցին դիակները թաղելով, գավառը լցվեց նրանց դիակներով, իսկ գաղաններն ու թռչունները ձանձրացան այդ դիակներն ուտելուց։ [Մեռյալներից] շատ շատերը անթաղ մնացին, և գավառը լցվեց գարշահոտությամբ։ Փառավոր քահանաներ և վանականներ օտարության ու պանդխտության մեջ մահացան՝ գառնալով գաղանների և թռչունների հարակ։ Սա արեվելից աշխարհի և հունաց երկրի քանդվելու, ավերվելու սկիզբն էր, որ մեր մեղքերի համար բերեց մեր գլխին արդար դատավոր աստվածը, համաձայն Փրկչի խոսքերի. «Այն ծառերը, որոնք բարի պտուղ չեն տալիս, կտրվում և կրակն են նետվում»[303]։

Նույն թվականին սպանվեց Գագիկ շահնշահը՝ Աշոտի որդին, Գագիկի որդու, Սմբատի որդու, Երկաթի որդու, Բագրատունիների տոհմից։ Այս ժամանակ հայոց Գագիկ արքան, զինելով իր զորագունդը, գնացել իջել էր Տարսոն քաղաքը, վասպուրականցի հայ քաջ իշխան Ապլղարիպի՝ Խուլ Խաչիկի որդի Հասանի որդու մոտ։ Գագիկը բարեկամական նպատակներով գնացել էր Ապլղարիպի մոտ (վերջինս Գագիկին կանչել էր խնամության նպատակով)։ Բայց ինչ-ինչ պատճառնե-

վասն զի էր մեծ և հզօր և այր քաջ, և կալեալ զամենայն իշխանս գաւառին՝ վարէր զնոսա երկաթի կապանօք առաջի իւր. և եկեալ հազար արամբ ի դաշտն Առժախասայ ի բերդն՝ որ ասի Կիպիստռայ. և էին բերդատէրքն երեք եղբարք իշխանք Հոռոմոց՝ որդիք Մանտալէի. և Գագկայ թողեալ զզօրսն իւր ի յայլ կողմն ճանապարհին՝ և ինքն երեք արբաքմբ երթայր դիմօք առ նոսա: Իսկ նոքա յառաջապատրաստք և արս յիսուն քմին եդին Գագկայ. և յորժամ մերձ եղև ի բերդն Գագիկ՝ գայթին յերկրպագութիւն նորա երեք եղբարքն և ի գնալն երկրպագանէին ի վերայ երեսաց իւրեանց: Եւ յորժամ ետես զնոսա Գագիկ, կոչեաց զնոսա ի համբոյր. և յորժամ ի մօտ եկին, միաբան երեք եղբարքն գրկեալ զպարանոցն Գագկայ՝ և ընկեցին զնա ի ձիոյն, և արքն՝ որ զկնի էին՝ փախեան. և ելեալ քմինն՝ կալան զնա. և լուեալ զօրացն՝ ցրուեցան, և ածին զԳագիկ ի բերդն: Եւ յաւուրն ութերորդի ժողովեցան ի վերայ բերդին ամենայն տունն Հայոց, Դագիկ Աբասայ որդին և ամենայն ցեղն Սենեքարիմայ՝ Ատոմ և Ապուսահլ և այլ ամենայն իշխանքն Հայոց և պատուիրս ինչ պատերազմեալ ի վերայ բերդին՝ ոչինչ կարացին առնել, վասն զի ամուր էր յոյժ. և որք բռնեալ էին զԳագիկ՝ ոչ համարձակէին թողուլ ի յահէ Գագկայ. և յայնժամ յղարկեալ առ նոսա անօրէն Փիլատոսն և ասէր, եթէ «Զիա՞րդ համարձակեցայք զայդ գործել ընդ առն թագաւորի. եթէ թողոյք՝ և եթէ ոչ, ձեզ կորուստ գործեցիք զայդ»: Եւ յայնժամ աստուածասպան ազգն Հոռոմոց լարով աղեղան խեղդեցին զթագաւորն Հայոց և կախեցին զնա ընդ պարիսպն զօր մի. և յայնժամ հանեալ թաղեցին զնա արտաքոյ բերդին, զոր յետ վեց ամաց եկեալ այր մի ի քաղաքէն նորա՝ Բանիկ անուն և գողացաւ զմարմին Գագկայ թագաւորին և հանեալ զնա ի գերեզմանէն ի դիշերի և տարաւ զնա ի քաղաքն իւր և յազգն: Եւ արարին կոծ մեծ ի վերայ նորա և ամենայն ազգն Հայոց. և թաղեցին զնա ի վանքն իւր Պիղու. և մնաց իւր աւագ որդին Յովհաննէս: Եւ աստանօր դադարեալ եղև թագաւորութիւնն ի տանէն Հայոց և յազգէն Բագրատունեաց: Յայսմ վայրի լցեալ կատարեցաւ մարգարէութիւն սրբոյն Ներսէսի Հայոց կաթուղիկոսին՝ որ ասաց. «Եթէ ջնջելով ջնջեսցի թագաւորութիւն ի տանէն Հայոց»:

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ի յամի ՇԼ արքեպիսկոպոսն Շիրակայ՝ որ էր ի քաղաքն Անի, որոյ անուն ասէին Տէր Բարսեղ, յարուցեալ զնայր յաշխարհն Հայոց ի յԱղուանս գաւառի՝ ի Լօռէ քաղաք առ թագաւորն Հայոց Կիւրիկէ՝ որդի Անհողինին Դաւթի, և խնդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց: Զոր ժողովեալ

րով խնամութեան գործը գլուխ չեկաւ, և Գագիկը առյուծի պես մռնչալով վերադարձաւ։ Նա մեծ, հզոր և քաջ մարդ էր։ Նա ձերբակալեց գաւառի բոլոր իշխաններին և շղթայակապ իր առջևից էր քշում։ Հազար հոգով նա եկաւ Արժախասի դաշտը[304], Կիղիստրա[305] կոչվող բերդը, որը պատկանում էր երեք հոգում իշխան եղբայրների՝ Մանդալեի որդիներին։ Գագիկը, իր զինվորներին ճանապարհի մյուս կողմում թողնելով, երեք հոգով գնաց ուղիղ դեպի նրանց, ովքեր նախապատրաստութիւն էին տեսել և հիսուն հոգի տեղադրել Գագիկին դարանակալելու։ Երբ Գագիկը մոտեցաւ բերդին, երեք եղբայրներն եկան և երեսնիվայր երկրպագեցին նրան։ Գագիկը, տեսնելով նրանց, կանչեց ողջագուրվելու։ Երեք եղբայրները մոտենալով նրան, բոլորը միասին բռնեցին Գագիկի վզից և ձիուց ցած գլորեցին. Գագիկի հետ եկող մարդիկ թողեցին փախան։ Այդ միջոցին դարան մտածները դուրս եկան և Գագիկին բռնեցին։ [Գագիկի] զինվորները, լսելով կատարվածի մասին, ցրվեցին։ Գագիկին տարան բերդ։ Ութ օր անց հայոց բովանդակ երկիրը՝ Աբասի որդի Գագիկը[306], Սենեքերիմի ողջ տոհմը՝ Ատոմն ու Ապուսահլը, և հայոց մյուս բոլոր իշխանները ելան բերդի դեմ։ Մի քանի օր կռիվ մղեցին, բայց ոչինչ չկարողացան անել, որովհետև բերդը շատ անառիկ էր։ Գագիկին ձերբակալողները չէին համարձակվում նրան ազատ արձակել, որովհետև շատ էին վախենում նրանից։ Այդ միջոցին անօրեն Փիլարտոսը, դիմելով նրանց, ասաց. «Դուք ինչպե՞ս հանդգնեցիք նման բան գործել թագավոր մարդու նկատմամբ։ Երկու դեպքում էլ՝ արձակելու կամ չարձակելու, դուք ձեր գլխին փորձանք կբերեք»։ Այն ժամանակ աստվածասպան հոռոմները ալևոր լարով խեղդամահ արեցին հայոց թագավորին և նրա դիակը մեկ օր պարսպից կախած թողեցին, որից հետո հանեցին և բերդից դուրս թաղեցին։ Վեց ամիս անց [Գագիկի] քաղաքից Բանիկ անունով մի մարդ եկաւ, որը Գագիկ թագավորի մարմինը գիշերով, գաղտնաբար հանեց և տարավ նրա քաղաքը, ազգականների մոտ։ Ողջ հայ ժողովուրդը մեծապես ողբաց նրան։ [Գագիկին] թաղեցին իր Պիզու վանքում։ Մնաց իր ավագ որդի Հովհաննեսը։ Ահա, այդ օրվանից վերացավ Բագրատունիների հայոց թագավորութիւնը, իրականացավ հայոց կաթողիկոս սուրբ Ներսեսի մարգարեութիւնը, թե՝ «Կընաջնջվի թագավորութիւնը հայոց երկրից»[307]։

Հայոց 530 թվականին [1 մարտ 1081—28 փետրվար 1082 թ.] Անիում նստող Շիրակի արքեպիսկոպոսը, որի անունը տեր Բարսեղ էր, ելավ գնաց հայոց աշխարհի Աղվան գավառի[308] Լոռե քաղաքը, Դավիթ Անհողինի որդու՝ հայոց թագավոր Կյուրիկեի մոտ։ Բարսեղը խնդրեց նրան [իրականացնել] հայոց կաթողիկոսի ձեռնադրութիւնը։ Կյուրիկե

թագաւորն Կիւրիկէ զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին և բերեալ զՏէր Ստեփանոս կաթուղիկոսն Աղուանից ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զՏէր Բարսեղ կաթուղիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Հայոց հրամանաւ Կիւրիկէ թագաւորին և Տեառնէն Ստեփանոսի՝ որ ունէր զաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի: Յայսմ ժամանակի նորոգեալ եղև աթոռ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի, որ ի վաղուց ժամանակաց հետէ խափանեալ էր մսխանօք նենգաւորութեամբ չար և դառնացեալ ազգին Հոռոմոց: Եւ ելեալ գայր Բարսեղ կաթողիկոսն Հայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի, և ելեալ ամենայն տունն Շիրակայ գալ ընդ առաջ նորա. և ահա գայր Վասակ՝ հայրն Տէր Բարսեղի և եղբարք նորա՝ Հասան և Գրիգոր և Ապլղասակ, արք քաջք և հզօրք՝ հանդերձ եպիսկոպոսօք, և նստուցին զՏէր Բարսեղ յաթոռ Տեառն Պետրոսի: Եւ եղև օրն այն օր մեծ և ուրախութիւն ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի:

Յայսմ ժամանակիս ամիրայ ոմն անուն Խոսրով գայր բազում զօրօք ի Պարսից աշխարհէն և հասանէր ի գաւառն Ուտհայոց, և արարեալ աւերս ի տեղիս տեղիս: Եւ յայսմ աւուրքս եղև պատերազմ ի վերայ Եփրատ գետոյն՝ ի տեղին՝ որ ասի Մկնիկ՝ մերձ ի բերդն՝ որ կոչի Լտար, վասն զի ժողովեցան բերդացիք գաւառին ընդ առաջ նորա ի պատերազմ. և յայսմ աւուր յաղթեաց Թուրքն և արար բազում կոտորածս քրիստոնէիցն: Եւ յետ աւուրց ինչ յարուցեալ ամիրայն Խոսրով և արար ասպատակ զերկիրն Տաճկաց ի Խառանայ մինչև ի Մուտեպէրն, և զաւուրս երկու կային ի վերայ ձիոյ, և բազում աւարաւ գայր ի դուռն քաղաքին Խառանայ: Եւ էր ի քաղաքն ամիրայն Արապկաց՝ որ ասի Շուրէհ-Հէճմ՝ Կուրիշայ որդին՝ որ կոչի Շէրէփն-Տօլ: Եւ յայսմ աւուրս էր ամիրայն Շուրէհ ի Խառան զօրօք Արապկացն, և երկու հազար ձիաւորով ելեալ ի պատերազմ ի վերայ Պարսից զօրացն. և էր Թուրքն արս տասն հազարք. և ի հանդիպիլն միմեանց արարին զԹուրքն փախստական և սաստիկ կոտորածով վարեցան զհետ զօրացն Պարսից և թափեցին զամենայն առ և զգերութիւնն, և լցաւ ամենայն գաւառն Ուտհայոց ծառայօք ի Թուրքէն, յամենայն թուփ և ի քարատակ անկեալ գտանէին զզօրսն Թուրքաց, և ուր ուրեք զերծան:

Իսկ ի թուականութեանս Հայոց ՇԼԲ մեռաւ Վասիլն՝ Ապուքապայ որդին՝ տէրն Ուտհայոց, և թաղեցին զնա ի Գօտևոր սուրբ Գէորգ: Սա էր այր բարի և աստուածասէր, քաղցր ի վերայ ամենայն աշխարհի, ողորմած որբոց և այրեաց, շինող և խաղաղարար աշխարհի. և եղև սուգ մեծ ի վերայ աշխարհին Ուտհայոց և յամենայն գաւառսն նորա, զի եղեն

թագավորը հավաքեց Աղվանքի եպիսկոպոսներին և Հաղբատ կոչվող վանքը բերել տալով Աղվանից Ստեփանոս կաթողիկոսին, իր՝ [Կյուրիկեի], ու սուրբ Թադեոս առաքյալի աթոռին նստող տեր Ստեփանոսի հրամանով տեր Բարսեղին ձեռնադրեցին կաթողիկոս ամենայն հայոց։ Այդ պահից Անի քաղաքում վերականգնվեց սուրբ Գրիգորի աթոռը, որը վաղուց ի վեր վերացել էր դաժան հոռոմների նենգ մեքենայությունների շնորհիվ։ Բարսեղ կաթողիկոսը ելավ եկավ Անի թագավորանիստ քաղաքը, իսկ ամբողջ Շիրակը դուրս եկավ նրան ընդառաջ։ Ահա եկավ և Վասակը՝ տեր Բարսեղի հայրը, նրա եղբայրներ Հասանը, Գրիգորը և Ապլջահապը, քաջ ու հզոր մարդիկ, և եպիսկոպոսներով հանդերձ տեր Բարսեղին բերեցին նստեցրին տեր Պետրոսի աթոռին։ Այդ օրը հայոց բովանդակ երկրի համար շատ բերկրալի դարձավ, քանզի [ժողովուրդը] ականատես եղավ հայրապետական աթոռի Անի քաղաքում վերականգնվելուն։

Այս ժամանակներում Խոսրով անունով մի ամիրա բազում զինվորներով պարսից երկրից ելավ եկավ Ուռհա գավառը և տարբեր տեղերում ավերածություններ գործեց։ Այդ օրերին Եփրատ գետի ափին Մկնիկ վայրում, Լտար կոչվող բերդին մոտիկ պատերազմ եղավ. գավառի բերդապահները հավաքվել էին նրան դիմադրելու։ Թուրքերը հաղթեցին և բազում քրիստոնյաների կոտորեցին։ Մի քանի օր անց Խոսրով ամիրան գնաց ասպատակեց տաճկաց երկիրը՝ Խառանից մինչև Մուտեպեր։ Նա երկու օր ավարառեց և մեծ թալանով եկավ Խառանի դռան առջև։ Քաղաքի արաբների ամիրան էր Շուրեհ-Հեճմը, Կուրիշի որդին, որին Շերեփ-Տոլ[309] էին մականվանում։ Այդ օրերին Շուրեհ ամիրան արաբական զորքով Խառանում էր գտնվում։ Նա երկու հազար հեծյալներով պատերազմի դուրս եկավ ընդդեմ պարսից զորքի։ Թուրքերը տաս հազար հոգի էին։ Մարտում թուրքերին փախուստի մատնեցին և մեծ ջարդ տալով հալածեցին, նրանց ձեռքից խլեցին ամբողջ ավարն ու փրկեցին գերիներին։ Բովանդակ Ուռհա գավառը լցվեց թուրք գերիներով։ Ամեն մի թփի կամ քարի տակ ընկած թուրք զինվորներ էին գտնում։ Նրանցից պրծնողներ էլ եղան։

Հայոց 532 թվականին [1 մարտ 1083—29 փետրվար 1084 թ.] վախճանվեց Ուռհայի տեր Վասիլը՝ Ապուքապի որդին։ Նրան թաղեցին Սուրբ Գևորգ Դոտևորի [վանքում]։ Նա բարի և աստվածասեր մարդ էր, բոլորի նկատմամբ բարեհամբույր, որբերի և այրիների գթացող, երկիրը շենացնող և խաղաղարար։ Ուռհայում և ամբողջ գավառում այդ առթիվ մեծ սուգ եղավ, քանզի զրկվեցին այդ հեզ ու բարի կա-

զրկեալք յայնմ քաղցր և բարի աւազէն, վասն զի որպէս գ՚այր և ծնող էր ի վերայ մեծի և փառու. և ելեալ բարի յիշատակաւ՝ յաշխարհէս զրնաց առ Քրիստոս: Եւ արարին ժողով ամենայն քաղաքն ի սուրբ Սոփի և տան զքաղաքն Ուռհա ի ձեռն Սմբատայ՝ առն քաջի և արիական պատերազմողի ընդ Պարսից: Եւ կացեալ Սմբատայ ի յաթոռ տուկութեանն Ուռհայոյ վից ամիս. և ոմն ի մեծամեծաց քաղաքին ջանայր առնուլ զաթոռ տուկութեանն ի յազգէն Հայոց, որոյ անուն ասէին Իշխան, ի ցեղէն՝ որ ասէին Արշքթոնք: Սա ապատամբեցաւ և գնաց առ Փիլատոս, վասն զի ունէր բազում ցեղս և ազգս մեծամեծս ի քաղաքն Ուռհա. և շարժեալ Իշխանին զՓիլատոսն՝ և բերէր ի յՈւռհա, և եառն զքաղաքն ի ձեռն Փիլատոսին: Եւ զկնի սակաւ աւուրց Փիլատոսն ձերբակալ արարեալ զԻշխանն և զամենայն ազգն և զՍմբատ՝ և սպառ հիմն ի վեր զամենայն բնակութիւնս նոցա և հատոյց զամենայն մեծամեծ իշխանս Հայոց՝ որք էին ի քաղաքն յՈւռհա, և զՍրջուկ իշխանն նապան չարչարանօք, և զայլսն աւարաւ ի Մարաշ քաղաք. և ևհան զաշխն Սմբատայ զառն քաջի և զաշս Իշխանին և զեղբօրն իւրոյ զԹօթօռակայ, և զայլ իշխանսն պահէր ի շղթայսն ի Մարաշ քաղաքի վասն չար բարուց իւրոց:

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՇԼԹ առաւ Անտիոք քաղաքն ի քրիստոնէից. վասն զի Սուլիման ոմն ամիրայ որդի Դլմշոյ, որ բնակեալ էր ի քաղաքն Նիկիա՝ յաշխարհն Բիւթանացւոց, որ էր սահմանակից Ովկիանոս ծովուն, սորա յարուցեալ զաղտաբար ընդ հեռաձիգ ճանապարհն և հասանէր ծածկաբար մինչև ի քաղաքն Անտիոք. և գտեալ զքաղաքն անպատրաստ և ի Հալպայ դիմէն ի դիշերի գողացաւ զքաղաքն Անտիոք. և Փիլատոսն էր ի քաղաքն Ուռհա, և յայնմ ժամու զօրք հեծելոց ոչ դոյր ի քաղաքն: Եւ Սուլիման երեք հարիւր արամբք մտաւ ի քաղաքն Անտիոք. և ի վաղիւն տեսեալ քաղաքացեացն՝ ահաբեկեալք եղեն, վասն զի ոչ ունէին արք պատերազմողք, այլ էին որպէս կանայք տկարք և վատ ի պատերազմ. և առհասարակ ժողովեցան քաղաքն ի կլայն, և օր քան զօր բազմանայր զօրք Թուրքացն. և էառ զքաղաքն և մարդոյ չարար վնաս, և նեղեաց զկլայն բազում աւուրս սովով և ծարաւով: Եւ յետ այսր ամենայնի խնդրեցին երդումն ի յամիրայէն, և արար Սուլիման զամենայն և եղև խաղաղութիւն, և դարձաւ ամենայն մարդ անվնաս ի տուն իւր: Եւ լուեալ զայս ամենայն Փիլատոսն՝ ոչինչ կարաց առնել, լուր ի յոգւոց հանեալ և դառնապէս ապաշաւէր: Եւ Սուլիման տիրեաց Անտիոքայ և ամենայն աշխարհին կիլիկեցւոց: Արդ այսպիսի օրինակաւ առաւ բազմամբոխ քաղաքն Անտիոք ի վատ և ի թուլամորթ և ի պիղծ ազգէն՝ որ կոչին Պելիտիկք, որ հաւատովքն Հո-

ռավարչից, մի մարդուց, որ մեծի և փոքրի նկատմամբ հոր և ծնողի նման հոդատար էր։ Բարի հիշատակ թողնելով, նա հեռացավ այս աշխարհից և գնաց Քրիստոսի մոտ։ Բոլոր քաղաքացիները Սուրբ Սոֆիում[310] հավաքվեցին և Ուռհա քաղաքի կառավարումը հանձնեցին Սմբատին[311], պարսիկների դեմ քաջարի պատերազմողին։ Սմբատը Ուռհայի դուկի պաշտոնում մնաց վեց ամիս։ Քաղաքի մեծամեծներից մեկը աշխատում էր հայերի ձեռքից խլել դուկությունը։ Նրա անունն էր Իշխան, Արջքթոնք կոչված տոհմից։ Ուռհա քաղաքում նա ուներ բազմաթիվ երևելի ազգականներ։ Ապստամբություն բարձրացնելով, նա դրնաց Փիլարտոսի մոտ և, դրդելով, նրան Ուռհա բերեց։ [Բնակիչները] քաղաքը Փիլարտոսին հանձնեցին։ Մի քանի օր անց Փիլարտոսը ձերբակալեց Իշխանին, նրա բոլոր ազգականներին, ինչպես և Սմբատին, նրանց տները հիմնահատակ ավերեց, վրեժ առավ Ուռհա քաղաքում գտնվող հայոց մեծամեծ բոլոր իշխաններից, խոշտանգելով սպանեց Արջուկ իշխանին, իսկ մնացածներին տարավ Մարաշ քաղաքը։ Լինելով չարաբարո մարդ, նա կուրացրեց քաջ Սմբատին, իշխանին և նրա եղբայր Թոտոռակին։

Հայոց 533 թվականին [29 փետրվար 1084—28 փետրվար 1085 թ.] Անտիոք քաղաքը գրավվեց քրիստոնյաների ձեռքից. մի ոմն Սուլիման[312] ամիրա, Դթլմուշի որդին, որ բնակվում էր բյութանացվոց գավառի Նիկիա քաղաքում՝ Օվկիանոս ծովի ափին, ծածուկ դուրս եկավ և հեռավոր ճանապարհով աննկատ հասավ մինչև Անտիոք քաղաքը, այն անպատրաստ գտնելով, գիշերով, Հալեպին նայող [դարպասից] մտավ և տիրացավ։ Փիլարտոսը Ուռհա քաղաքում էր գտնվում, իսկ այդ պահին [Անտիոք] քաղաքում հեծելազոր չկար, Սուլիմանը երեք հարյուր հոգով մտավ Անտիոք քաղաքը։ Առավոտյան, քաղաքացիները տեսնելով [նրանց], սարսափահար եղան, քանզի կռվող ուժ չունեին. իրենք էլ կանանց նման տկար էին և վատ մարտիկներ։ Բոլոր քաղաքացիներն ապաստանեցին բերդում. թուրքաց զորքը օրավուր շատանում էր։ Գրավելով քաղաքը, [Սուլիմանը] ոչ ոքի վնաս չհասցրեց, միայն բերդում ապաստանածներին բաղում օրեր տանջեց՝ հացից ու ջրից զրկելով։ [Պաշարյալները] այդ ամենից հետո ամիրայից [անձեռնմխելիության] երդում խնդրեցին։ Սուլիմանն ամեն ինչում ընդառաջեց, և խաղաղություն տիրեց, ամեն ոք անվնաս վերադարձավ իր տունը։ Փիլարտոսը, լսելով այս բոլորի մասին, ոչինչ չկարողացավ անել, միայն հառաչում ու դառնագին զղջում էր։ Սուլիմանը տիրեց Անտիոքին և համայն Կիլիկիային։ Ահա այս ձևով գրավվեց Անտիոք մարդաշատ քաղաքը պեղետիկ կոչվող վառ, թուլամարթ և պիղծ ժողովրդի ձեռքից[313], ովքեր

ոմք ասեն իւրեանց, այլ լեզուով և գործովք սոսկ Տաճիկք և հայհոյիչք ուղղափառ հաւատոց և աւետարանի սրբութեանց, հալածիչք հաւատոյ Հայաստանեայց, և ինքեանք նմանեալ հիւանդ և տկար կանանց, որք նստին ի փողոցի և բաղբանջեն լեզուաւ իւրեանց։

Եւ այլ իմն զարմանալի ասացից ձեզ՝ զոր ինչ եղև յԱնտիոք յառաջ քան զքսան ամ, զոր և մեք իսկ լուաք զայս ի քաղաքացեացն, եթէ այնչափ չար և աւետարանի էին Հայոց ազգին Անտիոքացիքն, զի յորժամ ի քաղաքն օտարական բռնէին, զմուրուքն կտրէին և հանէին ընդ դուռն քաղաքին։ Եւ յաւուր միում բռնեալ զոմն Աննեցի այր փառաւոր և կըտրեալ զմուրուսն նորա, և առին զամենայն ինչս նորա՝ և հանին զնա ի քաղաքէն. և նա վիրաւորեալ դնաց, և առեալ զգօրս Թուրքաց հինգ հարիւր այր, և եկեալ դերեաց զամենայն գաւառն Անտիոքայ և զտուկին երկոտասան դեղն այրեաց հրով. և բերեալ ի դուռն քաղաքին բազում դերութիւնս, կոտորեաց և ելից զնոսա ի գետն՝ և ձայն տուեալ ի քաղաքն և ասէր. «Ես եմ Գորդ Շիրակացին, որ զմուրուքն կտրեցիք. թէ ապա աժէ՞ այս մուրուք մի, թէ ոչ». և գնաց անհամար աւարաւ։ Նոյնպէս յաւուրն բարեկենդանին ի նոյն ամին եկեալ կարաւան ի յարևելից ի քաղաքն Անտիոք, և բարձեալ բերէին տարեխ ձուկն, և կային ի մէջ շուկային ի դինարբութեան. և ի լսել քաղաքացեացն զձայն պարուց նոցա, ամենայն արք քաղաքին հասանէին ի վերայ նոցա և ծեծելով գանալից արարին զնոսա, սկսան հանել զնոսա ի քաղաքէն. էին արքն իբրև ութսուն՝ բրէզածք և ընտրեալք քաջութեամբք։ Եւ յայնժամ ձայն տուեալ մանկտաւագն նոցա, և նոցա միաբան դիմեմխեալք էին, յարձակեցան ի վերայ քաղաքացեացն և ի Սևոտոյն գրանէն մինչև ի Տէր Պետրոս զամենայն արք քաղաքին փախստական արարին և կառափնաբեկ և ոտնակոտորս արարին արս բազումս. և ապա խաչիւ և աւետարանով երդուեալ նոցա բնաւ այլ ոչ մեղանչել նոցա։ Եւ յայնժամ արարին խաղաղութիւն և դարձան ի տեղիս իւրեանց։

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ի յամի ՇԼԴ մեռաւ Հայոց վարդապետն Յակոբոս Քարաբնեցին, որ յորջորջեալ կոչէր Սանահնեցին, այր հզօր և կորովի։ Սորա հասեալ ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ, ուսեալ և հասեալ սորա ի վերայ հոգեւորական իմաստութեանցն և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանցն. սա էր յաշակերտաց մեծին Դէոսկորոսի հօրն Սանահնին. և այս Յակոբոս էր, որ խօսեցաւ ի Կոստանդնուպոլիս ընդ իմաստասէրսն Հոռոմոց ի յաւուրն թագաւորին Տուկծին, յորժամ գնաց զհետ Սենեքարիմայ որդւոցն. սորա խօսեալ վասն հաւատոցս Հայաստանեայ-

իրենց հունադավան են համարում, բայց խոսքով ու գործով իսկական տաճիկներ են, ուղղափառ դավանանքն անարգողներ, անարատ կյանքն արհամարհողներ, հայադավանության հալածողներ։ Նրանք նման են հիվանդ և տկար այն կանանց, ովքեր փողոցում նստած բարբաջանքով են զբաղվում։

Մի ուրիշ հետաքրքիր բան էլ պատմեմ ձեզ՝ քսան տարի առաջ կատարվեց Անտիոքում, որը մենք ինքներս ենք լսել քաղաքացիներից։ Անտիոքացիք այնքան վատ և հայատյաց մարդիկ էին, որ քաղաքում հայտնված [հայ] օտարականի մորուքը կտրում և նրան քաղաքի դռնից դուրս էին հանում։ Մի օր նրանք բռնեցին մի պատկառելի անեցու, կտրեցին նրա մորուքը, թալանեցին ունեցած-չունեցածը և քաղաքից դուրս շպրտեցին։ Նա սաստիկ վիրավորված՝ գնաց հինգ հարյուր թուրք զինվորներ առավ և եկավ գրավեց ողջ Անտիոք գավառը, դուկին պատկանող տասներկու գյուղերը կրակի տվեց։ Նա քաղաքի դուռը բերեց բաղում գերիների, կոտորեց նրանց, գետը թափեց և, դիմելով բնակիչներին, ասաց. «Ես Գորգ Շիրակացին եմ, որի մորուքը դուք կտրեցիք։ Հիմի ասեք, իմ արածը մի մորուք արժի՞, թե՞ ոչ»։ Դրանից հետո նա հեռացավ բաղում ավարով։ Նույն տարվա բարեկենդանի օրերը արևելքից Անտիոք քաղաքն եկավ մի քարավան, տառեխ ձուկ բերելով։ Քարավանի մարդիկ շուկայում հարբեցողությամբ էին զբաղված։ Քաղաքացիները նրանց պարի նվագի ձայնը լսելով, բոլորը միասին թափվեցին, սաստիկ գանակոծեցին և սկսեցին քաղաքից դուրս հանել նրանց։ Նրանք շուրջ ութսուն հոգի էին, մահակավոր և շատ քաջ։ Իրենց ավագի կոչով, նրանք, որոնց գլուխները գինուց դեռ տաք էին, հարձակվեցին քաղաքացիների վրա և Սևոտիի դռնից սկսած մինչև տեր Պետրոս [եկեղեցին] բոլորին փախուստի մատնեցին, շատերի գլուխը կտրեցին, ոտքերը ջարդեցին։ Այդ բանի վրա [քաղաքացիները] խաչով և ավետարանով երդվեցին [հայերին] այլևս վատություն չանել։ Դրա վրա հաշտվեցին և վերադարձան իրենց տեղերը։

Հայոց 534 թվականին [28 փետրվար 1085—27 փետրվար 1086 թ.] վախճանվեց հայոց վարդապետ Հակոբոս Քարափնեցին՝ Սանահնեցի մականվանյալը, մի քաջագիտակ և զարգացած մարդ։ Նա յուրացրել էր աստծո Հին և Նոր Կտակարանները, ուսանել և հմտացել հռետորական արվեստին, ծանոթացել փիլիսոփայական խորիմաստ բոլոր գիտություններին։ Նա Սանահնի վանահայր մեծ Դիոսկորոսի աշակերտներից էր։ Սա հենց այն Հակոբոսն էր, որ Տուկիծ կայսեր օրոք Սենեքերիմի որդիների հետ միասին Կոստանդնուպոլիս էր գնացել և բանավեճի բռնվել հոռոմոց իմաստունների հետ, բանախոսել էր հայադա-

ցըս, և հաճեալ ի բանս նորա ամենայն տունն Յունաց։ Եւ յայսմ ժամանակիս էր ի քաղաքն Յուռհա, և ծերութեամբ քաղաքավարեալ զկեանս իւր. և դաւով նենդութեամբ լուծեալ եղև ի կենացս՝ վասն զի զտանէին զնա մեռեալ ի մահիճս իւր առանց հեծութեան և ցաւոց։ Լացին զնա ամենայն սիրելի մերձաւորք իւր և արարին ժողով զամենայն քաղաքն Ուռհա ի վերայ նորա՝ և մեծաւ հանդիսիւ թաղեցին զնա ի դուռն սուրբ եկեղեցւոյ իւրոյ՝ ի հիւսիսեան կողմն քաղաքին, իբրև նեղընկէց մի հեռի ի պարսպէն։

Յայսմ ամի թագաւորն Արապիոց Կուրիշայ որդին, որ ասի Շէրիփին-տօլ, այր բարի և քաղցր հաւատացելոցն Քրիստոսի, որ ոչ ընդդրուժ փակի զործ բարութեան նորա ի վերայ խաչապաշտ աղգաց և կամ քանի՛ խրատս և չարշարանս, և կամ քանի՛ սպանումն անցուցանէր ընդ աղգն իւր վասն հաւատացելոցն Քրիստոսի, սորա արարեալ ժողովս Արապիոց զօրաց իբրև տասն բիւրս՝ և գնաց էառ զՀալպ քաղաք և արար կին զդուստր տեառն քաղաքին. և պատերազմաւ յարձակեցաւ ի վերայ Անտիոքայ քաղաքին մեծաւ սրտմտութեամբ. և յայնժամ Սուլիման ամիրայն Անտիոքայ զայր ընդդէմ նորա բազում զօրօք ի տեղին՝ որ կոչի Պղահ, և յայնմ տեղւոջ արարին սաստիկ պատերազմ յերկոցունց կողմանցն։ Իսկ Արապիկ զօրքն սկսան նենգաւորել իւրեանց թագաւորին և առ հասարակ ի փախուստ դարձան. և յորժամ երթային՝ սպանաւ թագաւորն Արապիոց ի յիւր զօրացն. և այսպէս մեռանէր բարի թագաւորն Կուրիշայ որդի՝ Շէրիփին-տօլայ, և զկնի երից աւուրց զտանէին զնա սպանած. և ի վերայ ճանապարհին թաղեցին զնա։ Եւ Սուլիման մեծաւ յաղթութեամբ դարձաւ յԱնտիոք. և յայսմ ժամու ծնաւ իւր որդի. և կոչեաց զանուն որդւոյ իւրոյ Խլիճ-Ասլան։

Յայսմ ամի ամիրայ ումն Պօլճատճի անուն սորա առեալ զՃհան զտաւան ի Փիլատոսէն, և կաթողիկոսն Տէր Թէոդորոս եղև ընդ իշխանութեամբ նորա. յայնժամ կոչեաց Փիլատոսն զնա առ ինքն ի Մարաշ քաղաքն, և նա ոչ կարաց գնալ, վասն զի Թուրքի էր իշխանութիւնն։ Եւ եղև ոխացեալ Փիլատոսն ընդ Տէր Թէոդորոսն. և խորհեցաւ այլ կաթուղիկոս դնել յաղագս անիրաւ և չար բարուց իւրոց. և յայնժամ մեծարեալ կոչեաց զՏէր Յովհաննէսն զարքեպիսկոպոսն սրբոյ Աստուածածնին պատկերին. և նա ոչ էառ յանձն, վասն զի էր այր ահարկու և փառաւոր և ընտիր առաքինի։ Դարձեալ Փիլատոսն կոչեաց զՏէր Պօղոս՝ զհայր սրբոյ Նշանին Վարագայ, և արար ժողով եպիսկոպոսաց և հարանց, և եառն ձեռնադրութիւն կաթուղիկոսութեան Պօղոսի ի Մարաշ քաղաքի հրամանաւ և կամօք Փիլատոսին, և ոչ Աստուծոյ։ Եւ այս ամենայն ոչ լինէր ընդունելի Աստուծոյ և ոչ առ հաւատացեալսն ի Քր-

վանութեան մասին, և իր խոսքերը դուր էին եկել բոլոր հույներին։ Այս ժամանակներում նա Ուհա քաղաքում էր գտնվում, զառամյալ հասակում։ Դավով և նենգությամբ նա հեռացավ կյանքից. նրան իր անկողնում մեռած գտան. նա ոչ մի բանից չէր բողոքել, ոչ էլ հիվանդացել էր։ Բոլոր սիրելիներն ու մերձավորները ողբացին նրան. ողջ Ուհան մասնակցեց նրա [հուղարկավորությանը]։ Մեծ հանդիսավորությամբ նրան թաղեցին իր սուրբ եկեղեցու դռանը՝ քաղաքի հյուսիսային կողմում, պարսպից մոտ մեկ նետընկեց հեռավորության վրա։

Այդ տարին արաբների թագավոր Շերեփ-Տոլը՝ Կուրիշի որդին, քրիստոնյաների նկատմամբ բարի և հեզ մի մարդ, որի բարերարությունը խաչապաշտ ժողովուրդների նկատմամբ հնարավոր չէ գրով արտահայտել (նա քանի-քանի հոգու պատժեց և խոշտանգեց, քանի-քանի հոգու մահապատժի ենթարկեց ի պաշտպանություն քրիստոնյաների), արաբ զինվորների զորահավաք անելով՝ շուրջ հարյուր հազար հոգի, դնաց գրավեց Հալեպ քաղաքը և կնության առավ քաղաքի տիրոջ դստեր։ Նա մեծ կատաղությամբ, զենքով հարձակվեց և Անտիոք քաղաքի վրա։ Անտիոքի ամիրա Սուլիմանը մեծաթիվ զորքով եկավ նրա դեմ՝ Պղահ կոչվող վայրը, որտեղ միմյանց միջև տեղի ունեցավ սաստիկ ճակատամարտ։ Արաբական զորքը դավաճանեց իր թագավորին և զբլխովին փախուստի դիմեց, փախուստի միջոցին արաբների թագավորն սպանվեց իր զինվորների ձեռքով։ Ահա այսպես վախճանվեց բարի թագավոր Շերեփ-Տոլը՝ Կուրիշի որդին։ Նրա դիակը գտան երեք օր անց և ճանապարհի վրա թաղեցին։ Սուլիմանը մեծ հաղթանակ տարած վերադարձավ Անտիոք. հենց այդ պահին նա որդի ունեցավ, որին կոչեց Խլիճ Ասլան[314]։

Այդ տարին Պոլճտաճի անունով մի ամիրա Փիլարտոսի ձեռքից խլեց Ջհան դավառը, որով տեր Թեոդորոս կաթողիկոսը գտնվեց նրա տիրապետության մեջ։ Փիլարտոսը կաթողիկոսին իր մոտ կանչեց՝ Մարաշ քաղաքը, բայց նա չկարողացավ գնալ, որովհետև գտնվում էր Թուրքի իշխանության ներքո։ Դրա վրա Փիլարտոսը թշնամացավ տեր Թեոդորոսի դեմ. լինելով անօրեն և չարաբարո, նա որոշեց նոր կաթողիկոս հաստատել։ Նա մեծ պատիվներով Սուրբ Աստվածածնի պատկերի [վանքի] արքեպիսկոպոս տեր Հովհաննեսին հրավիրեց, բայց սա, լինելով հարգալից, փառավոր և անշափ առաքինի մարդ, մերժեց։ Այս անգամ Փիլարտոսը տեր Պողոսին հրավիրեց՝ վարագա Սուրբ Նշան վանքի վանահորը, և եպիսկոպոսների ու վարդապետների ժողովը Պողոսին Մարաշ քաղաքում կաթողիկոս ձեռնադրեց՝ Փիլարտոսի հրամանով և կամքով, բայց ոչ՝ աստծո։ Ո՛չ աստված, ո՛չ էլ քրիստոնյաները

րիստոս. զոր տեսեալ Պօղոսի՝ զկնի սակաւ ինչ աւուրց ի բաց թողեալ զաթոռն, վասն զի էր այր սուրբ և առաքինի, և գիտացեալ զի ընդ հակառակն էր և ոչ ուղղապէս։

Յայսմ ժամանակիս էր աղմուկ և խռովութիւն մեծ ի վերայ աթոռոյն սուրբ Լուսաւորչին Գրիգորի. վասն զի յաւուրս յայսոսիկ ոչ հրամանաւն Աստուծոյ և կամ արժանաւորութեամբ էր կարգադրութիւն սրբոյ Աթոռոյն, այլ զօրութեամբ և կարողութեամբ և բարձրագահ իշխանութեամբ. և այս ոչ լինէր յայտնութեամբ Հոգւոյն սրբոյ, այլ լինէր ի ձեռն պատահմանց և յաջողութեանց և տրօք ոսկւոյ և արծաթոյ։ Եւ ահա յայսմ աւուրքս ամաչելով յետս դարձան դասք սրբոցն և առաքինեացն, և յառաջ մատեան դասք անկելոցն յերեսաց Տեառն Յիսուսի Քրիստոսի որպէսն Աստուծոյ։ Աստանօր սկիզբն եղև կատարելոյ տեսլեան սրբոյն Սահակայ Պարթևի, զոր ասացն ջնջել ոսկեդիր կարգացն և գծագրել սեւագիղ թանաքով. վասն զի ահա ի ժամանակիս այսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա Տէր Վահրամ կեպիսպոս, և Տէր Թէոդորոս ի Հոնին, և Տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց յԱնի, և Տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն. և սոքա իւրաքանչիւր որ առնէին ձեռնադրութիւնս և օծանէին եպիսկոպոսունս և տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն, և ի նոցանէ օրհնէին քահանայք, և լինէր պատարագ և մկրտութիւն և պսակն կուսանաց։ Եւ էր այս ամենայն սուղ մեծ ի վերայ նկեղեցւոյն Աստուծոյ, վասն զի մի փարախն ոչխարաց ընդ չորս հօտապետութիւնս բաժանեցաւ, և դայլք եղեն պատհապանք հօտին Քրիստոսի։ Եւ ահա յայսմ ի ժամանակիս բանաւոր ոչխարքն զգեցան զրնութիւն շանց և առին զսիրտ գազանաց և համարձակեցան հաջել յերեսս հովուացն և հայրապետացն. հարք առեցին զծընունդս իւրեանց, որդիք հայհոյիչք և չարշարիչք ծնողաց իւրեանց։ Եւ արդ ահա այս ամենայն կարապետք են Նեռինն և սկիզբն կատարածի աշխարհիս, և առ ի բառնալոյ հաւատոց և աստուածպաշտութեանց և ի կատարելոյ գրելեացն ի գիրս սուրբս, զոր ասաց սուրբն Ներսէս և որդի նորին սուրբ Իսահակ, և զոր խօսեցաւ ի մերում ժամանակիս սուրբ վարդապետն Յովհաննէս՝ որ ասի Կոզեռն։ Սորա խօսեցեալ բազում բանս որպէս զմարգարէութիւնս ի վերայ այսմ ժամանակիս և խափանելոյ աստուածապաշտութեանս յամենայն մտաց. և թուլանան ի հաւատոց. զայս ասաց ի նոյն գիրքս յառաջ ժամանակաց։ Արդ այս ամենայն խռովութեանցս և հանդէս բարկութեանս ոչ կարաց մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի՝ խորին աշխարհ Հայոց, որ է աթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի։ Արդ այս ամենայն յայնմ աշխարհի ոչ եղև բաժանումն սրբոյ աթոռոյն, այլ մնաց անշարժ հաստատութեամբ, հայ-

չընդունեցին դա։ Դրա վրա Պողոսը մի քանի օր հետո աթոռից հրաժարվեց, քանզի նա սուրբ և առաքինի մարդ էր, հասկացավ, որ կատարվածը ճիշտ բան չէր։

Այս ժամանակները սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռի շուրջ մեծ կռիվ ու աղմուկ էր, որովհետև կաթողիկոս էին ընտրում ոչ թե աստծո կամքով կամ նկատի ունենալով [թեկնածուի] արժանավորությունը, այլ ուժով ու կարողությամբ, բարձր իշխանավորների [ցանկությամբ]։ Դա տեղի էր ունենում ոչ թե սուրբ հոգու հայտնությամբ, այլ պատահականորեն, բախտի բերմամբ, ոսկի և արծաթ տալով։ Այս օրերում վիրավորված հրապարակից հեռացան սուրբ և առաքինի մարդիկ, և առաջ քաշվեցին տեր Հիսուս Քրիստոսի՝ աստծո որդու, աշքից ընկածները։ Հենց այստեղ է, որ իրականացավ սուրբ Սահակ Պարթևի տեսիլքը, թե կջնջվեն ոսկեգիր կարգերը և կգրվեն սևագեղ թանաքով։ Այս ժամանակներում էր, որ չորսի բաժանվեց սուրբ Գրիգորի աթոռը. տեր Վահրամը՝ Եգիպտոսում, տեր Թեոդորոսը՝ Հոնիում, տեր Բարսեղը՝ Հայոց թագավորանիստ Անի քաղաքում և տեր Պողոսը՝ Մարաշ քաղաքում։ Սրանցից յուրաքանչյուրը ձեռնադրում և օծում էր եպիսկոպոսներ, սուրբ մեռոն օրհնում, այդ եպիսկոպոսներն էլ իրենց հերթին քահանաներ էին ձեռնադրում, որոնք պատարագ էին մատուցում, մկրտում և պսակ դնում։ Այդ բոլորը աստծո եկեղեցու համար մեծ սուգ էր, քանզի ոչխարների մեկ հոտը չորս հովիվների միջև բաժանվեց, և գայլերը դարձան Քրիստոսի հոտի պահապաններ։ Այս ժամանակներում էր, որ բանական ոչխարները շնաբարո դարձան, գազանների սիրտ ձեռք բերեցին և հանդգնեցին հովիվների և հայրապետների երեսին հաչել։ Հայրերն ատեցին իրենց երեխաներին, որդիները դարձան իրենց ծնողներին անարգող և տանջող։ Այս բոլորը կարապետն էր նեռի, աշխարհի կործանման սկիզբը. պատճառն այն էր, որ վերացավ հավատքը և աստվածապաշտությունը, և իրականություն դարձավ այն, ինչ գրված էր սուրբ գրքերում, այն, ինչ ասաց սուրբ Ներսեսը և նրա որդի սուրբ Իսահակը, իրականություն դարձավ այն, ինչ մեր ժամանակներում ասաց սուրբ Հովհաննես վարդապետը՝ մականունը Կոզեռն։ Վերջինս շատ բան ասաց, որ կարծես մարգարեություն էր այս ժամանակների վերաբերյալ, թե բոլորի մոտից կվերանա աստվածապաշտությունը, և թե մարդիկ հավատքում անկայուն կլինեն։ Այդ բանն ասաց նա անցյալում, որի մասին գրված է այս գրքում։ Սակայն նման տակնուվրայությունը և սրտմտությունը չկարողացավ մուտք գործել Աղվանից երկիրը, որ կոչվում է Խորին Աշխարհ Հայոց, սուրբ առաքյալ Թադեոսի աթոռանիստը։ Այդ երկրում սուրբ աթոռի բաժանում տեղի չունեցավ, մինչև

բանտարկեալ և թագաւորութեամբ մինչև ցայսօր ժամանակի, որ նստէին առաքելական աթոռովն ի քաղաքն Հայոց ի Պարտաւ, որ ասի Փայտակարան, սահմանակից համատարած ծովուն: Եւ եղև ի ղօրանալն Պարսից փոխեցաւ աթոռ հայրապետութեանն ի Դանձակ. որ հանդիպեցան յայսմ ժամանակութեանս մերում՝ կաթուղիկոսք Աղուանից՝ Տէր Յովհաննէս և Տէր Գէորգն, Տէր Յովսէփն, Տէր Մարկոսն և Տէր Ստեփաննոսն. և թագաւորք Աղուանից՝ Գագիկ և Դաւիթ և Կիւրիկէ, որք նստէին յայժմուս ի Լօռէ քաղաքն Հայոց: Էին և այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կապանք, սահմանակից Օղաց և Աղուանից, որք էին թագաւորք անարատք և արբակրօնք, որք յիշատակին ի սուրբ պատարագն ընդ այլ աստուածասէր սուրբ թագաւորքն, որք էին անուանք այսոքիկ՝ Վաջագան, և Գոշակատակն՝ նորին որդին, Փիլիպէ որդի Գոշակատակին, Սեւադա որդին Փիլիպէի, Սենեքարիմ որդի Սեւադայի, Գրիգոր որդի Սենեքարիմայ, որ դեռ ևս կենդանի էր մինչև գրէաք զայս մատենագրութիւնս մեր: Յայսմ ժամանակիս եղև այրգիս Հայոց կաթուղիկոս վեց, երկու յԵգիպտոս, և չորս յամենայն աշխարհս Հայոց, որպէս յառաջնոյ ասացաք: Եւ նստաւ Տէր Պօղոս կաթուղիկոս ի Մարաշ՝ հրամանաւ Փիլառոսին և ոչ հրամանաւն Աստուծոյ:

Եւ արդ մնք դարձցուք ի թուականն որ ԹՂՂԱ, ովքն զայս ասացաք վասն խառնակութեանն՝ որ եղև ի վերայ աշխարհիս Հայաստանեայց:

Իսկ յորժամ եղև թուականութիւնս Հայոց ՇԼԴ, գայր բազում զօրօք սուլտանն Դամասկոսի՝ որ ասի Դուղշ, և յարուցանէր պատերազմ ընդ ամիրայն Անտիոքայ ընդ Սուլիման: Արդ յայսմ ժամանակիս եղև պատերազմ սաստիկ յերկոցունց կողմանցն, և բախէին զմիմեանս զարմանալի պատերազմաւ ի մէջ ընդ Հալպ և ընդ Անտիոք. և էր երկու երեսք պատերազմացն Թուրք, և յայնմ տեղւոջ յանխնայ զմիմեանս կոտորէին. և ի բազմանալ պատերազմացն՝ յաղթեաց զօրք սուլտանին զօրացն Սուլիմանայ և արարին զնա փախստական, և սպանաւ ամիրայն Անտիոքայ Սուլիման ի զօրաց սուլտանին Դուղշին, և թագեցաւ Սուլիման մօտ ի գերեզմանն Շիրիփն-տուլայ՝ Կուրիշայ որդւոյն: Եւ յայսմ ամի առաւ Անտիոք և ամենայն աշխարհն նորա և եղև Դուղշին: Այս Դուղշս որդի էր Աբասլանայ սուլտանին և եղբայր Մելիք-շահ սուլտանին. և սորա վեց ամօք յառաջ եկեալ բազում զօրօք և էառ զքաղաքն Տիմիշգ և եսպան զմեծ ամիրայն զԱխսխան զիշխանն Պարսից, որ տիրեալ էր Տմշգայ և ամենայն ծովեզեր աշխարհացն: Այս Ախսխ Թուրք էր և էր այր քաջ և պատերազմող. սա յաղթեաց Մսրայ և ծեծեալ զթագաւորն Եգիպտոսի զԱզիզն՝ և եհան զնա յայնմ գաւառէն. և սա էառ

այսօր այն մնաց անսասան՝ հայրապետով և թագավորով։ Առաքելական աթոռը հայոց Պարտավ քաղաքում էր գտնվում, որ և Փայտակարան է կոչվում՝ լայնատարած ծովի ափին, բայց երբ պարսիկները հզորացան, այն Գանձակ[315] տեղափոխվեց։ Մեր սույն երկասիրության մեջ հանդիպում են Աղվանից հետևյալ կաթողիկոսները. տեր Հովհաննես, տեր Գևորգ, տեր Հովսեփ, տեր Մարկոս և տեր Ստեփանոս, ինչպես և Աղվանից հետևյալ թագավորները. Գագիկ, Դավիթ և Կյուրիկե, ովքեր այս ժամանակ նստում էին հայոց Լոռե քաղաքում։ Կային և ուրիշ հայ թագավորներ՝ Դարբանդ գավառում, որ կոչվում է Կապանք՝ օձերին և աղվաններին սահմանակից. նրանք աղնիվ և սրբակրոն թագավորներ էին, և պատարագներում հիշվում են նրանց անունները՝ աստվածասեր այլ սուրբ թագավորների շարքում, այն է՝ Վաչագանի, նրա որդու՝ Դոշակտակի որդու՝ Փիլիպեի, Փիլիպեի որդու՝ Սևադայի, Սևադայի որդու՝ Սենեքերիմի, Սենեքերիմի որդու՝ Դրիգորի, որը մեր այս մատյանի դրության ժամանակ դեռ կենդանի էր[316]։ Այս շրջանում հայոց վեց կաթողիկոս եղավ, երկուսը՝ Եգիպտոսում, իսկ չորսը՝ բովանդակ հայոց երկրում, ինչպես վերևում ասացինք։ Տեր Պողոսը կաթողիկոս նստեց Մարաշում՝ Փիլարտոսի և ոչ աստծո հրամանով։

Արդ, վերադառնանք այն թվականին, որտեղ ընդհատեցինք մեր շարադրանքը՝ Հայաստանում տեղի ունեցած խառնաշփոթության մասին խոսելու համար։

Հայոց 534 [28 փետրվար 1085—27 փետրվար 1086 թ.] թվականի սկզբին Դամասկոսի սուլթանը, որի անունը Դուդուշ էր, բազում զորքերով պատերազմի դիմեց Անտիոքի ամիրա Սուլիմանի դեմ։ Երկուսի միջև տեղի ունեցավ կատաղի պատերազմ, Հալեպի և Անտիոքի միջև ընկած շրջանում՝ սոսկալի ճակատամարտ։ Ոսոխները երկու կողմից էլ թուրք էին և նշված վայրում նրանք անխնա կոտորում էին միմյանց։ Պատերազմը թեժացավ. սուլթանի զորքը հաղթող դուրս եկավ և փախուստի մատնեց Սուլիմանի զորքին։ Անտիոքի ամիրա Սուլիմանը սպանվեց Դուդուշի զինվորների ձեռքով. նրան թաղեցին Շերեփ-Տոլի՝ Կուրիշի որդու դերեզմանին մոտիկ։ Այդ տարին ահա Անտիոքն ընկավ, և նրա բովանդակ գավառը անցավ Դուդուշի ձեռքը։ Դուդուշը Աբասյան սուլթանի որդին էր, Մելիք Շահ սուլթանի եղբայրը։ Նա դրանից վեց տարի առաջ մեծաթիվ զորքով եկել գրավել էր Դամասկոս քաղաքը, սպանել պարսից իշխան մեծ ամիրա Ախսիսին[317], որ տիրում էր Դամասկոսի և ծովեզրյա բոլոր գավառների վրա։ Ախսիսը թուրք էր, քաջ և պատերազմող մարդ։ Նա պարտության էր մատնել Եգիպտոսը և նրա թագավոր Ատիդին զանահարելով դուրս հանել այդ երկրից։ Նա Եգիպտոսի ձեռ-

ի Մսրայ զսուրբ քաղաքն Երուսաղէմ և զՏմիշգ և զամենայն ծովեզերաց քաղաքանին։ Եւ զարհուրեցոյց սա զամենայն տունն Մսրայ, մինչև յարեաւ ընդդէմ նորա ծառայն Ազիզին՝ թագաւորին Մսրայ, զորս բերին նմա ծառայ ի Հայոց ազգէն. և նա անուանեաց զնա Ամիր-Ճօշ։ Սորա վառեալ գունդ զօրաց ընդդէմ Ախսիսին ի Հայոց զօրականացն՝ և եկաց պատերազմաւ ընդդէմ նորա. և ապա եղև խաղաղութիւն տանն Մսրայ։

Իսկ ի վերանալ թուականութեան Հայոց ի յամս Շլե յարուցեալ անօրէնն Փիլառտոսն և գնաց յերկրպագութիւն Մելէք-շահին՝ տիեզերակալ սուլտանին վասն խնդրելոյ ի նմանէ զքաղցրութիւն և զխաղաղութիւն ամենայն հաւատացելոցն Քրիստոսի. և թողեալ ի քաղաքն իւր փոխան զմեծ իշխանն Հոռոմոց՝ որում անուն Պառակամանոս կոչէին, մարմնովն ներքինի, որ էր այր բարի և աստուածասէր, և տուեալ եղև Ուռհա ի ձեռս նորա։ Եւ առեալ Փիլառտոսն բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ, և աղնիւ ձիս և ջորիս, և հանդերձս երևելիս և պայծառս, և գնացեալ առ սուլտանն ի յաշխարհն Պարսից։ Եւ յայնժամ մի ոմն յիշխանացն Փիլառտոսին՝ Պարսամա անուն նորա, արար իւր չար խորհրդակից զայլ իշխանս քաղաքին և նոքօք կատարեաց զգործն Կայենի և զՅուդայի զաստուածասպանին. և չար խորհրդակցօքն իւրովք ելեալ Պարսամայ ի յաւուր կիւրակէի ի յաւագ կլայն և մտաւ առ Պառակամանոսն։ Եւ էր ժամ աղօթից իւրոց՝ և կայր յաղօթս յեկեղեցին մեծ վկայարանին սուրբ Թորոսի. և յայնժամ նոքա որպէս գազանք յարձակեցան ի վերայ Պառակամանոսին և սպանին զնա մինչ կայր յաղօթսն ի մէջ եկեղեցւոյն, զայր բարի և ողորմած սպանին չարաչար. և դրին քաղաքացիքն յաթոռ տուկութեանն Ուռհայոյ զսպանուլ նորա զՊարսամա։ Եւ լուեալ զայս ամենայն սուլտան Մելէք-շահն ի Պարսիկս՝ և զՓիլառտոսն ընկէց յերեսաց և ի փառաց իւրոց։ Եւ յայնժամ Փիլառտոսն յամենայն դիմաց յուսահատեալ եղև, և ի նոյն ժամայն յարուցեալ ի պատերազմ ի վերայ քրիստոսական հաւատոց իւրոց՝ և եղև ուրացող հաւատոցն Քրիստոսի, զոր ունէր աղտեղութեամբ, և կարծէր այնիւ փառաւորիլ ի Պարսից, զոր ոչ փառաւորեցաւ. լուր այն եղև նմա յօգուտ, որ զՔրիստոս ուրացաւ և եղև նախատինք և ատելի Աստուծոյ և մարդկան։

Յայսմ ամի շարժեալ ահագին բազմութեամբ տիեզերակալ Մելէք-շահն սուլտանն Պարսից՝ Ասքանազանց ազգաւ՝ և անթիւ զօրականօք խաղայր գայր և շրջեալ եմուտ յարևմուտս ի յաշխարհն Հոռոմոց առ ի տիրանալ այնմ աշխարհին. և քաղցրութեամբ և հեզութեամբ և ամենայն ողորմութեամբ լցեալ էր սիրտն նորա ի վերայ քրիստոնէից ազգին, և հայրախնամ գութ ցուցանէր ամենայն աշխարհի, և առանց պա-

քից գրավեց Երուսաղեմ սուրբ քաղաքը, Դամասկոսը և ծովեզրյա բոլոր քաղաքները։ Նա ողջ Եգիպտոսը սարսափի մեջ էր գցել, մինչև որ նրա դեմ դուրս եկավ Եգիպտոսի թագավոր Ազիզի հայազգի ծառան, որին [անցյալում] գերի էին բերել. [Եգիպտոսի թագավորը] նրան Ամիր-Ճոշ[318] անունն էր տվել։ Սա հայ վինվորներից բաղկացած զորագունդ հանեց Ախսիսի դեմ և պատերազմեց, որից հետո Եգիպտոսում տիրեց խաղաղությունը։

Հայոց 535 թվականի [28 փետրվար 1086—27 փետրվար 1087 թ.] սկզբին անօրեն Փիլարտոսը ելավ գնաց տիեզերակալ սուլթան Մելիք Շահի երկրպագության, խնդրելու, որ նա բոլոր քրիստոնյաների հանդեպ մեղմ և սիրալիր լինի։ Նա իր քաղաքում տեղակալ թողեց Հոռոմոց մեծ իշխանին, որին Պառակամանոս[319] էին ասում, մի ներքինու, բարի և աստվածասեր մարդու։ Այսպիսով, Ուռհան դրվեց նրա տրամադրության տակ։ Փիլարտոսը ոսկու և արծաթի բազում դանձերով, աղնիվ ձիերով և ջորիներով, թանկարժեք ու պսպղուն հանդերձներով գնաց պարսից երկիրը՝ սուլթանի մոտ։ Այդ ժամանակ Փիլարտոսի իշխաններից մեկը, նրա անունը Պարսամա էր, քաղաքի այլ իշխանների հետ դավադրություն կազմակերպեց և, նրանց օգնությամբ, Կայենի ու աստվածասպան Հուդայի գործն արեց։ Պարսաման իր դավակիցներով կիրակի օրը բարձրացավ ավագ բերդը և մտավ Պառակամանոսի մոտ։ [Վերջինիս] աղոթքի ժամն էր, նա աղոթում էր սուրբ Թորոսի մեծ վկայարանի եկեղեցում։ [Դավադիրները] գազանի պես հարձակվեցին եկեղեցում ապրող Պառակամանոսի վրա և չարաչար սպանեցին այդ բարի և ողորմած մարդուն։ Քաղաքացիները Ուռհայի դուկի պաշտոնը տրվեցին [Պառակամանոսին] սպանող Պարսամային։ Մելիք Շահը, Պարսկաստանում լսելով կատարվածի մասին, դաժարեց Փիլարտոսին հարգել և պատվել։ Փիլարտոսը, ամեն կողմից հուսահատված, անմիջապես հրաժարվեց իր քրիստոնեական հավատքից, որ մինչ այդ աղտեղությամբ էր դավանում, և դարձավ Քրիստոսի հավատքի ուրացող, կարծելով, որ այդպիսով պարսից շրջանում պատիվների կարժանանա, բայց չարժանացավ։ Նա սոսկ այն շահեց, որ Քրիստոսին ուրանալով՝ աստծուն և մարդկանց արգահատելի և ատելի դարձավ։

Այդ տարի տիեզերակալ Մելիք Շահ պարսից սուլթանը, ծագումով ասքանազյան, հսկայական զորքով ու անհամար զորականներով շարժվեց և եկավ մուտք գործեց արևմուտք, Հոռոմոց երկիրը, նրան տիրանալու մտադրությամբ։ Նրա սիրտը լի էր քրիստոնյաների նկատմամբ տածած քաղցրությամբ և հեզությամբ, նա համայն երկրի նկատմամբ հոր նման հոգատար էր և գթացող։ Առանց մարտ տալու նա տիրացավ

տերազմաց տիրեալ լինէր բազում քաղաքաց և գաւառաց։ Եւ յայսմ ամի տիրեաց սուլտանն ամենայն աշխարհին Հայոց և Հոռոմոց և գայր հասանէր ի մեծ քաղաքն Անտիոք և տիրանայր այնմ աշխարհին և Հալապայ՝ և տիրելով տիրեաց ի Կաղբիականէն մինչև ի յովկիանոս. և հաւանեցոյց առ հասարակ զամենայն թագաւորութիւնս իւրոյ աթոռոյն՝ որք յայսկոյս Ովկիանոսի, և ոչ մնաց աշխարհ՝ որ ոչ հնազանդեցաւ նորա թագաւորութեանն. և եղեն հարկատուք և հնազանդեցան նմա երկոտասան ազգ թագաւորաց։ Եւ եղև յետ տիրանալոյն Անտիոքու՝ իջեալ յեղբ յովկիանոս ծովուն ի տեղին՝ որ կոչի Սեւոտի, և տեսեալ սուլտանին զծովն մեծ՝ զոհանայր և օրհնէր զԱստուած, որ մեծացոյց զթագաւորութիւնն նորա առաւել քան զհօրն նորա Աբասլանայ. և ձիով իւրով մտեալ կոխէր զՈվկիանոս. և եհան զթուրն իւր և երեք հաղ մխեաց ի յովկիանոս զթուրն իւր և ասաց, եթէ «Ահա տիրել երեսս ինձ Աստուած ի ծովէն Պարսից մինչև ի ծովս այս», և հաննալ զհանդերձս տարածեաց ի վերայ գետնոյն՝ և եկաց յաղօթս առ Տէր Աստուած և օրհնեաց զբարերար ողորմութիւնն Աստուծոյ. և հրամայեաց ծառայից իւրոց առաջս բառնալ ի ծովէն, և տարաւ զայն ի Պարսիկս և էարկ գերեզմանի հօրն իւրոյ Աբասլանայ՝ և ասէր. «Հայր իմ Աբասլան, ահա աւետիք քեզ, վասն զի տղայ որդին քո, զոր թողեր, տիրելով տիրեաց մինչև ի ծագս աշխարհի»։ Եւ գնէր սուլտանն յԱնտիոք զամիրայն, որ ասի Աղսիան, այր չար և շուն և խռովարար և դաղանամիտ. դնէր և ի Հալապ քաղաք զԱխսնդոյրն, որ էր այր բարի և խաղաղարար և քաղցր ի վերայ ամենայն ուրուք և շինող աշխարհի։

Յայսմ ամի ամիրայ ոմն Պիզան անուն, հրամանաւ Մելեք-շահ տիեզերակալ սուլտանին գայր բազում զօրօք ի վերայ քաղաքին Ուռհայոյ և իջեալ բանակ հարկանէր ի դուռն քաղաքին, և զամիսս երիս պատերազմեալ ի վերայ քաղաքին։ Եւ եղև յաւուր միում գայր և ինքն սուլտանն տակաւ զօրօք և անցանէր շուրջ զքաղաքաւն, և գնաց անվնաս, վասն զի իջեալ էր անթիւ զօրօք ի դաշտին Խառնայ, և անդուստ գնաց խաղաղութեամբ ի Պարսիկս։

Իսկ Պուզանն կայր մեծաւ պատերազմաւ ի վերայ Ուռհա քաղաքին՝ և սովով նեղէր զքաղաքն զբազում աւուրս. և ի վերայ այնքան բարկութեանն ոչ գոյր օգնական, որ փրկէր զնոսա. և անճարեալ լինէին յամենայն կողմանց։ Եւ յայնժամ քաղաքն ամենայն արարին խուխայ ի վերայ տուկին իւրեանց՝ ի վերայ Պարսամայի՝ շարժեալ ամենայն բազմութիւն քաղաքին ի վերայ նորա, և նա առ վտանգին անճարեալ դէմս արար ի Պուզանն և ընկէց զինքն ի պարսպէն ի վայր, և բեկաւ ոտն նորա, և եկեալ տարան զնա առ Պուզանն, և նա զկնի աւուրց ինչ

բազում քաղաքների և գավառների։ Այդ տարին սուլթանը, տիրելով Հայոց և Հռոմոց բովանդակ երկրին, եկավ հասավ Անտիոք մեծ քաղաքը, տիրացավ գավառին և Հալեպին։ Նա նվաճեց և տիրեց Կաղբիա-կանից[320] մինչև Օվկիանոսը, իր գահին ենթարկեց Օվկիանոսից այս կողմ ընկած բոլոր թագավորությունները. չմնաց և ոչ մի երկիր, որ նրան հնազանդություն չհայտներ։ Տասներկու թագավորություն հնազանդություն հայտնեցին և հարկատու դարձան։ Անտիոքը գրավելուց հետո սուլթանն իջավ Օվկիանոս ծովի ափին, Սևոտի կոչվող վայրը[321]. տեսնելով մեծ ծովը, նա գոհություն հայտնեց և փառաբանեց աստծուն, որ ընդարձակեց իր թագավորությունը, ավելի քան իր Հոր՝ Աբասլանի։ Նա իր ձիով մտավ ծովը, [պատյանից] հանեց թուրը և երիցս անգամ Օվկիանոսի մեջ միրճելով ասաց. «Ահա՛, աստված ինձ տիրել տվեց Պարսից ծովից սկսած մինչև այս ծովը»։ Ապա հանեց իր հագուստները, փռեց գետնին, աղոթեց աստծուն, փառաբանեց նրա բարերար ողորմածությունը, ապա իր սպասավորներին հրամայեց ծովից ավազ բառնալ, որը, Պարսկաստան տանելով, փռեց իր Հոր՝ Աբասլանի գերեզմանի վրա և ասաց. «Հա՛յր իմ Աբասլան, ահա քեզ ավետիս. քո որդին, որ թողեցիր, նվաճեց տիրեց մինչև ծագերն աշխարհի»։ Սուլթանն Անտիոքի [կառավարիչ] նշանակեց Աղսիան անունով ամիրային, որ շար ու մաղձոտ, խառնակիչ և գազանաբարո մարդ էր, իսկ Հալեպ քաղաքում նշանակեց Աղսնգուրին[322], որ բարի և խաղաղասեր մարդ էր, բոլորի նկատմամբ սիրալիր ու շենացնող։

Այդ տարին Պուզան անունով մի ոմն ամիրա, տիեզերակալ սուլթան Մելիք Շահի հրամանով, բազում զորքերով եկավ Ուռհա քաղաքի վրա և բանակեց քաղաքի դռան առջև. նա երեք ամիս պատերազմ մղեց քաղաքի դեմ։ Մի օր եկավ և ինքը՝ սուլթանը, փոքրաթիվ զորքով, քաղաքի շուրջը պտույտ գործեց ու անվնաս գնաց։ Նա անթիվ զորքով բանակել էր Խառանի դաշտում, որտեղից և խաղաղությամբ գնաց Պարսկաստան։

Իսկ Պուզանը շարունակում էր Ուռհա քաղաքի դեմ կատաղի կռիվ մղել և բազում օրեր սովով նեղում էր քաղաքը։ Այդքան դժվարին վիճակում գտնվող [պաշարյալներին] և ոչ մի տեղից փրկության օգնություն չէր գալիս. քաղաքացիները, կատարելապես ճարահատյալ, միահամուռ կերպով խոովություն բարձրացրին իրենց դուկ Պարսամայի դեմ և հարձակվեցին վրան։ [Պարսաման] տագնապահար ուզեց գնալ Պուզանի մոտ և իրեն պարսպից ցած գցեց ու կոտրեց ողնաշարը։ Նրան Պուզանի մոտ տարան, բայց մի քանի օր անց [Պարսաման] վախ-

մեռաւ։ Եւ ելեալ իշխանք քաղաքին առ Պուլչանն և ետուն զՈւռհա ի ձեռս նորա. և էր օր առաջին օր նաւասարդի, և թուականն Հայոց փոխեցաւ ի ՇԼՋ. և եղև խաղաղութիւն մեծ ի վերայ Ուռհայոյ և ամենայն սահմանաց նորա, և լցաւ ամենայն ուրախութեամբ քաղաքն Ուռհա. և եդիր Պուլչանն վերատեսուչ և պահապան քաղաքին Ուռհայոյ զսլար ոմն՝ որ ասէին Խուլուխ։ Եւ յայնժամ մատեան արք չարախօսք ի յԱսորւոց ազգէն առ Պուլչանն և չարախօսեցին զՀայոց իշխանսն, որք կային ի քաղաքն, և չարաշար մատնութեամբ մատնեցին զնոսա, Ասքար անունն և այլք ոմանք. և ետուն սպանանել սրով զիշխանսն Հայոց՝ արք փառաւորք երկոտասան՝ մեծք և երևելիք։ Բայց Պուլչանն ապաշաւէր զմահն նոցա, վասն զի երդուեալ էր յառաջագոյն, սակայն յաղագս չարաչար մատնութեանն կորոյս զնոսա. և ինքն Պուլչանն գնաց զօրօքն ի յաշխարհն Պարսից։

Յայսմ ամի գնաց սուլտանն բազմութեամբ զօրօք և բանակեցաւ ի վերայ քաղաքին՝ որ կոչի Դանձակ, ի յաշխարհին Հայոց. և արար սաստիկ պատերազմ ի վերայ քաղաքին Դանձակայ և ժողովեաց զամենայն Պարսիկք ի վերայ նորա. և սաստիկ պատերազմաւ փորեալ ընկղմին բուրգն մի, և այնպիսի պատերազմաւ առին զքաղաքն Դանձակ և արարին կոտորած զփոքր մասն քաղաքին. և հրամայեաց Պուլչանն և վերացոյց զսուրն և արար խաղաղութիւն։ Եւ Տէր Ստեփանոս կաթուղիկոսն Աղուանից էր յայնժամ ի քաղաքն, և զերծաւ խաղաղութեամբ օգնականութեամբն Աստուծոյ, վասն զի պահեալ եղև ի Հայոց զօրացն, որք էին զհետ Պուլչանին։

Արդ ի յայսմ թագաւորութեան Ալէքսին Յունաց արքային եղև խռովութիւն յաշխարհն արևմտի յայնկոյս մեծ գետոյն՝ որ ասի Պառասոնայիս. եղև պատերազմ սաստիկ յապգէն Պածինկաց ընդ թագաւորին Հռոմոց Ալէքսի։ Եւ յայնժամ թագաւորն Պածինկաց յաղթեաց զօրացն Հռոմոց և սաստիկ կոտորածով վարէր զզօրսն Հռոմոց, և յանխնայ կոտորէին զնոսա։ Իսկ թագաւորն Ալէքսն սակաւ արամբք անկանէր ի Կոստանդնուպօլիս՝ և զկնի սակաւ աւուրցն բանայր զգանձատունն իւր և հանեալ հրովարտակս ընդ ամենայն երկիր թագաւորութեանն իւրոյ, և արար ժողով մեծ և ահագին առաւել քան զառաջինն. և թագաւորն Պածինկաց կայր ամենայն ազգաւ իւրով ի վերայ Կոստանդնուպօլսի, վասն զի առցէ իւր զթագաւորութիւնն Յունաց. և գայր ընդդէմ նմա վառեալ զօրաց վեց հարիւր հազարաց և միահամուռն ազգաւ և որդւովք։ Եւ լուեալ զայս Ալէքսն, կացին յաղօթս զաւուրս ութ ամենայն դասուք հաւատացելովք, և էր թուականն Հայոց ՇԼՀ, և յաւուրս այսոսիկ յարձակեցաւ թագաւորն Ալէքսն զօրօք իւրովք ի վերայ զօրացն Պածինկաց, երեք հարիւր հա-

ճանվեց։ Քաղաքի իշխանավորները գնացին Պուզանի մոտ և Ուռհան նրան հանձնեցին։ Նավասարդի առաջին օրն էր, հայոց 536 թվականի [28 փետրվար 1087—26 փետրվար 1088 թ.] սկիզբը։ Ուռհայի և նրա ողջ գավառի վրա մեծ խաղաղություն տիրեց, Ուռհա քաղաքը լցվեց ամենայն ուրախությամբ։ Պուզանն Ուռհա քաղաքի կառավարիչ և պահապան նշանակեց մի զորահրամանատար, որին Խուլուխ էին անվանում։ Այն ժամանակ քսու մարդիկ՝ աղգությամբ ասորի Ասքարը և ուրիշներ, գնացին Պուզանի մոտ և, զրպարտելով քաղաքում եղող հայ իշխանավորներին, չարաննենգ մատնությամբ սրախողխող անել տվեցին տասներկու փառավոր, անվանի ու երևելի մարդու. Պուզանը, սակայն, ափսոսաց նրանց մահը, որովհետև նախապես [անձեռնմխելիության] երդում էր տվել. ստոր մատնությունն էր պատճառը, որ նա կործանեց նրանց։ Ինքը՝ Պուզանը, զորքով գնաց պարսից երկիրը։

Նույն տարին սուլթանը բազում զորքերով գնաց և բանակեց Գանձակ քաղաքի մոտ, հայոց երկրում։ Նա Գանձակ քաղաքի դեմ հանեց բոլոր պարսիկներին և կատաղի պատերազմ տվեց։ [Պարսիկները] քանդեցին [պարսպի] հիմքերը, փլեցին մի բուրգ և գրավեցին Գանձակ քաղաքը. նրանք քաղաքացիների փոքր մասին կոտորեցին։ Պուզանի հրամանով ջարդը դադարեց և խաղաղություն տիրեց։ Աղվանից կաթողիկոս տեր Ստեփանոսը այդ ժամանակ քաղաքում էր գտնվում, նա աստծո օգնությամբ փրկվեց, քանզի Պուզանի բանակում գտնվող հայոց զինվորները պահեցին նրան։

Հունաց արքա Ալեքսի Թագավորության տարիներին արևմտյան աշխարհում, Պարադունավիս կոչվող մեծ գետից[323] այն կողմ խռովություն բարձրացավ։ Պածինակները կատաղի պատերազմ տվեցին Հոռոմոց Ալեքս կայսեր դեմ։ Պածինակների թագավորը հաղթեց Հոռոմոց զորքերին և մեծ ջարդ տվեց, անխնա կոտորեց։ Ալեքս կայսրը փոքրաթիվ մարդկանցով իրեն Կոստանդնուպոլիս գցեց։ Մի քանի օր անց նա բաց արեց իր գանձատունը, հրովարտակներ հրապարակեց իր բովանդակ թագավորության սահմաններում։ Նա հսկայական զորահավաք կատարեց, ավելի մեծ, քան նախորդը։ Իսկ պածինակների թագավորը իր ամբողջ ժողովրդով բանակել էր Կոստանդնուպոլսի [պատերի] տակ, նպատակ ունենալով տիրանալ հունաց թագավորության։ Նա վեց հարյուր հազար սպառազեն զինվորներով, իր ողջ ազգով և որդիներով շարժվեց [քաղաքի] վրա։ Ալեքսը, լսելով դա, հավատացյալ ողջ ժողովրդով ութ օր աղոթեց։ Հայոց 538 [27 փետրվար 1089—26 փետրվար 1090 թ.] թվականն էր։ Այդ օրերին Ալեքս կայսրը երեք հարյուր հազար հոռոմ-

զարօք Հռոմոց և Հռոմայեցւոց, Հայոց և Բուլղարաց զօրօքն. և հանդիպեալ երկուց թագաւորութեանցն միմեանց և յայնմ աւուր արարին ահաւոր և սաստիկ պատերազմ ընդ միմեանս: Իսկ Պածինակն առհասարակ աղեղնաւորք էին. և ի վերայ սայլից պատերազմէին ահագին և զարմանալի կորովութեամբ. յայնժամ ձայն առեալ թագաւորն Ալէքսէն, և կրակով վառեցին զսայլսն և արարին հրաբորբոք զնոսա. և այսու հնարաւորութեամբ յաղթեաց թագաւորն Ալէքսէն զօրացն Պածինակաց, և արարին զամենայն զօրսն փախստական և սրով և սաստիկ կոտորածով. և եսպան զթագաւորն Պածինկաց և ջնջեաց զամենայն զօրս նոցա, և զորդիս նոցա և զկանայս նոցա կոտորեաց սրով, և բաղում աւարաւ և դերութեամբ դարձաւ ի Կոստանդնուպօլիս:

Յայնմ ժամանակի երևեցաւ ոմն չար և սիրտ հերետիկոս ի Կոստանդնուպօլիս. աբեղայ մի ի Հռոմոց ազգէ, որ զսատանայ իւր Աստուած պաշտէր, ևս և շուն շրջեցուցանէր զհետ իւր և նորա մատուցանէր զաղօթս՝ և այսպիսի աղանդովն ապականեալ էր զբազում արս և զկանայս, և յաստուածապաշտ քաղաքէն Կոստանդնուպօլսէ ապականեալ ի հաւատացելոցն իբրև զփոքր մասն քաղաքին՝ և գլխովին իսկ զմայրն թագաւորին Ալէքսին: Եւ այնչափ յանդգնեալ մայր թագաւորին, որ չար մոլորութեամբն իւրով առեալ զմասն ի սրբոյ նշանէն Քրիստոսի՝ և դնէր զայն ի կօշիկ թագաւորին ծածկաբար ի ներքոյ գարշապարացն, զի լիցի այն կոխան թագաւորին. զորս յայտնեաց Աստուած զպիղծ աղանդաւորն ի յիւրոյ հաւատակեցացն՝ և ազդ արարեալ զայն թագաւորին: Ջորս իմացեալ աստուածասէր թագաւորն Ալէքսն՝ և զաղանդաղլուխն հրով այրեաց, և զայլս բազում խեղդամահ արար ի ծովն Ովկիանոս՝ իբրև բիւր մի, և զիւր մայրն ընկէց ի պատուոյ և եհան յերեսաց, և եղև խաղաղութիւն:

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ի յամս ՇԼԲ յարուցեալ հայրապետն Հայոց Տէր Բարսեղ և գնացեալ առ տիեզերակալ սուլտանն Մելիք-շահն, զի տեսանէր զհաւատացեալսն Քրիստոսի, զի նեղէին զնոսա ի տեղիս տեղիս և հարկս պահանջէին յեկեղեցեացն Աստուծոյ և յամենայն ժառանգաւորացն նորա՝ և զվանորայսն և զեպիսկոպոսունսն հարկիւ չարչարէին. յայնժամ կաթուղիկոսն Հայոց Տէր Բարսեղ տեսեալ զայս ամենայն զնեղութիւնս՝ և խորհեցաւ գնալ առ բարի և քաղցր թագաւորն Պարսից և ամենայն հաւատացելոցն Քրիստոսի, առ ի ծանուցանել նմա զայս ամենայն. և առեալ ընդ իւր նուէրս սուլտանին իբրև բիւրս ոսկւոյ և արծաթոյ և դիպակաց, և հանդերձ ազատօք և եպիսկոպոսօք և քահանայիւք՝ առեալ վարդապետ զհետ իւր և գնաց ի Պարսիկս առ աստուածասէր սուլտանն: Եւ տեսեալ սուլտանին զՏէր Բար-

ներից և հռոմայեցիներից[324], հայերից և բուլղարներից բաղկացած իր զորքով հարձակվեց պածինակների զորքերի վրա։ Երկու թագավորները, այդ օրը բախվելով միմյանց, կատաղի և ահավոր մարտ տվեցին։ Պածինակները բոլորն էլ աղեղնավորներ էին, նրանք մարտ էին վարում սայլերի վրայից մեծ ու զարմանալի կորովով։ Բայց Ալեքսի հրամանով նրանց սայլերը կրակի տվեցին և հրո ճարակ դարձրին։ Ալեքս կայսրն ահա այս ճանապարհով հաղթեց պածինակների զորքերին, նրանց գլխովին փախուստի մատնեց, սրի քաշեց և ջարդ տվեց։ [Ալեքսը] սպանեց պածինակների թագավորին, բնաջնջեց նրա բովանդակ զորքը, նրանց որդիներին ու կանանց սրի քաշեց և բազում ավարով ու գերիներով վերադարձավ Կոստանդնուպոլիս[325]։

Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում հայտնվեց մի չար և պիղծ հերետիկոս, մի հոռոմ աբեղա, որ սատանային որպես աստված էր պաշտում։ Նա իր հետ մի շուն էր մանծածում և նրան աղոթք մատուցում։ Նման աղանդով նա վարակեց բազմաթիվ տղամարդկանց ու կանանց, Կոստանդնուպոլիս քաղաքի հավատացյալ ժողովրդի փոքր մասը, ապա և Ալեքս կայսեր մորը. սա այն աստիճան լկտիացավ, որ իր չար մոլորությամբ Քրիստոսի սուրբ խաչի մի բեկոր ծածուկ դրեց կայսեր կոշիկների կրունկների տակ, որպեսզի տրորվի կայսեր կողմից։ Աստված այդ [հերետիկոսի] հավատակիցների օգնությամբ բացահայտեց պիղծ աղանդավորին և տեղեկացրեց կայսեր։ Աստվածասեր կայսր Ալեքսը, իմանալով այդ մասին, աղանդապետին ողջակիզեց, շատ ուրիշներին էլ, շուրջ տաս հաղար հոգու, Օվկիանոս ծովում ջրահեղձ արեց, իր մորն էլ գցեց պատվից ու շնորհներից[326]։ Եվ տիրեց խաղաղությունը։

Հայոց 539 թվականին [27 փետրվար 1090—26 փետրվար 1091 թ.] հայոց հայրապետ տեր Բարսեղը ելավ գնաց տիեզերակալ սուլթան Մելիք Շահի մոտ, որովհետև տարբեր վայրերում քրիստոնյաների վրա բռնանում էին, աստծո եկեղեցիներից և նրա բոլոր ժառանգավորներից հարկ էին պահանջում, հարկապահանջությամբ տանջում էին վանականներին և եպիսկոպոսներին։ Ահա, հայոց կաթողիկոս տեր Բարսեղը, տեսնելով այս բոլոր բռնությունները, որոշեց գնալ պարսից և բոլոր քրիստոնյաների բարի և հեզաբարո թագավորի մոտ, այդ բոլորի մասին նրան տեղյակ պահելու։ Իր հետ վերցնելով բյուրավոր ոսկի, արծաթ և դիպակներ, որպես սուլթանին նվեր, նա ազատներով, եպիսկոպոսներով, քահանաներով ու վարդապետներով գնաց Պարսկաստան, աստվածասեր սուլթանի մոտ։ Սուլթանը, տեսնելով տեր Բարսեղին, ար-

սեղն՝ յոյժ մեծարեաց զնա և կատարեաց զամենայն խնդրուածս նորա. և արարեալ զամենայն կամս Տէր Բարսեղին և ազատեաց զամենայն եկեղեցիս և զվանորայսն և զքահանայսն. և առեալ գիր ազատութեան, և հրովարտակօք և մեծարանօք արձակեաց զհայրապետն Հայոց: Եւ ելեալ արքունական հրամանօք Տէր Բարսեղն գնաց մեծաւ ուրախութեամբ, և արք փառաւորք ի սուլտանէն զհետ իւր, և եկեալ հասանէր ի Ջահան գաւառին. և յարեաւ ի վերայ Տեառն Թէոդորոսի, որ հրամանաւ Փիլառտոսին նստեալ էր կաթուղիկոս ի Հոնին. և Տէր Բարսեղն ընկենոյր յաթոռոյն զՏէր Թէոդորոսն և առեալ ի նմանէ զքօղն և զգաւազանն և զսուրբ Նշանն Տէր Պետրոսի՝ և արար միահեծան զհայրապետութիւնն իւր, և անտի եկն ի քաղաքն Ուռհա: Եւ արդ այս ոչ է մեղադրելի գնալ հայրապետին առ այլազգի թագաւոր և առնել խաղաղութիւն սրբոյ Եկեղեցւոյ. զի յաղագս խաղաղութեան գնաց սուրբն Բարսեղ առ անօրէնն Յուլիանոս թագաւորն, և սուրբն Ներսէս առ ուրացողն Վաղէս թագաւորն Յունաց, և սուրբն Մարութա առ Յազկերտ Պարսից արքայն, և վարդապետն Նանան առ թագաւորն Քաղդէացւոց, և Քրիստոս եկեալ առ հրէական ազգն: Իսկ յորժամ եկն Տէր Բարսեղ յՈւռհա, փոխեալ էր թուականութիւնն Հայոց ՇԽ. և գնացեալ Տէր Բարսեղ հասանէր մինչև ի մեծն Կեսարիա Գամրաց և դառնայր յԱնտիոք, և լինէր ուրախութիւն մեծ ամենայն աշխարհի՝ որք տեսանէին զնա. և գայր դարձեալ յՈւռհա:

Յայսմ ամի շարժ եղև ընդ ամենայն երկիր յամսեանն սեպտեմբերի, և սաստկապէս երերելով դողայր ամենայն արարածք հանդերձ ամենայն արարածօքս՝ որ ի ներքոյ երկնից. և լինէր կործանումն մեծ ի քաղաքն Անտիոք՝ և բազում աշտարակք հիմն ի վեր տապալեցան, և անկաւ մեծ մասն պարսպին Անտիոքայ, և բազում արք և կանայք մեռան ի ներքոյ բնակութեան իւրեանց:

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՇԽԱ անկաւ մահ սաստիկ ընդ ամենայն արարածս, որ և ի բազմութենէ մեռելոցն ոչ կարէին ժամանել քահանայքն թաղել զմեռեալսն. և առհասարակ յամենայն տունս ձայն լալոյ և ողբումն արտաստուաց ելանէր. և այնչափ սաստկացաւ մահն, որ բազումք ի յահէ մահուն երերալով դողային առաւել քան զմեռեալսն, և անթիւ կոտորած եղև աշխարհի ի մեռեալ անձանցն:

Յայսմ ամի Վարդայ սուրբ Նշանն և պատկեր սրբոյ Աստուածածնին բերաւ ի քաղաքն Ուռհա, և եղև ուրախութիւն մեծ տանն Աբգարու. և դղրդեալ միահամուռ ամենայն քաղաքն՝ ելեալք մեծաւ ուրախութեամբ ընդ յառաջ նորա՝ և ածին զնա ի քաղաքն մեծաւ հանդիսիւք: Յայնժամ իշխան աշխարհին Ուռհայոյ արար պատեհութիւն՝ որք եկին զհետ սրբ-

տակարգ մեծարեց և նրա բոլոր խնդրանքները կատարեց։ Տեր Բարսեղի ցանկության համաձայն, նա բոլոր եկեղեցիները, վանքերը, ինչպես և քահանաներին [հարկերից] ազատեց, այդ բանը հրովարտակով հաստատեց, որից հետո հայոց հայրապետին մեծ պատիվներով ճամփու դրեց։ Արքունական հրովարտակները [Ձեռքին], տեր Բարսեղը մեծ ուրախությամբ ճամփա ընկավ՝ սուլթանի փառավոր մարդկանց ուղեկցությամբ և եկավ հասավ Ջահան գավառը, [որտեղ] հանդես եկավ Փիլարտոսի հրամանով Հռնիում կաթողիկոս նշանակված տեր Թեոդորոսի դեմ։ Տեր Բարսեղը տապալեց տեր Թեոդորոսին, նրանից վերցրեց տեր Պետրոսի քողը, գավազանն ու սուրբ խաչը և, իր հայրապետությունը միահեծան դարձնելով, եկավ Ուռհա քաղաքը։ Հայրապետի քայլը՝ սուրբ եկեղեցու խաղաղությունն ապահովելու նպատակով այլազգի թագավորի մոտ գնալը, չի՞ կարելի պարսավելի համարել, չէ՞ որ սուրբ Բարսեղն [էլ] խաղաղության նպատակով գնաց անօրեն Հուլիանոս կայսեր մոտ[327], սուրբ Ներսեսը՝ հունաց ուրացող կայսր Վաղեսի[328], սուրբ Մարութան[329]՝ պարսից արքա Հազկերտի, Նանան վարդապետը՝ հրեա ժողովրդի մոտ։ Երբ տեր Բարսեղը ժամանեց Ուռհա, սկսվել էր հայոց տոմարի 540 թվականը [27 փետրվար 1091—26 փետրվար 1092 թ.]։ Տեր Բարսեղը գնաց հասավ մինչև Դամիրքի մեծ Կեսարիան, որտեղից վերադարձավ Անտիոք. բոլոր մարդիկ, տեսնելով նրան, ուրախանում էին։ Ապա նա նորից վերադարձավ Ուռհա։

Այդ տարվա սեպտեմբեր ամսին ամբողջ երկրում երկրաշարժ եղավ, երկնքի տակ գտնվող բոլոր արարածները ահուդողի մեջ էին։ Անտիոք քաղաքում մեծ ավերածություններ եղան, բազում աշտարակներ հիմնահատակ կործանվեցին, քաղաքի պարսպի մեծ մասը փուլ եկավ, և բազմաթիվ տղամարդիկ ու կանայք սպանվեցին իրենց բնակարանների փլատակների տակ։

Իսկ 541 թվականին [27 փետրվար 1092—25 փետրվար 1093 թ.] բոլոր արարածների վրա խուժեց սաստիկ մահ տարաժամ։ Մեռնողներն այնքան շատ էին, որ քահանաները չէին հասցնում նրանց թաղել։ Բոլոր տներից անխտիր լաց ու կոծ էր լսվում։ Մահ տարաժամն այնքան սաստկացավ, որ շատերը մահվան սարսափի առջև մահամերձներից ավելի ահուդողի մեջ էին։ Երկրում անթիվ մարդիկ կոտորվեցին։

Այդ տարին Ուռհա քաղաքը բերվեց Վարագա [վանքի] Սուրբ Նշանը և Սուրբ Աստվածածնի պատկերը. Աբգարի երկրում[330] մեծ ուրախություն եղավ։ Ողջ քաղաքը դղրդաց, բոլորը միասին գնացին [վանահայր Պողոսին] ընդառաջ և մեծ հանդիսությամբ նրան քաղաք բերեցին։ Ուռհա քաղաքի իշխանը պատշաճ կերպով ընդունեց սուրբ եպիս-

բոյ եպիսկոպոսին Տէր Պօղոսին և այլոց հարանցն. և եղեալ զսուրբ նշանն ի յեկեղեցին հանդերձ փառաւորութեամբ. և զկնի ամաց ինչ յափըշտակեաց և խլեաց ի նոցանէ դասուրբսն անիրաւաբար։

Յայսմ ամի զօրաժողով արար Պուզանն զամենայն զօրսն Պարսից և առեալ զհետ իւր զմեծ ամիրայքն և զտէրն Անտիոքայ և զՀալապայ՝ զԱղսիանն և զԱղսնգոյրն, և անթիւ զօրականօք խաղայր գնայր յաշխարհն Հոռոմոց. և իջեալ ի վերայ հռչակաւոր քաղաքին, որ կոչի Նիկիա, և սնոտի խորհրդովք խելագարեալ խորհէր անցանել առնուլ զքաղաքն Կոստանդնուպօլիս, զայն՝ որ վերին պահպանութեամբ ամրացեալ կայ, և մոլորական բնութեամբ միտ եդեալ առնուլ զանըմբռնելի քաղաքն. և կացեալ անդ զաւուրս ինչ, և ոչ կայր կարողութիւն առնել ինչ։

Եւ յայսմ ամի մեռանէր մեծն և աշխարհակալ սուլտանն Մելեքշահն, որ էր հայր և ծնող ամենայն տիեզերաց, այր բարի և ողորմած և քաղցր ի վերայ ամենայն աշխարհի. սա մեռանէր ի քաղաքն Բաղդատ դաւով նենգութեամբ ի կնոջէ իւրմէ՝ որ էր դուստր սուլտանին Սմրղնդոյ. սորա դեղ մահու արբուցեալ բարի անձին և լուծանէր զամենամեծ թագաւորն ի կենաց, և եղև սուգ մեծ և սաստիկ ի վերայ ամենայն տիեզերայ։ Եւ լուեալ Պուզանն զմահ սուլտանին՝ դարձաւ ի քաղաքն Ուռհա, և Աղսիանն գնաց յԱնտիոք, և Աղսնգոյրն գնաց ի Հալապ քաղաք։ Եւ էր Տէր Բարսեղ ի քաղաքն Ուռհա. և իբրև զփախստական անկանէր ի քաղաքն Անի՝ և նստաւ յաթոռ իւր։

Եւ ահա յայսմ աւուր եղև սաստիկ կոտորած և արիւնհեղութիւն ի տանն Հայոց, քանզի յարձակումն արարին զօրքն Թուրքաց և բազմաց խաւար ածին. մեռաւ սուլտանն, և ազգն Թուրքաց զբազումս գերեցին. և տարան զսուլտանն և թաղեցին ի Մարանդ քաղաքի մօտ ի գերեզման հօրն իւրոյ Աբասլանայ. և մնաց իւր երկու որդի՝ աւագն կոչեցաւ Պարկիարուխ, որ էր ծնեալ ի դստերէն Ակութին մեծ ամիրային՝ որ էր ազգական Աբասլանայ, իսկ միւս որդւոյն կոչէին Սափար, որ էր ի դստերէն Սմրղնդոյ սուլտանին, որ նստէր յՕզկան քաղաքի և Յղնէ։ Եւ դնեն զաւագ որդին զՊարկիարուխն յաթոռ հօր իւրոյ Մելեք-շահին և կացուցանեն զնա սուլտան ամենայն Պարսից, և զամիր Իսմայիլն զորդին Ակութին զբևռին իւր դնեն իւր երեսաց փոխան ի վերայ ամենայն աշխարհին Պարսից, զի էր այր բարի և յոյժ ողորմած և շինող աշխարհի. այս Իսմայիլս տիրեալ էր իբրև զթագաւոր ի վերայ ամենայն աշխարհին Հայոց, և սա արար զսկիզբն շինման ամենայն աշխարհին Հայոց և զամենայն վանորայսն ազատ պահէր ի չարեացն Պարսից։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց Շխբ մեռանէր Տէր Պօղոսն, այն՝ որ Փիլառտոսն նստոյց յաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց ի Մա-

կոպոս տեր Պողոսի հետ եկածներին և մյուս հայրերին։ Նա մեծ հանդիսավորությամբ Սուրբ Նշանը ամփոփեց եկեղեցում, բայց մի քանի տարի անց ապօրինաբար հափշտակեց ու խլեց այդ սրբություններըւ

Այդ տարին Պուզանը պարսից զորքի ընդհանուր զորահավաք արեց և, իր հետ վերցնելով մեծ ամիրաներին, Անտիոքի ու Հալեպի կառավարիչներ Աղսիանին և Աղսնգույրին, անհամար զինվորներով ելավ գրնաց հոռոմոց երկիրը. նա հարձակվեց Նիկիա կոչված հռչակավոր քաղաքի վրաւ Սին հույսերով խելագարված՝ նա մտածում էր գնալ և գրավել Կոստանդնուպոլիս անառիկ քաղաքը, այն քաղաքը, որ երկնային պահպանությամբ անսասան կանգնած է տեղում։ Նա մի քանի օր մընաց այնտեղ, բայց ոչինչ չկարողացավ անել։

Այդ տարին վախճանվեց մեծ և տիեզերակալ սուլթան Մելիք Շահը, համայն աշխարհի հայրն ու ծնողը, բոլորի հանդեպ բարի, ողորմած և հեզ մարդը։ Նա մեռավ Բաղդադ քաղաքում իր կնոջ՝ Սամարղանդի սուլթանի դստեր Նենգ դավով[331]։ Նա բարի մարդուն թույն խրմեցրեց, սպանեց ամենամեծ թագավորին։ Համայն աշխարհում մեծ ու ահավոր սուգ եղավ։ Լսելով սուլթանի մահվան մասին, Պուզանը վերադարձավ Ուռհա, Աղսիանը գնաց Անտիոք, իսկ Աղսնգույրը՝ Հալեպ քաղաքը։ Տեր Բարսեղը, որ Ուռհա քաղաքում էր գտնվում, փախստականի նման գնաց Անի քաղաքը և նստեց իր աթոռին։

Այդ օրը հայոց երկրում մեծ կոտորած և արյունահեղություն եղավ, որովհետև թուրքաց զորքերը հարձակվելով, շատերի օրը խավարեցրեցին և շատերին գերեցին։ Սուլթանին տարան թաղեցին Մարանդ քաղաքում, իր հոր՝ Աբասլանի գերեզմանին մոտիկ։ Նա թողեց երկու որդի. ավագը կոչվում էր Պարկիարուխ և ծնվել էր մեծ ամիրա Ակութի[332], Աբասլանի աղգականի դուստրից, իսկ մյուս որդին, որ կոչվում էր Սափար՝ Օզկան քաղաքում և Խզնեում նստող Սամարղանդի սուլթանի դուստրից։ Հոր՝ Մելիք Շահի դահին են նստեցնում ավագ որդուն՝ Պարկիարուխին և հռչակում համայն Պարսկաստանի սուլթան, իսկ ամիր Իսմայիլին[333], Ակութի որդուն՝ [Պարկիարուխի] քեռուն, նշանակում են նրա տեղակալ՝ բովանդակ Պարսկաստանի վրա, քանզի նա բարի, անչափ գթացող և աշխարհաշեն մարդ էր։ Այս Իսմայիլը որպես թագավոր տիրեց հայոց համայն երկրի վրա, սկիզբ դրեց ողջ Հայաստանի վերաշինության, իսկ բոլոր վանքերն էլ պարսիկների ոտնձգություններից ազատ պահեց։

Հայոց 542 թվականին [26 փետրվար 1093—25 փետրվար 1094 թ.] վախճանվեց տեր Պողոսը, նա, որին Փիլարտոսը Մարաշ քաղաքում հա-

յաղ քաղաքի. սա եկեալ զկնի սրբոյ Նշանին Քրիստոսի՝ և մեռանէր յայսմ ամի յՈւռհա քաղաքի՝ և թաղեցաւ մեծաւ հանդիսիւ ի դուռն սուրբ եկեղեցւոյն մերձ ի գերեզման վարդապետին։

Դարձեալ յայսմ ամի մեռանէր վարդապետն Հայոց Գէորգ՝ որ կոչեցաւ Ուռճեցի, որ էր լուսաւորիչ տանս Հայոց և աղբիւր մշտնջենաբուղխ վտակաց և լեզու հրեղէն հրովն ներկեալ. սա ուսմամբ և աստուածային շնորհօքն էր հաւասարեալ գիտութեամբն իւրով առաջին աստուածախօս սուրբ վարդապետացն Յունաց՝ Գրիգորի Աստուածաբանի ասեմ և Յովհաննու Ոսկեբերանի, Բարսղի և այլ նմանեաց նոցա. սա սքանչելի վարուք կատարեաց ընթացս իւր, և էր ամաց հարիւրից, և թաղեցաւ ի մեծ անապատն Կարմնջաձոր, մօտ ի գերեզմանն Սամուէլի վարդապետին և Խաչկայ՝ որ էր երաժիշտ ի վերայ ձայնաւոր եղանակաց. և եղև սուգ ի վերայ ամենայն երկիւղածացն Աստուծոյ, զի զրկեալ եղեն յայնպիսի լուսաւոր վարդապետէն։

Յայսմ ամի զօրաժողով արար սուլտանն Տմշգայ՝ որ ասի Դուշ՝ որդի Աբասլանայ և եղբայր Մելեք-շահին. և սա բազում զօրօք կամեցաւ ելանել ի յաշխարհն Պարսից ի յառնուլ զաթոռ թագաւորութեանն եղբօր իւրոյ Մելեք-շահին՝ և եկեալ յԱնտիոք քաղաք. և ելեալ ամիրայն յերկրպագութիւն սուլտանին. և անտի գայր անցանէր ի Հալպ, և ամիրայն Աղսնգոյրն ելանէր յերկրպագութիւն նմա, և անթիւ զօրօք խաղայր և երթայր յաշխարհ Պարսից։

Յայսմ ամի եղև ժողով բազմութեամբ տանն Արապկայց անթիւ զօրաց իբրև չորս հարիւր հազարաց, և ամենայն Բաբելոն գային ի Մօսլ գաւառ. և էր թագաւոր զօրաց Արապկացն Աբրէհիմն՝ որդին Կուրիշայ և եղբայրն Շէրէֆն-տօլայ։ Յայնժամ սուլտանն Դուշն հասանէր ի քաղաքն, որ կոչի Նսեպին, և մեծաւ պատերազմաւ էառ զքաղաքն Մծբին, որ է Նսեպին, և արար աւար զամենայն քաղաքն։ Իսկ զօրքն Հայոց, որ էին զհետ սուլտանին, արարին կոտորածս զՏաճիկն իբրև բիւր մի։ Եւ բանակն Արապկաց գայր խաղայր հասանէր ի սահմանն Մծբնայ և իջեալ ի տեղին, որ կոչի Հերմէզ. և յայնժամ առաքեաց սուլտանն յՈւռհա և մեծաւ երդմամբ բերեալ առ ինքն զամիրայն զՊուզանն բազում զօրօք, և յարուցեալ գնաց ի պատերազմ ի վերայ թագաւորին Տաճկաց։ Եւ հանդիպեալ միմեանց երկուց թագաւորացն ի դաշտին Մծբընայ՝ և արարին բազում կոտորածս. և սաստիկ պատերազմաւ դարձոյց սուլտանն զզօրսն Արապկաց և արար փախստականս. և սրով յարձակեցաւ զհետ նոցա և կալաւ զԱբրէհիմն զթագաւորն Արապկաց, որ նետով հարեալ էին զնա ի գլուխն և պատառեալ էին զպողովատ սաղաւարտն նորա, և անցեալ էր նետին զթաւթ, ուր և մեռաւ իսկ. և արարին

յոց կաթողիկոս էր նստեցրել։ Նա Քրիստոսի Սուրբ Նշանի հետ էր եկել և այդ տարին, ահա, մեռավ Ուռհա քաղաքում։ Մեծ հանդիսավորությամբ նրան թաղեցին սուրբ եկեղեցու դռան առջև։

Հենց նույն տարին վախճանվեց և հայոց վարդապետ Գևորգ Ուռճեցին։ Նա հայոց երկրի լուսավորիչ էր, աղբյուր մշտահոս և ուներ կրակոտ լեզու։ Իր կրթությամբ, աստվածային շնորհքներով և գիտելիքներով նա չէր զիջում հունաց առաջին աստվածախոս սուրբ վարդապետներին, ես նկատի ունեմ Գրիգոր Աստվածաբանին, Հովհան Ոսկեբերանին, Բարսեղին և նրանց նմաններին։ Նա սքանչելի կյանք վարեց և վախճանվեց հարյուր տարեկան հասակում։ Թաղվեց նա Կամբրջաձորի մեծ անապատում, Սամվել վարդապետի և Խաչիկի (սա լավ երգիչ ու երաժիշտ էր) գերեզմանների մոտ։ Ամեն վախն ունեցող բոլոր մարդիկ սուգ հագան, որովհետև զրկվեցին նման լուսավոր վարդապետից։

Նույն տարին Դամասկոսի սուլթան Դուզը՝ Աբասլանի որդին և Մելիք Շահի եղբայրը, զորահավաք արեց և բազում զորքերի գլուխն անցած ուզեց մուտք գործել պարսից երկիրը և տիրանալ իր եղբոր՝ Մելիք Շահի թագավորական գահին։ Մտնելով Անտիոք, նրան երկրպագության եկավ քաղաքի ամիրան։ Այնտեղից նա գնաց Հալեպ, որտեղ նրան երկրպագության եկավ ամիրա Աղսնդուլրը, որից հետո [Դուզը] գնաց պարսից երկիրը։

Այդ տարին արաբների երկրում անհամար զինվորների զորահավաք եղավ, շուրջ չորս հարյուր հազար հոգի. ողջ Բաբելոնն եկավ Մոսուլ գավառը։ Արաբների զորքերի հրամանատարը Աբրեհիմն էր՝ Կուրիշի որդին և Շերեփ-Տոլի եղբայրը[334]։ Դուզ սուլթանը հասավ Նսեպին կոչվող քաղաքը, կատաղի մարտ տալով գրավեց Մծբինը, այն է՝ Նսեպինը, և ողջ քաղաքն ավարի առավ։ Հայոց զորքը, որ սուլթանի հետ էր, մոտ տաս հազար տաճիկ կոտորեց։ Արաբների զորաբանակը եկավ հասավ Մծբինի սահմանները և իջավ Հերմեզ կոչվող վայրը։ Սուլթանը դիմեց Ուռհա և, մեծ երդում տալով, իր մոտ բերեց Պուզան ամիրային բազմաթիվ զորքերով, որից հետո դիմեց պատերազմի ընդդեմ տաճկաց թագավորի։ Երկու թագավորներն իրար հանդիպեցին Մծբինի դաշտում և մեծ ջարդ տվեցին։ Կատաղի մարտում սուլթանը փախուստի մատնեց արաբների զորքերին, սրով հետապնդեց և նրանց թագավոր Աբրեհիմին գերի վերցրեց։ Վերջինիս գլխից նետահար էին արել, նետը թափով ճեղքել էր նրա պողպատե սաղավարտը. [ստացած վերքից] նա մեռավ։ [Սուլթանի զինվորները] գերեցին [արաբների] կանանց ու

աւար զկանայս և զորդիսն նոցա և զհօտսն և զամենայն բազմութիւն երիվարացն նոցա։ Եւ մեծաւ յաղթութեամբ գնայր խաղալով սուլտանն Դդուշն յաշխարհն Պարսից. և թանձրացաւ բազմութիւն բանակի նորա և ելից զդաշտս և զբլուրս արևելից։ Եւ լուեալ զայս ամենայն սուլտանն Պարսկաց Պարկիարուխն նշդբօրորդին Դդուշին՝ և յարուցեալ բազում զօրօք գայր ի պատերազմ ընդդէմ հօրեղբօր իւրոյ՝ անթիւ բազմութեամբ։ Եւ լուեալ Դդուշն զգալն Պարկիարուխին՝ պատրաստեցաւ գնալ ընդդէմ նորա. յայնժամ Պուզանն և Խնկուրն իւրեանց զօրօքն ի դիշերի ապստամբեցին ի Դդուշէն և գնացին առ Պարկիարուխն։ Եւ լուեալ Դդուշն զննդութիւն նոցա՝ ոչ համարձակեցաւ ելանել ի պատերազմ, այլ դարձաւ և գնաց յաշխարհն իւր և մտաւ ի քաղաքն իւր Դըմիշկ. և գնաց ի Տրապօլիս և հաւանեցոյց զնա և զամենայն քաղաքսն ծովեզերայս՝ և կացեալ յայնմ աշխարհին զամիսս վեց։

Իսկ ի թուականութեանն Հայոց ՇԽԹ աչողեալ լինէր թագաւորութիւնն Պարկիարուխին. և կացուցանէր ի վերայ զօրացն Պարսից սպարապետ զմեծագահ և զփառաւոր ամիրայն զԻսմայիլն՝ զորդի Ակութին՝ զեղբայր մօր իւրոյ, վասն զի սա տիրեալ էր ամենայն աշխարհին Հայոց։ Եւ էր սա յամենայն կողմանց քաղցր և ողորմած և բարի և խնամակալ և մարդասէր և խաղաղարար և շինող ամենայն աշխարհին Հայոց, զարդարիչ վանորէից և մխիթարիչ կրօնաւորաց, և ազատ պահէր զհաւատացեալսն յամենայն չարեացն Պարսից. և ամենայն ոք տիրեալ էր հայրենեաց իւրոց յաւուրս նորա, և ի ժամանակս նորա կայր ուրախութեամբ լցեալ ամենայն Հայքն։ Արդ զսա կացուցանէր Պարկիարուխն տէր դրուց աշխարհին, և ինքն նստէր յաթոռ թագաւորութեանն իւրոյ խաղաղութեամբ։ Եւ ահա գայր մեծ ամիրայն Իսմայիլն և բազում զօրօք շրջէր ընդ աշխարհն Պարսից. և եղեն Պուզանն և Աղսնգոյլն զհետ նորա. և եկեալ ի տեղին՝ որ կոչի Ջաղցաձոր, յաշխարհն Պարսից՝ և Պուզանն և Աղսնգոյլն սկսան գործել մեծ ամիրային Իսմայիլի զննդութիւն։ Եւ յաւուր միում ելեալ ի բանակէն երեքն և տարեալ զնա ի զատ ի զօրացն վասն զրուցու պատճառանաց՝ և յարձակեցան ի վերայ Իսմայիլին և ընկեցին զնա ի ձիոյն և ձգեցին լար ի պարանոցն նորա և խեղդեցին զբարի թագաւորն, և ինքեանք փախստականք լինէին ի սուլտանէն ի Պարկիարուխէն և գնացին յիւրաքանչիւր քաղաք՝ Պուզանն ի յՈւռհա և Աղսնգոյլն ի Հալպ։ Եւ լուեալ սուլտանն զմեծին Իսմայիլին զմահն՝ և սաստկապէս ապաշաւէր։

Դարձեալ յայսմ ամի գայր խաղայր բազում զօրօք սուլտանն Դդուշն և անթիւ բազմութեամբ գայր ի վերայ Հալպայ. և Աղսնգոյլն և Պուզանն աթարին ժողովս և գնացին ընդդէմ սուլտանին ի պատերազմ.

երեխաներին, քշեցին տարան նրանց անասնահոտերը և ձիերի բոլոր երամակները։ Դուշ սուլթանը մեծ հաղթանակով շարժվեց գնաց պարսից երկիրը։ Նրա բանակը աստիճանաբար ստվարացավ և ողողեց արեվելքի դաշտերն ու բլուրները։ Պարսիկների սուլթան Պարկիարուխը՝ Դուշի եղբորորդին, լսելով այդ բոլորի մասին, անթիվ ու անհամար զորքով ելավ իր հորեղբոր դեմ պատերազմի։ Դուշը, լսելով Պարկիարուխի գալստյան մասին, նախապատրաստություն տեսավ նրա դեմ դուրս գալու։ Այն ժամանակ Պուզանն ու Աղսնգույրը, իրենց զորքերով դիշեր ժամանակ ընդվզելով Դուշի դեմ, միացան Պարկիարուխին։ Նրանց նենգությունն իմանալով, Դուշն այլևս չհամարձակվեց պատերազմ տալ և վերադարձավ իր երկիրը, մտավ իր Դամասկոս քաղաքը։ Ապա նա գնաց ու հպատակեցրեց Տրապոլիս քաղաքը և ծովափնյա բոլոր քաղաքները. այդ շրջանում նա մնաց վեց ամիս։

Հայոց 543 թվականին [26 փետրվար 1094—25 փետրվար 1095 թ.] Պարկիարուխ թագավորը հաջողություն ունեցավ։ Նա պարսից զորքերի սպարապետ նշանակեց բարձրաստիճան և փառավոր ամիրա Իսմայիլին՝ Ակութի որդուն, իր քեռուն, որը տիրում էր բովանդակ Հայաստանին։ Սա ամեն տեսակետից հեզաբարո, ողորմած, բարի, հոգատար, մարդասեր, խաղաղարար, ողջ հայոց երկիրը շենացնող մարդ էր, վանքերը շքեղացնող, վանականներին մխիթարող։ Նա բոլոր հավատացյալներին ղերծ էր պահում պարսիկների ամեն տեսակի ոտնձգություններից։ Նրա օրոք ամեն մարդ իր ունեցվածքի տերն էր, ողջ Հայաստանը՝ ուրախության մեջ։ Պարկիարուխն, ահա, հենց նրան նշանակեց երկրի սպարապետ, իսկ ինքն անվրդով նստեց իր թագավորական գահին։ Մեծ ամիրա Իսմայիլը բազում զորքերով շրջում էր պարսից երկրով։ Նրան միացան Պուզանն ու Աղսնգույրը։ Իսմայիլը եկավ Ջաղցածոր կոչվող վայրը՝ պարսից երկրում։ Պուզանն ու Աղսնգույրը մեծ ամիրա Իսմայիլի դեմ դավ նյութեցին։ Մի օր, երբ երեքով դուրս էին եկել բանակից զրուցելու պատրվակով, նրան հեռացնում են զինվորներից և, հարձակվելով վրան, ձիուց ցած են գլորում ու վզին լար փաթաթելով՝ խեղդամահ անում բարի թագավորին։ [Ոճրագործները] սուլթան Պարկիարուխից փախստական եղան, և ամեն մեկը գնաց իր քաղաքը։ Պուզանը՝ Ուռհա, իսկ Աղսնգույրը՝ Հալեպ։ Սուլթանը, լսելով մեծ Իսմայիլի մահվան մասին, շատ ափսոսաց։

Հենց նույն տարին սուլթան Դուշը անթիվ ու անհամար զորքերով ելավ եկավ Հալեպի վրա։ Աղսնգույրն ու Պուզանը զորահավաք արեցին և ելան սուլթանի դեմ պատերազմի։ Սուլթանը հաղթեց Աղսնգույրի և

և յաղթեաց սուլտանն զօրացն Աղսնգուրին և Պուղանին՝ և արար զնոսա փախստականս։ Եւ յայնմ աւուր սպանաւ Աղսնգոյրն և Պուղանն, և առաւ Հալպ, և զգլուխն մեծ ամիրային Պուղանի ի ձող ցցեալ բերէին ի յՈւռհա. և առաւ քաղաքն Ուռհա, և տիրեաց Դդուշն ամենայն գաւառաց նոցա. և գայր սուլտանն յՈւռհա և կացուցանէր քաղաքապետս զիշխանն Հոռոմոց՝ զԹորոս որ ասէին Հեթմայ որդի. և ինքն սուլտանն գնաց ի Պարսիկս առ ի պատերազմել ընդ Պարկիարուխն։ Եւ զօրապետ զօրացն Դդուշին, որ ասի Աղուսիան՝ տէրն Անտիոքայ, բազում զօրօք իջաւ ի վերայ անուանի բերդին, որ կոչի Զարինակ, ի յաշխարհին Հայոց, և մեծաւ պատերազմաւ էառ զնա, և արար անթիւ կոտորածս քրիստոնէից։ Եւ յայսմ ժամու հասանէր թուղթ առ սուլտանն ի կնոջէ եղբօր իւրոյ, զի գնասցէ շուտով, զի արասցէ զնա իւր այր. և ի լսել զայս սուլտանին՝ հասանէր ի Պարսիկս և իջեալ ի դաշտն Ասպահանայ, և Պարկիարուխն աղաչանս առաքէր առ Դդուշն. «Տուր, ասէ, ինձ զքաղաքն Ասպահան, և ամենայն արարածք քեզ եղիցի»։ Եւ նա ոչ լսէր աղաչանայ նորա. յայնժամ յարձակեցան երկոքեանն ընդ միմեանս ի պատերազմ անթիւ և անհամար բազմութեամբ երկոցունց կողմանցն. և եղև յոյժ հանին յերևան ընշանակն Մելիք-շահին՝ և տեսին զօր Պարսից, յայնժամ մեծ մասն զօրացն անցանէին ի Պարկիարուխին դեհն, և եղև սաստիկ կոտորած։ Իսկ անօրէն Աղուսիանն բազում զօրօք ի քմին կայր՝ և առանց պատերազմի փախեաւ. և տեսեալ զայս ամենայն զօրքն Դդուշին՝ փախեան առհասարակ։ Եւ էր օրն այն օր մեծ ի վերայ զօրացն Պարսից, վասն զի բիւրք և հազարք ի փախուստ լինէին ընդ ամենայն երեսս երկրի. և յայնժամ ի մէջ առեալ զԴդուշն՝ խոցեցին զձին նորա և ընկեցին զնա յերկիր. և կայր նստեալ ի մէջ զօրացն. և ոչ ոք իշխէր մերձենալ ի նա, վասն զի այր թագաւոր էր և էր եղբայր Մելիք-շահին։ Յայնժամ ամիրայ ոմն ի զօրաց Պարկիարուխին եկեալ սրով հատանէր զգլուխ նորա. և տարեալ թաղեցին զնա առ գերեզման հօր իւրոյ։ Յայնժամ Ռատուան որդի Դդուշին և Աղուսիանն և այլ ամենայն փախստականքն գային ի քաղաքն Ուռհա։ Եւ Թորոս կուրապաղատն, որ էր ի քաղաքն Ուռհա, էր այր ճարտարասան և հնարաւոր յոյժ, արար ընդունելութիւն նոցա՝ և կամէր ձեռբակալս առնել զնոսա, զի առցէ զկլայն քաղաքին Ուռհայոյ. և ոչ համարեցան այլ իշխանքն պատեհ, գնացին խաղաղութեամբ ի քաղաքս իւրեանց։ Յայնժամ Թորոս կուրապաղատն բազում հնարիւք ջանայր տիրանալ քաղաքին և փրկել զհաւատացեալսն յայլազգեաց. և ընդ կլայէն սկիզբն արար շինել պարիսպս և զմէկ մասն քաղաքին ամրացոյց պարսպովն, վասն զի կլայն պարսպից ի դուրս էր. և կային ի նմա Թուրք պահա-

Պուզանի զորքերին ու փախուստի մատնեց։ Այդ օրը Աղսնգույրն ու Պուզանը սպանվեցին, և Հալեպը գրավվեց։ Մեծ ամիրա Պուզանի գլուխը ձողի վրա ցցահան արած բերեցին Ուռհա։ Ուռհա քաղաքը գրավվեց, և նրա բոլոր շրջանների վրա տիրեց Դդուշը։ Սուլթանը եկավ Ուռհա և քաղաքապետ նշանակեց հոռոմոց իշխան Թորոսին[335], որին Հեթումի որդի էին անվանում։ Սուլթանն ինքը գնաց Պարսկաստան՝ Պարկիարուխի դեմ պատերազմելու։ Դդուշի սպարապետ Աղսիանը՝ Անտիոքի տերը, բազում զորքերով հարձակվեց հայոց երկրում գտնվող Ջարինակ կոչվող նշանավոր բերդի վրա, կատաղի պատերազմով գրավեց այն և անհամար քրիստոնյաների կոտորեց։ Այդ պահին սուլթանին բերեցին իր եղբոր կնոջ նամակը, որ շտապ վերադառնա, քանզի նրան իր ամուսինն է դարձնելու։ Սուլթանը, լսելով դա, հասավ Պարսկաստան և իջավ Ասպահանի դաշտը։ Պարկիարուխը պաղատագին դիմեց Դդուշին, թե՝ «Ասպահան քաղաքն ինձ տուր և ամեն մի արարած թող քոնը լինի»։ Բայց [Դդուշը] ականջ չդրեց նրա աղաչանքներին։ Դրա համար երկուսն էլ անհամար զորքերով հարձակվեցին միմյանց վրա և պատերազմ տվեցին։ Երբ պարզեցին Մելիք Շահի դրոշը և դրան ականատես եղավ պարսից զորքը, մեծ մասն անցավ Պարկիարուխի կողմը։ Տեղի ունեցավ սաստիկ կոտորած։ Անօրեն Աղսիանը, որ դարան էր մտել, առանց մարտին մասնակցելու փախավ։ Դդուշի զորքերը, տեսնելով այդ, միանգամից փախուստի դիմեցին։ Պարսից բանակի համար այդ օրը ճակատագրական էր, քանզի հազարավոր [զինվորներ], փախուստի դիմելով՝ ցրվեցին երկրով մեկ։ Դդուշին շրջապատեցին, խոցեցին նրա ձին և գետին տապալեցին։ [Դդուշը] թեև շրջապատված էր զինվորներով, սակայն և ոչ ոք չէր համարձակվում մոտենալ նրան, քանզի նա թագավոր էր, Մելիք Շահի եղբայրը։ Բայց Պարկիարուխի զինվորականներից մի ամիրա եկավ և սրով կտրեց նրա գլուխը։ [Դդուշին] տարան թաղեցին իր հոր գերեզմանի մոտ։ Այն ժամանակ Ռատուանը՝ Դդուշի որդին, Աղսիանը և մնացած բոլոր փախստականները եկան Ուռհա քաղաքը։ Ուռհա քաղաքում գտնվող Թորոս կուրապաղատը, մի ճարտարախոս և անչափ գործունյա մարդ, ընդունեց նրանց՝ մտադիր լինելով ձերբակալել, որպեսզի տիրանա Ուռհա քաղաքի բերդին։ Սակայն այլ իշխաններ այդ բանը նպատակահարմար չգտան և թույլ տվեցին խաղաղությամբ գնան իրենց քաղաքները։ Բայց Թորոս կուրապաղատը ամեն կերպ աշխատում էր տիրանալ քաղաքին և փրկել հավատացյալներին այլազգիների ձեռքից։ Նա սկսեց բերդի մոտից պարիսպ կառուցել, որով ամրացրեց քաղաքի մի մասը. բերդը գտնվում էր պարսիկների ձեռքում, և այնտեղ կար Թուրքերից բաղկացած կայազոր, ինչ-

պանք, կային ի նմա և գունդ մի ի Հայոց զօրացն, զոր կարգեալ էր զնոսա Դուկն։ Յայնժամ տեսեալ ասպասալարն, որ կայր ի Մանիկայ կլայն, եթէ կուրապաղատան ամրացոյց զքաղաքն և կտրեաց զկլայն ի զատ քաղաքէն, զրեաց թուղթ և ազդ արար ամիրային մօտաւոր ամիրայացն՝ զոր արարն Թորոս կուրապաղատան, և ասաց թէ՝ ի ծովու դրանէն մինչև ի սուրբ Թորոսն պարսպեաց զքաղաքն և կանգնեաց բուրգս քսան և հինգ և էառ զներքին կլայն՝ և տիրեաց ամենայն քաղաքին Ուռհայոյ։

Իսկ ի թուականութեանն Հայոց ի յամի ՇԽԴ արար ժողով հեծելոց Սուգման որդի Արդուխին և ամիրայն Սամուսատայ Պալտուխն որդի Ամիրխազէ և յաւուրս հնձոցն դան ի վերայ Ուռհայոյ։ Եւ Թորոս կուրապաղատան տէրն Ուռհայոյ եղև լցեալ ամենայն իմաստութեամբ. և յամենայն կողմանց սկսաւ ամրացուցանել զքաղաքն. և կանգնեցին բաբանս և փիլիկպանս՝ և յանխնայ ծեծէին զպարիսպ քաղաքին. և Թուրքն կացեալ աւուրս բազում անդադար պատերազմաւ՝ և ոչինչ կարաց առնել քաղաքին. և կացեալ զաւուրս վաթսուն և հինգ և պատառեցին զպարիսպ քաղաքին յերկու տեղի և մտեալ պատերազմէին ի քաղաքն. և այնու ոչ կարացին յաղթել քաղաքին։ Եւ ի նոյն աւուրսն գայր սուլտանն Հալպայ, որ ասի Ռասուան՝ որդին Դուկին, և Աղուսիանն տէրն Անտիոքայ քառասուն հազարով իջանէր ի վերայ Ուռհայոյ։ Յայնժամ Սուգմանն և Պալտուխն փախեան ի սուլտանէն. և քաղաքացիացն տեսեալ ղզօրսն՝ զարհուրեցան յոյժ։ Իսկ կուրապաղատան Թորոս առիւծաբար քաջալերէր զամենայն քաղաքն Ուռհայոյ և անթիւ գանձս տայր ի պէտս քաղաքին. և զաւուրս բազումս արարին սաստիկ պատերազմս ի վերայ քաղաքին, և օգնութեամբն Աստուծոյ ոչինչ կարացին առնել, քանզի ամենայն քաղաքացիքն սիրոս առիւծու առին և կացին ընդդէմ այլազգեացն. և ի վերայ սաստիկ պատերազմացն անճարեալ զօրք այլազգեացն՝ դնացին ամօթով։ Եւ յայնժամ ոմն ի զօրաց սուլտանին, որում անուն ասէին Մխիթար, և էր այր քրիստոնեայ, խորհուրդ արարեալ ընդ արսն իւր, զի տացէ զկլայն ի Թորոս կուրապաղատան։ Եւ յայնժամ Մխիթար պատրիկն երեսուն արամբ ի դիշերի արար հնարս և տայր զաւագ կլայն Մանիակայ ի ձեռս Թորոսի կուրապաղատին. և եղև խաղաղութիւն քաղաքին Ուռհայոյ։ Յայնժամ զօրս առաքեաց Թորոս ի բերդն Ուռհայոյ՝ որ կոչի Թրսիճ, զի արասցէ զերկիրն իւր հնազանդ. և հասեալ Պալտուխ ամիրայն Սամուսատայ, և ամենայն զօրք գաւառին ընդ նմա, և արարին պատերազմ ի սահմանս բերդին Թրսիճայ, և եղեն փախստական զօրքն Ուռհայոյ. և հասեալ նոցա ի գիւղն, որ կոչի Անդռանոսի՝ և կոտորեցին անդ արս հարիւր և չիսուն, և զայլսն

պես նաև հայկական զորքերից մի գունդ, որ Դուկն էր հաստատել։ Մանիակի բերդում գտնվող սպասալարը, տեսնելով, որ կուրապաղատան ամրացրեց քաղաքը և բերդն անջատեց մնացած քաղաքից, մոտակայքում գտնվող ամիրաններին նամակ գրեց և հայտնեց Թորոս կուրապաղատի արածի մասին, թե քաղաքը, սկսած ծովի դռնից[336] մինչև Սուրբ Թորոսը նա պարսպապատեց, քսանհինգ աշտարակ կառուցեց, գրավեց ներքին բերդը և տիրեց ամբողջ Ուռհա քաղաքը։

Հայոց 544 թվականին [26 փետրվար 1095—25 փետրվար 1096 թ.] Արդուխի որդի Սուգմանը և Սամոսատի ամիրա Պալտուխը՝ Ամիրխազեի որդին, հեծյալների զորահավաք անելով, հնձի օրերին հարձակվեցին Ուռհայի վրա։ Ուռհայի տեր Թորոս կուրապաղատը շատ խելացի գործունեություն ծավալեց. նա սկսեց ամեն կողմից ամրացնել քաղաքը։ [Հակառակորդները], բաբաններ և փիլիկպաններ կանգնեցնելով, անխնա հարվածում էին քաղաքի պարիսպը։ Թուրքերը բաղում օրեր անդադար մարտ էին մղում, բայց քաղաքին ոչինչ անել չկարողացան։ Վաթսունհինգերորդ օրը, երկու տեղից ճեղքելով քաղաքի պարիսպը, նրանք խուժեցին քաղաք. մարտն արդեն քաղաքում էր գնում, բայց նրանք նորից չկարողացան տիրանալ քաղաքին։ Այդ նույն օրերում եկավ Հալեպի սուլթանը, որի անունը Ռատուան էր՝ Դուկի որդին։ Քառասուն հազար զինվորներով Ուռհայի վրա հարձակվեց և Աղսիանը՝ Անտիոքի տերը։ Դրա վրա Սուգմանն ու Պալտուխը փախան սուլթանից։ Քաղաքացիները, տեսնելով [սուլթանի] զորքերը, սարսափահար եղան։ Թորոս կուրապաղատը Ուռհայի բոլոր բնակիչներին սիրտ էր տալիս, քաղաքի կարիքները հոգալու համար անհամար դրամ հատկացնում։ Քաղաքի համար բաղում օրեր կատաղի պատերազմ մղեցին, բայց աստված օգնեց քաղաքացիներին, և [թշնամին] չկարողացավ ոչինչ անել. բոլոր քաղաքացիները՝ առյուծասիրտ դարձած, դիմագրավեցին այլազգիներին, որոնց զորքը, կատաղի պատերազմից ճարահատյալ, ամոթով հեռացավ։ Այն ժամանակ սուլթանի զինվորներից մեկը, որի անունը Մխիթար էր (նա քրիստոնյա էր), իր մարտիկների հետ խորհրդակցեց բերդը Թորոս կուրապաղատին հանձնելու մասին։ Պատրիկ Մխիթարը երեսուն հոգով գիշերով միջոց գտավ և Մանիակի ավագ բերդը հանձնեց Թորոս կուրապաղատին։ Ուռհա քաղաքում խաղաղություն տիրեց։ Թորոսը Ուռհայի Թրսիճ կոչվող բերդը զորքեր ուղարկեց, գավառին տիրանալու նպատակով, բայց Սամոսատի ամիրա Պալտուխը գավառի ամբողջ զորքով դուրս եկավ նրանց դեմ. Թրսիճ բերդի սահմաններում ճակատամարտ տեղի ունեցավ։ Ուռհայի զինվորները փախուստի դիմեցին։ [Հակառակորդը] հասավ Ադրիանոսի կոչվող գյուղը,

արարին ձերբակալս։

Յայսմ ամի բերաւ Ալփիրակ սուլտանն յՈւռհա հրամանաւ Թորոսի, որ էր յազգէ Դղմշոյ, և տայր Թորոս զՈւռհա ի ձեռս նորա, վասն զի առցէ վրէժս ի Թշնամեաց իւրոց։ Իսկ Ալփիրակ խորհեցաւ սպանանել զնա և առնել ալափ զամենայն քաղաքն. և գիտացեալ կուրապաղատն Թորոս զայս ամենայն զնենգութիւնս, արբուցանէր նմա դեղ մահու և շուտով առաքեաց զնա ի բաղանիսն, և նոյն ժամայն սատակեալ եղև. և լուեալ զայս ամենայն զօրքն նորա՝ փախեան։ Եւ դարձեալ կուրապաղատն Թորոս տիրանայր Ուռհայոյ։ Եւ եղև իշխանութիւն Ալփիրակայ, զոր եկաց ի յՈւռհա՝ զաւուրս երեսուն և երեք։

Յայսմ ամի մեռաւ մեծ երաժիշտն և սիւնն սրբոյ Եկեղեցւոյ Տէր Թէոդորոս կաթուղիկոսն Հայոց և թաղեցաւ ի Հոնին՝ մօտ ի Տէր Սարգիսն։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՇԽԵ զօրաժողով արար սուլտանն արևմտից, որ ասի Խլիճ-Ասլան, որդի Սուլիմանայ՝ որդւոյ Դղմըշոյ, և գայր անթիւ բազմութեամբ ի վերայ Մելտենւոյ քաղաքին. և ելից զամենայն դաշտսն և յարուցանէր սաստիկ պատերազմ ի վերայ քաղաքին Մելտենւոյ և եղեալ բաբանս՝ նեղէր զքաղաքն։ Իսկ իշխան քաղաքին, որ ասէին Խօրիլ, որ էր աներ Թորոսին՝ կուրապաղատին Ուռհայոյ, սա ամենայն քաջութեամբ կացեալ ընդդէմ սուլտանին՝ և յամենայն կողմանց ամրացուցանէր զքաղաքն։ Եւ կացեալ անդ սուլտանն զաւուրս բազումս՝ ոչինչ կարաց առնել, դարձաւ ամօթով և գնաց յաշխարհն իւր։

Յայսմ ժամանակի կատարեցաւ մարգարէութիւն սրբոյն Ներսեսի Հայոց կաթուղիկոսիս, զորս վասն Հռոմայեցւոց ելից խօսեցաւ ընդ նախարարս և ընդ իշխանս Հայոց. և զոր նա յառաջ խօսեցաւ, ահա յայսմ ժամանակիս տեսաք աչօք մերովք, զայն որ ի ժամ մահուան մարգարէացաւ սուրբ և սքանչելի այրն Աստուծոյ Մեծն Ներսէս. և այս էր մարգարէութիւն սրբոյն՝ Դանիէլի՝ զոր տեսանէր ի Բաբելոն զկերպարանս զայլակերպ գազանին, և յայտնապէս տեսեալ և ցուցեալ էր ասելով զուտելն և զմանտրելն և զառ ոտս հարկանել զմնացեալսն։

Իսկ ի ժամանակիս եղև ելն Հռոմայեցւոց, և բացաւ դուռն Լատինացւոց ազգին, վասն զի սոքօք կամեցաւ Տէր պատերազմել ընդ տունն Պարսից։ Եւ դարձեալ եղև Տէր ի բարկութենէ իւրմէ, ըստ բանի Դաւթի մարգարէին, ըստ այնմ զոր ասաց՝ եթէ «Զարթիր, ընդէ՞ր ննջես, Տէր, արի և մի՛ մերժեր զմեզ իսպառ». և թէ՝ «Զարթեաւ որպէս ի քնոյ Տէր, որպէս հզօր, զի թափէ զգինի. եհար յետս զթշնամիս և նախատինս յա-

որտեղ հարյուր հիսուն հոգի կոտորեց, մնացածներին էլ գերեց։

Այդ տարին Թորոսի կարգադրությամբ Ուռհա հրավիրվեց Ալփիրակ սուլթանը, որ Դղլմուշի տոհմից էր։ Թորոսն իր թշնամիների հանդեպ վրեժ լուծած լինելու համար Ուռհան նրան տվեց։ Բայց Ալփիրակը որոշեց [Թորոսին] սպանել և ավարի առնել ողջ քաղաքը։ Թորոս կուրապաղատն իմացավ այդ խարդավանքի մասին և [Ալփիրակին] թույն խմեցնելով, փութանակի բաղնիք ուղարկեց, ուր նա տեղն ու տեղը սատակեց։ [Ալփիրակի] զինվորները, լսելով այդ բոլորի մասին, փախուստի դիմեցին։ Թորոս կուրապաղատը վերստին տիրացավ Ուռհայինն։ Ալփիրակն Ուռհայում տիրեց երեսուներեք օր։

Այդ տարին մեռավ հայոց կաթողիկոս տեր Թեոդորոսը, մեծ երաժիշտն ու սուրբ եկեղեցու սյունը. նա թաղվեց Հոնիում՝ տեր Սարգսի [գերեզմանին] մոտ։

Հայոց 545 թվականին [26 փետրվար 1096—24 փետրվար 1097 թ.] արևմուտքի սուլթանը, որ Խլիճ Ասլան է կոչվում, Դղլմուշի որդի Սուլիմանի որդին, զորահավաք անելով, հսկայական զորքով եկավ Մելիտենե քաղաքի վրա։ Նա զորքով ողողեց բոլոր դաշտերը, կատաղի պատերազմ մղեց Մելիտենե քաղաքի դեմ. բաբաններ կանգնեցնելով, նա նեղում էր քաղաքը։ Քաղաքի իշխանը, որին Խորիլ էին ասում[337], Ուռհայի կուրապաղատ Թորոսի անները, քաղաքը բոլոր կողմերից ամրացրեց, քաջաբար դիմագրավեց սուլթանին, որը թեև այնտեղ մնաց բաղում օրեր, այնուամենայնիվ, ոչինչ չկարողացավ անել և ամոթահար վերադարձավ իր երկիրը։

Այս օրերին իրականացավ հռոմայեցիների ելքի մասին հայոց կաթողիկոս սուրբ Ներսեսի մարգարեությունը, որը նա հայտնել էր հայոց նախարարներին և իշխաններին։ Նրա կանխագուշակության իրականացմանը մենք ականատես եղանք, տեսանք այն, ինչ իր մահվան ժամին մարգարեացավ նա, մեծ Ներսեսը, աստծո սուրբ և սքանչելի մարդը։ Դա մարգարեությունն էր սուրբ Դանիելի, որին Բաբելոնում երևաց կերպարանափոխվող գազանը, որին հստակ տեսնելով ասաց, թե ինչպիսին էր այդ գազանը, ինչպես էր ուտում, փշրում, մնացածն էլ ոտքերով տրորում[338]։

Այս օրերին տեղի ունեցավ հռոմայեցիների ելքը. բացվեց լատինական ժողովրդի դուռը, քանզի աստված կամեցավ սրանց միջոցով պատերազմել պարսից դեմ։ Տերը նորից բարկացավ, ըստ Դավիթ մարգարեի խոսքերի, թե՝ «Զարթնի՛ր, ինչո՞ւ ես ննջում, տեր, եկ և մի հրաժարվիր մեզնից հավիտյան», և «Արթնացավ տերը քնից, հզորացած, որպեսզի թափի գինին։ Նա հարվածեց թշնամիներին և հավիտյանս

վտանից արար զնոսա»։ Եւ ահա յայսմ ամի շարժեալ եղև ամենայն Իտալիա և Սպանիա մինչև յԱփրիկէ և խորին ազգն Փռանգաց՝ և գրոհեա անթիւ և ահագին բազմութեամբ և անհամար դասապետութեամբ, որպէս զմարախ՝ որ ոչ թուի, և կամ որպէս զաւազ ծովու՝ որ ոչ քննի մատաց, և ահաւոր մեծութեամբ և բարձրագահ իշխանութեամբ ելեալ գային իշխանք ազգին Փռանգաց. և իւրաքանչիւր զօրօքն գային յօգնութիւն քրիստոնէից և առ ի փրկել յայլազգեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ և ազատել ի Տաճկաց զսուրբ Գերեզմանն աստուածընկալ, արք փառաւորք և թագաւորազունք, հաւատով և ամենայն աստուածպաշտութեամբ զարդարեալք և էին սնեալք ի գործս բարութեան. որոց էին անուանքն այսոքիկ. Կոնդոփրէ, այր հզօր, որ էր յազգէ թագաւորացն Հռոմայեցւոց, և նորին եղբայրն Պաղտինն. Այր Կոնդոփրէ էր, որ ունէր զթուրն և զթագն ի հետ իւր Վեսպիանոսի թագաւորին, որ կոտորեաց զԵրուսաղէմ. էր և մեծ կոմսն, որ ասէին Պեմունդ, և Տանդրի քուրորդի նորա, և կոմսն՝ որ ասի Ջնեվիլ, այր ահարկու և փառաւոր, և Ռոպերդն Նորմնդաց կոմսն, և միւս այլ Պաղտինն. գայր և յետոյ կոմսն՝ որ ասի Ճօսլին, այր հզօր և քաջ։ Արդ այսքան արք հզօրք և պատերազմողք գային սոքա ահագին բազմութեամբ, որպէս զաստեղս երկնից. գային և զհետ սոցա բազում եպիսկոպոսունք, քահանայք և սարկաւագունք՝ և մեծաւ աշխատութեամբ ճանապարհորդեալ ընդ հեռաձիդ աշխարհն Հռոմայեցւոց և չարաչար նեղութեամբ անցանէին ընդ աշխարհն Ունգռաց ընդ նեղ և ընդ դժուար կապանս լերանց նոցա՝ և ժամանեալ հասանէին ի սահմանս Բուլղարաց, որ էր ընդ իշխանութեամբ Ալէքսին Յունաց թագաւորին, և այսպիսի ճանապարհորդութեամբ հասանէին ի մեծն Կոստանդնուպօլիս։

Եւ լուեալ զգալն նոցա թագաւորն Ալէքսն՝ առաքէր զօրս ընդդէմ նոցա ի պատերազմ. և եղև ահագին կոտորած յերկոցունց կողմանցն. և արար փախստական Փռանգն զղօրսն Յունաց. և յայնմ աւուր եղև բազում արեանց հեղումն։ Եւ այսպիսի օրինակաւ ընդ որ անցանէին՝ գային ամենայն աշխարհք ի վերայ նոցա պատերազմ և նեղէին զնոսա բազում չարչարանօք։ Եւ լուեալ զայս ամենայն թագաւորն Ալէքսն, վերացոյց զսուրն և ոչ ետ այլ պատերազմ ընդ նոսա։ Եւ ամենայն բանակն առհասարակ եկեալ իջաւ ի դուռն Կոստանդնուպօլսի և խնդրէին անցանել ընդ ծովն Ովկիանոս. և թագաւորն Ալէքս արար սէր և միաբանութիւն ընդ ամենայն իշխանսն Փռանգաց և տարաւ զնոսա ի սուրբն Սոփի և ետ նոցա բազում տուրս ոսկւոյ և արծաթոյ. և նոքա երդուան նմա, զի զամենայն գաւառսն, որ յառաջ լեալ էր Հռոմոց, թափեն ի Պարսից և տան զայն թագաւորին Ալէքսին, և աշխարհն Պարսից և Ա-

խայտառակեց նրանց»[339]։ Ահա այդ տարին ոտքի ելան ողջ Իտալիան և Իսպանիան՝ մինչև Աֆրիկա և Ներքնագույն Ֆրանկիա։ Ֆրանկների բարձրաստիճան իշխանները ճամփա ընկան անթիվ ու անհաշիվ բազմությամբ և անհամար շարքերով, որպես մորեխ, որ չի կարելի թվել կամ որպես ծովի ավազ, որ չի կարելի երևակայել։ Յուրաքանչյուր [իշխանն]իր զորքերով գալիս էր քրիստոնյաներին օգնության, այլազդիների ձեռքից Երուսաղեմ սուրբ քաղաքը փրկելու, տաճիկների ձեռքից աստվածընկալ սուրբ Գերեզմանն ազատելու[340]։ Նրանք փառավոր մարդիկ էին, թագավորազուններ, հավատացյալ և աստվածապաշտ, բարեգործության անելու ոգով դաստիարակված։ Նրանց անուններն էին. Կոնդուիրե[341], մի հզոր մարդ, հռոմայեցիների կայսրերից սերող և նրա եղբայր Պաուտինը[342]։ Հենց այս Կոնդուիրեն էր, որ իր հետ ուներ Երուսաղեմն ավերող Վեսպասիանոս կայսեր թուրն ու թագը։ Ապա նաև մեծ կոմսը, որին Պեմունդ[343] էին ասում, նրա քեռորդի Տանգրին[344], Զնճիլ[345] անունով ահարկու և փառավոր կոմսը, Նորմանդացիների կոմս Ռոպերդը, ապա և մյուս Պաղտինը[346]։ Եկավ և Ճոսլին[347] անունով հզոր և քաջ կոմսը։ Ահա, այսքան հզոր և պատերազմող մարդիկ ճամփա ընկան Երկնքի աստղերի չափ անհաշիվ բազմությամբ։ Նրանց էին հետևում բազմաթիվ եպիսկոպոսներ, քահանաներ և սարկավագներ, որոնք հռոմայեցիների հեռավոր երկրից մեծ հոգնատանջությամբ ճանապարհորդելով, ահագին դժվարություններ հաղթահարելով անցան Ունդրաց երկիրը[348], վերջինիս լեռների նեղ ու դժվարանցանելի կապանների միջով և հասան Բուլղարիա, որ հույների կայսր Ալեքսի գերիշխանության տակ էր գտնվում։ Ահա, այսպես ճանապարհորդելով, նրանք հասան մեծ Կոստանդնուպոլիս։

Ալեքս կայսրը, լսելով նրանց գալստյան մասին, նրանց դեմ զորք ուղարկեց պատերազմելու։ Երկու կողմն էլ մեծ ջարդ կրեցին։ Ֆրանկները հույների զորքին փախուստի մատնեցին։ Այդ օրը շատ արյուն թափվեց։ Ո՛ր [երկրից] որ նրանք անցնում էին, տեղի ժողովուրդը նրանց դեմ պատերազմի էր դուրս գալիս և շատ էր նեղում ու տանջում նրանց։ Ալեքս կայսրը, լսելով այդ բոլորի մասին, դադարեցրեց կռիվը և նրանց դեմ այլևս չպատերազմեց։ Ամբողջ բանակը եկավ և կանգ առավ Կոստանդնուպոլսի դռան առջև ու թույլտվություն խնդրեց նավարկել Օվկիանոս ծովով։ Ալեքս կայսրը սեր և բարեկամություն հաստատեց ֆրանկների բոլոր իշխանների հետ, նրանց տարավ Սուրբ Սոֆիա [տաճարը] և բազում ոսկի ու արծաթ նվիրեց։ [Ֆրանկները] նրան երդում տվեցին, թե նախկինում հռոմներին պատկանող բոլոր գավառները պարսիկներից կազատագրեն և կտան Ալեքս կայսեր, իսկ

րապկաց եղիցին ազգին Փռանգաց. և այսպիսի դաւանութեամբս խաչով և աւետարանով կապեցին զերդումնն անլուծանելի կապանօք։ Եւ առեալ զօրս և իշխանս ի թագաւորէն՝ և նաւէին ընդ մեծն յովկիանոս և հասեալ բազութեամբ բանակաւն ի քաղաքն, որ կոչի Նիկիա, մօտ ի ծովն յովկիանէ։

Եւ ամենայն զօրքն Պարսից ժողովեցան ի վերայ զօրացն Փռանգաց, որ բանակեալ էին ի սահմանս յայն, և արարին պատերազմ ընդ զօրսն Փռանգաց. և յայնժամ զօրք Փռանգաց յաղթեցին զօրացն Պարսից և արարին զնոսա փախստականս և յարձակեցան սրով զհետ նոցա՝ և արեամբ լցին զերկիրն. և պատերազմեալ ի վերայ քաղաքին Նիկիա՝ և սրով առին զքաղաքն և կոտորեցին զամենայն անհաւատսն։ Եւ յայնժամ գնացին ճիշկան առ սուլտանն Խլիճ-Ասլան, յորժամ պատերազմէր ի վերայ քաղաքին Միլտենւոյ, և զայս ամենայն ազդ արարին նմա։ Եւ նորա արարեալ ժողովս անթիւ բազմութեամբ և գայր ի վերայ Փռանգ զօրացն ի գաւառին Նիկիա. և արարին սաստիկ պատերազմ յերկոցունց կողմանցն և յանխնայ քաջասլէս յարձակեցան ի վերայ միմեանց և գազանաբար բախէին զճակատ պատերազմացն. և ի փայլատակմանէ սաղաւարտացն և ի շաչել զրահացն և ի ճայթմանէ աղեղանցն եղեն գումարեալք ամենայն բազմութիւնք զօրացն այլազգեացըն, վասն զի ի սաստկութենէ ձայնիցն դողայր երկիրն և ի շաչել նետիցն՝ երիվարքն սարսէին. իսկ որ արիականքն և որ ընտիրքն էին, քաջքն ընդ քաջքն ելանէին՝ և որպէս զկորիւնս առիւծուց յանխնայ կոփէին զմիմեանս։ Եւ էր օրն այն օր մեծ և ահագին յառաջին պատերազմին, վասն զի վաթսուն բիւրով պատերազմէր սուլտանն ընդ ազգն Փռանգաց. և ի վերայ այսքան պատերազմաց յաղթեաց զօրքն Փռանգաց զօրացն Պարսից և արարին զնոսա փախստականս ահագին և սաստիկ կոտորածով, որ և ծածկեալ եղև դաշտն դիակամբք մեռելօք, և առին բիւրս բիւրուց աւար և գերութիւն. և թիւ ոչ գոյր ոսկւոյ և արծաթոյ, զոր առին ի Պարսից։ Եւ զկնի երից աւուրց դարձեալ սուլտանն արար երկրորդ ժողով և ահագին բազմութեամբ գայր ի վերայ Փռանգ զօրացն. և արարին պատերազմ ահաւոր և սաստիկ քան զառաջինն. և զօրքն Փռանգաց զնոյն բարկութիւն արկանէին ի վերայ զօրացն Պարսից, և սաստիկ կոտորածով և գերութեամբ եհան զնոսա յայնմ աշխարհէն. և ետուն զօրքն Փռանգաց զՆիկիա ի ձեռս Հռոմոց թագաւոր Ալէքսին։

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՇԽԶ և ի յաւուրս հայրապետացն Հայոց Տէր Վահրամայ և Տէր Բարսղի, և ի թագաւորութեանն Յունաց Ալէքսին Հռոմոց արքային, շարժեալ եղև բանակն Հռոմայեցւոց

պարսից և արաբներին [պատկանող] երկիրը կդառնա ֆրանկների սեփականություն։ Այս պայմանը հարգելու մասին երդումը ամրապնդեցին խաչի և ավետարանի անքակտելի կապանքներով։ Կայսրից զինվորներ և հրամանատարներ ստանալով, նրանք մեծաթիվ բանակով նավարկեցին մեծ Օվկիանոսով և հասան Օվկիանոս ծովի ափին գտնվող Նիկիա քաղաքը։

Պարսից բոլոր զորքերը հավաքվեցին այդ շրջաններում բանակած ֆրանկների զորքերի դեմ և մարտ տվեցին։ Ֆրանկների զորքերը հաղթեցին պարսիկների զորքերին, փախուստի մատնեցին և, սրբերով հետապնդելով նրանց, երկիրն արյամբ ողողեցին. ապա մարտ տալով, գյուղով առան Նիկիա քաղաքը և բոլոր անհավատներին կոտորեցին։ Դուքժն հասցրին Մելիտենե քաղաքի դեմ պատերազմող սուլթան Խլիճ Ասլանին և տեղեկացրին կատարվածի մասին։ Նա զինվորների ահագին բազմությամբ շարժվեց եկավ Նիկիա գավառը, ֆրանկ զորքերի դեմ։ Երկու կողմերն էլ կատաղի մարտ տվեցին, արիաբար միմյանց վրա հարձակվեցին և անխնա, գազանաբար բախվեցին ճակատ առ ճակատ։ Սաղավարտների փայլատակումը, զրահների շաչյունը, աղեղների ճայթումը ստիպեցին այլազգիների բազմաքանակ զորքերին սեղմելու իրենց շարքերը. սաստիկ ժխորից դողում էր գետինը։ Նետերի շաչյունը սարսափեցրել էր ձիերին։ Քաջարիներն ու լավագույնները մարտի դուրս եկան՝ քաջը քաջի դեմ և, ինչպես առյուծի կորյուններ, անխնա հարվածում էին միմյանց։ Այդ օրը, առաջին պատերազմի օրը, շատ ծանր էր և սարսափելի. սուլթանը ֆրանկների դեմ էր կռվում վեց հարյուր հազար հոգով։ Այս ճակատամարտում ֆրանկների զորքերը հաղթեցին պարսից զորքերին, փախուստի մատնեցին նրանց՝ մեծ ու սոսկալի ջարդ տալով։ Դաշտը դիակներով ծածկվեց։ [Ֆրանկները] հսկայական ավար վերցրին և անթիվ գերիներ։ Պարսիկներից վերցրած ոսկուն և արծաթին թիվ չկար։ Երեք օր անց սուլթանը, կրկին անգամ իր զորքերը հավաքելով, ահագին բազմությամբ հարձակվեց ֆրանկ զորքերի վրա։ Նախորդից ավելի ահավոր և կատաղի մարտ տեղի ունեցավ։ Ֆրանկ զորքերը նույնպիսի կատաղությամբ բախվեցին պարսից զորքերին, մեծ ջարդ տվեցին նրանց, մեծաթիվ գերիներ վերցրեցին և [պարսիկներին] այդ գավառից դուրս շպրտեցին։ Ֆրանկների զինվորները Նիկիան տվեցին Հռոմների կայսր Ալեքսին։

Հայոց 546 թվականին [25 փետրվար 1097—24 փետրվար 1098 թ.], հայոց կաթողիկոսներ տեր Վահրամի և տեր Բարսեղի օրոք, հույների արքա Ալեքսի թագավորության ժամանակ, ճանապարհ ընկավ Հռոմա-

և անհամար բազմութեամբ իբրև զբիւրս յիսուն։ Զայս թղթով ազդ առաբեալ իշխանին Ուռհայոյ Թորոսի և մեծ իշխանին Հայոց Կոստանդին որդին Ռուբենայ, որ ունէր զՏօրոս լեառն ի յաշխարհին Կոպիտառայի ի Մարապա, որ և բաղում գաւառաց տիրեալ էր, և ի զօրացն Գագկայ էր։ Եւ զօրքն Փռանդայ մեծութեամբ բազմութեամբ ճանապարհ արարեալ ընդ աշխարհն Բիւթանացւոց և ընդարձակ բանակաւ անցանէր ընդ սահմանս Գամրաց՝ և հասանէին ի դժուար վայրս լերանց Տօրոսի. և խաղացեալ էանց բազմութիւն բանակին և ընդ նեղ կապանս նորա դնալով ընդ Կիլիկիա. և էանց ընդ Տրովադա, որ է Անաւարզա, և հասանէր ի քաղաքն Անտիոք։ Եւ ահագին զօրութեամբ բանակեալ ի վերայ նորա՝ և լցեալ ղլայնատարած դաշտն նորա և արգելեաց ի քաղաքն ղզօրապետն Պարսից հանդերձ զօրօքն իւրովք՝ զԱղուսիանն և սաստիկ պատերազմաւ պաշարեաց զքաղաքն զամիսս տասն։ Եւ լուեալ զայս ամենայն շրջակայ աշխարհն Պարսից՝ և մեծաւ հանդիսիւք պային պատերազմաւ ի վերայ Փռանդ զօրացն. իսկ նոքա ամօթով դարձուցանէին զամենայն թշնամիսն իւրեանց։ Եւ յայսմ աւուրքս եղև ժողովն այլազգեացն. Դմիշղ և ամենայն Աւիրիկեցիքն հանդերձ ամենայն ծովեզերօքն յերուսաղէմ և յամենայն սահմանակիցք Մսրայ, Հալպ և Հէմս, մինչև ի մեծ գետն Եփրատ՝ և խաղային անթիւ և անհամար բազմութեամբ ի վերայ զօրացն Փռանգին։ Եւ յորժամ լուան զդալն այլազգեացն վառեցին զղօրս իւրեանց և ելան ընդդէմ նոցա։ Եւ Պեմունդն էր այր քաջ և պատերազմող, և Զնճիլն. և իբրև դառիւծ յարձակեցան տասն հազարով ի վերայ տասն բիւրուց ի սահմանս Անտիոքայ և ահագին յաղթութեամբ դարձուցին ի փախուստ և արարին սաստիկ կոտորած զզօրսն Պարսից։

Դարձեալ ամիրայն Սուրման որդին Արդուխին, այր քաջ և պատերազմող, և տէրն Դմշկայ, որք էին ամիրայք մեծամեծք և փառաւորք, արարին ժողովս Թուրք զօրացն Մուսլ և ամենայն աշխարհն Բաբելացւոցն իբրև բիւրս երիս՝ և գային ի վերայ Փռանդ բանակին։ Յայնժամ մեծ տուին կոնդուփրէ եւթն հազարով գնացին ընդդէմ այլազգեացն ի սահմանս Հալպայ և արարին սաստիկ պատերազմ։ Իսկ ամիրայն Դմշկայ, որ ասի Տուղտիկին, ի դիմի հարաւ կոնդուփրէի առն քաջի և թռոյց զնա ի ձիոյն, բայց զղեհատն երկաթեղէն ոչ կարաց պատառել, և գնաց անվնաս։ Եւ յայնժամ զզօրսն այլազգեացն դարձուցին ի փախուստ և զհետ մտեալ զօրացն Փռանդայ և սուր ի գործ արկեալ՝ արարին զայլազգիսն փախստականս և դարձան մեծաւ յաղթութեամբ ի բանակն իւրեանց։ Իսկ ի բազմութենէ զօրացն վտանգ հասանէր զօրացն

յեցիների հսկայական բանակը, շուրջ հինգ հարյուր հազար հոգի։ [Կայսրը] այդ մասին նամակով հայտնեց ուռհայեցիների իշխան Թորոսին, հայոց մեծ իշխան Կոստանդնին՝ Ռուբենի որդուն, որ տիրում էր Տավրոս լեռան [շրջաններին] և Կոպիտառի գավառին՝ Մարապայում։ Նա Գագիկի զինվորներից էր և իր իշխանությունը տարածել էր բազմաթիվ գավառների վրա։ Ֆրանկների հսկայական զորքը հոծ զանգվածով ճանապարհ ընկավ և բյութանացվոց երկրով անցավ Գամիրք ու հասավ Տավրոսի դժվարանցանելի շրջանները։ Հսկայական բանակը, առաջ շարժվելով, [Տավրոսի] նեղ կապաններով անցավ Կիլիկիա և Տրովադայի, այն է՝ Անավարզայի վրայով հասավ Անտիոք քաղաքը։ Այս հսկայական ուժը ճամբարեց քաղաքին մոտիկ, ողողեց նրա լայնատարած դաշտը և Աղսիանին՝ քաղաքի պարսից զորահրամանատարին, իր զորքով հանդիրձ, ստիպեց փակվել քաղաքում. կատաղի պատերազմ տալով, քաղաքը տաս ամիս պաշարման մեջ պահեց։ Պարսկական հարևան տիրապետությունները, լսելով այդ մասին, մեծ պատրաստությամբ ֆրանկ զորքերի դեմ պատերազմի ելան, բայց վերջիններս ստիպեցին իրենց բոլոր թշնամիներին խայտառակ կերպով վերադառնալ։ Այդ օրերին Դամասկոսում և բոլոր աֆրիկացիների մեջ՝ ծովեզրյա բոլոր շրջաններում, Երուսաղեմում, Եգիպտոսին սահմանակից բոլոր վայրերում, Հալեպում և Հեմսում, մինչև Եփրատ գետը տեղի ունեցավ այլազգիների զորահավաք։ Անթիվ-անհամար բազմությամբ նրանք շարժվեցին ֆրանկ զորքերի վրա, որոնք, լսելով այլազգիների գալստյան մասին, սպառազինվելով, դուրս եկան նրանց դեմ։ [Ֆրանկների հրամանատարներն էին] Պեմունդը, որ քաջ ու պատերազմող մարդ էր, և Ջնճիլը, նրանք տաս հազար հոգով առյուծի պես հարձակվեցին հարյուր հազարանոց պարսից զորքերի վրա և մեծ ջարդ տվեցին նրանց։

Ամիրա Սուքմանը՝ Արդուխի որդին, մի քաջ և պատերազմող մարդ, և Դամասկոսի տերը, որոնք մեծամեծ և փառավոր ամիրաներ էին, Մոսուլում ու բաբելացվոց ողջ երկրում թուրքերի զորահավաք արեցին, շուրջ երեսուն հազար հոգի, և ճանապարհ ընկան ֆրանկների ճամբարի վրա։ Մեծ դուքս Կոնդոփրեն յոթ հազար հոգով այլազգիների դեմ գնաց՝ Հալեպի սահմաններում, որտեղ տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ։ Դամասկոսի ամիրան, որ Տուղտիկին[849] է կոչվում, խփեց քաջ Կոնդոփրեին, ձիու վրայից գետին գլորեց, բայց չկարողացավ ճեղքել նրա երկաթե զրահը և առանց նրան վնաս հասցնելու հեռացավ։ Այն ժամանակ ֆրանկների զորքերը այլազգիների զորքերին սրով փախուստի մատնեցին, հալածական արեցին և մեծ հաղթանակով վերադարձան իրենց ճամբարը։ Բայց, մեծաթիվ զորքի պատճառով, բանա-

ի հացէ և նեղէին ի կերակրոց, և յայնժամ իշխանքն, որ կային բնակեալ ի Տօրոս լեառն, Կոստանդին որդին Ռուբինայ, և երկրորդ իշխանն Բազունի, և երրորդ իշխանն Օշինն, սոքա զամենայն կարիս կերակրոյ առաքէին առ զօրապետն Փռանգաց. նոյնպէս և վանորայքն Սև լերինն կերակրօք օգնէին նոցա, և ամենայն ազգք հաւատացելոցն բարեկամութիւն ցուցանէին առ նոսա: Եւ յայնժամ առ ի չգոյէ կերակրոյ՝ մահ և ցաւ անկաւ ի բանակն Փռանգաց, որ ի հինգ մասէն մի մասն պակասեալ լինէր և այլն ամենայն կային մեծաւ պանդխտութեամբ. բայց ողորմութիւնն Աստուծոյ ոչ ի բացեայ թողոյր զնոսա, այլ հովուէր հայրախնամ սիրով որպէս զբանակն որդւոցն Իսրայէլի յանապատին:

Յայսմ ամի ելանէր աստղ մի գիսաւոր յարևմուտս կոյս ի յարեգի ամիս, և ապին նորա նուաղ ցուցանէր զլոյսն իւր. և կացեալ նորա զաւուրս տասն և հինգ՝ և լինէր աներևոյթ տեսողացն:

Յայսմ ամի լինէր նշան ահաւոր և զարմանալի յերկինս ի կողմն հիւսիսոյ, որ ոչ ոք ետես այնպիսի սքանչելի նշան. ի յամսեանն մարերի բորբոքեցաւ երիսք երկնից ի բոց հրոյ և կարմրացաւ սաստկապէս ի պարզոյ և բլուր բլուր կապեցաւ երկինքն և բորբոքեալ լինէր ի գոյնս. և սահեալ ելանէր դիմօք յարևելս և դիզացեալ եղև մասն մասն և ծածկեաց զմեծ մասն երկնից, և գունովն յոյժ կարմիր և զարմանալի, և հասանէր ի կամարն երկնից: Եւ ծանուցեալ զայս իմաստնոց և հանճարեղացն՝ և ասէին, թէ այս նշան է արեան հեղութեան. որ և եղև այնպիսի չար կոտորածք և արհաւիրք, զոր զսակաւս գրեցաք յայս մատենագրութիւնս:

Եւ եղև այս ինչ ի թուականութեանս Հայոց Շնէ եկեալ կոմս մի անուն Պաղտին և հարիւր ձիաւորով էառ զքաղաքն, որ կոչի Թլպաշար: Եւ լուեալ զայս իշխանն Հոռոմոց Թորոս, որ էր ի քաղաքն Ուռհա, և լցեալ եղև մեծաւ ուրախութեամբ և առաքեաց առ կոմսն Փռանգաց ի Թլպաշար և կոչէր զնա առ ինքն յօգնութիւն իւր ընդդէմ թշնամանաց իւրոց՝ վասն նեղութեանցն, որ ունէր ի մօտաւոր ամիրայացն: Եւ եկեալ կոմսն Պաղտին ի յՈւռհա վաթսուն ձիաւորով, և ելին բազմութիւն քաղաքին ընդդէմ նորա և մեծաւ ուրախութեամբ արկանէին զնա ի քաղաքն, և եղև ուրախութիւն ամենայն հաւատացելոց. և արար կուրապաղատն Թորոս բազում սէր և տուրս կոմսին և հաստատեաց միաբանութիւն ընդ նմա: Եւ եկեալ իշխանն Հայոց ի Կաղկուայ, որ ասի Կոստանդին, և զկնի սակաւ աւուրց հանէ զնոսա կուրապաղատն ի պատերազմ ի վերայ Սամուսատայ ի վերայ Պալտուխ ամիրային, և զօրք քաղաքին զհետ Փռանգին և ամենայն զօրք գաւառին հետևակք. և զնա-

կը հացի և պարենի պակասություն էր զգում։ Տավրոս լեռան շրջանում բնակվող իշխանները, այն է Կոստանդինը՝ Ռուբենի որդին, երկրորդ իշխանը՝ Բազունին, երրորդ իշխանը՝ Օշինը, ֆրանկների զորահրամանատարին ամեն տեսակ պարեն ուղարկեցին։ Սև լեռան վանքերը ևս պարենով նրանց օգնության հասան, բոլոր հավատացյալ մարդիկ նրանց հանդեպ սիրալիր վերաբերմունք ցուցաբերեցին։ Պարենի պակասությունից ֆրանկների ճամբարում մահ և հիվանդություններ էին տարածվել, նրանց մեկ հինգերորդ մասը պակասել էր, մնացածներն էլ պանդուխտի ծանր վիճակում էին։ Բայց աստծո ողորմածությունը նրանց անօգնական չթողեց, այլ հովանավորեց նրանց հայրախնամ սիրով, ինչպես անապատում [հովանավորել էր] Իսրայելի որդիների բանակը։

Այդ տարվա արեգ ամսին արևմուտքում մի գիսավոր աստղ ելավ, նրա պոչը քիչ էր լուսավոր. մնալով տասնհինգ օր, նա աներևութացավ։

Այդ տարին երկնքի հյուսիսային կողմում ահավոր և զարմանալի նշան երևաց։ Նման զարմանալի նշան մինչ այդ ոչ ոք չէր տեսել. մարերի ամսին երկինքն ամբողջությամբ հրեղեն բոցի նման բորբոքվեց և պարզ ժամանակ սաստիկ կարմրեց։ Կարմրությունը տարածվում էր դեպի արևելք և աստիճանաբար ծածկեց երկնքի մեծ մասը։ Մուգ կարմիր, զարմանալի գույնը հասավ երկնակամարին։ Այդ երևույթի նշանակության մասին հարցրին իմաստուն և գիտակ մարդկանց, որոնք պատասխանեցին, թե դա արյունահեղության նշան է։ Եվ, [իսկապես], տեղի ունեցան կոտորածներ ու սարսափներ, որոնց մի փոքր մասը միայն այս գրքում շարադրեցինք։

Հայոց 547 թվականին [25 փետրվար 1098—24 փետրվար 1099 թ.] Պաղտին անունով մի կոմս հարյուր հեծյալներով եկավ և գրավեց Թլպաշար[330] կոչվող քաղաքը։ Հոռոմոց իշխան Թորոսը, որ Ուռհա քաղաքում էր գտնվում, լսելով այդ մասին, շատ ուրախացավ և, [մարդ] ուղարկելով Թլպաշար՝ ֆրանկների կոմսի մոտ, կոչ արեց նրան՝ օգնել իրեն իր թշնամիների դեմ, որպեսզի [աղատվի] շրջակայքում գտնվող ամիրաների պատճառած նեղություններից։ Պաղտին կոմսը վաթսուն հեծյալներով եկավ Ուռհա։ Քաղաքի բնակչությունը դուրս եկավ նրան ընդառաջ և մեծ ուրախությամբ նրան քաղաք բերեց. բոլոր հավատացյալները լցվեցին ուրախությամբ։ Թորոս կուրապաղատը կոմսի հետ մեծ բարեկամություն հաստատեց, բազում նվերներ տվեց և նրա հետ դաշինք կնքեց։ Երբ հայոց իշխան Կոստանդինն եկավ Կառկառ, մի քանի օր անց կուրապաղատը նրանց պատերազմի հանեց՝ Սամոսատի Պալտուխ ամիրայի դեմ։ Ֆրանկի ետևից գնացին և քաղաքի զինվորները, ինչպես և գավառի բոլոր հետևակ զորքերը։ Հսկայական զորքով

ցին ի Սամուսատ բազում զօրօք և արարին ալափ զդրուց շէնն, և Թուրքն ոչ համարձակեցաւ ելանել ի պատերազմ: Յայնժամ միաբան յալափ մտեալ ամենայն զօրք քրիստոնէիցն. և տեսեալ զօրացն Թուրքաց՝ ելեալ երեք հարիւր ձիաւոր ի վերայ նոցա և յաղթեցին ամենայն զօրացն և արարին զՓռանգն փախստական և զամենայն գաւառացիքն. և ի Սամուսատայ մինչև ի Թիլն եղև սաստիկ կոտորած իբրև արս հազար: Եւ Կոստանդին և կոմսն Հասան ի քաղաքն յՈւռհա առ Թորոս կուրապաղատն, և այս եղև յերկրորդ շաբաթին աղուհացիցն: Իսկ յորժամ եկն կոմս Պաղտինն ի յՈւռհա, յայնժամ յարեան արք ննդաւորք և չարախորհուրդք և արարին միաբանութիւն ընդ կոմսն, վասն զի սպանցեն զԹորոս կուրապաղատն՝ զորս ոչ վայել էր գործոց երախտեաց նորա, վասն զի ի ձեռն հանճարիլ իմաստութեան նորա և արուեստաւոր հնարաւորութեան և բուռն զօրութեան եղև ազատեալ Ուռհա ի հարկատրութենէ և ի ծառայութենէ չար և դառնացեալ ազգին Տաճկաց:

Իսկ յայսմ աւուրքս արք քառասունք եղեն միաբանեալք ի խորհուրդն Յուդայի և ի զիշերի գնացին առ կոմսն Պաղտինն, այն՝ որ էր եղբայր Կոնդոփրէի կոմսին, և միաբանեցին զնա ի չար խորհուրդս իւրեանց և խոստացան տալ զՈւռհա ի ձեռս նորա, և նա հաւանեցաւ չար խորհրդոյ նոցա. միաբանեցուցին զիշխանն Հայոց զԿոստանդին և ի հինգերորդումն շաբաթու աղուհացիցն շարժեցին զամենայն բազմութիւն քաղաքին ի վերայ կուրապաղատին Թորոսի. և յաւուր կիւրակէի արարին ալափ զամենայն տունն իշխանաց նորա և առին զվերին կլայն. և յաւուր երկուշաբաթին արարին ժողով ի ներքին կլային վերայ, ուր ինքն էր, և սաստկապէս պատերազմէին ի վերայ նորա. և նորա անճարեալ ինդրեաց երդումն ի նոցանէ, զի մի՛ մեղիցեն նմա, և նա տացէ զկլայն և զքաղաքն ի նոսա, և ինքն և կինն իւր գնասցեն ի քաղաքն Մելտենի: Եւ հանեալ առ նոսա զվարագայ սուրբ Նշանն և զմաքենեացն՝ և նոքօք երդուաւ կոմսն ի մէջ սրբոյ եկեղեցւոյն Առաքելոցն՝ ոչ մեղանչել նմա. երդուաւ և ի հրեշտակն և ի հրեշտակապետսն և ի մարգարէսն և ի նահապետսն և ի սուրբ առաքեալսն և ի սուրբ հայրապետսըն և ի դասս ամենայն մարտիրոսաց, զոր թղթով գրեալ էր Թորոսի առ կոմսն. և նորա երդուեալ այս ամենայն սրբովքս: Յայնժամ Թորոս տայր զկլայն ի ձեռս նորա՝ և Պաղտին և այլ իշխանք քաղաքին մտան ի կլայն. և յաւուր երեքշաբաթուն ի տօնի սուրբ Քառասնիցն արարին քաղաքացիքն սաստիկ ժողով ի վերայ նորա և սրօք և բրօք կանխեալ ընկեցին զնա ի պարսպէն ի մէջ բազմամբոխ խուխային և առհասարակ դիմեալ միաբան ի վերայ նորա և չարաչար մահուամբ և բազմախոց սուսերօք սպանանէին զնա. և արարին մեղս մեծամեծս առաջի Աստու-

նրանք գնացին Սամոսատ և ալարի առան պարիսպներից դուրս գտնըվող բնակատեղիները։ Թուրքերը չհամարձակվեցին պատերազմի բռնըվել։ Դրա վրա քրիստոնյա զինվորները բոլորը միասին դիմեցին ավարառությանն։ Թուրք զինվորները, տեսնելով դա, երեք հարյուր հեծյալներով հարձակվեցին նրանց վրա, բոլոր զինվորներին հաղթեցին, ֆըրաննկներին և բոլոր գավառացիներին փախուստի մատնեցին։ Սամոսատից մինչև Թիլ[351] ընկած տարածության վրա մեծ ջարդ եղավ, [կոտորվեց] շուրջ հազար հոգի։ Կոստանդինն ու կոմսը հասան Ուռհա, Թորոս կուրապաղատի մոտ։ Դա տեղի ունեցավ մեծ պահքի երկրորդ շաբաթը։ Երբ կոմս Պաղտինը եկավ Ուռհա, նենգ և չարագործ մարդիկ նրա հետ համաձայնության եկան Թորոս կուրապաղատին սպանելու շուրջը։ Այդ բանին արժանի չէր [Թորոսը], դա ապերախտություն էր, քանզի նրա ճարտարամիտ իմաստությամբ, մեծ հնարագիտությամբ ու անչափ կարողությամբ էր, որ Ուռհան ազատվեց չար ու դաժան տաճիկների հարկատվությունից և ծառայությունից։

Ահա, այդ օրերին, քառասուն հոգի Հուդայի վճիռը կայացրին և դիշերով գնացին կոմս Պաղտինի՝ կոմս Կոնդոփրեի եղբոր մոտ և, Ուռհան խոստանալով, նրան մասնակից դարձրին իրենց նենգ ծրագրին։ Նա հավանություն տվեց նրանց ստոր ծրագրին։ Նրանք ընդգրկեցին նաև հայոց իշխան Կոստանդնին և մեծ պահքի հինգերորդ շաբաթը քաղաքի ողջ բազմությունը ոտքի հանեցին Թորոս կուրապաղատի դեմ։ Կիրակի օրը թալանեցին նրա իշխանավորների բոլոր տները և գրավեցին վերին բերդը։ Երկուշաբթի օրը նրանք հարձակվեցին ներքին բերդի վրա, ուր գտնվում էր ինքը [Թորոսը], և կատաղի կռիվ մղեցին նրա դեմ։ [Թորոսը] ճարահատյալ նրանցից երդում խնդրեց, թե իր անձին ձեռք չեն տա, խոստանալով հանձնել բերդն ու քաղաքը և կնոջ հետ թողնել հեռանալ Մելիտենե քաղաքը։ Նա նրանց առաջ դրեց Վարագա և Մաքենացոց սուրբ խաչերը, որոնց վրա կոմսը Առաքելոց սուրբ եկեղեցում երդվեց, թե նրան ձեռք չի տա։ Նա երդվեց նաև հանուն հրեշտակների, հրեշտակապետների, մարգարեների, նահապետների, սուրբ առաքյալների, սուրբ հայրապետների, բոլոր մարտիրոսների. Թորոսը երդման բովանդակությունը գրավոր էր ներկայացրել կոմսին. վերջինս ահա երդվեց այդ բոլոր սրբերի անվամբ։ Դրա վրա Թորոսը բերդը հանձնեց Պաղտինին։ Կոմսն ու քաղաքի մյուս իշխանները մտան բերդ։ Երեքշաբթի օրը, սուրբ Քառասնից տոնին, քաղաքացիները խուժեցին [Թորոսի] վրա և սրերով ու մահակներով պարսպից ցած գլորեցին մեծաթիվ ամբոխի մեջ։ Բոլորը միասին հարձակվելով նրա վրա, սրախողխող ու տանջամահ արեցին, ապա, ոտքերը պարանով կապելով,

ծոյ՝ և պարան կապեցին յոտս նոքա և քաշտառականօք քարշէին զնա ընդ քաղաքամէջսն. և յայսմ աւուր ուրացան զերդումն, զոր եդին. և չետ այսորիկ տան զՈւտհա ի ձեռս Պաղտին կոմսին։

Յայսմ ամի գայ բազում զօրօք ասպասալարն Պարկիարուխին՝ Պարսից սուլտանին, որ ասի Կուրապաղատ, գայր խաղայր ահագին բազմութեամբ յարուցանել պատերազմ ընդ զօրսն Փռանգաց և եկեալ բանակեցաւ ի դուռն Ուռհայոյ. և կացեալ բազում զօրօք մինչև յաւուրս հնձոցն և կերեալ զամենայն արտորայսն՝ և յարուցանէր պատերազմ ի վերայ քաղաքին, և եղև ժողով բազմութեան զօրաց առ նա։ Եւ զկնի քառասուն աւուր գայր առ Կուրապաղատն որդին Աղուսիանին Անտիոքայ ամիրային և անկեալ յոտքն Կուրապաղատին և աղաչէր գալ օգնել նոցա. և պատմեաց նմա վասն Փռանգ բանակին, եթէ սակաւ է և սովաբեկ։

Եւ ահա յայսմ ամի շարժեալ եղև ամենայն խորասան յարևելից մինչև ի մուտս արևու ի Մարայ մինչև ի Բաբելոն, և Յունաց և յարևելից կողմ աշխարհին, Դմիշկ և ամենայն ծովեզերեայք և յերուսաղէմայ մինչև յանապատն ժողովեցան բիւրք ութսուն, և հետևակ բիւրք երեսուն. գնայր խաղայր խրոխտալով և լցեալ զդաշտս և զբարձունս՝ և ահաւոր հպարտութեամբ հասանէր ի վերայ Փռանգ զօրացն ի դուռն Անտիոքայ։ Եւ Աստուած ոչ կամեցաւ կորուսանել զսակաւ զօրսն քրիստոնէից, այլ հովուեալ պահէր զնոսա որպէս զբանակս որդւոցն Իսրայէլի։ Արդ մինչդեռ ի բացեայ էին զօրք այլազգեացն, մի ոմն յիշխանաց քաղաքին հանեալ ի դիշերի մարդ առ Պեմունդն և առ այլ իշխանսն Փռանգացն՝ և խնդրեաց իւր հայրենիք. և առեալ ի նոցանէ երդումն՝ և գաղտաբար ի գիշերի տայր զԱնտիոք քաղաքն ի ձեռս Պեմբնդին. և բացեալ ի պարիսպն ղկլայէած դուռն, և ամենայն բանակն Փռանգաց մտին ի քաղաքն Անտիոք. և ընդ առաւօտն միաբան հնչեցուցին զփող եղջերացն ամենայն զօրքն։ Եւ լուեալ զայս այլազգիքն ամենայն՝ եղեն դումարեալք և ոչ գիտէին փախչիլ ի յահէն. և սուր ի գործ արկեալ զօրքն Փռանգաց՝ արարին սաստիկ կոտորած զնոսա. և ամիրայն Աղուսիանն փախեաւ ի քաղաքէն և սպանաւ ի գեղացեացն՝ մանգաղաւ հատեալ զղլուխ նորա։ Եւ արդ այսպիսի օրինակաւ առաւ քաղաքն Անտիոք, զորս ի Հայոց ազգէն առեալ եղև։ Իսկ մնացեալ այլազգիքն ժողովեալ եղեն ի կլայն և տային պատերազմ ընդ զօրսն Փռանգաց։ Եւ զկնի երեք աւուրց հասանէր բանակն Պարսից զօրացն և ելից զբանակն Փռանգին եւթնապատիկ, և արարեալ սաստիկ խռսար ի վերայ Փռանգին՝ և նեղէին զնոսա. և բազում վտանգ հասանէր նոցա ի սովոյ, վասն զի յառաջադոյն հացն հատեալ էր ի քաղաքէն. և ան-

[դիակն] անարգաբար քաղաքում քարշ տվեցին։ Նրանք այդ օրը ուրա-
ցան իրենց տված հրդումը և աստծո նկատմամբ սարսափելի մեղք
գործեցին։ Այդ բոլորից հետո Ուռհա քաղաքը տվեցին կոմս Պաղտի-
նին[352]։

Այդ տարին սուլթան Պարկիարուխի սպասալարը, որ Կերպողա[353] է
կոչվում, հսկայական զորքով եկավ բանակեց Ուռհայի դարպասի տակ,
ֆրանկ զորքերին պատերազմ տալու մտադրությամբ։ Նա հսկայական
զորքով մնաց մինչև հնձի ժամանակ և բոլոր արտերը մաքրեց թողեց։
Հսկայական զորքով նա քաղաքի դեմ պատերազմ էր մղում։ Քառասուն
օր անց Կերպողայի մոտ եկավ Աղսիանի՝ Անտիոքի ամիրայի որդին
և, ընկնելով Կերպողայի ոտքերը, աղաչում էր իրենց օգնության հաս-
նել. նա պատմեց ֆրանկ բանակի մասին, թե նա փոքրաթիվ է և սո-
վահար։

Այդ տարին համայն Խորասանը՝ արևելքից մինչև արևմուտք՝ Եգիպ-
տոս[354], մինչև Բաբելոն, հույների երկիրը, արևելքը, Դամասկոսը և ողջ
ծովեզրյա շրջանները, Երուսաղեմից մինչև անապատը, ութ հարյուր
հազար հոգի և երեք հարյուր հազար հետևակ, հոխորտալով շարժվեց
առաջ և ողողեց դաշտերն ու բարձունքները։ Անչափ պարծենկոտու-
թյամբ նա եկավ հասավ Անտիոքի դռները, ֆրանկ զորքերի դեմ։ Բայց
աստված չուզեց կորստյան մատնել քրիստոնյաների փոքրաթիվ զորքը
և հոգատարությամբ այն պահպանում էր, ինչպես Իսրայելի որդիների
բանակը։ Երբ դեռ այլազգիների զորքերը հեռու էին գտնվում, քաղաքի
իշխանավորներից մեկը գիշերով մարդ ուղարկեց Պեմունդի և ֆրանկ-
ների այլ իշխանների մոտ և նրանց իր գավառը հրավիրեց։ Նրանցից
երդում ստանալով, նա ծածուկ, գիշերով Պեմունդին հանձնեց Անտիոք
քաղաքը։ Բացելով պարսպի անագապատ դուռը, նա ֆրանկների ողջ
բանակը մտցրեց Անտիոք քաղաքը։ Առավոտյան բոլոր զինվորները
միասին հնչեցրին եղջերափողերը։ Այլազգիները, լսելով այդ, մի տեղ
հավաքվեցին. նրանք սարսափահար չգիտեին ինչպես փախչել։ Ֆրանկ
զինվորները, սրերը գործի դնելով, նրանց մեծ ջարդ տվեցին։ Աղսիան
ամիրան քաղաքից փախավ, բայց սպանվեց գյուղացիների ձեռքով.
նրանք մանգաղով կտրեցին գլուխը։ Ահա այսպես գրավվեց Անտիոք
քաղաքը, և գրավվեց այն հայերի ձեռքից։ Մնացած այլազգիները հա-
վաքվեցին բերդում և մարտնչում էին ֆրանկ զորքերի դեմ։ Երեք օր
անց տեղ հասավ պարսից զորաբանակը, որ քանակապես յոթ անգամ
գերազանցում էր ֆրանկ զորքին. ուժեղ պաշարելով ֆրանկներին, նեղ
վիճակի մեջ գցեց նրանց։ Ֆրանկներն սկսեցին տառապել սովից, որով-
հետև քաղաքում հացն արդեն վերջացել էր։ Մայրաստիճան ճարահա-

ճարեցան առաւել քան զառաւել և խորհեցան առնուլ երդումն ի Կուրապաղատէն և տալ զքաղաքն ի ձեռս նորա՝ և ինքեանք գնասցեն ի յաշխարհն Փռանգաց։ Եւ տեսեալ Աստուծոյ զմեծ վտանգն, որ կայր առ նոսա, զթացաւ ի նոսա և ողորմեցաւ նոցա. և երևեցաւ ի գիշերի տեսիլ մեծ առ նոսա. և ահա երևեցաւ ի գիշերի սուրբ առաքեալն Պետրոս Փռանգի միոջ աստուածապաշտի և ասէր, եթէ «Ի ձախակողմ եկեղեցւոյդ կայ ի պահեստի ղէնն, որով Քրիստոս ի հրէիցն էառ զխոցումն ի յանարատ ի կողն իւր՝ ի յանուաստուած ազգէն Հրէիցն, ահա կայ առաջի խորանին. հանէք զնա, և նովաւ ելէք ի պատերազմ, և նովաւ յաղթէք թշնամեացն ձերոց, որպէս և Քրիստոս սատանայի»։ Եւ այսպիսի օրինակաւ երկրորդ և երրորդ երևեալ նշանն, և պատմեցին Կոնդոփրէին և Պեմնդին և ամենայն իշխանացն. և սկիզբն արարին աղօթից և ի նշանացեալ տեղին բացեալ՝ և գտանէին զղէնն Քրիստոսի յեկեղեցին, որ կոչի սուրբ Պետրոս։

Եւ յայսմ ժամուս գայր պատգամաւոր ի բանակէն այլազգեաց և խնդրէին պատերազմ, և զօրքն Փռանգաց կային ի մեծ ուրախութեան։ Յայնժամ պատուիրեաց Պեմունդն և այլ իշխանքն ի Կուրապաղայ և ասեն, եթէ՝ Ահա առ վաղիւն ելցուք ի պատերազմ ընդ ձեզ։ Եւ էր զօրք Փռանգացն սակաւացեալ. և կազմեաց Պեմունդն զճակատ պատերազմին իւրեանց հնգետասան հազար և հետևակ զօրս հնգետասան բիւրս և ասքօք ելեալ ի պատերազմ՝ ունելով զղէնն Քրիստոսի առաջի իւրեանց, և բարձեալ տանէին զնա։ Իսկ զօրք այլազգեացն առհասարակ լցին զլայնատարած դաշտն հնգետասան կարգով մի առ միով։ Եւ եկեալ Զնճիլն և կանգնեաց զղէնն Քրիստոսի ընդդէմ նշանակացն Կուրապաղատին. և Կուրապաղատն կայր ընդդէմ նոցա՝ դիզացեալ որպէս զլեառն անհամար զօրօք. և զձախոյ թևն առեալ առիւծադէմն Տանգրի, և զաջոյ թևն առեալ ունէր Որմնդաց կոմսն Ռոպերթն, և Կոնդոփրէ և Պեմունդն կային ընդդէմ անհամար զօրացն Թուրքաց բանակին։ Եւ յայնժամ զԱստուած օգնական կարդային անձանց իւրեանց և միաբան որպէս զՀուր, որ ցոլանայ յերկնից և այրէ զլերինս, այսպիսի օրինակաւ զօրքն քրիստոնէականացն հեղան ի վերայ այլազգեացն և առհասարակ զամենայն բանակն ի փախուստ դարձուցին. և մեծաւ սրամբտութեամբ և սաստիկ կոտորածով վարեցան զհետ այլազգեացն զմեծ մասն աւուրն, և արբեցան սուրք նոցա յարենէ այլազգեացն, և լցաւ ամենայն դաշտն դիակամբք. իսկ զաստուածասաստ բարկութիւնն արկին ի վերայ հետևակ զօրացն, վասն զի հրով այրեցին զնոսա բիւրս երեսուն, որ և հոտեցաւ ամենայն երկիրն. և բազում աւարաւ և գերութեամբ և մեծաւ ուրախութեամբ դարձաւ զօրքն Փռանգաց ի քաղաքն

տյալ, Կերպողայից անձեռնմխելիության մասին երդում ստանալով, որոշեցին քաղաքը հանձնել նրան, իսկ իրենք գնան Ֆրանկների երկիրը: Բայց աստված, տեսնելով նրանց տագնապալի վիճակը, գթաց: Դիշերը նրանց մի սարսափելի տեսիլք երևաց. մի աստվածապաշտ ֆրանկ երազում սուրբ առաքյալ Պետրոսին տեսավ, որն ասաց նրան. «Եկեղեցու ձախ կողմում պահված է այն զենքը, որով անաստված հրեաները Քրիստոսի անարատ կողը խոցեցին, այն գտնվում է խորանի առջև: Հանե՛ք այն և, նրանով մարտի դուրս գալով, կհաղթեք ձեր թշնամիներին, ինչպես Քրիստոսը հաղթեց սատանային»: Նույն տեսիլքը երևաց երկրորդ և երրորդ անգամ: Այդ մասին պատմեցին Կոնդոփրեին, Պեմունդին և բոլոր իշխաններին: Սկսեցին աղոթել և սուրբ Պետրոս կոչվող եկեղեցու նշված տեղում գտան Քրիստոսի զենքը:

Այդ պահին այլազգիների բանակից պատգամավոր եկավ՝ պատերազմ առաջարկելով: Ֆրանկ զինվորները շատ ուրախացան: Պեմունդը և մյուս իշխանները պատասխանեցին Կերպողային և ասացին, թե՝ «վաղը առավոտյան ձեր դեմ մենք պատերազմի դուրս կգանք»: Ֆրանկ զորքը նվազել էր: Պեմունդը ճակատամարտի նախապատրաստեց տասըհինգ հազար [հեծյալ] և հարյուր հիսուն հազար հետևակ, որոնցով նա գնաց պատերազմի՝ Քրիստոսի զենքն առջևից բարձր պահած: Այլազգիների զորքերը ողողել էին լայնատարած դաշտը՝ տասնհինգական հոգուց բաղկացած շարքերով: Ջնճիլը Քրիստոսի զենքը բարձրացրեց Կերպողայի դրոշների դեմ: Կերպողան նրանց դեմ էր կանգնած լեռնացած անհամար զորքերով: Ձախ թևը գլխավորում էր առյուծադեմ Տանգրին, աջ թևը՝ Նորմանդիայի կոմս Ռոպերթը, իսկ Կոնդոփրեն և Պեմունդը կանգնել էին [կենտրոնում]՝ թուրք բանակի անհամար զինվորների դիմաց: Աստծուն իրենց օգնության կոչելով, նրանք մեկ մարդու պես երկնքում ցոլացող և լեռներն այրող կրակի պես թափվեցին այլազգիների վրա և ողջ բանակը գլխովին փախուստի մատնեցին: Մեծ կատաղությամբ սոսկալի ջարդ տալով, օրվա մեծ մասը հալածեցին այլազգիներին: Ֆրանկների սրերը հագեցան այլազգիների արյամբ: Բովանդակ դաշտը դիակներով լցվեց: Բայց ամենամեծ փորձանքը ֆրանկները թափեցին թշնամու հետևակի գլխին, որովհետև շուրջ երեսուն հազար հոգու ողջակեզ արեցին. համայն երկիրը գարշահոտությամբ բռնվեց: Ֆրանկների զորքը անթիվ ավարով ու բազում գերիներով մեծ ուրա-

Անտիոք. և էր օրն այն օր մեծ ուրախութեան հաւատացելոցն Քրիստոսի։

Յայսմ ամի դարձեալ երկրորդ նշան եղև յերկինս ի կողմն հիւսիսոյ. և զչորրորդ ժամ գիշերոյն հրով բորբոքեալ լինէր երկինքն առաւել քան զառաջինն. և եղև ի գոյն սաստիկ կարմրութեան յերեկորէն սկիզբն արարեալ մինչև ցչորրորդ ժամ գիշերոյն, զոր ոչ ոք երբէք ետես այնպիսի նշան ահաւոր, և ծառացեալ բարձրանալով և երակ երակ ելից ներեսս հիւսիսոյ մինչև ի գագաթն երկնից, և ամենայն աստեղքն եղեն ի գոյն հրոյ. և ահա նշանս այս նշան էր բարկութեան և կատարածի։

Դարձեալ եղև ի թուականութեանն Հայոց Շնը եղև խաւարումն լուսնին ըստ գնացից սովորութեանն իւրոյ՝ և լինէր ի գոյն արեան սաստիկ գունով և յառաջին պահէն մինչև ի չորրորդ ժամն. և դարձեալ լինէր ի գոյն սևութեան, և երևեալ լինէր տեսողացն թէ ի գոյնս արևան իցէ. և ի սաստկութենէ սևութեանն մթանայր ամենայն արարածք. և ղայս ասացին հանճարեղքն՝ եթէ լինելոց է արեան հեղութիւն ի յազգէն Պարսից ըստ ցուցման լուսնին ի վերայ նոցա՝ ըստ գրոյ ազգին իւրեանց։

Յայսմ ամի խաղայր դնայր բանակն Փռանգաց ի վերայ սուրբ քաղաքին Երուսաղէմի, վասն զի կատարեսցի մարգարէութիւն ներսեսի Հայոց հայրապետի որ ասաց՝ եթէ «ի յազգէն Փռանգաց լիցի փրկութիւն Երուսաղէմի, և դարձեալ վասն մեղաց անկցի ի ձեռս այլազգեաց»։ Եւ եղև յորժամ ելան նոքա ի ճանապարհ, գային զօրք այլազգեացն ի վերայ նոցա ի պատերազմ, որպէս գայր Ամաղէկ ընդ առաջ որդւոցն Իսրայէլի։ Եւ յորժամ հասան ի քաղաքն, որ կոչի Արկա, եղև անդ սաստիկ պատերազմ ընդ այլազգեացն, և յաղթեաց զօրքն Փռանգաց նոցա մեծաւ յաղթութեամբ. և գնաց խաղաղութեամբ բանակն Փռանգաց և հասաւ ի դուռն Երուսաղէմի և արար բազում պատերազմ։ Եւ էր յայնժամ յԵրուսաղէմ Տէր Վահրամ հայրապետն Հայոց. և զօրք այլազգեացն կամեցան սպանանել զնա, և Տէր փրկեաց զնա ի ձեռաց նոցա։ Իսկ յետ բազում պատերազմաց կանգնեցին փայտէ բերդս և տարան մօտ ի պարիսպ քաղաքին՝ և ուժգին բռնութեամբ և սրով և զօրութեամբ առին զսուրբ քաղաքն Երուսաղէմ։ Եւ յայնժամ Կոնդոփրէ զթուրն Վեսպիանոսի կայսերն առեալ՝ և յարձակեցաւ ամենայն զօրութեամբ ի վերայ այլազգեացն և կոտորեաց ի տաճարն արս վաթսուն և հինգ հազար և ի քաղաքն զայլ բնակիչսն. և այսպիսի օրինակաւ առաւ

խությամբ վերադարձավ Անտիոք քաղաքը։ Այդ օրը քրիստոնյաների համար մեծ ուրախության օր էր։

Այդ տարին երկնքի հյուսիսային կողմում երկրորդ անգամ նշան երևաց։ Գիշերվա չորրորդ ժամին երկինքը հրաբորբոք եղավ, ավելի սաստիկ, քան նախորդ անգամ։ Նա թունդ կարմիր գույն ստացավ. այդ [երևույթը] սկիզբ առավ երեկոյան և [տևեց] մինչև գիշերվա չորրորդ ժամը։ Այդպիսի սարսափելի նշան երբևիցե ոչ ոք չէր տեսել։ Վեր խոյանալով, նա շուտով ծածկեց [երկնակամարի] հյուսիսային կողմը՝ մինչև երկնքի դմբեթը։ Բոլոր աստղերը հրագույն դարձան։ Եվ այս նշանը, ահա, [աստծո] բարկության և [աշխարհի] կործանման նշանն էր։

Հայոց 548 թվականին [25 փետրվար 1099—24 փետրվար 1100 թ.] տեղի ունեցավ լուսնի սովորական խավարում։ Առաջին պահից սկսած մինչև չորրորդ ժամը նա մուգ կարմիր արյան գույն ստացավ, ապա սևացավ, բայց ականատեսներին թվում էր, թե արյան գույնի է։ Սաստիկ սևությունից ողջ տիեզերքը խավարի մեջ սուզվեց։ Գիտուն մարդիկ, բացատրելով այս երևույթը, ասացին, թե պարսից ժողովրդի կողմից արյունահեղություն է լինելու, այդ մասին են վկայում լուսինն ու նրանց գրքերը։

Այդ տարին ֆրանկների զորքը շարժվեց գնաց Երուսաղեմ սուրբ քաղաքի վրա, որպեսզի իրականանա հայոց հայրապետ Ներսեսի մարգարեությունը, թե՝ «Ֆրանկների ժողովուրդն է փրկելու Երուսաղեմը, և որ այդ [քաղաքը] նորից է ընկնելու այլազգիների ձեռքը [քրիստոնյաների] մեղքերի պատճառով»։ Երբ նրանք ճանապարհ ընկան, այլազգիների զորքերը ելան նրանց դեմ պատերազմի, այնպես, ինչպես Ամաղեկը[355] Իսրայելի որդիների դեմ դուրս եկավ։ Երբ հասան Արկա կոչվող քաղաքը, այնտեղ այլազգիների հետ կատաղի պատերազմ տեղի ունեցավ։ Ֆրանկների զորքը, նրանց դեմ փայլուն հաղթանակ տանելով, գնաց և անվնաս հասավ Երուսաղեմի դուռը, որտեղ բազմաթիվ մարտեր տվեց։ Այն ժամանակ Երուսաղեմում էր գտնվում հայոց հայրապետ տեր Վահրամը։ Այլազգիների զինվորները ուզեցին սպանել նրան, բայց տերը փրկեց նրանց ձեռքից։ Բազում մարտերից հետո [ֆրանկները] փայտաշեն աշտարակներ կառուցելով մոտեցրին քաղաքի պարսպին և սաստիկ ուժգնությամբ, սրով ու հզորությամբ գրավեցին Երուսաղեմ սուրբ քաղաքը։ Կոնդուփրեն, առնելով Վեսպասիանոս կայսեր թուրը, ամբողջ ուժով հարձակվեց այլազգիների վրա և տաճարի մեջ կոտորեց վաթսունհինգ հազար հոգի, իսկ քաղաքում՝ մնացած բնակիչներին։ Ահա այսպես գրավվեց Երուսաղեմ սուրբ քաղաքը,

սուրբ քաղաքն Երուսաղէմ, և ազատեցաւ գերեզմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի հարկատրութենէն Տաճկաց։

Եւ արդ ահա Վեսպիանոսի թուրն այս երեք հետ եղև, որ կոտորեաց զերուսաղէմ յետ խաչելութեանն Տեառն։

Յայսմ ամի եղև սաստիկ ժողով չեղիպտոսէ մինչև ի Սկիւթ, Նուպիք և մինչև ի սահմանս Հնդկաց՝ մինչև երեսուն բիւրս՝ և դան ամենայն պատրաստութեամբ ի վերայ Երուսաղէմի։ Եւ լուեալ զօրք Փռանգացն՝ սասանելով դողացան և ոչ համարձակեցան կալ ի քաղաքն, այլ յարուցեալ գնացին ընդդէմ նոցա ի պատերազմ, և զայս ունէին ի մտի, եթէ ոչ կարասցեն պատերազմել, դարձցին յաշխարհն իւրեանց. և մերձ ի համատարած ծովն հանդիպեցան միմեանց։ Եւ թագաւորն եգիպտոսի տեսեալ զգալ զօրացն Փռանգաց՝ և ձայն տուեալ զօրաց իւրոց՝ յարձակեցաւ ի պատերազմ։ Իսկ զօրացն Փռանգաց դիմեցին առհասարակ ի պատերազմ և կանգնեցին զճակատ պատերազմին. և յարձակեալ զօրացն Փռանգաց ի վերայ զօրացն եգիպտացւոցն, և դարձան առհասարակ ի փախուստ. և ոչ եթէ նոքա էին, որ պատերազմէին, այլ Աստուած էր, որ փոխանակ նոցա պատերազմէր ընդ եգիպտացիքն, որպէս առ Փարաւոն առ կարմիր ծովուն արար որդւոցն Իսրայէլի։ Իսկ ի սաստկանալ պատերազմին իբրև արս հարիւր հազարս արկին ի ծովն, և անդ սատակեցան, և զայլսն կոտորելով արարին փախստականս. և դարձաւ զօրքն Փռանգաց մեծաւ յաղթութեամբ և բաղում աւարաւ ի քաղաքն Երուսաղէմ։

Յայսմ ամի զօրաժողով արար Գրիգոր կուրապաղատն արեւելից, եղբայր Տեառն Բարսղի Հայոց կաթուղիկոսի. սորա գնացեալ ի վերայ Թուրք բանակին ի գաւառն Աշորնիս, վասն զի էր այր քաջ և հզօր պատերազմող. գնացեալ զօրօքն իւրովք ի դէպն, որ ասի Կաղեզուան, և հասեալ ի վերայ Թուրքին՝ և պատերազմաւ հարեալ զնոսա՝ և արար հալածականս և զբազումս ի նոցանէ սրով սատակեաց, և դարձեալ գնալով ի քաղաքն Անի։ Յայնժամ մի ոմն ի դարանի կայր ի Թուրք զօրացն ընդ ծառով միով, և գաղտ նետիւ հարեալ զնա ի բերանն, և ի սաստիկ խոցոյն ի յերկիր անկեալ աւանդեաց զհոգին, և եղև սուգ մեծ Շիրակայ և ամենայն տանն Հայոց. արդ այսպիսի օրինակաւ մեռաւ քաջ զօրականն և մեծ հաւատացեալն Գրիգոր որդի Վասակայ, որդի Ապիրատին՝ որդւոյ Հասանայ, յազգէ քաջացն և ի պատերազմող զօրականաց, յազգէ Պալհաւունեաց։

Յայսմ ամի դարձաւ Զնճիլ կոմսն և գնաց ի Փռանգ և տարաւ զղէնն Քրիստոսի, զոր գտին յԱնտիոք, և ետ Ալէքսին Հոռոմոց թագաւորին,

և Քրիստոսի՝ մեր աստծո Գերեզմանն ազատվեց տաճիկների հարկա-
վուիթյունից։

Տիրոջ խաչելությունից հետո սա, ահա, երրորդ անգամն էր, որ Վեսպասիանոսի թուրը նվաճեց Երուսաղեմը։

Այդ տարին Եգիպտոսից մինչև Սկյութիա[356], Նուբիայից մինչև հընդ-
կաց սահմանները [այլազգիների] վիթխարի զորահավաք եղավ՝ շուրջ
երեք հարյուր հազար հոգի. նրանք կազմ ու պատրաստ շարժվեցին
Երուսաղեմի վրա. ֆրանկների զորքերը, լսելով այդ մասին, ահ ու դո-
ղի մեջ ընկան և չհամարձակվեցին քաղաքում մնալ, այլ, դուրս գալով,
նրանց դեմ պատերազմի գնացին, նախապես որոշած լինելով, որ եթե
չկարողանան հաղթանակի հասնել, վերադառնան իրենց երկիրը։ Նրանք
միմյանց հանդիպեցին համատարած ծովի ափին։ Եգիպտոսի թագա-
վորը, տեսնելով ֆրանկների զորքի գալը, ձայն տվեց իր զինվորներին
և դիմեց պատերազմի։ Ֆրանկների բոլոր զինվորները ևս գնացին պա-
տերազմի և ճակատ կազմեցին։ Ֆրանկների զինվորները հարձակվեցին
եգիպտացիների զորքերի վրա և գլխովին փախուստի մատնեցին։ Մար-
տընչողները [ֆրանկները] չէին, նրանց փոխարեն աստված էր կըռ-
վում եգիպտացիների դեմ, ինչպես Կարմիր ծովում Փարավոնի դեմ էր
կռվում Իսրայելի որդիների համար։ Կատաղի մարտում [ֆրանկները]
շուրջ հարյուր հազար հոգու ծովը թափեցին, որտեղ և նրանք սատա-
կեցին, իսկ մյուսներին կոտորելով՝ փախուստի մատնեցին։ Ֆրանկ-
ների զորքը մեծ հաղթանակով և բազում ավարով վերադարձավ Երու-
սաղեմ քաղաքը։

Այդ տարին արևելից կուրապաղատ Գրիգորը՝ հայոց կաթողիկոս
Բարսեղի եղբայրը, զորահավաք արեց և գնաց Աշորնիք գավառը՝ թուր-
քական բանակի դեմ։ Նա քաջ մարդ էր և հզոր պատերազմող։ Նա իր
զորքով գնաց Կաղեզվան կոչվող գյուղը, հարձակվեց թուրքերի վրա և
մարտ տալով՝ նրանց փախուստի մատնեց։ Նրանցից շատերին նա սրի
քաշեց և նորից վերադարձավ Անի քաղաքը։ Այն ժամանակ թուրք զին-
վորներից մեկը, որ մի ծառի տակ դարան էր մտել, թաքուն նետահար
արեց նրան բերանից։ Գրիգորը մահացու վերք ստացած գետին պլոր-
վեց և հոգին ավանդեց։ Շիրակում և բովանդակ հայոց աշխարհում մեծ
սուգ եղավ։ Ահա, այսպես սպանվեց քաջատոհմիկ և պատերազմող
զորականներից սերող, Պահլավունիների ընտանիքին պատկանող քաջ
մարտիկ և մեծ հավատացյալ Գրիգորը՝ Վասակի որդին, Ապիրատի որ-
դու, Հասանի որդու։

Այդ տարին կոմս Ջնճիլը Անտիոքում հայտնաբերած Քրիստոսի
զենքը տարավ տվեց հռոմոց կայսր Ալեքսիին, իսկ ինքը վերադարձավ

և ինքն գնաց ի Փռանգ։

Յայսմ ամի մեռաւ մեծ իշխանն Հայոց Կոստանդին՝ որդին Ռուբենայ, և մնաց իւր երկու որդի՝ Թորոս և Լևոն։ Սորա տիրեալ էր բազում քաղաքաց և գաւառաց և ըմբռնեալ ունէր զմեծ մասն Տօրոս լերինն, զոր առեալ քաջութեամբ իւրով ի զօրացն Պարսից. սա էր ի զօրացն Գագկայ Բագրատունւոյ՝ որդւոյ Աշոտոյ. սա մեռանէր յայսմ ժամանակիս. և եղև այս ինչ նշան ի տան նորա՝ վասն մահու նորա. և եղև ի միում աւուր մինչ կենդանի էր, լինէր ցոլումն հրոյ կայծականց, և ի բերդն, որ ասի Վահկայ, հարեալ կայծակն և ի սպասաւորաց տանն զարկեալ և զարծաթի սկուտեղքն զմին կողմն տարաւ ի ներքոյ հինգ սկուտեղան. և իմաստունքն ասացին, եթէ այս է վերջին տարին Կոստանդէի. և ի նմին ամին մեռանէր և թաղեցաւ ի վանքն, որ կոչի Կաստաղօն։

Յայսմ ամի դարձեալ եղև երրորդ նշան հրակերպ յերկինս ի գոյն սաստիկ կարմրութեան. և կացեալ վեց ժամ գիշերոյն ի հիւսիսային կողմանէն՝ գնալով գնայր յարևելս, և դարձաւ ի սևութիւն. և ասացին զնշանս զայս՝ նշան արեան հեղութեան քրիստոնէից, որ և եղև իսկ։ Եւ արդ յօրէ, յորմէ հետէ ելան ազգն Փռանգաց, ոչ երբէք երևեցաւ նշան բարւոյ և կամ ուրախութեան, այլ բարկութեան և կատարածի և աւերման և քակտելոյ աշխարհի, մահու և կոտորածի, սովու և սաստնութեան։

Յայսմ ամի եղև սով սաստիկ ընդ ամենայն աշխարհն Միջագետաց. և ի քաղաքն Ուռհա եղև մեծ նեղութիւն, վասն զի զտարին ողջոյն ոչ եկն անձրև ի վերայ անդաստանացն, և արգելաւ ցօղն յերկնից, և ցամաքեցաւ երկիր ի ջրոյ, և չորացան ծառք և այգիք, խցան աղբերք ջրոց, և յերեսաց սովոյն բազումք մեռան ի քաղաքին Ուռհա. և զորս լուաք ի Սամարիա յաւուրս մարգարէին Եսայեայ, այնպէս եղև ի քաղաքս Ուռհա. զի կին ոմն ի հաւատացելոցն Հոռոմոց զտղայն իւր եփեալ կերաւ, նոյնպէս և այլազգի ոմն Տաճիկ առ վտանգի սովոյն եկեր զկին իւր, վասն զի ղղօրութիւն հայցին բեկեալ էր Աստուած. ուտէին և ոչ յագենային. և բազումք ասացին, թէ այս յԱստուծոյ է դատաստանս վասն անիրաւ մահուն Թորոսի կուրապաղատին, որք խաչիւ և աւետարանով երդուան նմա, և դարձեալ ուրացեալք լինէին և սպանին զնա չարաչար և զգլուխն ի ձող ցցեալ բազում հայհոյութեամբ և ձգեալ զնա առաջի եկեղեցւոյն, որ ասի Ս. Փրկիչ, զոր շինեաց սուրբ առաքեալն Թադէոս, և վասն այսորիկ էած Տէր Աստուած զնեղութիւնս զայս ի վերայ տանն Աբգարու. և ամ յամէ ոչ դադարեցաւ բարկութիւնն Աստուծոյ ի քաղաքն Ուռհայոյ։

գնաց ֆրանկների [երկիրը]։

Այդ տարին վախճանվեց հայոց մեծ իշխան Կոստանդինը՝ Ռուբենի որդին, թողնելով երկու որդի՝ Թորոսին ու Լևոնին։ [Կոստանդինը] տիրում էր բազում քաղաքների և գավառների, նրա ձեռքում էր գտնվում Տավրոս լեռան մեծ մասը, որ նա իր քաջությամբ խլել էր պարսից զորքից։ Նա Աշոտի որդի Գագիկ Բագրատունու զինվորներից էր։ Ահա նա վախճանվեց այդ տարին։ Նրա տանը իր մահը կանխագուշակող այսպիսի մի նշան եղավ. մի օր, երբ դեռ նա կենդանի էր, կայծակներ փայլատակեցին. կայծակ ընկավ Վահկա կոչվող բերդի սպասավորների տան վրա, և արծաթե սկուտեղներից մեկը տարավ գցեց հինգ սկուտեղների տակը։ Գիտուն մարդիկ ասացին, թե սա Կոստանդնի վերջին տարին է։ Հենց նույն տարին էլ նա վախճանվեց և թաղվեց Կաստաղոն կոչվող վանքում։

Այդ տարին երկնքում երրորդ անգամ մուգ-կարմրագույն հրակերպ նշան եղավ։ Նա հյուսիսային կողմում երևաց վեց ժամ, շարժվեց դեպի արևելք և սև գույն ստացավ։ Մարդիկ ասացին, թե այս նշանը քրիստոնյաների արյունահեղության մասին է վկայում, որ և, իսկապես, տեղի ունեցավ։ Այն օրից, երբ ֆրանկները դուրս եկան [իրենց երկրից], բարին կամ ուրախություն [կանխագուշակող] նշան ամենևին չերևաց, այլ [միայն]՝ բարկության, աշխարհի կործանման, ավերածության ու փլուզման, մահվան ու կոտորածի, սովի և տակնուվրայության։

Այդ տարին համայն Միջագետքում սաստիկ սով եղավ, Ուռհա քաղաքում՝ մեծ նեղություն, որովհետև ամբողջ տարին անդաստանների վրա անձրև չտեղաց, երկնքի ցողը վերացավ, երկրի վրայից ջուրը ցամաքեց, ծառերն ու այգիները չորացան, ցամաքեցին աղբյուրները։ Ուռհա քաղաքում շատերը սովամահ եղան։ Ինչ որ մենք լսել էինք Եսայի մարգարեի օրոք Սամարիայում տեղի ունեցածի մասին, ահա այդ բանը կատարվեց և Ուռհա քաղաքում. հունադավան մի կին իր երեխան եփեց կերավ, նմանապես և մի տաճիկ սովից դրդված իր կնոջը կերավ։ Աստված հացի զորությունը վերացրել էր, [մարդիկ] ուտում էին, բայց չէին կշտանում։ Շատերը գտնում էին, թե դա աստծո պատիժն է անմեղ Թորոս կուրապաղատի սպանման համար, որին խաչով և ավետարանով երդում տվեցին, բայց, ուրանալով այն, տանջամահ արեցին, գլուխը բազում անարգանքով ցից հանեցին և սուրբ Թադեոս առաքյալի կառուցած Սուրբ Փրկիչ կոչվող եկեղեցու առաջ նետեցին։ Ահա դրա համար է, որ աստված այդպիսի փորձանքներ բերեց Աբգարի երկրի գլխին, և տարիներ շարունակ Ուռհա քաղաքի վրայից չվերացավ աստծո բարկությունը։

Իսկ ի բարձրանալ թուականութեանս Հայոց ՇԽԹ ամին եղև լիութիւն հացի անդ ամենայն արարածս, և ի յՈւռհա անչափ առատութիւն ցորենոյ և գարւոյ, որ մոռացան զառաջին նեղութիւնն, վասն զի մի մոդն հարիւր մոդն արար, և լցան ծառք և ամենայն պտղաբերք, և աղբեւրք յորդորեցին զջուրս իւրեանց, և յագեցան մարդ և անասուն: Ի յայսմ ամի մեռաւ Կոստանդին որդին Ռուբենայ:

Յայսմ ամի Կոնդոփրէ տուկն Փռանդաց գնացեալ զօրօքն ի քաղաքն, որ ասի Կեսարիա Փիլիպպեայ, որ է ի վերայ ծովուն Ովկիանոսի. և ելին առ նա իշխանքն Տաճկաց սիրոյ աղագաւ և բերին կերակուրս և արկին սեղանս առաջի նորա. և նա էառ եկեր անպատրաստութեամբ, և էր կերակուրն դեղած մահաբեր դեղօք. և զկնի սակաւ աւուրց մեռաւ տուկն Կոնդոփրէ, և քառասուն այր ընդ նմա, և թաղեցին զնա ի քաղաքն Երուսաղէմ առաջի սրբոյն Գողգոթային, վասն զի յայնմ աւուրքն անդ էր: Եւ յայնժամ յղարկեցին խնդրակ եղբօրն իւրոյ Պաղտնին, որ էր ի քաղաքն Ուռհա, և բերեալ զնա՝ տան զսուրբ քաղաքն Երուսաղէմ ի Պաղտինն: Եւ Տանդրի յարուցեալ գնաց ի քաղաքն Անտիոք առ կոմսն Փռանդաց Պեմունդն, վասն զի քեռի էր նմա:

Յայսմիկ ժամանակիս էր զօրապետն Հոռոմոց իշխանաց իշխանն ի քաղաքն Մարաշ, ընդ ձեռամբ Յունաց թագաւորին Ալէքսին, զորս նաուն յառաջին ամն իշխանքն Փռանդաց ի յԱլէքսն և ուրացեալ եղեն և զոր խոստացան՝ ոչ արարին: Եւ յարուցեալ մեծ կոմսն Փռանդաց Պեմունդն, և Ռաջարդն քուրորդին նորա, և արար ժողովս զզօրն Փռանդաց՝ և գային ի վերայ քաղաքին Մարաշայ և պատերազմեալ ի վերայ իշխանաց իշխանին, որ ասէին նմա Թաթուլ, և խնդրէր ի նմանէ զքաղաքն Մարաշ՝ և բանակեալ բաղում պատերազմաւ ի վերայ նորա. իսկ իշխանաց իշխանն առ ոչինչ համարելով զամենայն պատերազմն նորա, զի էր այր քաջ և պատերազմող և էր բաղում ազատօքն ի քաղաքն Մարաշ. և Պեմունդն կայր բանակեալ ի դաշտն Մարաշայ և հաւանեցոյց զդաւառն իւր:

Յայսմ ամի գայր բաղում զօրօք ամիրայն Պարսից, որ ասէին Դամիշման, որ էր տէր Սեաստոյ և ամենայն Հոռոմոց աշխարհին. և խաղացեալ բազմութեամբ հեծելոց և եկեալ ի վերայ քաղաքին Մելտենւոյ՝ և տայր սաստիկ պատերազմ ի վերայ նորա. և իշխան քաղաքին, որ ասէին Խորիլ, յղարկեաց առ Պեմունդն՝ և կոչեաց զնա յօգնութիւն քաղաքին իւրոյ, և խոստացաւ տալ զՄելտենի ի ձեռս Պեմնդին: Եւ յայնժամ Պեմունդն և Ռաջարդն յարուցեալ զօրօք գան ի վերայ Դամիշմանին. և լուեալ զայս Դամիշմանն՝ և առաքեաց զօրս ընդդէմ զօրացն

Երբ եկավ հայոց 549 թվականը [29 փետրվար 1100—22 փետրվար 1101 թ.], բոլոր մարդկանց համար հացի լիություն եղավ, ուռհայում ևս՝ ցորենի և գարու անչափ առատություն, և մարդիկ մոռացան անցյալի նեղությունները։ Պատճառն այն էր, որ մեկ մոդ[357] [սերմացուն] հարյուրապատիկ բերք տվեց։ Ծառերը և բոլոր մրգատունկերը առատ բերք տվեցին, աղբյուրները հորդառատ դարձան, մարդիկ ու անասունները հագեցան։ Այդ տարին վախճանվեց Ռուբենի որդի Կոստանդինը։

Այդ տարին Կոնդոփրեն՝ ֆրանկների դուկը, զորքով գնաց Փիլիպոսի Կեսարիա կոչվող քաղաքը[358], որ գտնվում է Օվկիանոս ծովի ափին։ Տաճիկների իշխանները բարեկամական ղպացմունքներով նրան ընդառաջ գնացին և, ուտելիքներ բերելով, նրա համար սեղան բացեցին։ Կոնդոփրեն անզգուշաբար վերցրեց կերավ, բայց կերակուրը թունավորված լինելով, մի քանի օր հետո նա, նրա հետ նաև քառասուն հոգի մեռան։ Կոնդոփրեին թաղեցին Երուսաղեմ քաղաքում, սուրբ Գողգոթայի ստորոտին, քանզի նա այդ օրերին այդտեղ էր գտնվում։ Այնուհետև Պաղտինի՝ նրա եղբոր մոտ սուրհանդակ ուղարկեցին (նա Ուռհա քաղաքում էր գտնվում) և, Երուսաղեմ բերելով, սուրբ քաղաքը նրան տվեցին։ Իսկ Տանգրին եկավ գնաց Անտիոք քաղաքը, ֆրանկների կոմս Պեմունդի մոտ. վերջինս նրա քեռին էր։

Այդ ժամանակները Հոռոմոց սպարապետ, իշխանաց իշխան [Թաթուլը] նստում էր հունաց կայսր Ալեքսի իշխանության տակ գտնվող Մարաշ քաղաքում, որը ֆրանկ իշխաններն էին նախորդ տարին տվել Ալեքսին, բայց [հույները] իրենց խոստումը չկատարեցին։ [Դրա համար էլ] ֆրանկների մեծ կոմս Պեմունդը, նրա քրոջորդի Ռիջարդը ֆրանկների զորահավաք անելով, շարժվեցին Մարաշ քաղաքի վրա։ Նրանք կատաղի պատերազմ մղեցին իշխանաց իշխանի դեմ (նրա անունը Թաթուլ էր) նրանից Մարաշ քաղաքը պահանջելով։ Իշխանաց իշխանը չերկյուղեց [Պեմունդին] պատերազմ տալուց, [Թաթուլը] քաջ մարդ էր և պատերազմող. նա բազմաթիվ ազատներով Մարաշ քաղաքում էր գտնվում։ Իսկ Պեմունդը, որ իրեն էր ենթարկել Մարաշի դավառը, բանակել էր Մարաշի դաշտում։

Այդ տարին պարսից ամիրան, որին Դանիշման[359] էին անվանում, Սևաստի և Հոռոմոց ողջ երկրի տերը, բազմաթիվ հեծյալ զորքերով եկավ Մելիտենե քաղաքի վրա և կատաղի պատերազմ մղեց նրա դեմ։ Քաղաքի իշխանը, որին Խորիլ էին անվանում[360], դիմեց Պեմունդին և նրան կանչեց քաղաքին օգնության հասնել, խոստանալով Մելիտենե քաղաքը։ Այն ժամանակ Պեմունդն ու Ռիջարդը իրենց զորքերով եկան Դանիշմանի դեմ։ Դանիշմանը, լսելով դա, ֆրանկների դեմ զոր-

Փռանգաց ի դաշան Մելտենւոյ և կացուցանէր քմինս ի բազում տեղիս, և ինքն առեալ զօրս բազումս գնաց ընդ առաջ նոցա։ Եւ ահա գայր Պեմունդն և Ռաջարդն անմտաբար, և ամենայն պատրաստութեամբ լեալք էին, և զօրք իւրեանց դատարկք թափուրք ի սրոց պատերազմէ, և դային պաճուճեալք՝ որպէս կանայք զհետ մեռելոյ. վասն զի զղէնսն պատերազմին պաշտօնեայքն նոցա ունէին, և պատերազմողքն ունայնայեալք կային որպէս զգերեալս. և յանկարծակի հեղան զօրք Դամիշմանին ի վերայ Փռանգ զօրացն, և եղև պատերազմ սաստիկ յոյնմ աւուր, և եղև կոտորումն ամենայն զօրացն Փռանգաց և Հայոց. և կալան զՊեմունդն և զՌաջարդն ծառայ. և սպանաւ յայսմ պատերազմիս երկու եպիսկոպոս ի Հայոց, Կիւրիանոս Անտիոքայ եպիսկոպոսն և Գրիգորիս Մարաշայ եպիսկոպոսն, որք էին զհետ Պեմնդին, զի յոյժ մեծարէր զնոսա. և լուեալ զհամբաւս զայս՝ դողաց սաստկեալով ամենայն տունն քրիստոնէից, և ուրախացեալ խնդաց ամենայն ազգն Պարսից, վասն զի զնա գիտէին յանուանէ թագաւոր Փռանգաց, և յանուանէ նորա դողայր ամենայն տունն Խորասանայ։ Եւ լուեալ զայս Պաղտոյն կոմսն Ուհայոյ և ամենայն ազգն Փռանգաց, որք յԱնտիոք, վարեցան զհետ Դամիշմանին. և Դամիշմանն առեալ զՊեմունդն և զՌաջարդն և երկաթի կապանօք տարաւ ի Նիկիսար։ Եւ լուեալ զայս Պաղտոյնն՝ դարձաւ յՈւհա և տայր զՈւհա ի միւս Պաղտոյնն, որ ասի Տպօրկ, որ էր յառաջագոյն ճորտ Պեմնդին, և ինքն չարշարեալ զՈւհա և առեալ բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ և գնաց յԵրուսաղէմ՝ յաթոռ եղբօր իւրոյ Կոնդոփրէի և թագաւորեաց ի վերայ Երուսաղէմի. և Տանդրի եկեալ յԱնտիոք, որպէս ասացաք։ Արդ այս այսպէս գործեցաւ ընդ զօրսն Փռանգաց վասն գործոց մեղացն, զի Յողին զուղղորդ ճանապարհն Աստուծոյ և սկսան գնալ ընդ ճանապարհն մեղաց, զորս ոչ հրամայեաց նոցա Աստուած. և ամենայն անիրաւութեամբ և ամենայն անառակ գնացիւք մոռացան զպատուիրանս Տեառն, և զորս ոչ կամէր Աստուած՝ զայն կամեցան նոքա։ Իսկ Աստուած զառաջին օգնականութիւնն և զյաղթութիւնն եբարձ ի նոցանէ, որպէս եբարձ ի բանակէն որդւոցն Իսրայէլի։ Եւ ահա այս առաջին կոտորումն զօրացն Փռանգաց՝ որ եղև. աստ ի յառաջ միտ դիք և մի՛ ձանձրանայք։

Յայսմ ամի զօրաժողով արար ամիրայն Պարսից Սուգման որդի Արդուխին, որ էր այր քաջ և արեանարբու, և գայր բազում զօրօքն ի քաղաքն, որ ասի Սրուճ, և արար ասպատակ զամենայն երկիրն։ Եւ լուեալ զայս կոմսն Պաղտոյն Տպօրկ և կոմսն Սրճոյ, որ ասի Փուչեր, գնացին ի վերայ Թուրքին, և ի ձեռն անպատրաստութեանն իւրեանց

քեր ուղարկեց Մելիտենեի դաշտը։ Նա շատ տեղերում դարաններ դրեց, իսկ ինքը բազմաթիվ զինվորների գլուխն անցած գնաց նրանց ընդդիմակայելու։ Պեմունդն ու Ռիչարդը անխոհեմաբար, առանց որևէ պատրաստության էին գնում, անզեն զորքով, մեռելի ետևից գնացող կանանց նման պաճուճված։ Նրանց պատերազմական զենքերը ծառաներն էին տանում, իսկ մարտիկները գերիների պես անզեն էին։ Եվ, ահա, ֆրանկների զորքի վրա հանկարծակի խուժեցին Դանիշմանի զինվորները։ Այդ օրը կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ, և ֆրանկների ու հայերի ամբողջ զորքը կոտորվեց։ Պեմունդն ու Ռիչարդը գերի ընկան։ Այդ ճակատամարտում սպանվեց և երկու հայ եպիսկոպոս՝ Անտիոքի եպիսկոպոս Կիպրիանոսը և Մարաշի եպիսկոպոս Գրիգորիսը։ Նրանք ուղեկցում էին Պեմունդին, որովհետև իրենց շատ էր հարգում։ Այդ դեպքի համբավը տարածվեց, և քրիստոնյաների բովանդակ երկիրը ահուդողի մեջ ընկավ, իսկ պարսից ժողովուրդը ուրախություն ու բերկրանք ապրեց, քանզի հանվանե հենց [Պեմունդին] էին ֆրանկների թագավոր ճանաչում և համայն Խորասանը նրա անունը լսելիս դող էր ընկնում։ Ուռհայի կոմս Պաղտինը և Անտիոքի ողջ ֆրանկ բնակչությունը, լսելով այդ մասին, Դանիշմանի վրա շարժվեցին։ Վերջինս Պեմունդին և Ռիչարդին շղթայակապ Նիքսար[361] տարավ։ Պաղտինը, լսելով այդ մասին, վերադարձավ Ուռհա, այն տվեց մյուս Պաղտինին՝ Տպորկ կոչվածին, որ նախկինում Պեմունդի ճորտն էր, իսկ ինքը, բռնանալով Ուռհայի [բնակչության] վրա, վերցրեց բազում ոսկի և արծաթ, գնաց Երուսաղեմ և նստեց իր եղբոր՝ Կոնդուիրեի գահին ու դարձավ Երուսաղեմի թագավոր։ Իսկ Տանգրին, ինչպես ասացինք, եկավ Անտիոք։ Ֆրանկ զինվորների գլխին այդ փորձանքը եկավ իրենց մեղքերի պատճառով, քանզի նրանք, թողնելով աստծո ճշմարիտ ճանապարհը, սկսեցին ընթանալ մեղքերի ճանապարհով, որ աստված արգելել էր նրանց։ Ամեն տեսակի անիրավություններ ու անառակություններ գործելով, նրանք մոռացան տիրոջ պատվիրանները, աստծո չկամեցածը կամեցան։ Աստված այս անգամ նրանց նեցուկ չկանգնեց, ինչպես նախկինում, այլ զրկեց հաղթանակներից, ինչպես [զրկել էր] Իսրայելի որդիների բանակին։ Սա ֆրանկ զորքերի առաջին ջարդն էր։ Սրանից հետո էլ [աստծիս] ուշադրություն դարձրեք առանց տաղտկանալու։

Այդ տարին պարսից ամիրա Սուգմանը՝ Արդուխի որդին, հանդուգն արյունարբու մի մարդ, զորահավաք արեց և բազում զորքերով եկավ Սրուճ[362] կոչվող քաղաքի վրա. նա ողջ գավառն ասպատակեց։ Տեղեկանալով այդ մասին, կոմս Պաղտին Տպորկը և Սրուճի կոմսը, որ Փռուշեր է կոչվում, հարձակվեցին թուրքերի վրա, բայց, հարկ եղած

եղեն պարտեալք, և սաստիկ պատերազմաւ յաղթեաց Թուրքն Փռանգին և արարին սաստիկ կոտորածս ղզօրսն Փռանգաց և Հայոց, որք էին ղհետ նոցա. և սպանաւ կոմսն Սրճոյ Փուշերն՝ այր քաջ և հզօր և սուրբ ի մեղաց մարմնոյ, և կոմսն Պաղտին երիք արամբք անկանէր ի կլայն Ուռհայոյ և կայր լալագին մարմնով։ Եւ եկեալ իշխանք քաղաքին իջուցին զնա ի քաղաքն և տարան զնա յաթոռ իւր. և զկնի երիք աւուր յարուցեալ գնաց յԱնտիոք ի խնդիր զօրաց. և բանակ այլազգեացն պատերազմէր ի վերայ Սրճոյ կլային, վասն զի ամենայն քրիստոնեայքն, որ անդ էին, ի կլայն ժողովեցան։ Էր անդ և պապիոսն Ուռհայոյ. և քաղաքն Սրուճ եղև ընդ Թուրքն միաբան։ Եւ զկնի քսան և հինգ աւուր գայր Պաղտոյն, և վեց հարիւր ձիաւոր ընդ նմա և հետևակ եւթն հարիւր, և արարին հալածականս զանօրէնն բանակն Պարսից, և քաղաքն Սրուճ ոչ եկն ի հաւանութիւն։ Յայնժամ դարձաւ Փռանգն ի վերայ քաղաքին Սրճոյ և զամենայն բազմութիւն քաղաքին կոտորեաց սրով. և արարին ալափ առհասարակ զամենայն քաղաքն և մանկունս և աղջկունս և զկանայս անհամարս էարկ ի քաղաքն Ուռհա, և լցաւ գերութեամբ Անտիոք և տունն Փռանգաց, և լցաւ արեամբ ամենայն քաղաքն։

Յայսմ ամի եղև չորրորդ նշան կարմրութեան ի հիւսիսային կողմանէն ահաւոր և հրաշալի քան զառաջինսն, ի գոյն ալիան երևեալ լինէր և դարձեալ սևացաւ։ Եւ այս դարձեալ չորրորդ նշանացս լուսնին փուլն հանդիպէր հանապազ. և այս նշանս նշան էր բարկութեան ի վերայ քրիստոնէից ըստ Երեմիայի մարգարէին որ ասէր՝ եթէ «Յերևեաց հիւսիսոյ բորբոքեցի բարկութիւնն», որ եղև իսկ անհաս բարկութիւնս։

Դարձեալ ի թուականութեան Հայոց յամի ՇԾ եղև ահաւոր և հրաշալի նշան ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, վասն զի սովորական վառումն լուսոյ սուրբ Դերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ արգելեալ եղև և ոչ վառեցաւ յաւուր շաբաթու, այլ մնացին կանթեղքն առանց վառման. և կացեալ մինչև ի միաշաբաթին կիրակէին և ապա վառեալ լինէր յիններորդ ժամուն, և եղև հիացման ամենայն քրիստոնէից։ Եւ այս եղև, զի ազգն Փռանգաց խոտորեցան ի ճանապարհ ձախակողմանն և թողին ղբուն պողոտայն առ աջակողման ճանապարհին՝ զմեղացն ճաշակելով զճաշակն բաժակին, որ լցեալ իսկ էր մրրով դառնութեան. նա ևս պաշտօնեայք սուրբ Եկեղեցւոյ ի տիղմն թաւալելով առանց յագման. և այսպիսի վարուքս ոչ գարշէին յամենայն մեղաց. և ի վերայ այսր ամենայնի զկանայս կացուցանէին սպասաւուր սրբոյ Դերեզմանին Աստուծոյ և ամենայն ուխտիցն, որ էին յԵրուսաղէմ. և էին այն ամենայն մեղք մեծամեծք առաջի Աստուծոյ. և զՀայ և զՀոռոմ, զԱսորի և

պատրաստությունը տեսած չինելու պատճառով, պարսվեցին։ Կատաղի ճակատամարտում թուրքերը հաղթեցին ֆրանկներին և ֆրանկների դինվորներին, ինչպես և հայերին, որոնք նրանց հետ էին, մեծ ջարդ տվեցին։ Սպանվեց Սրուճի կոմս Փուչերը, մի քաջ ու հղոր, ժուժկալ մարդ, իսկ կոմս Պաղտինը, ողբալի վիճակում, երեք հոգով ապաստանեց Ուռհայի բերդում։ Քաղաքի իշխաններն եկան, նրան քաղաք իջեցրին և տարան [նստեցրին] իր գահին։ Երեք օր անց նա զորքի հարցով ելավ գնաց Անտիոք։ Այլազգիների զորքը պատերազմ էր մղում Սրուճի բերդի դեմ, քանզի տեղի բոլոր քրիստոնյաները բերդում էին ապաստանել։ Այնտեղ էր գտնվում նաև Ուռհայի պապիոսը[363]։ Սրուճ քաղաքը հանձնվեց թուրքերին։ Քսաներեք օր անց ժամանեց Պաղտինը վեց հարյուր ձիավորով և յոթ հարյուր հետևակով, որոնք փախուստի մատնեցին պարսիկների անհավատ զորքը, բայց Սրուճ քաղաքը [Պաղտինին] չհնազանդվեց։ Այն ժամանակ ֆրանկները հարձակվեցին Սրուճ քաղաքի վրա, ողջ բնակչությանը սրի քաշեցին, ամբողջ քաղաքը ավարի առան և անհամար տղաների, աղջիկների ու կանանց [գերի] քշեցին Ուռհա քաղաք։ Անտիոքը և ֆրանկների երկիրը լցվեց գերիներով, իսկ [Սրուճ] քաղաքը արյամբ ողողվեց։

Այդ տարին հյուսիսային կողմում չորրորդ անգամ կարմիր նշան երևաց, նախկիններից ավելի ահավոր և զարմանալի։ Սկզբում այն արնագույն էր, բայց նորից սևացավ։ Այս չորրորդ նշանը նույնպես կատարվեց լուսնի նվազելու ժամանակ և քրիստոնյաների նկատմամբ [աստծո] բարկության ապացույցն էր, համաձայն Երեմիա մարգարեի խոսքերի, թե՝ «Հյուսիսից է գալու փորձանքը»[364]։ Եվ ահա վրա հասավ անպարփակելի դժբախտությունը։

Հայոց 550 թվականին [24 փետրվար 1101—23 փետրվար 1102 թ.] Երուսաղեմ սուրբ քաղաքում սարսափելի և զարմանալի նշան եղավ, խափանվեց մեր Քրիստոս-աստծո Դերեզմանի լույսի ավանդական վառումը, շաբաթ օրը այն չվառվեց, կանթեղներն անվառ մնացին մինչև կիրակի և վառվեցին իններորդ ժամին։ Բոլոր քրիստոնյաներն ապշել էին։ Դա տեղի ունեցավ այն պատճառով, որ ֆրանկներն ընթացան խոտոր, ձախակողմյան ճանապարհով, թողեցին ճշմարիտ՝ աջակողմյան ճանապարհը և ըմպեցին դառնության մրուրով լի մեղքերի բաժակը, նաև [այն պատճառով], որ սուրբ եկեղեցու սպասավորները անհագուրդ կեղտի մեջ թավալվեցին և չէին խորշում այսպիսի մեղսագործ վարքից։ Այդ բոլորի վրա նրանք կանանց էին կարդում աստծո սուրբ Դերեզմանի և Երուսաղեմի բոլոր վանքերի սպասավոր։ Այդ բոլորը սարսափելի մեղքեր էին աստծո նկատմամբ։ Բոլոր վանքերից նրանք հե-

զվրացի մերժեցին յամենայն ուխտիցն։ Եւ յորժամ տեսին զայս ահաւոր նշանս յանդիմանութեան ազգին Փռանգաց, ի բաց մերժեցին զկանայսն ի սպասաւորութենէ սուրբ ուխտիցն, որ չՔրուսաղէմ, և զամենայն աղգ կացուցանէին չիւր ուխտն։ Եւ սկսան յաղօթս կալ հինգ ազգ հաւատացելոցն՝ և լուաւ Աստուած աղօթից նոցա. և վառեալ լինէր կանթեղն սուրբ Գերեզմանին Աստուծոյ ի չաւուր կիրակէին, զոր ոչ ոք լուեալ էր այնպէս, այլ սկիզբն վառման լուսոյ սուրբ Գերեզմանին միշտ և հանապազօր ի չաւուր շաբաթու լինէր ի մետասան ժամու աւուրն։

ռացրին հայերին, հռոմներին, ասորիներին և վրացիներին։ Բայց երբ ֆրանկներն ականատես եղան իրենց պախարակող այդ սարսափելի նշանին, Երուսաղեմի վանքերի սպասավորությունից հեռացրին կանանց և յուրաքանչյուր ազգի թույլ տվեցին իր վանքում սպասավորել։ Հավատացյալների հինգ ազգ ահա սկսեց աղոթել, և աստված ականջ դրեց նրանց աղոթքներին։ Աստծո սուրբ Գերեզմանի կանթեղը վառվեց կիրակի օրը, մի բան, որ երբևիցե տեղի չէր ունեցել. սուրբ Գերեզմանի լույսը վառվում էր միշտ և հանապազ շաբաթ օրը, օրվա տասնմեկերորդ ժամին։

[ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ]

Ի յամին հինգհարիւրերորդի և չիսներորդի ի գիրս այս ժողովեցաք զգործ ժամանակաց հարիւր և չիսնից ամաց և յայսմ տեղւոջ լռեալ դադարեցաք ի յարուեստաւոր քննութենէս մերմէ, վասն զի այլոց ոմանց թողաք զայս մարտ մտաց և պայքարումն խորհրդոց, և մեր յետ ելանելով տեղի տալով հանճարեղացն և իմաստուն արուեստաւոր քննողաց, ըստ բանի սրբոյն առաքելոյն Պօղոսի, որ ասէ. «Եթէ ոք յատենի ելցէ, առաջինն լռեսցէ», և այս նովաւ ի հայրապետութեանն տանն Հայոց Տեառն Գրիգորիսի և Տեառն Բարսղի, յորժամ եղև սկիզբն առաջին երկրապատմութեանս: Եւ էր ի հայրապետութեանն Հոռոմոց՝ որ ի Կոստանդնուպօլիս՝ Նիկոլայ և ի հայրապետութեանն Անտիոքայ՝ Յովհաննու և ի հայրապետութեանն Երուսաղէմայ՝ Սիմէօնի, և հայրապետութեանն Աղէքսանդրու՝ Յովհաննու, և ի հայրապետութեան տանն Ասորւոց՝ Սթեփանոսի. և ի յԱդամայ էին ամք ժամանակաց վեց հազար և վեց հարիւր և տասն: Եւ արդ զամս տասն ոչինչ արարաք հոգս վասն այս ժամանակագրութեանցս և թողեալ էաք ի բացեայ զարուեստ գրչութեանցս. և տեսանելով մեր հանապազօր զաստուածասաստ բարկութիւնս հեղեալ ի վերայ քրիստոնէից, և ամչամէ անկեալ և գլորեալ լինէր զօրութիւն զօրաց հաւատացելոցն, և տեսաք զի ոչ ոք ունէր ի մտի զայս խնդրել կամ ի գիրս հաւաքել, զի ապագայիցն յիշատակ լիցի այս կատարածս և նեղութիւնս առ բարի ժամանակն, յորժամ տացէ Տէր Աստուած զխոստացեալսն յետին ժամանակին, յորժամ տացէ Աստուած հաւատացելոց զժամանակն՝ որ լի իսկ իցէ ամենայն ուրախութեամբ, և ապա մեր յառաջ հիւեալ յայնժամ բազում ուրախութեամբ որպէս թէ յԱստուծոյ այս հրամայեցաւ ինձ՝ զայս այսպէս ի գիր հաւաքել և ապագայիցն թողուլ զայս յիշատակս. և թէպէտ և ոչ է սա հոգևոր հմտութեամբ զարդարեալ կամ արուեստ հոգևոր կամ շաւիղս առաքինութեան ինչ, այլ զխրատն Տեառն, զոր վասն մեղաց ազգի ազգի յանդգնօք ի բարկութիւն շարժեցաք զՏէր Աստուած ի վերայ մեր և ի նմանէ առաք զխրատս զայս Գաւազանաւն Նորա:

[ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ]

550 թվականին այս գրքում ի մի բերելով հարյուր հիսուն տարիների ընթացքում տեղի ունեցած դեպքերի [պատմությունը], դադրեցրինք մեր մասնագիտական քննությունը և մտավոր այդ աշխատանքն ու գործը գիտուն և իմաստուն մասնագետ-զննողներին թողեցինք, համաձայն սուրբ առաքյալ Պողոսի խոսքերի, թե՝ «Եթե մեկը ատյան բարձրանա, նախորդը թող լռի»։ Վերոհիշյալ շարադրանքը մենք կատարեցինք հայոց հայրապետներ տեր Գրիգորիսի և տեր Բարսեղի օրոք, Կոստանդնուպոլսի հռոմոց պատրիարք Նիկոլայի, Անտիոքի պատրիարք Հովհաննեսի, Երուսաղեմի պատրիարք Սիմեոնի, Ալեքսանդրիայի պատրիարք Հովհաննեսի, Ասորոց պատրիարք Աթանասի օրոք։ Ադամից անցել էր վեց հազար վեց հարյուր և տաս տարի[365]։ Դրանից հետո տաս տարի այդ ժամանակագրության վրա ոչ մի գործ չարեցինք [հրաժարվելով] գրչության արվեստից։ Բայց տեսնելով, թե ինչպես աստվածասաստ բարկությունը անվերջ թափվում է քրիստոնյաների գլխին, ինչպես հավատացյալների ռազմական կարողությունը գնալով անկում է ապրում և կործանվում, տեսնելով, որ ոչ ոք մտադիր չէ [պատմություն] հետազոտել և գրի առնել, որ ապագա սերունդները չմոռանան այդ կործանման ու դժբախտությունների մասին՝ երբ լավ ժամանակներ գան, երբ աստված հետին ժամանակներում հավատացյալներին իր խոստացածը տա, պարգևի բերկրալի օրեր, ահա, ես մեծ ուրախությամբ, կարծես աստծո հրամանով ձեռնարկեցի, գրի առա և ապագա սերուններին հիշատակ թողեցի։ Թեև այս [շարադրանքը] չի փայլում հոգևոր հմտությամբ, այն ոչ հոգևոր արվեստ է և ոչ էլ ինչ-որ առաքինության շավիղ, այնուամենայնիվ, [ցույց է տալիս] այն նեղությունները, որ մեր ղանաղան մեղքերի պատճառով զայրացած տեր աստվածը իր գավազանով հասցրեց մեզ։

Եւ արդ պարտ և արժան է ոչ մոռանալ զսա որք կենդանիքս են ժամանակիս, այլ գրել և յիշատակել զսա ծնանելոցն, եթէ այս է մեղաց պտուղն, զոր ցանեցին հարքն մեր և եւթնապատիկ ժողովեցին. և վասն այսորիկ ես Մատթէոս՝ որ անարժանս եմ ողորմութեանն Աստուծոյ, զամս բաղումս քաջաջան քննութեամբ կացի և արիաբար մտօք ի քաղաքս Միջագետաց յՈւռհա ժողովեալ գրեցաք մինչև ցայս վայր, և զամաց երեսնից դեռ ևս առաջի կայ ի գրի հաւաքել։ Եւ արդ ահա այս վարդապետաց և կորովի գիտնականաց էր գործ և ոչ մերում տկարութեանցս և կամ սակաւ գիտութեանցս, բայց այս սովորութիւն է Աստուծոյ, զի ի տկարաց և ի նուազից գործ ինչ պիտանացու պահանջէ. որպէս տեսանեմք զերամս մեղուացն և զարմանամք ընդ դասապետութիւնսն նոցա, եթէ ո՛րպէս յոչինչ և ի թեթև մարմնոյն ամենայն որդիք մարդկան յագենան քաղցրութեամբն նոցա և ի պէտս սրբոց մատչին գործքն նոցա, և առաջի նոցա և առաջի թագաւորաց փառաւորի. և կամ մեռեալ որդն, որ զայ և կենդանանայ և վաստակօք իւրովք ի գոյնս գոյնս զարդարէ զթագաւորս և զիշխանս, և ամենայն եկեղեցիք նովաւ հարստանան պէսպէս զարդարանօք։ Այսպէս և տկարութիւնս մեր համարձակութիւն էառ և առաջի հռետորաց և իմաստնոց հղօրաց և խորին հանճարեղաց և քաջակիրթ քննողաց խօսեցաք զայս և յանձին արարաք զմատենագրութիւնս մեր նոցա, վասն զի արկցեն ի բովս և քննութիւն արասցեն, և մեք ոչ ընդդիմանամք, վասն զի մերս ընդդէմ գիտնականաց ոչ ունի դիմագրութիւնս։ Որպէս և այն թեթև թռչունն, թէպէտ և ձայնովն ընդդիմանայ բազմաց, այլ մարմնովն տկարանայ, այն որ կոչի ծիծառն. սակայն նա զմերս ունի նմանութիւն առ զարմանալի գործ բնութեանն իւրոյ, թէ զիարդ յոչնչոյ բնակութիւնս կազմէ և ի բարձունս առանց հիման կառուցանէ, շաղախաբեր և շիղաբեր վաստակս հնարով հնարէ և ամրութիւնս պնդագոյնս հաստատէ և որդւոց իւրոց զնա տացէ ժառանգութիւնս, զոր և այլ յաղթանդամ թռչնոց անհնար է զայն գործել, արծուոյ ասեմ և նմանեաց նորա, վասն զի զայլ քաջութիւնս մեծաւ կարողութեամբ առնեն հաւքն քաջաթռիչքն, բայց զայն, զոր գործեաց թեթև թռչունն՝ զայն ոչ կարեն առնել։ Արդ այսպիսի օրինակաւս հանճարեղք և գիտնականք զամենայն քննութիւնս հին և նոր Կտակարանացն Աստուծոյ կարող են առնել և ի յայտ բերել ահաւոր և լուսաւոր քննութեամբ, բայց զայս հաւատոտապէս ասացից և առանց երկբայութեան, վասն այս՝ որ ի մէնջ քննեալ գծագրեցաւ, անհնար է եթէ այլ կարող լինի զայս գտանել և կամ հաւաքումն առնել միահամուռն աղգաց և թագաւորաց, հայրապետաց և իշխանաց զամենայն ժամանակս թուականութեամբ ի գիր հաւաքել, վասն զի վճարեալ

Արդ, անհրաժեշտ է և պատշաճ, որ ժամանակակիցները չմոռանան դա, գրի առնեն և հիշատակ թողնեն եկող սերունդներին, որ նրանք իմանան, թե ահա սա՛ է մեր հայրերի ցանած և յոթնապատիկը քաղած մեղքերի պտուղը։ Ահա, դրա համար ես՝ աստծո ողորմածությանն անարժան Մաշթեոսս, բազմամյա տքնաջան պրպտումներով Միջագետքի Ուռհա քաղաքում մտավոր անխոնջ աշխատանքով մինչև այստեղ շարադրեցի։ Մեզ մնում է գրի առնել հաջորդ երեսուն տարվա[366] [պատմությունը]։ Դա վարդապետների և հմուտ գիտնականների գործ էր, և ոչ իմ, տկարիս և սակավագետիս, բայց աստված սովորություն ունի տկարներից և նվաստներից պահանջել կատարելու պիտանի ինչ-որ գործ։ Տեսնելով մեղուների երամները, մենք հիանում ենք նրանց դասապետությամբ, այն բանով, թե ինչպես բոլոր մարդիկ ըմբոշխնում են չնչին և թեթև մարմնի տեր [միջատների ստեղծած] քաղցրությունը, այն նույնիսկ սրբերին է պետք գալիս[367] և ճոխացնում նրանց ու թագավորների սեղանները։ Մեռած որդը[368], վերակենդանանալով, իր աշխատանքի արդյունքով զարդարում է թագավորներին և իշխաններին, բոլոր եկեղեցիները ճոխանում են պեսպես զարդերով։ Ահա, նույն ձևով և ես, տկարս, հանդգնեցի հզոր հռետորներին ու իմաստուններին, խորաթափանց դիտուններին ու քաջակիրթ հետազոտողներին ասել դա, հանձն առա նրանց ներկայացնել իմ երկասիրությունը, որպեսզի քննության քուրայից անցկացնեն. մենք դեմ չենք դրան և ի վիճակի էլ չենք նրանց ընդդիմակայել։ Միծեռնակ կոչվող փոքրիկ թռչունը, ճիշտ է, իր ծլվլոցով շատերի դեմ է ուզում պայքարած լինել, սակայն, այնուամենայնիվ, մարմնով տկար է։ Բայց նա իր զարմանալի բնությամբ մեզ է հիշեցնում. ինչպե՞ս է նա ոչնչից, շյուղով և իր պատրաստած շաղախով բարձր տեղում, առանց որևէ հիմքի, ամրագույն բույն շինում, որը և ժառանգություն է թողնում իր ձագերին։ Մյուս, հաղթամարմին թռչունները չեն կարող այդ բանն անել, ես նկատի ունեմ արծվին և նրա նմաններին։ Արագաթռիչ այլ հավքերը, ճիշտ է, կարող են ուրիշ համարձակ բաներ գործել, բայց ի վիճակի չեն անել այն, ինչ այդ փոքրիկ թռչունը։ Ահա նույն ձևով և ճարտարամիտ ու քաջագիտակ մարդիկ կարող են համոզիչ և լուսավոր քննությամբ հետազոտել աստծո Հին ու Նոր Կտակարանները, բայց ճշմարիտ, առանց վարանելու կարող եմ ասել, ուրիշը չէր կարող անել այն, ինչ մենք քննության ենթարկեցինք և շարադրեցինք, չէր կարող գտնել, ի մի բերել բոլոր ժողովուրդների, թագավորների, հայրապետների և իշխանների մասին բովանդակ նյութը, ժամանակագրական հերթականությամբ շարադրել այն,

հատան առաջինքն, որք ականատեսք էին ամենայն ժամանակացն։ Արդ զայս ոչ ոք է կարող առնել, զոր ինչ մեք արարաք, զի զոր ինչ գրեցաք՝ գրեցաւ, զի զամս հնդետասան ունէաք զայս գործ քննութեանս, զոր ի մատենագրութիւնս ընթերցեալ գտանէաք զթուականսն ժամանակացն ի յիշատակարանս գրոցն և ընդ ծերսն ի քննութիւն մտեալ դեգերէաք անդադար քննութեամբ՝ և հաւաքեալ գրեցաք ի գիրս զայս ինչ։

Եւ արդ ես Մատթէոս այսու եղէ ցանկասէր և կամեցայ դառնալ ընդ նոյն բնաբան պողոտայն, զոր օրինակ ոք ի բազում ժամանակաց շրջեալ ի վերայ համատարած մեծի ծովուն Ովկիանոսի և ցնորեալ բազում նեղութեամբ՝ և զկնի ալեկոծութեանն երթիցէ ի տուն իւր խաղաղութեամբ և զմտաւ ածեալ յիշեսցէ զսէր բազում շահիցն, յայնժամ ոչինչ ի յայնցեալ նեղութիւնսն մտաբերէ և առ ոչինչ համարելով զամենայն ինչսն, զոր ի ծովուն նաւակոծեցաւ, այլ փութայ մեծաւ փափաղանօք դառնալ ի նոյն ծովագնացութիւնս։ Այսպիսի օրինակաւս և մեք զարձուք ի մեր թողեալ կէտ գրոյն. և գտաք զբնաբանն զառաջինն, զոր թողեալ էաք, յորժամ էաք ի յամս ՇԾ։ Եւ արդ սկսաք ասել և զայլ ևս զամաց քսան և հնգից և երեսուն՝ լիցի վճարումն գրոցս, վասն զի աճեաց թուականութիւնս Հայոց բազում նեղութեամբ. և ի նոյն հայրապետութեան Տեառն Գրիգորիսի և ի թագաւորութեանն Յունաց Ալէքսին զարձաք յօժարական մտօք և սկսաք առ ի պատմել զկատարածն և զնեղութիւնս չար ժամանակիս այսորիկ։ Եւ ոչ արարաք զսա ի պէտս սնափառութեանց՝ որպէս կարծել ոմանց, այլ ի յիշատակս և ի յաղդումն առ յապայ ժամանակին. և ոչինչ զմտաւ ածի զտկարութիւն մտաց և զանկարողութիւն ի գիտութենէ հմտութեանց, այլ որք կատարեալքն են գիտութեամբ հին և նոր Կտակարանացն Աստուծոյ, նոքա են կարողք քերական արուեստիւք զբանսն սրբել և զամենայն սխալանս բանիցն պայծառացուցանել ըստ աստուածատուր շնորհացն, որ տուաւ նոցա. իսկ մեք ըստ տխմար գիտութեանս մերոյ զայս քննեալ մաքրութեամբ և գրեցաք զբազում մատենագրութիւնս, զորս գտաք վասն նեղութեանց ժամանակացս այսորիկ, զոր ի տեղիս տեղիս գրեալ էին և թողեալ էին զայն իւրեանց յիշատակ. զոր և մեր ժողովեալ զայն ամենայն բազում հոգեբարձութեամբ. և լսեցաք յայլոց ոմանց պատուականաց, որք հասու էին ժամանակացն և նեղութեանցն և անսխալ հասեալ էին ի վերայ ժամանակացն և թուականացն, և ընդ ծերս ունէաք խօսակարգութիւնս և քննութիւնս, որք տեղեակք էին անցեալ ամացն ըստ բանի մարգարէին՝ որ ասէ. «Հարցջիր դու ցհարս՝ և ասասցեն քեզ,

քանի որ կենդանի չեն, չկան նրանք, ովքեր դեպքերի ականատեսներն էին։ Այն, ինչ մենք արեցինք, ոչ ոք ի վիճակի չէր անել, և ինչ որ դրեցինք, դա է որ կա։ Մենք տասնհինգ տարի է, ինչ աշխատում ենք այս հետազոտության վրա. գրականությունն ընթերցելով նրանց հիշատակարաններում էինք գտնում դեպքերի ժամանակը, ծերերին էինք հարցուփորձ անում և [նյութը] հավաքելով շարադրեցինք այս գիրքը։

Ես՝ Մատթեոս, կամեցա նորից ձեռնարկել [այս գործին]՝ վերադառնալ նույն ճանապարհին։ Ինչպես երկար տարիներ համատարած մեծ Օվկիանոս ծովի վրա նավարկած և բազում փորձություններից ցնորված մարդը, որ ալեկոծությունից հետո ողջ-առողջ իր տունն է վերադառնում, բայց վերհիշելով [ստացած] մեծ շահը, այլևս ոչինչ չի մտաբերում անցյալի փորձություններից և անտեսելով ծովում իր նավաբեկ լինելը, մեծ սիրով նորից է դիմում ծովագնացության, այդ նույն ձևով, ահա, և մենք վերադարձանք մեր ընդհատված շարադրանքի այն կետին և գտանք նախորդ գլխի այն տեղը, ուր կանգ էինք առել 550 թվականի [դեպքերի] վրա։ Մենք սկսեցինք շարադրել ևս քսանհինգ տարվա[369] դեպքերը։ Եվ գիրքս կավարտվի երեսուն տարվա շրջանի պատմության [շարադրմամբ], քանզի հայոց թվականն աճեց՝ [ժողովրդի համար] բազում նեղություններով[370]։ Հենց տեր Գրիգորիսի կաթողիկոսության և հունաց կայսր Ալեքսի թագավորության ժամանակ մենք կամովին նորից գործի լծվեցինք և սկսեցինք պատմել այս տխուր ժամանակներում տեղի ունեցած ավերածությունների և նեղությունների մասին։ Այդ գործին մեզ մղողը սնափառությունը չէր, ինչպես կարծում են ոմանք, այլ գալիք [սերունդներին] հիշատակ թողնելու և նրանց խրատելու մտադրությունը։ Ես ուշադրություն չդարձրեցի իմ մտավոր կարողությունների տկարության, իմ գիտելիքների պակասի վրա։ Ովքեր քաջագիտակ են աստծո Հին և Նոր Կտակարաններին, միայն նրանք են ի վիճակի քերականական արվեստի [օգնությամբ] սրբագրել և ուղղել մեր սխալները՝ իրենց ունեցած աստվածատուր շնորհքով, իսկ մենք, ինչքան որ թույլ էին տալիս մեր թույլ գիտելիքները, բարեխղճորեն ուսումնասիրեցինք և օգտագործեցինք տարբեր տեղերում գրված և [հեղինակների] կողմից իրենց համար հիշատակ թողած այս նեղ ժամանակների վերաբերյալ բազում գրքերը։ Մենք այդ բոլորը ամենայն խրնամքով հավաքեցինք։ Մենք ունկնդրեցինք նաև դեպքերին ու նեղություններին տեղյակ պատկառելի որոշ մարդկանց, նրանց, ովքեր քաջատեղյակ էին անցուդարձերին ու թվականներին, հարցուփորձ արեցինք նաև ծերերին, ովքեր գիտեին անցյալ տարիներում կատարված [դեպքերի] մասին, համաձայն մարգարեի խոսքի, թե՝ «Հարցրո՛ւ դու

ընդ ծերսն՝ և պատմեսցեն»։ Արդ այսպիսի օրինակաւս անհանգիստ եղեալ մեզ և զամենայն հոգս զբաղանաց թողեալ էաք և զամենայն ցանկութիւնս արհամարհեալ էաք և միշտ և հանապազ զայս ունէաք պայքարումն մտաց, զոր դարձեալ սկսաք ի գործ երկրապատմութեանս ըստ երանելի վարդապետին Գրիգորի Նիւսացւոյ, որ ասէր. «Դարձեալ ես ծերունիս յասպարիսի»։ Զորս և մեր մնացեալ այլոց ոմանց թողաք զայս քննել, և ահա տեսանէաք զամենեսեան հրաժարեալ ի պատմագրութենէ աստի. և տեսանէաք մեք, զի ժամանակս գնալով գնայր, և հոսմունս և ծորմունս և զպակասութիւնն մեզ ցուցանէին և զոչ կալ դադարման մարդկութեան ի վերայ երկրի, այլ զփոփոխմունս յաստեացս ի հանդերձեալսն ի յայտ բերէին. վասն զի անցաւոր են ամքս և ժամանակք, այսպէս անցաւորք են ծնունդք նորա, և զոր օրինակ մշտնջենաւորք են հանդերձեալքն, այսպէս և անկատարածք են ծնունդք նորա. և երանի՝ որք հանդիպեսցին այնմ ուրախութեանցն, և երանի՝ որք կերիցեն ճաշ յարքայութեանն Աստուծոյ։

Յայսմ ամի, յորժամ էր թուականն Հայոց ՇՄ, դարձաւ կոմսն ի Փռանգաց, որ ասի Զնճիլ, վասն զի յորժամ առին ի Թուրքաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ, առեալ զղէնն Քրիստոսի՝ գնաց յաշխարհն Փռանգաց. և յորժամ լուան վասն նորա, թէ ղէնն Քրիստոսի ընդ նմա է, դղրդեալ եղեն ամենայն արարածք զհետ նորա։ Եւ յայսմ ամի դարձաւ և գայր ի վերայ Տրապօլսայ քաղաքին, և զօրք պատերազմօղք ընդ նմա տասն բիւր, և եկեալ ի Կոստանդնուպօլիս. և թագաւորն Ալէքս բաղում ընծայս պարգևէր նմա և անցուցանէր զնոսա ընդ Ովկիանոս։ Բայց գործ Յուդայի գործեաց ընդ նոսա, զի զամենայն երկիրն առաջի նոցա այրել հրամայեաց՝ ընդ որ անցանէին զօրքն Փռանգաց, և ընդ անմարդաբնակ վայրս տանէին զնոսա. և արգելեաց զհացն ի նոցանէ և արար սովալլուկ զնոսա, որք անճարեալ զերիվարսն ուտէին։ Եւ առաքեաց զզօրսն Թուրքաց և արար ահագին ժողովս ի վերայ նոցա. և եկեալ սուլտանն Խլիճ-Ասլան և սաստիկ պատերազմ յարոյց ի վերայ նոցա ի սահմանս քաղաքին Նիկիա և արար անթիւ կոտորածս զնոսա արս իբրև հարիւր հազար. և Զնճիլն երեք հարիւր արամբք եղև փախստական և անկանէր յԱնտիոք քաղաք. և այլ ամենայն բազմութիւն զօրացն Փռանգաց սրով անցան, կանայք և որդիք նոցա գնացին ի Պարսիկս ի գերութիւն։ Այս այսպէս գործեցաւ վասն մեղաց, զի առհասարակ սիրեցին զմեղաց ճանապարհն և զԱստուծոյն ոչ ընկալան։ Եւ յայնժամ Տանգրի կոմսն Անտիոքայ բռնեաց զկոմսն Փռանգաց Զնճիլն և երկաթի կապանօք արգելեաց զնոսա ի քաղաքն, որ ասի Սարուանդաւի. և զկնի աւուրց Փռանգաց պատրիարքն, որ յԱնտիոք՝ և այլ քահանայք բարեխօսեցին առ

հայրերին, և կասեն քեզ, հարցրո՛ւ ծերերին, և կպատմեն քեզ»[871]: Ահա, այդպես մենք գործի լծվեցինք, թողնելով ամեն մի զբաղմունք, արհամարհելով ամեն մի զվարճություն. մեր միտքը շարունակ կլանված էր նրանով, որ նորից ենք սկսել շարադրել այս պատմությունը, համաձայն երանելի Գրիգոր վարդապետ Նյուսացու ասածի, թե՝ «ես՝ ծերունիս, նորից ասպարեզ ելա»: Մենք հրաժարվել էինք այդ մտքից, ուրիշներին թողնելով [պատմության] ուսումնասիրությունը, բայց տեսանք, որ ոչ ոք չի ձեռնարկում դրան, և ժամանակն անցնում գնում է: Երաշտը, հեղեղը, սովը մատնացույց էին անում մեզ, թե երկրիս վրա մարդիկ հանգիստ չեն գտնելու, այլ այստեղից գնալու են հանդերձյալ աշխարհը: Քանզի [ինչպես] անցավոր են տարիներն ու ժամանակը, անցավոր են և նրա ստեղծածները, և ինչպես մշտնջենավոր են հանդերձյալները, անվախճան են և [մարդկային] սերունդները: Երանի նրանց, ովքեր մասնակից կլինեն [հանդերձյալ] ուրախություններին, երանի նրանց, ովքեր կճաշեն աստծո արքայության մեջ:

Այդ նույն տարին՝ հայոց 550 թվականին, ֆրանկների [երկրից] վերադարձավ Զնճիլ կոմսը. երուսաղեմ սուրբ քաղաքը թուրքերի ձեռքից գրավելուց հետո [Զնճիլը], վերցնելով Քրիստոսի զենքը, գնացել էր ֆրանկների երկիրը: Լսելով, որ Քրիստոսի զենքը նրա մոտ է, նրա ետևից գնացել էր նաև ողջ ժողովուրդը: Ահա, այդ տարին նա վերադարձավ և գնաց Տրապոլիս քաղաքի վրա, իր հետ ունենալով հարյուր հազար կռվող մարտիկներ: Հասնելով Կոստանդնուպոլիս, Ալեքս կայսրը նրան բազմաթիվ նվերներ տվեց և անցկացրեց Օվկիանոսով: Բայց [Ալեքսը] նրանց հետ վարվեց ինչպես Հուդան: Նա հրամայեց ֆրանկների ճանապարհին ընկած ամբողջ երկիրը կրակի տալ. նրանց առաջնորդում էին անմարդաբնակ վայրերի միջով: [Կայսրը] նրանց հաց չէր մատակարարում, սովալլուկ արեց նրանց, և նրանք ճարահատյալ սկսեցին ձիերին ուտել: [Ալեքսը] դիմեց թուրքերի զորքերին և [ֆրանկների] դեմ հանեց [թուրքերի] հսկայական [զորք]: Նրանց վրա հարձակվեց սուլթան Խլիճ Ասլանը և, Նիկիա քաղաքի սահմաններում կատաղի մարտ տալով, կոտորեց շուրջ հարյուր հազար հոգի: Զնճիլը երեք հարյուր հոգով փախուստի դիմեց և իրեն գցեց Անտիոք քաղաքը: Այլ բաղում ֆրանկ զինվորներ ևս սրի քաշվեցին, իսկ նրանց կանայք և երեխաները գերի տարվեցին Պարսկաստան: Դրա պատճառը իրենց մեղքերն էին, որովհետև սիրեցին մեղաց ճանապարհը, մերժելով աստծունը: Այն ժամանակ Անտիոքի կոմս Տանգրին ձերբակալեց ֆրանկների կոմս Զնճիլին և շղթայակապ արգելափակեց Սարվանդավի[872] կոչվող քաղաքում: Օրեր անց, Անտիոքի ֆրանկ պատրիարքը, ինչպես և

Տանգրի, և արձակեաց զնա։ Եւ գնաց Զնճիլն և արար ժողով ի վերայ Տրապօլսոյ քաղաքին և մեծաւ սղարով նստաւ ի վերայ նորա և շինեաց քաղաք ի վերայ նորա։

Ի սոյն ժամանակիս գայր բազում զօրօք մեծ կոմսն Փռանգաց, որ ասի Պետևին՝ և խաղայր գայր ընդ աշխարհն Հռոմայեցւոց և Յունաց և երեսուն բիւր հեծելոց ընդ նմա, և հասանէր մեծաւ զօրութեամբ ի Կոստանդնուպօլիս և մեծաւ զօրութեամբ և հպարտութեամբ խօսէր ընդ թագաւորին Յունաց և եպարքոս կոչէր զնա և ոչ անուն թագաւորի ասէր նմա, մանուկ գոլով իբրև ամաց քսանից։ Իսկ թագաւորն Ալէքս և ամենայն տունն Յունաց ահաբեկ լինէին ի նմանէ. և յայնժամ թագաւորն Ալէքսն հանեալ առ կոմսն Պետևին զամենայն իշխանսն Յունաց և մեծաւ աղաչանօք ած զնա թագաւորն ի Կոստանդնուպօլիս, և արար թագաւորն նմա մեծ ընդունելութիւն և տուրս անչափ զանձուց պարգևէր նմա և պօտոմն մեծածախք արար առաջի նորա և բազում ծախօք անցուցանէր զնա ի մեծն Ովկիանոս յաշխարհն Դամրաց՝ և տայր ի զօրացն Յունաց ղկնի նորա։ Եւ յայսմ վայրի սկիզբն արար նենգութեան թագաւորն Յունաց և հրամայեաց զօրապետաց իւրոց, զի ընդ անմարդաբնակ տեղիս տարցեն զզօրսն Փռանգաց. և յանջրդի վայրս կացուցանէին զնոսա զաւուրս հնգետասանս, և ոչինչ գտանէին, բայց միայն անապատ չոր և դժար վայրս լերանց. և ջուր տեղեացն սպիտակ որպէս զկրաջուր և էր աղի։ Եւ հրամայեաց թագաւորն Ալէքսն կիր խառնել ի հացն և տալ զայն յուտել նոցա, և լինէր այն մեղք մեծամեծք առաջի Աստուծոյ. և այնպէս սովեալ և նքոզեալ լինէին զաւուրս բազումս, և անկանէր հիւանդութիւն ի զօրսն Փռանգաց։ Զայս այսպէս գործէր թագաւորն Յունաց, զի ոխացեալ էր ընդ նոսա վասն առաջին երդմանն ուրացութեան նոցա, զոր երդուան նմա և ոչ արարին։ Եւ այս յԱստուծոյ եղև, վասն զի ի զրկանս և յանիրաւութիւնս և յաւերս անօրէնս վարեցան ի վերայ քրիստոնէից, վասն այսորիկ թոյլ ետ Աստուած ազգաց անօրինացն գալ ի վերայ նոցա և առնել զնոսա պատուհասակոծս վասն մեղաց։

Յայնժամ սուլտանն արևմտից Խլիճ-Ասլանն լուեալ զգալ զօրացն Փռանգաց, գրեաց ի Նիկիսաուն յամիրայն Դամիշման և յայլ ամիրայսն և ահագին բազմութեամբ գայր ի վերայ զօրացն Փռանգաց. և հանդիպեցան միմեանց ի դաշտն, որ կոչի Օլօսի, և արարին պատերազմ ահագին զմեծ ժամ աւուրն, և լցաւ դաշտն արեամբ առհասարակ։ Եւ անճարեալ զօրքն Փռանգաց ի յօտար աշխարհին՝ և ոչ գտանէին զելս իրացն, և գումարեալ դեգերէին որպէս զանասուն. և էր օրն այն օր

ուրիշ քահանաներ, միջնորդեցին Տանգրիին, և նա [Զնճիլին] ազատ արձակեց։ Զնճիլը զորք հավաքեց և գնաց Տրապոլիս քաղաքի վրա, սաստիկ պաշարման ենթարկեց այն և նրանից վերև քաղաք շինեց[378]։

Այդ ժամանակ ֆրանկների մեծ կոմսը, որին Պետևին[374] են ասում, մեծաթիվ զորքով՝ երեք հարյուր հազար հեծյալով, շարժվեց եկավ Հռոմայեցիների և հույների երկրի վրա։ Նա մեծ ուժով մոտեցավ Կոստանդնուպոլսին և, լինելով մոտ քսան տարեկան մի կտրիճ, սկսեց ինքնավստահությամբ ու հպարտությամբ խոսել հունաց կայսեր հետ, որին ոչ թե կայսր, այլ եպարքոս[375] էր անվանում։ Նա Ալեքս կայսեր և հունաց ողջ երկիրը ահ ու դողի մեջ գցեց։ Ալեքս կայսրը Պետևին կոմսի մոտ ուղարկեց հունաց բոլոր իշխաններին և մեծ թախանձանքով նրան Կոստանդնուպոլիս հրավիրեց, փառավորապես ընդունեց և հսկայական գանձեր նվիրեց։ Նրա պատվին ձիարշավարանում[376] մեծածախք [ներկայացումներ] կազմակերպեց, որից հետո նրան մեծ Օվկիանոսով անցկացրեց Դամիրք, տալով նաև հույն զինվորներ։ Բայց հենց այստեղ էր, որ սկսվեց հունաց կայսեր նենգությունը. նա հրաման տվեց իր զորահրամանատարներին՝ ֆրանկների զորքերին առաջնորդել անմարդաբնակ վայրերով։ Նրանք ֆրանկներին տասնհինգ օր անջրդի վայրերում թողեցին, որոնք բացի անապատից և լեռնային դժվարանցանելի վայրերից այլ բան չէին տեսնում։ Այդտեղի ջրերը սպիտակ էին կրաջրի նման և աղի։ Ալեքս կայսրը կարգադրեց հացի մեջ կիր խառնել և տալ ֆրանկներին ուտելու, մի բան, որ աստծո նկատմամբ արված մեծ մեղսագործություն էր։ Ահա ֆրանկների զինվորները երկար օրեր այդպես սովի մեջ ապրեցին և ուժասպառ եղան, նրանց մեջ հիվանդություն տարածվեց։ Հունաց կայսրը այդպես վարվեց, քանզի ոխ էր կապել նրանց դեմ. պատճառն անցյալում նրանց գործած ուխտադրժությունն էր։ Բայց դա, [վերջին հաշվով], աստծո գործն էր, որովհետև [ֆրանկներն] անողոքաբար կեղեքում էին քրիստոնյաներին, զրկանքների և ավերի էին ենթարկում նրանց, ահա դա էր պատճառը, որ աստված թույլ տվեց անհավատներին հարձակվել նրանց վրա և գործած մեղքերի համար պատուհասել նրանց։

Այն ժամանակ արևմուտքի սուլթան Խլիճ Ասլանը, տեղեկանալով ֆրանկների զորքի գալստյան մասին, գրեց Նիքսար, Դանիշման ամիրային և ուրիշ ամիրաների ու հսկայական զորքով շարժվեց ֆրանկների զորքերի վրա։ Նրանք միմյանց հանդիպեցին Ավլոս կոչվող դաշտում և կատաղի ճակատամարտ տվեցին, որը տևեց օրվա մեծ մասը։ Դաշտն արյամբ ողողվեց։ Ֆրանկների հուսալքված զինվորները, օտարության մեջ այլ ելք չգտնելով, խմբերով թափառում էին անասունների պես։

մեծ և սոսկալի ի վերայ քրիստոնէից. և յայնժամ փախեաւ զօրավարն Յունաց։ Եւ տեսեալ Պետևին զբեկումն զօրաց իւրոց՝ ելեալ ի լեառն մի, և այլազգին պատեալ լինէր զստորոտով լերինն. և ահա անդ էր տեսանել զճայթմունս աղեղանցն և զթնդմունս երիվարացն և զդողումն լերանցն. և ետես Պետևին զկոտորումն զօրաց իւրոց, լայր դառնապէս. և ի սաստկանալ պատերազմին անճարեալ յամենայն կողմանց՝ փախեալ լինէր չորս հարիւր ձիաւորով, և զայլ զօրսն առհասարակ կոտորեցին բիւրս երեսուն։ Եւ հասանէր կոմսն Փռանգաց Պետևին ի քաղաքն Անտիոք, անկանէր առ Տանգրի և անտի յարուցեալ գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ։ Եւ զկնի աւուրց ինչ դարձաւ ի յաշխարհն Փռանգաց, ուստի եկն, և երդուեալ սաստկապէս, զի դարձցի ի վերայ Պարսից և արասցէ նոցա վրէժխնդրութիւնս և թագաւորին Յունաց, վասն զի լըցաւ ամենայն Պարսիկքն ի գերութենէն զօրացն Պետևինին կոմսին։

Յայսմ ամի շարժեալ ամենայն Եգիպտոս և զօրաժողով լեալ ահագին բազմութեամբ՝ և գան ի վերայ սուրբ քաղաքին Երուսաղէմի։ Յայնժամ թագաւոր Երուսաղէմայ Պաղտինն ելեալ սակաւ զօրօք ի պատերազմ ընդդէմ նոցա՝ և արարին ղզօրսն Փռանգաց փախստական. փախեաւ Պաղտինն և անկանէր յԵրուսաղէմ։ Եւ յայնմ աւուր սպանաւ կոմսն Տլքոյ Կուլել Սանձաւէլ. և թագաւորն Պաղտինն անկանէր ի Պալապաք քաղաք և անտի գնաց յԵրուսաղէմ։ Եւ այլազգիքն մեծաւ յաղթութեամբ դարձան ի քաղաքս իւրեանց յԱսկաղոն։

Դարձեալ ի թուականութեան Հայոց ՇՕԱ եղև շփոթումն մեծ և ահաւոր խառնակումն հաւատոյ, վասն զի ի սուրբ Զատկէն եղեն մոլորեալք տասն աղգ հաւատացելոց, և Հայք և Ասորիք միայն մնացին հաստատուն, իսկ Հռոմք և Փռանգք եղեն հետևողք չար սերմանցն, զոր սերմանեաց պիղծ հերետիկոսն Իռիոն, որ արկանէր զտօմարն ի յապրիլի հինգն և զլրումն լուսնին հանդիպեցուցանէր ի տօնն Ղազարու և յաւուր շաբաթու, զոր Հայք և Ասորիք և Ebրայեցիք արկանէին ի վեց յապրիլի, որ հանդիպեցուցանէր ի տօնի Ծառազարդարին։ Արդ զայս տումարս պատճենիս թիւրեալ խափանէր փիլիսոփայն Իռիտոն, որ էր այր Հռոմայեցի, վասն զի յորժամ շարագրեցին զտումար պատճենիցն ինն և տասնեկի բոլորին, զնա ի մօտ ոչ կոչեցին այլ դասք իմաստասիրացն. և յաղագս յաւորիկ մախացեալ նորա յոյժ ընդ նոսա և եկեալ գաղտ առեալ զգրեալսն՝ և զնա հինգ արար և զվերջինսն առաջին, որ հանապազ ածէ մոլորումն զատկաց յամեն իննսուն և հինգ ամ։ Եւ արդ այսպիսի պատճառանօք Յոյնք և Հռոմայեցիք մոլորեալք լինին յամենայն իննսուն և հինգ ամ։ Զայս այսպէս կարգադրեաց Իռիտոն յազգն Հռոմայեցւոց. վասն այսր պատճառի մեծ մաքառումն եղև ընդ

Այդ օրը քրիստոնյաների համար սարսափելի էր և ճակատագրական։ Այդ բոլորից փախավ և հունաց զորավարը։ Պետևինը, տեսնելով իր զորքի խորտակումը, բարձրացավ մի լեռ. այլազգիները շրջապատեցին լեռան ստորոտը։ Պետք էր տեսնել աղեղների շաչյունը, երիվարների իրարանցումը և լեռների սասանումը։ Պետևինը, տեսնելով իր զինվորների ջարդը, դառը ողբաց։ Պատերազմը թեժացավ, և [Պետևինը], ամեն կողմից հույսը կտրած, չորս հարյուր ձիավորով փախուստի դիմեց։ [Թուրքերը] մնացած զինվորներին՝ երեք հարյուր հազար հոգու, իսպառ ոչնչացրին։ Ֆրանկների կոմս Պետևինը հասավ Անտիոք քաղաքը՝ Տանգրիի մոտ, որտեղից էլ հեռանալով, գնաց Երուսաղեմ սուրբ քաղաքը։ Մի քանի օր անց նա վերադարձավ ֆրանկների երկիրը, որտեղից եկել էր, մեծ երդում տալով՝ վերադառնալ և պարսիկներից ու հունաց կայսրից վրեժ առնել, քանզի համայն Պարսկաստանը լցված էր Պետևին կոմսի գերի ընկած զինվորներով։

Այդ տարին ողջ Եգիպտոսում զորահավաք եղավ, և հսկայական բազմություն շարժվեց Երուսաղեմ սուրբ քաղաքի վրա։ Երուսաղեմի թագավոր Պաղտինը փոքրաթիվ զորքով ելավ նրանց դեմ պատերազմի։ [Եգիպտացիները] ֆրանկների զորքը փախուստի մատնեցին, փախավ և Պաղտինը ու իրեն գցեց Երուսաղեմ։ Այդ օրը սպանվեց Տլուքի կոմս Կուլելմ Սանձավելը[377]։ Պաղտին թագավորը գնաց Պալպաք[378] քաղաքը և այնտեղից էլ՝ Երուսաղեմ։ Այլազգիները մեծ հաղթությամբ վերադարձան իրենց քաղաքը՝ Ասկաղոն[379]։

Հայոց 551 թվականին [24 փետրվար 1102—23 փետրվար 1103 թ.] տեղի ունեցավ հավատքի մեծ և ահավոր շփոթում ու տակնուվրայություն. հավատացյալների տաս ազգ շփոթեցին սուրբ զատկի օրը[380]։ Հաստատուն մնացին միայն հայերն ու ասորիները, իսկ հռոմներն ու ֆրանկները հետևեցին պիղծ հերետիկոս Իրիոնի[380] ճանապարհին, որը զատիկը դնում է ապրիլի հինգին, լուսնի լրումը՝ Ղազարու տոնին, շաբաթ օրը։ Հայերը, ասորիներն ու եբրայեցիները այն դնում են ապրիլի վեցին, որ զուգադիպում է ծաղկազարդի տոնին։ Այս տոմարը խոտորեց և խափանեց հռոմայեցի փիլիսոփա Իրիոնը։ Երբ գիտունները կազմում էին տասնիննամյա բոլորակի տոմարական պատճենը, [Իրիոնին] չհրավիրեցին, և վերջինս, նրանցից վիրավորված, ծածուկ եկավ վերցրեց գրվածքը և վեցը հնգի փոխեց, իսկ վերջինը դարձրեց առաջին, որով և ամեն իննսունհինգ տարին մեկ անգամ զատկի [օրը] միշտ սխալ է ստացվում։ Ահա այդ պատճառով է, որ հույներն ու հռոմայեցիները ամեն իննսունհինգ տարին մեկ անգամ մոլորվում են. Իրիոնն այսպես կարգավորեց հռոմայեցիների [տոմարը]։ Ահա դա հույների

Յոյնք և ընդ Հայք. սակայն ազգն Փռանգաց ոչինչ ունէին հոգս շփոթանալ ընդ Հայք, բայց միայն Յոյնք ունէին մեծ վէճ և մաքառումն ընդ Հայք վասն սուրբ Զատկին: Եւ Անտիոք և ամենայն Կիւլիկիա և Ուռհա ունէին սաստիկ պատերազմ ընդ Յոյնք վասն հաւատոյ, զի ջանային դարձուցանել յիւրեանց անհաստատ տումարն զՀայք և այսպիսի ջանս և աշխատութիւնս հասուցանէին ազգիս Հայոց, և ոչ կարացին շարժել զնոսա: Սակայն Ասորիք, որ յՈւռհա էին, ահաբեկեալք լինէին, դարձան ի կողմն Յունաց և ուրացան զդաշինսն, զոր ունէին առ Հայք:

Եւ արդ յառաջագոյն եղև այսպիսի մոլորումն Յունաց ի սուրբ Զատիկն, և յերուսաղէմ ոչ լինէր վառումն կանթեղացն. և յայնժամ այլազգիքն զամենայն հաւատացեալս աղօթականացն սրով կոտորեալ ի յաւուրս վասլին և յամի ՆԾԵ թուականին: Եւ ահա յայսմ մատենադրութեանս եղև երկրորդ մոլորումն Յունաց: Յայնժամ դասք քահանայիցն, որք էին ի քաղաքն յՈւռհա, ազդ արարին թղթով Տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, որ բնակեալ էր ի Սև լեառն, ի յանուանի անապատն, որ կոչի Արիզի. և նա գրով ձեռին իւրոյ հաստատեաց զնոսա անշարժ կեալ ի հաւատս ուղղափառութեանն: Եւ էր պատճէն թղթոյն այսպէս՝ զոր գրեաց ի յՈւռհա:

«Քանզի ճշմարիտ սիրողացդ և դաւանողացդ սրբոյ Երրորդութեանն, քահանայիցդ և իշխանացդ և այլ ամենայն հաւատացեալ ժողովրդոցդ՝ ողջոյն և ամենայն արժանաւոր սիրով օրհնութիւն եկեսցէ ձեզ ի Լուսաւորչի սուրբ Աթոռոյս:

«Եւ արդ ահա զաստուածսիրութեան ղգիրս ձեր ընթերցայ և զխընդրեալսդ ձեր լուաք և զբովանդակն հասկացաք, զոր ինչ խորհուրդ կայր ի գրեալսն, զոր մեծապէս գոհութիւնս մանաւանդ մատուցաք Աստուծոյ առաքելական բանիւքն, որ է առ աշակերտեալսն, եթէ «Յորժամ լսեմ զբարեպաշտութեան հաւատս ձեր, որ ի Տէր, խնդամբ գոհութեամբ ի վերայ ամենայնի»: Որ և ինքն Բանն Աստուած, որ հկն ի Հօրէ և հրաւիրեաց զմարդիկ ի փառս իւրոյ աստուածութեան և բարձրութեանն, որ և զմեզ զակարացեալքս ընկալաւ գթութեամբն իւրով և զօրութիւն շնորհեաց, որոց անզօր էին մարդիկ ընդդիմանալ աներևոյթ արկածից փորձութեանցն: Նա և ինքն Տէր Յիսուս Քրիստոս օգնութիւն և զօրութիւնս տացէ ձեզ յամենայնի և իմաստութիւն պարգևեսցէ կալ առաջի իմաստնոց և հզօրաց տալ զպատասխանիսն ըստ անսուտ իւրոյ հրամանին, թէ «Մի՛ հոգայք թէ որպէ՛ս և կամ զի՛նչ խօսիցիք, զի զինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ, զայն խօսիցիք»: Գիտէ ինքն Ամենագէտն ողորմութեամբն Իւրով և ամենաքնին զօրութեամբն իւրով, որ թէպէտ և առ նա՝ որ ի գոյութիւն էած յանգոյութենէ զմեզ և ամենայն երախտեօք

և հայերի հակառակության պատճառ դարձավ։ Ֆրանկները սուրբ զատկի [օրվա շուրջ] վեճի չէին բռնվել հայերի հետ. հույներն էին, որ մեծ աղմուկ ու կռիվ բարձրացրին հայերի դեմ։ Անտիոքը, ամբողջ Կիլիկիան և Ուռհան հույների հետ հավատքի շուրջ մեծ վեճի մեջ էին, քանզի [վերջիններս] ջանք էին թափում հայերին ընդունել տալ իրենց խաչաձև տոմարը, բայց և այնպես նրանց չհաջողվեց հայերին սասանել։ Բայց ահաբեկման ենթարկված Ուռհայի ասորիները անցան հույների կողմը և ուրացան հայերի հետ ունեցած իրենց դաշինքը։

Հույների կողմից զատկի [օրվա] նման շփոթում անցյալում էլ է եղել, և Երուսաղեմում չէին վառվել կանթեղները։ Դա այն ժամանակ էր, Վասիլի օրոք, 455 թվականին, երբ այլազգիները բոլոր աղոթող հավատացյալներին սրի քաշեցին։ Ահա, այս գրքում ասվեց հույների երկրորդ անգամ մոլորվելու մասին։ Այդ առթիվ Ուռհա քաղաքի քահանաները նամակով դիմեցին հայոց կաթողիկոս տեր Գրիգորիսին, որ Սև լեռան վրա էր բնակվում, Արեգի կոչվող հռչակավոր անապատում. նա ինքնագիր գրությամբ կարգադրեց նրանց՝ անսասան մնալ ուղղափառ դավանանքում։ Ուռհա գրած նրա նամակի պատճենը հետևյալն էր.

«Քրիստոսի իսկական սիրողներիդ և սուրբ երրորդությունը դավանողներիդ՝ քահանաներիդ, իշխաններիդ և հավատացյալ համայն ժողովրդիդ ողջույն։ Լուսավորչի Սուրբ Աթոռի օրհնությունը ամենայն արժանավոր սիրով ձեզ վրա։

«Ես կարդացի աստվածասիրությամբ հագեցված ձեր գրությունը, կատարելապես տեղեկացա ձեր խնդիրքի մասին, խորամուխ եղա գրվածքի բովանդակությանը և աշակերտներին ուղղված առաքելական խոսքերով մեծ գոհություն հայտնեցի աստծուն, թե՝ «երբ ես լսում եմ դեպի տերն ունեցած ձեր բարեպաշտ հավատքի մասին, ամեն ինչի վրա ուրախանում եմ և բավականություն զգում»[381]։ Իր Հոր մոտից եկած և մարդկանց իր աստվածային փառքին ու վեհության կոչած ինքը՝ Բանն-աստված, իր գթությամբ ընկալավ մեզ՝ տկարներիս, զորություն շնորհեց, [առանց] որի մենք՝ մարդիկս, անկարող էինք ընդդիմակայել աներևույթ թշնամիների փորձություններին։ Ինքը՝ տեր Հիսուս Քրիստոսը, օգնություն և կարողություն կտա ձեզ ամեն ինչում, ինչպես նաև իմաստություն՝ մտացի և խոհուն մարդկանց հետ բանավիճելու և պատասխան տալու, իր ճշմարիտ պատգամի համաձայն, թե՝ «Մի՛ մտահոգվեք, թե ինչպես կամ ինչ պետք է ասեք, քանզի ինչ որ կտրվի ձեզ այդ պահին, այդ էլ կասեք»[382]։ Թեև ինքը՝ ամենագետ [աստվածը], իր գթությամբ և ամենաքննող զորությամբ մեզ անգոյությունից կյանքի կոչեց, ամեն տեսակի բարերարությունների արժանացրեց և բարձրաց-

պատուհաց և բարձրացոյց որպէս ի հնումն զիսրայէլ, և արդ ահա առ Նա մեք հանապազ մեղանչեմք աղգօք և ժողովրդականօք, խորհրդօք և բանիւք, գիտութեամբ և անգիտութեամբ ի ժամանակեայ կենցաղումս մեր։ Եւ արդ ահա հաւատովքս ես և հաւատքս իմ՝ ամենեքեան ոչ թագաւորին եմք մեղուցեալ և ոչ իշխանի, ոչ զօրաց և ոչ զօրապետաց, ոչ առաջնորդաց և ոչ հօտից իւրեանց, այլ ամենեցուն հնազանդեալ եմք և պանձինս ի ծառայութիւն կացուցեալ և ըստ առաքելական հրամանին իւրաքանչիւրոցն հատուցեալ՝ որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն և զկայսերն կայսեր՝ և զԱստուծոյն Աստուծոյ շնորհելով և ոչ ումեք պարտականք մնացեալք և ոչ չարի չար հատուցեալ։ Եւ արդ ահա եթէ այսու արդարութեամբքս ընդ անիրաւութիւն դատիք յումեքէ իբրև զնուազունք և զփոքունք, ի վերայ ճշմարիտ օրինացն փոխանակ երախտեացն պատժոց արժանանամք, և արդ մի՛ երկնչիք և մի՛ զանդիտէք, վասն զի ահա ժամանակս մերձեալ է փրկութեան և գալուստն Տեառն մերձ է։ Եւ արդ բազում բանս մխիթարութեան ունիմք մարգարէիւք վասն հանդերձելոցն և զՏեառնէ Աստուծոյ մերոյ և զսրբոցն նորա, և արդ ահա այսմ ամենայնի պարտ է կատարիլ և լինել, վասն զի երևեսցին ճշմարտեալքն։ Եւ արդ թէպէտ և ես խրախոյս տամ ձեզ և քաջալերեմ համբերել ամենայն իմաստութեամբ և ոչ իբրև զվատասրտեալ հովիւ արտաքոյ մնամ կրիցն, այլ համաւորութեամբ ես մահակիւ ձեզ գտանիմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց և ոչ օտարանամ կամ յուրասէ կամ. եթէ բանիւքն կամ քննութեամբ էր մեզ նեղութիւնս, և կամ հարցափորձութեամբ, ահա պատրաստ կամ յամենայն իրս տալ պատասխանի. զոր ինչ և հարցանիցեն, բայց ի պատեհ և ի դիպող ժամու. և եթէ տանջանօք է կամ բռնութեամբ, և ոչ յայնմանէ յուրասէ կամք։ Եւ գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ, որ մինչև ցայժմ յանաստուած հեթանոսացն տերանցն զանդիտեաք և դատեաք և այժմ ի քրիստոնէիցդ նոյնպէս։ Բայց դուք մի՛ վհատիք, կարող է Աստուած ընդ փորձութեանցն և զելսն առնել՝ զի համբերել կարասցուք, սակայն որչափ ի կարի մեր է. ամենեքեան որպէս զքաջ զինուոր Քրիստոսի մարտիք ընդ բարիոք նահատակութիւնն Յիսուսի ի վերայ ճշմարտութեանն։ Վկայ է ինձ Տէր Աստուած իմ, որով կամք առաջի նորա, վասն զի չեմք ի սխալումն ինչ և ոչ եմք ի թիւրութիւն հաւատոց և կամ յանդգնաբար իրաւ զմեզ կարծեմք, վասըն զի այն անզգամաց է գործ և անմտաց, այլ շնորհօքն Աստուծոյ

րեց, ինչպես հնում Իսրայելին, բայց և այնպես, մենք ազգ ու ժողովրդով, թաքուն և բացահայտ, իմանալով կամ չիմանալով, մեր անցողիկ կյանքում անվերջ մեղանչում ենք նրա դեմ։ Ես և իմ ողջ հոտը հավատքի հարցում չենք մեղանչել ո՛չ թագավորի, ո՛չ իշխանի, ո՛չ զորքի և ո՛չ զորահրամանատարի դեմ, ո՛չ հոգևոր առաջնորդների և նրանց հոտի դեմ. մենք բոլորովին անսացող ենք և ենթարկվող, առաքելական պատգամի համաձայն յուրաքանչյուրին հատուցել ենք, մաքս պահանջողին՝ մաքս, երկյուղածություն պահանջողին՝ երկյուղածություն, մեծարանք պահանջողին՝ մեծարանք։ Մենք տվեցինք կայսրինը կայսեր, աստծունն էլ՝ աստծուն և ոչ մեկի հանդեպ պարտական չենք, մենք մեզ վատություն անողին անգամ վատություն չենք փոխհատուցել։ Արդ, եթե այդպես արդար լինելով հանդերձ որևէ մեկը մեզ որպես անիրավ դատապարտի, [արհամարհելով] մեզ մեր փոքրաթվության ու տկարության պատճառով և ոտնահարելով արդար օրենքները, լավության փոխարեն մեզ պատժի արժանացնի, ապա դուք մի՛ վախեցեք և մի՛ երկյուղեք, քանզի, ահա, մոտ է փրկության պահը և Տիրոջ գալուստը։ Գալիքի վերաբերյալ մենք մարգարեների և տեր աստծո ու նրա սրբերի մխիթարիչ բազում խոսքերն ունենք, այդ ամենը պետք է տեղի ունենան, որպեսզի ճշմարիտները լույս աշխարհ գան։ Այժմ, թեև ես խրախուսում և քաջալերում եմ ձեզ ամենայն խոհեմությամբ համբերել, բայց ինքս էլ փորձությունից մի կողմ չեմ քաշվում, ինչպես վախկոտ հովիվը, այլ կամովին ամեն ինչում, ամեն տեսակի խոշտանգումներում ինձ ձեր մահակիցն եմ համարում, ես չեմ օտարանում, ուրացող չեմ դառնում։ Եթե նեղում են խոսքով, [հավատա] քննությամբ կամ հարցուփորձ անելով, ես պատրաստ եմ նրանց յուրաքանչյուր հարցին պատասխան տալու, բայց միայն պատեհ և հարմար ժամանակ։ Եթե գործն հասել է խոշտանգումներին կամ բռնության, այդ դեպքում էլ մի կողմ չենք քաշվի։ Մենք հանապազ գոհություն ենք հայտնում աստծուն այն բանի համար, որ եթե մինչև այժմ սարսափում էինք [մեր] անաստված և հեթանոս տերերից, նրանց դատաստանն էինք տեսնում, այժմ նույն բանին ենք [արժանանում] քրիստոնյաներից։ Բայց դուք մի վհատվեք, հզոր աստվածը, փորձություններից բացի, նաև նրանցից ազատվելու ելք է տալիս, որպեսզի համբերել սովորենք, բայց մեր կարողությունների սահմաններում։ Բոլորդ Քրիստոսի քաջ զինվորների պես մարտնչեք, ճշմարտության [հաղթանակի] համար Քրիստոսի պես նահատակվեցեք։ Իմ տեր աստվածը վկա, որ մենք ճիշտ ուղու վրա ենք, չենք խոտորում հավատքը, և համառությունը չէ պատճառը, որ պնդում ենք մեր իրավացի լինելը. այդպես են վարվում անզգամ և անմիտ մարդիկ։

և սրբոց լուսաւորչացն մերոց առաջնորդացն զարքունականն զճշմարիտն ունիմք զճանապարհն, որ ի Քրիստոս Յիսուս, և ոչ յաջ խոտորել մեզ և ոչ յահեակ և ի պատուիրանացն Աստուծոյ ոչ օտարացեալք. և ոչ յարուցեալ ընդ առաւօտն և զհետ եղեալ մոլորութեան ցքւոյն և կամ բարձրադէմ երեսօք հպարտացեալք և ամբարտաւանեցեալք իբրև զՀռոմ ազգն և զայլս ոմանս, որոց և յաւելորդ է յիշատակել զանուանս նոցա: Եւ արդ եթէ խարդախութեամբ ինչ ունիմք զթերութիւն հաւատացելոց, վասն է՞ր չարշարիմք իբրև զպատժապարտս և ոչ ունիմք հանդիստ, այլ տադնապաւ շրջիմք ընդ ծով և ընդ ցամաք, որպէս և Պօղոս պատմէ զինքեանէ, ընդ որս ասէր. «Ընդէ՞ր հանապազ մեռանիմք և ի բանտ և ի կապանս մտանեմք. և ի գազանամարտի լեալ էի և յանդունդս տառապեցայ». և եթէ սնոտի յուսով էր վասն Քրիստոսի, զնոյն և ես ասեմ, եթէ այս ամենայն շրջագայութիւնս և փախուստ անձուկս ինձ տարապարտ է անցեալ, եթէ վասն պարտաւելի հաւատոյս զայս գործեցի. և քառասուն ամ կամ իմով հայրապետութեամբ և զիմ հայրենի տունն ի խաղաղութեան ժամանակի թողի՝ ի յայս փոխեցայ. ապա ուրեմն խաբեալ ես միայն եղէ. բայց յուսովն Աստուծոյ եմ և վկայութեամբ Սուրբ Գրոց, վասն զի զուղղափառն և զանթերին ունիմ զհաւատան: Արդ ամենեքեան, որ իմում հայրապետութեանս և հաւատոյս կցորդ էք, մի՛ թուլութեամբ և աչառանօք պատկառէք և կամ երկնչիք և զԱստուած վաճառէք վասն սնոտի կենացս, վասն զի ահա այս է ժամանակ ընդունելոյ և առնուլ պսակ ի Քրիստոսէ. և երաշխաւոր ես ևմ ձեզ առ Քրիստոս, վասն զի որ զսուրբ հարցն ցանկն ոչ պատառէ, ընդ սուրբսն պսակեսցի. ապա թէ ոք զմարդկան զփառս առաւել սիրեսցէ քան զԱստուածոյն, ի դատաստանի Որդւոյն Աստուծոյ ընդ ուրացողսն զոցի, որք զՔրիստոս Աստուած ոչ խոստովանեցան, ի մեր հաւատոյս և յօրհնութենէս անմասն եղէք. իսկ հաւատացեալքն ի հաւատս մեր օրհնեալ լիցին յերկնաւորաց և յերկրաւորաց, յԱստուծոյ և ի մէնջ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն»:

Իսկ յորժամ հասաւ թուղթս այս յՈւհա, հաստատեցան ի վերայ ճշմարտութեանն: Իսկ յորժամ եղև Ջատիկ, Երուսաղէմացիքն կէղծաւորութեամբ վառեցին զլոյսն և ոչ ճշմարտութեամբ և խաբեցին զազգն իւրեանց, և յօտար հրոյ վառեցին զաստուածային կանթեղսն. այլ ատուպապէս վառեցաւ ի Հայոց Ջատկին, որ և վկայեցին ամենայն հաւատացեալք, որք և վկայ էին ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. և յայնժամ եղեն ամօթալից ամենայն ազգն Յունաց, վասն զի կատարեցին զՋատիկն ի յաւուր Ծառազարդարին:

Աստծո և մեր լուսավորիչների և առաջնորդների շնորհքն է, որ մենք ընթանում ենք փառավոր, ճշմարիտ ճանապարհով, որ ի Հիսուս Քրիստոս։ Մենք չենք շեղվում ո՛չ դեպի աջ, ո՛չ դեպի ձախ, չենք հետանում աստծո պատվիրաններից։ Առավոտյան տեղից վեր կենալով, մեզ հաղթեցողության չենք տալիս, չենք փքվում և ամբարտավանանում, ինչպես հոռոմները և այլ ուրիշներ, որոնց անունը հիշատակելն ավելորդ է։ Եթե մեր հավատքի անկատար լինելը ինչ-որ խարդախության հետ է կապված, իմաստը ո՞րն է. չէ՞ որ դրա համար մենք խոշտանգվում ենք ինչպես մեղապարտները, կորցնում մեր հանգիստը, ահ ու վախով նավարկում ծովում կամ ընթանում ցամաքով, ինչպես իր մասին ասում է Պողոս [առաքյալը]. «Ինչո՞ւ ամեն օր մեռնում ենք, բանտ նետվում և կապանքներ կրում։ Ես գազանամարտի մասնակցեցի և վիրապներում տառապեցի»[383]։ Եվ եթե նրա՝ դեպի Քրիստոսն ունեցած հույսը նանիր էր, ապա նույն բանն ասում եմ և ես, թե իմ այդ բոլոր դեգերումները, փախուստն ու տառապանքները, եթե իմ այս պարսավելի հավատքի համար կրեցի, իզուր են անցել։ Ես քառասուն տարի է, ինչ կաթողիկոս եմ, ես իմ հայրենիքը խաղաղ ժամանակ թողեցի և այստեղ փոխադրվեցի, հետևաբար, մենակ ես եմ, որ խաբվեցի։ Բայց ես ունեմ հույսն աստծո և վկայությունները սուրբ դրոց, որ իմ դավանությունը ճշմարիտ է և անթերի։ Արդ, բոլորդ, ովքեր իմ հայրապետության և դավանանքին եք կողմնակից, թուլակամությունն և երեսպաշտությունն հանդես բերելով, վախից ու երկյուղից դրդված՝ աստծուն մի ծախեք փուչ կյանքի համար, քանզի Քրիստոսից պսակն ստանալու ժամանակը հասել է։ Քրիստոսի առջև ձեզ համար երաշխավոր կլինեմ ես. քանզի ով չի քանդում սուրբ հայրերի [կառուցած] պատը, նա սրբոց հետ պսակ կստանա։ Բայց եթե մեկը գերադասի մարդկային փառքը աստծո փառքից, նա աստծո որդու դատաստանի ժամանակ ուրացողների և Քրիստոսին աստված չխոստովանողների թվում կլինի և մեր հավատքից ու օրհնությունից՝ անմասն։ Իսկ մեր հավատքը դավանողները թող օրհնյալ լինեն երկնայիններից և երկրայիններից, աստծուց և մեզանից։ Օրհնյալ է հավիտյանս, ամեն»։

Երբ այս նամակը հասավ Ուռհա, նրանք հաստատուն մնացին ուղղափառության մեջ։ Ջատկին երուսաղեմցիք կեղծավորությամբ և ոչ ճշմարտությամբ վառեցին լույսը, խաբելով իրենց ժողովրդին։ Նրանք անսուրբ կրակով վառեցին աստվածային կանթեղները։ Լույսը ստուգապես վառվեց հայոց զատկին, այդ մասին վկա են Երուսաղեմ սուրբ քաղաքում գտնվող բոլոր հավատացյալները, իսկ հունաց ողջ ժողովուրդը խայտառակվեց, որովհետև ծաղկազարդի օրը նշեց զատիկը։

Յայսմ ամի դարձեալ ժողով արար թագաւորն Եգիպտոսի և Դմըշկայ՝ և գան ի վերայ սուրբ քաղաքին Երուսաղէմի անհամար բազմութեամբ։ Եւ թագաւորն Երուսաղէմի Պաղտոյնն ելեալ գնայր ընդդէմ նոցա ի պատերազմ. և Եգիպտացիքն արարին զՓռանգն փախստականս սաստկապէս պատերազմաւ. և ի նոյն ժամայն ելանէր ի ծովէն բազում զօրք Փռանգաց և յաղթեցին զօրացն Եգիպտացւոցն և արարին զնոսա հալածականս սաստիկ կոտորածով։ Եւ յայսմ ժամու գայր թագաւորն Երուսաղէմի Պաղտոյնն ի քաղաքն իւր յԱքքա. և Տաճիկ ոմն Եթովպացի՝ նստեալ կայր գաղտաբար ի դարանի ընդ թփով միով, և հարեալ զթագաւորն Երուսաղէմի նիզակովն ի վերայ քովիցն. և յայնժամ Եթովպացին սպանաւ, բայց խոց մարմնոյ թագաւորին անողջանալի մնաց մինչև յօր մահուան իւրոյ. և յայնժամ լցաւ Երուսաղէմ սգով և տրտմութեամբ ի վերայ թագաւորին իւրեանց։ Այս եղև վասն անիրաւ սուրբ Ջատկին կատարման, վասն զի զնոյն յանդգնութիւն յանդգնեցան աղգն Յունաց ի յաւուրս Վասլի կայսերն, և ոչ վառեցաւ լոյսն, և այլազգին կոտորեաց զամենայն աղօթաւորսն ի մէջ սրբոյ Յարութեանն ի դուռն Գերեզմանի Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Դարձեալ ի բարձրանալ Հայոց թուականութեանս ՇԾԲ եղև մեծաստաստ բարկութիւն Աստուծոյ ի ձեռն սաստիկ անձրևի՝ ի քաղաքն յՈւռհա յաւուր հինգշաբաթու փոքրկանն. որպէս պատմէ վասն առաջին ջրհեղեղին, այսպիսի նմանութեամբս սրտմտեալ ժողովեցաւ յօդն վերին և ամպախաղաց կայծակաշունչ ճայթմամբ դղրդեալ շարժմամբ երեսք երկնից, որպէս կարծեալ ոմանց, եթէ եհաս օր կատարածի քաղաքիս. վասն զի հեղաւ յերկնից ահաւոր անձրև և կարկտախառն ի յառաւօտուն ժամուն. և ի ծագել արեգականն յարեաւ և հեղեղն յարևմըտից կողմանէ և գայր դարէ ի դար և եհար զպարիսպ քաղաքին և պատառեաց և ելից զմէջ քաղաքին և արար աւեր զմասն քաղաքին, փլոյց բազում տունս և սատակեաց բազում կենդանիս, բայց մարդ ոչ անկաւ յորոգայթ, վասն զի լուսով եղև պատուհասն, փախեան ի չարէ։

Յայսմ ամի գնեցին զկոմսն Փռանգաց զՊեմունդն ի ձեռաց Դամիշմանին հարիւր հազար դահեկան, միջնորդութեամբ և օգնութեամբ մեծ իշխանին Հայոց, որ ասի Գող Վասիլ. և սորա տուեալ տասն հազար դահեկան ի գինսն նորա, իսկ կոմսն Անտիոքայ Տանգրի ոչ տայր ի գինս Պեմունդին և ոչ մի ինչ։ Եւ յայնժամ ժողովեցան ամենայն գանձն առ Վասիլն. և մեծաւ իշխանութեամբ ջան եդեալ և տայր բերել զնոսա ի սահմանս աշխարհին իւրոյ. և տայր զգանձն հարիւր հազար դահեկան՝ և առեալ զՊեմունդն առ իւր. և ելանէր ընդ առաջ նորա և մեծաւ պատուով հանգուցանէր զնա ի տան իւրում. և բազում ընծայս տայ

Այդ տարին Եգիպտոսի և Դամասկոսի թագավորները նորից զորահավաք արեցին և հսկայական զորքով շարժվեցին Երուսաղեմ սուրբ քաղաքի վրա։ Երուսաղեմի թագավոր Պաղտինը ելավ նրանց դեմ և պատերազմի գնաց։ Կատաղի մարտում եգիպտացիք ֆրանկներին փախուստի մատնեցին։ Բայց այդ պահին ափ դուրս եկավ ֆրանկների մեծաթիվ զորքը, հաղթեց եգիպտական զորքին և հալածելով մեծ ջարդ տվեց։ Դրանից հետո Երուսաղեմի թագավոր Պաղտինը եկավ իր քաղաքը՝ Աքրա, սակայն մի եթովպացի մուսուլման, որ մի թփի տակ դարան էր մտել, նիզակով հարվածեց նրա կողին։ Թեև եթովպացուն տեղնուտեղը սպանեցին, բայց թագավորի ստացած վերքը մահացու էր։ Երուսաղեմը իր թագավորի [սպանության] առթիվ լցվեց սգով ու վշտով։ [Սպանության] պատճառը հենց սուրբ զատկի օրը սխալ նշելն էր։ Հույները Վասիլ կայսեր ժամանակ էլ հանդգնել էին նույն բանն անել, այն ժամանակ էլ լույսը չվառվեց, և այլազգիները Սուրբ Հարության [տաճարում]՝ մեր Քրիստոս-աստծո Գերեզմանի դռանը կոտորեցին բոլոր աղոթողներին։

Հայոց 552 թվականի [24 փետրվար 1103—23 փետրվար 1104 թ.] սկզբին, փոքր հինգշաբթի օրը աստծո մեծասաստ բարկությունը ուժեղ անձրևի ձևով տեղաց Ուռհա քաղաքի գլխին։ [Անձրևը] կուտակվեց օդում այնպես, ինչպես պատմում են առաջին ջրհեղեղի առթիվ։ Երկինքն ամպախաղաց կայծակների շառաչյունով այնքան ուժեղ դղրդաց, որ ոմանք կարծեցին, թե քաղաքի վերջն է եկել։ Առավոտյան ժամին երկնքից թափվեց ահավոր կարկտախառն անձրև. երբ ծագեց արևը, հեղեղն արևմտյան կողմից շարժվեց և կոհակ առ կոհակ ծփալով հարվածեց քաղաքի պարիսպը, քանդեց այն, լցվեց քաղաքի մեջ և նրա մի մասը ավերակ դարձրեց։ Նա քանդեց բազմաթիվ տներ, ջրահեղձ արեց բազում կենդանիներ, բայց մարդկային զոհեր չեղան, որովհետև փորձանքը պատահեց օրը ցերեկով, և մարդիկ կարողացան չարիքից խուսափել։

Այդ տարին Գող Վասիլ[384] կոչվող հայոց մեծ իշխանի միջնորդությամբ և օգնությամբ ֆրանկների կոմս Պեմունդը հարյուր հազար դահեկանով փրկագնվեց Դանիշմանից։ Որպես փրկագին [Վասիլը] տվեց տաս հազար դահեկան, երբ Անտիոքի կոմս Տանգրին Պեմունդի փրկության համար չտվեց և ոչ մի բան։ Ամբողջ գումարը հավաքվեց Վասիլի մոտ։ Նա մեծ ջանք ու աշխատանք թափեց, որ ամբողջ գումարը բերվի իր տիրապետության սահմանները։ Նա հարյուր հազար դահեկան վճարեց և Պեմունդին առավ բերեց իր մոտ. [Վասիլը] գնաց նրան ընդառաջ և մեծ պատիվներով օթևան տվեց իր սեփական տանը։ Նա

Պեմնդին և ամենայն բերողացն, որ ընդ ամենայն լինէր քան հազար դահեկան։ Եւ ելիկի աւուրցն գնացեալ Պեմունդն ի քաղաքն իւր Անտիոք և մեծաւ երդմամբ եղև որդեգիր Դող Վասլին Հայոց իշխանին. և զՈաջարդն զքուրորդին Պեմնդին երեւ Դամիշմանն տուրս Ալէքսին՝ Յունաց թագաւորին ի ձեռն բազում գանձուց։

Յայսմ ամի զօրաժողով արար կոմսն Ուռհայոյ Պաղտինն և գնաց ի վերայ Թուրքին ի գաւառն Տաճկաց ի սահմանս Մերտնայ և արար կոտորած ընոսա և կալաւ զամիրայն նոցա, որ ասի Ուլլխ-սալար և զկանայս և զորդիս նոցա վարէր ի գերութիւն. և էած ի քաղաքն Ուռհա և անհամար հօտս ոչխարաց ընդ նմա իբրև հազարաց և զձիոց և պախրէից և զուղտուց, զամենայն միաբարձ արկին ի քաղաքն Յուռհա։

Յայսմ ամի իջեալ հայրապետն Հայոց Տէր Բարսեղ ի քաղաքէն Անւոյ ամենայն պաշտօնէիւք իւրովք և ազատօք, եպիսկոպոսօք և քահանայիւք և գայր ի քաղաքն Ուռհա. և կոմսն Փռանդաց Պաղտինն յոյժ մեծարեաց զնա մեծաւ պատուով՝ որպէս վայել է հայրապետի, և գիւղս և տուրս պարգևէր նմա, և յոյժ սիրեաց զհայրապետն Հայոց։

Յայսմ ամի մեռաւ կաթուղիկոսն Աղուանից Տէր Ստեփաննոս. և կաթուղիկոսն Հայոց Տէր Բարսեղ առաքեաց եպիսկոպոս ի Հայոց և արար ժողովս զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին. և ձեռնադրեցին զեղբայր Տէր Ստեփաննոսին յաթոռն տանն Աղուանից ի քաղաքն, որ ասի Գանձակ. զոր և յետոյ անարժան գտին զնա աթոռոյ հայրապետութեանն, ընդ բանադրանօք փակեաց զնա Տէր Բարսեղն կաթուղիկոսն Հայոց, և յաթոռոյ և ի պատուոյ հայրապետութեանն արտաքս ընկեցին զնա. զայս արարին վասն խոտոր վարուց իւրոց։

Ի թուականութեանն Հայոց ՇԽԹ զօրաժողով արարին կոմսն Ուռհայոյ Պաղտինն և Ճօսլինն և գնացին ի վերայ քաղաքին, որ կոչի Խառան. և առաքեաց յԱնտիոք և կոչեաց զմեծ կոմսն Փռանգաց զՊեմունդն և զՏանկրի և զայլ ամենայն զօրսն Հայոց, և ժողովեցան առ նա ժողով մեծ. և իջան ի վերայ Խառնայ և արարին սաստիկ խսար, և նեղութիւն մեծ հասաւ քաղաքին ի հացէ։ Եւ ոմն ի Փռանդացն արար գործ՝ ընդ որ ոչ համեցաւ Աստուած, բացեալ զմէջ հացին և աղբեաց ի նմա և տարեալ դնէր հանդէպ դրան քաղաքին. և տեսեալ քաղաքացեացն՝ առ վտանգին յարձակեցաւ մի ոմն և առ զնա զի կերիցէ, և տեսեալ զաղտնի գործն՝ զաղբացաւ և տարեալ ցուցանէր քաղաքացեացն։ Եւ տեսեալ սրանց իմաստնոց, ասեն թէ՝ «Ահա մեծ գործ մեղաց, զոր ոչ համբերէ Աստուած այս գործոյս և ոչ տայ նոցա յաղթութիւն, վասն զի ի հացս յայս արարին մեղս, զոր ոչ լուաք այսպիսի մեղս յերկրի»։

Պեմունդին, ինչպես և նրան բերողներին բազում նվերներ տվեց, և տվածի ընդհանուր գումարը կազմեց քսան հազար դահեկան։ [Պեմունդը], մեծ երդում տալով, դարձավ հայոց իշխան Դող Վասիլի որդեգիրը։ Մի քանի օր անց Պեմունդը դնաց իր քաղաքը՝ Անտիոք։ Ինչ վերաբերում է Ռիչարդին՝ Պեմունդի քրոջորդուն, Դանիշմանը, մեծ գումար ստանալով, նրան նվիրեց հույների կայսր Ալեքսիին։

Այդ տարին Ուռհայի կոմս Պաղտինը զորահավաք արեց և դնաց Թուրքերի դեմ՝ տաճկաց գավառը, Մերտինի[385] սահմաններում կոտորեց նրանց և նրանց Ուլլխ-սալար[386] կոչվող ամիրային իր կանանցով ու երեխաներով գերեվարեց։ [Ամիրային] նա բերեց Ուռհա քաղաքը, նրա հետ նաև անհամար ոչխարների հոտեր, հազարավոր ձիեր, պախրաներ, ուղտեր։ Բոլորը միասին բերեցին թափեցին Ուռհա քաղաքը։

Այդ տարին հայոց կաթողիկոս տեր Բարսեղը իր ամբողջ սպասավորությամբ, ազատներով, եպիսկոպոսներով ու քահանաներով, Անի քաղաքից ելավ եկավ Ուռհա քաղաքը։ Ֆրանկների կոմս Պաղտինը մեծ, կաթողիկոսին վայելող պատիվներով ընդունեց նրան, նվիրեց ոչուղեր, տվեց ընծաներ։ Նա շատ սիրեց հայոց կաթողիկոսին։

Այդ տարին վախճանվեց Աղվանից կաթողիկոս տեր Ստեփանոսը։ Հայոց կաթողիկոս տեր Բարսեղը մի հայ եպիսկոպոս ուղարկեց և Աղվանքի եպիսկոպոսների ժողով գումարեց։ Նրանք Գանձակ կոչված քաղաքում Աղվանքի [կաթողիկոս] ձեռնադրեցին տեր Ստեփանոսի եղբորը։ Հետագայում, երբ կաթողիկոսությանն անարժան համարեցին, հայոց կաթողիկոս տեր Բարսեղը նրան բանադրեց. նրան զրկեցին կաթողիկոսական աթոռից և պատվից։ Դրա պատճառը նրա վատ վարքն էր։

Հայոց 553 թվականին [23 փետրվար 1104—21 փետրվար 1105 թ.] Ուռհայի կոմս Պաղտինը և Ճոսլինը զորահավաք արեցին և գնացին Խառան կոչվող քաղաքի վրա։ [Պաղտինը] դիմեց Անտիոք, հրավիրեց ֆրանկների մեծ կոմս Պեմունդին և Տանգրիին, ինչպես և հայոց մյուս ամբողջ զորքերը։ Բոլորը հավաքվելով նրա մոտ, մեծ զորաբանակ կազմած շարժվեցին Խառանի վրա և սաստիկ պաշարեցին այն, Խառանում զգացվեց հացի մեծ պակաս։ Մի ֆրանկ աստծուն ոչ հաճելի արարք կատարեց։ Նա հացի մեջ կեղտոտեց, ապա տարավ և այն դրեց քաղաքի դռան դիմաց։ Քաղաքացիներից մեկն իրեն վտանգելով շտապեց, վերցրեց այն, որ ուտի, բայց տեսնելով աղտեղությունը, զզվեց. նա հացը տարավ և ցույց տվեց քաղաքացիներին։ Իմաստուն մարդիկ, տեսնելով այդ բանը, ասացին. «Ահա մի մեծ մեղսագործություն. աստված չի հանդուրժի նման բան, նրանց հաղթանակ չի պարգևի, քանզի հացի վրա այնպիսի մի մեղք գործեցին, որի նմանը աշխարհում չի լսվել»։

Եւ յայնժամ զօրքն Պարսից ահագին բազմութեամբ գային ի վերայ նոցա, Ճկրմիշ ամիրայն Մօսլայ և Սուգման որդի Արդուխին։ Եւ լուեալ զայս իշխանքն Փռանգաց՝ գնացին մեծաւ ուրախութեամբ ի վերայ Պարսից զօրացն և երկօրեայ գնացս հեռացեալ ի քաղաքէն ի տեղին, որ կոչի Օշուտ։ Եւ Ուռհայոյ կոմսն և Ճօսլինն հպարտացեալք ընդ միտս իւրեանց՝ և պՊեմունդ և պՏանդրի հեռագոյն կացուցանէին ի զօրաց իւրեանց, և ասացին՝ եթէ Մեք յառաջ դիպեսցուք և առցուք անուն յաղթութեան։ Եւ եղև ի հանդիպիլ Պաղտոյնին և Ճօսլին զօրացն Թուրքին, լինէր ահաւոր և սաստիկ պատերազմ յօտաբ աշխարհին Տաճկաց. և յայնժամ յաղթեաց զօրքն Պարսից զօրացն Փռանգաց և զսատուածասաստ բարկութիւնն ածին ի վերայ քրիստոնէից. վասն զի լըցաւ ամենայն երկիր արեամբք և դիակամբք աւելի քան երիս բիւրս հաւատացելոց և հատաւ մարդ ի գաւառաց։ Եւ կալան զՈւռհայոյ կոմսն զՊաղտինն և զՃօսլինն՝ և տարան զնոսա ի գերութիւն, և այլքն կացին ամբողջ զօրօքն իւրեանց. զբռնաւորսն առին և անկանէին փախստական ի յՈւռհա քաղաք։

Եւ էր սուգ մեծ ի վերայ քաղաքին Ուռհայոյ, վասն զի խառնեցին կալան զաւաջն մնացեալ զօրացն և փակեցին զլեառն և զդաշտն և զամենայն փախստականսն սպանանէին առհասարակ՝ արս տասն հազար. և ածին մեծ անցումն հաւատացելոցն Քրիստոսի առաւել քան զԹուրքն. և բազում կսկիծ լալոյ և աղէտ թախանձանաց եղև յՈւռհա. որ և առհասարակ ողբումն արտասուաց էր յաւուր յայնմիկ ի վերայ քաղաքին Ուռհայոյ և ընդ ամենայն աշխարհն քրիստոնէից էր սուգ մեծ։ Եւ յայնժամ տարան զկոմսն զՊաղտինն ի Մօսլ քաղաք Տաճկաց և զՃօսլինն տարան ի Հարսնքև և առ Սուգման որդի Արդուխին, և Ճկրմիշն տարաւ զՊաղտինն։

Իսկ Պեմունդն խորհեցաւ գնալ յաշխարհն Փռանգաց ի խնդիր զօրաց և տայր զՈւռհա և զԱնտիոք ի քուրորդին իւր Տանգրի։ Եւ յորժամ հասաւ Պեմունդն ի յաշխարհն Փռանգաց, կին ումն էր յոյժ մեծատուն, որ էր լեալ կին Ստեփան Պինօլին կոմսին Փռանգաց, մեծազգի և բըռնակալ, սորա բռնեալ զՊեմունդն առ իւր և ասէր թէ՝ «Արա զիս քեզ կին, վասն զի այր իմ մեռաւ, և երկիրս և զօրս հեծելոց անտէր շրջին»։ Եւ Պեմունդն ոչ առնոյր ի յանձն ասելով. «Ես բազում երդմամբ վասն զօրաց եկի այսր, վասն զի շուտով երթիցուք յօգնութիւն մնացեալ զօրացն քրիստոնէից, որք կան ի մէջ անօրինաց ազգացն Պարսից»։ Իսկ կինն հարկանէր զնա մեծաւ ուժգնութեամբ, և նա ոչ լսէր նմա. յայնժամ երկաթի կապանօք արկանէր զնա ի բանտ. և կացեալ զաւուրս ինչ ի բանտի, հաւանեալ լինէր և էառ զնա իւր կին և ծնաւ ի նմանէ

Դրա վրա պարսից հսկայական զորքը Մոսուլի ամիրա Ճկրմիշի[387] և Արդուխի որդի Սուգմանի [գլխավորությամբ] շարժվեց նրանց վրա։ Ֆրանկների իշխանավորները, լսելով այդ, մեծ ուրախությամբ շարժվեցին պարսից զորքերի վրա։ Հեռանալով քաղաքից երկու օրվա ճանապարհ, [հասան] Օշուտ կոչվող վայրը։ Ուռհայի կոմսը և Ճոսլինը մեծամտացած, Պեմունդին և Տանգրիին իրենց զորքերից հեռու ընկած մի տեղ թողեցին, ասելով, թե՝ «Առաջինը մենք ընդհարվենք [թշնամուն], որպեսզի հաղթանակը մեզ վերագրվի»։ Պաղտինը և Ճոսլինը հանդիպեցին թուրքերի զորքերին. տաճկաց օտար երկրում կատաղի պատերազմ տեղի ունեցավ, որտեղ պարսից զորքը հաղթեց ֆրանկների զորքին և աստվածասաստ բարկությունը թափեց քրիստոնյաների գլխին։ Համայն երկիրը ողողվեց ավելի քան երեսուն հազար հավատացյալների արյամբ և դիակներով, գավառները մարդաթափ եղան։ [Թուրքերը] բռնեցին Ուռհայի կոմս Պաղտինին և Ճոսլինին ու գերի քշեցին։ Մյուս [երկու] զորավարները իրենց բովանդակ զորքով անվնաս մնացին և, իրենց հետ վերցնելով գերյալներին, փախան և ապաստանեցին Ուռհա քաղաքում։

Ուռհա քաղաքում մեծ սուգ էր, որովհետև խառանցիք գերեցին առաջապահ զորքը և, շրջապատելով լեռ ու դաշտ, բոլոր փախստականներին գլխովին կոտորեցին՝ տաս հազար հոգու։ Նրանք թուրքերից ավելի մեծ ջարդ տվեցին Քրիստոսի հավատացյալներին։ Ուռհայում մեծ լաց ու կոծ էր, անսահման վիշտ։ Այդ օրը Ուռհա քաղաքում և քրիստոնյաների ողջ աշխարհում ողբ ու կոծ էր և մեծ սուգ։ Կոմս Պաղտինին տարան տաճկաց Մոսուլ քաղաքը, իսկ Ճոսլինին՝ Հասնքև[388], Արդուխի որդի Սուգմանին։ Պաղտինին տանողը Ճկրմիշն էր։

Իսկ Պեմունդը զորք ձեռք բերելու նպատակով որոշեց գնալ ֆրանկների երկիրը. նա Ուռհան ու Անտիոքը թողեց իր քրոջորդի Տանգրիին։ Երբ Պեմունդը հասավ ֆրանկների երկիրը, մի մեծահարուստ, քաջատոհմիկ և բռնակալ կին, որ ֆրանկների կոմս Ստեփան Պինոլի կինն էր եղել, Պեմունդին իր մոտ հրավիրելով, ասաց. «Ինձ հետ ամուսնացիր, քանզի իմ ամուսինը մահացել է։ Երկիրը անտերունչ է մնացել, հեծելազորն էլ անտեր թափառում է»։ Պեմունդը մերժեց, ասելով. «Ես բազում երդումներով եկել եմ զորք ձեռք բերելու, որպեսզի օգնության հասնեմ պարսից անօրեն։ Ժողովրդի մեջ գտնվող քրիստոնյաների մնացած զորքին»։ Կինը նրան սաստիկ գանահարեց, բայց [Պեմունդը] տեղի չտվեց։ Դրա վրա [կինը] նրան շղթայակապ բանտ նետեց։ Մի քանի օր բանտում մնալով, [Պեմունդը] համակերպվեց և նրան կնության առավ. նրանից երկու որդի ունեցավ։ Հինգ տարի անց ֆրանկների մեծ

երկու որդի. և զկնի հինգ ամի մեռանէր մեծ կոմսն Փռանգաց Պեմունդըն ի յաշխարհն իւր և ոչ ժամանեաց ելանել յայսկոյս աշխարհիս։

Յայսմ ամի մեռաւ Դամիշմանն մեծ ամիրայն Հոռոմոց աշխարհին, որ լեալ էր յազգէն Հայոց, այր բարի և շինող աշխարհի և էր յոյժ ողորմած ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի. և եղև սուգ մեծ ի վերայ հաւատացելոցն, որք էին ընդ ձեռամբ նորա։ Եւ մնաց իւր երկոտասան որդի. և կալաւ զաշխարհն աւագ որդին, որ կոչէր Խազի, և զայլ եղբարսն իւր սպանանէր գաղտաբար։

Յայսմ ամի մեռաւ Սուգմանն որդի Արդուխին այն՝ որ ունէր յառաջագոյն զսուրբ քաղաքն Երուսաղէմ. որ և յայտնի երևի նշանն Արդուխին ի սուրբ Յարութիւնն Աստուծոյ, զի երեք նետք հարեալ կայ նորա ի ձեղունսն եկեղեցւոյն մինչև ցայսօր։ Մեռաւ անդ և թաղեցաւ յԵրուսաղէմ ի ճանապարհի Սողոմոնի տաճարին։ Իսկ որդի նորա Սուգմանն էր չար և արիւնահեղ գաղան. սորա զօրաժողով արարեալ զզօրսն Պարսից և գայ յօգնութիւն քաղաքին Տրապօլսոյ ի վերայ զօրացն Փռանգին, և ի ճանապարհին մեռեալ լինէր, և զօրքն գնացին փախըստական յաշխարհն իւրեանց։

Յայսմ ամի մեռաւ թագաւորն Պարսից Պարկիարուխն որդի Մելիքշահին՝ որդւոյ Աբասլանայ. և նստաւ յաթոռ թագաւորութեանն Պարսից եղբայր նորա, որ ասի Տափար ի հիշախն կնոջէն այն՝ որ դեղեաց և եսպան զհիեղևրակալ Մելիք-շահն ի Բաղդատ քաղաք։

Յայսմ ամի առաւ Մարաշ քաղաք ի Յունաց, և ելաւ իշխանաց իշխանն ի նմանէ և տայ զքաղաքն ի ձօսլինն և զպատկերս սրբոյ Աստուածածնին ծախեաց ընդ բազում դինս ոսկւոյ մեծ իշխանին Հայոց Թորոսի՝ որդւոյ Կոստանդեայ՝ որդւոյ Ռուբենայ, և ինքն գնաց ի Կոստանդնուպոլիս։

Դարձեալ եղև ի թուականութեանն Հայոց ՇՃԴ լինէր փոխումն սուրբ հայրապետին Տեառն Գրիգորիսի համանուն Տէր Վահրամին որդի Գրիգորոյ՝ որդւոյ Վասակայ ի Պարթևաստանի ազգէն։ Յայսմ ամի եղև անկեալ սիւնն հաւատոյ Հայաստանեայց և պարիսպ սրբոյ եկեղեցւոյ տանն արևելից Հայաստանեայց. վասն զի սա եղև սքանչելագործ ի մէջ Հայաստանեայց և պայծառ առաքինութեամբ պարապեալ կայր յաճենայն ճգնողական վարս, և էր ժուժկալ պահօք և աղօթիւք, և կայր ի պաշտօնն Աստուծոյ անդադար սաղմոսերգութեամբ. սա նորոգեաց ըզկարգ հաւատոյ Հայաստանեայց և անհանգիստ թարգմանութեան էր պարապեալ, և զամենայն պակասութիւն կտակարանացն Աստուծոյ առ մեզ կարգաւ կատարեալ զարդարեաց ի Յունաց և յԱսորւոց թարգմա-

կոմս Պեմունդը վախճանվեց իր երկրում և չկարողացավ վերադառնալ աշխարհի այս կողմերը։

Այդ տարին վախճանվեց հոռոմոց աշխարհի մեծ ամիրա Գանիշմանը, որ հայկական ծագում ուներ. նա բարի մարդ էր, աշխարհաշեն, քրիստոնյաների հանդեպ անչափ գթառատ։ Նրա իշխանության տակ գտնվող հավատացյալները շատ սգացին նրան։ Նա թողեց տասներկու որդի, ընդ որում իշխանությունն անցավ ավագ որդու ձեռքը, որին խազի էին ասում. սա ծածուկ սպանեց իր մնացած եղբայրներին։

Այդ տարին վախճանվեց Սուգմանը՝ որդին Արդուխի, ով անցյալում առել էր Երուսաղեմ սուրբ քաղաքը։ Արդուխի թողած հիշատակը պարզ երևում է աստծո Սուրբ Հարության [տաճարում]. նա եկեղեցու առաստաղի վրա երեք նետ է դամել, որոնք մինչև օրս էլ կան։ Նա մնռել է ու թաղվել Երուսաղեմում, դեպի Սողոմոնի տաճարը տանող ճանապարհի վրա։ Իսկ նրա որդի Սուգմանը չար ու արյունարբու դաղան էր։ Պարսից զորքերի զորահավաք անելով, նա դուրս էր եկել ֆրանկների դեմ՝ Տրապոլիս քաղաքի օգնության, բայց ճանապարհին վախճանվեց, և [նրա] զորքերը փախան դնացին իրենց երկիրը։

Այդ տարին վախճանվեց պարսից թագավոր Պարկիարուխը՝ Աբասլանի որդի Մելիք Շահի որդին։ Պարսից թագավորության գահին բազմեց նրա եղբայրը, որ Տափար է կոչվում, նա, ով ծնվել էր այն գիշեր կնոջից, որ Բաղդադ քաղաքում թունավորեց և սպանեց տիեզերակալ Մելիք Շահին։

Այդ տարին Մարաշ քաղաքը առնվեց հույների ձեռքից։ Իշխանաց իշխանը դուրս եկավ այնտեղից, քաղաքը հանձնելով Ճոսլինին, իսկ Սուրբ Աստվածածնի պատկերը ոսկու մեծ դումարի դիմաց ծախեց հայոց մեծ իշխան Թորոսին՝ Ռուբենի որդի Կոստանդնի որդուն, իսկ ինքն էլ թողեց գնաց Կոստանդնուպոլիս։

Հայոց 554 թվականին [23 փետրվար 1105—22 փետրվար 1106 թ.] վախճանվեց սուրբ կաթողիկոս տեր Գրիգորիսը, որ և տեր Վահրամ էր կոչվում, Վասակի որդի Գրիգորի որդին, Պահլավունիների տոհմից։ Տապալվեց հայադավանության այունը և արևելյան հայերի սուրբ եկեղեցու պարիսպը, քանզի նա հայերի մեջ [հռչակվել էր որպես] հրաշագործ և իր փայլուն առաքինությամբ վարել ճգնավորական կյանք։ Նա պահեցող էր ու աղոթող և սպասավորում էր աստծուն անդադար սաղմոսերգությամբ։ Նա նորոգեց հայադավանության կարգը, կատարելապես կարգավորեց աստծո պատգամների կատարման հարցում նրած թերությունները, փութաջանորեն թարգմանություններով զբաղվեց, ուշադրություն դարձնելով հունարենից և ասորերենից թարգմանություննե-

նութեան հոգս տարեալ՝ անդադար խորհրդով և ամենայն պայծառութեամբ Սուրբ Դրոց ելից զեկեղեցի Հայաստանեայցս. և էր ինքն հեզ բարուքն և խոնարհ սրտիւք. և ի վերայ այսր ամենայնի էր յոյժ աստուածասէր և պատուիրանապահ և յամենայն կողմանց կարող էր օգնել հօտին Քրիստոսի, վասն զի էր բանիբուն կորովի դրոց շնորհաց. և էր սա նմանեալ առաջին իմաստնոցն Հայոց՝ Մովսիսի ունիմ ասել և Դաւթի, վասն զի ունէր գլուխ աթենացի և լեզու հրեղէն ներկեալ և դիւրաւ առնոյր զծածկոց յերեսաց Հին և Նոր կտակարանացն Աստուծոյ և բանայր զդուռն աստուածաբուղխ աղբիւրացն և զհոսումն Սրբոյ Հոգւոյն զեղոյր ի լսելիս հաւատացեալ ժողովրդոց. սա եղև օրինակ դասուց կրօնաւորաց՝ ամենայն քաջակիրթ առաքինութեամբ յառաջացեալ էր։ Եւ կացեալ սորա յաթոռ հայրապետութեանն ամս քառասուն. և ի ժամանակի մահուանն հանդիպեցաւ առ մեծ իշխանին Հայոց՝ որ ասի Դող Վասիլ, որ էր այր հզօր և պատերազմող, վասն զի առ սա եղև ժողովեալ մնացեալ գունդն Հայոց։

Իսկ երևեալ պատանի ոմն Գրիգորիս անուն՝ որ քուրոջ որդւոյ որդի էր Տեառն Վահրամայ, զնա յատենի կացուցանէր Տէր Գրիգորիս և անուանէր զնա կաթուղիկոս տանն Հայոց ղկնի մահուան Տեառն Բարսեղի. և միջնորդ կացուցանէր զիշխանն Հայոց զՎասիլն՝ զտէրն Քեսնոյ և ամենայն աշխարհաց նորա։ Եւ Տէր Բարսեղ հնազանդ լեալ ամենայն հրամանաց Տեառն Գրիգորիսի և յայնմ օրէ էառ առ ինքն զանուանեալն կաթուղիկոս զԳրիգորիս զորդի Ապիրատին։ Եւ եղև ի Տրէ ամիս, յառաջին շաբաթն ամռան աղուհացիցն, յաւուր շաբաթու վախճանեցաւ սուրբ հայրապետն Տէր Գրիգորիս և թաղեցաւ մեծաւ հանդիսիւ ի Կարմիր վանքն մերձ ի Քեսուն. և Տէր Ստեփաննոս հայր վանացն արար ժողով ի վերայ զերեզմանին նորա կրօնաւորաց և քահանայից՝ և հայրապետական պատուով յղարկեաց զնա ընդ սուրբսն. և իշխանն Հայոց Վասիլն և այլ ազատագունդքն Հայոց արարին կոծ մեծ ի վերայ նորա և դառնակոծ արտասուօք լային առհասարակ ի վերայ նորա, վասն զի զրկեալ եղեն յայնպիսի սուրբ հայրապետէն, և նովաւ յիշեալ լային տունն Հայոց և լային զանտիրանալն իւրեանց ի յօտար աշխարհ և զելանելն ի հայրենի տանէն իւրեանց։

Յայսմ ամի մեռաւ սքանչելագործն և մեծ ճգնաւորն Մարկոս միայնակեացն, որ զամս վաթսուն և հինգ կայր ի խոտաճարակութեան վարս. վասն զի ոչ հաց, և որ ինչ նման հացի, ոչ ճաշակեաց ի կրօնաւորութեանն իւրում. և սա իսկ ունէր զտեսողութեան հոգի սրբոց մարգարէիցն. և էր ի բազմաց վկայեալ, վասն զի յամենայն աւուր տեսանէր նա զՀոգին Սուրբ. և էր բնակեալ ի յանջրդի լեառն մի ի Մոկացն գա-

րին։ Նա սուրբ գրոց անդուլ խորհրդով և նրանց ամենայն պայծառությամբ լցրեց հայոց եկեղեցին։ Նա հեզաբարո էր և խոնարհասիրտ և, այդ բոլորից բացի, շատ աստվածասեր և [աստծո] պատվիրաններին հետևող. կարողանում էր ամեն տեսակետից օգնել Քրիստոսի հոտին, քանզի [սուրբ] գրոց քաջագիտակ էր։ Նա նման էր հայոց առաջին իմաստուններին, ես նկատի ունեմ Մովսեսին և Դավթին[389], աթենական գլուխ ուներ, կրակոտ լեզու և հեշտությամբ էր մեկնաբանում Հին և Նոր Կտակարանների խրթին տեղերը, բացում աստվածաբուխ աղբյուրները։ Հավատացյալ ժողովրդին հասցնում սուրբ Հոգու ոգին։ Նա վանական դասի համար օրինակ հանդիսացավ, օժտված լինելով ամեն տեսակի գերազանց առաքինություններով։ Նա կաթողիկոսական աթոռին նստեց քառասուն տարի և իր մահվան նախօրեին հանդիպեց Դող Վասիլ կոչվող հայոց մեծ իշխանին, մի հզոր և կռվող մարդու, որի շուրջն էին համախմբվել հայոց զորքի բեկորները։

Տեր Գրիգորիսը որոշեց, որ տեր Բարսեղի մահվանից հետո հայոց երկրի կաթողիկոս դառնա Գիրգորիս անունով մի երիտասարդ՝ տեր Վահրամի քրոջորդու որդին, և այդ բանի միջնորդ նշանակեց Քեսունի և նրա բովանդակ գավառի հայոց իշխան Վասիլին։ Տեր Բարսեղը ենթարկվեց տեր Գրիգորիսի բոլոր հրամաններին և այդ օրվանից սկսյալ իր մոտ վերցրեց անվանյալ կաթողիկոս Գրիգորիսին՝ Ապիրատի որդուն[390]։ Սուրբ հայրապետ տեր Գրիգորիսը վախճանվեց տրե ամսին, ամառային մեծ պասեքի առաջին շաբաթվա շաբաթ օրը և մեծ շուքով թաղվեց Քեսունի մոտ գտնվող Կարմիր վանքում։ Վանահայր տեր Ստեփանոսը [տեր Գրիգորիսի] գերեզմանի շուրջը վանականներ ու քահանաներ ժողովեց և նրան հայրապետին վայել պատվով սրբերի մոտ ուղարկեց։ Հայոց իշխան Վասիլը և հայոց ազատագունդը անչափ ողբացին նրան, բոլորը դառնագին լաց եղան, որովհետև զրկվեցին նրա նման մի սուրբ հայրապետից, այդ առթիվ հիշեցին և ողբացին հայոց երկիրը, իրենց անտերունչ դառնալն ու հայրենի տնից օտարություն գնալը։

Այդ տարին վախճանվեց հրաշագործ և մեծ ճգնավոր Մարկոս մենակյացը, որը վաթսունհինգ տարի խոտաճարակությամբ էր զբաղվել։ Նա հաց կամ հացի նման բան չէր կերել իր ճգնավորության ընթացքում։ Նա ուներ սուրբ մարգարեների զննող հոգին։ Շատերն են վկայել, որ նա հանապազ սուրբ ոգուն էր տեսնում։ Նա բնակվում էր Մոկաց գավառի մի անջրդի լեռան վրա, որ Կոնգռնակ է կոչվում, աստ-

ւառին, որ ասի Կոնգռնակ, որ էր Ասորի Խարսինակքն՝ մերձ ի յաշխարհն Մարաշ քաղաքին. սա աղօթիւք իւրովք յերկուս տեղւոջ ջուր ևհան ի յայնմ սահմանին. սա իսկ մարգարէացաւ ի վերայ Փռանգաց, յորժամ առին զսուրբ քաղաքն Երուսաղէմ, եթէ դարձեալ զօրանան ազգն Պարսից և դան սրով մինչև յեզր Ովկիանոս ծովուն, որ և տեսաք իսկ. և ասացաք վասն քահանայից և վասն ժողովրդոց, եթէ թուլանան ի հաւատոց, և բառնի աստուածպաշտութիւն յաշխարհէ, նուազին հաւատք և փակին դրունք սրբոյ Եկեղեցւոյ, խաւարին ի գործոց բարեաց, մոռանան զպատուիրանս սրբոյ Աւետարանին Քրիստոսի, ծովանան մեղք և չարիք ի վերայ երկրի, և որդիք մարդկան իբրև զծով ծփին ի մէջ մեղաց, մոռանան ի գործել զարդարութիւն ամենայն ազգք հաւատացելոց: Այս սուրբ ճգնաւորս մեռաւ յայսմ ամի և թաղեցաւ ի վանքն, որ կոչի Կաստաղօն, մերձ ի յամուր բերդն, որ, ասի Վահկայ, ի Տօրոս լեառն:

Յայսմ ամի զօրաժողով արարեալ Ճկրմիշ ամիրայն Մօսլայ և Մծբնայ՝ և գայր բազում զօրօք իջանէր ի դուռն քաղաքին Ուռհայոյ ի ժամանակս արտուցն: Եւ զօրագլուխ զօրացն Փռանգաց՝ որ ասի Ռաջարդ, զոր էր կացուցեալ Տանգրի պահապան քաղաքին. առեալ զզօրս քաղաքին և անմտաբար հետևակօք ելեալ ի պատերազմ ընդդէմ քաջ և պատերազմող զօրացն Պարսից. և տեսեալ նոցա զանպատրաստութիւն զօրացն Փռանգաց, բախեալ զնոսա և միաբան լցին ի խանդակ քաղաքին և ի քաղաքին դուռն մտեալ ի խանդակ քաղաքին միաբան ամենայն զօրքն Պարսից՝ և արարին կոտորած առ իբրև չորս հարիւր և յիսուն. և քերթեալ զամենեցուն զգլուխսն տարան ի Պարսիկս. և եղև սուգ մեծ յաւուր յայնմիկ ի վերայ Ուռհայոյ, վասն զի յամենայն տուն սուգ և աղաղակ լալոյ կայր, և արեամբ զարդարեալ էր ամենայն վայրք քաղաքին Ուռհայոյ. և դարձաւ Ճկրմիշն մեծաւ յաղթութեամբ և դնաց ի յաշխարհն իւր:

Յայսմ ամի մեռաւ կոմսն Փռանգաց Զնճիլն, որ էր ի վերայ քաղաքին Տրապօլսոյ, և տայր զարտաքին քաղաքն, զոր շինեաց, և զզօրսն իւր ի քուրորդին իւր ի Պեթրանն, որ էր այր քաջ և պատերազմող. այրս այս Զնճիլս, որ տարաւ ետ զզէնն Քրիստոսի Յունաց թագաւորին Ալէքսիին ի Կոստանդնուպօլիս:

Յայսմ ամի քաղաքն, որ կոչի Ապլասթան, ի Ջահան գաւառն, ահագին նեղութիւնս և վիշտս և վտանգս կրեաց ի զօրացն Փռանգաց. և սաստիկ բարկութենէ անտի խորհեցան չար հասուցանել նոցա և առարին զյոյսն իւրեանց ի յայլազգիսն և գաղտաբար հանեալ մարդ և զդիմացի զհեծեալն ի ներքս ժողովեալ՝ և առ իւրար միաբանեցան աջգն

րերեն՝ Խարսինակք, Մարաշ քաղաքի շրջանի մոտակայքում։ Այդ շրջանում նա աղոթքների օգնությամբ երկու տեղից ջուր բխեցրեց։ Հենց սա մարգարեացավ ֆրանկների մասին, երբ վերջիններս դրավել էին Երուսաղեմ սուրբ քաղաքը, թե պարսից ժողովուրդը նորից կհզորանա և սրով կգա մինչև Օվկիանոս ծովի ափը, մի բան, որին մենք ականատես եղանք. հոգևորականների և աշխարհականների մասին ասաց, թե հավատքում նրանք թուլ են լինելու, որ երկրի երեսից վերանալու է աստվածապաշտությունը, որ թուլանալու է հավատքը, փակվելու են սուրբ եկեղեցու դռները, մարդիկ հեռու են կանգնելու բարեգործությունից, մոռանալու են Քրիստոսի Սուրբ Ավետարանի պատվիրանները, աշխարհիս երեսին հորդելու են մեղսագործությունն ու չարագործությունը, մարդիկ ծիծաղելու են մեղքերի ծովում, բոլոր հավատացյալ ժողովուրդները մոռանալու են արդարություն գործելը։ Ահա, այդ տարին վախճանվեց սուրբ ճգնավորը և թաղվեց Կաստաղոն կոչվող վանքում, Վահկա կոչվող անառիկ բերդի մերձակայքում՝ Տավրոս լեռան փեշերին։

Այդ տարին Մոսուլի և Մծբինի ամիրա Ճկրմիշը զորահավաք կատարեց և հնձի ժամանակ, մեծաքանակ զորքով իջավ Ուռհա քաղաքի դեմ։ Ֆրանկ զորքերի հրամանատարն էր Ռիչարդը, որին Տանգրին քաղաքի պահապան էր նշանակել։ Վերցնելով քաղաքի կայազորը, նա անխոհեմաբար հետևակազորով դուրս եկավ պարսից քաջ ու կռվող զորքերի դեմ պատերազմելու։ Պարսիկները, տեսնելով ֆրանկ զորքերի անպատրաստ լինելը, բախվեցին նրանց և բոլորին թափեցին քաղաքի խրամի մեջ։ Մտնելով քաղաքի դարպասով ներս, նրանք կոտորեցին շուրջ չորս հարյուր հիսուն հոգի և մաշկահան անելով բոլորի գլուխները, տարան Պարսկաստան։ Այդ օրը Ուռհայում մեծ սուգ էր, բոլոր տներում՝ ողբ ու լաց։ Ողջ Ուռհա քաղաքը արյամբ էր ներկված։ Ճկրմիշը մեծ հաղթանակով վերադարձավ և գնաց իր երկիրը։

Այդ տարին վախճանվեց ֆրանկների կոմս Ջնճիլը՝ Տրապոլիս քաղաքի տերը։ Նա իր կառուցած արտաքին քաղաքը, ինչպես և իր զորքերը հանձնեց իր քրոջորդի Պերթրանին[391], քաջ և կռվող մի մարդու։ Այս Ջնճիլն էր, որ Քրիստոսի զենքը տարավ Կոստանդնուպոլիս՝ հունաց կայսր Ալեքսիին։

Այդ տարին Ջահան գավառում գտնվող Ասլասթան[392] կոչվող քաղաքը սարսափելի նեղություններ և փորձություններ կրեց ֆրանկ զորքերից։ Կրած նեղությունների պատճառով [բնակիչները] որոշեցին նրանց վատություն անել և անցնել այլազգիների կողմը. հայերը գաղտնի մարդ ուղարկեցին և, դիմացում գտնվող հեծյալներին քաղաք բերելով, նրանց հետ ուխտ կնքեցին։ Այնուհետև գնալով վերին բերդը, ասացին

Հայոց և գնացին կլայինն վերայ և ասեն ցղօրագլուխն Փռանգաց, եթէ «Արի, առ զաղգդ քո և գնա, և Աստուած ընդ քեզ»։ Եւ նորա լուեալ զայս՝ սրտմտեալ որպէս զլար գաղան և ելեալ ի պատերազմ ի վերայ քաղաքացեացն. յայնժամ քաղաքացիքն յաղթեալ նոցա և կոտորեցին զնոսա առհասարակ, որ ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի. և Տէր համարեցաւ նոցա զայն արդարութիւն. և յաւուր յայնմիկ կոտորեցան իբրև ոգիք երիք հարիւր վասն չարեացն, զորս ածին ի վերայ հաւատացելոցն, զի յաւևր գարձուցին զերկիրն և արարին անմարդ, փշաբեր. և խոպան եղև երկիր առաջի նոցա. այգիք և ծառք գօսացան, և երեսք դաշտաց տատասկով լցան, և խցեալ ցամաքեցան աղբեւրք, բարձին զսէր և զուրախութիւն ի սիրելեաց, մատնութիւն և ատելութիւն տարածեցաւ ի վերայ երկրի. հաւուցին զերթևեկ յեկեղեցւոյ ի դառն չարեաց իւրեանց, և փակեցան դրունք տաճարին Աստուծոյ. շիջան կանթեղք ի լուսոյ, խափանեցան օրհնութիւնք Աստուծոյ ի տաճարէն Տեառն. քահանայք մատնեցան ի չար ծառայութիւնս և ի բանտս. սեղանք և աւազանք սըրբոյ եկեղեցւոյ փլեալ կործանեցան, և ծածկեալ եղեն խորհուրդ խաչի, և բուրումն խնկոց մոռացեալ եղև և ամենայն փառաբանութիւն Աստուծոյ արգելեալ եղև յամենայն գաւառն Ապլասթալին. և յայլ տեղիս քակեցան ժամատեղք, արհամարհեցան քահանայք, վերացաւ քննութիւն սուրբ հաւատոց, հալածեցաւ հշմարտութիւնն, մերժեցաւ արդարութիւնն, որոշեցաւ աստուածպաշտութիւնն և միաբան մոռացան զդատաստանն ահեղ աւետին Քրիստոսի։ Այս այսպէս գործեցաւ ի մոլի ազգէն Փռանգաց, վասն զի փառաւոր իշխանքն և գլխաւորքն նոցա հատան, և իշխանութիւն նոցա յանարժանն և յոչոքսն անկաւ և վասն այնորիկ յարուցին հալածանս և չարչարանս ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի ի ձեռն սաստիկ արծաթսիրութեանն իւրեանց։

Յայսմ ամի փլաւ սուրբ Սոփի, որ էր ի քաղաքն յՈւռհա, ի յարևմտից կողմանէ մեծ մասն եկեղեցւոյն ի վայր անկաւ։

Յայսմ ամի երևեալ աստղ մի գիսաւոր՝ ահաւոր, մեծ և զարմանալի, և սոսկալի երևեալ տեսողացն՝ ի յարևմտից կուսէ հարաւոյ կողմանէն, և գէսքն նորա ելից զմեծ մասն երկնից. և էր ի Փետրուարի ամսոյ ԺԹ և էր յերեկոյի Տեառնընդառաջին և կացեալ զաւուրս չիսուն. և հիացումն գործէր տեսիլն նորա ամենայն արարածոց, վասն զի որպէս ղենացս գետոց երևեալ լինէր գէսք նորա։ Եւ ոչ ոք լուեալ այնպիսի հրաշալի տեսիլ. և ասացին իմաստունքն և հանճարեղքն՝ եթէ Այս աստղ թագաւորի է, թագաւոր ծնանի ի յայսմ ամի, որ նա տիրէ ամենայն արարածոց, և հասանէ թագաւորութիւնն նորա ի ծովէ մինչև

ֆրանկների զորահրամանատարին. «Վերցրու քո ժողովրդին և գնա, աստված քեզ հետ»: Լսելով դա, նա բարկացավ չար գաղանի նման և պատերազմի դուրս եկավ քաղաքացիների դեմ: Քաղաքացիները հաղթեցին նրանց և գլխովին ջարդեցին. նրանցից և ոչ մեկը կենդանի չմնաց: Տերը քաղաքացիների այս արարքը արդարացի գտավ: Այդ օրը կոտորվեց շուրջ երեք հարյուր հոգի, որի պատճառը այն վատություններն էին, որ նրանք գործել էին հավատացյալների նկատմամբ. նրանք երկիրը ավերակ էին դարձրել, մարդաթափ ու տատասկոտ, նրանց ուրքի տակ երկիրը խոպան էր դարձել, այգիներն ու ծառերը՝ չորացել, դաշտերը՝ փշով ծածկվել, աղբյուրները՝ ցամաքել: Նրանք սիրելիների միջև եղած սերը և ուրախությունը վերացրին, և երկրի վրա տարածվեց մատնությունն ու ատելությունը: Իրենց դառնագին վատությամբ նրանք վերացրին եկեղեցի հաճախելը, փակվեցին աստծո տաճարի դռները, մարեց կանթեղների լույսը, դադարեց աստծո փառաբանությունը տիրոջ տաճարում, քահանաները մատնվեցին դառը ստրկության և բանտի: Սուրբ եկեղեցու սեղաններն ու ավազանները փլվեցին և կործանվեցին, խաչի խորհուրդը վերացավ: Մարդիկ մոռացան խնկի բուրմունքը: Ապլասթանի բովանդակ գավառում վերացավ աստծո ամեն տեսակի փառաբանությունը: Այլ վայրերում ևս եկեղեցիներ քանդվեցին, քահանաներ անարգվեցին, սկիզբ առավ ճշմարիտ հավատքի քննությունը, հալածվեց ճշմարտությունը, մերժվեց արդարությունը, չքացավ աստվածապաշտությունը. բոլորը մոռացան Քրիստոսի ահեղ դատաստանը: Այդպես արեց, ահա, ֆրանկների մոլեգին ժողովուրդը, որովհետև երբ նրանց փառավոր իշխաններն ու հրամանատարները սպառվեցին, իշխանությունն անցավ անարժան և ոչինչ մարդկանց ձեռքը, ովքեր, լինելով այդպիսիք, իրենց սաստիկ դրամասիրության պատճառով ձեռնարկեցին քրիստոնյաների հալածանքն ու խոշտանգումը:

Այդ տարին փլվեց Ուռհա քաղաքի Սուրբ Սոֆիան. եկեղեցու արևմտյան կողմի մեծ մասը գետին տապալվեց:

Այդ տարին հարավ-արևմուտքում երևաց մի ահավոր, մեծ ու զարմանալի գիսավոր աստղ, որ տեսնողներին սոսկում պատճառեց: Նրա պոչը բռնեց երկնքի մեծ մասը: Դա փետրվար ամսի 13-ին էր, տեառնընդառաջի երեկոյան: Երևալով հինսուն օրվա ընթացքում, նա իր տեսքով բոլոր արարածներին ապշեցրեց. նրա պոչը գետի հոսանքին էր նման: Այսպիսի տարօրինակ երևույթի մասին մարդիկ չէին լսել: Իմաստուններն ու ճարտարամիտներն ասացին, թե այս աստղը թագավորի է, այս տարի թագավոր է ծնվելու, որը տիրելու է համայն մարդկության վրա, նրա թագավորությունը տարածվելու է ծովից ծով, ինչպես Ալեք-

ի ծով, որպէս զմեծն Աղէքսանդրոս զՄակեդոնացին։

Յայսմ ամի նկին բազմութիւն զօրաց Արապկաց յԱրաբացւոց աշխարհէն և կամէին տիրանալ Հալպայ և ամենայն Տաճկաց աշխարհին. էին իբրև բիւրս երեք։ Եւ յայնժամ յարուցեալ քաջ զօրականն Աստուծոյ Տանգրի կոմսն Անտիոքայ՝ և գնացեալ ի վերայ նոցա՝ և արար զնոսա փախստականս և անթիւ աւարաւ դարձաւ ի քաղաքն Անտիոք։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ի յամի ՇՄԵ մեռաւ Ճկրմիշ ամիրայն Մօսլայ ի ձեռաց Ջօլէ ամիրային Պարսից, վասն զի եղև սաստիկ պատերազմ երկուցունց կողմանցն և յաղթեաց Ջօլի զօրացն Ճկրմիշին. և Հարին զնա նետիւ ի խոց մահու և չետ սակաւ աւուրց սատակեալ լինէր չար գազանն այն. և զամենայն աշխարհն տայր ի սուլտանն Սլիճ-Ասլանն, տայր և զՊաղտոյնն զկոմսն ի ձեռս նորա՝ զկոմսն Ուռհայոյ, վասն զի նա ունէր զՊաղտոյնն իւր ծառայ։ Եւ արար ժողով Սլիճ-Ասլան սուլտանն արևմտից և գնացեալ էառ զՄօսլ և զՃզիրա և զամենայն աշխարհն նորա։

Յայսմ ամի յառաջ քան զայս գայր Սլիճ-Ասլանն բաղում զօրօք ի վերայ քաղաքին Ուռհայոյ և կացեալ զաւուրս ինչ ի վերայ բաղում պատերազմաւ՝ և ոչինչ կարաց առնել և յարուցեալ դնաց էառ զքաղաքն, որ կոչի Խառան, և արար զամենայն աշխարհն ընդ ձեռամբ իւրով և դարձաւ յաշխարհն իւր։

Իսկ ի թուականութեանն Հայոց ի յամի ՇՄԶ եղև սաստիկ պատերազմ յաշխարհին Տաճկաց ի գաւառին Մօսլայ. Սլիճ-Ասլան և Ջօլի ամիրայն բաղում զօրօք հարան ընդ միմեանս՝ և եղև սաստիկ արեան հեղումն յերկոցունց կողմանց. և յաղթեաց Ջօլի զօրացն սուլտանին, և մնացեալ զօրքն իւր փախստական գնացին ի քաղաքն Մելտենի։ Եւ ապանաւ ի մեծ պատերազմին սուլտանն Սլիճ-Ասլանն, և եղև մահն նորա սուգ մեծ ի վերայ քրիստոնէից, զի էր այր բարի և քաղցր ի վերայ քրիստոնէից յամենայն կողմանց. և մնացեալ իւր չորս որդի տիրանային գաւառաց իւրոց։

Յայսմ ամի զօրաժողով եղեալ աղգն Պարսից երկոտասան հազար և անցեալ ընդ Տօրոս լեառն ի գաւառն, որ կոչի Անաւարզա, և արար աւար զամենայն երկիրն Թորոսի՝ որդւոյ Ռուբենայ, և գայր անցանէր ընդ դաշտն քաղաքին Մարաշայ. և անթիւ բազմութեամբ հասանէր յերկիրն Գող Վասլին, ի տեղին, որ կոչի Բերդուս՝ ի սահմանս նտիւրականնն։ Եւ լուեալ զայս իշխանն Հայոց Վասիլն, զօրաժողով արարեալ զգունդն Հայոց զօրացն և նոքա որպէս զարծիւս և կամ որպէս զկորիւն առիւծուց հասանէին ի վերայ այլազգեացն. և արարին սաստիկ և ահաւոր պատերազմ և մեծաւ յաղթութեամբ դարձուցին զԹուրքե-

սանդր Մակեդոնացունը։

Նույն տարին արաբացվոց աշխարհից բազում արաբական զորքեր եկան, կամենալով տիրանալ Հալեպին և տաճկաց համայն աշխարհին։ Նրանք շուրջ երեսուն հազար հոգի էին։ Դրա վրա աստծու քաջ զինվոր Տանգրին՝ Անտիոքի կոմսը, շարժվեց նրանց դեմ, փախուստի մատնեց և, անհամար ավար վերցնելով, վերադարձավ Անտիոք քաղաքը։

Հայոց 555 թվականին [23 փետրվար 1106—22 փետրվար 1107 թ.] Մոսուլի ամիրա Ճկրմիշը սպանվեց պարսից ամիրա Ջավլիի[393] ձեռքով։ Նրանց միջև կատաղի պատերազմ եղավ, որտեղ Ջավլին Ճկրմիշի զորքերին պարտության մատնեց։ [Ճկրմիշին] նետով մահացու վերք հասցրին, և մի քանի օր անց այդ չար գազանը սատակեց։ Նա իր բովանդակ երկիրը հանձնեց սուլթան Ալիճ Ասլանին, նրան հանձնեց նաև գերի վերցրած Ուռհայի կոմս Պաղտինին։ Արևմուտքի սուլթան Ալիճ Ասլանը զորահավաք արեց և դնաց գրավեց Մոսուլը, Ճզիրան և [Ճկրմիշին] պատկանող ողջ երկրամասը։

Նույն տարին, բայց վերոհիշյալ դեպքերից առաջ, Ալիճ Ասլանը բազում զորքերով հարձակվել էր Ուռհա քաղաքի վրա, ուր մի քանի օր կատաղի պատերազմ տվեց. ոչնչի չհասնելով, նա ելավ գնաց գրավեց Խառան կոչվող քաղաքը, ողջ շրջանը իրեն ենթարկեց, որից հետո գնաց իր երկիրը։

Հայոց 556 թվականին [23 փետրվար 1107—22 փետրվար 1108 թ.] տաճկաց երկրի Մոսուլ գավառում տեղի ունեցավ կատաղի պատերազմ։ Ալիճ Ասլանը և Ջավլի ամիրան մեծաթիվ զորքերով բախվեցին միմյանց, և երկու կողմից շատ արյուն թափվեց։ Ջավլին հաղթեց սուլթանի զորքերին. կենդանի մնացածները, փախուստի դիմելով, գնացին Մելիտենե քաղաքը։ Կատաղի պատերազմում սպանվեց սուլթան Ալիճ Ասլանը, որի մահը քրիստոնյաներին մեծ վիշտ պատճառեց, որովհետև նա բոլոր քրիստոնյաների հանդեպ բարի էր և հեզ։ Նրա գավառներին տիրեցին կենդանի մնացած չորս որդիները։

Նույն տարին տեղի ունեցավ պարսից զորահավաք՝ տասներկու հազար հոգի, որոնք, Տավրոս լեռան վրայով անցնելով Անավարզա կոչվող գավառը, ավարի առան Ռուբենի որդի Թորոսի[394] համայն երկիրը։ Նրանք եկան անցան Մարաշ քաղաքի դաշտով և անհամար բազմությամբ հասան Գող Վասիլի տիրույթները, Բերդուս[395] կոչվող վայրը, նվիրական սահմաններում[396]։ Հայոց իշխան Վասիլը, լսելով այդ մասին, հայկական զորքերի զորահավաք արեց, որոնք արծվի կամ առյուծի կորյունի նման հասան այլազգիների վրա։ Սաստիկ և ահավոր ճակատամարտ տեղի ունեցավ, որտեղ [հայերը] մեծ հաղթանակ տարան, թուրքերին

ի փախուստ և մխաբան սրով ղհետ ընթացան և արարին անթիւ կոտորածս զնոսա և կալան զբազումս ի նոցանէ և թափեցին զամենայն առ և զգերութիւն։ Եւ դարձաւ իշխանն Հայոց Վասիլն և ամենայն ազատագունդն Հայոց մեծաւ յաղթութեամբ և բազում ուրախութեամբ. եկեալ ի քաղաքն իւր Քեսուն՝ և տուեալ դոհութիւն Աստուծոյ, որ յամօթ արար զքշնամիսն խաչին Քրիստոսի։

Իսկ ի հասանել թուականութեանն Հայոց ՇՕՀ դարձեալ կրկնապատիկ ժողով արարին ազգն Պարսից և արս ընտիրս լինէին իբրև վեց հազար՝ և հանդերձ սուլտանովն իւրեանց գայինն յաշխարհն Վասլին՝ Հայոց իշխանին, և քինախնդիր լինէին վասն առաջին կոտորածին, զոր կոտորեաց իշխանն Վասիլն ի Բերդուսն, և դաշնաբար հասանէին ի սահմանս քաղաքին, որ կոչի Հարսն-մսուր։ Եւ էր ժամանակ հնձոցն արտորնայցն. և արարին կոտորածս զվաստակաւորսն և հանդերձ գերութեամբ դարձան և իջան առ բերդին, որ ասի Հարբեան։ Եւ յորժամ լուաւ իշխանն Հայոց Դող Վասիլն զգալ այլազգեացն, հասանէր զօրօք իւրովք ի վերայ նոցա հինգ հարիւր արամբք. և արարին սաստիկ պատերազմ քաջագունդքն Հայոց և ազատքն զմխիթանս յորդորէին և յօժարաբար քաջանային ընդդէմ Թուրքացն զօրացն. Ապաւաթ յաղատ ազգէ իւր զօրօքն յարձակեալ ի վերայ այլազգեացն, և Պետրոս քեռորդին Դող Վասլին իւր ազատօքն արիանայր, և Վասիլ ոմն Տղայ անուն՝ մայրենեօք յաղատ ազգէ, և նա իւր զօրօքն բեկանէր զթևսն զօրացն Պարսից, և Տիրան այր քաջ, որդի աղնուական ի մեծամեծացն Հայոց. և արարին պատերազմ ահաւոր քաջագունդն Հայոց և յաղթեցին զօրաց այլազգեացն մեծաւ յաղթութեամբ և արարին սաստիկ կոտորածս զնոսա և կալան զսուլտանն նոցա և զայլ բազում իշխանսն Պարսից և ի գերութիւն վարէին զնոսա առաջի իւրեանց։ Եւ դարձաւ իշխանն Հայոց Վասիլն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և եկեալ ի քաղաքն իւր Քեսուն՝ և փրկեաց զամենայն գերութիւնն, զոր առին այլազգիքն. և եղև մեծ ուրախութիւն հաւատացելոցն։

Յայսմ ամի Ճօսլինն գնեաց ի Ջօլէ զկոմսն Ուռհայոյ զՊաղտինն երեսուն հազար դահեկանի և երեկ առ իշխանն Հայոց Վասիլն. և արար մեծ ընդունելութիւն նոցա և երեք սմա բազում տուրս։ Եւ գնաց Պաղտինն և արար ժողովս հեծելոց ի Ռապան ի քաղաք Վասլին՝ և կամեցաւ պատերազմել ընդ Տանգրի ընդ առն աստուածապաշտի։ Եւ արարին Պաղտինն և Ճօսլինն զայս ինչ գործ անօրէնութեան, զոր ոչ էր հաճելի Աստուծոյ. առաքեցին առ ամիրայն Պարսից ի Ջօլի և բերին իւրեանց յօգնութիւն հինգ հազար ձիաւորով և յարուցին սաստիկ պատերազմ ընդ Տանգրի կոմսին Անտիոքայ վասն գաւառաց իւրեանց,

փախուստի մատնեցին, մեկ մարդու պես սրերով հալածեցին նրանց և մեծ ջարդ տվեցին, [թուրքերից] շատերին գերեցին ու խլեցին նրանց վերցրած ողջ ավարն ու գերիներին։ Հայոց իշխան Վասիլը և հայոց բովանդակ ազատագունդը մեծ հաղթանակով և ցնծությամբ եկան [Վասիլի] Քեսուն քաղաքը և գոհություն հայտնեցին աստծուն, որ խայտառակ արեց Քրիստոսի խաչի թշնամիներին։

Հայոց 557 թվականի [22 փետրվար 1108—20 փետրվար 1109 թ.] սկզբին պարսիկները, կրկնապատիկ զորք գումարելով՝ շուրջ վեց հազար ընտիր մարտիկներ, իրենց սուլթանի գլխավորությամբ եկան հայոց իշխան Վասիլի երկիրը՝ վրեժ առնելու Բերդուսում Վասիլ իշխանից ստացած ջարդի համար։ Նրանք հնձի օրերին գաղանների պես հասան Հիսն Մանսուր կոչվող քաղաքի սահմանները, կոտորեցին հնձվորներին և գերիներով հանդերձ շարժվեցին գնացին դեպի Հարթան կոչվող բերդը։ Հայոց իշխան Գող Վասիլը, լսելով այլազգիների գալստյան մասին, իր զորքով՝ հինգ հարյուր հոգով, հարձակվեց նրանց վրա։ Հայոց քաջագունդն ու ազատները, միմյանց սրտապնդելով, իրար հորդորելով կատաղի մարտ տվեցին և թուրք զորքերի դեմ արիություն հանդես բերեցին։ Ազատատոհմ Ապլասաթը[397] իր զինվորներով հարձակվեց այլազգիների վրա։ Իր ազատներով խիզախություն ցուցաբերեց և Գող Վասիլի քեռորդի Պետրոսը, ապա նաև մոր կողմից ազատ ոմն Վասիլ Տղա, որ իր զինվորներով ջարդեց պարսից զորքերի թևերը, ինչպես և քաջ Տիրանը՝ հայոց ազնվական մեծամեծներից մեկի որդին։ Հայոց քաջագունդը ահեղ ճակատամարտում այլազգիների դեմ մեծ հաղթանակ տարավ, սոսկալի ջարդ տվեց նրանց և նրանց սուլթանին ու պարսից բազմաթիվ այլ իշխանավորների գերի վերցրեց։ Հայոց իշխան Վասիլը մեծ հաղթանակով և բազմաթիվ ավարով եկավ իր Քեսուն քաղաքը. նա փրկեց այլազգիների վերցրած բոլոր գերիներին։ Հավատացյալները մեծ ցնծության մեջ էին։

Այդ տարին Ճոսլինը երեսուն հազար դահեկանով Ջավլիից փրկագնեց Ուռհայի կոմս Պաղտինին։ Նրանք եկան հայոց իշխան Վասիլի մոտ, որը նրանց փառավորապես ընդունեց և բազում նվերներ տվեց։ Պաղտինը գնաց և Վասիլի Ռապան քաղաքում հեծելազոր գումարեց, վճռելով պատերազմել Տանգրիի՝ մի աստվածապաշտ մարդու դեմ։ Պաղտինն ու Ճոսլինը ձեռնարկեցին ոչ աստվածահաճո մի գործ. նրանք դիմեցին պարսից ամիրա Ջավլիին էլ, նրանից ստանալով հինգ հազար հեծյալ օգնություն, կատաղի պատերազմ հարուցեցին Անտիոքի Տանգրի կոմսի դեմ՝ վերստին տիրանալու այն գավառներին, որոնք իրենց գերության

զոր առեալ էր Տանդրի, յորժամ էին ի գերութիւն, և ոչ տայր ի նոսա, և կամէր զնոսա Տանդրի իւր ի ճորտութիւն ածել, և նոքա ոչ հաւանէին նմա: Եւ եղև ժողով Վասլին առ նոսա արս ութ հարիւր, և այլ զօրք Պածինակայ ի Հոռոմոյ Թագաւորէն զօրացն, որք էին ի Մսիս քաղաք. և եղև ժողով բազում: Եւ յայնժամ գայր զինուորն Քրիստոսի Տանդրի հազար ձիաւորով և այլ հետևակ զօրք ընդ նմա. և ի սահմանսն Թլպաշարայ եղև սաստիկ պատերազմ Պաղտոյին և Տանդրէի, և մարտեան ընդ միմեանս ահագին և զարմանալի: Իսկ զօրքն Պարսից արարին սաստիկ կոտորած զհետևակ զօրսն Փռանգաց ի Տանդրէի զնդէն. իսկ ի բազմանալ պատերազմին յաղթեաց Տանդրի զօրացն Պաղտունին և արարին փախստական զնոսա: Եւ յայնժամ զարձաւ մեծաւ սրտմտութեամբ ի վերայ Ջօլէ և սուր ի գործ արկեալ՝ վարէր զնոսա սաստիկ կոտորածով. և մեռաւ յաւուր յայնմիկ ի դասուց քրիստոնէից ոգիք իբրև երկու հազար. և զարձաւ Տանդրի մեծաւ յաղթութեամբ և դնաց յԱնտիոք ի քաղաքն իւր: Եւ Պաղտինն լինէր փախստական և անկանէր ի բերդն, որ ասի Արևընդան. և Ճօսլինն մտանէր ի Թլպաշար ի բերդն իւր և զերծաւ:

Եւ յորժամ լուան զայս ի քաղաքն Ուռհա, առհասարակ ի սուգ և արտմութիւն մտին վասն Պաղտնին, վասն զի մեռեալ գիտացին զնա. և արարին ժողով յեկեղեցին ի սուրբն Յովհաննէս և առ պապիոսն Փռանգաց վասն միաբանութեան, զի երկնչէին, թէ զարձեալ անկանի քաղաքն ի Տանդրի և նա տայ զմեզ ի ձեռն Ռաջարդին. զի նա յորժամ ունէր զքաղաքն Ուռհա, բազմաց աւեր արար: Իսկ յորժամ եկին ի մի վայր քաղաքացիքն Ա՛հակոյ բանս խօսեցան ընդ պապիոսն և ասացին. «Ձեր մարդ և մեր թող պահեն զկլայն քաղաքին, մինչև մեզ տէր յայտնի»: Եւ զկնի միոյ աւուրն գայր Ճօսլինն և Պաղտին և մտանէին ի քաղաքն Ուռհա. և արարին վասն այն խօսիցն քննութիւնս. և համարեցան զայն բան արատ և թիւրեցին զխօսքն ի չար խորհուրդս և բազմաց շատ աւեր ածին և զայլոց զանմեղաց զաչսն ի լուսոյ խաւարեցուցին: Եւ յաւուրն յայնմիկ արարին չարաչար խրատ քրիստոնէից, վասն զի ազգն Փռանգաց դիւրաւ լսէին ամենայն չար մատնութեանն և յօժարութեամբ հեղումն արեան առնէին անմեղ և արդար արանց. և այնչափ յանդգնեցան՝ մինչև զարքեպիսկոպոսին Հայոց զՏէր Ստեփաննոսին զաչսն հանէին, զոր գիտացեալ քաղաքացեացն զանմեղութիւն նորա՝ զնեցին զնա հազար դահեկանս:

Յայսմ ամի եղև դառնաշունչ և գազան ձմերոց. և ի բարկութենէ օդոյն՝ հատան բազում վայրի անասունք, և թռչնոց կորուստ եղեն ընդ

ժամանակ անցել էին կոմսի ձեռքը (Տանգրին չէր վերադարձնում այդ հողերը, բացի այդ, նա ուզում էր նրանց իրեն հպատակ դարձնել, որին նրանք դեմ էին)։ Վասիլը նրանց ութ հարյուր հոգի տվեց, [նրանց միացան] և հոռոմոց կայսեր բանակում ծառայող պածինակների զորքերը, որ Մսխս քաղաքում էին գտնվում։ Հսկայական մի բանակ սաացվեց։ Քրիստոսի ընկեր Տանգրին հազար ձիավորով և այլ հետևակ զորքով շարժվեց [նրանց դեմ]։ Թլպաշարի սահմաններում Պաղտինի և Տանգրիի միջև կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ. պարսից զորքը մեծ ջարդ տվեց Տանգրիի գնդի ֆրանկ հետևակին։ Մարտը թեժացավ. Տանգրին հաղթեց Պաղտինի զորքերին և փախուստի մատնեց, այնուհետև գազազած հարձակվեց Ջավլիի վրա և, սուրը գործի դնելով, նրան մեծ ջարդ տվեց։ Այդ օրը շուրջ երկու հազար քրիստոնյա սպանվեց։ Տանգրին մեծ հաղթանակով վերադարձավ գնաց իր Անտիոք քաղաքը։ Փախուստի դիմած Պաղտինը ապաստան գտավ Արևընդան կոչվող բերդում[398], իսկ Ճոսլինն էլ փրկվեց՝ ապաստան գտնելով իր Թլպաշար բերդում։

Երբ այդ բանի լուրը հասավ Ուռհա, բոլորը սգացին և վշտահար եղան, որովհետև ենթադրեցին, որ Պաղտինը սպանվել է։ Սուրբ Հովհաննես եկեղեցում ֆրանկ քահանայի գլխավորությամբ նրանք ժողով գումարեցին միաբանության վերաբերյալ, քանզի վախենում էին, որ քաղաքը նորից կրնկնի Տանգրիի ձեռքը, իսկ նա էլ իր հերթին այն կհանձնի Ռիչարդին (նա, երբ նախկինում տիրում էր Ուռհա քաղաքին, շատերին էր թալանել)։ Ժողովի մասնակից Ուռհայի քաղաքացիները, դիմելով քահանային՝ ասացին. «Ձեր և մեր մարդիկ թող պաշտպանեն քաղաքի բերդը, մինչև որ մեզ տեր հայտնվի»։ Մեկ օր անց Ճոսլինն ու Պաղտինը մտան Ուռհա քաղաքը։ Նրանք տեղի ունեցած բանակցությունների վերաբերյալ հարցաքննություն կատարեցին և գտան, որ դատապարտելի է դա։ Նենգափոխելով ասված խոսքերի իմաստը, նրանք շատերին մեծ փորձանքների ենթարկեցին, անմեղ ոմանց աչքի լույսը խավարեցրին։ Ֆրանկներն այդ օրը քրիստոնյաներին խոշտանգեցին, քանզի նրանք հեշտությամբ հավատ էին ընծայում ամեն մի մատնության և հոժարությամբ արդար ու անմեղ մարդկանց արյունն էին թափում։ Նրանք այն աստիճան չափն անցկացրին, որ նույնիսկ կամեցան հայոց արքեպիսկոպոս տեր Ստեփանոսի աչքերը հանել, քաղաքացիները, սակայն, հաստատ համոզված լինելով այդ մարդու անմեղությանը, հազար դահեկան փրկագնով ազատեցին նրան։

Այդ տարին շատ խիստ ու սարսափելի ձմեռ արեց։ Սաստիկ սառնամանիքից համայն երկրի վրա ոչնչացան, կորստյան մատնվեցին բազ-

ամենայն երկիր։ Եւ երեկ ի յաշխարհն Պարսից սեաւ ձիւն և եղև այն ահաւոր նշան ի վերայ ազգին Պարսից, զոր ոչ կարացին իմաստունքն Պարսից գիտենալ։

Յայսմ ամի շարժեցաւ սաստիկ պատերազմ ի յԱրաբիա՝ որ ասի Բասրայ, որ է տուն Յոբայ. ժողովեցան ազգն Արապկաց և Թուրքաց և արարին ահագին պատերազմ ընդ միմեանս. յայնժամ զօրքն Արապկաց արիաբար և սաստկապէս մարտեան ընդդէմ զօրացն Պարսից և մեծաւ յաղթութեամբ հարին զնոսա և կոտորելով արարին զնոսա փախստական։ Կարձեալ արարին ժողով զօրաց զօրագլուխն Թուրքաց և գայլին ի վերայ արապկիկ զօրացն՝ և քաջաքան պատերազմաւ արարին զնոսա փախստականս. և արք յիսուն հազար ի զօրացն Արապկաց եկին ի գաւառն Հալպայ քաղաքին և կամեցան լինել ընդ ձեռամբ Տանգրէի Անտիոքայ կոմսին. և կացեալ գաւուրս ինչ՝ դարձան յաշխարհն իւրեանց։

Իսկ ի թուականութեանն Հայոց յամի ՇՄՀ զօրաժողով արար կոմսն Ուռհայոյ Պաղտինն և Ճօսլին կոմսն Թլպաշարայ՝ և գնացին ի վերայ քաղաքին Խառնայ, վասն զի զարտորայսն նոցա կերիցեն։ Եւ էր ընդ նոսա ազատ ոմն հայեցի ի զօրաց Վասլին, որդի Տաճատայ իշխանին Տարօնոյ, որ անուանէր Ապլասաթ և էր այր քաջ և պատերազմող ընտիր. սա ի Վասլէն խռովութեան ազգաւ եկեալ էր ի յՈւռհա. և յորժամ հասան ի դուռն քաղաքին Խառնայ, յայնժամ Ուռհայեցիքն սկսան ալաւի առնել զարտորայսն. և զօրքն Թուրքաց յանկարծակի հասանէին ի վերայ նոցա հազար և հինգ հարիւր ձիաւորով և սպանանէին ի յՈւռհայեցւոցն մարդ հարիւր և յիսուն, և զօրքն Փռանգաց սակաւ էր և կամէր փախչել ի յՈւռհայ։ Յայնժամ Ապլասաթն որպէս զառիւծ դոչեաց և ձայն տուեալ զօրաց իւրոց՝ և նոքօք բեկանէր զճակատ զօրացն այլազգեաց. և ապա դարձաւ Փռանգն ի վերայ և յետս պահեցին զզօրսն Թուրքաց. և դարձաւ Փռանգն ի յՈւռհա, և Թուրքն պատերազմաւ զհետ երթայր, և անվնաս մտան ի քաղաքն յՈւռհա։ Եւ Ապլասաթն ոչ հաճեալ ի գործ Փռանգին՝ և դարձաւ առ Վասիլն. և էր խոցեալ ի բազուկն, բայց անվնաս մնաց ի մահուանէ, վասն զի երկաթն էառ զզարկն։

Յայսմ ամի առին զծովահայեաց քաղաքն, որ անուանեալ կոչի Տրապօլիս, կացեալ ի խսար զամս տասն և մին, նեղեալ ի սաստիկ պատերազմացն և յարգելական ժամանակացն, վասն զի թագաւորն Երուսաղէմի Պաղտինն և Բերդանն՝ ազգականն մեծ կոմսին Զնճլին՝ ունէին զնոսա ի մեծ նեղութիւն. յայնժամ կոչեն Տրապօլացիքն զՏանգրի զկոմսն Անտիոքայ և տան զՏրապօլիս ի ձեռս նորա։ Եւ յայնժամ թագաւորն Երուսաղէմի և Բերդանն յարուցին պատերազմ ի վերայ

մաթխվ վայրի կենդանիներ և թռչուններ։ Պարսից երկրում սև ձյուն տեղաց. դա պարսից ժողովրդի գլխին գալիքի ահավոր մի նշան էր, որը, սակայն, պարսից իշխանները չկարողացան բացատրել։

Այդ տարին արաբական Բասրա կոչվող [քաղաքի] մոտ, որ Հոբի հայրենիքն է, կատաղի պատերազմ տեղի ունեցավ։ Արաբ և թուրք [զորքերը] հավաքվելով սարսափելի պատերազմ տվեցին միմյանց։ Արաբների զորքը արիաբար և կատաղորեն մարտնչեց պարսից զորքերի դեմ, մեծ հաղթանակ տարավ և, ջարդ տալով, փախուստի մատնեց նրանց։ Թուրքերի զորահրամանատարը կրկին անդամ զորահավաք արեց, հարձակվեց արաբների զորքերի վրա և, արիաբար կռվելով, նրանց փախուստի մատնեց։ Արաբ զինվորներից հիսուն հազար հոգի եկան Հալեպ քաղաքի գավառը, կամենալով ենթարկվել Անտիոքի կոմս Տանգրիի հրամաններին. մի քանի օր մնալով, վերադարձան իրենց երկիրը։

Հայոց 558 թվականին [22 փետրվար 1109—21 փետրվար 1110 թ.] Ուռհայի կոմս Պաղտինը և Թլպաշարի կոմս Ճոսլինը զորահավաք արեցին և գնացին Խառան քաղաքի վրա, նպատակ ունենալով թալանել նրա արտերի բերքը։ Նրանց հետ էր Վասիլի զինվորներից մի հայ, Տարոնի իշխան Տաճատի որդին, անունը Ապլասաթ, մի քաջ և լավ կռվող մարդ։ Սա, Վասիլի հետ ունեցած դժտության պատճառով, Ուռհա էր եկել։ Ուռհայեցիները, հասնելով Խառան քաղաքի դուռը, սկսեցին թալանել արտերը։ Թուրքերի զորքը հազար հինգ հարյուր ձիավորով անակնկալ կերպով հարձակվեց ուռհայեցիների վրա և հարյուր հիսուն հոգու կոտորեց։ Ֆրանկների փոքրաթիվ զորքը որոշեց փախուստի դիմել Ուռհա։ Ապլասաթը, սակայն, առյուծի նման գոչելով, ձայն տվեց իր զինվորներին և նրանցով ճեղքեց այլազգիների զորաշարքի ճակատը։ Ֆրանկները ետ դարձան և, հարձակվելով թուրքերի զորքերի վրա, նրանց ետ մղեցին։ Ֆրանկներն առանց վնաս կրելու վերադարձան Ուռհա քաղաքը, իսկ թուրքերը կռվելով նահանջեցին։ Ֆրանկների արարքը Ապլասաթին դուր չեկավ, այդ պատճառով նա վերադարձավ Վասիլի մոտ։ [Ապլասաթի] բազուկը վիրավորվել էր, բայց վերքը մահացու չէր, քանզի հիմնական հարվածն իր վրա էր ընդունել [զրահի] երկաթը։

Այդ տարին, տասնմեկ տարվա[899] պաշարումից հետո, գրավվեց Տրապոլիս կոչվող ծովափնյա քաղաքը։ Սաստիկ պատերազմը և շրջապատումը [քաղաքի] համար դժվարին վիճակ էին ստեղծել, երուսաղեմի թագավոր Պաղտինը և մեծ կոմս Ջնճիլի ազգական Բերդանը բնակիչներին մեծ նեղության մեջ էին գցել։ Տրապոլսի բնակիչները ստիպված դիմեցին Անտիոքի կոմս Տանգրիին և Տրապոլիսը նրան հանձնեցին։ Դրա վրա Երուսաղեմի թագավորը և Բերդանը Տանգրիին պատերազմ

Տանդրէի, վասն զի զքաղաքն նոքա ունէին ի խսարի։ Յայնժամ պատրիարգն և եպիսկոպոսունքն իւրեանց մտան ի մէջ նոցա և արարին խաղաղութիւն երկուց կողմանցն, և դարձաւ Տանդրի յԱնտիոք։ Իսկ թագաւորն Երուսաղէմի արար ժողովս ի վերայ Տրապօլսոյ զամենայն զծովեցի զզօրսն, և պատեալ զքաղաքն, զծով և զցամաքն, և արարին ի վերայ նորա ահագին պատերազմ, և սրով վառեցաւ քաղաքն և առհասարակ զամենայն քաղաքն կոտորեաց սրով, և լցաւ քաղաքն արեամբ. և ապին զօրքն Փռանգաց անթիւ գանձս ոսկւոյ և արծաթոյ և անհամար ծառայս տանէին ի յաշխարհն Փռանգաց։

Իսկ ի գալ հասանել թուականութեանն Հայոց ի յամս ՇՕԹ կոմսն Ուռհայոյ կամեցաւ երկրորդ պատերազմ յարուցանել ի վերայ Տանդրէի։ Յայնժամ Պաղտինն և Ճօսլինն առ յանդգնութեան սրտից իւրեանց խորհեան խորհուրդ, զոր ոչ վայել էր հաւատացելոց. առաքեցին ի Մօսլ քաղաք և կոչեցին իւրեանց յօգնութիւն զասպասալարն Պարսից, որ կոչի Մամտուտ, այր գազան և հզօր պատերազմող. և նորա լուեալ զայս և յօժարութեամբ յանձին կալեալ և արարեալ ժողով առ ինքն զամենայն տունն Թուրքաց՝ և ահագին բազմութեամբ գայր հասանէր ի սահմանս քաղաքին Խառնայ. և արձակեաց կոչեաց զկոմսն Ուռհայոյ, զի եկեսցէ առ նա. և նորա զարհուրեալ ոչ իշխեաց գնալ առ այլազգին. յայնժամ դիտացեալ Մամտուտն, եթէ խաբեալ եղև ի նմանէ, դարձաւ ի վերայ Ուռհայոյ ի պատերազմ։ Եւ տեսեալ զայս Պաղտունին՝ և հանէր զՃօսլինն ի խնդիր զօրացն և առաքէր առ թագաւորն Երուսաղէմի, զի հասանիցէ յօգնութիւն քաղաքին Ուռհայոյ. և նա կայր բանակեալ ամենայն զօրօքն Փռանգաց ի վերայ քաղաքին, որ ասի Պէրութ, ի վերայ Ովկիանոս ծովուն։ Իսկ ի վերայ այսր ամենայնի գայր հասանէր ամիրայն Մամտուտն զօրօք անհամար բազմութեամբ և ելից զլայնատարած դաշտն Ուռհայոյ, պատեաց առհասարակ զամենայն քաղաքն և ծածկեաց զլերինս և զբլուրս։ Եւ ժողովեցան առ նա ամենայն արեվելք, փախեաւ ամենայն գաւառն, եղև յանմարդ, և սաստիկ պատերազմաւ ահաբեկեաց զամենայն քաղաքն։ Եւ զաւուրս հարիւր կայր Ուռհա ի մեծ նեղութիւն, և տարակուսեալ լինէին յամենայն կողմանց, ձանձրացեալ յանդադար պատերազմացն։ Եւ սկսան ի հայէ քաղցնուլ և վտանգիլ, վասն զի մուտ և ելն արգելեալ էր ի բազմութենէ զօրացն, զի զորս ըմբռնէին՝ սպանանէին. և լցաւ վայրքն ի դիականցն, զորս կոտորեալ էին շուրջ զքաղաքաւն. և այրեաց առհասարակ զամենայն գաւառն, որ ոչ մնաց տեղի շէն և ոչ մի. զայս արար հրամանաւ Սուլիման արևելից ամիրային. և կոտորեաց առհասարակ զամենայն դրախտին քաղաքին, որ կայր արտաքոյ, և հիմն ի վեր արար զամենայն վա-

հայտարարեցին, որովհետև իրենք էին քաղաքը պաշարել։ Այն ժամանակ պատրիարքը և [ֆրանկ] եպիսկոպոսները միջամտելով՝ երկու կողմերը հաշտեցրին։ Տանգրին վերադարձավ Անտիոք։ Բայց Երուսաղեմի թագավորը Տրապոլսի դեմ հանեց ամբողջ ծովային հետևակը, պաշարեց քաղաքը ծովից ու ցամաքից և կատաղի պատերազմ մղեց նրա դեմ։ Նա քաղաքի ողջ բնակչությանը սրի քաշեց։ Քաղաքը ողողվեց արյամբ։ Ֆրանկ զինվորները տիրացան հսկայական քանակությամբ ոսկու և արծաթի, անհամար գերիներ քշեցին ֆրանկների երկիրը։

Հայոց 559 թվականի [22 փետրվար 1110—21 փետրվար 1111 թ.] սկզբին Ուռհայի կոմսը ցանկացավ երկրորդ անգամ պատերազմել Տանգրիի դեմ։ Պաղտինն ու Ճոսլինը հանդգնություն ունեցան մի որոշում կայացնել, որ վայել չէր հավատացյալ մարդուն։ Նրանք դիմեցին Մոսուլ քաղաքը և օգնություն խնդրեցին պարսից սպասալարից, որին Մամտուտ[400] էին ասում, մի գազանաբարո, բաջ կռվող մարդուց։ Վերջինս հոժարությամբ ընդառաջեց նրանց խնդրանքին, թուրքաց ողջ երկրում զորահավաք արեց և հսկայական բանակով եկավ հասավ Խառան քաղաքի սահմանները։ Ապա նա իր մոտ կանչեց Ուռհայի կոմսին, բայց վերջինս վախեցավ գնալ այլազգիի մոտ։ Մամտուտը, ենթադրելով, որ խաբվել է նրանից, կռվի դիմեց ընդդեմ Ուռհայի։ Դրա վրա Պաղտինը Ճոսլինին Երուսաղեմի թագավորի մոտ ուղարկեց՝ զորք խնդրելու, որպեսզի նա Ուռհա քաղաքին օգնության հասնի։ [Թագավորը] ֆրանկների ամբողջ զորքով բանակել էր Օվկիանոս ծովի ափին գտնվող Պեյրութ քաղաքի դեմ։ Այդ միջոցին Մամտուտ ամիրան անթիվ-անհամար զորքով եկել ողողել էր Ուռհայի լայնատարած դաշտը, շրջապատել էր ողջ քաղաքը և [զինվորներով] ծածկել լեռներն ու բլուրները։ Համայն արևելքը նրա շուրջն էր հավաքվել, իսկ գավառի ողջ [բնակչությունը]՝ դիմել փախուստի. գավառն անմարդաբնակ դարձավ։ [Մամտուտը] հսկայական պատերազմով բովանդակ քաղաքը ահ ու դողի մեջ գցեց։ Ուռհան հարյուր օր մեծ նեղության մեջ էր, [բնակչությունը] վերջ չունեցող պատերազմից հոգնել, անելանելի դրության մեջ էր ընկել։ Զգացվեց հացի պակասություն և սովամահություն եղավ, որովհետև թշնամու բազում զորքերի առկայությունը հնարավորություն չէր տալիս քաղաքում մուտք ու ելք անել, [թշնամու] ձեռքն ընկնողը սպանվում էր։ Քաղաքի շրջակա վայրերը լցվել էին սպանված մարդկանց դիակներով, գավառն ամբողջությամբ կրակի ճարակ դարձավ, չմնաց և ոչ մի շեն տեղ։ Դա կատարվեց արևելից ամիրա Սուլիմանի հրամանով։ Նա կտրատեց քաղաքի պատերից դուրս գտնվող անտառի ծառերը, քարուքանդ արեց լեռ-

նորայսն, որք էին ի լերինս, և այսպիսի օրինակաւս կայր Ուռհա ի մեծ նեղութեան։ Եւ զկնի այսր ամենայնի առաւ Պէրութ ի Տաճկաց օգնութեամբն Աստուծոյ. և առհասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեցին և լցան ղօրքն Փռանգաց բազմութեամբ աւարաւ։ Եւ ճօսլինն էր ի յառնուլն քաղաքին Պէրութայ, և արար ճօսլինն ահաւոր քաջութիւնս։

Եւ զկնի այսր ամենայնի շարժէր զամենայն ղօրսն և գայր յօգնութիւն քաղաքին Ուռհայոյ. գայր և թագաւորն Երուսաղէմի և Բերդանն կոմսն Տրապօլսայ, գային ամենայն ղօրքն ի յԱնտիոք քաղաք առ Տանկրի և մեծաւ աղաչանօք հաւանեցուցանէին զնա հասանել յօգնութիւն քաղաքին Ուռհայոյ։ Եւ խաղացեալ ամենայն ղօրօքն Փռանգաց եկին առ իշխանն Հայոց առ Վասիլն, և նա վառեաց զամենայն ղօրս իւր և հասանէր ի Սամուսատ. գայր և զկնի նոցա իշխանն Հայոց Ապլղարիպն ղօրօք իւրովք՝ որ նստէր ի քաղաքն, որ անուանեալ կոչի Պիր. և յայնժամ բազմութեամբ ղօրօք իւրեանց անցին ի սահմանս քաղաքին Ուռհայոյ։ Եւ լուեալ զայս աստիճանալարն Թուրքաց Մամտուան, շարժեալ զբանակն իւր և իջանէր ի քաղաքն իւր ի Խառան, և հասան ղօրքն Փռանգաց ի դուռն քաղաքին Ուռհայոյ և բանակս հարկանէին անդ։ Եւ ի լուսանալ միւս այլ աւուրն կազմեցան միաբան ի գործ պատերազմին, և հանեալ բարձրացուցին զվարադայ սուրբ նշանն ի վերայ զեղարդեան և տանէին առաջի ղօրացն. և Թուրքն գնայր հասանէր յայնկոյս քաղաքին Խառնայ, վասն զի նենգաւորութեամբն իւրեանց տարցեն յօտար երկիր. և կացուցանէին ի Խառան բազում զօրս քմին. իսկ զօրագլխովքն Փռանգաց իմացան զկեղծաւորութիւն զօրացն Թուրքաց, դարձան բանակեցան ի վերայ ամուր բերդին՝ որ կոչի Շէնաւի, ի Տաճկաց սահմանին, և արարին ի վերայ նորա սաստիկ պատերազմ։ Եւ յայնժամ լսէ Տանգրի չար համբաւ վասն իւր ի յայլ զօրագլխացն, առեալ զզօրս իւր և հասանէր ի Սամուսատ՝ և իջեալ յեզր եփրատայ. և դարձաւ ամենայն ղօրքն Փռանգաց զհետ նորա։ Յայնժամ լուեալ քաղաքացիքն և գաւառացիքն, որ ի քաղաքն Ուռհա, ելին առհասարակ զհետ ղօրացն Փռանգաց՝ մայր որդւովք իւրովք։

Իսկ երկու Փռանգ գործեցին գործ անօրէնութեան. գնացին առ Մամտուտն և ուրացան զքրիստոսական հաւատսն և ասացին Մամտուտին՝ եթէ ամենայն բանակն Փռանգաց փախստական կան և երթան։ Եւ լուեալ զայս Մամտուտն՝ դարձաւ զհետ ղօրացն Փռանգաց՝ և ի քաղաքին Ուռհայոյ դրանէն մինչև ի յեփրատ գետն ելից արեամբ զերկիրն, զքաղաքացիքն և զգաւառացիքն. և հասաւ Մամտուտն յեզր եփրատայ, արար անթիւ կոտորածս զգաւառացիքն և տունորդօք էառ զնո-

ներում գտնվող բոլոր վանքերը. Ուռհան շատ նեղ վիճակում էր։ Այդ բոլորից հետո աստծո օգնությամբ տաճիկների ձեռքից գրավվեց Պեյրութը, քաղաքի ողջ բնակչությունը սրի քաշվեց, ֆրանկ զինվորները ձեռք բերեցին հսկայական ավար։ Պեյրութ քաղաքի գրավմանը մասնակցում էր և Ճոսլինը, որ մեծ արիություն հանդես բերեց։

Այս բոլորից հետո [Ճոսլինը] ամբողջ զորքի գլուխն անցած դիմեց Ուռհա քաղաքի օգնությանը։ Եկավ նաև Երուսաղեմի թագավորը և Տրապոլսի կոմս Բերդանը։ Բոլոր զորքերը գումարվեցին Անտիոք քաղաքում՝ Տանգրիի մոտ, որին, շատ պաղատելով, համոզեցին Ուռհա քաղաքին օգնության հասնել։ Ֆրանկների բովանդակ զորքը շարժվեց եկավ հայոց իշխան Վասիլի մոտ, որն իր հերթին սպառազինելով իր բոլոր զինվորներին, հասավ Սամոսատ։ Նրանցից հետո իր զորքերով եկավ նաև Պիր կոչվող քաղաքում[401] նստող հայոց իշխան Ապլղարիպը, և բոլորը, իրենց մեծաթիվ զորքերով, մուտք գործեցին Ուռհա քաղաքի սահմանները։ Թուրքերի սպասալար Մամտուտը, տեղեկանալով այդ մասին, բանակով իջավ իր Խառան քաղաքը։ Ֆրանկների զորքերը հասան Ուռհա քաղաքի դուռը և այնտեղ բանակեցին։ Երրորդ օրվա առավոտյան նրանք միահամուռ կերպով պատրաստվեցին պատերազմի. նրանք դուրս բերեցին վարադա Սուրբ Նշանը և, նիզակի վրա բարձրացրած, տանում էին զորքի առջևից։ Թուրքերը գնացին անցան Խառան քաղաքից այն կողմ, չարանենգորեն ուզենալով [քրիստոնյաներին] ներքաշել անծանոթ երկիր։ Նրանք Խառանում բազմաթիվ զինվորներ թողեցին դարանակալելու։ Ֆրանկների զորահրամանատարները, կռահելով թուրք զորքերի խորամանկությունը, վերադարձան և բանակեցին Շենավ[402] կոչվող անառիկ բերդի մոտ՝ տաճկաց սահմաններում և նրա դեմ համառ պատերազմ մղեցին։ Տանգրին, լսելով իր և մյուս զորահրամանատարների հասցեին ուղղված վատաբանության մասին, վերցրեց իր զորքերը, հասավ Սամոսատ և իջավ Եփրատի ափը։ Ֆրանկների ամբողջ զորքը հետևեց նրան։ Ուռհա քաղաքում գտնվող քաղաքացիներն ու գավառացիները, լսելով այդ մասին, բոլորը միասին գնացին ֆրանկների զորքերի ետևից՝ մայրն իր որդիներով։

Երկու ֆրանկ մարդ մի անօրենություն գործեցին։ Նրանք Մամտուտի մոտ գնացին, ուրացան քրիստոնեությունը և նրան ասացին, թե ֆրանկների ողջ զորքը փախուստի է դիմել։ Մամտուտը, լսելով այդ, հարձակվեց ֆրանկների զորքերի վրա և Ուռհա քաղաքի դռնից սկսած մինչև Եփրատ գետը արյամբ ողողեց՝ [կոտորեց] քաղաքացիներին և գավառացիներին։ Մամտուտը հասավ Եփրատի ափը, գավառացիներին մեծ ջարդ տվեց և տնով-տեղով գերեվարեց։ Ֆրանկներն ամբողջու-

սաւ։ Իսկ Փռանգն առհաւասար անցեալ էին յայնկոյս գետոյն. և Թուրքն զհաւատացեալս սրախողխող արարեալ, ղի անդէն բանակեալ կային որպէս զհօտս ոչխարաց, զաստուածասաստ բարկութիւնն էած ի վերայ նոցա, որ և Եփրատ իսկ ի յարիւն դարձաւ. և շատ այն էին, որ խեղդեցան ի ջուրն. մտանէին լեղորդքն և ջանային անցուցանել և ոչ կարէին. երթային ի նաւք և առաւել մտանէին ի նաւսն. և հինգ-վեց նաւ ընկղմեցաւ լի մարդօք, ղի ամենայն ոք ջանայր մտանել։ Եւ յայսմ աւուր աւերեալ եղև ամենայն գաւառն Ուռհայոյ և եղև յանմարդ. այս էր, որ գրեցին առաջին իմաստունքն, եթէ «Վա՛յ տանն Աբգարու». իսկ զօրքն Փռանգաց, որ էին յայնկոյս գետոյն Եփրատայ, տեսանէին զայս ամենայն անոս քրիստոնէիցն և ոչինչ կարէին օգնել և լային դառնապէս. յայնժամ դարձաւ Մամտուն մեծաւ յաղթութեամբ և գնաց ի Խառան, և անտի յառաջեաց ի յաշխարհն իւր գերութեամբ և անթիւ աւարաւ։

Իսկ Սուլիման մեծ ամիրայն արևելից կալեալ զՊալակ ամիրայն՝ կապեաց զնա երկաթի կապանօք և տարեալ եդ ի զնդան յԱյծեաց բերդն Տարօնոյ։ Իսկ զօրքն Փռանգաց գնացին ամօթալից յիւրաքանչիւր տեղիսն, վասն զի փոխանակ փրկութեան՝ անցումն արարին հաւատացելոցն. իսկ քաջ զօրականն Քրիստոսի Տանգրի արութեալ ժողովս և գնաց ի յաշխարհն Հալպայ քաղաքին՝ և իջեալ ի վերայ քաղաքաբերդին, որ ասի Թերիզ, և զբաղում աւուրս կացեալ ի վերայ նորա՝ և սաստիկ պատերազմաւ էառ զնա և ոչինչ վնասեցաւ մարդով։

Յայսմ ամի զօրաժողով արարին զօրքն Թուրքաց և մտին ի յաշխարհն Անաւարզա և արարին աւար զամենայն երկիրն և զմարպա, իսկ մեծ իշխանն Հայոց Թորոս՝ որդի Կոստանդեայ՝ որդի Ռուբինեայ ակն ածեալ ի բազմութենէ զօրացն Պարսից՝ ոչ համարձակեցաւ ելանել ի պատերազմ. և դարձաւ զօրքն Թուրքացն անթիւ գերութեամբ և աւարաւ գնաց յաշխարհն իւր։

Եւ յայսմ ամի բազում աւեր եղև յայնմ գաւառին. և դարձեալ յայսմ ամի եղև ահաւոր և սոսկալի նշան յաշխարհն Հայոց ի Վասպուրական գաւառին ի յաւուրս ձմերայնոյ ժամանակին, ղի եղև յաւուր միում ի մթին գիշերին կարեալ եղև հուր ի վերնական հաստատութենէ երկնից և ի բարձրութենէ անտի ցոլացեալ եղև և հարեալ զարկանէր զծովն Վասպուրականայ. և սաստկապէս գոչեաց ծովն և ցոլացեալ հարկանէր զցամաքն, և դողաց ծովն և ցամաքն ահաւոր դղրդմամբ. և փոխեաց ծովն զգոյն իւր ի գոյն արեան. և հուրն այն պատառեաց զհաստատութիւնն անդնդոց. իսկ ի յառաւօտուն տեսանէին սաստակեալ զբազմութիւն ձկանց ծովուն, և կային կուտեալ ձկունքն առ

թյամբ անցել էին գետի մյուս ափը: Թուրքերը սրի քաշեցրս ուխտաւորների հոտերի պես խոնված հավատացյալներին, աստվածաստաստ բարկությունը թափեցին նրանց գլխին. Եփրատի ջուրն արյուն դարձավ: Ավելի մեծ թվով [հավատացյալներ] ջրահեղձ եղան: Լողալ իմացողները դեռ էին մտնում և ջանք թափում մարդկանց մյուս ափն անցկացնել, բայց չէին կարողանում: Մեծ մասը դեպի նավերն էր դիմում, մեծ բազմությամբ մտնում նրանց մեջ, բոլորն էլ ուզում էին նավ մտնել, որի պատճառով մարդկանցով լի հինգ-վեց նավ ջրասույզ եղան: Այդ օրը Ուռհայի բովանդակ գավառը ավերակ ու մարդաթափ դարձավ: Սրա մասին էր, որ հին իմաստունները գրել էին. «Վա՜յ երկրին Աբգարի»: Եփրատ գետի մյուս ափին գտնվող Ֆրանկ ղինվորները, թեև ականատես էին լինում քրիստոնյաների գլխին եկած դժբախտությանը, բայց ոչընչով օգնել չէին կարողանում և միայն դառնագին լաց էին լինում: Մամտուտը մեծ հաղթանակով վերադարձավ Խառան, որտեղից էլ առաջ անցնելով դնաց իր երկիրը՝ գերիներով և հսկայական ավարով հանդերձ:

Իսկ արևելից մեծ ամիրա Սուլիմանը ձերբակալեց Պալակ[403] ամիրային և շղթայակապ տարավ բանտարկեց Տարոնի Այծյաց բերդում: Ֆրանկ զորքերն էլ, խայտառակ եղած, յուրաքանչյուրն իր տեղը գնաց. նրանք փոխանակ հավատացյալներին փրկության հասնելու, նրանց կորըստյան պատճառ դարձան: Իսկ Քրիստոսի քաջ ղինվոր Տանդրին զորահավաք անելով գնաց Հալեպ քաղաքի շրջանները, իջավ Թերեպ կոչվող բերդաքաղաքի վրա և, նրա դեմ բազմաթիվ օրեր համառ կռիվ մղելով, գրավեց այն՝ ոչ ոքի վնաս չհասցնելով:

Այդ տարին թուրքերը զորահավաք արեցին, մտան Անավարզայի շրջանը և բովանդակ գավառն ու Մարապան ավարի առան: Իսկ հայոց մեծ իշխան Թորոսը՝ Ռուբենի որդի Կոստանդնի որդին, երկյուղելով պարսից մեծաքանակ զորքից, չհամարձակվեց պատերազմի դուրս գալ: Թուրքերի զորքը անհամար գերիներով և ավարով վերադարձավ դնաց իր երկիրը:

Նույն տարին այդ գավառում մեծ ավերածություններ եղան: Հենց այդ տարին, ձմեռ ժամանակ, Հայաստանի Վասպուրական գավառում մի ահավոր ու սոսկալի նշան երևաց. մութ գիշերին բարձր երկնակամարից կրակ ցոլաց և ընկավ Վասպուրականի ծովը: Ծովը սաստիկ ալեկոծվեց և, ափից դուրս գալով, հարվածեց ցամաքը: Ծովն ու ցամաքը սասանվեցին սարսափելի դղրդյունով: Ծովն արյունագույն դարձավ: Կրակը պատռեց անդնդոց հաստատությունը: Առավոտյան մարդիկ ծովի բազում ձկներ սատկած գտան. նրանք իրար վրա էին դիզված ծովափին՝

եղերք ծովուն որպէս զփայտակոյտս մայրեաց, և հղտեալ եղեն վայրքն ի սաստիկ բազմութենէն. և տեսանէին ղցամաքային վայրքն, զի պատառեալ հերձ ի հերձ ի բազում տեղիս ահաւոր խորութեամբ, և ամենայն լսողքն զարմանային։

Դարձեալ եղև ի թուականութեանն Հայոց յամի ՇԿ գայր խաղայր Մամտուտն բազմութեամբ զօրօքն Թուրքաց՝ և հասանէր ի վերայ ամուր բերդին, որ կոչէր Թլկուրան, և արար պատերազմ ի վերայ նորա. և բերդապիքն նտուն առ վտանդին զբերդն ի ձեռս Մամտուտին. և կային ի բերդն քառասուն Փռանգ. առեալ զնոսա և կոտորեաց սրով, առեալ և զԴօտէթիլն՝ և գայր իջանէր ի Շէնաւ առ ամիրայն Արապկաց, որ ասէին Մնի, և յարուցեալ իջանէր ի գաւառն Ուռհայոյ ի բերդն, որ կոչի Ջուլման. և ժողովիցան առ նա ժողովք բազումք։ Յայնժամ գայր առ նա մեծ ամիրայն բազում զօրօք, որ ասի Ահմատիլ, որ էր մեծ ամիրայ, Սուլման արևելից ամիրայն, գայր և որդին Բուրսուխին՝ և հասանէին միաբան ի վերայ Ուռհայոյ. և կացեալ զսակաւ աւուրս՝ գնացին ի Սրուճ քաղաք. և անցանէին ընդ գետն Եփրատ և գային միաբան ի վերայ ամուր բերդին Թլպաշարայ. և լինէր յայնժամ ի բերդն կոմսն Փռանգաց Ճօսլինն, որ էր այր քաջ և հզօր պատերազմող. իսկ բազմութիւն զօրացն Թուրքաց բազում գունդս պատերազմաց արկանէին ի վերայ բերդին, և ոչինչ կարացին առնել։ Յայնժամ ամիրայն Պարսից Ահմատիլն լուեալ էր յառաջագոյն զքաջութիւն Ճօսլին, արար սէր միաբանութեան ընդ նմա՝ և եղեն եղբարք միմեանց։ Եւ յարուցեալ Մամտուտն ամենայն զօրօքն Պարսից գնայր ի վերայ Անտիոքայ և իջանէր ի տեղին, որ կոչի Շիզար. իսկ Տանդրի արարեալ ժողով զամենայն ազգն Փռանգաց. գայր և առ նա թագաւորն Երուսաղէմի Պաղտինն և Բերդրան կոմսն Տրապօլսայ, Պաղտոյին կոմսն Ուռհայոյ. և ի Շիզարն իջան երկոքեան բանակն հանդէպ միմեանց, և ոչ արարին պատերազմ. դարձաւ Մամտուտն և գաղտագնաց լինէր յաշխարհն իւր, և զօրքն Փռանգաց գնացին խաղաղութեամբ յաշխարհն իւրեանց։

Յայսմ ժամանակիս սաստկեալ լինէր Սուլիման ամիրայն արևելից՝ ի ճանապարհին յանկարծամահ եղեալ արժանաւոր սատակմամբ ի Տեառնէ, վասն զի արար բազում աւերս և կոտորածս ի գաւառս Ուռհայոյ։

Յայսմ ամի եղև վրէժխնդրութիւն յԱստուծոյ անմեղ արեան Գագկայ Շահնշահի՝ որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ, ի ձեռն առն հզօրի մեծ իշխանին Հայոց Թորոսի՝ որդւոյ Կոստանդի՝ որդւոյ Ռուբենայ։ Արդ ի յաւուրս Թորոսի էին սպանողքն Գագկայ արքային Հայոց ի բերդն, որ անուանեալ կոչի Կնդռօսկաւիս, ահաւոր ամրութեամբ բարձրացեալ՝ ան-

ինչպես մայրի ծառերի փայտակույտեր։ Սատկած անհամար ձկների գարշահոտությունը պատել էր շրջանը։ Մարդիկ տեսան, թե ինչպես գետինը տարբեր տեղերում ահավոր խորության բացվածքներ էր ստացել։ Ում որ պատմում էին այդ մասին, նա ապշում էր։

Հայոց 560 թվականին [22 փետրվար 1111—21 փետրվար 1112 թ.] Մամտուտը Թուրքերի մեծաթիվ զորքով եկավ Թլկուրան[404] կոչվող անառիկ բերդի վրա և պատերազմեց նրա դեմ։ Բերդի ժողովուրդը, երկյուղից դրդված, բերդը հանձնեց Մամտուտին։ Բերդում էին գտնվում քառասուն ֆրանկ, որոնց [Մամտուտը] սրի քաշեց։ Նա գրավեց նաև Գոտեթիլը, ապա իջավ Շենավ, արաբների ամիրայի մոտ, որին Մնի էին անվանում, այնտեղից էլ գնաց իջավ Ուռհայի գավառը, Ջուլման կոչվող բերդը, որտեղ իր շուրջը հավաքվեցին բազում զորքեր. նրա մոտ բազում զորքերով եկան Ահմատիլ[405] կոչվող մեծ ամիրան, արևելից ամիրա Սուլիմանը[406], եկավ նաև Բուրսուխի որդին, և բոլորը միասին շարժվեցին Ուռհայի վրա։ Սակավ օրեր մնալով, նրանք գնացին Սրուճ քաղաքը, անցան Եփրատ գետը և բոլորը միասին հարձակվեցին Թլպաշար անառիկ բերդի վրա։ Այն ժամանակ բերդում էր գտնվում ֆրանկների կոմս Ճոսլինը, քաջ ու լավ կռվող մի մարդ։ Թուրքերը բերդի դեմ նետեցին բազմաթիվ մարտական գնդեր, բայց ոչինչ չկարողացան անել։ Պարսից ամիրա Ահմատիլը, որ լսել էր Ճոսլինի քաջության մասին, հաշտվեց և հետը հղբայրացավ։ Մամտուտը պարսից բովանդակ զորքով ելավ գնաց Անտիոքի վրա և իջավ Շիզար կոչվող վայրը։ Տանգրին ֆրանկների բոլոր զորքերի զորահավաք արեց։ Նրան միացան և Երուսաղեմի թագավոր Պաղտինը, Տրապոլսի կոմս Բերդանը, ինչպես և Ուռհայի կոմս Պաղտուինը։ Երկու բանակներն իրար հանդիպեցին Շիզարում, բայց մարտ չտվեցին։ Մամտուտը թաքուն գնաց իր երկիրը, իսկ ֆրանկների զորքերն էլ անվնաս՝ իրենց երկիրը։

Այդ ժամանակները սատակեց արևելից ամիրա Սուլիմանը[407] նա ճանապարհին հանկարծամահ եղավ՝ Տիրոջից ստանալով իր արժանի պատիժը, քանզի նա Ուռհա գավառում բազում ավերածություններ և նախճիրներ էր գործել։

Այդ տարին աստված մի հզոր մարդու՝ հայոց մեծ իշխան Թորոսի՝ Ռուբենի որդի Կոստանդնի որդու ձեռքով վրեժխնդիր եղավ Գագիկ շահընշահի՝ Աշոտ Բագրատունու որդու անմեղ արյան համար։ Թորոսի ձոռք հայոց Գագիկ արքային սպանողները բնակվում էին Կոնդռոսկավիս կոչվող շատ ամուր և բարձր, ամեն կողմից անառիկ բերդում։

պարտելի յամենայն կողմանց. և որդիքն Մանդալէի դեռ ևս կենդանի էին երեք եղբարքն, և մին ի նոցանէ ունէր ընդ Թորոս միաբանութիւն վասն խնամութեան, և յաղագս այսորիկ խոստացեալ էին տալ զբերդն ի Թորոս, վասն զի սահմանակից էր գաւառին նորա մերձ ի յերկիրն, որ կոչի Զկնչուր, լեռնահայեաց Դամրաց աշխարհին։ Յայսմ ամի յարուցեալ իշխանն Հայոց և սակաւ ինչ զօրօք գնաց առ նոսա սիրոյ աղաչաւ՝ և իջեալ առ սահմանսն յայն՝ յղեաց առ նոսա և ծանուցանէր նոցա զգալն իւր. յայնժամ մի ոմն ի սպանողացն առեալ ընծայս և գայր առ Թորոսն. և նա մեծարեաց զնա. և նա հանեալ դանակ մի ծանրագին և հանգերձ մի՝ դնէր առաջի Թորոսի. կերան և արբին. յայնժամ ասէր ցնա Թորոս՝ եթէ «Առ իս խոստումն կայ ձեր վասն բերդին, առաք յիս, և զամենայն գաւառս իմ առէք ձեզ տեղի, զոր և կամիք»։ Եւ նորա ստեալ զառաջաւորացեալսն և ասէր ցիշխանն Հայոց, եթէ «Ոչ կարեմք տալ զբերդն, վասն զի մեր հայրենիք է և ազգի տեղիք»։ Եւ իբրև գիտաց Թորոս, եթէ խաբեցաւ ի նոցանէ, տայր զբերեալ նուէրսն յինքն և սրտմտեալ ասէր. «Արի և գնա ի տուն քո, և յայսմ հետէ պատրաստ եղերուք չինէն»։ Եւ յարուցեալ աստուածասպանին՝ դարձաւ ի տուն իւր. դարձաւ և Թորոս դիմօք ի տուն առաջի աչաց նորա։ Եւ իբրև գնաց սպանողն և եղև աներևոյթ, դարձաւ Թորոսն զօրօքն և ի պիշերին հասանէր ի վերայ բերդին՝ և դարանակալ առնէր զհետևակ զօրսն և ձիաւորովն հեռանայր յագարական՝ կամեցաւ ասպատակ առնել զերկիրն։ Իսկ ի լուսանալ առաւօտուն ելանէին ի փատէ բերդացիքն և հանդիպեցան ի վերայ քմնին, և յորժամ տեսին՝ եղեն փախստական։ Եւ յարուցեալ զօրացն Թորոսի՝ ընթանային ընդ զառ ի վեր բերդին. և յորժամ տեսին բերդացիքն, փակեցաւ դուռն բերդին, և նոքա արտաքոյ կալան զդուռն և սկսան պատերազմել, և կրակ հարկանէին ընդ ցուեաց բերդին, և նա յոյժ բորբոքեցաւ։ Եւ յորժամ տեսին բնակիչքն՝ բացեալ յայլ կողմանէ դուռն և ելեալ փախեան. և զօրքն Թորոսի առին զբերդն և կալան զփախստականսն և հասեալ պատմեցին Թորոսի. և նա յոյժ հիանայր և գայր մեծաւ ուրախութեամբ ի բերդն ի Կոնդռօսկաւիս։ Եւ յորժամ մտաւ ի բերդն, սկսաւ քննութիւն առնել զանձատան նոցա, վասն զի ամենայն գաւառին ոսկի և արծաթ անդ ի պահեստի էր ժողովեալ. և ասէր Թորոս ցմանդալէի որդիքն, եթէ «Բերէք առ իս զԳագկայ թուրն և զհանդերձն Հայոց թագաւորին»։ Եւ նոքա բերին. և տեսեալ Թորոսի ելաց դառնապէս, լային և ամենայն զօրքն։ Եւ յայնժամ հրամայեաց Թորոս ցուցանել զգանձսն իւրեանց, և նոքա պընդեալ ոչ գային ի խոստ, և սկսան ի խոշտանգանս արկանել զնոսա.

Մանդալեի որդիները, երեք եղբայրներ, դեռ կենդանի էին, որոնցից մեկը, Թորոսի հետ ունեցած խնամիական կապերի պատճառով, մտերմական հարաբերությունների մեջ էր նրա հետ. նրանք խոստացել էին բերդը Թորոսին հանձնել, քանի որ այն սահմանակից էր Թորոսի գավառին՝ Զկնջուր կոչվող և Դամիրքին լեռնահայաց վայրում: Այդ տարին հայոց իշխանը փոքրաթիվ զորքով բարեկամական նպատակով ելավ գնաց նրանց մոտ: Իջնելով այդ սահմանները, նրանց գրություն ուղարկեց՝ տեղեկացնելով իր գալստյան մասին: [Գագիկին] սպանողներից մեկը նվերներով եկավ Թորոսի մոտ. վերջինս պատվեց նրան: Ժամանողը, որպես փոխադարձ նվեր, Թորոսին տվեց մի թանկարժեք դանակ և մի հագուստ: Նրանք կերան ու խմեցին: Թորոսն ասաց նրան. «Դուք ինձ բերդն եք խոստացել, տվեք այն և իմ համայն տիրույթներից որ մեկում ուզեք հաստատվեցեք»: Բայց նա ուրացավ անցյալում տված խոստումը և ասաց հայոց իշխանին. «Մենք չենք կարող բերդը հանձնել, քանզի այն մեր հայրենական [կալվածն] է և տոհմի բնակատեղին»: Թորոսը հասկացավ, որ խաբել են իրեն և, վերադարձնելով ստացած նվերները, զայրացած ասաց. «Ելի՛ր, գնա՛ քո տունը, բայց այսուհետև զգուշացեք ինձանից»: Աստվածասպանը ելավ գնաց իր տունը: Թորոսն էլ նրա ներկայությամբ ճամփա ընկավ դեպի իր տունը, բայց երբ սպանողը չքվեց, նա իր զինվորներով դիշերը մոտեցավ բերդին. հետևակազորին դարան դրեց, իսկ ինքը հեծյալներով հեռացավ դեպի ապարակները, մտադիր լինելով ասպատակել շրջանը: Առավոտյան բերդաբնակ ժողովուրդը բերդից դուրս եկավ, բայց, տեսնելով դարան մտած [զինվորներին], փախուստի դիմեց: Թորոսի զինվորները սկսեցին բարձրանալ բերդ տանող զառիվերով: Բերդաբնակ ժողովուրդը, տեսնելով նրանց, փակեց բերդի դուռը, իսկ Նրանք, ատրանալով դռանը դրսից, կռիվ սկսեցին և բերդի ձեղունի վրա կրակ գցեցին. այն սաստիկ բորբոքվեց: [Բերդի] բնակիչները, տեսնելով դա, բացեցին մյուս կողմի դուռը և փախան: Թորոսի զինվորները գրավեցին բերդը, բռնեցին փախստականներին, ապա տեղի ունեցածի մասին գնացին զեկուցեցին Թորոսին: Նա շատ զարմացավ և ուրախացած եկավ Կոնդռոսկավիս բերդը: Ներս մտնելով, նա ստուգեց նրանց գանձատունը, քանզի ողջ գավառի ոսկին և արծաթը այնտեղ էր պահվում. Թորոսն ասաց Մանդալեի որդիներին. «Ինձ բերեք հայոց թագավոր Գագիկի թուրը և հանդերձները»: Նրանք բերեցին: Թորոսը, տեսնելով դրանք, դառնագին արտասվեց: Լաց եղան և բոլոր զինվորները: Թորոսն այնուհետև հրամայեց ցույց տալ իրենց գանձերը, բայց նրանք համառությամբ ցույց չէին տալիս. դրա վրա սկսեցին նրանց խոշտանգել: Եղբայրներից մեկը պա-

յայնժամ միւս եղբայրն աղաչէր զզօրականսն, զի տարցեն զնա ի քարակառւրն, զի ջուր հեղցէ. և յորժամ տարան, ձգէր զինքն ի բարձրութենէ քարին ի վայր և անկեալ սատակեցաւ չարաչար. իսկ միւս եղբայրն սկսաւ վտանգ արկանել Թորոսի, և նա լրբենի երեսօք ասէր ցԹորոս, եթէ «Դու Հայ մարդ ես, և մեք Հռոմի իշխանք, ո՞ինչ կամիս պատասխանի տալ Հռոմոց թագաւորին, որ դատես զՀռոմ մարդ»։ Յայնժամ սլտմտեալ Թորոս, և զոյն երեսացն այլագունեցաւ, և առեալ ի ձեռին իւրում բիր մի կռանի և գազանաբար յարձակեցաւ ի վերայ նորա և ասէր, եթէ «Ո՞վ էիք դուք, որ զայր հզօր և զօծեալ թագաւոր Հայոց սպանանէիք և կամ ո՞ինչ պատասխանի հատուք ազգին Հայոց». և լալխառն սկսաւ չարաչար հարկանել զնա՝ մինչև սատակեցաւ դառնահառաչ մահուամբ։ Եւ յայնժամ զոհանայր զԱստուծոյ, որ էառ զվրէժ արեանն Գագկայ Հայոց արքային, վասն զի հայր հօրն նորա Ռուբէն ի զօրացն Գագկայ էր. և միաբարձ արարեալ զամենայն տունս նոցա՝ բազում գանձս և դիպակս և խաչս յոյժ մեծամեծս արծաթիս և պատկեր ոսկեձոյլ և արծաթ առեալ գնաց ի Վահկայն. և զմիւս եղբայրն զկնի տանէր և դնէր ի զօրացն պահապանս բերդին։

Ի թուականութենէն Հայոց ՇԿԱ դարձեալ ժողով արար չար և ախեանարբու գաղանն Մամտուն և գայր խաղայր ի վերայ քաղաքին Ուռհայոյ. և էր յայնմ ժամու անհոգացեալ քաղաքն ի նմանէ. և նա յանկարծակի հասանէր ի վերայ քաղաքին զկնի Զատկին՝ յաւուր մեռելոցի. և էր Սահմի ամսոյ մուտ. և գայր իջանէր ի Կուպինն և յարուցեալ ամենայն բազմութեամբն իջանէր ի դուռն քաղաքին Ուռհայոյ և կացեալ զաւուրս ութ՝ փոխեցաւ ի Սասնոյ սարն և անտի գայր իջանէր ի Սուրբ Վկայքն մօտ ի պարիսպն։

Յայնժամ յաղթող զօրականն Քրիստոսի կոմսն Ճօսլինն առեալ հարիւր ձիաւոր և հարիւր հետեւակ և գայր մտանէր ի Սրուճ քաղաք. յայնժամ զօրքն Թուրքաց հազար և հինգ հարիւր ձիաւոր արշաւեցին ի Սրուճ յեղիային շաբաթ օրն։ Եւ յարուցեալ Ճօսլինն անկանէր ի վերայ Թուրքին և սպանանէր ի նոցանէ արս հարիւր և չիսուն. և կալաւ հինգ արս գլխաւորս և էառ զամենայն զծանրոցս նոցա. և մնացեալքն փախստական գնացին առ Մամտուն ի քաղաքն Ուռհա։ Եւ լուեալ Մամտուտն զայս ամենայն՝ զօրօք գնաց ի վերայ Ճօսլինին ի Սրուճ քաղաք. և նոյն ժամայն Ճօսլինն գաղտագնաց լեալ գայր յՈւռհա և ի քաղաքն մտանէր։ Եւ կացեալ Մամտուտն ի Սրուճ զաւուրս եւթն, գարձաւ ի վերայ Ուռհայոյ. և արք ոմանք նենգաւորք գնացին ընդդէմ նորա և ի ճանապարհին ասեն ցնա. «Արա՛ մեզ ողորմութիւն, և տացուք այսօր զՈւռհա ի ձեռս քո»։ Եւ նա բազում ուրախութեամբ արար

հապան զինվորներին խնդրեց իրեն տանել քարաժայռը՝ ջուր թափելու։ Նրան տարան, բայց նա իրեն բարձր ժայռից ցած գցեց և չարաչար սատակեց։ Մյուս եղբայրն սկսեց սպառնալ Թորոսին, լրբորեն ասելով. «Դու հայ մարդ ես, իսկ մենք՝ հոռոմ իշխաններ. դու հոռոմոց կայսեր ի՞նչ պատասխան պիտի տաս, որ դատաստան ես տեսնում հոռոմ մարդու հետ»։ Թորոսը գազազեց, նրա երեսի գույնը փոխվեց։ Նա երկաթե մի մահակ վերցրեց և, գազանի պես նրա վրա հարձակվելով, ասաց. «Ո՞վ էիք դուք, որ հզոր մարդուն, հայոց օծյալ թագավորին սպանեցիք, կամ ի՞նչ պատասխան տվեցիք հայ ժողովրդին» և լալախառն սկսեց անխնա հարվածել նրան, մինչև որ դառն մահվամբ սատակեց։ Այնուհետև նա գոհություն հայտնեց աստծուն, որ իրեն արժանացրեց հայոց արքա Գագիկի արյան վրեժն առնելու. Թորոսի հոր հայրը՝ Ռուբենը, Գագիկի զինվորներից էր։ Այնուհետև նա նրանց ողջ տունը տակնուվրա արեց և բազմաթիվ զանձեր, դիպակներ, արծաթե հսկայական խաչեր, ոսկեձույլ և արծաթե [սրբա]պատկերներ առնելով գնաց Վահկա [բերդը]։ Նա [Մանդալյան] երրորդ եղբորը իր հետ տարավ, իսկ [նրանց] բերդի պահպանության համար կայազոր հաստատեց։

Հայոց 561 թվականին [22 փետրվար 1112—20 փետրվար 1113 թ.] չար և արյունարբու գաղան Մամտուտը, նորից զորահավաք անելով, շարժվեց եկավ Ուռհա քաղաքի վրա։ Այդ պահին քաղաքը նրան դիմադրելու և ոչ մի նախապատրաստություն չէր տեսել։ Նա զատկի հաջորդ օրը՝ մեռելոցին, անակնկալ հարձակվեց քաղաքի վրա։ Սահմի ամսի սկիզբն էր։ Նա եկավ հասավ Կուպին և իր ողջ զորքի գլուխն անցած իջավ Ուռհա քաղաքի դարպասի վրա. ութ օր մնալով, նա գնաց Սասունի լեռը, որտեղից էլ՝ պարսպի մոտ գտնվող Սուրբ Վկաները։

Քրիստոսի հաղթող զինվոր կոմս Ճոսլինը, հարյուր հեծյալ և հարյուր հետևակ վերցնելով, մտավ Սրուճ քաղաքը։ Դրա վրա թուրքերի զորքը՝ հազար հինգ հարյուր հեծյալ, Եղիայի շաբաթ օրը[408] արշավեց Սրուճի վրա։ Ճոսլինը հարձակվեց թուրքերի վրա, նրանցից հարյուր հիսուն հոգի սպանեց, գերի վերցրեց հինգ հրամանատար և գրավեց նրանց բոլոր բեռները։ Մնացածները, փախուստի դիմելով, գնացին Ուռհա քաղաքը, Մամտուտի մոտ։ Մամտուտը, լսելով տեղի ունեցածի մասին, զորքերով արշավեց դեպի Սրուճ քաղաքը՝ Ճոսլինի դեմ։ Այդ նույն միջոցին Ճոսլինը թաքուն եկավ մտավ Ուռհա քաղաքը։ Մամտուտը Սրուճում մնաց յոթ օր և նորից հարձակվեց Ուռհայի վրա։ Բայց մի քանի նենգ մարդիկ դիմեցին նրան և ճանապարհին ասացին. «Դու մեզ գթա, իսկ մենք հենց այսօր Ուռհան քեզ կհանձնենք»։ [Մամտուտը] մեծ գոհունակությամբ կատարեց նրանց բոլոր ցանկությունները. նրանք

զամենայն կամս նոցա, զի նեղեալ էին ի բազմութենէ սովոյն, և առ վտանգին ոչ գիտացին զի՞նչ գործեցին. և բերեալ զմամտուան ի գիշերի՝ և արք հինգ տան զբազմամբոխ քաղաքն զՈւռհա ի ձեռս Թուրքին. եաւն բուրգ մի ի նոսա, որ բարձր էր քան զամենայն քաղաքն ի յարևելից կուսէ քաղաքին, և արս հարիւր հանեալ կացուցին ի վերայ նորա. և աւին զերկու բուրգն այլ՝ և բազմացան: Իսկ Աստուած, որ ոչ կամի զկորուստ հաւատացելոցն, յառաջագոյն էր բերեալ զկոմսն Փռանգաց զՃօսլինն յօգնականութիւն օրհնեալ քաղաքին Ուռհայոյ. և լուեալ գայս քաջ զօրականն Աստուծոյ Ճօսլինն՝ առեալ զկոմսն Ուռհայոյ զՊաղտինն և զայլ զօրսն Փռանգաց հասանէր ի պարիսպն ի պատերազմ ընդ Թուրք զօրացն. և այսպէս քաջապէս մարտ եղեալ արիաբար ի վերայ բրգանն, մինչև ի սաստկութենէ պատերազմին զամենայն բազմութիւն զօրացն Թուրքաց ի վայր հեղոյր ի պարսպէն, և տուողքն և առողքն ի միասին սատակեցան. և յաւուր յայնմիկ թափեալ եղև քաղաքն Ուռհա ի Թուրքաց քաջութեամբ Ճօսլինին և այլ ամենայն զօրացն քաղաքացեացն: Յայնժամ կոմսն Ճօսլին առ բարկութեան սրտի իւրոյ և ի ձեռն չարախօս լեզուաց բազում արիւն եհեղ անմեղ ի քաղաքացեացն՝ սպանմամբ և այրմամբ հրոյ. և իրատես ցաւագինս, զոր ոչ էր հաճելի Աստուծոյ: Եւ յայնժամ Մամտուան յարուցեալ գնաց էառ զԲլմօղն և ամօթալից երեսօք գնաց ի Խորասան մնծաւ անարգանօք:

Յայսմ ամի զօրաժողով արար Տանգրի կոմսն Անտիոքու և գնայր ի վերայ Վասլի՝ Հայոց իշխանին և յարուցանէր պատերազմ ի վերայ Ռապնայ. և սաստիկ պատերազմաւ էառ զքաղաքն Ռապնայ ի Վասլէն. և գնաց զօրօք ի վերայ Քևսնոյ և իջաւ ի գլուխ դաշտին ներքև ակինն ի Թիլն: Եւ յայնժամ զօրաժողով արար Վասիլն արս հինգ հազար. և կացեալ զաւուրս ինչ՝ ոչ արարին պատերազմ, այլ հաստատեցին ընդ միմեանս սէր. և տայր դարձեալ զՌապան ի Վասիլն, և տայր Վասիլն զդաւառն Հարսնմսրոյ և զԹորէշ և զՈւրեմն ի Տանգրի, վասն զի Վասիլն ի Փռանգաց էր առեալ զդաւառս զայս զՀարսն-Մսուր և զՓերսին ծայրն և զՌազտիպ, զՀարթան և զԹորէշ և զՈւրեմն, և դարձոյց ի յազգն Փռանգաց. և գնաց Տանգրի խաղաղութեամբ ի քաղաքն իւր յԱնտիոք:

Յայսմ ամի՝ յԱրեգի ամսոյ քսան և չորս՝ մեռանէր մեծ իշխանն Հայոց, որ կոչեցաւ Գող Վասիլ, և եղև սուգ սաստիկ ամենայն տանն Հայոց, վասն զի առ նա էին ժողովեալ մնացեալ զօրքն Հայոց և ամենայն ազգն Բագրատունեացն և Պալհաւունեացն և որդիք թագաւորացն Հայոց, և ամենայն ազգն Պալհաւունեացն հանդերձ ազատագունդ զօ-

սովահար էին և [սովամահության] վտանգի առաջ չգիտակցեցին իրենց արածը։ Նրանք գիշերով Մամտուտին և այլ հինգ հոգու բերեցին և բազմամբոխ Ուռհա քաղաքը դրեցին թուրքի ձեռքը։ Նրանք քաղաքի արևելյան կողմում գտնվող և ողջ քաղաքի վրա իշխող բուրգը տվեցին նրանց, որոնք հարյուր հոգի հաստատեցին այնտեղ։ Նրանք գրավեցին երկու ուրիշ բուրգեր էլ և շատացան։ Բայց աստված, որ չի ցանկանում հավատացյալների կործանումը, Ուռհա քաղաքի օգնության համար վաղօրոք ֆրանկների կոմս Ճոսլինին էր բերել։ Աստծո քաջ զինվոր Ճոսլինը, լսելով դեպքերի մասին, Ուռհայի կոմս Պաղտինի և ֆրանկների մյուս զորքերի հետ հասավ [քաղաքի] պարիսպներին՝ թուրք զորքերին մարտ տալու։ Նա բրգի դեմ արիաբար մարտնչեց, համառ մարտում թուրք զինվորների ողջ բազմությունը պարսպից ցած գլորեց. և [բուրգը] հանձնողներն էլ, ստացողներն էլ միասին սատակեցին։ Այդ օրն, ահա, Ուռհա քաղաքը Ճոսլինի և քաղաքացիների բոլոր զորքերի քաջությամբ փրկվեց։ Սակայն, կոմս Ճոսլինը, սրտի զայրույթից և չարախոսների դրդմամբ բազմաթիվ անմեղ քաղաքացիների արյուն թափեց՝ սպանելով և կրակի վրա այրելով։ Նա դառն պատիժների ենթարկեց շատերին, որ աստվածահաճո գործ չէր։ Մամտուտը ելավ գնաց գրավեց Թլմոզը և խայտառակված ու անարգված վերադարձավ Խորասան։

Այդ տարին Անտիոքի կոմս Տանգրին զորահավաք արեց և գնաց հայոց իշխան Վասիլի դեմ. համառ մարտով նա Վասիլի ձեռքից գրավեց Ռապան քաղաքը. ապա զորքով գնաց Քեսունի վրա և իջավ դաշտի գլխին, աղբյուրից ներքև, Թիլում։ Վասիլը հինգ հազար զինվոր հավաքեց։ Հակառակորդները մի քանի օր հանգիստ մնացին, ապա հաշտվեցին. Տանգրին Վասիլին վերադարձրեց Ռապանը, իսկ Վասիլը՝ Հարսնըմսիր գավառը, Թորեշը և Ուրեմնը. Վասիլը այս Հարսնըմսիր գավառը, Փերսին ծածքը[409], Ռազտիպը, Հարթանը, Թորեշը և Ուրեմնը վերցրել էր ֆրանկներից և այժմ վերադարձրեց նրանց։ Տանգրին խաղաղությամբ գնաց իր Անտիոք քաղաքը։

Այդ տարին, արեգ ամսի քսանչորսին, վախճանվեց հայոց մեծ իշխան Գող Վասիլ կոչեցյալը. հայոց համայն աշխարհում մեծ սուգ եղավ, քանզի հայոց զորքի բեկորները, Բագրատունյաց և Պահլավունյաց ընտանիքները, հայ թագավորազունները, հայոց ազատագունդ զորքով հան-

թօքն Հայոց առ նա կային հանգուցեալ մեծաւ փառաւորութեամբ, և աթոռ հայրապետութեանն Հայոց առ նա եղաւ, վասն զի տիրեալ էր բազում գաւառաց իւրով զօրութեամբ, և ամենայն երամք կրօնաւորաց, եպիսկոպոսաց, հարց և վարդապետաց առ սա ժողովեցան և առհասարակ կային ի մեծ ուրախութեան: Մեռաւ իշխանն Հայոց Վասիլն և թաղեցաւ ի Կարմիր վանքն. և էր հոգեբարձու նորա և հայր խոստովանութեան Տէր Բարսեղ կաթուղիկոսն Հայոց. և տուաւ հողադրամ հազար դահեկան, պատարագաց հարիւր և յիսուն հազար դահեկան, աւելի և ոչ պակաս, և մատաղ անթիւ: Եւ տարան Տանգրէի բազում տուրս ի տանէն Վասլին, բազում դանձս և դիպակս, ձիս և ջորիս, տարան և զթագն կնոջն Վասլին կնոջն Տանգրէի, և այլ իշխանացն գաւառացն տուաւ բազում ընծայս և աղքատաց բազում ինչս: Եւ տան զիշխանութիւն Վասլին՝ տղայ Վասլին, որ էր մայրենիօք յազգէ Կամսարական, սնեալ և զարգացեալ ի տուն Վասլին՝ որպէս զորդի ի ծոցս հօր իւրոյ, գեղեցկատեսիլ և առիւծադէմ, յաջողակ և սրագլուխ և այր քաջ և պատերազմող, ամաց քսան և հնգից. զսա նստուցին յաթոռ մեծ իշխանին Վասլին, և նմա հնազանդեցան ամենայն զօրքն, վասն զի էր յոյժ առատաձեռն և մեծատուր և եղև սիրեցեալ յաշս ամենայն զօրացն: Եւ արար միաբան ժողով Տէր Բարսեղ և տայ զամենայն իշխանութիւնն ի տղայ Վասլին, և եղև ուրախութիւն ի վերայ ամենայն տանն Հայոց:

Յայսմ ամի ի Մարերի ամսոյ ԺԲ մեռանէր մեծ հաւատացեալն Աստուծոյ Տանգրի կոմսն Անտիոքու, որ էր այր սուրբ և աստուածասէր և էր քաղցր բնութեամբն և ողորմած, հայելով ի վերայ ամենայն հաւատացելոցն Քրիստոսի, և յոյժ խոնարհ էր առ ամենայն ոք և արդարադատ յամենայն դատաստանս և յիրաւունս Աստուծոյ. սա մեռաւ ի յԱնտիոք քաղաք և թաղեցաւ ի սուրբ Պետրոս՝ ի մեծ եկեղեցին Անտիոքու, զոր հիմնարկեցին սուրբ առաքեալքն Պետրոս և Պօղոս: Եւ հրամանաւ Տանգրէի դնեն յաթոռ նորա զբուրորդին իւր, որ կոչի Ռօճէր, այր քաջ և արիական պատերազմող: Յայնժամ պատրիարքն և ամենայն իշխանքն Փռանգաց դնեն զՌօճէրն յաթոռն Տանգրէի և տան զԱնտիոք ի ձեռս նորա: Յայսմ ամի յաւուրս սպանան երկու իշխանքն մեծք՝ Տիգրան և Ասլաստաթ ի թուրք զօրացն ի յերկիրն Լևոնի՝ Ռուբինայ որդւոյն, որք էին ի զօրացն Վասլին:

Դարձեալ եղև ի թուականութեանն Հայոց յամի ՇԿԲ անօրէնն և արեանարբու գազանն Մամտուտ ամիրայն՝ աստլաստալարն Պարսից գայր խաղայր անհամար զօրօք ի վերայ Փռանգաց և հասանէր ի քաղաքն

դերձ նրա մոտ էին ապաստանել և մեծ պատիվների արժանացել։ Բացի այդ, հայոց կաթողիկոսական աթոռը ևս նրա մոտ էր հաստատվել, քանզի Վասիլը իր զենքի ուժով տիրել էր բազում գավառների. վանականներ, եպիսկոպոսներ, քահանաներ և վարդապետներ նրա մոտ էին խմբվել, և բոլորն ապրում էին մեծ ուրախության մեջ։ Ահա, վախճանվեց հայոց իշխան Վասիլը և թաղվեց Կարմիր վանքում։ Նրա հոգևոր հայրն ու խոստովանահայրը հայոց կաթողիկոս տեր Բարսեղն էր։ Նրա թաղմանը հազար դահեկան հողադրամ տրվեց, ավելի քան հարյուր հիսուն հազար դահեկան՝ պատարագների համար, նաև անթիվ մատաղ։ Վասիլի տնից Տանգրիին բազմաթիվ նվերներ տարան՝ բազում գանձ, դիպակներ, ձիեր և ջորիներ։ Վասիլի կնոջ թագն էլ տարան Տանգրիի կնոջը տվեցին։ Գավառատեր այլ իշխաններին էլ բազմաթիվ նվերներ տրվեցին, աղքատներին էլ շատ բան հասավ։ Վասիլի իշխանությունը տվեցին Վասիլ Տղային, որ մոր կողմից Կամսարականների ընտանիքից էր, նա կըրթված և դաստիարակված էր [Գող] Վասիլի տանը՝ ինչպես որդին հոր ծոցում։ Նա գեղեցիկ էր, ուներ առյուծի դեմք, հաջողակ և սուր մտքի տեր, քաջ և կռվող, քսանհինգ տարեկան մի մարդ։ Մեծ իշխան Վասիլի պահին, ահա, սրան նստեցրին, և բոլոր զորքերը նրան հնազանդություն հայտնեցին, քանզի նա անսահմանորեն առատաձեռն և բազմաշնորհ մարդ էր. բոլոր զինվորները սիրեցին նրան։ Տեր Բարսեղը ընդհանուր ժողով գումարեց և ամբողջ իշխանությունը տվեց Վասիլ Տղային. համայն հայոց աշխարհում ցնծություն էր տիրում։

Այդ տարին, մարերի ամսի 18-ին վախճանվեց աստծո մեծ հավատացյալ Տանգրին՝ Անտիոքի կոմսը։ Նա սուրբ և աստվածասեր մարդ էր, հեղաբարո և ողորմած, բոլոր քրիստոնյաների նկատմամբ հոգատար, անչափ համեստ, աշխարհիկ և հոգևոր հարցերում արդարադատ. նա վախճանվեց Անտիոք քաղաքում և թաղվեց Անտիոքի Սուրբ Պետրոս մեծ եկեղեցում, որը հիմնադրել էին Պետրոս և Պողոս սուրբ առաքյալները։ Տանգրիի կտակի համաձայն, նրա գահին են նստեցնում իր քրոջորդուն, որ Ռոճեր էր կոչվում, մի արիասիրտ և քաջ պատերազմող մարդու։ Պատրիարքն, ահա, և ֆրանկների բոլոր իշխանները Տանգրիի գահին նստեցրին Ռոճերին և Անտիոքը նրան տվեցին։ Նույն տարին թուրք զորքերի ձեռքով Ռուբենի որդի Լևոնի երկրում սպանվեցին երկու մեծ իշխաններ՝ Տիգրանն ու Ապլասաթը. նրանք Վասիլի զինվորներից էին։

Հայոց 562 թվականին [21 փետրվար 1113—20 փետրվար 1114 թ.] անհավատ և արյունարբու գազան Մամոտուտ ամիրան՝ պարսից սպասալարը, անհամար զորքով շարժվեց եկավ ֆրանկների դեմ և հասավ

Տաճկաց, որ կոչի Խառան։ Եւ յայնժամ Պաղտինն կոմսն Ուռհայոյ էր զօրօք քաղաքին ի Թլպաշար. յայնժամ յաղգէն Փռանգաց արք չարաշունչք և դառն որոճողք համբաւ չարութեան և մատնութեան հասուցանէին առ կոմսն և ասէին, եթէ «Բազումք միաբանեալ են և կամին զքաղաքն Ուռհա ի Թուրքն տալ»։ Իսկ նորա հաւատացեալ սուտ չարախօսութեանն անօրէն և չար լեղուաց՝ և յայնժամ վճիռ չար ելանէր ի նմանէ՝ առաքեաց վաղվաղակի զկոմսն Սրճոյ զՊայէն և հրամայեաց զամենայն քաղաքացիսն հանել ի քաղաքէն Ուռհա, որ ոչ մնաց ի քաղաքն և ոչ մի մարդ։ Եւ խորհուրդ արարին չարադէմ ազգն յաւուր յայնմիկ և կամեցան սրով կոտորել զամենայն քաղաքն առհասարակ և յօժարէին հեղուլ զարիւն անպարտիցն և զանմեղաց, որ ոչ ինչ էին գործեալ արատ յանցանաց, ի չարութենէ սրտից ազգին իւրեանց զամենայն ոք չարաբարբ կարծէին։

Իսկ ի յամսեանն Սահմի ի յաւուր կիւրակէի ճաշաժամուն հասանէր ի վերայ Ուռհայոյ չար աղէտ գառնութեան, որ ուրացաւ հայր զորդի և որդի՝ զհայր. վասն զի լաց և ողբ և աղաղակ էր առհասարակ յամենայն քաղաքն, և արտասուօք, սգով և տրտմութեամբ գոչէին առ առն, վասն զի ևման վարիաց ի տանէ զամենայն քաղաքն և այրել հրամայեցին՝ զորս ի տան գտանէին. ոչ մնաց և ոչ մի, բայց միայն արս ութսուն, և զայն երևիւն յեկեղեցին ի սուրբ Թորոս ժողովէին ի կլայն և վինաւորօք պահէին զնոսա. և էր յաւուր յայնմիկ սուգ մեծ ի վերայ Ուռհայոյ յազգէն Փռանգաց, զի ամենայն ոք վայ կարդայր ի վերայ անձինն իւրոյ. և ոչ մնաց ինչ չարութիւն գիշոյ, որ ոչ ածին ի վերայ քաղաքին Ուռհայոյ ազգն Փռանգաց։ Եւ յայսմ վայրի լցան ասացեալքն յառաջին տեսողացն, որք ասացին՝ եթէ «Վայ տանն Աբգարու»։ Եւ գնացին ամենայն արք քաղաքին ի Սամուսատ. և եղև մայրաքաղաքն Ուռհա դատարկ և նստաւ իբրև զկին մի այրի, այն՝ որ մայր էր յառաջ ամենայն արարածոց և առ ինքն ժողովէր զամենայն ցրուեալսն աշխարհի և կամ այն, որ յառաջագոյն ելանէին խաչիւ ընդդէմ Փռանգաց, յորժամ մուրանալով գային առ նոսա. և ահա փոխանակ բարեացն զայս այսպէս գործեցին ընդ նոսա և չար հատուցին ամենայն հաւատացելոցն։

Յայնժամ զօրքն Թուրքաց, որք էին ի Խառան, գնայր անցանէր ընդ Եփրատ գետն և խաղաց ամենայն բազմութեամբն և գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմի և ընդ ամենայն աղգն Փռանգաց։ Եւ յորժամ լուաւ զայս Պաղտինն, եթէ գնաց Մամռուան և իջաւ յերկիրն Երուսաղէմի, ամաչեալ լինէր ընդ ատութեան գործն իւր, առաքէր թուղթ ի յՈւռհա դարձուցանել զքաղաքացիսն. և զկնի երիք աւուր դարձաւ ամենայն

Խառան կոչվող քաղաքը։ Ուռհայի կոմս Պաղտինն այն ժամանակ զորքերով հանդերձ գտնվում էր Թլպաշար քաղաքում։ Բայց ֆրանկներից մի քանի չարանենգ և ստոր մարդիկ խոռվության և մատնության լուր են հասցնում կոմսին և ասում, թե՝ «Շատերը համաձայնության են եկել Ուռհա քաղաքը թուրքին տալու վերաբերյալ»։ Իսկ նա, հավատալով անօրեն զրպարտիչների սուտ չարախոսությանը, դաժան վճիռ կայացրեց։ Նա Սերուճի կոմս Պայենին հրամայեց անմիջապես գնալ և Ուռհա քաղաքից տեղահան անել բոլոր քաղաքացիներին, որ քաղաքում չմնա և ոչ մի մարդ։ Չարագեմ [ֆրանկները] այդ օրը որոշեցին և ցանկացան ողջ քաղաքն ընդհանրապես սրի քաշել. [նրանք] համաձայնեցին թափել անպարտ և անմեղ մարդկանց արյունը, որոնք ոչ մի հանցանք չէին գործել, բայց իրենց ազգին բնորոշ չարասրտությամբ կարծում էին, որ բոլորն էլ չարաբարո են։

Սահմի ամսին, կիրակի օրը, ճաշի ժամին Ուռհա քաղաքի գլխին [այնպիսի] դառնաղետ փորձություն եկավ, որ հայրն ուրացավ իր որդուն, որդին էլ՝ հորը։ Լացն ու կոծը, աղմուկ-աղաղակը բռնել էր ողջ քաղաքը։ Ամեն մի տնից արտասվալից, վշտահար և ցավաբեկ գոչյուն էր լսվում, որովհետև քաղաքը տնահան անելով քշեցին, իսկ տներում թաքնվածներին հրամայեցին ողջակեզ անել։ [Քաղաքում] ոչ ոք չմընաց, բացի ութսուն տղամարդուց, որոնց նույն երեկոյան հավաքեցին բերդի։ Սուրբ Թորոս [եկեղեցում] և պահում էին զինվորների հսկողության ու։ակ։ Այդ օրը ֆրանկները Ուռհայի գլխին մեծ փորձանք բերեցին, ամեն մեկը իրեն վայ էր տալիս։ Չմնաց և ոչ մի վատություն, որ ֆրանկները չանեին Ուռհայի բնակիչներին։ Այստեղ է, որ իրականացան հին մարդկանց կանխագուշակությունները, թե՝ «Վա՜յ է եկել Աբգարի տան գլխին»։ [Ուռհայի] բոլոր քաղաքացիները Սամոսատ գնացին, Ուռհա մայրաքաղաքը դատարկվեց և նստեց որպես այրի մի կին, նա՝ ով անցյալում մայր էր բոլոր արարածների համար և իր շուրջն էր հավաքում աշխարհով մեկ բոլոր ցրվածներին, նա, ով անցյալում խաչով էր ընդառաջ գնացել ֆրանկներին, երբ նրանք մուրալու էին գալիս. և, ահա, այս բոլոր բարիքների դիմաց այսպես վարվեցին նրա հետ և բոլոր հավատացյալներին չար հատուցեցին։

Այն ժամանակ Խառանում գտնվող թուրքական զորքը, գետանդելով Եփրատը, ամբողջ բազմությամբ շարժվեց գնաց Երուսաղեմ սուրբ քաղաքը՝ ֆրանկների դեմ։ Պաղտինը, լսելով, որ Մամտուտը եկավ հասավ Երուսաղեմի գավառը, ամաչեց իր գործած վատության համար և, նամակ գրելով Ուռհա, կարգադրեց թույլ տալ քաղաքացիներին վերադառ-

մարդ ի տուն իւր։

Յայնժամ զօրքն այլազգեայց իջեալ բանակեցան ի քաղաքն, որ կոչի Տապար, մօտ ի ծովն Տիբերական. իսկ թագաւորն Երուսաղէմայ առաքեաց յԱնտիոք և կոչեաց զկոմսն Փռանգաց զՌօճէրն ամենայն զօրքն Փռանգաց և զկոմսն Տրապօլսայ զորդին Ջնճիլին. և միաբան գնացին ի կոչն նորա։ Իսկ զօրքն Երուսաղէմայ հպարտացեալ լինէին, յառաջացան ի պատերազմ ելանել ի վերայ Թուրք զօրացն, եթէ զի մի՛ գայցեն անտիոքացիքն և առնուցուն անուն քաջութեան։ Եւ Աստուած ոչ հաճեցաւ ի խորհուրդս հպարտութեան նոցա և յամօթ արար զամբարտաւանութիւն նոցա, վասն զի յորժամ յարձակեցան ընդ միմեանս ի պատերազմ՝ յաղթեցին զօրքն Թուրքայ զօրացն Փռանգաց և դարձուցին զնոսա ի փախուստ. և արս փառաւորս սպանին ի զօրացն Փռանգաց և զհետևակ զօրսն զամենայն կոտորեցին. և մի ոմն այր քաջ ի զօրացն Թուրքաց հասեալ թագաւորին Երուսաղէմի և երկաթի լախտովն հարկանէր զթիկունսն նորա. իսկ Տէր օգնեաց և փրկեաց զնա, վասն զի նոյն ժամայն հասանէին զօրքն անտիոքացւոցն և Տրապօլսայ. և տեսեալ զայն Ռօճէր կոմսն Անտիոքայ՝ ցրուեաց որպէս զառիւծ և վազվազակի անդր հասանէր և դարձոյց ի փախուստ զզօրսն Թուրքաց և փրկեաց զթագաւորն և զամենայն զօրսն Երուսաղէմայ։ Յայնժամ բանակեցաւ զօրքն այլազգեայց ի մի կողմ լերինն ի մէջ ընդ Տապարի և ընդ Երիքով և բանակեցան զօրքն Փռանգաց ի միւս կողմն լերինն. և այլ պատերազմ ոչ արարին ընդ միմեանս. և կացեալ ի սակաւ աւուրս՝ և դարձաւ Մամտուտն և մտաւ ի Դմիշկ քաղաք, և զօրքն Փռանգաց դարձաւ այր իւրաքանչիւր ի քաղաք իւր։

Իսկ ամիրայն Մամտուտն յորժամ մտաւ ի քաղաքն Դմիշկ՝ խորհեցաւ կորուսանել զամիրայն Դմշկայ զՏուղ-Տիկինն և առնուլ զքաղաքն. և այս խորհուրդ նենգութեան ազդ լինէր ամիրային. և յայնժամ Տուղ-Տիկինն հանեալ ի բանտէ իւրմէ այր մի մահապարտ Պարսիկ՝ խոստացաւ նմա ազատութիւն և փառաւորութիւն և տայր նմա հինգ հարիւր դահեկան, զի սպանցէ զՄամտուտն։ Եւ եղև զի յորժամ ելանէր Մամտուտն ի տանէ աղօթից իւրոց և կայր կանգնեալ ի մէջ ճեմարանին առ կարմիր սիւնովն, գայր Պարսիկն և յանկարծակի հարկանէր դանակովն զձախոյ քովն նորա՝ և սատակեաց զանօրէնն և ղչար գազանն զՄամտուտն. և Պարսիկն ի նոյն տեղին սատակեցաւ չարաչար, և զօրքն Մամտուտին գնացին փախստական յաշխարհն իւրեանց։

Յայսմ ամի՝ յամսեանն Տրէի յաւուր հինգերորդի՝ մեռանէր հայրապետն Հայոց Տէր Բարսեղ, այս ինչ պատահեալ նմա ի չարին ազդեցութենէ, վասն զի յաւուր միում ելանէր ի վերայ տանեացն ի գեօղն,

նալ։ Երեք օր անց ամեն մեկը ետ եկավ իր տունը։

Այն ժամանակ այլազգիների զորքն իջավ բանակեց Տապար կոչվող քաղաքում, Տիբերական ծովի մոտ։ Երուսաղեմի թագավորը Անտիոք լուր ուղարկեց և կանչեց ֆրանկների կոմս Ռոճերին, ֆրանկների բովանդակ զորքը, ինչպես և Տրապոլսի կոմսին՝ Զնճիլի որդուն։ Բոլորը միահամուռ կերպով նրա կոչին ընդառաջ գնացին։ Երուսաղեմի զորքը, մեծամատացած, միայնակ պատերազմի ելավ թուրք զորքերի դեմ, ուզենալով անտիոքցիներից առաջ տեղ հասնել, որպեսզի վերջիններս չլինեն քաջի համբավին արժանացողները։ Նրանց գոռոզամտությունը, սակայն, աստծուն դուր չեկավ, և [աստված] նրանց ամբարտավանության համար խայտառակ արեց. երբ նրանք ընդհարվեցին միմյանց, թուրքերի զորքերը հաղթեցին ֆրանկների զորքերին և փախուստի մատնեցին, անվանի մարդկանց սպանեցին, իսկ հետևակին գլխովին կոտորեցին։ Թուրք զինվորներից մի քանի մարդ հասավ Երուսաղեմի թագավորին և երկաթե լախտով խփեց նրա թիկունքին, տերը, սակայն, [թագավորին] նեցուկ կանգնեց և փրկեց, քանզի հենց այդ պահին հասան Անտիոքի և Տրապոլսի զորքերը։ Անտիոքի կոմս Ռոճերը, տեսնելով կատարվածը, առյուծի պես գոչեց, փութանակի տեղ հասավ և, թուրքերի զորքերին փախուստի մատնելով, փրկեց թագավորին ու Երուսաղեմի բոլոր զինվորներին։ Այլազգիների զորքը բանակեց լեռան մի լանջին՝ Տապարի և Երիքովի միջև, իսկ ֆրանկների զորքը բանակեց լեռան մյուս լանջին։ Նրանք այլևս չմարտնչեցին միմյանց դեմ։ Մամտուտը, մի քանի օր մնալով, վերադարձավ Դամասկոս քաղաքը, իսկ ֆրանկների զինվորները ետ եկան իրենց քաղաքները։

Մամտուտ ամիրան, մտնելով Դամասկոս քաղաքը, ծրագրեց սպանել նրա ամիրա Տուղտիկինին[410] և տիրանալ քաղաքին։ [Մամտուտի] չարաննենգ ծրագիրը հայտնեցին ամիրային, որը, իր բանտից հանելով մի պարսիկ մահապարտի, նրան ազատություն և պատիվ խոստացավ, տվեց հինգ հարյուր դահեկան, առաջարկելով սպանել Մամտուտին։ Երբ Մամտուտն իր աղոթարանից դուրս գալով կանգնել էր ճեմարանում[411] կարմիր սյան մոտ, պարսիկը մոտեցավ, հանկարծակի դաշույնը խրեց նրա ձախ կողը և սատկացրեց չար ու անօրեն գազան Մամտուտին։ Պարսիկին տեղն ու տեղը տանջամահ արեցին, իսկ Մամտուտի զորքը փախավ գնաց իր երկիրը։

Այդ տարին, տրե ամսի հինգերորդ օրը, վախճանվեց հայոց կաթողիկոս տեր Բարսեղը։ Դա տեղի ունեցավ չարի ազդեցությամբ։ Նա մի օր իր աշակերտներով բարձրացել էր Պեհեսնիի սահմաններին մո-

որ կոչի Վարդահերի, որ էր մերձ յանծանօթ ի սահմանս Պեհեսնոյ՝ աշակերտօքն Հանդերձ և կայր յաղօթս քահանայիւք և եպիսկոպոսօք. և յանկարծակի անկաւ և կործանեցաւ տունն. և ոչ ումեք եղև վնաս՝ բայց միայն Տեառն Բարսղի, վասն զի հարաւ ոչն նորա ընդ պարիսպ տանն և բեկաւ. և ապրեալ եղև զաւուրս երիս և տայր տանել զինքն ի վանքն իւր, որ կոչի Շուղր. և ի կենդանութեանն իւր տայր զաթոռ հայրապետութեանն իւր և զքօղն ի Տէր Գրիգորիս որդի Ապիրատին, որ էր քուրորդի Տեառն Վահրամայ. մեռաւ Տէր Բարսեղն և թաղեցաւ ի Շուղրն մեծաւ հանդիսիւ և հայրապետական փառօք եղաւ ի դերեզմանի։

Յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեանն տանն Հայոց Տէր Գրիգորիս որդի Ապիրատին, որ էր յազգէ Գրիգորոյ Մադիստրոսին՝ որդւոյ Վասակայ Պահլաւունւոյ, վասն զի զկնի մահուանն Տեառն Բարսեղի եղև ժողով եպիսկոպոսաց և հարանց ի Կարմիր վանքն՝ մերձ ի Քեսուն գաւառ՝ և հրամանաւ Հոգւոյն ձեռնադրեցին զՏէր Գրիգորիս եպիսկոպոս ի վերայ ամենայն տանն Հայոց. և ի նմին աւուր տան զձեռնադրութիւն կաթուղիկոսութեանն ի վերայ աթոռոյ սրբոյն Գրիգորի. և նստաւ ի հայրապետական աթոռն մինչ էր ի տղայութեան հասակին, վասն զի չև ևս էր լեալ սկիզբն մօրուացն. և էր բարձրահասակ և գեղեցկատեսիլ և բարուքն յոյժ խոնարհ։

Իսկ ի թուականութեանն Հայոց ՇԿԹ ղօրաժողով արար սուլտանն Պարսից Տափարն՝ որդի Մելէք-շահին և կացուցանէր ի վերայ ղօրացն ասպասալար զմեծ ամիրայն, որ ասի Բուրսուխ. և առեալ զհետ իւր զորդի սուլտանին՝ տղայ դոլով՝ և գայր խաղայր բազմութեամբ ղօրօք և հասանէր ի վերայ քաղաքին Ուռհայոյ։ Եւ ի Սահմի ամսոյ ԻԹ յաւուր ուրբաթու իջանէր ի դուռն քաղաքին Ուռհայոյ. և կացեալ զաւուրս երեսուն մեծաւ պատերազմաւ՝ դարձեալ զնայր իջանէր ի վերայ Եփրատ գետոյ և աւերեաց զամենայն գաւառն առ եզերօք գետոյն. և գայր իջանէր ի վերայ քաղաքին, որ կոչի Պիր՝ ի յեզերս Եփրատ գետոյն. և ժողովեցան ամենայն ղօրքն Փռանգաց յայնկոյս Եփրատ գետոյն և ոչ համարձակեցան անցանել յիրեար։ Եւ դարձաւ Բուրսուխն ի քաղաքն յՈւռհա և անտի գնաց ի Մծբին քաղաք Տաճկաց։ Եւ ժողով արար ամիրայն խալի և Պալակն և մեծաւ պատերազմաւ յաղթեցին Բուրսուխին և արարին զնա փախստական և կալան զորդի Սուլիմանին և յետոյ ի բաց թողին զնա։

Յայսմ ամի եղև աստուածասաստ բարկութիւնն ի վերայ արարածոցս, վասն զի ինքն Տէր Աստուած ամենակալ ղօրութեամբն իւրով մեծաւ սրտմտութեամբն հայեցաւ յարարածս իւր, զի որդիք մարդկան առհասարակ մոլորեալք եղեն յարդարութեան ճանապարհէ անտի ըստ

տիկ գտնվող Վարդահերի կոչվող գյուղի մի տան տանիքը և քահանաներով ու եպիսկոպոսներով աղոթքի էր կանգնել, երբ հանկարծակի տունը փուլ եկավ։ Տեր Բարսեղից բացի ոչ ոք չվնասվեց, նրա ողը, տան պատին հարվելով, ջարդվեց, [որից հետո] նա ընդամենը երեք օր ապրեց։ Նա կարգադրեց իրեն տանել Շուղր[412] կոչվող իր վանքը և նախքան վախճանվելը, կաթողիկոսական աթոռը և քողը ժառանգեց տեր Գրիգորիսին՝ Ապիրատի որդուն, որը տեր Վահրամի քեռորդին էր։ Ահա, վախճանվեց տեր Բարսեղը և թաղվեց Շուղրում՝ մեծ հանդիսավորությամբ ու հայրապետական պատիվներով ամփոփվելով գերեզմանում։

Այդ տարին հայոց կաթողիկոսական աթոռին նստեց տեր Գրիգորիսը՝ Ապիրատի որդին, որ Գրիգոր Մագիստրոսի՝ Վասակ Պահլավունու որդու տոհմից էր. տեր Բարսեղի մահից հետո Քեսուն գավառին մոտիկ գտնվող Կարմիր վանքում գումարվեց եպիսկոպոսների և [վանա]հայրերի ժողով, որտեղ սուրբ Հոգու հրամանով տեր Գրիգորիսին համայն հայոց եպիսկոպոս ձեռնադրեցին։ Սուրբ Գրիգորի աթոռին նրան կաթողիկոս ձեռնադրեցին հենց նույն օրը։ Եվ նստեց նա կաթողիկոսական աթոռին դեռ պատանի հասակում, նրա երեսին դեռ աղվամազ չէր բուսել։ Նա բարձրահասակ էր, գեղատեսիլ և շատ հեզաբարո։

Հայոց 563 թվականին [21 փետրվար 1114—20 փետրվար 1115 թ.] պարսից սուլթան Տափարը՝ Մելիք Շահի որդին, զորահավաք կատարեց և սպարապետ նշանակեց մեծ ամիրային, որի անունը Բուրսուխ[413] էր։ Վերջինս, իր հետ վերցնելով սուլթանի դեռ պատանի որդուն, մեծաթիվ զորքով շարժվեց եկավ Ուռհա քաղաքի վրա։ Սահմի ամսի 24-ին, ուրբաթ օրը, նա հասավ Ուռհա քաղաքի դուռը։ Նա երեսուն օր մնաց, համառ պատերազմ մղեց, ապա գնաց իջավ Եփրատ գետը և ավերեց բովանդակ գավառի գետեզրյա շրջանը։ Ապա եկավ իջավ Եփրատ գետի ափին գտնվող Պիր կոչվող քաղաքի վրա։ Ֆրանկների բոլոր զորքերը հավաքվեցին Եփրատ գետի մյուս ափին, բայց ոչ մի կերպն էլ չհամարձակվեց գետն անցնել։ Բուրսուխը վերադարձավ Ուռհա քաղաք, այնտեղից էլ գնաց տաճկաց Մծբին քաղաքը։ Խազի ամիրան, ինչպես և Պալակը, զորահավաք անելով, համառ մարտում հաղթեցին Բուրսուխին, նրան փախուստի մատնեցին, իսկ սուլթանի որդուն դերի վերցրին, որին, սակայն, հետո ազատ արձակեցին։

Այդ տարին արարածների գլխին թափվեց աստվածաստաո բարկությունը, որովհետև ինքը՝ տեր աստվածը, իր ամենակալ զորությամբ մեծ զայրույթով նայեց իր արարածների վրա, քանզի նրանք առհասարակ շեղվել էին արդարության ճանապարհից՝ մարգարեի ասածի նը-

մարգարէին բանի, որ ասէր, եթէ «Ոչ գոյ ի ժամանակիս յայսմիկ իշխան, մարգարէ և առաջնորդ. և ոչ ոք է, որ առնէ զբարի, և ոչ ոք է և ոչ մի»։ Այսպիսի օրինակաւս ամենեքին սիրեցին զանօրէնութեան ճանապարհս մեղաց և ատեցին զամենայն պատուիրանս և զիրաւունս Աստուծոյ, վասն զի ոչ իշխանք և ոչ զօրականք և ոչ ժողովրդականք և ոչ առաջնորդք և ոչ քահանայք և ոչ կրօնաւորք ոչ մնացին և ոչ կացին ի գործն Աստուծոյ ուղղապէս, այլ ընթացան զհետ ցանկութեան մարմնոյ և զոր սիրէ աշխարհս. և զայս ամենայն համարեցաւ Աստուած ի գործ կատարման մեղաց. և ահա եղև ըստ բանի մարգարէին՝ որ ասէր. «Ո՛ հայի յերկիր և տայ դողալ սմա»։ Եւ արդ՝ զի հայեցաւ Աստուածն յարարածս բարկութեամբ, և արարածք յանձն առին կործանիլ յահէ զօրութեանց Տեառն. և եղև այսպէս, վասն զի ահա յամսեանն Մարերի յերկոտասան աւուրն յաւուր կիրակէի ի տօնի Խաչ Դիւտին եղև մեծասաստ արհաւիրք ի վերայ տիեզերաց, որ ոչ լուաք այսպիսի բարկութեան կատարածս ոչ յառաջն և ոչ այժմ և ի պատուիրանաց սրբոց դրոց. և արդ ահա մինչդեռ էաք ի խոր քնոյ, եղև յանկարծակի ճայթումն և թնդումն ահաւոր, և գոռայր առհասարակ ամենայն արարածք. և եղև դղրդումն սաստկապէս, և ահագին թնդմամբ շարժեցաւ երկիր և լերինք, և պատառեցան ապառաժ վէմք, և հերձան բլուրք. և ի սաստկութենէ ահաւոր բարկութեանն հնչէին լերինք և բլուրք՝ իբրև զկենդանի անասունք սասանեալ բշէին, որ և լսելի իսկ լինէր բարբառք լերանցն և գայր իբրև զգոչիւնս բազմութեան բանակաց. և այսպիսի օրինակաւս իբրև զծով ծփայր և գոռայր երերալով արարածքս յահէ զօրութեան Տեառն Աստուծոյ, վասն զի առհասարակ իբրև զպըղինձ հնչեայ ամենայն դաշտք և լերինք և որպէս զծառս հողմակոծեալս երերայր, գոռայր, սասանէր. և գայր թնդիւն և հեծութիւն յարարածոցս, որպէս զբազմօրեայ հիւանդի, և մեծաւ երկիւղիւ զկործանումն յուղէր. իբրև զփախստական յուսահատեալ եղև երկիր և սարսափմամբ զարհուրէր և իբրև զմեղապարտ ոք ձայն ողբոց և լալումն արտասուաց հանէր. և լսելի լինէր ձայնն զկնի շարժմանն իբրև զմի ժամ գիշերին։ Եւ յահէ բարբառոյ բարկութեանն ամենայն ոք յուսահատեցաւ ի կենացս և ասացին՝ եթէ Եհաս օր կատարածի և դատաստանի մերում, զի զայն աւուրն զպատկերն ունէր։ Օրն էր կիրակի և ձայնովն ի վառ ձայն, և լուսինն ի փուլ էր, և զամենայն զպատճառն զվերջին աւուրն ունէր. և ահա կային ահաբեկեալ իբրև զմեռեալս յուսահատեալք։ Եւ յայսմ գիշերիս կործանեցան բազումք քաղաքք և գաւառք. և ամենայն, որ կործանեցան՝ էին գաւառք Փռանգաց, և յայլ գաւառաց և կամ յայլ ազգաց ոչ եղև վնաս և ոչ ինչ։ Եւ յայսմ գիշերի եղև կործանեալ Սա-

ման, թե՝ «Այս ժամանակներում չի լինի իշխան, մարզպան և առաջնորդ. չի լինի մեկը, որ բարին գործի, ոչ ոք, ոչ մեկը»[414]: Ահա, նույն ձևով բոլորը սիրեցին մեղքի անօրեն ճանապարհը և ատեցին աստծո բոլոր պատվիրաններն ու իրավունքները. ո՛չ իշխանները, ո՛չ զինվորները, ո՛չ աշխարհականները, ո՛չ հոգևոր առաջնորդները, քահանաներն ու վանականները աստվածահաճո գործ չէին կատարում, նրանք հեշտասեր էին դարձել, սիրել աշխարհիկ կյանքը: Աստված այդ ամենը մեղսագործություն համարեց և, ահա, իրականություն դարձավ մարզպանի խոսքը. «Ո՞վ է նայում երկրի վրա և սասանում այն»: Եվ աստված զայրույթով նայեց արարածների վրա, և նրանք կործանվեցին տիրոջ զորության ահից: Դա տեղի ունեցավ հետևյալ կերպ. մարերի ամսի տասներկուսին, կիրակի օրը, խաչի Գյուտի տոնին, տիեզերքի վրա սարսափելի արհավիրքներ եղան, որոնց նմանը երբևիցե չենք լսել, ոչ էլ կարդացել սուրբ գրքերում: Երբ դեռ խոր քնի մեջ էինք, հանկարծակի ահավոր ճայթում և թնդում եղավ: Բոլոր արարածներն աղաղակ բարձրացրեցին: Եղավ սաստիկ դղրդյուն. սարսափելի թնդյունից սասանվեցին երկիրն ու լեռները, պատռվեցին ապառաժները և բլուրները: Ահավոր աղետի ժխորը արձագանքում էին լեռներն ու բլուրները, սարսափած անասունների պես գոչում: Լեռների արձագանքը մեծաթիվ բանակների բարձրացրած աղմուկն էր հիշեցնում: Տեր աստծո զորության ահից արարածները ծուխի պես էին ալեկոծվում, դողում ու երերում, քանզի դաշտերն ու լեռները պղնձի նման դողանջում էին, քամուց տատանվող ծառերի նման՝ երերում, դողում և սասանվում: Արարածները հեծում ու տնքում էին ինչպես բազմօրյա հիվանդը: Կործանման մեծ սարսափն էր տարածվել, մարդիկ փախստականների նման հուսաբեկ էին եղել, ահ ու դողի մեջ ընկել, նրանք մեղապարտների նման լալիս էին ու ողբում: Երկրաշարժը դադարելուց հետո, մինչև գիշերվա ժամը մեկը, դեռ ժխորը լսելի էր: [Աստծո] բարկության ահից բոլոր մարդիկ, վերապրելու հույսը կորցրած, ասացին. «Հասել է [աշխարհի] կործանման և վերջին դատաստանի օրը»: Հենց այդ օրվան էր նման, օրը կիրակի էր, աղմուկը՝ սոսկալի, լուսինը՝ փուլի մեջ: Նշանները վերջին օրվա մասին էին վկայում, և մարդիկ սարսափած մահամերձի նման հուսալքվել էին: Այդ գիշեր ավերակ դարձան բազմաթիվ քաղաքներ ու գավառներ, բոլորն էլ ֆրանկների տիրապետության տակ գտնվող: Այլ գավառներ և այլ ժողովուրդներ ոչ մի վնաս չկրեցին: Այդ գիշեր կործանվեց Սամոսատ քաղաքը,

մուսատ քաղաքն և Հարան-Մսուր և Քեսուն, Ռապան և Մարաշ քաղաք ահաւոր կոչծանեցաւ և ոգիք իբրև քառասուն հազար մեռան, զի էր բազմամբոխ քաղաք, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: Այսպէս և քաղաքն Մսիս կործանեցաւ անթիւ արանց և կանանց, և այլ բազում գեւղք և վանորայք և անհամար արք և կանայք, տղայք հազարք հազարաց և բիւրք բիւրուց կործաննեցան: Ու եղև զի ի Սեաւ լեառն անուանի յանապատն, որ կոչի Բարսեղեանց, էին ժողովեալ եկեղեցօրհնէքն սրբոյ բանեալ կրօնաւորք և վարդապետք Հայոց և կային ի պաշտօնն Աստուծոյ, անկաւ եկեղեցին ի վերայ նոցա, և երեսուն կրօնաւոր և երկու վարդապետ կատարեցան ի ներքոյ նորա, որ կան մինչև ցայսօր. նոյնպէս և եղև մերձ ի Մարաշ ի մեծ անապատին, որ ասի Յեսուանց, անկաւ և կործաննեցաւ վանքն և ամենայն դասք կրօնաւորացն. և յորժամ դադարեաց շարժն, ձիւն սկսաւ գալ և զամենայն աշխարհս ի ներքոյ կատարեաց. մեծ և փառաւոր վարդապետն Հայոց Գրիգոր, որ ասի Մաշկևոր, ի նմին տեղւոջ կատարեցաւ. և այսպիսի օրինակաւս բազում անցումն և բարկութեան կատարած եղև հաւատացելոցս աղգացս: Այս այսպէս գործեցաւ վասն մեղաց, զի այր իւրաքանչիւր Թողին զբուն պողոտայն պատուիրանացն Աստուծոյ և զհետ բորբոքեցան մոլորական ճանապարհին, և ելին ի գրոց պատուիրանաց և կան լիմարեալք. որպէս յաւուրսն Նոյի ուտէին, ըմպէին, մինչև կորեան ըստ գործոց իւրեանց, այսպէս և սոքա կային ի գործ ուրախութեան՝ մինչև եհաս բարկութիւն ի Տեառնէ Աստուծոյ և սատակեաց զգործողսն չարեաց, վասն զի դնացին մեծամեծ յանցանօք:

Յայսմ ամի մեռաւ սուրբ վարդապետն Հայոց Գէորգ, որ անուանեալ կոչեցաւ Մեղրիկ, որ էր այր սքանչելի և հրաշալի ճգնաւոր. զառաջին ժամանակս կենաց իւրոց անցուցեալ էր միայնակեցութեան կարգօք ցամս չիսուն, և վախճանեցաւ ամաց եօթանասնից, և ամենայն ժուժկալ և ճգնաւորական հանդիսիւք և չորաճաշակ գոլով ամենայն ի կենաս իւրում՝ հաւասարեալ էր ամենայն կարգօք և կրօնիւք առաջին սրբոցն. և զամենայն ժամանակս կենաց իւրոց զկիրակէքն յոտանաւոր արթնութեամբ անցուցանէր. և էր ինքն ի Հայոց աշխարհէն, ի Վասպուրական դաւառէ, ի գեղջէն, որ Անալիւր կոչի գեղն և է մեծ. սա ի տղայութեան կրօնաւորեալ լինէր ամենայն հռչակաւոր անուամբ և վարս աքանչելիս ստացեալ և օրինակ բազմաց եղեալ և հայր խոստովանութեան լինէր ամենայն Հայաստանեայցս և դարձուցանէր զամենեսեան ի ճանապարհս լուսոյ և ի ձեռն ապաշխարութեան յորդեգրութիւն Հօրն երկնաւորի ընծայեցուցանէր զամենեսեան. սա մեռանէր բարի խոստովանութեամբ ի Քրիստոս և թաղեցաւ ի գաւառն Անաւարզա, ի մեծ

Հարսնմսիրը, Քեսունը, Ռապանը։ Հիմնահատակ ավերվեց Մարաշ քաղաքը, սպանվեց շուրջ քառասուն հազար հոգի. այդ մարդաշատ քաղաքից և ոչ մեկը չփրկվեց։ Այդպես և Մսիս քաղաքը, որտեղ [ոչնչացավ] տղամարդկանց և կանանց անթիվ բազմություն, ինչպես նաև ուրիշ շատ գյուղեր ու վանքեր, որտեղ զոհվեցին անհամար տղամարդիկ ու կանայք, հազարներով և բյուրերով երեխաներ։ Սև լեռան Բարսեղյանց կոչվող հռչակավոր անապատում հայոց սրբակրոն վանականներն ու վարդապետները հավաքվել էին եկեղեցին օրհնելու։ Աստծուն պատարագ մատուցելու պահին եկեղեցին փուլ եկավ նրանց վրա, և երեսուն վանական ու երկու վարդապետ սպանվեցին նրա տակ ու մինչև օրս էլ մնացել են այնտեղ։ Նույն բանը տեղի ունեցավ և Մարաշի մոտ գտնվող մեծ անապատում, որ Հեսվանց է կոչվում։ Վանքը փուլ եկավ և կործանեց վանականների ողջ դասը։ Երբ երկրաշարժը դադարեց, սկսեց ձյուն տեղալ և ծածկել ողջ երկիրը։ Հայոց մեծ և երևելի վարդապետ Գրիգորը, որին Մաշկևոր են ասում, այդ նույն տեղում զոհվեց։ Նման ձևով հավատացյալ ժողովուրդների բազմաթիվ կորուստներ, դառն կոտորածներ եղան։ Դա տեղի ունեցավ մեր մեղքերի պատճառով, քանզի ամեն մեկը, թողնելով աստծո պատվիրանների բուն պողոտան, մեծ ցանկությամբ ընթացավ զարտուղի ճանապարհով, անտեսեց [սուրբ] զրքերի պատվիրանները և տխմարացավ։ Այնպես, ինչպես Նոյի ժամանակ մարդիկ կերուխումով էին տարված, մինչև որ իրենց արարքների պատճառով կործանվեցին, այդպես էլ սրանք իրենց տվել էին խրախճանքի, մինչև որ վրա հասավ աստծո բարկությունը և ոչնչացրեց չարագործներին, քանզի մեղքեր էին գործում։

Այդ տարին վախճանվեց հայոց սուրբ վարդապետ Գեորգը, մականունը՝ Մեղրիկ[415], մի հոյակապ, հրաշալի ճգնավոր, որն իր ամբողջ կյանքում հիսուն տարի միայնակյաց էր եղել, վարել ժուժկալ ու ճգնավորական կյանք, սնվել միմիայն հացով և իր արարքներով ու սրբակրոնությամբ նմանվել առաջին սրբերին։ Նա իր ողջ կյանքում կիրակի օրերը անցկացրել էր ոտքի վրա զգաստ վիճակում. նա Հայաստանից էր, Վասպուրական նահանգից, Անալյուր կոչված մեծ գյուղից։ Երիտասարդ հասակում դառնալով վանական, նա սքանչելի կյանք վարեց, մեծ անուն հանեց և շատերի համար օրինակ դարձավ։ Նա բոլոր հայերիս խոստովանահայրը դարձավ և բոլորին ուղղեց դեպի լուսավոր ճանապարհը ու ապաշխարությամբ բոլորին երկնային հոր որդիները դարձրեց։ Նա յոթանասուն տարեկան հասակում վախճանվեց բարի խոստովանությամբ ի Քրիստոս և թաղվեց Անավարզա գավառում, Դրա-

անառակաւն, որ Դրազարկ կոչի, զոր նորոգեաց մեծ իշխանն Հայոց Թորոս:

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՇԿԴ եղև ահաւոր և հրաշալի նշան ի քաղաքն Տաճկաց, որ ասի Ամիթ, զի վասն բազմանալոյ անօրէնութեանն չար և պիղծ ազգին իւրեանց՝ յանկարծակի անկաւ հուր յերկնից ի մէջ գիշերի ի վերայ աւազ ճեմարանին իւրեանց. և սաստկացեալ հուրն երկնից և բորբոքեալ մեծաւ բարկութեամբ և իբրև գազանաշունչ բնութեամբ զքարինս պարսպին որպէս զփայտ այրէր. և եղեն բախեալ ամենայն արք քաղաքին ի վերայ նորա և ոչ կարացին անցուցանել զանշիջանելի հուրն, այլ դիզացեալ բարձրանայր հուրն մինչև յերկինս և ապականեալ այրեաց զաղօթից ժողովարանն և զաղտեղացեալ հանդիսարանն. այս եղև յԱմիթ քաղաքն, զոր շինեաց Տիգրան արքայն Հայոց:

Յայսմ ամի դարձեալ ժողով արար ասպատակարն Պարսից ամիրայն Բուրսուխն և գայր և հասանէր ի դուռն Ուռհայոյ. և կացեալ սակաւ աւուրս՝ անցանէր ընդ Եփրատ գետ և գնաց ի Հալապ քաղաք և անտի անցեալ էառ զՇիզարն զքաղաքն Տաճկաց և կամեցաւ ասպատակ առնել զԹլպաշար և զամենայն գաւառն Անտիոքայ. և յայնժամ ժողովեցան ամենայն ազգն Փռանգաց յԱնտիոք առ կոմսն Ռօճէրն, գայր և Թագաւորն Երուսաղէմայ և Պաղտինն կոմսն Ուռհայոյ և միաբանեցան ի գաւառն Շիզարուն: Յայնժամ գայր ի բանակն Փռանգաց մեծ ամիրայն Պարսից Խալի, որ կոչի որդի Արդուխին, բազում զօրօք գայր առ Ռօճէրն, վասն զի յոյժ թշնամի էր Բուրսուխին. գայր առ նոսա և ամիրայն Դմիշկայ, որ ասի Տուղ-Տիկին, և եղեն միաբանեալ ընդ ազգն Փռանգաց. և արարին ընդ միմեանս դաշինս և սէր հանդերձ մեծամեծ երդմամբ՝ Խալի և Տուղ-Տիկին. նոյնպէս և Հալապայ ամիրայն միաբանեալ եղև ընդ զօրսն Փռանգաց. և կային հանդէպ միմեանց զօրքն այլազգեաց և Փռանգաց զամիսս չորս. իսկ զօրքն Թուրքաց ոչ համարձակեցան ելանել ի պատերազմ. և գաղտաբար դարձաւ Բուրսուխն խաբ տալով զօրացն Փռանգաց: Եւ գիտացեալ Փռանգացն, եթէ դարձաւ Բուրսուխն, գնաց Թագաւորն Երուսաղէմայ և Տրապօլսոյ և դարձան ամիրայքն Խալի և Տուղ-Տիկին և Հալապայն, գնացին ի գաւառս իւրեանց. և յայնժամ գիտացեալ Բուրսուխն զգնալ զօրացն Փռանգաց, դարձաւ յԱնտիոք և կամէր աւար հարկանել զգաւառն. և լուեալ զայս կոմսն Ուռհայոյ ի յԱնտիոք՝ և առեալ զՌօճէրն եօթն հարիւր ձիաւորով՝ հասանէր ի վերայ Բուրսուխին ի Հալպ գաւառին. և գտեալ անպատրաստ զնա, յարձակեցաւ ի վերայ նորա. և մեծաւ զօրութեամբ յաղթեցին նոցա և արարին զնոսա հալածականս. կալան արս փառաւորս և առին

զարկ կոչվոզ մեծ անապատում, որ նորոգել էր հայոց մեծ իշխան Թորոսը։

Հայոց 564 թվականին [21 փետրվար 1115—20 փետրվար 1116 թ.] տաճկաց Ամիթ կոչվող քաղաքում ահավոր ու զարմանալի մի հրաշք եղավ։ Այդ չար և պիղծ ժողովրդի անօրինության բազմանալու պատճառով, հանկարծակի, գիշեր ժամանակ երկնքից նրանց գլխավոր մզկիթի վրա կրակ թափվեց։ Երկնային կրակը մեծ բարկությամբ բորբոքվեց, սաստկացավ և իր գաղանաշունչ բնությամբ փայտի նման այրեց պատի քարերը։ Քաղաքի բոլոր տղամարդիկ շտապեցին այնտեղ, բայց չկարողացան հանգցնել անշիջանելի կրակը, որը, բորբոքվելով, երկինք բարձրացավ. նա մոխիր դարձրեց նրանց գլխավոր մզկիթը[416], այդ պիղծ ժողովարանը։ Դա տեղի ունեցավ Ամիթ քաղաքում, որ կառուցել էր հայոց արքա Տիգրանը։

Այդ տարին պարսից սպարապետ Բուրսուխ ամիրան նորից զորահավաք արեց և եկավ հասավ Ուռհայի դուռը։ Մի քանի օր մնալով, նա անցավ Եփրատ գետը, եկավ Հալեպ քաղաքը, այնտեղից էլ գնաց գրավեց տաճկաց Շիզար քաղաքը։ Նա վճռեց ասպատակել Թլպաշարը և Անտիոքի բովանդակ գավառը։ Այն ժամանակ բոլոր ֆրանկները հավաքվեցին Անտիոքում՝ կոմս Ռոճերի մոտ. եկան Երուսաղեմի թագավորը, Ուռհայի կոմս Պազտինը և իրար միացան Շիզար գավառում։ Ֆրանկների ճամբարը՝ Ռոճերի մոտ բազմաթիվ զորքերով եկավ պարսից մեծ ամիրա Խազին՝ Արդուխի որդին, քանի որ Բուրսուխի կատաղի թշնամին էր։ Նրանց մոտ եկավ և Դամասկոսի ամիրան, որ Տուղտիկին է կոչվում։ Խազին և Տուղտիկինը, միանալով ֆրանկներին, մեծամեծ երդումներով դաշինք կնքեցին և բարեկամություն հաստատեցին։ Ֆրանկների զորքին միացավ նաև Հալեպի ամիրան։ Այլազգիների և ֆրանկների զորքերը չորս ամիս դեմ դիմաց էին կանգնել։ Թուրք զորքերը չհամարձակվեցին մարտ տալ. Բուրսուխը թաքուն, ֆրանկների զորքերին ապակողմնորոշելով, նահանջեց։ Երբ ֆրանկները իմացան Բուրսուխի նահանջի մասին, Երուսաղեմի թագավորը և Տրապոլսի [կոմսը] վերադարձան, վերադարձան նաև Խազին, Տուղտիկինը և Հալեպի ամիրաները ու գնացին իրենց գավառները։ Բուրսուխը, իմանալով ֆրանկ զորքերի հեռանալու մասին, շարժվեց Անտիոքի վրա, կամենալով գավառն ավարի առնել։ Անտիոքում գտնվող Ուռհայի կոմսը, լսելով այդ մասին, վերցրեց Ռոճերին՝ յոթ հարյուր հեծյալներով, և դիմեց Բուրսուխի դեմ՝ Հալեպի գավառը։ Նրան անպատրաստ գտնելով, նա մեծ ուժով հարձակման անցավ, հաղթեց և փախուստի մատնեց նրան։ [Ֆրանկները] գերեցին անվանի հրամանատարների, ձեռք բերեցին մեծ

բաղում առս և աւարս և առհասարակ զամենայն բանակն աւար հարկանէին, և մնացեալքն գնացին ամօթով։

Յայսմ ամի կոմսն Ուռհայոյ Պաղտինն պատերազմ յարուցանէր ի վերայ Վասլին իշխանին Հայոց այն, որ ունէր զիշխանութիւն Դող Վասլին։

Յայսմ աւուրքս գնաց Պաղտինն զօրօք ի վերայ ամուր քաղաքերդին Ռապնայ և բաղում աւուրս ի վերայ՝ ոչինչ կարաց առնել, խաւարեալ ունէր զնա ի պահեստի։

Յայնժամ գնաց Վասիլն առ մեծ իշխանն Հայոց, որ կոչէր Լևոն, որդի Կոստանդնայ՝ որդւոյ Ռուբենայ՝ եղբայր Թորոսի և կին առեալ էր զդուստր նորա. յայնժամ Թորոս եղբայր Լևոնի կոչեաց զտղայ Վասիլն և նենգութեամբ կալաւ զնա և տայր ի Պաղտինն ի յՈւռհայոյ կոմսն։ Եւ նա զաղանաբար ի խորտանգանս արկանէր զայրն քաջ և զՀզօր պատերազմող և բռնութեամբ առեալ ի նմանէ զամենայն գաւառն և խափանեաց զիշխանութիւնն Հայոց ի յայնմ աշխարհէն։ Եւ Վասիլն գնաց առ Լևոն աներն իւր և անտի յարուցեալ գնաց ի Կոստանդնուպօլիս. և արար նմա թագաւորն Հռոմոց մեծ ընդունելութիւն և ամենայն զօրաց իւրոց։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՇԿՋ զօրաժողով արար կոմսն Ուռհայոյ Պաղտինն, և Կալարան կոմսն Սրճոյ, և գնացին ի վերայ Հայոց իշխանին՝ որում անունն կոչէր Ապլղարիպ, որ էր եղբայր Լիկոսին և որդիք Վասակայ, արք քաջք և պատերազմողք, որ բնակեալ էր ի Նզևան առաջին տէրն Բլպաշարայ և ի Պարսից առեալ էին բազում տեղիք քաջութեամբ իւրեանց. և ուժգին զօրութեամբ առին զքաղաքն զՊիրին և շինեցին իւրեանց բնակարան, վասն զի էին քաջք և անուանիք պատերազմողք, ունէին իւրեանց զօրականս արս հազար։ Եւ յորժամ տեսանէր կոմսն զդաւառն նոցա, կարի յոյժ մախայր ի սիրտն իւր և ոչ կարաց ծածկել զնախանձ չարին, զօրաժողով արար և գնաց ի վերայ Պիրին և ի հոգս առեալ զքրիստոնեայսն առաւել քան զԹուրքն և զտարի մի ի խստար արկեալ զիշխանն Հայոց զԱպլղարիպն չարաչար և ազգի ազգի նեղութեամբ. և յայնժամ առ վտանգին և առ վշտացն անճարեալ լինէր Ապլղարիպն և տայր զՊիրն և զամենայն գաւառն ի Պաղտոյինն, և ինքն գնաց առ իշխանն Հայոց առ Թորոս Ռուբենայ որդին՝ յԱնաւարզա։ Եւ կոմսն տայր զՊիրն և զամենայն գաւառն ի Կալարան Փռանգաց. ահա որ մի առ մի քակեաց զամենայն իշխանսն Հայոց կարգաւ առաւել քան զտունն Պարսից և այսպիսի օրինակաւս հալածականս արար զիշխանսն Հայոց, զայն՝ որ մնացեալ էին ի կատաղի ազգէն Թուրքաց։ Սա մեծաւ նեղութեամբ տարագիր արար զա-

ավար։ Նրանք թալանեցին ամբողջ ճամբարը։ Փրկված [այլազգիները] ամոթահար հեռացան։

Այդ տարին Ուհայի կոմս Պաղտինը պատերազմ հայտարարեց Գող Վասիլի իշխանությունը ժառանգող հայոց իշխան Վասիլին։

Այդ օրերին Պաղտինը զորքերով գնաց Իապան անառիկ բերդաքաղաքի վրա, բազում օրեր պատերազմ մղեց, բայց ոչ մի հաջողություն չունեցավ. միայն պաշարման մեջ պահեց այն։

Այն ժամանակները Վասիլը գնաց հայոց մեծ իշխան Լևոնի՝ Ռուբենի որդի Կոստանդնի որդու, Թորոսի եղբոր մոտ։ [Վասիլը] կնության էր առել [Լևոնի] դստեր։ Լևոնի եղբայր Թորոսը իր մոտ էր հրավիրել Վասիլ Տղային, բայց, նենգությամբ ձերբակալելով, նրան հանձնեց Ուհայի կոմս Պաղտինի ձեռքը, որը դաշանաբար խոշտանգեց քաջ տղամարդուն և հզոր պատերազմողին, նրա ողջ գավառի վրա բռնատիրեց և այդ շրջանում վերացրեց հայկական իշխանությունը։ Վասիլը գնաց իր աներոջ՝ Լևոնի մոտ, այնտեղից էլ՝ Կոստանդնուպոլիս։ Հռոմոց կայսրը նրան և նրա բոլոր զինվորներին փառավոր ընդունելություն կազմակերպեց։

Հայոց 566 թվականին [20 փետրվար 1117—19 փետրվար 1118 թ.] Ուհայի կոմս Պաղտինը և Սրուճի կոմս Կալարանը զորահավաք արեցին և գնացին Ապլղարիպ կոչվող հայոց իշխանի դեմ. նա և իր եղբայր Լիկոսը Վասակի որդիներն էին՝ քաջարի և կռվող տղամարդիկ։ Նրանք իրենց քաջությամբ Բլսլաշարի նախկին տիրոջ ձեռքից խլել էին Նսեպինը, իսկ պարսիկների ձեռքից՝ բազում շրջաններ։ Նրանք մեծ ուժ գործադրելով գրավել էին Պիրը և դարձրել իրենց նստավայրը։ Նրանք քաջ և անվանի կռվողներ էին և ունեին հազար զինվոր։ Ծանոթանալով նրանց գավառին, կոմսի սիրտը լցվեց մեծ և անսքող նախանձով. նա զորահավաք անելով շարժվեց Պիրի վրա և թուրքից շատ փորձանք պատճառեց քրիստոնյաներին. նա մեկ տարի պաշարման մեջ պահեց հայոց իշխան Ապլղարիպին, սաստիկ և բազմապիսի նեղություններ պատճառեց նրան։ Ապլղարիպը, վտանգից և տառապանքներից ճարահատյալ, Պիրն ամբողջ գավառով հանդերձ Պաղտինին հանձնեց և թողեց գնաց Անավարզա, հայոց իշխան Թորոսի՝ Ռուբենի որդու մոտ։ Կոմսը Պիրն ամբողջ գավառով տվեց ֆրանկների Կալարան իշխանին։ [Պաղտինը] մեկ առ մեկ ոչնչացրեց հայոց բոլոր իշխանությունները, ավելի հետևողականորեն, քան պարսիկները, հալածական դարձրեց հայոց այն իշխաններին, որոնք կարողացել էին իրենց գոյությունը պահպանել թուրքերի կատաղած ազգի ձեռքից։ Բոլորին մեծ վիշտ պատ-

մինեաեան, քակիաց զամենայն իշխանութիւն Դոզ Վասլին, փախստական արար զամենայն դասս ազատաց, որ ի Կոստանդնուպօլիս, աւարեաց և զմիւս իշխանն Հայոց զԲագրատ զայր քաջ և յափշտակեաց զամենայն գաւառն նորա, որ բնակեալ էր յԱրևբնդան մերձ ի Կուրիս. անցայց և զԿոստանդին պտէրն Կարկոայ, որ և ի կապանսն մեռանէր չարաչար նեղութեամբ ի բերդն ի Սամուսատ. ի գիշերի շարժին գտին զնա յեզր եփրատ գետոյն ի վերուստ ի վայր հոսեալ. ի խոզակ մջնկին կայր բևեռեալ ի բանտի և այնիւ եկն ի վայր և այնպէս մեռաւ: Նոյնպէս և Պեմունդն ի բաց վարեաց զմեծ իշխանն Հոռոմոց՝ զիշխանաց իշխանն, որ բնակեալ էր ի Մարաչ քաղաքն. նա և այլ բազում և գեղեցիկ իշխանք ի բանտ և ի չարշարանս և ի կապանս մեռուցանէր. և բազումք այն էին՝ որոց զաչսն խաւարեցուցեալ էին, զձեռսն կտրեալ և զունչսն հատեալ. հատանէին զերանսն և ի փայտ հանեալ սպանանէին զտղայսն անմեղսն վասն ծնողացն խրատեալ հրամայէին: Եւ այսպիսի գործս անթուելի և անպատմելի, զի հանապազ վասն գանձի առնլոյ անիրաւաբար չարշարանօք յաւեր և յապականութիւն գարձուցին զերկիր. և յամենայն ժամ պարապեալ կային և այլ ոչինչ առնէին, բայց միայն նստեալ խորհէին ղչարութիւն, զհիլա և զամենայն ճանապարհս չարեաց սիրէին, բարեաց և ամենայն երախտեաց մոռացողք. զբազում անիրաւութիւնս նոցա կամէի գրել, բայց ոչ համարձակեցաք, զի ընդ իշխանութեամբ նոցա էաք:

Իսկ ի թուականութեանն Հայոց ՇԿէ յարուցեալ Պաղտունն Ուռհայոյ կոմսն գնաց աղօթական ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ մինչ լինէր աւուրբ սուրբ աղուհացիցն, զօրաժողով արար թագաւորն Երուսաղէմայ Պաղտինն եղբայրն Կօնդոփրէի՝ գնացեալ ի կողմանս աշխարհին Եգիպտացւոց, կամեցաւ ածել իւր ի հնազանդութիւն զազգն բարբարոսաց. և գտանէր զամենայն աշխարհն փախուցեալ ի մարդոյ, դարձաւ դիմօք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ ի դալն՝ ցաւ հասանէր նմա, որ և ի ճանապարհին մեռանէր: Եւ մինչդեռ կենդանի էր՝ պատուէր տայր ասելով. «Առաքեցէք յՈւհա և բերէք զկոմսն զՊաղտինն և կացուցէք զինքն ի քաղաքն Երուսաղէմ տեղապահ, մինչև ի Փոանդաց գայցէ իմ եղբայրն, և զնա դիք ձեզ թագաւոր»: Եւ յայնժամ բերին գագաղօք զթագաւորն յԵրուսաղէմ և թաղեցին զնա առաջի սրբոյն Գողգոթայի, զայր բարի և զսրբասէր և խոնարհ սրտիւք: Իսկ իբրև գտան զՊաղտինն յԵրուսաղէմ, հիացան յոյժ և դարձեալ ուրախ լինէին և համարեցան եթէ յԱստուծոյ եղև կոչն այն. և որպէս անդարձ արարեալ էր թագաւորն, տան գտեղապահութիւնն Երուսաղէմայ ի Պաղ-

ճառելով, նա տարագիր արեց նրանց, խորտակեց Գող Վասիլի բովանդակ իշխանությունը, [նրա] բոլոր ազատներին փախստական արեց Կոստանդնուպոլիս։ Նա տապալեց և հայոց մյուս իշխանին՝ Բագրատին, մի քաջ մարդու, բռնատիրեց նրա ողջ գավառի և Բագրատի նստավայր Արևրնդանի վրա, որ գտնվում է Կուրիսի մոտ։ Նա խորտակեց և Կարկառի տեր Կոստանդնին, որը Սամոսատի բերդում կապանքների մեջ տանջամահ եղավ։ Երկրաշարժի դիշերը նրան գտան Եփրատ գետի ափին, նա [բերդից] ցած էր գլորվել։ Բերդում նա գամված էր Մջնկի սյանը և նրա հետ գլորվել էր ցած ու մեռել։ Պեմունդն էլ իր հերթին հալածական արեց Հռոմոց մեծ իշխանին՝ իշխանաց իշխանին, որ Մարաշ քաղաքում էր նստում։ Նա ուրիշ բազում և բարի իշխանների բանտում և կապանքների մեջ տանջամահ արեց։ Նրանք շատերի աչքերն էին կուրացնում, ձեռքերն ու քթերը կտրում։ Նրանք կտրել էին տալիս տղամարդկանց սեռական օրգանները, ծնողներին սաստելու նպատակով երեցահան անում և սպանում անմեղ երեխաներին։ Անհնարին է թվել նրանց չարագործությունները, պատմել այդ մասին. դրամ շորթելու համար նրանք անմեղ մարդկանց չարչարում էին։ Երկիրը քարուքանդ արեցին։ Նրանք անգործ թրև էին գալիս, ոչինչ չէին անում, այլ միայն նստում և վատության ու ստորության մասին մտածում։ Նրանք նախատամոռները ամեն տեսակի նենգության և վատության սիրեցին, մոռացան [իրենց արված] լավությունը։ Ես կուզենայի դրի առնել նրանց բովանդակ անօրինությունները, բայց չհամարձակվեցի, քանդի գտնվում էինք նրանց իշխանության ներքո։

Հայոց 567 թվականին [20 փետրվար 1118—19 փետրվար 1119 թ.] Ուռհայի կոմսը ելավ գնաց ուխտի՝ Երուսաղեմ սուրբ քաղաքը։ Մեծ պահքի օրերին Երուսաղեմի թագավոր Պաղտինը՝ Կոնդոֆրեի եղբայրը, գնաց Եգիպտոսի կողմերը, կամենալով բարբարոսներին հպատակեցնել, բայց Նա, համայն երկիրը բնակիչներից լքված գտնելով, ճամփա ընկավ դեպի Երուսաղեմ սուրբ քաղաքը։ Ճանապարհին նա հիվանդացավ և վախճանվեց։ Հոգին ավանդելուց առաջ նա արեց հետևյալ կարգադրությունը. «Դիմեցեք Ուռհա և բերել տվեք կոմս Պաղտինին ու Երուսաղեմ քաղաքի տեղապահ նշանակեք, մինչև որ ֆրանկների երկրից իմ եղբայրը գա, որին և կհաստատեք ձեզ թագավոր»։ Թագավորին, այդ բարի, սրբասեր և հեզաբարո մարդուն, դագաղի մեջ բերեցին Երուսաղեմ և թաղեցին սուրբ Գողգոթայի լանջին. [Ֆրանկները] Պաղտինին Երուսաղեմում գտնելով, շատ զարմացան. նրանք կրկնակի ուրախացան, ենթադրելով, որ նա աստծո կանչով է եկել։ Թագավորի կտակի համաձայն, Երուսաղեմի [գահի] տեղապահությունը տվեցին Պաղտի-

տինն: Եւ նա ոչ առնոյր յանձն, այլ զաթոռ թագաւորութեանն խնդրէր. և պայման արարեալ զամ մի ոչ դնել թագ ի գլուխն, և եթէ ոչ գայցէ եղբայր թագաւորին՝ դիցէ զթագն: Եւ հաճեցան ամենայն տունն Փռանդացոց զբան նորա. և յաւուր Ծառզարդարին տարան զկոմսն Ուհայոյ ի տաճարն Սողոմոնի և դնէին զնա յաթոռ թագաւորութեանն Երուսաղէմի, և ի կատարման տարւոյն դնեն զթագն ի գլուխն Պաղտունին: Պաղտինս այս էր ի մեծամեծաց տանն Փռանդացոց, այր քաջ և պատերազմող, մարմնովն սրբասէր և մեղաց ատեցող և բարուքն հեզ և ցածր, այլ յաւեր ճարտար և յափշտակող անյագուրդ, գանձուց և արծաթոյ անկուշտ և ի տուրս ընչից նուազ և հաւատովն յոյժ ուղղափառ և բարուքն և բնութեամբն յոյժ հասատատուն: Եւ արդ ահա այս երկու թագաւորքս, որք ելին ի յՈւհայոյ, և երկուքն զմի անուն ունէին՝ Պաղտին զոլով:

Յայսմ ամի մեռանէր Տափարն սուլտանն Պարսից որդին Մելիքշահին, այր զաղանամիտ յոյժ: Արդ սա ի ժամ մահուանն իւրոյ գործեաց զործ զարմանալի, որ անլսելի էր լսելեաց, վասն զի յորժամ գիտաց, եթէ մեռանելոց էր, յաղագս որդեացն սրտի զայս. առաքեաց և կոչեաց ի պալատան զկինն իւր զԴոհար խաթունն՝ զդուստրն ամիր Իսմայէլին, և զաղտ ի զօրացն Հրամայեաց զնա զենել առաջի իւր, Զի մի՛ արասցէ, ասէ, իւր այր և հանցէ զորդիքս իմ ի յաթոռոյ և ի հայրենեաց իմոց. վասն զի էր մեծազդի և բազում զօրաց տէր և սա յամենայն ազգաց զեղեցիկ աղջկունս էր ժողովեալ՝ կուսանս չորս հարիւր, որ կային յոտն առաջի նորա զարդարեալ գեղեցիկ զարմանալեօք, յականց և ի մարգարտաց՝ հանդերձ արաբացի ոսկւով, և թագ ի գլուխան, և հիւսեալ զվսոյն զարդարեալ ոսկւով և ամենայն սքանչելի զարդարանօք ի գոյնս գոյնս, փայլէին առաջի նորա: Իսկ նորա զայն զմեծ թագուհին առաջի իւր սպանանէր, վասն զի մի՛ արասցէ իւր այր զեղբայրն իւր, զայն՝ որ նստեալ էր սուլտան ի խորին աշխարհն Պարսից, ի յՕղնկան քաղաք և ի Խզնէ, որ է երից ամաց գնացք ի խոր քան զՍպահան: Եւ զկնի այսորիկ դնէր Տափարն յաթոռ թագաւորութեանն իւրոյ զաւագ որդին իւր զՄահմուտն և տայր զամենայն Պարսիկս ի ձեռս նորա. և զկրտսեր որդին զՄելիքն դնէր սուլտան ի Գանձակ քաղաք Հայոց և տայ զամենայն արևելք ի ձեռս նորա: Եւ կայր նորա այլ ևս երկու որդիք. բայց Դոհար խաթունին ոչ գոյր որդիք:

Յայսմ ամի մեռանէր Պարսից խալիփայն, այն՝ որ նստէր յաթոռն Մահմէտի ի Բաղդատ քաղաք:

Յայսմ ամի զօրաժողով արարեալ մեծ կոմսն Փռանդաց Ռօճէրն տէրն Անտիոքայ քաղաքի և գնաց ի վերայ քաղաքին Տաճկաց, որ

նին, բայց նա հրաժարվեց վերցնել. պահանջեց թագավորական գահը: Նա պայման դրեց՝ մեկ տարի իր գլխին թագ չդնել. եթե այդ ընթացքում թագավորի եղբայրը չգա, ապա թագը կդնի: Բոլոր ֆրանկները համաձայնություն տվեցին նրա պայմանին և ծաղկազարդի օրը Ուռհայի կոմսին տարան Սողոմոնի տաճարը ու նստեցրին Երուսաղեմի թագավորական գահին: Մեկ տարին լրանալուց հետո թագը դրին Պաղտինի գլխին: Այս Պաղտինը ֆրանկների երկրի մեծամեծներից էր, քաջ ու կռվող մի մարդ, ժուժկալ, անարդարության թշնամի, հեզաբարո և խոնարհ, հավատքով ուղղափառ, վարքով և բնավորությամբ շատ կայուն, բայց և ավերելու մեջ ճարտար, թալանելու մեջ անկուշտ, հույժ արծաթասեր ու ժլատ: Այս երկու թագավորներն էլ, որ Ուռհայից դուրս եկան, նույն անունն ունեին՝ Պաղտին:

Այդ տարին վախճանվեց պարսից սուլթան Տափարը՝ Մելիք Շահի որդին, մի անչափ գաղանաբարո մարդ: Իր մահվան պահին նա անեռևակայելի, նմանը չլսված արարք կատարեց. երբ նա համոզվեց, որ մեռնելու է, հանուն իր որդիների դիմեց հետևյալ քայլին. նա մարդ ուղարկեց և պալատ կանչեց իր կնոջ՝ Գոհար խաթունին՝ Իսմայիլ ամիրայի դստեր և, զորքից գաղտնի, հրամայեց իր ներկայությամբ սպանել նրան, որպեսզի, ինչպես ասաց, «Կրկին ամուսնանալով նա իմ որդիներին գահազուրկ չանի, չզրկի նրանց իմ ժառանգությունից»[417]: Նա նշանավոր տոհմից էր սերում և ուներ բազում զորքեր: Նա բոլոր ժողովուրդների միջից հավաքել էր գեղեցիկ աղջիկներ՝ չորս հարյուր կույս, որոնք ներկայանում էին նրան գեղեցիկ արդուզարդով, թանկագին քարերով ու մարգարիտներով, արաբական ոսկով պաճուճված, գլխներին թագ, ծամերը զարդարված ոսկով, և բազմատեսակ սքանչելի զարդերով շողշողում էին իր առջև: Իսկ նա իր ներկայությամբ սպանել տվեց այն մեծ թագուհուն, որպեսզի չամուսնանա իր՝ սուլթանի եղբոր հետ, որը սուլթան էր նստած պարսից աշխարհի խորքում՝ Օզնկան քաղաքում և Խզնեում, որ դանվում էր Սպահանից երեք ամիս ճանապարհ ավելի հարավ[418]: Տափարն, ահա, թագավորական գահը ժառանգեց իր ավագ որդի Մահմուտին՝ ողջ Պարսկաստանը հանձնելով նրան, իսկ կրտսեր որդուն՝ Մելեքին, սուլթան նշանակեց Հայոց Գանձակ քաղաքում, նրան տալով բովանդակ արևելքը: Նա ուրիշ երկու որդիներ էլ ուներ, բայց Գոհար խաթունից որդիներ չուներ:

Այդ տարին վախճանվեց պարսից խալիֆան, նա, ով նստում էր Մահմեդի աթոռին Բաղդադ քաղաքում[419]:

Այդ տարին ֆրանկների մեծ կոմս Ռոճերը՝ Անտիոք քաղաքի տերը, զորահավաք արեց և գնաց Հալեպ քաղաքի մոտ գտնվող տաճկաց Ազազ

կոչի Ազազ, մերձ ի Հալպ քաղաք։ Գայր առ նա իշխանն Հայոց Լևոն՝ որդի Կոստանդէի որդւոյ Ռուբենայ և գայր զօրօք իւրովք ի վերայ այլազգեացն։ Եւ արար Ռօճէրն պատերազմ ի վերայ Ազգուն զաւուրս երեսուն, և ոչ կարէին զզօրսն քաղաքին ի ներքս ածել. և ղկնի այսորիկ տայր զպատերազմն Ռօճէրն Հայոց զօրացն. կոչեաց զԼևոն և ասէր. «Առ վաղիւն քո զօրօքդ ելցես ի պատերազմ», փորձելով իմն զզօրսն Հայոց։ Յայնժամ ձայն տուեալ մեծ իշխանն Հայոց ամենայն Հայոց զօրացն, որ էին ի բանակին, և ժողովեցան ամենայն զօրքն Հայոց առ քաջ զօրականն Քրիստոսի Լևոն, և նա յորդորէր զամենեսեան մի առ մի։ Եւ առ վաղիւն ելանէին զօրք այլազգեացն ընդդէմ զօրացն Փռանգաց. և իշխանն Հայոց Լևոն վառեալ ունէր զզօրսն Հայոց ընդդէմ զօրացն Տաճկաց. և ձայն տայր զօրացն, և ի դիմի հարան զօրացն այլազգեացն. ուժգին գոչեաց որպէս զառիւծ և հանդերձ զօրօքն բախեցաւ ի վերայ նոցա և դարձոյց զնոսա ի փախուստ, և սրով ի հետ մինչև ի դուռն քաղաքին կոտորեաց զնոսա և արար զնոսա արգելականս, որ այլ ոչ ելան ընդ դուռն քաղաքին ի պատերազմ։ Եւ էառ իշխանն Հայոց Լևոն անուն քաջութեան յաւուրն յայնմիկ և գովեցաւ ի մէջ զօրացն Փռանգաց. և յայնմ օրէ սիրեաց Ռօճէրն զզօրսն Հայոց։ Եւ այսպիսի պատերազմաւս նեղէր զբազաքն Ազազն և սաստիկ պատերազմաւ հալանեցուցանէր զնոսա և էառ խաղաղութեամբ. և մարդոյ ոչինչ մեղուցաւ, այլ արձակեաց զբնակիչսն խաղաղութեամբ։ Եւ յայնժամ եղև մեծ հակառակութիւն ընդ խալփ ամիրային և ընդ Ռօճէրն, վասն զի յառաջն էին յոյժ սիրելիք և բարեկամք միմեանց և յայսմ ժամու եղեն թշնամիք, վասն զի Հալպ և Ազազն խալփի էին ամիրային Թուրքաց՝ որդւոյ Արդուխին. և մոմռայր խալփ ի սրտի իւրում։

Իսկ ի հասանել թուականութեանն Հայոց յամս ՇԿՀ զօրաժողով արարեալ ամիրայն խալփ որդի Արդուխին ահագին բազմութիւնս, վասն զի որպէս զնահապետ էր ի վերայ ազգին Թուրքաց իւրով ազգովն, և վասն այսորիկ ժողովեցան ի կոչ նորա, և յայսմ ամի խաղաց բազում զօրօք ի վերայ Ռօճէրին և Անտիոքայ կոմսին և գայր ի վերայ ազգին Փռանգաց ութսուն հազարով. և այսպիսի բազմութեամբ հասանէր ի դուռն Ուռհայոյ քաղաքին. և զաւուրս չորս կացեալ և ոչ ինչ արարեալ վնաս՝ և անցանէր ընդ Եփրատ գետն, և յընթացս լինէր իբրև զձի թառանչակոտ և ի բազում ընթացից խաւար հասուցանէր բազում տեղեաց, վասն զի անհոգացեալ կային ամենայն գաւառք Փռանգաց. առեալ բերդս և ագարակս և վանորայս և կոտորեաց առհասարակ զամենեսեան

կոչվող քաղաքի դեմ։ Նրա մոտ եկավ հայոց իշխան Լևոնը՝ Ռուբենի որդի Կոստանդնի որդին և իր զորքերով դիմեց այլազգիների վրա։ Ռոճերը Ազազի դեմ երեսուն օր պատերազմ մղեց, բայց, չկարողանալով քաղաքի կայազորին հաղթահարել, պատերազմը շարունակելու գործը թողեց հայոց զորքերին։ Կամենալով նրանց փորձել, նա կանչեց Լևոնին և ասաց. «Վաղ առավոտյան քո զորքով գնա պատերազմի»։ Հայոց մեծ իշխանը կոչով դիմեց ճամբարում գտնվող բոլոր հայ զինվորներին, որոնք հավաքվեցին Քրիստոսի քաջ զինվոր Լևոնի շուրջը. նա սկսեց մեկ առ մեկ քաջալերել նրանց։ Վաղ առավոտյան այլազգիների զորքը դուրս եկավ ֆրանկ զորքերի դեմ։ Հայոց իշխան Լևոնը հայ զինվորներին նախապատրաստել էր մարտի՝ ընդդեմ տաճկաց զինվորների։ Զինվորները նրա կոչով հարձակվեցին այլազգիների զորքի ճակատամասի վրա։ [Լևոնը] առյուծի նման ուժգին գոչեց, իր զինվորներով բախվեց նրանց, փախուստի մատնեց, սրով նրանց հալածական արեց և մինչև քաղաքի դուռը ջարդ տվեց, մնացածներին էլ ստիպեց փակվել [քաղաքում], որոնք այլևս պատերազմի դուրս չեկան։ Այդ օրը հայոց իշխան Լևոնը քաջի համբավ վաստակեց, փառաբանվեց ֆրանկ զինվորներից։ Այդ օրից սկսյալ Ռոճերը սիրեց հայ զինվորներին։ Այսպիսի յուրվներով, ահա, նա նեղ վիճակի մեջ դրեց Ազազ քաղաքը, համառ պատերազմով [ստիպեց] նրա [բնակիչներին] հպատակություն հայտնել և խաղաղ ճանապարհով տիրեց քաղաքին։ Նա ոչ ոքի ձեռք չտվեց, բնակիչներին անվնաս ազատ արձակեց։ Այն ժամանակ խազի ամիրայի և Ռոճերի միջև մեծ հակառակություն ծագեց. նրանք նախկինում միմյանց շատ էին սիրում և մտերիմներ էին, բայց այդ պահից դարձան թշնամիներ, որովհետև Հալեպն ու Ազազը պատկանում էին թուրքերի ամիրա խազիին՝ Արդուխի որդուն։ Խազին ներքուստ վիրավորված էր։

Հայոց 568 թվականի [20 փետրվար 1119—19 փետրվար 1120 թ.] սկզբին Արդուխի որդի խազի ամիրան հսկայական զորահավաք արեց։ Քանի որ նա իր տոհմով թուրքերի նահապետն էր համարվում, ուստի և [բոլորը] ընդառաջեցին նրա կոչին։ Այդ տարին նա մեծաթիվ զորքով շարժվեց Անտիոքի կոմս Ռոճերի վրա և ութսունհազարանոց բանակով դուրս եկավ ֆրանկների դեմ։ Ահա, այսպիսի բազմությամբ նա հասավ Ուռհա քաղաքի դուռը։ Չորս օր մնալով այնտեղ և [քաղաքին] ոչ մի վնաս չհասցնելով, նա գետանցեց Եփրատը. թառանչակուլ ձիու պես սլանալով, իր անցած ճանապարհին ասպատակեց ու ավերեց բազում վայրեր, քանզի ֆրանկների տիրապետության տակ գտնվող բոլոր շրջանները անպատրաստ վիճակում էին գտնվում։ Նա բերդեր, ագարակներ, վանքեր ձեռք բերեց, [բոլորին] կոտորեց, չխնայելով ծերերին

զծերս և զտղայս. և եկեալ ի Պզահան բանակ հարկանէր։ Իսկ Ռօճէրն կոմսն Անտիոքայ էր այր մեծ և հպարտացեալ, վասն այնորիկ ոչ յառաջապատարաստ եղև պանծացեալ ի զօրութիւն իւր. և յիշեաց նա զամբարտաւանութիւն աղդին իւրոյ և առ ոչինչ համարեալ նա զղօրսն Թուրքայ, զպատրաստութիւն և զհնարս ոչ խորհեցաւ և զղօրն իւր ոչ ժողովեաց մխաբան, և յայլ զօրաց Փռանգաց ոչ կոչեաց իւր ի թիկունս, զնաց անմտաբար ի պատերազմ ի վերայ Թուրք զօրացն վեց հարիւր Փռանդ ձիաւորով. կայր և հինգ հարիւր Հայ ձիաւոր և չորս հարիւր հետևակ և իբրև զբիւր մի այլ խառնաշաղախ. իսկ զօրք Թուրքացն ամենայն հնարաւորութեամբ պատրաստեալ զինքեանս՝ ի բաղում տեղիս դարանակալս կացուցին քմինս։ Այս եղև ի սահմանս քաղաքին, որ կոչի Թերևել. և արարին ահաւոր և սաստիկ պատերազմ. և յայնժամ ի բազմութենէ զօրացն Պարսից փակեցան ամենայն զօրք քրիստոնէիցն ի մէջ զօրացն Թուրքաց և ոչ գտանէին ճարակ փախստեան. և առհասարակ խողխողեալ լինէին ի կեր սրոյ ամենայն ազդն հաւատացելոց. և մեծ կոմսն Փռանդաց Ռօճէրն սպանաւ հանդերձ զօրօքն. և սակաւ մնաց, որ փրկեալ։ Եւ յայնժամ չեփրատ գետոյն մինչև ի յովկիանոս ծովն առպատակ արարեալ զամենայն աշխարհն և ելից արեամբ և կերութեամբ զամենայն գաւառն, և ամենայն բանակն Փռանգաց սրով անցան։ Այս եղև յամսեան Քաղոյի վեց, Վարդավառին բարեկենդանի շաբաթ օր։ Եւ յայնժամ ի կիրակէին Վարդավառին հասաւ ի քաղաքն Անտիոք Թագաւորն Երուսաղէմայ Պաղտինն և արարեալ ժողով զմնացեալ զօրսն Փռանգաց և գնաց ի վերայ Թուրք զօրացն և յԱրաց ամսոյ քան և հինգ և Օգոստոս վեցտասան. և եղև ի խմբել պատերազմին ի նոյն տեղին՝ և զբաղումս կոտորեաց ի Թուրք զօրացն, և երկու կողմանքն դարձան ի փախուստ. և ոչ ոք էր որ յաղթահարեցաւ և կամ յաղթեաց, վասն զի զօրք երկոցունց կողմանցն պակասեցան, բայց այլազգեացն պակասեաց յայնմ աւուր հինգ հազար այր՝ ոչ թէ միայն սրով, այլ ի տօթոյն հեղձամահ եղեն. և գնացեալ խափի ի յաշխարհն իւր՝ հարկանելով ի թագաւորէն Փռանգաց. և ամենայն զօրքն Փռանգաց գնացին յաշխարհն իւրեանց. գնաց և թագաւորն Պաղտինն ի քաղաքն իւր Երուսաղէմ։

Յայսմ ամի մեռանէր թագաւորն Հոռոմոց Ալէքս, այր բարի և իմաստուն և հզօր ընդդէմ պատերազմաց և յոյժ ողորմած ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի, բայց ի վերայ ազգիս Հայոց յոյժ աւեցող երեւեալ։ Սա գործեաց գործ, որ ոչ էր ըստ կամացն Աստուծոյ. հրամայեաց երկրորդ մկրտութիւն առնել և անարգեաց զնիկիական մկըր-

և երեխաներին: Հասնելով Պղահ, նա ճամբար խփեց: Իսկ Անտիոքի կոմս Ռոճերը, որ անվանի և հպարտ մարդ էր, իր հզորությամբ մեծամտացած՝ ոչ մի նախապատրաստություն չէր տեսել: Իր ժողովրդին բնորոշ ամբարտավանությամբ նա բանի տեղ չդրեց թուրքերին, չմտածեց նախապատրաստական միջոցներ ձեռք առնելու մասին, իր զորքերը մի տեղ չկենտրոնացրեց, ուրիշ ֆրանկ զորքերի օգնության չդիմեց և, անխոհեմաբար, վեց հարյուր ֆրանկ հեծյալներով պատերազմի ելավ թուրք զորքերի դեմ: Նա իր տրամադրության տակ ուներ նաև հինգ հարյուր հայ հեծյալ և չորս հարյուր հետևակ, ինչպես և տաս հազարանոց խառնիճաղանջ մի [ամբոխ]: Իսկ թուրքերը, ամեն տեսակետից նախապատրաստություն տեսած, բազմաթիվ տեղերում դարաններ դրեցին: Դա տեղի ունեցավ Թերեպ կոչված քաղաքի սահմաններում: Ահավոր, համառ պատերազմ բռնկվեց, թուրք զորքերը իրենց բազմաթվությամբ հնարավորություն ստացան շրջապատել բոլոր քրիստոնյա զինվորներին, որոնք փախչելու և ոչ մի ելք չէին գտնում: Հավատացյալները գլխովին սրի քաշվեցին, սպանվեց նաև ֆրանկների մեծ կոմս Ռոճերը [իր] զինվորներով հանդերձ: Շատ փոքր մասը միայն փրկվեց: [Խազին] ասպատակեց Եփրատ գետից մինչև Օվկիանոս ծովն ընկած բովանդակ շրջանը, արյամբ ու գերությամբ ողողեց բոլոր դավառները. ֆրանկների ողջ բանակը սրի քաշվեց: Դա տեղի ունեցավ քաղոց ամսի վեցին, բարեկենդանի վարդավառի շաբաթ օրը: Վարդավառի կիրակի օրը Երուսաղեմի թագավոր Պաղտինը ժամանեց Անտիոք քաղաքը. նա հավաքեց ֆրանկների մնացյալ զորքը և, արաց ամսի քսանհինգին կամ օգոստոսի տասնվեցին շարժվեց թուրք զորքերի դեմ: Ճակատամարտը տեղի ունեցավ հենց նույն տեղում. [Պաղտինը] թեև թուրք զինվորներից շատերին կոտորեց, այնուամենայնիվ, երկու կողմն էլ դիմեցին փախուստի, ոչ հաղթող եղավ և ոչ էլ պարտվող, քանզի երկու զորքերն էլ քանակապես նվազեցին, այդ օրը այլազգիները կորցրին հինգ հազար հոգի, որոնցից ոչ բոլորը սրի զոհ դարձան. մի մասը շոգից հեղձամահ եղավ: Ֆրանկների թագավորից ծեծված Խազին գնաց իր երկիրը. իրենց երկիրը գնացին նաև ֆրանկների բոլոր զորքերը. Պաղտին թագավորն էլ եկավ իր Երուսաղեմ քաղաքը:

Այդ տարին վախճանվեց Հոռոմոց կայսր Ալեքսը, բարի և իմաստուն, պատերազմներում հզոր, քրիստոնյաների նկատմամբ անչափ ողորմած, բայց և անչափ հայատյաց մի մարդ: Նա ոչ աստվածահաճո մի արարք կատարեց. հրամայեց կրկին մկրտել [հայերին], անարգեց նիկիական մկրտությունը և հաստատեց Քաղկեդոնի կարգը: Անամոթա-

տութիւնն և զՔաղկեդոնին հաստատէր զկարգ. և անամաչ զամենայն ազգն Հայոց մկրտէր և ոչ զարհուրէր ի Հոգւոյն սրբոյ, որ լուսաւորեաց զսուրբ մկրտութիւնն, և ոչ յիշեաց զհրամանս սուրբ առաքելոյն Պօղոսի՝ որ ասէր, եթէ «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք» և այլ թէ «Որ զմի անգամ զմկրտեալն մկրտեն, կըրկնակի զՈրդին Աստուծոյ ի խաչ հանիցեն, սկսեալ ի մեռելոտի գործոց անտի»: Արդ սա մեռանէր յայսմ ամի, և նստաւ յաթոռ թագաւորութեանն որդի նորա, որ ասի Պերփերօժէն, այր քաջ և պատերազմող և բարւոքն հեզ և քաղցր. սա եղեալ ընդունող ազգին Հայոց՝ և վերացոյց զյաստումն անարժան մկրտութեանն, և զհոգևորն ի բաց տայր մերկանալ, և զթերակատարն հաստատեաց:

Յայսմ ամի թագաւորն Երուսաղէմայ Պաղտին տայր զԱւհա և զԲլպաշար ի կոմսն ի Ճօսլինն և դարձոյց զնա ի քաղաքն յԱւհա, զոր ի ժամ մահուանն Տանգրէի եհան զնա ի տանէ և ի գաւառէ իւրմէ և յափշտակեաց ի Ճօսլէն զամենայն երկիրն, զոր ունէր, անիրաւաբար. և բանտարգել արար զայր քաջ և հզօր և սովալլուկ ունէր զնա ի բանտի. և բռնութեամբ և ուժեղ զօրութեամբ եհան զնա իբրև զարատաւոր և արար զնա հալածական՝ ծառայել օտար աշխարհաց. զոր առաջին թագաւորն Երուսաղէմայ կոչեաց զնա և մեծաւ պատուով տայր զքաղաքն Տասլար ի Ճօսլինն և կացոյց զնա տէր այնմ գաւառին: Եւ նա մեծաւ յաղթութեամբ կայր ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի, վասն զի յորժամ մեռաւ Պաղտինն և թագաւորեաց միւս Պաղտինն Տպօրկն, դարձոյց զՃօսլինն յԱւհա և կացուցանէր զնա ընդդէմ Պարսից պատերազմաց, զի էր այր քաջ և հզօր պատերազմող և անուանի յամենայն տունն Փռանգաց և ի քաջութենէ նորա դողայր ամենայն տունն Պարսից. և դարձաւ ի գութ ողորմութեան ի վերայ քաղաքին Ուռհայոյ, թողեալ զգազանական բարքն, զոր ունէր յառաջագոյն: Եւ թագաւորեաց Պաղտինն ի վերայ Անտիոքայ և ամենայն աշխարհին Կիլիկեցւոց Երուսաղէմայ և ամենայն աշխարհի նորա՝ մինչև յեդիպատոս:

Իսկ ի դալ հասանել թուականութեանն Հայոց ՇԿԲ դարձեալ զօրաժողով արարեալ խալի ամիրայն և կալմեալ գունդ զօրաց իւրոց հարիւր երեսուներեք հազար և գնայր ի վերայ ազգին Փռանգաց. և արագապէս հասանէր ի դուռն Ուռհայոյ քաղաքին և ելից զօրօք առհասարակ զամենայն դաշտն. կացեալ զաւուրս չորս, ապականեաց զամենայն արտորայսն ի ձեռն անթիւ զօրացն և յարուցեալ անցանէր ի Սրուճ քաղաք. և գաղտաբար անցուցանէր զմեծ մասն զօրացն ընդ Եփրատ գետ, և ի Թլպաշարայ մինչև ի Քեսուն առ հասարակ գերի վարեաց զարս և զկանայս. և կոտորեցին անողորմ սրով զամենայն տղայսն

քար նա սկսեց մկրտել հայ ժողովրդին, առանց վախենալու սուրբ Հոգուց, որ լուսավորեց սուրբ մկրտությունը, նա չհիշեց սուրբ Պողոս առաքյալի պատգամները, թե՝ «Հանուն Քրիստոսի մկրտվողները Քրիստոսին են զգեցած»[420], կամ «Մկրտվածին կրկին անգամ մկրտողները աստծո որդուն կրկին անգամ են խաչում, մեռած գործ ձեռնարկելով»[421]: Ահա, նա վախճանվեց այդ տարին, իսկ նրա գահը ժառանգող որդին, որ Պերփերոյեն[422] է կոչվում, քաջ ու կռվող, հեղաբարո և բարեհամբույր մի մարդ, հայ ժողովրդի հանդեպ սիրալիր եղավ, վերացրեց անարդ մկրտության պատուհասը, կարգադրեց հոգևոր [մկրտությունը] չապականել և թույլ տրված սխալն ուղղեց:

Այդ տարին Երուսաղեմի թագավոր Պաղտինը Ուռհան և Թլպաշարը տվեց կոմս Ճոսլինին և նրան հաստատեց Ուռհա քաղաքում. Տանգրիի մահվան օրերին Ճոսլինին նա վատությամբ տնից-տեղից, իր գավառից դուրս էր հանել և հափշտակել նրա ողջ տիրույթները: Այդ քաջ և հզոր մարդուն նա բանտ էր նետել և այնտեղ սովալլուկ պահել, ապա բռնի ուժով, որպես մեղավորի, դուրս էր արել ու արտաքսել, և նա ստիպված ծառայության էր մտել օտար երկրներում: Երուսաղեմի նախկին թագավորը Ճոսլինին մեծ պատիվներով իր մոտ էր հրավիրել և տվել Տապար քաղաքը, նշանակել այդ գավառի տեր: [Ճոսլինը] մեծ հաղթանակներ էր տանում Քրիստոսի խաչի թշնամիների դեմ, և ահա, երբ վախճանվեց Պաղտինը և թագավորեց մյուս՝ Պաղտին Տպորկը, վերջինս Ճոսլինին Ուռհա վերադարձրեց և նշանակեց պարսիկների դեմ պատերազմող [զորքերի] հրամանատար, քանզի նա քաջ մարդ էր, լավ կռվող, ֆրանկների մեջ հռչակված, Պարսից ողջ երկիրը սարսափում էր այդ խիզախից: [Ճոսլինը] նորից ողորմած դարձավ Ուռհա քաղաքի նկատմամբ, հրաժարվելով իր նախկին գազանային բնավորությունից: Պաղտինը թագավորեց Անտիոքի, Համայն Կիլիկիայի, Երուսաղեմի և նրա ամբողջ գավառի վրա՝ ընդհուպ մինչև Եգիպտոս:

Հայոց 569 թվականի[20 փետրվար 1120—18 փետրվար 1121 թ.] սկզբներին խազի ամիրան նորից զորահավաք արեց, կազմեց հարյուր երեսուներեք հազարանոց մի զորաբանակ և գնաց ֆրանկների դեմ: Նա խոնթանակի հասավ Ուռհա քաղաքի դարպասներին և բովանդակ դաշտը ողողեց զինվորներով: Մնալով այնտեղ չորս օր, նա իր անթիվ զինվորներով ամբողջությամբ փչացրեց արտերը, ապա շարժվեց գնաց դեպի Ս[illegible] քաղաքը: Նա իր զորաբանակի մեծ մասը գաղտագողի անցկացրեց Եփրատի մյուս ափը և Թլպաշարից մինչև Քեսուն ընկած շրջանի տղամարդկանց ու կանանց ամբողջությամբ գերեվարեց: [Թուրքերն] անգթաբար սրի քաշեցին բոլոր երեխաներին, անհամար բազմություն ող-

կրակով՝ այրեալ խորովէին անողորմ անթիւ բազմութիւն։ Եւ յորժամ Խազի Հանդերձ բազմութեամբն անցանէր ընդ Եփրատ՝ և բաղում գեղս մատնեցին ի ձեռս սրոյ, և քահանայք և կրօնաւորք սրով և հրով կատարեցան։ Եւ յայսմ ժամու կոմսն Ճօսլինն էր ի սահմանս քաղաքերդին Ռասլնայ. եկեալ ի Քեսուն և ի Պեհաստանի՝ զօրաժողով արար զզօրսն և ի գալն առաւօտուն զհետ գնաց Թուրքին և անկանէր ի վերայ նոցա. և կոտորեաց ի նոցանէ հազար այր. և դարձաւ Խազի ամիրայն զօրօքն և իջաւ մերձ ի յԱզաղն։ Յայնժամ թագաւորն Երուսաղէմայ Հանդերձ ամենայն զօրօքն Փռանգաց հասանէր յԱզազն առ ի պատերազմիլ ընդ զօրսն Թուրքաց. և գնաց Ճօսլինն զօրօք իւրովք յԱնտիոք և հասանէր առ թագաւորն. և զօրք Թուրքաց և Փռանգաց կային ընդդէմ միմեանց զբազում աւուրս և ոչ արարին պատերազմ. յայնժամ Խազի դարձաւ զօրօքն և գնաց յաշխարհն Մելտնոյ, որ կոչի Կարմիան, և թագաւորն դարձաւ յԵրուսաղէմ և Ճօսլինն գնաց ի յՈւռհա ի քաղաքն իւր։

Դարձեալ այս ինչ գործեցաւ ի թուականիս Հայոց ՇԿ. ամիրայ ոմն ի յաշխարհէն Դանձակայ՝ Խազի անուն, այր արիւնահեղ, լիրբ և չար հարամի, և էր սահմանակից աշխարհին Վրաց, և կայր սիրով ի հնազանդութիւն Վրաց թագաւորին Դաւթի. և յայսմ ամի խորհեցաւ չար խորհուրդս. և առեալ Խազի երիս բիւրս թուրք զօրաց՝ և մտանէր յաշխարհն Վրաց և մասն մի գերի վարեաց և հնան յաշխարհէն Վրաց և գնացեալ բանակ հարկանէր ի տեղի իւր։ Եւ լուեալ զայս Դաւիթ թագաւորն Վրաց՝ և առաքեաց զզօրս Վրաց աշխարհին, եկեալ գաղտաբար անկանէին ի վերայ թուրք զօրաց. և կոտորեաց ի նոցանէ արս երեսուն հազար և զամենայն կանայս նոցա և զորդիս նոցա և զհօտս անթիւս ոչխարաց նոցա վարէին ի գերութիւն Հանդերձ բազում և անհամար աւարաւ տարաւ յաշխարհն Վրաց։ Յայնժամ մնացեալքն ի զօրացն Թուրքաց առ սաստիկ վտանգին պատուհասին զհանդերձս իւրեանց և հող արկանէին զգլխովն իւրեանց և սևազգեստութ և բացաւ գլխօք ճիշկանս լինէին առ սուլտանն իւրեանց ի Դանձակ քաղաքն առ Մելիքն որդին Տափարին՝ և բողոք բարձեալ լալով առաջի նորա զկորուստն իւրեանց. և այլքն հասանէին ի գաւառն Արապկաց՝ յաշխարհն Կարմիանին առ ամիրայն Խազի որդի Արդուխին և սաստկապէս լալով՝ զկատարած կորստեանն իւրեանց պատմէին նմա։ Եւ նորա առ զօրութեանն իւրոյ և բարձրավզութեանն հրամայեաց ժողով լինել բազմութիւն զօրաց իւրոց զամենայն ազգն Թուրքաց, ի Յունաց աշխարհէն մինչև յարևելս զամենայն Կարմիան. և արար զհամարս զօրաց իւրոց հարիւր յիսուն հազար և առաքեաց ի հարաւակողմն յաշխարհն բարբարոսաց

ջակեզ արեցին. երբ խազին իր բանակով անցնում էր Եփրատը, բազում հյուղեր սրի քաշվեցին, քահանաներն ու վանականները սրով ու հրով սպանվեցին։ Այդ պահին կոմս Ճոսլինը գտնվում էր Ռապան բերդաքաղաքի սահմաններում։ Դալով Քեսուն և Պհեսնի[423], նա զորքերը դուրս մարեց և առավոտյան շարժվեց թուրքի դեմ. հարձակվելով նրա վրա, նա հազար հոգի կոտորեց։ Խազի ամիրան զորքով գնաց բանակեց Ազազի մոտ։ Այդ ժամանակ Երուսաղեմի թագավորը ֆրանկների բովանդակ զորքով հասավ Ազազ՝ թուրք զորքերին պատերազմ տալու։ Ճոսլինն իր զորքերով գնաց Անտիոք և միացավ թագավորին։ Թուրքերի ու ֆրանկների զինվորները բազում օրեր կանգնել էին դեմ դիմաց, բայց մարտ չտվեցին։ Խազին զորքերով թողեց գնաց Մելիտենեի Կարմիան կոչվող շրջանը, թագավորը վերադարձավ Երուսաղեմ, Ճոսլինն էլ գնաց իր քաղաքը՝ Ուռհա։

Իսկ հայոց 570 թվականին [19 փետրվար 1121—18 փետրվար 1122 թ.] տեղի ունեցավ հետևյալը. Գանձակ գավառից ոմն ամիրա, անունը Խազի, արյունարբու, անպատկառ ու թալանող մի մարդ, որ լինելով Վրաստանի հարևան, հոժար կամքով ենթարկվում էր վրաց Դավիթ թագավորին[424], մի վատ միտք հղացավ. երեսուն հազար թուրք զինվորների գլուխն անցած, նա մտավ Վրաստան, նրա բնակչության մի մասին գերեվարեց և, Վրաստանից տեղահան անելով, վերադարձավ ու բանակեց իր տեղը։ Վրաց Դավիթ թագավորը, լսելով այդ մասին, [նրա դեմ] ուղարկեց Վրաստանի զորքերին, որոնք, տեղ հասնելով, անսպասելիորեն հարձակվեցին թուրք զինվորների վրա, նրանցից երեսուն հազար զինվոր սպանեցին, նրանց բոլոր կանանց ու երեխաներին Վրաստան գերեվարեցին, նրանց ոչխարների անհամար հոտերը քշեցին տարան, ձեռք բերեցին հսկայական ու անհամար քանակությամբ ավար։ Նախճիրից ազատված թուրք զինվորները պատառոտեցին իրենց հագուստները, իրենց գլուխը հողեցին և, սևեր հագած, գլխաբաց գնացին բոթը հասցրին Գանձակ քաղաք, իրենց սուլթան Մելեքին[425]՝ Տաւիարի որդուն, ողբադին գանգատվեցին իրենց գլխին եկած փորձանքի համար։ Նրանց մի մասն էլ գնաց հասավ արաբների գավառը՝ Կարմիան շրջանը, Արդուխի որդի Խազի ամիրայի մոտ և աղիողորմ նրան պատմեց իրենց գլխին եկածը։ [Խազին], իր հզորությամբ ամբարտավանացած, հրամայեց իր մեծաթիվ զորքերի՝ բոլոր թուրքերի զորահավաք կատարել՝ հունաց երկրից սկսած մինչև աշխելք՝ համայն Կարմիանը։ Նա հարյուրհիսուն հազարանոց զորք գումարեց։ Ապա դիմեց հարավ՝ արաբների

և կոչեաց զհետ իւր զթագաւորն Աբասկաց, որ կոչի Սաղա, որպի Տուպայիսին. զայր առ նա տասն հազարաւ. և էր սա այր քաջ և պատերազմող, և սա դերի վարեաց զԲաղդատ քաղաք և երեք պատերազմ վանեաց սա ընդ Տափարին Պարսից սուլտանին, որ և յաղթեաց և յաղթեցաւ: Եւ էր սա ազգաւ Ռաւատի և յոյժ հայհոյիչ Մահմետի և ամենայն ազգաց նորա. սա բանակեցաւ վրանօք ընդ մէջ Թովսկեայ և ընդ Հնդիկս և յայսմու ժամանակիս զայր փեսայանար խաղէ ամիրային Պարսից: Եւ յայսմ ամի խաղաց խաղի հանդերձ բազմութեամբ զօրօքն և հասանէր յաշխարհն Դանձակայ՝ գնալով ի վերայ աշխարհին Վրաց:

Յայնժամ գայր Մելիքն սուլտանն Դանձակայ չորս հարիւր հազար ձիաւորով արանց քաջաց և խաղացին ահագին բազմութեամբ և մտանէին յաշխարհն Վրաց ի կողմն Տփխեայ քաղաքին ի լեառն, որ Դեկոր կոչի: Եւ լուեալ զայս Դաւիթ Վրաց թագաւորն որպի Բագրատայ՝ որգւոյ Դորգէի և հասանէր ի պատերազմ ընդդէմ թուրք զօրացն քառասուն հազարով կորովեաց և արանց քաջաց և կիրթ պատերազմողաց. ունէր և այլ զօրս ի խափչախաց թագաւորէն արս տասն և հինգ հազար քաջս և ընտիրս և յազգէն Ալանաց արս հինգ հարիւր և Փռանգ՝ հարիւր: Եւ յՕգոստոս ամսոյ ԺԹ և ի պահոց Աստուածածնի հինգշաբաթի օրն եղև սաստիկ պատերազմ ի մէջ երկուց լերանց, որ և յահագին ճայթմանէ զօրացն գոչէին լերինքն. և յայնժամ օգնութիւն հասանէր յԱստուածոյ ի վերայ Վրաց զօրացն. և ի խմբել պատերազմին զամենայն զօրսն Թուրքաց գարձուցանէին ի փախուստ: Եւ յայնմ աւուր եղև սաստիկ և ահաւոր կոտորած զօրացն Թուրքաց, և լցան դիակամբք գետք և ձորք լերանց և ամենայն քարափունք լերանցն ծածկեցան. և եղև համար կոտորածոյն զօրացն Թուրքաց քառասուն բիւր. և ձերբակալս արարին արս երեսուն հազար, և յերիվարացն և ի զինուցն անկնելոց ծածկեցաւ ամենայն երեսք դաշտացն. և զաւուրս ութ զհետ վարեցան զօրք Խփչացն և Վրացն մինչև ի սահմանս քաղաքին Անւոյ: Եւ սուլտանն Պարսից Մելիքն և խազի դարձան բազում ամօթով յաշխարհն իւրեանց մազապուրծ փախստեամբ ի հազարէն հարիւր չէր մնացեալ:

Յայսմ ամի էառ թագաւորն Վրաց Դաւիթ զքաղաքն Տփխիս ի Պարսից և արար սաստիկ կոտորածս զքաղաքն և արս հինգ հարիւր սրահանգս ի փայտն հանեալ սատակէր չարաչար:

Յայսմ ամի յամսեանն Օգոստոս անկեալ եղև կրակ յերկնից և այրեաց զաւազ ճեմարանն, որ կայր ի Բաղդատ քաղաքն. զայս ճեմարանս կանգնեալ էր Տուղրիլ սուլտանն Պարսից՝ եղբայրն Աբասլանայ, շինեալ էր զնա զարմանալի և հրաշալի գործարանօք. զի յորժամ նա էառ զաշխարհն Պարսից, զամս քսան մեծ պատերազմ վանեաց ընդ

երկիրը, և արաբների թագավորին, այն է՝ Տուպայիսի որդուն, որի անունը Սաղա էր, կոչ արեց իրեն միանալ։ Վերջինս տաս հազարանոց [զորքով] եկավ նրա մոտ։ Սա քաջ և կռվող մարդ էր, գերեվարել էր Բաղդադ քաղաքի [բնակչությանը] և երեք անգամ պատերազմել պարսից սուլթան Տափարի դեմ, հաղթել նրան և պարտվել նրանից։ Ծագումով նա Ռավադյան էր, Մահմեդի և մահմեդականության անարգող։ Սա վրաններ էր խփել և բանակել Ծիովպիայի ու Հնդկաստանի միջև ընկած շրջանում։ Այս ժամանակներում էր, որ նա գնացել փեսայացել էր պարսից ամիրա Խազիին։ Ահա, այդ տարին Խազին բազում զորքերով շարժվեց հասավ Գանձակի շրջանը և գնաց դեպի Վրաստան։

Այն ժամանակ Գանձակի սուլթան Մելիքը չորս հարյուր հազար քաջ հեծյալներից բաղկացած հսկա զորքով մտավ Վրաստան, Տփխիս քաղաքի ուղղությամբ՝ դեպի Դեկոր կոչվող լեռը։ Վրաց Դավիթ թագավորը՝ Գորգեի որդի Բագրատի որդին, լսելով այդ մասին, քառասուն հազար քաջարի, լավ կռվող զինվորներով պատերազմի դուրս եկավ թուրք զինվորների դեմ։ Նա ուներ ղփչաղների թագավորից ստացած տասնհինգ հազար քաջ և ընտիր զինվորներ ևս, հինգ հարյուր ալան և հարյուր ֆրանկ[426]։ Օգոստոս ամսի 13-ին, Աստվածածնի պասեքի հինգշաբթի օրը, երկու լեռների միջև կատաղի պատերազմ տեղի ունեցավ. լեռները թնդում էին զորքերի բարձրացրած սարսափելի ժխորից։ Աստված վրաց զորքերին նեցուկ կանգնեց, և նրանք մարտում ողջ թուրք զորքը փախուստի մատնեցին։ Այդ օրը տեղի ունեցավ թուրք զորքերի մեծ, սարսափելի ջարդ, կոտորվեց չորս հարյուր հազար զինվոր, գերի ընկան երեսուն հազար հոգի։ Դետերն ու ձորերը, բոլոր լեռնալանջերը դիակներով ծածկվեցին, բովանդակ դաշտերը երիվարների [դիակներով] և թափված զենքերով պատվեցին։ Ղփչաղ և վրաց զինվորները ութ օր մինչև Անի քաղաքի սահմանները [թուրքերին] հալածական արեցին։ Պարսից սուլթան Մելիքը և Խազին մազապուրծ փախուստով ամոթահար վերադարձան իրենց երկիրը. հազարից հարյուրն անգամ կենդանի չմնաց։

Այդ տարին վրաց Դավիթ թագավորը պարսիկների ձեռքից գրավեց Տփխիս քաղաքը, այնտեղ մեծ ջարդ կազմակերպեց, հինգ հարյուր հոգու էլ ցից հանելով՝ տանջամահ արեց։

Այդ տարին, օգոստոս ամսին, երկնքից կրակ թափվեց, և Բաղդադ քաղաքի գլխավոր մզկիթը հրդեհվեց։ Մզկիթը կառուցել էր պարսից սուլթան Տուղրիլը՝ Աբասյանի եղբայրը, հիանալի և սքանչելի արվեստով։ Նա քսան տարի համառ պատերազմ էր մղել պարսիկների դեմ, հպատակեցրել նրանց և տիրել պարսից համայն աշխարհին։ Այն ժա-

աղգն Պարսից. և այսպա հաւանեցուցանէր զնոսա և տիրեաց ամենայն աշխարհին Պարսից. և յայնժամ գայր ի Բաղդատ քաղաք և հրամայեաց զայն աղօթիս տուն կանգնել աղգին Թուրքաց, զի մի մտցին աղգն Թուրքաց ի յաղօթիս տունն Արապկաց. և ի յայսմ ամի անկաւ կրակ և այրեաց զՇհամարանն Թուրքաց՝ զպիղծ ժողովարանն նոցա։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՇՀԱ. զօրաժողով արարեալ խազի ասպասալարն Պարսից և գնաց ի վերայ զօրացն Փռանգաց և իջանէր ի Հալպ քաղաք, և անտի գնայր բանակ Հարիանէր ի Շիզարն ի Տաճկաց քաղաքն։ Եւ յայնժամ գայր Պաղտոյնն թագաւորն Երուսաղէմայ. և գայր հասանէր առ նա կոմսն Ուռհայոյ Ճօսլինն, և միաբան գային իջանէին հանդէպ զօրացն Թուրքաց. և զամենայն աւուրսն ամառնային ոչ արարին պատերազմ, այլ լուռ ընդդէմ իրերաց կային։ Յամսեանն Սեպտեմբերի առանց պատերազմաց քակեցան երկոքին կողմանքն և դարձան իւրաքանչիւր ի քաղաք իւր. և ամիրայն խազի մտաւ ի Հալպ, և Պալակ ամիրայն՝ որ էր քուրորդի խազէի և էր այր քաջ և ժիր պատերազմող, դարձաւ դաղտաբար և գնաց ի գաւառ իւր Յանձիթ։ Յայնժամ Ճօսլինն և Կալարանն լուեալ զայս՝ ընթանային զօրօք զհետ Պալակին և հասան նմա ի գաւառն Ուռհայոյ՝ ի գեղն, որ կոչի Տափթիլ, հարիւր ձիաւորով հասաւ ի վերայ նորա. և Պալակն իջեալ կայր ութ հարիւր ձիաւորով ի տեղի մի գետազնաց և ճօրտ յոյժ շուրջն, և զօրօք իւրովք ամրացեալ կայր ի նմա. և զօրքն Փռանգաց անմտաբար խելապարեալ լինէին՝ ի վերայ յարձակեցան և ընդ խորափիսան ոչ կարէին անցանել։ Եւ Պալակն ամենայն զօրօքն կայր ընդդէմ նոցա և նետիւք խոցոտեալ զամենայն երիվարս նոցա և արարին հալածականս զամենայն զօրսն Փռանգաց. և արարին ձերբակալս զերկու կոմսն Փռանգաց զՃօսլին և զԿալարանն. և կոտորեցին զամենայն Փռանգն և զՃօսլին և զԿալարանն երկաթի կապանօք տարան ի Խարբիրդ՝ և եդին անդ ի բանտի և զքսան և հինգ Փռանգն տարան ի Բալու։ Եւ լինէր այս ամենայն սուգ մեծ ամենայն հաւատացելոցն և կային ահաբեկեալ մեծաւ սասանութեամբ։ Այս եղև ի Սեպտեմբերի ամսոյ ԺԹ օրն։

Յայսմ աւուր մեռանէր մեծ ամիրայն խազի որդի Արդուխին և տայր զամենայն աշխարհն իւր ի քուրորդին իւր ի Պալակ ամիրայն՝ և յանձն արարեալ զտուն և զորդիս իւր ի Պալակն զՍուլիման և զՏումրտաշն. և բերին դագաղօք զխազի ի Հալպայ ի խառան և անտի տարեալ թաղեցին զնա ի Մուփարկին ի քաղաքն իւր. և Պալակ ամիրայն տիրեաց բազում գաւառաց։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ի յամի ՇՀԲ զօրաժողով արարեալ թագաւորն Երուսաղէմի Պաղտինն և յուզէր պատերազմ ընդ

մանակ նա բաղդադ քաղաքն էր եկել և կարգադրել, որ թուրքերի համար նշված աղոթատունը կառուցեն, որպեսզի նրանք ստիպված չլինեն հաճախել արաբների աղոթատունը: Բայց ահա այդ տարի կրակ թափվեց, թուրքերի մզկիթը՝ նրանց պիղծ ժողովարանը, հրդեհվեց:

Հայոց 571 թվականին [19 փետրվար 1122—18 փետրվար 1123 թ.] պարսից սպասալար խազին նորից զորահավաք արեց և գնաց ֆրանկ զորքերի դեմ: Նա իջավ Հալեպ քաղաքը, այնտեղից էլ գնաց բանակեց տաճիկների Շիզար քաղաքում: Նրա դեմ դուրս եկավ Երուսաղեմի թագավոր Պաղտինը, որին միացավ և Ուռհայի կոմս Ճոսլինը. երկուսը միասին շարժվեցին թուրք զորքերի դեմ: Ամբողջ ամառը նրանք մարտ չտվեցին, այլ հանգիստ կանգնել էին դեմ առ դեմ: Սեպտեմբեր ամսին, առանց պատերազմ տալու, երկու կողմերն էլ վերացրին ճամբարները և վերադարձան իրենց քաղաքները: Խազի ամիրան մտավ Հալեպ, իսկ Պալակ ամիրան՝ խազիի քեռորդին[427], մի քաջ և լավ պատերազմող, թաքուն վերադարձավ գնաց Անձիտ գավառը: Ճոսլինն ու Կալարանը, լսելով այդ մասին, զորքերով հետապնդեցին Պալակին, որին հասան Ուռհա գավառում, Տափթիլ կոչվող գյուղում: [Ճոսլինը] հարյուր ձիավորով դիմից նրա դեմ: Պալակը ութ հարյուր հեծյալներով բանակել էր և դիրքեր դրավել գետագնաց, խիտ անտառներով շրջապատված մի վայրում: Ֆրանկ զինվորները հիմարաբար հարձակվեցին նրանց վրա, բայց չէին կարողանում խրամատի վրայով անցնել: Պալակը և նրա բոլոր զինվորները դիմագրավեցին նրանց, նետահար արեցին նրանց բոլոր ձիերին, ջարդ տվեցին և փախուստի մատնեցին բոլոր ֆրանկ զինվորներին, դերի վերցրին ֆրանկների երկու կոմսերին՝ Ճոսլինին և Կալարանին, որոնց շղթայակապ տարան Խարբերդ և բանտ նետեցին, իսկ քսանհինգ ֆրանկների էլ բալու տարան: Այդ բոլորը մեծ վիշտ պատճառեց քրիստոնյաներին. նրանք մեծ ահ ու դողի մեջ էին: Դա տեղի ունեցավ սեպտեմբեր ամսի 13-ին:

Այդ օրերին վախճանվեց մեծ ամիրա խազին՝ Արդուխի որդին: Նա իր ողջ տիրապետությունը թողեց իր քեռորդի Պալակ ամիրային, նրան իր տան և որդիների՝ Սուլիմանի և Տումրտաշի խնամակալ նշանակեց: Խազիի մարմինը դագաղի մեջ դրած Հալեպից բերեցին Խառան, այնտեղից էլ տարան իր քաղաքը՝ Մուփարղին, որտեղ էլ թաղեցին: Պալակ ամիրան տիրեց բազմաթիվ գավառների:

Հայոց 572 թվականին [19 փետրվար 1123—18 փետրվար 1124 թ.] Երուսաղեմի թագավոր Պաղտինը այն բանի համար, որ Պալակ ամիրան

Պալակ ամիրային վասն երկու իշխանացն Փռանգաց, զոր արկեալ էր ի բանտին՝ զՃօսլինն և զԿալարանն։ Եւ հասանէր թագաւորն ամենայն զօրօքն Փռանգաց ի Իտպան քաղաք, և Պալակն յառաջագոյն եկեալ էր մերձ ի յայնմ գաւառին, զի զերկիրն արասցէ աւար և գերութիւն. և զմիմեանս ոչ գիտելով երկոցունց կողմանցն, և եկեալ թագաւորն սակաւ զօրօքն ի Շնջէոյ կանդարան և անցեալ գետովն ի վեր կամէր իջանել ի տեղին, որ ասի Շնջրիկ, և Պալակն բազում զօրօք կայր մերձ ի քմին, յորժամ հարին զվրան թագաւորին. և թագաւորն կամէր որսալ պազայովն. և Պալակն յանկասկած յարձակեցաւ ի վերայ իւր ամենայն զօրօքն և արար կոտորածս արս հզօրս և կալաւ զթագաւորն Երուսաղէմի և զքուրորդի թագաւորին. այս եղև յամսեանն ի Հոռի, ղկնի չորս աւուր անցանելոյ սուրբ Զատկին։ Եւ տարաւ Պալակն զթագաւորն ի դուռն Կաղկառայ, և նա տայր զԿաղկառ ի ձեռս Պալակին. և տարան զթագաւորն և զքուրորդին իւր ի Խարբերդ և երկաթի կապանօք եդին ի խոր բանտին, ուր եդեալ կայր Ճօսլինն և Կալարանն։

Յայսմ ամի ղկնի հինգ ամսոց, որ այս գործեցաւ՝ եղև զարմանալի ինչ. վասն զի յաղագս այսորիկ եղև կատարած կորստեանս. յարուցեալ միաբան արք հնգետասանք ի յամուր բերդին Պահեսնոյ և խորհեցան խորհուրդս քաջաց և կատարեցին զգործ անմահից. յարուցեալ արանցս այսոցիկ գնան ի Յանձիթ գաւառն և յաշու ունէին զամուր բերդն Խարբերդու, ուր կայր յարգելանոցի թագաւորն Փռանգաց և Ճօսլինն և Կալարանն. և տեսին զպահապանս բերդին սակաւս և կայլին յանհոգս, գնացին ի դուռն գծուծ կերպարանօք և իբրև զդատաստանաւորք. կայր և այլ ոք բանտու ի ներքս ի բերդն. և ղկնի սակաւ մի ժամու դիմեցին և մտին ի ներքս և քաջապէս ջանացեալ ի բանտն՝ սպանին զորս ի դուռն գտին և փակեցին զդուռն և մեծաւ աղաղակաւ հասանէին ի բերդն, ուր էր թագաւորն արգելած և Ճօսլինն և Կալարանն և այլ իշխանքն, և հանին զնոսա ի բանտէն մեծաւ ուրախութեամբ. և զայլս ոմանս զօրս բազումս հանին ի կապանաց արք և կանայք. և ոմանք ի տեղացեացն մտին ի բանտն վասն փրկութեան թագաւորին և Ճօսլընին և այլոց կալանաւորացն. և ելեալ թագաւորն և ամենայն բանտարգեալքն և առին զբերդն և սիրեցին ամենայն տանն Պալակին։ Եւ իբրև լուան զայս զօրք այլազգեացն, որք էին ի գաւառին, փախեան ի յայլ աշխարհս. և զմիւս այլ գիշերի ի չորեքշաբաթի լուսանալն՝ ելեալ Ճօսլին և հետևակ մի ընդ նմա և գաղտաբար գնացին ի Քեսուն և անտի գնացին յԱնտիոք, զի զօրաժողով արասցէ և գայցէ յօգնութիւն թագա-

երկու ֆրանկ իշխանների՝ Ճոսլինին և Կալարանին բանտ էր նետել, զորահավաք արեց և նրան պատերազմ հայտարարեց։ Թագավորը ֆրանկների բոլոր զորքերով հասավ Ռապան քաղաքը։ Պալակը նրանից շուտ մոտեցել էր նույն գավառին, նպատակ ունենալով այն ավարի առնել և բնակչությունը գերեվարել։ Մեկը մյուսից անտեղյակ էին։ Թագավորը սակավաթիվ զորքով եկավ և Շնչջե կամրջի վրայով անցավ գետը, որոշելով իջնել Շնչրիկ կոչվող վայրը։ Թագավորի վրանը խփելու պահին Պալակը բազմաթիվ զինվորներով մոտիկ տեղում դարան էր մտել։ Թագավորն ուզում էր բաղեով որս անել։ Պալակը բոլոր զինվորներով հանկարծակի հարձակվեց նրա վրա, կոտորեց անվանի մարդկանց և Երուսաղեմի թագավորին, ինչպես և թագավորի քեռորդուն գերի վերցրեց։ Դա տեղի ունեցավ հոռի ամսին, սուրբ պատկից չորս օր անց։ Պալակը կառկառի դուռը տարավ թագավորին, և վերջինս կառկառը հանձնեց Պալակին։ Թագավորին և նրա քեռորդուն տարան խարբերդ ու շղթայակապ նետեցին զնդանը, այնտեղ, որտեղ Ճոսլինն ու Կալարանն էին բանտարկված։

Նույն տարին, այդ դեպքերից հինգ ամիս անց, մի տարօրինակ բան կատարվեց, որը աղետի պատճառ դարձավ։ Պհեսնի անառիկ բերդում տասնհինգ հոգի մի խիզախ որոշում կայացրին և մի անմահ արարք գործեցին։ Նրանք ելան գնացին Անձիտ գավառը և դիտախույզ արեցին խարբերդի անառիկ բերդը, որտեղ բանտարկված էին ֆրանկների թագավորը, Ճոսլինը և Կալարանը։ Տեսնելով բերդի սակավաթիվ անաչալուրջ պահապաններին, իրենք, խեղճ ու կրակ կերպարանք առած, որպես բողոքավոր գնացին [բերդի] մուտքը։ Նրանց մի գործակալն էլ բերդի ներսում էր գտնվում։ Փոքր անց նրանք ներս մտան, նախ և առաջ սպանեցին դռան առջև [կանգնած պահակներին], ապա փակեցին դուռը և մեծ աղմուկ-աղաղակով քաջաբար գնացին հասան բանտը, որտեղ արգելափակված էին թագավորը, Ճոսլինը, Կալարանը և այլ իշխաններ, որոնց մեծ ուրախությամբ այնտեղից դուրս հանեցին։ Նրանք ազատեցին և այլ մարդկանց, ովքեր երկար ժամանակ կապանքների մեջ էին։ Տեղացիներից ոմանք էլ՝ տղամարդիկ և կանայք, նրանց [հետ] մտան բանտ՝ թագավորին, Ճոսլինին և այլ կալանավորներին ազատելու։ Թագավորը և բոլոր բանտարկյալները, [բանտից] դուրս գալով, դրավեցին բերդը և տիրացան Պալակի բովանդակ տիրույթներին։ Գավառում գտնվող այլազգիների զորքը, տեղեկանալով կատարվածի մասին, փախուստի դիմեց այլ երկիր։ Հույս չորեքշաբթի օրվա գիշերը Ճոսլինը մեկ հետևակ զինվորով թաքուն գնաց Քեսուն, այնտեղից էլ Անտիոք՝ զորք հավաքելու և թագավորին ու մյուս կալանավորներին օգ-

ւորին և այլոց կալանաւորացն։ Եւ էր յայսմ ժամու զօրապետ Փռանդզայ զօրացն կոմսն Ճօփրէ, որ էր այր քաջ և հզօր և հաւատովն հաւատացեալ առաւել քան զառաւել, և սա մեծաջան աշխատութեամբ պահէր ի Թուրքայ զամենայն դաւառն Փռանդզայ, զԵրուսաղէմ և զԱնտիոք և զՈւռհա և ամենայն հնարաւորութեամբ արիաբար կացեալ։ Իսկ յորժամ այս գործեցաւ՝ էր ամիրայն Թուրքաց Պալակն ի Հալպ քաղաք. և յորժամ լուաւ զայս ամենայն, եթէ հնարաւորութեամբ առին զԽարբերդ, յարուցեալ որպէս զարծուի և յաւուրս հնդետասան անդր հասանէր և յարուցանէր սաստիկ պատերազմ ի վերայ բերդին. և կանգնեալ մբնայ և փորեալ ընկեցին զբուրգն մեծ ամրոցին և այնու ահաբեկեաց զնոսա. և ահիւ մեծաւ ելեալ կոմսն Կալարանն առ Պալակն՝ և տայր զԽարբերդ ի ձեռս նորա։ Եւ յայնմ աւուր կոտորեաց Պալակն զամենայն կալանաւորսն ոգիք իբրև վաթսուն և հինգ և կանայս ութսուն դեղեցիկս՝ ձգեալ ընդ բարձրութիւն բերդին ի վայր. և դարձեալ մեծաւ սրտմտութեամբ երկաթի կապանօք դնէր զթագաւորն ի բանտի և զկալաբանն և զբուրգին թագաւորին։ Եւ գայր Ճօսլինն զօրօք Փռանդզայ ի յօգնութիւն. և յորժամ լուան զայս Ճօսլինն և Ճօփրէ, վիրաւորեալ լինէին յոյժ և զարձան լի տրտմութեամբ գնացին ի գաւառն իւրեանց. և թագաւորն մնաց ի բանտին և Կալարանն և քուրորդին։

Յայսմ ամի եղև պատերազմ Թռչնոց ի գաւառն Մելտենւոյ. ժողովեցան արագիլք և կռունկք և արօսք և կռուեցան ընդ միմեանս. և կռունկն յաղթեաց արագիլին՝ որ բնաջինջ արար զնոսա, և ուր ուրեք մնաց։

Յայսմ ամի մեռաւ մեծ իմաստասէրն Հայոց Պօղոս վարդապետն. սա երևեալ այր հրաշալի, տեղեակ հին և նոր կտակարանացն, առաջին սուրբ վարդապետաց, երկրորդ լուսաւորիչ երևեալ տանս Հայոց և վէմ ապամանդեայ ընդդէմ հերձուածողաց և յոյժ ախոյեան լեալ ուղղափառաց և անպատակառելի վարուք կացեալ ի կեանս իւր ընդդէմ հերետիկոսացն. և սա, ի Տարօն գաւառէն, յայսմ ամի մեռանէր և թաղեցաւ ի վանսն Ղազարու մերձ ի Սասուն։

Յայսմ ամի Դաւիթ Վրաց թագաւորն կոտորեաց ի Պարսից վեց բիւրս. վասն զի եկեալ սուլտանն Դանձակայ բաղում զօրօք ի վերայ Կուռ գետոյ կամուրջ կապեաց նաւերով և արս վաթսուն հազար անցուցանէր յերկիրն Ափխազաց, և լուեալ թագաւորին Վրաց, առաքեաց զզօրս և զկարմունջն փլոյց և զամենայն զօրսն, զոր անցոյց, առհասարակ կոտորեաց. և գնաց սուլտանն փախստական ի Պարսիկս և մտաւ Յաւղկան քաղաք առ հօրեղբայրն իւր։

Իսկ այս թագաւորս Դաւիթ էր քաջ հզօր ընդդէմ Պարսից պատե-

նության հասնելու նպատակով։ Այն ժամանակ ֆրանկ զորքի հրամանատարն էր կոմս Ճոփրը, քաջ, հզոր և անչափ հավատացյալ մի անձնավորություն, որ, մեծ ջանքեր գործադրելով, բոլոր միջոցներով թուրքերի [հարձակումներից] արիաբար պաշտպանում էր ֆրանկների համայն տիրապետությունը՝ Երուսաղեմը, Անտիոքը և Ուռհան։ Այս դեպքերի ժամանակ թուրքերի ամիրա Պալակը Հալեպ քաղաքում էր գտնվում։ Լսելով կատարվածի մասին, թե խորամանկությամբ գրավեցին Խարբերդը, արծվի նման սլանալով տասնհինգ օրում տեղ հասավ և համառ պատերազմ մղեց բերդի դեմ։ Նա գործի դրեց [քաղաքավեր] մեքենա, տակից փորելով փլցրեց ամրոցի մեծ բուրգը. դա [պաշտպաններին] սարսափահար արեց. կոմս Կալարանն ահաբեկված գնաց Պալակի մոտ և նրան հանձնեց Խարբերդը։ Պալակն այդ օրը բոլոր կալանավորներին՝ շուրջ վաթսուն հոգի, կոտորեց, ութսուն գեղադեմ կանանց բերդի բարձունքից ցած գլորեց։ Նա գազազած նորից երկաթե կապանքների մեջ առավ և բանտ նետեց թագավորին, Կալարանին և թագավորի քեռորդուն։ Ճոսլինը ֆրանկ զորքով դիմեց օգնության. նա, ինչպես նաև Ճոփրին, լսելով կատարվածի մասին, շատ ափսոսացին և վշտահար գնացին իրենց գավառը։ Թագավորը, Կալարանը և թագավորի քեռորդին մնացին բանտարկված։

Այդ տարին Մելիտենեի գավառում թուրքերի պատերազմ եղավ. հավաքվեցին արագիլներ, կռունկներ ու արոսներ և իրար դեմ կռվեցին։ Կռունկները հաղթեցին արագիլներին, [մեծ մասին] ոչնչացրին, միայն քչերը ողջ մնացին։

Այդ տարին վախճանվեց հայոց մեծ փիլիսոփա Պողոս վարդապետը[128], մի սքանչելի մարդ, Հին և Նոր Կտակարաններին և առաջին սուրբ վարդապետների [գրվածքներին] քաջագիտակ։ Նա դարձավ հայոց աշխարհի երկրորդ լուսավորիչը, հերձվածողների դեմ՝ ադամանդե վեմ, ուղղափառների հզոր պաշտպանը, և իր կյանքում անվեհեր կերպով պայքարեց հերետիկոսների դեմ։ Նա Տարոն գավառից էր. այդ տարին վախճանվեց և թաղվեց Սասունի մոտ գտնվող Ղազարի վանքում։

Այդ տարին վրաց Դավիթ թագավորը վաթսուն հազար պարսիկ կոտորեց։ Դանձակի սուլթանը բազմաթիվ զորքերով եկել էր և, Կուր գետի վրա նավերից կամուրջ կապելով, վաթսուն հազար հոգի ափխազների երկիրն էր անցկացրել։ Վրաց թագավորը, իմանալով այդ մասին, զորքեր ուղարկեց, քանդեց կամուրջը և մյուս ափն անցած բոլոր զինվորներին իսպառ կոտորեց։ Սուլթանը փախավ Պարսկաստան և մտավ Ավղկան քաղաքը՝ իր հորեղբոր մոտ։

Դավիթ թագավորը պարսիկների դեմ մղվող պատերազմներում մեծ

րազմաց. սա բազում անգամ յաղթեաց զօրացն այլազգեաց և բեկեաց զամենայն զօրութիւնս նոցա և բազում և անուանի գաւառս էառ ի Պարսից սրով և բռնութեամբ. էառ զՏփխիս և զԴամանիս քաղաք և էառ զՇուռան և զՇաքի և զՇամքար, էառ և այլ բազում գաւառս՝ ետ էր Դաւիթ արքայ սուրբ և առաքինի, զարդարեալ ամենայն աստուածպաշտութեամբ և բարի արդարութեամբ. և սա երևեցաւ ընդունող և սիրող ազգին Հայոց: Առ սա ժողովեցան մնացեալ զօրքն Հայոց. և սա շինեաց քաղաք Հայոց յաշխարհն Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս, և անուանեաց զանուն քաղաքին Դօռա, և ունէր մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազգն Հայոց: Կայր և հարազատ որդի մի թագաւորին Դաւթի, որում անուն ասէին Դեմետրէ, ի Հայ կնոջէ, և եղբօր թագաւորին ասէին Թօտօրմէ:

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՇՀԹ զօրաժողով արարեալ ամիրայն Պալակն գնաց ի վերայ զօրացն Փռանգաց և հասանէր ի Հալպ քաղաք և զկնի սակաւ աւուրց գայր ի վերայ քաղաքին Տաճկաց, որ ասի Մնբէճ. և կանգնեալ բաբանս ի վերայ կլային և սաստիկ պատերազմաւ արկանէր զբնակիչսն ի մեծ նեղութիւն: Եւ յայնժամ ամիրայն, որ ի կլայն կայր, ձայն օգնութեան հասուցանէր առ Կոմսն Փռանգաց Ճօսլինն և Ճօփրէ հասանել իւր յօգնութիւն և խոստանայր տալ զքաղաքն ի Ճօսլինն. և նորա ժողովեալ զմնացեալ զօրսն Փռանգաց՝ և հասանէին առ նա երկու կոմսն. գայր և Մահի կոմսն Տլքոյ, Անթաւիայ և Իապանայ. և լուեալ զայս Պալակն, յարձակեցաւ ընդդէմ նոցա ի պատերազմ մօտ ի Մնբէճ քաղաք. և եղև սաստիկ պատերազմ, զի զօրք այլազգեացն բազում էին, և Փռանգացն՝ սակաւ. բայց յաղթեաց Փռանգաց զօրքն՝ Թուրքաց և զմի կողմն ի փախուստ դարձուցին, և Ճօսլինն կոտորելով տանէր զմիւս կողմն Թուրք զօրացն. և միւս այլ կողմն փակեաց կոմսն Մարաշայ, և այլ բազում արս քաջս և հեծելօքն զՃօսլինն կոտորեցին և սրով մարտիրոսական հանդիսիւ: Եւ յորժամ լուաւ զայս Ճօսլինն, դարձաւ փախստական և օթեցաւ ի տեղի պատերազմին և ի վաղիւն եմուտ ի Թլպաշար քաղաքն իւր: Եւ յայսմ աւուր կոտորեցան բազում իշխանք յազգէն Փռանգաց. և էր օրն այն ահեղ և մեծ ի վերայ հաւատացելոցն. այս եղև յամսեան ի Սահմի տասն և ի Մայիս ամսոյ չորս: Յայնժամ դարձաւ Պալակն մեծաւ յաղթութեամբ և իջաւ ի վերայ քաղաքին Մնբէճայ. և ձայն պատերազմի տուեալ զօրացն՝ և ի բազում ուրախութենէն ի բաց հանէր զերկաթակապ զգեստն իւր. և յայնժամ ի կլայէն արևապաքտ ոմն արձակեաց զնետ իւր և հարկանէր զնա ի

քաջություն ու կորով էր հանդես բերում։ Նա բազմիցս պարտության էր մատնել այլազգի զորքերին, կոտրել նրանց հզորությունը, զենքի ուժով նա պարսիկների ձեռքից բազմաթիվ և նշանավոր գավառներ էր գրավել։ Նա գրավեց Տփխիս և Դմանիս քաղաքները, Շիրվանը, Շաքին և Շամքորը, նվաճեց բազում այլ գավառներ։ Դավիթ թագավորը սուրբ և առաքինի մարդ էր, շատ աստվածապաշտ ու արդար։ Նա հայ ժողովրդի պաշտպանն ու բարեկամը դարձավ։ [Հենց] նրա մոտ հավաքվեցին հայոց զորքի բեկորները։ [Դավիթը] Վրաստանում հայերի համար քաղաք կառուցեց, որտեղ բազմաթիվ եկեղեցիներ և վանքեր հիմնադրեց։ Այդ քաղաքը նա Գոռա[429] կոչեց։ Նա ողջ հայ ժողովրդին մեծ ուրախություն և խնդություն պարգևեց։ Դավիթ թագավորը հայ կնոջից մի որդի ուներ, անունը՝ Դեմետրե։ Թագավորի եղբոր անունն էր Թոտորե։

Հայոց 573 թվականին [19 փետրվար 1124—17 փետրվար 1125 թ.] Պալակ ամիրան, զորահավաք անելով, շարժվեց ֆրանկ զորքերի դեմ։ Նա հասավ Հալեպ քաղաքը, իսկ մի քանի օր անց արշավեց տաճիկների Մնբեճ կոչվող քաղաքի վրա։ Նա բերդի դեմ բաբաններ կանգնեցրեց և, համառ պատերազմ մղելով, բնակիչներին շատ դժվարին դրության մեջ գցեց։ Բերդում գտնվող ամիրան օգնություն խնդրեց ֆրանկների Ճոսլին և Ճոփր կոմսերից, դրա դիմաց խոստանալով Ճոսլինին տալ քաղաքը։ Վերջինս հավաքեց ֆրանկների մնացած զորքերը և կոմս [Ճոփրի] հետ դիմեց նրա [օգնության]։ [Օգնության] հասավ նաև Մահին՝ Տլուքի, Այնթափի և Ռապանի կոմսը։ Պալակը, լսելով այդ մասին, Մնբեճ քաղաքի մոտակայքում նրանց պատերազմ տվեց։ Տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ։ Այլազգիների զորքը մեծաթիվ էր, իսկ ֆրանկներինը՝ փոքրաթիվ։ Հակառակ դրան, ֆրանկների զորքը թուրքերին պարտության մատնեց և նրանց մի թևը փախուստի մատնեց։ Ճոսլինը ջարդ տալով, փախուստի մատնեց թուրք զորքի մյուս թևը։ Բայց երրորդ թևը շրջապատեց Մարաշի կոմսին և բազմաթիվ այլ կտրիճների, այդ թվում և Ճոսլինի հեծյալների հրամանատարին, սրախողխող արեց, նահատակեց նրանց։ Ճոսլինը, լսելով այդ մասին, լքեց ռազմի դաշտը, փախավ ու հաջորդ առավոտյան մտավ և ապաստանեց իր Թլպաշար քաղաքում։ Այդ օրը հավատացյալների համար ահեղ էր և սոսկալի, շատ ֆրանկ իշխաններ զոհվեցին։ Դա տեղի ունեցավ սահմի ամսի տասին, այն է՝ մայիս ամսի չորսին։ Պալակը մեծ հաղթանակով ճամփա ընկավ և հարձակվեց Մնբեճ քաղաքի վրա. նա մարտի կոչեց իր զորքերին։ Անսահման ուրախությունից նա հանեց իր երկաթապատ զրահը, բայց հենց այդ պահին բերդում գտնվող մի արևապաշտ[430] նրա

հեծուկն ի խոց մահու. և նա ձայն տուեալ Տումր-Տաշին, որդւոյ Խաչէի, և զամենայն իշխանութիւնն իւր և զգաւառն իւր նմա յանձն արարեալ և ինքն ի նոյն ժամայն սատակեալ լինէր: Եւ լուեալ զայս՝ ցրուեցան զօրք նորա. և եղև կորուստ նորա ուրախութիւն ամենայն աշխարհին Փառնպացւ, բայց իւր գաւառացն ահեղ սուգ և տրտմութիւն եղև և կորուստ առհասարակ, վասն զի ողորմած էր ի վերայ ազգին Հայոց, որք էին ընդ ձեռամբ նորա:

Յայսմ աւուր էր թագաւորն և Կալարանն և թագաւորին քուրորդին ի Հալպ քաղաք. յայնժամ կոմսն Ճօսլին և թագուհին արարին դաշինս ընդ Տումր-Տաշն դնել զթագաւորն. և տան պատանդ զդուստր թագաւորին և զորդի Ճօսլինն և այլ տասն և հինգ պատանդս ընդ հարիւր հազար դահեկանի: Եւ յամսեան Սեպտեմբերի ելեալ թագաւորն Պաղտինն ի ծառայութենէ Բուրքաց և եկեալ յԱնտիոք քաղաք. և եղև ուրախութիւն յաւուր յայնմիկ ամենայն հաւատացելոցն Քրիստոսի: Իսկ կոմսն Կալարանն և քուրորդին թագաւորին մնացին առ Տումր-Տաշն և անդ սպանան: Եւ արդ այս երկրորդ գերութիւնս՝ որ աշխատութեամբ Ճօսլինն ելեալ եղև Պաղտինն ի գերութենէն:

Յայսմ ամի առաւ Կառկառ ի Բուրքաց օգնականութեամբ Աստուծոյ. վասն զի Միխայէլ իշխանն տէրն Կառկառայ՝ որդի Կոստանդեայ, ժողովեաց զոս յիսուն և կացեալ ի վերայ մեծաւ աշխատութեամբ՝ և նեղեաց զԲուրքն, որ ի բերդն էր. և ոչ գտաւ ոք օգնական բերդին. և անճարեալ գային ի հաւանութիւն և տան զԿառկառ ի Միխայէլն. և այսպիսի օրինակաւս և հնարաւորութեամբն առին զՊեպղուլաւ բերդն ի Բուրքաց, և եղև ուրախութիւն հաւատացելոցն Քրիստոսի:

Յայսմ թուականութեանս Դաւիթ Վրաց թագաւորն արար դարձեալ սաստիկ կոտորածս զզօրան Պարսից իբրև երկու բիւրս և էառ զթագաւորաբնակ քաղաքն Հայոց զԱնի և զորդիսն Մանուչէի հանեալ ի յԱնւոյ և տարաւ ի Տփխիս. և ազատեցաւ ի ծառայութենէ թագաւորաբնակ քաղաքն Անի, որ կացեալ էր ի ծառայութիւն զամս վաթսուն. և զհրաշափառ և զմեծ եկեղեցին Անւոյ զսուրբ Կաթուղիկէն, զոր մսքիթ էին արարեալ, ժողովեաց զեպիսկոպոսունսն և զքահանայս և զկրօնաւորս Հայոց աշխարհին, և օրհնեաց զսուրբ Կաթուղիկէն մեծաւ հանդիսիւ. և եղև ուրախութիւն ամենայն տանն Հայոց, զի տեսին ազատեալ զսուրբ Կաթուղիկէն ի ծառայութենէ:

Յայսմ ամի գայր տուկ մի բաղում զօրօք ի Փռանգաց և իջեալ բանակաւ ի վերայ քաղաքին, որ կոչի Սուր, յեղր Ովկիանոսի ծովուն.

թիկունքին նետ արձակեց և մահացու վերք հասցրեց։ [Պալակը] կանչեց Տումրտաշին՝ խազեի որդուն, նրան հանձնեց իր ողջ իշխանությունը, իր տիրապետությունը, որից հետո իսկույն սատակեց։ Նրա զորքերը, տեղեկանալով [Պալակի] մահվան մասին, ցրվեցին։ [Պալակի] կորուստը ֆրանկների համայն աշխարհին ուրախություն պատճառեց, իսկ [Պալակի] իշխանության ներքո գտնվող գավառների բնակիչներին՝ մեծ ցավ ու վիշտ. նա իր իշխանության ներքո գտնվող հայերի նկատմամբ ողորմած էր։

Այդ օրերին [Պաղտին] թագավորը, Կալարանն ու թագավորի քեռորդին գտնվում էին Հալեպ քաղաքում. կոմս Ճոսլինը և թագուհին Տումրտաշի հետ համաձայնության եկան՝ փրկագնով թագավորին [ազատելու] մասին։ Նրանք հարյուր հազար դահեկան փրկագնի հետ միասին որպես պատանդ տվեցին թագավորի դստեր և Ճոսլինի որդուն, ասես նաև տասնհինգ այլ պատանդներ։ Եվ սեպտեմբեր ամսին Պաղտին թագավորը, թուրքերի գերությունից ազատվելով, եկավ Անտիոք քաղաքը։ Բոլոր քրիստոնյաներն այդ օրը ցնծության մեջ էին։ Բայց կոմս Կալարանը և թագավորի քեռորդին Տումրտաշի մոտ մնացին և այնտեղ էլ ղոհվեցին։ Սա երկրորդ անգամն էր, որ Ճոսլինի ջանքերով Պաղտինն ազատվեց գերությունից։

Այդ տարին Կաուկաը աստծո օգնությամբ գրավվեց թուրքերի ձեռքից. Կաուկաի տեր իշխան Միխայիլը՝ Կոստանդնի որդին, հավաքելով հիսուն հոգի, համան պայքարով բերդում գտնվող թուրքերին դժվարին դրության մեջ գցեց։ Բերդին ոչ ոք օգնության չհասավ։ Ճարահատյալ նրանք համաձայնեցին Կաուկաը Միխայիլին հանձնել։ Նույն ձևով և ջանքերով թուրքերի ձեռքից առան և Պեպուլավ բերդը. քրիստոնյաները ցնծության մեջ էին։

Այդ թվականին վրաց թագավոր Դավիթը[431] նորից մեծ ջարդ տվեց պարսից զորքերին՝ կոտորելով շուրջ քսան հազար հոգի, նա գրավեց հայոց թագավորանիստ Անի քաղաքը, իսկ Մանուչեի[432] որդիներին, հանելով Անիից, տարավ Տփխիս։ Վաթսունամյա ստրկությունից ազատվեց Անի թագավորանիստ քաղաքը։ [Դավիթը] Անիի Սուրբ Կաթողիկն հրաշափառ և մեծ եկեղեցում, որ մզկիթի էր վերածվել, հավաքեց հայոց աշխարհի եպիսկոպոսներին, քահանաներին ու վանականներին և մեծ հանդիսավորությամբ օրհնեց Սուրբ Կաթողիկեն։ Համայն հայությունը ցնծության մեջ էր, քանզի Սուրբ Կաթողիկեն ստրկությունից ազատված տեսավ։

Այդ տարին ֆրանկների մոտից բազմաթիվ զորքերով մի դուքս եկավ, որն իջնելով բանակեց Օվկիանոս ծովի ափին գտնվող Սուր[433]

և կացեալ ի վերայ նորա բազում պւուրս՝ և սաստիկ պատերազմաւ ի նեղ արկանէր զքաղաքն զՍուր՝ և նաւօք պատեաց զծովն շուրջանակաւ և բազում զօրօք զյամաքն կալեալ ունէր և փակեալ էր յամենայն կողմանց։ Եւ կանգնեաց փայտէ բերդս ընդդէմ քաղաքին և բաբանս և փիլիպանս եդեալ՝ կայր ընդդէմ պարսպին. և այսպիսի օրինակաւս վտանգեաց զքաղաքն զբազում աւուրս, սովով և պատերազմաւ նեղեաց զքաղաքն զՍուր։ Եւ յայնժամ անճարեալ լինէին քաղաքացիքն և գային ի հաւանութիւն. և երդումն առեալ ի զօրագլխէն Փռանգաց՝ տան զքաղաքն Սուր ի տուկն և քաղաքացիքն ելեալ գնացին ի Դմիշկ. և զկնի սակաւ աւուրց տան զքաղաքն Սուր գերեզմանին Քրիստոսի, և դարձաւ տուկն զօրօք իւրովք ի յաշխարհն Փռանգաց։

Յայսմ ամի զօրաժողով արար թագաւորն Երուսաղէմի Պաղտինն և Ճօսլինն զամենայն զօրս Փռանգաց և գնաց ի վերայ քաղաքին Հալպայ։ Գայր յայնժամ առ Ճօսլին թագաւորն Արաբկաց Սալէ՝ որդին Տուպայիսին, որ փեսայացաւ խազէի. կապեաց սէր ընդ Ճօսլինն և միաբանեցաւ ընդ նմա և զօրօք իւրովք գայր յօգնութիւն Ճօսլինն։ Եկն առ Ճօսլինն թոռն Դղուզ սուլտանին և սուլտանն Մելտենուոյ որդին Ալիճ-Ասլանայ, և եղև մեծ հանդէս ի վերայ քաղաքին Հալպայ. և արկին զքաղաքն ի մեծ նեղութիւն սովով և պատերազմաւ զբազում աւուրն։ Յայնժամ հասուցանէին քաղաքացիքն առ ասպատակարն Բուրսուխն ի Մօսլ քաղաք՝ գալ օգնել նոցա։ Եւ նա ժողով արարեալ բազում զօրաց և զկնի վեց ամաց հասանէր ի Հալպ քաղաք. և ի բաց վարեաց զզօրսն Փռանգաց, և զերծաւ Հալպ. և գնացին զօրքն Փռանգաց իւրաքանչիւր ի տուն իւր անվնաս։ Եւ թագաւորն Արաբկաց գնաց և արար ասպատակ զՄօսլ և զամենայն երկիրն Բուրսուխին. և Բուրսուխն կացեալ ի Հալպ սակաւ աւուրս և գնաց ի Դմիշկ, արար միաբանութիւն ընդ Տուղ-Տիկին ամիրային Դմշկայ։

Յայսմ ամի գայր ի վերայ Մելտենուոյ խազի ամիրայն Սևաստոյ՝ որդի Դամիշմանին, և սաստիկ պատերազմաւ խոսարեաց զքաղաքն մեծ նեղութեամբ և կացեալ ի վերայ քաղաքին զամիսս վեց, մինչև ի սաստիկ սովոյն նեղեցաւ քաղաքն. և ի բազմանալ սովոյն բազումք մեռան, զի վարէին աղխարհն զքաղաքացիքն ի դուրս ի բանակն առ ի չգոյէ կերակուր. և անճարեալ քաղաքն ի մեծ վտանգէն՝ տան զքաղաքն ի խազի. և կինն Ալիճ-Ասլանայ տէրն քաղաքին ելեալ գնայր ի Մշարն։

Իսկ ի թուականութեանն Հայոց ՇՀԴ գայր բազում զօրօք ասպատակարն Պարսից Բուրսուխն և Տուղ-Տիկին և քառասուն հազար այր զօ-

կոչվող քաղաքի դեմ և, բազում օրեր համառ պայքար մղելով, նեղ դրության մեջ դրեց այն։ Նավերով նա [քաղաքը] պաշարեց, իսկ բազում զորքերով էլ՝ ցամաքից, և այդպիսով կատարելապես օղակի մեջ առավ։ Նա քաղաքի դեմ փայտաշեն բերդեր կանգնեցրեց, բաբաններով և փիլիկպաններով սկսեց պարիսպը հարվածել։ Բազում օրեր այդպես [մարտնչելով], նա նեղ և ծանր դրության մատնեց Սուր քաղաքը, սովի սպառնալիք ստեղծեց։ Քաղաքի բնակիչները, ճարահատյալ, համաձայնության եկան և, ֆրանկ զորահրամանատարներից իրենց անձեռնմխելիության մասին երդում առնելով, դուքսին հանձնեցին Սուր քաղաքը և թողեցին գնացին Դամասկոս։ Մի քանի օր հետո Սուր քաղաքը հանձնեցին Քրիստոսի Դերեզմանին[434]. դուքսն իր զորքերով վերադարձավ ֆրանկների երկիրը։

Այդ տարին Երուսաղեմի թագավոր Պաղտինը և Ճոսլինը, ֆրանկների բովանդակ զորքը հավաքելով, գնացին Հալեպ քաղաքի վրա։ Այդ պահին Ճոսլինի մոտ եկավ արաբների թագավոր Սալեն՝ Տուպայիսի որդին, խաղիի փեսան, նրա հետ բարեկամություն հաստատեց, դաշնակցեց նրան. իր զորքերով նա եկավ Ճոսլինին օգնության։ Ճոսլինի մոտ եկան նաև Դդուշ սուլթանի թոռն ու Մելիտենեի սուլթանը՝ Խլիճ Ասլանի որդին։ Հալեպ քաղաքի դեմ գումարվեց մի մեծ բանակ, որը, բազում օրեր մարտ տալով, քաղաքի համար սովի վտանգ առաջացրեց։ Քաղաքացիները դիմելով Մոսուլ քաղաքում գտնվող Բուրսուխ սպասալարին՝ նրան օգնության կանչեցին։ Վերջինս, բազում զորքեր հավաքելով, վեց ամիս անց հասավ Հալեպ քաղաքը և փախուստի մատնեց ֆրանկ զորքերին։ Հալեպը փրկվեց։ Ֆրանկ զինվորները, առանց որևէ վնաս կրելու, վերադարձան իրենց տեղը։ Իսկ արաբների թագավորը գնաց ասպատակեց Մոսուլը և Բուրսուխին ենթակա բովանդակ երկիրը։ Բուրսուխը, մի քանի օր Հալեպում մնալով, գնաց Դամասկոս և Դամասկոսի ամիրա Տուղտիկինի հետ հաշտություն կնքեց։

Այդ տարին Սեբաստիայի ամիրա Խազին՝ Դանիշմանի որդին, հարձակվեց Մելիտենեի վրա և համառ պատերազմելով քաղաքը վեց ամիս պահեց պաշարման մեջ. մինչև որ սաստիկ սովից քաղաքը սկսեց նեղվել։ Սովի սաստկանալու հետևանքով շատերը սովամահ եղան։ Պարենի չգոյության պատճառով քաղաքացիները սկսեցին դուրս գալ դեպի [Թըշնամու] բանակը։ Մեծ տագնապից ճարահատյալ, քաղաքացիները քաղաքը հանձնեցին Խազիին։ Քաղաքի տեր Խլիճ Ասլանի կինը թողեց գնաց Մշար։

Հայոց 574 թվականին [18 փետրվար 1125—17 փետրվար 1126 թ.] պարսից սպասալար Բուրսուխը Տուղտիկինի հետ պարսից ողջ բանակից

րացն ընդ նոսա, որք քնտրեալք էին յամենայն զօրացն Պարսից, և գայր մեծաւ զօրութեամբ և իջանէր ի վերայ ամուր բերդին Փռանգաց՝ որ կոչի Ազազ, և արար սաստիկ պատերազմ ի վերայ նորա. և ամենայն զօրութեամբ իւրով խրոխտանայր առնուլ զնա. և կոխեաց արհամարհելով զզօրութիւն Փռանգաց և կանգնեաց երկոտասան բաբանս ընդդէմ նորա. և փորեալ ընկեցին զերկու պարիսպ նորա. և կայր Ազազն ի մեծ վտանգի. և եղեն յուսահատեալք պահապանքն, որ կային ի նմա: Իսկ յորժամ լուաւ զայս թագաւորն Երուսաղէմայ՝ թէ դարձաւ Բուրսուխն ի Հալպ, յարուցեալ վաղվաղակի և գայր յԱնտիոք. և ձայն տուեալ զօրացն Փռանգաց՝ գնաց կոմսն Ճօսլինն մեծաւ յօժարութեամբ առ թագաւորն. գայր և կոմսն Տրապօլսոյ որդին Ջնճլին և Մահի կոմսն Տլբոյ, և եղև հանդէս զօրացն Փռանգաց հազար և երեք հարիւր ձիաւորաց, կայր և ի Հայոցն հինգ հարիւր, և հետևակ զօրք չորս հազար. և գայր թագաւորն Երուսաղէմայ և իջանէր ի Կուրիս: Եւ լուեալ զայս սասլասալարն Պարսից՝ խլեցաւ զօրօքն և իջաւ մօտ ի Հալպ: Յայնժամ զօրքն Փռանգաց թողին զամենայն ծանրոցն իւրեանց ի Կուրիս և ամենայն պատրաստութեամբ գնացին յԱզազն և տեսին ի հիմանց փլեալ և աւերեալ զԱզազն. և մերձ էին ի յառնուլ զնա, յայնժամ դարձան զօրքն Պարսից ի վերայ զօրացն Փռանգաց և պատեալ զնոսա զաւուրս երիս. մեծաւ նեղութեամբ կային ի մեծ տագնապ ոչինչ ճաշակելով նոցա և ի սաստիկ նեղութենէն զյոյսն իւրեանց ի մահ եդին և առհասարակ յուսահատեցան ի կենացս. և զօրքն Թուրքաց դոռային խրոխտալով ի վերայ նոցա և շրջապատեալ զնոսա՝ և բարձրաձայն աղաղակաւ և որպէս զարծուի, որ յերամս աղաւնեաց խոյանայ, այնպէս զօրք այլազգեացն դիմէին առհասարակ ի վերայ Փռանգ զօրացն. և յամենայն կողմանց անճարեալ կային զօրք քրիստոնէիցն և ահաբեկեալ մահու ցանկանային և մինչև ի վերջին շունչն ժամանէին: Եւ մինչդեռ յայս տարակուսանս հասեալ կային, խորհուրդ իմն բարւոյ խորհեցաւ թագաւորն և ասէր ցիշխանան զօրաց իւրոց. «Եկայք դարձցուք դիմօք ի Թերեպն, կարծիս տացուք Թուրքաց զօրացն, եթէ ի փախուստ դարձան, զի, որք ի դարանի կան, յարուցեալ լինիցին զհետ մեր և մեք յայնժամ դարձցուք ի վերայ նոցա ի պատերազմ և տեսցուք, եթէ զի՛նչ արասցէ ընդ մեզ Քրիստոս»: Եւ պատուէր տայր որոց էին ի բերդն Ազազն և ասէր, թէ «Յորժամ միաբանին զհետ մեր, դուք մեզ նշան մխոյ արարէք ի վերայ բերդիդ». և թագաւորն խլեցաւ ամենայն զօրօքն ի Թերեպն: Եւ գիտացեալ Բուրսուխն սասլասալարն, եթէ փախստական դնայ, ձայն տուեալ ամենայն զօրացն միաբան և զհետ ընթացեալք գային որպէս զգայլս զհետ ոչխարաց և դիմէին ի վերայ մեծաւ աղաղա-

ընտրված քառասուն հազար զինվորներից բաղկացած հսկայական զորքով եկավ և, մեծ զորությամբ հարձակվելով ֆրանկների Ազազ կոչվող անառիկ բերդի վրա, համառ պատերազմ մղեց նրա դեմ։ Իր հսկայական ուժի վրա [հույս դրած], նա հոխորտում էր գրավել այն։ Նա հեշտությամբ ճզմեց ֆրանկների ուժը, [բերդի] դեմ տասներկու բաբան կանգնեցրեց, փլցրեց [բերդի] երկու պարիսպները։ Ազազը մեծ վտանգի մեջ էր, կայազորը հուսաբեկ էր եղել։ Երուսաղեմի թագավորը, լսելով, որ Բուրսուխը Հալեպ է վերադարձել, շուտափույթ ելավ եկավ Անտիոք։ Ֆրանկ զորքերին ուղղված թագավորի կոչին մեծ պատրաստակամությամբ արձագանքեց կոմս Ճոսլինը. եկան նաև Տրապոլսի կոմսը՝ Ջնճիլի որդին և Տլուքի կոմս Մահին։ Հավաքվեց հազար երեք հարյուր ֆրանկ հեծյալ, բացի այդ, կար և հինգ հարյուր հայ, ապա նաև չորս հազարանոց հետևակ։ Երուսաղեմի թագավորը ելավ եկավ Կուրիս։ Պարսից սպասալարը, լսելով այդ մասին, իր զորքերով գնաց բանակեց Հալեպի մոտ։ Այն ժամանակ ֆրանկ զինվորները, Կուրիսում թողնելով իրենց ողջ գումակը, կազմ ու պատրաստ գնացին Ազազ, որը գտան կործանված և ավերված, քիչ էր մնացել, որ այն ընկնի [թշնամու] ձեռքը։ Այդ պահին պարսից զորքերը ևս եկան ֆրանկ զորքերի դեմ և նրանց երեք օր պաշարման օղակի մեջ առան։ [Ֆրանկները] մեծ նեղության ու տագնապի մեջ էին, նրանց պարենն սպառվել էր, և, ապրելու հույսը կորցրած, մահը փրկություն էին համարում։ Թուրք զինվորները հոխորտալով գոռում ու ճչում էին պաշարվածների վրա, ֆրանկ զինվորների վրա հարձակում էին գործում այնպես, ինչպես արծիվն է խոյանում աղավնիների երամների վրա։ Քրիստոնյա զինվորները, ծայրաստիճան ճարահատված ու սարսափած, մահամերձ վիճակում էին, նրանք մեռնել էին ուզում։ Երբ նման անելդրության մեջ էին նրանք, թագավորը մի լավ միտք հղացավ. դիմելով իր զորահրամանատարներին, ասաց. «Եկեք շրջվենք դեպի Թերեպ, թուրք զինվորների մոտ այն տպավորությունը ստեղծենք, թե փախուստի ենք դիմում, այդպիսով նրանք, ովքեր դարան են մտած, դուրս կգան և կհետապնդեն մեզ։ Ահա, այն ժամանակ մենք շուռ կգանք, կմարտնչենք նրանց դեմ, մինչև որ տեսնենք, թե ինչպես կվարվի մեզ հետ Քրիստոսը»։ Ազազ բերդում գտնվողներին նա հետևյալ կարգադրությունն արեց. «Երբ [թուրքերը] մոտենան մեզ, դուք բերդի վրայից ծխով նշան արեք»։ Թագավորն ահա ամբողջ զորքով շարժվեց դեպի Թերեպ։ Բուրսուխ սպասալարը, կարծելով, որ [թագավորը] փախուստի է դիմում, կոչ արեց իր զինվորներին, և բոլորը միասին հետապնդեցին [ֆրանկներին], այնպես, ինչպես գայլերը՝ ոչխարներին։ Երանք մեծ փութաջանությամբ շարժվեցին

կաւ և ահագին հանդիսիւ և զոչմամբ ձայնիւ զհետ Փռանգաց զօրացն վարէին։ Եւ իբրև գնացին մղոնս երկուս, միաբանեցան զօրքն այլազգացն զհետ զօրացն քրիստոնէիցն. և յայնժամ արարին յԱզազն զնջան մխոյն՝ և տեսեալ թագաւորն Երուսաղէմայ և ամենայն զօրագլուխքըն, ձայն օգնականութեան առ Աստուած աղաղակեցին՝ և լալով և ողբալով զկրծից հարեալ ի վեր յերկինս առ Աստուած աղաչանս առաքէին, զի հասցէ յօգնութիւն սակաւ հօտին իւրոյ։ Յայնժամ հրամայեաց թագաւորն հնչեցուցանել զփող պատերազմին, և միաբան զօրքն քրիստոնէից դիմեցին ի վերայ այլազգեացն՝ և զԱստուած օգնական կալեալ, քաջապէս ջան եդեալ։ Եւ լուաւ Տէր աղաչանաց նոցա, և մեծաւ սրամտութեամբ դարձուցին զթուրքն ի փախուստ. և յայնժամ սուր ի գործ արկեալ զօրք հաւատացելոցն և ընդ ամենայն երեսս դաշտացն ցիր և ցան հանին զնոսա. և կոմսն Ճօսլին մեծաւ զայրացմամբ գազանաբար իբրև վառիւծ, որ մռնչէ զհետ եղանց, այսպէս և սա վարէր զհետ զօրացն այլազգեացն և յագեցաւ արեամբ անհաւատիցն. նոյնպէս և թագաւորն և ամենայն զօրքն Քրիստոսի վարեցան զհետ անօրինացն և կոտորեցին յանխնայ մինչև ի Հալպ քաղաք. և եղև համար կոտորածոց եօթն հազար։ Եւ գնացին ասպասալարն Պարսից և Տուղ-Տիկին լի ամօթով, վասն զի հնգետասան ամիրայք ի պատերազմին կորուսեալ եղև. և դարձան զօրքն քրիստոնէից մեծաւ ուրախութեամբ և անհամար աւարաւ. և եղև օրն այն օր ուրախութեան ամենայն հաւատացելոցն Քրիստոսի. այս եղև յամսեանն ի Տրէի քսան և չորս, յաւուր հինգշաբաթու։ Եւ զկնի աւուրց ինչ առեալ Բուրսուխն զդուստրն թագաւորին և զորդին Ճօսլինն և տարեալ եդ ի Խլադ-Ճապար և ինքն գնաց ի Մօսլ. և յետ տարւոյ մի սպանաւ յազգէն իւրմէ, որք ասէին ճաճիք. աղօթաւորի կերպիւ լեալ մտանէին ի տունն նորա և դանակով սպանանէին զնա. յայնժամ պաշտօնեայք նորա սատակէին զնոսա և այլ ևս ի քաղաքէն զորս գտին այնպիսի կերպարանով՝ սատակեցին արս ութսուն։

Ի յայսմ ամի զօրաժողով արարեալ զօրագլուխն Պարսից անթիւ բազմութիւնս, ամիրայն արևելից, որ ասի Աբրահիմ որդի Սուլիմանայ և ամիրայն Յանձթայ, որ ասի Տաւութ որդի Սուգմանայ՝ որդւոյ Արդուխին, և այլ բազում ամիրայք խաղացին բազում զօրօք և գնացին յաշխարհն Վրաց։ Եւ հասեալ ի վերայ նոցա Վրաց արքային՝ և սաստիկ կոտորածով դարձուցանէր զնոսա ի փախուստ և կոտորեաց զնոսա առաւել քան զառաջինն և զաւուրս հինգ զհետ վարեաց և արեամբ ելից ղաշտն և զլերինս. և ի դիականցն անկելոց հոտեցաւ ամենայն երկիր։

Յայսմ ամի մեռանէր բարեպաշտ սուրբ թագաւորն Դաւիթ Վրաց

ֆրանկ զորքերի վրա, սարսափելի աղմուկ-աղաղակ բարձրացնելով։ Երկու մղոն ճանապարհ կտրելով, այլազգիների զորքերը մոտեցան քրիստոնյաների զորքերին։ Այն ժամանակ Ազազ [բերդում] ծխով նշան արեցին։ Երուսաղեմի թագավորը և բոլոր զորահրամանատարները, տեսնելով դա, բարձրաձայն դիմեցին աստծուն, ողբալով և կուրծքը ծեծելով բարձրյալին պաղատեցին՝ իր փոքրաթիվ հոտին օգնության հասնի։ Թագավորը հրաման տվեց հնչեցնել պատերազմական շեփորը. քրիստոնյա զինվորները մեկ մարդու պես հարձակվեցին այլազգիների վրա։ Ապավինելով աստծո օգնությանը, նրանք արիությամբ լցվեցին։ Տերը ականջ դրեց նրանց թախանձանքին։ Հավատացյալ զինվորները մեծ ցասումով թուրքին փախուստի մատնեցին և, սրերը գործի դնելով, դաշտերի երեսին նրանց ցիրուցան արեցին։ Կոմս Ճոսլինը անչափ զայրացած, եղների ետևից մռնչացող առյուծի նման, հալածում էր այլազգի զինվորներին՝ նրանց արյամբ հագուրդ ստանալով։ Անհավատներին հալածեցին նաև թագավորն ու Քրիստոսի բոլոր զինվորները և մինչև Հալեպ քաղաքը անխնա կոտորեցին։ Կոտորվածների թիվը հասավ յոթ հազարի։ Պարսից սպասալարը և Տուղտեկինը խայտառակ եղած գնացին, քանզի պատերազմում տասնհինգ ամիրա սպանվեց։ Քրիստոնյա զինվորները մեծ ուրախությամբ և անթիվ ավարով վերադարձան։ Այդ օրը բոլոր քրիստոնյաների համար ցնծության օր եղավ։ Դա տեղի ունեցավ տրե ամսի քսանչորսին, հինգշաբթի օրը։ Մի քանի օր անց Բուրսուխը թագավորի դստեր և Ճոսլինի որդուն տարավ Թողեց Խլագ-Ճապարում[435], իսկ ինքն էլ գնաց Մոսուլ։ Մեկ տարի անց նա սպանվեց իր ցեղակիցների կողմից, որոնք հաճի են կոչվում։ Նրանք ուխտավորի կերպարանքով իր տունը մտան և դաշույնի հարվածով սպանեցին նրան։ [Բուրսուխի] սպասավորները [ահաբեկիչներին] տեղնուտեղը սպանեցին, ապա քաղաքում ում որ հանդիպեցին նման կերպարանքով, սպանեցին. նրանց թիվը կազմեց ութսուն հոգի։

Այդ տարին պարսից զորահրամանատարը՝ արևելից ամիրան, որ Աբրայիմ՝ որդի Սուլիմանի է կոչվում[436], ապա Անձիտի ամիրան, որ Տավուբ՝ որդի Սուգմանի՝ որդի Արդուխի է կոչվում, և այլ բազմաթիվ ամիրաներ, հսկայական զորահավաք անելով, շարժվեցին գնացին Վրաստան։ Նրանց վրա հարձակվեց վրաց թագավորը և, մեծ ջարդ տալով, փախուստի մատնեց։ Նա նախորդ անգամից ավելի [թուրք] կոտորեց. հինգ օր հալածելով նրանց, արյամբ ողողեց դաշտերն ու լեռները։ Դիակների գարշահոտությունը բռնել էր ողջ երկիրը։

Այդ տարին վախճանվեց Վրաստանի բարեպաշտ և սուրբ թագա-

աշխարհին, և նստուցանեն յաթոռ նորա զորդի իւր զԴիմեարէ, գայր քաջ և աստուածասէր, նմանեալ հօր իւրոյ Դաւթի ամենայն գործովք բարեաց. սա զարձոյց զորդիսն Մանուչէի ի քաղաքն Անի և բազում երդմամբ արարեալ զնոսա իւր ծառայս և հնազանդս զամենայն աւուրս կենաց իւրեանց և տայր զԱնի ի նոսա, զի բազում նեղութիւն կրեաց Անի ի զօրացն Պարսից, յորժամ մեռաւ Դաւիթ. և այլ հողք պատերազմաց և զաւառաց անկաւ ի վերայ Դեմետրէի վրաց արքային, որ էր ի Հայ կնոջէն. իսկ որդիքն Մանուչէի արարին սաստիկ երկումն, վասն զի սուրբ Կաթուղիկէն, որ էր յԱնի, հանապազ Հայոց կայցէ և մի՛ մտցէ ի նա Տաճիկ և այլ Մսիման ազգ։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՇՀԵ գայր ի Փռանգաց որդին Պեմոնդին՝ որոյ Անսերթայ, որ զանուն հօրն ունէր Պեմունդ. յայսմ ամի գայր զօրօք ի քաղաքն յԱնտիոք և առնու իւր կին զդուստր թագաւորին Երուսաղէմայ. և խոստանայ թագաւորն զթագաւորական աթոռն տալ նմա զկնի մահուանն իւրոյ. տայր և զԱնտիոք թագաւորն ի Պեմունդն և զամենայն աշխարհն Կիլիկեցւոց։ Եւ յայնժամ Պեմունդն որդի Պեմոնդին բռնութեամբ և ուժգին զօրութեամբ արար իւր հաւան և հնազանդ զամենայն ազգն Փռանգաց, զկոմսն Ուռհայոյ զՃօսլինն արար հաւան և հնազանդ, նոյնպէս և զորդի Ջնճլին. և ինքն էր մանուկ մարմնով՝ ամաց քսանից, առանց մորուաց, այր քաջ և հզօր պատերազմող, բարձրահասակ և առիւծադէմ և սոսկ խարտէշ. և բազում հօր որդիք և մեծազգիք եկին զհետ նորա ի Հռոմայ։

Իսկ ի թուականութեանն Հայոց ՇՀԶ մեռանէր սուրբ վարդապետն Հայոց, որ ասի Կիւրոս, նմանեալ առաջին սրբոցն, ուսեալ զամենայն կտակադիրսն Աստուծոյ և ամենայն խորին քննութեամբ հասու եղեալ, լիապէս հասեալ ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ, ընկերակից Գէորգայ վարդապետին, որ ասի Մեղրիկ. սա մեռաւ և թաղեցաւ ի վանքն, որ կոչի Դրազարկ, և կոչեցաւ վանքն այն Գերեզմանատունք սուրբ վարդապետացն, վասն զի անդ թաղեցաւ սուրբ վարդապետն Հայոց, որ ասի Մեղրիկ, որ ժողովեաց անդ զամենայն դասս ճգնաւորացն Քրիստոսի և հաստատեաց անդ կարգ և կրօնք զառաջին սրբոց հարցն։

Դարձեալ ի թուականութեանն Հայոց յամի ՇՀէ գայր ամիրայն ասպասալարն Պարսից, որ ասի Զանգի, որդի Աղ-Սնգուրին, այն՝ որ յառաջն ունէր զՀալպ քաղաք. սա գայ իշանէ զօրօք ի սահմանս Ուռհայոյ և հաստատեաց սէր ընդ կոմսն Փռանգաց ընդ Ճօսլինն և անվնաս գնաց ի Հալպ քաղաք. և խնդրէր սէր և խաղաղութիւն առնել ընդ

վոր Դավիթը։ Նրա գահին նստեցրին իր որդուն՝ Պեմետրեին[437], քաջ և աստվածասեր մի մարդու, որն իր հոր նման բարեզործ էր։ [Պեմետրեն], Մանուչեի որդիներից[438] ցմահ հպատակության մասին բազում երդումներ առնելով, թույլ տվեց նրանց վերադառնալ Անի, քաղաքը նրանց հանձնելով։ Անին Դավթի մահից հետո պարսից զորքերից բազում նեղություններ էր կրել։ Հայ կնոջից ծնված վրաց թագավոր Պեմետրեի վրա պատերազմական հոգսերից բացի ծանրացան նաև գավառների [կառավարման] հոգսերը։ Մանուչեի որդիները սարսափելի երդում տվեցին, որ Անիի Սուրբ Կաթողիկեն առհավետ հայերին է պատկանելու, որ այնտեղ մուտք չի գործելու և ոչ մի տաճիկ կամ մուսուլման։

Հայոց 575 թվականին [18 փետրվար 1126—17 փետրվար 1127 թ.] ֆրանկների երկրից եկավ Ռոսլերթի որդի Պեմունդի որդին, որ իր հոր պես Պեմունդ էր կոչվում։ Այդ տարին, ահա, նա զորքով եկավ Անտիոք և կնության առավ Երուսաղեմի թագավորի դստեր։ Թագավորը խոստացավ իր մահից հետո թագավորական գահը նրան՝ [Պեմունդին] ժառանգել։ Անտիոքը և համայն Կիլիկիան թագավորը տվեց Պեմունդին։ Այն ժամանակ Պեմունդի որդի Պեմունդը, ուժեղ ճնշում և բռնություն գործադրելով, բոլոր ֆրանկներին իրեն ենթարկեց և հնազանդեցրեց, այդ թվում Ուռհայի կոմս Ճոսլինին և Ջնճիլի որդուն։ Ինքը՝ [Պեմունդը] դեռ երիտասարդ էր՝ շուրջ քսան տարեկան, շիկահեր, անմորուս, քաջ և ուժեղ պատերազմող, բարձրահասակ և առյուծադեմ։ Հռոմից նրա մոտ եկան բազմաթիվ մեծատոհմիկ և ազնվազարմ մարդիկ։

Հայոց 576 թվականին [18 փետրվար 1127—17 փետրվար 1128 թ.] վախճանվեց Կյուրոս[439] անունով հայոց սուրբ վարդապետը, որ առաջին սրբերին էր հիշեցնում։ Նա ուսանել էր աստծո Հին և Նոր Կտակարանները և խորին ուսումնասիրությամբ նրանց կատարելապես հասու դարձրել։ Նա Գեորգ վարդապետի՝ Մեղրիկ մականվանյալի ընկերն էր։ [Կյուրոսը] վախճանվեց և թաղվեց Դրազարկ կոչվող վանքում։ Այդ վանքը կոչվեց «Սուրբ վարդապետների գերեզմանատուն», որովհետև այնտեղ թաղվեց և Մեղրիկ կոչվող հայոց սուրբ վարդապետը։ [Մեղրիկը Դրազարկում] հավաքեց Քրիստոսի բոլոր ճգնավորներին և առաջին սուրբ հայրերի կարգն ու կանոնը հաստատեց այնտեղ։

Հայոց 577 թվականին [18 փետրվար 1128—17 փետրվար 1129 թ.] եկավ ամիրան՝ պարսից սպասալարը, որ Զանգի[440] է կոչվում՝ որդին Աղ-Սնգուրի, ով անցյալում տիրում էր Հալեպ քաղաքին։ [Զանգին] զորքով եկավ իջավ Ուռհայի գավառը. ֆրանկների կոմս Ճոսլինի հետ բարեկամություն հաստատելով, անվնաս թողեց գնաց Հալեպ քաղաքը։

մեծ կոմսն Փռանգաց ընդ Պեմունդն ընդ տէրն Անտիոքայ և միջնորգս կացուցանել զձօսլինն. և կացեալ զաւուրս ինչ, գնաց ամենայն զօրօք ի Դմիշկ, ղի մեռեալ էր ամիրային Դմշկայ, որ ասի Տուղ-Տիկին, և ունէր զքաղաքն որդին նորա։

Յայսմ ամի մեռաւ Պարսից սուլտանն, որ կոչէր Մահմուտ որդի Տաւթարին, և նստաւ յաթոռ նորա եղբայր նորա, որ կոչէր Մելեք, այն՝ որ յառաջ նստեալ էր ի Դանձակ, զոր կոտորեաց Դաւիթ թագաւորն վրաց և արար զնա փախստական ի Պարսիկս։

Յամս շրջագայութեան տումարիս Հայոց ՇՁՆ եկն Մահմատ սուլտանն, որդի Ամր-խազէլի՝ որդւոյ Դամիշմանին. սա եկեալ բազում զօրօք յաշխարհն Մարաշայ և եկեալ իջաւ ի վերայ Քեսուն քաղաքի և այրեաց զշէնս զեղիցն և վանորէիցն ի ժամանակս կթոց այգեստանացն. և նստեալ աւուրս վեց ի վերայ քաղաքին, ո՛չ պատնէշ կանգնեալ կամ մեքենայս, և ո՛չ նետաձիգ եղեալ, այլ լռելեայն նստեալ, հատանելով զջուր դեռոյն և կոտորելով զբուրաստանսն՝ այսր անդր ասպատակ ունելով և զաւուրս և զաւար չինքեանս կուտելով։ Իսկ որ ի ներքոյս ի քաղաքն էին, որ աւուր ակն ունէին խռովութեանց և արեան հեղման և սման քաղաքին և այնպէս սրտաթափ եղեալ, մինչև ի միում պիշերի թողուլ զարտաքին պարիսպն։ Եւ ապա քաջալերեալ զմարդիկք քաղաքին առաջնորդք և քահանայք իւրեանց, յորդորելով պաղատանօք առ Տէր կարդային և զմեռանիլն խնդրէին՝ քան թէ մատնիլ ի ձեռս անօրինաց և ծաղր և ծանակ լինել հեթանոսաց, անձամբ և ընտանեօք և խաչիւք վառելեօք, բազկատարած աղօթիւք զպաշտօնն բարձրացուցանէին զլայգն ի ցերեկ հասուցանելով։ Իսկ որ յամենայնի բարեգութն և ողորմածն Աստուած՝ ոչ կամեցաւ վասն մեղաց մերոց մատնել ի ձեռս թշնամեաց, այլ գթացեալ ի գինս արեան Որդւոյ սիրելւոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ոչ եւս հրաման զօրացն պատերազմաւ զքաղաքն, այլ արդ ի յաւուր ուրբաթու, որ էր օր չարչարանաց Փրկչին մերոյ, եղև ազատութիւն քաղաքին Քեսնու. և այրեաց զվանքն Կարմիր՝ զտուն աղօթից, զխրճիթս միանձանց և մանրեալ զնշանս տէրունական քարանց և փայտից, գերի վարեալ զերկաթեղէնս և զպղնձեղէնս, ի յերկիր կործանեալ զսեղան սրբութեան հացի՝ փշրեաց և զդուռն գեղեցկահիւս յօրինուածոյ և զայլն ընդ ինքն բարձեալ տանելով յաշխարհն իւրեանց ի տես հարճից և ռամկաց իբրև զԲաբիլացին զայն։ Առ սա կատարեցաւ, թէ «լքեալ թողցի դուստր Սիոնի իբրև զտաղաւար յայգւոջ կամ իբրև զհովանի մրգապահաց» և որպէս զտատրակ սգալից միայն մնացեալ ի գուգակէ՝ կամ որպէս զագռաւ զազրատեսակ նըս-

Նա ուզում էր Ճոսլինի միջնորդությամբ Անտիոքի տեր ֆրանկների մեծ կոմս Պեմունդի հետ բարեկամություն և հաշտություն հաստատել։ Մի քանի օր մնալով այնտեղ, նա ամբողջ զորքով թողեց գնաց Դամասկոս, քանզի վախճանվել էր Դամասկոսի ամիրան, որ Տուղտիկին էր կոչվում, իսկ քաղաքը վերջինիս որդու[441] ձեռքն էր անցել։

Այդ տարին վախճանվեց պարսից սուլթանը, որը կոչվում էր Մահմուտ որդի Տափարի. իր գահին նստեց եղբայրը, որ Մելեք[442] էր կոչվում, նա, ով նախկինում Դանձակի վրա էր տիրում և վրաց թագավոր Դավթից ջարդ ստանալով՝ փախուստի էր դիմել Պարսկաստան։

Հայոց 585 թվականին [16 փետրվար 1136—14 փետրվար 1137 թ.] եկավ սուլթան Մահմուտը՝ Դանիշմանի որդի Ամիր Խազիի որդին։ Նա բազմաթիվ զորքերով եկավ Մարաշի գավառը, հարձակվեց Քեսուն քաղաքի վրա և այգեկութի ժամանակ կրակի տվեց գյուղերի տներն ու վանքերը. վեց օր քաղաքը պաշարման մեջ պահեց, որի դեմ նա չկանգնեցրեց ո՛չ պատնեշ, ո՛չ էլ [քաղաքավեր] մեքենաներ, նետաձգությամբ էլ չզբաղվեց, նա միայն կտրեց գետի ջուրը, կտրատեց այգեստանները, չորս կողմն ասպատակ սփռեց և ավար կուտակեց։ Իսկ քաղաքի ներսում գտնվողները իրենց աչքի առաջ ունենալով մոտալուտ փոթորիկն ու արյունահեղությունը, քաղաքի գրավումը, այն աստիճան հուսաբեկ եղան, որ մի գիշեր լքեցին արտաքին պարիսպը։ Հոգևոր առաջնորդները և քահանաները սրտապնդում ու հորդորում էին քաղաքացիներին, Տիրոջ էին պաղատում և նրանից մահ աղերսում, որպեսզի չընկնեն անհավատների ձեռքը և հեթանոսների ծաղր ու ծանակի առարկա չդառնան։ Նրանք գիշեր-ցերեկ առանձին կամ ընտանյոք խաչերով, բազկատարած աղոթելով [աստծուն], պատարագ էին մատուցանում։ Գթառատ և ողորմած աստվածը չուզեց, մեր մեղքերը նկատի առնելով, թշնամու ձեռքը հանձնել մեզ, նա ափսոսաց իր սիրելի որդու՝ մեր Տիրոջ, Հիսուս Քրիստոսի արյան գինը։ [Մահմուտը] հրաման չտվեց զինվորներին մարտընչել քաղաքի դեմ և ուրբաթ օրը՝ մեր Փրկչի չարչարվելու օրը, Քեսուն քաղաքը փրկվեց։ [Մահմուտը] հրդեհեց աղոթատունը՝ Կարմիր վանքը, վանականների խրճիթները, ջարդուփշուր արեց ահռելիական քարե և փայտյա խաչերը, թալանեց պղնձյա և երկաթյա սպասեղենը, խորտակեց հաղորդության սուրբ սեղանը, ջարդեց գեղեցկահյուս փորագրություններ ունեցող դուռը և մնացածն էլ վերցրեց տարավ իրենց երկիրը՝ հարճերին ու ամբոխին ցույց տալու, ինչպես այն բաբելացին[443]։ Այստեղ էր, որ իրականություն դարձավ մարգարեությունը. «Եվ Սիոնի դուստրը լքվելու է այգու մեջի մի խրճիթի նման, մրգապահի հյուղակի պես»[444], նմանվելու է ցույցից վրկված սգավոր տատրակի, սյան վրա

տեալ ի վերայ կոթողոյ: Եւ Մահմուտն դնաց փութանակի յաւուր ուրբաթու, որպէս ասացաք, քաղնի համբաւ եհաս ի լսելիս նորա յաղագս թագաւորին Հոռոմոց, թէ դիմեալ գայ յօգնութիւն պաշարեալ քաղաքին Քեսնոյ՝ մերոյ իշխանին Պաղտունին կոչեցելոյ, մաղթելով առ ոտս նորա. զի յաւուրսն յայնոսիկ մերձ էր թագաւորն Յունաց յԱնտիոք՝ աւարելով զՏաճկաստան և բարձեալ էր զիշխանութիւն մերոյ իշխանին Լեւոն կոչեցելոյ, և զքաղաքս և զբերդս ամուրս յինքն գրաւեալ և զնա առեալ տանէր յաշխարհն Յունաց յայնկոյս ծովուն ի սահմանս Ասիացւոց աշխարհին:

Թառած գարշելի ագռավի։ Եվ ահա Մահմուտը, ինչպես ասացինք, ուրբաթ օրը շուտափույթ հեռացավ, որովհետև նրան հայտնել էին, որ հռոմոց կայսրը[445], ընդառաջելով մեր իշխան Պաղտինի պաղատագին խնդրանքին, գալիս է պաշարված Քեսուն քաղաքին օգնության։ Այդ օրերում հունաց կայսրը, ավարառելով Տաճկաստանը, մոտեցել էր Անտիոքին, վերացրել էր մեր իշխան Լևոնի իշխանությունը, գրավել քաղաքներ և անառիկ բերդեր, իսկ [Լևոնին] էլ տանում էր հունաց երկիրը՝ ծովի մյուս կողմը՝ Ասիայի սահմաններում։

[ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՐԻՑՈՑ]

Ձանզի ի բարձրանալ թուականութեանս Հայոց յամս ՇՁԶ նոյն թագաւորս Հռոմոց որդի Ալէքսին, որում անուն էր Պեռպեռօժէն, եկն մեծ խռովութեամբ ի քաղաքն Անաւարզա։ Եւ էր յաւուրսն ամառնային՝ յամիսն Յուլիսոյ. և խսարեաց զքաղաքն աւուրս երեսուն և հինգ և նեղեաց բաբնովն. և նոքա առ վտանգին ետուն զքաղաքն ի թագաւորն Պեռպեռօժէնն, և նա էառ զամենեսեան. զԼևոն իշխանն Հայոց և զորդիքն իւր և զկինն, էառ և զսուրբ պատկերն Աստուածածնին և տարաւ ի Կոստանդնուպօլիս. և անդ մեռաւ մեծ իշխանն Հայոց Լևոն որդի Կոստանդնայ որդւոյ Ռուբենայ. և ինքն թագաւորն Պեռպեռօժէն եկն ի բերդն Պզահն, էառ բռնութեամբ։ Եւ տարան զնա խաբելով ազգն Փռանգաց ի քաղաքն, որ կոչի Շեզար, և անտի եկն յԱնտիոք. և գնաց Մելէք Մահմատն այս ի բերդն Շուպլաս, բաղում մարտիւք մարտուցեալ և նետս անթիւ հեղեալ՝ ոչինչ կարաց առնել բերդին և այնպէս գնալով ընդ կատարս լերանցն, որ Կուպա կոչեն, գնաց յաշխարհն իւր. և մեք գոհացաք զՏեառնէ, որ փրկեաց զմեզ ի հրոյն պաշարմանէ և ազատեաց ի թշնամեացն։ Եւ ի յանցանել ձմեռանն, յորժամ էր թագաւորն ի վերայ Պզահ բերդին Տաճկաց, զկնի սուրբ Զատկին գնաց տէր քաղաքին Քեսնոյ Պաղտինն առ նա զօրօք և հեծելովք իւրովք, նաև բնակիչք քաղաքին. և թափուր մնաց քաղաքս ի յարանց. երկեան և ելին ի քաղաքէս տուն որդւովք և գնացին ոմանք ի Պհեսնի և ոմանք ի Ռապան, ոմանք ի Հռոմկլայն. և մնաց Քեսուն անմարդ, սակաւ իշխանք մնացին տնղեպահ հետևակօք և տուկ քաղաքին. սորա Վահրամ կոչիւր։ Եւ ես նուաստ երէցս Գրիգոր սրտապնդելով զնոսա ժրանալ ի պահպանութիւն քաղաքիս, զի մի՛ գուցէ եկեալ այրեսցեն զքաղաքս մեր,

[ԳՐԻԳՈՐ ԵՐԵՑԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ]

Հայոց 586 թվականի [15 փետրվար 1137—14 փետրվար 1138 թ.] սկզբին Հռոմոց նույն կայսրը[1], այն է՝ Ալեքսի որդին, որի անունը Պերփերոյեն էր, մեծ ցասումով եկավ Անավարզա քաղաքը։ Ամառ ժամանակ էր, հուլիս ամիսը։ Նա երեսունհինգ օր պաշարեց քաղաքը և, բաբան գործի դնելով, սպառնալի վիճակ ստեղծեց։ [Քաղաքացիները] վերտանգից դրդված քաղաքը հանձնեցին Պերփերոյեն կայսեր, որն ամեն ինչ ձեռք դցեց. նա գերեց հայոց իշխան Լևոնին, նրա որդիներին և կընոջը։ Նա առավ ու Կոստանդնուպոլիս տարավ աստվածածնի սուրբ պատկերը։ Հայոց մեծ իշխան Լևոնը՝ Ռուբենի որդի Կոստանդնի որդին, վախճանվեց [Կոստանդնուպոլսում]։ Պերփերոյեն կայսրը եկավ բռնությամբ տիրացավ Պզահ բերդին։ Ֆրանկները, խաբելով նրան, տարան Շեղար կոչվող քաղաքը, այնտեղից էլ նա եկավ Անտիոք։ Այս Մելեք Մահմատը գնաց Շուպլաս բերդը, երկարատև պատերազմ մղեց նրա դեմ, նետերի տարափ թափեց բերդի վրա, բայց ոչինչ անել չկարողացավ. Կուլա կոչվող լեռնագագաթներով գնաց իր երկիրը։ Մենք Տիրոջը գոհություն հայտնեցինք, որ փրկեց մեզ պաշարման փորձանքից և ազատեց Թշնամիների ձեռքից։ Ձմռան ավարտին, երբ դեռ կայսրը տաճկաց Պզահ բերդի դեմ էր [կռվում], սուրբ զատկից հետո, Քեսուն քաղաքի տեր Պաղտինը իր հետևակներով և հեծյալներով, ինչպես և քաղաքի բնակիչները, նրա մոտ գնացին։ Քաղաքը դատարկվեց տղամարդկանցից։ [Մնացած] բնակիչները, սահմռկած, երեխաներով հանդերձ ելան գնացին՝ մի մասը Պհեսնի, ոմանք՝ Ռապան, ուրիշներն էլ՝ Հռոմկլա[2]։ Քեսունն անմարդացավ, մնացին միայն մի քանի իշխաններ և քաղաքի դուքսը, որ Վահրամ էր կոչվում՝ հետևակներից բաղկացած մի փոքր կայազորով։ Իսկ ես, նվաստ Գրիգոր Երեցս, սրտապնդում էի նրանց աչալրջորեն պահպանել քաղաքը, որպեսզի հանկարծ Թշնամին չգա,

որ և եղև իսկ. զի ի դառնալ թագաւորին Յունաց, որդի Տաւութին, որոյ անուն Խար-Ասլան կոչիւր, դարձաւ ի Տաճկաստանէ բազում զօրօք և եկեալ իբրև զփախստական ի թագաւորէն, եկն ի քաղաքն Ռապան. իսկ արքն, որ էին ի Քհսուն քաղաքին, զարհուրեալք կարծէին, եթէ Մելէք Մահմատն իցէ, թողին զքաղաքն և ելան երեկոյին. իսկ ի վաղիւն եկեալ սակաւ Թուրքաց անցանէին ընդ լեառնակողմն և ըմբռնեցին զայր ոմն և տեղեկացան ի նմանէ, թէ ոչ ոք է ի քաղաքին. ապա եկեալ արանց իբրև երեսնից՝ մտին և այրեցին զքաղաքն Քհսուն և զդրունս քաղաքին. և զբարձրայարկ ապարանսն, զոր շինեալ էր մեծ իշխանն Հայոց Գող Վասիլն, և զայլ շէնս, զոր բարձրագոյն տեսին, և ինքեանք գնացին փախստական և հասին այլոց ընկերաց իւրեանց։ Իսկ մարդիկք քաղաքին դարձան ի միւս օրն իւրաքանչիւր ի տունս իւրեանց։

Ի թուին Հայոց ՇՁԹ ոմն զօրական յազգէ Սիրիմահէ խէթ կալեալ ի սրտի իւրում, որում անուն էր Սիմոն, գողացաւ զԱնթափ ի կոմսէն Ուռհայոյ և կալեալ ընդ ձեռամբ ամ մի և ապա՝ միջնորդութեամբ բրնձին Անտիոքու՝ դարձոյց զԱնթափ ի կոմսն։

Իսկ ի թուականութեանս Հայոց ՇՂԱ երեկ թագաւորն Յունաց Պետպետոժէն և ջանաց, որ գնով առնոյր զԱնտիոք ի բրնձէն Անտիոքու. և ապա էառ ի նմանէ զանձ և դիպակ և լուր մտաւ ի քաղաքն։

Ի թուականութեանս Հայոց ՇՂԲ փոխեցաւ ի կենցաղոյս թագաւորն Յունաց Պետպետոժէն որդի Ալէքսին ի Զատիկն, ի մուտն Ապրիլի ամսոյ, և զորդին իւր Հաստատեաց յաթոռ իւրոյ թագաւորութեանն զԿիւս-Մանէլն։ Եւ յայսմ ամի փոխեցաւ թագաւորն Երուսաղէմայ. և մեծ զարմանք են մահս այս երկուց թագաւորացս Փռանգաց և Յունաց. զի Յունացն մեռանէր յորսն, և խողն վայրի լեալ պատճառ մահու նորա, և Փռանգ թագաւորին ի նմին ամի յորսի Հանդիպեալ՝ և նապաստակն եղև նմա առիթ մահուան. և նստոյց զորդին իւր յաթոռ իւր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, որ ասէր Պաղտին։ Ի նոյն ամի և Մահմատ Մելէքն որդին Ամիր-Խազէի մեռանէր։ Եւ յայսմ ամի նշան երևեցաւ յերկինս ի կողմն հիւսիսոյ, իբրև սիւն լուսոյ, յաւագ հինգշաբաթւոջ աւուրն, և ութ օր միապէս երևեցաւ. և զկնի այդ երեք թագաւորքդ փոխեցան։ Եւ ի տարեսլատն Դեկտեմբերի ամսոյ քսան և երեք օրն՝ և օրն երեքշաբթի՝ ի ծոնի սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, առաւ Ուռհա սրով ի Զանգէ, որ էր որդի Աղ-Սնգուրին. և կոտորեցին յանխնայ զբազումս վասն հաւատոցն, որ ի Քրիստոս, զոր պսակեսցէ զնոսա Քրիս-

կրակի չտա մեր քաղաքը, ինչ որ սակայն տեղի ունեցավ։ Երբ հունաց կայսրը վերադարձավ Կոստանդնուպոլիս, Տավութի որդին, որ Խարա-Սալան[8] էր կոչվում, բազմաթիվ զորքերով վերադարձավ Տաճկաստանից և կայսրից հալածական եղածի կերպարանքով եկավ Ռապան քաղաքը։ Քեսուն քաղաքում գտնվող սղամարդիկ, կարծելով, որ Մելիք Մահմատն է նա, սարսափած, երեկոյան լքեցին քաղաքը։ Հաջորդ առավոտյան փոքրաթիվ թուրքեր, գալով լեռնակողմը, մի տեղացու բռնեցին և նրանից իմացան, որ քաղաքում մարդ չի մնացել։ Դրա վրա երեսուն հոգի եկան մտան Քեսուն քաղաքը, կրակի տվեցին այն, ինչպես և քաղաքի դռները։ Նրանք հրդեհեցին նաև հայոց մեծ իշխան Գող Վասիլի կառուցած բարձրահարկ ապարանքները և քաղաքի այլ հոյակապ շենքերը, որից հետո փախան, հասան ու միացան իրենց մյուս ընկերներին։ Քաղաքի բնակիչները հաջորդ օրը վերադարձան իրենց տները։

Հայոց 589 թվականին [15 փետրվար 1140—14 փետրվար 1141 թ.] սիր Մահիի տոհմից[4] մի սպա, որի անունը Սիմոն էր, Ուռհայի կոմսի ձեռքից նենգությամբ խլեց Այնթափը, մեկ տարի պահեց և Անտիոքի պրինցի միջամտությամբ միայն կրկին վերադարձրեց այն կոմսին։

Հայոց 591 թվականին [14 փետրվար 1142—13 փետրվար 1143 թ.] Հունաց Պերփերույեն կայսրը եկավ և ջանաց Անտիոքի պրինցից գնել Անտիոքը։ [Կայսրից] ստանալով դրամ և դիպակներ, [պրինցը] թույլատրեց նրան քաղաք մտնել։

Հայոց 592 թվականի [14 փետրվար 1143—13 փետրվար 1144 թ.] ապրիլի սկզբին, կատկի օրը, վախճանվեց Հունաց կայսր Պերփերույենը. նա թագավորական գահը թողեց իր որդուն՝ Կյուր Մանվելին[5]։ Նույն տարին վախճանվեց և Երուսաղեմի թագավորը[6]։ Ֆրանկների և հույների այս երկու թագավորների մահը շատ հետաքրքիր պայմաններում տեղի ունեցավ. Հունաց կայսրն սպանվեց որսի ժամանակ. նրա մահվան պատճառը վարազն էր, իսկ ֆրանկների թագավորն էլ նույն տարին նույնպես որսի ժամանակ [սպանվեց]. նրա մահվան պատճառն էլ նապաստակը դարձավ. նա իր Երուսաղեմ սուրբ քաղաքի գահը թողեց որդուն, որ Պաղտին էր կոչվում[7]։ Նույն տարին վախճանվեց նաև Մելիք Մահմատը՝ Ամիր Խազիի որդին։ Այդ տարին, ավագ հինգշաբթի օրը, երկնքի հյուսիսային կողմում լուսեղեն սյան նմանվող մի նշան երևաց և այդպես անփոփոխ մնաց ութ օր։ Դրանից հետո ահա երեք թագավոր վախճանվեց։ Տարեվերջին՝ դեկտեմբեր ամսի քսաներեքին, երեքշաբթի օրը, սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, Ջանգին, որ Աղ-Սնգուրի որդին էր, զենքի ուժով գրավեց Ուռհան։ [Այլազգիները] բազում մարդկանց անխնա կոտորեցին՝ Քրիստոսին հավատալու համար. Թող Քրիս-

տոս ընդ սուրբսն իւր, ամէն։

Իսկ ի վերանալ թուականութեանս Հայոց ՇՂԳ ի տէրութեանն Անտիոքու որդւոյ Պետեւինին, որ ի տիս մանկութեան, հսկայազօր և ուժեղ, այլ ոչ խելացի յիմաստասիրութեանն իշխանութեանն Պաղտոյնին, որ էր տէր Քեսնոյ և Մարաշայ և գաւառաց նոցա՝ ի սինօդէն Մելտենւոյ մինչև ի դուռն Անտիոքու, որ էր տղայ տիօք և ծեր մտօք, աստուածահաճոյ յամենայն ի գործս արութեան, ի կոմսութեանն Ճօսլնին՝ փոքու որդւոյ մեծի քաջ զօրականին Ճօսլնին, ի հայրապետութեանն Տեառն Գրիգորիսի Հայոց վերադիտողի տանն Թորգոմայ՝ յաւուրս սորա և յառաջասացեալ ի թուաբերութեան, ի տօնի սրբոյ Նախավկային Ստեփաննոսի, անտես եղեալ քաղաքն Ուռհա ի քաղցր կամաց Արարչին, որ և առաւ բռնութեամբ յորդւոցն Հապարու, որոյ անուն գլխաւորին Զանգի յորջորջէր, որ բազում և անխնայ արիւն ետ հեղուլ, ոչ խնայելով ի պատուական ծերսն և ոչ ողորմելով գառնանման անմեղ տղայոցն. որ և յահէ սրոյն զարհուրեալ քաղաքացեացն՝ փախստեամբ դիմեալ յապաւէնն իւրեանց, զոր կլայ Մանիակայ ասէին. ոչ եղբայր զեղբայր հոգայր և ոչ այր զորդի, ոչ գթասէր մայր ի դուստր իւր և ոչ մերձաւոր բարեկամ առ սիրելիս իւր նայելով, յաղագս ծանր և դառն լուսոյն այնորիկ ոչ ժամանել փախուցելոցն մտանել յամուրն իւրեանց. խնդամահ եղեալ ի դուռն ամրոցին մեռան ոգիք իբրև երկու հազարք, որ և պապիսոն Փռանգաց հեղձաւ յամբոխամիջի անդ։ Զայսոսիկ տեսեալ բռնաւորին՝ զղջացաւ ի միտս իւր և հրամայեաց վերացուցանել զսուրն, որ անխնայ և անողորմ կոտորէին զմարդիկն ի փողոցամիջի անդ իբրև զանասունս։ Եւ զաղդն Փռանդաց, զորս ըմբռնեցին, հրամայեաց առաջի իւր սրախողխող առնել և զկին և զորդիս ի գերութիւն վարել. և որ փախուցեալ քրիստոնեայքն էին, որք ժամանեցին մտանել յամրոցն, ոչ բաւեցին աւուրս բազումս, քանզի չուր ոչ ունէին. առին և զայն ևս սիրով և երդմամբ։ Եւ ամբարտաւանն այն կամեցաւ խաղաղացուցանել զքաղաքն, հրամայեաց քարոզել մի՛ ամենևին այլ դժուար առնել քրիստոնէից, քանզի յագեցան ամենեքեան արեամբ և դանձիւ. դարձեալ խրոխտացաւ ի միտս իւր՝ որպէս և կատարեաց զյաղթութիւնն մեծ, զոր ի բազում ժամանակաց ոչ ոք ի մեծամեծաց և ի վեհագունից կարող եղև տիրել բռնութեամբ քաղաքին օրհնելոյ ի Տեառնէ, զոր անսուտ բերանովն հրամայեաց ի մարդեղութեանն իւրում՝ զոր գրեաց ի թղթին իւրում առ Աբգար թագաւորն. թէ «Սով և սուր ոչ մտցէ ի քաղաքս քո, եթէ կայցեն ի հրաման պատուիրանի իմոյ». զոր և մոռացեալ նոցա յետ ժամանակաց զպատուէր Արարչին՝ նմանեալ Իսրա-

տոսն իր սրբերի հետ միասին նրանց էլ պսակավորի, ամեն։

Ահա, հայոց 593 թվականի [14 փետրվար 1144—12 փետրվար 1145 թ.] սկզբին Անտիոքի վրա Պետևինի որդու[8] իշխանության ժամանակ (նա թեև երիտասարդ էր, բայց ուներ հսկայի ուժ և կորով, բայց խոհեմությամբ զիջում էր իշխան Պաղտինին՝ տիրոջը Քեսունի և Մարաշի ու նրանց գավառների՝ Մելիտենեի սահմանից սկսած մինչև Անտիոքի դուռը, որ թեև երիտասարդ էր, բայց խելքով տարեց և աստվածահաճո սխրանքներ գործող մարդ), մեծ և քաջ զորական Ճոսլինի կրտսեր որդու՝ Ճոսլինի կոմսության օրոք, Թորգոմի տան՝ հայոց կաթողիկոս տեր Գրիգորիսի հայրապետության օրոք, վերևում նշված թվականին, սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, Արարշի աչքից ընկած Ուռհա քաղաքը բռնի ուժով գրավվեց Հագարի որդիների կողմից, որոնց պարագլուխը Զանգի էր կոչվում։ Նա անգթորեն բազում արյուն հեղել ուներ, չխնայեց հարգարժան ծերունիներին, չխղճաց գառնանման երեխաներին։ Քաղաքացիները սրից սարսափահար փախան դեպի իրենց ապաստարանը, որ Մանիակի բերդ էին կոչում։ Ո՛չ եղբայրը եղբոր մասին էր հոգում, ո՛չ հայրը որդու, ո՛չ գթասեր մայրը՝ իր դստեր, մերձավոր բարեկամը ուշադրություն չէր դարձնում իր սիրելիների վրա։ Բայց այդ ծանր և դառն օրը փախստականներին չհաջողվեց մուտք գործել իրենց բերդը. ամրոցի դռան առջև մոտ երկու հազար հոգի խեղդամահ եղան։ Ամբոխի մեջ խեղդամահ եղավ նաև ֆրանկների պապիսը։ Բռնակալը, տեսնելով դա, զղջաց և հրամայեց վերջ տալ ճամփամիջում մարդկանց անասունների նման անխնա և անգութ կոտորելուն։ Նա հրամայեց գերի ընկած ֆրանկներին իր առջև սրախողխող անել, իսկ նրանց կանանց և երեխաներին՝ քշել գերության։ Այն քրիստոնյաները, ովքեր փախուստի դիմելով կարողացել էին ամրոց մտնել, երկար չդիմացան, քանզի ջուր չունեին։ Ահա այդ [ամրոցն էլ] գրավեցին առանց կռվի՝ կյանքի ապահովության մասին երդում տալով։ Այդ ամբարտավանը, կամենալով խաղաղեցնել քաղաքը, կարգադրեց այլևս քրիստոնյաներին վատություն չանել, քանզի բոլորն էլ արդեն հագուրդ էին ստացել և՛ արյամբ, և՛ գանձով։ Նրա գոռոզանալու պատճառը ձեռք բերած մեծ հաղթանակն էր, անվանի, հռչակավոր մարդկանց երկար ժամանակ չհաջողվածը՝ գլուխ բերելը, այն է՝ զենքի ուժով Տիրոջ կողմից օրհնվածՙ [Ուռհա] քաղաքի առումը, Տիրոջ, որ իր մարդեղության ժամանակ Աբգար Թագավորին գրավոր հայտնեց, թե «Քո քաղաքը մուտք չի գործի ո՛չ սով և ո՛չ սուր՝ եթե [բնակիչները] պահպանեն իմ պատվիրանները»։ Բայց [բնակիչները] ժամանակի ընթացքում իսրայելացիների նման մոռացան Արարչի պատվիրանը, իսրայելացիների, ովքեր չնայած

յէլացւոցն, յետ բաղում երախտեացն, զորս ընդունէին յԱստուծոյ, դարձեալ մոռանային փութանակի զաստուածատուր և զանջան բարիսն, զսոխն և զսխտորն Եգիպտոսի և զդառն ծառայութիւնն յոգւոց հանելով յիշէին, մինչև զանբարկանալին Աստուած ի ցասումն սրտմտութեան բորբոքէին՝ ոչ տալ տեսանել նոցա զերկիրն խոստացեալ. նոյնպէս և քաղաքացիքս այս մոռացեալ զխոստումն Աստուծոյ գործէին զանարժանս հակառակ կամաց ողորմածին Քրիստոսի, որ և զփոխարէնն առին ըստ անիմաստ մտաց իւրեանց։

Յետ այսորիկ արիւնահեղն այն Զանգի զօրաժողով արարեալ եկն ի խլաթ-Ճապար և ի նեղ արկեալ զոր ի ներքս էին. և ի կրտէն իւրմէ սպանեալ եղև ի դիշերի յետ ամի միոյ, ոչ արժանի եղև վայելել ի մեծ անուն. և յանփոխան քաղաքն Ուռհա, որ եղև առումն նորա յաւուրս փոքր Ճօսլինն, որ մինչ տակաւին ի կամս Աստուծոյ էր՝ մեծ և յաղթող էր ի վերայ ատելեացն Քրիստոսի, որպէս զհայրն իւր, որ յաւուրս իշխանութեան իւրում փառաւորեցաւ յԱստուծոյ և ոչ ի մարդկանէ և ոչ ետ խրամ հատանել յազգս քրիստոնէից։

Դարձեալ յետ երկրորդ ամաց անցանելոց Ճօսլինն, որ էր քաղաքին Ուռհայոյ կոմսն Փռանգաց, զօրաժողով արարեալ առեալ ընդ իւր զմեծ իշխանն ղՊաղտոյնն, որ էր տէր երկուց աշխարհաց Գերմանիկեցւոց և Քսսունի, և եկեալ ի քաղաքն Ուռհա՝ հնարիւք ի դիշերի գողացան զքաղաքն. զի թէպէտ և յաջողեցաւ գործն և ոչ գլուխ ի բարին, քանզի ժողովեալ աստուածամարտքն յետ հինգ աւուր առին բռնութեամբ. և բաղում քաջութիւն ցուցեալ մեծ և յաղթող զօրականն Քրիստոսի Պաղտոյնն՝ անկաւ ի պատերազմի և սուգ մեծ թողեալ իւրոյ աշխարհի, զի առաւել սիրէր զազգն Հայոց քան զՓռանգաց։ Ի սոյն ժամանակս ի չորս բաժանեցաւ կաթուղիկոսութիւնն. Տէր Վահրամն և Տէր Գրիգոր յԵգիպտոս, Տէր Բարսեղն յԱնի, Տէր Պօղոս հայրն Վարագայ ի Մարաշ, Տէր Թորոսն ի Հենի. աթոռն սրբոյն Գրիգորի ի յԱնի ի չորս բաժանեցաւ, զոր և սուրբ և երջանիկ վարդապետն Բարսեղ, որ էր հայր խոստովանութեան Պաղտոյնին, աստուածաշնորհ և բանական յոյժ, երկիւղած յԱստուծոյ և առաքինի ի պահս և յաղօթս, հմուտ հին և նոր Կտակարանացն Աստուծոյ, բարեխօս և օգնական ամենայն զրկելոց, զայս ողբերգական բանք գրեաց վասն մահու նորա առ ի խրատ ամենայն ընթերցողաց՝ յիշատակ յազգաց յազգս։

«Բարսեղ նուաստ ծառայ դրեմ մեծակական ողբօք և բազմահառաչ արտասուօք համօրէն հաւատացելոց Քրիստոսի, մանաւանդ մերձակայից մերոց՝ Քեսնոյ, Պհեսնոյ, Ռապնայ, Գերմանիկոյ և որք ընդ սոքօք գեղք և աւանք և կրօնաստանք իցեն յիւրաքանչիւր ազգս և լե-

վայելեցին աստծո բազում լավութիւնները, այնուամենայնիվ, շուտով մոռացան նրա պարգևած՝ առանց քրտինք թափելու իրենց ձեռք բերած բարիքները. նրանք եգիպտոսի սոխն ու սխտորը փնտրեցին[9], դառն ստրկութիւնը, մինչև որ անբարկանալի աստծո ցասումը բորբոքեցին, և նա թույլ չտվեց նրանց տեսնել երկիրն ավետյաց: Ահա և այս քաղաքացիները, մոռանալով աստծո պատվիրանը, գթացող Քրիստոսի կամքին հակառակ, անպատշաճ արարքներ էին գործում, որի փոխհատուցումն էլ, ահա, իրենց անխելքութիւնամբ ստացան:

Դրանից հետո արյունարբու Զանգին զորահավաք անելով եկավ Խլաթ-Ճապար[10], նեղը գցեց ներսում եղածներին: [Ուռհայի առումից] մեկի տարի անց, գիշեր ժամանակ, նա սպանվեց իր ներքինու ձեռքով, չարժանանալով տիրանալու մեծ հռչակի: Աննման Ուռհա քաղաքը գրավվեց կրտսեր Ճոսլինի օրոք, որը քանի աստծո կամքով էր շարժվում, իր հոր նման հզոր էր և քրիստոսատյացներին հաղթող. [հայր Ճոսլինը] դեռ իր իշխանութիւնն օրոք հենց աստծուց փառավորվեց և ոչ թե մարդկանցից, նա չթողեց, որ քրիստոնյաներին սրի քաշեն:

Երկու տարի անց Ուռհա քաղաքի ֆրանկ կոմս Ճոսլինը զորահավաք անելով և իր հետ վերցնելով մեծ իշխան Պաղտուինին, որը երկու գավառների՝ Դերմանիկիայի և Քեսունի տերն էր, եկավ Ուռհա քաղաքը և խորամանկութեամբ, գիշեր ժամանակ, տիրացավ քաղաքին: Դործը թեև հաջողվեց, բայց բարի վախճան չունեցավ, որովհետև աստվածամարտները, հավաքվելով, հինգ օր հետո բռնի ուժով վերագրավեցին [քաղաքը]: Քրիստոսի մեծ և հաղթող զինվոր Պաղտուինը, բազում սխրանքներ գործելով, ընկավ մարտում, իր գավառի բնակչութեան մեջ մեծ սուգ տարածելով. նա ավելի շատ հայերին էր սիրում, քան ֆրանկներին[11]: Սուրբ և երջանկահիշատակ Բարսեղ վարդապետը, որ Պաղտուինի խոստովանահայրն էր, աստծո շնորհքով օժտված, անշափ խոհեմ, աստվածապահ, պահեցող և աղոթող մի մարդ, Հին և Նոր Կտակարաններին քաջագիտակ, բոլոր զրկյալների բարեխոս և օգնական [Պաղտուինի] մահվան առթիվ՝ ի սաստումն բոլոր ընթերցողների և ի հիշատակ ապագա սերունդների, հետևյալ դամբանականը գրեց.

«Ես՝ նվաստ ծառա Բարսեղս, բարձրաձայն ողբով և բազմահառաչ արտասուքներով գրում եմ Քրիստոսի բոլոր հավատացյալներին, մանավանդ մեր հարևաններին՝ Քեսունի, Պհեսնիի, Ռապանի, Դերմանիկիայի և նրանց շուրջ եղած գյուղերի, ավանների, վանքերի բնակիչնե-

զուս, վասն անգիւտ կորուսելոյ իշխանին և անտէր մեռանելոյն Պաղտոյին, զոր առակ նշաւակի և ցոյց խրատու արար զնա Ամենաղօր Արարիչն Աստուած ամենայն տիեզերաց, մանաւանդ անղեղջ, սէգ և անիրաւ իշխանաց զօրաց Հռովմայեցւոց, յայտ առնելով ամենեցուն՝ եթէ ակնարկելոյ կամաց Արարչին սպասեալ մնան տարերք և արարածք ամենայն. որ և խեթիւ հայեսցին, ոչ տանեն զնոսա տիեզերք ամենայն. զի ծով աղաղակէ, թէ ոչ է աստ, և երկիր գոչէ, թէ ոչ ծածկեցաւ ընդ հողով ի ծոց իմ, օդ և ջուր վկայեն հրային մասամբն, եթէ ոչ մեք համարձակեցաք բառնալ կամ յայտնել ումեք զառ ի խրատ պատուհասեօք թագուցեալն յԱստուծոյ. մահ և գերեզմանք բողոքեն, թէ մեք ոչ ըմբռնեցաք և ոչ տեսաք իջեալ ի կարգս մեռելոց. և ի մէջ կենդանեաց ոչ ուրեք երևի. ըստ որում սիրելին իմ իշխան, հէքն այն մանուկ, խիզախն ի մարտի, յաղթողն և քաջասիրտն ի պատերազմունս բարբարոսաց, մեծազօր ըմբիշն և անթաքչելի սպառազէնն զօրականն քրիստոնէից, սիրեցեալ անուն իմ Պաղտին, ո՞ր ձեռք անփոփեցին զհատաւոյեղց պնդութիւն կարծեցելոյ ձեռաց հզօրին կամ ո՞ր բազուկ տկար խոնարհեցոյց զանվանելի բազուկս անուանի քաջին կամ ո՞ր առն ի զօրականաց ի թլփատելոցն՝ զօրութիւն զօրեաց խորտակել, իջուցանել յերկիր ղյաղթանդամն զայն, զբուռն ոսկերօք, զբարձրահասակ, զսկայաչօրն մարմին. և ո՞ր կատաղեցելոյ գաղանի սիրտ ոչ խանդաղատեցաւ զեղեցկութեամբ նորա, և ոչ ամաչեաց պատկառելով ի դիմաց նորա և ոչ ողորմեցաւ մանկական տիոց վայելչութեան նորա, խնայելով ի հասակ տղայութեան նորա. և հի՞մ ոչ ձայնեաց նմա զո՞վ ոք իցեսն դու կամ ուստի՞ հարցանելով զբան, թերևս մեղկեալ զիջանէր կատաղութիւն գաղանութեան ընդ համեստ, հանճարեղ և ընդ իմաստուն պատասխանիսն նորա: Անսայթաքելի լեզուաւ ի բարբառ հայերէն և զառ ի բազմաց ծանուցեալն յիմաստութիւն ի զօրութիւն և ի հասակ, ի տեսակ և ի քաջամարտիկ յաղթութեան և յամենայն կիրս անցաւոր կենցաղոյս, ուստի ճանաչի մեծանձնութիւն գովութեան իշխանացն. յաւելորդ վարկանեմ երկայնել զբանս, զի մի՛ ստգտանիցիմք ի պարսաւադէտ առողաց նորա, այլ աւ՛ղ ասեմ անբախտ կորստեան նորա և անյաջողակ ճանապարհին, զոր բազում անգամ զեկուցաք ոչ գնալ զանդաոնալի ղճանապարհն զայն, և ոչ անսաց բանից մերոց, զորոյ առեալ և զփորձ. զի ոչ այլ ինչ պարապէաք խօսել ընդ նմա, բայց զօգտակարն անձին նորա և զփրկութիւն և զխնայումն տառապելոց քրիստո-

րին, ինչ ազգին էլ պատկանելիս լինեն, ինչ լեզվով էլ խոսելիս լինեն, իշխան Պաղտուինի անհայտ կորստյան և անտերունչ վախճանի մասին, որին ամենազոր արարիչ աստվածը համայն տիեզերքի համար, մանավանդ հռոմայեցիների անգութ, ամբարտավան և անիրավ զորահրամանատարների համար նշավակման և խրատման օրինակ դարձրեց, բոլորին ցույց տալով, որ բնության բոլոր տարրերը և արարածները արարչի կամքին են ենթակա, և որ եթե մարդիկ նույնիսկ մի փոքր խելք նայեն, բնության բոլոր տարրերը կմերժեն նրանց: Ծովն աղաղակում է, թե այստեղ չէ նա, երկիրը գոչում է, թե նա իմ ծոցում չծածկվեց հողով, օդն ու ջուրը [իրենց] հրային հատկություններով ասում են, թե մենք չենք համարձակվել ոչնչացնել նրան, չենք համարձակվել որևէ մեկին հայտնի դարձնել նրա գոյությունը, նրա, որին աստված թաքցրեց՝ պատուհասեց խրատելու նպատակով: Մահն ու գերեզմանները աղաղակում են, թե մենք չենք բռնել նրան, չենք տեսել մեռելների մոտ իջնելիս, նա կենդանի մարդկանց մեջ էլ չկա: Իմ սիրելի իշխան, տարաբախտիկ երիտասարդ, մարտում քաջ, բարբարոսների դեմ մղվող պատերազմներում հաղթող, քաջասիրտ, քրիստոնյաների հզոր մարտիկ և խիզախ զորահրամանատար, ինձ համար սիրելի Պաղտուին անուն. ո՞ր ձեռքը խորտակեց հզորի ամրակուռությունը, ո՞ր տկար բազուկը խոնարհեցրեց անվանի քաջի անխոցելի բազուկը, թլփատվածների ո՞ր զինվորը ունեցավ այնքան զորություն, որ խորտակի, գետին տապալի այդ դյուցազնին, ամուր ոսկորներով, բարձրահասակ, հսկա մարմնի տեր մարդուն: Այդ ո՞ր կատաղած գազանի սիրտն էր, որ չափսոսաց նրա սիրունությունը, չպատկառեց նրա տեսքից, չխղճաց նրա երիտասարդական գեղեցկությունը և չխնայեց նրա մատաղ հասակը: Նա ինչո՞ւ չհարցրեց նրան, թե ո՞վ ես դու, կամ որտեղի՞ց, գուցե լսելով նրա հեզ, խոհեմ և իմաստուն, անթերի հայերենով տված պատասխանը, մեղմանար, իջներ այդ գազանի կատաղությունը: Նրա՝ շատերին հայտնի իմաստության և կորովի, հասակի և գեղեցկության, նրա քաջամարտիկ և հաղթող լինելու մասին, այս անցողիկ կյանքում նրա կրածի մասին, ինչից մարդիկ իմանում են իշխանների վեհության մասին, ես ավելորդ եմ գտնում այստեղ խոսել, որպեսզի նրան ալարասավոր և ատող մարդիկ ինձ կեղծարար չհամարեն: Ես միայն ափսոս եմ ասում այդ մարդու տարաբախտ կորստյան համար, բռնած ձախողակ ճանապարհի համար. ես բազմիցս խրատեցի նրան՝ չընթանալ այդ անդարձ ճանապարհով, բայց նա չլսեց իմ խոսքը, դրա համար էլ ահա փորձանքի հանդիպեց: Ես նրան այլ բանի մասին չէի խոսում, այլ միայն նրա անձին օգուտ բերողի, տառապյալ քրիստոնյաների փրկության մասին, նր-

նէից, որում անլուր գտաւ յայսմ ամի միայն. ուստի և մեք իսկ զուշակեցաք զկորուստ նորա առաջի նորա բաղում անգամ. թէպէտ և ցա՛ւ էր մեզ և դժուարին էր զայն ասել նմա, զոր այլ ոք ոչ իշխէր, սակայն հնարէաք զայն, զի թերևս զարհուրեալ երկիցէ և փոխեսցի յայնց բարուց ի խոնարհութիւն ողորմութեան և յանոխակալութիւն քաղցրութեան զի ոչ անգիտանայ զայն, թէ անողորմ դատաստան լինելոց է յԱրդար Դատաւորէն Աստուծոյ ամենայն անողորմ սրտից ի յաստ և ի հանդերձելումն. և ամբարտաւանից հակառակ մարդ ոչ է կամ հրեշտակ յերկնաւորաց, այլ Աստուած ինքնին գլխովին, Որ տէրն է հրեշտակաց և մարդկան. զի այլ յանցանք մանրինացս բնութեամբ ընդ մեղաւորս դատեն զմարդիկք և ընդ սօքօք ածեն ի դատաստան, ցորս է բաղում անգամ ընդունել ողորմութիւն ի Տեառնէ, Որ սիրողն է մեղաւորաց և վասն մեղաւորաց խոնարհեցոյց զերկինս և եկն ի խնդիր կորուսեալ պատկերին, մոլորեալ ոչխարին, դարձուցել զմեղաւորն յապաշխարութիւն: Իսկ հպարտութեամբ ամբարտաւանութեան և սպառումն կործրութեան խստութեան սրտի և անողորմութիւն զրկանօք հանդերձ սատանայի են յանցանք և զորս ըմբռնեն ի հողեղինացս աստի՝ դևս ի մարդկանէ գործեն. և դատաստան ընդ սատանայի և ընդ դիւաց նորա ընդունելոց են ի սոսկալի աւուր յանաչառ և յարդար դատաստանին Աստուծոյ. այլ և ոչ աստէն ներէ այնպիսի խստացելոցն Արդարադատն Աստուած, մանաւանդ զարժանաւորսն բժշկութեան, որք ըստ մասին և ի պատճառէ և փոքր ժամանակաւ և ապաշաւանօք ունիցին զսատանայական զայս չարիս յանձին, որք տաղտկան աստէն և խոստովանութեամբ խայտառակեն և հնարեն զերծանիլ ի դիւական մեղաց աստի ի դէպ ժամանակի. բայց զի ոչ փութան և ոչ շտապով ի բաց ընկենուն, այլ օր ըստ օրէ ի նոյն յաւելուն աճեցուցանել զմեղսն և ժամէ ի ժամ և տարւոյ ի տարի անցուցանեն յապաղանօք խաբել կարծելով զանխաբելին Աստուած, որոց ոչ ներէ Արարիչն, այլ նախ խրատէ պատուհասիւք՝ արկանելով միանգամ և երկիցս, և իցէ որոց բազում անգամ և երկիցս, և իցէ որոց բազում անգամ, և ապա որք յաւելուն ի խստութիւն սրտից իւրեանց ընդդէմ խրատուն, կորուսանէ իսպառ և բառնայ ի կենաց աստի՝ զի մի՛ աճեցեալ բազմացի չարն ի կորուստ նորին և բազմաց. և վասն նոցին իրաց վկայութիւնք լի են յամենայն աստուածային դիրս, ի հին և ի նոր Կտակարանս, որք կամիցին ուսանել: Յայտնի է ղղջացելոցն և իսպառ կորուսելոցն օրինակ, զորս տա-

րանց խնայելու մասին, բայց նա ամենևին ուշադրություն չդարձրեց։ Ի՛րա վրա է, որ ես հենց նրան անձնապես կանխագուշակեցի իր կորուստը, թեև ինձ համար ծանր էր և դժվար այդ բանն իրեն ասել (ոչ ոք չէր համարձակվի այդ բանն անել), բայց և այնպես ասում էի, որպեսզի միգուցե, վախից դրդված, փոխվի, դառնա գթացող ու խոնարհ, հեզ ու անոխակալ, իմանա, որ աստծո՝ արդար դատավորի անողորմ դատաստանը կա՝ բոլոր անգութ սրտերի համար և այս, և հանդերձյալ աշխարհում, որ ամբարտավաններին հակառակ է ոչ թե մարդը կամ երկնային հրեշտակը, այլ հենց ինքն աստված, որ տերն է հրեշտակների և մարդկանց։ Մահկանացուներիս գործած այլ հանցանքները թեև դասում են մեզ մեղավորների շարքը և դատաստանի արժանացնում, բայց Տերը, որ սիրող է մեղավորների, բազմիցս ցույց է տալիս իր ողորմածությունը։ Հենց մեղավորների համար նա իջավ երկնքից և եկավ կորած պատկերը[12], մոլորյալ ոչխարը գտնելու, մեղավորին ղեկման բերելու։ Մեծամտությունը, սակայն, և ամբարտավանությունը, ապառաժի նման կարծր սիրտ ունենալը, անգութ և զրկող լինելը սատանայական հանցանքներ են, որ, հափշտակելով մահկանացուներիս, մարդկանց դևերի են վերածում։ Նրանք սատանայի և նրա դևերի հետ միասին [դատաստանի] սոսկալի օրը աստծո անաչառ և արդար պատժին են արժանանալու։ Արդարադատ աստվածը այս աշխարհում ևս չի ներում նման հանդուգն մարդկանց, ընդհակառակը, նա բժշկում է նրանց, ովքեր արժանի են բուժվելու, նրանց, ովքեր մասամբ, որևէ պատճառով, կարճ ժամանակով են ձեռք բերել սատանայական այդ ախտը, ովքեր զղջում են դրա համար, ովքեր հարմար դեպքում գարշում են դիվական այդ ախտից, խոստովանում և նշավակում այն և աշխատում ազատվել դրանից։ Բայց ովքեր չեն ջանում, չեն շտապում թոթափել այն, ընդհակառակը, օրեցօր խրվում են այդ ախտի մեջ և, ժամ առ ժամ կամ տարեցտարի ձգձգելով, կարծում են, թե կկարողանան խաբել չխաբվող աստծուն, ահա նրանց է, որ չի ներում աստված. սկզբում նա խրատում է՝ պատուհասելով մեկ անգամ, երկու անգամ, բազում անգամ, բայց երբ նրանք հակառակ խրատներին ավելի քարսիրտ են դառնում, ահա նրանց իսպառ կործանում է, հեռացնում այս կյանքից, որպեսզի չարիքը չաճի, չբազմանա, չդառնա կործանման պատճառ և՛ իր, և՛ շատերի համար։ Ով ուզում է այդ մասին իմանալ, ապա բոլոր աստվածային գրքերում՝ Հին և Նոր Կտակարաններում, լի են ուսանելի վկայություններ։ Հայտնի են զղջացածների կամ իսպառ կործանվածների օրինակները, որոնք անտեղի և ավելորդ համարեցինք գրի առնել։ Ես ուզում եմ պատմել կորուստը և հրապարակով գուժել,

բադէպ և աւելորդ համարեցաք արկանել ընդ գրով. քանզի զիմոյ զանխրատ ոգւոյն, զանտէր մեռելոյն, զանգալի և զանգնելի գերւոյն, զանդիւտ կորուսելոյն, զվայելուչ մանկանն, դյաղթող և զօրաւոր քաջին, զհանճարեղ, զիմաստուն և զխելօք իշխանին զկարճօրացն կենացն, զնազելի և զգեղեցիկ և զնմանաւոր անուանն զսիրելի Պաղտոյնին ախորժեմ ի պատմել զկորուստն և հրապարակագոյժ առնել խոստովանութեամբ զյանցումն, ոչ զի խայտառակեսցի, այլ զի կատարելապէս թողութիւն ընկալցի յԱստուծոյ, գիտելով զայս՝ զի որքան ծածկեալ թագուցանեմք աստ զյանցանս մեր և զգաղտնիս ամօթոյ վասն ամաչելոյ ի մարդկանէ՝ անդ հրապարակեալ խայտառակեն այնպիսիքն առաջի հրեշտակաց և մարդկան, արդարոց և մեղաւորաց, որք յԱդամայ մինչև ցայսօր յարուցեալ կան սարսափելի ահիւ և զարհուրեալ դիմօք, կորացեալ գլխօք, դողալով առաջի ահաւոր և սոսկալի բեմին և հրապարակաժողով աւետին և առաջի Հօրն բոլորեցունց և Միածնի նորա Բանին և Հոգւոյն Սրբոյ Նորոգողին զարարածս. ուր ոչ բան և ոչ գործ և ոչ մի մտածութիւն խորհրդոց թագուցեալ ծածկեսցի ի յամենատես գիտութենէ Արարչին մերոյ. այն է եղկելի և արտասուաց արժանի և յաւիտենից ամօթ անբժշկելի, քանզի և գրաւ լինել սոսկալի և ահաւոր դատաստանին, այնու ամօթով ըմբռնեալ մեղաւորացն ոգիք կան և մնան յամաչանս խայտառակութեան մինչև յանեղր և յանսպառ և յանբաւ յաւիտեանսն՝ ըստ բանի հրեշտակապետին մեծի, զոր՝ յորժամ խօսէր ընդ Դանիէլի մարգարէին, յայտնի արար յասելն իւրում այսպէս. «Յարիցեն ոմանք ի կենանս և ոմանք յամօթն յաւիտենից»։

Իսկ որքան աստ խայտառակեալ հրապարակեմք խոստովանութեամբ առանց ամօթոյ և կեղծաւորութեամբ թագուցանելոյ և պատճառանօք զամօթ բժշկելոյ, որ է ճշմարիտ և կատարեալ խոստովանութիւն և հաւասար սրբոյ աւազանին, շնորհէ մեզ Թողութիւն մեղաց, և թէ արժանաւորապէս ապաշխարիցեմք, անդ ամենևին անյայտեալ կորնչին ի մէնջ, ջնջին մաքրին և ոչ ևս ուրեք գտանին ամենայն յանցանքն, քանզի անտես առնէ, ներէ և Թողու զամենայն Անոխակալն և Ողորմածն Աստուած, որք իմաստութեամբ ըստ այսմ օրինակի կամաւորապէս խոստովանին զմեղս իւրեանց յայսմ աշխարհի։

Արդ զայս ամենայն զմտաւ ածեալ իմ, գիտելով զտկարութիւն սիրեցեալ իշխանին՝ հրապարակեմ ի լուր հանուրց և արձանացուցանեմ այսու գրով զսխալանս նորա՝ անձին իմոյ վարկանելով զնորայսն, քանզի որք ոչ այսպէս սիրեսցեն զսիրելիս իւրեանց, զկնի մահուանն մոռանալով կամ թագուցանելով զյանցանս նոցա կամ զերախտիս սիրոյ,

խոստովանել մեղքը իմ չխրատված որդու, անտեր մեռելի, անվերադարձ և փրկագնով չազատվող գերիի, անհայտ կորածի, գեղեցիկ երիտասարդի, հաղթող ու հզոր քաջի, հանճարեղ, իմաստուն ու խոհեմ վաղամեռիկ իշխանի, նաղելի, իր անվան նման գեղեցիկ սիր Պաղտուինի, ոչ թե նրան անարգած լինելու համար, այլ որպեսզի նա աստծո լիակատար թողություն ստանա, գիտենալով, որ ինչքան էլ այս աշխարհում մարդկանցից ամաչելով աշխատենք սքողել, թաքցնել մեր մեղքերը և ամոթալի գաղտնիքները, միևնույն է, այն աշխարհում նրանք պիտի բացահայտվեն և այդպիսի մարդիկ պիտի խայտառակվեն հրեշտակների և արդար թե մեղավոր այն մարդկանց ներկայությամբ, ովքեր Ադամից սկսած մինչև այսօր ահ ու դողի մեջ են, զարհուրած դևմքերով, գլխիկոր, սարսափահար՝ ահավոր և սոսկալի դատաստանի առջև, բոլորի Հոր և նրա միածին Որդու և արարածները նորոգող սուրբ Հոգու առջև: Այնտեղ մեր արարչի ամենատես աչքից չի վրիպի և ոչ մի արտահայտություն, ոչ մի արարք, ոչ մի թաքուն միտք: Ողորմելի է նա և եղկելի, առհավետ նշավակելի, քանզի նա զոհ է դառնում սոսկալի և ահավոր դատաստանի, որի կողմից բացահայտված և խայտառակված մեղավոր հոգիները կան և կմնան անարգելի՝ անափ, անսպառ և անվախճան հավիտենականության մեջ, մեծ հրեշտակապետի Դանիել մարգարեին ասածի համաձայն, թե՝ «Ոմանք հարություն պիտի առնեն հավիտենական կյանքի համար, ոմանք էլ՝ առհավետ անարգվելու համար»[13]:

Եթե մենք այստեղ բացահայտորեն, ճշմարիտ և կատարյալ խոստովանությամբ, որ հավասարազոր է սուրբ մկրտության, խոստովանենք և պարսավենք [մեր մեղքերը]՝ առանց քաշվելու, առանց երկերեսանիորեն թաքցնելու դրանք, [միայն] խայտառակությունը վերացնելու դիտավորությամբ, [աստված] մեզ մեղքերի թողություն կշնորհի: Իսկ եթե մենք ըստ արժանվույն էլ ապաշխարենք, ապա այն աշխարհում մեր [մեղքերը] միանգամայն կվերանան, կջնջվեն, կմաքրվեն, ոչ մի մեղք չի մնա. անոխակալ և ողորմած աստվածը զանց է առնում, ներում, թողություն է տալիս բոլոր նրանց մեղքերին, ովքեր այս աշխարհում խոհեմությամբ, ասածս ձևով և կամովին խոստովանում են իրենց մեղքերը:

Ահա, այդ բոլորի մասին մտածելով և ծանոթ լինելով սիրելի Իշխանի արատներին, ի գիտություն բոլորի հրապարակ եմ հանում և այստեղ արձանագրում նրա սայթաքումները: Նրա [մեղքերը] ես ինձ եմ վերագրում, քանզի ովքեր իրենց սիրելիներին այսպես չսիրեն, նրանց մահվանից հետո մոռանան կամ թաքցնեն նրանց մեղքերը, կամ դառ-

շնչաւորք են, յանբանից և մարմնոյն միայն սիրելիք։ Արդ զի մեք ըստ հոգւոյ հոգևորապէս ոգի նորա պահեալ ունէաք զխնամ սիրոյ, յորմէ թէ փոքր մի անսայեալ էր նորա մեզ, կենդանի էր այժմ հոգւով, և մարմնով և զի խստացաւ սրտիւ, կորեաւ երկոքումբք անդտանելի, վասն որոյ ձայնեմ ողբալից ողբերգական ձայնիւ. «Լուարուք ազգք և ազինք և լեզուք ամենայն, մանաւանդ թագաւորք, իշխանք և ամենայն դատաւորք երկրի և որք ի մեծութեան ըմբռնեալ էք և ի վերակացութեան կամ ի ցնորս ինչ կենցաղոյս առաջնորդութեան, լուարուք և ի միտ առէք զսխալանս յանցանաց սիրեցելոյ և փառաւոր իշխանին, զոր մեք ի դիմաց նորա և բերանով իբր նա՝ առաջի անկեալ արտասուօք. «Նախ Աստուծոյ, փառողին զմեզս իմ, և ապա ձեզ ամենեցուն, ով իշխանք և իշխանակից ընկերք իմ և եղբարք, զօրք, ամենայն հեծելովք և հետեւակաց, որոց բազում պակասութիւն անիրաւութեան առ ձեզ աբարի, և ռամիկք ժողովուրդք ամենայն, որք հակառակապէս ընդ հնազանդութեամբ անկեալ էիք կարկամեալ մեղօք անարժան ձեռաց իմոց, ուստի յանթիւ, յանհաշիւ, յանվճար, յանողորմ զրկանաց մերոց և անիծից ղկեանս իմ արարեալ կորուսի. կորուստ՝ որ բազում ողբոց և արտասուաց արժանի. զի ոչ երբէք զմտաւ ածի զաստուածային բանս, զոր հանապազ բողոքէին հնչելով յանլուր և ի խցեալ մեղօք լսելիս իմ, զայսոսիկ առ իս ասելով. «Մի՛ տացես ումեք ի կեանս քո անիծանել զքեզ, զի որ ստեղծ զնա Աստուած՝ լսէ հեծութեան սրտի նորա»։ Եւ դարձեալ՝ զմիւս ևս զպատուիրանսն, զոր վասն նենգութեանն և վասն չցանկանալոյ իրաց և ընչից ընկերին, գեղից, ագարակաց և սահմանաց և վասն ամենայն ցեղ զրկանաց և վասն ի սրտէ հնազանդութեան քան զմեծ վեհագոյն իշխանաց՝ որպէս Աստուծոյ մտերմութեան և ոչ որպէս մարդոյ, և վասն չանիրաւելոյ զոք, զորբս և զայրիս և զճանապարհորդս կողոպտելոյ, վասն ի յանիրաւութենէ և ի զրկանաց և յափշտակութենէ չմեծանալոյ կամ ի շինուածս մեծամեծս շինելոյ և կամ պատրիւսս քաղաքին կանգնելոյ յօտար արտասուաց որբոց, այրեաց և ի հարկատու շինական մարդկան լալագին հառաչանաց, և վասն չպարսաւելոյ ընդ կերսն բամբասանօք և նախատելի բանիւք աղարտելոյ և վասն չպարծելոյ յանձին զօրութիւն և ի մեծութիւն և յիմաստութիւն, և վասն չդատելոյ զօտարաց փոքրագոյն շիւղ անուանեալ յանցանս և զանձին մեծամեծ գերանս անտես առնելոյ և վասն չարհամարհելոյ զօրէնս Արարչին և զարս սուրբս և զառաջնորդս եկեղեցւոյ, և ոչ դատաւոր դատա-

նան եբախտամոռ, նրանք շնչավոր արարածներ են լոկ, նյութի և մարմնի սիրեցողներ։ Բայց մեր սիրո և հոգատարության առարկան նրա հոգին էր, և եթե մի փոքր մեր խոսքը լսեր, այժմ նա հոգով և մարմնով կենդանի կլիներ։ Բայց նա խստացավ սրտով և հոգով ու մարմնով անհայտ կորավ, դրա համար էլ վշտալի, ողբերգական ձայնով աղաղակում ենք. լսե՛ք, բազմապիսի և բազմալեզու ժողովուրդներ, մանավանդ թագավորներ, իշխաններ, երկրի բոլոր դատավորներն և ովքեր փառք ու պատվի եք արժանացել, այս սին աշխարհում ձեռք բերել իշխանություն և ղեկավարություն, լսե՛ք սիրելի և փառավոր իշխանի մեղքերի մասին, մտածե՛ք նրանց շուրջը։ Մենք նրա փոխարեն և, կարծես, նրա շրթներով, ծնկաչոք և արտասվալից ասում ենք. «Նախ և առաջ աստծուն՝ իմ մեղքերն իմացողին եմ խոստովանում, ապա ձեզ բոլորիդ, ով իշխաններ, իմ իշխանակից ընկերներ և եղբայրներ, զորքին՝ բոլոր հեծյալներին և հետևակին, որոնց շատ անիրավ վարվեցի, և ձեզ՝ ողջ հասարակ ժողովուրդ, որ դժբախտությունն ունեցար ընկնել իմ անարժան, մեղքերով արատավորված իշխանության ներքո և [ճաշակել] իմ պատճառած անթիվ, անհամար, անվերջ ու անողորմ զրկանքները։ Ես իմ կյանքն անիծյալ դարձրի և այն կորստյան մատնեցի, այնպիսի կորստյան, որ արժանի է բազում ողբի և արտասուքի։ Ես ամենևին ուշադրություն չդարձրեցի աստծո խոսքերին, որ հնչում էին իմ լսող, մեղքերով խցանված ականջների մեջ, բողոքող խոսքերին, որ դիմում էին ինձ, ասելով. «Քո կյանքում ոչ ոքի առիթ մի՛ տուր, որ քեզ անիծի, քանզի աստված լսում է իր արարածի սրտի հառաչանքը»։ Ես ուշադրություն չդարձրեցի նաև նրա մյուս պատվիրաններին՝ ննջդ չլինելու, ընկերոջ իրերի և ունեցվածքի, դյուղերի, ագարակների, հողերի վրա աչք չունենալու, ոչ մի տեսակի զրկանքներ [չպատճառելու] մասին, [աստծուն] սրտանց հնազանդ լինելու մասին, ավելի հնազանդ, քան մեծ, վեհագույն իշխաններին, որպես աստծուն մտերիմ և ոչ մարդու։ Ապա նաև ոչ ոքի, որբերին և այրիներին անիրավաբար չզրկելու, ճանապարհորդներին չկողոպտելու, անիրավությամբ ուրիշին զրկելով և հափշտակելով չուռճանալու մասին, որբերի և այրիների արտասուքի, հարկատու շինականների լալագին հառաչանքների [գնով] մեծամեծ շենքեր չկառուցելու, քաղաքի պարիսպներ չկանգնեցնելու մասին, ընկերոջը բամբասանքներով չարատավարելու, անարգ խոսքերով չպախկանելու, անձնական հզորությամբ, մեծությամբ և իմաստնությամբ չպարծենալու մասին, ուրիշի մի փոքր շյուղը մեղք համարելով, սեփական գերանն անտես չանելու մասին, արարչի օրենքները, սուրբ մարդկանց և եկեղեցու առաջնորդներին չարհամարհելու, աստծո կող-

տրացն մեզ յԱստուծոյ նստեալ անդգամութեամբ, և վասն ոչ ի ցաւս ցանկութեան ըմբռնելոյ մտօք և ի հնշտախտութիւնս աղտանալ մեղաց շաղախութեամբ, և վասն զօր կատարածին իմոյ զմտաւ ածելոյ հանապազ և հնարելն զելանելն յաշխարհէ աստի. և վասն զուխտելն իմ Աստուծոյ բաղում անդամ կատարելոյ: Զայսոցիկ զամենից սխալանաց յանդիմանութեան բանս, որ գրեալ կայ յաստուածային գիրս, այնքան յաճախապէս լսայ ի քարոզչաց ոմանց, մինչ զի զամենայն ի բերան առեալ՝ այլոց նստեալ վարդապետի կրկին լեզուով, զոր անհատակոտոր, անասյթաբեկի և յարմարական միշտ բարբառէ, զորս և ասեմ իսկ ի կարգի զխորագիտութիւն մտաց իմոց ի հանդիսաւոր խոստովանութեանս իմ Աստուծոյ և ձեր առաջի, զի գիտասջիք և դուք՝ թէ յիրաւի բարկացաւ ինձ Աստուած աննեղելի. գիտէի, թէ որ անողորմ սպանանէ զոք՝ և ի վճարել պատերազմին և ի խաղաղանալ զօրացն այլ ևս սպանութիւնս սաիկ ունել ծարաւութիւն ոտից և ձեռաց. և որք նենգութեամբ գնան առ ընկերս և առ զօրս և նենգաւոր լեզուօք խօսին կամ գործեն զանօրէնութիւն, ասացաւ Յարարչէն՝ թէ «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նոցա հեղցի արիւն նորա» և «Արք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասցարակեսցեն զաւուրս իւրեանց» և «Զարս արիւնահեղս և զնենգաւորս ընդ պիղծս համարէ և կորուսանէ Տէր». գրեալ է. «Մի՛ ցանկանայցես իրաց ընկերի քո և մի՛ յանիրաւութենէ մեծանայցես, զի մի՛ ի կէս աւուրս թողցես զնոսա»: Եւ զայն ևս գիտէի, եթէ ապարանքն մեծամեծք գեղեցիկ շինուածքն և քաղաքն, որ յանիրաւութենէ և ի զրկանաց և յայլոց ի հառաչանաց և յարտասուաց սկսաւ շինել, ոչ ևս են բնակելոց ի նոսա. գիտէի և զասացեալն ի Պաւղոսէ վասն անհնազանդելոց իշխանաց իւրեանց կամ հակառակ եղելոյ կամաց նոցա, զի ոչ մարդոյ՝ այլ Աստուծոյ հրամանին հակառակ կան, վասն որոյ և զատաստան ընդունելոցն ի Տեառնէ աննեղելի՝ աստ և ի կատարածի. գիտէի, զի ոչ էր պարտ պարսաւել, դատել կամ բամբասել զոք և ոչ պարծանս տալ անձին մեծութեամբ կամ իմաստութեամբ զասացեալն ի Տեառնէ «Մի՛ դատիք» և եթէ «Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ», և որ զհետ այսոցիկ բանս:

Եւ զի՞ մի մի կարգ արկեալ թուիցեմ զամենայն յանցանաց յանդիմանութիւնս, որ գրեալ կայ յաստուածային գիրս, զոր ես զամենայն գիտէի և գիտութեամբ օրինօք եմ մեղուցեալ Աստուծոյ. վասն որոյ անկանիմ առաջի Աստուծոյ և խոստովանիմ զամենայն զմեղս իմ, մանաւանդ զամբարտաւանութեան, զխստութեան և զանողորմութեան՝ զըր-

մից նշանակված դատավորներին անդգամորեն մեղ դատավոր չհամարելու մասին, անգամ մտովին ցանկության ախտով չտառապելու, հեշտասիրության մեղքի կեղտով չշաղախվելու մասին, անդադար աչքի առջև մահն ունենալով՝ այս աշխարհից [մաքուր] հեռանալու հնարը գտնելու մասին, բազում անգամ աստծուն ուխտածս կատարելու մասին։ Ահա այս բազմապիսի մեղքերը մտրակող խոսքերը, որ գրված կան սուրբ գրքերում, այնքան շատ եմ լսել մի քանի քարոզիչներից, որ անգիր գիտեի և երկու լեզվով ուրիշներին էի քարոզում, խոսքեր, որ միշտ կատարյալը, ճշմարիտն ու պատշաճն են բարբառում։ Ես հերթով աստծո և ձեր առջև հանդիսավոր խոստովանությամբ պատմում եմ իմ չարամտության մասին, որպեսզի դուք էլ իմանաք, որ իսկապես աստված սաստիկ բարկացել է իմ դեմ։ Ես գիտեի, որ անգթորեն մեկին սպանողը, լինի դա պատերազմի ավարտից հետո կամ խաղաղ ժամանակ, միշտ ծարավի է նորանոր ոճիրներ գործելու։ Ընկերոջ, ղինվորներին նենգությամբ դիմողների, խաբեբաների և անօրենների մասին արարիչն ասել է. «Ով մարդու արյունն է թափում, սրա արյան փոխարեն իր արյունը կթափվի» կամ՝ «Արյուն թափող և նենգավոր մարդիկ իրենց կյանքի կեսն անգամ չեն ապրելու»[14], Տերը արյուն թափուչ և նենգավոր մարդկանց պիղծ է համարում և կործանում։ Սուրբ գրքում գրված է. «Մի՛ ցանկար քո ընկերոջ ունեցվածքը, անիրավությամբ մի՛ հարստացիր, թէ չէ կես կյանքումդ կկորցնես դրանք»[15]։ Ես գիտեի նաև, որ անմարդաբնակ կմնան այն մեծամեծ ապարանքները, գեղեցիկ շենքերն ու քաղաքները, որոնք սկսեցին կառուցվել անիրավությամբ, ուրիշներին զրկելու գնով, ուրիշների հառաչանքների և արցունքների գնով։ Ես գիտեի նաև Պողոս առաքյալի ասածը՝ մարդկանց դեպի իրենց իշխանները անհնազանդ լինելու, նրանց կամքին հակառակ գնալու մասին, որ դա ոչ թե մարդու, այլ աստծո հրամանին է հակառակ, որի համար էլ նրանք աստծո խիստ դատաստանին են արժանանալու և՛ այս աշխարհում, և՛ վերջին դատաստանի օրը։ Ես գիտեի, որ չպետք է չարախոսել, դատապարտել կամ բամբասել որևէ մեկին, չպարծենալ հարստությամբ կամ իմաստնությամբ, գիտեի Տիրոջ ասույթները, թե՝ «Մի՛ դատապարտեք, որ չդատապարտվեք» կամ «Կեղծավո՛ր, նախ քո աչքից հանիր գերանը»[16] և այլ ասացվածքներ։

Ի՞նչ կարիք կա, որ մեկ առ մեկ թվեմ ամեն տեսակի մեղքերի պարսավումը, որոնց մասին գրված կա աստվածային գրքերում. ես բոլորն էլ գիտեի, հետևաբար, աստծո առջև ես գիտակից հանցագործ եմ։ Դրա համար ես ծունկի եմ գալիս աստծո առջև և խոստովանում իմ բոլոր մեղքերը, մանավանդ ամբարտավանության, քարսրտության,

*կանօք հանդերձ։ Մանկութիւն, իշխանութիւն և պատրանք սնոտի կենցաղոյս խաբեցին զիս. ոչ անյուսութեամբ ունէին զսխալանս կամ ի նոսին հաստատեալ անղղջանալի զմիտս, այլ ի բաց լքանել թողուլ զամենայն պատրանս խաբէութեան կենցաղոյս կամէի, սակայն փութացայ մինչև զվերջին կորստական զայս խրատ պատուհասի ընկալայ ի Տեառնէ. որովհետև զյառաջագոյն խրատ քաղցրութեանն ոչ ի բժըշկութիւն համարեցայ՝ և արդ դատախաղ ես ինձէն լինիցիմ դատապարտ անձին իմոյ և արդարացուցանեմ զԱրարիչն, զի թէ փոքրագունիւքն, զոր էած ի վերայ իմ հարուածս վիրաց մարմնոյ, և տարաժամ մահու բարձումն կենակից կնոջ ծննդօք իւրոց, և որ սոցին նմանս, յօտարաց մարմինս խրատ խրատեալ էր իմ, փոխադրելով ի բարիս՝ ոչ հասանէի յաննեղելի չարիս. այլ զի գանեցայ և ոչ խրատեցայ, հարայ և ոչ բժըշկեցայ, խստացուցանելով զապառումն կարծրութիւն անբարուաւանութեան սրտիս, անդիտանալով թէ քաղցրութիւնն Աստուծոյ յապաշխարութիւն զիս կոչէ ողորմութեամբն իւրով անզգամութեան իմոյ։ Ոչ յիշեցի, ոչ զմտաւ ածի՝ մինչև զքաղցրութիւն ողորմութեան Արարչին ի ցասումն բարկութեան անձին իմոյ դարձուցի։ Եւ արդ զիտեմ զայս ճշուառականս, զորս որպէս մեռեալ ի մահու չիշատակելոց եմ և ոչ որպէս կենդանի ի կեանս երևելոց, որքան Տէրն մահու և կենաց բարկացեալ է ինձ. ուստի և հրեշտակք ի չերկինս դարձուցին զերեսս իւրևանց չինէն ի բառնալ չինէն օգնականութեան և ողորմութեան Արարչին. և մարդիկ ամենեքեան իսպառ ատեցին զիս, հայր իմ և մայր մահուամբ ծողին զիս. և որդիք մարմնոյ կենակից ընկերք և զօրք ամենայն անողորմ եղեն ի վերայ իմ. մերձաւորք և բարեկամք և ըստ սնընդեան ծանօթք և որդիք մերժեցան, օտարացան ի սիրոյ իմոյ և ոչ ամենևեին չիշեն զիս. որպէս յայլազգւոյ դարշեցան չինէն ամենեքեան և հեռացան և լքեալ ծողին զիս անչիշատակ մեռեալ և անգնելի գերի ի մէջ այլազգեաց. և մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ ամենեցուն և ընկղմեալ խորտակեցայ որպէս խեցեղէն անօթ կորուսեալ։ Եւ արդ ո՞ւր է յոյսն իմ, և կամ զի՞նչ վճարումն յաննեղելի տառապանաց աստի. և ո՞չ ոք իցէ, որ ողորմեսցի ճշուառացեալ հիքոյս, զի երևեցայց ընդ կենդանիս կամ ընդ մեռեալս չիշատակեցայց ի մարդկանէ. և ոչ ոք եղև. ամենեքեան ատեցին զիս իսպառ. քանզի ահա խոստովան եղէ հանուրց եղբարց և տիեզերաց հրապարակատես հանդիսիւ և անպատկառելի համարձակութեամբ զվէրս անձին իմոյ՝ և ոչ բուժեցայ, ոչ ազատեցայ, վասն որոյ դարձուցանեմ զբանս աղերսալից խոստովանութեան իմոյ առ Տէրն իմ և Արարիչ և առ Անոխակալ Հայրն ամենեցուն յԱստուած և ըստ նմանութեան անառակ և արբշիռ ման-

անգիտության ու անիրավության մեղքերը։ Երիտասարդությունը, իշխանությունը, այս սին կյանքի պատրանքն ինձ մոլորեցրին։ Իմ մեղքերի պատճառը հանդերձյալ կյանքի գոյությանը չհավատալը չէր կամ էլ մեղքերով շաղախված չզղջացող հոգիս. ես ուզում էի հրաժարվել այս սին կյանքի բոլոր պատրանքներից, բայց դանդաղեցի, մինչև որ Տիրոջից ստացա այս ծայրագույն կործանիչ պատիժը։ Ես ամենաառաջին բարի խրատը բուժիչ չհամարեցի, դրա համար այժմ ես [ստիպված եմ] դառնալու իմ անձի դատախազը և արդարացնելու արարչին։ Եթե [աստծո] ինձ պատճառած ամենաաննշան վերքերը, իմ կնոջ՝ իր երեխաներով հանդերձ վաղաժամ մահը, և նման այլ [փորձանքներ նկատի առնելի], ես խրատված կլինեի և, դեպի բարին շրջվելով, չէի հասնի աններելի չարագործության։ Ես պատժվեցի, բայց չխրատվեցի, ծեծվեցի, բայց չբուժվեցի, ընդհակառակը, իմ ամբարտավան քար սիրտը ավելի ևս կարծրացրի, չիմանալով, որ ողորմած աստծո բարությունը ինձ՝ անըզդամիս, ապաշխարելու է կանչում։ Ես չհիշեցի, չմտածեցի, մինչև որ իմ անձի նկատմամբ ողորմած արարչի բարությունը ցասման և բարկության վերածեցի։ Ես՝ թշվառականս, գիտեմ նաև, որ ոչ որպես մեռյալ պիտի հիշատակվեմ, ոչ էլ որպես կենդանի կյանքում երևամ, այնքան է մահու և կենաց տերը բարկացել իմ դեմ։ Երկնքի հրեշտակները իրենց երեսը թեքեցին ինձանից, քանզի արարիչը դադարեց ինձ օգնական և ողորմած լինելուց։ Բոլոր մարդիկ իսպառ ատեցին ինձ, իսկ հայրս ու մայրս իրենց մահով լքեցին ինձ։ Հողեղեն արարածները՝ իմ կյանքի ընկերները, համայն զորքը իմ նկատմամբ անողորմ գտնվեցին։ Մերձավորներն ու մտերիմները, մանկության ընկերները և որդիներս ատեցին ինձ և ամենևին չեն հիշում ինձ։ Կարծես այլազգի լինեի, բոլորը խորշեցին ինձանից, հեռացան և, անհիշատակ մեռյալի կամ չփերկագնվող գերու պես, լքված թողեցին։ Բոլոր սրտերը մոռացան ինձ՝ մեռյալ համարելով. ես խորտակվեցի ինչպես գետին ընկած և կոտրված կավե աման։ Արդ, ո՞ւմ վրա կարելի է հուսալ, ո՞րն է այս անտանելի տառապանքների վերջը։ Չկա՞ ոչ ոք, որ գթա իմ թշվառ հոգուս, որ ես երևամ կենդանի մարդկանց մեջ, կամ մարդկանց կողմից հիշվեմ մեռյալների թվում։ Ոչ ոք չկա, բոլորն իսպառ ատեցին ինձ։ Ահա, ես հրապարակայնորեն բոլոր եղբայրներին և բովանդակ մարդկության առջև, առանց քաշվելու, խոստովանեցի իմ անբուժելի արատները, որոնցից չկարողացա ազատվել։ Այդ պատճառով էլ պաղատագին խոստովանությամբ դիմում եմ իմ Տիրոջն ու Արարչին, բոլորի անհնակալ Հորը՝ Աստծուն և, անառակ ու գինեմոլ որդու նման ծնկի գալով ողորմած

կանն անկեալ առաջի ողորմած մարդասիրին գոչեմ՝ ասելով. «Հայր երկնաւոր, մեղայ յերկինս և առաջի Քո. մատանւոյ, կօշկայ և անճառ պատմուճանի չեմ արժանի, այլ յամենայն հողեղինաց մի՛ զատեր ո-րոշեր զիս միայն ի կորուստ. եթէ կենդանի իցեմ յայտնեա, հան զիս ի կորստենէ, զի խորք անդնդոց յայտնի են առաջի Քո և ի մեռելոց կարող ես յարուցանել, Տէր, զի երթեալ ապաշխարեցից մինչև ի լրումն մեղապարտ շնչոյս. զի յայնժամ ծանեայ ճշմարտապէս և գիտացի զան-հանդուրժական ցասումն բարկութեան Արարչիդ, զի ահ մեծ է անկա-նել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ, իսկ եթէ մեռեալ իցեմ մեղօք և վճա-րեցայ ի կենաց մարմնոյ, շատ լիցի, ով Անոխակալ Աստուած, այսքան ժամանակս աւուրց մեղուցեալ ոդւոյ իմոյ մնալ ի տադնապ և ի տան-ջանս անչիշատակ և աննուէր. յայտնեսցես զիս ողորմութեամբ, թերևս լիցի չիշատակ կամ ողորմութիւն ողորմելի հիքոյս, և մի՛ նորօրինակ տանջանօք տանջեր զիս ի մէջ մեռելոց և կենդանեաց, զի տէր ես մա-հու և կենաց, և ակնարկելոյ հրամանի Քո սպասեալ մնայ մահ և կեանք յայտնել կամ թագուցանել զիս: Գիտեմ, Տէր, զի անչափ և աններելի բարկացուցի զքեզ մեղօք իմովք յաստուածայինս և ի մարդկայինս, կամաւ և ակամայ, խորհրդով բանիւ. և գործով, հոգւով, շնչով, մարմ-նով և մտօք և ամենայն զգայութեամբ վարկեալ կապեցայ ի տոռունս մեղաց զամենայն աւուրս կենաց իմոց. վասն որոյ դարձեալ անկանիմ առաջի Քո, ով Ողորմած, Անոխակալ և Մարդասէր Աստուած, դթա յիս յանտէր մեռեալս և խնայեա ի ստեղծուածս ձեռաց Քոց և մի՛ վստահանար զկորուսեալ ծառայս Քո ի մարդկան ողորմութիւն, զի յամաքեցաւ սէր իմ յամենայն սրտէ, և շիջաւ գութ իմ յամենայն մտաց, և բարձաւ անուն իմ ի մարդկանէ, և կորեաւ յիշատակ իմ յերկրէ կենդանեաց. Քո, Տէր, ցասուցեալ ընդ իս՝ ոչ այլ ոք ողորմի ինձ, քանզի Քեզ սպասեալ մնան արարածք ամենայն ճշմարիտ ողոր-մածիդ և անչիշաչար մարդասիրիդ. յո՛վ վստահանամ զիս. հայր իմ և մայր իմ թողին զիս, եղբայր իմ մոռացաւ զգութ սիրոյ իմոյ, զոր առ նա ցուցի, զհարազատ եղբայրութեան մերոյ և զբաղեալ կապեցաւ ի ցնորս աշխարհի և ի հոգս երկրաւորս՝ հետևելով իմօրինակ չընդար-ձակ անզգուշական և սայթաքելի ճանապարհն, որ ոչ ժամանէ՝ եթէ կամիցի՝ զանձն իւր հոգալ կամ չիշել, թող թէ զանդին գերեալս և զան-գիւտ կորուսեալս:

Արդ մի՛ մերժեր խոպառ և մի՛ անտես առներ և մի՛ թողուր զիս

մարդասերի առջև, աղաղակում եմ. «Հա՜յր երկնային, ես մեղավոր եմ երկնքի և քո հանդեպ։ Ես արժանի չեմ մատանու, կոշկի կամ անճառական պատմուճանի, բայց բոլոր մահկանացուներից ինձ մի՛ զատիր, մի՛ առանձնացրու՝ կորստյան մատնելու համար, եթե ես կենդանի եմ, մեջտե՛ղ բեր, փրկի՛ր կորստից, որ գնամ մինչև իմ մեղավոր կյանքի վերջը ապաշխարեմ, չէ՞ որ անդունդների խորխորատները հայտնի են քեզ, Տե՛ր, և մեռյալին անգամ կարող ես հարություն տալ։ Ես արդեն հիրավի ճանաչել եմ, իմ վրա զգացել քո՝ Արարչիդ բարկությունը, սոսկալի բան է ընկնել կենդանի աստծո ձեռքը։ Իսկ եթե ես իմ մեղքերի պատճառով մեռած եմ և մարմնավոր կյանքից հեռացած, բավարար համարիր, ո՛վ անոխակալ աստված, իմ մեղավոր հոգու այսքան ժամանակ անասելի և դաժան տագնապի ու տանջանքի մեջ լինելը։ Քո գթածությամբ [իմ գերեզմանը] հայտնի դարձրու, դուցե իմ թշվառական հոգուն հիշատակ և ողորմածություն լինի. նորաստեղծ տանջանքներով մի՛ տանջիր ինձ մեռյալ և կենդանի մարդկանց մեջ, քանզի դո՛ւ ես մահու և կենաց տերը և քո հրամանին են սպասում մահն ու կյանքը՝ ինձ մեջտեղ բերելու կամ թաքցնելու համար։ Գիտե՛ս, տեր, աստվածայինի և մարդկայինի նկատմամբ իմ խոհերով, խոսքերով, արարքներով, հոգով, շընչով, մարմնի և մտքի ողջ զգայությամբ կամա թե ակամա գործած մեղքերով, շատ, աններիլի աստիճան զայրացրի քեզ, որի համար էլ, ահա, այժմ կապված եմ իմ ողջ կյանքում [գործած] մեղքերի կապանքներով։ Դրա համար նորից եմ ծնկաչոք աղաչում քեզ, ո՛վ գթառատ, անոխակալ, մարդասեր աստված, ողորմի՛ր ինձ՝ անտեր մեռյալիս, խնայի՛ր քո արարածին, քո կորած ծառային մի՛ վստահիր մարդկանց ողորմածության, քանզի բոլորի սրտում ցամաքել է սերը, բոլորի մըտքերում մարել գութը դեպի ինձ, և վերացել է իմ անունը մարդկանց միջից, կորել իմ հիշատակը կենդանի մարդկանց աշխարհից։ Բացի քեզանից, տե՛ր, որ զայրացել ես իմ դեմ, ոչ ոք չի գթա ինձ, քանզի դո՛ւ ես հույսը բոլոր արարածների, ճշմարիտ գթացողն ու անոխակալ մարդասերը։ Ես ինձ ո՛ւմ վստահեմ. հայրս ու մայրս լքեցին ինձ, իմ եղբայրը մոռացավ իմ՝ դեպի նա ցուցաբերածս սերն ու գութը, մոռացավ մեր հարազատ եղբայրությունը, նա տարվեց, հափշտակվեց այս աշխարհի ցնորքներով ու երկրային հոգսերով, դնալով իմ բոնած դյուրին, մոլորեցնող և սայթաքելի ճանապարհով, որով ընթացողը, եթե ցանկանա նույնիսկ, չի կարող իր անձի մասին հոգալ կամ հիշել, հասկանալի է, խոսք լինել չի կարող թանկագին գերիների կամ անհայտ կորածների մասին։

Արդ, մի՛ մերժիր ինձ իսպառ, մի՛ անտեսիր ինձ և մի՛ թող, որ

ի կորսանան, Աստուած, Աստուած իմ, և մի՛ դարձուցաներ զերեսս Քո յինէն. մի՛ սրամտութեամբ խրատեր զիս և մի՛ բարկութեամբ յանդիմաներ, մի՛ մտաներ ի դատաստան ընդ դատապարտեալ ծառայիս և մի՛ թողուր զիս աներևոյթ տանջանօք յօրինակ տիեզերացս։ Վկայութիւն դնեմ, վկայութեամբ երկնի և երկրի, հրեշտակաց և մարդկան՝ այլ ոչ ևս գնալ ընդառաջ կորստական ճանապարհն և ոչ ևս անցանել զպատուիրանսն Քո, եթէ զայս անգամ ողորմեսցիս և թողցես զանշափ անիրաւութիւն երկրորդ անառակիս, եթէ հասցէ ինձ միւսանգամ լինել ընդ կենդանիս. ապա թէ իսկապէս մեռանել դատապարտեցայ, և այնպէս Քեզ պարտ է ողորմել, մարդասէր և միշտ ողորմած Աստուած, զի ի դժոխս ոչ ոք խոստովան լինի առ Քեզ և ոչ մեռեալք օրհնեսցեն զՔեզ. ցոյց զիս աւրդարոց և յայտնեա արժանաւորաց ծառայից քոց զանարժան ողիս, որով պատճառ մաղթանօք ղողորմութիւն, քանզի գիտեմ, զի ոչ ոք ամենևին այժմ յիշէ զանչիշատակս ի բարիս Քո։ Տէր, արտում գոլով ընդ իս և երեսս դարձուցանելով բարկութեամբ, բարկացան երկինք և երկիր, հրեշտակք և մարդիկք ի վերայ իմ, և ամենայն արարածք խեթիւ և խոժոռ դիմօք հային ընդ իս, զի թէ մահ փախեաւ յինէն և կեանք հեռացաւ, երկիր զարհուրեալ յահաւոր Քո հրամանացդ՝ ոչ ընկալաւ զիս ի ծոց իւր և ոչ ետ տեղի գերեզմանի, զի կարդասցեն զանուն կորուսեալոյս ի հող ուրեք. արդ եթէ անզգայ և անբան տարերքս այսքան դարշեցան, մերժեցան և ի բաց ընկեցին զիս յարարածոց աստի, ո՞վ այլ ոք ի մարդկանէ իցէ ոք ողորմեսցի ինձ։ Արդ դարձիր, Տէր, ի բարկութենէ և դարձո զերեսս Քո ի մեղաց իմոց, հաշտ ակամբք և քաղցրութեամբ հայեսցիս ընդիս. այս Տէր, այո Տէր, Հայր սուրբ, այո Փրկիչ աշխարհի, այո ողորմած և մարդասէր Հոգիդ Սուրբ, ողորմեա ինձ ողորմելոյս, ով Երրորդութիւն Սուրբ, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնիդ և աղաչանօք առաքելոց և մարգարէից և համօրէն սրբոց, որք ի սկզբանէ աշխարհի հաճոյ եղեն Քեզ, գթա յիս և վերաբերեալ յայտնեա զկորուսեալս, կենդանի կամ մեռեալ, մեռելոց և կենդանեաց Աստուած, և Քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Արդ զայս աղերսալի խոստովանութեանս և մաղթանաց բանս կերպարանեալ գրեցաք ի դիմաց անտէր գերիոյն և անյիշատակ մեռելոյն, սիրեցելոյ իշխանին սիրելի Պաղտոյնին և ոչ դադարեմք սովին ձայնիւ բողոքել՝ գոչելով առ Աստուած և առ սուրբս նորա մինչև գթացեալ ողորմեսցի և բժշկեսցէ զվշտագնեալ միտս մեր, որ պատուհասեալ եհար

կորչեմ, աստված, իմ աստված, մի՛ թեքիր քո երեսն ինձանից։ Զայրույթով մի՛ պատուհասիր ինձ, մի՛ հանդիմանիր բարկությամբ, դատաստան մի՛ տես ինձ՝ դատապարտված ստրկիս նկատմամբ, մի՛ թող ինձ անտեսանելի տանջանքների մեջ, որ օրինակ ծառայեմ աշխարհում։ Ասաք եմ տալիս, վկայակոչելով երկինքն ու երկիրը, հրեշտակներին ու մարդկանց, եթե այս անգամ ողորմիս և թողություն տաս ինձ, երկրորդ անառակ [որդու] անհամար մեղքերին, եթե արժանացնես ինձ մի անգամ ևս լինել կենդանի մարդկանց թվում, այլևս չընթանալ անառակ, կորստաբեր ճանապարհով, չանտեսել քո պատվիրանները։ Բայց եթե իսկապես դատապարտվել եմ մահվան, ապա այդ դեպքում էլ, ո՛վ մարդասեր և միշտ գթացող աստված, ողորմի՛ր, որովհետև դժոխքում ոչ ոք չի կարող խոստովանել քեզ, ոչ էլ մեռյալները՝ օրհնել քո անունը։ Ցո՛ւյց տուր արդարներին, հայտնի՛ դարձրու քո արժանավոր ծառաներին իմ անարժան ոգին, որպեսզի նրանց բարեմաղթություններով գթություն գտնեմ, քանզի համոզված եմ, որ և ոչ ոք այժմ չի հիշում ինձ՝ քո բարությունը մոռացության տվողիս։ Տե՛ր, որ զայրացած ես իմ դեմ և բարկությամբ երեսդ թեքել, դրանով դու [պատճառ դարձար], որ երկինքն ու երկիրը, հրեշտակներն ու մարդիկ բարկանան ինձ վրա. բոլոր արարածները խեթ աչքով և խոժոռ դեմքով են ինձ նայում։ Մահն էլ, կյանքն էլ փախան, հեռացան ինձանից, հողը՝ քո ահավոր հրամանից զարհուրած, իր ծոցում չընդունեց ինձ, ինձ գերեզմանի տեղ չտվեց, որ նրա վրա մարդիկ հիշեն իմ՝ կորածիս անունը։ Արդ, եթե բնությանն անշունչ և անբան տարրերը այս աստիճան խորշեցին ինձանից, մերժեցին և դեն գցեցին այս աշխարհի արարածների միջից, էլ մարդ կլինի՛, որ ինձ գթա։ Արդ, էլ մի՛ բարկացիր, տե՛ր, անտեսի՛ր իմ մեղքերը, հաշտ աչքով, մեղմ նայիր ինձ։ Այո՛, տեր, այո՛, տեր, Հայր սուրբ, այո՛, Փրկիչ աշխարհի, այո՛, ողորմած և մարդասեր սուրբ Հոգի, ողորմի՛ր ինձ, թշվառականիս։ Ո՛վ սուրբ երրորդություն, Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ, աշխարհի սկզբից քեզ սիրելի առաքյալների, մարգարեների և բոլոր սրբերի թախանձանքներով, գթա՛ ինձ, մնջեղ բեր ինձ՝ կորածիս, կենդանի կամ մեռյալ։ Ո՛վ դու մեռյալ և կենդանի մարդկանց աստված, քեզ փառք հավիտյանս, ամեն»։

Այս պաշտատագին խոստովանության և թախանձանքի խոսքերը մենք գրի առանք անտեր գերվածի և անհիշատակ մեռածի՝ սիրելի իշխան սըր Գաղտունիի փոխարեն և նրա բերանով անվերջ աղաղակում ենք, դիմելով առ աստված և նրա սրբերին, մինչև որ գթա, ողորմի և բուժի վշտացած մեր հոգին, առ աստված, ով նրա և մեր մեղքերի պատճառով

զնա վասն մեղաց նորա և մեր: Այլ և դուք, որ լսէք զայս ամենայն ամբարտաւանութեան բանս, զոր ի դէմս նորա և վասն նորա դրեցաք հրապարակայայտ անպատկառելի և հանդիսաւոր խոստովանութեամբ, որպէս օրէն է ճշմարիտ խոստովանողաց ըստ պատուիրանաց Արարչին, այսպէս պաստկացուցանել զյանցանս խոստովանութեամբ առաջի Փիտողին վիսորհուրդս և զգործս ամենայն մարդկան, մինչև քաղցրացեալ թողեալ զամենայն:

Սակայն դուք մի՛ յուրասա կայք և անհոգս լինիք, ով իշխանք, իշխեցեալք և զօրք ամենայն, եթէ ձեզ ներիսցէ անքուն ակն Աստուծոյ արդար դատաստանացն, որ ի նորայն հայեցեալ պատուհաս կորըստեան, զմտաւ ածէք զսպառնալիսն աստուածասաստ. «Ողբասցէ, ասէ, նոճին, զի անկաւ մայրն». լուարուք և ի Տեառնէ զսոցին նման բանս, զոր յանխրատն և առ անլուրն Իսրայէլ բարբառեցաւ ասել զայս. «Հաստատի՞ք թէ այն Գալիլիացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիսն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա, կամ նոքա ութուտասանքն՝ զոր աշտարակն եսպան, համարիք եթէ նոքա պարտապա՞նք եղեն քան զամենայն մարդիկք, որ բնակեալ են յԵրուսաղէմ. ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորընչիցիք»:

Եւ արդ դիտելով զայս ամենայն, զգուշացարուք անձանց ձերոց, ով բռնաւորք և իշխանք, զի բռնաւորաց՝ բռնաւորագոյն և անաչառ դատաստան լինելոց է աստ և ի կատարածն. դուք, որ ոչ գրոց լսել կամիք և ոչ այսպէս հրապարակէք զյանցանս ձեր խոստովանութեամբ. քանզի այս բանք նմա ի պարծանս և ի բժշկութիւն դրեցաւ և կենդանեաց յօրինակ զգուշութեան և յանդիմանութեան. և նորայն թողան յանցանքն ամենայն, և բժշկեցաւ հանապազորդ խոստովանութեամբն և յետոյ արեամբն ի մեծ պատերազմին. ամբարտաւանութիւն և սաւթիւն նորա բժշկեցաւ յայն օր անչափ և սաստիկ խոնարհութեամբն, որով ղիջանէր առ ամենեսին, առ ղօրս հեծելոցն և հետևակաց, քաղցրագոյնս և ախորժականս և ողորմագին բանս բարբառելով. որդիս Աստուծոյ և եղբարս հարազատս զամենեսեան անուանէր, իշխանս և տէրս և քաջազունս յանուանէ կոչէր, մարդէր զզօրսն ամենայն, յորդորէր, սրտապնդէր, քաջալերէր իբրև զյաղթող ըմբիշ և զքաջ նահատակ, շուրջանակի զօրացն անցանէր, ուժգին և ահարկու ձայնիւ ամրացուցանէր զզօրսն ամենայն. ձայնէր առ ամենեսեան յանուանէ զանուն քաջու-

պատժեց նրան։ Ապա և դուք, ովքեր լսում եք բոլոր այս անհամեստ խոսքերը, որ նրա փոխարեն և նրա համար անկեղծությամբ, առանց քաշվելու և բացահայտ խոստովանությամբ գրեցինք, ինչպես արարչի պատվիրանների համաձայն պետք է անեն իսկական խոստովանողները, [իմացեք], որ ես բոլոր մարդկանց գաղտնիքները և արարքներն իմացող [աստծո] առջև խոստովանեցի [նրա] մեղքերը, որպեսզի նա մեղմանա և թողություն տա [նրա] բոլոր [մեղքերին]։

Բայց դուք, ով իշխաններ, հպատակներ և ողջ զորք, եթե նույնիսկ ձեզ ների աստծո արդար դատաստանի մշտարթուն աչքը, այնուամենայնիվ, մի կողմ մի՛ քաշվեք, անհոգ մի՛ մնացեք, այլ նկատի առնելով [Պաղտուինի] գլխին եկածը, հիշեցեք աստվածաստաստ սպառնալիքները. «Պիտի ողբա նոճին, ասում է նա, մայրի ծառի անկումը»։ Նման ասացվածքներ մենք լսել ենք նաև Տիրոջից, որոնցով նա դիմել էր և՛ չխրատվող, և՛ լսող Իսրայելին, ասելով այսպես. «Կարծո՞ւմ եք, թե հենց այս գալիլեացիները ավելի մեղավոր էին, քան թե [մնացած] բոլոր գալիլեացիները, որոնց արյունը Պիղատոսն իրենց զոհերի հետ խառնեց, կամ այն տասնութ հոգին, որոնց [վրա ընկավ և սպանեց Սիլովամի] աշտարակը, կարծո՞ւմ եք, որ նրանք ավելի էին մեղավոր, քան Երուսաղեմում բնակվող բոլոր մարդիկ։ Ո՛չ, ասում եմ ձեզ. և եթե չապաշխարեք, բոլորդ էլ այսպես պիտի կորչեք»։

Արդ, գիտենալով այդ բոլորը, ձեզ ենք դիմում և զգուշացնում, ո՛վ բռնակալներ և իշխաններ, բռնակալների համար ամենադաժան և անաչառ դատաստանն է լինելու և ա՛յս աշխարհում, և վերջին դատաստանի օրը, ձեզ համար, ովքեր չեք ուզում ականջ դնել սուրբ գրքին, ովքեր այսպես հրապարակայնորեն չեք խոստովանում ձեր մեղքերը։ Այս խոսքերը գրվեցին ի գովություն [Պաղտուինի], նրա ապաքինման համար, որպես կենդանի մարդկանց զգուշության և խրատման օրինակ։ Նրա բոլոր մեղքերը քավություն ստացան, նա ապաքինվեց անդադրում խոստովանությամբ, ապա նաև մեծ պատերազմում՝ իր արյան գնով։ Այդ օրը իր անչափ, անսահման խոնարհությամբ նա ապաքինվեց ամբարտավանության, կեղծավորության [ախտից], խոնարհություն, որն իրեն բոլորի նկատմամբ, հեծյալ և հետևակ զինվորների նկատմամբ ներողամիտ էր դարձրել, [ստիպել] դիմել նրանց քաղցր, ախորժալուր և կարեկցական խոսքերով, բոլորին աստծո որդիներ և հարազատ եղբայրներ անվանել, իշխան, տեր և քաջազուն կոչել։ Նա ողջ զորքը մարզում էր, հորդորում, սրտապնդում, քաջալերում՝ ինչպես հաղթող մենամարտիկ և քաջ ախոյան, լինում զինվորների մեջ և ուժգին ու ահարկու ձայնով բոլորին գոտեպնդում, ամեն մեկին դիմում հանվանե քաջ

թեան. «Վա՜յ, ով քաջք, վա՜յ բազդին և աւուրս շնորհի, որ աստ նահատակի փոքր մի և յաղթեցաք. մի՛ զանդիտէք ի նոցանէ, ահա օր հանդիսի և մահ երանելի վասն Քրիստոսի ի վերայ քրիստոնէից մեռանիլ»։ Եւ իբրև այսպէս զօրայուցանէր, հաստատէր զարտաքոյ կողմանս բանակին, դարձեալ ի միջոց անդ զօրայն մտանէր, զլքեալսն երկիւղիւ և զխուսափեալսն Թագստեան յառաջ քարշէր և զքաջասիրտսն գովէր, զ՝ի բաց ընկեցեալ զլէնսն յանարի արանցն, կամ որք ունէին կաթկամեալ ցամաքեալ ձեռս, յափշտակէր և արիացնէրն ամաուցանէր ի ձեռին. ոմանց տայր, յոմանց առնոյր. և դարձեալ առիւծաբար խրոխտանօք յայլ վայրս հասանէր ահաւոր գոչմամբ և բարձրաձիչ աղաղակաւ, զդիշերն ողջոյն և զամն ամենայն լնոյր զմիջոց բանակին, զի ոչ ունկն պարապէր զայլ ուրուք լսել զձայն քաջութեան կամ ակն՝ տեսանել զարագընթաց սլացումն հաւասար և նման սիրելի Պաղտոյնին, մինչև պակասեալ հատաւ ի ձայնէ և ի բնական ուժոյն զօրութենէ՝ հանդերձ երիվարաւն. և ժանգանալ կարմրութեամբ գոլորշեաց՝ սրտին սանձապատ զրահից բերանոյ նորա, որպէս ասի յոմանց։ Արդ խստութիւն հպարտութեան նորա այսու օրինակաւ ջնջեալ մաքրեցան։

Իսկ անողորմութիւն սրտին այնր աւուրք ողորմութեամբ, որովք աղէխարշեալ խորովէր ի վերայ տառապելոցն կորստեան. ուստի և դեգերելովն ընդ նոսա՝ ինքն կորուսեալ եղև և զրկանացն յանցումն, որով զամենեսեան զրկէր առանց ողորմութեան, և ինքն զրկեալ գտաւ յայն օր ի մարտի անդ յամենայն օգնականաց իւրոց, քանզի լքեալ Թոզին զնա ընկերակից իշխանք և զօրք ամենայն ի մէջ մեծ պատերազմին և ելին ի մարտէ անտի, և ոչ ոք ողորմեցաւ նմա դառնալ դիտել, թէ ո՛ւր իցէ գլխաւոր իշխանն և մեծ զօրականն մեր։ Եւ յայտ անտի է՝ զի ոչ այլ ոք ի զօրաց նորա կորնաւ կամ ըմբռնեցաւ ընդ նմա և ոչ ամենեցին ոք ետես զնա, և ոչ ի վատութենէ զօրացն ունիմ ասել զայս կամ կամելոյ զկորուստ նորա, այլ զի հարկ էր այնպէս բազմաժամանակեայ զրկանացն և անիրաւութեանն յայնմ աւուր զրկանօք և անիրաւութեան՝ որ առ նա, ի զօրացն գտանել բժշկութիւն, որպէս վերադոյն ասացաք։

Իսկ բազմայ արիւն, որ հեղաւ յաւուրս նորա ի գալ յայս երկիր վատշուէր և սուտ նենգաւորին Վասլի, միով արեամբ իւրոյ անձինն, զոր յօժարութեամբ սրտի եւս հեղուլ ի վերայ քրիստոնէից, որք ելին և ազատեցան ի պատերազմէ անտի, զոր և ինքեանք յայտնապէս խոստովանին զերծեալքն ամենայն, յԱստուծոյ ունել նախ շնորհ և երկրորդ՝ ի մարդկանէ սիրելի Պաղտոյնին՝ զազատութեանն իւրեանց։ Եւ

անվանելով. «Օ՜հ, ինչ լավ է, ո՜վ քաջեր, երանի [մեր] բախտին և շնորհալի այս օրվան. մի փոքր ջանք թափելով հաղթանակ ձեռք կբերենք։ Դուք մի՛ վախեցեք նրանցից, ահա հասել է հանդիսավոր օրը, [տրվել առիթը] Քրիստոսի սիրույն, հանուն քրիստոնյաների երանելի մահվան արժանանալու»։ Ահա, նա այսպես էր սիրտ տալիս, քաջալերում զորքի արտաքին շարքերը, ապա մտնելով զորքերի մեջ սահմրոկածներին, գլուխ պահողներին առաջ էր քաշում։ Նա քաջարիներին դովում էր, վախկոտների կարկամած կամ թույլ ձեռքերում գտնվող զենքերը առնում և դնում կտրիճների ձեռքը, ոմանց տալիս էր և ուրիշներից առնում։ Ապա նա նորից առյուծի անվեհերությամբ, ահավոր գոչյունով և ուժեղ աղաղակով այլ տեղ էր հասնում, ողջ գիշերն ու ցերեկը լինում ճամբարում։ Մարդու ականջը դեռ չէր լսել ավելի ուժեղ ձայն, քան սիր Պաղտուինինը, աչքը չէր տեսել ավելի արագասլաց մարդ։ Բայց նվազեց ու հանգավ նրա ձայնը և բնական ուժը, իր ձիով հանդերձ։ Ոմանք պատմում են, որ [ձիու] բերանի գոլորշիներից կարմիր ժանգով էր պատվել կրծքի զրահը։ Նրա չափազանց ամբարտավանությունն ահա այս ձևով ջնջվեց, վերացավ։

Այդ օրերին նրա անողորմ սիրտը դարձել էր ողորմած և աղեխարշ խորովվում էր կորստյան մատնվածների համար, նրանց մասին հոգալիս կորստյան մատնվեց։

Բոլորին անգթաբար կեղեքելու իր մեղքի պատճառով այդ օրը, մարտի դաշտում իր բոլոր նիզակակիցներից հատուցում ստացավ. մեծ պատերազմի ժամանակ ընկերակից իշխանները՝ և բովանդակ զորքը մարտի դաշտում լքեցին նրան և հեռացան, նրանցից և ոչ ոք չափոսաց նրան, ետ չդարձավ իմանալու՝ թե որտե՞ղ է մեր մեծ իշխանն ու զորահրամանատարը։ Հայտնի է, որ նրա զինվորներից և ոչ մեկը չկորավ, ոչ ոք դերի չընկավ նրա հետ, նրան ոչ ոք չտեսավ։ Ես չեմ ուզում ասել, որ նրա զինվորները վատությամբ է, որ այդպես վարվեցին կամ ինչ-որ ցանկանում էին նրա կորուստը, այլ այն, որ այդ օրը պետք էր, որ շատ վաղուց ձեռք բերած նրա զրկող, անիրավ բնավորությունը բուժում ստանար՝ զրկանքներով և անիրավությամբ՝ իր զինվորների ձեռքով, ինչպես այդ մասին վերևում ասացինք։

Էլ ինչ ասեմ նրա օրոք թափված շատերի արյան մասին, երբ այս երկիրն եկավ ժանտաբարո և նենգ Վասիլը. [Պաղտուինի] քրիստոնյաների սիրույն հոժար կամքով թափած արյամբ էր միայն, որ [նրանք] ճողոպրեցին, ազատվեցին այդ պատերազմից։ Այդ բանը չեն ուրանում հենց իրենք՝ բոլոր փրկվածները, թե նախ աստծուն են պարտական իրենց աղատությունը, և ապա սիր Պաղտուինին։ Արդ, եթե նա սպան-

արդ՝ եթէ կատարեցաւ մահուամբ ի պատերազմի անդ, թողութիւն ընկալաւ ի Տեառնէ ամենայն յանցանաց իւրոց և ի սոսկալի աւուր դատաստանին և հատուցումն ամենայն արդարոց ընդ բարեպաշտ իշխանսըն և ընդ քաջ նահատակն պսակելոց է յԱստուծոյ, զի այսպէս զիտեմք և հաւատամք զպատերազմողաց մահ, որ յանօրինաց սրոյ մեռանի ոք ի քրիստոնէից, և եթէ կենդանի իցէ՝ և յայտնեսցի անուն քաջութեան նորա, տարածեցաւ և տարածի օր ըստ օրէ ընդ տիեզերս ամենայն մինչև ի կատարած աշխարհի։

Եւ արդ զայս ամենայն երկարապատում բանս, զոր գրեցաք վասն նորա, մի՛ ոք ի պարսաւադէտ ատողաց նորա և յաւարասէր մախողացն ատգտանիցէ զմեզ բամբասելով, զի այս մորոսաց է և հացկատակաց. և որք առ կենդանութեան խօսեսցին կամ գրեսցեն զայսպիսի բանս, և ոչ ոք վասն անտէր մեռելոյն և անգիւտ կորուսելոյն խօսեսցի, զի որքան ի կեանս էր, ոչ լուաւ երբէք ի մէնջ բան քաղցրութեան կամ գովեստի, այլ պատուհասի յանդիմանութեան, որով կսկծեցուցանէաք հանապազորդ զմիտս նորա։ Եւ թէ պատեհ էր և յառնէր նա ի մեռելոց կամ յառնէր կենդանի, ոչ ունէր տեսանել նա զայս դիր և զոր վասն պատերազմին և կորստեան նոցա աւուրն գրեցաք, ոչ ի տասանց կամ ի քսանից, այլ յամենեցունց միապէս զսոյն լուաք, մանաւանդ յատողաց նորա և ի նոցին իսկ ի զօրացն Հռովմայեցւոցն. այլ այն ինչ յայտնի է պատճառ բանից մերոց յերկարութեան, սիրէաք զնա հոգևորական սիրով որպէս օրէն է ծառայիցն Աստուծոյ, ըստ որում և նա զմեզ. և ցկնի մահուանն նորա հարկ էր մեզ փոխանակ անչափ սիրոյ նորա հատուցանել նորա սէր կորուսելոյն ի կենաց աստի։ Որ յԱնտիոքացւոց քաղաքէն մինչև ի սահմանս Մելտենւոյ ձգէր իշխանութիւն նորա, և տեղի ոչ ուրեք երևեցաւ գերեզմանի նորա, այնքան զօրաց և աշխարհաց տէր և անուանի երևելի իշխանս և այժմ ի մեռեալս ոչ յիշատակի և ոչ ի կենդանիս երևի, ոչ զանգակ ոք նմա հնչեցոյց, ոչ յիշեցաւ անուն նորա յեկեղեցի ուրեք և ոչ նուէր պատարագի կամ մասն յիշատակի ողորմութեան ել նմա յերկրէ աստի ուլ մի կամ դանդ ինչ, որ կարի աղքատագունիցն հասանէ. ոչ ոք է որ յիշէ զնա, և ոչ ոք, որ ողորմի նմա. ի կենդանութեան իւրում ոչ հանգեաւ, ոչ վայելեաց ի սմա, այլ ի տղայական տիոցն սկսեալ ի տագնապի, ի ցնորս և ի տառապանս անցոյց զժամանակս մանկութեան իւրոյ, ի դիւաց ի թշնամեաց և ի խստերախտ մարմնական տերանց և դաւաճանող ընկերակից իշխանաց. և այժմ ի կատարածի կենաց իւրոց կորեաւ անյիշատակ, ջնջեցաւ բարձաւ անուն նորա և սէր յամենայն աշխարհէ և ի սրտէ օտա-

վեց էլ այդ մարտում, այնուամենայնիվ, տիրոջից իր բոլոր մեղքերի թողություն ստացավ, և ահավոր դատաստանի ու բոլոր արդար գործերի հատուցման օրը նա աստծուց պսակ կստանա՝ բարեպաշտ իշխանների և քաջ նահատակների հետ միասին, քանզի գիտենք և վստահ ենք, որ անհավատների սրի ղոհը գնացած քրիստոնյա մարտիկները հենց այդպիսի փոխհատուցում են ստանում: Բայց եթե նա կենդանի է, ապա նրա սխրանքի համբավը օրըստօրե կտարածվի համայն տիեզերքում մինչև աշխարհի վերջը:

Նրա վերաբերյալ այս ամբողջ երկար պատմությունը, որ մենք գրի առանք, ստույգ թող չհամարեն և նրան ատող, չարախոսող և նախանձող մարդիկ մեզ չբամբասեն. միմոսներն ու խեղկատակներն են, որ նման խոսքեր են գրում կամ ասում, այն էլ ոչ թե անտեր մահացողի և անհայտ կորածի հասցեին, այլ կենդանի մարդու. քանի կենդանի էր, մեր շրթներից նա չէր լսել քաղցր կամ դրվատական խոսք, այլ միայն կշտամբանք, որով անդադար խարազանում էինք նրա միտքը: Եթե հանկարծ պատահի, որ նա հարություն առներ ի մեռելոց, կամ էլ վերապրած լիներ, նա երբեք չէր տեսնի այս գիրը, որ շարադրեցինք պատերազմի և նրա կորստյան օրվա մասին: Տաս կամ քսան հոգի չէին նրանք, ովքեր պատմեցին մեզ այդ մասին, նույն ձևով պատմեցին բոլորը, ամենից առաջ նրան ատողները, հենց իրենք՝ հոռոմ զինվորները: Մեր երկարաբանության պատճառը հոգևոր սիրով նրան սիրելն է (աստծո ծառաները պարտավոր են այդպես վարվել), ինչպես և նա՝ մեզ: Նրա մահից հետո մենք պարտավոր էինք նրա՝ այս կյանքից հեռացողի անշափ սերը սիրով փոխհատուցել: Նրա իշխանությունը տարածվում էր Անտիոք քաղաքից մինչև Մելիտենեի սահմանները, բայց և ոչ մի տեղ չգտնվեց նրա դերեզմանը և այնքան զորքերի ու զավառների տեր հռչակավոր և երևելի այս իշխանը այժմ չի հիշատակվում մեռյալների թվում, չի երևում կենդանի մարդկանց մեջ, նրա համար ոչ ոք զանգ չի հնչեցնում, ոչ մի եկեղեցում չի հիշվում նրա անունը: Նրա համար այս երկրում ո՛չ պատարագի նվեր տրվեց, ո՛չ էլ նրա հիշատակի համար ողորմություն՝ մի ուլ կամ դանգ[17], որ նույնիսկ ամենաաղքատներին է հասնում: Ոչ ոք չի հիշում, չի ափսոսում նրան: Նա իր կենդանության օրոք ո՛չ հանդիստ տեսավ, ո՛չ վայելք. իր պատանեկության տարիները նա անցկացրեց դևերի, թշնամիների, դաժան մարմնավոր տերերի և ընկերակից դավաճան իշխանների պատճառած տաքնապների, արհավիրքների և տառապանքների մեջ: Եվ այժմ, իր կյանքի մայրամուտին, նա կորավ անհիշատակ, ջնջվեց, վերացավ նրա անունը օտարների և մտերիմների սրտից, սերը դեպի նա՝ բովանդակ

բաց և ընտանեաց։

Զայս ամենայն դառն և անհնարին կորուստ յորժամ տեսանեմ հասեալ ի վերայ նորա, հեղձամղձուկ եղեալ ցնդիմ յարտասուս և ոչ գիտեմ ղինչ արարից կամ որպէս օգնեցից, ձեռն կարկառելով ընկղմեցելոյ սիրելւոյն. զայլ ոք ոչ տեսանելով ցաւակից մեզ յայսոսիկ՝ յԱստուած ապաւինեալ վստահացայ, Որ միայն է անոխակալ և մարդասէր, Որ ոչ կամի զմահ մեղաւորի և ոչ խնդայ ընդ կորուստ ուրուք, և գրեցաք զայս դիր խոստովանութեան և աղերսի ի դիմաց նորա և մեր. և ոչ դադարեմք յարաժամ գոչել այսու յամենայն տեղի առաջի Ողորմած Հզօրին, Որ բարկացաւ նմա և մեզ մինչև հաշտեսցի ողորմութեամբն Իւրով, և յայտնեսցէ զնա մեռեալ կամ կենդանի։ Այլ և զձեզ աղաչեմ զամենեսեան, ով մարդիկ, որ լսէք զողբերգական բանս դայսոսիկ, մի՛ լքեալ ձանձրանայք և տաղտկացեալ հրաժարէք անտես առնելով զպատանս մեր, որ վասն նորա՝ առ ծուլութեան, անգամ ատելութեան նորա, այլ սրտի մտօք արարէք թողութիւն նմա. և մի՛ ընդ կորուսելոյն նորա բերեալ պահէք, այլ և աղօթս արարէք առ հասարակաց Դատաւորն և Արարիչն Աստուած, զի ողորմեսցի նմա և թողցէ զամենայն յանցանս նորա, զոր առ Աստուած կամ առ մարդիկ մեղուցեալ իցէ. և Ամենազօր Արարիչն Աստուած բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և աղաչանօք ամենայն սրբոց՝ ողորմեսցի նմա և թողութիւն արասցէ ամենայն յանցանաց նորա մեծամեծաց և փոքունց և զձեզ օրհնեսցէ հոգւով և մարմնով և երկնից արքայութեանն արժանի արասցէ ընդ ամենայն սուրբս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, Որում փառք յաւիտեանս. ամէն։

Իսկ ի վերանալ թուականութեանս Հայոց ՇՂՐ սպանեալ եղև տէրն Անտիոքու բրինձն և անգլուխ եղբայր Պաղտոյնին՝ ըստ ամբարտաւանութեանն իւրեանց, որք անձնահաճութեամբ կամեցան պատերազմել ընդ թշնամիս և ոչ հաւանեցան միաբանիլ ընդ ղօրս քրիստոնէից, որք էին յաւուրս յայսոսիկ. որ ոչ միայն ինքեանք կորեան և բարձան ի միջոյ այնպիսի գլխաւորք, այլ և բազումք ի քրիստոնէից։

Յայնմ աւուր նոյն որդին Զանգի՝ որոյ անուն նորա Սոխն կոչէին ազգն իւրեանց, այս ինքն ըստ առասպելացս իւրեանց լոյս հաւատոյ, ղորս սրախողխող արարին և ղորս ի գերութիւն մատնեցին, զփաւիկանունդ իշխանսն յարիւնաշէն քաղաքն Հալպայ։ Եւ ի սոյն ամի, յորում ոչ ոք փայլէր գլուխ քրիստոնէից, բայց միայն կոմսն Ճօսլին, յիշխանութեան նորա դարձեալ սաստկացաւ ահ դառնութեան անհաւատիցն ի վերայ սրբոյ եկեղեցւոյ, և եկն թագաւոր Իսմայէլացւոց, որում անուն էր Մասուտ, ի տօն սրբոյ Խաչին և ոչ յերկարեալ ի վերայ քաղաքին

աշխարհում։

Երբ աչքիս առջևն է գալիս նրա գլխին եկած դառն ու դժնդակ փորձանքը, սրտակոտոր եմ լինում, ողբում, խելագարվում եմ, չգիտեմ ինչ անեմ, ինչպես օգնեմ նրան, ձեռք կարկառեմ ջուրն ընկած սիրելիին։ Ջգտնելով և ոչ մի ցավակից, ես իմ հույսը աստծո վրա դրեցի, որ միակ անոխակալն է ու մարդասերը, որ չի ցանկանում մեղավորի մահը, չի չարախնդում ուրիշի կորստյան առթիվ։ Խոստովանության և աղերսանքի այս գիրը գրվեց նրա և մեզ համար։ Մենք անդադար և ամենուր դիմում ենք նրա և մեր դեմ զայրացած, ողորմած Հզոր [աստծուն], որ հաշտվի [մեզ հետ], իր ողորմածությամբ նրան լույս աշխարհ բերի՝ մեռյալ կամ կենդանի։ Բայց և ձեզ բոլորիդ եմ աղաչում, ո՛վ մարդիկ, ովքեր լսում եք իմ այս լալադին խոսքերը, ձանձրույթից և տաղտկությունից, ծուլության և նրան տածած ատելության պատճառով անուշադրության մի՛ մատնեք, [կատարեցե՛ք] մեր պաղատանքը նրա համար և սրտանց ներեցեք նրան։ Ոխակալ մի եղեք կորածի նկատմամբ, այլ, ընդհակառակը, աղոթեցեք բոլորի դատավորին և արարիչ աստծուն, որ գթա նրան և թողություն տա աստծո կամ մարդկանց նկատմամբ գործած նրա բոլոր մեղքերին։ Եվ ամենազոր արարիչ աստվածը՝ Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ և բոլոր սրբերի աղաչանքներով կողորմի նրան և նրա բոլոր մեծ ու փոքր մեղքերին թողություն կտա, իսկ ձեզ էլ կօրհնի՝ հոգով և մարմնով, և Հիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ, բոլոր սրբերի հետ կարժանացնի երկնից արքայության, [Քրիստոսի], որին փառք հավիտյանս, ամեն»։

Հայոց 598 թվականի [12 փետրվար 1149—11 փետրվար 1150 թ.] սկզբում սպանվեց պրինցը՝ Անտիոքի տերը[18], Պաղտուինի անխելք եղբայրը՝ իր ամբարտավանության երեսից. նրանք ինքնահավանորեն կամեցան [միայնակ] պատերազմել թշնամիների դեմ, չուզեցին միանալ առկա քրիստոնյա զորքերին և այդ պատճառով ոչ միայն իրենք՝ այնպիսի զորահրամանատարներ խորտակվեցին, ոչնչացան, այլև՝ բազում քրիստոնյաներ։

Այդ նույն օրը Ջանգիի որդին, որին իրենց ժողովուրդը նուր էդդին էր անվանում, որ իրենց ստապատիր բացատրությամբ հավատքի լույս է նշանակում, արյունաշեն Հալեպ քաղաքում փափկասուն իշխաններից ոմանց սրախողխող արեց, ոմանց էլ գերի քշեց։ Այդ տարին չկար և ոչ մի աչքի ընկնող քրիստոնյա ղեկավար, բացի կոմս Ճոսլինից, որի իշխանության օրոք նորից սաստկացան սուրբ եկեղեցու գըլխին անհավատների բերած դառնաշունչ սարսափները։ Սուրբ խաչի տոնին իսմայելացվոց թագավորը, որի անունն էր Մասուտ[19], եկավ

Մարաշայ՝ էառ զնա, քանզի ոչ գոյին զօրք ի բերդին. և ասպատակ արարեալ զերկիրն, որ կոչի Թիլ Աւետեաց, որ այժմ ասի Թլպաշար, և յամենայն սահմանս նորա սրոյ ճարակ արարեալ՝ զորս հգիտ յաշխարհին. և բազում այն էր, որ խաբէութեամբ երդնուին յանուն մեծին Աստուծոյ և իջուցանէին յամրոցացն զքրիստոնեայսն՝ և գերի վարելով զամենեսեան. որ և տէր երկրին՝ Ճօսլինն հանդիպեցաւ ի քաղաքին Թլպաշրայ, ոչ կարացեալ զդէմ ունել նորա, դարձոյց անդրէն յերկիր իւր տանելով զառեալ զերեալսն յաշխարհն իւր: Դարձեալ կոմսին մնացելոյ յանհոգս եղեալ ի թշնամեաց, ոչ հոգս տարեալ հեծելոց և կամ թէ յաղթեաց ոք իւր, առաքէ զմնացեալ զօրս իւր հետ բարի և մեծահաւատ իշխանին Վասլին, որ էր եղբայր կաթուղիկոսին և տէր Կաւկըռայ, հաց տանելով ընդ իւրեանս, զի ածցեն ի ներքս. և յառաջիմաց եղեալ աղգն Իսմայէլացւոց, որոյ անուն գլխաւորին Խարասան կոչիւր, որ էր տէր աշխարհին Յանձթայ և այլ բազում գաւառաց, ի վերայ անկեալ զօրացն քրիստոնէից, ձեռբակալ արարեալ զամենեսեան, ոտիս իբրև չորս հարիւր, ըմբռնեալ և զվասիլն զեղբայր կաթուղիկոսին և տարեալ առաջի մեծի դղեկին Կաւկռայ, քանզի անդ էին կին և որդիք Վասլին. երդումն հաւատարիմ առեալ յամիրայէն վասն կալեալ քրիստոնէից զօրուն, զորս ըմբռնեցին, զի խաղաղութեամբ տարցեն զնոսա յերկիրն իւրեանց առանց դաւ ինչ գործելոյ նոցա. զոր բռնաւորն յաղագս սիրոյ մեծի աւանին ոչինչ յապաղեաց յայնմանէ երդմամբ. զամենեսեան ի ձեռն հաւատարիմ զօրաց իւրոց առաքեաց մինչև ի Սամոսատ և զիշխանն Վասիլ ընդ իւր տարեալ յերկիր իւր մեծաւ փառաւորութեամբ, երկիր տուեալ որպէս սիրելի եղբօր իւր: Յետ այսորիկ նկին ցրուեալ և վատնեալ զօրք ի Սամոսատացւոց քաղաքէն ի քաղաքն Քհաուն, և ահա եհաս ի լսելիս ամենեցուն: Քանզի Ճօսլինն, որ էր յաւուրսն յայնոսիկ գլուխ քրիստոնէից, գնալով յԱնտիոք յաղագս խորհելոյ ինչ, թերևս կարասցէ ուստեք օգնականութիւն գտանել, մատնեցաւ յաստուածատաստ բարկութեանն ինքն միայն ի զօրաց իւրոց՝ ի գերութիւն. որպէս ի հնումն որդին Դաւթի վախուցեալ ի հօրէն յաղագս չար կամաց իւրոց. զոր առեալ սաստ հրամանին Աստուծոյ զհերաց գլխոյ նորա վրէժխնդիր լինելով աստուածահաճոյ առնն Դաւթի. ճեղք ծառոյն կախեալ պահէր զիւրեաւ, մինչև զհետ մտեալ թշնամեացն հասեալ և սուսերաւ կտրեալ զգլուխն անհնաղանդ որպտին: Այսպէս դիպեցաւ առնս այսմիկ կոմսի՝ արտաքոյ գտեալ կամացն Աստուծոյ. գերեալ եղև յայլազէմ և ի գաղանաբարու ատելեացն Քրիստոսի. և տարեալ ի քաղաքն Հալպ. և անպատմելի խնդութեամբ լցան ազգն Տաճ-

և կարճատև պաշարումից հետո գրավեց Մարաշ քաղաքը, քանզի բերդում կայազոր չկար։ Ասպատակ սփռելով Թիլ Ավետյաց կոչվող գավառում, որն այժմ Թլպաշար է անվանվում, բովանդակ շրջանում հանդիպածին նա սրի քաշեց։ Բազմաթիվ էին այն քրիստոնյաները, որոնց, մեծ աստծո անվամբ [ապահովության] մասին սուտ երդում տալով, իջեցնում էր ամրոցներից և բոլորին գերի քշում։ Գավառի տեր Ճոսլինը Թլպաշար քաղաքում էր գտնվում. [Նուր էդ-դինը] չկարողացավ հաղթահարել նրան և այնտեղից շարժվեց դեպի իր երկիրը, իր հետ տանելով վերցրած գերիներին։ Բայց կոմսը նորից չմտածեց թշնամիների մասին, չհոգաց հեծելազորի մասին և կարծես որևէ մեկի դեմ հաղթանակ տարած, իր մնացած զինվորներին պարենով հանդերձ դեպի Կառկառ ուղարկեց բարի և հավատացյալ իշխան Վասիլին, որ կաթողիկոսի եղբայրն էր և Կառկառի տերը։ Բայց իսմայելացիք նախօրոք իմացան այդ մասին (նրանց գլխավորի անունը Խարա-Ասլան էր, Անձիտի և այլ բազում գավառների տերը), և քրիստոնյա զինվորների վրա հարձակվելով, բոլորին՝ շուրջ չորս հարյուր հոգի, գերեցին, այդ թվում և Վասիլին՝ կաթողիկոսի եղբորը, որոնց տարան Կառկառ բերդի հանդիման, քանզի այնտեղ էին գտնվում Վասիլի կինն ու երեխաները։ [Վասիլը համաձայնվեց հանձնել Կառկառը]՝ դերի վերցրած քրիստոնյա զինվորների [կյանքի անվտանգության] մասին ամիրայից երդում առնելով, թե խաղաղությամբ, առանց նրանց անձին որևէ վնաս հասցնելու, կտարվեն իրենց՝ գերյալների երկիրը։ Բռնակալը, որ մեծ ցանկություն ուներ [տիրելու] ավանին, անհապաղ երդում տվեց և բոլոր [գերիներին] իրեն հավատարիմ զինվորների առաջնորդությամբ տարավ մինչև Սամոսատ, իսկ Վասիլ իշխանին էլ մեծ պատիվներով իր երկիրն ուղարկեց. որպես սիրելի եղբոր, [ամիրան] նրան մի գավառ նվիրեց։ Դրանից հետո ահա ցիրուցան եղած, նվազած զորքը Սամոսատ քաղաքից եկավ Քեսուն քաղաքը. այդ լուրը հասավ բոլորին։ Ճոսլինը, որ այն ժամանակ քրիստոնյաների գլխավորն էր և Անտիոք էր գնում, կարծելով, որ, թերևս, իրեն կհաջողվի որևէ տեղից օգնություն ստանալ, աստվածասաստ բարկության զոհը դարձավ. իր զինվորներից միայն ինքը գերի ընկավ։ Ինչպես որ հնում Դավթի որդին, իր չարամտության պատճառով իր հորից հալածական եղավ։ Նա ստացավ աստծուն սիրելի [Դավթի] գլխի մազին դիպչելու համար աստծո ուղարկած խիստ պատիժը։ Ծառի ճեղքը կախած պահում էր նրան, մինչև որ հետամուտ եղող թշնամիները, վրա հասնելով, սուսերով կտրեցին անհնազանդ որդու գլուխը։ Ահա նույն բանը կատարվեց և աստծո կամքը չկատարող կոմսի հետ։ Նա գերի ընկավ քրիստոսատյաց այլանդակ

կաց՝ հեռաւորքն և մերձաւորքն. և յոյժ յոգիս խոցեալ կործանեցան երկիրս քրիստոնէից, վասն զի ոչ ունէին գլուխ, որ յեցեալ ժողովէին զմնացեալ զօրքն նորին։

Եւ յառաջ քան զայս ամի միոյ՝ յամսեանն Յունվարի, որ օր երեսուն էր ամսոյն, ի լուսանալ երկուշաբաթի՝ եղև յերկնուստ ահաւոր որոտումնք և հրաձգութիւնք, և փոխեալ տարերաց զբնական բնութիւնն իւրեանց. եղև նաչն Աստուածընկալ հրացեալ իբրև զլոյս, զոր մեծ և անյաղթելի ախոյեանն Քրիստոսի Սեւաստիոսն Վասիլն կանգնեալ էր յիշխանութեան իւրում ի գումբէթ սրբոյ Յարութեանն ի Կարմիր վանքն, և այս նշան հինգերորդ եղև ի խաչս այս մեծափառ, զոր ոչ թուէր իմաստուն մտաց բարի, այլ յարհաւիրս և յաւերումն քրիստոնէից՝ որպէս եղև իսկ։

Զայս դարձեալ ի սոյն ամի յաւուր մեծի Պենտէկոստէին. յորժամ ամենայն ոք ակն ունէր գալստեան Հոգւոյն Աստուծոյ, եկն յառաջասացեալ սուլտանն Մասուտ անուն անհնարին բազմութեամբ. և ի ձայնէ հնչման զանգակացն և ի հրաձգութենէ սուսերացն և ի ճօճել բազմախառն նիզակացն զմեզ զամենեսեան զտեսողս, որք էաք ի քաղաքին Քեսնոյ՝ առհասարակ դողացոյց. զոր ահաբեկ եղեալ առժամայն՝ ետուն զքաղաքն Քեսուն՝ երդումն առեալ ի նմանէ և յորդւոյ նորա։ Եւ յետ ութ աւուր զանմատոյցն և զանառիկն զՊհեսնի և զկնի չորրորդումն աւուր վերևելին զԻապան. և ապա դնաց յերկիրն Թլպաշարայ, զոր յանցեալ ամին քակեալ և աւերեալ էր. և անդ կացեալ զաւուրս բազումս՝ ոչինչ կարացեալ յաղթել նոցա. քանզի որդի կոմսին ի քաղաքին էր՝ պինդ ունելով զզօրս հօր իւրոյ. և բնակիչք տեղւոյն միաբանեալ ընդ նմա՝ սրտապնդեալ մեծապէս քաջացան ի վերայ հաւատոյն իւրեանց. Թէպէտ և այլազգիքն պէսպէս հնարիւքն կռիւս մեքենայիւք յօրինէին։ Դարձեալ յետ այնորիկ տկարացեալ և տխրեալ դարձաւ յերկիր իւր վասն ոչ առնլոյ զքաղաքն և զաւեալ երկիրս ի քրիստոնէից ետ որդւոյ իւրոյ, որ էր աթոռակալ սուլտանութեան իւրոյ, և անուն նորա Խլիճ-Ասլան։

Իսկ ի Ո թուականիս Հայոց եկն յերկիրն Ջահնայ ձիւն կարմիր, յամսեանն Նաւասարդի, որ օր քսան երեք էր ամսոյն. ի նմին աւուր յորժամ անդ կարմիր ձիւն երեկ, յերկիրս քրիստոնէից երեկ ձիւն սպիտակ և մոխրախառն որպէս յանցեալ ամին։

Դարձեալ յետ այսր ամի զօրքն և քաղաքացիքն, որ ի Թլպաշար էին, զտարի մի և կէս համբերութեամբ տարեալ նեղութեանցն, զոր

և գաղանաբարո մարդկանց ձեռքը և տարվեց Հալեպ քաղաքը[20]: Անհնարագրելի ուրախությամբ լցվեց տաճիկ ժողովուրդը՝ հեռու թե մոտիկ, իսկ բազում քրիստոնյաներ սաստիկ խոցված կործանվեցին, քանզի չկար ղեկավար, որին ապավինելով, հավաքվեին [Ճոսլինի] վերապրած զինվորները:

Այդ դեպքից մի տարի առաջ, հունվար ամսի երեսունին, երկուշաբթի օրվա արշալույսին երկնքում սարսափելի որոտում եղավ և կայծակ. բնության տարրերը փոխեցին իրենց առանձնահատկությունները: Քրիստոսի մեծ և անպարտելի մարտիկ Վասիլ Սևաստոսի[21]՝ իր իշխանության օրոք Կարմիր վանքի Սուրբ Հարության [տաճարի] գմբեթին, կանգնեցրած աստվածընկալ խաչը լուսավորվեց: Այս մեծափառ խաչի հետ հինգերորդ անգամն էր, որ նման հրաշք կատարվեց, մի բան, որ իմաստուն մարդիկ բարի նշան չհամարեցին, այլ քրիստոնյաների [դըլխին գալիք]՝ սարսափների և կործանման. ինչ որ եղավ:

Նմանապես նույն տարին, մեծ պենտեկոստեի օրը, երբ բոլոր մարդիկ սպասում էին աստծո Հոգու գալստյան, վերոհիշյալ Մասուտ կոչվող սուլթանը եկավ՝ ահագին բազմությամբ: Մենք, Քեսուն քաղաքում գտնվող բոլոր մարդիկ, զանգակների ղողանջից, սուսերների արձակած կայծերից, հոծ նիզակների ճոճումից ահ ու դողի մեջ ընկանք: Ահաբեկված [բնակիչներն] իսկույն հանձնեցին Քեսուն քաղաքը՝ Մասուտից և նրա որդուց [ապահովության] երդում ստանալով: [Նա] ութ օր անց դրավեց անմատույց և անառիկ Պհեսնին, իսկ չորս օր հետո՝ նշանավոր Ռապանը, որից հետո թողեց գնաց Թլպաշար գավառը, որը նախորդ տարին քարուքանդ էր արել: Նա բազում օրեր մնաց այնտեղ, բայց չկարողացավ [բնակիչներին] հաղթել, հակառակ, որ գործի դրեց ամեն միջոցներն ու մեքենաները. կոմսի որդին[22] քաղաքում էր գտնվում՝ իր հոր զորքերը ամուր պահած, տեղացի բնակչությունն էլ միացել էր նրան և սիրտ առած արիացել ի պաշտպանություն իրենց հավատքի: Դրանից հետո ահա Մասուտն ուժասպառ եղած և քաղաքը գրավել չկարողանալու պատճառով վշտաբեկ, վերադարձավ իր երկիրը: Նա քրիստոնյաներից նվաճած գավառները տվեց իր որդուն, որ իր սուլթանության տեղապահն էր և կոչվում էր Խլիճ Ասլան[23],

Հայոց 600 թվականին [12 փետրվար 1151—11 փետրվար 1152 թ.] նավասարդ ամսի քսաներեքին Ջհան գավառում կարմիր ձյուն տեղաց: Այնտեղ կարմիր ձյուն եկած օրը քրիստոնյաների երկրում սպիտակ և մոխրախառն ձյուն տեղաց, ինչպես նախորդ տարին:

Թլպաշարի զինվորներն ու քաղաքացիները տարիուկես համբերությամբ դիմացան նեղություններին: Դրա վրա Զանգիի որդին, որ Հա-

կրէին։ Զայս իմացեալ որդւոյն Զանգէ, որ էր տէր Հալպայ, եկն զօրօք իւրովք ի վերայ նոցա. և վասն զի ոչ ունէին օգնականութիւն իւրեանց ուստեք, երդումն հաստատութեան առեալ ետուն կամօք իւրեանց զբերդն Թլպաշարայ և զքրիստոնեայսն, որ ի Փռանգաց կամ ի Հայոց անդ էին և կամեցան դնալ յԱնտիոք կամ յայլ տեղիս, տարցեն անվնաս հրամանաւ Նօրատնին. զոր և արար իսկ նոյնպէս. և Մաստուտ սուլտանն և Մելէք որդին իւր այսպէս արարին վասն սիրոյ աշխարհացս, որ դիւրաւ առաւ ի քրիստոնէիցս և ոչ եթէ ի հաւատոց իւրեանց կամ ի սիրոյ զոր ունէին առ քրիստոնեայքս։

Եւ եղև յաւուրս փոքր Ճօսլնին երևեցաւ ոմն պատանի, Թէոդորոս անուն, օգնական և ոչ ուստեք ունելով, բայց զզօրութիւն բարեխնամ Աւարչին, Որ ողորմութեամբ մատակարարէ ի դարս դարս յաղագս մարդկան ի ժամանակս կամաց ըստ իւրոց առաքելական ձայնին՝ «Ում կամիմ ողորմիմ, ում կամիմ խոստանամ». որպէս և առ երանելին Պօղոս արար յերկնուստ ձգելով ի կամս և ի գործս սպասաւորութեան իւրոյ, նոյնպէս և առ այրս այս արար։ Ի յոյս և ի ջանս սորա նայեցեալ կամք աննախանձին, որ և ոչ ընդ մի ումեք զլանայ տալ զպարգևս ողորմութեան իւրոյ, քանզի առ փոքր մի և ոչ յերկար ժամանակս տիրեաց Հայրենեաց իւրոց. որդի էր սա Լևոնի Սեւաստիոսի՝ մեծի և հանճարեղ որդւոյ Կոստանդեայ՝ որդւոյ Ռուբենի. սա կորուվի և արիական զոլով ի պատերազմունս, ոչ միայն զհայրենիս իւր գրաւեաց յինքեան, այլ առաւել ևս տիրեաց բերդից և քաղաքաց քան զնախնիսն իւր. զայսոսիկ տեսեալ Անդրոնիկէ ոմն անուն, աղգաւ Հոռոմ, ի չար նախանձ մտեալ՝ ոչ կամելով անգամ լսել զանուն Հայ իշխանին. և էր սա առաքեալ ի թագաւորէն Յունաց Կիւռ-Մանիլին կողմնապահ մեծի քաղաքին Տարսոնի և Մսսայ՝ և այնուհետև ոչ դադարէր խեթել և մաքառել ընդ Հայերոյն, որ յեցեալ ծողովեցան ի միասին առ առնս այս Թորոս ի նախախնամութենէն Աստուծոյ. որ և պատերազմաւ դիմեալ ի վերայ նոցա՝ նեղէր զնոսա. և նոքա առ սէր և ահի մեծի թագաւորին Յունաց ոչ համարձակէին տալ ընդ նմա պատերազմ, այլ հանապազ սիրոյ աղաչաւ աղաչէին մնալ նմա ի հնազանդութիւն. և նա ոչ լսէր, այլ եկեալ

լեպի տերն էր, հաջորդ տարին իր զորքերով եկավ նրանց դեմ։ Այն պատճառով, որ [Թլպաշարի զորքն ու քաղաքացիները] ոչ մի տեղից օգնություն ստանալու հույս չունեին, ապահովության մասին երդում առնելով, Թլպաշար բերդը կամավոր հանձնեցին. այնտեղ գտնվող ֆրանկ կամ հայ քրիստոնյաներից ովքեր որ ցանկություն կունենային գնալ Անտիոք կամ որևէ այլ տեղ, Նուր էդ-դինի կարգադրությամբ առանց որևէ խոչընդոտի կարող էին հեռանալ։ [Նուր էդ-դինը] հարգեց իր խոստումը։ Մասուտ սուլթանի և նրա որդի Մելեքի[24] այդպես վարվելու պատճառը ոչ թե քրիստոնյաների հանդեպ տածած ինչ-որ վրտահությունն էր կամ սերը, այլ այդ գավառներին տիրանալու ցանկությունը. այս կերպ նրանք դյուրությամբ գրավեցին դրանք քրիստոնյաներից։

Փոքր Ճոսլինի իշխանության օրերին հանդես եկավ Թեոդորոս[25] անունով մի պատանի, որի միակ նեցուկը բարեխնամ արարչի զորությունն էր, արարչի, որ ժամանակ առ ժամանակ իր կամքով և ողորմությամբ, դեպի մարդիկ տածած սիրով, նրանց զորավիգ է կանգնում, [Պողոս] առաքյալի խոսքի համաձայն, թե՝ «Ում որ կամենում է՝ ողորմում է և ում որ կամենում է՝ սաստում»[26]։ Ինչպես որ նա վարվեց երանելի Պողոսի հետ՝ իր կամքին և գործին ծառայելու համար երկնուստ ձգելով, ահա նույն ձևով նա վարվեց և այդ մարդու հետ։ Աննախանձ [աստված], որ առանց ղլանալու բոլորին է պարգևում իր ողորմությունը, ուշադրություն դարձրեց նրա հույսի և եռանդի վրա, նրա, ով կարճ և ոչ երկար ժամանակ տիրեց իր հայրենի [ժառանգությանը]։ Նա Լևոն Սևաստոսի որդին էր, Ռուբենի Կոստանդին որդու մեծ և իմաստուն որդին։ Լինելով քաջարի պատերազմող, նա ոչ միայն վերստին տիրացավ իր հայրենի [ժառանգությանը], այլ իր նախնիների ունեցածից շատ ավելի բերդերի և քաղաքների տեր դարձավ։ Անդրոնիկոս անունով մի հոռոմ, տեսնելով դա, այն աստիճան կլանվեց չար նախանձով, որ չէր ուզում հայ իշխանի անունն անգամ լսել։ Հունաց կայսր Կյուր Մանվելը այս [հոռոմին] նշանակել էր Տարսոն մեծ քաղաքի և Մսիսի նահանգապետ. նա շարունակ դժկամությամբ էր վերաբերում աստծո նախախնամությամբ Թորոսի շուրջը համախմբված հայերին և մաքառում նրանց դեմ։ Անդրոնիկոսը պատերազմի դուրս եկավ հայերի դեմ և սկսեց նեղել նրանց, բայց [հայերը], սեր ու ահ տածելով դեպի հունաց մեծ կայսրը, չէին համարձակվում [Անդրոնիկոսի] դեմ պատերազմել և շարունակ աղաչում էին խաղաղ ճանապարհով նրան հպատակ մնալ։ Բայց [Անդրոնիկոսը] ուշադրություն չդարձրեց նրանց խոսքերին և հոխորտալով շարժվեց Մսիս

ամբարտաւանութեամբ իջաւ ի վերայ քաղաքին Մսոսայ։ Իսկ Թորոս բազում աղաչանօք աղաչէր զնա, թէ «Ձորտ եմ թագաւորին և քո, մի՛ բարկանար»։ Իսկ նոքա ձայնէին ի ներքս ի քաղաքն, թէ «Ջերկաթն, որով զքո հայրն տարաք, ի հետ ունիմք, որով զքեզ կապեալ տարցուք»։ Իբրև ոչ կարաց տանել կորովի այրս այս ամբարտաւանութեան և խրոխտ կամաց նորա, ապա վստահացեալ ի զօրութիւն Քրիստոսի, Որ բարձրացոյց զնա և ի չգոյէ ի գոյ էած, պատառեաց զպարիսպ քաղաքին Մսոսայ ի գիշերի. և ի ծագել արեգականն առեալ զզօրս իւր ել ընդդէմ նոցա ի պատերազմ և հարեալ զնոսա՝ յաղթեաց և արար փախստական զամենեսեան՝ արս երկոտասան հազար. վատնէր զնոսա և ի սուր սուսերի մաշէր, ի մի ակն քթթել տալաստ արկանէր զամենեսեան. ընդ որս և ի մեծ պատերազմին ըմբռնեցին զՍշինն, որ էր տէր Լամբրոնին, և զվասիլն, որ էր տէր Բարձրաբերդոյ և եղբայր Տիգրանայ, և այլ բազում զօրս կալեալ մերկացուցանէին և թողուին զթուլամորթ Հոռոմանին. աւա՜ղ ասեմ ղորոց։ Եւ բազում արիւն հեղաւ ի պատերազմին. և տիրեաց անհոգութեամբ քաղաքին Մսոսայ, առեալ բրոնութեամբ ի նմանէ իբրև ի կանացոյ՝ խնդրելով զվրէժ հօրն իւրոյ, զոր հանեալ ի հայրենեաց իւրոց տարագիր արարեալ տամբք և որդւովք մինչև յարեմուտս։ Արդ այրս այս նենգժոտ ոչ կարացեալ տանել վըշտի նախատանացն, զոր կրեաց և զփորձ առ զկորուստ իշխանացն մեծաց և զայլ զօրացն, գնացեալ փախստական առ թագաւորն Յունաց բողոք մեծապէս ունելով յաղագս զօրացն Հայոց, զորս կրեաց յանմբռտութենէ իւրմէ։ Իսկ մեծն Թէոդորոս առեալ զկալեալ իշխանսն և զայլ կալանաւորսն եմուտ խաղաղութեամբ ի քաղաքն իւր անթիւ ոսկւով և արծաթով, բազում և այլ աղգի աղգի ստացուածով և սարօք պատերազմին, զոր էառ ի զօրացն Յունաց և բազում ձիս և ջորիս։

Յետ այսր մեծի յաղթութեանս և հարստանալոյ՝ սկսանէր բանսարկուն սատանայ շարժել զմեծամեծս ի վերայ զօրացն Հայոց. քանզի Յոյնք ոչ պարապէին խնդրել զվրէժս անձին կեսարոսին իւրեանց, գանձս բազումս առաքեցին սուլտան Մասուտին, որ գլուխ էր ամենայն Մսիլմանաց. սորա պատրեալ ի բազում ընծայիցն Յունաց, գայ անհուն բազմութեամբ զօրօք զառաջինն ընդ երկիր իւր, ահ արկանելով նոցա. սակայն զօրացան շնորհիւն Քրիստոսի զօրքն Հայոց և եկին լեառըն ընդ մէջ՝ նոքա յայնկոյս լերինն ընդ սահմանս իւրեանց, և սոքա

քաղաքի վրա։ Թորոսը թախանձագին աղաչում էր նրան, ասելով. «Ես կայսեր և քո ճորտն եմ, մի բարկացիր», բայց [հոռոմները] ձայնում էին քաղաքից ներս և ասում. «Մեզ մոտ են այն շղթաները, որոնցով հորդ կապած տարանք, դրանցով քեզ էլ ենք կապելու և տանելու»։ Քաջ [Թորոսը] չկարողացավ հանդուրժել այս ամբարտավանությունն ու հոխորտանքը. ապավինելով Քրիստոսի զորությանը, որը բարձրացրեց նրան և անգոյությունից գոյության կոչեց, գիշերով քանդեց Մսիս քաղաքի պարիսպը և արևի ծագելու հետ միասին, առնելով իր զինվորներին, նրանց դեմ պատերազմի դուրս եկավ, բախվեց նրանց և, հաղթանակ տանելով, բոլորին՝ տասներկու հազար հոգու փախուստի մատնեց։ Նա ջարդ տվեց նրանց, սրի քաշեց, մի ակնթարթում բոլորի դիակները փռեց։ Մեծ պատերազմում գերեցին նաև Լամբրոնի տիրոջը՝ Օշինին ու Բարձրբերդի տիրոջը՝ Վասիլին՝ Տիգրանի եղբորը։ Նրանք գերի վերցրին և բազմաթիվ այլ թուլամորթ հոռոմ զինվորների ու, զինաթափ անելով, բաց թողեցին. ողբա՜մ նրանց։ Պատերազմում շատ արյուն թափվեց։ [Թորոսը] դրանից հետո անվրդով տիրեց Մսիս քաղաքին, այն գրավելով կնանման [Անդրոնիկոսից]։ Թորոսն իր հոր համար վրեժ առավ նրանից, ով հայրենիքից բռնի, տնով-տեղով նրան դուրս հանելով աքսորել էր արևմուտք։ Բայց նենգ [Անդրոնիկոսը], չկարողանալով տանել իր կրած ծանր խայտառակությունը, իր անխելքության պատճառով մեծ իշխանների և այլ զինվորների գլխին եկած փորձանքն ու կորուստը, փախավ գնաց հունաց կայսեր մոտ և հայ զինվորների դեմ մեծ բողոք ներկայացրեց։ Իսկ մեծ Թեոդորոսը, առնելով ձերբակալված իշխաններին և մյուս գերիներին, անհամար ոսկով ու արծաթով, բազմաթիվ ու բազմապիսի ավարով և հունաց զորքի ձեռքից խլած ռազմավարով, բազմաթիվ ձիերով և ջորիներով խաղաղությամբ մտավ իր քաղաքը։

[Թորոսի] ձեռք բերած այս մեծ հաղթանակից և հարստությունից հետո բանսարկու սատանան սկսեց մեծամեծներին դրդել հայ զինվորների դեմ. հույները չէին դադարում իրենց կեսարի համար վրիժառու լինելու մտքից և բազում դրամ ուղարկեցին Մասուտ սուլթանին, որ բոլոր մուսուլմանների պարագլուխն էր։ Հույների տված բազմաթիվ նվերներից խաբված, նա վիթխարի բանակով առաջինը մուտք գործեց [Թորոսի] երկիրը՝ [հայերի] մեջ երկյուղ սփռելով։ Բայց հայոց զինվորները, Քրիստոսի բարեհաճությամբ հզորացած, եկան լեռան ստորոտը. [թշնամիները] գտնվում էին լեռան մյուս լանջին՝ իրենց երկրի սահմաններում, իսկ [հայերը]՝ լեռան այս լանջին՝ իրենց երկրում. նրանք հանգիստ էին և այլազգիների մեծաթիվ զորքը բանի տեղ չէին

յայսկոյս ընդ երկիրս իւրեանց՝ անհոգութեամբ ոչինչ համարելով ըզբազմութիւն այլազգեացն. իսկ նոցա տեսեալ զհամարձակութիւն քրիստոնէից դնդին, զարմացեալք և ապշեալք ասէին. «Ջի՞նչ են նոքա զանձն ի մահ եդեալ, որ գան ընդդէմ մեր իբրև պատերազմել ընդ մեզ»: Եւ մինչդեռ նոքա յայսր մտաց խորհրդի էին, յանկարծակի շարժեալ ի վերին խնամոցն սուլտանն Թուրքաց պատգամաւոր առաքէր առ զօրավարն Հայոց Թորոս և ասէր. «Ոչ թէ յաւերումն եկեալ եմք յերկիրս ձեր, այլ եկ մեզ ի հնազանդութիւն և զառեալ երկիրն, զոր առեր բռնութեամբ, դարձո անդրէն առ թագաւորն Յունաց և լեր որդի մեր և սիրելի»: Զայսոսիկ լուեալ՝ մեծաւ ուրախութեամբ լցեալք փառս Ամենատեառն մատուցանէին, որ այսպէս ղխստերախ և զամբարտաւան բարս նոցա կակղացոյց իբրև ընդ վեհագոյն ընկերի դաշինս սիրոյ խնդրելով ի զօրացն Հայոց. և արդելեալ նոցա զպատգամաբերսն առուրս բազումս, ապա դեսպան զկնի նոցա առաքէին՝ ասելով այսպէս. «Կամօք մեր յանձն առնումք մեք հնազանդել ձեզ իբրև թագաւորի, քանզի ոչինչ նախանձեալ քո ընդ առաջանալս մեր և կամ աւեր ինչ առնել յերկրի մերում, այլ եկիր զարձուցանել զմեզ ի Հռոմն. անհնար է»: Զայս լուեալ սուլտանին՝ ոչ նեղեաց զնա, այլ դաշինս սիրոյ խաղաղութեան երդմամբ զրեալ ետ տանել առ զօրսն Հայոց ի ձեռն դեսպանի իւրոյ, ծաղր արարեալ զՅունաց թագաւորն և զգանձս նորա. և ինքն զարձաւ յերկիր իւր՝ ոչինչ վնասեալ ումեք: Եւ այս եղև ի թուականին Հայոց ՈՒ:

Յետ այսորիկ ի փոխել ամն յերեքն այլ բազմապատիկ ընծայս ոսկւոյ և արծաթոյ չղեալ առ թագաւորն սուլտանին առաւել քան զառաջինն՝ ասելով այսպէս. «Երթ հանդո զսրտմտութիւն զայրացման սրտի իմոյ յազգն Հայոց և տապալելով զամուրս նոցա և զեկեղեցիս նոցա հրձիգք առնելով և հրոյ ճարակ զամենեսեան հրամայեա առնել, զի դադարեսցէ զայրացումն սրտի իմոյ»: Եւ առեալ զգանձս բազմութեան՝ դարձեալ խաղայր գայր անհուն բազմութեամբ քան զառաջինն և դիմեալ եկն ի Մսիս և անտի յԱնաւարզա. և ոչ կարացեալ անդ առնել ըստ կամաց իւրոց, գայ ի Թիլն, զոր Համտնոյ կոչեն և կացեալ զաւուրս բազումս՝ ոչինչ կարացեալ վնասել նոցա՝ ապա զմի ոմն ի մեծամեծաց որդւոյ իւրոյ Մելեքին, որոյ անուն Աղուպ ասէին, այր ժանգ և չարասէր, բազմութեամբ զօրօք իբրև երեք հազար՝ ասպատակաւ յերկիրն Անտիոքու առաքէր: Եւ իբրև անցին ընդ տեղին այն, զոր Դուռն կոչեն, յանկարծակի իբրև յերկնուստ առաքեալ ի քրիստոսասէր զօրաց

դնում։ [Այլազգիները], տեսնելով քրիստոնյա զինվորների համարձակությունը, զարմացած ու ապշած ասացին. «Ի՞նչ է, նրանք իրենց կյանքից հրաժարվե՞լ են, որ մեր դեմ պատերազմի են դուրս գալիս»։ Երբ նրանք դեռ այդպես տարակուսանքի մեջ էին, հանկարծակի նախախնամությունից դրդված թուրքերի սուլթանը հայոց ղորավար Թորոսի մոտ պատգամավոր ուղարկեց և ասաց. «Մենք եկել ենք ձեր երկիրը ոչ թե այն ավերելու մտադրությամբ։ Դու հնազանդվիր մեզ, բռնությամբ գրավածդ հողերը վերադարձրու հունաց կայսեր և դարձիր մեր սիրելի որդին»։ [Հայերը], լսելով դա, լցվեցին ցնծությամբ, փառաբանեցին ամենակալին, որ այն աստիճան մեղմացրեց այդ ամեհի և ամբարտավան [մարդկանց] բնությունը, որ հայ զինվորներից, կարծես լավագույն ընկերոջից հաշտության դաշինք էին խնդրում։ [Հայերը] պատգամավորներին բազում օրեր պահելուց հետո նրանց հետից դեսպան ուղարկեցին և ասացին այսպես. «Մենք հոժար կամքով հնազանդվում ենք քեզ՝ որպես թագավորի, քանզի դու մեր առաջխաղացման առթիվ չզայրացար, մեր երկրում ավերածություններ չգործեցիր, այլ միայն ուզեցիր, որ մեզ պատկանածը հոռոմին վերադարձնենք։ Դա անհնարին է»։ Սուլթանը, լսելով դա, [Թորոսի] վրա ճնշում չգործեց, այլ երդումով հաստատված բարեկամական դաշինքի գիր կազմեց և տվեց իր դեսպանին, որ անձնապես տանի տա հայ զինվորներին։ Այդպիսով, նա ծաղր ու ծանակի ենթարկեց հունաց կայսեր և նրա դրամները։ Ոչ մեկին վնաս չհասցնելով, նա վերադարձավ իր երկիրը։ Դա տեղի ունեցավ հայոց 602 թվականին [11 փետրվար 1153—10 փետրվար 1154 թ.]։

Դրանից հետո, երբ սկսվեց 603 թվականը, կայսրը սուլթանին որպես նվեր նախորդ անգամից շատ ավելի ոսկի և արծաթ ուղարկեց՝ ասելով այսպես. «Գնա՛, հայոց դեմ բորբոքված իմ սիրտը հովացրու, ավերի՛ր նրանց բերդերը, կրակի տուր նրանց եկեղեցիները, հրամայիր բոլորին հրո ճարակ դարձնել, որպեսզի թեթևանա իմ զայրացած սիրտը»։ [Սուլթանը], ստանալով բազմաթիվ դանձերը, հսկայական, նախորդը գերազանցող բազմությամբ շարժվեց եկավ Մսիս, այնտեղից էլ՝ Անավարզա։ Չկարողանալով այնտեղ գլուխ բերել իր ծրագիրը, նա եկավ Թիլ, որը Համտունի [Թիլ] են կոչում. բազում օրեր մնալով, նրան չհաջողվեց որևէ վնաս հասցնել [հակառակորդին], այդ պատճառով նա իր որդի Մելեքի մեծամեծներից մեկին, որին Աղուպ[27] էին անվանում, մի դաժան և չարասիրտ մարդու, շուրջ երեք հազար զորքով ուղարկեց Անտիոք գավառն ասպատակելու։ Երբ անցան Դուռն[28] կոչվող վայրից, քրիստոսասեր ֆրերների[29] զինվորները և սպարապետի[30]

ֆրերաց և եղբայրն աստպարապետին՝ Ստեփանէ յանկարծակի ի վերայ անկեալ՝ առհասարակ զամենեսեան սատակեցին և զղխաւորն իւրեանց Աղուպ նիզակաւ ընդ լերդն անցուցեալ. և դառնակոռոզ ձայնիւ ևհան զդառնացեալ ոգին։ Զայս լուեալ ի բանակն՝ զարհուրեցան յոյժ. և ի զօրութենէ վերնոյն եկն ցաւ ի վերայ երիվարաց նոցա, զոր ինքեանք տապախ ասէին, որոց յոլովք սատակեցան քան թէ որ մնացին. և զայս տեսեալ մեծամեծացն Թուրքաց՝ ամենեքեան առհասարակ ի փախուստ դարձան, ոչ ոք ուրեք մնացեալ ընկերի կամ եղբայր եղբօր. և բազումք ի նոցանէ զջիլս երիվարացն և զջորւոցն հատանէին՝ ընկենլով զզէնս իւրեանց ի փախստեանն, և ինքեանք ընդ մացառուտ ձորս և ընդ դժնեալ վայրս հատեալ անցեալ գնային մոլար ճանապարհաւ. մեծամեծ հեճուպք և բազում սալարան ի հետիոտս ընթանային ի յահէ Բարձրելոյն. քանզի ոչ գոյին նոցա երկիւղ ի մարդկանէ, զի զօրքն Հայոց աստպատակաւ երթեալ էին յերկիր այլազգեացն, և դարձան բազում աւարաւ յաշխարհն իւրեանց։ Եւ իբրև եկին՝ տեսին զանկարծելի բարին, զոր ահ հզօրին Աստուծոյ փախստական արարեալ ընդ կրունկն կոր ի կոր ամօթալից պարտեալ ամաչեցեալ իբրև զազուէս տկար ի թագաւորական առիւծէ, այնպէս սարսեալ դողալով ընթանային՝ կարծելով թէ բազում զօրս հնծելոց զհետ մտեալ նոցա՝ բազում արեան ճապաղիս հանելով. այնպէս իմն թուէր փախուցելոցն։ Եւ զոր օրինակ առ Մծբին քաղաքաւն եղև, Կաւատ թոռն Յազկերտի Պարսից արքայի մոռացեալ զդաշինս սիրոյ նախնեացն իւրոց, զոր ունէր առ քրիստոնեայսն, և եկն սրամտութեամբ զօրօքն Պարսից յաւարի առնուլ զերկիրն զայն և բազում աւարս արարեալ մեքենայեալ հնարիւք խորտակեաց զամուր պարսպին Մծբնայ՝ և իբրև կամեցան զօրքն մտանել ի ներքս և ահա յանկարծակի տեսին զսուրբ հայրապետն Յակոբ, զի շրջէր ի վերայ պարսպի քաղաքին իբրև զթագաւոր ոք ծիրանազգեստ շուրջ և մերձ ունելով զզօրս երկնայինս, դնելով ի վերայ գլխոյ իւրոյ զսահմանակն նոյեան տապանին, զոր ետ նմա հրեշտակն յաղագս աշխատութեան իւրոյ, զոր կրեաց ի ճանապարհին ելանելով ի լեառն տեսանել զտապանն, որում ոչ ետ հրաման հրեշտակն, այլ դարձոյց խաղաղութեամբ զսուրբն Աստուծոյ յերկիր իւր՝ տալով նմա նշան սիրոյ զտախտակն, զոր տեսեալ զօրքն Պարսից՝ ահաբեկ եղեալ ոչ ևս իշխեցին մերձենալ ի պարիսպ քաղաքին, զոր կործանեցին, այլ և պատուհաս եկն ի վերայ նոցա պիծակ, գոռեհ և ճանճ, և առհասարակ երիվարք նոցա վազս առեալ պախուցաթափ լինելով յիւրաքանչիւր յարգիլմանէ, և ոչ ոք կա-

Աղբայրը՝ Սահփանեն, կարծես ի վերուստ ուղարկված լիներին, հանկարծակի նրանց վրա խոյացան և բոլորին կոտորեցին, նրանց հրամանատար Աղուպի լյարդին էլ նիզակ խրեցին, որը դառնագին աղաղակով իր չար հոգին ավանդեց։ Երբ այդ բանի լուրը ճամբար հասավ, բոլորը սարսափի մեջ ընկան։ Երկնային զորությունը նրանց ձիերի մեջ հիվանդություն տարածեց, որին իրենք «տապախ» են կոչում. ձիերի մեծ մասը սատակեց։ Թուրքերի մեծամեծները, տեսնելով այդ, գլխովին փախուստի դիմեցին. ո՛չ ընկերն էր ուզում ընկերոջ սպասել, ո՛չ էլ եղբայրը՝ եղբոր։ Նրանցից շատերը կտրում էին ձիերի և ջորիների ջլերը, փախուստի ժամանակ գցում իրենց զենքերը, իսկ իրենք էլ, մացառուտ ձորերն ու վտանգավոր վայրերը կտրելով անցնելով, գնում էին սխալ ճանապարհով։ Երևելի հեծուպներ և բազմաթիվ սալարաններ դեպի բարձրյալն ունեցած վախից, ոտքով էին գնում, քանզի այլևս վախ չունեին մարդուց. հայոց զորքը գնացել էր այլազգիների երկիրն ասպատակելու և իր երկիրը վերադարձավ մեծ ավարով։ Երբ վերադարձան, ականատես եղան անհրևակայելի հաջողությանը՝ աստծո սարսափը [թուրքերին] կրնկակոխ փախուստի էր մատնել, ամոթալի պարտության մատնել և խայտառակել. ինչպես թույլ աղվեսը՝ արքայական առյուծից, ահա այդպես սարսափած, ահ ու դողի մեջ ընկած էին նրանք փախչում, կարծելով, որ իրենց մեծաթիվ հեծելազոր է հալածում՝ մեծ չարդ տալով. այդպես էին կարծում փախստականները։ Նման մի դեպք տեղի էր ունեցել Մծբին քաղաքում, երբ պարսից արքա Հազկերտի թոռ Կավատը, խախտելով իր նախնիների՝ քրիստոնյաների հետ կնքած հաշտության պայմանագիրը, պարսկական զորքի գլուխն անցած բարկությամբ եկավ ավարի առնելու այդ գավառը։ Բազում օրեր նա զանազան մեքենաների օգնությամբ խորտակեց Մծբինի անառիկ պարիսպը, բայց երբ զինվորներն ուղեցին ներս մտնել, հանկարծ տեսան սուրբ հայրապետ Հակոբին, որ ծիրանազգեստ թագավորի նման, երկնային զորքի[81] ուղեկցությամբ, նոյան տապանի բեկորը գլխի վրա դրած, շրջում էր քաղաքի պարսպի վրայով։ Այդ բեկորը հրեշտակն էր նրան տվել այն չարչարանքների համար, որ նա կրեց տապանը տեսնելու նպատակով լեռը բարձրանալիս. հրեշտակը, սակայն, թույլ չտվեց նրան այն տեսնել, այլ աստծո սրբին խաղաղությամբ իր երկիրը վերադարձրեց, որպես սիրո ապացույց տալով այդ բեկորը, որն ահա պարսից զինվորները տեսնելով սարսափահար եղան և չհամարձակվեցին մոտենալ քաղաքի իրենց կործանած պարսպին։ Բացի այդ, նրանց գլխին փոթաձանք էլ եկավ, նրանց ձիերի վրա խուժեցին իշամեղու, ցուռեխ և ճանճ, որոնց [խայթոցներից] նրանք բոլորը սկսեցին սանձակոտոր լինել և

լեր ի բազմութենէն ըմբռնել զերիվարս իւրեանց, և այնպէս շտապ տագնապի հասուցանէր նոցա դոյզն պատուհասի արկեալ ի վերուստ, որպէս ի հնումն առ Իսրայէլացօքն զեգիպտոս հարկանէր աջ հզօրին Աստուծոյ, և այսպէս ամօթալից պարտեալ դառնայր թագաւորն Պարսից յազդմանէն Քրիստոսի և աղօթից սրբոյ հայրապետին Յակոբայ, զանդր զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, և այս ոչ ընդհատ յայնմանէ, որ այժմ գործեցաւ, զոր տեսաք աչօք մերովք, երկիւղս անգամ շարժեալ Թուրքաստան ամենայն ի վերայ Թորոսի և զօրաց իւրոց և ոչինչ կարացեալ առնել եկեղեցեացն, զոր բազում պատուէր առեալ էին ի թագաւորէն Յունաց յաճիւն դարձուցանել և զխաչ և զեկեղեցի այսն կատականաց արարեալ, ասէին: Եւ թէ ոչ էր յօդնութիւն հասեալ բազուկն այն, որ պարզեցաւ ի վերայ խաչին, ուրեմն կատարել կամէին զպատուիրան հերձուածողացն, տապալելով զեկեղեցի սուրբ և զերկիրն հիմն ի վեր առնելով: Արդ սոցա մնալով ի խաղաղութեան, և նոքա գնացին փախստեամբ և մեծաւ ամօթով, որպէս յառաջն ասացաք:

Յետ այսորիկ իբրև ոչ կատարեցաւ խորհուրդ չարութեան իւրեանց, ապա ի հնարս սիրոյ մտանէին Ալիճ-Ասլանայ, որ էր ի մեծ սուլտանէն ի հօրէն իւրմէ հաստատեալ յաթոռ մելիքութեան. և այսպէս առժամանակ մի կացեալ անհոգութեամբ և ուրախութեամբ, փառաւորէին զամենասուրբ վերրորդութիւնն հանդերձ ճգնաւորական մաքուր եպիսկոպոսօք և սուրբ քահանայիւք և միշտ բազկատարած միանձնացելոց դասիւք: Եւ ի սկզբան գալոյ ատելեացն Քրիստոսի յերկիրն Թորոսի, ի հաւաքիլն իւրեանց ի վերայ Բլխն, որ էր Տրէ ի վեզտասան, եղև հողմ ահաւոր սաստկութեամբ ձայնիւ, և բազում ծառք յարմատոյ հատան, և եկն կարկուտ ի տեղիս տեղիս և եհար զյորեան և զայգիս: Եւ դարձեալ ի նոյն ամիս Տրէ, օր քան և հինգ էր ամսոյն, այլ ծանր և սաստիկ արհաւիրք եղեն յամենայն երկիր զերիս գիշերս ըստ նմանութեան Նինուէացւոց, սկսեալ յառաջին պահու գիշերոյն մինչև ի լոյս առաւօտին. ըստ ոչ սովորակի բնութեանց տարւոյն եղև խաւար անճառանչ ըստ օրինակի նսեմացեալ խաւարին, որ յԵգիպտոս. և յամպոցն բախմանէ ընդ իրևարս որոտալով որպէս լերինք կարծր և անդամանդեայք բախելով զմիմեանս, և հրաձգութիւն կայծականաց ունէր զծիր երկնից, ոչ գոլով տեղի յերկինս՝ որ ոչ ունէր զփայլատակունս հողմախառն. և ո՞վ էր բաւական հայել աչօք իւրովք յահաւոր դղրդմունքն, որ լինէին անդադար: Եւ այնպէս ահաբեկ եղեն մարդիկք ի տեսլենէն այն զերիս գիշերս, և ամենեքեան՝ արք և կանայք, ծերք և տղայք ի տունս Աստուծոյ ընթացեալք լինէին, բազում ահիւ և դառն արտասուօք և մեծաւ

փախչել։ Նրանք այնքան շատ էին, որ ոչ ոք չէր կարողանում բռնել իր ձիուն։ Աստծո ուղարկած աննշան պատուհասն ահա այդպես շուտ աղետի հասցրեց[32]։ Հնում էլ իսրայելացիների սիրուն հզոր աստծո աջը պատուհասեց Եգիպտոսը։ Պարսից արքան, ահա, նման խայտառակ պարտություն կրելով Քրիստոսի զորությունից և սուրբ հայրապետ Հակոբի աղոթքներից (տերը կատարում է իրենից երկյուղ զգացողների բաղձանքը), թողեց հեռացավ։

Այս դեպքը ուղղակի առնչություն ունի այն եղելությանը, որին մենք ականատես եղանք. համաչն Թուրքաստանը երկու անգամ շարժվեց Թուրոսի և նրա զորքերի վրա, բայց չկարողացավ ոչինչ անել եկեղեցիներին, որոնց վերաբերյալ հունաց կայսրից բազում առաջադրանքներ էր սառացել, այն է՝ ծաղր ու ծանակի ենթարկելով մոխրի վերածել խաչն ու եկեղեցին։ Եվ եթե դեպի խաչը պարզված աստծո բազուկը օգնության չհասներ, ապա նրանք կիրականացնեին հերձվածողների[33] առաջադրանքը՝ տապալել սուրբ եկեղեցին և երկիրը տակնուվրա անել։ Բայց սրանք անվնաս մնացին, իսկ [Թուրքերն էլ] սաստիկ խայտառակված փախուստի դիմեցին, ինչպես վերևում այդ մասին ասացինք։

Երբ նրանց չար նպատակները չիրականացան, Խլիճ Ասլանը, որ իր հորից՝ մեծ սուլթանից մելիքության գահն էր ժառանգել, բարեկամություն հաստատեց [հայերի] հետ, որոնք այդպիսով որոշ ժամանակ ապրեցին ապահով և ուրախ՝ ճգնավորական կյանք վարող մաքրակրոն եպիսկոպոսներով, սուրբ քահանաներով, և վանականների միշտ աղոթող դասով հանդերձ, փառավորելով ամենասուրբ երրորդությունը։ Քրիստոսատյացների Թորոսի երկիրը մուտք գործելու և Թիլի վրա հարձակվելու սկզբում, այն է՝ տրե ամսի տասնվեցին, ահավոր ձայնով ուժգին հողմ փչեց. բազմաթիվ ծառեր արմատախիլ եղան, տեղ-տեղ կարկուտ տեղաց և ջարդեց ցորենն ու այգիները։ Նույն տրե ամսի քսանհինգին երկրում ծանր ու սաստիկ արհավիրք տեղի ունեցավ, որ տևեց երեք գիշեր, ինչպես Նինվեում։ Դա սկսվեց գիշերվա առաջին պահին և տևեց մինչև արշալույսը. տարվա այդ ժամանակին ոչ հատուկ մթին խավար տիրեց՝ Եգիպտոսի նսեմացյալ խավարի նման։ Ամպերը բախվելով միմյանց այնպես էին որոտում, ինչպես կորոտային ապառաժի կամ ադամանդի կարծրություն ունեցող լեռները, եթե միմյանց բախվեին։ Կայծակների փայլատակումը բռնել էր երկնակամարը. երկնքում չկար մի կետ, որտեղ չլիներին հողմախառն փայլատակումներ։ Ո՞վ կարող էր իր աչքերով նայել վերջ չունեցող ահավոր փայլատակումներին։ Մարդիկ երեք գիշեր կրկնվող այս երևույթից այնպես էին ահաբեկվել, որ բոլորը՝ տղամարդ թե կին, ծեր կամ երեխա եկեղեցի գնալով մեծ

*հառաչանօք բարեխօս ունելով զՏիրամայրն և զամենայն զսուրբս նո-
րա։ Ապա գթացեալ Ողորմածն Աստուած յարարածս իւր, դադարեցոյց
զսպառնալիս կորստեան անդարձիցն ի մեղաց և նսեմացեալ անհա-
ւատիցն։ Եւ յորժամ եղև արհաւիրքս, Հայոց թուականն էր ՈԴ։ Մինչև
ցայս վայր խօսեցաք, զոր լուաք և տեսաք աչօք մերովք։*

*Յետ այսորիկ իբրև դարձաւ ամօթով սուլտանն Թուրքաց յերկիր
իւր, ապրեալ լինէր ամիսս տասն, քանզի բողոք անմեղ սպանելոցն
և անդարձ գերեացն եհաս յականջս Տեառն զօրութեանց. և եղև նմա
հիւանդանալ, կոչեաց զորդի իւր, զանուանեալն Ալիճ-Ասլան, և յարու-
ցեալ յաթոռոյ իւրմէ երկիր եպագ որդւոյ իւրոյ առաջի մեծամեծաց իւ-
րոց. և եդ զթագն իւր ի գլուխ նորա և ինքն վճարեաց ի կենցաղոյս, թո-
ղեալ զամենայն մեծութիւնն որդւոյ իւրում. և էր թուականն Հայոց ՈԴ։
էին և այլ որդիք նորա երկուք. մինն էր առատաձեռն առ ամենեսեան և
զուարթ դիմօք քան զեղբայրն իւր, որ եղև սուլտան, զոր կարծիս բերէր,
թէ զուցէ ոչ Հաւանի կամաց իմոց, երկնչէր ի նմանէ. և էր մարմնովն
ամբողջ քան զնա. և ի սադրելոյ ոմանց ի ժամ գինարբուքեանն և ի խրա-
խութեանն իւրեանց՝ ի դիշերի խեղդամահ արարեալ սպանաւ յեղբօրէն.
իսկ կրսեր եղբայրն առ անգամ մի հնազանդեալ նմա իբրև որդի սիրելի,
բայց յերկիւղէ նորա փախստական եղև յամուր աւանսն իւր ի Գանզոն և
յԱնկիւռիա և այլ ոչ ևս ետես զնա. զի ոչ միայն զեղբայրն եսպան, այլ
և զայլ մեծամեծսն իւր և զամիրայս և զմեծ իշխան Հօրն իւրում որ
անուանէր Պաղտային, և զիատին իւրոյ Հօրն։ Իբրև ետես զայս մեծ
ամիրայն Ադուլ-Ասլան, որ էր որդի ամիր Խազէ և տէր Սեբաստիոյ
և աշխարհին Գամրաց, ոչ հաւանեալ նմա՝ զօրաժողով արարեալ զբազ-
մութիւն հեծելոց, եկն յերկիրն Լիկանդոնին և տարեալ զբրիստոնեայսն
սիրով յերկիր իւր. և զամուրն Լաոիս՝ և զայն ևս էառ. զայսոսիկ գոր-
ծեաց վասն եղբօրորդւոյ իւր՝ զոր ունէր թշնամութիւն ընդ նմա։ Իբրև
ծանուցաւ Ալիճ-Ասլանայ՝ ժողովեալ զղօրս հօր իւրոյ և այլ բազմու-
թիւն զօրաց հեծելոց և եկն ընդդէմ նորա. և ճակատեցան ընդդէմ իրե-
րաց, բազում ժամանակս և միջնորդ մտեալ մոլար կուռայիցն իրեանց,
ոչ ետուն պատերազմել ընդ միմեանս. ի վերին երեսս խաղաղութիւն
արարեալ առժամանակ մի՝ և դարձան յաշխարհն իւրեանց. և այս եղև
երկեամ մի, ոչ խաղաղութեամբ դաշնաւորեալ և ոչ պատերազմաւ վճա-*

երկյուղածությամբ, դաժան արտասվելով և խոր հառաչելով Տիրամոր և բոլոր սրբերի միջնորդությանն էին դիմում։ Եվ գթայց ողորմած աստվածը իր արարածներին, դադարեցրեց չղջացող մեղավորների և նույր անհավատների կորստյան սպառնալիքները։ Այս սարսափները սեպի ունեցան հայոց 603 թվականին [11 փետրվար 1154—10 փետրվար 1155 թ.]։

Մինչև այստեղ մենք պատմեցինք այն անցքերի մասին, որոնց ականջալուր և ականատես եղանք։

Թուրքերի սուլթան [Մասուտը], այդպես խայտառակ եղած իր երկիրը վերադառնալուց հետո, ապրեց տասը ամիս [միայն]. անմեղ կոտորվածների և անվերադարձ գերվածների բողոքի ձայնը հասավ դրոությանց Տիրոջ ականջին։ Սուլթանը հիվանդացավ, կանչեց իր որդուն՝ Խլիճ Ասլան կոչվածին և գահից վեր կենալով, իր մեծամեծների ներկայությամբ երկրպագեց նրան, իր թագը դրեց նրա գլխին և, բովանդակ իշխանությունը ժառանգելով որդուն, վախճանվեց։ Հայոց 604 թվականն էր [11 փետրվար 1155—10 փետրվար 1156 թ.]։ [Մասուտն] ուներ երկու որդի ևս, որոնցից մեկը բոլորի հանդեպ առատաձեռն էր և բարեհամբույր, ի տարբերություն սուլթան դարձած իր եղբոր, որը վախենում էր նրանից, ենթադրելով, որ նա կարող է իրեն չհնազանդվել։ Նա սուլթանից ավելի թիկնեղ էր։ Ոմանց դրդմամբ սուլթանը իրենց խրախճանքի ժամանակ գիշերով իր եղբորը խեղդամահ արեց։ Կրտսեր եղբայրը թեև հնազանդ էր [Խլիճ Ասլանին] ինչպես սիրելի որդի, այնուամենայնիվ, նրանից երկյուղելով, դիմեց փախուստի իր ամուր ավանները՝ Գանդրա և Անկյուրա, և այլևս չտեսավ նրա երեսը։ [Խլիճ Ասլանը] ոչ միայն եղբորն սպանեց, այլև իր ուրիշ մեծամեծներին, ամիրաներին, իր հոր մեծ իշխանին, որ Պաղտային էր կոչվում, ինչպես նաև իր հոր խատիին[34]։ Այդ բոլորը դուր չեկավ մեծ ամիրա Աղուպ Ասլանին, որ Ամիր Խազիի որդին էր և Սեբաստիայի ու Դամիրքի տերը, ղորահավաք անելով մեծաթիվ հեծելազորը, նա եկավ Լիկանդոս գավառը[35] և քրիստոնյաներին սիրով տարավ իր երկիրը։ Նա գրավեց նաև Լարիսա ամրոցը։ Նա այդպես վարվեց, որովհետև իր եղբորորդու նկատմամբ թշնամություն էր տածում։ Իմանալով այդ մասին, Խլիճ Ասլանը հավաքեց իր հոր զորքերը և այլ մեծաթիվ հեծելազոր, եկավ նրա դեմ։ Նրանք երկար ժամանակ իրար դեմ ճակատ կազմած կանգնեցին, բայց իրենց խոտոր մոլլաների[36] միջնորդությունը չթողեց միմյանց դեմ պատերազմել։ Նրանք ժամանակավորապես առերես հաշտվեցին և վերադարձան իրենց տիրապետությունները։ Այս վիճակը, որ ոչ հաշտության պայմանագրով էր հաստատված, ոչ էլ պատերազմով վերջացած,

րեալ։ Ապա յետ այսորիկ չարժեալ Աղուպ-Ասլանն, եկն գաղտագողի յերկիրն Ջահնայ ի մայրաքաղաքն Սպլասթայ, և որպէս միտք մարդոյ հաստատեալ են ի խնամս չարին ի մանկութենէ, մոռացեալ զգութ հայրենի տիրութեան սուլտանին. զայս լուեալ սուլտանին՝ յօժարութեամբ և խրոխտալով գայ ի խնդիր վրիժուց սննդեան երկրին իւրոյ։ Եւ Աղուպ-Ասլանն իմացեալ զգալուստ նորա, առեալ զերկիրն ամենայն, ոգիս իբրև հօթանասուն հազար, տարեալ յերկիր ոչ գերութեամբ. և սուլտանն ոչ ժամանեալ նմա յերկիր իւր, քանզի ընդ մոլար ճանապարհ գնաց տանելով զքրիստոնեայսն. և սուլտանն մտեալ յերկիրն Լիկաոնին. և նոքա ձանձրացեալք ահաւոր և ի մեծ դժարիչ նորա, ելան յօժարութեամբ ղհետ սուլտանին՝ երդմամբ ընկալեալ զնոսա ոչ տանելով ի չետս զոր գնացին ղհետ նորա։ Եւ Աղուպ-Ասլանն ամրացուցեալ զտարեալս յերկիր իւր, եկն բանակեցաւ ընդդէմ սուլտանին ճակատ առ ճակատ. և առաջնորդք նոցա ընդ մէջ նոցա ոչ տային պատերազմել։ Ապա յետ աւուրց բազմաց սրամտեալ սուլտանն՝ մեծաւ զօրութեամբ եկն ի վերայ նորա, և գարձեալ առաջնորդքն անկանէին յոտս սուլտանին՝ աղաչէին ասելով։ «Մի՛ անայր առներ զտուն Մսիրմանացւոց»։ Եւ խոնարհեալ ի պաղատանս նոցա՝ սէր առնելով գլուխ առ գլուխ և ոչ դարձուցանելով զտարեալ քրիստոնեայսն. այսու պատճառանաւ հաւանեալ սուլտանին. քանզի յարեաւ ոմն Ստեփանէ անուն, եղբայր Թորոսի Սեւաստիոսի, որ շարժեալ եղև յանհանճար և ի քսու մարդոց, և այսու ոչ կամաւ Տեառն յաղագս առնելոյ երկրիս քրիստոնէից յայլազգեաց և ոչ օգնելով եղբօր իւրոյ, վասն զի յոլով քրիստոնեայս սրախողխող առնելով և յընչից և ի սուացուածոց մերկ և կողոպուտ առնէին զազգս իւրեանց, ոչ նմանելով ի քրիստոնեայս, խնամ ունելով առ իրեարս որպէս վարժեալք ի գրոց. յաղագս այսորիկ հարկ եղև սուլտանին գալ յերկիրս կիսոնի, զոր թափեալ էր հօր իւրոյ։ Եւ անօգնական քրիստոնէիցն լուեալ զգալ նորա, փախստական եղեալ՝ ուստի ոչ էին ժողովեալ. և նորա եկեալ դարձեալ նուաճեաց զերկիրս խաղաղութեամբ ի հնազանդութիւն հրամանի իւրոյ, սէր առնելով ընդ թագաւորն Երուսաղէմի և ընդ տէրն Անտիոքու և ընդ Թորոս յաղթողն և ինքն դարձաւ յաթոռ իւր խաղաղութեամբ։ Եղև այս ի թուականութեան Հայոց ՈՋ յՕգոստոս ամսոյ ի մուտն, յորժամ եկն ի Բերդուսն, զոր էր առեալ Ստեփանի բռնու-

տևեց երկու տարի։ Այնուհետև Աղուպ Ասլանը շարժվեց և ծածուկ եկավ Ջհան գավառի Ապլասթա մայրաքաղաքը. այնքանով, որ մարդու չարամտությունը մանկությունից է գալիս, նա մոռացավ հայրենասեր սուլթանի դուրը։ Սուլթանը, լսելով այդ մասին, նախանձախնդրությամբ, հոխորտալով եկավ իր սեփական երկրի վրեժն առնելու։ Աղուպ Ասլանը, իմանալով նրա գալստյան մասին, տեղահան է անում ողջ բնակչությանը՝ շուրջ յոթանասուն հազար հոգի, տանում [իր] երկիրը, բայց ոչ որպես գերի։ Սուլթանը չգտավ նրան իր երկրում, քանզի քրիստոնյաների հետ միասին նա գնացել էր կողմնակի ճանապարհով։ Սուլթանը մտավ Լիկանդոս գավառը։ [Գավառի բնակիչները] հոգնած և սարսափած [սուլթանի] պատճառած նեղությունից, հոժար կամքով հանձնվեցին, նրանից երդում առնելով, որ նա հանձնվողներին գերի չի քշի։ Աղուպ Ասլանը, իր երկիրը տարածներին պատսպարելով, լկավ բանակեց սուլթանի դեմ հանդիման։ Բայց նրանց հոգևոր առաջնորդները միջամտելով, չէին թողնում, որ միմյանց դեմ պատերազմեն։ Բազում օրեր անց գաղազած սուլթանը մեծ զորքով հարձակվեց [Աղուպ Ասլանի] վրա, բայց հոգևոր առաջնորդները դարձյալ ընկան սուլթանի ոտքերը և պաղատագին ասացին. «Մուսուլմանների երկիրը մի արա անայր»։ [Սուլթանը] տեղի տվեց նրանց թախանձանքին՝ կետ առ կետ հաշտության պայմանագիր կնքեց և համաձայնեց, որ [Աղուպ Ասլանը] իր տարած քրիստոնյաներին չվերադարձնի։ Սուլթանն այդ պայմանին ընդառաջ գնաց, որովհետև հանդես էր եկել ոմն Ստեփանե՝ Թորոս Սեվաստոսի եղբայրը։ Երբ Տիրոջ կամքին հակառակ քրիստոնյաների երկիրը այլազգիների կողմից նվաճվում էր, [Ստեփանեն], տգետ և քսու մարդկանց դրդմամբ, առանց իր եղբոր [Թորոսի] օգնության գործի էր անցել։ Բազում քրիստոնյաներ սրախողխող արեցին միմյանց, իրենց ազգակիցների ինչքն ու ունեցվածքը թալանեցին ու կողոպտեցին, նրանք վարվեցին քրիստոնյաներին ոչ վայել ձևով՝ հոգատար չեղան միմյանց հանդեպ, ինչպես սովորեցնում են սուրբ գրքերը։ Ահա դրա համար սուլթանն ատիպված եկավ Կիսոն[37] գավառը, որ դեռ իր հայքն էր դարձել[38]։ Անպաշտպան մնացած քրիստոնյաները, լսելով նրա գալստյան մասին, փախուստի դիմեցին այնպիսի վայրեր, որտեղից չէին բերվել։ [Սուլթանը] եկավ և առանց պատերազմի վերստին նվաճեց, իրեն հնազանդեցրեց գավառը և բարեկամություն հաստատեց Երուսաղեմի թագավորի[39], Անտիոքի տիրոջ[40] և հաղթող Թորոսի հետ, որից հետո խաղաղությամբ վերադարձավ իր մայրաքաղաքը։ Հայոց 606 թվականի [10 փետրվար 1157—9 փետրվար 1158 թ.] օգոստոս ամսի սկզբին նա եկավ Բերդուս, որը բռնությամբ ու նենգությամբ խլել էր Թորոսը իր

թեամբ նենգեալ եղբօր իւրոյ Թորոսի և սիրոյ աղագաւ տուեալ ի սուտ տանն առանց կամելոյ եղբօր իւրոյ. և զորս ի ներքս ի բերդին մարդիկ հնձեալ և հետևակ՝ զամենայն ապատս արարեալ վասն Թորոսի հնազանդութեանն և տալոյ պերդին։

Եւ նախ քան զայս, մինչ Թուականն ՈԸ էր ի Հոկտեմբերի ամսոյ բսանևվեց, սկսաւ շարժ լինել յամենայն երկիր. և բազում քաղաքք Տաճկաց ի սահմանս Արաբիայ, որ է Հալպ՝ կործանեցան ի հիմանց. և զաղգս քրիստոնէից պահեաց Տէր մինչև ցայժմ. և անզադար լինէր շարժն մինչև ի փոխել Թուականին, որ ոչ կայր համար կամ թիւ զամիսս չորեքտասան։

Ապա ի Թուականիս Հայոց ՈԶ ի Հոկտեմբերի ամսոյ երկուսն եղև հողմ սաստիկ անձրևախառն, և բազում վնաս արար յայգիս և ի տարածս խաղողոյ ի տեղիս տեղիս, ուր և հանդիպեցաւ։ Իսկ զմեծի աւանին և զանառիկ Պհեսնոյ ասացից սուղ ինչ. քանզի ի գալն Ստեփանէի ի յերկիրն Բհեսնոյ անօգուտ ղօրօք և ոչ կամաւ եղբօրն իւրոյ, եւտուն նմա արք ոմանք, զոր ինքեանք Քհարմուտ ասէին, և խրատ տուեալ Սեւաստիոսին՝ մի՛ տանել ի պլուխ զառումն բերդին, և զայս ոչ դիտացեալ մեր ևթէ ի խնամոյն Աստուծո՞յ եղև՝ կամ թէ ի նախանձուէ եղբօրն։ Եւ վասն զի դժնեայն այն և ամբարտաւան բռնաւորն, որ էր տէր բերդին, զորոյ և զանունն չվարկայ ընդ գրով արկանել, ելեալ ի խրատուէ սուլտանին իւրեանց, որ վասն քաղցր կամօք նայելոյ ի քրիստոնեայսն, նա առաւել ի նեղ և ի պատուհաս արկանէր նախ զպատուական քահանայս և սարկաւագունս և զպիտանի տանուտեարս և զայլ հասարակաց քրիստոնեայս միապէս չարշարեր և ծանրացուցանէր զՀարկ սակից բնակչաց անուանին Պհեսնոյ՝ արդ մի՛ ոք մեղադրեսցէ նոցա, քանզի յաղագս չար բռնաւորին զանձինս ի մահ եդեալ կոչեցին զՍտեփանէ՝ Թերևս կարասցեն դաւ գործել չարագործ բռնաւորին. և ոչ կարացեալ զբարի խորհելն ի պլուխ տանել, զի մի ոմն նենգեալ ի քրիստոնէից ստեաց երդման ուխտին, զոր ունէին առ իրեարս, երթեալ զգուշացոյց զանիրաւն զայն մի՛ ելանել երթալով ի բաղանիսն՝ ուր մահն պատրաստէր. իսկ նորա հաւատացեալ խրատուն իւր, որ անբարեսէր կեանս ընձեռեաց նմա, ոչ ել արտաքս. և մոռնալ իբրև զարբեալ արեամբ անմեղացն, որ մերձ հանդիպեցան, հրամայեաց կապել ոտիւք և ձեռօք և ի բարձր քարէն ի վայր տայր ձգել։ Զայս չար գործոյ իւրոյ զաջողումն տեսեալ քրիստոնեայքն, յիշելով զմեծ արհաւիրս Ոտհա քա-

եղբոր՝ Ստեփանեի ձեռքից և, իր եղբոր կամքին հակառակ, որպես բանակամության գրավական տվել էր սուլթանին։ Վերջինս Թորոսի՝ իրեն հպատակություն հայտնելու և բերդը հանձնելու դիմաց բոլոր բերդականներին, հեծյալ թե հետևակ, աղատ արձակեց։

Նախքան այս, երբ հայոց 605 թվականն էր [11 փետրվար 1156—9 փետրվար 1157 թ.], հոկտեմբեր ամսի քսանվեցին, բոլոր երկրներում երկրաշարժ եղավ. հիմնահատակ կործանվեցին Արաբիայի սահմաններում գտնվող բազմաթիվ քաղաքներ, [այդ թվում] և Հալեպը։ Տերը պահպանեց քրիստոնյա ժողովուրդներին մինչև օրս։ Երկրաշարժն անդադար շարունակվեց մինչև հաջորդ տարին. տասնչորս ամիս անընդհատ [ցնցումներ] էին լինում, որոնց թիվ ու համար չկար։

Հայոց 606 թվականի հոկտեմբեր ամսի երկուսին փչեց անծրևախառն սաստիկ քամի և հասած տեղը այգիներին ու որթատունկերին մեծ վնաս հասցրեց։

Ես համառոտակի կպատմեմ նաև Պհեանի ավանի և [նրա] անասնի բերդի մասին։ Երբ Ստեփանեն անպետք գործով և հակառակ իր եղբոր կամքին եկավ Քեսունի դեմ, նրան միացան ոմանք, որոնք իրենց Քյարմուտ[41] էին կոչում։ Թորոս Սևաստոսը [վերջիններիս] խորհուրդ տվեց բերդի գրավումը գլուխ չբերել։ Դա աստծո նախախնամության դրդո՞ւմն էր, թե՞ դեպի իր եղբայրը՝ [Ստեփանեն] տածած չարակամությունը, մենք չգիտենք։ Բերդատերը, այն դաժան և ամբարտավան բռնակալը, որի անունը արժանի չգտա գրի առնել, հակառակ իր սուլթանի կարգադրության՝ քաղցր աչքով նայել քրիստոնյաներին, սկսեց ավելի շատ նեղել ու պատուհասել պատվարժան քահանաներին, սարկավագներին ու պիտանի ուսուցիչներին. նա անխտիր չարչարում էր նաև հասարակ քրիստոնյաներին ու ծանրացնում Պհեանի ավանի բնակիչների հարկերի բեռը։ Դրա համար Քող ոչ ոք չմեղադրի [բնակիչներին]. դաժան բռնակալի պատճառով էր, որ նրանք իրենց կյանքի գնով կանչեցին Ստեփանեին, մտածելով, որ կկարողանան ոխակալ բռնակալի դեմ դավ նյութել։ Բայց նրանց չհաջողվեց այդ բարի նպատակը գլուխ բերել, քանզի քրիստոնյաներից մեկը, դավաճանելով, դրժեց միմյանց տված երդումը, գնաց և այդ նենգավորին զգուշացրեց՝ չգնալ բաղնիս, որտեղ ծրագրված էր նրա դեմ մահափորձ կատարել։ Եվ նա, հավատալով իր չար կյանքը իրեն ընձեռողի խորհրդին, տնից դուրս չեկավ։ Անմեղների արյամբ հարբածի նման մռնչալով, նա հրամայեց հանդիպածի ձեռքն ու ոտքը կտրել և բարձր ժայռից ցած գլորել։ Քրիստոնյաները, տեսնելով նրա չարագործության ծավալումը և հիշելով Ուռհա քաղաքի գլխին եկած մեծ փորձանքը, դիմեցին իրենց օգ-

զաքին, զիմեալ առ նկեալ օգնականն, որ էր ընդդէմ բերդին զօրօք, միտ նգնալ տեսանէր զկատարածն, զոր ոչ եկն ի վերայ: Ապա առեալ զօրաւարն զամենեսեան զարս և զկանայս, զծերս և զտղայս, թողլով իւրեանց յօժարութեամբ զինչս և զստացուածս և զհայրենի ժառանգութիւնս, զոր ի հին և ի նոր ժամանակաց ծնեալ և սնեալ էին և պահեալ էին ի բարեպաշտ իշխանաց իբրև զորդիս սիրելիս, տարեալ զհովանունդ և զփափկասէր արս յանախորժ և անհանգիստ երկրի բնակեցուցանէր. մինչև զմտաւ ածնալ սուլտանին զաւերումն աստուածապահ բերդին Գհեսնոյ և զտառապանս քրիստոնէիցն, ըստ իմաստութեան իւրոյ հնարիւք փոխեաց զաւերիչ աւանին. և ապա սկսան մի ըստ միոջէ պալ բնակիչք տեղւոյն ի քաղցրութենէ սուլտանին, և լցաւ քաղաքն ամենայն՝ խափուր և ունայն ի դոյից իւրոց:

Եւ զի՞նչ ևս ասացից յաղագս քաղաքին Կիւսոնի, որ Թարգմանի վայելուչ. քանզի տէր քաղաքիս կարգեալ յարքայէն տեսուչ և կողմնապահ՝ ոչ կարաց ելանել և հալածել զնկեալսն ի վերայ յինքեանց. զայսոսիկ խորհելով ինքն և իւրքն ամենայն չարին խորհրդով, հանեալ ի քաղաքէն զպատուական քահանայսն և զփառաւոր և զպիտանի տանուտէրսն և զամենայն մարդիկն առհասարակ, մինչև ոչ մի այր մնացեալ ի ներքս, բայց միայն զկանայս և զտղայս թողլով ի քաղաքին. և այս միայն բարի գտեալ առ իշխանն՝ սրբութեամբ և առանց կարծեաց ետ պահել զընտանիսն ելելոցն ի քաղաքէն. և զորս հանին յարտաքոյ՝ եղև բնակութիւն փոխանակ բարձրայարկ ապարանից և տանց իւրեանց՝ դեզք և վանորայք. և որք ոչ էին կարողք հեռանալ, ի հովանի ծառոց և ի պատից նստեալ դեգերէին, անբան և անգործ՝ ակն ունելով սրոյ և գերութեան և յայսմ երկիւղէ մոռանային զպանդխտութիւն և զանհանգիստ կեանս իւրեանց: Եւ եղև երկարումն այս մեծի տառապանաց սկսեալ ի Մարերի ամսոյ մինչև ի Յուլիս ամիս. և ի գալ մեծի սուլտանին մինչև ի Բերդուան, ապա խաղաղացաւ երկիր բնակելով մարդկան ի տունս իւրեանց. և հրամանաւ մեծին Թորոսի տուեալ եղև Բերդուան ի սուլտանն սիրոյ աղագաւ, առանց կամաց Ստեփանէի, զոր էր առեալ բռնութեամբ ի Թուրքէն՝ որ էր այր ժանդ և ատեցող քրիստոնէից, որ և սպանաւ ի Ստեփանէ:

Յետ այսր ամենայնի գնաց սուլտանն յաթոռ իւր՝ խորհելով ընդ մեծամեծս դրան իւրոյ յաղագս հաստատելոյ զսէրն, զոր արար ընդ Փռանգաց և ընդ Հայերն: Եւ նոքա հաւանեալ սուլտանին՝ դարձեալ առաքեաց զհաւատարիմս իւր յԵրուսաղէմայ յԱնտիոք և առ Թորոս, անխաբան ունել զդաշինս սիրոյ, զոր կամեցան երկոքեան կողմունքն.

նության ժամանակին, որ զորքերի գլուխն անցած բերդի դեմ էր եկել և ակնատես եղել գժբախտությանը, որի առաջն առնել, սակայն, չէր կարողացել։ Զորավարը՝ [Ստեփաննն], վերցնելով բոլորին՝ տղամարդկանց ու կանանց, ծերերին ու երեխաներին, որոնք հոժար կամքով լքեցին գույք և ունեցվածք, հայրենի երկիրը, որի վրա հնուց ի վեր [հորից որդի] ծնվել ու մեծացել էին, բարեպաշտ իշխանների կողմից պաշտպանվել, որպես սիրելի որդիներ, այդ փափկակյաց ու փափկասեր մարդկանց տարավ բնակեցրեց մի անդուր և խռովահույզ վայրում, մինչև որ սուլթանը, տեղեկանալով Պհեսնի աստվածատուր բերդի ավերման և քրիստոնյաների տառապանքների մասին, իր իմաստությամբ կարգադրեց դադարեցնել ավանի ավերումը, որից հետո, ահա, տեղի բնակիչները սուլթանի բարությունից դրդված սկսեցին աստիճանաբար վերադառնալ։ Բնակիչներից դատարկված ողջ քաղաքը նորից լցվեց։

Ի՞նչ պատմեմ և կիսոն քաղաքի մասին, որ թարգմանաբար նշանակում է դեղեցիկ։ Կայսրից վերակացու և կառավարիչ նշանակված քաղաքի տերը չկարողացավ դիմադրել և ետ մղել իրենց վրա հարձակվողներին։ Նա և իր բոլոր յուրայինները շար նպատակով քաղաքից դուրս հանեցին պատվարժան քահանաներին, հարուստ և պիտանի տանուտերերին և առհասարակ բոլոր տղամարդկանց. քաղաքում չմնաց ոչ մի տղամարդ, այլ միայն կանայք և երեխաներ։ Իշխանը միայն մի լավ բան կատարեց, այն, որ նա կարգադրեց սրբությամբ և ապահով կերպով պահպանել քաղաքից դուրս եկած տղամարդկանց ընտանիքներին։ Դուրս եկածները իրենց բարձրահարկ դղյակների և տների փոխարեն բնակվեցին գյուղերում ու վանքերում։ Նրանք, ովքեր ի վիճակի չեղան հետանալ, քարշ էին գալիս ծառերի կամ պատերի տակ, լուռ ու անգործ սպասելով մահվան կամ գերության, որոնց սարսափից մոռացել էին իրենց տարագիր և անհանգիստ կյանքը։ Այս մեծ չարչարանքները տևեցին մարերի ամսից մինչև հուլիս ամիսը։ Մեծ սուլթանի Բերդուս գալով խաղաղվեց դավառը, և մարդիկ բնակվեցին իրենց տներում։ Մեծ Թորոսի հրամանով Բերդուսը տրվեց սուլթանին՝ որպես բարեկամության գրավական՝ հակառակ Ստեփանեի կամքին, որը զենքի ուժով էր այն գրավել դաժան և քրիստոսատյաց թուրքից, որն ի վերջո Ստեփանեից սպանվեց։

Այդ բոլորից հետո սուլթանը գնաց իր երկիրը, խորհրդակցեց իր արքունիքի մեծամեծների հետ՝ ֆրանկների և հայերի հետ հաստատած բարեկամության շուրջը։ Ստանալով նրանց հավանությունը, սուլթանը իրեն վստահելի մարդկանց դարձյալ Ծրուսաղեմ, Անտիոք և Թորոսի մոտ ուղարկեց՝ երկու կողմի ցանկությամբ հաստատված բարեկամա-

և այս ոչ եթէ ի բնութենէ սրտի իւրոյ սուլտանին եղև, քանզի միթէ հաղորդութիւն է Քրիստոսի և Բելիարայ, այլ այս էր պատճառ. որդին Զանգէ, որ էր տէր Հալպայ և փեսայ սուլտանին, Նլիճ-Ասլանի քոյր, յետ մահուան Մասուտ սուլտանին արհամարհեաց զորդի իւր, զոր եդ յաթոռ թագաւորութեան իւրոյ և բռնացաւ ի վերայ երկրին քրիստոնէից և էանց զսահման պատուիրանի Մասուտ սուլտանին. և էառ զոր կարաց զանառիկն Անթաւի և զՓարպման և զդեղս ամենայն։ Եւ սուլտանն Նլիճ-Ասլան բազում անգամ դրեաց առ փեսայն՝ «Մի՛ առներ անիրաւութիւն, զարձո, ասէ, զերկիրն իմ՝ զոր Հայրն իմ սահման եդ ընդ իս և ընդ քեզ»։ Եւ նորա ոչ կամեցեալ լսել և զառայր խրտխռտալով ընդ ազգն արիական առաւել քան ընդ արքային Պարսից. և մինչդեռ յայս մեծի տարակուսի էին թագաւորն Երուսաղէմի և տէրն Անտիոքու Ըռնաղարն, այլ Այն, Որոյ կարողութիւն զօրութեան բարձր է քան զերկինս և ոչ իսպառ անտես առնելով Յովու զդաւազան մեղաւորաց ի վիճակս արդարոյ ըստ անչուտութեան մերոյ, ասպա յանկարծակի յամենամաքուր արդար իրաւանցն Աստուծոյ ել հրաման պատուհասի և եհար զնա սաստիկ և դառն ցաւօք, ուստի և յամենայն ազգաց իմաստասէղջ բժիշկ ժողովեալ ոչ կարացին հնարս գտանել պատուհասի նորա, այլ օր քան զօր առաւել սաստկանայր բարկութիւնն Աստուծոյ ի վերայ նորա. զի էր դաշամբք և մեծապէս երդմամբ ուխտեալ սրտի մտօք ընդ Ճօսլին կոմսին, թէ որպէս գործեաց առ նա անողորմ և անմարդի բարօք, զոր ոչ լուաւ ի մարդկանէ յազգս և ի դարս ժամանակաց, եթէ ոք կալեալ զսիրելի յայլոց դաւելոյ և ոչ առ ինքեանց պատերազմաւ, իննամեայ ժամանակաւ կապեալ ի շղթայս, և յետոյ խաւարեցոյց զաչս այնպիսւոյ առն մեծի և յաղթողի բազում պատերազմաց, որ էր տէր աշխարհաց. օրհնութիւն և գոհութիւն, բարեբանութիւն ամենասուրբ դաստատանացն Աստուծոյ յամենայն բերանոյ։

Դառնամք յետ, զոր մոռացաք ի թուականութենէն Հայոց ՈՒ թագաւոր նստէր յԵրուսաղէմ ամաց ութեասանց, որդի Կոնթանճօ թագաւորին Փռանդաց, զոր ի ձեռն առեալ զնա մեծին Աստուծոյ, նա նմա յաղթութիւն մեծ՝ տիրել անառիկ, անմատոյց անքրիստոս աւանին Ասկաղոնի. զոր բազում աշխատութեանց համբերեալ արիական ազգն Փռանգաց հանդերձ բարի և սուրբ թագաւորաւն զտարի մի՝ և յոլովք ի նոցանէ արժանի եղեն մարտիրոսական պսակին և ի փրերացն ոչ սակաւ։ Ապա յետ այսց տառապանաց բարեխօս և յոյս քրիստոնէից Տի-

կան դաշինքը ամուր պահպանելու [կոչով]։ Դա կատարվեց ոչ թե սուլթանի ինչ-որ բարեսրտությամբ (ի՞նչ ընդհանուր բան կա Քրիստոսի և Բելիարի[42] միջև). դրա պատճառը հետևյալն էր. Զանգիի որդի [Նուր էդ-դինը], որ Հալեպի տերն էր և սուլթանի փեսան (նա ամուսնացել էր Ալիճ Ասլանի քրոջ հետ), Մասուտ սուլթանի մահից հետո արհամարհեց նրա որդուն՝ [Ալիճ Ասլանին], որին [Մասուտը] իր թագավորությունն էր ժառանգել, բռնատիրեց քրիստոնյաների շրջանների վրա և խախտեց Մասուտ սուլթանի նշած սահմանագիծը։ Նա գրավեց ինչ որ կարողացավ՝ անառիկ Այնթափը[43], Փարզմանը և բոլոր գյուղերը։ Սուլթան Ալիճ Ասլանը բազմիցս դիմեց իր փեսային, գրելով, թե՝ «Անարդարություն մի՛ գործիր, վերադարձրու իմ շրջանները, որոնք հայրս իմ և քո միջև սահմանագծեց»։ Նա չէր ուզում լսել նրան և հոխորտում էր ավելի՛ արյաց ազգի դեմ, քան՝ պարսից արքայի։ Եվ քանի դեռ Երուսաղեմի թագավորն ու Անտիոքի տեր Ռենալդը մեծ շփոթության մեջ էին, աստված, որի ուժն ու զորությունը ավելի մեծ է, քան երկինքը, ով հաճախակի մեր անհուսության ամենևին չի թույլ տալիս, որ անարդարների գավազանը մուտք գործի արդարների վիճակի մեջ, անակնկալ կերպով իր ամենասուրբ և արդար ատյանից վճիռ արձակեց՝ նրան այնպիսի դառն հիվանդություն ուղարկեց, որը չկարողացան բուժել բոլոր երկրներից հրավիրված հմուտ բժիշկները, դեռ ավելին, աստծո բարկությունը օրեցօր ավելի էր սաստկանում նրա վրա։ [Դրա պատճառն այն էր], որ նա կոմս Ճոսլինի հետ դաշինք էր կնքել, անկեղծորեն այն հաստատել մեծ երդումով, բայց անգթաբար և տմարդի ձևով վարվել նրա հետ։ Ոչ ոք դեռ չի լսել, որ մեկը, այլոց սադրանքով և ոչ թե իր դեմ պատերազմելու առթիվ, իր ընկերոջը ձերբակալի, ինը տարի շղթայակապ պահի և հետո էլ խավարեցնի աչքի լույսը, այն էլ այնպիսի երևելի, բազում պատերազմներում հաղթանակներ տարած մի մարդու, որ հանդիսանում էր գավառների տեր։ Թող բոլորն օրհնեն և փառավորեն աստծո ամենաարդար դատաստանը, գոհություն հայտնեն նրան։

Այժմ գնանք ետ, պատմենք այն, ինչ մոռացանք։ Հայոց 602 թվականին Երուսաղեմում թագավորում էր ֆրանկների թագավոր Կոնտ-Անժուի[44] տասնութամյա որդին, որ հզոր աստծո օժանդակությամբ մեծ հաղթանակ տարավ՝ գրավեց անհավատներին պատկանող անառիկ և անմատույց Ասկալոն ավանը։ Այդ բանի համար ֆրանկների քաջարի ժողովուրդը իր սուրբ թագավորով հանդերձ մեկ տարի բազում դժվարություններ կրեց, նրանցից շատերը, այդ թվում բազում ֆրերներ, արժանացան մարտիրոսական պսակին։ Այս տառապանքներից հետո

բամայրն աղաչելով զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ զի տարեալ լիցի յաւէթուիլնն ի գլուխ յաղագս Համբերելոյ նեղութեանն, և տուեալ եղև քաղաքն ի ձեռն Թագաւորին և փրկեցաւ յաւուր Փոխման տօնի սրբոյ Աստուածածնին նորին բարեխօսութեամբն։

Յետ այսորիկ նենգութիւն գտեալ յանաստուած աղգացն Սկիւթացւոց, մինչև հարկեալ մարդասէր Թագաւորն անհամարս ի նոցանէ սրոյ ճարակս արարեալ զլեռնալսն արեամբ քրիստոնէիցն և զայլսն հանեալ արտաքոյ քաղաքին բնակեցուցանէր. և փոխանակ անքրիստոս ձայնիցն՝ ձայն կենսաբեր Աւետարանին լսելի լինէր յամենայն տեղիս. կանգնեցին զնաչն փրկչական յամենայն բարձր ապարանս ժանդայեալ, նսեմացեալ, եղեռնաթիւ ազգացն յամօր և ի կորանս իւրեանց, իսկ մեզ հաւատացելոցս ի պարծանս և ի յուրախութիւն։ Ասա յետ այսր մեծի և սքանչելի յաղթութեան սակաւ մի դադարեալ հանգստեամբ, սկիզբն և հնար առնէին քաղաքին Դամասկոսի. քանզի ի փոխել թուականին ՈԳ եկն որդին Զանգէ, որ էր տէր Հալպայ, և որպէս խաբէութեամբ տիրել կամեցաւ Դմշկայ՝ թէպէտ և քաղաքացիքն ոչ կամեցան յաղագս եղկելի որդւոց իւրեանց, զոր պատանդ եդեալ էին յերուսաղէմ յաղագս հաւանելոյ կամաց Թագաւորին, և նա խաբէութեամբ մտեալ ի քաղաքն տիրեաց Դմշկայ։

Եւ ի վերանալ թուականութեան ՈԴ տուեալ զանձս բազումս Թագաւորի երուսաղէմի և տէրն Անտիոքայ, հաւանեալ շար կամաց նորա՝ սէր արարին, թոյլ տուեալ նմա գալով յերկիրս քրիստոնէից, զոր յառաջն Փռանգ ունէին. և նորա եկեալ բազմութեամբ զօրօք յանուանին ի մեծն յԱնթափ, ոչ յամելով ի վերայ նորա. և բռնով փլուցին զպարիսպն և մտեալ ի ներքս՝ սրով սպանին զյոլովս յայլազգիացն և զբազումս ի քրիստոնէիցն, զորս գերեցին, զորս սպանին։ Յետ այսորիկ յղեալ պատգամս ի կողմնապահ երկրին Ռապնայ և Կիսոնի խնդրել սիրով ի նոցանէ զերկիրն, զոր նոցա ոչ հաւանեալ յաղագս երկիւղի սուլտանին. յետ այսորիկ համբաւ հասանէր առ նա, եթէ Թագաւորն երուսաղէմայ և տէրն Անտիոքայ զուխտ դաշանցն, զոր եդին ընդ քեզ սիրոյ սպառնալ, զողին և ասպատակելով աւերեցին զերկիրն. և նա փութանակի գնաց ի Հալպ և ի Դամասկոս. և այս երկար խռովութիւնս վասն այնորիկ երկարաձգէր, զի դէմ յանդիման ոչ զօրէր պատերազմել ընդ

Տիրամայրը՝ քրիստոնյաների բարեխոսն ու հույսը, տեսնելով, թե ինչպես են նրանք դժվարությունները համբերությամբ տանում, աղաչեց մեր տեր Հիսուս Քրիստոսին, որ հաղթությունը պլուխ գա։ Եվ Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ նրա ննջման տոնին, ահա, քաղաքը հանձնվեց թագավորի և ֆրերների ձեռքը։

Դրանից հետո բացահայտվեց սկյութացվոց անաստված ժողովրդի կազմակերպած դավադրությունը, և մարդասեր թագավորն ստիպված եղավ նրանցից շատերին՝ քրիստոնյաների արյամբ շաղախվածներին, սրի քաշել, իսկ մի մասին էլ հանելով՝ բնակեցրեց քաղաքից դուրս։ Ջարափառ ձայների փոխարեն ամենուրեք լսելի եղավ կենարար ավետարանի ձայնը, բոլոր բարձր ապարանքների վրա Փրկչի խաչը կանգնեցվեց՝ համոթ և ի խայտառակումն այդ դաժան, խավարային, ոճրագործ մարդկանց և ի պարծանս և հուրախություն մեր՝ հավատացյալներիս։ Այս փառավոր և հրաշալի հաղթանակից հետո [ֆրանկները] մի փոքր հանգստացան և ապա ձեռնամուխ եղան Դամասկոս քաղաքի [դրավմանը], քանզի 603 թվականի սկզբին Զանգիի որդին՝ Հալեպի տերը, ցանկացավ նենգությամբ տիրել Դամասկոսին, հակառակ, որ քաղաքացիները թագավորի պահանջի համաձայն երուսաղեմում պատանդ թողած իրենց թշվառ որդիների սիրույն դեմ էին դրան։ Բայց [Զանգիի որդին], ահա, խաբեությամբ մտել և դրավել էր Դամասկոս քաղաքը։

604 թվականի [11 փետրվար 1155—10 փետրվար 1156 թ.] սկզբին նա Երուսաղեմի թագավորին և Անտիոքի տիրոջը բազում ոսկի տալով, նրանց համոզեց ընդառաջ գնալ իր չար մտադրությանը՝ բարեկամություն հաստատել, թույլ տալ իրեն մուտք գործել անցյալում ֆրանկների ձեռքում գտնվող քրիստոնյաների շրջանները։ Եվ նա, առանց հապաղելու, բազմաթիվ զորքերով եկավ հռչակավոր և մեծ Այնթափը. նրանք փորելով փլեցրին պարիսպը և ներս մտնելով սրի քաշեցին բազում այլազգիների ու քրիստոնյաների. բնակչության մի մասը գերի վերցրին, մի մասն էլ կոտորեցին։ Դրանից հետո [Զանգիի որդին] պատգամավորներ ուղարկեց Ռապանի և Կիսոնի կուսակալին՝ առաջարկելով առանց պատերազմի հանձնել գավառը, բայց նրանք սուլթանի վախից մերժեցին[45]։ Դրանից հետո [Զանգիի որդուն] լուր հասավ, թե՝ «Երուսաղեմի թագավորը և Անտիոքի տերը դրժել են քեզ հետ կնքած բարեկամության դաշինքը և ասպատակելով ավերել [քո] երկիրը»։ Դրա վրա նա շտապ կարգով գնաց Հալեպ և Դամասկոս։ Այս խոռվահույզ վիճակի երկարաձգվելու պատճառն այն էր, որ նա ուժ չուներ ճակատ առ ճակատ պատերազմելու ֆրանկների դեմ, իսկ ֆրանկնել

Փոանդն, և Փոանդն ասպատակելով ոչ կարէր տիրել քաղաքին Դմշկայ։

Ապա խորհուրդ առեալ Բագաւորն Երուսաղէմայ փնտռանել Բագաւորին Յունաց, որում անուն էր Մանիլ։ Եւ նորա յօժարութեամբ կամեցաւ և զղուստր հօր եղբօր իւրոյ առաքէ ի ձեռն հաւատարմաց իւրոց հնձելագունդ զօրօք՝ բազում ոսկւով և արծաթով ի քաղաքն Երուսաղէմ. և այլ ևս խոստանայ նմա իսկ Բագաւորն Հռոմոց զալ անձամբ օգնական լինել քաղաքին Երուսաղէմի և ամենայն քրիստոնէից. և ոչ յամեաց, այլ վաղվաղակի ի սոյն ամի, մինչ Թուականն Հայոց ՈՀ էր, եկն Բագաւորն Յունաց յաշխարհն Բորոսի, զոր բռնութեամբ առեալ էր ի կռզմնապահէն Յունաց ի Մսխս, ունելով ընդ իւր բիւրս զօրաց յիսուն։ Եւ Բորոսի նախ իմացեալ զպալուստ արքային, փախստեամբ գայ ընդ երկիրն իւր՝ ունելով զկին իւր և զմնծութիւն գանձուց իւր և զիշխանս իւր և զկին և զստացուածս և զորդի. և եկեալ մտանէ ի քարն, զոր Տաճիկ կոչեն, որում ի հին ժամանակաց ոչ ոք յիշէր զտեղին մարդարենակ կամ ամուր ապաստանի, մոռացեալ զխրատ իմաստակին, որ ասէ. «Ընդ վեհս քան զքեզ մի՛ հակառակիր». և ինքն հնձելագունդ զօրօք իւրովք ոչ դադարէր ի տեղի ուրեք, այլ ի վայրս դժնեայս և մացառուտս շրջէր, ակն ունելով ողորմութեան Վերնոյն, և զԲագաւորն Երուսաղէմի՝ թերևս միջնորդելով առ Բագաւորն Յունաց վասն նորա և վասն տեառն Անտիոքու, որ տեղապահ էր կարգեալ։ Առաւել ևս յայսմ մեծ պատճառէ երկնչէին և պատկառէին ի Յունաց, վասն զի նախ քան զայս երթեալ բրինձն ի սաղրելոյ Բորոսէ զհետ երթալով զօրօք ի կղզին Կիպրոսի նաւօք, և գնացեալ գտին անհոգս և անպատրաստս և իրրև այլազգեաց տիրելով՝ այնպէս աւերեցին զքաղաքս, և զգեղս Բափուր է ունայն առնելով ի տանց և ի ստացուածոց, խրատելով զյոլովս չնկնեցեալսն Յունաց, զունչս և զականջս կտրելով. որ իրրև լուաւ Բագաւորն և մնծամնծք իւր, մնծապէս տրտմեալ յաղագս այսր գործելոց, առժամայն ոչինչ կարացեալ առնել։ Եւ ի գալ Բագաւորին ի Մսխս և յերկիրն ամենայն, մուտ էր Նոյեմբեր ամսոյ, ոչինչ վնասել ումեք ի բնակչաց երկրին. անայր և Բագաւորին Երուսաղէմի գալոյ և ի միասին խորհելոյ զարժանն յաղագս յաղթելոյ անքրիստոս աղգացն և ազատելոյ զեկեղեցւոյն, զոր չունէր բնաւ ի միաս իւր փրկել զբերեալս։

Յետ այսորիկ եկն Բագաւորն Երուսաղէմի և զօրականքն Քրիստոսի փրերքն, և ակն Անտիոքայ յառաջագոյն էր եկեալ առ նա անմեղութեան աղագաւ վասն Կիպրոսի արշաւելոյն. ապա ժողովեալ ըստ նախասացելոյս դասք քրիստոնէից առ Բագաւորն Յունաց, բազում Բախանձեալ զնա մնծաւ աղաչանօք յաղագս Բորոսի քաղցրանալ նմա. և

էլ չէին կարող լոկ ասպատակելով տիրել Դամասկոս քաղաքին։

Այնուհետև Երուսաղեմի թագավորը որոշեց փնտրանալ հունաց կայսեր, որի անունը Մանուիլ էր։ [Կայսրը] սիրով ընդունեց նրա [առաջարկը] և իր հորեղբոր աղջկան, իրեն հավատարիմ մարդկանցով, հնծելազորի ուղեկցությամբ, բազում ոսկով և արծաթով Երուսաղեմ ուղարկեց։ Հռոմոց կայսրը նրան այլ բաներ էլ խոստացավ, անձամբ գալ Երուսաղեմ քաղաքին և բոլոր քրիստոնյաներին օգնության։ Նա չհապաղեց էլ և նույն տարին, երբ հայոց 608 թվականն էր [10 փետրվար 1159—9 փետրվար 1160 թ.], հինգհազարանոց զորքով փութանակի եկավ Թորոսի երկիրը՝ Մսիս, որը նա զենքի ուժով վերցրել էր այնտեղ նստող հունաց կառավարչի ձեռքից։ Թորոսը, իմանալով կայսեր գալստյան մասին, առավ իր կնոջն ու երեխաներին, բազմաթիվ գանձեր, իր իշխաններին և փախավ եկավ իր երկիրը, Տաճիկ կոչվող քարը. մի տեղ, որ վաղուց ի վեր անմարդաբնակ էր համարվում և պատսպարվելու ոչ պիտանի։ Նա մոռացել էր իմաստունի խորհուրդը, թե՝ «Քեզանից ուժեղին մի հակառակվիր»։ Նա իր հեծելազորով անվերջ դեգերում էր, թափառում՝ դժվարանցանելի և մացառուտ վայրերում, ակընկալելով աստծո ողորմածությունը, [հուսալով], որ Երուսաղեմի թագավորը կմիջնորդի հունաց կայսեր առջև՝ իր և տեղապահ նշանակված Անտիոքի սիրոջ համար։ Նրանց՝ հունաց կայսրից վախենալու և երկընչելու պատճառն այն էր, որ սրանից առաջ սլրինցը Թորոսի դրդմամբ զորքով նավատորմիղով գնացել էր Կիպրոս կղզին և նրա բնակիչներին անկազմ ու անպատրաստ գտնելով՝ տիրել նրանց։ Կարծես այլազգիներ լինեին, նրանք ավերեցին քաղաքները, ամայացրին դյուղերը, թալանեցին, քարուքանդ արեցին տները, հույն հոգևորականներից շատերին խոշտանգելին՝ նրանց ըիթն ու ականջը կտրելով։ Կայսրը և նրա մեծամեծները, իմանալով այդ մասին, շատ տխրեցին։ Բայց [կայսրը] միառժամանակ ոչինչ չկարողացավ անել։ Երբ նա եկավ Մսիս և տիրեց ողջ գավառին, նոյեմբեր ամսի սկիզբն էր. նա գավառի բնակիչներից և ոչ ոքի ձեռք չտվեց. սպասում էր Երուսաղեմի թագավորի գալստյան, որպեսզի միասին միջոցներ մտածեն՝ ինչպես հաղթեն չարափառ ժողովուրդներին, ազատեն եկեղեցին։ Բայց նա ամեններին էլ նպատակ չուներ գերյալներին փրկելու։

Դրանից հետո ժամանեցին Երուսաղեմի թագավորը և Քրիստոսի զինվորներ՝ ֆրերները. Անտիոքի տերը վաղօրոք էր ժամանել [կայսեր] մոտ. Կիպրոսի վրա կատարած արշավանքի համար նա թողություն էր ստացել։ Ահա ասածիս պես քրիստոնյաները հավաքվեցին հունաց կայսեր մոտ և շատ խնդրեցին ներողամիտ լինել Թորոսի նկատմամբ։

քստ ատելութեան, զոր ունէին առ Հայք, յանմեղս ի վերին երեսս յանձն էառ միջնորդ և երաշխաւոր առնլով զթագաւորն Սրուսաղէմի և զիրերքն։ Եւ իբրև եկն Թորոս առ թագաւորն Յունաց դատարկ ի սեղանոյ զառաջինն, և ըստ նախախնամութեանն Աստուծոյ հեշտ և բաղձալի թուեցաւ տես նորա թագաւորին Յունաց, և յոլով մեղադրանս մատուցանէր չարախօսացն վասն նորա. և սակաւ աւուրս կացեալ առ նա, կամեցաւ գնալ ի տուն իւր, և թագաւորին հրաման տուեալ գնալ և փութանակի դառնալ ի բանակն։ Եւ նորա ըստ իմաստութեանն իւրոյ պիտացեալ ըզսպէտս զօրաց՝ առեալ ընդ իւր ի դարձն բազում ոչխարս, արջառս և գոմէշս և ձիս տաճիկս, և եկն դարձեալ առ թագաւորն առաջի անցուցանելով զբերեալ ընծայսն ի դիպող ժամանակս։ Եւ նորա մեծապէս զարմացեալ ընդ բազմութիւն սեղանոյն, և զովէր զիմաստութիւն կորովի բանիցն առաջի մեծամեծացն Հոռոմոց և ատելեացն Թորոսի։ Տուեալ նմա գանձս ոսկւոյ և արծաթոյ և զգեստս որպէս վայել է թագաւորի, Թողութիւն արարեալ ի սրտէ ամենայն անհնազանդութեանն և հակառակելոյ թագաւորացդ. խոստանայր և նա բազում համարձակութեամբ տալ և հպատակ կալ հրամանաց թագաւորին, որպէս և արար իսկ։

Յետ այսորիկ խորհուրդ բարի ի մէջ առեալ թագաւորքն և անյաղթելի զօրք Փրերացն, տէրն Անտիոքու և Թորոս, միահամուռն ամենայն ազգ քրիստոնէիցն հաւատովք և ջերմեռանդն սրտիւ միաբանեալ կամ մեռանիլ և կամ փրկել զանղերծանելի գերեալսն ի բազում ժամանակաց յարիւնաշէն քաղաքէն Հալպայ և Դմշկայ։ Եւ չուեալ ամենայն բազմութեամբն եկն յԱնտիոք, և մտեալ ի քաղաքն իբրև ի տուն իւր, զոր ոչ ունէր կարծիս թէ այսպէս փութանակի հաւանին Յունաց թագաւորին։ Խնդրեալ և թագաւորն ի քաղաքացեացն գրաւական զորդիս մեծամեծացն. և նոքա զամենայն ինչ և խնդրեաց՝ յօժարութեամբ տուեալ հնազանդեցան, թերևս ոչ փոխեսցի ի ծառայութենէն զոր գերեզմանին Փըրկագործողի և թագաւորին Սրուսաղէմի խոստացեալ էին յաղագս փեսայանալոյ նմա։ Եւ ելեալ անհուն բազմութեամբ զօրացն մոմռալք ի սիրտս իւրեանց իբրև զառիւծունս մի զմիմեանցբք ելանելով և որպէս զարծուիս սլացեալք ի յերամս կաքաւաց, այնպէս քաջասիրտք փութանային ասպատակաւ արշաւել յաշխարհն Սկիւթացւոց. և եկեալ մինչև ի տեղին որ կոչի Պալանէ, մերձ ի սահմանս Հալպայ՝ աւուր միոյ ճանապարհ. և էր ամենայն ազգն քրիստոնէից ի մեծ խնդութիւն՝ մերձաւորք և հեռաւորք, որք լսեալ էին զմիաբանութիւն հաւատացելոցն յաղագս այլազգեացն կործանման, ազատելոյ ի չար և ի ծանր ծառայու-

[Հույները] թեև դեպի հայերը ատելություն են տածում, սակայն, Երուսաղեմի թագավորի և ֆրերների միջնորդությամբ ու երաշխավորությամբ [կայսրը] առերես ներեց։ Թորոսը հունաց կայսեր մոտ առաջին անգամ եկավ դատարկ ձեռքով, բայց Տիրոջ նախախնամությամբ իր արտաքինը հունաց կայսեր դուր եկավ և հաճելի թվաց. իրեն վատաբանողներին նա բազում մեղադրանքներ ներկայացրեց։ [Թորոսը], մի քանի օր մնալով այնտեղ, ցանկություն հայտնեց տուն գնալ, կայսրը թույլ տվեց գնալ և փութանակի վերադառնալ ճամբար։ [Թորոսը], լինելով խոհեմ մարդ, գիտեր, թե զինվորներն ինչի կարիք են զգում. վերադարձին նա բերեց բազմաթիվ ոչխարներ, արջառներ, գոմեշներ և արաբական ձիեր, վերստին ներկայացավ կայսեր և հարմար առիթով բերած նվերները հանձնեց։ [Կայսրը] շատ զարմացավ այդ մեծ նվերի վրա և հոռոմ մեծամեծների ու Թորոսի թշնամիների ներկայությամբ դրվատեց [Թորոսի] խոհեմությունն ու ճարտար լեզուն, կայսեր վայել նվերներ տվեց՝ ոսկու և արծաթի զանձեր և հանդերձներ։ Նա անկեղծորեն ներեց կայսրերին անհնազանդ լինելու, նրանց չենթարկվելու նրա բոլոր հանցանքները, իսկ [Թորոսն] էլ իր հերթին խոստացավ բացարձակապես հլու հնազանդ լինել կայսրերի հրամաններին. նա իր խոսքի տերը եղավ։

Ահա սրանից հետո [հոռոմոց] և [Երուսաղեմի] թագավորները, ֆրերների անպարտելի զորքը, Անտիոքի տերն ու Թորոսը բարի որոշում կայացրին՝ բոլոր քրիստոնյա ժողովուրդները մի համառ կերպով, հավատով ու ջերմեռանդ սրտով միանալով կամ մեռնել և կամ Հալեպ ու Դամասկոս արյունաշեն քաղաքներից ազատել վաղուց ի վեր գերվածներին։ [Կայսրը] մեծաթիվ զորքով շարժվեց և եկավ մտավ Անտիոք քաղաքը՝ կարծես իր տունը. նա չէր հավատում, որ նրանք այդպես հանգիստ կենթարկվեն հունաց կայսեր։ Կայսրը քաղաքացիներից որպես պատանդ պահանջեց մեծամեծների երեխաներին, և նրանք նրա բոլոր պահանջները սիրով կատարեցին, վախենալով, որ նա հանկարծ կհրաժարվի [Երուսաղեմի թագավորին] իրեն փեսացնելու առթիվ տրված խոստումից՝ օգնության հասնել Փրկչի Գերեզմանին և Երուսաղեմի թագավորին։ Հսկայական զորքով, բոլորը միասին, առյուծների նման մռնչալով, կաքավների երամների մեջ ինչպես արծիվներ սլանալով, ահա այդպես քաջարի, նրանք շտապում էին արշավել, աստպատակ սրփռել սկյութացոց երկրում։ Նրանք հասան մինչև Պալանե կոչվող վայրը, Հալեպի սահմաններից մեկ օր հեռավորության վրա։ Քրիստոնյա համայն ժողովուրդը, մերձավորներ և հեռավորներ, լսելով այլազգիների կործանման, իր սուրբ և պատվական արյամբ [մարդկանց] փրկած

թենէ զեկեղեցի Քրիստոսի զոր դնեաց սուրբ և պատուական արեամբն իւրով։ Եւ լուեալ անօրինացն զհամբաւս զայս և զդալն մերձ ի սահմանս Տաճկաստանի, առհասարակ ամենեքեան ահաբեկ եղեալ և ի կոր կործանեալ յերկիւղէ թագաւորացն, յորոց Նօրօտինն որ էր տէր Հալէպայ և Դմշկայ՝ դեսպանս առ թագաւորն, և խոստացաւ տալ ծառայս ի գերեալոց քրիստոնէից զոր անողորմ չարչարէին՝ տասն հազար. ընդ որ և յառաջ քան զայս զդեցուցեալ և լուացեալ յաղտոյ չարչարանացն զծառայան ընդդէմ յղարկեալ թագաւորացն կամէր՝ ազատել նուաճել ընդ ձեռամբ նոցա իբրև զմի ի ծառայից։ Եւ նոցա ոչ առեալ յանձն, ասէին պատասխանի պատգամաւորին՝ կամ ելանել յաշխարհէն և գնալ կամաւ իւրեանց, և թէ յանդգնին՝ սրոյ ձարակ առնել զամենեսեան մինչև ի սանդիայս։ Այսպիսի խրոխտալով և ուրախութեամբ էին զօրք հաւատացելոցն իբրև յաւուրս հարսանեաց։ Եւ մինչդեռ յայս մեծի խորհրդի էին, յանկարծակի յազդմանէ չարին հրովարտակ եհաս ի թագաւորական քաղաքէն շփոթ լինել աթոռոյն, և կամ յայլ կախարդաբար դիպուածոյ, զոր սատուիւ ոչ կարացաք ի վերայ հասանել պատճառին ո՛րպէս և եղև գործ սատանայի. բայց ստուիւ այս էր պատճառն՝ որ լուր գբրինձն հաւանեցոյց և զԲորոսի խլած երկիրն դարձոյց, և զայն բաւական համարեցաւ իւր յաղթութիւն։ Քանզի յառաջ ժամանակաց դիտեմք և ի ժամանակագիր պատմագրաց, որ Յունաց թագաւորքն ոչինչ փրկութիւն են գործեալ քրիստոնէից, այլ մանաւանդ խլումն և առումն քաղաքաց և գաւառաց. և նոցա շնորհիւն եկան Հայք յերկրէն իւրեանց, և այլազգիքն զօրացան և եկեալ տիրեցին ամենայնի, առին առաջին զԱրծն քաղաք, զՄելտենի և զՍեւաստ և զԱնի զթագաւորաբնակ քաղաքն, և մինչև ի սինօր Կոստանդնուպօլիս քաղաքի, զամենայն անօրէն ազգն Թուրքաց բռնացեալ ունէին. և ազգն արիական որք են Փռանգքն, երրորդ անգամ ելին ի փրկութիւն քրիստոնէիցն, և դաւաճանութեամբ և նենգութեամբ թագաւորին Յունաց կործանեալ և յաղթեալ եղեն ի Թուրքաց, զոր մեք տեսաք աչօք մերովք. զի թէ վասն քրիստոնէից էր եկեալ, եօթնամսեան ժամանակաւ ոչ էր ի Մսխս յամեալ. նոյնպէս և հայրն իւր արար, լուր զպարոն Լևոն տարաւ և զայլ Հայերն։ Եւ այս բաւական էր որ միտս ունին՝ առնելիք թագաւորացն Հոռոմոց, և այնչափ ատելութիւն զոր ունին առ ազգս Հայոց՝ այս էր զոր ասացաք։ Ապա ի խորհուրդ մտեալ Թուլամորթ և կանացի ազգն Հոռոմոց

Քրիստոսի եկեղեցու դաժան և ծանր ստրկությունից ազատելու համար հավատացյալների միաբանության մասին, մեծ ցնծություն էր ապրում։ Անհավատները, լսելով այդ լուրը, ինչպես և [քիրստոնյա զորքի] Տաճկաստանի սահմաններին մոտենալու մասին, թագավորի երկյուղից բոլորն էլ սարսափահար եղան և իրար անցան։ Նուր էդ-դինը՝ Հալեպի և Դամասկոսի տերը, դեսպաններ ուղարկեց կայսեր և խոստացավ անգրաբար խոշտանգվող քրիստոնյա գերիներից տասը հազար հոգի տալ, որոնց նա նախապես լողացրել էր, հագցրել։ Թագավորներին ուղարկելով նրանց, նա խնդրում էր ընդունել իր հպատակությունը, խոստանում դառնալ նրանց մի ծառան։ Բայց նրանք մերժեցին և պատգամավորների միջոցով առաջարկեցին իրենց կամքին ընդառաջելով դուրս գալ երկրից, հակառակ դեպքում սպառնացին բոլորին, անգամ կրծքի երեխաներին սրի քաշել։ Ահա այսպես ինքնավստահ էին հավատացյալների դինվորները և ուրախ՝ ինչպես հարսանիքում։ Երբ այսպիսի մեծ խոհերի մեջ էին, հանկարծ չար [ոգու] ազդեցությամբ թագավորանիստ քաղաքից գրություն հասավ՝ զահակալական կռիվների կամ էլ այլ կախարդական դեպքերի մասին. մենք ճշգրիտ չկարողացանք իմանալ, թե ինչպես կատարվեց ստոգայելական այդ գործը։ Բայց և այնպես ստույգ է, որ [կայսրը] բավարարվեց պրինցին հնազանդեցնելով և Թորոսի խլած շրջանների վրա վերստին տիրելով. այդ բանը նա հաղթանակ համարեց։ Մենք դիտ հին ժամանակներից գիտենք, ինչպես նաև ժամանակագիրներից, որ հունաց կայսրերը քրիստոնյաների փրկության համար ոչինչ չեն արել, նրանք միայն քաղաքներ և գավառներ գիտեն խլել և թալանել։ Նրանք էին պատճառը, որ հայերը հեռացան իրենց երկրից, որ սելջուկները հզորացան և եկան տիրեցին ամեն ինչին. նրանք նախ և առաջ գրավեցին Արծն քաղաքը, Մելիտենեն, Սեբաստիան, Թոդալորանիստ Անի քաղաքը։ Նվ մինչև Կոստանդնուպոլիս քաղաքի սահմաններին ընկած երկրի վրա բռնությամբ տիրեցին թուրքերը։ Իսկ ֆրանկների քաջարի ժողովուրդը երրորդ անգամ դուրս եկավ քրիստոնյաների փրկության համար, որոնք, սակայն. հունաց կայսեր դավաճանությամբ և նենգությամբ թուրքերից պարտություն կրեցին և կործանվեցին։ Այդ բանը մենք մեր աչքով տեսանք։ Եթե [կայսրն] իսկապես քրիստոնյաների փրկության համար էր եկել, ապա նա յոթ ամիս ժամավճառ չէր լինի Մսիսում։ Նույն կերպ էր վարվել նաև [կայսեր] հայրը, որ պարսն Լևոնին և ուրիշ հայերի [Կոստանդնուպոլիս] էր տարել։ [Ասածս] բավական է՝ իմանալու Հռոմոց կայսրերի նպատակների և հայ ժողովրդի նկատմամբ նրանց ածած ատելության մասին։ Հռոմոց կնայտ ժողովուրդը, ահա խորհրդակցելով, ասաց կայսեր. «Ու-

ասելով ընդ թագաւորն իւրեանց. «Մի՛ լսեր Փռանգաց և Հայոց. փութացիր երթալ յաթոռն քո, և դարձեալ եկեսցես յորժամ կամեսցիս»։

Զայս լուեալ ուղղափառացն, փոխանակ ուրախութեանն զոր կարծէին ի սուգ անմխիթար մտեալ յաղագս գնալոյ նոցա, զոր բազում անդամ աղաչեալ զթագաւորն ոչ կարացին դարձուցանել յերթալոյն, աղաչէին և զայս ևս երիս աւուրս միայն լինել ի վերայ Հալպայ։ Իսկ նա ոչ կամեցեալ լսել բարի խնդրոցն, և յղեալ դեսպանս առ տէրն Հալպայ որոյ յահէն լուեալ այրէին ի տապ բոցոյ յերկիւղէ նոցա, դաշինս սիրոյ խաղաղութեան առնել։ Զոր լուեալ՝ ի բազում խնդութենէն յապուշ կքրթնցան, և ոչ կարէին զնմանն պատասխանի առնել, կարծէին լրտեսի ազգաւ եկեալ. ապա ստուգեալ յհկելոցն, խոստանային առնել զհրամանս թագաւորին, ըստ ստածին երդմանց իւրեանց յղեալ ծառայս յիսուն ի պատուական Փռանգացն զոր խնդրեաց անբարի թագաւորն վասըն մարդահաճութեան, թողեալ զանհամարսն զոր տալոց էր Քրիստոս ի ձեռս նոցա, զոր ինքեանք թերի պաշտեն, և զմեզ զրպարտելով դատեն ըստ նախանձուտ և չար կամաց իւրեանց։ Ոչ Մսիլմանի ննջեալ մահուամբ, դարձան անհամար բազմութեամբն փոխանակ զօրեղ առիւծոյ՝ իբրև զաղուէս տկար, և որպէս զփախստական գային հասանէին յերկիրն Խլիճ-Ասլան սուլտանին, որ թէպէտ և ոչ ըստ Քրիստոսի վրէժխնդիր եղեալ սոցա, սակայն ըստ անիծից և հայհոյութեան Հոռոմոց զոր բարձին յուղղափառաց դասուց՝ ոչ օգնել եկեղեցւոյ և գերելոցն, եւեալ զկնի նոցա իբրև զփախստէից վատ և աներևակ ազգն Թուրքիմանաց, և կոտորեցին ի Հոռոմոց արս երկոտասան հազար, սպանեալ և զաներ թագաւորին, առեալ ձիս և ջորիս քսան հազար. վասն որոյ յոլով խռովութիւն եղև ընդ թագաւորն Յունաց և ընդ սուլտանն Խլիճ-Ասլան։ Արդ այսպէս թուի տկար և անզօր մտաց իմոց, ոչ այլ ինչ կարծեալ զնկեալ հասեալ փրկութիւնս զարձուցանել, և եթէ ոչ ատելութիւն որ առ մեզ, և մարգարէութիւն սրբոյ առն Աստուծոյ Մեծին Ներսէսի մերոյ լուսաւորչին, որոյ հոգւոյ ակամբ դրեաց ի մաքուր պատմագրութեանն իւրում յաղագս վերնոյն յաղագս թագաւորացն Յունաց, սակաւակեաց լինելոյ՝ ոչ զպատերազմաց հոգալոյ, այլ զհարկաց և զհաւատոց քննութեանց։

Արդ այսոցիկ այսպէս եղելոց գնաց սա յանվայելն իւր, մնացեալ

շադրություն մի՛ դարձրու ֆրանկների և հայերի վրա, շտապի՛ր վերադառնալ քո գահին, և եթե ցանկանաս, նորից կգաս»։ Լսելով այդ բանը, ուղղափառների[46] ուրախությունը անմխիթար սուր վերածվեց՝ [հոռոմների] դնալու առթիվ։ Նրանք բազմիցս աղաչեցին-պաղատեցին կայսեր՝ գոնե երեք օր էլ մնալ Հալեպի դեմ կռվելու, բայց չկարողացան նրան ետ պահել։ Նա չուզեց ականջ դնել այդ բարի խնդրանքին և բարեկամության դաշինք կնքելու առաջարկով դեսպաններ ուղարկեց Հալեպի տիրոջ մոտ, նրանց, ովքեր [քրիստոնյաների] սարսափից ահաբեկ էին եղել։ Լսելով [դեսպանի առաջարկը], նրանք մեծ ուրախությունից ապուշ կտրեցին, չէին կարողանում պատշաճ պատասխան տալ, կարծելով, որ [դեսպանը] լրտեսելու նպատակով է եկել։ Ապա նվողներից հավաստիանալով, խոսք տվեցին կատարել կայսեր հրամանը, երդվեցին իրենց ստապատիր երդումներով և, իբրև թե մարդասիրությունից դրդված, շար կայսեր ուղարկեցին նրա խնդրած հիսուն երևելի ֆրանկ գերիներին, անհամար ժողովրդին ողողելով [բախտի քմահաճույքին], ժողովուրդ, որին Քրիստոսը [թուրքերի] ձեռքն էր մատնել, Քրիստոսը, որին [հոռոմները] կիսատ-պռատ են պաշտում, իսկ մեզ էլ իրենց հատուկ նախանձոտությամբ և չարակամությամբ՝ զրպարտում և դատապարտում։ Առանց որևէ մուսուլմանի մահ պատճառելու, նրանք անհամար բազմությամբ որպես տկար աղվես վերադարձան, փոխանակ հզոր առյուծի, և փախստականի նման եկան հասան սուլթան Ալիճ Ասլանի մոտ։ Ալիճ Ասլանը վրեժ առավ նրանցից, հասկանալի է, ոչ թե հանուն Քրիստոսի։ [Հոռոմների գլխին եկած փորձանքի] պատճառն ուղղափառներից նրանց ստացած անեծքներն ու պարտավանքն էին՝ եկեղեցուն և գերյալներին օգնության չհասնելու առթիվ. թուրքմանների վատթար և մթին ժողովուրդը հարձակվեց փախստականի նմանվող հոռոմների վրա և տասներկու հազար հոգի կոտորեց։ Նրանք սպանեցին նաև կայսեր աներոջ, ավար վերցրին քսան հազար ձի և ջորի։ Հունաց կայսեր և սուլթան Ալիճ Ասլանի միջև ծագեց մեծ թշնամություն։ Արդ, մեր տկար և թույլ խելքով կարծում ենք, որ շեմքին հասած մեր փրկության հօդս ցնդելու պատճառը միայն ու միայն [հոռոմների]՝ մեր հանդեպ տածած ատելությունն է։ [Իրականացավ] մարգարեությունն աստծո սուրբ մարդու՝ մեր լուսավորիչ Ներսեսի, որ բարբայլի ներշնչմամբ իր ճշմարիտ պատմագրության մեջ կանխագուշակե[ց] հույն կայսրերի վերաբերյալ, թե շուտով նրանք պատերազմների մասլ[ին] չեն հոգալու, այլ [միայն] հարկեր գանձելու և հավատաքննության։

[Այ]ս դեպքերն այդպես ընթացան, [կայսրն] առանց ամաչելու,

Պան սեւաստիոն Թորոս յերկիր հայրենի իւր՝ հրամանաւ և սիրով խաղաղութեամբ յանհոգս։ Իսկ տէրն Հալպայ, որ եղև լոյս ազգին իւր զերծեալ յերկիւղալիր խռովութեանցն ազդեցութեամբ չարին յեղբօրէ և ի հաւատակից իւրմէ յազգէն Յունաց, յղեաց առ թագաւորն Երուսաղէմի և խնդրեաց ի նմանէ դաշինս սիրոյ պայմանի ամսոյ չորից։ Տուեալ նմա զանձս բազումս և պատրեալ զնա որպէս զարծաթասէր և պարապեալ յամենայն կողմանց, եկն ի խառան, զոր յառաջն տուեալ էր եղբօր իւրում Միրանայ։ Եւ յետոյ չարախօս եղեն զնմանէ՝ թէ ի հիւանդութիան քում կորուսանելոց էր զքեզ։ Եւ նորա հաւատացեալ պատգայն՝ գնաց բազմութեամբ ի խառան, կացեալ ամիսս երկուս, էառ զնա բռնութեամբ և զայլ սահմանս դրացելոց իւրոց զԻակա, և զՈւհա և ընդ բռամբ էած զամենեսեան, որ յառաջագոյն ընդվզեալ էին ի նմանէ. եկն յերկիրս Ռասլնայ որ այժմ սուլտանին էր, և էառ բռնութեամբ, գնաց և ի Մարաշ և զայն ևս առձեռնեաց։ Եւ դիտացեալ ամիրայն որ էր աէր Ջեսնոյ՝ զյաղթութիւն բռնաւորին, երկուցեալ վասն առնոյց քաղաքին իւրոյ, դարձոյց զերեսս ի սուլտանէն. և նուաճեալ նմա ի ծառայութիւն՝ և գնաց առ նա մինչդեռ յԻտպանն էր, դարձեալ միաբան եկին ի Մարաշայ ի վերայ Պհեսնոյ. և նոքա առաբեկեալ՝ ոչ ունելով օգնական, էառ և զայն խարխարելով պարսպին։ Այս եղև պատճառ աւերման գաւառացս այսոցիկ, որ սէր արար ընդ թագաւորին Երուսաղէմի, պատրեալ զնա իբրև զաղայ։ Եւ մինչդեռ ի Պհեսնի էր, ձայն դուժի հնաց առ նա ի Դմշկայ, գրելով՝ թէ ի վճարել սիրոյ պոմանին հնաց Փռանդ ի զօրացն Փրերաց՝ աւերել զերկիրս։ Եւ նորա գնացեալ ի Հալպ և ի Դմիշկ, զօրաժողով արարեալ բազմութեամբ յոյժ, կամէին պատերազմել ընդ թագաւորին Երուսաղէմի։

Ապա ի վերանալ թուականութեանս Հայոց ՈՒԹ ամին ժողովեցան ամենայն ազգն Թուրքաց առ որդին Ջանդէ ի Դմիշկ, և ազգն Փռանգաց առ թագաւորն Երուսաղէմի, դիպել միմեանց պատերազմաւ։ Եւ այսպէս կացեալ մինչև ի մուտն ձմերայնոյ առանց պատերազմի. ապա սէր արարեալ երկու տարւոյ, ցրուեցան և գնացին յիւրաքանչիւր տեղիս։ Նոյնպէս և Խլիճ-Ասլան և Աղուլ-Ասլան արարին սէր ընդ միմեանս, տալով ի ձեռս նորա զԱպլասթա քաղաք և զգաւառս նորա, զոր իւր էր և հօր նորա յառաջագոյն, զի զայն ուզէր ի շմորեկն իւրեանց։ Իսկ ի նոյն թուականիս գերեցին զորդիս կոմսին և տարան ի Հալպ։

Թողեց գնաց, իսկ պանսևաստ Թորոսը [կայսեր] հրամանով ու բարեհաճությամբ մնաց իր երկրում խաղաղ ու անվրդով։ Իսկ իր ժողովրդի լույսը դարձած Հալեպի տերն էլ, որ չարի ներգործությամբ փրկվեց իր եղբոր և հավատակցի՝ հույն ժողովրդի [օգնությամբ], դիմեց Երուսաղեմի թագավորին և առաջարկեց չորս ամիս ժամանակով բարեկամության դաշինք կնքել։ Բազում գանձերով խաբելով այդ արծաթասեր և ամեն տեսակետից ապահով մարդուն, նա եկավ Խառան, որը նախապես տվել էր իր եղբայր Միրանին։ Հետագայում [Հալեպի տիրոջ] առջև զրպարտել էին Միրանին, թե «Քո հիվանդության ժամանակ նա որոշել էր քեզ սպանել»։ [Հալեպի տերը], հավատ ընծայելով զրպարտիչներին, ահագին զորքով գնաց Խառան, երկու ամիս պաշարեց, ապա պրոհով վերցրեց այն. նա գրավեց սահմանակից այլ [քաղաքներ] ևս՝ Ռականը[47] և Ուռհան. և իր դեմ ապստամբածներին վերստին հնազանդեցրեց։ Նա եկավ նաև Ռապան դավառը, որ սուլթանին էր պատկանում, և բռնի ուժով գրավեց։ Նա գնաց նաև Մարաշ և այն էլ առավ, Ամիրան՝ Քեսունի տերը, իմացավ բռնակալի ձեռք բերած հաղթանակի մասին. վախենալով, որ իր քաղաքն էլ կգրավի, նա անցավ սուլթանի կողմը, հնազանդություն հայտնեց, ներկայացավ նրան, երբ վերջինս Ռապանում էր գտնվում, և երկուսը միասին եկան Մարաշի և Պհեսնիի վրա։ [Պհեսնիի բնակիչները], մնալով անօգնական, սարսափահար էին եղել. [սուլթանը], խարխլելով պարիսպը, [Պհեսնին] էլ գրավեց։ Այս դավառների ավերման պատճառը [սուլթանի]՝ Երուսաղեմի թագավորին երնեկայի նման խաբելով բարեկամական դաշինք կնքելն էր։ Երբ սուլթանը Պհեսնիում էր, Դամասկոսից բոթաբեր մի նամակ հասավ, ուր գրված էր, թե բարեկամական դաշինքի ժամկետը լրանալու առթիվ ֆրանկ ֆրերների զորքերը եկան գավառներն ավերելու։ [Սուլթանը] գնաց Հալեպ և Դամասկոս, հսկայական զորք դումարեց և որոշեց պատերազմել Երուսաղեմի թագավորի դեմ։

Հայոց 609 թվականի [10 փետրվար 1160—8 փետրվար 1161 թ.] սկզբին թուրքական բովանդակ զորքը գումարվեց Դամասկոս՝ Զանղիի որդու շուրջը, իսկ ֆրանկ զորքն էլ՝ Երուսաղեմի թագավորի, որոշելով պատերազմել միմյանց դեմ։ Բայց նրանք մինչև ձմռան սկիզբը պատերազմ չսկսեցին, այլ երկու տարով հաշտություն կնքեցին և ցրվեցին գնացին իրենց տեղերը։ Խլիճ Ասլանն ու Աղուպ Ասլանն էլ հաշտություն կնքեցին. [սուլթանը] վերջինիս տվեց Ասլաստան քաղաքը և նրա շրջանները, որոնք [Աղուպ Ասլանը] հորից էր ժառանգել և իրենց վեճի ժամանակ պահանջում էր։ Նույն թվականին նրանք դերի վերցրին կոմսի որդուն և տարան Հալեպ։

Ի սոյն թուականիս յամսեանն Հոկտեմբերի, ամիրայ ոմն անուն ամիր Միրան որդի ամիր Աբրեհիմին, որդւոյ Սուքմանին, որ էր տէր բաղում քաղաքաց և գաւառաց Խլաթայ, Արճիշոյ, Մշոյ, Տօղատափայ և Մանծկերտու, առաքեաց զաներ իւր, որում անուն էր Ատրատին, բազում զօրօք յերկիրն Վրաց։ Իսկ զօրք Վրաց թագաւորին Դորդէ՝ և նոքա իւրեանց կամէին գալ ասպատակ առնել զերկիրն Թուրքաց, և ընդդէմ դիպեցան իրերաց ի գաւառն որ կոչի Օխթիս։ Եւ եղև սաստիկ պատերազմ ի մէջ նոցա. և յաղթեցին Վրացիքն և արարին զնոսա փախստական, և կոտորեցին զբազումս և ձեռբակալ արարին արս երեք հարիւր ի Թուրքէն զգլխաւորս։ Իսկ նոքա հարին զհեծելազաւդն Վրաց նետիւ ի ձեռն, և իջեալ ի ձիոյն նստէր, և դեղ դնէին խոցոյն։ Եւ ի հետ էին մնացեալ ի զօրացն Թուրքին որդիք Մլուանայ որք էին ի Վրաց տանէն՝ եկեալ առ Թուրքն զկնի Վասակայ Վրացւոց ուրացելոյ, որք էին առաջնորդեալ Թուրք զօրաց։ Սոքա եկեալ յանկարծ զտին զնա իջեալ, կալան և տարան առ ամիրայն որ Շահի-Արմէնն կոչեն. զնա միայն կալան, որ անունն կայի ասէին, կալեալ զգլխաւորին Վրացեաց։

Ի Թուականութեանն Հայոց ՈԺ թագաւորն Վրաց Դորդի որդի Դեմետրի՝ որդւոյ Դաւթի, եկն ի վերայ թագաւորաբնակ մեծի քաղաքին Անւոյ յաւուրս ամարայնոյ, յաւուր երկուշաբաթի, և մի օր արարեալ ի վերայ քաղաքին, ի վաղիւն առեալ զքաղաքն բռնութեամբ, և սպան մարդ հազար ընդ քրիստոնեայ և ընդ այլազգի։ Եւ եդեալ պահապանս քաղաքին արս ընտիրս երկու հազար, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ և գնաց ի թագաւորութիւնն իւր։ Իսկ Տէր Խլաթայ որ Շահի-Արմէնն կոչեն, ժողով արարեալ արս ութսուն հազար, եկն պաշարեաց զքաղաքն Անի. զայն լուեալ թագաւորն Վրաց, եկն ի վերայ նոցա և կոտորեաց զնոսա, և արար զնոսա փախստական և սպանաւ ի նոցանէ յայնմ աւուր արս հօթն հազար, և առին ծառայս երկու հազար և հինգ հարիւր, գլխաւորս՝ որք էին հարիւր յիսուն ի նոցանէ. ամիրայք մեծամեծք. և ձիս և ջորիս և ուղտս անհամարս, և վրան և ջոշան, և այլ սլեհ որ ոչ գոյ թիւ, և ոչխար բազում. և լցաւ քաղաքն Անի ամենայն հարստութեամբ, զոր յառման Վրացւոյն էին կորուսեալ՝ կրկնապատիկ շահեցան, մինչև զընտիր ջոշանն երկու դանկ ծախէին։ Եւ զկնի բազում աւուրց գնային մարդիկք քաղաքին Անւոյ ի տեղի պատերազմին և գտանէին զրահս բազումս ի մէջ խոտին և բերէին։ Եւ թագաւորն զայս բարութիւնս արար քաղաքին Անւոյ. զի յորժամ էառ զնա՝ երեք քառասուն

Նույն թվականի հոկտեմբեր ամսին Միրան[48] անունով մի ամիրա՝ Սուրմանի որդի Աբրեհիմի որդին, որ բազում քաղաքների և գավառների՝ Խլաթի, Արճեշի, Մուշի, Տողատափի և Մանազկերտի տերն էր, բազմաթիվ զորքերով Վրաստան ուղարկեց իր աներոջը, որի անունը Ատրատին[49] էր։ Վրաց թագավոր Գորգիի[50] զորքն իր հերթին ուզում էր գնալ ասպատակել թուրքերի երկիրը։ Նրանք միմյանց հանդիպեցին Օխթիս[51] կոչվող գավառում և կատաղի մարտ տվեցին։ Հաղթեցին վրացիները և նրանց փախուստի մատնեցին, շատերին կոտորեցին և թուրք մեծամեծներից երեք հարյուր հոգի գերեցին։ Իսկ [թուրքերն] էլ նետով խոցեցին վրաց հեծելազորի հրամանատարի ձեռքը. նա ձիուց ցած իջավ, իսկ իր [զինվորները] վերքին դեղ էին դնում։ Թուրք զորքից ևս էին մնացել Միրանի որդիները, ովքեր Վրաստանից էին և թուրքերի մոտ էին սկսել վրաց ուրացող Վասակի ետևից. նրանք թուրքական զորքի առաջնորդները դարձան։ Անակնկալ կերպով հանդիպելով [ձիուց] ցած իջած վրաց հեծելազորի հրամանատարին, նրանք ձերբակալեցին նրան և տարան Շահի Արմեն[52] կոչվող ամիրայի մոտ։ Սա միակ գերված [վրացին] էր, վրաց հրամանատարը, որին Կաղ էին անվանում։

Հայոց 610 թվականին [9 փետրվար 1161—8 փետրվար 1162 թ.] վրաց թագավոր Գորգին՝ Դավթի որդի Դեմետրեի որդին, ամառ ժամանակ, երկուշաբթի օր եկավ թագավորանիստ Անի մեծ քաղաքի վրա, զիշերեց, իսկ հաջորդ առավոտյան գրոհով վերցրեց այն, կոտորեց հազար հոգի քրիստոնյա և այլազգի։ Երկու հազար հոգուց բաղկացած ընտիր կայազոր հաստատելով, ինքը փայլուն հաղթանակ տարած վերադարձավ իր տիրապետությունը։ Խլաթի տերը, որին Շահի Արմեն են անվանում, ութսուն հազար զինվոր հավաքելով, եկավ պաշարեց Անի քաղաքը։ Վրաց թագավորը, լսելով այդ մասին, ելավ նրանց դեմ և կոտորեց ու փախուստի մատնեց. այդ օրը նա սպանեց յոթ հազար հոգի, գերի վերցրեց երկու հազար հինգ հարյուր հոգի, այդ թվում հարյուր հիսուն հոգի նրանց երևելիներից՝ մեծամեծ ամիրաներ։ Նա ավար վերցրեց անթիվ-անհամար քանակությամբ ձի և ջորի, վրան և զրահ և այլ զենքեր, այնքան շատ, որ ընտիր զրահը վաճառում էին երկու դանդով։ Նա քշեց տարավ նաև բազմաթիվ ոչխարներ։ Անի քաղաքը ողողվեց ամեն տեսակի բարիքներով, [նրա բնակիչները] ձեռք բերեցին կրկնապատիկը, քան կորցրել էին [քաղաքը] վրացիների կողմից գրավվելու ժամանակ։ Դրանցից դեռ շատ օրեր անց Անիի բնակիչները գնում էին ճակատամարտի վայրը, խոտերի մեջ գտնում բազմաթիվ զրահներ ու բերում։ Թագավորը Անի քաղաքին արեց հետևյալ լավությունը. քաղաքը գրավելուց հետո նա քառասուն հազար դահեկան

հազար դահեկան և գնեաց ի հեծելէն ղգերեալ ծառայսն Անուշ՝ քրիստոնեայ և զայլազգին։ Այս եղև ի պահն սուրբ Գրիգորի, որ ի միջինքն ամառան աղուհացիցն՝ յորժամ առաւ Անի, և յամսեանն օգոստոսի կոտորեցին զամիր Միրայն որ էր Շահի-Արմէն։ Եւ զկնի երից աւուրց եղև խաւարումն լուսնի, որ և յարիւն դարձաւ մինչև ի հասարակ գիշերին, սկսեալ յերկորէն՝ որ օր չորեքտասան էր լուսնին։

Յայսմ ամի տէրն Անտիոքու, որ և բրինձ կոչի և անուն նորա Սիր նաղտ, եկն յաւուրս աշնանային և յանհոգս եղեալ իջանէր յերկիրն Տլքոյ. և ի բերդն կաթողիկոսի որ կոչի Ծով, և աստղատակս սփռէր ի շրջակայ երկիրն, աւար առնելով և գերելով զթուրքիմանան զորս գտանէր ի սահմանսն՝ ունելով ընդ իւր մարդս հազար ընդ ձիաւոր, ընդ ծլուկ, ընդ խարուանդայ, ընդ հետևակ։ Իսկ Մճմտին որ էր երկրորդ Նօր-օտին յառաջագոյն ժողովեալ էր արս տասն հազար, քմին դրեալ յառաջսն, և պատրաստութեամբ եկեալ ի վերայ նոցա՝ և դիրեցին և սպանին զամենեսեան, և կալան զբրինձն տէրն Անտիոքու, և ձիաւորս երիսուն. և սպանաւ յայնմ աւուր արս չորեքհարիւր։ Եւ ինքն դարձաւ մեծաւ ուրախութեամբ և խնդութեամբ մտաւ ի Հալպ, տանելով ընդ իւր զկալանաւորսն, և զբրինձն էած ի Հալպ բազում նախատանօք և հայհոյութեամբ. և առաքեաց աւետաւորս առ Նօրօտին, զի էր նա ի Դմիշկ յաւուրսն յայնոսիկ ժողովեալ բազում հեծելօք ընդ թագաւորին երուսաղէմի. որ իբրև լուաւ՝ դարձաւ աւարեաց և գերի էառ զամենայն գաւառսն մինչև ի Տռապօլիս, և եբեր ի Հալպ։ Եւ դարձեալ զնաց ի վերայ Հերմին և ոչ կարաց կալ հաստատուն ի բազմութենէ անձրևին, նաև յերկիւղէ թագաւորին երուսաղէմի, զի յաւուրսն յայնոսիկ եկեալ էր յԱնտիոք ինքն և Թորոս որդին Ռուբենայ և այլ զօրք Հոռոմին։ Եւ իբրև գնաց թագաւորն յերուսաղէմ և ամենեքեան յիւրաքանչիւր տեղիս, գնաց Նօր-օտինն էառ զանառիկ բերդն Արծխան և երկմամբ քակեաց և աւերեաց, էառ գերի և զայլ մնացեալ քրիստոնեայսն և եբեր ի Հալպ։

Յայսմ ամի գնաց սուլտանն Ալիճ-Ասլան առ թագաւորն Յունաց Կիւռ-Մանիլն, տանելով ընդ իւր զԱմիր Միրայն զեղբայր Նօր-օտին, և դարձաւ անտի բազում ընծայիւք, եղեալ առ իրեար դաշինս երդմամբ՝ կալ ի հնազանդութիւն թագաւորին մինչև յօր մահուան իւրոյ. առեալ ի նմանէ բազում դանձս ոսկւոյ և արծաթոյ, և եկեալ ի քաղաքն իւր։

Իսկ ի փոխել Թուականիս մերոյ ՈԺԱ մեռաւ ամենագովելին Բարսեղ վարդապետն և թաղեցաւ ի վանքն ի Դրազարկ, ուր են գերեզմանք սուրբ

ավեց և հեծելազորից գնեց Անիում գերվածներին՝ քրիստոնյա ճե այլազգի։ Դա տեղի ունեցավ սուրբ Դրիգորի պասեքին՝ ամռան աղուհացից պասեքի մեջտեղում, երբ Անին գրավվեց, իսկ Միրան ամիրային, որ Շահի Արմեն էր, ջարդեցին օգոստոս ամսին։ Երեք օր անց տեղի ունեցավ լուսնի խավարում, և մինչև կեսգիշեր արյունագույն դարձավ. դա սկսվեց երեկոյան, երբ լուսինը չորս օրական էր։

Այդ տարին Անտիոքի տերը, որ պրինց է կոչվում, անունը Սիր[53] Ռենաղդ, աշնան ժամանակ եկավ Տլուք գավառը՝ կաթողիկոսի բերդը, որ Սով է կոչվում[54] և ասպատակ սփռեց շրջակա երկրում. նա ավարառեց և գերեվարեց այդ սահմաններում հանդիպած թուրքոմանին։ Նա ուներ հազար զինվոր՝ հեծյալ, ծլուկ, գումակին հետևող և հետնակ։ Իսկ Մճմտին[55]՝ Նուր էդ-դինի երկրորդ մարդը, նախօրոք տասը հազար հոգի էր հավաքել և դարան լարել։ Անհրաժեշտ պատրաստությունը տեսած, նրանք հարձակվեցին [ֆրանկների] վրա, բոլորին դերեցին ու կոտորեցին, իսկ Անտիոքի տեր պրինցին և երեսուն ձիավոր ծերբակալեցին։ Այդ օրը չորս հարյուր հոգի սպանվեց։ [Մճմտին] ուրախությամբ ու ցնծությամբ մտավ Հալեպ, իր հետ տանելով դերյալներին. բազում անարգանքով, ծաղր ու ծանակի ենթարկելով նա Հալեպ բերեց նաև պրինցին, ավետաբերներ ուղարկեց Նուր էդ-դինին, որն այդ օրերին Դամասկոսում էր գտնվում՝ Երուսաղեմի թագավորի դեմ [արշավելու] նպատակով բազմաթիվ հեծյալներ հավաքած։ Լսելով կատարվածի մասին, նա գնաց ավարի առավ ու գերեվարեց մինչև Տրապոլիս ընկած բոլոր գավառները և ավարն ու գերիներին Հալեպ բերեց։ Այնուհետև նա գնաց Հերմնի[56] վրա, բայց չկարողացավ տոկալ սաստիկ անձրևին։ Նա վախենում էր նաև Երուսաղեմի թագավորից, քանզի այդ օրերին նա անձամբ Անտիոք էր եկել, ինչպես և Ռուբենի որդի Թորոսը և այլ հոռոմ զորք։ Երբ թագավորը Երուսաղեմ վերադարձավ, իսկ մյուս բոլորն էլ՝ իրենց տեղերը, Նուր էդ-դինը գնաց գրավեց Արծիան անառիկ բերդը, բայց, [հակառակ] իր տված երդումին, քանդեց, ավերեց, մնացած քրիստոնյաներին էլ գերեվարեց բերեց Հալեպ։

Այդ տարին սուլթան Ալիճ Ասլանը Նուր էդ-դինի եղբայր Ամիր Միրանի ուղեկցությամբ գնաց հույների կայսր Կիր Մանուիլի մոտ. այնտեղից նա վերադարձավ բազում նվերներով։ [Ալիճ Ասլանը] երդումներով հաստատված հաշտություն կնքեց՝ խոստանալով ցմահ հնազանդ լինել [կայսեր] և ստանալով ոսկու և արծաթի բազմաթիվ դանձեր, եկավ իր քաղաքը։

Մեր՝ 611 թվականի [9 փետրվար 1162—8 փետրվար 1163 թ.] սկզբին վախճանվեց ամենագովելի Բարսեղ վարդապետը[57] և թաղվեց

վարդապետացն նմանեաց իւրոց։ Այս եղև աւարտումն բանիցս և սկիզբն թուականիս։

Յայսմ ամի սպանաւ Ստեփանէ եղբայր Թորոսի Սեւասդիոյի մեծի՝ որդւոյ Լևոնի նենգութեամբ և դաւով տուկին անօրինի խեղդամահ արար զայնպիսի քաջ և երևելի զօրականն քրիստոնէից։ Իսկ եղբարցն իւրոց առեալ վրէժ արեան նորա հաղարապատիկ յազգէն Յունաց, որոց պարտական եղիցի սպանողն տուկն այն առաջի Աստուծոյ։

Յայսմ ամի առաւ մեծանուն քաղաքն Դուին ի թագաւորէն Վրաց Գորգէ. բռնութեամբ ի ներքս մտեալ զկնի փախստական զօրաց այլազգեացն որք ելեալ էին ի քաղաքէն ընդդէմ նորա պատերազմել, և նա ի փախուստ դարձուցեալ կոտորեաց զնոսա. և զմնացեալքն դէմս ի քաղաքն արարեալ, միաբան մտեալ ընդ դուռն քաղաքին կոտորեցին զամենեսին յանխնայ, գերեցին և այրեցին զբնակութիւնս նոցա, և ինքեանք դարձան մեծաւ աւարաւ և գերութեամբ յաշխարհն իւրեանց։

Դրազարկի վանքում, որտեղ գտնվում են նրա նման սուրբ վարդապետների գերեզմանները։ Ահա սրանով ավարտվում է մեր պատմությունը, և սկիզբ առնում մի նոր ժամանակաշրջան։

Այդ տարին անօրեն դուկի[58] նենգությամբ և դավով սպանվեց Ստեփաննեն՝ մեծ Թորոս Սևաստոսի եղբայրը, Լևոնի որդին. նա խեղդամահ արեց քրիստոնյաների այդպիսի քաջ և անվանի զինվորականին։ [Ստեփաննեի] եղբայրները, սակայն, նրա արյան վրեժը հույներից հազարապատիկ առան, որի համար աստծո առջև թող պարտական լինի այդ ոճրագործ դուկը։

Այդ տարին վրաց թագավոր Գորգին այլազգիների փախուստի դիմող զորքի ետևից ներխուժելով հռչակավոր Դվին քաղաքը, գրավեց այն։ Այլազգիները քաղաքից դուրս էին եկել նրա դեմ պատերազմելու, իսկ նա փախուստի մատնեց և կոտորեց նրանց։ Կենդանի մնացածները փախան դեպի քաղաք։ [Վրացիները] քաղաքի դռնով մեկ մարդու պես ներս խուժելով, բոլորին անխնա կոտորեցին, գերեցին և, նրանց բնակարանները հրո ճարակ դարձնելով, մեծ ավարով ու գերիներով վերադարձան իրենց երկիրը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մատթեոս Ուռհայեցին հայ միջնադարյան պատմագրության փայլուն դեմքերից մեկն է: Ծնվել է 11-րդ դարի երկրորդ կեսին Ուռհա քաղաքում, որտեղ և վախճանվել է 1138—1144 թվականների միջև, տարեց հասակում: Կարծիք է հայտնվել, որ նա զոհվել է Սիրիայի աթաբեկ Նուր էդ-դինի հոր՝ Էմադ էդ-դին Զանգիի կողմից 1144 թ. Ուռհայի գրավման ժամանակ: Նա ապրել և ստեղծագործել է դեպքերով ու դեմքերով հարուստ, պետությունների և ժողովուրդների կյանքում ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձությունների ժամանակաշրջանում, որոնք և գրի է առել իր պատմական երկում:

Դժբախտաբար, մենք շատ քիչ բան գիտենք Մատթեոս Ուռհայեցու մասին, այն էլ մի քանի ինքնակենսագրական տողերից, որ հանդիպում են նրա երկում: Նա վանական էր, իր աշխատությունը հիմնականում գրել է Ուռհա քաղաքում, կյանքի վերջին տարիներին եղել է նաև Գեսունում: Իր երկասիրությունը, որ նա անվանում է «Ժամանակագրություն», սկսվում է 952 թ. և ավարտվում 1136/1137 թթ. դեպքերի նկարագրությամբ, ընդ որում բաժանվում է երեք մասի: Առաջին մասը ընդգրկում է 952—1051 թթ. դեպքերի նկարագրությունը, այսինքն՝ մեկ հարյուրամյակի պատմություն, երկրորդ մասը՝ 1051—1101 թթ.՝ հիսուն տարվա պատմություն, իսկ երրորդ մասը հասցնում է մինչև 1136/1137 թթ.:

«Ժամանակագրությունն» սկսվում է երկրում տարածված սովի նկարագրությամբ: Եթե նկատի ունենանք երկրորդ և երրորդ մասերի սկզբում Ուռհայեցու թողած ներածական էջերը, ապա սպասելի էր, որ առաջին մասն էլ պետք է նման ներածություն ունենար: Բայց, դժբախտաբար, այն չի պահպանվել, գուցե և Ուռհայեցին ուզեցել է ամբողջ երկի ներածությունը վերջում գրել, բայց չի հասցրել:

Ուռհայեցու առջև լուրջ դժվարություններ էին կանգնած: Մեր միջնադարյան պատմիչների մեծամասնությունը գրել է զուտ հայոց պատմություն կամ նույնիսկ մի նահանգի պատմություն, այնինչ Ուռհայեցին, ապրելով հայ ժողովրդի համար արտակարգ բարդ մի ժամանակաշրջանում, չէր կարող նյութի այդպիսի ընդգրկմամբ բավարարվել: Նա ստիպված էր գրել ոչ միայն հայոց պատմությունը, այլև հայոց՝ հարևան ժողովուրդների հետ ունեցած փոխհարաբերությունների պատմությունը, որոնց հետ հայերը, ճակատագրի բերմամբ, ստիպված էին շփման մեջ մտնել: Վրաստան և Աղվանք, արաբական խալիֆայություն, Բյուզանդիա, Բուլղարիա, Եգիպտոսի Ֆաթիմյաններ, սելջուկ թուրքեր և թուրքական իշխանություններ, խաչակիրներ և խաչակրաց իշխանություններ, ահա ոչ լրիվ ցուցակը այն երկրների, թագավորությունների և իշխանությունների, որոնց պատմությանը նա այս կամ այն չափով պետք է անդրադառնար: Նա պետք է օգտվեր ոչ միայն

հայկական աղբյուրներից, այլև պարտավոր էր դիմել բյուզանդական աղբյուրներին, ֆրանկ խաչակիրների գրվածքներին կամ հենց ֆրանկներին անձնապես՝ իմանալու այս կամ այն դեպքի մասին: Եվ նա այդ գործը հաջողությամբ է կատարել:

Առաջին մասի մեկդարյա պատմությունը նա շարադրել է «շատ առաջ ծնված ականատես և ականջալուր եղած մարդկանց [ասածի] հիման վրա և հին պատմագիրների [գործերն] ընթերցելով, պատմագիրներ, ովքեր ականատես էին եղել բոլոր անցքերին»: Դժբախտաբար, նա չի տալիս իր օգտագործած պատմագիրներից և ոչ մեկի անունը: Տվյալ ժամանակաշրջանի մեզ հայտնի պատմագիրներից (Ծապուհ Բագրատունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Տարոնեցի, Արիստակես Լաստիվերտցի) և ոչ մեկի գործը նա չի օգտագործել, պիտի ենթադրել, որ նրա ձեռքի տակ եղած աղբյուրները պարզապես չեն պահպանվել: Ամենայն հավանականությամբ նա օգտագործել է Հակոբ Սանահնեցու պատմական երկը: Ուռհայեցուց հայտնի է, որ Հակոբ Սանահնեցին իր կյանքի վերջին տարիները անց է կացրել Ուռհայում, ուր և վախճանվել է 1085 թ.: Հետևաբար, Ուռհայեցին կարող էր ոչ միայն օգտագործած լինել նրա ձեռագիր ժառանգությունը, այև անձնապես ծանոթ լինել նրան: Հավանաբար Հակոբ Սանահնեցու միջոցով է Ուռհայեցին ծանոթ Բագրատունիների թագավորական և Անիի կաթողիկոսարանի դիվանների մի շարք փաստաթղթերին (Զմշկիկ կայսեր նամակները հայոց Աշոտ Գ թագավորին և հայոց Ղևոնդ վարդապետին, Վասիլ Բ կայսեր՝ Հովհաննես թագավորին և հայոց կաթողիկոս Սարգսին ուղարկած նամակները): Ինչ խոսք, Ուռհայեցին օգտված պիտի լինի նաև բյուզանդական աղբյուրներից անմիջականորեն, բայց կոնկրետ ինչ աղբյուրներից, առայժմ դժվար է ասել: Դժվար է ասել հատկապես 10—11-րդ դդ. պատմության վերաբերյալ, քանի որ Հակոբ Սանահնեցու «Ժամանակագրությունից» օգտվելու փաստը հնարավորություն չի տալիս որոշելու ինչն է Ուռհայեցին անմիջականորեն վերցրել բյուզանդական աղբյուրներից և ինչը՝ Սանահնեցու միջոցով:

Երկրորդ և երրորդ մասերում նկարագրված դեպքերի ժամանակակիցն է Ուռհայեցին. նա արդեն հանդես է գալիս որպես ականատես և ականջալուր հեղինակ: Նա իր քաղաքի, գավառի և մերձակա շրջաններում կատարված դեպքերին լավ տեղյակ է, այդ իմաստով նրա «Ժամանակագրության» այդ էջերը անգնահատելի արժեք ունեն և բարձր են գնահատվել ուսումնասիրողների կողմից:

Ուռհայեցու պատմական երկը «Ժամանակագրություն» է, ժամանակագրական հաջորդականությամբ շարադրված պատմություն: Ուռհայեցին դեպքերի ու դեմքերի սոսկ արձանագրողը չէ, այլ ուսումնասիրող, նա իր ուրույն մոտեցումն ունի, գիտի գնահատել այս կամ այն անձնավորության բարի գործերը: Նա տարբերվում է մեր բազում այլ պատմիչներից մի կարևոր առանձնահատկությամբ. նա ողջ հայության պատմությունն է գրում, «Հայաստան ազգի» և «Հայաստան աշխարհի» պատմությունը: Եթե մեր մի շարք պատմիչների համար հայրենիքը ամենից առաջ նրանց բնիկ ևահանգն է՝ Վասպուրականը, Սյունիքը, Շիրակը, Տարոնը և այլն, Մատթեոս Ուռհայեցու համար հայրենիքը այդ բոլորի ամբողջությունն է, առանց սահմանների: Դեռ ավելին, Ուռհայեցին իր աշխատության մեջ մանրամասն տեղ է տալիս դեպքերի բերմամբ Հայաստանի սահմաններից դուրս ստեղծված հայ իշխանություններին, այդ թվում նաև հեռավոր Դերբենդում հաստատված իշխանությանը:

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» շարունակել է Գրիգոր Երեցը, որը հասցրել է այն մինչև 1162/1163 թթ.: Վերջինիս մասին ևույնպես քիչ բան է

հայտնի: Պարզապես գիտենք, որ քեսունցի երեց էր: Նա գրում է բյուզանդական կայսեր ասպատակությունների մասին Կիլիկիայում, Մոսուլի տեր Զանգիի կողմից Եդեսիայի գրավման, ապա Կիլիկիայի հայկական իշխանության այլազգի տոլթանների հետ ունեցած փոխհարաբերությունների, ինչպես և հայ-վրացական կապերի մասին այդ կարճ ժամանակահատվածում: Նրա Շարունակության մեջ մեծ տեղ է գրավում Քեսունի և Մարաշի փրանկ իշխան Բալդուինի անհայտ կորստյան (1148 թ.) առթիվ վերջինիս խոստովանահայր վարդապետ Բարսեղի գրած ընդարձակ ողբ-դամբանականը: Եթե պատմական փաստերով այն շատ է աղքատ և պատմաբանին քիչ նյութ է տալիս, ապա որպես հայ գրականության պատմության մեջ պահպանված նման ժանրի հազվագյուտ նմուշ, մեծ արժեք է ներկայացնում և՛ իր լեզվով, և՛ իր շարադրմսն ձևով:

Ուռհայեցու «Ժամանակագրությունը», Գրիգոր Երեցի Շարունակությամբ հանդերձ, օգտագործել է Սմբատ Սպարապետը իր «Տարեգրքի» շարադրման ժամանակ: Նա պարզապես այդ ամբողջ գործի համառոտումն է կատարել: Ապրելով Ուռհայեցուց և Գրիգոր Երեցից մոտ մեկ դար անց, պարզ է, Սմբատ Սպարապետը ձեռքի տակ է ունեցել «Ժամանակագրության» եթե ոչ սկզբնագիրը, համենայն դեպս, նրանցից անմիջապես արված մի ընդօրինակություն, որ շատ ավելի հարազատ է բնագրին, քան մեր ձեռքի տակ եղած «Ժամանակագրության» գրչագրերը, որոնք բոլորն էլ, դժբախտաբար, արտագրված են 17-րդ դարից ոչ առաջ: Այդ իմաստով Սմբատի «Տարեգրությունը» օգտակար է՝ սրբագրելու համար «Ժամանակագրության»՝ գրիչների մեղքով աղավաղված մի շարք ընթերցումներ:

Ուռհայեցու «Ժամանակագրությունը» արդեն շուրջ երկու դար է, ինչ դարձել է պատմաբանների ուսումնասիրության առարկան: Ամբողջությամբ այն առաջին անգամ լույս է տեսել Էդ. Դյուլորիեի՝ ֆրանսերեն թարգմանությամբ (Chronique de Matthieu d' Edesse (952—1136), avec la Continuation de Grégoire le Prêtre jusqu' en 1162 ... par Ed. Dulaurier, Paris, 1858): Միայն 1869 թ. է, որ «Ժամանակագրության» հայերեն բնագիրը առաջին անգամ լույս տեսավ (Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ, Երուսաղէմ, 1869): 1898 թ. «Ժամանակագրության» ավելի լիակատար բնագիրը բովանդակող Էջմիածնի Մայր Ձեռագրի № 1693 (այժմ Մաշտոցի անվան մատենադարանի № 1896 ձեռագիրը) գրչագրի հիման վրա Մամբրե վարդապետ Մելիք Ադամյանը և Ներսես սարկավագ Տեր-Միքայելյանը իրականացրին Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» երկրորդ հրատարակությունը: Սույն աշխարհաբար թարգմանությունը, որ առաջին անգամ լույս տեսավ 1973 թ., «Հայաստան» հրատարակչության «Հայ մատենագիրներ» մատենաշարով, կատարված է այդ բնագրի հիման վրա, նկատի առնելով ինչպես Երուսաղեմի հրատարակությունը, այնպես էլ Մատենադարանում պահվող մյուս գրչագրերը:

1962 թ. Անկարայում լույս տեսավ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» թուրքերեն թարգմանությունը (Urfali Mateos Vekayinâmesi (952—1136) ve Papaz Grigor' un zeyli (1136—1162). Türkçeye çeviren H. D. Andreasyan, notlar E. Dulaurier. M. Halit Yinanç çeviren, Ankara, 1962. Türk Tarih Kurumu Yayinlardan, II seri, 21): «Ժամանակագրությունն» ունի նաև անգլերեն թարգմանություն (**A. E. Dostourian,** The Chronicle of Matthew of Edessa. Transl. from the original Armenian, with a Commentary and Introduction. Ann Arbor: University Microfilms, 1972, 2 vols., pp. 752): Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» Վաղարշապատի հրատարակության բնագիրը, որի հիման վրա է

կատարված սույն թարգմանությունը, կրում է հետևյալ վերնագիրը. «Պատմութիւն արարեալ Մատթէոսի Մեծի քահանայի Ուռհայեցւոյ վասն Բագրատունեաց թագաւորացն և այլոց բազմաց ի ԴՇ (400/951) թուականէն սկսեալ մինչև ի ՈԺԱ (611/1162) թիւն աւարտեալ»: Ուռհայեցին իր երկում հանդիպող սակավ ինքնակենսագրական տողերում, երբ տեղի-անտեղի աշխատում է ընդգծել իր նվաստությունը, գիտելիքների սակավությունը և տկարությունը, գրքի ճակատին իրեն «Մեծ քահանա» չէր անվանի: Ուռհայեցու «Ժամանակագրությունը» հասցվում է մինչև հայոց տոմարի 585 (1136) թվականը, այնինչ, խնդրո առարկա վերնագրում ցույց է տրված, որ տվյալ երկն, իբր, ընդգրկում է մինչև հայոց տոմարի 611 (1162) թվականն ընկած դեպքերի շարադրանքը: Պարզ է, որ գիրքը վերնագրող գրիչը չի էլ իմացել, որ 1136 թ. հետո ընկած դեպքերի շարադրանքը պատկանում է ոչ թե Ուռհայեցու, այլ Գրիգոր Երեցի գրչին: Եվ, վերջապես, ինքը՝ Մատթեոս Ուռհայեցին, իր աշխատանքն անվանում է ոչ թե «Պատմություն», այլ «Ժամանակագրություն»:

1 Ուռհայեցին օգտագործում է հայոց թվականը: Փակագծերում մենք ցույց ենք տալիս, թե Ուռհայեցու նշած թվականը ներկայումս գործածվող ո՛ր թվականին է համապատասխանում՝ ըստ Էդ. Դյուլորիեի:

2 «Տաճիկ» ցեղանունը հայ մատենագրության մեջ սկզբնական շրջանում օգտագործվում էր «արաբ» նշանակությամբ, հետագայում սկսեց նշանակել «պարսիկ»՝ ի հակադրություն «թուրքի»: Այժմ «տաճիկ» «թուրք» է նշանակում:

3 Ուռհա կամ Եդեսիա գոյություն է ունեցել Տիգրան թագավորից, գուցե և մակեդոնացիների տիրապետությունից էլ առաջ: Արաբական տիրապետության տակ մնաց մինչև 1032 թ., երբ այն գրավվեց զորավար Մանիակի կողմից:

4 Ամուր՝ քաղաք Եփրատ գետի աջ ափին, Էմեսասյից (այժմ՝ Հոմս) հյուսիս-արևմուտք: Արաբների ձեռքում մնաց մինչև 934 թ. և բյուզանդացիներին անցավ հայազգի նշանավոր զորավար Հովհաննես Կուրկուասի ջանքերով:

5 Պառակամաւոսը (ճիշտը՝ պարակիմոմենոս) անուն չէ, այլ պաշտոն: Այդպես էր կոչվում բյուզանդական կայսեր սեւեկապետը: Այստեղ խոսքը պարակիմոմենոս Վասիլ Լեկապենոսի մասին է, Ռոմանոս Ա կայսեր ապօրինի որդու:

6 Օվկիանոս ծով անվան տակ Ուռհայեցին տվյալ դեպքում նկատի ունի Էգեական ծովը, թեև այդ բառի տակ, որպես կանոն, ենթադրվում է ողջ Միջերկրականը:

7 Ուռհայեցու նշած արշավանքին, երբ կղզին նորից անցավ բյուզանդացիների ձեռքը, Ռոմանոսը չէր մասնակցում. այդ արշավանքը գլխավորում էր Արևելից զորքերի սպարապետ, հայազգի Նիկեփոր Փոկասը, որը մի քանի տարի անց կայսր հռչակվեց: Ուռհայեցու տեղեկությունը՝ Կրետեի արաբների ձեռքում 400 տարի մնալու մասին, ճիշտ չէ:

8 Համտունը Հալեպի ամիրան էր, որին առաջին անգամ ջարդ տվեց Նիկեփոր Փոկասը: Երբ վերջինս Կրետեում էր գտնվում, Ռոմանոս կայսրը արաբական վտանգի առաջն առնելու համար նրանց դեմ ուղարկեց Նիկեփոր Փոկասի եղբորը՝ Լևոն Փոկասին, նրան տալով մագիստրոսի բարձր պատվաստիճանը և նշանակելով Արևելից սպարապետ: Մատթեոս Ուռհայեցու վկայությունը, թեև համառոտ, արժե-

քավոր է այն իմաստով, որ կոնկրետ ցույց է տալիս Լևոն Փոկասի զորքերի ազգային պատկանելությունը:

9 Բյուզանդացի պատմիչ Սկիլիցեսի տվյալներով Նիկեփոր Փոկասը էր, որ իր թագավորության երկրորդ տարին բյուզանդական, ինչպես և հայ ու վրացի դաշնակից զորքերով մուտք գործելով Կիլիկիա, գրավեց Անազարվան, Ռոսում և Ադանան, իսկ հաջորդ տարվա գարնանը՝ նաև Մամեստիան և Տարսոնը:

10 Հայոց սպարապետը, համաձայն Մ. Չամչյանի, Գևորգ Մարզպետունու որդին է: Տե՛ս Հայոց պատմություն, հտ. Բ, էջ 811 և 837:

11 Բնագիրը, ըստ երևույթին, աղավաղված է, որովհետև կա ճիշտ թվական՝ 961, ապա հիշվում է օծող կաթողիկոսի անունը՝ Անանիա (946—968 թթ.): Պարզ է, որ թագավոր օծվողը ոչ թե Աշոտ Գ Ողորմածի որդի Գագիկ Ա-ն է (990—1020 թթ.), այլ վերջինիս հայր Աշոտ Գ Ողորմածը: Այդ առումով ավելի ճիշտ ընթերցում է տալիս Երուսաղեմի տպագիր բնագիրը. «Եւ ժողովեցաւ ամենայն իշխանքն աշխարհաց տանն հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեանս Աշոտ Գագկայ»: Մ. Օրմանյանը ենթադրում է, որ Աշոտը, ամենայն հավանականությամբ, ուներ երկրորդ անուն՝ Գագիկ, և որ նա կոչվում էր Աշոտ-Գագիկ: Տե՛ս Ազգապատում, հտ. Ա, սյունակ 1107:

12 Խոսքը Աղվանից կաթողիկոս Հովհաննես Ե-ի մասին է, որ կոչվում էր նաև Հովնան:

13 Ուռհայեցին հետագայում Փիլիպոսին անվանում է «թագաւորն Կապանին Փիլիպպէ» և տալիս նրա մանրամասն տոհմածառը:

14 Անին մինչ այդ Կամսարականներին պատկանող մի ամրոց էր: 9—10-րդ դարերի սահմանագլխին դարձել էր բավականին մեծ ավան: 10-րդ դարի առաջին կեսին արդեն քաղաք էր: 961 թ. դառնալով թագավորանիստ, առևտրական թափով սկսեց զարգանալ: Մինչ այդ Բագրատունիների մայրաքաղաքը Երազգավորքն էր: Ուռհայեցու պատմածն այն տպավորությունն է թողնում, որ նա նկատի ունի հայոց թագավորության վերականգնումը, այնինչ այստեղ նա խոսում է Անիի մայրաքաղաք դառնալու մասին:

15 Գրչագիրն այստեղ տալիս է միայն Գագիկ անունը, որը, հավանաբար, պետք է ուղղել Աշոտ-Գագիկ, ինչպես որ է նախորդ դեպքերում:

16 Անիխազական թագավորությունը կազմակերպվեց 8-րդ դարի վերջում և իր գոյությունը պահպանեց երկու դար: Երբ գահը ժառանգեց Բագրատ Գ-ն, նա հայտարարվեց միավորված Վրաստանի թագավոր:

17 Ռոմանոս Բ-ն, որին Ուռհայեցին անվանում է ծերունի: Բյուզանդական աղբյուրներում, ընդհակառակը, ծերունի է անվանվում Ռոմանոս Ա-ն, իսկ Ռոմանոս Բ-ն կոչվում է երիտասարդ:

18 Վասիլն ու Կոստանդինը Ռոմանոս Ա-ի որդիները չէին, այլ Ռոմանոս Բ-ի՝ Կոստանդին Ծիրանածինի որդու:

19 Նիկեփոր Փոկաս կայսրը (963—969 թթ.) ծագումով հայ էր: Նրա հայրը կոչվում էր Վարդան և ուներ մագիստրոսի բարձր պատվաստիճան: Նիկեփորը մինչև կայսր հռչակվելը Արևելից զորքերի սպարապետն էր:

20 Կայսրուհին կոչվում էր Թեոփանո: Հովհաննես Չմշկիկը, որ ծագումով հայ էր, բյուզանդական նշանավոր զորահրամանատար Հովհաննես Կուրկուասի եղբայր Թեոփիլոս Կուրկուասի թոռն էր: Մայրը զորավար Վարդաս Փոկասի դուստրն էր և հետագայում կայսր հռչակված Նիկեփոր Բ Փոկասի քույրը:

21 Ուռհայեցու մոտ անախրոնիզմ է: Գագիկ Ա-ն վախճանվեց 1020 թ., իսկ Հովհաննես-Սմբատը թագավորեց ոչ թե 971/972 թթ., ինչպես ցույց է տալիս մեր պատմիչը, այլ՝ 1020 թ.:

22 Ուռհայեցին իր աշխատության մեջ հաճախ տալիս է այս կամ այն երևելի անձի տոհմածառը: Տվյալ դեպքում բնագիրն ունի. «Սենեքարիմ թագաւորն Վասպուրականի, առ որդին Ապուսահլի՝ որդւոյ Աշոտոյ, որդւոյ Դերենկանն, որդւոյ Գագկայ»: Վերևում նշված յուրաքանչյուր անձնավորություն իրենից անմիջապես հաջորդի որդին է:

23 Խոսքը ափխազաց և վրաց թագավոր Գիորգի Ա-ի մասին է (1014—1027 թթ.):

24 Վրաց թագավորությունն այս շրջանում գտնվում էր ափխազների ձեռքում, այդ պատճառով էլ կոչվում էր ափխազների թագավորություն: Ուռհայեցին այդ իշխանին անվանում է և՛ ափխազաց իշխան, և՛ վրաց իշխան:

25 Խոսքը Պետրոս Ա կաթողիկոսի մասին է, որ հետագայում ստացավ Գետադարձ մականունը (1019—1058 թթ.):

26 Ազգապետ տերմինը Ուռհայեցին օգտագործում է մեկ անգամ ևս: Ամենայն հավանականությամբ, այդ բառով արտահայտվում է Շիրակի թագավորի գերադաս դիրքը Հայաստանի մյուս թագավորների նկատմամբ:

27 Արաբական անունների (տվյալ դեպքում՝ Հասան) օգտագործումը այս շրջանում հայերի մոտ շատ էր տարածված:

28 Խոսքը Դվինի արաբ ամիրա Աբու-լ-Ասվարի մասին է:

29 Նիգը Այրարատ նահանգի 15-րդ գավառն էր և համապատասխանում է այժմյան Ապարանի շրջանի տարածքին: Կենտրոնն էր Քասախ ավանը (այժմ՝ Ապարան գյուղ):

30 Խոսքը նշանավոր փիլիսոփա ու զորավար Գրիգոր Մագիստրոսի և նրա որդի՝ Վասակ Պահլավունու մասին է: Գրիգոր Մագիստրոսի մասին տարածված է այն թյուր կարծիքը, որ նա իբր բյուզանդական գործակալ էր Հայաստանում և պայքար էր մղել Անիի թագավորության վերացման ու բյուզանդական տիրապետության տարածման համար: Վերջին ուսումնասիրությունը (մանրամասն տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման շուրջը» մեր հոդվածը՝ ակադ. Ա. Հովհաննիսյանի 80-ամյակին նվիրված ժողովածուում, Երևան, 1970, էջ 71) մեկ անգամ ևս հաստատեց, որ նա մեծ հայրենասեր էր: Նա ամեն ջանք թափեց՝ փրկելու Բագրատունյաց թագավորությունը և միայն այն ժամանակ, երբ համոզվեց, որ դա անհնարին է, ստիպված հանձնեց իր տիրույթները Բյուզանդիային (1045 թ.) և փոխարենը Միջագետքում ստացավ գյուղեր և քաղաքներ, ինչպես և մագիստրոսի բարձր պատվաստիճանը:

31 Բնագրում՝ «Գորգ և Զորտուանէլ»: Երուսաղեմի տպագիր օրինակում՝ «Գորգ Զորտուանէլն»: Ն. Ակինյանը առաջարկում է հետևյալ ուղղումը. «Եւ Գորգ [որ] և Զորտուանէլ» և այդ երկու անվան տակ տեսնել մեկ անձնավորություն: Տայքի Թոռնիկյաններին պատկանող վրացադավան հայազգի Զորտվանելի իշխանությունը տարածվում էր Տարոնից մինչև Դերջան: Նա որդին էր Վարազվաչեի և վրացերեն մի ձեռագրի հիշատակարանում հայերեն տերմինով կոչված է «զորավար»: Նա ստացել էր մագիստրոսի պատվաստիճան և մասնակցել Վարդ Փոկասի և Վարդ Սկլերոսի ապստամբություններին՝ ընդդեմ Վասիլ Բ կայսեր:

32 Բնագրում՝ «Յայնժամ հասանէր գազան այրն այն (այլ գրչագրերում՝ գա-

զանաբար) **ռումբ եդեալ** քաջին Վասակայ, որպէսզի առցէ զնա ի ծայր գեղարդեանն իւրոյ»: Ղ. Ալիշանը ընդգծված բառերը հետևյալ կերպ է մեկնաբանում. «նիզակին սուր մասին ներքև երկաթե գունտ մի դնե, որպեսզի ուժով իջեցնե հարվածը» (Հայապատում, էջ 313, ծանոթ. 5):

33 Կայենը (կամ Կայինը), ըստ աստվածաշնչային ավանդության, Ադամի և Եվայի որդին էր, որ սպանելով իր եղբայր Աբելին, դարձավ մարդկային պատմության առաջին մարդասպանը:

34 Վարդան Արևելցին գտնում է, որ այս արշավանքը կատարվել է Տողրուլ բեկի զորավարների կողմից, և որ Գրիգոր Մագիստրոսի հոր սպանությունը տեղի է ունեցել 1021 թ.: Ուռհայեցու թվագրությունը մոտ կես դարով սխալ է:

35 Դեմեստիկոսը բյուզանդական զորքերի սպարապետն էր: Նրա լրիվ անվանումն էր՝ սխոլերի դոմեստիկոս:

36 Այժմ՝ Մալաթիա: 934 թ. այն գրավեց Հովհաննես Կուրկուասը:

37 Այսինքն՝ Տիգրիս գետի: Տիգրանակերտ-Ամիդը այժմ կոչվում է Դիարբեքիր:

38 Նիկեփոր կայսեր 969 թ. սպանեց Չմշկիկը, հետևաբար, վերոհիշյալ դեպքերը չէին կարող տեղի ունեցած լինել հայոց 421 (972/973) թվականին:

39 Բնագրում՝ «թագաւորն Աղուանից Գուրգէն»: Խոսքը Լոռեի (Կյուրիկյան) թագավորի մասին է:

40 Ուռհայեցին այստեղ, հասկանալի է, նկատի չունի Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմ Արծրունուն (ավազանի անունով Հովհաննես, Լաստիվերտցու տվյալներով նաև՝ Գավիթ), որ թագավոր դարձավ 1003 թ. միայն: Ամենայն հավանականությամբ, նա նկատի ունի վերջինիս պապին, որ նույնպես Սենեքերիմ էր կոչվում: Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 478:

41 Բնագրում՝ «Սասանու»: Առանձին ձեռագրեր տալիս են «Սասնու» ընթերցումը, այսինքն՝ Սասուն, որ ճիշտ է:

42 Լևոնը (Ուռհայեցին քիչ հետո նրան անվանում է Ղևոնդ) Կոստանդնուպոլսում Չմշկիկից ստացավ «բաբունապետ և փիլիսոփա» տիտղոսները: Իր թղթում Չմշկիկը Լևոնին է դիմում, նրան անվանելով Պանդալևոն:

43 Ուռհայեցու բնագրում՝ «գնացին... իմաստասէրն Լեւոն և **Ստատ** իշխանն Թոռնեցին»: Այլ գրչագրեր տալիս են «Սմբատ» ընթերցումը: Ուռհայեցու «Ժամանակագրության» մեր թարգմանության հիմք ծառայած բնագրում խնդրո առարկա անունը հանդես է գալիս հետևյալ ընթերցմամբ ևս. «Դու և Սատ Թոռնեցին...»: Ամենայն հավանականությամբ մենք գործ ունենք Եվստաթ (Եվստատ) անվան գրչական աղավաղման հետ:

44 Տարոնը նախապես Մամիկոնյանների տիրույթն էր, բայց 8-րդ դարի ընթացքում աստիճանաբար անցնում է Բագրատունիների ձեռքը: 880 թ. Բագարատ իշխանը հիմնադրում է Տարոնի Բագրատունիների իշխանությունը: Բագարատը գերի է ընկնում արաբների ձեռքը և վախճանվում Բաղդադում:

45 Հայոց կաթողիկոս Վահան Ա Սյունին, որը, սակայն, աթոռակալել է 968—969 թթ.: Ուռհայեցին գտնում է, որ նա աթոռակալել է հինգ տարի, մի բան, որ ուսումնասիրողները սխալ են համարում: Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Ա, սյունակ 1116—1118:

46 Չմշկիկի անունն էր Հովհաննես (հունարեն Յաննիս): Հայկական աղբյուրներում այդ Յաննի[հս]ը արտասանում էին Ժան:

47 Ուռհայեցին «կամուրջ» բառի փոխարեն օգտագործում է արաբերեն «կանդարան»:

48 Խոզանը գտնվում էր Չորրորդ Հայքի Պաղնատուն գավառում: Ենթադրում են, որ այն կազմում էր այժմյան Դերսիմի սանջակի կենտրոնը: Խոզանում էր գտնվում Զմշկածագը:

49 «Ծահնշահը» (բառացի՝ արքայից արքա) տվյալ դեպքում հունարեն ἀρχων τῶν ἀρχόντων-ի (իշխանաց իշխան) թարգմանությունն է: Բյուզանդական կայսրերը հայոց թագավորին միայն այդ կերպ էին դիմում: Աշոտ թագավորին անվանելով որդի, Զմշկիկն ուզում է ընդգծել նրա վասալական կախումը կայսրությունից:

50 Հակոբ Մծբնացին (4-րդ դար), որ ծագումով ասորի էր, համարվում է Հայաստանում քրիստոնեությունը քարոզողներից մեկը: Նրա վարքը գրել է Մար Սվգինը:

51 Ամիր-ըլ-Մումինին (թարգմանաբար նշանակում է ամիրաների ամիրա, ամիրապետ) արաբ խալիֆան է: Մախր արաբիկը Աֆրիկայի արաբներն են, Ֆաթիմյանները: Ուռհայեցին նրանց հիշատակում է հետագայում ևս:

52 Խոսքը Սիրիայում գտնվող Բաալբեկի մասին է:

53 Բնագրում «հարիւր յիսուն և երեք ձկամբ» (Երուսաղեմի տպագիր օրինակում՝ 103 ձկամբ): Նոր Կտակարանում ասված է, որ Քրիստոս հրաշագործեց հինգ նկանակով և երկու ձկով:

54 Ռամլե քաղաք (այժմ ալ-Ռամլա)՝ Պաղեստինի մայրաքաղաքը, Երուսաղեմից մոտ 35 կիլոմետր հյուսիս-արևելք:

55 Պեհիադան կոչվում է նաև Դեկապոլիս և գտնվում էր Պաղեստինի հյուսիս-արևելյան մասում, Ասորիքին սահմանակից:

56 Գեննեսարեթը Պաղեստինի լիճն է, կոչվում է նաև Գալիլյան կամ Տիբերիադայի ծով:

57 Արկեան կոչվում է նաև Պտղոմիա: Քաղաք և նավահանգիստ Պաղեստինում:

58 Խոսքը Կապադովկիայի Կեսարիայի մասին չէ, այլ՝ Պաղեստինի:

59 Բեյրութ քաղաքը, որ Ուռհայեցին նշում է հունարեն տառադարձությամբ, թողնելով նույնիսկ հունարեն հայցական հոլովի վերջավորությունը:

60 Ուռհայեցին տալիս է քաղաքի անունը հունարեն հայցական հոլովի վերջավորությամբ: Փյունիկեի մի քաղաք, որ տեղաբնիկները կոչում են Գեբել, Գաբուննա կամ Գևոն:

61 Քաղաք Լիբանանում, ժամանակակից էլ-Միննա քաղաքի տեղում:

62 Բյուզանդական բանակը բաղկացած էր երկու մասից՝ թեմաներից և տագմաներից: Առաջիններն ներկայացնում էին նահանգների, բանակաթեմերի զորքերը, իսկ տագմաները կենտրոնացած էին մայրաքաղաքում կամ նրան մոտիկ նահանգներում. Թրակիայում, Մակեդոնիայում և, այսպես կոչված, Պերատիկա շրջանում՝ Բոսֆորի ասիական կողմում: Գոյություն ունեին չորս տագմաներ, այն է՝ սխոլարիոսներ, էքսկուբիտոսներ, արիթմոսներ և իկանատոսներ:

63 Գաբալա քաղաքը Փյունիկեում, Վաղանյաց քաղաքն՝ Բալանեյան, որ գտնվում էր Ասորիքում, Գաբալայի և Անտարադուսի միջև: Սիհոնը Անտիոքի շրջանում գտնվող փոքր բերդաքաղաք էր:

64 Բնագրում «Եւ յանափոտէն պռտօսպաթրին Դերջնայ»: Դյուրորեն գտնում էր, որ Դերջանի պրոտոսպաթարի անունը Անափուտեն էր: Սխալ է մեկնաբանել և Անճայանը, այն համարելով բյուզանդական պաշտոնյայի տիտղոս: Ն. Ադոնցը

արամտորեն վերականգնել է բնագիրը, միանգամայն ճիշտ առաջարկելով ուղղել «յանափոռաէն» և նրա տակ տեսնել հունարեն «անափորա» (զեկուցագիր) բառը: Ուռհայեցու բնագիրը տվյալ տեղում գրիչների մեղքով մի անգամ էլ է աղավաղված: Խոսքը «զքառասուն հազար սովօլօնն» բառերի մասին է, որի տակ ենթադրում են այդ գումարի օբոլոսներ: Նախ և առաջ օբոլոսը (օվոլոսը) դրամի փոքրագույն մասն է և հազիվ թե կայսրը դրանով հաշիվ տեսներ: Բնագրում չի գրված լրիվ՝ «քառասուն հազար սովօլօն», այլ՝ «խոսովօլօն»: Սկզբում գրիչները, հետագայում հրատարակիչները բառի առաջին երկու տառը (ԽՈ) թվական համարելով բացել են և կարդացել 40.000, այնինչ «խոսովօլօն» մեկ բառ է, հունարեն՝ խրիսովուլոն, որ նշանակում է կայսեր ոսկեդրոշմը կրող կարգադրություն, հրովարտակ, հրաման: Այս վերջին ճշգրտումն էլ պատկանում է Ն. Ադոնցին:

65 Այստեղ բնագիրն ամենայն հավանականությամբ աղավաղված է: Ալեսին տեղանուն ինձ հայտնի չէ:

66 Ուռհայեցին այստեղ երկրորդ անգամ Վասիլին և Կոստանդնին համարում է Ռոմանոս Ա-ի որդիները:

67 Ուռհայեցին որպես հոմանիշ է օգտագործում հռոմ և հույն բառերը, թեև հռոմն ու հույնը ծագումով ոչ մի ընդհանուր բան չունեն: Հենց հույներն իրենց կայսրությունն անվանում էին Ռոմանիա, իսկ նրա բնակիչներին՝ հռոմայեցիներ և ոչ հույներ, քանի որ վերջին բառը (հելլեն) միջնադարում հեթանոս էր նշանակում: Այդ հռոմայեցիներն էլ, ահա, հայերի մոտ դարձել են հոռոմներ: Ուռհայեցին երբ խոսում է իսկապես հռոմայեցիների, այսինքն՝ իտալական թերակղզու բնակչության մասին, նրանց անվանում է ոչ թե հոռոմներ, այլ հռոմայեցիներ: Մեր պատմիչը հաճախ հռոմ է անվանում նաև զտարյուն հայերին, եթե նրանք հունադավան են, հետևաբար, տվյալ բառի տակ նա ոչ թե ազգային պատկանելիություն է տեսնում, այլ՝ դավանանքի:

68 Զմշկիկի վախճանի մասին Ուռհայեցու տվյալները չեն համապատասխանում իրականությանը: Ասորիքից վերադառնալիս Զմշկիկը լինում է Անավարզայում և Պոդանդոսում, տեսնում բարեբեր և գեղեցիկ բազմաթիվ շրջաններ և հարց է տալիս՝ ո՞ւմ են դրանք պատկանում: Պատասխանում են, թե Վասիլ պարակիմոմենոսին: Զմշկիկը դրա վրա զայրացած ասել է, թե պետական գումարները, հռոմեական զորքերի չարչարանքներով ձեռք բերված շրջանները ահա այսպես են վատնվում և տրվում ինչ-որ ներքինու: Զմշկիկի ասածը հասցնում են Վասիլ պարակիմոմենոսին, որն առիթ է որոնում կայսեր սպանելու: Նա գինու մեջ թույն է խառնում և կյանքից զրկում կայսեր: Զմշկիկի մահվան այս վարկածը տալիս է 11-րդ դարի բյուզանդական պատմիչ Հովհաննես Սկիլիցեսը:

69 Խոսքը Վասիլ Բ-ի մասին է (976—1025 թթ.), որ հետագայում ստացավ Բուլղարասպան մականունը: Կոստանդինը ենթադրաբար Կոստանդին Ծիրանածինն է: Ուռհայեցին Վասիլին համարում է «որդին Ռոմանոսի ծերոյ», որ սխալ է: Վասիլը Ռոմանոս Բ-ի որդին էր:

70 Բնագրում «յԱնձաւացեաց գաւառին, ի բանակն կոչեցեալ անուն»: Բանակի վերաբերյալ Ղ. Ալիշանը գրում է. «Հատուկ անուն տեղվո, թվի զորաց այնտեղ կենալուն համար՝ այսպես կոչված»: Հայապատում, էջ 294:

71 Ուռհայեցին Դերենիկին համարում է Անձավացյաց թագավոր, այնինչ Ասողիկը՝ Արծրունյաց և հիշում որպես Գագիկ Արծրունու որդի: Ասողիկը նրա մահվան թվական է համարում 407 (958)-ը, այնինչ Ուռհայեցին վերոհիշյալ դեպքերը

թվագրում է 975/976 թթ.: Հ. Անտոնյանը նույնացնում է նրանց, բայց հավանաբար տարբեր անձնավորություններ են: Ուռհայեցու գործում այստեղ կա մոտ 35 տարվա անախրոնիզմ, որի վրա կանգ է առել դեռևս Մ. Չամչյանը (Հայոց պատմություն, հտ. Բ, էջ 826—827):

72 Ապլհաճ ամիրան նույնանում է Ռավվադյան ամիրա Աբու-լ-Հայջայի հետ, որ տիրում էր Ատրպատականի զգալի մասին: Նա 987 թ. գրավեց Դվինը, իսկ 988 թ. արշավեց Վասպուրականի վրա: Նա իրեն ենթարկեց նաև Խոյի և Ուրմիայի մանր ֆեոդալներին:

73 Ճուաշը (նաև Ճուաշ-ոոտ) Վասպուրականի 20-րդ գավառն էր և գրավում էր Ճուարշ-ոոտ (այժմ՝ Աղ-չայ) գետի ընդարձակ հովիտը:

74 Անանիա կաթողիկոսը Մ. Օրմանյանի հաշվումներով վախճանվել է 968 թ., հետևաբար, նրա հաջորդին՝ Վահանին (968—969 թթ.) չէին կարող նշանակել Հովհաննես և Աշոտ թագավորները, որոնք ավելի քան հինսուն տարի հետո թագավորեցին:

75 Արգինան գտնվում էր Ճիրակ գավառում, Երազգավորքի մոտ, նրանից մի քիչ արևմուտք և որոշ ժամանակ դարձել էր հայոց կաթողիկոսների աթոռանիստը: 10-րդ դ. կեսերին Անանիա Մոկացի կաթողիկոսը մեծ շինարարություն ծավալեց այնտեղ:

76 Բնագրում՝ Սկելառոս: Խոսքը հայազգի զորավար մագիստրոս Վարդաս Սկլերոսի մասին է: Նրա ապստամբությանը (ինչպես և Վարդաս Փոկասի ապստամբությանը), որ տեղի ունեցավ Բյուզանդիայի կողմից Կարինի և Տարոնի գրավումից ոչ շատ անց, միացավ ամենից առաջ հայ զինվորականությունը, որի նպատակն էր, ամենայն հավանականությամբ, բյուզանդական առաջխաղացման առաջն առնել: Սկլերոսն ապստամբություն է բարձրացնում 976 թ., հագնում կայսերական նշանակներ և իրեն շատ սիրող զորքի կողմից կայսր հռչակվում: Սկիլիցեսի տվյալներով նրան ամենից առաջ «կայսր» փառաբանեցին հայերը, այդ թվում և Տարոնացի եղբայրները (այսինքն՝ Տարոնի իշխան Աշոտի որդիները), որոնք դրանից ուղիղ տաս տարի առաջ զրկվել էին իրենց տիրույթներից: Սկլերոսը նախ և առաջ տիրանում է Խարբերդին, դաշինք է կնքում Ամիդի ամիրա Աբու Դուլաֆի և Մարտիրոպոլսի ամիրա Աբու Տաղլիբի հետ և շարժվում դեպի Կոստանդնուպոլիս: Սկլերոսի կողմն է անցնում հայազգի մի զորավար, որի անունն էր Սահակ-Վահրամ: Նրանք հասնում են հայերով բնակեցված Լիկանդոս գավառը, որտեղ իրենց է միանում Անտիոքի դուքս Վուրցիսը՝ հայերից բաղկացած իր զորքով: Այնտեղից նրանք գնում են նույնպես հայերով բնակեցված Ծամնդավ գավառը: Սկլերոսի կողմն է անցնում նույնիսկ կայսերական նավատորմիղը, որը գլխավորում էր հայազգի Միքայել Քուրդիկը և Ռոմանոս Տարոնացին: Մանկահասակ կայսրերի խնամակալ պարակիմոմենոս Վասիլը աքսորից ետ է կանչում Վարդաս Փոկասին, նրան համարելով Սկլերոսի դեմ մարտնչելու կարող միակ ուժը: Սկլերոսը հաղթում է Փոկասին, և վերջինս փախչում է Տայք ու Դավիթ կուրապաղատից օգնություն ստանում: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում 979 թ. Ալիս գետի ափին գտնվող Պանկալիա վայրում: Սկլերոսը պարտություն է կրում և վիրավոր փախչում Մարտիրոպոլիս, այնտեղից էլ՝ Բաղդադ: 987 թ. սկզբին Վարդաս Սկլերոսը վերադառնում է Բյուզանդիա և ջանք թափում տիրանալու գահին: Վասիլ Բ-ն Սկլերոսի դեմ է ուղարկում Փոկասին, որը, սակայն, իրեն կայսր է հռչակում: Սկլերոսը ճանաչեց Փոկասի գերիշխանությունը: 988 թ. գարնանը Վասիլ Բ-ն պար-

տության մատնեց Փոկասին: Սկզերոսն էլ, թեև կայսրից ներում ստացավ, այնուամենայնիվ, կուրացվեց նրա կողմից:

77 Ստեփանոս Գ կաթողիկոս Սևանցին (969—971 թթ.): Այս դեպքում ևս Ուռհայեցու թվական տվյալները ճիշտ չեն: Ստեփանոսի կաթողիկոսության տարիները ոչ մի դեպքում չէին կարող տեղադրվել Վասիլ Բ-ի (976—1025 թթ.) և հայոց արքաներ Հովհաննեսի ու Աշոտի (1020—1042 թթ.) թագավորության տարիների մեջ:

78 Խոսքը Ատրպատականի ամիրա Մամլանի մասին է, Ռավվադյանների տոհմից: Ապահունիքի ամիրա Բատի մահից հետո (990 թ.) Տայքի Դավիթ կուրապաղատը հարձակվել և գրավել էր Ապահունիքը, արաբ բնակիչներին գավառից դուրս քշել և նրանց տեղը բնակեցրել հայերի, ինչպես և վրացադավան հայերի: Այդ բանը մահմեդականներին դուր չեկավ, և նրանք Ատրպատականի Ռավվադյան Մամլանի գլխավորությամբ եկան Ծաղկոտն գավառի Կոստյանք գյուղը, բայց չհամարձակվելով պայքարել հայ-վրացական միացյալ ուժերի դեմ, որոնց գլխավորում էին Գագիկ Ա թագավորը, Կարսի թագավոր Աբասը, Տայքի կուրապաղատ Դավիթը և վրաց Բագրատը, նահանջեցին: 998 թ. Մամլանը կրկին անգամ եկավ Հայաստան և Հերի վրայով շարժվեց դեպի Ապահունիք: Բայց հայ-վրացական զորքերից նա նորից ջարդ կրեց ու փախավ Արճեշ: Մանրամասն տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայություններն Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 194—196:

79 Ռափսակը Ասորեստանի թագավոր Սեննեքերիմի զորավարն էր:

80 Վասիլ Բ-ն:

81 Խաչիկ Ա Արշակունին (973—992 թթ.):

82 Բնագրում «պատրիարքք Թեոդորոս»: Հասկանալի է, եպիսկոպոսի մասին է խոսքը, ավելի ճիշտ՝ մետրոպոլիտի: Հեղինակը Մելիտենեն **մայրաքաղաք** է անվանում, որ հունարեն μητρόπολις բառի բառացի թարգմանությունն է:

83 Վարդան Փոկասի ապստամբությունը նկատի ունի: Մօրավարդ (Մաւրավարդ) նշանակում է Սև Վարդ: Նրա ապստամբության մասին տե՛ս վերը, ծանոթ. 76:

84 Կոստանդնուպոլսի սուրբ Սոֆիայի տաճարը վերակառուցեց հայ ճարտարապետ Տրդատը:

85 Տե՛ս ստորև, ծանոթ. 94:

86 Չմշկիկ կայսրը 971 թ. գրավել էր Բուլղարիայի հյուսիսային մասը, այսպես կոչված Պարիստրիոնը, բայց հինգ տարի անց բուլղարները ապստամբեցին և վերամիավորեցին իրենց երկիրը: Գլխավոր դերն այդ պայքարում խաղում էին, այսպես կոչված, կոմսաձագերը (կոմիտոպուլները), կոմս Նիկոլայի որդիները, որոնք, աղբյուրների տվյալների համաձայն, հայեր էին (նրանց մայրը կոչվում էր Հռիփսիմե):

87 Հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին (992—1019 թթ.):

88 Խոսքը տոմարագետ Իրոնի մասին է (6-րդ դար), որի հասցեին շատ սուր քննադատական խոսքեր ունի ասած Անանիա Շիրակացին իր Զատկի ճառում:

89 Այս Անդրեասի անձնավորության շուրջ հայագիտության մեջ կա մեծ վեճ: Նա ոմանց կողմից համարվում է հայ, ապրած 5-րդ դարում, ուրիշների կողմից՝ հռոմայեցի, ապրած 4-րդ դարում:

90 Հովսեփ Ընծայեցին Կարինի Հնձուց վանքի վանահայրն էր: Հետագայում

նա Հովհաննես Կոզեռնի և Պետրոս կաթողիկոսի հետ գնաց Տրապիզոն՝ Վասիլ Բ-ի հետ բանակցություններ վարելու:

91 Հովհաննես Կոզեռնը, ծագումով Տարոնից, տոմարագետ էր: Գրել է բազմաթիվ գործեր, որոնց մեջ և մի երկ՝ «Պատմութիւն Բագրատունեաց»: Ուսումնասիրողները գտնում են, որ «Կոզեռնի տեսիլքները» Կոզեռնի գրչին չեն պատկանում, որ պարզապես այդ գիտնականի անունը շահագործող ապոկրիֆի կամ «զրույցի» հետ մենք գործ ունենք: Կոզեռնը մահացել և թաղվել է Երևանում և այդ վայրը մինչև օրս էլ կոչվում է Կոզեռն:

92 Ուռհայեցին Ծռազատիկը դնում է 1007 թ., բայց միաժամանակ ցույց տալիս, որ Վասիլ կայսրը այդ հարցով դիմեց հայոց թագավոր Հովհաննեսին և հայոց կաթողիկոս տեր Սարգսին: Եթե կաթողիկոսի հարցում նա ճիշտ է, ապա միանգամայն սխալ է թագավորի հարցում, քանի որ Հովհաննես-Սմբատը թագավորեց 1020 թ. սկսած:

93 Վարդապետ Սամվելը նույնանում է Սամվել Կամրջաձորեցու հետ, Կամրջաձորի (Արշարունիք) ուխտի առաջնորդի: Նա անվանի երաժիշտ էր: Ուռհայեցին նրան հիշում է մի փոքր առաջ, Մելիտենեի մետրոպոլիտին գրած թղթի առթիվ:

94 Ուռհայեցին ցույց է տալիս, որ 1011—1012 թթ. բուլղարաց թագավորն էր Ալուսիանը (գրչագրերում սխալմամբ Ալի օսման): Բայց դա իրականությանը չի համապատասխանում: Այդ ժամանակ բուլղարների թագավորն էր Սամուիլը: Ուռհայեցու սխալը Ն. Ադոնցը հետևյալ կերպ է բացատրում. Ալուսիան ասելով նա նկատի ունի ոչ թե կոնկրետ անձնավորություն, այլ բուլղար թագավորի հորջորջում: Ալուսիան է անվանում նա բուլղարների թագավորներ և՛ Ռոմանոսին, և՛ Իվան-Վլադիսլավին:

95 Ս. Աղաջանովն ու Կ. Յուզբաշյանը փորձել են ապացուցել, որ սելջուկ թուրքերը առաջին անգամ հայտնվեցին Անդրկովկասում միայն 1030—1032 թթ. ընթացքում (տե՛ս С. Г. Агаджанов — К. Н. Юзбашян, К истории тюркских набегов на Армению в XI в., Палестинский Сборник, вып. 13 (76). Москва—Ленинград, 1965, стр. 153 и сл.: Այդ մտքին հակասում են և՛ հայկական, և՛ բյուզանդական աղբյուրների տվյալները:

96 Ոստան քաղաքը գտնվում էր Վանա լճի ափին և սկզբնական շրջանում Ռշտունի իշխանների նստավայրն էր: Առաջին անգամ հիշատակվում է 9-րդ դարի կեսերին: Քաղաքը պարսպապատեց Գագիկ Արծրունին:

97 Տե՛ս Եսայի, Ե, 95:

98 Լաստիվերտցու տվյալներով՝ «Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին (Պետրոս կաթողիկոսին), եթէ՝ Գրէ՛ գիր և տո՛ւր կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և երկիրս նմա տաց ի ժառանգութիւն»: Ահա այս գրությունն էր, որ Պետրոսը իր հետ տարել էր Տրապիզոն՝ Վասիլ Բ-ին հանձնելու:

99 Խոսքը վրաց թագավոր Գիորգի Ա-ի մասին է (1014—1027 թթ.):

100 Լիպարիտին հիշատակում է Սկիլիցեսը, անվանելով նրան ափխազաց թագավոր Գիորգիի սպարապետ: Նրա տվյալներով Լիպարիտն սպանվեց Վասիլի դեմ մղած պայքարում, աշխարհի արարչագործության 6531 թ. սեպտեմբերի 11-ին (1021 թ.):

101 Խոսքը Պետրոս Գետադարձի մասին է:

102 Լաստիվերտցու տվյալներով Տրապիզոնում հայերի ու Վասիլի միջև կնքվեց

մի չարաբաստիկ պայմանագիր, համաձայն որի Հովհաննես թագավորը իր մահից հետո Անին կտակում էր կայսեր:

108 Բնագրում եղծված է:

104 Նիկեփոր Ծուլիգի, հայազգի ապստամբ Վարդաս Փոկասի որդու մասին հիշատակում է Արիստակես Լաստիվերտցին, որի տվյալները շատ ավելի արժեքավոր են:

105 Խոսքը Դավիթ Արծրունու մասին է:

106 Ծամնդավը բազմիցս է հիշատակվում Կոստանդին Ծիրանածինի երկերում: Կար նույնանուն լեռ ևս, որ գտնվում էր Կեսարիայից արևելք: Ծամնդավ ամրոցը այժմ կոչվում է Ջամանտի-կալեսի, իսկ նրա մոտով հոսող գետը՝ Ջամանտի-սու: Ծիրանածինի տվյալներով բերդը կառուցեց նշանավոր Մելիսա (Մլեհ) զորավարը: Սկիլիցեսը Ծամնդավն անվանում է քաղաք, որ կառուցված է բարձր ժայռի վրա, բազմամբոխ ու անչափ հարուստ:

107 «Սատանայի հազար տարի կապվելու» մասին Հովհաննես Ավետարանիչը խոսում է իր «Հայտնութեան» մեջ (Ի, 2): Այս հազարամյակի լրումը սարսափելի էր բոլոր քրիստոնյա ժողովուրդների համար առհասարակ, որոնք աշխարհի կործանումն ու վերջը էին սպասում:

108 Սեմը, Քամը և Հաբեթը աստվածաշնչային կերպարներ են, Նոյի որդիները:

109 Ուռհայեցու հաշիվները ճիշտ չեն: Վասիլ Բ-ն վախճանվեց 1025 թ. և ոչ հայոց 478 (1029) թ., նա թագավորեց ոչ թե 58, այլ 50 տարի: Բացի այդ, Ուռհայեցին սկզբում ցույց է տալիս, որ սոսկալի նշանն սկսվեց 471 (1022) թ., այնինչ «Տոզեռնի» տեսիլքում այդ դեպքը դրված է 478 (1029) թվականին:

110 Խոսքը վրաց թագավոր Գիորգի Ա-ի մասին է՝ Բագրատ Գ-ի որդու և Բագրատ Դ-ի հոր:

111 Կոստանդին 8-րդը, որ թեև Վասիլի թագավորության սկզբում կայսերակից էր, ինքնակալեց 1025 թ. դեկտեմբերի 16-ից մինչև 1028 թ. նոյեմբերի 11-ը:

112 Կիրա նշանակում է տիրուհի:

113 Ռոմանոս Գ Արգիրոսը:

114 Կուրիս քաղաքը գտնվում է Հալեպից հյուսիս, Ասորիքի ամուր բերդերից մեկն էր, հին Կյուրրոսը:

115 Ռոմանոս կայսեր այս արշավանքին, Սկիլիցեսի տվյալներով, մասնակցում էր նաև հայազգի զորավար պատրիկ Կոստանդին Դալասենոսը: Բյուզանդական աղբյուրները չգիտեն Ուռհայեցու հիշած պատմության մասին և պարզապես նշում են, որ Ռոմանոս կայսրը հազիվ է փրկվում գերի ընկնելուց և ապաստանում Անտիոք քաղաքում:

116 Նսրտոլը (Նասր ալ-Դաուլա) բյուզանդական աղբյուրներում կոչվում է Ապոմերմանես (Աբու Մրվան): Նա Մրվանյանների Դիարբաքիրի հարստության երրորդ և ամենանշանավոր ներկայացուցիչն էր: Իբն-Շեդլը (Շեբլը) պատկանում էր Քելաբիտների արաբական ցեղին, որոնցից ծագում առավ Մարդասիների հարստությունը և որը Համդանյաններից հետո տիրեց Հալեպում: Ուտայրը պատկանում էր նաև արաբական Բենի-Նոմայր ցեղին: Վերջինիս սպանությունից հետո, ինչպես և Ջաֆարի մահից հետո (1027 թ.) Նսրտոլը Ուտայրի որդուն տվեց Ուռհայի մի բերդը, իսկ մի ուրիշը՝ Իբն-Շեդլին: Այս վերջինը՝ քսան հազար դահեկանով, բերդը և նրա գյուղ ծախեց Մանիակին:

117 Մեր բնագրում՝ «թուրք ազգն եկին»: Երուսաղեմի տպագիր օրինակում «թուրքի» փոխարեն հանդես են գալիս քրդերը. «Քուրդ ազգն եկին»:

118 Մեր բնագրում՝ «յՈւզար առնէն»: Մյուս գրչագրերը տալիս են «յՌուզ առնէն» ընթերցումը, որի տակ պետք է «ռուս» հասկանալ: Ռուս զինվորներ ծառայում էին բյուզանդական բանակում:

119 Ռոմանոսոպոլիսը կառուցել է ոչ թե Ռոմանոս Գ-ն, այլ Ռոմանոս Ա Լեկապենոսը: Տեղադրվում է հայկական Ծապաղջրի տեղում:

120 Բնագրում՝ կոնդորատք, որ նշանակում է նիզակակիրներ:

121 Սկիլիցեսի Մանիակի հաջորդին, Եդեսիայի դուքսի պաշտոնում, անվանում է Լևոն Լեպենդրինոս: Մանիակը Ուռհայից հեռացվելուց հետո նշանակվեց Վասպուրականի կատապան:

122 Ռոմանոս Գ-ին հաջորդեց Միքայել Դ Պափլագոնացին (1034—1041 թթ.):

123 Սևերակը (այժմ Սևերեկ) գտնվում է Եդեսիայի և Դիարբեքիրի միջև: Արաբ աշխարհագիր Յակուտը հիշատակում է այն Աս-Սուվայդա անվամբ և համարում հոչակավոր քաղաք Դիար-Մուդարում, Խառանի մոտ:

124 Հայկազուն մեծ Սարգիսը Վեստ Սարգիսն է: Ուներ բյուզանդական վեստի և անթիպատ պատրիկի բարձր պատվաստիճանները, ինչպես և Արևելից դուկի պաշտոնը: Նա մեծ աշխատանք է կատարել բյուզանդական տիրապետությունը Հայաստանում տարածելու ուղղությամբ:

125 Այստեղ մի անգամ ևս թվական անճշտություն է հանդես գալիս: Ուռհայեցին ցույց է տալիս, որ արևի խավարումը տեղի ունեցավ 485 (1036/1037) թվականին, այնինչ «Կոզեռնի» մարգարեության մեջ այդ դեպքը թվագրվում է Քրիստոսի խաչելությունից 1000 տարի անց:

126 Բելիարն ու սատանան հոմանիշներ են:

127 «Խավարն արտաքին» ավետարանական դարձվածք է: Հմմտ. Ավետարան ըստ Մատթեոսի, Ը, 12, ԻԲ, 13:

128 «Կոզեռնի» մարգարեության մեջ ֆրանկների մասին հիշատակությունը հետագա շրջանի ավելացում է, որը Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ մուտք է գործել վերջինիս ավարտվելուց հետո, գուցե «Ժամանակագրությունը» շարունակող Գրիգոր Երեցի կողմից:

129 Արաբական աղբյուրների տվյալների համաձայն Բերկրիի վրա այս հարձակումը կատարեցին ոչ թե հայերը, այլ բյուզանդացիները, որ ավելի հավանական է: Սկիլիցեսը դեպքը թվագրում է 6540 (1034) թվականով:

130 Պետրոս կաթողիկոսից հայերը դժգոհ էին նրա կարծեցյալ բյուզանդասիրության պատճառով:

131 Այլ աղբյուրների տվյալներով Պետրոս կաթողիկոսին արգելափակեցին Պահլավունիների Բջնի ամրոցում:

132 Սանահնի վանահայր Դիոսկորոսը համարվում է հակաթոռ և կաթողիկոսների գավազանագրքում չի մտցված: Հակառակ դրան, միջնադարյան հեղինակները նրա վերաբերյալ միայն դրական են խոսում, նրան սուրբ և առաքինի անվանելով:

133 Խոսքը Պետրոս Օդեցյանի ապստամբության մասին է, որ բռնկվեց 1040 թ. Բելգրադում և ուներ ողբերգական վախճան: Ուռհայեցու մոտ դեպքերը հակառակ ընթացքն են ունենում, իբր թե բուլղարները հաղթում են և թոթափում բյուզանդական լուծը, վերականգնում իրենց թագավորությունը: Բուլղարները իրենց

պետականությունը վերականգնեցին շատ անց, միայն 1187 թ. Ասենովների հարստության հաստատումով:

134 Գագիկ Բ թագավոր հայոց (1043—1045 թթ.):

135 Ինչպես Ուռհայեցին սկզբում մի անգամ ասել է, երբ վախճանվեց Գագիկ Ա թագավորը, երկու որդի թողեց՝ Հովհաննես-Սմբատին և Աշոտին: Նրանց միջև գահակալական պայքար ծագեց, և ի վերջո նրանք համաձայնության եկան, որ Անիում պիտի տիրի Հովհաննեսը, իսկ մնացած թագավորության վրա՝ Աշոտը: Այդ էր պատճառը, որ Աշոտը Անի չէր մտել: Մեռնելուց հետո նրա մարմինը բերեցին Անի՝ թաղելու:

136 Բարբուտը լարային գործիք է:

137 Ապուսուարը (Աբու-լ-Ասվար) Դվինի ամիրան էր՝ Շադդադյանների տոհմից, որ տիրացել էր Դվինին դեռ 1020-ական թվականներին: Մահացել է 1067 թ.: Լաստիվերտցու տվյալներով նա փեսայացել էր արքաեղբայր Աշոտին:

138 Դավիթ Ա Անհողինը, Կյուրիկյան թագավոր, որդի և հաջորդ Գուրգենի (Կորիկե Ա.), Աշոտ Գ Ողորմած թագավորի թոռը և Գագիկ Ա Բագրատունու եղբորորդին: Գահակալել է 989—1048 թթ.: Նա է Լոռե բերդի կառուցողը: Հովհաննես-Սմբատի մահից հետո Դավիթ Անհողինը իրեն բովանդակ Հայաստանի թագավոր հռչակեց և 1042 թ. արշավեց Անիի վրա, բայց դիմադրության հանդիպեց Վահրամ Պահլավունու կողմից: Հետագայում, երբ Գագիկ Բ-ին Կոստանդնուպոլիս կանչեցին ու արգելափակեցին, հայերի մի մասը որոշեց Անին հանձնել Դավթին, ելնելով այն հանգամանքից, որ Դավթի քույրը Գագիկի կինն էր: Ուռհայեցին մի փոքր հետո Դավթի երկիրը հայոց երկիր է անվանում:

139 Բնագրում՝ «թեմաբերդս», այլ գրչագրերում՝ «դիմաբերդս», որը, սխալ է հավանաբար: Ղ. Ալիշանը (Հայապատում, էջ 317, ծանոթ. 5) այդ մասին գրում է. «Համարիմ թե նշանակե դեմ դնելու բերդ, այսինքն՝ ամուր. կան օրինակք, որ թ տառիվ գրեն թիմաբերդ, որ գուցե թեմ կամ ուրիշ բան նշանակե»:

140 Խոսքը ափխազաց թագավոր Բագրատ Դ-ի մասին է, Գիորգի Ա-ի որդու (1027—1072 թթ.):

141 Ակողութը 9-րդ և 10-րդ դարերում գլխավորում էր օտարերկրացիներից բաղկացած բյուզանդական վարձկան զորքերը: Հետագայում գլխավորում էր վարագների զորամասերը:

142 Բնագիրն այստեղ աղավաղված է. «եւ լուեալ զայս որդուոցն Սենեքարիմայ, հիացեալ զարհուրեցաւ. և տեսեալ ակողութն զիմաստութիւնն ոչ էր նման նոցա, բայց նորա երկնչէին գնալ»:

143 Այս Շապուհին Ուռհայեցին հիշատակում է 1016 թ. դեպքերի առիթով, երբ Սենեքերիմի որդի Դավթի հետ դուրս էր եկել այլազգիների ապստամբությունների առաջն առնելու:

144 Վասիլ Բ (976—1025 թթ.):

145 Քիչ հետո Ուռհայեցին հիշում է այդ կայսեր անունը՝ Միքայել, որ, հավանաբար, ոչ թե Պափլագոնացին է (1034—1041 թթ.), այլ Միքայել Ե Կալաֆատեսը (1041—1042 թթ.):

146 Հովհաննեսի թողած կտակի մասին շատ մանրամասն խոսում է Հովհաննես Սկիլիցեսը:

147 Օտարերկրացիներին ռոճիկ (ռոոգ) տալու սովորությունը շատ էր տարածված Բյուզանդական կայսրության մեջ: Դա վասալական կախման մեջ գցելու մի

ձև էր: Դեռևս Կոստանդ Բ կայսրը ոռճիկ էր առաջարկում Թեոդորոս Ռշտունուն, եթե վերջինս խզեր իր կապերը արաբներից: 10-րդ դարում Բյուզանդիան ոռճիկ էր տալիս Տարոնի իշխան Գրիգորին՝ 10 լիտր ոսկի (720 դահեկան) և 10 լիտր արծաթ: Այդ գումարն այնքան մեծ էր, որ 10-րդ դարում Բյուզանդիայից ոռճիկ էին ուզում ստանալ նաև Վասպուրականի թագավոր Գագիկը, Շիրակի թագավոր Աշոտ Երկաթը և վրաց կուրապաղատ Ատրներսեհը:

148 Խոսքը Վեստ Սարգիս Սյունեցու մասին է, որին Ուռհայեցին հիշեց ավելի առաջ:

149 Վահրամ Պահլավունին, Գրիգոր Համզայի որդին և Գրիգոր Մագիստրոսի հորեղբայրը: Ուներ անթիպատ պատրիկի պատվաստիճան և իշխանաց իշխանի պաշտոնը: Նա հայոց զորքերի սպարապետն էր: Ծնվել է 967 թ.: Նշանավոր Մարմաշենի շինողն է: Սպանվեց 1046 թ. Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարի դեմ մղած մարտում:

150 Մեր կարծիքով «որով և օծեաց զնա սրբակեացն մեծն Մարգէն» բառերը հետագա շրջանի ընդմիջարկություն է: «Մարգէն» էլ անուն չէ, այլ «Մարգին» բառի աղավաղումը: «Սրբակեացն մեծն Մարգին» հավանաբար Վահրամ Բ Վկայասեր կաթողիկոսն է, Գրիգոր Մագիստրոսի որդին, որ Եգիպտոսում (Մարում) հայրապետական աթոռ էր հաստատել: Խնդրո առարկա նախադասությունը պիտի սըրբագրել այսպես. «որ և օծեաց զնա՝ զսրբակեացն մեծն Մարգին», որով ստացվում է, որ խոսքը Գագիկ թագավորի կողմից Վահրամ Բ-ին (հետագայում, իհարկե) կաթողիկոս օծել տալու մասին է, ինչ համապատասխանում է իրականությանը:

151 Խոսքը Հրազդան գետի մասին է:

152 Ինչպես այստեղ պարզ երևում է, պարսիկ և թուրք հասկացությունները Ուռհայեցու մոտ նույնանիշ են:

153 Կեսարը բյուզանդական կայսրից հետո առաջին մարդն էր, որ ընտրվում էր կայսեր կողմից և վերջինիս անզավակ վախճանվելու դեպքում՝ հռչակվում կայսր: Այստեղ նկատի ունի Միքայել Ե Կալափատեսին:

154 Նկատի ունի պատրիարք Ալեքսիոս Ստուդիտեսին, որ, որպես Զոեի կողմնակից, Միքայել Ե-ի կողմից եկեղեցուց վտարվեց:

155 Խաչիկի որդի Ճնճղուկի արձագանքները գտնում ենք Սասունցի Դավիթ Էպոսում: Նրան նույնացնում են Սասունցի Դավթի եղբայր Ճնճղափոքրիկի հետ:

156 Կոստանդին 9-րդ Մոնոմախը թագավորել է 1042 թ. հունիսի 12-ից մինչև 1055 թ. հունվարի 11-ը:

157 Ուռհայեցին այստեղ հռոմայեցիների երկիր ասելով նկատի ունի Իտալիան և նրա բնակչությունը՝ ի հակադրություն Հունաստանի և Փոքր Ասիայի բնակչության, որին նա հույն կամ հոռոմ է անվանում:

158 Վեստ Սարգիս Սյունեցին:

159 Գագիկ Բ Բագրատունին:

160 Պետրոս Գետադարձ կաթողիկոսին:

161 Կալոն Պեղատը (հունարեն նշանակում է Գեղեցիկ ակ) և Պիզուն Կապադովկիայի քաղաքներից էին:

162 Անիի դեմ արշաված Պատակամաճոսի (իմա պարակիմոմեճոսի՝ սեճեկապետի) անունը Նիկոլայոս էր, որ միաժամանակ Արևելից զորքերի սպարապետն էր: Բայց նրանից առաջ Անիի վրա էր հարձակվել Իբերիայի կատապան նշանակված Միքայել Խատիտոնը, որը, սակայն, քաղաքի պարիսպների տակ պարտություն կրեց:

Ուռհայեցու ժամանակագրության մեջ ցույց է տրված, որ Անիի պատերազմը տեղի ունեցավ Գագիկի Կոստանդնուպոլիս գնալուց հետո, իսկ բյուզանդական աղբյուրների վկայությամբ՝ Գագիկի Անի քաղաքում գտնվելու ժամանակ:

163 Այժմյան Օլթին:

164 Ուռհայեցին ցույց է տալիս, որ Պառակամաճոսը մեկ անգամ հարձակվեց [illegible] վրա, այնինչ Լաստիվերտցու տվյալներով՝ չորս անգամ:

165 Սաղմոս ՃԳ, 32:

166 Պաղնատունը՝ Չորրորդ Հայքում, բյուզանդական աղբյուրների Բագրատունեն:

167 Կատապան Ստեփաննոս Լիխուդեսը, որ Վասպուրականի կառավարիչն էր: Սկիլիցեսի ասելով, թուրքերի զորաբանակը գլխավորում էր Կուտլումուշը՝ Տուղրիլ բեկի հորեղբորորդին, որ, արաբներից պարտություն կրելով, Վասպուրականի վրայով վերադարձի ճանապարհն էր բռնել: Գերի ընկած Ստեփաննոսին, Սկիլիցեսի ասելով, տանում են Թավրիզ (Ուռհայեցու մոտ՝ Հեր): Հետաքրքրական է բյուզանդական հեղինակի տեղեկությունը, թե Կուտլումուշը Տուղրիլ բեկին զեկուցեց Հայաստանում գտնվող բյուզանդական բանակի մարտունակության մասին: Ի միջի այլոց, խոսելով Վասպուրականի մասին, նա ասաց, որ երկիրը շատ բարեբեր է, բայց գտնվում է կանանց ձեռքում, ընկատի ունենալով իր դեմ դուրս եկած թուլամորթ հոոռմ զինվորներին և նրանց ներքինի հրամանատարին:

168 Բնագրում «զօրագլուխ զմեծ իշխանն Հոռոմոց՝ որում անուն ասէին Տելիարխ, կուրտ և ներքինի գոլով», որտեղ «Տելիարխը» անուն չէ, այլ աստիճան, բյուզանդական «էտերիարխը» (օտարերկրացիներից բաղկացած զորամասի՝ էտերիայի հրամանատարը), որի կրողը մեծ էտերիարխ ներքինի սարակինոս Կոստանդինն է:

169 Խոսքը Իբրահիմ Ցինալի (Տուղրիլ բեկի եղբոր) մասին է և Կուտլումուշի, որոնք Հայաստան մտան 1048 թ.: Նրանց Հայաստան մուտք գործելու և Արծն քաղաքը քարուքանդ անելու մասին մանրամասն գրում է Արիստակես Լաստիվերտցին: Արժեքավոր տեղեկություններ է տալիս Միքայել Ատտալիատեսը: «Արծն քաղաքը,— գրում է նա,— հարուստ է Պարսկաստանից, Հնդկաստանից և մնացած Սաորիքից բերված ապրանքներով: Արծնը,— ավելացնում է նա,— պատճառ դարձավ Թեոդոսուպոլսի (Կարինի) ամայացման, այն իմաստով, որ վերջինիս բնակիչները տեղափոխվեցին նոր կառուցված այդ Արծն քաղաքը»: Արծնի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Սկիլիցեսը: Նա այն անվանում է բազմամբոխ գյուղաքաղաք, անչափ հարուստ: Այնտեղ էին բնակվում տեղացի վաճառականներ, ինչպես և ասորիների, հայերի և այլ ժողովուրդների մեծ բազմություն, որոնք հույս դնելով իրենց բազմաթվության վրա, չէին ուզեցել պատսպարվել պարիսպների ետևում, նամանավանդ, որ Թեոդոսուպոլիսը շատ մոտիկ էր գտնվում, մի շատ մեծ քաղաք, հզոր և անառիկ պարիսպներով շրջապատված:

170 Կամենը վրացադավան նշանավոր հայազգի զորավար Կատակալոն Կեկավմենոսն է, որի ընտանիքը, ամենայն հավանականությամբ, Տայքից էր: Վասակի որդի Գրիգորը հայտնի Գրիգոր Մագիստրոսն է, որ Անիի անկումից հետո բյուզանդացիների կողմից նշանակվեց Վասպուրականի, Դերջանի, Տարոնի և Միջագետքի զորավար: Լիպարիտը վրացադավան հայ նշանավոր զորավար էր:

171 Խաչիկ Բ Անեցին, որ կաթողիկոս դարձավ Պետրոսի մահից հետո (1058—1065 թթ.):

172 Բանաստեր Հ. Պերպերյանը կարծում է, որ Ուռհայեցին այստեղ շփոթում է Պետրոսի՝ 1021 թ. Տրապիզոն գնալը շատ ավելի վաղ Կոստանդնուպոլիս գնալու հետ: Տե՛ս նրա հոդվածը «Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը 11-րդ դարում առաջին կիսում», Հանդես Ամսօրյա, 1967, սյուն. 150:

173 Իհարկե, Ուռհայեցու ասածը, թե Պետրոսին առաջին օրը մեկ կենտինար դրամ տվեցին, հեքիաթ է: Մեկ կենտինարը հավասար է 100 լիտր ոսկու, այն է՝ 7200 ոսկեդրամի:

174 Հետաքրքիր բան չէ, որ միաբնակը դառնար բյուզանդական պատրիարքի սինկելլոսը, որը պատրիարքից հետո եկեղեցական առաջին անձնավորությունն էր և որի հիմնական պարտականությունն էր պատրիարքի և կայսեր միջև կապ պահպանելը:

175 Նշանավոր մագիստրոս Ահարոն Բուլղարը, որ Վասպուրականի կատապանն էր, իսկ հետագայում դարձավ նաև Անիի կառավարիչ: Անիի կաթողիկեի պատի վրա նա թողել է մի արժեքավոր արձանագրություն, որ վերաբերում է քաղաքը որոշ հարկերից ազատելուն, քաղաքում ջրմուղ անցկացնելուն և պարիսպները վերանորոգելուն: Նա բուլղարաց թագավոր Վլադիսլավի որդին էր և Պրուսիանի եղբայրը:

176 Բերդը գտնվում էր Բասեն գավառում:

177 Բնագրի «վրացի ազգաւ» դարձվածքը իհարկե, նկատի ունի ոչ թե նրա ազգային պատկանելիությունը, այլ դավանանքը: Նա վրացադավան հայ էր: Տվյալ ժամանակաշրջանում ազգությանն մասին դատում էին՝ ելնելով տվյալ անձնավորության դավանանքից: Ուռհայեցին բազմաթիվ զտարյուն հայերի անվանում է հոռոմ, իհարկե, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանք հունադավաններ էին:

178 Պածինակները, այն է՝ պեչենեգները 1091 թ. մեծ ջարդ կրելով Աղեքսիոս Կոմնենոսից, այլևս չերևացին պատմության ասպարեզում:

179 Ուռհայեցին պեչենեգներին, ինչպես և նրանցից առաջ թուրքերին անվանում է օձերի ազգ, կամ թևավոր օձեր: Նրա համար նման բնորոշման հիմք է ծառայել նրանց տոհմանվան (ուզեր) համահնչունությունը «օձ» բառի հետ:

180 Ենթադրվում են հունգարացիները:

181 Համմտ. ծանոթ. 166:

182 Թլպադը հենց Պաղնատունն է (Թիլ Պաղին):

183 Թլմուխը (կամ Թուլմուխը) գտնվում էր Արղանայի արևելակողմը, Արղանայից Դիարբեքիր տանող ճանապարհի վրա:

184 Խոսքը էլամացիների մասին է, հին Արևելքի էլամ երկրի բնակիչների: Միջնադարյան հեղինակները, ելնելով այն բանից, որ Աստվածաշնչում էլամացիք հայտնի են որպես մեղսաշատ մարդիկ, թուրքերին ուզում են նրանց շառավիղները համարել:

185 Բնագրում՝ «զերեք ազգացս և զհայրապետացս»:

186 Այս բառերը՝ «նա և այլ ևս ունիմք ասել ձեզ ամաց ութսնից զաշխատութենէ Մատթէոսի Ուռհայեցւոյ և վանաց երիցու», դեռ 1898 թ. Հր. Աճառյանը համարել է հետագա շրջանի ընդմիջարկություն: Տե՛ս նրա «Մատթէոս Ուռհայեցի» հոդվածը Հանդես Ամսօրյայում, 1953, սյուն. 353—354:

187 Մանազկերտի զորագլուխ Վասիլ Ապուքապը Եդեսիայի կառավարիչ Ապուքապի որդին էր, բյուզանդական ռազմական անվանի գործիչ: Բացի Փոքր Ասիա-

յից, նա գործել է նաև Դանուբի շրջանում, կատաղի սկսքար մղելով ուզերի (օղուզների) դեմ:

188 Ոսկեծամի անունը հիշում է նաև Սկիլիցեսը: Նա կոչվում էր Ալկան և հաճախվում խորեզմցիների իշխան:

189 Ենթադրում են, որ աստիլը ծանրության չափ է: Սմբատի Տարեգրքում աստիլի փոխարեն գրված է «օղիւ»:

190 «Կրծապահ»-ի մասին Ս. Մալխասյանցը գրում է. «պարսպի առաջակողմը պահպանող» (անստ. նշ.):

191 Բյուզանդական աղբյուրներում այս ֆրանկը կոչված է «լատին»:

192 Կոստանդին Մոնոմախը վախճանվեց 1055 թ. հունվարի 11-ին:

193 Թեոդորան թագավորեց 1055 թ. հունվարի 11-ից մինչև 1056 թ. օգոստոսի 21-ը:

194 Բնագրում Ելեխտոռ, որ, ամենայն հավանականությամբ, հունարեն Ելեխտոս կամ Ելեխմոն (Ողորմած) բառի գրչական աղավաղումն է:

195 Միքայել 6-րդ Ստրատիոտիկոսը (1056—1057 թթ.): Ուռհայեցին սխալվում է և՛ Թեոդորայի, և՛ Միքայելի իշխած տարիների հարցում:

196 Խոսքը Իսահակ Կոմնենոսի մասին է:

197 Խրիսուպոլիսն այսօր կոչվում է Ուսկյուդար, քաղաք Բոսֆորի փոքրասիական ափին:

198 Իսահակ Կոմնենոսը կայսր հռչակվեց իր զորքերի կողմից 1057 թ. հունիսի 8-ին, փաստորեն թագավորեց սեպտեմբերի 1-ից: Այնուամենայնիվ, նա Կոմնենոսների հարստության հիմնադիրը չդարձավ: Այդ հարստությունը հիմնադրեց Ալեքսիոս Ա Կոմնենոսը (1081 թ.):

199 Հանդիպում են Փիլոնիտ, Պիլոնիտ ընթերցումները: Ռոմանոս Գ Արգիրոսի ժամանակ Վասպուրականի կատապանն էր Նիկետաս Պիլոնիտեսը:

200 Դյուլորիեի կարծիքով Ծերճերը Ստեփանոս Բյուզանդացու Գերգիսն է, Ստրաբոնի Գերգեթան՝ Տրովադալում:

201 Բնագրում «խալատ ի Ծերճերոյ դառնայ»: Պարզ չէ դարձվածքի նշանակությունը: Դյուլորիեն «խալատը» համարում է արաբերեն բառ և թարգմանում՝ «սխալ»:

202 Այսինքն Դանուբը, որ բյուզանդական աղբյուրներում հանդես է գալիս նաև Դանուվիս կամ Դունավիս անվամբ: Այդ արյունահեղ մարտերում մասնակցում էր նաև հայազգի նշանավոր զորավար Կատակալոն Կեկավմենոսը:

203 Խոսքը Կոստանդին 10-րդ Դուկասի մասին է, որ թագավորեց 1059—1067 թթ.: Նրա օրոք լայն ծավալ ստացավ հարկահավաքը կապալով տալու սովորությունը, որը տարածվեց նաև Հայաստանում: Սելջուկ թուրքերը Ալփ Արսլանի գլխավորությամբ ծավալեցին իրենց արշավանքները, որոնց առաջն առնել կայսրն ի վիճակի չէր: Դուկասը Հայաստանի կառավարիչ էր նշանակել Բագարատ Վրաց կացուն, որը, սակայն, իր ապիկարությամբ Անիի անկման պատճառներից մեկը դարձավ: Կոստանդին Դուկասը հիշվում է Անիի մայր տաճարի պատի վրա փորագրված Բագարատ Վիսկացու արձանագրության մեջ:

204 Խաչիկ Բ Անեցի (1058—1065 թթ.):

205 Բնագրում «զՀասաւն էառ»: Առանձին գրչագրեր տալիս են «զհարաւն էառ» կամ «զհատաւ էառ»: Վայրը որոշել դժվար է: Ամենայն հավանականությամբ, բառն աղավաղված է: Իրականությունից հեռու չենք լինի, եթե ենթադրենք, որ գործ

ունենք արաբերեն Հիսն բառի հետ, որ բերդ է նշանակում: Հիսնը Ուռհայեցու երկում շատ հաճախ դառնում է Հարսն (հմմտ. Հարսն Մասուր, այն է՝ Հիսն Մանսուր, կամ Հարսն Քև, այն է՝ Հիսն Քեյֆա): Մեր աղավաղված «զՀասաւն էառ»-ը գուցե գրչական աղավաղումն է Հարսնքևի:

206 «Հիսնակի սկիզբը», այսինքն՝ Քրիստոսի ծննդյան (կամ հայտնության) օրից սկսած հիսուն օր տևող պահքը:

207 Չորրորդ Հայքի Անձիտ գավառում:

208 Խավատաձեքը Սեբաստիայից հարավ-արևմուտք գտնվող մի բերդ էր:

209 Պելևտարը ամենայն հավանականությամբ հունարեն բառ է:

210 Փողպատը փափուկ ձեղ կտոր է, որ փաթաթում էին վզին ցրտից պաշտպանվելու համար:

211 Թավբլուրը գտնվում էր Ջհան գավառում, Երրորդ Հայքի հարավում:

212 Սլար-Խորասանը անուն չէ, նշանակում է Խորասանի զորքերի հրամանատար, սպասալար:

213 Նսրտոլի որդու անունը Ուռհայեցին հիշում է մի փոքր հետո: Նա կոչվում էր Ամիր Սայիդ:

214 Սաղմոս ԽԳ, 9—11:

215 Ֆրանկոպոլի իսկական անունն էր Էրվեվիոս (Հերվե): Ծագումով նորման էր և գլխավորում էր ֆրանկներից բաղկացած զորամաս:

216 Խոսքը Լևոն Դավատաձոսի մասին է: Պատկանում էր Դավատաձոսների (բյուզանդական աղբյուրների Դիավատինոսների) հայազգի ընտանիքին: 1093 թ. կազմված Սմբատ Բակուրյանի (նշանավոր Գրիգոր Բակուրյանի ազգականի) կնոջ՝ Կալիի կտակում ցույց է տրված, որ այդ Կալին Վասիլակ կուրապաղատի և Քսենիա Դիավատինայի դուստրն էր: Հետևաբար, Բակուրյանների հայ-քաղկեդոնիկ ընտանիքը խնամիական կապեր էր հաստատել Դիավատինոսների (Ուռհայեցու Դավատաձոսների) ընտանիքի հետ:

217 Կարկառը Եփրատի արևմտյան ափին գտնվող մի ամրացված վայր էր, այժմ կոչվում է Կեր-կեր կալասի: Իբն ալ-Աթիրը ցույց է տալիս, որ Կարկառը բերդ է Մալաթիայի մոտ:

218 Միշտ ձևն է Հիսն Մանսուր, որ նշանակում է Մանսուրի բերդ: Բերդաքաղաք էր Եփրատի մոտ, Մալաթիայից հարավ և Սամոսատից ու Բեհեսնիից արևմուտք: Կառուցել է Մանսուր իբն Ջաֆա ալ-Ամիրը՝ Մրվան Բ խալիֆայի օրոք (775—785 թթ.):

219 Բնագրում՝ «զԿամամն մատուցէք ինձ»: Դյուլորիեի կարծիքով պիտի կարդալ «Կամա մեն» (թուրքերեն՝ կաման՝ ինձ), որ թուրքերեն «կամա» կամ «կամե» բառն է և նշանակում է երկսայր սուր: Ըստ Հ. Աճառյանի «կամամը» «ձիու տեսակ կամ անուն է»:

220 Բնագրում՝ «Խալթ», այն է՝ Խալեդ: Սմբատ Սպարապետը նրան անվանում է «մի տանիկ Շահաշդակ»:

221 Տուղրիլ բեկը վախճանվեց 1063 թ., նրա հաջորդ Ալփ Արսլանը Տուղրիլի եղբայրը չէր, այլ նրա եղբայր Ջաֆար բեկ Դաուդի որդին:

222 Ղուկաս, ԻԱ, 23:

223 «Աղվանից թագավոր Կյուրիկե»՝ Ուռհայեցին նկատի ունի Լոռեի հայոց թագավոր Կյուրիկե Ա-ին (1048—1089 թթ.), որ Հայոց Արևելից կողմանցի վրա էր տիրում: Նույն Ուռհայեցին մի այլ տեղում գրում է. «Տէր Բարսէղ յարուցեալ գնայր

յաշխարհն Հայոց ի յԱղուանս գաւառի՝ ի լօռէ քաղաք առ թագաւորն Հայոց Կիւրիկէ որդի Անհողինին Դաւթի»: Հմմտ. **Ա. Մնացականյան,** Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 221—223:

224 Խոսքը Ջավախքի մասին է, Գուգարքում: Գրավում էր այժմյան Արդահան գավառի հյուսիսային մասը և Ախալքալաքի շրջանը:

225 Խոսքը Բագարատ Վխկացու մասին է: Նախապես Վասպուրականի կատարյանն էր, բայց Կոստանդին Դուկասի օրոք գնում է կայսեր մոտ և խնդրում իրեն նշանակել Անիի կառավարիչ՝ առանց ռոճիկի: Նա խոստանում էր ամեն ինչ տնօրինել ներքին ռեսուրսներով: Միքայել Ատտալիատեսի ասելով, Բագարատը շատ ապիկար կառավարիչ դուրս եկավ, քաղաքի պաշտպանության համար ոչ մի անհրաժեշտ քայլի չդիմեց, քաղաքի կայազորն էլ ցրեց՝ դրամ տնտեսելու համար, բացի այդ, նա անընդհատ վիճաբանություններ մեջ էր Անի ուղարկված կայսեր ներկայացուցչի (Գրիգոր Բակուրյանի) հետ: Ահա այդպիսի վիճակում գտնվող Անին շատ հեշտությամբ դարձավ թուրքերի վոհը:

226 «Ազգությամբ վրացի» դարձվածքը, ինչպես մեկ անգամ առիթ ունեցանք ցույց տալու, պետք է հասկանալ «վրացադավան»: Գրիգոր Բակուրյանը ազգությամբ հայ էր, բայց քաղկեդոնիկ: Բյուզանդացի կիր պատմիչ Աննա Կոմնենան պարզ վկայում է, որ նա ազգությամբ հայ էր: Գրիգոր Բակուրյանի՝ Փիլիպպուպոլիս քաղաքի մոտ կառուցած վանքի կանոնադրության հունարեն բնագիրը նա ստորագրել է հայերեն տառերով:

227 Խոսքը Սմբատ Բ-ի մասին է:

228 Շիրակացու վկայությամբ «կշիռ 12 ունկոյ կոչի լիտր»: Այն հավասար է 326,4 գրամի:

229 Անիի գրավումը Դյուլորիեի հաշիվներով տեղի ունեցավ 1064 թ. օգոստոսի 3-ին, երկուշաբթի օր:

230 Վարդան Արևելցին գրում է. «թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ ձեղեալ յերկիւղէ թուրքացն տա զհայրենիս իւր ի Յոյնս, և առնու զԾամնդաւ և զՎառիս և զԱմասիա և զԿոմանա և զպոռաստիկն հարիւր, որ է գեօղեաց»:

231 Սաղմոս ԽԳ, 12—14:

232 Գրիգոր Բ վկայաբանը (1066—1166 թթ.): [illegible] ից հետո (1065 թ.) ստացավ դուքսի պաշտոնը Միջագետքում և Տարոնում: Թողնելով զինվորական բնագավառը, դարձավ կաթողիկոս: Հայտնի է իր բազում գրական երկերով, այդ թվում վկայաբանություններով, ներբողներով, շարականներով և այլն:

233 Հասկանալի է, խոսքը Մծբինի մասին է, հունարեն՝ Նիսիբիս:

234 Պեխտը (նաև Եպիխտ) անուն չէ, այլ հունարեն էպիխտես բառը, որ վերակացու, տեսուչ է նշանակում: Սխալմամբ նույնացնում են Անտիոքի դուքս Խաչատուրի հետ:

235 Պոորքսիմոսը բյուզանդական պաշտոնյա էր: Այդ պաշտոնը տարածում ուներ նաև Կիլիկիայի հայկական թագավորության մեջ: Սմբատ Սպարապետը հիշում է հիշյալ պոորքսիմոսի անունը՝ Վարդ:

236 Բացառված չէ, որ այստեղ խոսքը ոչ թե ֆրանկների, այլ վարյագների (Վրանգների) մասին է, որոնք բյուզանդական բանակում էին ծառայում:

237 Պատրիարքն այն ժամանակ Հովհաննես Քսիֆիլինոսն էր (1067—1075 թթ.):

238 Այսինքն՝ Սենեքերիմ Արծրունու որդիներին:

239 Այսինքն՝ Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ Բ-ի:

240 Ինչպես տեսանք վերևում, Մոնոմախը Անիի դիմաց Գագիկին էր տվել Կալոն Պեղատը և Պիզուն:

241 Հմմտ. Ետայի, Ջ, 1—3:

242 Սաղմոս ԼԲ, 6—7:

243 Մխիթարիչը սուրբ հոգին է:

244 Ուռհայեցու մոտ՝ Աստվածաբանը, պիտի լինի՝ Ոսկեբերանը:

245 Ծննդ., ԺԸ, 1—9:

246 Իրականում՝ 6-րդ ճառում:

247 Գրիգոր Նյուսացուց կատարված մեջբերումը Ուռհայեցու ժամանակագրության գրիչները շատ տեղերում աղավաղել են: Թարգմանությունը կատարել ենք Նյուսացու տվյալ երկի ուղղված բնագրից:

248 Գրչագրերը տալիս են «զի պատուեսցի անպատմութիւնն» և «զի պատուեսցի անպատուութիւնը» ընթերցումները:

249 Ղուկաս, Թ, 23:

250 Ոսկեբերանի բնագրում՝ «արմատաքի խլեսցէ»: Ուռհայեցու գրչագրերում աղավաղվել, դարձել է «յարտաքս խլեսցէ»:

251 Ղուկաս, Գ, 23:

252 Նույն տեղում, Ա, 21 և հտ.:

253 Բնագրում սխալմամբ գրված է սեպտեմբերի:

254 Այսինքն՝ Կապադովկիայի:

255 Այսինքն՝ «տեր»:

256 Գրիգոր Մագիստրոսը:

257 Սև լեռը Ամանոս լեռն է, որ բաժանում է Կիլիկիան Ասորիքից, այժմ՝ Գյավուր դաղի:

258 Սաղմոս ՀԷ, 63—65, ՀԸ, 1—3:

259 Կումուշտեկին:

260 Իմա՛ Հիսն Մանսուր:

261 Սիրարը Մծբինից բավականին հարավ է գտնվում, Եփրատից ոչ հեռու:

262 Կոստանդին Դուկասը վախճանվեց 1067 թ. մայիսի 21-ին: Նրա կայսերակիցը էր Միքայել Դուկասը մինչև 1060 թ.: Եվդոկիան թագավորեց 1067 թ. մայիսի 21-ից մինչև 1067 թ. դեկտեմբերի 31-ը: Այդ շրջանում կայսերակից էին նրա որդիներ Միքայել 7-րդը, Անդրոնիկոսը և Կոստանդինը:

263 Ռոմանոս Դ Դիոգենեսը թագավորեց 1068 թ. հունվարի 1-ից մինչև 1071 թ. օգոստոսի 19-ը: Հայկական աղբյուրներում հաճախ Դիոժեն (Տիոժեն) է գրվում:

264 Սուրբ Անտոնը ծնվել է Եգիպտոսում շուրջ 250 թ. և ըստ ավանդության ապրել 105 տարի: Համարվում է վանականության հիմնադիր:

265 Գրչագրերում հանդիպում են «ի Հռոմ» և «ի Հռոմի» ընթերցվածքները, որ էականապես տարբեր իմաստ ունեն: Առաջինը Հռոմ քաղաքն է, երկրորդը՝ Բյուզանդական կայսրությունը: Ճիշտը «ի Հռոմ»-ն է, քանի որ Կոստանդնուպոլիսը հենց «Հռոմ»-ում է գտնվում, այսինքն՝ Բյուզանդական կայսրության մեջ, և նա չէր կարող Բյուզանդական կայսրությունից գնալ ի Հռոմ, որ նույն Բյուզանդիան է:

266 Մնպեեը (Մեմբիջ), նաև Հիերապոլիս, հին Բամբյուկեն, Ասորիքի հյուսիսարևելքում գտնվող քաղաք էր, Եփրատ գետի աջ ափից ոչ հեռու, Անտիոքից Եդեսիա տանող ճանապարհի վրա:

267 Ռոմանոս Դ-ի զորքը շատ խայտաբղետ էր: Բյուզանդական աղբյուրների

զվյալներով այն բաղկացած էր մակեդոնացիներից, բուլղարներից, կապադովկացիներից, ուզերից և այլ բազում այլազգիներից, ապա նաև փրանկներից և վարյագներից: Հակառակ դրան, աղբյուրները ցույց են տալիս, որ նա սակավաթիվ էր և վատ զինված: Նրա բանակում ծառայում էր նաև «հայերից բաղկացած հետևակազոր», որը որոշում է կայսեր դեմ ապստամբություն բարձրացնել:

268 Այս երիտասարդ «Կտրիճ» անունով ամիրայի մասին մանրամասն հիշատակում է Նիկեփոր Բրիենիոսը: Նա նրան անվանում է Խրիսոսկուլոս և ցույց տալիս, որ նա հարձակում էր գործել Արմենիակոն բանակաթեմի վրա: Նրա դեմ դուրս եկավ Մանվել կուրապաղատը, բայց գերի ընկավ իր երկու փեսաների հետ, որոնց անուններն էին Մելիսենոս և Տարոնացի (Տարոնիտես): Մանվել կուրապաղատը համոզում է Խրիսոսկուլոսին անցնել կայսրության կողմը, ինչ և կատարվում է:

269 Ղուկաս, ԻԱ, 25:

270 Թուղթ առ Հռոմայեցիս, Գ, 23:

271 Իմա՛ Տուղրիլ՝ սուլթանի եղբորորդին:

272 Իբն Խալիքանի տվյալներով Թութուշը ծնվել է 1066 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, հետևաբար, Ուռհայեցու հիշած նախորդ դեպքերի, այն է՝ Ալփ Արսլանի Ամիդ կատարած արշավանքի թվագրումը (519 թ., այն է՝ 1070/1071) ճիշտ չէ:

273 Նկատի ունի հռոմայեցի կայսր Հուլիանոս Ուրացողին (361—363 թթ.):

274 Անունը ծագում է արաբերեն «թարխան» (իշխան) բառից: Այս զորավարի անունը հիշում է Նիկեփոր Բրիենիոսը, նրան անվանելով Հովսեփ Տրախանիոտ: Նա ուներ մագիստրոսի բարձր պատվաստիճանը:

275 Նիկեփոր Բրիենիոսի ասելով, Հովսեփ Տրախանիոտեսը Ռոմանոս Դիոգենեսին խորհուրդ էր տալիս զորքը բաժան-բաժան չանել, բայց չկարողանալով նրան համոզել, գնաց Խլաթ, որը «թուրքերին էր ենթակա և ուներ թուրքական հզոր կայազոր»:

276 Բրիենիոսը հիշում է այս Վասիլակին, որը Դիոգենես կայսեր դիմավորեց Մանազկերտում: Նա Ասորիքից և Հայաստանից մեծ զորք էր հավաքագրել: Բյուզանդական պատմիչը նրան ճամարում է քաջ պատերազմող: Բյուզանդական հրամանատարներից նա առաջինն է գերվում Խլաթի թուրքերի կողմից: Ավելի կարևոր մանրամասնություններ տալիս է Սկիլիցեսը: Նրա ասելով Վասիլակը Կարինի դուքսն էր և գլխավորում էր «տեղացի» զինվորներից, հավանաբար, հայերից բաղկացած զորք:

277 Մանազկերտի ճակատամարտը բախտորոշ նշանակություն ունեցավ Բյուզանդիայի և ընդհանրապես Փոքր Ասիայի ժողովուրդների համար: Դրանից հետո թուրքական գերիշխանությունն սկսեց ավելի ևս ծավալվել և կայունանալ: Ալփ Արսլանից ազատ արձակվելուց հետո Դիոգենեսը դեռ որոշ ժամանակ պայքար մղեց կայսր հռչակված Միքայել Պարապինակեսի դեմ: Նրան անչափ օգնություն ցույց տվեց Անտիոքի դուքս, ազգությամբ հայ, շատ խոհեմ և քաջ իշխան Խաչատուրը: Նա դրամ, զորք և զենք էր մատակարարում Դիոգենեսին: Այս Խաչատուրն ի վերջո գերի ընկավ բյուզանդացիների ձեռքը:

278 Միքայել 7-րդ Դուկաս Պարապինակես (1071—1078 թթ.):

279 Խոճապ (արաբ. հաջեբ, սենեկապետ, հուն. պարակիմոմենոս): Ալփ Արսլանի հաջեբը կոչվում էր Հասան իբն Սարբան:

280 Քաղաք Ատրպատականում, Թավրիզից հյուսիս: Հիշվում է «Աշխարհացույց»-ում Վասպուրականի սահմաններում:

281 Մուտառասունը հին Մուտալասկեն է, որ հետագայում դարձել է Մուտալասկա, Մուտալասսա և Տալասս կամ Տալաս (բյուզանդական աղբյուրների Դալասսան), Մելիտենեից արևելք: Տալասից էր ծագում Բյուզանդիայում աչքի ընկած հայազգի մի ընտանիք՝ Դալասսենները:

282 Փիլարտոս Վարաժնունուն ավելի վաղ հիշատակում են Սկիլիցեսն ու բյուզանդական այլ հեղինակներ: Խոսելով Ռոմանոս Դ Դիոգենեսի 1070 թ. դեպի Ռոմանոպոլիս և Խլաթ կատարած արշավանքի մասին, Սկիլիցեսը ցույց է տալիս, որ կայսրը բանակի կեսը տալիս է «Փիլարետոսին, որ Վահրամյան տոհմին էր պատկանում, նրան զորավար նշանակելով»: Սկիլիցեսը, ընդգծելով Փիլարտոսի զորավարական տաղանդը, միաժամանակ ցույց է տալիս նրա վատ կենցաղը և շահասիրությունը: Փիլարտոսի մասին ավելի մանրամասն խոսում է Միքայել Ատտալիատեսը: Նա գրում է. «կուրապաղատ Փիլարետոս Վախամիոսը վասալական հպատակություն հայտնեց [Բոտանիատես] կայսեր»: Փիլարտոսը Ատտալիատեսի ասելով, թուրքական արշավանքների ճանապարհներից հեռու՝ դժվարանցանելի և լեռնային վայրերում հաստատվեց, նա պարսպապատեց կիրճերն ու ամրացրեց լեռնանցքները և հակառակորդի համար այդ շրջանները անառիկ դարձրեց: Նա այնտեղ ապաստան գտած բազմաթիվ հայերից մարտունակ զորաբանակ կազմեց և նախորդ կայսեր (իմա՛ Միքայել Պարապինակեսին) հպատակություն չհայտնեց: Նա անկախ էր և սեփականացնում էր կայսեր պատկանող քաղաքներն ու ընդարձակում իր տիրույթները: Բայց երբ գահ բարձրացավ Բոտանիատեսը, նա ինքնաբերաբար նրան հպատակություն հայտնեց և հետո-հետազատ կատարում էր նրա հրամանները:

283 Մշարը գտնվում է Մալաթիայից հարավ-արևելք:

284 Վահրամի հոգևորական անունը, ինչպես վերևում տեսանք, Գրիգորիս էր:

285 Գավառ Չորրորդ Հայքում և նույնանուն բերդ: Հիշատակում է Յակուտը Ջաբալջուր ձևով: Նա գրում է. «Մի ընդարձակ գավառի անուն է Արմինիայում, Դիարբեքիրին սահմանակից: Բնակիչները քրիստոնյա հայեր են: Ունի բերդեր և գյուղեր»:

286 Չորրորդ Հայքի Անձիտ գավառի Ալելուա դաշտում էր գտնվում Խարբերդը: Այժմ այդ դաշտը թուրքերեն կոչվում է Օլու օվա (թարգմանաբար՝ Մեծ դաշտ, որ, հասկանալի է, հայերեն Ալելուա դաշտի թուրքերեն իմաստավորումն է):

287 Ռմբաղտ՝ նենթադրվում է Roussel de Bailleul-ը, Բյուզանդիայում ծառայող մի նորման գործիչ:

288 Թոռնիկը ազգակցական կապ ուներ Գրիգոր Մագիստրոսի հետ: Վերջինիս դուստրը Թոռնիկի կինն էր, և այդ ամուսնությունից էին ծնվել Չորտվանեցն ու Վասակը: Այս Չորտվանելի որդի Վիգենը հետագայում խնամիացավ Կեկավմենոսների հայտնի հայկական ընտանիքի հետ:

289 Պետրոս Գետադարձի քեռորդի Սարգիսը կաթողիկոս դարձավ 1076 թ. Փիլարտոսի տիրույթների սահմաններում: Համայն հայոց կաթողիկոսությունը շարունակում էր մնալ Գրիգոր Վկայասերի ձեռքում: Սարգիսը պարզապես «օրինավոր ապոստոլիկոս» էր:

290 Եպիսկոպոսարան, որ հայոց հայրապետին էր ենթակա:

291 Խոսքը Եգիպտոսի սուլթան Աբդուլդամին Մոսթանսեր Բիլլահի մասին է (1036—1094 թթ.):

292 Վաղարշապատի հրատարակության մեջ «եւ բազում զօրք ժողովեցան յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց», որ սխալ է: Երուսաղեմի հրատարակությունն է ճիշտ, որտեղ գրված է. «եւ բազումք ժողովեցան հայոց յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց»:

293 Խոսքը Նիկեփոր Գ Բոտանիատեսի մասին է (1078—1081 թթ.):

294 Բնագրում՝ «երկու հատատք», այլ գրչագրերում՝ «երկու հաստատք»: Բառը լատիներեն է (hastatus), որ նշանակում է նիզակակիր: Սմբատի Տարեգրության մեջ «հաստատ»-ի փոխարեն գրված է «կոնդօոատք», որ նույնպես նիզակակիր է նշանակում, բայց հունարեն:

295 Գրչագրերում հանդիպում են «Եպիխտ», «Պիխտ» կամ «Պեխտ» ընթերցումները: Եպիխտի մասին տե՛ս վերը, ծանոթ. 234:

296 Անդրիոնը գտնվում է Հալեպից մի փոքր հարավ:

297 Բոտանիատեսը թագավորեց երեքևկես տարի:

298 Նիկեփոր Մելիսենոսը գահ չբարձրացավ: Նա Ալեքսիոս Կոմնենոսի քրոջ՝ Եվդոկիայի ամուսինն էր, որ Ալեքսիոսի հետ միասին ապստամբություն բարձրացրեց: Կայսր դարձավ Ալեքսիոս Կոմնենոսը, որը Մելիսենոսին շնորհեց սեբաստոս և կեսար պատվաստիճանները:

299 Ալախոսիկ ըստ Մ. Օրմանյանի նշանակում է ալելուա երգող: Ըստ Հ. Աճառյանի նշանակում է գեղեցկաձայն: Նրան ևս համարում են աթոռակից կաթողիկոս:

300 Բնագրում՝ «բուռն եհար զեղջերաց սրբոյ սեղանոյն», որ նշանակում է «անկյուն, զարդ անկյան եղջերաձև»:

301 Խոսքը Ալեքսիոս Կոմնենոսի մասին է (1081—1118 թթ.), որ դարձավ Կոմնենոսների հարստության հիմնադիրը:

302 Մովսես մարգարեի գլխավորությամբ հրեաներին Կարմիր ծովով անցկացնելը: Տե՛ս Ելք, ԺԴ, 22: Լորամարգերի մասին՝ նույն տեղում, ԺԶ, 13:

303 Մատթ., Գ, 10:

304 Սրժախասի փոխարեն Սմբատի Տարեգրքում գրված է՝ «Արճիասու»:

305 Կյուբիստրա կամ Կիզիստրա բերդը: Ուռհայեցին հետագայում, երբ խոսում է Մանդալյան եղբայրներից իշխան Թորոսի առած վրեժի մասին, նրանց բերդն անվանում է Կնդռոսկավիս, հետևաբար, այդ երկուսը նույնանում են: Բերդի Կնդռոսկավի անունը տալիս է և Սմբատը:

306 Խոսքը Կարսի նախկին թագավոր Գագիկի մասին է:

307 Ներսես Մեծի «մարգարեության» մասին մանրամասն տե՛ս. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957:

308 «Աղվանա գավառը» ենթադրաբար հյուսիսարևելյան Հայաստանն է, Տաշիր-Զորագետի հայկական թագավորության տարածքը: Հոգևոր իրավունքի առումով այդ սահմաններն ավելի ընդարձակ էին և ընդգրկում էին ողջ Աղվանքը: Տե՛ս **Աս. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 221—222: Այդ թագավորության կենտրոնը դարձավ Լոռե բերդաքաղաքը:

309 Շերեֆ էդ-Դաուլա Մուսլիմ, մականունը՝ Աբու-լ-Բերեքե, Մոսուլի Օկայիլիտների հարստության իշխան:

310 Եդեսիայի սբ. Սոֆիա եկեղեցում:

311 Դյուլորիեի կարծիքով այս Սմբատը Անիի կառավարիչ Բագարատ Վխկացու որդին էր:

312 Այս Սուլիմանը Իկոնիայի սելջուկյան հարստության հիմնադիր Սելջուկի որդի Յաղուբ Արսլանի թոռն էր, Կուտուլմուշի որդին: Իշխեց 1074—1085 թթ.:

313 Բնագրում «ի վատ և ի թուլամորթ և ի պիղծ ազգէն, որ կոչին Պելիտիկք»: Դյուլորիեն կարծում է, որ դա տեղական մի ածական է, որ նշանակում է անտիոքացի:

314 Խլիճ Ասլան Ա-ն, Սուլիման Կուտուլմուշի երկրորդ որդին: Գահ բարձրացավ 1097 թ., հաջորդելով իր եղբայր Դավութին: Իշխեց 39 տարի: Նա Իկոնիոնը մայրաքաղաք հռչակեց, քաղաք, որին թուրքերն ու պարսիկները Ռում էին անվանում, որից և այդ սուլթանությունը կոչվեց Ռումի սուլթանություն: Խլիճ Ասլանը խեղդվեց Խաբուր գետում 1155 թ., երբ արշավում էր Բաղդադի խալիֆայի դեմ:

315 Այժմ՝ Կիրովաբադ:

316 Աղվանքի հյուսիս-արևելքում, Դարբանդ (Կասպան) աշխարհում գոյատևած հայկական թագավորության մասին Մատթեոս Ուռհայեցու հիշատակությունը կասկածի տակ էր առնվում: Այդ թագավորությունը նույնացնում էին Սյունիքի ու Բաղաց-Կապանի թագավորության հետ: Սակայն Սեդրակ Բարխուդարյանը գտնում է, որ Դերբենդում իսկապես եղել է հայկական թագավորություն, որի մի քանի թագավորների տապանաքարերն անգամ պահպանվել են Դերբենդից հարավ: Նա ցույց է տվել, որ Ուռհայեցու տվյալները միանգամայն արժանահավատ են, որ նրա հիշատակած օգերը ժամանակակից օսերն են, թերևս, ընդհանուր իմաստով, Հյուսիսային Կովկասի ժողովուրդները: Հայկական բնակչությունն այստեղ հիմնականում բաղկացած էր Դերբենդի կիրճի պահպանության նպատակով Սասանյան Պարսկաստանի բնակեցրած սյունեցիների հետնորդներից: Նրանք 9-րդ դարում, արաբական տիրապետության վերջում, ինքնուրույնություն ձեռք բերեցին և հիմնադրեցին հիշյալ թագավորությունը: Դերբենդի հայկական թագավորությունը գոյատևեց մինչև 13-րդ դարի սկիզբը: Մանրամասն տե՛ս **Ս. Գ. Բարխուդարյան, Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը, Պատմա-բանասիրական հանդես, 1969, № 3, էջ 125—147:**

317 Ենթադրվում է թուրք Աթսիս իբն Աուկ իբն էլ Խովարեզմին, որ Մելիք Շահի անունից էր կառավարում Դամասկոսը:

318 Ամիր-Ճոշը անուն չէ, այլ մակդիր՝ Ամիր ալ-Ջույուշ (զորահրամանատար), որ տրվում է Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆաների մեծ վեզիրներին: Խնդրո առարկա անձնավորությունը, հավանաբար, իսկապես հայազգի Բադր ալ-Ջամալին է: 11-րդ դարի երկրորդ կեսից սկսած հայերը այնքան մեծ դեր են խաղացել Եգիպտոսի քաղաքական և ռազմական կյանքում, որ ժամանակակից հեղինակները Եգիպտոսի պատմության այդ շրջանը «հայկական» են անվանում, իսկ Բադր ալ-Ջամալիին՝ «մենագույնը Ֆաթիմյան բոլոր վեզիրների թվում»:

319 Ցույց ենք տվել, որ Պառակամաճոսը անուն չէ, այլ պարակիմոմենոս (սենեկապետ) պաշտոնը:

320 Այսինքն՝ Կասպից ծովից:

321 Բնագրում «յեզր յՈվկիանու ծովուն ի տեղին՝ որ կոչի Սևոտի»: Խոսքը ժամանակակից Սվեդիայի մասին է, Մուսա լեռան շրջանի:

322 Ախսնգույրի լրիվ անունն է՝ Աբու Սայիդ Ակ-Սոնկոր իբն Աբդալլահ, մականունը՝ Քասիմ էդ-Դաուլա, ծագումով թուրք:

323 Գետը կոչվում էր Դունավիս և ոչ Պարադունավիս, որ նշանակում է Մերձ-

դաւուբյան: Պարադունավիս կամ Պարիտորիոն էր կոչվում Դաւուբի շրջանում ընկած բյուզանդական բանակաթեմը:

324 Հոռոմ՝ ենթադրվում է հույնը, հռոմայեցի՝ Իտալական թերակղզու բնակիչը:

325 Պեչենեգներին Աննա Կոմնենան անվանում է սկյութներ և նրանց թագավորին (հեգեմոնին)՝ Ցելգու: Նրա ասելով պեչենեգների զորքը բաղկացած էր ութսուն հազար հոգուց: Այս պատերազմը տևեց 1083—1096 թթ.:

326 Ալեքսիոս Կոմնենոսը շատ հանճար պայքար մղեց Ֆիլիպուպոլսի շրջանում բնակվող աղանդավորների դեմ (գլխավորապես պավլիկյանների և բոգոմիլների): Ռոհայեցին տվյալ դեպքում ճկատի ունի վանական Վասիլին, որ բոգոմիլ էր և իսկապես դատապարտվեց մահվան ու խարույկի վրա ողջակիզվեց: Սմբատի Տարեգիրքը նրան ջրաճեղձ արված է ցույց տալիս և հիշում է այս աբեղայի մի գործակցի անունը ևս՝ Մուշեղ:

327 Խոսքը սուրբ Բարսեղ Մեծի (Կապադովկացու) մասին է և հռոմայեցի կայսր Հուլիանոս Ուրացողի:

328 Ներսես Ս. Մեծ կաթողիկոս հայոց (353—373 թթ.) և հռոմայեցիների կայսր Վալես (364—378 թթ.):

329 Տիգրանակերտի (Մարտիրոսաց քաղաքի) եպիսկոպոս Մարութա (5-րդ դար): Հայրը ասորի էր, մայրը՝ հայ:

330 Այսինքն՝ քրիստոնեությունն ընդունած Եդեսիայի Աբգար Ե Ուկկամա թագավորի:

331 Մելիք Ծաճը վախճանվեց 1092 թ.: Իր կնոջ անունն էր Թուրխան խաթուն: Սուլթան հռչակվեց Մելիք Ծաճի ճիգամյա որդի Մահմուդը:

332 Անուշ՝ ենթադրվում է Արղուն:

333 Խոսքը Քոթբ էդ-դին Իսմայիլի՝ Մելիք Ծաճի առաջին կնոջ՝ Զոբեյդե խաթունի որդու մասին է, որ Աւոբպատականի կառավարիչ նշանակվեց:

334 Նասեր էդ-Դաուլա Իբրահիմը, օկայիլիտների ցեղից, որը, սակայն, իրականում Ծերեֆ էդ-Դաուլայի որդին էր և ոչ եղբայրը, ինչպես ցույց է տալիս Ռոհայեցին:

335 Գ. Միքայելյանի կարծիքով 80-ական թվականներին Թորոսին Եդեսիայի կառավարիչ էր նշանակել Փիլարտոսը: Թութուշը 1094 թ. նրան հաստատեց իր պաշտոնում:

336 Ձեռագրում՝ «ի ծովու դրանէն»:

337 Այս Խորիլը (Խավրիլը, Սմբատի Տարեգրքում հունարեն ճիշտ արտասանությամբ՝ Հավրիլ), այն է՝ Գաբրիելը, Գուլիելմոս Տյուրացու տվյալներով հունադավան հայ էր: Նա իր դստեր՝ Մորֆիային, ամուսնացրեց Ռոհայի Ֆրանկ կոմս Բալդուին դը Բուրգի հետ, որը հետագայում Երուսաղեմի թագավոր դարձավ:

338 Հմմտ. Մարգարեություն Դանիելի, Է, 7:

339 Սաղմոս ԽԵ, 23:

340 Խոսքը Խաչակրաց առաջին արշավանքի մասին է:

341 Godefroy de Bouillon, Ստորին Լոթարինգիայի հերցոգը: Ծնվել է 1058 թ., վախճանվել որպես Երուսաղեմի թագավոր 1100 թ.: Պետրոս Անապատականի կոչին առաջիններից արձագանքեց և 1096 թ. շարժվեց դեպի Պաղեստին:

342 Baudouin de Boulogne, Գոդեֆրուա դը Բույոնի եղբայրը: 1097 թ. գարնանը մասնակցեց Նիկիայի պաշարմանը: Դարձավ Կիլիկիայի Տարսոն քաղաքի տերը, ապա տիրացավ Եդեսիային և եղավ Արևելքում ստեղծված առաջին ֆրանկ

պետության հիմնադիրը: Նա գրավեց Սերուգը և ընդարձակեց իր տիրույթները: Գրավեց Մելիտենեն և այն տվեց Բալդուին դը Բուրգին: Իր եղբայր Գոդեֆրուայի մահից հետո դարձավ Երուսաղեմի թագավոր (1100 թ.), Եդեսիայի կոմսությունը թողնելով Բալդուին դը Բուրգին: Վախճանվեց 1118 թ.՝ իր թագավորությունը ժառանգություն թողնելով Բալդուին դը Բուրգին:

343 Բոհեմունդ Ա: Ծնվել է 1058 թ.: Ապուլիայի և Կալաբրիայի դուքս Ռոբերտ Գվիսկարի որդին էր: Միացավ Գոդեֆրուա դը Բույոնի գլխավորած առաջին խաչակրությանը: Մեռավ Իտալիայում 1111 թ.:

344 Tancrède: Գլխավորեց Սիկիլիայի նորմանդացիներին: Ռոբերտ Գվիսկարի քեռորդին էր և նախորդ ծանոթագրության մեջ հիշված Բոհեմունդի հորեղբորորդին: Գրավեց Տարսոնը և Կիլիկիայի մեծ մասը: Աչքի ընկավ Անտիոքի պաշարման ժամանակ: Ուզեց Տիբերիադայում առանձին իշխանություն հիմնել, բայց հանդիպեց Բալդուին Ա-ի դիմադրությանը: Այդ բանը, սակայն, իրեն հաջողվեց և նա 1099 թ. հիմնադրեց իր իշխանությունը: 1104—1111 թթ. դարձավ Անտիոքի տերը, երբ նրա տեր Բոհեմունդը գերի էր ընկած: Իր իշխանությունը տարածեց նաև Եդեսիայի վրա: Մեռավ 1112 թ.:

345 Raymond IV de Saint-Gilles-ը, Տուլուզի կոմսը: Ծնվել է 1048 թ., մասնակցել նորմանների և Իսպանիայի արաբների դեմ մղվող պատերազմին (1074թ.): 1088 թ. դարձավ Տուլուզի կոմսը: 1096 թ. իր տիրույթները որդուն՝ Բերտրանին թողնելով, մասնակցեց առաջին խաչակրությանը: Աչքի ընկավ Նիկիայի դեմ մղված մարտերում: Մեռավ 1105 թ. Տրիպոլիսում:

346 Մյուս Պաղտին՝ ենթադրվում է Baudouin de Bourg-ը, որ երեք եղբայրներ Գոդեֆրուա, Եվստաթ և Բալդուին Բուլոնցիների հորեղբորորդին էր:

347 Josselin de Courtenay-ն, Բալդուին դը Բուլոնի զարմիկը: Դարձավ Եդեսիայի կոմսը, երբ Բալդուինը հռչակվեց Երուսաղեմի թագավոր: Մեռավ 1131 թ.:

348 Հունգարացիների:

349 Դահիր էդ-դին Աբու Մանսուր Տուկտեկինը, Թթուշի մամլուք զինվորներից մեկը, որ Թթուշի որդու առաջին վեզիրը դարձավ:

350 Թել Բաշիրը հայերը անվանում էին նաև Թիլ Ավետյաց: Բերդաքաղաք էր և գավառ Եփրատի աջ ափին՝ Հռոմկլայից հյուսիս-արևմուտք: Կարևոր մանրամասնություններ է հաղորդում Յակուտը. «Թել Բաշիր: Ամուր բերդ և ընդարձակ գավառ Հալեպից դեպի հյուսիս տարածվող: Նրա և Հալեպի միջև երկու օրվա ճանապարհ է: Բնակիչները քրիստոնյա հայեր են: Ունի արվարձաններ, շուկաներ ու բազմամարդ է»: Տե՛ս Հ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 43:

351 Թիլը Անավարզայի դաշտավայրում գտնվող մի բերդ է: Արաբական աղբյուրներում կոչվում է «Տալ Համդուն»:

352 Եդեսիայի կառավարիչ Թորոսի և նրա եղերական վախճանի մասին վկայում են և ֆրանկական աղբյուրները, որոնք աշխատում են Բալդուինին Թորոսի սպանության հարցում մեղսազերծ անել: Նրանք, ընդհակառակը, ցույց են տալիս, որ Բալդուինը իբր նույնիսկ միջնորդել է դավադիրների առջև՝ Թորոսին փրկելու համար: Տե՛ս М. А. Заборов, К вопросу о значении известий восточных современников крестовых походов, Պատմա-բանասիրական հանդես, № 3, 1968:

353 Կերպողան Մոսուլի Էմիրն էր: Վաղարշապատի բնագրում նրա անունն աղավաղվել և դարձել է կուրապաղատ· Ճիշտ ձևը հանդիպում է Երուսաղեմի բնագրում:

354 Բնագրում՝ «ի Մարայ»: Այլ գրչագրերում՝ «ի Մարաց»: Երուսաղեմի տպագիր օրինակում՝ «ի Մսրայ», որ, ճիշտը համարելով, թարգմանեցինք Եգիպտոս:

355 Ամաղեկը աստվածաշնչյան անձնավորություն է: Այստեղ խոսքը ամաղեկացիների մասին է, քոչվոր մի ժողովրդի, որ հարձակվեց իսրայելացիների վրա, երբ վերջիններս, Եգիպտոսից փախչելով, անցել էին Կարմիր ծովը:

356 Սքետեի անապատը, որ գտնվում է Ալեքսանդրիայից հարավ-արևմուտք:

357 Մոդը ծանրության չափ է, եղել է մի քանի տեսակի մոդ: Անանիա Շիրակացու ասելով «չափ ԻԲ քսետաց լինի մոդ մի»: Մանրամասն տե՛ս Հ. Մանանդյան, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, էջ 69, և հտ., նաև 132—133:

358 Խոսքը ծովափնյա Կեսարիա քաղաքի մասին չէ, ինչպես կարելի է եզրակացնել ծովափին տեղադրելու պատճառով: Փիլիպոսի Կեսարիան, որ այժմ կոչվում է Բանիաս, գտնվում էր Պաղեստինում, Հորդանան գետի ակունքներից վերև: Փիլիպոսը Պաղեստինի հռոմայեցի կառավարիչ Հերոդեսի որդին էր (1-ին դար):

359 Այս Դանիշմենդին աղբյուրները համարում են հայ: Մանրամասն տե՛ս Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1947, № 8:

360 Տե՛ս ծանոթ. 337:

361 Խոսքը Նեոկեսարիա քաղաքի մասին է:

362 Սերուջ քաղաքը հայկական Միջագետքում, Եդեսիայից հյուսիս-արևմուտք: Կոչվում էր նաև Բատնե:

363 Հունարեն պապասը, որ, բացի քահանայից, նշանակում է նաև եպիսկոպոս: Խոսքը հույների եպիսկոպոսի մասին է:

364 Երեմիա, Ա, 14:

365 Աշխարհի արարչագործության 6610 թվականը համապատասխանում է մ. թ. 1102 թ., այսինքն՝ հայոց 550 թ.: Օգտագործված է Կոստանդնուպոլսում ընդունված թվականը:

366 Հ. Աճառյանի կարծիքով գրչական սխալ է, պիտի լինի երեսունվեց տարվա: Տե՛ս ստորև, ծանոթ. 370:

367 Ըստ երևույթին, ակնարկում է Հովհաննես Մկրտչին, որ անապատում սընվում էր վայրի մեղրով: Մատթ., Գ, 4, Մարկոս, Ա, 6:

368 Խոսքը շերամի մասին է:

369 Այլ գրչագրերում՝ 27 տարվա:

370 Այս հաշվումները դեռևս 1896 թ. մանրամասն արել է Հ. Աճառյանը: Նա գտնում է, որ Մատթեոս Ուռհայեցին իր աշխատության առաջին և երկրորդ մասերը սկսել է գրել 1113 թ. և ավարտել 1128 թ., որից հետո տաս տարվա ընդմիջում է տվել և շարունակել 1138 թ.: Նախ նա իր շարադրանքը, որ կիսատ էր թողել՝ հասցնելով մինչև 1101 թ., շարունակել և հասցրել է մինչև 1128 թ. (27 տարվա պատմություն), ապա հասցնելով մինչև 1137 թ., որով նա գրած է լինում 1101 թ. սկսած 36 տարվա պատմություն: Հ. Աճառյանը գտնում է, որ «և երեսուն լիցի վճարումն գրոցս» նախադասության մեջ գրչական սխալ կա, և որ պիտի լինի՝ «երեսունվեց»: Տե՛ս **Հ. Աճառյան**, Մատթեոս Ուռհայեցի, Հանդես Ամսօրյա, 1953, սյուներ 350—353: Այդ հաշիվների վրա կանգ է առել նաև Մ. Աբեղյանը, որը գըտնում է, թե Ուռհայեցին երրորդ մասը սկսել է գրել 1141 թ. ոչ վաղ: Տե՛ս նրա Հայոց հին գրականության պատմություն, Գիրք Բ, Երևան, 1946, էջ 66:

371 Երկրորդումն օրինաց, ՀԲ, 7:

372 Դյուլորիեի կարծիքով, խոսքը Սարվանդիքարի մասին է:

373 Նկատի ունի Պելերին կոչվող բերդը, որ Ռայմոնդ դը Սեն-Ժիլը կառուցեց 1108 թ. Տրիպոլիսի մոտ: Արաբներն այն անվանում են Հիսն Սենջիլ, այսինքն՝ «Սեն Ժիլի բերդ»:

374 Պետևին՝ ենթադրվում է Պուատիեի կոմս Գուլիելմոս 9-րդը:

375 Հունարեն «էպարխոս» (քաղաքապետ):

376 Բնագրում՝ «պօստոռմն», որ հիպոդրոմ (ձիարշավարան) կամ հիպոդրոմիա (ձիարշավ) բառն է:

377 Սանձավել մականունը կազմված է երկու հին ֆրանսերեն բառերից՝ Senz aveher կամ Sans aveir (sans avoir), որ նշանակում է՝ ոչինչ չունեցող:

378 Բալբեկ, անտիկ շրջանի Հելիոպոլիսը, իր աշխարհահռչակ հեթանոսական տաճարներով:

379 Ասկալոն քաղաքը գտնվում է Գազայի մոտ:

380 Խոսքը նշանավոր տոմարագետ Իրոն Ալեքսանդրացու մասին է: Նրա տոմարը հայերը հաճախ են սուր քննադատության ենթարկել: Տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 296, 297:

381 Թուղթ առ Փիլիմոն, 4—5:

382 Ղուկաս, ԺԲ, 11 և 12:

383 Ա թուղթ առ Կորնթացիս, ԺԵ, 32:

384 Գող Վասիլի իշխանությունը, որի կենտրոնը Քեսուն քաղաքն էր, հարատևեց 1082-ից մինչև 1112 թ.: Հետաքրքիր մանրամասնություններ է տալիս Սմբատի Տարեգիրքը. «Այս Գող Վասիլ,— գրված է այնտեղ,— լեալ էր յառաջն հարամի, ի մանկութեան ժամանակն, սպանանէր և գողանայր և յափշտակութեամբ ապրէր ընկերօք իւրովք. և յաջողեցաւ նմա գործ անիրաւութեանն, և փոքր փոքր յառաջեալ կարողացաւ, և եղև տէր բազում բերդից և գաւառաց, Քեսնոյ, Ռապնայ, Փարզմնայ, Հռոմկլայինն, և այլ բազում գաւառաց. և եղև այր աստուածասէր և բարեպաշտ, շինիչ աշխարհի, պայծառացուցիչ եկեղեցեաց, զարդարիչ վանօրէից, պարգևատու քահանայից, դարմանիչ որբոց և այրեաց, և ամենայն աստուածապաշտութեամբ զարդարեալ, որոյ յիշատակն օրհնութեամբ»:

385 Մերդինը (նաև Մարտին, Մարդին) Դիարբեքիրի մոտ:

386 Այսինքն՝ Ուղուղ սաղար, որ անուն չէ, այլ նշանակում է մեծ սպարապետ: «Սալարը» թուրքերեն չէ, այլ պարսկերեն: Թուրքերը հրամանատարին կոչում էին «սյոլ բաշի», բայց ավելի հաճախ օգտագործում էին պարսկերենից փոխառած սիպեխ-սալարը (սպասալարը, ինչպես և հիշված է Ուռհայեցու երկում):

387 Շեմս էդ-դին Ջկրմիշը, որ 1101/1102 թթ. փոխարինեց Կերպողայինն՝ Մոսուլի իշխանության վրա:

388 Բնագրում՝ Հասնքև, իսկ Հիսն Քեյֆա (կամ Հիսն Քայֆ): Հին քաղաք, հիշված դեռ հույների և հռոմայեցիների կողմից: Գտնվում էր Դիարբեքիրի նահանգում, տարածվում էր Տիգրիս գետի երկու ափերին: Հիշում է Պրոկոպիոս Կեսարացին՝ Կեֆա անվամբ: Գտնվում էր օրդոքյանների ձեռքում:

389 Դյուլորիեի կարծիքով՝ Մովսես Խորենացին և Դավիթ Անհաղթ փիլիսոփան:

390 Գրիգոր Գ Պահլավունին (1113—1166 թթ.), Ապիրատ իշխանի որդին և Ներսես Շնորհալու երեց եղբայրը: Նրա օրոք սկիզբ առավ ասորի, լատին և հույն եկեղեցիների միության խնդիրը:

391 Ուռհայեցու երկում շփոթություն կա: Բերտրանը Ռայմոնդ դը Սեն-Ժիլի որդին էր: Նույն սխալը հանդիպում է և Սմբատի Տարեգրքում:

392 Ապլասթան քաղաքը (նաև՝ Աբլաստայն, Ալբիստան և Աբուլուստայն), այժմ՝ Էլբիսթան, գտնվում է Հյուսիսային Կիլիկիայում, Ջայհանի վերին ավազանում:

393 Ջավալի Սակավան, որ մահացել է 1116/1117 թթ.: Սկզբում Մոսուլի կառավարիչն էր, հետագայում դարձավ Պարսկաստանի Ֆարս նահանգի փոխարքան:

394 Բնագրում՝ «Թորոսի որդւոյ Ռուբենայ»: Թորոսը Ռուբենի թոռն էր: Պահպանվել են նրա արձնե կնիքները հունարեն Θεοδωρος Ρουπενιος մակագրությամբ, որտեղ «Ռուբենը» արդեն (ինչպես և Ուռհայեցու մոտ) ազգանվան տեղ է օգտագործվում:

395 Նաև Բերդուզ, Բերդօս և Ֆերկուս: Գտնվում էր Մարաշից հյուսիս, Զեյթունի մոտ:

396 Բնագրում՝ «ի տեղին, որ կոչի Բերդուս՝ ի սահմանս նուիրականաց»: «Նուիրականաց» բառը, ամենայն հավանականությամբ, աղավաղում է, և խոսքը, ըստ երևույթին, շրջանի անվան մասին է: Սմբատի Տարեգրքում համապատասխան տեղում գրված է «ի սահմանս Նուկրականաց»: Այլ գրչագրերում հանդիպում է՝ «ի սահմանս նորիրական» ընթերցումը: Ղ. Ալիշանը կարծիք է հայտնել, որ Նորշիրական երկրի մասին է: Հայապատում, էջ 354, ծանոթ. 10:

397 Ուռհայեցին այնուհետև ցույց է տալիս, որ այս Ապլասաթը (Աբու-լ-Ասադ) Տարոնի իշխան Տաճատի որդին է:

398 Այնթափի արևմտյան կողմում գտնվող մի բերդ:

399 Բնագրում՝ «կացեալ ի խսար զամս տասն և միւն»: Վ. Հակոբյանը առաջարկում է «ամն» ուղղել «ամիս»: Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հտ. Ա, էջ 91:

400 Իսկական անունն էր՝ Շերեֆ էդ-Դաուլա Մաուդուդ:

401 Պիրը (Պտղոմեոսի Բիրթան, Պրոկոպիոս Կեսարացու՝ Բիրթոնը, արաբ. Ալբիրա) Միջագետքում գտնվող մի ամուր վայր էր, Եփրատի արևելյան ափին, Խառանից հյուսիս-արևմուտք, Թլպաշարի և Ուռհայի միջև: Այժմ կոչվում է Բիրեջիք:

402 Շենավը Խառանից հյուսիս-արևմուտք գտնվող ամրոց էր:

403 Նուր էդ-Դաուլա Բալակ, Բահրամի որդին և Արտուխի թոռը: Սկզբում տիրում էր Սերուջին: 1123 թ. փորձեց գրավել Հալեպը իր ազգական Սուլեյմանի ձեռքից:

404 Թլկուրանը (արաբ. Տալ Կուրատ) Ամիդի շրջանում գտնվող բերդ էր:

405 Սհմեդ-Յել բեն-Իբրահիմ բեն-Վահսուդանը, Ռավվադյանների քրդական ցեղից, Մարաղայի ամիրան:

406 «Սուլման» ընթերցումը ըստ Դյուլորիեի սխալ է, սիսի լինի Սուքման: Նրա ենթադրությունը հաստատվում է Սմբատի Տարեգրքի տվյալներով, որտեղ Սուլմանի փոխարեն գրված է Սուքման:

407 Այստեղ էլ Սուլիմանի փոխարեն կարդա Սուքման:

408 Եղիայի շաբաթ օրը ընկնում է 1112 թ. հունիսի 15-ին:

409 Սմբատի Տարեգրքում «Փերսին ծածք»-ի փոխարեն կարդում ենք «Փերսին ծակը»:

410 Տուղտիկին՝ ենթադրվում է Տողտեկինը:

411 Բնագրում՝ «կայր կանգնեալ ի մէջ ճամարանին առ Կարմիր սիւնովն»: Սմբատի Տարեգրքում գրված է. «եւ այրն գնացեալ եսպան զՄամտուտն ի ճեմեղն,

ի ժամ աղօթիցն»: Ճեմեղը Դամասկոսի մեծ ճզկիթն է: Ըստ երևույթին, Ուռհայեցու գրչագրերում աղավաղում կա: Նրա գրչագրերում ճեմարան է կոչված նաև Ամիդի մզկիթը, որ հրդեհվեց 1115 թ.: Այդ դեպքը հիշում է և Վարդան Արևելցին, բայց ճեմարանի փոխարեն գրում է «ճէմիայ», որ Հ. Աճառյանը միանգամայն ճիշտ բացատրում է՝ ջամի, մզկիթ:

412 Շուղրը գտնվում էր Մարաշի և Սսի միջև:

413 Աբու Սայիդ Ակ Սոնքոր էլ-Բուրսուքի էլ-Ղազի, մականվանյալ Քասիմ էդ-Դաուլա Սեյֆ էդ-դին:

414 Երեմիա, ԼԲ, 32:

415 Գևորգ վարդապետ Մեղրիկի մահվան թվականը Ուռհայեցին համարում է 1114 թ., Վարդան Արևելցին՝ 1104: Հ. Աճառյանը գտնում է, որ ճիշտը Վարդանն է: Ն. Ակինյանը գտնում է, որ նա ապրել է 1044—1115 թթ.: Նրա կյանքի և գրական գործունեության մասին տե՛ս Ն. Ակինյան, Գևորգ վ. Մեղրիկ և իր գրությունները: Հանդես Ամսօրյա, 1950, սյունակ 129—146:

416 Բնագրում՝ «աւագ ճեմարանին»: Ամենայն հավանականությամբ «ճէմիայ» (ջամի, մզկիթ) բառի աղավաղումն է: Հմմտ. ծանոթ. 411:

417 Սուլթանի որդիները Գոհար խաթունից չէին ծնվել, այլ նրա նախորդ կնոջից: Այդ էր պատճառը, որ սուլթանը կասկածում էր, որ Գոհար խաթունը կսպանի իր որդիներին: Այդ մասին Սմբատը գրում է. «Քաւզի որդիս ուշէր յայլ կնոջէ»:

418 Բնագրում՝ «որ է երից ամուց գնացք»: Հավանաբար, ամիսների և ոչ տարիների մասին է խոսքը:

419 Բաղդադի խալիֆայի անունն էր Մոստադիր Բիլլահ:

420 Թուղթ առ Գաղատացիս, Գ, 27:

421 Հմմտ. Թուղթ առ Երբայեցիս, Զ, 1:

422 Բնագրում՝ Պերփերոժեն, նշանակում է Ծիրանաճին: Խոսքը Ալեքսիոսի որդի Հովհաննես Բ Կոմնենոսի մասին է (1118—1143 թթ.):

423 Բնագրում աղավաղված ձևով գրված է Պեհաստան:

424 Խոսքը վրաց թագավոր Դավիթ Դ-ի մասին է (1089—1125 թթ.):

425 Գանձակի սուլթան Մելեքի անունը տալիս է Իբն ալ-Աթիրը, կոչելով նրան Տողրուլ: Մելեք հենց թագավոր է նշանակում:

426 Վրաց թագավոր Դավթի բանակում հիշատակված այս «ֆրանկները» Ս. Երեմյանի ենթադրությամբ «վոռանգներն» են, այն է՝ վարյագները: Տե՛ս Юрий Боголюбский в армянских и грузинских источниках. Научные труды Ереванского гос. университета, том XXIII (1946).

427 Պալակը (Բալագ) իրականում Խազիի քեռորդին չէր, այլ Խազիի եղբայր Բահրամի որդին:

428 Խոսքը Պողոս Տարոնացու մասին է, աչքի ընկնող հակաքաղկեդոնականի, որ Սասունի իշխան Չորտվանելի հրամանով 1101 թ. գրեց «Թուղթ ընդդէմ Թեոփիստեայ Յոռոմ փիլիսոփային»: Նրա մասին մանրամասն տե՛ս Հ. Գ. Մանուչարյան, Պողոս Տարոնացի (Առաքելոց վանքի գրչության դպրոցը), Երևան, 1982:

429 Այժմյան Գորի քաղաքը:

430 Բնագրում՝ «արևապաշտ»: Ամենայն հավանականությամբ, արևորդիների աղանդին պատկանող անձնավորության մասին է խոսքը:

431 Դավիթ Դ Շինարարը:

432 Շադդադյանների տոհմից պատկանող Մինուճիհրը (Մանուչեհ) հոր կողմից քուրդ էր, իսկ մոր կողմից՝ հայ Բագրատունի:

433 Ենթադրվում է Տյուրոս քաղաքը: Դուքսը, որի անունը Ուռհայեցին չի հիշում, Վենետիկի դոժ Դոմինիկոս Միչիելին է: Գուլիելմոս Տյուրացու տվյալներով, խաչակիրները Տյուրոս քաղաքի գրավման ժամանակ Անտիոքից հրավիրում են Ավետիք անունով մի հայ ինժեների:

434 Բնագրում՝ «զկնի սակաւ աւուրց տան զքաղաքն Սուր գերեզմանին Քրիստոսի»: Սմբատի Տարեգրքում ավելի հստակ է այս միտքը. «եւ ետ տուկն զՍուր պարգևս գերեզմանին Քրիստոսի»: Խոսքը, հավանաբար, քաղաքի հարկերի մասին է:

435 Բնագրում՝ Խլաղ-Շապար, այն է՝ Կալա-Ջարաո (Ջարարի բերդ): Միջագետքում, Եփրատի ափին կառուցված ամրոց:

436 Կարդա՝ «Աբրայիմ որդի Սուքմանի»:

437 Դեմետրե (1125—1156 թթ.):

438 Խոսքը, հարկավ, ոչ թե Մանուչեհի որդիների, այլ թոռների մասին է: Վրաց թագավոր Դավթի օրոք Անիում իրենց իշխանությունը շարունակեցին Շադդադյան հետևյալ ամիրաները. Ֆադլուն Գ-ը (1125—1130 թթ.) և Ֆադլունի եղբայրները, որոնց մի քանիսի անունները հիշում է Վարդան Արևելցին («եւ առ զամիրայութիւնն կրտսեր եղբայրն Փատլունոյ Խուշշերն. և զկնի սակաւու աւագն Մահմուդ. և անկաւ դարձեալ ի թշուառութիւն երկիրն Անւոյ»): Վարդանը հիշում է Փատլունի մի եղբորը ևս, առանց նրա անունը տալու:

439 Կյուրոս վարդապետին Մ. Չամչյանը և Մ. Օրմանյանը նույնացնում են Կիրակոս Դրազարկցու հետ, Գրիգոր Վկայասերի հոգևոր եղբոր:

440 Էմադ էդ-դին Զանգի, Հալեպի ամիրա, Քասիմ էդ-Դաուլա Ակ-Սոնքորի որդին:

441 Բուրիդների թուրքական հարստությունը հիմնադրել էր Զահիր ադ-դին Տուղտեկինը, սելջուկյան Դուքաքի աթաբեկը: Տուղտեկինի որդու անունն էր Թաջ էլ-Մուլուկ, որ տիրեց Դամասկոսում 1104—1154 թթ.:

442 Մելեք Տողրուլ:

443 Ենթադրվում է Բաբելոնի թագավոր Բաղդասարը, Նաբուգոդոնոսորի որդին, որ իր հոր՝ Երուսաղեմի մեծ տաճարից թալանած անոթներով խնջույք էր անում:

444 Համմտ. Եսայի, Ա, 8. «Լքեալ թողցի դուստր՝ Սիոնի իբրև գտաղաւար յայգւոջ, և իբրև զիովանի մրգապահեաց ի մէջ սեխեներաց»:

445 Հովհաննես Բ Կոմնենոսը:

(ԳՐԻԳՈՐ ԵՐԵՑԻ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ)

1 Հովհաննես Կոմնենոս կայսրը: Պերփերոյեն մականվան մասին տե՛ս վերը, ծանոթ. 422:

2 Հռոմկլան (արաբ. Կալաթ ար-Ռում՝ Հույների բերդ) նշանավոր բերդ էր Եփրատի արևմտյան ափին: 1116 թ. գրավվեց Եդեսիայի կոմս Բալդուին դը Բուրգի կողմից:

3 Ֆախր էդ-դին Կարա Ասլան:

4 Խոսքը Տյուբի կոմս Մահիի մասին է, որը հիշատակվում է այս դեպքից 15 տարի առաջ: Մահիի անվան առջև դրված Սիրը (sir— տեր) շատ հաճախ է հանդիպում խաչակիր գործիչների անուններում: Օրինակ, նույն Գրիգոր Երեցի Շա-

րումակության մեջ տեղ գտած վարդապետ Բարսեղի դամբանականում Քեսունի տեր իշխան Բաղդինը հիշված է որպես «Սիրի Պաղտոյին»: Այսպիսով, բնագրի «ոմն զօրական յազգէ Սիրիմահէ» պիտի ուղղել «ոմն զօրական յազգէ Սիրի Մահէ» և հասկանալ Սիր Մահիի ազգակից: Մեր ենթադրությունը հաստատվում է Սմբատի Տարեգրքի տվյալներով: Վերոհիշյալ դեպքերի առթիվ նա գրում է. «ի սոյն ամի ձիաւոր մի ի Մահէ Տլքոյ կոմսէն ... գողացաւ զԱնթափ Ծօսլնէն»:

5 Մանուիլ Ա Կոմնենոս (1143—1180 թթ.):

6 Երուսաղեմի թագավորի անունն էր Ֆուլկոն:

7 Բալդուին Գ-ն (վախճանվել է 1162 թ.):

8 Պետևինի որդի՝ ենթադրվում է Ռայմոնդ Ա դը Պուատյեն:

9 Թիւք, ԺԱ, 5:

10 Իմա՛ Կալա Ջաբար:

11 Սրանից հետո մեր բնագրում հետևյալ նախադասությունն է. «ի սոյն ժամանակս ի չորս բաժանեցաւ կաթողիկուսութիւնն. Տէր Վահրամ և Տէր Գրիգոր յԵգիպտոս, Տէր Բարսեղն յԱնի, Տէր Պօղոս հայրն Վարագայ ի Մարաշ, Տէր Թորոսն ի Հեռն. աթոռն սրբոյն Գրիգորի ի յԱնի ի չորս բաժանեցաւ», որ ակնհայտ ընդմիջարկություն է: Այդ նույն նախադասությանը բառացի մենք հանդիպում ենք Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրության մեջ: Տե՛ս էջ 247:

12 Աստվածաշնչի համաձայն աստված մարդուն ստեղծել է իրեն հար և նման, որ մարդը պատկերն է աստծո:

13 Հմմտ. Դանիել, ԺԲ, 2:

14 Ծննդոց, Թ, 6:

15 Սաղմոս, ԾԴ, 24:

16 Ղուկաս, Զ, 37:

17 Դանգը դրամի ամենափոքր մասն է:

18 Անտիոքի պրինցն էր Ռայմոն դը Պուատյեն:

19 Մասուդը Իկոնիայի սելջուկ հարստությանն էր պատկանում և Խլիճ Արսլան Ա-ի որդին էր: Իշխեց 1119—1155 թթ.:

20 Սույն դեպքը ավելի հստակ է շարադրված Սմբատի Տարեգրքում. «վասնզի գնայր կոմսն Ծօսլինն յԱնտիոք, և ի գիշերի մի ելեալ սակաւիկ մի ի ճանապարհէն, ի պէտս պտտաքին կարեաց, և ընկերք նորա անցեալ գնացին, և նա վարեաց երիվարաւ զկնի, զի հասցէ նոցա և դիպեալ ի ծառ մի՝ անկաւ յերիվարէն ցաւալից, և երիվարն ուտեալ ի նմանէ փախեաւ, և նա մնաց անկեալ մինչև յառաւօտն. և ընկերիք ի գիշերին ոչ իմացան զայս: Իսկ առաւօտուն եկեալ հովուականք, և առեալ տարան զնա ի Հալպ, և անդ եդաւ ի բանտ»:

21 Խոսքը Գող Վասիլի մասին է:

22 Նկատի ունի Ջոսլին Բ-ի որդուն՝ Ջոսլին Գ-ին:

23 Ազզ էդ-դին Խլիճ Արսլան:

24 Այսինքն՝ թագավոր: Մելեք նշանակում է թագավոր: Նկատի ունի Ազզ էդ-դին Խլիճ Արսլանին:

25 Ռուբինյան իշխան Թորոս Բ-ն, որ իր հոր՝ Լևոնի հետ գերի տարվեց Կոստանդնուպոլիս:

26 Թուղթ առ Հռոմայեցիս, Թ, 18:

27 Իմա Յաղուբ:

28 Կիլիկյան կամ Ամանոսյան լեռնանցքը:

29 Ֆրեր նշանակում է եղբայր: Նկատի ունի ֆրանկներին, ավելի ճիշտ՝ «Տանճարական» օրդենին պատկանողներին:

30 Ենթադրվում է Թորոս իշխանը:

31 Երկնային զորք ասելով ենթադրվում են հրեշտակները:

32 Գրիգոր Երեցի բաժնում կա շփոթում: Հակոբ Մծբնացին Նիկիայի եկեղեցական ժողովի (325 թ.) ժամանակակից է, այնինչ նա ցույց է տրված պարսից Կավադ արքայի (488—531 թթ.) ժամանակակից: Պարզապես շփոթված են երկու Հակոբներ, Հակոբ Մծբնացին և Հակոբ Սերուգցին: Վերջինս, որ կոչվում էր նաև Բատնացի, իսկապես Կավադի ժամանակակիցն է, սակայն նա պաշտպանեց Կավադից ոչ թե Մծբինը, այլ Ամիդից մեկ օր հեռավորության վրա գտնվող Էնդիելոն վայրը: Հակոբ Սերուգցին, սակայն, Նոյան տապանի հետ որևէ առնչություն չունի:

33 Գրիգոր Երեցն այստեղ հերձվածող է անվանում հունադավաններին:

34 Բնագրում՝ «խատի»: Ամենայն հավանականությամբ, աբբասական շրջանում իմամ-խալիֆի, իսկ խալիֆայության անկումից հետո՝ սուլթանի կողմից նշանակվող դատավորի մասին է խոսքը, որ հենց կադի էր կոչվում (պաբակ. կազի):

35 Լիկաոնիոսի քյուզանդական բանակաթեմը ստեղծվեց Լևոն Զ կայսեր ժամանակ, հայերի կողմից:

36 Բնագրում՝ «մոլար կուռայիցն իւրեանց»: Սմբատի Տարեգրքում որպես նրանց հաշտեցնող հանդես է գալիս խալիֆան:

37 Այստեղ Գրիգոր Երեցը Հետունի փոխարեն գրում է Կիսոն:

38 Սուլթանը եկավ Կիսոն գավառը, որովհետև այն իրեն էր պատկանում և Թորոսի կեսմբին հակառակ վերջինիս եղբայր Ստեփաննեն գրավել էր: Գրիգոր Երեցի շարադրանքն այստեղ մի փոքր հստակ չէ: Սմբատի Տարեգրքում ավելի պարզ է ասված. «Ի թուին ՈՉ Ստեփաննէ եղբայրն Թորոսի և որդին Լևոնի, շարժեալ ի չար մարդկանէ, արար իւր գունդս զօրուց և ելանէ առնուլ գաւառս և թափել աշխարհս աջողութեամբ. որ և էառ զԿոկիսոն և զԲերդուսն... և Ստեփաննէ առանց կամաց Թորոսի առնէր զայս. և վեսան այսպիսի խռովութեան եկն Խլիճ Ասլանն ի գաւառն Կոկիսոնի, և ննազանդեցոյց իւր զամենեսեան... և անտի գնաց ի Բերդուսն»:

39 Այդ ժամանակ Երուսաղեմի թագավորն էր Բալդուին Գ-ն:

40 Անտիոքի իշխան Ռայմոնդ դը Պուատյեի մահից (1148 թ.) հետո, վերջինիս որդու Բոհեմունդ Գ-ի մանկահասակության ժամանակաշրջանում խնամակալ էր Ռընո դը Շատիյոնը: Գրիգոր Երեցը նրա անունը հիշում է մի փոքր հետո, Ըռնաղդ (Ռենալդ):

41 Քյարմուտները 9-րդ դարում ծագած Իսմայիլիտների աղանդի երկու թևերից մեկի կողմնակիցներն էին:

42 Բելիարը մի անգամ միայն հիշվում է Պողոս առաքյալի մի թղթում, և դրա տակ սատանան է ենթադրվում:

43 Այն է՝ Այնթապ, ամուր քերդ Մարաշի և Հալեպի միջև:

44 Բնագրում՝ Կոնթանճո, առանձին գրչագրերում ավելի ճիշտ՝ Կոնթ Անճու, որ անուն չէ: Նշանակում է Անճուի կոմս: Ենթադրվում է Երուսաղեմի թագավոր Ֆուլկոնը: Վերոհիշյալ տիտղոսը նա կրում էր նախքան թագավոր դառնալը:

45 Բնագրում այս նախադասությունը պարզ չէ: Սկզբում խոսվում է Ռապանի և Կիսոնի կուսակալի մասին, բայց այնուհետև խոսքը մեկ անձնավորության մասին չէ: Գուցե Ռապանն ու Կիսոնը առանձին կուսակալներ են ունեցել:

46 Ուղղափառ ասելով Գրիգոր Երեցը նկատի ունի հայադավաններին և ասորիներին:

47 Ռական, որ բյուզանդական աղբյուրներում կոչվում է նաև Կալլինիկոս, Միջագետքի քաղաքներից է, կառուցված Եփրատի արևելյան ափին:

48 Միրանը (նաև Սուքման Բ)՝ Սուքման Ա-ի թոռը, իշխեց 1128—1185 թթ.: Նա ստացավ Շահի Արմեն տիտղոսը: Իր իշխանանիստ քաղաքն էր Մանազկերտը:

49 Բնագրում՝ Ատրատին: Դյուլորիեի ենթադրությամբ՝ Նասր էդ-դին:

50 Գիորգի Գ-ն, որ հաջորդեց իր եղբայր Դավիթ Գ-ին: Նա Դավիթ Բ Շինարարի թոռն էր, Դեմետրե Բ-ի որդին:

51 Այծ՝ Օլթի:

52 Շահի Արմենը անուն չէ, այլ տիտղոս:

53 Ինչպես վերևում առիթ ունեցանք ցույց տալու, «Սիր» տեր է նշանակում:

54 Ծով կամ Ծովք կոչվող բերդը գտնվում էր Խարբերդի լճին մոտիկ, Եփրատից արևելք: 11-րդ դարում պատկանում էր Գրիգոր Մագիստրոսի ընտանիքին:

55 Մեջդ էդ-դին իբն Դայեն:

56 Անտիոքի իշխանության բերդերից մեկը, Անտիոքից մեկ օր հեռավորության վրա: Խաչակիրներն այն գրավեցին 1099 թ. և վերջնականապես կորցրին 1164 թ.:

57 Բարսեղ Մարաշցին, Մարաշի իշխան Բալդուինի խոստովանահայրը, որի ծավալուն դամբանականը Գրիգոր Երեցն ընդգրկել է իր շարադրանքի մեջ:

58 Դյուլորիեի կարծիքով, այս դուկը Անդրոնիկոսն է, որին Մանուիլ Կոմնենոսը նշանակել էր Տարսոնի և Մսխի կառավարիչ, որը և ջարդ էր ստացել Թորոս իշխանից:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաա, Կարսի թագավոր 14, 15, 22, 23, 162, 163, 168, 169, 198, 199, 236, 237
Աբասլաև 156, 157, 162, 163, 196, 197, 200, 201, 208—211, 214, 215, 220—223, 248, 249, 252, 253, 260—263, 324, 325, 382, 383
Աբգար թագավոր 410—413
Աբրայիմ, որդի Սուլիմանի 398, 399
Աբրեհիմ, գորավար 112, 113
Աբրեհիմ, Կուրիշի որդին 262, 263, 474, 475
Ադրամելիք 12, 13
Ազիզ, Մարի ամիրա 70, 71
Ազիզ, Եգիպտոսի թագավոր 248—251
Աթանաս, պատրիարք 300, 301
Ալեքս, կայսր 232, 233, 254—257, 272—275, 288, 289, 292, 293, 304—309, 320, 321, 328, 329, 376, 377, 406, 407
Ալեքսանդր Մակեդոնացի 332, 333
Ալի, ամիրա Ամիդի 70, 71
Ալի, ամիրա Մենբիջի 70, 71
Ալուսիան, բուլղար թագավոր 46, 47, 52, 53, 212, 213
Ալփիրակ, սուլթան 270, 271
Ախախ, ամիրա 248—251
Ակութ, ամիրա 260, 261, 264, 265
Ահի 70, 71
Ահլու 70, 71
Ահմատ 70, 71
Ահմատիլ 346, 347
Ահվար 70, 71
Աղսիան 252, 253, 260, 261, 266—269, 282, 283
Աղսնգույր, ամիրա 252, 253, 260—267, 400, 401, 408, 409
Աղուպ 446—449
Աղուպ Ապան, Խազի ամիրայի որդին 452—455, 472, 473
Ամաղեկ 286, 287
Ամիրխազե (Խազի) 268, 269
Ամիր-Ճոշ 250, 251
Ամիր Սայիդ, ամիրա 154, 155
Ամրքափր 146, 147, 224, 225
Անազուղլի 108, 109

Անաեե, վարդապետ 114—117
Անաեե Հաղբատացի 194, 195
Անաեե Նարեկացի 194, 195
Անաեիա կաթողիկոս 8, 9, 38, 39
Անդրոնիկոս 442—445
Անտոն, վարդապետ 194, 195
Անտոն, սուրբ 206, 207
Աշոտ 3-րդ, հայոց թագավոր 8, 9
Աշոտ, հայոց թագավոր, Գագիկ I-ի որդին 12—17, 22—25, 34, 35, 38—41, 72, 73, 88, 89, 92, 93, 96, 97, 174, 175, 198, 199, 214, 215, 234, 235, 290, 291, 346, 347
Աշոտ, Դերենիկի որդին 12, 13
Աշոտ 2-րդ Երկաթ 234, 235
Ապիրատ, հայոց իշխան 16, 17, 226, 227, 288, 289, 326, 327, 360, 361
Ապլասաթ, իշխան 334, 335, 338, 339, 354, 355
Ապլհաճ, ամիրա 38, 39
Ապլղարիպ 36—39
Ապլղարիպ, Հասանի որդին 234, 235
Ապլղարիպ, Վասակի որդին 342, 343, 368, 369
Ապլջահաւպ, Վասակի որդին 238, 239
Ապոլա 70, 71
Ապուլջահաւպ, Ապիրատի որդին 16, 17
Ապուսահլ, Սեւեքերիմի հայրը 12, 13
Ապուսահլ, Սեւեքերիմի որդին 62, 63, 92, 93, 146, 147, 150, 151, 172—175, 214, 215, 236, 237
Ապուսուար, պարսից զորավար 16, 17, 88—91, 212, 213
Ապուքաւպ, Վասիլի հայրը 66, 67, 130, 131, 164, 165, 232, 233, 238, 239
Առոն 116, 117
Ասքար 254, 255
Ատոմ Անձավացի 194, 195
Ատոմ, Սեւեքերիմի որդին 62, 63, 72, 73, 92, 93, 146, 147, 150, 151, 172—175, 194, 195, 214, 215, 236, 237
Ատրատիհ 474, 475
Ատրներսեհ, հայոց իշխան 198, 199
Արդուխ 268, 269, 276, 277, 294, 295, 322—325, 366, 367, 374, 375, 380, 381, 384, 385
Արիոս 178, 179
Արջուկ, իշխան 240, 241
Արվանդաւոս, դուկ 202—205

Բագարատ 34, 35
Բագարատ (Վխակացի) 160, 161
Բագրատ, վրաց թագավոր Գորգիի որդին 64, 65, 382, 383
Բագրատ, հայոց իշխան 370, 371
Բազուկի 278, 279

Բակուրան 160, 161
Բանիկ 236, 237
Բարդուղիմեոս, առաքյալ 10, 11, 172, 173
Բարսեղ Բաշխատացի 114, 115
Բարսեղ, տեր Եղիսեի եղբայրը 114, 115
Բարսեղ կաթողիկոս 180, 181, 226, 227, 236—239, 246, 247, 256—263, 274, 275, 288, 289, 300, 301, 320, 321, 326, 327, 354, 355, 358—361
Բարսեղ վարդապետ 412, 413, 476, 477
Բարսեղ, սուրբ 214, 215
Բելիար 76, 77
Բերդաձ, կոմս 338, 339, 342, 343, 346, 347
Բուլղար վարդապետ 114, 115
Բուրտուխ, ամիրա 346, 347, 360, 361, 366, 367, 394—399

Գագիկ 1-ին թագավոր 12, 13, 56—59, 88, 89, 92, 93, 96, 97, 234, 235
Գագիկ 2-րդ թագավոր, Աշոտ 4-րդի որդին 88, 89, 96, 97, 102—107, 174, 175, 192—199, 214, 215, 234—237, 276, 277, 290, 291, 346—351
Գագիկ, Աբասի որդին 162—165, 168, 169, 198, 199, 236, 237
Գագիկ, Գուրգենի որդին 222, 223
Գագիկ Անեցի, հայոց իշխան 150, 151
Գագիկ, Աղվանից թագավոր 248, 249
Գանձի, հայոց իշխան 84, 85
Գելմուշ, զորապետ 112, 113, 240, 241, 270, 271
Գիճաճիճի 146, 147
Գեորգ վարդապետ (Մեղրիկ) 364, 365, 400, 401
Գիորգի, վրաց թագավոր 14, 15
Գոհար խաթուն 372, 373
Գող Վասիլ 318—321, 326, 327, 332—335, 352—355, 368—371, 408, 409
Գողիաթ, աստվածաշնչային 18, 19
Գոմնշտիկին, ամիրա 200—205
Գոշակտակ 8, 9, 248, 249
Գորգ 16, 17
Գորգ Շիրակացի 242, 243
Գորգի, վրաց թագավոր 56—59, 64, 65, 382, 383
Գորգի, վրաց թագավոր 474, 475, 478, 479
Գրիգոր, սուրբ 40, 41, 172, 173
Գրիգոր, Սևներքերիմի որդին 248, 249
Գրիգոր, Բակուրանի որդին 160, 161
Գրիգոր, Բարսեղ կաթողիկոսի եղբայրը 238, 239, 288, 289
Գրիգոր կաթողիկոս, Գրիգորիս կաթողիկոսի քեռորդին 228, 229
Գրիգոր Աստվածաբան 186, 187, 262, 263
Գրիգոր Երեց 406, 407
Գրիգոր Մագիստրոս 16, 17, 76, 77, 96, 97, 108, 109, 112, 113, 116, 117, 166, 167, 198, 199, 204, 205, 228, 229, 324, 325, 360, 361
Գրիգոր Մաշկևոր 364, 365

Գրիգոր Նարեկացի 194, 195
Գրիգոր Նյուսացի 180, 181, 306, 307
Գրիգոր Սքանչելագործ 180, 181
Գրիգորիս, Մարաշի եպիսկոպոս 294, 295
Գրիգորիս կաթողիկոս 204, 205, 222—231, 300, 301, 304, 305, 312, 313, 324—327, 360, 361, 410, 411
Գուրգեն, Գագիկի հայրը 222, 223
Գուրգեն, վրաց թագավոր 228, 229
Գուրգեն Անձևացյաց 12, 13, 22, 23
Գուրգեն, Աղվանքի թագավոր 14, 15, 22, 23
Գևորգ կաթողիկոս 222, 223, 248, 249
Գևորգ վարդապետ 206, 207
Գևորգ վարդապետ Եվթամոեցի 194, 195
Գևորգ Ուծեցի 194, 195
Գևորգ Ռուճեցի 262, 263
Գևորգ, ջուլֆակորդի 114, 115
Գևորգ Քարնեղեցի 114, 115

Դանիել մարգարե 164, 165, 270, 271, 418, 419
Դանիշմանա, ամիրա 292—295, 308, 309
Դավատանոս 154—157, 232, 233, 318—321, 324, 325, 394, 395
Դավթուկ 112, 113
Դավիթ, աստվածաշնչային 18, 19, 96, 97, 178, 179, 326, 327, 438, 439
Դավիթ, հայոց թագավոր, Սենեքերիմի որդին 54—57, 62—65, 72, 73
Դավիթ, վրաց իշխան 40—45, 66, 67, 72, 73
Դավիթ, վրաց թագավոր 380—383, 388—393, 400—403, 474, 475
Դավիթ կուրապաղատ 232, 233
Դավիթ Անհողին 88—95, 98, 99, 158, 159, 236, 237, 248, 249
Դավիթ Արծրունի 58, 59
Դավիթ, Հաբելի որդին, իշխան 120—123
Դպուշ 210, 211, 248, 249, 262—269, 394, 395
Դեմեպիկոս 20—23
Դեմետրե, վրաց թագավոր Դավթի որդին 390—391, 400, 401, 474, 475
Դերենիկ, Անձավացյաց թագավոր 12, 13, 36—39
Դիհար, ամիրա 140, 141
Դիոսկորոս Սանահնեցի 84—87, 180, 181, 194, 195, 242, 243

Եղիա մարգարե 204, 205
Եղիշե եպիսկոպոս 56, 57
Եղիսաբեթ, աստվածաշնչային 190, 191
Եղիսե տեր 114—117, 150, 151
Եմրան 18, 19
Եպիխտ 230, 231
Եսայի մարգարե 290, 291
Եփրոկիա, կայսրուհի 204, 205

Եվոատ Թոռնեցի 34, 35
Եվսիքես 180, 181
Երկայնաբազուկ 48, 49
Երեմիա մարգարե 296, 297
Եփրեմ տեր 114, 115

Ջանգի, ամիրա 400, 401, 408—411, 436, 437, 440, 441, 460—463, 472, 473
Ջաբարիա, աստվածաշնչային 188—191
Ջննիլ, Տուլուզի կոմսը 276, 277, 288, 289, 306—309, 328, 329, 338, 339, 358, 359, 396, 397, 400, 401
Ջոե, կայսրուհի 64, 65, 98, 99, 134, 135
Ջոյաս 56, 57, 118, 119
Ջուրայ 70, 71

Թադեոս առաքյալ 10, 11, 172, 173, 238, 239, 246, 247, 290, 291
Թադևոս, գրիչ 114, 115
Թաթուլ, ապարապետ 292, 293
Թեոդրա, կայսր 192, 193
Թեոդորոս կաթողիկոս (Ալախոսիկ) 232, 233, 244—247, 258, 259, 270, 271
Թեոդորոս, պատրիարք 44, 45
Թոդրա, կայսրուհի 134, 135
Թոռնիկ, իշխան 142, 143, 222—227
Թոռնիկ, պատրիկ 110, 111
Թոտորակ 240, 241
Թոտորե 390, 391
Թորոս, քահանա 152, 153
Թորոս կուրապաղատ 266—269, 276—281
Թորոս, Կոստանդնի որդին 290, 291, 324, 325, 344—351, 366—369
Թորոս, Ռուբենի որդին 332, 333, 450, 451, 454—459, 464—469, 472—479
Թորոսակ, իշխան 120, 121
Թուրք 26, 27

Իլարիոն 44, 45
Իշխան, իշխան Խաչիկի որդին 100—103
Իշխան, Ռուիայի մեծամեծերից 240, 241
Իսահակ, աստվածաշնչային 246, 247
Իսմայիլ, ամիրա 260, 261, 264, 265, 372, 373
Իսուլվ 150, 151
Իսուփ, ամիրա 156, 157
Իրիոն 310, 311

Լիկոս 368, 369
Լիպարիտ, իշխան 56, 57, 112, 113, 116—119, 136, 137, 140, 141
Լևոն, Ռուբենի որդին 354, 355, 368, 369, 374, 375
Լևոն, Կոստանդնի որդին 290, 291

Լևոն (Պանդուլևոն) Իմաստասեր 22, 23
Լևոն, Տարոնի զորավար 32, 33
Լևոն, Ուռհայի դուկ 232, 233
Լևոն Ռուբինյան 404—407, 442, 443, 468, 469, 478, 479
Լևոն, հայոց իշխան 120—123

Խազի, ամիրա (Ամիրխազե) 324, 325, 360, 361, 366, 367, 374—385, 392—395, 408, 409, 452, 453
Խալթ 156, 157
Խաչատուր, դպրապետ 114, 115
Խաչիկ կաթողիկոս 44—47, 114, 115, 140, 141, 150, 151, 166—169
Խաչիկ (երգիչ, երաժիշտ) 262, 263
Խաչիկ, հայոց իշխան 100, 101
Խաչիկ Խուլ 234, 235
Խաւտապ, իշխան 216—219
Խարթա-Ասլան 408, 409, 438, 439
Խլիճ Ասլան Ա. 244, 245, 270, 271, 274, 275, 306—309, 332, 333, 394, 395
Խլիճ Ասլան Բ. 440, 441, 450—453, 460, 461, 470—473, 476, 477
Խոսրով, ամիրա 238, 239
Խորիլ, իշխան 270, 271, 292, 293
Խտրիկ, ամիրա 84, 85
Խուլուխ, զորահրամանատար 254, 255
Խուրեշ, ամիրա 70, 71, 108, 109, 214, 215

Կալարան, կոմս 368, 369, 384—389, 392, 393
Կամեն, զորահրամանատար 112, 113, 116, 117
Կայեն 18, 19, 44, 45, 120, 121, 250, 251
Կապոս 224, 225
Կավատ, պարսից թագավոր 448, 449
Կատրամիդե 14, 15
Կերպողա 282—285
Կիրպիանոս եպիսկոպոս 294, 295
Կյուրեղ 192, 193
Կյուրիկե, Աղվանքի թագավոր 158, 159, 236, 239, 248, 249
Կյուրոս, վարդապետ 400, 401
Կոզմա 170, 171
Կոմանոս, կայսր 134—139, 232, 233
Կոնդոփրե 272, 273, 276, 277, 280, 281, 284—287, 292—295, 370, 371
Կոնտ-Անժու 460, 461
Կոստանդին, Սեվեքերիմի որդին 62, 63
Կոստանդին, Ռուբենի որդին 278—281, 290—293, 276—281, 324, 325, 344—347, 368, 369, 374, 375, 392, 393, 406—407, 442, 443
Կոստանդին, Հաբելի որդին 120—123
Կոստանդին, Ռոմանոս կայսրի որդին 34, 35, 62—65, 98, 99
Կոստանդին Մեծ 128, 129

Կոստանդին, Կարկառի տեր 370, 371
Կտրիճ ամիրա 208, 209, 214—217
Կուկելմ Սանձավել 310, 311
Կուտաև 70, 71
Կուրիշ 238, 239, 244, 245, 262, 263

Հաբել 120, 121, 134, 135
Հազկերտ, պարսից արքա 258, 259, 448, 449
Հակոբ Մծբնացի 24, 25, 448—451
Հակոբոս վարդապետ, Քարափնեցի 172, 173, 242, 243
Հակոբոս վարդապետ, Սանահնեցի 174, 175
Հակոբոս (Քարահատի որդի) 194, 195
Համտուն 8, 9, 24, 25
Հասան 16, 17
Հասան, Խոլ Խաչիկի որդին 100—103, 234, 235, 238, 239, 288, 289
Հարպիկ, Հաբելի որդին 120—123, 134, 135
Հեճն-Պշարա 154, 155
Հիսուս Քրիստոս 12, 13, 16, 17, 20—27, 32—35, 40—43, 48—51, 60—65, 74—81, 90, 91, 104, 105, 152, 153, 174—177, 180, 189, 192—195, 200, 201, 206, 207, 226—229, 246, 247, 284, 285, 250, 251, 306, 307, 312—317, 322, 323, 336, 337, 350, 351, 378, 379, 396, 397, 402, 403, 408, 409, 412, 413, 432, 433, 436, 437, 440, 441, 444, 445, 462, 463, 470, 471
Հովհան Աստվածաբան 178, 179
Հովհան Ոսկեբերան 186—189, 262, 263
Հովհաննես, Ալեքսանդրիայի պատրիարք 300, 301
Հովհաննես, Անտիոքի պատրիարք 300, 301
Հովհաննես ավետարանիչ 176, 177
Հովհաննես, արքեպիսկոպոս 244, 245
Հովհաննես, Աղվանից կաթողիկոս 8—11, 38—41, 248, 249
Հովհաննես, հայոց թագավոր 12—17, 38—41, 50, 51, 56, 57, 60, 61, 74, 75, 84, 85, 88, 89, 92—95, 236, 237
Հովհաննես Մկրտիչ 32—35, 204, 205
Հովհաննես Կոզեռն 50, 51, 56, 57, 60, 61, 74—77, 84, 85, 194, 195, 246, 247
Հովհաննես Քարնեղեցի 114, 115
Հովսեփ, վարդապետ 194, 195
Հովսեփ, կաթողիկոս 86, 87, 90, 91, 248, 249
Հովսեփ Ըննայեցի 50, 51, 194, 195
Հուդա, աստվածաշնչային 120, 121, 250, 251, 306, 307
Հուլիանոս, կայսր 214, 215, 258, 259
Հուսեյն 70, 71

Ղուկաս ավետարանիչ 188—191
Ղևոնդ (Պանդալևոն) վարդապետ 22, 28, 32—35

Ճկրմիշ 322, 323, 328, 329

Ծմեմ 150, 151
Ծնեղուկ 100—103
Ծոպիճ, կոմս 272, 273, 320—325, 334—343, 346, 347, 350—353, 378—381, 384—403, 410—413, 436—439, 460, 461
Ծոպիճ կրտսեր 410—413, 442, 443
Ծոփր, կոմս 388—391

Մահի, կոմս 390, 391, 396, 397
Մահմեդ, ամիրա 70, 71
Մահմուտ, Տափարի որդին 372, 373, 402, 403
Մահմուտ, Խազիի որդին 402—405
Մամլաճ 40—43
Մամտուտ 340—347, 350—359
Մանդալե 236, 237, 348, 349
Մանի 178, 179
Մանիակ (Գեորգ) 68—73, 102, 103
Մանուիլ (Մանվել), կայսր 408, 409, 442, 443, 464, 465, 476, 477
Մանուչե 392, 393, 400, 401
Մասուտ, սուլթան 436, 437, 440—445, 452, 453, 460, 461
Մատթեոս Հաղպատեցի 114, 115
Մատթեոս Ուռհայեցի 124—127, 302—305
Մարիամ Աստվածածին 28, 29, 180—183, 190, 191
Մարկիոն 178, 179
Մարկոս կաթողիկոս 248, 249
Մարկոս, մենակյաց 326, 327
Մարկոս, Կեսարիայի մետրոպոլիտ 194—197
Մարութա, սուրբ 258, 259
Մելեք, սուլթան, Տափարի որդին 372, 373, 380—383, 402, 403, 442, 443, 446, 447
Մելեք Մահմատ, Խազիի որդին 408, 409
Մելիսանոս 134, 135, 232, 233
Մելիք Մահմատ 406, 407
Մելիք Շահ 222, 223, 248—253, 256, 257, 260—263, 266, 267, 324, 325, 360, 361, 372, 373
Մեմուդ 70, 71
Միխայիլ, իշխան 392, 393
Միրսա ամիրա 472, 473, 476, 477
Միքայել, կայսր 72—75, 86—89, 92, 93, 96—101, 204, 205, 218, 219, 228—233
Միքայել, պետր 134—137
Մխիթար 12, 13
Մխիթար, սուլթանի զինվոր 268, 269
Մխիթար Բագնայրեցի 114, 115
Մխիթարիկ 114, 115
Մճմտի 476, 477
Մնի, ամիրա 346, 347
Մոնոմախ (Կոստանդին), կայսր 102—105, 118, 119, 122, 123, 132—135

Մոնտանոս 178, 179
Մովսես, աստվածաշնչային 178, 179, 192, 193, 234, 235, 326, 327
Մորավարդ 44, 45
Մուշեղ, Թոռնիկի հայրը 142, 143, 222, 223
Մուսի 52, 53

Յեհնուկ 156, 157
Յոթ Գայլ 18, 19

Նաևաև վարդապետ 258, 259
Նասեր 28, 29
Նավատիոս 178, 179
Նեստոր 180, 181
Ներսես, կաթողիկոս 84, 85, 236, 237, 246, 247, 258, 259, 270 271, 286, 287, 470, 471
Նիկեփոր, կայսր 10—13, 20, 21, 34—37
Նիկեփոր ծովիզ 58, 59
Նիկոլայ, պատրիարք 300, 301
Նսրտոլ, ամիրա 68—71, 144, 145, 152—155
Նուր էդ-դին 436—439, 442, 443, 460, 461, 468, 469, 476, 477

Շահի Արմեն 474, 475
Շահվար 70, 71
Շապուհ 54, 55, 92, 93
Շեպիպ 72, 73
Շեպլ 66, 67, 70, 71
Շերեփ-Տոլ (Շուրեհ-Հեհմ, ամիրա) 238, 239, 244, 245, 262, 263

Ոսկեծամ 130, 131

Չմշկիկ, կայսր 10—13, 22—25, 34, 35
Չորտվանել (Գորգ) 16, 17
Չորտվանել 116, 117
Չորտվանել, Թոռնիկի որդին 226, 227

Պալակ, ամիրա 344, 345, 360, 361, 384—393
Պալտուխ, ամիրա 268, 269, 278, 279
Պաղտպին, իշխան 452, 453
Պաղտին, Կոնդռվիրեի եղբայրը 272, 273, 278—283, 292—295. 310, 311, 318—323, 332—341, 346, 347, 352, 353, 356, 357, 366—369, 372, 373, 376—379, 384, 385, 392—395, 404—411
Պաղտին 272, 273
Պաղտին Տպորկ 294—297, 346, 347, 378, 379, 412—415, 418, 419, 428—433, 436, 437
Պայել 68, 69
Պայեն, կոմս 356, 357

Պապ Անձավեցի 34, 35
Պարկիարուխ, սուլթան 260, 261, 264—267, 282, 283, 324, 325
Պարկճակ, վարդապետ 194, 195
Պարսամա, իշխան 250—253
Պեխտ, Անտիոքի դուկը 170, 171
Պեմունդ, կոմս 272, 273, 276, 277, 282—285, 292—295, 318—325, 370, 371
Պեմունդ, Պեմունդի որդին 400—403
Պեռոս 120, 121, 134, 135
Պետրոս առաքյալ 284, 285, 354, 355
Պետրոս, Գող Վասիլի քեռորդին 334, 335
Պետրոս կաթողիկոս 14, 15, 56—59, 72—75, 84—87, 96, 97, 104, 105, 112—117, 140, 141, 150, 151, 166, 167, 226, 227, 232, 233
Պետրոս Թափիչ 180, 181
Պետևին, կոմս 308—311, 410, 411
Պերթրան 328, 329
Պերփերոյեն 378, 379, 406—409
Պիղատոս, աստվածաշունչային 430, 431
Պիղոնիտ (Պիզշոնիտ), դուկ 136, 137, 170, 171
Պշարա 70, 71, 156, 157
Պոլճտացի, ամիրա 244, 245
Պողի 108, 109
Պողոս առաքյալ 78, 79, 190, 191, 300, 301, 316, 317, 378, 379, 354, 355, 422, 423, 442, 443
Պողոս կաթողիկոս 244—249, 260, 261
Պողոս վարդապետ Տարոնացի 388, 389
Պողոս եպիսկոպոս 260, 261
Պողոս վարդապետ 194, 195
Պողոս Սամոսատցի 180, 181, 184, 185
Պորփյուրոս 182, 183
Պուզան, ամիրա 252—255, 260—267
Պուկի 108, 109

Ջավլի, ամիրա 332—337

Ռայմոն դը Պուատյե 436, 437
Ռատ 56, 57, 112, 113, 118, 119
Ռատուան 266—269
Ռենաղդ (Ռենաղդ), Անտիոքի տերը 460, 461, 476, 477
Ռիչարդ 292—295, 320, 321, 328, 329, 336, 337
Ռմբաղատ, կոմս 224, 225
Ռոմանոս, կայսր 8—13, 34—37, 64—67, 72, 73, 232, 233
Ռոմանոս (Տիոյեն), կայսր 204, 205
Ռոճեր, կոմս 354, 355, 358, 359, 366, 367, 372—377
Ռոպերդ, կոմս 272, 273
Ռոպերթ, Պեմունդի հայրը 400, 401

Ռուբեն, իշխան 276—279, 290—293, 332—335, 344—347, 350, 351, 354, 355, 368, 369, 374, 375, 406, 407, 442, 443, 476. 477

Սաբելիոս 178, 179
Սալե, արաբ թագավոր 394, 395
Սալեհ, ամիրա 70, 71
Սալմաճ 66—69, 72, 73
Սանակ, մարզպան 48, 49
Սանակ Պարթև 246, 247
Սաղա 382, 383
Սամվել վարդապետ 44, 45, 50, 51, 262, 263
Սամուխ, ամիրա 146, 147
Սալահան (Լաոդիկեցի) 194, 195
Սարգիս կաթողիկոս 46, 47, 50, 51, 58, 59, 194, 195, 226, 227, 232, 233, 270, 271
Սարգիս սպարապետ 36, 37, 94—97, 102—105
Սարգիս աղանձավոր 180, 181, 192, 193
Սարգիս սուրբ գորավար 192, 193
Տարև, Ապիրատի որդին 16, 17
Սարի 16, 17
Սափար 260, 261
Սեվերերիմ, Վասպուրականի թագավոր 12, 13, 22, 23, 40—43, 54—57, 62—65, 92, 93, 116, 117, 146, 147, 150, 151, 236, 237, 242, 243
Սեվերերիմ, Կապանի թագավոր 248, 249
Սիմեոն, պատրիարք 300, 301
Սիմոն 408, 409
Սար-Խորասան 150—153, 168—173
Սկլերոս 40, 41
Սմբատ, Բագրատի որդին 160, 161
Սմբատ Տիեզերակալ 162, 163
Սմբատ, Ռուբայի դուկը 240, 241
Սմբատ, Աշոտ Երկաթի որդին 234, 235
Սպրամիկ 12, 13, 34, 35
Տաճատ Թումենցի 22, 23
Տեոփան, հոռոմաց գորավար 108, 109
Տեոփան Պինով, կոմս 322, 323
Տեոփանե 448, 449, 454—459, 478, 479
Տեոփանոս կաթողիկոս 40, 41, 44, 45
Տեոփանոս, Քրիստափորի որդին 152, 153
Տեոփանոս, Աղվանից կաթողիկոս 238, 239, 248, 249, 254, 255, 320, 321, 326, 327
Տեոփանոս, արքեպիսկոպոս 336, 337
Տուլիման, ամիրա 240, 241, 244, 245, 248, 249, 270, 271, 340, 341, 344—347, 384, 385
Տութման, Արդուխի որդին 268, 269, 276, 277, 294—295, 322—325
Տութման, Աբրեհիմի որդին 474, 475
Տաղա, թագավոր 248, 249

Վահան կաթողիկոս 22, 23, 38—41
Վահրամ սպարապետ 94, 95, 108, 109
Վահրամ կաթողիկոս (Գրիգորիս) 166—169, 204, 205, 246, 247, 274, 275, 286, 287, 326, 327, 360, 361
Վահրամ, Քեսունի դուքսը 406, 407
Վաղենտիանոս 178, 179
Վաղես, կայսր 258, 259
Վաչագան, թագավոր 8, 9, 248, 249
Վաչե 42, 43
Վասակ Պահլավունի 16—21, 76, 77, 96, 97, 112, 113, 116, 117, 168, 169, 198, 199, 204, 205, 324, 325, 360—361
Վասակ, Ապլղարիպ իշխանի հայրը 368, 369
Վասակ, վրաց ուրացող 474, 475
Վասակ, Ապիրատի որդին 226, 227, 288, 289
Վասակ, իշխան, Գրիգոր Մագիստրոսի որդին 228—231
Վասակ, Բարսեղ կաթողիկոսի հայրը 238, 239
Վասակ, Թոռնիկի որդին 226, 227
Վասիլ 2-րդ Բուլղարասպան, Ռոմանոս կայսեր որդին 10—13, 34—37, 40, 41, 44—53, 56—59, 62—65, 92, 93, 132, 133, 318, 319
Վասիլ, Ապուբասպի որդին 130—135, 164—167, 232, 233, 238, 239
Վասիլ, Ուռհայի դուկը 212, 213, 312, 313
Վասիլ, հայոց իշխան 326, 327, 334—339, 342, 343, 352—355, 368, 369
Վասիլ, ոմն 334, 335, 368, 369, 354, 355
Վասիլ, իշխան, կաթողիկոսի եղբայրը 438, 439
Վասիլ, Տիգրանի եղբայրը 444, 445
Վասիլակ 216—219
Վարդան Սանահնեցի 114, 115
Վեսպասիանոս, կայսր 272, 273, 286—289
Վոտաճիատ 228—231
Վրեայն 70, 71

Տաճատ, իշխան 338, 339
Տաճատ, Գանձիի որդին 84, 85
Տանգրի 272, 273, 292—295, 306—311, 318—323, 328, 329, 332—347, 352—355, 378, 379
Տավտա 156, 157
Տավուխ 398, 399, 408, 409
Տարխանիատ 216—219
Տափար 324, 325, 360, 361, 372, 378, 380—383
Տելհարխ 108—111
Տիգրան, արքա 6, 7, 366, 367
Տիգրան, իշխան 354, 355
Տիգրան, Վասիլի եղբայրը 444, 445
Տիմոթեոս 194, 195
Տիոյեն (Ռոմանոս 4-րդ կայսր) 206—209, 214, 215, 218, 219, 222, 223

Տիրան, իշխան 334, 335
Տիրան Կապանեցի 194, 195
Տիրանուն Կապանեցի 114, 115
Տուկիծ 138—141, 150, 151, 154—157, 164, 165, 172—175, 192—195, 204, 205, 218, 219, 228, 229, 242, 243
Տուղտիկին 276, 277, 358, 359, 366, 367, 394, 395, 398, 399, 402, 403
Տուղրիլ, պարսից սուլթան 72, 73, 108, 109, 112, 113, 118, 119, 130, 131, 146, 147, 150, 151, 156, 157, 162, 163, 210, 211, 382, 383
Տումրտաշ 384, 385, 392, 393
Տուպալիս 394, 395
Տնդատ 42, 43

Ուլխա-սալար 320, 321
Ուռհայեցի, տե՛ս Մատթեոս Ուռհայեցի
Ուտայր, ամիրա 66—69

Փերս 42, 43
Փիլարտոս 222—227, 230—233, 236, 237, 240, 241, 244, 245, 248—251, 258—261
Փիլիպե 8—11, 16, 17, 22, 23
Փիլիպե, Կապանի թագավոր 248, 249
Փռանգապոլ, մեծ իշխան 154—157
Փուչեր, կոմս 294—297

Քամ 62, 63, 80, 81
Քրիստափոր, քահանա 152, 153
Քրիստոս, տե՛ս Հիսուս Քրիստոս

Օշին, պարսից ամիրա 200, 201
Օշին, հայոց իշխան 278, 279, 444, 445

Ֆոտինոս 180, 182

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադրիանոսի գյուղ 268, 269
Ադրիանուպոլիս, քաղաք 110, 111
Ազազ, բերդ, քաղաք 66, 67, 373, 374, 375, 380, 381, 396—399
Ալախ (Ախալ), քաղաք 158, 159
Ալար, վայր 74, 75
Ալելուա, դաշտ 224, 225
Ալեքսանդրիա, քաղաք 300, 301
Ախուրյան, գետ 14, 15, 94, 95, 114, 115, 160—163
Աղթիք, քաղաք 106, 107
Աղվան, գավառ 236, 237
Աղվանք 8—11, 14, 15, 86—95, 158, 159, 238, 239 246, 247, 320, 321, 480
Ամիթ (Ամիդ), քաղաք 20—25, 70, 71, 152—157, 366, 367
Այծյաց բերդ 22, 23, 32, 33, 344, 345
Այնթափ (Այնթապ) 390, 391, 408, 409, 460—463
Անավարզա, գավառ, քաղաք 8—11, 276, 277, 332, 333, 344, 345, 364, 365, 406, 407, 446, 447
Անալյուր, գյուղ 364, 365
Անդրիուն, բերդ 230, 231
Անի, քաղաք 8, 9, 12—17, 56, 57, 84—89, 92—97, 102—107, 114—117, 158—161, 226—227, 236—239, 246, 247, 260, 261, 288, 289, 320, 321, 382, 383, 392, 393, 400, 401, 468, 469, 474—477, 481
Անկյուրա, ավան 452, 453
Անձավացյաց գավառ 36, 37
Անձիտ, գավառ 12, 13, 34, 35, 142, 143, 224, 225, 384, 385, 398, 399, 438, 439
Անտիոք, քաղաք, գավառ 11, 12, 26, 27, 32, 33, 46, 47, 58, 59, 126—131, 170, 171, 214, 215, 230, 231, 234, 235, 240—245, 248, 249, 252, 253, 258—263, 266—269, 276, 277, 282, 283, 286—289, 292—297, 300, 301, 306, 307, 310—313, 318—323, 332—343, 346, 347, 352—355, 358, 359, 366, 367, 372—381, 386—389, 392, 393, 396, 397, 400—411, 434—439, 442, 443, 446, 447, 458—467, 476, 477
Աշորնիք, գավառ 288, 289
Աշմուշատ, քաղաք 224, 225
Ապահունիք, գավառ 40, 41
Ապլասթան (Աբլաստայն, Ալբիստան), քաղաք, գավառ 328—331, 454, 455, 472, 473

Առաքելոց եկեղեցի 280, 281
Առյուծաթիլ, բերդ 210, 211
Ասիա, երկրամաս 404, 405
Ասկալոն, քաղաք 310, 311, 460, 461
Ասորեստան, երկիր 12, 13, 32, 33, 42, 43
Ասորիք, երկիր 32, 33
Ապահունի, քաղաք 266, 267
Ավզկաի, քաղաք 388, 389
Ավլոս, դաշտ 308, 309
Ավսալ, վայր 20, 21
Ատանա, քաղաք 10, 11, 218, 219
Արաբիա 456, 457
Արածանի, գետ 224, 225
Արգինա, քաղաք 38, 39, 198, 199
Արեան գետ 108, 109
Արեգ քաղաք 26, 27
Արեգի անապատ 312, 313
Արզուն, քաղաք 70, 71
Արժախասի դաշտ 236, 237
Արծխաի, բերդ 476, 477
Արծ, քաղաք 112, 113, 468, 469
Արկա, քաղաք 286, 287
Արկեա, քաղաք 28, 29
Արկնի, ամրոց 120—123, 134, 135, 150, 151
Արճեշ, քաղաք 108, 109, 130, 131, 474, 475
Արճճի վանք 66, 67
Արջովիտ 116, 117
Արևելք 24, 25, 104—107, 111—117, 148, 149, 214—217
Արևբնդան, բերդ 336, 337, 370, 371
Արևմուտք 52, 53, 100, 101, 138, 139, 332, 333
Ախխազիա 94, 95, 216, 217
Ախշուն, գյուղ 230, 231
Աքքա, քաղաք 318, 319
Աֆրիկա 272, 273

Բաբելոն 30—33, 262, 263, 270, 271, 282, 283
Բագրեւանդ, գավառ 192, 193, 198, 199
Բալու, քաղաք 384, 385
Բակ, գյուղ 38, 39
Բաղդադ, քաղաք 12, 13, 22—25, 40, 41, 70, 71, 260, 261, 272, 273, 324, 325, 382—385
Բաղեղ, քաղաք 70, 71, 132, 133
Բասրա, քաղաք 70, 71, 338, 339
Բաւոնե, քաղաք 294, 295
Բարձր բերդ 444, 445

Բարսեղյանց անապատ 364, 365
Բերդուն, վայր 332, 333
Բերդուս 334, 335, 454, 455, 458, 459
Բերկրի, քաղաք 84, 85, 130, 131
Բիբղոն, բերդ 30, 31
Բջնի, ամրոց 16, 17, 96, 97
Բուլղարիա 46, 47, 214, 215, 272, 273

Գաբավոն (Մուել), քաղաք 30—33
Գամիրք, աշխարհ 194, 195, 214, 215, 258, 259, 276, 277, 308, 309, 348, 349, 452, 453
Գանգրա, ավան 452, 453
Գանձակ, քաղաք, գավառ 248, 249, 254, 255, 320, 321, 372, 373, 380, 383, 388, 389, 402, 403
Գեհոն, գետ 220, 221
Գեղեսարեթ, լիճ 28, 29
Գերմանիկիա, գավառ 412, 413
Գոռա (այժմ Գորի), քաղաք 390, 391
Գոտեթիլ, քաղաք 346, 347

Դամասկոս, քաղաք 26—29, 71, 72, 248—251, 262—265, 276, 277, 282, 283, 318, 319, 358, 359, 366, 367, 394, 395, 402, 403, 462—469, 472, 473, 476, 477
Դարբանդ, գավառ 248, 249
Դեկապոլիս (Պենիապոլ) 28, 29
Դեկոր, լեռ 382, 383
Դեսնաձոր 72, 73
Դերջան 32, 33
Դմանիս, քաղաք 390, 391
Դվին, քաղաք 16, 17, 108—111, 212, 213, 478, 479,
Դրազարկ, անապատ 366, 367, 400, 401, 476, 479
Դուռն, վայր 446, 447

Եգիպտոս 46, 47, 70, 71, 228, 229, 246—251, 276, 277, 282, 283, 288, 289, 310, 311, 318, 319, 370, 371, 378, 379, 412, 413, 450, 451
Եդեսիա, քաղաք, գավառ 6, 7
Եթովպիա 382, 383
Եկեղյաց գավառ 106, 107
Երզնկա, քաղաք 106, 107
Երիքով, քաղաք 358, 359
Երուսաղեմ, քաղաք 24, 25, 28, 29, 48—51, 82, 83, 190—193, 200, 201, 250, 251, 272, 273, 276, 277, 282, 283, 286—289, 292—301, 306, 307, 310—313, 316—319, 324, 325, 328, 329, 338—343, 346, 347, 356—359, 366, 367, 370—373, 376—381, 384—389, 394—401, 408, 409, 458—460, 463—467, 472, 473, 476, 477
Եփրատ, գետ 6, 7, 48, 49, 72—75, 142, 143, 202, 203, 238, 239, 276, 277, 342—347, 356, 357, 360, 361, 366, 367, 370, 371, 374—381

Զարինակ, բերդ 266, 267
Զուրզավ, քաղաք 30, 31

Թաբոր, լեռ 184, 185
Թավբլուր 150, 151
Թափորական, լեռ 28, 29
Թերեպ, քաղաք 344, 345, 376, 377, 396, 397
Թիլ Համտուն, բերդ 280, 281, 352, 353, 446, 447, 450, 451
Թիլ Սալետյաց, գավառ 438, 439, տե՛ս Թլպաշար
Թլակ, վայր 170, 171
Թլեթուր, բերդ 202, 203
Թլթովրավ, բերդ 210, 211
Թլկուրան, բերդ 346, 347
Թլմոզ, վայր 352, 353
Թլմուխ, գավառ 108, 109, 120, 121, 150, 151, 154—157, 202, 203, 210, 211
Թլպաշար, բերդաքաղաք 278, 279, 336—339, 346, 347, 356, 357, 366—369, 378, 379, 390, 391, 438, 439—443
Թլպաղ, գավառ 120, 121
Թոռիճա, բերդ 168, 169
Թոռնևան, գավառ 100, 101
Թորեշ, վայր 352, 353
Թրսիճ, բերդ 268, 269
Թուրքաստան 450, 451

Իսպանիա 272, 273
Իսրայել, երկիր 32, 33, 96, 97, 190, 191, 314, 315
Իտալիա 272, 273

Լամբրոն 444, 445
Լարիսա, ամրոց 452, 453
Լեսուն, լեռ 216, 217
Լիբանան 32, 33
Լիկաոնիոս, գավառ 452—455
Լոռե, բերդաքաղաք 158, 159, 236, 237, 248, 249
Լոտար, բերդ 72, 73, 238, 239

Խառան, քաղաք 70, 71, 238, 239, 252, 253, 320, 321, 332, 333, 338—345, 356, 357, 372, 384, 385, 473
Խավատաձեք, բերդ 146, 147
Խարբերդ 224, 225, 384—389
Խզնե, վայր 260, 261, 372, 373
Խլաթ 70, 71, 216, 217, 474, 475
Խլաղ-Ճապար 398, 399, 412, 413
Խոսոնք, գյուղ 42, 43
Խորասան 216, 217, 282, 283, 294, 295, 352, 353

Խրիսուպոլիս 136, 137
Խուժաստան, երկիր 156, 157, 214, 215

Ծաղկոց դարպաս 94, 95
Ծամնդավ, ամրոց 58, 59, 164, 165
Ծով (Ծովք), բերդ 476, 477

Կալոն Պեղատ 174, 175
Կաղեզվան, գյուղ 288, 289
Կամրջաձոր, անապատ 262, 263
Կապան 22, 23, 90, 91, 248, 249
Կապուտոու, բերդ 116, 117
Կառկառ (Կարկառ), բերդ 154, 155, 278. 279, 370, 371, 386, 387, 392, 393, 438, 439
Կաստաղոն, վանք 290, 291. 328, 329
Կարմիա, շրջան 380, 381
Կարմիր ծով 288, 289
Կարմիր վանք 326, 327, 354, 355, 360, 361, 402, 403, 440, 441
Կարնո, քաղաք 156, 157
Կարս 14, 15, 22, 23, 56, 57, 162—165
Կեսարիա (Պաղեստինի), քաղաք 28—31, 58, 59, 194, 195, 258, 259, 292, 293
Կերկեսեր, քաղաք 70, 71
Կիզիստրա, բերդ 236, 237
Կիլիկիա 10, 11, 214, 215, 234, 235, 240, 241, 276, 277, 312, 313, 378, 379, 400, 401
Կիպրոս, կղզի 50—53, 464, 465
Կիսոն, քաղաք, գավառ 485, 459, 462, 463, տե՛ս և Քեսուն
Կոնգռնակ (Խարսիռնակք), լեռ 327, 328, 329
Կոնդռոսկավիս, բերդ 346—349
Կոպիտառ, գավառ 276, 277
Կոստանդնուպոլիս 10—13, 22, 23, 34, 35, 46—53, 56, 57, 66—67, 88, 89, 92, 93, 96—99, 102—105, 110, 111, 114—119, 122, 123, 134—139, 148—151, 156, 157, 166, 167, 171—175, 192, 193, 196—199, 208, 209, 216—219, 228, 229, 232, 233, 242, 243, 254—257, 260, 261, 272, 273, 300, 301, 306—309, 324—325, 328. 329, 368—371, 406—409, 468, 469
Կորստյան Տուն 64, 65
Կրետե, կղզի 8, 9
Կուլա, լեռնագագաթ 406, 407
Կուպին, վայր 172, 173
Կուր, գետ 388, 389
Կուրիս, քաղաք 66, 67, 370, 371, 396, 397

Հալեպ, քաղաք 8, 9, 66, 67, 70, 71, 206, 207, 214—217, 240, 241, 244, 245, 248, 249, 252, 253, 260—269, 276, 277, 332, 333, 338, 339, 344, 345, 366, 367, 372—375, 384, 385, 388—401, 436, 437, 438, 440—443, 456, 457, 460—463, 466—473, 476, 477
Հաղբատ, վանք 238, 239

Համա, բերդ 220, 221
Հայաստան 8, 9, 14—17, 22, 23, 38—41, 50, 51, 54, 55, 64, 65, 86, 87, 94—97, 102—105, 130, 131, 144, 145, 148, 149, 156, 157, 166—169, 172—173, 248, 249, 260, 261, 264, 265, 344, 345, 364, 365
Հասավն, բերդ 140, 141
Հասնբև, քաղաք 222, 223
Հարթան, բերդ 334, 335, 352, 353
Հարսանմսիր (Հարսնմսուր=Հիսն Մանսուր), գավառ 154, 155, 202, 203, 222, 223, 334, 335, 352, 353, 364, 365
Հարք, գավառ 22, 23
Հեմս, քաղաք 26, 27, 70, 71, 276, 277
Հեսվանց, անապատ 364, 365
Հեր, քաղաք 36—39, 58, 59, 70, 71, 100, 101, 108, 109, 132, 133
Հերմեզ, վայր 262, 263
Հերմին, բերդ 476, 477
Հնդկաստան 162, 163, 382, 383
Հոնի, քաղաք 226, 227, 232, 233, 246, 247, 258, 259, 270, 271
Հռոմի դուռ 154, 155
Հորդանան, գետ 60, 61, 76, 77
Հռոմ, քաղաք 228, 229, 400, 401
Հռոմկլա 406, 407
Հուրասան, գետ 96, 97, 98, 99

Ջիռնք, բերդ 58, 59
Ջնջուր, վայր 348, 349
Ջորավանք 84, 85

Ղազարի վանք 388, 389

Ճապաղջուր, գավառ 224, 225
Ճեպու-Ճահար, վայր 156, 157
Ճերճեր, վայր 136, 137
Ճգիրա, երկրամաս 332, 333
Ճուաշ, գավառ 38, 39
Ճուել (Գաբավոն), քաղաք 30, 31

Մակոիտ, ժայռաբլուր 208, 209
Մանազկերտ (Մանծկերտ), քաղաք 130, 131, 133, 134, 210, 211, 216—219, 474, 475
Մանիակի, բերդ 268, 269, 410, 411
Մարանդ, քաղաք 222, 223, 260, 261
Մարաշ, քաղաք 66, 67, 234, 235, 240, 241, 244—249, 260, 261, 292—295, 324, 325, 328, 329, 332, 333, 364, 365, 370, 371, 390, 391, 402, 408, 410, 411, 438, 439, 472, 473
Մարապա, վայր 276, 277, 344, 345
Մարմաշեն 295

Մելիտենե, քաղաք 20, 21, 44, 45, 58, 59, 74, 75, 140—143, 270, 271, 274, 275 280, 281, 292—295, 332 [illegible], 380, 381, 388, 389, 394, 395, 410, 411, 434, 435 468, 469
Մեծ Հայք 10, 11
Մենբիջ, քաղաք 70, 71
Մերտին (Մաւրտին, Մարդին) 320, 321
Միջագետք 6, 7, 290, 291, 302, 303
Մծբին նաև Նսեպին, քաղաք 70, 71, 262, 263, 328, 329, 360, 361, 448, 449
Մծբինի, դաշտ 262, 263
Մկնիկ, վայր 238, 239
Մնպեն (Մնբեջ), քաղաք 206, 207, 390, 391
Մշար, վայր 222, 223, 394, 395
Մոկաց գավառ 326, 327
Մոսուլ, քաղաք, գավառ 70, 71, 108, 109, 262, 263, 276, 277, 322, 323, 328, 329, 332, 333, 340, 341, 394, 395, 398, 399
Մսիս, քաղաք 10, 11, 336, 337, 364, 365, 442—447, 464, 465, 468, 469
Մսր 8, 9, 70, 71 տե՛ս և Եգիպտոս
Մուշ, քաղաք 22, 23, 474, 475
Մուտառաւսուն 222, 223
Մուտեպեր, երկիր 238, 239
Մուփարղին (Մուփարեին), քաղաք 68—71, 144, 145, 226, 227, 384, 385

Նազալեթ քաղաք 28, 29
Նիգ, գավառ 16, 17
Նիկիա, քաղաք, գավառ 240, 241, 260, 261, 274, 275, 306, 307
Նինվե, քաղաք 192, 193
Նիքսար, քաղաք 294, 295, 308, 309
Նշենեկ, բերդ 170, 171
Նորմանդիա 284, 285
Նսեպին, քաղաք, գավառ 168, 169, 202, 203, 262, 263, 368, 369, տե՛ս նաև Մծբին
Նուբիա 288, 289

Շամ, գավառ 26, 27
Շամքոր 390, 391
Շաքի 390, 391
Շենավ, բերդ 342, 343, 346, 347
Շիզար (Շեզար), քաղաք, գավառ 306, 347, 366, 367, 384, 385, 406, 407
Շիրակ, գավառ 14, 15, 88, 89, 230, 231, 286—289, 288, 289
Շիրվան 390, 391
Շնջե, կամուրջ 386, 387
Շնջրիկ, վայր 386, 387
Շուղր, վանք 360, 361
Շուպլաս, բերդ 406, 407

Ոստան, քաղաք 54, 55

Պալաճե, վայր 466, 467
Պալպաք, քաղաք 310, 311
Պաղակձիակ, վայր 58, 59
Պաղեատին 26, 27, 32, 33
Պաղին, գավառ 108, 109, 150, 151
Պաւրադուճավիս, գետ 254, 255
Պարսից ծով 252, 253
Պարսկաստան 98, 99, 158—163, 212, 213, 216, 217, 250—253, 256, 257, 260, 261, 266, 267, 306, 307, 310, 311, 328, 329, 372, 373, 388, 389, 402, 403
Պարսուր, վայր 72, 73
Պարտավ, քաղաք 248, 249, տե՛ս և Փայտակարան
Պեհեսնի 358, 359
Պեհիադա (Դեկապոլիս) 28, 29
Պեպուլավ, բերդ 392, 393
Պերութ (Պեյրութ) 340—343, տե՛ս նաև Վոիտոն
Պզահ, բերդ 244, 245, 376, 377, 406, 407
Պիզու, քաղաք 198, 199, 236, 237
Պիր, քաղաք 342, 343, 360, 361, 368, 369
Պինեսնի, բերդ 380, 381, 386, 387, 406, 407, 412, 413, 440, 441, 456—459, 472, 473
Պտողոմիա 28, 29

Ջալալ 170, 171
Ջահան (Ջհան), գավառ 226, 227, 232, 233, 240, 241, 244, 245, 258, 259, 328, 329, 440, 441, 454, 455, 499
Ջահուն (Գեհոն), գետ 220, 221
Ջաղցաձոր, վայր 264, 265
Ջավախիս (Ջավախք), գավառ 158, 159
Ջեզիրա 70, 71
Ջիհուն, գետ 82, 83
Ջուլման, բերդ 346, 347

Ռազտիպ, գավառ 352, 353
Ռախա, քաղաք 472, 473
Ռամլե, քաղաք 28—31
Ռապան, բերդաքաղաք 334, 335, 352, 353, 364, 365, 368, 369, 380, 381, 386, 387, 390, 391, 406—409, 412, 413, 440, 441, 462, 463, 472, 473
Ռոմանոպոլիս, բերդաքաղաք 72, 73, 232, 233

Սագաստան 156, 157
Սալմաստ 70, 71, 100, 101
Սամարիա 290, 291
Սամարղանդ 220, 221, 260, 261

Սամուսատ (Սամոսատ, Սամուսաթ), քաղաք, գավառ 68, 69, 72, 73, 268, 269, 278—281, 342, 343. 356, 357, 362, 363, 370, 371, 438, 439
Սանահին, վանք 84—87, 174, 175
Սանձա տուն 22, 23, տե՛ս Սասուն
Սասուն 142, 143, 222—225, 388, 389
Սասունի լեռ 350, 351
Սարվանդավ (Սարվանդիքար), քաղաք 306, 307
Սեբաստիա, քաղաք 52—57, 92, 93, 98, 99, 116, 117, 140, 141, 146, 147, 150, 151, 172, 173, 208, 209, 214, 215, 218, 219, 394, 395, 452, 453, 468, 469, տե՛ս և Սևաստ
Սերկևելի, լեռ 18, 19
Սիբար, քաղաք 202, 203
Սիդովն, քաղաք 30, 31
Սիհոուն, բերդաքաղաք 30, 31
Սինայի անապատ 234, 235
Սկյութիա (Սքեթեի անապատը) 288, 289
Սոդոմ Գոմոր 128, 129
Սպահան 372, 373
Սրուն, քաղաք 294—297, 346, 347, 350, 351, 356, 357, 368, 369
Սուր, քաղաք 392—395
Սևաստի, երկիր 292, 293
Սևերակ, գավառ, բերդ 74, 75, 156, 157, 168, 169, 210, 211
Սև, լեռ 58, 59, 200, 201, 278, 279, 312, 313, 364, 365

Վահկա, բերդ 290, 291, 328, 329, 350, 351
Վաղանյաց (Բալանեյա), քաղաք 30, 31
Վասակավան, վայր 12, 13, 34, 35
Վասպուրական, երկիր 12, 13, 22, 23, 38, 39, 54—57, 84, 85, 98, 344, 345, 364, 365
Վարագա, լեռ 12, 13
Վարագա, վանք 258, 259
Վարաժնունիք 48, 49
Վարդահեր, գյուղ 360, 361
Վրաստան 44, 45, 380—383, 390, 391, 398, 399, 474, 475
Վոիտոն (Պերութ), քաղաք 28, 29

Տաճկաստան 404, 405, 408, 409, 468, 469
Տապար, քաղաք 358, 359, 378, 379
Տավրոս, լեռ 142, 143, 276—279, 290—291, 328, 332, 333
Տարոն, աշխարհ 22, 23, 32, 33, 98, 99, 143, 148, 338, 339, 344, 345, 388, 389
Տարսոն, քաղաք 10, 11, 222 223, 234, 235, 442, 443
Տափթիլ, գյուղ 384, 385
Տգլաթ (Տիգրիս), գետ 20, 21, 24, 25
Տեպ, բերդ 170, 171
Տիբերական, ծով 28, 29, 358, 359
Տիբերիադա 507

Տիգրանակերտ (Ամիթ) 20, 21
Տիզբոն 70, 71
Տյուբ, գավառ 234, 235, 310, 311, 390, 391, 396, 397, 476, 477
Տոլատապի, վայր 218, 219, 474, 475
Տոնավին, գետ 138, 139, 164, 165
Տրապոլիս (Լիբանանում), քաղաք, գավառ 30, 31, 264, 265, 306—309, 324, 325, 328, 329, 338—343, 346, 347, 358, 359, 366, 367, 396, 397, 476, 477
Տրապիզոն 56, 57, 214, 215
Տրովադա 276, 277
Տփխիս, քաղաք 382, 383, 390—393

Ուիգրաց երկիր 272, 273
Ուռհա, գավառ 72, 73, 168, 169, 172, 173, 210, 211, 238—241, 268—271, 346, 347, 400, 401
Ուռհա (Եդեսիա), քաղաք 6, 7, 24, 25, 48, 49, 66—75, 102, 103, 138, 139, 154, 155, 165, 165, 170, 171, 202—205, 210—217, 232—235, 244, 245, 250—255, 258—271, 278—283, 290—297, 302, 303, 312, 313, 316—323, 328—345, 350—353, 356, 357, 360, 361, 366—375, 378—381, 384, 385, 388, 389, 408—413, 456, 457, 472, 473
Ուրեմն 352, 353

Փայտակարան, քաղաք 248, 249
Փարզման, վայր 460, 461
Փյունիկե 26, 27, 32, 33

Քարագլուխ, վայր 130, 131
Քարկեհս, լեռնաշղթա 30, 31
Քեսում (նաև Կիսոն), քաղաք 326, 327, 334, 335, 360, 361, 364, 365, 378—381, 386, 387, 402—409, 412, 413, 438—441, 472, 473
Քոսս, վայր 170, 171
Քրդստան 156, 157

Օզկան (Օզնկան), քաղաք 260, 261, 372, 373
Օխթիս (Օլթի), գավառ 474, 475
Օշեն, բերդ 202—205
Շուտ, վայր 322, 323
Օվկիանոս 8—11, 28, 29, 74, 75, 110, 111, 134—137, 156, 157, 234, 235, 240, 241, 252, 253, 256, 257, 272—275, 292, 293, 304—309, 328, 329, 340, 341, 376, 377, 392, 393

Ֆրանկիա 272, 273

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ 6
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ 124
ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ 301
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻ
ԵՐԻՑՈՑ 406

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ 7
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ 125
ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ 301
ԳՐԻԳՈՐ ԵՐԵՑԻ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ . . . 407
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . 480
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ . . 516
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ . . . 529

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի հայ գրականության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Գ. Հ. ԱԴԱՄՅԱՆ
Գեղ. խմբագիր և նկարիչ՝ Ն. Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Ա. Մ. ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆ
Վերատուգող սրբագրիչ՝ Մ. Գ. ՅԱՎՐՅԱՆ

ԻԲ 640

Հանձնված է շարվածքի 01. 11. 1990 թ.: Ստորագրված է տպագրության 13. 08. 1991 թ.: Չափսը՝ 60×84$^{1}/_{16}$: Թուղթ № 2: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակչական 30,8 մամուլ: Տպագրական 34 մամուլ = 31,38 պայմանական մամուլի: Տպաքանակ 5000: Պատվեր 1032:

Գինը՝ ~~5 ր. 50 կ.~~:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ.№ 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՅՍ Է ԸՆԾԱՅԵԼ

ՍԵՅԱՆ (Ա. Մաաոյան), Սասուն:

Գրքում ամփոփված են հեղինակի պատմական, ազգագրական, գեղարվեստական երկերը՝ «Սասուն», «Գորպե», «Ծամիրու», «Սասնո վերջին պատերազմից» և այլն, որոնցում լուսաբանվում են անցյալ դարի երկրորդ կեսին Սասունի և Մուշի շրջանների հայության իրադարձությունները, հատոր ազգագրական պայքարը, նրանց կյանքն ու կենցաղը, ավանդույթները:

Հարուստ և վստահելի աղբյուր է Սասունի պատմությունը ուսո մնասիրողների համար:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Պ. Մ., Նարեկի միջնադարյան լուծմունքը:

Մենագրության մեջ առաջին անգամ հանգամանորեն հետազոտվում է Գրիգոր Նարեկացու հանճարեղ քերթվածի մեկնությունը՝ պատմաբանասիրական և գրականագիտական տեսանկյունից: Միջնադարին բնորոշ գեղարվեստական, բարոյաբանական և այլ կարգի ըմբռնումների քննության միջոցով ցույց է տրվում, թե ինչպես է ընկալվել ու գնահատվել Նարեկը 13—15-րդ դարերում:

ՍԻՄՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ, Երկեր:

Գրքույկում ընդգրկված են Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից մեկի՝ Ս. Ջավարյանի աշխատությունները («Անպակեդրոնացում», «Հոսանք մը և իր պատճառները», «Ընտրություններու շուրջ», «Դամբանական ճառ Խրիմյանի դագաղի մոտ» և այլն), որոնցում առաջադրված խնդիրները խիստ արդիական են:

Նշխարներ Արցախի բանահյուսության: *Հավաքեց և կազմեց Լևոն Հարությունյանը:*

Ժողովածուն արցախահայոց հարուստ ու բազմաժանր բանահյուսության մի փունջ է: Նրանում ներկայացված են հեքիաթների, ավանդությունների, զրույցների նմուշներ, առած-ասացվածքների, դարձվածքների, անեծք-օրհնանքների, բարեմաղթությունների շարքեր: Մի առանձին բաժին են կազմում ազգագրական նյութերը, որոնք վերաբերում են արցախահայերի սովորություններին, ծիսական երգերին, ժողովրդական խաղերին ու պարերին: Գիրքն ունի առաջաբան, ծանոթագրություններ, բարբառային բառերի բառարան, լուսանկարներ:

Կովկասյան Աղվանքի և Հայաստանի Արևելյան կողմանց պատմության ու մշակույթի խնդիրների լուսաբանման շուրջ *(ռուսերեն)*:

Գրքում ամփոփված ուսումնասիրությունները, գրախոսությունները, աղբյուրագիտական նյութերը հանգամանորեն լուսաբանում են ինչպես բուն Կովկասյան Աղվանքի, այնպես էլ պատմական Հայաստանի արևելյան շրջանների պատմության,

պատմական աշխարհագրության, աղբյուրագիտության և մշակույթի հիմնախնդիրները: Քննարկելով **ադրբեջանական կեղծ պատմագիտության** մեջ հիշյալ խնդիրների ներգափոխման, աղճատման աղաղակող փաստերն ու գործադրած «մեթոդները»՝ հեղինակները ապացուցում են գիտության հետ ոչ մի կապ չունեցող, մտացածին «տեսությունների» սնանկությունը: Պատմական պրոցեսի և հուսալի սկզբնաղբյուրների քննական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դիտարկել տարածաշրջանի միջնադարյան պատմության իրական պատկերը:

ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. **Նոր տետրակ, որ կոչվում է հոդոտրակ:** *Գրաբար բնագրից թարգմանեց և ծանոթագրեց Պ. Մ. Խաչատրյանը:*

Աշխատությունը, որի գրաբար բնագիրը լույս է տեսել միայն մեկ անգամ (1773 թ.), Շահամիր Շահամիրյանի հայրենասիրական խմբակի (Մադրաս, 18-րդ դ. 2-րդ կես) առավել նշանավոր հրատարակություններից է: Նրանում լուսավորական գաղափարախոսության դիրքերից, հայ բնաշխարհը և պատմական անցյալը ճանաչելու հիմքի վրա, բարձրացված են հայության միասնականության, նրա քաղաքական արթնացման և ազգային ազատագրական պայքարի կազմակերպման խնդիրները: **Կարևոր դեր է հատկացված Արցախի հայ իշխանական տներին:** Գիրքն ունի համապարփակ ընդգրկում, գիտական, գեղարվեստական և հրապարակախոսական բնույթ: Աշխարհաբար թարգմանությամբ ներկայացվում է առաջին անգամ: Ուղեկցվում է հանգամանալից ծանոթագրություններով:

2. ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ, **Երկեր:**

Գիրքը մեզանում առաջին փորձն է զանգվածային ընթերցողին ներկայացնելու հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակական քաղաքական ու կրոնական խոշորագույն գործիչ, ներհուն մտավորական ու բնաշխարհիկ գրող, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի երկերը, որոնք արտացոլում են անցյալ դարի երկրորդ կեսին հայությանը հուզող կենսական խնդիրները և համահունչ են մեր օրերի հոգևոր պահանջմունքներին:

3. ՇԵՔՍՊԻՐ, **Ընտիր երկեր:**

Գրքում զետեղված են Ու. Շեքսպիրի «Համլետ», «Լիր արքա», «Մակբեթ», «Օթելլո» ողբերգությունները՝ Հովհ. Մասեհյանի թարգմանությամբ, երկու կատակերգություն՝ Խաչիկ Դաշտենցի թարգմանությամբ, սոնետների նոր թարգմանությունը՝ «Տասներկուերորդ գիշեր», «Սխալների կոմեդիան»՝ Սամվել Մկրտչյանի թարգմանությամբ և այլն:

4. ՂԱԶԱՐՅԱՆ Ռ. Ս., ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ. Մ., **Միջին հայերենի բառարան,** *հ. 2-րդ (Հ-Ֆ):*

Բառարանն ընդգրկում է 12—16-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված միջին գրական հայերենի բառերը, ոճերն ու դարձվածքները, որ ձևաիմաստային առումով բնորոշ չեն գրաբարին և ընդհանրապես չեն հանդիպում

5—11-րդ դարերի մատենագրության մեջ: Բառահոդվածները օժտված են քերականական նշումներով ու բացատրություններով, գրավոր աղբյուրներից քաղված անհրաժեշտ վկայություններով:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

1. ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Եղծ աղանդոց, *գրաբար, աշխարհաբար:*

Հինգերորդ դարի խոշոր մատենագիր, փիլիսոփա և մշակութային գործիչ Եզնիկ Կողբացին պատկանում է Մ. Մաշտոցի և Ս. Պարթևի ավագ աշակերտների դասին: Մեզ հասած նրա «Եղծ աղանդոցը» և «Խրատները» մատենագրական եզակի ու բարձրարժեք հուշարձաններ են:

2. ՂԱԶԱՐՅԱՆ Ռ. Ս., Գրաբարի բառարան, *երկու հատորով:*

Բառարանում առաջին անգամ առանձնացված և ի մի է բերված գրաբարի ողջ բառապաշարը (48 հազար բառ): Այն ընդգրկում է 5—11-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված հին գրական հայերենի գրեթե բոլոր բառերը, ոճերն ու դարձվածքները՝ բազմակողմանի բացատրություններով հանդերձ: Բառահոդվածները օժտված են ստուգաբանական, քերականական-գործառական ոճական ապառիչ նշումներով և երբեմն էլ գրավոր աղբյուրներից քաղված անհրաժեշտ վկայություններով:

[55 yr.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0253538

A II
83078